Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ **http://www.armin.am**

էլ. փոստ՝ **info@armin.am**

ՀԱՅ ԴԱՍԱԿԱՆՆԵՐԻ
Գ Ր Ա Դ Ա Ր Ա Ն

Պ Ե Ր Ճ
ՊՈՌՇՅԱՆ

ԵՐԿԵՐ

«ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂ»
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ,
ԵՐԵՎԱՆ — 1984

ԳՄԴ 84.21
Պ 896

Կազմեց՝ Ս. Գ. ՍԱՀԱԿՅԱՆ
Առաջաբանը Կ. Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆԻ

Պողոյան, Պ.
Պ 896 Երկեր (Կազմեց՝ Ս. Գ. Սահակյան։ Առաջաբանը Կ. Ա. Դանիելյանի.— Ե.։ Սովետ. գրող, 1984.—704 էջ.— (Հայ դասականի գրադարան)
Հայ մեծ վիպասան Պերճ Պողոյանի ներկա ժողովածուում զետեղված են հեղինակի «Հացի խնդիր», «Ցեցեր» և «Բղդեն» հանրահայտ վեպերը։
4702080100 (14)
Պ 705 (01) 84 — 84 «Տ»
ԳՄԴ 84.21
Ap 1

© «Սովետական գրող» հրատարակչություն, կազմելու, առաջաբանի և ձևավորման համար, 1984

ՊԵՐՃ ՊՈՂՈՅԱՆ

19-րդ դարի հայ դասական գրողների շարքում Պերճ Պողոյանը գրավում է ուրույն և հատկանշական տեղ: Մասնավորապես նրա անվան հետ է կապվում մի ամբողջ գրական հոսանքի՝ գյուղագրության, զարգացման պատմությունը:

Լինելով բնականից մեծապես օժտված, գրական հախուռն բնավորության տեր մարդ, նա նշանակալից դեր կատարեց 1860—90-ական թվականների գրական շարժման մեջ, ստեղծեց մնայուն երկեր, գյուղական հանրակեցության, նահապետական բարքերի միջից դուրս բերելով ու կենդանագրելով այն մարդկային հարաբերությունները, որոնք ներկայացնում են գրողի ապրած ժամանակաշրջանի կյանքը, պատմությունը:

Պ. Պողոյանը (Հովհաննես Տեր-Առաքելյան) ծնվել է 1837 թվականին, Աշտարակում: Սկզբնական կրթությունն ստանում է գյուղի դպրոցում, ապա անցնում Թիֆլիս և ընդունվում Ներսիսյան դպրոցը: Սրանով էլ գրեթե ավարտվում է նրա ուսումնառությունը: Երիտասարդ Պողոյանը վերադառնում է հայրենի գյուղ և պարապում ուսուցչությամբ, ապա որպես Մողնու վանքի վանահոր գործավար, հնարավորություն ստանում ուսումնասիրել Արագածոտն գավառի գյուղերը, գյուղացիների կյանքը, ճանաչել ժողովրդի վարք ու բարքը, ժողովել բանահյուսական նյութեր: Վերադառնալով Թիֆլիս, 23-ամյա Պողոյանը ակտիվ մասնակցություն է բերում արևելահայ նոր թատրոնի հիմնադրման գոր-

ծին: Նա և՛ դերասանություն էր անում, և՛ պիեսներ գրում, և՛ տոմսեր վաճառում թատրոնի ծախքերը հոգալու համար:

Պատահաբար ընթերցելով հենց նոր հրատարակված «Վերք Հայաստանին», Պռոշյանը գրիչ է վերցնում և հյուսում իր առաջին ազգագրական գյուղավեպը՝ «Սոս և Վարդիթեր» (1860): Այնուհետև երկար ժամանակ զբաղվելով թատերական գործով, ուսուցչությամբ, բափառելով Հյուսիսային Կովկասի քաղաքները որպես լուսանկարիչ, Պռոշյանը թողնում է գրական աշխատանքը և միայն 17 տարի անց կրկին հանդես գալիս վիպասանական մի երկով («Կովածաղիկ»): Այս շրջանից սկսվում են գրողի ստեղծագործական աշխատանքի բուռն վերելքի տարիները: Նա գրում է վեպեր, պատմվածքներ, հուշեր, կատարում թարգմանություններ, կրքոտ մասնակցություն բերում հայ գրական-հասարակական կյանքին: Բեղմնավոր էր հատկապես նրա գործունեությունը նորաբաց «Մուրճ» ամսագրի հետ: Այստեղ են տպագրվում «Ցեցերը», «Թղթեն», «Հունոն», ապա «Տարազում»՝ «Սկիզբն երկանցը» (1892), հետո՝ «Հուշիկների» Ա հատորը:

1890 թվականին տոնվում է Պռոշյանի գրական գործունեության 30-ամյա հոբելյանը: «Այսօր ահա,— գրում էր Ավետիք Արասխանյանը «Մուրճ»-ում,— Պերճ Պռոշյանցն է, որի վրա դարձած է ընդհանուրի ուշադրությունը—ականավոր աշակերտը մեծ Աբովյանի, նկարագրողը մեր ժողովրդական կյանքի—որպես ոչ մեկ ուրիշը մեր գրականության մեջ, անկասկած առաջինը բուն ժողովրդական գրականության մեջ»:

Գրական աշխատանքը համբավավոր վիպասանին նյութական փոքր վաստակ էր բերում: Նա հարկադրված էր մինչև խոր ծերություն դասավանդել հայկական դպրոցներում, տանելով հայ վարժապետի ծանր ու դժվարին խաչը:

Պռոշյանը մեռավ Բաքվում 1907 թվականին: Նրա դին տեղափոխվեց Թիֆլիս և ամփոփվեց Խոջիվանքի գերեզմանատանը:

Պերճ Պռոշյանի ստեղծագործությունը հայ կենցաղի, սովորույթի բան ու բանի շտեմարան է, անմրցակից ազգագրական, բարքագրական շերտերով ու ընդգրկումներով, նահապետական դարատև հարաբերությունների պարզ, անխարդախ նկարագրությամբ: Պռոշյանի տաղանդը իսկական բարքագրի տաղանդ է: Նրա ստեղծած գյուղավեպերի հմայքի ու մնայնության գաղտնիքը պիտի որոնել հայ գյուղացիության սոցիալական կյանքի ճշգրիտ ուրվագծումներում բացահայտվող ազգային ոգու, ազգային տիպարի, ազգային հոգեբանության մշտապես առինքնող գեղեցկությունների մեջ:

1

1860 թվականին «Կռունկ հայոց աշխարհին» ամսագրում հրատարակվում է մեր առաջին գյուղագրական-ազգագրական վեպը՝ «Սոս և Վարդիթեր»: Այն ժամանակվա սովորությամբ Պռոշյանը իր երկի նախատը զարդարել էր մի առաջաբանությամբ, ուր փորձել էր գծել «Սոս և Վարդիթերի» ժանրային սահմաններն ու ազգագրական ընդգրկումը: Իր տեսական մտորումները նա ամենից առաջ բխեցնում էր այն հայացքից, թե «ազգությունը պահպանող միջոցներն են՝ ազգային ծեսերը, սովորություններն ու ավանդությունները և որ դրանք պետք է ի լույս հանել «այս լուսավորյալ դարում», «մեր նախնի ժողովրդի հոգվո պատկերը» անխաթար պահելու համար: Այսպիսի նշանակություն վերագրելով հոգևոր այդ իրողությանը, երիտասարդ գրողը բացատրում էր դրա հասարակական ներգործիչ դերը՝ բարոյախոսական պատկերացումներից ելնելով: Քանի որ ազգային ավանդությունները «բուն մեր ազգի հոգին են ցույց տալիս», ուրեմն և հայկական հանճարի ծնունդ են, հետևաբար դրանք «պարունակում են յուրյանց մեջ մեծ բարոյական դասեր»: Առնելով այդ բարոյական դասերը, ազգը կազդուրում է իրեն և կենդանի պահում «հայության զգացմունքը»: Խաչատուր Աբովյանը հենց այդպես էր մտածում, որ գրեց «Վերք Հայաստանի» «արդյունավոր շարադրությունը... նկարագրելով նրա մեջ Երևանու նահանգի Քանաքեռ գյուղի լեզվի դարձվածքը և տնային մի քանի սովորությունը»: Եվ այսպես, Պռոշյանը հիմնավորում էր «Սոս և Վարդիթերի» ազգագրական միտվածքը՝ իրեն Աբովյանի հետևորդ համարելով և «Վերքն» էլ «ժողովրդական կենաց» մի բարեհաջող նկարագրություն:

Գյուղագրական-ազգագրական վեպի պռոշյանական պատկերացումներն իհարկե, մասամբ միայն կապ ունեին «Վերք Հայաստանի» հետ: Բայց այդ կապը կար: «Վերքի» ազգագրական հարստությունը, լեզուն և գեղարվեստական միջավայրը բավական էին պռոշյանական համոզումների առաջացման համար: Նոր սերնդի գրողների մեջ Պռոշյանը առաջիններից մեկն էր, որ ազգագրությունը կապում էր գեղարվեստական գրականության հետ և մյուս կողմից՝ «հայ մարդու հատկությունը» բխեցնում տեղային գավառական կենցաղից ու սովորություններից: Աբովյանի օրինակը նրա համար չափազանց ուսանելի էր:

1877-ին Պռոշյանը հրատարակեց «Կովածաղիկ» ազգային վիպասանությունը, որ ինչ-որ չափով արձագանքում էր ռուս-թուրքական պատերազմի հետ առնչվող հայ ժողովրդի քաղաքական սպասելիքներին:

«Կովածաղիկը» ժամանակակից վեպ էր, թեև վիպասանի ըմբռնումը այն ավելի քան հայուրամյա հեռավորություն ունեցող պատմական անցյալին էր նվիրված: Սիմեոն կաթողիկոսը և էջմիածնական միջավայրը, Ներսես V կաթողիկոսի մանկության տարիները, Աշտարակն իր հնօրյա նահապետներով ու իշխաններով, կարծես ապահովում էին պատմական վեպի պատրանքը: Այս բոլորն, իհարկե, նիշտ է: Սակայն Պռոշյանի ստեղծագործական մեթոդի էությունն այնպիսին է, որ հազիվ թե հնարավոր է պատմականն ու ժամանակակիցը զատորոշել նրա վիպագրական ժառանգության մեջ: Պատմությունը, պատմական անցյալը գրողին ներկայանում են որպես արդիականության կենդանի շարունակություն: Աշխարհայացքային համոզումներին հենված իրատեսությունն էր սա, որ ամեն անգամ անցյալը ավելի էր մերձեցնում իրականությանը, քան իրականությունն ինքը մոտենում էր անցյալին. դա հետահայաց բնաբացք էր, որի դրդիչը անցյալի հանդեպ անկանխակալ մեծարանքի գիտակցությունն էր: Բացի դրանից. շափազանց յուրօրինակ էր անցյալի այսպես ասած ժամանակային ըմբռնումը Պռոշյանի մոտ. հին, բարի ժամանակներ, թեկուզ հայուրամյա հեռավորությունից, նրան ներկայանում են որպես երեկվա կենդանի իրականություն՝ նահապետական վարք ու բարքի, գիտակցության ու սովորույթի մշտահոլով, կայուն և անխառն կեցության տեսքով: Գրողի համար ավանդականը հավասարարժեք էր դառնում պատմականին և պատմությունն էլ այլ բան չէր, բայց եթե ավանդականի վրա ենթադրող եղելությունը:

2

1879-ին Պռոշյանը հրատարակեց «Հացի խնդիր» վեպը, այն ուներ լայն ընդգրկում, վեր էր հանում 19-րդ դարի առաջին կեսի գյուղական իրականության ցայտուն պատկերը: Գրողը ստեղծել էր հետաքրքրաշարժ սյուժե, լավ գծագրված կերպարներ:

Խորացնելով գյուղի դասակարգային բաժանումների պատկերացումը, Պռոշյանը այլ հայացք չէր պարտադրում իր ընթերցողներին, քան հասարակական կազմակերպության *բնական տրվածքի* պահպանման և ամրապնդման մտայնությունը: Այս բնական տրվածքն էլ նահապետական հնօրյա ու ավանդական նիստ ու կացն էր, մարդկանց համայնական-ընկերական միավորումը գյուղի, տնտեսության շրջանակում: Նահապետական հարաբերություններից առանձնացնելով հատկապես համայնական ծխական պատվապահության, ամոթխածության, հյուրասիրության, օտարասիրության, դժվարին տնտեսական դրության մեջ գտնվելիս մեկը մյուսին օգնելու, իրար հասնելու հանրային-ընկերական սովորությունները, Պռոշյանը դրանց էր վերագրում հասարակական կազմակերպությունը պահպանող հիմնապատճառի նշանակությունը: Գրողը գիտեր, որ հասարակությունը ունի օրենքներ, միապետ և դասակարգեր: Սա հավիտենական բաժանում էր և միաժամանակ հասարակական կազմակերպության անխոտոր սկզբունք: Օրենքը ամենամեծ ուժն է հասարակության համար: Օրենքից զատ հասարակության մեջ գործում է «հասարակական դատաստանը», որ անարդարությունը պատժող հանրային արդարամտության կրողն է: Եվ վերջապես գոյություն ունի մարդու գլխավոր դատավորը՝ խիղճը, որ նույնպես կառավարում է աշխարհը, և որը կողմնորոշում է մարդու անձնական ու հասարակական գործունեությունը: Այն, որ գոյություն ունի գյուղացիությունը շերտավորող երեք հասարակական խավ՝ «կալվածատեր, միջակ և ստորին դասակարգ» և այն, որ դրանց միջև ստեղծվել են էապես դասակարգային հարաբերություններ— գրողի համոզումների համաձայն— «բնական» ու հավիտենական վիճակ է հասարակության համար: Հասարակությունը դրանից չի տուժում: Հասարակությունը տուժում է հենց որ ոտնահարվում է օրենքը՝ հասարակական կազմակերպությունը ղեկավարող այդ ամենահզոր ուժը: Պռոշյանի պատկերացմամբ արդար վաշխառու, մլքատեր խեշանենց խեշանը ենթարկվում է բռնի ունեզրկման, որովհետև երկրի կառավարիչները՝ տվյալ դեպքում՝ գավառապետը և յուրայինները, ոտնահարում էին օրենքը: «Հասարակական դատաստանը» ոտնահարող խղճազուրկ և ընչաքաղց մեծավորների ապազան գրողը նկարագրում էր նույնքան սև գույներով, որքան օրենքի հետ նրանց հանդիպման պահը:

Խեշանենց Խեշանի տիպարը շահախնդրում էր Պռոշյանին հենց այդ իմաստով: Նա գծում էր այս մարդու կյանքի պատմությունը՝ ազնվաբարո նահապետականության հաղթահակը կանխահուշելու համար: Խեշանենց Խեշանը ի վերջո հաղթում է, համենայն դեպս, պետությունը և արդարադատությունը գործում են նրա օգտին: Հանցավորները դատապարտվում են՝ «պատմական այն նշմարտության համաձայն», թե «օրենքի դեմ մեղանչողը ժամանակին յուր պատիժն ստանում է»: Խեշանենց Խեշանը հանդիպադրվում է գյուղն ավերակող նորամուտ ուժերին և հենց այդ զուգահեռի մեջ ուրվագծվում են հնօրյա այս մեծահարուստի ասպվածասեր վարքն ու մարդահաճո բնավորությունը: Բայց սկսենք սկզբից: «Հայաստանի մի տեսակ գյուղացի հարուստների տիպն էլ,— ասում է Պռոշյանը,— կենդանանում է Խեշանենց Խեշանի մեջ: Բավական մեծ կա-

ռողության աեր էր Աշտարակի պարծանքը: Ուրիշ վաշխառուների նման չէր Խեչանը, խղճմտանքով ու արդար մարդ էր: Երբեք մեկին մեկ շահ չէր առնի. «Նա շահի համար բան էլ չի ասում, ինչքան մեր սիրտն ուզում ա վրեն ենք դնում, նա էլ ոչ մի խոսք չի ասում»: Օրհնում-օրհնաբանում էին մարդիկ Խեչանի ազգն ու տակը, մարդասեր հոգին և մարդամոտ խիղճը:

Խեչանի «անբավ հարստությունը» ձեռք էր բերվել, ինչպես վկայում է Պողոչյանը, արդար ու հալալ աշխատանքով, առևտրով ու վաշխառությամբ, եթե, իհարկե, չնչին տոկոսներով մարդկանց օգնելը «վաշխառություն պիտի համարել»: Նահապետական հնօրյա նիստ ու կացով, պատվապահ ու երդմնախոս, ազնիվ ու որդեսեր այս մլիատեր վաշխառուն է անհա, որ դառնում է Սև ջրի գլխին նստող մովրովի և միկիտանչու ստոր գործակցության զոհը: Խեչանենց Խեչանի հյուրասեր բնավորությունը, նահապետական վարքն ու բարքը, ծանրախոհ միտքը և նրբազգաց հոգին իդեալականացնում է Պողոչյանը՝ նրա կերպարի ու տիպարի մեջ դնելով հնօրյա, ավանդական հարաբերությունների նախամեծար գեղեցկության ամբողջ հմայքը: Մարդիկ «էն ժամանակներում» ապրում էին այնպես, ինչպես Խեչանը: Պարզ էին և հավատացյալ, բարի էին և կամեցող, աչք չունեին ուրիշի ունեցվածքի վրա և օգնում էին մերձավորներին ամեն ինչով: Խեչանը սակայն անհետացող սերնդի ներկայացուցիչն էր: Ոչ միայն կորչում-վերանում էին հնավանդ այս մարդիկ, այլև փոշիանում էր սրանց կերպարանքն ամբողջացնող հնօրյա վարքն ու բարքը: Խեչանը դիմադրում է բախտի դաժան հարվածներին՝ հավատացած, որ Սամոն ու մովրովը ժամանակին իրենց պատիժն ստանալու են: Վեպի սկզբից մինչև վերջ մովրով—Սամո—Խեչան փոխհարաբերությունների ամբողջ ընթացքը կառուցված է փոխադարձ ինքնաբնութագրումների մեթոդով: Եթե այստեղ նահապետական բարձրագահ ազնվամտությունն է, ապա այնտեղ ժամանակակից ստորությունը և հրեշավոր ընչաքաղցությունը: Զուգահեռ հանդիպադրումների մեջ պարզ ու որոշ ներկայանում են ուղղագիծ կերպավորման բոլոր թերությունները: Խորամանկամտությունը, փողի պաշտամունքը, ընչամոլ ու անբարո վարքը Սամոյին դարձնում են մեկն այն նորելուկ հերոսներից, որոնք կյանքի են կոչվել գյուղական նորօրյա հարաբերությունների զարգացման թելադրանքով: Մովրովների, յասավուլների, կոզակների, դասավորների զավառային կազմակերպության իսկական աջակիցն ու գործակիցն է Սամոն, «ավազակի ու ռայաթի» բարեկամ փերեզակ գինեվաճառը:

Պողոչյանի ստեղծագործությունը հատկանշվում էր գեղարվեստական տեսանորիզոնի ընդարձակությամբ. գյուղական կյանքը նա դիտում էր

բազմանյուղ և տարբերաբնույթ կապերի մեջ՝ միացնելով սրան ժողովրդական սովորույթի, վարք ու բարքի ընդարձակ ու գունագեղ նկարագրությունները: «Հացի խնդիրը», ըստ Պողոչյանի, շարունակությունն էր «Սոս և Վարդիթերի» ազգագրական ծրագրի: Մյուս կողմից «սկեպտիկյան ուղղությունը» այստեղ վերջնականապես գերակշռություն էր ստացել, և այս էր, որ որոշում էր նրա վեպի գրականության մեջ գրավելիք առաջնակարգ դիրքը: Քննադատական դիրքորոշումը գաղութատիրական կարգերի հանդեպ՝ նրան տարել էր ժողովրդի իսկական ցավերի ու տառապանքների աշխարհը: Նա առաջին անգամ հայացքը դարձնում էր գյուղացու ունեզրկման, կողոպտման ու շահագործման այն տխուր տեսարաններին, որոնք բնութագրում էին հայկական գավառների ու գյուղերի անմխիթար կացությունը: Այստեղ նրա գրիչը, իրոք, ներկառատ մի երանգապնակից էր օգտվում: Նրա համար կարևորություն ուներ ոչ այնքան «ձեի մտածությունը» (կոմպոզիցիան), կամ «դեպքերի դասակարգությունը» (սյուժեն), որքան պատկերն ինքը և սրա հարազատ, լուսանկարչական վերարտադրությունը: Այդ պատճառով նա հաճախ էր ընդհատում պատմության թելը, և ասենք, յասավուլներին բնութագրելու համար, սկսում նկարագրել խաբեբա և անխիղճ այդ մարդկանց վայրենի գործողությունները գավառում: Եթե Պողոչյանին հարկավոր էր գյուղական իշխանավորների շարաշահումները ծաղկել, նա նորից մեկդի դնելով «դեպքերի դասակարգությունը» և ներկայացնում էր «բավչին»—սկզբնահաշվի տեսարանը: Սկեպտիկյան ուղղության ներկայացուցիչը՝ Հաֆուլը, այս անգամ ոչ թե գիշերային առանձնության և լռության մեջ, այլ հենց «գեղի արյունը ծծողների» առաջ բողոքում էր՝ նրանց անօրեն ու անարդար գործողությունները մերկացնելով: Գյուղական կյանքի տեսարաններն, այսպիսով, նկատելի գերակշռություն էին ստանում և որոշակի ոճական երանգ հաղորդում վեպի ամբողջությանը: Վեպը գոյանում էր տեսարանների շարակցումից, սյուժեն ու կոմպոզիցիան ենթարկվում էին այդ շարակցումների անպատեհության կամ պատեհության «քմահաճությանը»: Գրողը իր պաշտոնը ավելի դիտում էր հենց դրա մեջ:

3

1890-ական թվականները Պողոչյանի համար չափազանց բեղմնավոր տարիներ էին: Տասնամյակի ընթացքում գրողը «Մուրճ» ամսագրում հրատարակեց իր երեք խոշոր գյուղավեպը՝ «Ցեցերը», «Բդդեն» և «Հունոն»:

«Ցեցեր» վեպը Պռոշյանը գրել էր Ավ. Արասխանյանի առաջարկությամբ: Այն սերտորեն առընչված է «Հացի խնդիր» վեպի գաղափարաբանական ուղղությանը: Ավելին, այստեղ ավելի հստակ են դարձել այն պատկերացումները, որով առաջնորդվում էր գրողը հայ գյուղաշխարհի հասարակական պահանջմունքները և սոցիալական դրությունը ընկալիս:

Պռոշյանի ռեալիզմը ինչպես «Հացի խնդիր» վեպում, այնպես էլ «Ցեցերում» արդարացնում է միջավայրի իրական-գծային պատկերներով: Տիպականացման նրա մեթոդը մերժում է հոգեբանական վերլուծությունը և կանգ առնում միայն գործողության ու միջավայրի փոխադարձ կապի վրա: Մարդկային լիարժեք բնավորությունը՝ կենդանացված ներքին աշխարհի բովանդակ հարստությամբ և հակասություններով ու սրանից ելնող այն կապերով, որոնք որոշում են արտաքին աշխարհի հետ մարդու ունեցած հարաբերության ձևը, անծանոթ է Պռոշյանին: Նա տեսնում է հատկապես տվյալ միջավայրի գծերը յուրացրած մարդու պարզ արտաքինը: Միկիտան Սամոն կամ Բալասան աղան ռեալիստական կերպարներ են այն չափով, ինչ չափով որ սրանք երևան են հանում իրենց միջավայրի էական գծերից մի քանիսը—այսքանը միայն, բայց ոչ ավելին: Եթե մոտիկից նայելու լինենք պռոշյանական տիպերին, ապա դժվար չի լինի ցույց տալ դրանց ուղղագիծ-միակողմանի բնույթը: Մի դեպքում մենք տեսնում ենք գործողություն-միջավայր հարաբերությունից ծնված հատկանշանակություն (որ է Պռոշյանի տիպականացման հիմնական եղանակը), մյուս դեպքում՝ նկարագրական հանձնարարականի պարզ զուգակցում տվյալ մարդկային բնավորությանը: Երկու դեպքում էլ տիպականացումը ձեռք է բերվում գծային եղանակով, այսինքն՝ կերպարը իրականանում է միայն այն ձևերի մեջ, որոնք արդյունք են արտաքին փոխհարաբերության կամ միջավայր-գործողություն կապի սուբյեկտիվ ճանաչման:

«Ցեցերի» գաղափարաբանական իմաստը խարսխված է գյուղական երկու տիպերի՝ Արտեմ Սերգեյիչի և Բալասան աղայի հասարակական գործունեության հակադրության վրա: Եթե Արտեմ Սերգեյիչը այն «հանճարավոր» տանուտերն է, որ կարող է համայնքի բարոյական ու տնտեսական շահերը համադրել պետական օրենքից ելնող ժողովրդասիրական շահախնդրություններին և հասարակաց դատավորի իր միսիան գլուխ բերել, ապա Բալասան աղան սրան հակադրված այն ուժն է, որ ավերակում է համայնքի միասնությունը, մարդկանց մղում ագահության, կործանում թույլին և ճանապարհ հարթում կամայականության ու դաժան ընչաքաղցության առաջ:

Ինչպես «Հացի խնդիր» վեպում, այնպես էլ «Ցեցերում» Պռոշյանը «հասարակաց դատաստանին» հակադրում էր անարդարությունը պատժապարտող ծանր լախտի դեր: Այս մտայնության հենքը հասարակական կառուցվածքի և ղեկավարման պռոշյանական պատկերացումներն էին: Վիպագիրը այն ամենը, ինչ անարդար էր կյանքում և դատապարտության արժանի, բացատրում էր «օրենքի» հանդեպ մարդկանց կատարած զանցանքներով: «Օրենքի» տակ նա հասկանում էր ամենից առաջ պետական օրինադրությունները և ապա ավետարանական համամարդկային հանձնարարականները, որոնք ուղղակիորեն գործում են մարդու ամենամեծ դատավորի՝ խղճի հետ: Պռոշյանը տեսնում էր, իհարկե, հասարակության դասային բաժանումները, տեսնում էր, որ երկիրը, կյանքը ղեկավարվում է կառավարչական հիերարխիային ենթակա հաստատությունների օգնությամբ, տեսնում էր նաև, որ ենթատիանավորումը այդ սիստեմում ստատինանաբար տանում է գեպի մարդկանց ղեկավարման ավելի ու ավելի անբարոյական ու բռավական խնդնուրույն եղանակների գործադրումը: Փոխարքայից մինչև գավառապետ և գավառապետից մինչև տանուտեր ձգվում էին պաշտոնների և հաստատությունների ամբողջ շարքեր: Այստեղ չէ, որ նա որոնում է կյանքի հակասությունների բացատրության բանալին: Նրա համար կարգը և դրան հովանավորող օրենքը անձեռնմխելի են, ճիշտ այնպես, ինչպես նաև նահապետական բազմաղարյան սովորություններն ու հաստատությունները: Նա միայն մարդկանց մեջ է որոնում հասարակական շարքի բուն արմատը: Մարդիկ իրենք «չեղվում են» կարգից և օրինապահությունից, հաշվի չառնելով ոչ կյանքի փոփոխական ու անցողիկ բնույթը և ոչ էլ «հասարակաց դատաստանի» անողոք ու մշտնջենավոր արդարամտության հետապնդումը:

Պետություն—եկեղեցի—օրենք և «հասարակաց դատաստան»— անա երկիրը պահող հիմնական ուժը և միջոցները: Գրողը առաջնորդվում էր անա այս պատկերացումներով, երբ մերկացնում ու դատապարտում էր մարդկանց անիրավությունը և ընչաքաղցությունը: Եթե հարուստը աչքի առաջ ունենար մերձավոր շահը և կյանքի ունայնամտությունը, եթե ապրատը «չնուսանանվեր յուր ներկա դառն դրության վերա.. այսքան գեղծումներ չէր պատահիլ, տնանկությունը արհամարհված չէր լինիլ, իրավունք, արդարություն և պարտանանաշություն իրենց նշանակությունը պահպանված կլինին և մարդկությունը յուր բռնելիք ընթացքից չէր շեղվիլ»: «Հասարակաց դատաստանի» բախտորոշ և արդարակշիռ ձեռքը բուն էության իրականացնում էր վերին քարձրյալի կամքը:

Մի անգամ գյուղամիջում հավաքվածները զրուցում էին Բալասան աղայի մասին.

— Ցեց ա, որ մտել ա մեր ջանը,— ասում է մեկը:

— Ցեցը նա չի, ցեցը նրա ոտքերը լիզողներն են...

— Էլիկ չե՞ք (համայնք՝), հասարակություն չեք, դրան մի լսեք, գեղ կանգնի, գերան կկոտրի, գեղովի խոսքը մին արեք, սև գցեցեք ձեր կոտն ով ա բռնում:

Պողոյանը, իհարկե, այնքան միամիտ չէր, որ մտածեր, թե միայն ներքին համաձայնությամբ և միասնականությունով հնարավոր է կանխարգելել ցեցապետի գործողությունները: Հենց բնաբույսների նկարագրությամբ նա քանուն է տալիս մարդկանց այդ պատկերացումը: Բացի դրանից, նա պատկերում է տնտեսական այն կապերը, որոնք որպես սարդոստայն հյուսել է Բալասան աղան, խճճված ու բազմանյուս այդ ցանցի մեջ ներքաշելով գյուղական չքավորությանը: Միաբանվելու համար պետք էր նախ այդ կապ ու կապանքից ազատվել: Իզուր չէր խուզոն ծաղրում գյուղական ինքնավարությունը: Բալասան աղայի հետ խոսելով «նոր օրենքների» մասին, նա չափազանց դիպուկ մի նկատողություն է անում. «Հենց էս դրսի ֆորմերն են, թե չէ էլ ետ վաղուցվան տանուտերությունն ա, դատաստանն օր առաջ տանուտերն իր քուրսու տակին ա տեսած ընում ու փողերը ջերն ածում, մենք էլ մի դնիցն ենք մեզ համար ճանգում ու ծծում, նորը հենց ընդով ա ջոկ, որ առաջ ուտողը մին էր, հիմի մի քանիսը»: Իրադրության այսպիսի ռեալ արժեքավորումը և ստեղծված կարգերի այսօրինակ բնութագրականը ավելի քան հակասում է գյուղական ինքնավարություններին և «բարերար օրենքին» տված Պողոյանի գնահատությանը: Բացասական հերոսը և գրողը միևնույն երևույթի ըմբռնման միանգամայն տարբեր ծայրաբևեռներում են կանգնած: Բայց չէ որ ճշմարտությունը խուզոյի կողմն է: Հակասությունը Պողոյանի համոզումների և նկարագրած իրականության միջև առաջանում էր այն բանից, որ գրողը պարզապես չէր կարողանում տեսնել օրենքի և օրենքը գործադրողների միջև եղած կապն ու կապակցությունը: Պատմական ճշմարտության նրա ըմբռնումը նույնքան սուբյեկտիվ էր, որքան դրա մեկնաբանությունը: Այդ պատճառով Պողոյանի սոցիալական հայացքների ընդհանուր համակարգում առաջանում էին իր նեղվածքներ, գեղարվեստական իրականության և իրական հարաբերությունների համապատասխանության ռեալիստական սկզբունքը խախտվում էր ամեն անգամ, երբ գրողը փորձում էր պատմական և

հասարակական ճշմարտությունների իր սեփական ըմբռնումները հանձնարարել՝ որպես հավիտենական բարոյաբանական սկզբունքներ:

Եթե «Հացի խնդիր» և «Ցեցեր» վեպերում Պողոյանը, այնուամենայնիվ, չկարողացավ թափանցել գյուղում կատարվող սոցիալական տեղաշարժերի բուն իմաստի մեջ, եթե նրա համար անբացատրելի էր մնում գյուղական շարաշահումների և բռնադատումների դասակարգային բովանդակությունը, և եթե մյուս կողմից՝ նա կառչում էր «հասարակաց դատաստանի» գաղափարին, որպեսզի կարողանա գոնե մտովին փրկել կործանվող գյուղական համայնքը, ապա «Բղդե» վեպում նրա հայացքը կարծես ազատվում է ռոմանտիկ մթագնումից և համակվում սոցիալական իրավիճակը գնահատող մտքի պայծառատեսությամբ: «Բղդեն» թերևս գրված է շատ անփույթ և արագ, քան Պողոյանի մյուս վեպերը: Բայց դա բնավ էլ չի խանգարում տեսնել այս վեպի գաղափարական մտայնության նոր շերտերը:

Գյուղական իրականությունը «Բղդեում» արտահայտված է մի նոր կողմից: Գործողությունների կենտրոնում կանգնած է թեժաթուխ մի փերեզակ, որ արագորեն մագլցում է «վաշխառուական կարիերայի» սանդուղքով: Դեռ 10—12 տարեկան մանուկ, ապագա այս հարստահարիչը, համակվում է փողի կուտակման անմարելի տենչով: Աշտարակում վաստակած 10 կոպեկանոցը կարծես մատնանշում էր հիմնադրամի կախարդական զորությունը: Փողին վերագրելով մոգական ուժ, Պողոյանը կանխավ երեխայի բնավորության մեջ դնում էր դրամասիրության միստիկական գծեր: Ոմանք այս երևույթի մեջ տեսնում են պարզապես ռոմանտիկական բևեռացման իրողությունը: Սխալանք է սա, որ, անշուշտ, Պողոյանի աշխարհայեցության թյուրըմբռնման արդյունք է: Ամբողջ խնդիրն այն է, որ գրողը չափազանց մակերեսային պատկերացում ուներ վաշխառության ծագման ու առաջացման հասարակական պատճառների մասին: Չկարողանալով բացատրել դրամակուտակման տնտեսական երևույթը կամ չկռահելով, որ դրա տակ գործում են ժամանակակից սոցիալական հարաբերությունների ընդերքում առկա ուժերը, Պողոյանը մարդկանց մոլեգին փողասիրության անհասկանալի կրքի մեջ դնում էր միստիկական բովանդակություն: Երեխան կամ մանուկը, ինչպես ասում է Պողոյանը, կյանքի ու աշխարհի մասին տակավին չունի իր հաստատուն պատկերացումները, երբ նրա մեջ ծնվում են դրամապաշտության բնազդներ: Փողը դառնում է ոչ միայն պաշտամունքի առարկա, այլև պարեգոտում է մանուկի հոգեբանությունն ու միտքը մի

անխախտելի շղթայով: Բղդեն իր պահվածքի մեջ մարմնավորում է բնական ընչասիրության և փողապաշտության մոլուցքը:

Կարքի գյուղի նախընթաց պատմությունն անելով և ուրվագծելով կարքեցիների առևտրական գործի մեջ ցուցաբերած հմտությունները, Պողոշյանը փորձում էր բացատրել Բղդեի՝ որպես անհատականության ու տիպարի, երևան գալու պատճառները: «Այդ հարպիկ ժողովրդի, այդ առևտրականության ընդունակ մթնոլորտի զավակն էր կոլոտ շարշի Բղդեն»,— ասում էր գրողը,— կանխահուշելով այն միտքը, թե ընթերցողը գործ պիտի ունենա մի իսկական կարքեցու, մի «սատանախաբ բնավորության» հետ:

Պողոշյանը հանրածանոթ իրողություններ վրա էր հենում գյուղաշխարհի իր պատկերացումները: Նրա համար ինչպես վաշխառությունը, այնպես էլ առևտրական գործը դատապարտելի էին ոչ թե այն պատճառով, որ օգտակար չէին գյուղացուն կամ գյուղական համայնքին: Հարուստ մլմատեր և վաշխառու խեչանենց խեչանը, տեսանք արդեն, գրողի համակրանքը շահած գեղագեղիվ այն բնավորությունն էր, որ որպես իդեալատիպ ներկայացնում էր հայ հանապետական գյուղի վսեմ կերպարանքը: «Բղդեում» Ջնուդ Աղաջանը նույն բարի վաշխառուն է, ազնիվ առևտրականը, չքավորներին օգնող բարերարը, քրիստոնեական երկյուղածության և մարդասիրության վարքի իսկական հերոսը: Սրանք գյուղի և գյուղացու նեցուկներն են, հնօրյա ավանդապահներ, աղքատի ցավը դարմանող առաքյալներ, միջնորդներ պետության և գյուղական չքավորության տնտեսական հարաբերությունների կարգավորման: Այս կարգի վաշխառուների և հարուստների վերաբերյալ Պողոշյանը պահած ունի մի հատուկ համակրանք: Ինչպես խեչանանց խեչանը, այնպես էլ Ջնուդ Աղաջանը ի վերջո փողատենչ նորելուկների զոհն են դառնում: Եթե միկիտան Սամոն զրկողի իր ամբողջ հմտությունը բանեցնում է խեչանանց «ամբավ հարստությունը» սեփականելու, ապա Բղդեն ելնում-խորտակում է իր բարերարին և այն էլ առանց որևէ հիմնավոր պատճառի: Բղդեն անբացատրելի ատելությամբ է լցված դեպի այդ հեզաբարո, առատիրտ, աղքատասեր վանառականը: Միկիտան Սամոն յասավուլ Մարգարի առաջնորդությամբ ու խորհուրդներով է նետվում դեպի իր զոհը: Բղդեն նախահարձակ է լինում, ինչպես թավուտում դարանած հովազը, նրան պետք է պարզապես կործանել Ջնուդ Աղաջանին: Պողոշյանը միայն գեղարվեստական հոտառությամբ է կռահում այդ սարսափելի ատելության սոցիալական իմաստը: Ջնուդ Աղաջանը ըստ երևույթին շարժում էր ոչ միայն փերեզակի վանականական նախանձը, այլև հակադրվում էր

Բղդեին որպես այն բարձր մարդկային սկզբունքների կրող, որոնց դեմ պատերազմ էր հայտարարել նույն ինքը Խոջա Բաղդասարը: Երկու դեպքում էլ անակնկալ հարստացած վաշխառուի ատելությունը դեպի բարերարը տրամաբանվում էր մրցակցին անխնա ոչնչացնելու այն բարոյականությամբ, որ սեփականել էին նորելուկ դրամաշորթները, և, որը կռահում, բայց և միայն կռահում էր գրողը՝ չկարողանալով տալ այդ փաստի ոչ հոգեբանական և ոչ էլ առավել ևս գեղարվեստական հիմնավորումը:

Բղդեն՝ այդ խստասիրտ, փողատենչ գյուղական Կրեսոսը, աստիճանաբար կապեր է հաստատում ոչ միայն գավառային վարչության ու ոստիկանության հետ, այլև կապալառուների, որից հետո նրա առաջ բացվում է վաշխառուական հաղթարշավի լայն ասպարեզը: Սկսելով մանրավաճառությունից և անցնելով մուրհակային խարդախումների գործառնություններին, Բղդեն մուտք է գործում պետական կապալների յուղոտ փողաշխարհը:

Հարստանալու համար միջոցների մեջ ոչ մի խորություն չդնող ավազակաբարո այս մարդու գործունեությունը Պողոշյանը ներկայացնում է որպես տասնեհիններորդ դարու երկրորդ կիսաշրջանի «վերափոխական տակնուվրայության» իսկական արտահայտություն: Ճիշտ է, գրողը չափազանց աղոտ պատկերացում ունի քաղաքներում կատարված տնտեսական հեղաշրջման բուն ընթացքի մասին: Այստեղ նա տեսնում է միայն հայտնի առևտրական տների կործանման և անհայտների երևան գալու իրողությունը միայն, մի բան, որ ընդգծում է քաղաքային կապիտալիզմի վերաբերյալ գրողի ունեցած սահմանափակ պատկերացումները: Գյուղական իրականության մեջ նա նշմարում էր ավելի կարևոր տնտեսական իրողություններ: Մասամբ ճիշտ էր կռահում ապրանքադրամական հարաբերությունների պահանջով ասպարեզ ելած գյուղական բուրժուազիայի հասարակական դիմագիծը: Բայց, ինչպես արդեն ցույց ենք տվել, Պողոշյանը չէր կարողանում տեսնել ոչ նորագույն տնտեսական երևույթների պատմական ետնախորքը, ոչ էլ առավել ևս հասարակական ապագան:

Բղդեի գործունեությունը «վերափոխական տակնուվրայության» հետևանք համարելով, Պողոշյանը աշխատում էր գյուղական իրականությունը բզկտող նորամուտ հարաբերությունների լայն ֆոնի վրա ուրվագծել «զարմանահրաշ նորոգությունների» նշմարիտ բովանդակությունը:

Մի անշան, արհամարհված մարդուկի, որպիսին Բղդեն էր, կենսագրության դրվագները գրողը օգտագործում էր գծելու համար դարի «ընդ-

հանրական հեղափոխության» իսկական պատկերը: Դա փողի հանդեպ կույր և միստիկական սիրո մի իսկապես խելահեղ արշավի պատմություն էր, որ կանխում էր երևակայության ամեն մի թռիչք և, որպես ասում է Պողոշյանը, «լսողի անձը սարսափեցնում»: Փողապաշտությունը, որպես վարակը, հարակում էր «միստիտ և պարզ մարդկանց» կենցաղը, հոգին, գիտակցությունը: Ամբողջ լավը, մարդկայինը, բարոյականը դատապարտված էր վայրենաբարո հաշտման: Գրողը պարզապես շփոթված ու վախեցած էր հանկարծական հեղաշրջումի ամբողջ ընթացքից, չէր կարողանում հաշտվել այն մտքի հետ, թե մեկընդմիշտ պիտի կործանվեն իդեալական նկատված մարդկային այն փոխհարաբերությունները, որոնք մի քանի-երեսուն տարի առաջ ծաղկում էին հայկական միջավայրում:

Պողոշյանի սոցիալական երազանքը հանգչում էր նահապետական օջախի դարերը հարատևող բարոյաբանական սկզբունքների վրա: Սերն ու միաբանությունը համայնական կենցաղի ու ապրելաձևի «բարոյական աղյուսքն էր», որ օծում էր քաղաքային և գյուղական հանրությունը այլասիրության «արբանվեր ջրով»: Պարզ է, որ հայր Աբրահամու «լուսեղեն» կերպարը փայփայող մեր գյուղացիը բղդեների հանդեպ լցվելու էր անհաշտ մի թշնամանքով և պիտի անխնա հարվածեր ընչաքաղցության միստիկան, որպեսզի գոնե մասամբ հագուրդ տար ատելության ու զզվանքի այն զգացումներին, որ ծնում էին նրա մեջ գյուղական համայնավարության սոցիալական դավանանքը ոտնահարելու ելած մարդիկ: Պողոշյանը բարձրագի իր գրիչը անհուն զայրույթով էր շարժում «վերափոխական տակնուվայության» հերոսների դեմ և մի այլ պատճառով: «Ցեցերի» հրատարակումից հետո նա ապրեց գաղափարական հետաքրքիր մի շրջադարձ: Եթե նախկին գյուղավեպերում «հասարակաց դատաստանը» և «փրկարար բնիչը» այնուամենայնիվ գալիս էին մեղմելու և հուսադրելու վիպագրին, թե ամեն ինչ վերջնականապես կորած չէ, և որ վերադարձի ճանապարհը նույնքան բանուկ է, որքան այդ ճանապարհով ընթանալը, ապա «Բղդեում» նշմարելի է հուսահատական հայացքի առկայությունը: Թեև իբրև բարոյախոս նա դեռ ամբողջովին չի կորցրել իր հույսը մարդու ներքին դատավորի՝ խղճի և աստծու հանդեպ, այնուամենայնիվ, արդարությունը վերագտնող կամ վերհաստատող բնիչի իդեալական կերպարանքը այլևս չի առաջնորդում նրան հասարակական շարքը պատժաչարտելու վսեմ գործի մեջ: Գրողը կարծես թե հասկացել է ռոմանտիկ ու անհող այդ միջամտության ապարդյունությունը:

Բղդեն քիչ-որ պահ Կիզի—մատուռի ներսում հանդիպում է «կրոնական զգացմունքի վիթխարի անավորությանը» և չարչիական կեղծավորությամբ անհնատուր լինում:

«Մեղա բեզ, տեր, սեերես մեղավոր եմ քո առաջին», — ասում է նա: Սակայն այդ միայն մի պահ. հետագա գեպքերը ցույց են տալիս, որ «չերմեռանդության և կրոնասիրության մեջ սնված, քայց մայրության մեջ ամենը կորցրած գյուղացի երիտասարդը» բնդունակ է հաղթահարել նախապաշարմունքի պատնեշն անգամ: Նույնիսկ այն ժամանակ, երբ նրա ձեռքերը թաթախվում են Շողիկի արյան մեջ և, կարծես, բացվում գործած եղեռնագործության մանրամասները, նա դուրս է գալիս մատուռից և հասնում համբավավոր սուրբ Հովհաննեսի աղբյուրը՝ ոչ թե հոգին փրկելու, այլ մաքրագործվելու համար: «Այս ջուրը,— ասում է չարչին,— թող մաքրի իմ ձեռքերից նորա արյունը և մեղքի նորա սերն ու հիշատակը»: Ուրեմն ոչ թե զղջում, ոչ թե խղճի տառապանք, այլ վրեժխնդրությանը հագուրդ տված մարդասպանի իսկական վայրենաբարո ուրախություն. «դեհ... հիմի թող Ջհուդ Աղաջանն էն կյանքումը պսակի յուր աղջկան, յուր սիրած Բստինենց Սնոյի վրա ու հարսանիքին յուր կնոջ հետ ձեռքունկ պար գա, իսկ ես այստեղ պար կգամ, որ իմ թշնամիներից վրեժս առա: Ճիշտ որ Բղդեն ձեռքերը բարձրացրեց և պարելով ճանապարհ ընկավ դեպի տուն»: Այս վերջաբանը ավելի ակնառու է դարձնում պողոշյանական համոզումների մեջ տեղի ունեցած շրջադարձը: «Քննությունը,— ասում է Պողոշյանը,— ոչինչ մեղադրանք չկարողացավ բարդել Բղդեի պարանոցին»: Հասարակաց անողոք դատաստանն, ուրեմն, անուժ էր Բղդեի հանդեպ: Եվ դա հասկացել էր գրողը. կյանքը ուներ իր զարմանալի և անողոք տրամաբանությունը, որին որքան էլ անձնապես անհամաձայն, այնուամենայնիվ, չէր կարող չհետևել նա, քանի որ նախկին գյուղավեպերի բարոյախոսական հանձնարարականները ոչ միայն չշանեցին մի ընդհանուր համակրանք, այլև դիտվում էին որպես գյուղական իրականության ճշմարտացի պատկերը խաբարող «վիպականության» արգասիք:

«Հունոն» Պողոշյանի ամենահավաք և ամենամշակված վեպն է: Ըստ երևույթին, 90-ական թվականների սկզբներից մինչև դարավերջ գրողի միտքը զբաղված է եղել Հունոյի կերպարի գեղարվեստական իրացման խնդրով: Ձեռնարկելով վեպի գրությանը, Պողոշյանը հարկադրված էր գեղարվեստորեն հիմնավորել նախ՝ Հունո անհատականության երևան գալու պատճառները: Գրողի պատկերացմամբ պատահական անիրավությունը Հունոյին ներքաշում է ողբերգական այն դեպքերի հորձանուտը,

որ երբեմ չէր կամենա ընկնել ազնիվ աշխատանքով սեփական հացը վաստակող գյուղացի այդ երիտասարդը: Ընկերոջ տրամադրության դիմաց նա գործել էր պատվասեր մարդու ամբողջ դաժանությամբ: Հունոն արդեզրվել էր աղքատների պաշտպանությանը և պատերազմ հայտարարել գյուղական ցեցերին: Տառապյալները նրա մոտ էին գտնում իրենց մխիթարությունը, զրկողները՝ պատիժը: Վեպի նախադրության մեջ Պողոյանը վեր էր հանում երկակի այն վերաբերմունքի իրական պատճառները, որ հանդես էին բերում Հունոյի նկատմամբ գավառական մաքր, ստորին պաշտոնեությունը և հասարակ ռամիկը:

Նոր Բայազետի քաղաքային հրապարակում անցուդարձ անողների բազմության մեջ կանգնել էին երեքը՝ հեղինակը, գավառական ոստիկանության ստորին ծառայողներից մեկը և «մի ուրիշը» ու խոսում էին Հունոյի մասին: Լազր Գերասիմիչը խորհուրդ է տալիս պաշտոնական գործերով Գեղամա լճակի հարավային գյուղերը մեկնող Պողոյանին մի քանի օրով— հետազոտել հանապարհորդությունը, մինչև որ դազախներն ու չափարները կբռնեն Հունոյին. «...Իմ կարծյոք, ամենից անվտանգ ժամանակն է գնալու, մինչդեռ Հունոյին չեն բերել,— միջամտեց մի ուրիշը,— Հունոյին ասված մի արասցե, եթե բռնեցին, գլուխը մի սոխ կգտնա, Ղարաբաղի կողմերից եկած ավազակախմբերը մեզ օր չեն տալ:

— Թողեք, ասված տիրեք,— բարկանում է Լազր Գերասիմիչը,— գետնի տակն անցնի ձեր Հունոն. լույս ընկած օրից՝ մեզանից ոչ մինը հատ կոպեկի երես չի տեսել, իսկ թուրք ավազակներից ամեն ժամանակ ծառայողների բաժինը լի ու լի կար, ամեն մեկս առատ-առատ լվվում էինք»: Բարկացնում էր Լազր Գերասիմիչին Հունոյի ազնվությունն ու մարդասիրությունը: Հին այս կաշառակերը անիծում էր գաղափարական ավազակապետին՝ հասույթի աղբյուրներից զրկվելու համար. ո՞ւմ են պետք նրա ազնվությունն ու մարդասիրությունը, աղքատ հպարտը ավարին երբեք մոտիկ չի գալիս, «քաղցած փորով ճաշին է հնում...»: «Թեկուզ անոթի սատկի,— հարում է Գերասիմիչը,— բայց մեզ ինչո՞ւ է զրկում»: Ուրեմն, Հունոն գավառական ստորին պաշտոնեության զայրույթն ու ատելությունն էր շարժում բնավ էլ ոչ նրա համար, որ սարսափի ու տագնապի մեջ էր պահում երկիրը, հակառակը, տրտնջում ու հայհոյում էին նրան, որ վերացրել է սարսափն ու տագնապը, որ կտրել է ավազակախմբերի ոտքը նանապարհներից, որ զսպաշապիկ է հագցրել ընչաքաղց մեծատուներին և արանց գործակից մարդասպաններին ու գողերին: Հունոն զրկում է գավառական չինովնիկությա՞նը. ճակատագրի որպիսի՜ հեգնանք: Ոստիկանությունը, որ օրենքի պաշտպանն էր ու կատարածուն և հալածում էր Հունոյին, ներկայանում էր հալածվողի դերում և այն էլ ում կողմից՝ օրենքից դուրս հայտարարվածի: Արդյոք հասկանո՞ւմ էր Հունոն, որ օրինապահության և կարգի պաշտպանների հանդեպ «մեղապարտ» իր գործունեությամբ ինքը կյանքով պիտի վճարեր, քանզի այս աշխարհում ով կարող է հանդուրժել զրկվածների արդարադատությունը:

«Հացի խնդիր» վեպին անդրադառնալիս նկատել ենք, որ Պողոյանը գյուղերում կատարվող անիրավությունների պատճառը ոչ այնքան պետական հարկատվության և հողային հարաբերությունների մեջ էր տեսնում, որքան «ստորին և երկրորդակարգ պաշտոնյաների անկանոն գործողությունների»: Լազր Գերասիմիչի թռուցիկ կերպարն ուրվագծելով, գրողը դարձյալ շեշտում էր իր այդ համոզումը, միայն թե այս անգամ նրա միտքը հասու էր ավելի կարևոր մի օրինաչափություն պարզելու: «Հունոն աչքի փուշ է դարձել երկրի վրա աչք ունեցողների համար»,— մի առիթով ասում է Տաթևի գյուղական քահանան: Պողոյանը փորձում էր հենց այս ճշմարտությունը հրապարակ հանել գաղափարական ավազակապետի և նրա դեմ ելած գավառական պաշտոնեության հակամարտի իրական պատճառները բնելիս: Լազր Գերասիմիչը նույնիսկ դեմ չէր «էկզեկուցիա» կատարել գյուղերում՝ Հունոյին բռնելու համար: Ակնարկ էր սա, որի ենթաբնագիրը ճիշտ ընթերցելու դեպքում հնարավոր է ըմբռնել բունտարական—խռովարարական մենակռվի հետ կապված գրողի սոցիալական պատկերացումների էությունը: Մարտահրավեր նետելով «խեղճ գյուղացու քրտինքը լափողներին», Հունոն ելնում էր հասարակության մի ամբողջ կազմակերպության շահերի ու շահախնդրությունների դեմ: Ջենքը ձեռքին՝ չափելով Գեղարքունյաց գավառի լեռ ու դաշտը, նա հինգ տարի շարունակ մարդկանց, աշխատավոր գյուղացիներին ու բարի քաղաքացիներին բերում էր այն համոզման, որ խեղճի ու թույլի, զրկվածի ու անիրավվածի իրավունքը պաշտպանել՝ նույնն է թե արդարությունը վերականգնել: Ուրեմն, կար արդարության մի այլ ըմբռնում, որ Հունոյինն էր, հետևաբար, նաև ժողովրդական վարի խավերինը: Չի կարելի չտեսնել, որ գանգատվելով «աշխարքի անիրավությունից» և այդ անիրավության դեմ զենք առնելով, Հունոն, ըստ էության, փորձում էր հաստատել ռամիկի «օրենքն ու իրավունքը», հակառակ գողի, ավազակի, շահին շահ առնողի, խաբեբաների, անօրենների, «աղամորթու հայտնի ու թաքուն թշնամիների» տենդագին, անզիջում, համառ ախակալության ու զայրույթի: Սակայն Հունոն, ինչպես

ժողովրդական վարի խավերը, հասկանում էր, որ ռամիկի «օրենքն ու իրավունքը» աշխարհ բերելու նրա ջանքերը ճակատագրականորեն դատապարտված են: Ոչ միայն այն պատճառով, որ Հունոյի դեմ ոտքի է կանգնել ստորին ոստիկանության ամբողջ կազմակերպությունը, այլև, որ Հունոն ինքը մենակ է այդ արյունահեղ կռվի մեջ: Հունոն փակում է պաշտոնեության «ծոցը տոգացնողների» նանապարհը: Դրա համար էլ ոստիկանությունը պատրաստ է անգամ «էկզեկուցիայի» դուրս գալ՝ խռովարարին դաժանորեն պատժելու: Չէ՞ որ այդ խռովարարը, ըստ էության, գործում է պետության օգտին և ոստիկանությանը զրկում իր իսկ հասույթի «օրինական» աղբյուրներից: Այստեղ պետության «սուրբ պարտականությունը», որի իսկական կենսագործողն է ստորին պաշտոնեությունը, ոտնահարվում է նույնքան անարգել, որքան դյուրությամբ ավազակը և ոստիկանը համագործակցում են երկիրը թալանելիս:

Դեռ Գուլոյի հետ կապված պատմությունից էլ առաջ Հունոն որոշել էր ոստիկանական ծառայության անցնել՝ ազնվականների դեմ կռվելու: Այն ժամանակ արդեն անիրավության իրական ուղիները տեսնող գյուղացին մտադրվել էր արդարության հետքերով գնալ, մոռանալով հեռատես այն խելոքությունը, որի մասին ակնարկում էր տաթևցի քահանան: Եվ երբ հարկադրված ընկերասպան դարձավ, վճռեց իրագործել վաղուցվա իր մտադրությունը— թև ու թիկունք դառնալ խեղճերին ու արժանի պատիժ տալ «գողերին, ավազակներին, տնամանդներին, կաշառակերներին»: Բայց դա մի «անհեռատեսություն» էր, քանզի Հունոն չգիտեր կամ չգիտենալու էր տալիս այն իրողությունը, որ ավազակներն ու տնամանդները ի վերջո ավարը բաժանում էին այն մարդկանց հետ, ում «ձեռքին է իրանց վիճակը»:

Մի ծաղկով գարուն չի գա: Պառչյանն ինքն էլ համոզված էր դրանում, մանավանդ տեսնում էր, որ գաղափարական ավազակապետի հետագան ի վերջո կանխորոշված է այն պայքարի ելքով, որ Հունոն պարտադրել է երկրի վրա «աշխ ունեցողներին»: Իսկ այդ ելքը ըստ երևույթին միակն էր՝ Հունոյի պարտությունը: Գրողը, սակայն, ուրվագծելով իր հերոսի հնգամյա գործունեությունը, կարծես հուշում էր երկրում ընդհանուր արդարություն հաստատելու այն նախընտրելի եղանակը, որը կապվում էր միայնակ խռովարարի արդարակշիռ բազկի հետ: Բայց սա միայն Հունոյի ամբողջ գործունեությունից մակաբերվող եզրակացությունն է, այսպես ասած, օբյեկտիվ ընդհանրացումը: Պառչյանը, սակայն, ըստ երևույթին, ավելի հակված էր թշվառներին ու խեղճերին

օգնելու ելած գաղափարական հերոսի տիպարի մեջ տեսնել այն իդեալական գործչին, որին ամենից շատ և ամենից առաջ կարիք ուներ հետևելու գավառական պաշտոնեությունը, որպես պետության «սուրբ պարտականությունների» միակ կենսագործող: Իր տեսակետը նշմարտության խոր հիմքեր ունի, ապացուցում է արդարադատությանը ինքնակամ հանձնվելու Հունոյի վերջին գործողությունը:

Հունոն մեղանչել էր օրենքի դեմ, բայց և կանգնել անիրավված գյուղական չքավորության թիկունքին: Հասարակաց դատաստանը Հունոյի կերպարանքն էր առել և իստագույնս պատժապարտում էր չարագործներին: Երկրի կառավարիչներին նա մատնացույց էր անում դժբախտությունների ծովն ընկած չքավոր գյուղացիության իսկական թշնամիներին: «Օրինաց աչքը» դարձնելով գավառում կատարվող հանցագործությունների վրա և կռվելով հանցագործների դեմ, Հունոն, որպես «հասարակաց դատաստանի» լիազոր-իրավատեր, շահել էր ամբողջ հայ ու թուրք աշխատավորության համակրանքը: «Աշխարքն օրենում էր» նրան և ոչ միայն օրենում, այլև ամենուրեք գործակցում և օգնում անվտանգ մնալուն: Գավառի աղքատ ու խեղճ գյուղացիները նրա նեցուկն էին ու ապավենը: Ձորերի լանջերին, քարափների գլխին, հարթավայրերում ծվարած խուլ ու մութ գյուղերը դասակարգային մարտակռվի իրենց լիազորությունները հանձնել էին Հունոյին՝ «հասարակաց դատաստանի» լիազոր իրավատիրոջը, կասկած անգամ չունենալով, որ ազնիվ այդ վրիժառուն գործում է ժողովրդական արդարամտության ու խղճի համաձայն: «Հունոն մինչև օրս ոչ մի անմեղ մարդից մի կաթիլ արյուն չի հանել. նրա սպանածները կամ մարդակեր ավազակներ են, կամ խեղճերի հոգեհանքեր»:

Հունոն ժողովրդական վարի խավերի արդարամտության ու խղճի «մերկացրած սուրն էր»: Իր մենախոսության մեջ նա երևելի խոսքեր է ասում. «Իմ ձեռքով կողոպտված ու կյանքն ու արևները քամուն տված-ները արժանի են եղել պատժվելու, բայց իրանց փողի ու հարստության ձեռքովը միշտ փախս են տվել աստծո ու մարդկանց էս կյանքի դատաստանիցը, ու ես աստծու սուրն եմ դառել ու մի ձեռքով էդպեսների դատաստանն էս աշխարքումը կտրել, որ էն կյանքումն երկնային դատավորը խեղճ գա, նրանց դատաստանը քաղցր անի»: «Հասարակաց դատաստանի» լիազորն ու իրավատերը աստծու հետ գործակցելու իր միսիան հանձնառել էր հասարակաց դատաստանի չգրված կանոնագրքից: Նրա հեղինակությունն ու համբավը ժողովրդական շրջաններում լիցքա-

վորվում էր ճենց այդ միսիայի խոր գիտակցությամբ: Եվ սակայն Պոռշյանը չէր կարողանում հաղթահարել հակասությունն իր իսկ սեփական համոզումների: Հունոյին նա հանձնում էր արդարադատության «համբնդհանուր» այն հանձնարարականի համաձայն, որ հրահանգում էր, թե «օրենքի դեմ մեղանչողը ժամանակին յուր պատիժն ստանում է»: Պոռշյանը չէր կարող դուրս գալ այդ կախարդական շրջանից:

ԿԱՐԼԵՆ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՀԱՅԻ ԽՆԴԻՐ

Ա

ԴԻԼԻԲՈՉ

1840 թե 50 թվականներին, լավ չեմ հիշում ժամանակը, միայն այսքանը գիտեմ, որ Հաշտարաբ աղայանները դուրս գալուց շատ առաջ էր, մի սաստիկ պարզկա գիշեր, ջրօրհնեքից հետո, ութօրեքի ճոճռան շրտերին՝ մի յափունջում կոլոլված ձիավոր չէր հարցնում ոչ ձիու փոքունչոցը, ոչ յուր երեսին սըլլալով խփող սուր քամուն, ոչ աչքերից իջնող արտասունքին և ոչ երկար ընչացքներից կախ ընկած սառցի լուլեքանցը: Նա Աշտարակու կողքովը՝ Կավահանքի կոչված ձորակի մոտիցը բարձրանում էր:

Լուսինն առաջնորդում էր այս ճանապարհին ընտելացած, արագընթաց երիվարին, իսկ ինքն երիտասարդն անդադար կրնկում էր անխոս անասունին և հաճախ-հաճախ սանձը թափ տալիս: Նկատում էր, որ ձիավորն անհամբերությամբ շտապում էր մի մտադրյալ նպատակի ժամ առաջ հասնելու:

Եթե մեկն այդ րոպեին ձեռք տար մեր ճանապարհորդին, կտեսներ անշուշտ, որ կրակի նման այրվում է և, չնայելով ցրտին ու պարզկին, քրտնքի գոլորշին ամպի նման վրայիցը բարձրանում է:

— Կմեռնեմ ու կխափանեմ,— մտածում էր վճռաբար երիտասարդը,— կամ թե տուն ու տեղը քամուն կտամ, հորը կոռի ու բեգյառի[1] տակի կփտացնեմ: Տասներկու տարի յա՝ ոտս ձիու օրզանգուից[2] վեր չի եկել, չորս մովրով[3], վեց քոմակչի[4], երկու դիլբանդ[5] ու քսանի չափ

1 Անօրեն հարկապահանջություն: 2 Ասպանդակ: 3 Գավառապետ: 4 Օգնական: 5 Թարգման:

գրագրներ եմ փոխել ու ոչ մի խեր չեմ տեսել, հիմի անջախ[1] ա վեգո ալլու կաննել[2], մեր Սաքոն քամակիս սուրբ Սարգսի պես կաննած՝ ուզում ա ինձ բախտավորացնել, բաս էլ իմ կերածը հարամ չի՞, որ աչքս բաց աշտարակցի Խեչանենց Խեչանի աղջկանը ճանկիցս դուրս թողամ։ Ինձ ի՞նչ, թե աշխարհքը վրես կխոսի, թե աղջիկը բաշիքյարթմա[3] ա արած, կամ թե հերն ինձ շան տեղն էլ չի քցիլ. նրա ըռխին[4] ո՞վ ա մտիկ տալիս, սաղ ըլի Սաքոն, հերիք ա, որ նա ինձ թև ու թիկունք ա. մին էլ տեսար ֆանդ ու ֆեյլը[5] բանացրեց, աշխարհքն իրար գլխով տվեց, մեջտեղիցը Խեչանի աղջկանը դուրս քաշեց, ինձ փեշքաշ արեց, համ ինքը մի լավ բաղի տեր դառավ, համ ինձ ընչանք շլինքս հարստությունի միջին թաղեց։ Դե՛, գնա՛ մեջը լող տուր, բենքուատ[6] Մարգա՛ր, սիրուն կնիկը կողքիդ՝ դուռ ու տունդ լիքը։ Փտեցի էսքան տարի սրա-նրա աչքին մտիկ տալով, ընչանք ե՞րբ պտի յասավուլություն[7] անեմ. սա էլ փեշակ ա՞, ուղվորը մեղնից լավ ա։ Տո՛, մի ասա՛, ո՞վ միտք կաներ, թե ես քառասուն տարիս անցկացրած, մազերս չալ ընկած, օղորմածիկ Մարոյիս ու երկու երեխեքանցս հողին պահ տալուց հետո, նոր ջահելանամ, փարբեցությունս թողամ, գնամ Աշտարակ, առաջին հարուստը դառնամ։ Ընտուր են ասել՝ աշխարհքս մի նարդիվան[8] ա, մինը նի ա ըլնում[9], մինը վեր գալիս։ Թող մի քանի ամսից հետո մինը համարձակվի ինձ ասի փարբեցի յասավուլ Մարգար, ատամները փշրեմ, ատամները, ըստուց հետո ես աշտարակցի եմ, աշտարակցի, Խեչանենց Խեչանի փեսա Մարգար աղեն, թող ամեն մարդի աչքը չո՞ր բացվի։ Ջանըմ սա՛ն[10] Սաքո՛, նա մենակ ճանաչեց, թե ես ինչպե՞ս մարդ եմ, թե չէ ուրիշ յասավուլ չկա՞ր, որ նրանց համար էս բանն աշխատեր. համա չէ, նա լավ գիտի, թե Մարգարն ի՞նչ իգիթ[11] տղամարդ ա. ասում ա՝ ես կուզեմ, որ ծերությանս վախտը քեզ պես հարևան ունենամ, արի՛, ասում ա, Մարգա՛ր, ինձ լսի՛, Խեչանի աղջիկը քեզ համար ուզենք, քեզ համար լավ երազ եմ տեսել, պտի հարստանաս, համա առաջուց խոսք տուր, որ բանը գլուխ գալուց հետո իմ ներքի բաղին կպած Խեչանի բաղն ինձ բաշխես։ Ի՞նչ ախմախ[12] էի, քիչ մնաց ղաբուլ չէի ըլնում[13], քիչ մնաց Սաքոն էս փառքին ուրիշին պտի տիրացներ. թե որ դու չես ուզում, ասում ա, Ղահրամանին կտամ, նա ավելի սիրուն ու ջահել ա։ Չէ, ախպե՛ր, խելքս հացի հետ չեմ կերել, որ իմ բախտին քացով տամ. Սաքո՛

1 Հազիվ։ 2 Գործս հաջողել։ 3 Բաշիքյարթմա անել, նշանակում է մանկության օրերում տղա աղջիկ նշանելու խոսք տալ։ 4 Բերան, երախ։ 5 Հնարագիտություն։ 6 Ծռատամ։ 7 Ցասավուլ, կնշանակի գավառական ոստիկանության ստորին պաշտոնյա։ 8 Սանդուղք։ 9 Բարձրանում։ 10 Կեցցես։ 11 Քաջ։ 12 Հիմար։ 13 Չէի համաձայնում։

ջան, ասեցի, քեզ ջաբբա[1] մնի տեղակ երկու բաղ՝ թաք ըլի խոստմունքդ կատարես։ Ծո՛վ ա, ծո՛վ Սաքոյի խելքը, բերնիցս խոսք առավ թե չէ, ձիու քամակը թռավ ու դպա էջմիածին։ Իրեք-չորս սհաթից հետո ի՞նչ արեց, ի՞նչ չարեց, գործակալի հրամանը բերեց։ Հենց իմանաս մեր Սաքոն կիվկիվի[2] եղ ունենա, ձեռաց մեր մովրովի գլուխը եղ քսեց, նրա կամքն էլ առավ, նրա հրամանն էլ վրեն ավելացրեց։ Ես ու իմ աստվածը, հալալ ա Սաքոյի կերածը, երկու իրեք մովրով ա փոխել, ամենին էլ մատների վրա խաղացրել ա նոխտեն[3] դնչներին դրած՝ ո՛ր դիհն[4] ուզեցել, ձին դեռն ա քշել. տնաշենը էս մեր Սև ջրի գլխի միկիտանխանեն[5] ձեռքը քցած օրիցն ինքն ա մհալը[6] կառավարողը։ Համա, տո՛, որ էս բանը գլուխ չգա, Խեչանը մովրովի ու գործակալի հրամանները ոտի տակ տա, ես հո աշխարհքի միջին թուք կըլնեմ, իմ հրնկերների լիզվի տակիցն էլ դուրս չեմ կարող գալ. էլից դուրս[7] էն փուչ կենդանի շլտիկ Համբոն։ Է՛հ, ո՞նց թե գլուխ չի գալ, ո՞նց թե հրամանները զորություն չեն ունենալ, էն սրբբ Գրիգորը վկա՝ Խեչանի թոզը քամուն կտամ. մին էլ էն տեսար՝ մեր բոլոր յասավուլներին հավաքեցի ու դուռը կոխեցի, օրով-ցերեկով աղջկանը տանիցը դուրս քաշեցի, թարքիս[8] դրի ու հայդե՛ դպա վանքը՝ գործակալի դուռը. սաղ ըլին հաստաշլինք Մահմադը, սարի արջ Խեչոն, օգոստոսի աղվես քաշալ Ալին ու հավագող Պետոն, ջանները չեն խնայիլ ինձ համար, գործակալ հայը սուրբն էլ մովրովի խաթեր էն սհաթն իր ձեռովը կպսակի, դեռ ես էնպես անեմ՝ ոնց որ ըլի էսօր պսակը խափանեմ, հետո կտեսնենք։ Տո՛, ցնդե՛լ եմ, խելքս կորցրե՛լ եմ, ես ո՞ւր եմ անց կենում։ Աշտարակը ո՞րտեղ թողի, ո՞ւր հասա. ա՛յ սատկած ձի՛, քու իզանը[9] կորել է՞ր, դու չգիտե՞ս, որ ես Աշտարակ պտի մտնեի, առաջին գալդ հո չէր, որ ճամփեն մոլորեցիր,— բարկանում էր մեր շտապողը ձիու վրա ու խեղճ կենդանուն մտրակի տակին մահացնելով՝ ետ դարձնում դեպի Աշտարակ։ Բայց, իհարկե, էս բանումը ձին մեղավոր չէր. շատ էլ հասկացող անասունն ուզեցավ ծուլել ճամփաբաժանիցը դեպի Աշտարակ, բայց, մեր վերացած երիտասարդն այնպես թափ տվեց սանձն և կրնկեց դեպի Մողնու թաղը[10], որ ձին շունչը Պատաշարներումն առավ։

— Ա՜խ,— կատաղաբար փնչացնում էր ձիավորը,— մի մարդի գործ որ աստված չհաջողի, ադամորդին ի՞նչ ա կարող անել, ձին ի՞նչ մեղավոր ա։ Աքլորականչին Սև ջրի գլխիցը ձի նստեցի, էս անտեր թղթի կտորները ծոցիս, միտք ունեի լիսը բացվելուս Աշտարակ մտնեմ, որ

1 Ընծա։ 2 Թռչուն է։ 3 Սանձ։ 4 Կողմն։ 5 Գինետուն։ 6 Գավառ։ 7 Մանավանդ։ 8 Գավակ։ 9 Ուշիմություն։ 10 Բարձրություն։

դեռ պսակ չգնացած՝ հարսանիքը գլխներին հարամ անեմ, քեֆերը պնչներիցը հանեմ, ես էլ իմ մատը տարա իմ աչքը հանեցի. ընչանք ետ կդառնամ Աշտարակ, պսակն էլ կուտեն, պսակաճաշն էլ. նրանից հետո վաղի ասածի նման՝ ճաշ ուտելուց հետո դու արի ձեռին ջուր ածա՛։ Դա՜հ, դա՜հ, մի քիչ էլ ոտներդ փոխի, Դիլիբոզ ջան, էս ա լիս ա, աղոթարանը լավ բացվեց, տեսնում եմ, որ դու էլ տոտա-տոտա ես անում[1], մի սհաթ էլ գնա ու տանուտեր Սիմոնի մորքումը՝ տաք գոմումը դարին ու դարմանը քեզ համար ճտահար կըլնի. մի՛ վախի, սաղ ըլնի էս զամշին[2], սրա շնորհքը տանտիրոջից բռնած՝ ընչանք գզիրն[3] ու վերջին մարդն էլ հայտնի ա. իրանց-իրանց կբերեն ու քեզ համեցեք կանեն, տակդ էլ իստակ կքերեն, չոր փեյին[4] շաղ կտան. քեզ մատա՛ղ, Դիլիբոզ, քի՛չ էլ, քի՛չ էլ, ոնց որ ըլի՝ քաշ արի՛, տեսնում եմ, որ քրտնքումը չղչղպում ես, ջուր ես կտրվել, համա ես էլ քեզանից պակաս չեմ։

Կուզես քեզ մեղադրի՛, կուզես ձիուդ խրախուսի՛ր, կամ մտրակահար արա, անխելք եղբա՛յր, հենց որ ձիուդ սիրտ տալու համար Դիլիբոզ անուն ես դրել, պետք է Սև ջրի գլխից մինչև Աշտարակ էլ քար ու քոռեք չհարցրած, էլ դար ու փոս չնայած, մի գլուխ քշեի՞ր։ Կամ շուտ ճանապարհ ընկնեիր, որ յուր ժամանակին հասնեիր, կամ թե խելքդ գլխիդ պահեիր ու ճանապարհից չմոլորվեիր. իսկական Դիլիբոզ էլ որ լիներ քո գլանկիր[5] ձիգ, որ Արարատանու իլխիներիցն[6] էլ լիներ, էլի ոտները ջուր կիջնեին, ուր մնաց թե քո սուտ Դիլիբոզդ[7]։

— Է՜հ, բանը բանից ն անց ա կացել, էլ ձին չի գնում։— Մեր անծանոթն իջավ ձիուցը, սկսեց սանձից քաշել և հուսահատությունից լաց եզավ, մանավանդ, երբ որ արևը սպիտակ ձնի երեսին արծաթափայլ փռված տեսավ ու աչքերը Մողնու թառիցը դեպի Աշտարակ դարձրեց, ճռները թուլացավ։

— Է՜հ, գլուխը քարը, թե Մողնու ձորիցը գիլանը[8] դուս կգան քեզ պատառ-պատառ կանեն, ա՛յ Դիլիբոզ,— ասաց նա ու յափունջին ծածկեց ձիու վրա, բաց թողեց ձիուն և ինքը ոտքով սկսեց վազել դեպի ներքև։

Անքուն գամփռները, որոնք սովոր են գիշերը մինչև լույս գյուղի շուրջ բոլորտիքը պտույտ-պտույտ անել ու պատառոտել ոչխարի հոտի քամակիցը ման եկող շաբաթներով քաղցած գայլերին, օտարականին

---

1 Հոգնածությունից ոտքերը կարգին չդնել։ 2 Մտրակ։ 3 Գյուղական ատորին ոստիկանության պաշտոնյա։ 4 Քակորի փշրանք։ 5 Անշնորհք։ 6 Երամ, ջոկ։ 7 Դիլիբոզ կոչվում է նժույգի մի տեսակը։ 8 Գայլերը։

հեռվից նկատեցին ու ատամները կրճտեցնելով՝ հաչոցի ձայներն իրար խառնած՝ Կարմրավորի մոտ դիմավորեցին մեր խելոքին։

Երիտասարդը մի քանի անգամ մտրակն օդի մեջ պտտացրեց, որ գուցե հեռանան ու կորչեն անպիտան շները, բայց նրանք ես առավել կատաղեցին ու շուրջ բոլորած՝ մեջ առան տղային և եթե չէր պպզել գետնի վրա՝ ծվիկ-ծվիկ կանեին։

— Էս էլ քեզ մի՛ ցավ,— մտածում էր անբախտ ճանապարհորդը,— խնամիքը հիմի գնացին հարսին ժամ տանելու, ես պտի էս գազանների մեջտեղը կուչ գամ ու սպասեմ, ընչանք որ մի աստծասեր մարդ գա ինձ սրանցից ազատի, որ գնամ ժամիցը դուրս գալուս հասնիմ. ամո՞թ ինձ, հազար ամո՞թ, թե որ հընկերներիցս մինը պատի տակիցն ինձ մտիկ տալու ըլներ էս սհաթը վայն եկել էր ինձ տարել։ Տո՛, ի՞նչ եմ երեխի պես կուչ եկել. սաղ մհալը իմ ձեռին դողացնում եմ, մի քանի շների ահի՞ց պտի կատու դառնամ,— ասեց մեր կտրիճն ու դաշույնը հանեց, տեղիցը վեր թռավ։

Գազանները մեր հերոսի նստելուց հետո պահապանների նման չորս բոլորքը կտրած՝ մռմռում էին և ոչինչ չէին անում. խանչալի ծայրը տեսնելուն պես՝ կրակ կտրեցան և ամեն կողմից հարձակվեցան տղայի վրա։

— Տո՛շ, տո՛շ,— գոռաց նա և խանչալը օդումը պտտելուս մեկին փոքր-ինչ վիրավորեց, բայց մյուս կողմից՝ յուր կոպչից արյունը շռշռալով սրածայր լափշնի[1] կրնկովն իջավ, և եթե կրկին չէր նստել, փոքր էր մնացել, որ շներից մեկը նրա երեսը ծվատում էր։ Առհասարակ այս է միակ հնարքը ոչխարի աներկյուղ շներից ազատվելու. չգիտեմ՝ ի՞նչ են մտածում նրանք, որ նստողի վրա չեն հարձակվում, միմիայն հրսկում են, որ չվեր կենա։

Բարեբախտաբար, մի գյուղացի կուն[2] դուրս ձգելուս տեսավ էս բանն ու քթոցը վայր ձգեց, վազեց օգնության հասնելու։

— Հա՛յ, հո՛յ, կորե՛ք հա, կորե՛ք, ա՛յ շուն, կորե՛ք,— ճչաց գյուղացին, և հնադանդ գամփռները, պոչերը ոտքերի արանքները կոխելով՝ հեռի քաշվեցան։

— Բարի լի՛ս, Մարգար աղա՛, էս աջաբ-աջաբ[3], էս ո՞նց ա որ էս վախտ դու ոտով ես մեր գեղը մտնում, որ ապարանցոց ոչխարի շների ձեռն ես ընկել, ո՞ւր ա քո ձին, յա թե չէ էս մոտիկ գեղերումը մի ձի չգտա՞ր, որ նստեիր։

— Դու դեռ ասա՝ էս ի՞նչ դատի ու զուռնի ձեռն ա գալիս,— պատաս-

---

1 Կոշիկ։ 2 Անասնոց աղբ։ 3 Ի՞նչ կնշանակի։

խանեց մեր Մարգարը,— ամեն բան յոլա կերթա, ձին կորչիլ չի, նրա բանը խեր ա։

— Հարսանիք ա, Ովիկենց Աղաջանի տղեն պսակվում ա Խեչանենց Խեչանի աղջկա հետ։

— Դե շո՛ւտ, շո՛ւտ էս շնորին հակալ-հակալը քցի[1], առաջ ընկի՛. տանուտեր Սիմոնը գալումն ա՞, թե չէ։

— Խաչախպարն էլ հենց ինքն ա, որտեղ որ ա՝ ժամը կտանին։ Վա՜հ, տո, էս ո՞ւմ ձին ա, որ առավոտենց քշերհանա անտեր-անտիրական թառը ներքև ա գալիս՝ մի յափունջի վրեն, չըլնի՞ տիրոնջ գլխին մի բան ա եկել. կա՛ց, բռնենք տանենք տանուտերի կուշտը, լավ ա, դու էլ ըստեղ գանվեցար, Մարգար աղա՛, թե չէ մեր գեղի վրա մի շառ[2] կըցեին, կասեին տիրոնջը դուք եք սպանել, դե հետո արի ու ջուղար[3] տո՛ւր։

— Էդ իմ ձին ա, ինքն իրան կգա,— ասաց Մարգարը,— դու շնորին անցկացրո՛ւ, տանուտերի հետ շատ վռազ գործ ունիմ։

— Հազիր[4] ձին էլ հետներս քաշե՞նք։

— Չէ, ասում եմ, դեռ ինձ տանուտերի դուռը տա՛ր ու ետ արի ձին բեր։

Դեռ հարսին երդիկի տակը չէին բերել, դեռ տերտերը նոր էր ուզում պատրաստվել ձեռք-ձեռքի տալու, որ գզիրը լերդապատառ տուն ընկավ ու տանուտերի ականջումը քչփչաց։

— Դեռ ձեռք-ձեռքի չտաք, տերտե՛ր,— հրամայեց խաչեղբայր տանուտերը,— ես հենց հիմա ետ եմ դառնում, գզիրն ասում էր, որ յասավուլ ա եկել, ինձ վռազ ուզում ա։

— Գյոռ ու ջհանդամը[5] գնա՞ր, ոտը կոտրվե՞ր, սև ըլի՞ր՝ դրանց երեսը ոչ տեսնեինք, խերի համար հո չե՞ն գալ,— ասացին մի քանիսն և սկսեցին աղջիկներ պարել տալով պարապել մինչև խաչեղբոր վերադառնալը։

— Ըստուր տակիցը լավ բան չի դուրս գալ, տղե՛ք, աջ աչքիս վերի կոպը հենց սկսեց խաղալ թե չէ, գզիրը տուն ընկավ, ու հիմի էլ ընենց ա թոչկոտում, որ կասես քյանդիրբազ[6] ըլի,— գուշակեց Խեչանը։

— Ես էֆեմերդուն էսօր մտիկ տվի,— մեջ մտավ տերտերը,— գրում ա, որ էսօր լուսինը թե որ բակ ըլեր, երազն էլ, ամեն բանն էլ օրը պտի կատարվի։

---

1 Հայածիր։ 2 Զրպարտանք։ 3 Պատասխան։ 4 Լավ ես է։ 5 Գերեզմաններն ու գժոխքը։ 6 Լարախաղաց։

— Աստված խեր վրա բերի,— տանտիկինը փոշտաց,— տեսնենք ընչո՛վ կվերջանա։

— Անտե՛ր ըլի էս պինչը,— ձեռքով յուր քթին խփելով նշանացի հասկացրեց տանտիկինը տղամարդկանցը,— շատ փիս եմ փսրձել։

— Տո՛, կացե՛ք, ես մի գնամ տեսնեմ՝ տանուտերն ինչի՞ ուշացավ,— գավազանն առավ դուրս գնաց տերտերը, և դեպի տանուտերի տունը։

Բ

ԱՌԱՋՆՈՐԴՆ ԵՍ ԵՄ, ԲԱԿԼԵՆ ԽԱՇԱՌ ԵՄ ՑԱՆՈՒՄ

— Ինձ լսի՛, Մարգար աղա՛, գոգիդ քարը վեր ածիր[1], մեր 70 գեղ մհալի մեջ ինչ աղջկա վրա մատդ դնես, թե որ չգնամ չուզեմ քեզ համար, ես մարդ չեմ. ես իմ հոր տղեն չըլնիմ, մորից ծնած չըլնիմ, շան մեջքից ընկած ըլնիմ. ամոթ բան ա, ամենքն էլ կլսեն ու կծիծաղան, էս լավ բան չի։

— Դե ես ի՞նչ մեղավոր եմ, քո մովրովի հրամանն ա. կուզես կատարի՛, կուզես ցխի մեջ ըցի՛ր,— ծոծրակը քորելով՝ իրան անմեղ ցույց տալով պատասխանեց Մարգարը տանուտեր Սիմոնի խոսքին։

— Ախպեր, հազիր պարզն ասե՛ս, էլ ո՛ւր ես խոսքն օլոր-մոլոր քցում, սաքի[2] ես չեմ հասկանում, որ քո մտքինդ Խեչանի աղջիկը չի, նրա մալ ու դովլաթն[3] ա՞, թե չէ դու որբևերի, երկու երեխա թաղած մարդ, որ կնիկ առնել ուզեիր, կգնայիր ազափ աղջիկ կուզեի՞ր, էն էլ նշանած աղջի՞կ։ Դու էլ լավ գիտես, որ Խեչանն էս արար աշխարհքի հարստությունի տերն ա. ասենք, ղորթ ա, անտակ ծով ա Խեչանի դովլաթը, էլ վերեքվում[4] չի, էլ թիվ ու համբարք չկա, համա ում ղսմաթ[5] էլավ՝ էլավ, ղսմաթի ճամփեն կապիլ չեն. տասնուհինգ տարի ա՝ բանը քութահ ա էլել[6], հիմի դու եկել ես, տաք ջրի վրա սառը ջուր ես լցնում՝ թե ի՞նչ. քեզ մատա՛ղ, Մարգար աղա ջա՛ն, արի Խեչանիցը մի քանի շահի փող պոկեմ քո ոտների քրեհը, վեր կա՛ց, աստծու անումը տո՛ւր, քո ճամփեն գնա՛. մովրովն էլ որ հարցմունքս անի, ասա՛, գնացի տեսա՝ պսակել են, ես էլ մի կուշտ փլավ կերա պսակաճաշին, մի երկու թաս էլ գինի վրեն խմեցի, ասուված շնհավոր անի ասեցի ու երեսս ետ թեքեցի։

---

1 Փիլանիր այդ բանը։ 2 Իբր թե։ 3 Կալվածք և հարստություն։ 4 Հաշաքվում։ 5 Բախտ։ 6 Վերջացել է։

— Ի՞նչ ես երկար կաստամանին զցել[1], տանուտեր Սիմո՛ն, դու ինձ խելք ո՞ւր ես սորվացնում, ես որ կամ՝ մի հրամանակատար մարդ եմ, ինձ ղրկել են, որ քեզ էս հրամանը տամ ու գլխիդ կաննեմ՝ որ կատարվի. չես անի, պսակը չես խափանի, ես էլ ղամշիս կպտրտեմ, հարսանքավորի ջանին կընկնիմ ու ծակը կկոխեմ։ Ախար թե որ սրա մեջը մի բան չըլներ, գործակալ հայր սուրբն ընչի՞ էս գիրը կգրեր, որ տերտերը չպսակի. հալբաթ[2] մինը գնացել մատնել ա, որ մեջը չհասութիւնի պես բան կա, նա էլ էս հրամանը թվանքչու ձեռով թոցրել էր Սև ջրի գլուխը մովրովին, որ յասավուլ ղրկի, պսակը խափանել տա։ Ես քեզ ուզում չէի գործակալի թուղթը շանց տամ, տերտերի վրա էր, ու ընչունքի ինքը տեր հայրն էլ հրես իր ոտովն եկավ, հիմի բանը կպարզի։

Ասաց յասավուլ Մարգարն ու գտակածալիցը մի ծալմլոտված թղթի կտոր հանեց տվեց մտնող տերտերին, մի կողմից էլ խոնարհությամբ աչը համբուրեց։

— Աստված օրհնեսցե, Մարգար աղա՛,— փնթփնթաց տերտերը ու ակնոցները հանեց աչքերին դրեց, և թուղթն աչքերից հեռու բռնած՝ սկսավ այս ու այն կողմը դարձնել։

— Ձեռքիցն երևում ա, որ մեր գործակալի գրածն ա,— ասաց տերտերը,— բայց աչքերս չեն ջոկում, տունը մութն ա, մի գնամ դռանը կարդամ, կամ թե չէ, տանուտեր, լավ կըլնի, որ մարդ ղրկես, մեր դերձիկ Ստեփանի տղին կանչել տաս հարսանքատնից. նա, աստված իր հորը բաշխի, ջրի պես կկլկլացնի կես սհաթումը։

— Աղբաթ խեր[3], տերտե՛ր,— քմծիծաղ տվեց տանուտերը,— սաքի որ սուտ փահլեվանի պես գյոզլուկը[4] ձեռաց հանեցիր, քնթիդ ծերին տնկեցիր հա՛, տեսնում չե՞մ, որ բլբլի պես ծլվլացիր. էլ աչքերիդ ի՞նչ ես մեզ գնում, մենք հո իրար ճանաչում ենք. ահի տարին ի՞նչ էիր, թե մահի տարին ի՞նչ ըլիս. հա էդ ես ու էդ ես. մենք հասակակից մարդիկ ենք, կարոտ մնացի, որ մի օր տեսնեմ քեզ մի բարովագիր կամ մի սանադ[5] գրելուս, յա ուրիշի գրածը կարդալուս. քունն էն ա— խոնարհեցո՛, ապրեցո, հոգվոց, պահպանիչն ասես ու ժամուցը չեբդ քցես։ Գզի՛ր, գզի՛ր,— ձայն տվեց տանուտերը՝ դուռը բանալով,— շուտ հասի՛, էս սհաթս դերձիկ Ստեփանի տղին էստեղ կանչի, թե՛ զ, ոտիդ վրա ե՛տ ես դառել։

— Խեր ըլի[6], Մարգար աղա՛, ի՞նչ կա էսպես քշերհանա,— դարձավ տերտերը դեպի յասավուլը,— էլ ի՞նչ զուլլուզ[7] ունիք մեր խեղճ խալխի գլխին, ողորմելիքումն էլ ոչ ջան մնաց, ոչ տաշտերումը հաց. էս ինչքա՞ն կոռ ու բեգյար, ինչքա՞ն խարջ[1] ա, որ էս մի քանի տարի իրար վրա ողորմելի ժողովրդի շլնքին բարձել են։ Ես ըլիմ իմ կարգը, էս ա վաթսուն տարիս մոտենում ա, դու դեռ ջահել ես, աստված զորացնի, թեկուզ տանուտեր Սիմոնին հարցրո՛ւ։ Փառք աստծու, ասենք հիմի քրիստոնեի աշխարհք ա, հիմի մեր խաչին ու հավատին հայհոյող չկա, համա էս ի՞նչ ա. քանդեցին էս ձեր տնաքանդ մովրովները։ Ասենք ես քեզ համար չեմ ասում, Մարգար աղա ջա՛ն, դու մեր որդին ես, հայ քրիստոնյա ես, բայց դու ինքդ էլ գիտես, որ առավոտենց տեղիցը շուտ զարթնողը խեղճ ժողովրդի գլխին ա չաքուչ կոտրում։ Շլապկա[2] չդառավ, մեր գլխին պատիժ ու կրակ դառավ, ով ծածկում ա, էլ աստծու ծրիցն ըլում ա, իլլաքի թե[3] մեր հայերը։ Ախար տես՝ աշխարհքն ի՞նչ օրին ա հասել. անցյալ օրը մեր քուչումը հավաքված՝ զրից ենք տալիս. մին էլ էն տեսնեմ, որ մեր հոշականցի Սուտասանենց Նեսոն, որ Սինոդումը գրագիր ա, ձիու վրա նստած՝ եկավ. հոգի ունեմ տալացուկ, օրհնյա ի տեր ասեց ու ձին կանգնացրեց։ Ամենքն էլ տեղներիցը վեր կացան, գտակները վեր կալան, գլուխ տվին, բայց ես ծեր մարդ, էն էլ ինչքան չըլնի՝ տերտեր, աստված օրհնեսցե ասեցի ու հարց ու բարով արի նստած տեղիցս։ Ախար ինձ ի՞նչ կտազեր երեկվա երեխի համար ոտի վեր կենալ։ Ի՞նչ ես կարծում, Մարգար աղա ջա՛ն, ի՞նչ ասի, որ լավ ըլնի. ոչ տարավ, ոչ բերեց, թե՝ տերտե՛ր, դու քո սպիտակ միրքիցդ ամանչում չե՞ս, որ ես գալիս եմ ու դու տեղիցդ վեր չես կենում։— Ա՛յ որդի, Նեսո ջա՛ն,— ասում եմ,— դու մեր բալեն[4] ես, ինձ ի՞նչ լայաղ[5] ա քեզ պես մի մատը քորփի[6] համար ոտի կանգնել, ի՞նչ կա, որ Սինոդումը գրագիր ես։— Չէ՛,— ասում ա,— դուք ձեր պատիվը չեք հասկանում. ում գլխին որ շլապկա տեսնիք, պտի էն սհաթը վեր թռչեք, ոտի վրա չորանաք գլխաքաց, թեկուզ ըսկի չինովնիկ[7] էլ չըլնի։— Ա՛յ որդի,— ասում եմ,— ի՞նչ անենք, որ շլապկա ունիս, մի՞թե դրանով քեզ իրավունք ա տված, որ ինձ պես մի ոտը գերեզմանումը տերտերին խայտառակես, որ քո առաջին տեղիցս ժամ չեկա. հիմի ո՞վ չի շլապկա գնում, հրե Երևան մինն երեք սաղ ապասի ա, Երևանի մեյդանովը որ անց ես կենում, նորքցի երեխեքն էլ իշանոնց վրա նստած՝ շլապկեն գլխներին, հավողը բարձած բազար են գալիս. մեր Ալոյի տղեն էլ, որ Մարուք աղի դռանը նոքար[8]

---

1 Երկարաբանություն անել։ 2 Իհարկե։ 3 Բախտդ բարի լինի։ 4 Ակնոց։ 5 Մուրհակ։ 6 Բարի լինի։ 7 Ծառայություն։

1 Հարկ։ 2 Հայտնի է ամենքիս, որ ծառայողներն իրավունք ունին կոկարդով գլխարկ ծածկելու և դեղին կոճակներով հագուստ հագնելու։ Այս բանից առիթ առած՝ շատ ստորին պաշտոնյաներ սկսում էին երկյուղ ներշնչել ժողովրդի մեջ և հարստահարել։ 3 Մանավանդ։ 4 Երեխա։ 5 Հարմար է։ 6 Մանուկ։ 7 Աստիճանավոր։ 8 Ծառա, սպասավոր։

ա, էն օրը մի լավ շլապկա գլխին՝ ուռած փքված էկալ, դեսն անց կացավ. ես էլ հենց իմացա, թե դու էլ Ալոյի տղեն էս։

— Ընչի՞, միտդ չի՞, տերտե՛ր,— մեջ մտավ տանուտերը,— էն տարին որ մի երկար մովրով կար. մի օր ձին նստած՝ մտնում ա մեր գեղը։ Ես Ուռուցովն անց եմ կենում, ի՛նչ տեսնեմ, որ աշխարհքը հավաքված ա գլխաբաց ու մեջտեղն էլ մի շլապկավոր ա երևում ձիու վրա նստած. մի գոռոցի ձեն էլ սաղ Ուռուցը վեր ա կալել։ Դու մի՛ ասիլ, մեր խեղճ ջխտկագլուխ Սարոն ա. վեր են կոխել, քամակին բարակ բարդու ճիպոտներ , որ փշրում են, ի՞նչ ա, թե մովրովն անց կենալուս չի ճանաչել ու գտակը չի վեր կալել, նա էլ կաննել ա ու խեղճ Սարոյին էդ օրը քցել։ Էնքան տվին, որ մարդն էլ տեղից չէր կարողանում նստիլ, երեսի վրա վեր էր ընկնում։— Շան որդի՛ք, ձեր հերն անիծա՛ծ,— գոռում էր մովրովը,— ըստուց ետը վա՛յ էն մարդին, որ մի օրեն ճամփից շլապկի ծերը տեսնի ու ոտի վրա չչորանա. էլ հարցնիլ չի ուզիլ, թե ո՛վ ա, ո՛վ չի, իմացած կացե՛ք, որ շլապկեն ձեր աստվածն ա։

— Հախ աստծու[1], շատ դրուստն[2] ա ասել,— պաշտպանեց Մարգարը,— իհարկե որ շլապկին պտի պատիվ տանք, մենք թե որ շլապկի պատիվը չիմանանք, երկու աչքով պտի քոռանանք, բաս հիմի ու ղէլբաշի օրովը մին ես համարո՞ւմ։

— Օրհնյալ լինիս, այ որդի՛, ո՞վ ա ասում, թե հիմի լավ չի, համա դու ինձ ասա՛, ինքդ չես տեսնո՞ւմ, որ խալխումն էլ հալ չմնաց, եզը վեր են կացնում, տակիցը հորթ ուզում, զոռով մարդկանցը կովացնում են, որ մեջտեղը իրանք մոծակի պես ծծեն՝ արնաքամ անեն. էլ ոչ դիվան կա, ոչ դատաստան, ոչ իրավունք կա, ոչ արդարություն. վերջին մեհտարիցը[3] բռնած՝ ընչանք ինքը մովրովը՝ ձեռը դեմ արած ուզում են։ Ախար ո՞րտեղից տան, մի մեր գեղի հալը[4] հարցրու՝ կսարսափես, որ լսես. տուն կա՞, որ պարտքի տակ թաղված չըլնի. ի՞նչ են անում, կերածները՝ պաս օրերին ցամաք հաց ա, ուտիսին՝ մի կտոր աղվեսի չոր պանիր, հագածներն էլ՝ որ մի թելը քաշես, ինը հարիր կարկատան վեր կընկնի, ախար թե որ էս կոռ ու բեգյալը չըլնի, ինչի՞ համար պտի պարտքի տակ ճիլվեն։ Առաջ ով որ մի թուման[5] պարտք էր ունենում, քունը չէր տանում ընչանք մի եզը, յա մի կով չէր ծախում, իր հոգին թափում. հիմի գիտե՞ս քանի թումաններ են էն անտեր սանադի մեջ գրում. ի՞նչ եզը, ի՞նչ տուն ու տեղ, ի՞նչ մուլք[6], որդին էլ որ ծախի՝

[1] Աստված վկա։ [2] Ուղիղ։ [3] Թեպետեն։ [4] Գրություն։ [5] Հին թումանը երեք մանեթ էր։ [6] Կալվածք։

պրծնում չկա. ըսկի չգիտեմ, թե սրա վերջն ո՞ւր պտի հասնի, սրա ծերն ո՞ւր պտի կտրվի, երկնային տերն ինքը լիս ու ճար անի։

— Էտուր վախտը չի, տեր հա՛յր, դու ինձ լսի՛, կատարելո՞ւ ես գործակալի հրամանը, թե հենց հիմիկուց ձին նստեմ ետ դառնամ ու ձեր մեղքը ձեր շլի՞նքը, գնացե՛ք, ոնց կուզեք, խոսքի տակից դուրս եկեք։

— Աստված օրհնեսցե՛, Մարգար աղա՛, ես Հունան մարգարեն հո չեմ, որ իմանամ, թե էս թղթի կտորի միջին ի՞նչ ա խրդված. կա՛ց, մեր տիրացուն գա՝ տեսնենք, հետո կխոսենք, կամ թե չէ, կըլնի, որ դու էս գրի զորությունին եթուկ ես[1], ասա՛, էլի՛, քեզ հավատում չե՞մ։

— Ա՛յ, տիրացուն եկավ, հիմի թող գիրը խոսի,— գլխով ցույց տվեց Մարգարը տուն մտնող պատանուն։

Տիրացուն տերտերի հրամանով սկսավ կարդալ։

— Հրամայն Աշտարակ գեղջ տեր Հովհաննեսին։

«Որ իմացած կենաս համաձայն, հայդարարությանդ ես զքեզ պատվիրյալ էինք պսակել զՀեղնար Խեչանյան ընդ պարոն Աղաջանի որթի Սմբաթին, հետ կույս ընդ կուսի, համաձայն օրինած, և կանոնաց առաքելական և կայսերական օրինած չիք զարգելք կամ զչհաստություն։ Վասնօրո հրամայենք ի ստանալ գրությանս պսակալույն արնել զնոցա. վասն զի ի պատճառս աղա Մարքարի յասավուլի մովրովի հրամանն այնպես է խնթրելով ի մենջ որպես բարեգամ, և քաջ սիրելի, վասնօրո և զհրամանքն։ Կատարեսցիս, զպսակին ոչ առասցիս, ըստ ծեսի հայաստանյայց սուրբ և առաքելական եկեղեցվո սրբո կաթողիգե էջմիածնի, ամեն։

գործակալ սարդարապատու և կարրու մնալի որ է գավառի յոթանասուն ու մեկ գյուղի

Թադեոս վարդապետ»։

Տիրացուն բարձր-բարձր կարդում էր վերոգրյալ երեելի հրամանը, իսկ տերտերն ու տանուտերը բերանները բաց՝ մտիկ էին տալիս և զարմացմամբ գլխները ծանր շարժում։ Մարգարի համար. էլ մի՛ հարցնիլ, ուրախությունից ոտքերը գետնիցը կտրվել էին։

— Ջա՛ն, ջա՛ն, դալամիդ[2] ծերը պաչեմ, հրե լիզու ա՛, քյոչան աղբյուր ա՛,— բացականչություններ էր անում մեր հերոս յասավուլը,— ընդոտր են ասել՝ սուր լիզուն օձը ծակիցը կհանի. է. մենք ըսկի մարդ

[1] Տեղյակ ես։ [2] Գրիչիդ։

չենք էլկ, էշ կկրել ենք, էշ մենծացել, մենք ի՞նչ խաբար պտի տանինք էս աշխարհքիցը։

— Իհարկե, որդի՛, իհարկե՛,— հաստատում էր փառավորյալ տեր Հովհաննեսը,— թե որ գործակալ հայր տարբն էրպես իմաստուն չլինի, էլ ընչի՞ էդ փառքին կարժանանեին։ սաղ վանքումը նրա պես պիտունը չկա, առտված փառոց պտհի փրան։

— Հո հասկացա՞ր, տերտեր, ինչ ա գրել գործակալը,— հեգնարար հարցրեց տիրացուն։

— Հասկացա, որդի՛, հասկացա, քաս էլ ընչի՞ տնչտեր եմ, որ էգ երկու խոսքն էլ ցրիվ չընկնեմ։ Համա գու էլ որ մի անգամ պատմես, ավելի լավ կլինի։

— Ես ոչինչ չհասկացա, շատ խրթին ա գրած։

— Դու դեռ ջահել ես, որդի՛, էգ տեսակ խրթին գրվածները գժար կմտնին քո բեյինը[1]։ մեր գործակալը հրամայել ա, որ Աղաջանի տղեն ու իր նշանածը, չունչի որ կույս են, պսակվոցի առնել, այսինքն թե պսակը չուցա առնել, սաքի թե ուզել ա ասել, որ պսակը մի քիչ ետացրու, որ լիար լավ բացվի։ ընչանք որ ես էլ, ասում ա, իմ բարեկամ մոլրովն էլ՝ Մարգար ագին առաջուց ուրեցինք ու մենք էլ էս ա քամակից կգանք կհանենք։ Իհարկե՛, արժանավոր ագա Մարգ ա մեր տեղանը, մեր մհալուծը մարգ չլինի, որ նրան պարտք չլինի։ քա էնպես Մարգին որ չպատվեն մոլրովն ու գործակալը, ինձ ու քեզ հո չե՞ն պատվիլ։ Շատ լավ կլինի, ի՞նչ, հապիր առանց էն էլ պսակը ետացավ։ մի քիչ էլ կկենանք, հենց հիմի որտեղ որ ա, կգան, ու մի լավ քեֆ կանենք։

— Հենց էդ ա, որ գլխի ես ընկել, տերտե՛ր,— ծիծաղելով ասաց տիրացուն,— դու ինձանից լավ ես հասկացել։

— Ի՞նչ եք ասում, ի սեր աստծու, մի լավ կարդացեք, էդպես բան չկա գրած,— լեղապատառ խոսքը կտրեց Մարգարը,— գործակալ հայրը սուրբը հրամայել ա, որ ինքն էլ ու մոլրովն էլ ուզում են, որ պսակը քանդվի, մենծ չհասություն կա մեջը։ ինձ էլ հենց ըտուր համար են գրկեր։

— Մենց թե պսակը քանդվի, քեզ ո՞վ ասաց, թե չհասություն կա, հաս ու չհաս չակոցը ես չե՞մ, երդվի էլ օվտոց պորտը գիտեմ, նշանի պահպանիչը սրանից սաաբ տասնուհինգ տարի առաջ ես եմ ասել բարեկենդանին։ ոնց որ Մասիսի ու Ալազարի մեջը տվա ու ապրիկ կհասնի, ընենց էլ նրանց մեջ մի մատը չհասությունն չկա։ Թե ուրիշ բան գիտես, Մարգար ջան, ասա՛։ դու որ կաս՝ յասավուլ Մարգարն ես, ես որ կամ՝ մենծ տեր Հովհաննեսն եմ։ դու ոչ գիրը գիտես, ոչ գրի զորությունը, համա ես ամեն բան հասկանում եմ։ սաղ այսմավուրքը ջրի պես գիտեմ։ սխալ ես, յանդգնիշ ես, լավ չես գլխի ընկել։ քեզ ղրկել են, որ գաս տեղ պատրաստես, որ իրանք էլ գան։ ընենց չի՞, տանուտեր Սիմոն, դու ի՞նչ ես ասում։ էլի ես ու դուն ենք սրանց մեջը իսլոք ու քյամալի[1] տերը։ սրանք ջահել-ջուհուլ են, իլլաքի թե էս իմ ագաշ[2] տիրացուն, գովեցինք՝ կով գառավ։ երեխաներից օղորմածիկ դերձիկ Ստեփանը մենակ սրան կարգացնել տվավ։ սա ըվկի մի մագդ չդառավ։

— Ի՞նչ ես ասում, տեր հա՛յր, էս հրաման գրողն ինքն էլ չի հասկացել, թե ի՞նչ ա ուզում ասի։

— Ո՞վ, Թադևոս վարդապե՞տը։

— Ի՞նչ անեմ, թե վարդապետ ա։

— Վա՛յ, հողը մեր տան կտերը կենա, որ դեռ ձվից դուրս չեք եկել, տերտեր վարդապետի էլ չեք հավանում։ ընենց չի՞, տանուտե՛ր, ղորթ չեմ ասո՞ւմ, Մարգար ջան։

— Էդ ղրաղ կենա[3], տերտեր ջա՛ն, հիմի պսակը խափանում ե՞ս,— համբերությանից դուրս եկավ Մարգարը,— թե չէ ինձ յասավուլ Մարգար կասեն, էսա վեր կկենամ, աչքերս կչռեմ, հարսանքավորին չոլեչոլ կքցեմ, ժամումն էլ որ ըլլի՝ դուրս կանեմ։

— Դու ինձ ասա՛, ղորթ ես հրամանք անո՞ւմ, որ մեր գործակալն ու մոլրովը չեն ուզում պսակել։

— Տա բա սուտ եմ ասո՞ւմ։

— Թե որ նրանք կամենում են, մենք ի՞նչ ենք, քանի՞ գլխանի ենք։ ասում ա՝ աչքը բարձրանա՝ բարձրանա, ոնքիցը վերև չի կարող գնալ, դե որ գործակալն ասում ա չհաս կա՝ էն ա կա, առաչնորդը ես եմ, բակլեն խաչած եմ ցանում։ տեսնո՞ւմ ես, համաձայն կայսերական և առաքելական օրինաց՝ նա մեր ամենքիցը շատ գիտի, դեռ մոլրովն էլ վրադիր, դու ի՞նչ ես ասում, տանուտեր Սիմոն։

Տանուտերն ոսկերը վեր քաշեց և յասավուլ Մարգարի երեսին նայեց։

— Ի՞նչ էլավ ձեզ, տերտե՛ր, տանուտե՛ր,— միմյանց քամակից տուն ընկան գզիրն ու ժամհարը,— օրը մթնեց, կիրակրները փչացան, հարսն ու փեսեն վազուց երդվի տակին պատրաստ կանգած են, որ ձեռ-ձեռի տաք։

— Ես իմ մոլրովի խոսքից դուրս չեմ կարող գալ,— վճռեց տանուտերը։

— Գործակալն էլ իմ մոլրովն ա,— հաստատեց տերտերը։

---

1 Եղլապատառ։

1 Խելք։ 2 Անվանակից։ 3 Մի կողմ կենա։

— Կնացե՛ք, ասացե՛ք, որ պսակը մնաց,— խաբար ղրկեցին հարսանիքատունը։

— Ես էլ դնամ Սաքոյին աչքալիս տանեմ,— կամաց մրթմրթաց Մարգարն ու տեղիցը վեր կացավ,— էս օրվան անելիքն արինք, էգուցվանն էլ կտեսնենք, բանը՝ բան շանց կտա։

— Էս առաջին օրն ա, ա՛յ, որ յասավուլ գա դեղն ու առանց կուշտ փորով հաց ուտելու ու մի կես լիտր գինուց, արաղից իրան ոտի քրեհ տանելու՝ գեղիցը դուրս գնա,— ասաց տանուտերը տերտերին, յասավուլ Մարգարի գնալուց հետո։

Գ

ԱՅՂՐ ԳՅՈՒՂ ԵՎ ՍԵՎ ՋՈՒՐԸ

Էջմիածնից մոտ երեք ժամաչափ դեպի արևմտահյուսիս գտնվում է մի լեռ, որին ժողովուրդը Այղր անունն է տալիս։

Այղր գյուղից շատ մոտ, թավ եղեգնուտների և ճահիճների միջից հառաջանում է այն պատմական գետը, որ կոչվում էր հնումը Մեծամորի, իսկ այժմ՝ Սև ջուր։ Այղր լեռը և գետը միմյանցից բաժանողը մի երկու-երեք հարյուր քայլաչափ մերկ տափարակ է։ Մերկ եմ ասում, որովհետև ինչպես գետի, նույնպես և լեռի եզերքը ծածկված են լիտ եղեգներով, որոնցից տարին մի անգամ մերձակա գյուղերը շինում են յուրյանց համար փսիաթ կամ խոզերներ, իսկ այդ տափարակի վերա, բացի բարակ սեզից, ոչինչ չես գտնիլ։

Թե՛ լեռն և թե՛ գետն ունին տեղացիների աչքումը մեծ նշանակություն։ Գետի եզերքի եղեգնուտները նվիրական են ամեն հայ քրիստոնեի համար, որովհետև այստեղ, ասում են, խոզացած արածում էր մեր քրիստոնեության հիմնադիրը՝ հուժկու Տրդատը. այստեղից նա մրրթմրրթալով վազեց, մեր լուսավորիչ պապի առաջին գլուխը քարշ ձգած կանգնած և նրա օգնության շնորհիվը կրկին մարդկային կերպարանք ստացավ՝ մի ականջով միայն Սև ջրի գլխի արածող կենդանու հիշատակը չմոռանալով։ Մինչև այսօր էլ որսորդները Սև ջրի գլխին խող սպանելով՝ միմյանց ասում են.— ի՞նչ կլիներ հայ քրիստոնեի հալը. թե որ մեզ պես մի որսորդ սպանած ըլներ մեր խոզացած Տրդատ թագավորին։ Մյուսն էլ պատասխանում է.— ասում են՝ ինքը Տրդատ թագավորը զզված ա էլել իր խոզությունից. որսորդ տեսնելուն պես դաստի[1] եկել

[1] Դիմամբ։

առաջներին ման ա եկել, որ բալքի տան սպանեն, վերջանա իր չարչարանքները. համա ասսու հրամանովը նետ ու աղեղի լարը կտրվել ա ու Տրդատը սաղ ա մնացել։

Այղր գյուղի վրա հնարած առասպելներն ավելի շատ են։ Մինչև ցայսօր էլ ես անտարբերությամբ չեմ կարողանում հիշել Այղր գյուղի անունը, որ անձս չքստմնի։

Երբեք չեմ կարող մոռանալ, ինչպես իմ հանգուցյալ հայրը վսեմ և աղդու բառերով պատմեց ինձ Այղր գյուղի բոլոր պատմությունները, երբ որ ձիու վրա ինձ յուր թարքն առած՝ գնում էինք Սև ջրի գլուխը մովրովից ինձ համար արձակման վկայական ստանալու, որով գնամ՝ ուսում առնեմ։

— Գիտես, որդի՛, որ մենք մոտենում ենք Այղր գյուղին, տե՛ս, հրե էն քարափի տակին ա, մի քիչ էլ նեղքև գնանք՝ կերևա։ Այղր գյուղը հասարակ ջուր չի,— շարունակեց յուսահոգին,— նրա ջուրը չի գնում, միշտ կանգնած ա, նա անտակ ա, մարդ չի կարող նրա մեջը մտնել։ Էն սհաթը կուլ կտան հրեղեն կենդանիքը։ Ուրիշ ջրերի միջինը ձկներ ու գորտեր են, համա Այղր գյուղի միջին սրանց ոչ մինը չես գտնիլ. հրեղեն ձիանք, սիպտակ հրեղեն գոմեշներ, մարդաձուկն ու շատ ուրիշ գազաններ են լիքը Այղր գյուղումը։ Էդ հրեղեն ձիանոց ցեղիցն ա,— շարունակեց հայրս,— Քյոռօղլվի դուաթը[1], որ թևավոր է եղել։ Այս բանը, իբր թե, տեսել է խառատ[2] Մուրադը։ Նա տասը-տասնեհինգ փայտե ուղտեր շինած, իրար քամակից կապած, սանձը ձեռին քաշելով, Կողբից աղ է եղել բերելուս, հանկարծ գիմացից տեսնում է Քյոռօղլվին յուր կարիճներով և երկյուղից բանդում, վայը թափում դեռանին յուր ուղտերն և դարձնում մի կույտ փայտ ու ինքը մտնում Այղր գյուղի եղեգների մեջը։

Քյոռօղլին, որ նկատած է լինում ուղտերի շարքը և հիմա գտնում է փայտացած, շատ զարմանում է այս հնարագետ վարպետի վերա. հրամայում է յուր քաջերին, ուր որ լինի, պտրտել այն մարդուն և յուր առաջին կանգնեցնել։ Խուղարկուները քաջ գիտենալով, որ մարդը թաքկացած կլինի եղեգնուտների մեջ, իջնում են այնտեղ, ձիանքն արոտի թողնում և սկսում որոնել։ Ամբողջ օրը, երբ որ Քյոռօղլին զուր ժամանակ է կորցնում, վարպետը մի ասեղ է դառնում ու կորչում, հրամայում է ձայն տալ, թե ինքը երդվում է իր սրովը, որ եթե փայտե ուղտերի տերը դուրս գա ինքնահոժար, նա նրան ոչ միայն չի պատժիլ, այլև կվար-

[1] Ղուաթն էր այն առասպելական նժույգ ձին, որով Քյոռօղլին թռչության անուն է տարել։ 2 Հյուսն։

Ճատրի. ապա թե ոչ, երեք շաբաթ շրջապատած Այղր գյուղը՝ քաղցած պիտի սպանի նրան։

Եվ ահա դուրս է գալիս Մուրադը դողալով և գլուխ տալիս Քյոռօղլվին։

— Քո ձեռագո՞րծն է այդ ուղտերը,— հարցնում է Քյոռօղլին։

— Հրամելի՛ք, գլխիդ զուրբա՜ն։

— Ընչի՞ թաք կացար։

— Քո անունից աշխարհքն է սարսափում, և ուղիղն ասեմ, հիմա էլ չէի դուրս գալ, եթե քեզ ավետիք տալու առիթը չունենայի— Մուրադը պատմում է Քյոռօղլվին, որ ինքն ականատես էր, երբ նրա մատակ ձին արածում էր լճի ափումը, մի հրեղեն սպիտակ այղր[1] ձի դուրս եկավ ջրի միջից, թռավ նրա մատակի վերա ու կրկին ջրի տակը մտավ։

— Ուրեմն դու ազատ ես, սարքի՛ր քո ուղտերդ, բարձի՛ր բեռներդ և ճանապարհ ընկիր։

Մուրադն ստացավ Քյոռօղլվի ընծան, կարգի բերեց յուր ձեռագործը, բարձեց ադն և գնաց։

Քյոռօղլվի հրամանավ ի պատիվ այն այղր ձիու, որը տասն և մեկ ամսից հետո պարգևեց իրան նրա սիրեկան Ղոաթին, այդ լիճն այն օրվանից կոչվում է Այղր գյոլ։

— Բաս էդ Այղր գյոլի ջուրը ո՞րտեղից ա գալիս, ո՞ւր ա գնում,— հարցրի հորս։

— Ասում են, որ ջուրը գալիս ա Արագած սարի կատարումն եղած լճից. էդ բանն իմացել է մի հովիվ։ Նա այծի քամակից ձգում է յուր գավազանը, որ ընկնում է Արագածի լճի մեջը։ Մինչև մոտ է գալիս հովիվը, տեսնում է, որ յուր գավազանը ջրի երեսին չի։ Այս երևույթը նրան կարծիքի տակ է ձգում. մանավանդ, երբ նա Արագածի ստորոտներումը ոչխարներն արածացնելուս, գլուխը գետնին է դնում մի փոքր հանգըստանալու, միշտ ջրի քչքչոց է լսում։ Մի շաբաթից հետո դիպվածով նույն հովիվն յուր ոչխարները դաշտն իջեցնելուս Այղր գյոլի մեջ տեսել է յուր փայտը։ Հովվի կասկածն ավելի սաստկանում է. նա մտածում է, որ Արագածի գլխի լճի և Այղր գյոլի մեջ հարաբերություն կա, անպատճառ ջուրը Արագածից գետնի տակովը հոսում է ներքև և գոյացնում է Այղր գյոլը. դրա համար հովիվը մի ջվալ[2] դարման շալակում է, բարձրանում Արագածի կատարը և լճի մեջ լցնում. երկու օրից յուր դարմանի հետքը Այղր գյոլումն է գտնում։

[1] Որձ։ [2] Տոպրակ, մախաղ։

— Բաս էդ ո՞նց ա, որ ջուրը միշտ կանանած մնում ա մի պստիկ լճի մեջ ու դուս չի գնում,— հարցրի ես հորս։

— Ասսու հրամանովն ա,— պատասխանեց հայրս,— ղզլբաշի օրոնվը Երևանու վերջին Հյուսեին խան Սարդարն ուզեցավ Այղր գյոլը խառնել Սև ջրի հետ։ Իրեք հետ իրան երազ եկավ, որ էդ գյոլի ջուրն անիծած ա, դա գնացկան ջրի հետ չպտի խառնվի. ադամորդին էդ ջրի համը չպտի տեսնի, Սարդարն ականջ չարեց ու Այղր գյոլի ու Սև ջրի մեջտեղի թմբան վրա մի առու փորեց։ Վերջի օրը հենց որ մի պստիկ թումբ էր մնացել, որ ջուրը գնար, մին էլ էն տեսան, որ գյոլի երեսը կրակ դառավ. միջիցը ահագին գազաններ կրակի հետ դուրս թռչկոտացին, քիչ էր մնացել, որ ամենքին էլ կուլ էին տալիս, թե գլուխ չառնեին չկորչեին։ Ինքը Սարդարը հեռվումը կանանած՝ էս բաներն իր աչքովը տեսել ա ու էլ ետ առուն լցնել տվել։

Եվ արդարև, հետաքրքիր այցելուն այսօր էլ կնկատի լիճը և Մեծամորին բաժանող տափարակի մեջտեղը մի հին առվի հետքեր։

Ահա այսպիսի առասպելների հետ է կապված Այղր գյոլի պատմությունը, սակայն հավանականն այն է, որ մի ճահճալից լիճ է նա, որը տափարակի տակից անպատճառ կապ ունի Մեծամորի գետի հետ։

Սովորաբար գետերը առաջ են գալիս և կազմվում մանր ազբյուրակներից և վտակներից, իսկ Մեծամորին մի բացառություն է. ամբողջ գետն այդ փոքրիկ տեղի շամբուտ ճահիճներիցն է բխում և հառաջ գնում դեպի Երասխը։ Պետք է ենթադրել ուրեմն, որ ժողովրդական առասպելը զուրկ չէ մասամբ ճշմարտությունից. կարող է այն էլ լինել, որ Մեծամորու և Այղր գյոլի ջրերը Արագածի զանազան բարձրավանդակներից են, որ գետնի տակով իջնում և Այղր գյոլումը լույս են տեսնում, կրկին գետնի տակը մանում ու փոքր-ինչ հեռի՝ Մեծամորի գետը հառաջ բերում։

Դ

ՄԻԽԻՏԱՆ ՍԱՔՈՆ

Սև ջրի գլխին, այսօր էլ կարծեմ, դեռ կարելի է նկատել մի երկու ավերակների հետքեր, որոնք փոքր ժամանակ հնախույզ ճանապարհորդին կանգ առնել կտան և մտածմանց մեջ կձգեն։

Այդ երկու ավերակներից հյուսիսային կողմը գտնվածն այն արժանահիշատակ ամարաթն[1] է, որ մի-երկու տարի քաշում էր դեպի յուրյան

[1] Ամրան։

բաղմաթիվ ժողովուրդ Սարդարաբատու և Կարբու կոչված գավառիցը՝ արդարություն և իրավունք խնդրելու։ Ուզում եմ ասել, թե այս ավերակի տեղը մի քանի տարի առաջ մեծ շինություն էր։ Այստեղ էր կենում այդ գավառի կառավարիչը, կամ ռամկական բառով մովրովն՝ յուր օգնականներով, գրագրներով և ոստիկանական բոլոր պաշտոնյաներով. այստեղ էր և նրա դատարանը։

Այս մեծ շինության դիմացը, նրանից ոչ շատ հեռու, Սև ջրին ավելի մոտիկ եղեգնուտներին կից էր մյուս ավերակի տեղը՝ կառավարչի ամարաթի գինետունը, կամ միկիտանխանեն։

Մովրովի ամարաթից ոչ պակաս կարևոր էր այս գինետունը։ Այսպիսի մի ժողովատեղին հեռի լինելով գյուղից և բնակությունից, հարկավ պետք է ունենար մի տեղ, ուր եկվոր բաղմությունն իջևաներ, կերակրվեր և պատսպարվեր։ Այսպիսի հյուրանոցներ ամեն մեծ ճանապարհների վերա գտնվում են։

Մովրովի ամարաթի շինվածքն այնքան հետաքրքիր չէ մեզ համար. մի լայն պարսպավոր բակ է այն, մի կողմը կարգով բավականին միահարկ սենյակներ շինած՝ ուր զետեղվում էին ինքը գավառապետը, յուր իրավաբանը և օգնականները. փոքր-ինչ հեռվի մի քանի մանր-մունր սենյակները գրագրների բնակարաններն էին, քամակի կողմը գոմն էր, ուր կապվում էին ձիանքն և կենում էին ստորին պաշտոնատարները՝ յասավուլ, մեհտար, կողակներ և այլն։ Գոմին կպած էր բանտը՝ երեքչորս մանր և մութը սենյակներով։

Գինետունն ուներ նույնպես մի լայն պարսպապատ բակ, որի մեջ կային մի քանի տներ. գոմը, մարագը, մառանը, հավաբունը և այլն. ինքը գինետունը շինված էր այդ բակի արևելյան կողմը, ճիշտ ամարաթի դիմացը։ Երկու մուտք ուներ նա, մինը ուղղակի դրսից, որ էր հասարակաց դուռը, իսկ մյուսը՝ բակի միջից։ Այս կողմից մտնում էին հեռու տեղերից եկած խնդրատուները, կապելով յուրյանց ձիանքը բակի մեջ, կամ գոմումը։

Դրսից եթե ներս մտնեիր գինետունը, ուղղակի դիմացը շինված էր գինեվաճառի առևտրատեղին, շրջապատած տախտակյա վանդակով՝ ինքը միկիտանն էլ մեջտեղը կանգնած։ Արևելյան կողմը բացվում էր մի դուռը, որտեղից միմյանց միջով կարելի էր մտնել երկու ուրիշ սենյակների մեջ։ Սոքա էին եկվորների իջևանը, կամ հյուրատունը. գինեվաճառի քամակի պատի վերա էլ կար մի փոքրիկ դռնակ, որի նշանակությունն օտարականների համար մի հանելուկ էր դարձել. միկիտաններն իրանք ասում էին, թե այդ յուրյանց ամենակարևոր մթերքների պահելու տեղն ու յուրյանց ննջարանն է։ Այս դռնակի ներսը խորհրդավոր էր մանավանդ այն պատճառով, որ նրա քամակի կողմի պատի վերա կար մի ուրիշ դուռն՝ ահագին ժանգոտ կողպեքով փակված։ Այդ մուտքը տանում էր ուղիղ դեպի եղեգնուտների խորքը։ Զարմանալին այս է, որ ուրիշ տեղից այդ դռանը մոտենալ անհնարին էր. եղեգնուտի շարունակությունը մինչև այդ հարկի պատն էր հասնում. իսկ այս դռանը մոտեցող նեղ անցքի մուտքը շատ հեռու էր։ Եթե հետաքրքիր մարդը կամենար տեսնել այդ ժանգոտ կողպեքը և եղեգները ճղելով արևելյան կողմից, որպես և իցե, ներս սողար, կտեսներ, որ այդ նեղ անցքի վերա ձիանց ոտնատեղի են երևում, հետևակ մարդու հետք հազիվ է նշմարելի։

Ուրեմն հասարակ մահկանացուի համար թե՛ գինետան միջից և թե՛ դրսից այդ տան ներսն անմատչելի էր, սակայն եղել են փոքրաթիվ արժանավորներ, որոնք կարողացել են նկարագրել մեզ այդ խորհրդավոր ծածկի ներքին կողմը։ Ասում են, որ երկու մութ սենյակներ էին պարունակվում միմյանց մեջ. դրանցից մինը գոմ էր՝ խոր-խոր մսուրներով, իսկ մյուսը մի դատարկ սենյակ՝ չորս-հինգ հատ անթափանցիկ պատուհաններով։ Բայց թե ընչի՛ համար էին պետք գալիս և ի՛նչպես էր, որ միկիտանն երբեք դրսից դրված փականքին չէր մոտենում, իսկ դուռը միշտ բացվում-փակվում էր, այդ ոչ ոք չէր համարձակվում հարցնել. գինեվաճառը թթված դեմք կառներ, կամ բոլորովին չէր պատասխանիլ, կամ թե կասեր, որ ինքն էլ չգիտե, թե ո՛ր ժամանակիցն է այն ժանգոտ կողպեքը և ինչի՛ համար. ինքը մտած օրից այնպես է գտել։

Սև ջրի գլխի միկիտաններից մեկին միայն մենք ճանաչում ենք և որի հետ մենք բախտ պիտի ունենանք շուտ-շուտ հանդիպելու։ Դա միկիտան Սաքոն է, ընթերցո՛ղ, որի հետ պատիվ կհամարեմ քեզ ծանոթացնել։

Դրա համար մի քանիսն ասում են, թե քրդստանցի է, ոմանք էլ պնդում են, թե աշտարակցի է։ Այս վերջինները հիմնում են յուրյանց խոսքը նրա վերա, որ գինեվաճառ Սաքոն ուներ Աշտարակումը մի-երկու այգի։ Ո՛ր աշխարհքիցը կըլնի Սաքոն, թող լինի, մեզ համար ոչչ մեկ է. մենք նրան ճանաչում ենք տասը-տասներկու տարեկան հասակից, երբ քարշ էր գալիս նա զորանոցների գինեվաճառների դռներին։ Ասում են, որ ոչ մի գինեվաճառ չի կարողացել երկու-երեք ամսից ավելի պահել Սաքոյին, մեր զալում[1] լակոտը մոր կոճակ կտրող է եղել, աչքի ուրմա թոցնող. ոչ միայն հաճախորդների գրպաններից անհայտացել են նրա օրովը զանազան մանր-մունր առարկաներ, գինեվաճառի ծոցից

[1] Ճարպիկ։

կամ դպրատակիցն էր, գիշերը քնած ժամանակը, թռել վիրացել է նրա քսակը։ Էլ ո՞վ էր գժվել Սաքոյի հետ երկար կյանք վարել։

Թե ի՞նչպես եղավ, ի՞նչպես չեղավ, մին էլ Սաքոն դարձավ Այլը գյուղի ամարաթի լիազոր գինեվաճառը։ Շատ չտևեց, նա գրավեց բոլոր այցելուների և ամարաթի քնակիչների համակրությունը. մանավանդ նրա հարգանքը ափեբացավ, երբ որ ամենքն իմացան, թե Սաքոն մովրովի երկու աչքի լույսն է։ Այնուհետև գյուղացվոց պաշտպանն և թանկագին հյուրն էր Սաքոն, տանուտերների թե ու թիկունքը, գավառական քրպետի սեղա քաթիկամը, լաստաչորների մտերիմն և նույնիսկ օգնականների սիրելին։ Սաքոյի անունը ամբողջ գավառի մեջն երևելի էր։ Ամեն մի գյուղացի իրան պարտք էր համարում մովրովի մոտ գալուս յուր գյուղումը գտնված ապրիշ[1] բերքիցը Սաքոյին քաժին քնել. եթե յուր տանը չլիներ, փողով կգներ ու առանց քնծայի Սաքոյի շնորը չէր մտնիլ։ Ոչ միայն շեն գյուղերումն էր Սաքոն հարգելի, քարափների, ձորերի ու քարանձավների քնակիչ, երկիրը սարսափեցնող ավազակների համար էլ Սաքոն մի պաշտելի անձնավորություն էր։ Ախր ո՞նց չհիրևեն Սաքոյին. նրա պես քաջագր վարվեցողություն, նրա պես նազուտար խելու ո՞վ կունենա։ Շնորհ աչք նրա գինետունը, և դուք էլ կհամոզվեք։

— Սաքո ջա՛ն, բարով քեզ։

— Վա՜յ աստծու քարին, բարով, հազար բարի՛ ես եկել, քեզ մատա՛ղ, իմ աչքի՛, իմ գլխի՛ վրա։

Դու չկարծես, ընթերցո՛ղ, թե այս խոսքերը Սաքոն միայն նշանավոր անձնավորությունների համար է խարշում։ Վերջին գյագեն էլ լինի, նրա աչքի, նրա գլխի վերա բազմելու տեղ ունի։

— Ա՛յ տղա՛, շո՛ւտ,— հրամայում էր Սաքոն յուր սպասավորին,— աղա Կարոյի ձիու հոգսը քաշեցե՛ք, բոլ[2] խոտ ու դարման լցրե՛ք առաջը, թամբը թուլացրե՛ք, ծանրությունը տուն բերե՛ք։

— Համեցե՛ք, քեզ դուրբա՛ն, աղա Կարո ջան։ Ճամփից եկած ես, բեզարած ես, մի բողազդ թաց արա ու նեքսե գնա՝ օթախումը մի քիչ գնջացի. ի՞նչ անուշ կանես, գինի՞ թե արաղ։

— Սաքո՛ ջան, նեղություն մի՛ քաշել։

— Վա՛յ գլխիս, ամոթ չի՞ էդ թավուր խոսքերը, մեր ախպերությունի մեջն ըտոնք պտի մանի՞ն. սաղ գուրանը քեզ դուրբան, վեր կաց ջրն ածա, ծպտուն հանողը մարդ չի։

— Սաքո ջա՛ն, քեզ համար մի քիչ ային-օյին[3] եմ բերել, թողություն կանես, քեզ ավելի պատիվ էր հարկավոր։

1 Հազվագյուտ։ 2 Բավականին։ 3 Իրեղեն։

— Էդ ի՞նչ նեղություն ա, Կարո ջա՛ն, որ քաշել ես, խնդրում եմ, որ էս վերջինն ըլի, թե չէ գիտես, կխռովենք, ա՛յ։— Ասում էր Սաքոն ու խուրջինը ձեռքին տանում, սպասավորին տալիս գատարկելու, քայլը ի՞հարկե, էս առաջինը չէր Կարոյի գնած բերելուն, վերջինն էլ չի լինելու։

Մի-երկու օրից հետո զգվեցավորի նախարչի Կարոն յուր գործը պրծել գնում ա։

— Սաքո ջա՛ն, ես գնացում եմ։

— Ասուված քարի ճամփա տա, Կարո ջա՛ն։

— Սաքո ջա՛ն, մեր հաշիվն ի՞նչ ա։

— Ի՞նչ պտի ըլի, քո սաղությունը։

— Չէ՛, էլ չե՛նց, ինչքա՞ն ենք մնացել։

— Ամո՛թ ա, ամո՛թ, մեր մեջ էդպես հաշիվներ չպտի ըլին. մի-երկու մանեթն ի՞նչ ա, որ դրա համար բերան ես բաց անում. քո տունն էր, եկար, անուշ արիր ու գնացիր։

Մեր Կարոյի գումարը պատի ծեփի քարտավ. նա կարդում էր, թե երկու ապատի հաշիվ կլինի. մանեթների անուն չանց։

— Չէ, Սաքո ջա՛ն, ես էդ թավուր[1] բանները շատ չեմ սիրում, ասում ա՝ ճեսաբ դինար-դինար, քաղչիշ թուման-թուման[2], դու էլ մուֆտա[3] հո չե՞ս գտել, փող ես տվել, դու էլ մի քանի սև փողի համար ես գլուխդ ջոր քարին դրել, Էլի՛ ախպեր ենք, ինչ որ հասանելու յա՝ ասա՛։

Շատ չեմուշում անեղուց հետո, վերջապես հնչում է վճռական խոսքը.— երեք մանեթ ու կես։

Թուքը կուլ տալով՝ ձեռքը ջերը տարավ մեր նախարչին ու ետ արեց յուր հասարակ կտավե քսակի բերանի կապը։ Նա տասը մանեթի պարտք էր արել մի ջնջին գործի համար, Սև ջրի գլուխն եկել. վերջին երկու մանեթն էլ Սաքոյին տվեց ու խնդրեց, որ գնա թե չէ, մնացածը առաջին եկողի հետ ղրկի։

— Քո ցավը տանի, թեկուզ ղուկի մի՛ ղրկիլ, կամ թե ունեցած ժամանակդ ղրկի, քեզ վրա կորած հո չի՛,— հանգստացնում է նրան Սաքոն ու նանապարհ ձգում Սաքոն գալ գիտի, որ նախարչին չէ՝ տանուտերն էլ չի համարձակվիլ յուր մի կոպեկն ուտել, մանավանդ որ իրեն հասանելիքի քառապատիկ կամ հնգապատիկն արդեն ստացել է. քացի դրանից, կողմնակի ճանապարհով նախարչու տասը մանեթի մեծ մասն էլ յուր գրպանն է մտել, ում ինչ տվել է նախարչին, Սաքոյի ձեռքովն է անցկացել։

Ես չգիտեմ՝ Սաքոյի նախորդ գինեվաճառներն էլ տուն և մի անունն

1 Այդպիսի։ 2 Հաշիվը՝ կոպեկ-կոպեկ, պարգևը՝ թուման-թուման։ 3 Ջրի։

ու խելքն ունեի՞ն, թե ոչ։ Հավանական է, որ ոչ. ես կարծեմ Սաքոյի իրան հանճարն էր այդպես հանրահռչակ արել։ Թու է՝ բան չի, ամեն մարդի բան չի. ո՞վ էր կարող Սաքոյի պես վստահ գործ բռնել. ո՞ւմ առաջին մովրովի դուռն այնպես բաց կլիներ, ինչպես մեր Սաքոյի։ Տեսե՛ք, թե մեր միկիտանն ինչպես է շարունակում իր տնտակցությունները մովրովի հետ։

Մութը գետինն առավ, ոտքը խաղաղվեց, ամեն մարդ մտավ յուր սենյակը։ Սաքոն հանձնեց գինետունը յուր սպասավորին և գնաց դեպի մովրովի ամարաթը։ Նա ուղիղ ճանապարհովը չի գնում. նա անց կացավ պատի տակը և շուտ-շուտ խլշկոտալով իրան ձգեց մովրովի նախասենյակը։ Նրա համար առաջուց իմաց տալ չկա. յասավուլն իրավունք չունի արգելելու նրան։ Սաքոյի ներս մտնելուց հետո նա պարտավոր է թողուլ նրան նախասենյակումը և դուրս գալ. դուռը հսկել, որ օտար մարդ չկա։ Բավական է, որ մովրովը տանն է։ Ներսից դուռը փակած էլ լինի, Սաքոն ուներ յուր բախելու ձևը. իսկույն դուռը նրա առաջին կբացվի։ Մովրովի քնած ժամանակն էլ Սաքոն կարող է ուղղակի մտնել ննջարանն և զարթեցնել. այդ կնշանակե, որ մի անհետաձգելի գործ կա։

— Տղա՛յք, ո՞վ կա այդտեղ,— ձայն է տալիս մովրովն յասավուլին և նորից խստիվ պատվիրում, որ ոչ ոքի չընդունեն։

Մտնում է Սաքոն մովրովի մոտ, կանգնում դռան տակին և գլուխ տալիս՝ ձեռքերը կրծքին դրած։ Նա գլուխը չի բարձրացնում, մինչև մովրովը չհարցնի.— Հը՛, ի՞նչ կա։

— Քո սաղությունը։

— Ասա՛ տեսնեմ։

Ենթադրենք, ընթերցող, որ ես ու դու էլ կախարդական գլխարկ հագած՝ անտեսանելի զորություն ունինք և լուռ ու մունջ մի անկյունում կանգնած լսում ենք. ուրեմն ականջ դիր։

Սաքոն ուշացրեց մովրովի պատասխանը։

— Հը՛,— ձայնը բարձրացրեց մովրովը,— ի՞նչ ես պոռշներդ կես դուզ կախ քցում, բերանիցդ հո քրեհ[1] չե՞ն ուզում, խոսի՛, էլի՛. ի՞նչ կա, ի՞նչ չկա։

— Ը՛... ը՛.. ը՛... ոչինչ, էնպես մեծ գործ չկա՝ մտա քո սաղությունը հարցնեմ։

— Լա՛վ, ես գիտեմ, թե իմ սաղությունը քեզ համար ի՞նչ արժի, ասա՝ մտքինդ, արզուչիք[2] են եկե՞լ։

— Հրամեցի՛ք, աղա ջա՛ն։

[1] Վարձ։ [2] Խնդրատու։

— Քանի՞ հոգի են, ի՞նչ են ուզում, չա՞ղ են, թե լղար։

— Երեք ախպեր են, խնդիրը մի հասարակ բան ա, համա մեջը նյութ կա. դրանք ուզում են բաժանվիլ, մեջները համաձայնություն չկա. մենծ ախպերը մենծահարկ ա ուզում, պստիկները չեն տալիս, հիմի եկել են, որ դու բաժանես։

— Ընչի՞ իրանց տանուտերը չի վերջացրել։

— Չէ՞ որ ես քեզ խնդրեցի, որ քո կողմից տանուտերներին պատի հրամայեմ, որ եղալի գործերը չհամարձակվին իրենք վերջացնել։

— Որքան միտքս է, այդ իրավունքն ես քեզ չեմ տվել։

— Է՛հ, աղա, դու էլ շատ բանի քամակիցն ես ընկնում. ամեն բան հո մատնահեսաբ տալով չպիտի՞ հրամայես. մենք էլ մարդ ենք, խոտ հո չե՞նք արածել, պտի հասկանանք ու էլ գլխաբաց չտանք քեզ. ես եմ քո կողմից հրամայել։

— Հրամանաթուղթ հո չե՞ս ղրկել։

— Գիժվե՞լ եմ, ի՛նչա. մեկին իր էստեղ էլած [illegible] եմ պատվիրել, մեկելին յասավուլի բերանով եմ ապսպրել։

— Ամա՛ն, Սաքո՛, դու մեր գլխին մի փորձանք չբերես։

— Թող իմ ջանին գա, թե որ սրանից քեզ մի վնաս հասնելու ըլի. ո՞վ կա մեր մհալումը, որ բան հասկացող ըլի, յա ձեռիցը մի բան գա. անասունը քեզ օրինակ. քո խոսքը մհալի մեջ թագավորի խոսքից վեր ա, դու ես մեր տերը, մեր դատավորը, մեր կյանքի ու մահի վճիռ տվողը. թուղթն էլ ա քո ձեռին՝ զալամն էլ[1], ինչ կամեցար՝ կամեցար. ասում ա՝ դեր ինչ գրեցի՝ դրեցի, ո՞վ ա քո առաջը բռնողը, ուզես քոթկի[2] մեջ կփտացնես, ուզես Սիբիր կղրկես։

— Ա՛յ տղա, շատ վստահ ես խոսում, Սաքո՛, Երևանումը որ իմացան, գիտե՞ս ինչ կանեն, մեզ հոգեց-հոգի կկորցնեն։

— Է՛հ, աղա՛, հենց իմանաս ինձ հայտնի չի, որ նրանք էլ չեն կարող քո մի մազին դիպչել. ո՞վ իր աչքը քոռ կուզի, իր հացին քացով կտա. թե որ բեղանից ավելի խեր տվող գտնեն, թող քո տեղը ղրկեն. ի՞նչ են ուզում անկուշանները, մրջմի քարվանի պես յասավուլը Երևանա համփիցը պակասում չի՝ բեռները լիքն առաջ արած. էս ի՞նչ ա՝ տիկերով Աշտարակու գինի, արաղ, Եղվարդա լսի պես ցորեն, Ապարանու արդար բյահրիարի պես կովի եղ, Հայթաղու իստակ գղած ապրշմի պես բամբակ, Մոլլազուրսունա հատիկ-հատիկ հընտրած բրինձ, Ալիբեղլվի մեղրի պես շիրբախտի ձեթ, Ղարխնի կարմիր խնձորի պես գլուխ սոխ. ընչանք քալեշ սոխն էլ մեր մհալիցն ա Երևանու բոլոր չինովնիկների քունջ ու

[1] Գրիչ։ [2] Փայտի կոնդ—տանջանաց գործիք։

պուճախը լցվում, էլ ի՞նչ ասածու կրակ են ուզում, շաքար-չայն էլ, որ մեր խալիքը համն էլ չի տեսել, մեր մհալիցն ա գնում. էս մի բանն էլ (Սաքոն բութ և ցուցամատը միմյանց քսելով հասկացրեց, որ փողի համար է ասում), էս մի բանն էլ շաբթի էս գլխին դու գնում ես, շաբթի են գլխին հետդ տանում էս. ես իմ ասածը, ես որ նրանց տեղակ ըլիմ, քեզ ասիլ չեմ, թե աչքիդ վերևն ունք կա։

— Տո՛, ընչի՞ ուրեմն իմ նախորդին փոխեցին,— ժպտաց մոլրովը։

— Մարդ ինչ կանի, աղա՛, իր գլխին կանի. մարդն ըտենց ա, հենց որ ոտին տեղ արեց, գլուխն էլ կամաց-կամաց նեքսև խցկեց, իրան ջիս[1] մոռանում ա. քեզանից առաջի մոլրովը քանի նոր էր, ղրկում էր ու իր տեղը հաստատ էր. քիչ-քիչ ոտն առաջ գրեց, հենց իմացավ, թե իրանից մենծը չկա. նրանց հակառակ էր գնում. մի-երկու անգամ գրեցին, ջիլավը[2] քաշեցին, համա չէ՝ տեսան որ կապը կտրել ա, մին էլ էն տեսանք, որ, ըհը՛, մի բարի լսի. հրամանքդ ըստեղ կանգնած, նրա ոտը սլքացրիր. ես կասեմ, որ շատ լավ էլավ. իր հախն[3] էր. ասում ա՝ օձի գլուխը որ կցավի, Լենթա ճամփի մեջտեղը վեր կընկնի։ Ա՛յ, ի՞նչ կասեմ քեզ. գիտես, որ մարդս մարդով ա, գիտես, որ Երևան նստողների աչքն էլ մհալի վրա ա դու էլ մհալի կառավարողն ես, միշտ ղրկում ես։

— Դու հենց գիտես, Սաքո՛, թե ինձ էժան նստեց էս տե՞ղը։

— Ո՞նց կըլի, աղա ջա՛ն, առ ու տուրն ախպեր են. ընչանք տաս ոչ, առնիլ էլ չես. հենց էդ ա, որ ես մեր հին մոլրովին ղնամիշ[4] եմ անում, էն տնաքանդը գոգով փող էր տվել էս տեղին ու համ փողիցն ընկավ, համ տեղիցը։

— Ախար ի՞նչ քար քցեր խեղճն իր գլխին, էդ ասնաստվածներն ինչքան էլ ղրկում ես, բավականանում չեն ու փիս ուզվորի նման ձեռքերը միշտ դեմ են անում։ Դու հենց գիտես, Սաքո, որ իմ վերկալածի կեսն էլա ինձ մնում ա՞. դու ոչ մեռնիս, չարեքն էլ որ մնա, շատ շնորհակալ եմ։ Անունը կա, որ ոռճիկ եմ ստանում, հավատացնում եմ, որ մի կուրեկ իմ քիսեն չի մտնում. գնում են Երևան, ստորագրում ստանալու համար և դուս գալիս. դեռ մի բան էլ իմ ջեբիցն եմ դնում։ Էհ, ո՞ր մինն ասեմ, Սաքո՛, դժա՛ր ա, դժա՛ր, մեկ էլ մեղադրելու չի, որ կաշառք ենք վերցնում։ Հա՛, լավ միտս եկավ, լսի՛ր՝ քեզ մի բան պատմեմ։ Երեք տարի առաջ՝ Արազի էն երեսին մոլրով էի, մին էլ մի գիր եմ ստանում, որ ինձ հալհալաթի[5] կանչում են Երևան։ Շտապում եմ, մուքը գետինն առնելուս հասնում ու ուղղակի գնում նաչալնիկի մոտ։— Բարով ես եկել,— քաղցրությունով ձեռս բռնում է նաչալնիկը։ Ես զարմանում եմ, առաջին անգամն էր, որ նրա երեսին ծիծաղ եմ տեսնում։— Գիտես ընչի՞ եմ կանչել քեզ, հրամայում է նա։ Փառնավուտի մոտ զաբիտների կացարան պտի շինվի, տերությունից հինգ հազար մանեթ ա նշանակած, փողերն եկել են, պտի ստանաս ու գնաս շինել տաս։ Քու արեքը, Սաքո՛, ուրախությունից չէի իմանում՝ ինչ անեմ։— Աչքի՞ս վրա, քո մեծությունն, ասեցի, պատրաստ եմ քո հրամանը կատարել։

— Ուրեմն վե՛ր կալ թուղթն ու մի ստացական գրի, որ ինձանից հինգհազար մանեթ ստացար, և ահա փողը, վեր կալ գնա՛, երեք շորս ամսից հետո անները պատրաստ ըլին։

Ընչանք ես թուղթը ձեռքս կառնեի, նա իր շաբմաճին[1] բաց արեց ու մի ծալք փող հանեց, ձեռին բռնեց, սպասում է, որ գրեմ ու ինձ տա. էլ չեմ գիտում, թե ո՞նց եմ գրում. երկու բոպեում թուղթը պատրաստ էր։

— Ես գլուխս կտամ, թե նա բոլոր փողը քեզ տված ըլի,— մեջ ընկավ Սաքոն,— ես էլ որ ըլի, մենծ մասն ինձ կպահեի, քիչը կտայի։

— Հենց էնպես էլ ալեց. մեն էլ ջանս դող էլավ, երբ որ էն ահագին ծալքի երեսիցը հազար մանեթ համբարեց, ինձ տվեց, մնացած չորս հազարն աբխեին[2] էլ ետ դրեց իր գուլֆին[3] ու կոդպեց։ Ա՛յ, ասում է, էս հազարը տա՛ր, երբ որ կպրծնի. էլի աբի ստացի՛ր, բոլոր փողը մի՛ տանիլ, ճանապարհին կկորցնես։

— Միամիտ կա՛ց, ասում եմ, քո մեծությունը, երեխա հո չե՞մ, որ կորցնեմ։

— Է՛հ, ի՞նչ դժվարությունով ես բանը հասկանում,— աչքով անելով ժպտաց երեսիս նաչալնիկը,— դե տա՛ր էդ հազար մանեթը, ոնց կուզես՝ տունը շինի՛ր վերջացրո՛ւ, մի տեսնենք, թե ամեն մեկիս էդքան հասնո՞ւմ ա. գիտե՞ս քանի աչքեր կան էդ փողի վրա։

— Ուրեմն տեղն եկած միջոցին ինձ կպաշտպանե՞ս, ասում եմ, քո մեծությունը, թե որ հարց ու խնդիր ըլի, թե որ մհալը գանգատա, թե ես իրենց բեգյառն ավելացնում եմ, մշակ, փայտ և ուրիշ շինության համար նյութեր եմ պահանջում։

— Ո՞նց թե չեմ պաշտպանիլ, թե որ մենք մեկս մեկու չպաշտպանենք, երկու շաբթի մեջը մեր պոչը գուրս կգա ու ամենքս միատին կկորչենք. մի՛ վախիլ, գնա քեֆդ քոք պահիր[4], դուս առաջի մեդալնումն[5] էլ չեմ թողալ կանգնին, դաղախներով հետ կածեմ. բաս որ մհալը

---

1 Բոլորովին։ 2 Սանձը։ 3 Արժեր։ 4 Մեղադրել։ 5 Շտապ։

1 Արկղ։ 2 Ապահով։ 3 Աբկղ։ 4 Ուրախ կաց։ 5 Հրապարակ։

չշինի իր զարավուլների[1] ու զաղախների կացարանները, ես ու դուն հո չե՞նք շինելու, ո՞վ ա նրանց հորը պարտական։

— Շատ շնորհակալ եմ, քո մեծությունը, ասաված քեզ երկար կյանք տա,— ասեցի ու հաղարը համով-հարկևորով ծալեցի, ջեբս[2] դրի ու գլուխ տվի, դուրս եկա։

— Դե ընչի՞ չէիր գլուխ տալ, աղա ջա՛ն, մենակ էն հաղարովը հո չէի՞ր բավականանալ, ախար տները շինելուս մշակների, մասալի[3] մեջ էլ քեզ քիչ օգուտ չէր մնալ։

— Օ՜, Սաքո՛, քեզ ոչ ով չի կարող խաբել, ինչքան գետնի երեսին ես, երկու էնքան էլ գետնի տակին ես, իհարկե առանց էդ չէր ըլիլ, քիչ-քիչ էլ ընտեղից եկավ. հիսուն մշակ մի գեղի վրա քցելու փոխանակ երկու հարյուր հրամայեցինք ու քսանհինգով անց կացրինք, մի քանի մանեթ էլ մեր ջերը ջցեցինք և այլն։

— Գիտեմ,— ասաց Սաքոն ժպտալով,— մի երկու-երեք էնքան էլ էդ տեղերիցը կգար։

— Հա, մի քիչ ավելի կամ պակաս։

— Էդ բաներն ինձ մի՛ սովրացնիլ, գլխիդ մատաղ. ես շատ լավ գիտեմ, թե ընչե՞ր կանց կենար։ Ըտոնք թողանք, մենք մեր էսօրվա բանը խոսենք։

— Ղո՜րթ. դու բանի ես եկել, Սաքո՛, շարունակի տեսնենք։

— Էլ ի՞նչ շարունակեմ, երեք ախպորն էլ ջոկ-ջոկ թափ եմ տվել, մենծ ախպերն իր մենծահարկը քեզ ա տալիս, թե որ պստիկներին մի լավ խրատես, մենծի պատիվը ճանաչցնես. պստիկներն էլ մենծահարկը քեզ տալուց հետո՝ մենծ ախպորը լեզուն կարճացնելու համար մի բան էլ վրադիր են տալիս։

— Նրանց հող ու գետինն ինձ պետք չի, դու փող ասա, փո՜ղ։

— Փող կըլնի. բա հող հո չի ըլնիլ. դու գութան չունես, որ եզներդ քցես մեջը վարես։ Ասում ա՝ էշը մատաղ չի ըլնիլ, իշագինը մատաղ կըլնի։ Վեճը նաղդ կշինենք ու փող կառնենք։

— Խոսքը շատ տվողինն ա։

— Իհարկե՛։

— Հիմի ի՞նչ պտի անենք։

— Ոչինչ, գլխիդ մեռնիմ, հենց որ քո մոտ կգան, իրենքի վրա էլ կբարկանաս, որ ամեն դարտակ բանի համար քեզ գլխացավանք են տալիս, կհրամայես ծակը կոխել, երկու օր կճգնեն, հետո ես միջնորդ կընկնեմ, կբաշխես. մենծին կհրամայես պստկներին չզրնել[4], պստկնե-

[1] Պահապաններ։ [2] Գրպան։ [3] Շինության պիտույք։ [4] Զրկել։

ին էլ կպատվիրես մենծի պատիվը պահել, ինձ էլ կկանչես, կհանձնես, որ ինչպես խելքս կտրում ա, դրանց բարիշացնեմ[1], իհարկե դրանից առաջ աշամբուրը իր ոտովն եկած կըլնի։

— Շատ զալումն[2] ա էս Սաքոն, որ սրա պեսները չլինեին, ի՞նչ պտի ըլներ մեր հալը, մենք քաղցած կզկոտայինք, ո՞վ էր կարող ամեն մի գեղացու հետ երկար մասլահաթներ[3] անելով մի քանի կոպեկ պոկել. ախար ոռճիկով մարդ կապրի՞. տարեկան չորս-հինգ հարյուր մանեթ ա, որ ըսկի Երևանու մենծամենծների դռներին կանգնած յասավուլներին չի հերիք՝ թե որ էն էլ ստանանք,— մտածում էր ինքն իրան մովրովը՝ Սաքոյի հեռանալուց հետո. բայց թե ինքը Սաքոն ի՛նչպես վարվեց այս գործի վերաբերությամբ, հետևյալ գլուխը թող բացատրի։

Ե

ԾԱԿԸ

Մեզ հայտնի է, որ մովրովի բակի մեջ գոմին կպած էր բանտը։ Երևում է՝ բանտի դռան փոքրությունից է, որ կոչվում էր ծակ։ Ներս մտի՛ր այդ ծակիցը և լավ դիտի՛ր նրա ներսի կողմը։

Մի մութն և խոնավ նախասենյակի մեջ երեք մանր դռնակներ են բացվում. ո՛ր մեկի դուռն էլ բանաս՝ գարշահոտություն է դիպչում քթիդ՝ սառն և բարակ քամու հետ միասին։ Երեք սենյակների ներսն էլ միատեսակ է, իսկ կահ-կարասիքը՝ միմյանցից փոքր-ինչ զանազան. ամենքի մեջն էլ փռված է մի անկյունումը մի-մի բորբոսնած հին եղեգնյա փսիաթ. իսկ պատերի վերա մեկի մեջ հաստ բևեռների վերա ամրացրած են շղթաներ և ծայրերին ձիանց ոտքը ձգելու համար փականք, որին բիխով անունն են տալիս։ Մյուսումը նույնպես շղթայով պնդացրած է մի հաստ կոճղ, որ երկու կտորից միմյանց հետ միանում և բաժանվում են մի գչիրի զորությունով. այս էլ ժողովրդի բառովը ֆոքուկ անունն է կրում։ Երրորդ տեղումը մի պինդ ոլորած հաստ պարան է կապած։ Մի-մի հնադարյան՝ պռունգները կոտրատված ջրի փարչ էլ դրած են փսիաթի մոտ, հետն էլ մի սևացած կավյա քերեղան։

Անտեղյակ այցելուն կմոլորվի և չի կարող ճանաչել այս մութը տան և յուր միջի կահ-կարասիքի նշանակությունը, կամ թե հիշյալ շարչարանաց գործիքներից կգուշակի բանտ լինելը. իսկ բախտի հարվածից դիպ-

[1] Հաշտեցնել։ [2] Ճարպիկ։ [3] Խորհրդակցություն։

վածով այստեղ ընկնողը սարսափմամբ կասի, թե սա է ս[illegible] նշանավոր ծակը, որի անունն ամեն մի գեղացու սարսափեցնում է։

Եթե մեր ներս մտնելուց այս սենյակներից մեկի մեջ մ[illegible]դ չգտանք, այդ չէ նշանակում, թե մյուսներն էլ նույնպես դատարկ են։

Հանցանքի համաձայն պատիժն է լինում. կտեսնես մեկ սենյակի մեջ մի անկյունում կուչ եկած մինք, որի ոտք ու ձեռքն ազատ են. մյուսի մեջ մի թշվառը՝ մի կուռք բիռների մեջ կողպած՝ մյուսը թույլ կախ ընկած. երրորդում գտնեք վերա ընկղմնած մի ավելի աղորմելին, ոտքի մեկը կոճղի մեջ ամրացրած, պարանով էլ ձեռքերը մեջքին կապած։

Ահա Սև ջրի գլխի բանտի կամ ծակի պատգ նկարագրությունը։ Մենք վերը մոռացանք ասելու, որ քանի մի տարի հազիվ կար Մովրովի կացարանը Սև ջրի գլուխը տեղափոխելը. առաջ այդտեղ կոզակների կացարան էր. իսկ թե ի՞նչ բանի համար են գործ դրել առաջ այդ ծակերը, մեզ հայտնի չէ։

Մովրովի մոտից Սաքոյի հեռանալուց երկու օր հետո, երեկոյան, այս ծակերից մեկի մեջ մտավ մեր Սաքոն։

— Բաբի իրիկուն ձեզ, ա՛յ տղեր, էս ի՞նչ խաթի[1] մեջ ընկաք դուք։

— Ա՜խ, Սաքո ջան, ո՞ւրտեղ ես, դու էլ մեզ մոռացար, քանի՞ հետ քամակիցդ յասավուլ ենք դրկել, անճախ-անճախ եկաք։

— Ի՞նչ անես, ախպե՛ր, էս շան տղա Մովրովի ահու մարդ կարում ա ոտք փոխի՞. թե որ իմանա, թոզս քամուն կտա. սաստիկ հրամայել ա, որ դուսսաղների[2] մոտ օտար մարդ չմտնի։ Էլի օղորմի յասավուլների հորը, սիրտս չի դիմանում. աղաչանք եմ արել, թե որ ինձ ուզող ըլի բռնվածներից՝ քշերը ոնց ըլի, ինձ նեքսև բերեն. ի՞նչ անես, ախպե՛ր. գլուխը քարը, թե օրական մի-երկու լիտր գինի ու արաղ մուֆտա[3] յասավուլների փորը կմտնի, մարդի խղճմտանք հո հանգիստ կրլնի՞։ Ախար չէ՞ ես էլ քաշել եմ, գիտեմ, թե ինչքա՞ն դժար ա էս ծակի մեջ մնալը։ Ես էլ որ տեսություն չգնամ խեղճ դուսսաղներին, խեղճերի հալը չհարցնեմ, սաղ տարով բռնված կմնան, ու ոչով ասող էլ չի ըլնիլ, թե էսօր ես մեռել, թե էգուց։ Հը, էս երկուսդ եք ըստե՞ղ, էդ ո՞նց էլավ, որ երեքիդ էլ բռնեց. բաս ո՞ւր ա ձեր մենծ ախպերը։

— Պտի որ նրան մենակ ա բռնել. ըսկի բան հասկացա՞նք, թե ի՞նչ էլավ, մին էլ տեսանք, որ մի-մին շահսիլլասի[4] նրեսներիս հասավ ու յասավուլները պարանով ձեռներիս մեջքներիս շարբանդեցին[5] ու առաջ

1 Փորձանք։ 2 Բանտարկյալներ։ 3 Ջրի։ 4 Նիստ ապտակ։ 5 Կապոտեցը

արած բերին կոխեցին մեզ երկուսիս էս ծակը. մեր մենծ ախպորն էլ դիմացի ծակը։

— Կանի՛, ախպե՛ր, կանի՛, շատ անաստված անխղճմտանքն ա. համա էս էլ ձեզ ասեմ, որ կոնոնահաչ[1] ա տալիս։

— Ի սե՛ր աստծու, մեզ էս ծակիցը հանի՛, ինչ կուզի, իրանով Սև ծովն ըլի։ Քեզ մատաղ, Սաքո ջան, յարաբ մեր ձիանն ի՞նչ էլան, լավ ես մտիկ տալի՞ս, թե չէ։

— Սմոթ չի՞, ըտենց բան կասե՞ն. գիտեք, որ սչքիս լսի պես կպահեմ ձեր ապրանքը։ Հենց որ յասավուլը խաբար բերեց, որ ձեզ բռնեցին, էն սհաթը ձեր ձիանը քաշիլ տվի, իմ ձիու կշտին կապեցի ու օրական խոտ ու դարմանը պակաս չի։ Էդ ոչինչ, տղեր ջա՛ն, ըտուր բանը խեր ա, մի էս ասացե՛ք, չէ՞ որ դուք ասում էիք, թե ինչ որ ձեր մենծ ախպորը մենծահարկ կհասնի, իրան՝ Մովրովին կտաք, թաք ըլի ձեր կողմը պահի. բաս էդ իրան չասեցի՞ք։

— Ֆո՛, էդ տնաքանդն ըսկի խոսացրե՞ց, որ մենք էլ բերաններս բաց անենք, մի երկու-երեք խոսք կլպլտացրեց ու բռնոտեց։

— Շա՛տ հարամկերն ա՝ շա՛տ, դեռ ըսենց Մովրով չի եկել։

— Սաքո ջա՛ն, մեր ձեռն ա քո փեշը[2], մեզ մի ճար արա՛։

— Ախպե՛ր, ես ու իմ աստվածը, սիրտս կտոր-կտոր էլավ, երբ ձեր բռնվիլը լսեցի. ուզեցա առանց ձեր կանչելու գնամ, ոտերն ընկնիմ, աղաչանք անեմ, համա չեք իմանում ի՞նչ մարդ ա, խոսք հասկացնիլ չի ըլում. քո ի՞նչ բանն ա. ասում ա, խառնվում ես, դատավորն ես ե՞մ, թե դու։ Մի ասող ըլի, թե՝ ա՛յ տնաքանդ, ո՞նց թե իմ ինչ բանն ա. մի արի՛ կես սհաթ էս աղվեսի բնումը նստի, հետո իմացի խալխի հալն է՞։ Ի՞նչ լավ, որ քոմակչին[3] մի բարի քրիստոնյա մարդ ա. նրան երեսիս փարդա[4] եմ շինում, նրա ձեռովը բան եմ հասկացնում։

— Դո՛ւ գիտես, Սաքո ջա՛ն, օխտը պապդ դրախտումը կծլվլան, թե որ մեզ էս ծակիցն ազատես։

— Իլլաճ[5] չկա, ընչանք բերանը մի կտոր եմ[6] չքցենք, մունքյուն[7] չի ըլիլ։

— Ախպե՛ր, դու մեր վեքիլը[8], գնա՛, ինչ որ սիրտդ ուզում ա՝ տո՛ւր, թեկուզ մենծահարկը չի՛, մի բան էլ մեզ հասանելիքիցը տո՛ւր։

— Սրանը փողն ա, փողը, ընչանք նաղդը[9] համբարես ոչ, կմեռնի ու չի անիլ։

1 Կաշառահաչ տալ, այսինքն՝ կաշառքի համար զանազան պատրվակներ ի գործ դնել։ 2 Քեզ ենք ապավինել։ 3 Օգնական։ 4 Վարազույթ։ 5 Ճար։ 6 Ուտելիք։ 7 Ճար։ 8. Հավատարմատարը։ 9 Կանխիկ։

— Ծավն էդ ա, որ մեր մոտին փող չկա, երկու շահի ջիբի խարջլղով[1] հո յոլա չի՞ գնալ. բաց թողալ տո՛ւր, գնանք գեղիցը ղրկենք։

— Բա՛, բա՛, բա՛, մաքովդ չանցկացնես։

— Դո՛ւ քեզանից տուր, Սաքո ջան, հո գիտես, որ մեր աչքը մեր դռանն ա[2], գնանք թե չէ, կբերենք։

— Ես ձեզ ավատում չե՞մ, համա որ չունի՛մ, հո գիտեք, որ ջանս չեմ խնայիլ։

— Սաքո ջա՛ն, վերև աստված՝ ներքև դու, թե որ դու մեզ օգնություն չհասնիս, էլ ո՞վ ունինք էս անվերի վերի[3] խոզանոցումը։

— Սըրբ Գևորգի գլխաքարը վկա, որ չկա. խի՞, որ ըլի աչքս եմ կոխո՞ւմ, շահով[4] մի բան չի՞, պարաք եք ուզում, օգորմություն հո չի։

— Բաս ո՞նց անենք։

— Ես էլ եմ մնացել մոլորված։

Մեր Սաքոն ձեռքը ճակատին դրեց ու սկսեց երկար մտածել։

— Մի բան միտս ընկավ, տղե՛ք ջան,— վերջապես ասաց Սաքոն,— կացե՛ք՝ առաջ գնամ մի ծեծուն անեմ[5], բերանը չափեմ, տեսնեմ ինչքա՞ն ա ուզում. հենց անենք, որ ձեր գործն էլ մի անգամ վերջանա պրծնի։ Հետո կգամ դիլբանդի մոտ, պտի որ նա փող ունենա, նրանից կուզեմ, ձեր անումովը սանադ կշինենք, ինքս էլ վեքիլ կըլնիմ ձեր տեղակ, վերջացնենք, տանենք, աչքը կոխենք։

— Հա՛, Սաքո ջա՛ն, քեզ մատա՞ղ, դու գիտես։

— Համա էլի լավ կըլնի ձեր մտքինն իմանալ. ինչքա՞ն կարող եք տալ։

— Դո՛ւ գիտես, Սաքո ջա՛ն, ալլահվերիլ[6], ոնց որ քո սիրտը կուզի։

— Չէ, դե ես ո՞նց անեմ, ձեր քիսի[7] զորությունը ձեզ ա հայտնի։

— Ի՞նչ ես կարծում, ինչքա՞ն ա հերիք, Սաքո ջա՛ն։

— Վալլահ[8] չգիտեմ, էնպես անկշտումն ա, որ քչով ե՞րբ ա դաբուլ կենում. հերիք չի, որ ինքը խուզում պրծնում ա, հրամայում ա քոմակչուն, դիլբանդին, գրագրներին ու յասավուլներին էլ ջոկ-ջոկ բաժին տալ։

— Դե՝ ասա՛՝ ութ-ինը թումանը անճախ տեսնի, էլի՛։

— Է՛հ, ի՞նչ եք ասում, բերանս էլ չեմ կարող բաց անել, էդքանով քսկի քոմակչու համար էլ չի բավական կենալ։

— Վա՛յ, մեր տունը քանդելու, մեր երեխեքանց բերնի թիքեն կըտրելու միտք հո չունի՞։

— Էդ ա, է՞, դրա տունը քանդվի՛. քանդեց էս մհալն ու թողեց. սանդն էլ ա իր ձեռին, սրոպոքն էլ. ո՞ւմնից ա վախենում։ Ասում են՝ սրա կնիկը նաչալնիկի հեռու մոտիկ ազգականն ա՝ թե ճանանչն ա, ամիսներով Երևան ա ըլնում. մենծի հետ՝ ոնց որ ես ու դու, խոսքները միս ա։

— Վա՛յ, վայ, վա՛յ. դե ասա ռահաթը[1] քանդվելու ա, էլի՞։

— Տո բաս նոր եք իմանո՞ւմ. համա, էհ, ի՞նչ ենք ջուրը լցրել սանդն ու ծեծում, ասում ա՝ օձի սեին էլ նալայի[2], սիպտակին էլ. էս շունն էլ էն շանիցն, երկուսն էլ մի տանիցը։

— Բաս ոնց անենք, Սաքո ջա՛ն։

— Դե մի ձեր կորական խոսքը չիմացա, որ էնու գյորա[3] ես էլ իմ բանը բռնեմ։

— Ախպե՛ր, գնա՛, ընչանք տասնուհինգ թուման խարջի, ում բերանը կուզես՝ ցխի՛ր, որտեղից կարող ես՝ ճարի՛ր. ինչքան շահ կուզես՝ տո՛ւր, մեր աչքի լիսը կըլնիս։

— Դե՛ լավ, թե որ ինչպես ըլի բանը յոլա տանենք, ձեր միտքն ի՞նչ ա, ասում եք, որ ձեր ախպորը չեք ուզում մենծահարկ տալ, էլի՞։

— Ջա՛նըմ, ախպերն էլ մոռացանք, մեր գլուխն էլ. թե մենք իմանայինք, որ դատավորն ըսենց պտի ըլներ, մենք մեր օխտը պորտը կանիծեինք, մեր ձենը մեր տանիցը դուս չէինք քցիլ. յա թե չէ, ով ա՞ իմացել, որ բաժանքի մեջ մոլորով խառնվի։ Ընչանք օրս լսել ու տեսել ենք, որ մեր գեղումը մեր դռանը տանուտերն ու իշխանները մի քանի շահի, յա մի գլուխ շաքար կերել, բանը պրծացրել են։

— Էլ ընչի՞ էկաք ըստեղ։

— Լա՛վ չէինք ուզում գալ էս ծակի դուռը, համա տանուտերն յախեն[4] ճղելով դեսը ղրկեց։ Էս մոլորովը հրամայել ա, ասում ա, որ ըստուց ետը ամեն բան ինքը պտի վճռի. ես ձեր գործը չեմ կարող կորիլ։ Հոգի ունեմ տալացուկ, խեղճ մեր մենծ ախպերը հենց որ իմացավ, ա՛յ սեբրեսներ, ասեց, եկեք կորչինք մեր երեսի ջրովը, ոնց որ ըլի, տնավարի մեր օջախումը վերջացնենք ու դատավորի դուռը չերթանք։ Մենք էլ ուզում էինք լսել, համա տանուտերը չթողեց. բանն ինձ չպիտի հասցընեիք, ասեց, էլ հիմի չեմ կարող ձեզ թողալ, պտի գնաք մոլորովի դուռը, նա ինքը հրամայել ա, որ ամեն գանգատավորի իր դուռը ղրկեմ. հալբաթ ընտուր համար, որ կաշառք ուտի, ընենց չի՞. Սաքո ջան։

— Աշկյարա ա[5], էլի՞։

— Աստված ավելի բեթարիցը[6] թափի՞։

— Բաս ասում եք ձեր մտքինն էն ա, որ ձեր ախպորը մենծահարկ

---

1 Ջեռաց մսխելիք։ 2 Կարոտություն չունինք։ 3 Վայրի։ 4 Տոկոսով։ 5 Արծարծեմ։ 6 Բարեխղճաբար։ 7 Քսակ։ 8 Աստված վկա։

1 Հպատակ ժողովուրդ։ 2 Անեծք։ 3 Ըստ այնմ։ 4 Ծնիր։ 5 Հայտնի է։ 6 Վատթարիցը։

շտաք, էլի՛. դուք ասում եք, որ առանց էն էլ ձեզ պրոնել ա, ձեր հոր գատած փողը տակովն ա արել ու ոչինչ չի շանց տվել, էլի՛, ես ու իմ աստվածը, տեղն ա, որ ձեր մենծ ախպորը մի չոփ ավելի շտաք, որ աչքը կոխի. շատ լավ եք միտք արել, ինչ որ նրան մենծահարկ կհասնի, շներոց-դիկերոց արեք, թող զուրդ ու զոշն[1] ուտեն, թող մոլորվի փորը մտնի, թաք էլ թավնուր մարդի հախիցը դաք։

— Ա՜խ, Սաքո ջա՛ն, դնա քոմնա էլ ում կուզես տո՛ր, թաք մենք էստեղից հանի՛ր. թե մի-երկու քշեր էլ մնանք, էս նամ[2] գնանին կքամոտվինք։

— Գուք միտամիտ կացեք, մի սհաթ չի քաշվի, ձեզ քստեղանց կհանեմ, թող ձեր մենծ ախպերն ամիսներով փտի։ Անկուշտ, անասուվածը, չի էլ ամանչում. ասա ի՞նչ պտի տանիս էս աշխարհքիցը, որ էս խեղճ մարդկանց դնում ես. սրանց էլ էն հոր զարդիքը չե՞ն, քեզ հպազ ա, սրանց հարա՞մ։

— Ջէ՛, չէ՛, Սաքո ջան, մենք փոշմանել ենք, նա էլ մեր մենծ ախպերն ա, մեզ հերութիւն ա արել, հենց ասա, որ մեր ջիգրը ոչինչ չգնա, մեր խարջածը նրա գլխիցը դուս գա ու իրան էլ քաց թողալ տո՛ւր։

— Ա՛յ հպալ մարդիկ, ասո՛ւմ ձեր ախպորը, որ ձեզ հետ ըստենց ա վարվել. ես որ ըլնի ձեր տեղը, վերջի էտոր հաշտ կտայի, թաք էլ թավնուր անխղճամտանք ախպորն էլ պրծնում ըլներ։ Է՛հ, ոչինչ, լոնքի ձեր սիրտը ձեր ախպոր համար ցավում ա, նրա համար էլ պտի խրնքրած՝ որ պրծացնեն։

— Հա՜, քեզ մատաղ, հա՜։

— Բաս դուք միտամիտ կացի՛ք, որտեղ որ ա, ես ետ եմ գալանում, բալքի[3] մի քանի շահի ճարեմ, ում ուզի[4] քցեցու ա՝ քցեմ,— ասաց Սաքոն և դուրս գնաց։

— Հիմի էլ մտնենք էս ծակը, տեսնենք սրանի՛ց ի՛նչ ենք պրկում,— ասեց Սաքոն ու քանտի դուռն երկու եղբոր երեսին ծածկեց։ Դիմացի ծակի դուռը բաց արեց նա և տուն մտավ։

Մի աղոտ ճրագի նրաց ծխում էր պատուհանի ցցած տախտակի վերա։— Ըստեղ մարդ չկա՞, աչքս էլ լավ չի տեսնում, քաս ո՞ր ծակումն ա խեղճ մարդը,— խարխափելով առաջ եկավ Սաքոն։

— Հոմեցի՛ք, Սաքո ջա՛ն,— մի նվազ ձայն պատասխանեց նրան անկյունից։

— Խեղճ բեչարա[5], մկար[6] քեզ ըստե՞ղ գասցրին քո փուչ կենդանի ախպերտիքը,— կարեկցաբար ասաց Սաքոն,— գե Հիմիկ ասի չավու-

1 Գայլերն ու թռչունները։ 2 Նոնավ։ 3 Գուցե։ 4 Ինքան։ 5 Թշվառ։ 6 Միթե։

թչուն արա՞, եթիմ[1] պահի՝ մեծացրու. հա՞, ախպեր, աշխաքհքումս էհոիպար[2] ասած բանը չի մնացել. փչանա լավ չի՞ էդպես ախպերները։ Թե աստված արդարադատ ա, ո՞նց չպտի քո հացը նրանց աչքերը բանի. ա՛յ ժամանակ. մարդ էլ իրան հերութիւն անող ախպորն էս օրին կհասցնի՞։

Մի քանի ալապիսի խոսքերով նախապատրաստեց Սաքոն մեր բանտարկյալ մեծ եղբորը։

— Ինչ էլավ՝ էլա՛վ, պուլեր քարը, թող իմ աթաձն աստված իմանա, ասում ա՝ լալիութիւն արա՝ քցիր ջուրը, ձուկը որ չիմանա՝ աստված հո կիմանա՞. համա, Սաքո ջա՛ն, մի ճար տե՛ս, մենք կմեռնինք էստեղ, մեր երեխեքը կմնան անտեր։

— Ես ի՞նչ կարամ անել, ախպե՛ր, հա գիտե՛ս, որ ջանս չեմ խնայել ձեր համար. թե առաջվա մոլորվի վախտը կըլներ՝ չէի էլ թողալ, որ իր երեսն էլա տեսնեիք, համա մի հենց օձը կծածին ենք ռաստ եկել[3], որ հետը խոսվում չի։ Ես չէ՝ որ իր դժոխքի բաժին հերը պատանն ուսին քաշ տալով գա, ընչանք պլոկի ոչ, բան չի շինիլ։

— Ի՞նչ ունենք, ախպե՛ր, որ ի՞նչ տանք, գնա ասա, թող մեր փչանալու պտղներիցն ինչ որ ինձ մենծահարկ ա հասանելու՝ առնի, իրանով Սև ծովը, թաք մեզ քստեղից ազատի։

— Է՛հ, խոսքդ ափսոս չի՞ խարջում ես. նիսիեն մեր մոլորվի համար հա էլած՝ հա չելած. էսօր տո՛ւր, էսօր, էսօրվա շահին էգուցվա մանեթից նրա համար հազար փառքով լավ ա։

Սկսավ նույնպես Սաքոն բացատրել ներկա գավառապետի անաստվածությունը, կաշառակերությունը, գավառը տակն ու վերա անելը և այլն։ Ի վերջո, սրա տալիք փողի քանակությունն էլ ուզածի չափ նշանակեց. խոստացավ պարտք առնել ծառայողների մեկիցն և դուրս եկավ։

— Է՛լի ապրեցիր, միկիտան Սաքո՛, քո բանն աջ ա, ով կուզի՝ թող հաշա,— ուրախ բացականչություններով գնում էր Սաքոն դեպի յուր գինետունը։

— Եկե՛ք, այ Նիկոլա մանեթներ, ես ձեր ջանին մեռնիմ, եկե՛ք. կես սհաթ չի քաշիլ՝ ձեզանից մի քանիսը կմտնեք մեր հաստաբեջին[4] մոլորվի ու կովի պես քոմակչու ջերը, որ մուտեր հանեք, էլի մեր շաքմաչեն[5] լցվեք. մեկելներդ էլ ետ կգաք ըստեղ տաք-տաք կպատեկեք, կքրանեք. Սաքոն ձեզ հեշտությունով բաց չի թողալ, ես ձեր կարոդին մատա՛ղ։

1 Որբ։ 2 Երախտիք։ 3 Հանդիպել։ 4 Հաստուքեղ։ 5 Դրամարկղ։

Խոսեց Սաքոն փողերի հետ ու բավականին սպիտակ արծաթյա ամբողջ մանեթներ առավ ու գնաց գրագրներից մեկի մոտ։

Կես ժամից Սաքոն բանտից դուրս եկավ, երկու թուղթ ձեռին բռնած՝ գնում էր դեպի յուր խանութը։

— Կբերե՛ն ու ջաններն է՛լ դուս կգա, շլինքներն էլ օխտը գուզ կերկարի, —ասաց նա,— հիմի անխելք ախպերտանց հոգիքն էս թղթի միջին իմ ջեբումս ա. խեղճերը հենց գիտեն, թե էս ա, էս բոլոր փողերն էլ գնացին մովրովի ջեբը,— ո՞նց չէ, գոգդ դեմ արա՛։

Զ

ՄԻ ԿՏՈՐ ՀԱՅ

Արեգակը ճաշվա տեղը նոր հասած կլիներ, որ յասավուլ Մարգարն իջավ Այղը գյուղի ամարաթի բակումը, ձին կապեց ու մտավ յասավուլխանեն[1]։

— Հը՛, Մարգար, ո՞րտեղից ես գալիս, ո՞ւր էր ղրկել քեզ աղեն,— հարցրին մի-երկու յասավուլներ։

— Մհալն էի գնացել, թուղթ էի տարել։ Աղեն արղաչիքանցն[2] ընդունել պրծել ա՞։

— Նո՞ր, ճաշ էլ կերել ու քնել ա։

— Դո՞ւք։

— Մենք էլ նոր ամանները լաստեցինք։

— Գնամ տեսնիմ՝ Սաքոյի մոտ պռոշներիս կպցնելու բան կգըտնե՞մ։

— Ը՛ռ, դու գեղերիցն ես գալիս ու քաղցած ե՞ս, ես ավատամ, որ դու հիմի չորս-հինգ գեղում չոռլամիշ չես էլե՞լ[3] ու խուրջինդ էլ պռտեհար լցված չի՞։

— Աստված վկա, դեռ անաժուռ[4] եմ. թե կուզեք՝ վե՛ր կացեք, խուրջինս տեսե՛ք. ըսկի կարացի՞, որ մի տեղ մի չուր խմելու համար էլա բանդ ըլիմ. հենց պատվերներ տվեց, որ ջանս դող ընկավ։— Մարիկ տուր, ասում ա, թե որ արևը ճաշ չի հասած՝ ըստեղ չըլնիս, կաշիդ կքերթեմ, դու էսօր ինձ շատ պետք ես։ Ձեզ մատա՛ղ, թե որ հարցնի, ասացեք՝ դու նոր գլուխդ վեր դրած կլիներիր, որ սա տուն մտավ։ Սպանեցի՛ խեղճ ձիուս, սպանեցի՛. թե ինձ չեք ավատում՝ գնացե՛ք, խեղճ

[1] Յասավուլների կացարանը։ [2] Խնդրատուներին։ [3] Լափել։ [4] Անոթի։

Դիլիբոզիս տեսե՛ք, քափ ու քրտինքի միջին կորել ա։ Բա ըսկի բան չկա ուտելո՞ւ, որ մին էլ Սաքոյի կուշտը չերթամ։

— Փշրունք չի մնացել, վե՛ր կաց, շուտ գնա Սաքոյի մոտ, թե չէ նրա էլ կիրակրները կպրծնի, հետո դնա ծոխանքը լկի՛։

— Լավ, շո՛ւտ, ա՛յ տղա, բարով եկար,— ասաց Սաքոն Մարգարին գինետուն մտնելուս,— հը՛, տղա ե՞ս, թե աղջիկ։

— Սաքի ես իմ օրումն ե՞րբ եմ աղջիկ էլել։ Ամա՛ն, Սաքո ջա՛ն, կամաց խոսանք, էս կողքերի օթախներումն ոչով չըլնի ու լսի։

— Է՛հ, հեր օրհնա՛ծ, ի՞նչ ես դարդ անում, էդ քնջնի վեր թափած անլեզու հայվան դաղախներից հո երկյուղ չկա. էս օթախումն էլ մի քանի ախմախ գեղացիք են, որ ինձ տո՛ւր՝ քեզ տամ[1]։ Դե հլա նստի՛, նստի՛, տեսնենք՝ ի՞նչ արիր, բերաններս պտի եղոտե՞նք, թե չէ։

— Սաքո ջա՛ն, գնա՛, որ գնա՛, բանի կեսը գլուխ ա եկել։

— Պսակը խափանեցի՞ր։

— Տղի պես։

— Ապրի՛ս, բաս որ քեզ ասում էի, թե գլուխ կգա՞. հիմի իմ բալի մոտի խեչանի բաղն ի՞մն ա, հո։

— Դրան էլ կասկած կա՞. էնքան ըլի՝ աղջիկն իմ ճանգը քցես, ընչի՞ չեմ տալ. չալաբու հալոդն ա, դու էլ կե՛ր, էս էլ. քիսիցս ի՞նչ ա գնում, վրեն քրտնել ե՞մ, թե պապիս մեջքն ընտեղ ա երկուտակվել քլնգի տալով։

— Ես քեզ որ ասում էի, թե մովրովի ու գործակալի մի մասը թղթերը ժամիցն էլ ետ կդարձնե՞ն։

— Էդ ամենը լավ, Սաքո ջա՛ն, ասենք դու մովրովին էլ խաբեցիր ու գործակալին էլ, պսակը խափանելու հրամաններն առար. էսօրեն էգուց՝ որ բանը բացվի, չէ՞ որ մենք սիբիրական կըլնենք։

— Գնա՛, վախլո՛ւկ մուկը, ի՞նչ պտի ըլնի, քո հրամանաթղթերը շինովի հո չէի՞ն. դու մի յասավուլ մարդ ես. քո գործը քո աղի հրամանները կատարելն ա, քեզ ի՞նչ։

— Լավ, էգուց որ քննություն ըլնի, որ մեջը չհաս-մհաս չի էլել, էս հո մենք հոգի հետ կհավասարվենք։

— Տո՛, ձենդ կտրի՛, երեխա՛, էդպես բաներն են Սաքոյի ձեռումն անցկացնո՞ւ. քչիցը մի քսան-երեսուն անմեղ մարդիկ Մահմատ-Հասանի, Փոլատի, Ահմատի ու ուրիշ գողերի գլխավորների տեղակ տարաղաջու[2] ձերն եմ հանել տվել, յա Սիբիրումն էսօր էլ փտում են. էդ դարդակ բանիցը պտի վախենայի՞։ Դու գնա՛, անկաչդ ոչինչ քեզ համար տեղդ նստի՛, ես քեզ կասեմ, թե որ օրն ի՞նչ պտի անել։ Էս իմ բամակի դռնա-

[1] Ոչինչ չեն հասկանում։ [2] Կախարան։

կիցը մի նեքսև մտի՛, մի քանի յափունջում կոլոլվածներ կան՝ մի նրանց տե՛ս, նրանք սաղ ըլին, աչդ դեռ թերթած չըլնիս՝ աղջկանը թարքիդ դրած տեսնիս. դե՛, դու կուզես՝ վեր կաց քաշվի՛ր. սրանց հետ խոսալ եմ ուզում, հազիր լավ վախտն ա, ոչով չկա, արզաչիքն էլ գնացել են. էս դազախներին էլ ցանեմ, ոադ անեմ, էդ ա քոռացել են՝ էնքան լակել են. ամեն մինը երեք թաս խմել ա նիսիա[1]. ասենք՝ դրանց վրա առնելիք ունենամ, կորած տեղ չի. խեղճերն ինչ ստանում են՝ իմ դախլն[2] են կոխում, հերիք չի, գեղերից ճանգները քցածներն էլ ինձ են բերում։ Տեսնում ես էն պոզավորը, որ կախած ա. երկու սհաթ չկա՝ էն ծուռը քնթանին, քո կողմը նստածը, թուրքի սուրուի[3] միջիցը թոցրել էր, կոխել զամշլղի[4] մեջը. կես չարեք տաքռեղի ջուր[5] տվի. ձեռիցն առա, միս արի ու մի չարեք միս էլ իր վրա նիսիա գրեցի։

— Ասենք՝ քո ձեռիցն ամեն բան գալիս ա. Սաքո ջան, համա, ախպե՛ր, դու մի օր քեզ էլ, մեզ էլ փորձանքի մեջ կքցես։ Տո՛, ո՞նց չես վախենում էդ մարդակեր ավազակներին օրով-ցերեկով դուքանումդ պահում ես. Մահմատ-Հասանի գլխի համար հազար մանեթներ ա խոստացած՝ դու ըսկի բանի տեղ չես քցում. մոլրովը որ իմանա՝ քեզ ի՞նչ կանի։

— Տո, ձենդ կտրի՛, ա՛յ ախմախ, բա մոլրովը չի կանչել սրանց, Մ՚ս եմ բերել տվել. էգուց առավոտ կլսես, որ Թալինի ճամփին իրեք օսմանցվի բեզիրգյան[6] են թալանել. դու ինձ ո՞նց գիտես, դեռ մարդիկը Ղարսիցը դուրս չէին եկել, որ ես հոտն առա, բուսունը պահիլ տվի[7]. մոլրովին ասեցի, սրանց կանչեց ու ղրկում ա. ըստեղ նստել են, որ մութը գետինն առնի թե չէ, ճամփա ընկնին։

— Ա՛յ տղա, Սաքո՛, ղորթ՝ ես զարմանում եմ, դու ո՞րտեղից ես անց կենում էդ տան քամակը, որ սրանց համար դուռը բաց անես. չորս կողմից ղամիշն ամառ-ձմեռ կաննած ա. մի օր ես երկու սհաթ չարչարվելով, երեսս արինլվիկ անելով՝ անճախ մտա. լսել էի, որ էն կողմիցը մի դուռը կա՝ ժանգոտ կողպեքը վրեն, ու չէի տեսել։

— Ո՞վ ա անց կենում, խաչակնքում եմ թե չէ՝ կողպեքն իրան-իրան բացվում ա։

— Թե ասված կսիրես՝ հանաք մի՛ անիլ, ասա, հո գիտես՝ իմ բերանիցը խոսք չի դուրս գալ։

— Էն կողպեքն անբալնիք ա բացվում, պտի հանգնց[8] իմանալ։

1 Ապառիկ։ 2 Դրամարկղ։ 3 Հոտ։ 4 Եղեգնուտ։ 5 Արաղ։ 6 Վաճառական։ 7 Բուսան պահել, կնշանակի դարան մտնել։ 8 Հնարք։

— Բաս էդ ավազակները ո՞րտեղից գիտեն։

— Մինը մեկելին շանց ա տվել ու էն գլխիցն ըսենց եկել, ըսենց գնում ա։

— Բաս մոլրովն էլ գիտի էդ բանը՞։

— Առանց էն կըլնե՞ր։

— Հիմի էս սհաթս ո՞վ կան ըստեղ։

— Ինքը Մահմատ-Հասանը մի քանի արենկերների հետ։

— Ղոչա՛ղ ես, ղոչա՛ղ, Սաքո՛, համա, ա՛յ տղա, մենք էլ մատներս լպստելու ե՞նք, թե չէ։

— Բաս առանց էն հո չի ըլնիլ, իշի մշակ հո չե՞նք, որ տարին տասներկու ամիս խոզերի հետ էստեղ ղամշի քոք[1] ենք կոծում. դու գարդ մի՛ անիլ, ամեն մարդ իրանու գյորա[2] կըստանա։

— Դու միշտ ըտենց ես ասում, Սաքո ջա՛ն, համա գիտե՞ս որ անցյալ շաբթի յասաղի[3] ապրանքիցը մեզ՝ յասավուլներիս շատ քիչ բաժին հասավ. մենք չարչարվում ենք, դու ես մեջտեղը լեղ տալիս։

— Թշնամու խոսք ա, Մարգար ջա՛ն, ես է՛լ հիմի էնքան օգուտ չունիմ. առաջվան մոլրովի վախտի էլած խևրի կեսը հիմի չի մնացել. էդ ընդուց էր, որ նա խամ[4] մարդ էր՝ Ռուսեթիցը նոր եկած. ոնց ուզում էինք՝ մեր միջին շինում էինք։ Համա սա քսան տարի յա՝ մհալները վեր ա կոխել ուտում, սրանից ի՞նչ խեր պտի տեսնինք։ Մենք լսել ենք, որ մոլրովի թալանածը գողի հետ հավասար կես պտի անի ու կիսիցն իր ձեռ ու ոտին էլ բաժին պտի տա. սա խեղճ գողերիցը հալալ կեսը վերցնում ա, նրանց կիսիցն էլ հրամայում ա, որ ուրիշների բաժինն էլ հանեն։ Մի նեքսև մտի, խեղճ Մահմատ-Հասանին հարցրո՛ւ, արին արտասունք ա թափում մեր էս մոլրովի ձեռիցը. համա ի՞նչ անի, ձեռին ճար ունի՞, պտի տա։

— Էդ հո ասենք ըտենց ա, համա խոստովանվի՛, Սաքո ջա՛ն, որ դու մոլրովից էլ շատ բաժին ես վերցնում. առաջ-առաջ քեզ մոտ են գալիս, էլած-չելածը հետդ կիսում, նոր տանում ես մոլրովի մոտ։ Էլ ի՞նչ ես կարմրում, ումից թաքուն ա՝ ինձանից հո ծածուկ չի՞։

— Ես զարմանում եմ քեզ վրա, Մարգար ջա՛ն, բա ամենից ավելի ո՞ւմ շարչարանքն ա շատ. թե որ սրանց հիմի ըստեղ բռնեն, ո՞վ պտի պատասխան տա. մոլրովն էլ, քոմակչին էլ ու ամենքդ էլ փեշերդ թափ կտաք, ձեռներդ սինը կքսեք, ղրաղումը կկաննեք, ես պտի կրակի միջին մնամ։ Էդ էլ ետ թողանք. շաբթներով սրանք իմ մոտ հինգ-տասը

1 Արմատ։ 2 Ըստ յուր չափու։ 3 Մաքսանենգությամբ բերած ապրանք։ 4 Անփորձ։

ձիավորով ապրում են, ինձ ո՞վ ա մի սև փող տալիս. բաս իմ փողը ցանովի՞ ա։

— Ո՞ւմ կշտին ես արճինգ անում, Սաքո ջա՛ն, տո լոթի, լո՛, լո՛, քրջի տղին էլ լո՛, լո՛. Սև ջրի գլխին դու հո խազինեք ես կապել էս երկու տարումը. էսքան տարեն յասավուլ եմ, քեզ պես միկիտան չեմ տեսել, գիտե՞ս քանի մոլրով, քոմակչի ու միրզեք եմ փոխել. ասենք, թե որ օղորմածիկ կնիկս մեռած չըլներ, ես էլ հիմի ըստեղ չէի ըլնիլ, ըսկի ղաբուլ չէր լսի փայը։

— Դրա համար էլ էնքան ծեծեցիր, փեսի տակին սպանեցիր։

— Դե լա՛վ, հին դարմանը քամուն չեն տալ, հին դարդերս մի՛ նորոգիլ։

— Դե սուս կա՛ց, դե ձենդ կտրի՛, որ մենք իրար հասկանում ենք. իմացի՛, որ իմ սըրտում[1] բացվելու պես՝ դու կորած ես։

— Տո, ախպե՛ր, գիժ հո չե՞նք, որ իրար սրտ բաց անենք։ Աստված տա՝ էնքան հարստանաս, ինչքան քո սիրտը կուզի. ես իմ հոգի՛ն, դու որ չըլնես՝ ես որ տասը տարի էլ կենամ, մի սև փողի տեր չեմ դառնալ. համա հիմի տեսնո՞ւմ ես՝ մատդ պատեցիր՝ ուզում ես ինձ նոր ջահելացնիլ, ոպափ ապշկա մարդ շինիլ։

— Որ վերջը մի կտոր հացի տեր ըլնիս։

— Որ դու էլ մի ուրիշ բաղ ճանգդ բցես։

— Որ երկուսս էլ հաց ունենանք։ Հա՞ց, հա՞ց, մի կտոր հա՞ց. ինչ կանես՝ ուրա՛, խարի՛, քանդի՛, պոկի՛, գուրի՛, սպանի՛, թաք մի կտոր հաց ունենաս... աշխարհքիս առաջին մարդիցը բռնած՝ ընչանք վերջի մշակը մի կտոր հացի համար են աշխատում. ուրիշին որ տեսած չըլնիս՝ յասավուլ ես, տասը մոլրով ես փոխել, ըսկի մինն էլել ա՞, որ գա ու խալխին չգուրի, մհալի տունը չքանդի, մհալը փորը չկոխի. ընչի՞ համար՝ հացի, մի կտոր հացի։

— Դե, Սերգե՛յ, մի-մի ստաքան էլ նիսիա տո՛ւր, խմենք գնանք,— ասացին ռուսերեն կոզակները, որոնք ոտքի վերա հազիվ էին կանգնում,— պետք է գնանք սահմանագլուխը պահենք, թե չէ էլի կանդրաբանդ[2] կփախցնեն անպիտան մուսուլմանները։

— Հերի՛ք ա, հերի՛ք,— բութելով դուրս ձգեց կոզակներին մեր Սաքոն,— առանց էն էլ երեկվանից ձեր վերա փող կա, թե մեկ էլ խոսեցել ես, թվանքներդ կխլեմ, մոլրովի մոտ կատնիմ։

Խեղճ կոզակները որպես և իցի դուրս ելան գինետանից ու մի բանի քայլ հեռու եղեկների տակ վայր ընկան ձյունի վերա։

1 Գաղտնիք։ 2 Արկելյալ ապրանք։

— Դե՛ հիմի դու վեր կաց գնա՛,— ասեց Սաքոն Մարգարին,— քանի ոչով չի եկել. ես մտնիմ էս մեր տղեքանց մոտ, քո գործի համար էլ մի խոսամ։

Է

ԲԱՐԵԿԵՆԴԱՆ ԿԱՄ ԲԱՇԻՔՅԱՐԹՄԱ

Սրանից երեսուն կամ քառասուն տարի առաջ, բուն բարեկենդանի վերջին շաբաթը Աշտարակու քուչեքանցովն անց կենալ չէր լինիլ։ Ամեն տեղ ուրախություն, ամեն տեղ սեր ու խնջույք, ամեն բարձր կտեր սեղան փռել-բաց անելը հասարակ բան էր. էլ ջահել ու ահել չկար, էլ երիտասարդ ու միրքավոր չկիր ջոկիլ, բոլորը միասին ջահելացել՝ կայտառացել էին. պապիս պես պատվելի իշխանները կալերումը լախտի[1] էին խաղում ու հաստ կտավե գոտկից ոլորած լախտան էնպես էին ֆռռացնում, իրար մեջքի կպցնում, որ մեջքի գոլն[2] էր վեր կենում։ Տերտերն էլ վերարկուն ծալած մի կողմը դրած, կապի ծլըփան[3] փեշերը կոկիկ հավաքած, գոտիկը խրած՝ էնպես ծուլ-ծուլ էր լինում[4] ճժի[5] բոլորքովը, որ կասես, թե սա իրան կյանքումը միշտ ըմբշամարտ է եղել. միմիայն լախտը, որ մեջքախառն ուսագլխին հասնում էր, զզում էր, որ էսպես բան իր օրումը չի տեսել։— Դե օրհնած, մի քիչ էլ կարգիս խնայեցե՛ք, կամաց տվե՛ք, է,— ասում էր մեր տեր Հայրն ու էլ ետ թուչկոտում ճժի չորս կողմը, աշխատելով լախտը բռնողի ձեռքիցը խլելու։

— Ոչինչ, տերտեր ջա՛ն, էսօր մուլախաս[6] ա, բարեկենդան օրեր ա, խելքներս կորել ա,— պատասխանում էին մեր իշխաններն ու իրանց խաղի հետ ընկնում։

Էսպես իրարանցում, էսպես հարայ-հրոց թե ուրիշ ժամանակ լիներ, ամենքը կկարծեին, թե գյուղը կոխեցին, ավար տվին, մոտակա գյուղերիցն անգամ գուցե օգնություն կգային, բայց հիմի ամբողջ Արագածոտնյան գավառն է այդպես, ի՞նչ պետք է արած։

— Դե՛ հերիք ջարդվեցինք ծեծվելով, լավ ալիր-աղցան էլանք, մի քիչ էլ վեգ խաղանք, ով տարվի՛ մեր տեղակ երկու գավ գինի բերի։

Սկսում էին այնուհետև մեր մազով-միրքով իշխանները վեգը ձեռքերի մեջ պատեցնել և ճժի մեջ շարած ընկույզներին աչքել։

1 Կտավյա գոտիից պինդ ոլորած պարան՝ զարկելու համար։ 2 Շերտ։ 3 Լայնությունից շարժվել ու ձայն հանել։ 4 Ոստոստում։ 5 Բոլորակ գիծ, որ քաշում են երեխայրն և չորս կողմովը պտույտ գալիս կամ ընկույզ են շարում մեջը և վեգ խաղում։ 6 Արձակուրդ։

— Ա՛յ գիտի, էրեկ էր էն օրը, որ մենք ջահել էինք, միտս ա գալիս, ես էի ամենից լավ խաղացողը,— պարծենում էին ամեն մեկը,— քանի տարի կըլնի՝ վեգի սախկեն[1] ձեռքս չեմ առել. ինարկե որ ջահելները մեզ կտանին ու մեր քնջի կարասի ծեփը կպոկվի. պա՛հ, պա՛հ, պա՛հ, ձեզ զուրբան, ի՞նչ գինի ունիմ, քաղցրությունից կծպծում ա՛, կծպծո՛ւմ, պռոշներդ իրար կկպչեն, չէ՛, ախպե՛ր, ես պտի տարվիմ. թե որ էսօր մեր ներքի հիքու գինու համը չտեսնիմ, ձեզ էլ չմացնեմ՝ ես կմեռնիմ. էլ ո՞ր օրի համար եմ պահել։

— Ճո, դե վեգդ քցում ես՝ քցի՛, քանի՞ խոսես ու քո քացախի պես գինին գովես. քո ինադու ես պտի տարվիմ, որ մեր մենե՛ հիքու գինու համը բերանումդ ընչանք մահդ թողամ. սրան տե՛ս, է, ես կթողամ, որ դու պարծենա՞ս. էս սհաթը տասը կարասի ծեփ կպոկիմ՝ մինը մնիցը լավ,— ասում էր երրորդն ու վեգը ձգում, գիտությամբ փրստ անցկացնում[2]։

— Տո՛, օյինբազ[3] Գեվո՛, ես տեսնում չե՞մ, որ դու դաստի[4] ես փրստ գալիս. որ մեռնիս, համ պոպոքները[5] կտանիմ, համ էլ մեի տեղակ չորս գավ գինի կբերեմ. գերեզմանս հո չպիտի՞ լցնեմ. աստված էնքան տվել ա, փառք իրան, որ ճտահար ա,— ասում էր երրորդն ու վեգը շպրտում։

— Հո՛յ, հո՛յ, պարծեցողին ես միշտ ըտենց տեսա,— ծակ էին տալիս մյուսներն ու թռչկոտում, երբ սա չէր կարողանում ճիշտ խփել։

— Տո՛, դե հերիք ա, միրքներիդ ամաչեցե՛ք, էն երեխեքանցիցն էլա զբնեցե՛ք[6], որ աղրուխը կապել են ձողու ծերը, բայդաղ[7] շինել ու քյասոնց բարձր կտերը յալլա են կանչում. գնանք մենք էլ մի քիչ բոզաղներս թաց անենք։ Փարբու խանը հիմի կգա. մեր Ղուկոն էլ էս երկու օր ա գնացել ա, ո՛վ գիտա՝ հիմի էշմիածին կըլնի, թե Հուշական, յա Փարբի։

— Ա՛յ տղա, մարգարնի որդի էի՞ր, հրես Փարբու խանի աղվեսն[8] եկավ։

Մին էլ էն տեսար՝ ղլուխը երկար պոչավոր թաղիքի գտակը անցկացրած, ոչխարի գզգզված մորթին բուրդը դեպի դուրս միջքին կապած, երեսն ալյուրոտ մի տղա, մի ահագին աթարոց[9] ձեռքին սյուն տալով՝ եկավ, խոր գլուխ ավեց մեր իշխաններին։

— Հը՛, ի՞նչ մարդ ես, ո՞վ ես, ո՞ր աշխարհքի քամին ա քեզ պոքտել, մեր գեղը քցել,— հարցնում է մի ծերունի։

1 Այն վեգը, որով մյուսներին կամ ընկույզին խփում են։ 2 Մխալվում։ 3 Մաղրածու։ 4 Դիմամբ։ 5 Ընկույզ։ 6 Ամաչել։ 7 Դրոշակ։ 8 Աղվես կոչում են հարսանյաց կամ մի ուրախության համբավարերին։ 9 Կրակ խառնելու փայտ։

— Արզ անեմ[1] Աշտարակու էլ ու հասարակությունին, որ մեր Փարբու տերը՝ ղոչաղների ղոչաղ Եղգյար խանը՝ իր նազիր-վեզիրով, իր նոքար-փեքյառով հինգ հաբիր մարդով գալիս ա ձեր սուփբեն շեն անելու, մեր բարեկամությունը հաստատ պահելու։ Նրա հրամանն ա, որ սաղ գեղով, իշխաններով դուս գաք նրա առաջը։

— Մեր գլխի, մեր աչքի վրա տեղ ունի ձեր խանը, մենք վաղուց նրա համար տեղ ենք պատրաստել տանուտերի այվանի[2] կտերը. սուփբեն շաղ, գաթա-հալվեն զիբիլի[3] պես, հազար մարդով էլ որ գա, մեզանից ոչինչ չի պակսիլ։ Ադա՛, ա՛յ պստկներ, թե՛զ, Փարբու աղվեսին մի խալաթ,— հրամայում էր մի իշխան։

Էս խոսքի հետ մոտիկ տանից մի շար ալանի բերում ձգում էին մեր պատգամաբերի վիզը, քամակին էլ մի քանի լախտ կպցնելով՝ ճանապարհ դնում։

— Էլ ի՞նչ եք ուշանում, ա՛յ խալխը, գնանք, էլի՛, հիմի կգա մեր Եղգյարը։

Գնում էին այնուհետև մեր իշխաններն և իրանց համար վաղուց փռված սուփբի շուրջ կողմովը շարվում. գափ ու զուռնեն էլ դրանց պուլիցը կպած էր, ուր եթթալին, հետները տանում էին։

— Ա՛յ տղա, Ղազար, ասենք փարբեցի Եղգյարն էլ լավ խանություն ա անում, համա մեր Ղուկոյի պես չի ըլնիլ։

— Գի՛ժ ես, ի՞նչ ես, Փարբին մեզ կհասանի՞, որ նրանց խանը մերին հասնի. մեր Ղուկոն որ կա՝ խստակ խան ա. որ գալիս չի՝ մեջտեղը ձգվում խշի վրա նստած ու հրամաններ տալիս, ես աչքերին մտիկ տալով՝ մոռանում եմ, որ մասխարություն ա անում, էն սհաթը միտքս են գալիս Երևանու հին խաները։

— Բա խլլաքի որ ֆալախա յա դնել տալի՞ս։

— Դու ասա՝ ո՞նց չի ծիծաղում։

— Տանուտե՛ր, դու ուտել-խմելու հայումն[4] ես, էլ ըսկի չես ասում, թե Փարբու խանի խալաթն[5] ի՞նչ պտի ըլնի։

— Դուք քեֆ արե՛ք, ես վաղուց պատրաստել եմ։

— Յալլա՞,— գոռում են քուչեքումը,— յալլա՞,— լսվում է ամեն կտրներից, ու ամեն տեղից դիմավորում են Փարբու խանին, որ Գրչիխեչի կողմից երևեցավ։

— Ա՛յ, հա՞յ, հա՞յ, էս ինչ շատվոր են, սաղ գեղը հետը բերում ա տեսնելու Եղգյարը։

Միայն մեր տանուտերը, իշխաններն ու տերտերը, որ տանուտերի

1 Խնդիր անեմ։ 2 Վերնահարկ։ 3 Անչափ։ 4 Հոգսումն ես։ 5 Պարգևը։

կտերը քեֆ են անում, նրանք չեն առաջ գալ, ինքը խանը պետք է դա և նրանց սեղանի վերա գտնի։

Ուռած-ուռած բազմած է մեր փարբեցի Եղգյարը իշի վրա, պոչը ձեռքին բռնած, երեսը դեպի ետ, մի երկար գերեմաստի[1] ճիպոտ էլ մյուս ձեռքին իբրև չիբուխ դնչին դեմ արած, նրա գլխին դրած է մի գղգղված պարսից խանի երկար գտակ՝ վրան հին փալասներ փաթաթած. նրա երեսը քսած է սթարով վառվող տան օճռոքի մուր, նրա վիզը ձգած է զանազան ոսկորների կտորներից շարք. հագած ունի նա մի պատառոտուն, ծլանքները հազար տեղից քարշ ընկած պարսկի արխալղահին. նրա կուրծքը բաց է, նույնպես մրով սևացած՝ կողքիցն էլ մի երկար փայտե սուր կախած։ Երկու երիտասարդ. նույնպես այլանդակ հագնված, քաշում են իշի սանձը. երկուսն էլ քամակիցը մի-մի մեծ գավազանի ծայրերը սրած՝ բզում են իշին. դափ ու զուռնեն առաջին ածելով՝ քաշում է այդ հանդեսը դեպի տանուտերի կտուրը, իսկ խուռն ամբոխը միշտ յալլա՛ է կանչում։

Եվ ահա խանն իշի վրա նստած մոտավ տանուտերի բակը։

— Չո՛ւ, չո՛ւ, օ՛շ, ջյո՛շ, գնա՛, ա՛յ սատկած էշ, ի՞նչ ես նազ անում, էս պատիվը խանինն ա, քոնը հո չի՞,— ասում են բղողներն ու խեղճ իշին վեր հատում ու ստիպում, որ տանուտերի սանդուղքներիցը բարձրանա։ Բայց ճար կա՞, էշը կարո՞ղ է այդ անել։

— Դե՛, վեզի՛ր, նազի՛ր, առաջ եկե՛ք,— հրամայում է ընդհանուր կառավարիչը, որ միշտ մեկ կողմից մյուսն է վազում և յալլա կանչել տալիս, կամ ճանապարհ բաց անում,— ի՞նչ եք սպասում, բարձրացրե՛ք խանի մոխրաթավալը[2]։

Սիծաղ՝ որ էստեղ տես, ամեն կողմից վեր են կալնում անլեզու անասունին յուր վերա բազմած խանի հետ միասին ուսերքի վերա և ելնում սանդուղքներով։ Յալլա՛, գոռում է բազմությունը. իսկ վերևիցը ալյուրը շաղ են տալիս խանի և իշի գլխին։ Փոշին ողջ բակը բռնում է, բոլորը ալյուրոտվում են, ում երեսին կամ գլխին էլ որ քիչ է թափվում, ինքն յուր ընկերի մեջքից վերցնում՝ քսում է յուր երեսը. իսկ մեր խանի համար՝ էլ մի՛ հարցնիլ, երևակայի՛ր մրի ու ալյուրի մեջ կոլոլված մի գունդ միս։

— Գլո՛ւխ, գլո՛ւխ ալնք, Աշտարակու իշխանն է՛ր, մեր ողորմած խանին,— կարգադրում է ընդհանուր կառավարիչը։

Վեր են կենում բոլորը սեղանի վրայիցն և իրենց տեղը կանգնած՝ խոնարհությամբ գլուխ իջեցնում։ Վա՛յ նրան, ով մի փոքր ուշ գլուխը

[1] Ծառ է։ [2] Էշը։

կուացրեց. աչքով է անում խանն յուր կառավարչին, և բարակ ճիպոտը կպչում է այդ հանդուգն մարդին։

— Ֆալախա՛,— հրամայում է խանը,— քաշեցե՛ք տանուտերին մեյդան։

Տասը-քսան այլանդակ հագնված երիտասարդներ մոտենում են տանուտերին, պառկացնում ու ոտները ֆալախի մեջ ոլորում։

— Հարցրո՛ւ դրան,— հրամայում է խանն յուր նազիրին,— դա քանի՞ գլխանի էր, որ մեր հրամանը չկատարեց, մեզ շան տեղը չդցեց, մեր առաջը չեկավ։

— Թողություն կանես, խանն ապրած կենա,— խնդրում է տանուտերը պառկած տեղից,— ես քո մեծությունի համար պատրաստություն էի տեսնում ըստեղ. իմ իշխաններով. տեսնո՞ւմ ես՝ հրամանոցդ համար սուփրեն բաց արած ա. վարդի շարբաթը[1] շահքյասու[2] մեջ լիքը հազիր դրած, ավղուշը[3] ձողու ծերին կախ արած, որ հրամայես թե չէ՝ խորովենք անուշ անես. քո ընծեդ էլ, լավ մտիկ տո՛ւր, ոտները կապած գառը ըստեղ պատրաստ, երբ որ ուզես՝ փլավի գլխին առաջդ կերթանք։

— Աֆարի՛մ, աֆարի՛մ[4], տանուտե՛ր. տղե՛ք, բաց թողե՛ք դրան։

Առնում է իսկույն մեր տանուտերը գավաթով լիքը քացախն և խոնարհությամբ մատուցանում խանին։

Շատ լավ էլ գիտի բարձրապատիվ խանը, որ շարբաթ կոչվածը ոչ այլ ինչ է, եթե ոչ քացախ, բայց ոչինչ դեմք չցույց տալով առնում է ձեռքը և մոտեցնում բերանին։

— Օխա՛յ, ի՞նչ լավ էր շինած, սիրտս հովացավ, շատ ծարավ էի։

— Այ տղա, հորսը մոտ բերե՛ք,— հրամայում է տանուտերը։

Վերցնում են ջահելները ձողու ծայրին կախած սպանած ագռավն և առաջ բերում։

— Ֆարրա՛շ,— հրամայում է խանը,— վեր կալ էս կաքավը, երբ որ մեր երկիրը կերթանք, փլավի գլխին տապակած առաջս կբերես։

— Ըստեղ բեր էդ գառը,— տնօրինում է տանուտերը։

Մոտ են բերում ոտները կապած տեփրի[5] մեջ դրած սև կատուն և համեցեք անում խանին։

— Ա՛յ անպիտաններ, ձեր գառը կատու դառա՞վ. շո՛ւտ, շուտ կապտեցե՛ք Աշտարակու բոլոր իշխաններին, քաթկի միջին պտի փտացնեմ, ընչանք որ խելքները գլուխը գա, էլ ետ կատուն ոչխար չինեն,— հրամայում է խանը։ Բայց նրա այս հրամանն էլ չի կատարվում, որով

[1] Նեկտար։ [2] Մեծ գավաթ։ [3] Որս։ [4] Կեցցե՛ս։ [5] Փայտյա բոլորակ ափսե։

հետև իսկույն մյուս կողմից առաջ է բերվում մի մեծ և պարարտ որձ ոչխար և գյուղի կողմից ընծայվում խանին։

— Շատ շնորհակալ եմ Աշտարակ գեղի մենծ ու պըստկից, իրանց պատիվն իմ աչքի, իմ գլխի վրա. համա ըստեղ կա մի խեչանենց խեչան, նրա համար ինձ խաբար ա հասել, որ շատ վատ մարդ ա, որ օրական նրա տանը հինգ աղքատ կշտանալու տեղակ՝ տասն ա կշտանում, որ շաբաթ-կիրակի ժամ գնալու փոխարեն, իրիկուն-առավոտ ժամից ետ չի ընկնում. էդ մարդին ես պիտի պատժեմ, թե որ դա ձեր միջին ա, էս սհաթս գա իմ առաջին շոքի։ Հը, շո՛ւտ, ո՞ւր ա էն մարդը, տանուտե՛ր, ձեռաց ըստեղ ստեղծի՛ր։

Մոտ է գալիս այնուհետև խեչանի ընծան՝ մի լիտր թունդ արաղ։

— Էս արաղը ղրկել ա, խանն ապրած կենա, քո մենծությունի համար խեչանը, որ անուշ անես. ինքն էլ հենց հիմի քո ղուլլուղին կգտնվի։

— Գլուխ տո՛ւր, գլուխ տո՛ւր, իրեք հետ գլուխ տո՛ւր խանին, խեչան աղա,— ձայն է տալիս ֆաքրաշը, և խեղճ խեչանը կատարում է յուր պարտքը։

— Ջոքի՛ր,— հրամայում է արհամարհական հայացքով խանը՝ գլուխը բարձր բռնած, աչքերը դեպի երկինք դարձրած, գերեմաստի շիբուխը դնչին։

Նազիրը քաշում է խեչանի կռնիցը, չոքացնում իշի առաջին։ Բավականին միջոց լռություններից հետո բարեհաճում է խոսել խանը.— ես միտք ունեի, խեչան աղա՛, շատ խիստ պատժել քեզ, համա քո ընծեն իմ աչքերը կապեց. վեր կա՛ց արի ձեռս պաչի՛ր ու ազատ ես։

Խեղճ խեչանը այդ էլ կատարեց։

Այնուհետև մի քանի իշխաններին, որոնցից մի-մի պարգև պոկելու հույս ուներ խանը, ֆալախա է դնել տալիս, մինչև անգամ մի քանի ճիպոտ էլ խփել է տալիս, իհարկե, շատ կամաց, և ստանում՝ որից գինի, որից բրինձ, մյուսից՝ յուղ, երրորդից՝ ձու, հավ և այլն. և դրանցով ներում նոցա, բայց միշտ ձեռքը համբուրել տալով։

— Մնացեք բարո՛վ,— վերջապես ասում է խանն և ուզում է ետ դառնալ յուր հանդիսականներով, բայց ի՞նչ կարելի է։ Մինչև հիմա արածները կատակ էր, հիմի սկսվում է ուղիղ հյուրասիրությունը։ Խանի հետի բոլոր եկողները պտի վայելեն աշտարակցոց սեղանիցը և խմեն՝ երկու գյուղին միաբանություն և հարատևություն ցանկանալով և ապա նույն և մի կերպիվ յալլա կանչելով, իշին բարձրացրած՝ ճանապարհ ընկնին դեպի մի ուրիշ մերձակա գյուղ։

— Ա՛յ, տղերք, երեք օր ա մեր Ղուկոն խան դառած՝ գնացել ա

գեղերը, ըսկի խաբար ունի՞ք թե չէ, ո՞ւր մնաց, հետն էլ խելի[1] ջահելջուհուներ կան,— հարցրեց տանուտերը փարբեցոց գնալուց հետո։

— Ղուկոն երեկ էջմիածնումն էր,— պատասխանեց մի երիտասարդ,— շատ քեֆ շանց տվեց, կոտորեց ամենքին ու թողեց ծիծաղացնելով. էջմիածնի դռանց ֆարշի[2] վրա աթոռ էր դնել տվել, վրեն բազմել, էշն էլ մի վարդապետի էր բռնել տվել. մի քանի եպիսկոպոսներ կապոտեց. իր համար շատ ընծեք առնելուց ետը, հրամայում էր թվանքչոնցն էլ բան բաշխել. մեր տղեքանցը ետ էր կանանցրել՝ թվանքչոնցն էր նազիր-վեզիր շինել. դուք, ասում ա, սովոր եք տերտեր-վարդապետի կապելու։

— Ես որ ասում եմ Ղուկոն դուչաղ ա՞, էս բրդաբերան ջամաղակեր[3] փարբեցոց պես չի՞. ախար աշտարակցի յա, մեզ ո՞վ կհասնի,— պալծեցավ մեկը։

— Հետո ի՞նչ փեշքաշներ էին տալիս վարդապետները։

— Թոփերով զուլնիք ու շամու ալաջեք էր առնում, որիցը մի երեսսրբիչ, մեկելիցը չախու. մնի մեջքիցն էլ մի լավ շալ գոտիկ ետ արեց։

— Ապրի՛ ինքը, նրանց հախն ա, տարին տասներկու ամիս նրանք են ուրիշից մուֆտա ուտում, թող մի օր էլ իրանք տան։

— Թամաշեն էջմիածնումը Ղուկոյի գալուց առաջ էր, տանուտե՛ր,— ասաց երիտասարդը,— պտի տեսնիք, թե էն մենծ-մենծ սպիտակ միրքավոր եպիսկոպոսներն ու վարդապետները ո՞նց էին փեշերը քշտել արդա խաղում ֆարշի վրա, գոռգոռոցն ընչանք գեղն էր գնում, ձնթոփով հենց էին իրար գլխի կպցնում, որ վեզարը թռչում էր, ու թե որ լսեիք՝ ի՞նչ պետռ-պետռ[4] խոսքեր էին ասում, որ ես ամաչում եմ։

— Ոչի՛նչ, բարիկենդան օրեր ա, նրանց խելքն էլ կորել ա, էս քանի օրս արեղաթող ա։

— Ցալլա՛,— ձայն-ձայնի տվին փարբեցվոց գնալուց հետո մանր երեխայքը՝ Աշտարակու ուսումնարանի աշակերտները, և բարձրացան յուրյանց թաշկինակ դրոշակով մեր իշխանների մոտ։

— Ա՛յ դուշ բարով, հազար բարի՛, մեր հույս ու ումուտնե՛ր, մեր գեղի ճրագնե՛ր, մի քանի տարուց ետը մեր տեղը բռնողնե՛ր,— գոռացին ամեն կողմից մեր իշխանները։

Իշխանների հետ սեղանի վերա նստած էր գյուղական վարժապետը։ Այս բարեկենդանի վերջին երկու շաբաթը նա արձակել էր ուսումնարանը։ Եշխայքը բերին յուրյանց հետ մի տեփրով լիքը միրգ, մեջտեղը

---

1 Բավականին։ 2 Սալահատակ։ 3 Ցուրաքանչյուր գյուղ յուր ավելորդ արհամարհական անունն ունի։ Փարբեցվոց կոչում են բրդաբերան ջամաղակեր։ 4 Անվայել։

մի փոքրիկ բաժակ լիքը գինի, բաժակի մեջ մի վեգ ալչու կանգնացրած, մի պինդ ոլորած լախտ էլ մրգի վերա դրած, վայր դրին յուրյանց վարժապետի առաջին։

— Ցնծա՛[1], խալֆա՛[2],— ասաց մի համարձակ աշակերտ։

— Դե ցնծա՛, վարժապե՛տ,— ծիծաղելով կրկնեցին իշխանները,— սաղ տարին իրավունքը քո ձեռին էր, հիմի սրանցն ա, ինչքան որ դու սրանց ծեծել ես, էսօր սրանք պտի տեղակը քեզանից հանեն։

Վարժապետը գիտությամբ ուշացրեց պատասխանը։

— Մեր տղե՛ք, էլ ինչի՞ եք սպասում,— տնօրինեց նույն համարձակ աշակերտը, և իրանցից մինը լախտը ձեռքն առավ, անց կացավ վարժապետի ուսի կողմը և բարձր բռնեց։

— Դե ցնծա՛, խալֆա՛, թե չէ հասավ մեջքիդ,— ասաց նա և կամաց խփեց վարժապետին։

— Պի՛նդ, պի՛նդ կպցրու, ապրի՛ իմ տղեն,— խրախուսեց տանուտերը։ Վարժապետը ձեռքը գրպանը տարավ, հանեց մի քանի մանր արծաթե դրամներ և ձգեց բաժակի մեջ։

— Չէ՛, էդքանով մենք քո հորն օղորմի չենք տալ,— գլուխը պտտեց լախտը բռնողը,— ցնծում ես՝ ցնծա՛, թե չէ միտս ա, թե քանի հետ իմ մեջքս դու դաղել ես։

— Հալբաթ մեջքը քոր ա գալիս,— ասաց համարձակ երեխան։

Վարժապետը մի քանի դրամներ էլ ավելացրեց։

— Դե գնացե՛ք, մի գառն առեք, ձեզ համար բարեկենդան արե՛ք, մտիկ տվե՛ք, որ չար տղեք չմտնեն ձեր մեջը, շատ անհամություններ չանե՛ք, խելոք կացե՛ք. թե որ կարողացա, ես էլ կգամ կտեսնեմ. գնացե՛ք, երեխայք, էդ միրգն էլ ղրկեցե՛ք մեր տունը։

— Աստված կյանք տա, շատ շնորհակալ ենք,— ասացին երեխայքն և դարձան դեպի իշխաններն ու գոռացին.— ձեզ էլ շնհավոր բարիկենդա՛ն, ամեն տարի էս վախտը հասնիք, մեր գլխիցը ոչ պակսիք։

— Ը՛հ, գլխովդ պտիտ գնամ, է՛յ, Կարո ջա՛ն, քյալաշ բալա ջա՛ն[3], ուրախանում էր մինը յուր որդու վերա։

— Մադոյիս ձենը զանգակի նման զնգզնգում ա, էսքան երեխեքանց միջից ջոկվում ա,— պարծենում էր մինն յուր որդու վերա։

— Մի տաղ ասա՛, քեզ մատաղ, Սմբատ ջա՛ն, բարով մենծանաս, իմ աչքիս սև ու սիպտակը, քեզ մի ընենց աղջիկ ուզեմ, որ սաղ մհալի՝ բերանը բաց մնա,— ասաց Մվիկենց Աղաջանը։

Երեխան լռեց ու աչքը ձգել էր յուր վարժապետի երեսին։

1 Շնորհ արա։ 2 Խալֆա կոչում են վարժապետին։ 3 Ընտրյալ որդյակ։

— Ասա՛,— հրամայեց վարժապետը և Սմբատը երգեց։

Մի խոր հոգոց դուրս թռավ էս ուրախության ժամանակը Խեչանենց Խեչանի սրտից, և արտասուքներն իրանց-իրանց գլդոր-գլդոր երեսովը ցած եկան, երբ Սմբատը տաղի տունը վերջացրեց։

— Ապրե՛ս, բալե՛ս, աստված քեզ քո հորը բաշխի,— ուրիշների հետ սրտալի օրհնություն էլ տվեց Խեչանը,— արի՛ մի քեզ պաչեմ։

Երեխան մոտ գնաց և Խեչան ափոր ձեռը համբուրեց։

Երկար ժամանակ Խեչանը գրկել երեխային, չէր կարողանում թողնել։

— Փառք իրան, ի՞նչ անենք,— հառաչեց վերջապես Խեչանը,— քեզ մատա՛ղ, Աղաջան ջան, սիրտդ մնա ոչ, հանկարծ լցվեցի, երբ որ երեխիդ ձենը լսեցի. ղնամիշ չանեք[1], ախպե՛ր, դժար ա. քեֆներդ էլ փուչ արի[2]. ի՞նչ կըլներ չորսիցս իրեքն իրան բաժին վերցներ աստված՝ Սմբատիս էլա թողեր մեզ մխիթարանք։

— Թե աստված կսիրես, Խեչա՛ն, սիրտդ խարաբ մի՛ անիլ[3], մեզնից ո՞վ չի կսկիծ տեսել. էլի աստծուն փառք տո՛ւր, որ քո միանուճար աղջիկդ էսօր ծաղկի փնջի նման հոտ ա տալիս։ Տղեն ու աղջիկը՝ երկուսն էլ զավակներ են, տղեն ո՞րն ա, լավ աղջիկն օխտը տղի համ կտա։ Աստծով Հեղնարդ կմենծանա, մի լավ մարդի կտաս, փեսեդ քեզ որդուց հազար անգամ լավ պատիվ կտա ծերությանդ ժամանակը,— կրկնեցին այս ու այն կողմից Խեչանին։

— Աղաջան ջա՛ն, մի մուրազ անց կացավ սրտովս, արի՛ էն ազիզ օրն էսքան խալխի միջին մուրազս ջուր մի՛ կտրացնիլ։

— Ա՛չքիս վրա, Սմբատիս էլ որ ուզես, քեզ փեշքա՛շ. չտվողը մարդ չի՛։

— Դե որ ըտենց ա, կառավարի՛չ, խնդրում եմ թասերը լցնիլ տաս։

— Մի-մին թաս գինի՛, լի՛քը-լի՛քը,— հրամայեց կառավարիչն և բաժակները լցվեցան։

— Ձեզ ղուրբա՛ն, գինի ածողնե՛ր, ոչովի մեջ չտաք, ամենքին էլ լիքը-լիքը խմացրեք, թող իմ խաթեր էս մի նեղությունը քաշեն։

— Մեր աչքի վրա, Խեչա՛ն, դու ասա՛ ինչ որ ուզում ես, թե կուզես՝ գավերով կդարդակենք,— ապահովացրին ամենքը։

— Ասացե՛ք՝ աստված շնհավոր անի,— կարգադրեց Խեչանը.— ով սաղ, ով մեռած. Աղաջանի հետ մենք սրտով մանկուց ախպեր ենք, էսօր էլ խնամի եմ ուզում դառնալ. գառնուկ Սմբատին ես իմ լիս ու

1 Մի՛ մեղադրեք։ 2 Փչացրի։ 3 Մի՛ փչացնիլ։

ճրագ Հեղնարի հետ բաշիֆյարքմա եմ անում. էսօրվանից մի երեխա չունիմ՝ երկուսն են. բարով մենծանան, իրանց թագ ու պսակին արժանանան, մենք էլ Աղաջանի հետ երկու հալիվորներս մեր պառավների կուռը բռնած, սրանց բախտավորությունը տեսնենք՝ հետո հողը մըտնենք, Աղաջան ջա՛ն, ղայիլ[1] ե՞ս, դրուստն ասա, քո հորն օղորմի՛։

— Վա՛յ, բա ղայիլ չե՞մ, խեչան ջա՛ն, խնամի խեչա՛ն, մարդ իր աչքը քոռ կուզի՞, սրանից ավելի էլ ի՞նչ բախտավորություն։

— Աստված շնհավոր անի, բարեկամաց աչքը լիս ըլի՛, բարով մենք էլ հարսանիքն ուտենք,— ձայն-ձայնի տվին բազմականները,— աստված ձեր բարեկամությունը հաստատ պահի. տերտե՛ր, փառոց կենա՛ս, շուտ պահպանիչն ասա՛։

Ամենքը ոտքի կանգնեցան, լռությունը տիրեց և պահպանիչով նշանն օրհնվեց. երեխայքն էլ վարժապետի հրամանովը տաղով հաստատեցին այս նշանադրությունը։

— Ա՛յ պստիկներ,— ծիծաղելով ասաց տանուտերը երեխաներին,— գուք որ ըսենց քեֆի մեջ եք, բաս ըսկի ձեր քվերտանց ու մերերի համար էլ հոգս քաշո՞ւմ եք, թե նրանք ի՞նչ բանի են։

— Սաքի բարիկենդանին ո՞վ ա առանց քեֆի մնում,— պատասխանեց մի ավելի համարձակը,— սաքի ձեզ հայտնի չի՞, որ մեր մերերը մի քանի այվաններում հավաքոտված՝ ձվածեղն ու հալվեն, հավի միսն ու գաթեն առաջներին խոշի-խոշի[2] են խաղում։ Նանս ինձ իմ բաժինը տվեց, ղրկեց հընկերներիս կուշտը, քվերս կոնատակը մի կապոց դրեց, ղրկեց ազափ աղջկերանց մեջն ու ինքն էլ մի մենծ բողչա կապեց, վեր կալավ գնաց Աղզենց այվանումը քեֆ անելու։

— Ապրի՛ք, բալեք ջա՛ն,— վերջապես ասաց տանուտերը,— առե՛ք էս մի-մին թիքա հավի ու գաթի կտորները, բերաններդ քաղցրացրե՛ք ու գնացե՛ք, ձեր զովզն[3] արե՛ք։

Երեխայքն երգելով ու յալլա կանչելով ետ դարձան։

Նրանցից հետո նույն հանդիսով այցելություն արին մեր իշխաններին մի քանի գյուղերի խաներ և զանազան ուրախ խմբեր։

Ամբողջ բարեկենդանի շաբաթը ոչ միայն Աշտարակումը՝ բոլոր հայ գյուղերումն այս միևնույն ուրախություններն էին կատարվում։

1 Համաձայն։ 2 Հանգանակությամբ խնջույքներ անել։ 3 Խնջույք։

Ը

ՈՒԼԱՏԻՏԻԿ[1]

Տասնչորս կամ տասնհինգ տարի այս նշանավոր բարեկենդանից հետո՝ բուն բարեկենդան կյուրակի օրը կրկին աշխարհքն իրան մոռացել էր, քեֆն էր միայն մեջտեղը ամենքի ուշադրության առարկան դարձել։

Աշտարակու ջահելներն էլ մտիկ չեն տալիս ծնկնահար նստած ձյուներին, գեղեցիկ հագնված՝ կանգնած են Աղզենց կալումը՝ ձիանց վերա. նրանց զենքի և հագուստների ոսկի ծոպերի փայլմունքը միացած ձյունի պեծերի հետ, աչք են ծակում։ Օտարականը չի հավատալ, թե սրանք միևնույն տղայքն և ձիանքն են, որ հաճախ պատահում են մեծ ճանապարհներին, ցնցոտիների մեջ կոլոլված, մի ահագին փալան էլ մի հապարակ ձիու վրա դրած, մրգեղենի, գինու կամ արաղի բեռց վրեն, գնում են քաղաք ծախելու։

— Է՞հ, ի՞նչ պտի տանինք էս աշխարհքիցը, աշխարհքիս մալն աշխարհքումը պտի մնա. թեկուզ ջանդ էլ քանդի, մի լավությունն ու լավ կյանք քաշելը կմնա մարդիս. հերիք ա, մեռանք աշխատելով, էս բարեկենդանին էլա մի քիչ ուրախանանք։

Այս խոսքերով երիտասարդները ոգևորված՝ ոչինչ չէին խնայել յուրյանց հագուստը, զարդարանքն և ուրախությունը կատարյալ անելու համար։ Դեռ աքլորականչին ամեն մարդ շուտ վեր է կացել, քորել, մաքրել յուր ձին. գարի տվել և սպասում լուսաբացին, որ թամքը դնի վերան և քամակը թռչի. հրացաններն ու մյուս զենքերը վաղուց հավի եղ քսած՝ պատի վրան քաշ են արած. էլ կարծիք չկա ուրեմն, որ առավոտյան ժամից հետո մեր անհամբերները մի քանի թիքա խորոված ի հետ քուֆթի[2] գունդը յուղի մեջ փշրել թունդրի մոտ, սպիտակ լավաշ հացով վայելել են ու խնդրել յուրյանց ծնողներին, որ շատ չուշանան։

— Գնա՛, որդի, հենց էս ա մի երկու թաս էլ խմեմ, բերանս օղոդեմ, տեղիցս վեր եմ կենում. տանուտերի օդումը պտի հավաքվենք, որ ընտանիքից դպա ձեզ գանք։

Ոչ միայն մեր երիտասարդների համբերությունը հատավ, կարծես ձիանքն էլ շտապում են մի ժամ առաջ ցույց տալու իրանց շնորհքը. կանգնած տեղն ե՞րբ են հանգստանում. Արաբստանի նժույգի նման առաջի ոտներով այնպես դաբր են հատանում ու քանդ անում, որ գետինը դմբդմբում է. սառած՝ պնդացած ձյունի կտորներն յոթը կազ ծլունգ-ծլունգ են լինում, խրխնջոցի ձայնը, ինչպես ասած է, օխտը սարի քա-

1 Ուլատիտիկ՝ մի բլուր է Աշտարակու մոտ։ 2 Ծեծված մսով կերակուր է։

մակն է հասնում. և ընչի՞ պետք է չհասնի, Աշտարակու երիտասարդն իրան կզրկի, ձի առնելու և նրան դարմանելու համար ոչինչ չի խնայիլ։

— Տո՛, ասում են՝ Ղափանցոնց Կարոն մի թազա ձի ա առել, որ աստղերի հետ ծուլծուլ ա ըլնում, տեսել ե՞ս,— հարցնում են իրարու։

— Ընչի՞ չի առնիլ, աշխատողն ինքը՝ փչացնողն ինքը. էդ ընչի՞ցն ա, որ ես ու դու լավ ձի կունենանք, նա չի ունենալ։ Էդ որ քո սիրտը փառավորվում ա, երբ որ իրիկները տանում ես ձորումը, յա՛ առվումը խտակ լվանում, պոչը քիբարի[1] կապում, վրեն թռչում ու խաղաքնելով տուն գալիս, որ սիրուն աղջիկները դռների սողնակներիցը քեզ վրա հայիլ-մայիլ ըլնեն[2], բա Կարոն էլ քեզ պես ջահել չի՞։

Այսպիսի եռանդյամբ և լավ գնով առած ձիանքն են, որ անսովոր աչքը բեռի տակին չի կարող գովել, որ երևում են փալանի տակին, ինչպես մի ետ ընկած յաբու[3]. բայց Աշտարակու երիտասարդի աչքը չի խաբվում. նա այլապես չի ուզում յուր ձիուն անվանել, եթե ոչ «ֆյանֆլանս»[4]։

Մեր տղայքը խումբ-խումբ եղած՝ յուրյանց այսօրվան անելու գործի վերա են դատում, թե ինչպես Ուտիս տատին պտի քեֆով տանին ընչանք Ուլատիտիկու կոնդը[5] ճանապարհ դնեն, իսկ Մեծ պաս պապին համեցեք անեն. ամեն մարդ յուր գենքը, ձին ու ջիրիդն[6] է գովում և յուր կռան զորությունը չհավատացողին մի ժամից հետո Ուլատիտիկի թրմբանը ցույց տալ սպառնում։

Մի ուրիշ խումբ էլ մի փոքր հեռու քաշված՝ հետևյալ խոսակցությունն է անում շատ ծածուկ.

— Վա՛յ թե չգա ու մեր խորհուրդը քամին տանի։

— Չէ՛, անպատճառ կգա, որ իրիկունը գնա իր նշանածի մոտ փքվի։

— Ես նրան փքվիլ կտամ, թող մի Ուլատիտիկի դուզն ընկնենք։

— Տղե՛ք, հենց արե՛ք, որ ուրիշները ֆահմեն ոչ[7], թե սարքովի էր. սաքի թե ուրիշին խփելուս, նրան դիպավ ջիրիդը։

— Էդ նամարդություն ա, որ ամենքդ հընկերանաք, մնին աչքեք, թե ղոշաղ եք՝ աշկյարա հետը մեյդան դուս եկեք. ո՛վ ավելի շնորհք ունի, նա թող տանի։

— Նրա հո՛րն օղորմի; հերիք չի, որ սաղ մհալի ազափների[8] աչքը ջոգ ա կտրացրել, խեչանի ծովի պես հարստությունի տերն ա դառել, հիմի էլ չէիր ուզիլ՝ որ գլխներիս նստեցնենք։

1 Կոկիկ։ 2 Ջմայլիներ 3 Հասարակ բեռնակիր ձի։ 4 Նժույգ։ 5 Բլուր։ 6 Ջիարշավի ժամանակ ձեռքին բռնած հաստ փայտը, որ միմյանց վրա արձակում են։ 7 Ջնկատեն։ 8 Ամուրիների։

— Մարդի զմամթն[1] էր ու ինքն էլ, ես իմ ասվածը, արժան ա։

— Տո՛. թե էն հարստությունը չէր ըլիլ, ոչ ով նրան երնեկ չէր տալ. ասենք, տարածը մի հուրի-փարին[2] չի, համա ախար ընչի՞ պտի էնքան մլքերն ու փողը նրա ճանկն ընկնի, է՞։

— Դե խեչանը ինքն էլ չէր իմանում, թե իր օղորմածիկ ախպերը պտի իրան էնքան հարստությունի տեր շինի ու մի օր վեր ընկնի մեռնի, թե չէ Սմբատի պես տղին ընչի՞ աղջիկ կտար. նրա աղջիկն ո՞վ չէր ուզիլ. դեռ նշանած ա՝ էս օրս քանի՞ գլուխ պատուղներ կան, թե որ նշանած չըլներ հո՝ էլ մի՛ ասիլ։

— Սաքի դրուստն ասեմ, մինն էլ ես եմ էն աղջկա ուզողը։ Էգուցէլօր էլ խնամախոս պտի ղրկենք. համա ես ուրախությունով կուզեի խեչանի քվեր աղջկանը, թե որ իր կարողությունի կեսն ինձ տալու ըլեր։

— Փեշդ պինդ բռնի, չվեր թափի, Հերիքնազի պես սիրունը թե որ մի քիչ մուլք ունենար, էլ ո՞վ կհարցներ, հիմի մի քշեր դուռը կոխած տարած կըլներ։

— Ամոթ ա, ամո՛թ, դուք կնիկ եք ուզո՞ւմ, թե փող։

— Է՛հ, ախմա՛խ, փորս կծակի՞, որ էն էլ ըլի, էն էլ։

— Ախպե՛ր, թող Հեղնարին ինձ տան, ես խեչանի մլքերի տերը դառնամ, թող ավելի գեշ ըլներ, թեկուզ, մի աչքն էլ քոռ։ Համա հիմի, փառք աստծու, ի՞նչն ա պակաս. ի՞նչ անենք, թե իր հորաքվոր աղջկա պես սիրուն չի, մի պակասություն հո չունի՞, ըսկի մի՛ խոսք, որ սաղ մհալումը Սմբատի պես բախտավոր տղա չկա. տեսնո՞ւմ ես՝ քանի հարուստների ու աղեքանց որդկերանց բերանն ա ցխե՞լ. էլ ուրիշների հետ ի՞նչ բան ունինք, մինն էլ մենք. աչքներս չի վերցնում. վաղի աղվեսի պես դունչներս չի հասնում, ասում ենք՝ թթու ա, ատամներս կառնի. նախանձու էսօր ընչե՞ր ենք միտք անում։ Եկե՛ք, ձեռք քաշենք, աստված իրան զմամթ անի, ի՞նչ անենք, թե Սմբատը մեր պես հաբուտ հոր որդի չի. խոստովանվեցեք, որ մեր գեղի տղեքանց աչքն ա։

— Տղե՛ք, ես ձեզ խոսք եմ տալիս, որ Սմբատն էն աղջկան արժանի չի ըլնիլ, իհարկե, ես մի բան գիտեմ, որ Հեղնարն աչքով աչք չունի վրեն մտիկ տալու։

— Տեսնում չե՞մ, որ մուքը գետինը կոխելու պես դու ես մզմզալով խեչանի դռնովը նեքսև պրծնում։

— Հեղնարն ըսկի երկու խոսք չի խոսում հետը, ընչանքի վերջը Հերիքնազի հետ են դունչ-դնչի տված ձավար անում[3]։

— Բաս չէի՞ր ուզիլ, որ նշանածի հետ դունչ-դնչի տար. դե նշանած

1 Բախտն էր։ 2 Հավերժահարսն։ 3 Վայրախոսություն։

տղեն հենց ըտենց ա, չե՞ս լսել, որ ասած ա՝ քենին մհանա ա արել[1], յարոջը տես ա էրթում. էնթավուր քենու ջանին մեռնիմ, ես Սմբատի տեղակ ընիմ, գլուխս նրա ծնկնիցը վեր չեմ ունել, թող հենց նշանածս աչքերը պլստրակին արած՝ մտիկ տա։

— Տղե՛ք, դուք կտեսնիք, թե ո՛վ կտանի Հեղնարին։

— Տո՛, դե ձենդ կտրի՛, լոբբազ[2] Արշակ, դու էլ քանի՞ փչես. ի՞նչ անենք, թե Խեչանենց հարևան եք ու դրիչակ[3] ունիք. ո՞վ գիտա՝ մի-մին դող կատվի պես աչդդ ծակովը նրա վրեն ես քցում, նա էլ հանկարծ քեզ վրա ա մտիկ տալի, դրանով սրտիդ հույս ես դնում, թե Հեղնարն իր նշանածին չի սիրում, քեզ վրա աչք ունի։

— Կտեսնենք, էդ ետվա բան ա, մենք հլա էսօր Սմբատի դունչ ու պռունգն արնոտած, չանաչմանեն կապած՝ ղրկենք իր նշանածի մոտ, թող գնա սիրուն Հերիքնազի ձեռքովն իր յարեքը[4] կապոտիլ տա, էդ վերջի բանն ա։

— Ես ասում եմ՝ էդ մի՛ անեք, վա՛յ թե մեր փորած փոսի մեջը մենք ընկնինք, վա՛յ թե Սմբատը մեր քինթ ու պռունգը փշրի ու սևերես ետ դարձնի. էն առաջի օրը չի՞ հո նրա հետ ջիրիդ խաղալը, չէ՞ որ շատ ենք տեսել։

— Էդ ա, է՛, հենց դրա համար մենք էլ թաքուն ենք անում, թե չէ մենք չգիտե՞նք, որ նա ամենքիցս էլ դուշաղ ա։

— Ես հիմիկուց ձեզ ասում եմ, որ ես ոչ ձի կխաղամ, ոչ կխառնվիմ։

— Բաս կերթաս կմատնես, էլի՛։

— Չէ, հեռվումը կկանեմ, ձեր նամարդությունին մտիկ կտամ։

— Լա՛վ, դու իրան բան մի՛ ասիլ, վերջը մեզ նամարդ կանչի։

Եթե լավ դիտելու լինեինք, այս դավաճանող խումբն ամեն բանով զանազանվում էր մյուս մնացածներից. ամեն բանիցն իմացվում էր, որ սրանք բոլորն ունևորներ էին, որոնք անպատվություն համարելով իրենց համար աղքատ-ուղքուտի տղայոց հետ կանգնելը, բաժանվել նրանցից՝ մի կողմն էին հավաքվել։

— Ի՞նչ են էդ ամբարտավանները մեզանից ջոկնվել, հեռու կաննել. թքեմ դրանց հարստությունի վրա, սաքի որ փոդատեր են՝ մեզ ի՞նչ, ո՞ւմից են ավելի, որ լայաղ չեն անում[5] մեր միջին կաննիլ,— ասաց չքավորներից մեկն յուր մոտ եղողներին։

— Չե՞ս իմանում, նրանք հենց գիտեն, թե փող չունեցողին աստված չի ստեղծել։

1 Պատրվակ է բռնել։ 2 Պարծենկոտ։ 3 Երկու պատկից դրացիների միջին պատումը մի փոքրիկ ծակ էր դրիչակը, որտեղից միմյանց ճրագ կամ բաժին կտային։ Այժմ էլ կկա։ 4 Վիրքերը։ 5 Արժանի չեն տեսնում։

— Դրանց գլխի ճոթովոցը, մենծ-մենծ որ բրդում են, էգուց չգնան Սվիկենց Աղաջանի տղի ձեռքցն իր նշանածին խլե՛ն։

— Ասում են՝ դրանք ամենքն էլ Խեչանի մոտ մարդ են ղրկել, աղջիկն ուզել ու քնթով են մնացել, Խեչանը դռնովն էլ չի նեքսև թողել։

— Բաս չէ՛ ու Խեչանը պտի Սմբատի մի մազը փոխեր դրանց գլխի հետ։

— Ափսոս չի՞ Սմբատը, նրա սիրտն ո՞վ ունի, ըսկի մի օր նրա բերնիցը մի պարծենկոտ խոսք լսել ե՞ք, որ ինքը Խեչանի պես մարդի փեսեն ա, Խեչանի մալ ու դովլաթը պտի վայելի։

— Տո՛, նրան ո՞վ կհանի, տեսնում չե՞ք՝ ինչքան խոնարհ սիրտ ունի. նրա կշտին աղքատի տղեն էդ ուռած-փքվածներիցը հազար փառքով լավ պատիվ ունի։

— Գիտեք, տղե՛ք, ի՞նչ կա,— մոտեցավ դրանց մի երիտասարդ, որ ավելի մոտ էր կանգնած հարուստների խմբին,— իմ անկաչովս ընկավ, որ էդ մեր քարովն ընկնելու[1] հարուստները միտք ունին էսօր Սմբատին ջիրիդով յարալու անել[2], որ իր նշանածի ու քենու մոտ խայտառակ անեն։ Սմբատը որ գա, իմաց տանք իրան, թող օյաղ կենա[3], նրանց հետ ձի չխաղա։

— Հազիր որ մենք բուսուն պահենք[4], Սմբատի քամակիցն ընկնողի կռանն աչքենք, ջիրիդը ձեռիցը վեր քցենք։

— Լա՛վ, էդ էլ լավ ասեցիր։

— Ա՛յ, Սմբատը գալիս ա, տեսեք՝ ո՛նց ա հագնված, ո՞վ կասի, թե սա էլ իր համար մի քանի շահու տեր ա, յա թե չէ էսօրեն օրս Խեչանենց Խեչանի փեսեն ա. ես կուզս կկտրեմ, թե որ նա դուզ մեզ մոտ չգա։

— Բարի լիս, տղե՛ք ջան,— մոտ եկավ Սմբատը ձիու վերա նստած՝ դեպի չքավոր դասը,— շնհավոր բարիկենդան. շատ տարիներ ըսենց իրար հետ ուրախություն անե՛նք։ Ադա՛, փչած տկե՛ր[5], դուք ի՞նչ եք ջոկնվել, վերի էծի պես հեռու կաննել. ամոթ ա՛, ամո՛թ, մոտ եկե՛ք, խառնվեցե՛ք էս կտրիճներին, որտեղ որ ա՝ մեր իշխանները կգան, թող նրանք էլա չտեսնեն ձեր գոռոզությունը,— ասաց Սմբատը հարուստներին։

— Չէ՛, հենց ընենց հավաքվել խորհուրդ էինք անում, թե ուտիսին ո՞նց ճամփու քցենք։

— Սաքի սրանք դրա համար չեն հավաքվե՞լ։

1 Գոռոզ։ 2 Վիրավորել։ 3 Զգույշ։ 4 Գարան մտնենք։ 5 Գոռոզներ։

— Պատրաստվեցե՛ք, թվանքներդ վերի ոտը քաշեցե՛ք,— ձեն տվեց մի երիտասարդ։

— Ցալլա՛,— ձայն-ձայնի տվին ամենքն և հրացանների միանվագ արձակվելու ձայնը լռեցրեց մեր իշխանների առաջին եկող դափ ու զուռնին։

Ծափ տալով, պարելով, ուրախ ու զվարթ եկան մեր իշխաններն ու կանգնեցան Ազգենց կալումը. գավերով գինին դրանց առաջին քաշվում էր. մի կողմից լցնում, մյուս կողմից հազար օրհնություններով դատարկում էին։

— Ամեն բան ղրկա՞ծ ս Ուլատիտիկի գլուխը, որ մեր ջահելները մի լավ քեֆ անեն,— հարցրեց տանուտերին մի ծերունի։

— Խուրջինները լիքը-լիքը առաջուց ղրկել եմ. ձեզ տեսնեմ, ջահելնե՛ր, մի լավ ուրախությո՛ւն արե՛ք։

— Է՛հ, դրանց ի՞նչ էրնեկ կտամ, դրանց տարիքումն էնպես քեֆեր ենք արել մենք, որ սրանից ետն իրանց օխտը պորտն էլ չի կարող անիլ. գնացին մեր օրերը, էն օրվան սեր ու սոհբտին[1] էլ չկա։

— Ապրին իմ տղեքը,— տնօրինեց տանուտերը,— Ուտիս տատին լավ ճամփու դրե՛ք, տարե՛ք ընչանք Ուլատիտիկու կոնդի գլուխը, ընտեղ մի լավ վերջին քեֆ շանց տվե՛ք, բաց թողե՛ք՝ գնա իր արևի ձենն ածի[2] պասակեր թուրքերի միջին, մին էլ ով սաղ՝ ով մեռած՝ ընչանք զատիկ։ Մենծ պաս պապին էլ համեցեք արե՛ք, թող գա՝ էգուց առավոտ ոտներն երդիկներիցը քաշ անի։

— Էն ա, հա՛, մենծ պաս պապը հիմի Ուլատիտիկի գլխին հաստ գոմշի կաշուց տրեխները հագել, տրեխչվաններն ա կապում, համա մեր Ուտիս տատը զզզոտված, ոտները բոբիկ՝ գլուխ ա առնում, պապի ձեռիցը փախչում, որ գնա, թուրքերի տներումը տափ կենա։ Խե՜ղճ Ուտիս, ի՞նչ պտի դոնի քաղցած թուրքերի մոտ, մի կտոր չորթան էլ չկա, որ բերանին քսի, ճարը կտրած՝ ինքն էլ պտի պաս պահի։

— Ոչինչ, մի օր էլ պասի տրեխները կծակվին։

— Դե՛ գնացե՛ք, գնացե՛ք, աստված ձեզ հետ. համա, մեր տղե՛ք, առաջ կտրուկ արե՛ք, ով որ ձեզանից թեզ բարձրանա Ուլատիտիկի գլուխը, նա ազատ աղջկերանց սիրեկանը կըլնի,— ասաց տանուտերը։

— Ե՛ս կբարձրանամ, ե՛ս, ամենքից շուտ կքշեմ իմ ձին, ես ձինը կճղեմ,— մի քանի ձայներ ի միասին բարձրացան։

— Հրե՛, հա՛, Ուլատիտիկի գլխին մեր տղեքը բայդաղը[3] տնկել են, եկե՛ք մի-երկու գլուխ էս թմբան վրա ձի քշենք ու կարգով կանդնենք

[1] Ուրախություն։ [2] Ցուր գլխի հոգսը քաշի։ [3] Դրոշակ։

իրար հետ, ձիանոնց գլուխը բաց թողանք, տեսնենք՝ ո՛վ կըլնի էս երկու օրվա աղջկերանց բերնի խոսելիքը,— տնօրինեց ազափբաշի[1] Սմբատը։

— Դե՛ առաջուց դու ձիուդ գլուխը բաց թո՛ղ, ես էլ քամակիցդ գալիս եմ, Սմբա՛տ,— ասաց նրան Արշակը,— ջիրիդիցս վախեցի՛, մի նշան չթողա վրեդ, էս իրիկուն նշանածիդ մոտ ամանչես ո՛չ։

— Համեցե՛ք,— ասաց Սմբատն ու ձիու գլուխը բաց թողեց։

Դեռ երկու ՛քայլ նա չէր հեռացել, մի քանի ջիրիդ այս և այն կողմից բարձրացան, որ իջնեն նրա գլխին. բայց մեր դավաճանները զարմացած մնացին, երբ յուրյանց ջիրիդները տեղ չհասան, առաջներին վեր թափվեցին ու յուրյանց կոները ցավեցան։

— Թթո՛ւ էր, աղազադե՛ք[2], նամարդությունը լավ չի, ջիրիդ խաղալ ուզողը թող մեյդան դուս գա, խոսքն Արշակինն էր, որ Սմբատի քամակիցը քշեց, ջիրիդը քցեց, համա նրա խելքի բանը չէր Սմբատի պես տղի վրեն նշան թողալը. էդ որ ձեր մտքումն ա՝ մեր կրնգի տակին, մի-մին դուս եկե՛ք մեյդան դեռ առաջ մեզ հետ, հետո Սմբատի,— ասացին նախապատրաստված երիտասարդներն, և դավաճանների գլուխները կապվեցան։ Նոքա ամոթից ոչինչ չասացին։

— Հիմի դո՛ւ գնա, ես եմ գալիս,— ձայն տվեց Սմբատն Արշակին, երբ որ ձիու մանգգիլը[3] հասան ու Արշակը ջիրիդը կիսաճանապարհին վայր ընկավ, առանց Սմբատին դիպչելու։

Արշակը մկան նման կուչ եկած՝ ետ քշեց յուր ձին։ Տասը քայլ չէր հեռացել նա, որ Սմբատի ջիրիդը կպավ նրա մեջքին ու գլխի վերա ձյունի մեջ գետին փռեց։ Ձին փախս ընկավ. Արշակի մի ոտքն ասպանդակի մեջ յուր հետ քարշ տվեց։

— Օգնեցե՛ք, օգնեցե՛ք, հիմի ձորը կքցի,— գոռացին ամենքն և մեծ դժվարությամբ ձիուն կանգնեցրին, Արշակին ազատեցին, որ ուշագնաց՝ երեսը բոլոր արյունոտվել էր. բարեբախտաբար գետինը կես գաղ ձյունով ծածկված էր, ապա թե ոչ, քարերի մեջ գլուխը կփշրվեր։

Ամենքից առաջ վրա հասավ Սմբատը, գրկեց Արշակին և ձյունով երեսը տրորեց. նրա սիրտը կտոր-կտոր էր լինում, որ յուր ձեռքովն այս դեպքը պատահեցավ։ Ընկերներից մի քանիսը կորագլուխ լռել էին, ոմանք ուրախացած՝ արդարություն վճարքն էին համարում։

Վերջապես Արշակն ուշքի եկավ, վերքերը կապեցին, ձիու վրա դրին և բարձրացան Ուլատիտիկ։

— Ձեզ եմ թողնում մեյդանը, տղեք ջա՛ն,— ասաց Սմբատը,— ես Արշակի հետ կամաց կբարձրանամ, դուք քշեցե՛ք, առաջկտրուկ արե՛ք։

[1] Ամուրիների գլխավոր։ [2] Ազատանիք։ [3] Ասպարեզ—ձիու փախսը դադարած տեղը։

— Որ բռենց ա, մենք էլ չենք քշիլ,— հրաժարվեցան ամենքը և ծանր-ծանր բարձրացան բլրի գլուխը։

Մի մեծ սեղան, ամենայն բարիքով լի, սպասում էր մեր կտրիճներին բլրի գլխին։

Երեկո էր, որ տղայքը ետ դարձան հրացաններ արձակելով և երգեր ասելով Ուլատիտիկի գլխից։ Նրանք գտան իշխաններին և ծերերին էլի Աղզենց կալումը, ուր նոքա փոքր ժամանակ առաջ եկել սպասում էին՝ ամբողջ օրը տանուտերի վերի կտերը ուրախություն անելուց հետո։

Երիտասարդները շնորհավորեցին իշխաններին մեծ պասը, և ամեն մարդ գնաց յուր տունը։

Թ

ԽԵՉԱՆԵՆՑ ԽԵՉԱՆԸ

Հայաստանի մի տեսակ գյուղացի հարուստների տիպն էլ կենդանանում է Խեչանենց Խեչանի մեջ։ Ընդհանրապես գյուղացիք չեն սիրում խառնվել հասարակական գործերում. ամեն մարդ յուր անձնական հոգսի, յուր տան ցավի հետն է, յուր երեխեքանց ապրուստը ճարելն է նրա մտածմունքը։ Այդ ասելով չի կարելի խլել գյուղացուց յուր մերձավորներին օգնելու հատկությունը։ Մեր խոսքը գյուղական կառավարչական գործի համար է, որի համար ինքն իրան առաջ է գալիս մի ուրիշ դասակարգ։

Հին ժամանակները սպիտակամորուս պատվելի ծերունիներն էին այս մարդիկը, որոնք իրենց գլխին ունենալով մի ավելի խելահասը՝ տանուտերի աջակցությամբ յուրյանց անձը գյուղի օգտի համար շատ անգամ դնում էին։ Վերջերումս այս նահապետական ազնիվ սովորությունը փոխվեց. ծերունիների թվի հետ նոցա հարգանքն էլ պակասեց, նոցա տեղը բռնեցին հարուստ և խարդախ անչափահաս շողոքորթները. ծերունիներին բաժին մնաց յուրյանց ցուպն ու եկեղեցին. նոքա ցավելով մտիկ էին տալիս գյուղի անկարգ դրության վերա և մի առածով յուրյանց վիշտը հայտնում էին.— վա՜յ fեզ, fաղաf, թագավորդ մանուկ ա դառել, ասում էին նրանք ու գլուխները շարժում։

Խեչանենց Խեչանը, թե յուր երիտասարդության և թե ծերության ժամանակը, չի խառնվել գյուղամեջ։ Քանի նրա եղբայրը կենդանի էր ու ինքն էլ առույգ և ուժեղ, նա միայն յուր տնային գործերն էր կառավարում, յուր այգիներն, անդերն էր մշակում. իսկ եղբայրն յուրյանց բերքը Երևան, Գյումրի և Փամբակ տանել ծախելու և շահացնելու հոգսերն էր։

Այսպիսով, նրանց պապական հարստությունն օր-օրի վրա ավելանում էր։

Միակ եղանակը, որով կարելի է ասել, թե Խեչանը գյուղական գործերի մեջ խառնվում էր՝ այն էր, որ նրա դուռն ամենքի համար բաց էր, ճանապարհորդներ, որ գիշերն Աշտարակումը մնալու համար ծանոթ չունեին. աղքատներ, որ մի գդալ տաք կերակուր չէին կերել, Խեչանի դուռը շատ լավ ճանաչում էին։ Սրանք աստուծո հյուրերն են։ Պաշտոնապես եկած մարդիկ, որոնց գալուցը տանուտերն և մի քանի յուր համակից առաջավոր իշխանները մի օգուտ չէին կարող տեսնել, նույնպես Խեչանի դռանն էին վայր բերվում. ապա թե ոչ, թող ներեր Խեչանը, նշանավոր աստիճանավորին, կամ օգուտի դուռը բաց անող ծառայողին Խեչանի քուչեն էլ չէին տանիլ, ո՞ւր մնաց տանը հյուր տալ. էդպիսի մարդկանց անունով ինքը տանուտերը մի քանի մարդկանց մասնակցությամբ գյուղից բավական շահ ունի ստանալու։

Երեցփոխի տանն իջեցնելու հյուրը նույնպես Խեչանի տանն էր պատսպարվում. մի գործակալ, մի վարդապետ, մի ժողովարար քրդըստանցի տերտեր, որոնք երեցփոխի հյուրերն են, սրանց էլ տվորաբար ժամկոչը Խեչանի տունն էր առաջնորդում։

— Ա՛յ Խեչան, ասում ա՝ խերը տեսնի Հերապետը, ջոմեն քաշի Կարապետը,— կրկնում էին նրան շատ անգամ գյուղացիք,— թե որ մեր մութավելու[1] տանը վեր եկող ղոնաղներին դու պտի պատիվ տաս, տանդ պահես ու ճամփու դնես, էլ ընչի՞ չես ուզում մութավելի դառնալ. էլ ի՞նչ ա մնում անելու։

— Չէ՛, ախպե՛ր, ձեր հորն օղորմի, ինձանից ձեռք քաշեցե՛ք, ես էդպես զալմաղալ բաների հետ գլուխ չունիմ, ասած ա՝ խաչը խաչապաշտին խռով կկենա, ես Սև քարի ապրանքից վախում եմ. մարդ ենք, ես ի՞նչ գիտեմ, բալքի սխալմունքով գանձանակի կամ մոմի փողիցը մի սև գրոշ խառնվեց իմ ջիբի սև փողերի հետ ու խարջեցի. չէ՞ որ իմ հալալս կհարամվի, իմ տունը կքանդվի. ես ի՞նչ պտի պատասխան տամ իմ աստծուն. չէ՛, չէ՛, չէ՛. ես ձեզանից կխնդրեմ, որ ինձ թողաք, խղճմտանքս հանգիստ. մի կտոր հալալ հաց ուտեմ։ Վնաս չունի, ում կուզեք, ում արժան կտեսնեք, մութավելի շինեցե՛ք, ու նրա տանը վեր գալու աստծու ղոնաղներին իմ դուռը ղրկե՛ք։

— Լավ կթի կով ենք ունեցել,— երբեմն խոսում էին առանձնապես միմյանց հետ տանուտերն ու յուր սրատամ օգնականները.— եղալի թիքեքը մեզ ենք պահում, անխերները Խեչանի դուռն ենք տանում, պետք

[1] Երեցփոխ։

եկած վախտն էլ նրա տանիքը գավերով գինի-արաղ ենք ուզում, ու մեր գյուղին գեղի ծախսի մեջը դնում։

— Տասն էդքան ամեն օր տարեք, թե կուզե՛ք,— ասում էր տանուտերին Խեչանը,— թաք ըլի ինձ գեղի գործերի մեջը մի՛ խառնեք, փառք աստծու, մի կտոր հաց ա տվել, ընչի՞ չպտի հընկեր-հարևանի հետ կիսենք։

Մեր Խեչանը շատ ուրախ էր, որ իրան տանուտեր կամ երեցփոխ չէին դնում, նա հոժարությամբ տալիս էր ամեն ուզած, որ իրան չէին արգելում յուր սիրելի պարապմունքից,— յուր տներն ու մլքերը կառավարելուց։

Կյուրակի օրերը միայն Խեչանի հագին մաշիկ կտեսնեիր, լի օրերը տրեխները ոտներին, մի սպիտակ հնմաշ չարքյազի չուխա հագած՝ կամ տանն էր գործում, կամ թե բանվորների հետ այգումն ու անդումը։

Այդ պատճառով գյուղացիք ծաղրածությամբ նրան երեսին ժլատ էին կոչում։

— Ա՛յ անպքանդ, դու չե՞ս ամանչում, ընչանք իրիկուն արևի տակին գլուխդ աղլուխ փաթաթած՝ խոտ ես խորոմում (խրձնել), երեխեքդ հո գլուխդ կոխել չե՞ն, ո՞ւմ պտի թողաս, երկու ախպերով մի երեխա ունիք, Սվիկենց Աղաջանի տղեն մատով գերեզմանդ հո չպտի՞ փորի, որ խնայում ես մշակի փող տաս ու ինքդ հանգիստ գեղամիջին ձեռներդ շերդ դրած ման գաս։ Դու՝ հո դո՛ւ, ախպերդ էլ քշեր-ցերեկ չոլերիցը տուն չի գալիս. տաքի ի՞նչ կըլնի, որ ձեր դռանը ձեր մասիլը[1] սաղացնեք ու նեղություն չքաշեք,— կես ծաղր, կես շիտակ ասում էին Խեչանին յուր ընկերակիցները։

— Չէ, ախպե՛ր, ամեն մարդի խելք իր գլխին ա,— սպատասխանում էր նա։

Խեչանը սիրում էր նույնպես լավ ուտելը. ամառը այնքան չէ, բայց ձմեռը անխափան, առավոտյան ժամից դուրս գալուց հետո, որ մի նախաճաշիկ չաներ մի կթղա արաղով ու մի-երկու գավաթ գինով, նրա օրն օր չէր։ Ուտելն օրերն ավելի ուրախ էր լինում նրա սիրտը, ժամից հետո միսն առնում էր, տուն բերում ու իր ձեռքով խորոված կոտորում, շամփուր անում ու կրակի վրա տժտժացնում։

Մի քանի պորտաբույժ պարոններ իրար աչքով անելով՝ ցույց էին տալիս Խեչանին ու մի փոքր ժամանակից հետո գալիս, դռանը կանգնում ու ձայն տալիս,— Խեչա՛ն, այ Խեչա՛ն, դուս արի՛ բան ենք ասում։

— Ջոռ ու ցավ եք ասում,— ուրախ-ուրախ գոռում էր ներսից Խեչանը,— ես ձեր փորացավանքը չգիտե՞մ, խորոված հոտը շների պես պնչներիդ ա դիպել. դե եկեք լափեցեք, էլի՛։ Ադա՛, ա՛յ մեռածներ, ի՞նչ լավ եկաք, մեր երեխեն (եղբոր համար էր ասում) ըստեղ չի, մենակ էլ էս անտերի թիքեն բողազովս կուլ չի գնում։ Ես արմանում եմ ձի փարա[1] մարդկանց վրա, որ կարողանում են մենակ հաց ուտել։

Ո՛ր օրն էլ խորոված պատրաստ ժամանակը դրսեիցը ձայն տվող չլիներ, ինքը Խեչանը շամփուրի կրակին կթողեր, դուրս կերթար ու քուչով անցնողին ներս քարշ կտար, իրան սեղանակից կաներ, մանավանդ եթե օտարական տեսներ, էլ ձեռք չէր քաշիլ։

— Իմ ախպերս տարին 12 ամիս օտարների դռներին ա, սրանց կերածն էլ նրա բաժինն ըլի։

Այս էր Խեչանի համոզմունքը։

Շատ չքաշեց, սակայն, Խեչանի ուրախությունը տրտմության փոխվեց։

Մի ձմեռ Ապարանումը՝ Ափնա գյուղի ձորումը նրա եղբայրը բքարդիլ ընկավ, ոտները ցրտատար եղած՝ երեք օրից տուն հասավ, անկողին մտավ և մի քանի օրից հետո աչքերն հավիտյան փակեց։

Այս տարաբախտությունը Խեչանին շատ կոտրեց, մանավանդ, երբ մի-երկու ամսից էլ մեռավ նրա կինը, բոլորովին ծերացավ և փոքր մնաց՝ ինքն էլ հուսահատությունից մեռնում էր։

Նրա տան կառավարողը մնաց յուր այրի քույրը, որ վաղուց չքավորության պատճառով յուր միակ Հերիքնազ աղջկա հետ Խեչանի մոտ էր բնակվում։

Երկու տարի Խեչանը եղբոր համար սուգ պահելուց հետո կրկին յուր տնային գործերին կացավ և փոքր առ փոքր առաջվան ուրախ բնությունն ստացավ. մանավանդ երբ յուր և քրոջ՝ հասակակից աղջիկները տասներկու կամ տասներեք տարեկան հասակը մտան, նա բոլորովին մոռացավ յուր վիշտերը։

Թեպետ Խեչանի եղբոր կենդանության ժամանակն էլ նրա հարստության համբավը ամեն տեղ տարածված էր, բայց և այնպես օտարների աչքը նրա դռանը չէր, ուրիշների շահասիրությունը գրգռելու տեղիք չկար. նրա միակ ժառանգ աղջիկը դեռ փոքր էր, իսկ ժառանգության կեսն եղբորն էր պատկանում։

Բայց եղբոր մահից հետո, երբ Խեչանը մնաց միակ տերը յուր մեծ կարողության, և նրա աղջիկն յուր տարիքին հասած՝ նրա ժառանգն էր, շատերի ուշադրությունը Խեչանի հարստության վրա դարձավ։

---

1 Բերք։

1 Տեսակ։

Թեպետ Հեղնարը նշանած էր, թեպետ նա գեղեցիկ չէր, ամենքը խոստովանում էին, որ Հերիքնազը շատ սիրուն, համեստ ու տնարար է Հեղնարից, բայց ով հասած տղա ուներ, Խեչանի աղջկանն յուր տանը հարս տեսնել էր ցանկանում։ Ոչ ոք էլ չէր ուզում միտք բերել, թե Խեչանն ու Սվիկենց Աղաջանն օրինավոր բարեկամություն են անում. թե Խեչանի տրտմության միջոցներն Աղաջանն էր նրա մուլքն իրանի պես հոգ տանողը, թե Սմբատը բաշիքjարթմա արած օրից դեսը հարազատ որդու նման Խեչանի տանն ընդունված էր և երկու փոքրիկ աղջիկներն այլապես չէին ճանաչում Սմբատին, եթե ոչ ինչպես իրանց եղբայրը։

— Անքուն ցեց ա Խեչանի հարստությունը,— մտածում էր ամեն մի նշանակություն ունեցող հայր,— էլ ի՞նչ կարծիք, որ Խեչանի ունեցած-չունեցածն աղջկանն ա. թե որ դրան ձեռք չքցեմ, անխելքություն ա. իմ տղեն Սվիկենց Աղաջանի որդուցն ընչո՞վ ա պակաս։

— Ձենդ կտրի՛, անպետք լակո՛տ,— բարկանում էին այսպիսի հայրերն յուրյանց որդվոց վերա, երբ որ վերջիններս համարձակվում էին հակառակել յուրյանց հոր նպատակին, չհավանելով Խեչանի աղջկա գեղեցկությանն, և յուրյանց մոր ձեռքով հասկացնում էին յուրյանց ցանկությունը Հերիքնազին ուղելու.— ի՞նչ սիրունություն, ձինն էլ ա սիրուն, որ ոտի տակի կղչորվում ա. սիրունությունն էսօր կա, էգուց՝ ոչ. դու ասա՝ էն մալ ու դովլաթը քոնը դառնա, որ միջին լեղ տաս, կնկա սիրունն ու գեշը ո՞րն ա. քո մերը որ սիրուն չէր, տեսնում չե՞մ, որ մենք պակաս մարդ ու կնիկ ենք։ Գժվե՞լ ես. ի՞նչ ա, ա՛յ որդի, խելքդ հացի հետ ես կերե՞լ, Խեչանի քվեր աղջկանից քեզ ի՞նչ խեր ու խաշու. Խեչանի աղջիկն ուզի՞, որ դու էլ, քո օխտը պորտն էլ քեզանից ետը վայելեք։

Ոչ միայն աշտարակցիք էին աչքը տնկել Խեչանի աղջկա վրա, երկու-երեք հարևան գավառների հարուստներն էլ ատամները սրած միտք էին անում Խեչանի աղջիկն ուզել։

Այս ձայները միշտ Խեչանի ականջն էին ընկնում, բայց նա ժպտում և գլուխը պտտում էր։

Ժ

ԲՅՈՒՆԿԱԿԵՔ

Բուն բարեկենդանի կյուրակի երեկոյին, ինչպես ասացինք, աշտարակցիք վերջ դրին Աղզենց կալումն ամբողջ երկու շաբաթվան գժություններին, ամենքը միմյանց բարի գիշեր ասելով, ուրախ զատին ցանկանալով՝ մտան յուրյանց յուրաքանչյուր հարկի տակն՝ յուրյանց ընտանյաց հետ մեծ պասին դիմավորելու։

Գյուղումը լռությունը տիրեց, վերջացավ այն կերուխումը, բոլորովին մի հասարակ երեկոյի նմանություն առավ օրը. կարծես թե այս գյուղի մեջ երկու շաբաթ շարունակ ոչինչ արտաքո կարգի բան չէր պատահել։ Այս արտաքուստ էր. մտի՛ր ամեն մարդի տունը, և բոլորովին ուրիշ տեսարան կտեսնես։

Տան նախանդամը կամ ծերունին շուրջ արած յուր բոլոր գերդաստանը, շարվել է քուրսու[1] տակը՝ բեռանփակեթ անելու։

Այստեղ ահա նահապետական սուրբ ավանդությունը պարզ արտաֆայլում է, տան նահապետն յուր լիազոր իրավունքի մեջն է. ամենքը նրա աչքին են նայում, նրանից ակնածում են։ Իսկ մեր պապը կամ ափուն, քաղցրությունն և սերն երեսին, չէ թե այս անցյալ երկու շաբաթվան նման աղաղակներով ու հարայ-հրոցներով է դիմավորում պասին, քավլիցի, նա համեստ և զվարճալի բարոյական առակներով, հիսուն օրվա հյուր եկող մեծ պասի վերա խոսելով, այս բարեկենդանի ուրախությունները գժություն համարելով՝ գովում է պասը։

Մեր ծերունին սրտանց ուրախ է, նա ոչ մի օր յուր չորս կողմն այսպես հավաքված չի տեսել յուր ընտանիքին և մերձավորներին. այսօր նա միայն յուր փոքրիկ գերդաստանի հետ չէ սեղան նստել. նա բազմել է այն սեղանի գլխին, որի չորս կողմն յուր մերձավոր ազգականներն են շարված։

Բաժանված փոքր եղբայրներ, հորեղբոր որդիք, ամուսնացած աղջիկներ յուրյանց այրերի և զավակների հետ՝ բոլորը, բոլորը հավաքվում են յուրյանց ազգապետ ծերունու մոտ՝ նրա օրհնությունն առնելով, նրա հետ միասին բեռանփակեթ անելու։

Ծերունու տանը ոչինչ նոր պատրաստություն չի տեսնվելու, ամեն եկող գերդաստան յուր հետ բերում է բարեկենդանից մնացորդ ուտելիքներն և մի գավ գինի ու խառնում նրանց տան եղածի հետ։ Այս երեկո օջախ չպիտի վառվի, պապոնց օջախիցը միայն ծուխ պտի բարձրանա, էն էլ բեռանփակեթի ձվածեղն անելու համար։

— Աղջկե՛րք, երեխե՛ք, հենց որ կերթաք պապոնց, կամ մեծ ափունենց տունը, ամենքդ էլ գնացե՛ք պապի ձեռը պաչեցե՛ք ու ասացե՛ք.— շնհավոր բարիկենդա՛ն։

Ի՞նչ ուրախությամբ սերնդի նահապետը գրկում է յուր սիրելիներ-

[1] Մի ցածր սեղան է, որի թոնիրը իջնելուց հետո դնում են թոնրի վերա, կապերտներով ծածկում և ոտքերը տակը դրած՝ նստում են։

ին և աչքերն երկինք բարձրացնելով՝ օրհնում վերին նախախնամությունն և աղոթում, որ արժանացնի իրան նրանց մի բուռը հողին։

— Պապի ջա՛ն, հեքիաթ[1] ասե՞ս։

— Դե մի պաչ տո՛ւր։

Երեխեն թուշը դեմ արեց, պապը մկան ու կատվի առակը պատմեց։

— Պապի ջա՛ն, ինձ համար էլ ասա՛։

— Դեռ կա՛ց, էս մինը Գոքորիս համար եմ ասում։

— Պապի ջա՛ն, բա ինձ համա՞ր։

— Դեռ էս լսի՛, աղվեսի ու հավերի հեքիաթն էլ քեզ համար եմ պատրաստել։

— Պապի ջա՛ն, բաս ի՞նձ համար,— ազատ բարձրանում է մի երեք-չորս տարեկան մանուկ՝ մեծ աղջկա տղեն՝ պապի ծնկան վերա ու միրքի թելերի հետ խաղում։

Հանկարծ բեթանը մոտեցնում է նրան պապն և ատամներով բռնում սիրուն տղայի փափլիկ կուրը։

Ամենքն ծիծաղում և ուրախանում են։

— Իմ կո՛ւռն էլ, իմ կո՛ւռն էլ, պապի ջա՛ն, իմ կուռն էլ կծի՛։

— Չէ՛, քո կուռը պահի, ոչխարներ պտի շինեմ կռանդ վրա։

Էլի երեխաների կչկչոցը տունը բռնում է։

Մեծերն էլ կամաց-կամաց մասնակից են լինում այս անմեղ զվարճությունների։

Բավական ժամանակ անց կացավ, և առակը մոռացվեցավ.

— Վա՛յ, հեքաթը կիսատ մնաց, աղվեսը կխռովի։

— Հա՛, հա՛, պապի ջա՛ն, հեքաթն ասա՛, հեքա՛թը։

— Որտեղ մնա՞ց, մտիցս ընկավ։

— Ը՞, ը՞, ը՞, վա՛յ, մոռացա։

— Դե՛, մտքամոլորնե՛ր, ասենք՝ ես եմ հալիվորել, դուք ընչի՞ պտի մոռանայիք. ամո՛թ քեզ, Մուկո՛ւչ, էս քո հեքաթն էր, ով մոռանար՝ դու պտի մտքումդ պահեիր։

— Էլ ետ գլխի՛ցը, պապի ջա՛ն, էլ ետ գլխի՛ցը։

— Գլուխն էլ մտքիցս թռավ, ընչանք հերթով մի-մին պաչ չտաք, միտս չի գալ. ով շուտ թուշը դեմ կանի, նրա համար կասեմ։

Միմյանց ետ խփելով, երեխայքն ուրախ-ուրախ պապի գիրկն ու շալակն ելան և աշխատում են երեսները շուտ մոտեցնել նրա բերանին։

— Էլ չեմ ասում,— համբուրելուց հետո հրաժարվում է պապը,—

[1] Առակ։

ասված փորս վեց-վեց[1] ա անում. դե գնացե՛ք, տատին ասացե՛ք, թող հացը քաշի, մի քիչ փորներս լցնենք, հացից ետը շատ բան ունիմ պատմելու։

— Չէ՛, չէ՛, սուտ ես ասում. էսօր բարիկենդան էր, սաղ օրը կերել ես, մենք էլ սոված չենք. ա՛յ, ջիբումս գաթի կտոր ունիմ, իշտահ չկա, որ ուտեմ, կուզե՞ս՝ քեզ տամ։

— Չէ՛, ես հաց ուտել եմ ուզում, կիրակրները կմնան, էգուց դեն կածենք, շներին կտանք։

— Տատի ջա՛ն, դե դու էլ թեզ արա՛, նոր կերակուր հո չե՞ս եփելու, էլ ի՞նչ ես ետացնում,— փոքրիկ շրթունքներն ուռեցնելով, քաշքըշում են տանտիկնոջ փեշերը մեր գառնուկները,— պապը սոված ա, ի՞նչ անկուշտ ա, սաղ բարիկենդանին միալար[2] նի ա տալի[3] ու դեռ ասում ա, թե թափանիս[4] մի դիհը դարդակ ա։

— Էլ քունջ ու պուճախ մի՛ ընկնեք, ինչ ունիք-չունիք՝ բերե՛ք, մեջտեղը լցրե՛ք ու դուք էլ նստոտեցե՛ք, էս իրիկուն մի հալալ հաց ուտենք, բերանփակեմ անենք, էլ ո՛վ սաղ, ո՛վ մեռած,— հրամայեց պապը, և ամենքը միասին շարվեցան։

— Ա՛յ պառավ, դու հենց նստի՝ կես երեսդ մեր դիհն ըլի, կեսն էլ՝ հարսների, դու երկու ախոռանի ես,— ծաղրածություն է անում պապը յուր կնոջ հետ։

Տղամարդկանց քամակին շարվում են հարս ու աղջիկներն և երեսները մյուս կողմը դարձրած, քամակները դեպի այր մարդիկը, ընթրում են։

— Ա՛յ կնիկ, էսքան բանը որ մեր առաջն ես լցրել, էդ ջահել-ջուհուլին ի՞նչ ա մնացել,— հոգաց պապը։

— Տո՛, հար կտրածի մա՛րդ. ըստեղ էնքան թափած ա, որ մի շաբաթ էլ բարիկենդան ըլեր, հատնիլ չէր. մի տե՛ս քանի՛ տնվոր ենք, ամեն տանից էլ եկել ա, ասես՝ էսքանը բերում էիք՝ թե ի՞նչ։

Սկսվում են նույնպես սեղանի վերա կարճ-կարճ ծիծաղաշարժ ասացվածքներ։

— Դուք էլ պստի հարսներ չե՛ք,— հանդիմանում է պապը այր մարդկանցը,— մենակ ես հո չպտի՞ խոսամ, ի՞նչ եք բերաններիդ հուպ տվել, հալբաթ մի-մին բան էլ դուք կիմանաք, ասացե՛ք, էլի՛։

Ուրախությունն ընդհանրանում է, մուրախաս ա, պապը հրաման տվեց, ամենքն ինչ սրախոսություն գիտեն, գործ են դնում։

Հարսներն էլ փառ-փառ ծիծաղում են։

[1] Խիստ բաղցած եմ։ 2 Անդադար։ 3 Ներս է լցնում։ 4 Ստամոքսիս։

— Դե՛, ով խաղ գիտի՝ պահի ոչ։

Ամեն մարդ յուր շնորհքը բանացրեց։

— Ա՛յ կնիկ, դե վեր կա՛ց, օջախդ կպցրո՛ւ, բերանփակեքի ձվածեղն արա՛, հացը վեր քաղենք, էս երեխեքը մի քիչ ուրա՛խություն անեն։

Տանտիկինը մեջտեղ բերեց մի հաստ ձվածեղ, ամեն մարդ մի-մին թիքա վերցրեց. բերանը դրեց. ծծի երեխեքանց պռոշներին էլ որդեսեր մայրերը քսեցին, և պապը մի երկար օրհնություն ու քարոզ սկսեց։

— Տարվան մեջը շատ ուրախ օրեր են գալիս-գնում,— սկսեց պապը՝ մի թաս գինի ձեռքին բռնած,— զատիկ, ջրորհնեք, հինգ նավակատիկ, ես ի՞նչ գիտեմ, ո՞ր մինն ասեմ, մենք էդ օրերումն էլ ուրախանում ենք. համա ձմեռվա տան բան ու գործի թեթև վախտի համար մեր օղորմածիկ պապերը սարքել են բարիկենդանը, որ ամեն աշխատանք թողանք, քեֆի հետ ընկնենք։ Ինչ գժություններ արինք, ինչ կեռանք, ինչ խմեցինք, վերջացավ պրծավ, 50 օր մենծ պաս ա գալիս, ինչքան որ պարապ օրեր ենք անց կացրել, պտի էս օխտը շաբաթի մեջ տեղակը հանենք։ Էգուց-էլօր աշխատանքի օրերը դուս կգան, պտի ամեն մարդ իր աստծու անումը տա, գլուխը քաշ իր աշխատանքին կենա, որ աստված էլ նրա ճակատի քրտինքն օրհնի, նրա վար ու ցանքին, նրա հանդ ու հանդաստանին, նրա հիքանոնցը լիություն, առատություն տա։ Էս իրիկուն ձվով բերաններս փակեցինք, ընչանք զատիկ շաբաթ իրիկուները, մին էլ ո՛վ ապրի, թող տեսնի, կարմիր ձվով բերանքացեմ անենք։ Աստված ըսենց ուրախ սրտով, ցամաք աչքով զատկին արժանացնի ամեն հայ քրիստոնեի, նրանց սաղաղիցն էլ ձեզ, իմ որդի՛ք, ձեր երեխեքանցով, ձեր օղուշաղով. մոտ եկե՛ք, բալե՛ք, ամենքիդ էլ պաշեմ, բարով դուք էլ իմ տարսը դառնաք, շատ-շատ տարիներ ըսենց ուրախ սուփրա բաց անենք, փեսեքանց, թոռների, ծոռների տեր դառնաք, ձեր երեխեքանց կարմիրը կապեք։ Ա՛յ հարսներ, ա՛յ աղջկեք, շատ ապրիք, հնազանդ ըլիք, դուք էլ պառավիք ու իմ պառավի պես ճանգլաճուտերով հացի նստիք, բարով սև օրեր չտեսնի՛ք, ձեր սև օրերն էսօրվա պես ըլին, ինձ ու իմ պառավին էլ ձեր ձեռովը հողը դնեք, ձեր մի բուռը հողին արժանանանք, երկնային թագավորիցն էլ խնդրել եմ անարժան բերանովս, որ մեզ իր արքայությունին արժանացնի. ամեն։

Անխտիր ամենքը վեր կացան, պապի ու տատի ձեռքը համբուրեցին, սրանք էլ նրանց երեսները պաչեցին, և սեղանը հավաքվեցավ։

— Ա՛յ կնիկ, դե գնա՛ մի քիչ պոպոքից-մոպոքից բեր, երեխեքանցն առաջն ածա՛, մի քիչ էլ վեգ խաղան ու գնան իրենց տները,— հրամայեց պապը։

Մի ուրախություն էլ նոր սկսավ. մի կողմը վեգ են քցում տղայքը,

Մյուս կողմը թոլոլանգի են խաղում հարս ու աղջիկները. ավելի հասակավորներն էլ հավաքվել են պապի մոտ և զվարճանում նրա համով ճանաքների վրա։

Խեչանենց Խեչանն էլ յուր տան նահապետն ու գլուխն էր. նա շատ տխուր բերանփակեք արեց. նրա քույրը շատ ստիպեց նրան չկոտրել երեխեքանց սիրտը, բայց նա լսել անգամ չուզեց։

— Ի՞նչ կըլներ, որ հիմի իմ ախպերս ու հընկերս կենդանի ըլնեին ու մենք էլ մի ուրախ պաս բռնեինք,— պնդում էր նա քրոջ խոսքերի դեմ։

— Աստծով, երբ որ Հեղնարին կպսակենք, Սմբատը քեզ ախպերություն էլ կանի, որդիություն էլ։

Խեչանի տրամադրությունը փոքր-ինչ փարատվեցավ, երբ որ Սմբատը տուն մտավ, ձեռքը համբուրեց։

ԺԱ

ԱՆՄԵՂ ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆ

Եթե ազգականության մեջ կա մի ամուր կապ, որ մարդկանց իրարու մոտեցնում, իրարու ուրախությանն ու տրտմությանը մասնակից է անում, այդ քաղցրությունն ավելի զգալի է հասարակ ժողովրդի մեջ, քան բարձր դասակարգի, գյուղականաց մեջ առավել՝ քան թե քաղաքացիների։

Գյուղացին յուր անձնական գործի հետ միասին պարտականություն է զգում յուր ազգականի կարիքին հասնելու, յուր մերձավորի ուրախության ու տրտմության ժամանակը նրա զգացմունքներին բաժանորդ լինելու։

Նա ուրախ է, երբ յուր հեռու-մոտիկ բարեկամի տանը մի բարեբախտություն է պատահել, մի հարսանիք, մի ծնունդ. նա ամենայն սիրով շնորհակալություն է անում, երբ նրան ավետիք են տալիս։

— Աչքդ լո՛ւյս, քեռուդ աղջկանը նշանել են, կամ թե՝ խնամուդ կինը տղա է ծնել։

— Աչքալուսով կենաս,— պատասխանում է նա քեզ,— բարով ձեր ազիզ սիրեկաններին էլ ռաստ գա էս ուրախությունը։

Այսպես էլ իմացիր և տրտմության ժամանակը։

Սեր, քաղցրություն, մոտիկ հարաբերություն, շարունակ միմյանց տուն գնալ ու գալ, կեսգիշերին, մեջգիշերի բարեկամի կարիքին հաս-

նել,— այս գեղեցիկ հատկություններով կհիանա Հայաստանի գյուղերը մտնող մեկը, մանավանդ, եթե նա ծանոթ չեղած գյուղական պարզությանը, սնած քաղաքի շինծու, կենցաղավարությամբ, դիպվածով ընկնի վերոհիշյալ երանավետ կյանքի մեջ։ Միանգամայն կզմայլի այնպիսի անձը՝ տեսնելով այնքան ջերմ սեր և անխարդախ բարեկամություն։— Այո՛,— կասի նա,— ո՞րքան մեծ զանազանություն, ո՞րչափ նախանձելի վիճակ, ո՞ւր գյուղացու անկեղծ բարեկամություն, ո՞ւր մեր քաղաքացիներիս քաղաքավարական կեղծ կանոնների վերա հիմնված առերես ունեցած մարդահաճություն։

Մերձավորների ու բարեկամների հարաբերությանց վերա խոսելով՝ մենք չպետք է խլենք գյուղացուց բոլոր յուր նմաններին ցույց տված համակրական զգացմունքը. մի տեղ նա ասում է,— մոտիկ հարևանը լավ է հեռու բարեկամից, մյուս տեղ՝ առաջ մերը, հետո մերոնցը։ Այս երկու առածը միմյանց չեն վնասում. սրանցով գյուղացին թե հարևանին է սիրում և թե ազգականին. մանավանդ, եթե նրա բարեկամությունը նոր է, նոր խնամություն են կապել յուրյանց մեջ։

— Խնամի ջան,— ուրախ դիմավորում է նա յուր ազգականին,— բարեկամացանք՝ բարեբարացանք։

Այդ օրից նրանք միմյանց տան անդամներն են։

Խեչանենց Խեչանի և Ծվիկենց Աղաջանի մեջ երեխաներին բաշիքյարթմա արած օրից մի ամուր բարեկամություն հաստատվեց, նրանց տները, համարյա, միացան, մի գդալ տաք ու հովը բաժանում էին իրար հետ։

Բավական չի, որ երկու սիրով խնամիքն ամբողջ օրերով համարյա միասին էին լինում, Սմբատը գիշերներն էլ իրենց տանը չէր քնում։

Ինչպես առհասարակ գյուղական սովորությունն է, Սմբատը ձմեռներն ուսումնարան էր գնում, ամառներն այգին, կամ արտը. այդ միջոցումը նա չէր էլ հարցնիլ, թե իրենց տաշտի՞ցն է հարկավոր հաց վերցնել՝ գրպանը դնել, թե Խեչանենց։ Երկու դուռն էլ բաց էր յուր համար, երկու տունն էլ իրանն էր. շատ անգամ նա մոռանում էլ էր, թե ո՛ւմ տղեն է։ Հեղնարի ու Հերիքնազի մեջ նա ոչինչ զանազանություն չէր գտնում, երկուսն էլ յուր քույրերն էին, Խեչանն էլ յուր հորեղբայրը։ Ահա այսպես էր պատասխանում նա հարցնողին։ Նա ոչ բաշիքյարթմի նշանակությունն էր հասկանում և ոչ նշանածությունը։ Նա պարզ, անմեղ երեխա էր և նույն անմեղությամբ շարունակում էր յուր երթևեկությունը, մինչև որ տարիները մի օր նրա թևերը բռնած ետ քաշեցին։

Այս միևնույն դրության մեջ էին և երկու մատաղասուն աղջիկները. քանի փոքր էին, նրանք միմյանց այլապես չէին ճանաչում, եթե ոչ

հարազատ քույրեր. եթե հարցնելու լիներիր՝ եղբայր ունի՞ք,— այո՛, կպատասխանեին,— Սմբատը մեր եղբայրն է։ Երեխայական անմեղ խաղեր, Սմբատի հետ քաշել, քաշքշվել, ծեծել, ծեծվիլ, միմյանց դեմ շրջունք ուռեցնել, մի քանի րոպե խռովել, էլ ետ միմյանց գիրկն ընկնել, հաշտվել, ահա այսպես էին երեք երեխաների հարաբերությունները։

Երկու աղջիկները, համարյա թե, հասակակից էին, իսկ Սմբատն երեք կամ չորս տարով մեծ էր նրանցից, և այդ էր պատճառը, որ աղջիկները միմյանց հետ վեճ ունեցած ժամանակը, շատ անգամ, իրենց դատավոր էին կարգում Սմբատին։

— Սմբատ ջա՛ն, իմ դիհը պահի՛,— փաթաթվում համբուրում էր Հեղնարը։

— Սմբատ ջա՛ն, սուտ ա ասում, իմ կռանը կա՛ց,— գիրկն էր ընկնում և թուշը կամ աչքերը տղայի պռոշներին դեմ անում Հերիքնազը։

— Երկուսդ էլ սուտ եք ասում, կորե՛ք, գնացե՛ք,— ետ էր խփում Սմբատը, բայց այդ ժամանակ նա էլ՝ երեխաների ձեռքից չէր պրծնում, վրան էին թափվում, վայր ձգում և այնքան շարշարում, երեսն և գլուխը պաչպչում, կրծքին նստում, մինչև որ նա երկուսին էլ ճշմարտացնում էր։

Խեչանի կինն, ինչպես հայտնի է, վաղուց մեռած էր, երկու երեխաներին միահավասար մայրություն էր անում Խեչանի քույր Մարիամը-Երեկոյան, երբ նա անկողինը փռում էր, երկու աղջիկներն ու Սմբատը պարզապես հանվում էին և Սմբատին մեջ առած՝ խաղում, մինչև որ քունը նրանց աչքերը փակում էր։

— Ձեր ջանին մեռնի՞մ, անմեղ հրեշտակնե՛ր,— ասում էր Մարիամը ու յուր շորերն էլ հանում, երեքին կարգով համբուրում, նրանց կողքը մտնում, մի պակաս-պռատ «հայր մեր» ասում, երեք երեխաներին էլ խաչակնքում ու աչքերը փակում էր։ Խեչանն էլ իրան պարտականությունն էր համարում անկողին չմտած՝ երեխաներին համբուրել ու այնպես պառկել։

— Փառքդ շատ ըլնի՞, աստվա՛ծ,— ձեռքերն երկինք էր բարձրացնում նա,— ո՞վ կկարծեր, թե օր ծերության դու ինձ էս մխիթարությունը պտի տաս։

Ոչինչ բան չէր խանգարում երեխաների պարզ միտքը, սերն էր թագավորած նրանց մեջ, քանի նրանք մանկության տարիների մեջ էին։

Գյուղի ուսման ընթացքը շատ երկարատև չի. մի երկու երեք ձմեռ երեխայքը կհաճախեն մի տիրացուի կամ տերտերի մոտ՝ մի ութ կանոն սաղմոս կամ կտակարան ձեռքերին, ու մարտը դուրս գալուն պես գրքերը կրկին կծալեն, տան խոր անկյուններից մեկում հանգիստ կտան ու կերթան իրանց ծնողներին պետք գալու դաշտի կամ այգու գործե-

ռումը։ Վերջն երբ մի քանի տարի շարունակ տերտերի բակումը ֆալախի մեջ մտնելուց ու ապտակներ ուտելուց հետո փոքր-ինչ խելքոց իմացան կամ, ինչպես իրանք ասում են, իրանց հոր նիսիեն[1] գրել կարողացան, նրանց ուսումը լրացավ, փիլիսոփա դառան՝ պրծան, տերտեր հո չպտի՞ դառնան, շատ կարդացողը կգժվի։

Ահա մեր Սմբատն էլ յուր ուսման ընթացքն ավարտեց. նա այժմ ոչ թե միայն յուր հոր նիսիեքն է գրում ու կարդում, տեղն ընկած ժամանակն ուրիշների համար բարովագիր կամ սանադ էլ է գրում. նա ուրեմն ֆյամուլ եղավ[2]։

Ահա նա մտավ տասնվեց տարին։

— Կա՛ց,— մի օր նրան ասաց մի ներքին ձայն,— ո՞ւր ես գնում դեպի Խեչանի տունը, այդ ձերը չէ, քո աներանց տունն է։

Եվ Սմբատը կանգ առավ. նա յուր մեջ մի փոփոխություն զգաց, նրա երեսը կարմրեց, տաքացավ։

Նա յուր շուրջը նայեց ու հեռվից մի գյուղացի տեսավ։ Էլ չկանգնեց Սմբատը, ետ դարձավ ու մինչև յուրյանց այգին մինչ վազեց։

— Ամո՞թ ա, ի՞նչ կասեն, թե օրով-ցերեկով նշանածի կուշտն ա գնում,— մտածեց նա։

— Է՜հ, ինչ կուզեն ասեն, ի՞նչ անենք, թե նշանածս ա, ես հո գել չե՞մ, որ իրան ուտեմ. դեռ նշանածս պստիկ ա, դեռ երթալն ամոթ չի։

Այսպես խելքը փչեց պատանեկության մեջ նոր ոտ դրած Սմբատի և նա կրկին քայլերն ուղղեց դեպի Խեչանի տունը։ Գնաց, բայց վա՜յ էն գնալուն՝ ինչ նա գնաց. գողի պես կուչ ու ձիգ անելով, ծուռն և ետ ընկած փողոցներով, յուր սովերիցը վեր թռչելով, որպես և իցե բակը ներս ընկավ։ Նրա բախտիցը Մարիամն այդ միջոցումը պարապած էր տնային գործով, չնկատեց Սմբատի այլայլմունքը, Խեչանն էլ տանը չէր, ապա թե ոչ կարելի էր կարծել, որ Սմբատն այսօր մի արգելված բան է գործել։

Երկու աղջիկներն իհարկե, չէին կարող Սմբատի շփոթմունքը տեսնել, նրանք ըստ սովորականին էլի փաթաթվեցան, էլի համբուրեցին, էլի ուսերիցը ճոլոլակ ընկան[3], բայց Սմբատը միշտ աշխատում էր դուրս ընկնել նրանց գրկիցը։ Մին ուզում էր, որ նրանց վեր կոխի, տակը դնի, մազերը գզգզի, ծեծի ու ծեծվի նրանցից, խռովի, գլուխը պատին դեմ տա՜ կանգնի, մինչև որ յուր ամեն օրվան խաղի ընկերներն իրան քարշ տան, պաչեն, պաչվին ու հաշտվին, ուզում էր առաջվա պես վարվի

1 Ապառիկ։ 2 Գիտության ընթացքն ավարտեց։ 3 Գախվեցան։

նրանց հետ, բայց չէր կարողանում, կարծես մինը ձեռքիցը բռնած՝ ետ էր քաշում։

Մինչև այսօր Սմբատն յուր մեջ ծանր ու թեթև չէր արել, չէր համեմատել, թե երկու աղջիկներից ո՞րն ավելի գեղեցիկ է, դուրեկան է. երկուսն էլ նրա համար մեկ էին, երկուսն էլ յուր քույրերն էին, նա գեղեցկության վերա ոչ գաղափար և ոչ հասկացողություն ուներ։ Թեպետ Հեղնարը Հերիքնազից փոքր ավելի շար էր, դրա համար էլ ինքը շատ անգամ Հերիքնազի դիհն էր կենում և Հեղնարին ատում. մինչև որ Հեղնարը գալիս լաց էր լինում, աղաչում, փաթաթվում, որ Սմբատն ու Հերիքնազը յուր հետ բարիշեն ու խաղան, բայց այդ ի՞նչ վնաս, դրա վրա ո՞վ էր մտածել։

Այսօր առաջին օրն էր, որ Սմբատը գլուխը հանկարծ բարձրացրեց, երկու աղջկա վերա ևս աչք դարձրեց ու յուր մեջն ասաց. Հերիքնազը սիրուն է։

— Հերիքնազը սիրուն է,— մտածեց նա ու մի խոր հոգոց քաշեց և դուրս գնաց։

Աղջիկները վազեցին քամակիցը, կանչեցին, լաց եղան, բայց Սմբատը ետ չդարձավ. նա գնում էր ու ինքն իրեն մտածում.— Հեղնարն իմ նշանածն ա, համա Հերիքնազը սիրուն ա։

— Ընչի՞ էլ առաջվա պես Սմբատը մեզ հետ խաղ չի անում,— հարցրին մի անգամ երեխայքը Մարիամին։

— Ընտուր որ հիմի նա մենծացել ա, ամոթ ա նրան խաղալը։

— Ընչի՞ էլ շուտ-շուտ չի գալիս, եկած վախտն էլ ինչքան աղաչանք ենք անում, քշերը մեզ մոտ չի քնում։

— Ախար ամոթ ա, ո՞նց կըլնի նշանածը նշանածի կշտին քնի, Սմբատը Հեղնարի նշանածն ա։

— Չէ՞ որ դու ասում էիր, թե ախպերներս ա։

— Ընչանք հիմի ախպեր էր, հիմի նշանած ա։

— Իմ է՞լ նշանածն ա,— հարցրեց Հերիքնազը։

— Չէ, քու փեսեն ա։

— Չե՜մ, ը՜, թող ինձ էլ նշանած ըլնի։

— Հազիր որ ինձ էլ փեսա ըլնի՜։

— Չէ՜, երկուսիս էլ համ փեսա ըլնի, համ նշանած, որ խռովենք ոչ

— Ախչի՜, գլխիցս ռադ էլեք[1], էդ ո՞նց կըլնի, Սմբատը Հեղնարի նշանածն ա, Հերիքնազի փեսեն։

— Նանի ջան, փեսեն ա լա՞վ, թե նշանածը։

1 Հեռացե՛ք։

— Երկուսն էլ մին են։

— Լավ ա՛ որ երկուսն էլ մին են, թե չէ մենք չէինք ուզիլ, որ մենս փեսեն ըլներ, մեկելիս նշանածը։

— Հոքիր չան, Սմբատն երբ որ մեր տունն ա գալիս, էլ ինձ հետ չի խաղում, խոսում, հենց միալար Հերիքնազի հետ ա հանաքներ անում,— գանգատվեց մի անգամ Հեղնարը Մարիամին։

— Օրենքն ըտենց ա, ասենք, Սմբատը քեզ համար ա գալիս, հա-մա քնու հետ պտի խոսի, նշանածի հետ շատ խոսալն ամոթ ա. Հերիքնազը քենին ա, դու նշանածը։

— Թե որ ըտենց ա, թող Հերիքնազը ըլնի նշանածը, ես քենին. ես ուզում եմ, ինձ հետ էլ խոսի ու խաղա, յա թե չէ մի օր ես ըլնեմ նշանածը, մի օր Հերիքնազը։

— Անմեղ բալե՛ք,— մտքումն ասում էր Մարիամն ու երեսը շուռ տալիս, հեռանում։

— Ախչի՛, հրե[1] նշանածդ եկավ,— ասաց մի օր Հերիքնազը Հեղնարին։

Հեղնարի ջանը մի սարսուռ ընկավ, նա կարմրեց, տաքացավ ու ներս փախավ։

Էս տարիներն էին՝ նրանք էլ մտել էին տասնևչորս տարին։

Մինչև այսօր աղջիկներից ոչ մեկը չէր մտածել յուր անցյալի կամ ապագայի վերա, երկու քույր էին յուրյանք, յուրյանց հայրը Խեչանն էր, մայրը՝ Մարիամը։

— Ընչի՞ ես քեռուս քեռի եմ կանչում, Հեղնարն՝ ափու[2]։

— Ընդուր որ նա իմ ախպերն ա, քու քեռին կըլնի. համա Հեղնարի հերն ա։

— Բաս ես հեր չունե՞մ։

— Ջէ՛, դու եթիմ[3] ես,— պատասխանեց Մարիամն յուր աղջկանն ու էլ չկարողացավ դիմանալ, աչքերիցը թափելով հեռացավ։

— Ես եթի՞մ եմ, էս մեր տունը չի՞,— մտածեց Հերիքնազն ու փուչը թողեց[4]։

— Ընչի՞ ես քեզ հոքիր եմ կանչում, Հերիքնազը՝ նանի,— հարց տվեց Հեղնարը։

— Ընդուր որ ես քո հոր քիրն եմ, Հերիքնազի՝ մերը։

— Բա էս ձեր տունը չի՞, դուք մեր տանն եք կենո՞ւմ։

— Հա՛,— հոգվոց հանեց Մարիամը։

1 Ահավասիկ։ 2 Հայրիկ։ 3 Որբ։ 4 Տրտմեցավ։

— Բաս իմ մերն ո՞ւր ա։

— Աստված տարավ։

Հեղնարն աչքերը լցրեց ու հեռացավ։

ԺԹ

ՃԼՈՐԹԻ

Մեծի պահոց երկուշաբթի առավոտը ծեգելահան ամեն պառավ տանտիկին տեղիցը շուտ կվերկենա, տան մյուս անդամներին կզարթնացնի, տղամարդկանցը ժամ կդրկի, կնիկարմատներին էլ կհրամայի պղնձկարգը ցած բերել, պասահան կանի, ուտիսի հոտը միջից կկտրի ու իստակ-իստակ լվացած տեղերը կշարի։

— Ախչկե՛ք, մի սոխ ու օլիտը բմբուլ բերե՛ք,— կհրամայի տանտիկինը, և սոխի վերա յոթը փետուր կարգավ կշարի անիվի ճաղերի նման ու յուր ձեռքովը կտանի, տան երդիկիցը կկախի։

Յոթը փետուրը պահոց յոթը շաբաթն է, ամեն կյուրակե մի-մի փետուր պտի քաշեն սոխի վրայից, վերջին փետուրն էլ ծաղկազարդին կհանեն և կնշանակի, որ պասը վերջին է հասել, զատկի հոտը փչում է, կարմիր ձուն ներկելու օրերն են։

— Այ խիզան[1], աչքներդ երդիկին քցեցե՛ք,— կհրամայի տանտիկինը սոխը կախելուց հետո,— շնհավոր մենծ պաս, բարով հասնինք զատիկը՝ ուրախ սրտո՛վ, ցամաք աչքո՛վ. պապին շնհավորեցե՛ք, տեսե՛ք՝ թևավորված ոտները կախ արեց մեր երդիկովը, ծանր-ծանր նստեց, բարով պապի բմբուլները պոկելով տկլորացնենք, ումբրը[2] լորը պոչ շինենք[3], հետ ածենք, գնա՝ քարափների տակին տափ կենա։

Այս օրը հայաստանցու համար շատ մեծ և նշանավոր օր է. նոքա զատկից պակաս ուրախությամբ չեն դիմավորում մեծ պասին, նոքա այսօր պասշնավորեմ ունին։

Առավոտյան ժամումը «լվացարուք սրբեցարուքը» լսելուց հետո՝ ամենքը տնետուն կընկնեն և միմյանց համբույրներ տալով կշնորհավորեն մեծ պասը։

Նորափեսայքն էլ, որոնք այս ձմեռ պսակվել էին, այսօր շատ մեծ գործի վերա են։

Սրանցից մինը՝ Սաթումենց Սահակն այսօր առած յուր խաչեղբորն

1 Ընտանիք։ 2 Կյանքը։ 3 Լորի պոչ շինել՝ նշանակում է կարճացնել. հայտնի է, որ լորը պոչ չունի։

ու փեսեղբորը, յուր նորափեսայության հանդերձը հագած, մի գավ գինի և մի ափսեով չոր միրգ փեսեղբոր ձեռքը տված, գնաց յուր աներանց տունը՝ նրանց պասը շնորհավորելու։

Սաթումենց տանն այսօր մեծ հարկինքս[1] է, նորահարսի համար պետք է այսօր պասվա բաժին գար յուր մոր ու բոլոր բարեկամների տներից. այսօր նորահարսը պիտի հավաքեր յուր բոլոր ընկերուհիներին, և նրանց հետ պաս բոներ։

Աներոջ ձեռքն ու զոքանչի կուրծքը համբուրելուց հետո՝ մեր նորափեսա Սահակը նստեց յուր ընկերներով քուրսու վերի կողմը։

— Ա՛յ կնիկ, էլ մի՛ եռացնիլ, իրեք սհաթ մի՛ ծռծռացնիլ[2],— տնօքինեց Սահակի աները,— ես գիտեմ, էսօր խեղճ փեսիս քաշ պտի տաս քո բարեկամների դռներին, էնքան ազգ ու ընտանիք ունիս, որ Մողնու նախրիցը շատ են[3], ընչանք իրիկուն անճախ կպրծնեն խեղճ տղեքը. բե՛ր սրանց խալաթը[4]։

Սահակի զոքանչը բերեց մի-մի զույգ Խորասանու նաշխուն գյուլբա, դրեց ազիզ հյուրերի առաջը, իսկ փեսային՝ գյուլբի հետ մի բաղդադի աղլուխ էլ վիզը փաթաթեց ու թուշը պաչեց։

— Դե հրամայի՛, խնամի,— խոսեցավ փեսեղբայրը,— տեսնենք քանի՞ տուն ենք պասշնհավորեք գնալու. էսօր մենք քո ճորտերն ենք, քարափովն էլ որ քցես, լսելու ենք։

— Բարո՞վ դու էլ էս օրին արժանանաս, բալե՛ս,— օրհնեց նրան Սահակի զոքանչը,— դե ես մի-մին ասեմ, դու համբարի՛. ա՛յ, լավ միտներդ պահեցե՛ք, ձեզ մատա՛ղ, մոռանաք ոչ, էլ մեր ազգականների ձեռքիցը պրծնիլ չեմ, կասեն՝ Շողակաթը լայազ չտեսավ[5] իր փեսին մեր տունը ղրկելու։

— Տո՛, դու ուրախ կա՛ց, խնամի ջա՛ն, քանի կարաս՝ շարի՛, կուզես Շուխոնց դեմիցը բռնեմ գնամ Ղոի Ակոփի տանը դուս գամ. ինչի՞ չպիտի գնանք, փորներս կծակի՞, պատիվ պտի ստանանք, պատուհաս հո չպտի՞ քաշենք. ասենք, փեսեդ իր խալաթն ամեն տեղ կառնի, հալբաթ մի քանի աստծասերների աչքն էլ մեր վրա կքաղցրանա։

Պառավն սկսավ համարել՝ մատները ծալելով, էս բերդաթաղումը՝ Շուխոնց Ալմաստը, Զնդլենց Զմրուխը, Սայադենց Ջավահիրը, Քուրդ-Մանուկենց Յաղութը, ընտեղից ետ գաս առվի ափովը՝ Ջազենց Նարգիզը, Մելումենց Լիլիֆարը, Վարսանենց Սալբին, մտնես պուճուր քուչեն՝

1 Հացկերույթ։ 2 Ցնցիր։ 3 Մողնին մի փոքրիկ գյուղ է Աշտարակու մոտ։ 4 Պարգև։ 5 Արժան չտեսավ։

Բոշենց Ոսկին, Ղափանցոնց Ջառնշանը, Թումանենց Սիմիղարը, անց կենաս սըրբ Մայրամի թաղը՝ Միրզի Վաթերը, Ճուրուրան Մաքոն...

— Դե՛ լա՛վ, դե՛ լավ, էլ գլուխդ ցավացնիլ մի՛,— խոսքը կտրեց փեսեղբայրը,— ձեր ազգ ու ընտանոնց մենծիցը բռնած, ընչանք օրորոցի երեխեն, եփած որ ըլին՝ խաշուն կճանաչեմ, թե որ մինը մնա՝ ինձանից ուզի։

— Դե՛ աստված ձեզ հետ, տղեք ջան, աշխատեցեք շուտ վերջացնել, կնիկարմատի խոսքին շատ անկաջ մի՛ կախեք, մի քանիսն էլ լոք տվեք[1], սրան որ հարցնելու ըլնիք՝ Լվակերենց տունն էլ կղրկի. որտեղ խելքներդ կփչի՝ մտե՛ք, որտեղ՝ ոչ՝ անկաջի քամակը քցեցե՛ք,— խառնըվեցավ Սահակի աները։

— Ը՞, սուտ ա ասում, ձեզ մատաղ. փեսա ջա՛ն, դու սրան լսես ոչ, ամեն տեղ էլ գնացե՛ք, թե չէ ես էլ պրծնիլ չեմ, երկու գազ քինթ կախ կքցեն։

— Դու միամիտ կա՛ց, նանի՛ ջան, աչքիս վրա, էսօր ափունին չենք լսիլ, էսօր իրավունքը քոննա՛,— միամտացրեց փեսեն։

— Ա՛յ տղա, մտիցս ընկավ, թե երեխիս քեֆը[2] հարցնեմ, քոռանա Թագուհուս նանի աչքերը, քանի՞ վախտ ա՝ տեսել չեմ։

Պառավն աղջկանը միտքը բերեց և աչքերիցը թափեց։

— Է՛հ, աղջկանդ համար ի՞նչ ես հոգս անում, խնամի ջան,— կատակ արեց փեսեղբայրը,— էլ դուք ըստուց ետը նրա աչքումն ի՞նչ կգաք, ուրախ տոնենգի ա տալիս, տաք տեղ ա գտել, մորազ ձկան նման քշերն ընչանք լիս էս քո քյալաշ[3] փեսիդ ծոցումը խլպլտում ա[4]։

— Գնացե՛ք, գնացե՛ք, ա՛յ անամոթ,— գլուխն ամաչելով քաշ ձգեց պառավը,— բարով դու էլ քո խլպլտանին արժանի ըլնիս։

— Ամե՛ն, ամե՛ն, աստված բերանիցդ լսի,— ասաց փեսեղբայրն, ու մեր տղայքը գնացին խնամոնց բոլոր բարեկամների պասը շնորհավորելու։

Ամեն տեղ էլ նորափեսան ու խաչեղբայրը մի-մին զույգ գյուլբեք ստանում էին, իսկ փեսեղբայրը մի քանի տան միայն արժանացավ պարգևի։

Սահակն յուր աներանց բոլոր բարեկամների տները ման գալուց հետո՝ սկսավ յուրյանց ազգականներին էլ տեսություն գնալ. բայց էլ պարգևի թող չսպասեն. այդ պատիվը միայն նոր խնամոնց մոտ կտեսնեին։

— Շատ ուշացանք, մի երկու-երեք տուն էլ մնաց, անց որ ըլի

1 Քայլերը լայն դնելով անցնել։ 2 Որպիսությունը։ 3 Կորիզ։ 4 Ելտում։

պրծնենք ու տուն գնանք. տղե՛ք, հաշվառաս ճլորթին վերջացած կըլնի, մեզ կըլնին սպասում,— տնօրինեց Նորափեսան։

Ինչպես ասացինք, այսօր Սահակենց տանը մեծ հանդես կար, բավականին ազատ աղջկերք ու ջահել հարսներ հրավիրված էին։ Սրանց միջին չէիր գտնիլ միայն այս տարվա պսակվածներին. այսպիսիների բոլորի տներումն էլ ճլորթի կար։ Սրանք այսօր իրանց տանից դուրս չեն գալ։

Հացատան երդիկի փայտիցը կապել են մի պարան և ամենքը հերթով ճլորթի են ընկնում։ Ամուսնացածների ընկնելու ժամանակը ոչինչ հետաքրքիր բան չկա. մի քանի անգամ ճլորթու մեջ նստած՝ կճռնեն ու կիջնեն։ Տեսարանն ազատ աղջիկների ճոճելու ժամանակն է. սրանք էլ պտի ավարտեն, որ վերջումը նորափեսեն շնորհավորելու տեղերից վերադառնա ու յուր նորահարսի հետ ճլորթի ընկնի։

— Աղջկե՛ք, հարսները պրծան. հիմի դուք սկսեցե՛ք, շո՛ւտ, որտեղ որ ա՝ փեսեն տուն կընկնի,— տնօրինեց տանտիկինը։

Երկու-երիորդ ավելի վստահներիցը՝ մի-մի ճիպոտ ձեռքներին, կանգնել են ճլորթու այս ու այն կողմը։ Մի ուրիշ աղջիկ էլ քամակիցը առաջ է հրում պարանի վրա նստողին և սա օդումը ճոճում է։

— Նշանածիդ անունն ի՞նչ ա,— խփում են ճիպոտով ճոճողին ու հարցնում։

— Ամա՜ն, ամա՜ն, ամա՜ն։

— Որ կարվիս՝ պտի ասես, ճիպոտը վրեդ կկոտրեմ։

Մինչև որ ճոճողը որևիցե աղատ տղայի անուն չտա, նրան կխփեն։

Ճլորթու տաք ժամանակն է, նորափեսի գալը մոտ է, աղջկերքը շտապում են շուտ ճլորթի ընկնել ու պրծնել, որ չըլնի թե տղեքանց մոտ նշանածի անուն ասել ստիպվին ու խայտառակվին։

Ամենքը ուրախ են։

Այդ միջոցը ոչ ոք չնկատեց, որ տան մութն անկյուններից մեկում երկու աղջիկ երես-երեսի նստած, ձեռքները կզակներին դեմ տված, կամաց քչփչում են։

— Ախչի՛, ամոթ ա, հերիք լաց ըլնես, աչքերդ կարմիր տակ են դառել, լա՛վ որ ամեն մարդ իր քեֆի հոգսումն ա, մեզ միտք բերող չկա, քեզ մատա՛ղ, թե ինձ սիրում ես, աչքերդ սրբի՛, հիմի էն անզգամ Ջանազանն ամենքին էլ կպրծացնի ու փետը ձեռին կգա գլխներիս ցից կըլնի, հո փախչիլ չի՞նք կարող, կարգ ա, պտի ճլորթի ընկնենք. էսօր էս մարդկանց տանն ուրախություն ա, հո մենք սրանց քեֆը հորամ չե՞նք կարող անել։

— Ջի՛, ես կմնանեմ ու Սմբատի անումը չեմ տալ, ախար սրտիցս

պտի բխի. որ չի ըլնում, ի՞նչ անեմ, ո՞ր կրակն ընկնիմ, դու հենց միշտ մեղադրում ես ու զոռ անում, որ սիրեմ, շատ էլ լավ տղա յա, որ կպչում չի՛, որ չե՛մ սիրում։

— Ախչի՛, քանի՞ ասես, ըստեղ դրա վախտը չի, դեռ մի աչքերդ սրբի՛ ու պատրաստվի. թե կուզես ըսկի Սմբատի անումն էլ մի՛ տա, որ կհարցնեն, ասա նշանածիս անունը Կիրակոս ա, պրծանք՝ գնաց։

— Էդ դու կարող ես՝ որ ազատ ես, համա ես ի՞նչ քարը քցեմ գլխիս, իրեք տարեկան անլեզու երեխա եմ էլել, որ իմ հերս գլուխս կապել ա. սև բարիկենդան ըլնե՞ր էս օրն իրանց գլխին. ինձ էլ իմ ախպորտանց ծոցը դրած պրծած ըլներ, որ իր քեֆի համար մի մատը երեխեքանց գլուխը կապեր ոչ. յարա՛ք, էս ի՞նչ անօրեն սովորույթ ա, ծծի երեխին էլ բաշիֆյարթմա կանե՞ն։

— Դե ուրիշը հո չի արել, Հեղնար ջան, քո հերը քեզ վրա իրավունք ուներ, հիմի ո՞ր աղջիկն ա իր սրտի ուզածին գնում։

— Էդ ա, է՛, որ տավարի պես ականջներիցս բռնած ում ուզում են՝ տալիս են. աղջկերանց սրտին էլ հարցնե՛ն։

— Բախտավոր կըլնին ամենքն էլ, թե որ քո նշանածի պես տղի թուշ ըլնեին[1], ասենք՝ դու ես, որ քո բախտին քացով տալիս ես։

— Շատ լավ ես ասում, Հերիքնազ ջա՛ն, հա՞մա որ սիրում չե՞մ։

— Լա՛վ, լա՛վ, հե՛րիք ա, Հեղնար ջա՛ն, դարդերդ էստեղ աշլա անելու[2] տեղը չի. ինձ հայտնի ա, թե ընչի՛ չես սիրում, գիտենամ թե դու նրա մեջն ի՞նչ ես տեսնում, մի իմանանք տեսնենք, թե Արշակը քեզ ա սիրում, թե քո հարստությունը։

— Ամա՜ն, ոտիդ տակին մեռնի՜մ, Արշակի համար էդ խոսքերը մի՛ ասիլ, նրա մի ղունգը հարիր Սմբատ ածի, նա օրթում կրակն ա ընկնում, որ մի շապկանց էլ հերս կուռս բռնի իրան տա՝ ուրախությունով ինձ կառնի։

— Դե լա՛վ, լա՛վ, աչքերդ սրբի. վա՜յ, կիրանամ, տեսա՞ր ինչ արինք, էնքան նստեցինք, որ նորափեսեն տուն եկավ, հիմի ի՞նչ պտի անես. գլխովդ պտիտ գա՛մ, Հեղնար ջա՛ն, մեզ թուք չանես, ուզես չուզե՛ս՝ պտի Սմբատի անումը տաս. ինքն ա փեսախպերը, գլխավիրևդ կանանած պտի ըլնի, հո կարալ չե՞ս խալխի միջին տղի անումը կոտրիլ։

— Ինձ որ մորթեն, ճլորթի չեմ ընկնիլ։

— Էդ ըլելու բան չի՛, հրե՛ անզգամ Ջանազանը մեզ տեսավ, երեվում ա՝ փուչ կենդանին դաստի[3] չէր մեզ կանչում, ընչանք Սմբատի գալը։

---

1 Հանդիպեին։ 2 Հայտնվելու։ 3 Դիտմամբ։

— Ախչկե՛ք, Հեղնա՛ր, Հերիքնա՛զ, գրողի մտիցն ընկնիք դուք,— ծիծաղելով առաջ եկավ Զանազանը,— վեր կացե՛ք, եկեք ճլորթի ընկե՛ք, դուք եք մնացել, հարս ու փեսեն պտի ընկնին, հաց պտի քաշեն։

— Ես որ մեռնիմ, ճլորթի ընկնողը չեմ։

— Զանազան ջա՛ն, քեզ մատա՛ղ, մեզ ազատի,— ասաց Հերիքնազը։

— Որ կտրվիք, ձեռք քաշողը չեմ, տրանց տե՛ս, չեն ուզում տղեքանց մոտ ճլորթի ընկնիլ, հազիր Հեղնարի նշանածն էլ փեսախպերն ա, ինքն էլ քստեղ ա, նշանածի անումն ասիլ տամ, որ սրտին օխտը թիզ եղ կաննի։

— Զանազա՛ն, Զանազա՛ն, դե էլ ո՞վ մնաց, բեր պրծացրո՛ւ,— ձայն տվեց տանտիկինը,— ամեն տեղից էլ խոնչեքն[1] եկել են, հաց պտի քաշենք։

— Էս ա պրծել եմ, մնացել են Հեղնարն ու Հերիքնազը, սրանք ամանչում են, չեն ուզում ընկնիլ։

— Վա՛յ, ես թուք ըլնիմ, պաս երկուշաբթի օրն աղափ աղջիկը որ ճլորթի չընկնի, նրա բախտը կկապվի. եկե՛ք, բալե՛ք,— երեսը չանգռելով մոտեցավ նորափեսի մայրը.— կարդ ա, մի՛ ամաչեք, շուտ արե՛ք, հաց պտի քաշվի, խալիքը սուված կոտորվեցին։

— Գնա՛նք, ճար չկա,— ասաց Հերիքնազն ու Հեղնարին համարյա քարշ տալով մոտ բերեց ու ինքը ճլորթու պարանի վերա նստեց։

— Նշանածիդ անումն ի՞նչ ա,— ճիպոտով խփեց Զանազանը։

— Մուկուչ։

— Քանի՞ տարեկան ա, ո՞ր թաղումն ա կենում։

— Քսան տարեկան, սրրբ Մայրամի թաղումը,— ասաց ու պրծավ Հերիքնազը։

— Հը՛, հը՛, հը՛,— ծիծաղեցին ամենքը,— խումարօղլոնց Մուկուչը կըլնի։

— Դե՛ պրծի՛, Հեղնա՛ր, էլ նազուտուզ[2] չի. հարկավոր, նստի՛ պարանի վրա։

Հեղնարը գլուխը կրծքի մեջն է կոխել և ոչինչ չի պատասխանում։

— Շուտ, շո՛ւտ, աղջի՛կս, դու էլ հո նշանածիդ անումը նոր չպտի՞ միտք անես. աստված գլխիդ սաղ պահի, թագավորի պես Սմբատը կողքիդ կաննած ա, ով նոր պտի նշանվի, դու մի մատն երեխա էիր, որ էդ բախտին տիրացել ես,— քաջալերում էր տանտիկինը։

---

1 Փայտյա երկար ափսե։ Բայց խոնչա գալ կամ բերել նշանակում է այդ ափսեներով կերակրեղեն կամ մրգեղեն ընծա ստանալ։ 2 Նազ անել։

— Լա՛վ, ամանչիլ մի՛, Հեղնա՛ր,— առաջ եկավ նորափեսան,— Սմբատի երեսը կծածկենք, որ չտեսնի։

Խաչեղբայրն յուր գլխարկը գրեց Սմբատի երեսին։

— Ախչի՛, թուք էլանք, դե ընկի՛ր ու պրծի՛ր,— Հեղնարի ականջումը փսփսաց Հերիքնազը,— հո ձեռ քաշողը չե՞ն։

Հեղնարն անզգայաբար նստեց ճլորթու պարանի վերա. մի աղջիկ քամակիցը հրեց։

— Նշանածիդ անումն ի՞նչ ա,— փեշերին խփեց Զանազանը։

— Սմբատ,— հազիվ լսելի ձայնով պատասխանեց Հեղնարը։

— Բա՛րձր ասա, չե՞նք լսում,— խփում է Զանազանը։

— Սմբա՛տ,— մեքենաբար ձայնը բարձրացրեց Հեղնարը։

Բարձրացավ ընդհանուր ծիծաղ։

— Քանի՞ տարեկան ա, ո՞ր թաղումն ա կենում, էս սհաթս ինքն ո՞ւր ա, շուտ ասա՛, թե չէ ճիպոտը մեջքիդ փշրտում եմ, շո՛ւտ, կաշիդ հանեցի՛։

Հեղնարը լուռ էր։

— Ախչի՛, դե ասա՛ ու պրծի՛, քանի՞ տանջվիս,— խրախուսեց Հերիքնազը։

— Քսան տարեկան ա, Փիլոմենց քուչումն ա կենում, էս սհաթս Էստեղ կաննած՝ իր նշանածին մտիկ ա տալիս, ուրախանում,— հուսահատաբար ձայնը բարձրացրեց Հեղնարը։

— Ապրի՛ս, ապրի՛ս, զորանա՛ս,— քչքչալով ծիծաղեցան ամեն կողմից, ու Սմբատի ականջը նորափեսան քաշեց։

— Կիսին էլ չես արժան, Սմբա՛տ,— ասաց խաչեղբայրը։

— Որ իմ բախտն ա,— պարծեցավ Սմբատն և աչքերը Հերիքնազի երեսին ձգելով՝ խոր հառաչեց։

— Տեսնե՛նք,— մրմռաց Հեղնարն և իջավ ճլորթուց. իսկ այս բառը միայն լսեց Հերիքնազը. նա Հեղնարի կռնից բռնած՝ քաշվեց նախկին անկյունը։

Ափսո՛ս, մենք վերջումը Հերիքնազի երեսին չնայեցանք, ապա թե ոչ կնկատեինք այն փոփոխությունը, որ եղավ նրա վերա Սմբատի աչքը դարձնելուց հետո. գլուխը կորացրեց Հերիքնազն և ձեռքն երեսին դրած՝ յուր ճկույթը սաստիկ կծեց ու Հեղնարին քաշեց։ Փոփոխությունն բոպեական էր, Հերիքնազն յուր բնական դիրքն ստացավ։ Եթե չեմ սխալվում, ոչ Հեղնարն և ոչ ինքը Սմբատը նույնպես չնկատեցին Հերիքնազի այլայլմունքը։

— Դե էլ մի՛ ամանչիլ, մոտ արի՛,— ձայն էր տալիս նորափեսա Սահակը՝ ճլորթու մեջ փառավոր բազմած։

Զանազանը քարշ էր տալիս-կարմիր քողը ծածկած մեկ հարսի դեպի ճլորթին. վերջինս թեպետ ետ-ետ էր ընկնում, բայց երևում է, որ մի ոտքը թույլ էր. մոտ էր գալիս։ Վերջապես Զանազանը նրան զոռով գրկեց, Սահակի կողքին պարանի վերա նստացրեց, մի սիրունիկ փոքրիկ երկու տարեկան տղա էլ մեր ամոթխածի գոգին նստացրեց. աղջկեքը քամակներիցը հրեցին, ու ճլորտին սկսավ ճոճել։

Հանդիսականները սկսեցին ծիծաղել, իսկ տանտիկինը մեջքը տան սյունին թիկնած՝ մտիկ էր տալիս օդի մեջ ճոճողներին և ասում.— բարո՜վ եկող տարի էս վախտը ըտենց մի սիրուն տղա-ճուտ[1] էլ դուք ունենաք, ձեր ջանի՜ն մեռնեմ։

Ճլորթու մեջը նորափեսան և նորահարսն էին, իսկ այս մանուկը տված էր նրանց գիրկը, որ անդրանիկը տղա ծնի։

— Դե պրծի՜, դե շո՜ւտ,— ճիպոտը Զանազանի ձեռքցն առած մոտ եկավ Սմբատը նորափեսին,— պրծի՜, թե չէ մեջքդ դաղդղորիկ ածեցի։

Նորահարսն ուզում էր վայր իջնել փախչել, բայց մեր երեսը պատռած Սահակը ձեռքը ձգեց յուր խեղճ հարսի վզովն ու երեսը համբուրեց։

Ազափ աղջկերքը կարմրատակած պատերի տակը քաշվեցան, ջահել ամուսնացածներն իրանց միջին ծիծաղեցին միմյանց նայելով, խաչեղբայրն ու փեսեղբայրն էլ գոռացին՝ անո՜շ։

— Կյանքներդ խո՜շ,— պատասխանեց նորափեսեն և ճլորթուցն իջավ։

Սեղանը քաշեցին ու ամենքն էլ կարգով շարվեցան։ Ուրիշ օրեր մեր աղջկերքն ու հարսները տղամարդկանց երեսն էլ տեսնելով կամաչեն, թող թե միասին ճաշեն, իսկ այսօր անպատճառ դրանց սեղանակից պիտի լինեին նորափեսան յուր խաչեղբոր և փեսեղբոր հետ։

Սեղանի վերա մոտ եկավ պասուց տոլմա, շորացրած կանաչ պոլոճիկի բուռանի, դդմի շիր, կարմիր խաշած պոլոճիկ, շիրբախտի ձիթով տապակած աղցան, զարբաբ՝ չամչով ու ֆաղցրեղենով շինած փլավ և ալյուրի մեջ տապակած բոխ։ Ընդամենն յոթը տեսակ կերակուր։

Անծանոթն էլ կարող էր նկատել, որ այս ուտելիքները զանազան տեսակ են եփված։ Այս այն պատճառով էր, որ այսօրվան կերակուրները բոլորն եկած էին նոր խնամիների տներիցը. ում տունը որ այսօր նորափեսան շնորհավորեք էր գնացել, մի-մի իսնշա՝ յոթը տեսակ կերակրով ուղարկել էին նորահարսին բաժին, հետն էլ մի-մի գավ թերմուն[2], իսկ նորափեսեն յուր կողմից հրավիրել էր յուր աներոջ կողմից նոր խնամացածների ջահելներին՝ նորահարսի հետ պաս բռնելու։

[1] Տղա զավակ։ [2] Գինով և մեղրով կամ քաղցրով եփած ըմպելիք։

Աղջիկների պատճառով մեր սեղանակից պարոններն այսօր գինի չխմեցին, թերմունով միայն բավականացան։

— Ախչի՜, դե հաց էլա կե՜ր, ի՞նչ ես խպռնվել[1],— փսփսում էր Հերիքնազը Հեղնարի ականջումը,— սաղ օրը բերանդ նշխարքի կտոր չի մտել։

— Զոռ ու ցավ ուտեմ, հիմի էլ պտի զոռ անեն, թե Սմբատի կուռն ընկի՜, յալլի խաղա՜։

— Պտի խաղաս, կամ չպտի գայիր, կամ եկել ես՝ կարգը չպտի կոտրես, դու ըստեղ վիրի արտի ցորեն չես։

— Ըսկի միտս չէր, որ սրանց փեսախպերը Սմբատն ա, դու էլ լլկվեցիր, բան չասեցիր, թե չէ դաստահիվանդ[2] կտայի, տանը վեր կընկնեի։

— Իմ էլ միտս չէր։

— Գիտե՞ս, Հերիքնազ ջա՜ն, ինչ կա. ես ուզում եմ, որ Սմբատին էսօր մի տեսակ հասկացնեմ, որ ինձանից ձեռը լվանա. էս հո մարդ խաբել չի, էս աստված խաբել ա. մի մարդի չես սիրում ու նրան ումուտով ես անում, որ իր կնիկը պտի դառնաս. ուզում եմ յալլու մեջը կուռն ընկնեմ ու կամաց իրան ասեմ, որ իր կորածը մեզանում չկա։

— Վա՜յ, քոռանամ ես, գժվե՞լ ես, ի՞նչ ա, դու քո հոր անումը աշխարհքի միջին մի մատը մեղրի հետ կհավասարես, ու էդ տղի էլ գլուխը կկտրես։

— Ես ի՞նչ անեմ, խի՞ չի իր ոտն իր կարպետին մեկնում, իր չափը ճանաչում, իր երեսի ջրովը հեռանում. ի՞նչ անեմ, թե հերս բաշիֆյարքմա ա արել. երեխա վախտն էդպես բաներ հանաքուց շատ կխոսան. սաքի ինքը գիտի ո՞չ, որ ես ո՞րտեղ՝ ինքը ո՞րտեղ, իմ հերը, մեր հարրստությունը ո՞րտեղ՝ իր հերն ու իրանց անումը ո՞րտեղ. ինքը չի տեսնո՞ւմ, որ իմ հոր դռանն իրանից լավ նոքարներ[3] կան, չի տեսնո՞ւմ, որ ես ո՞նց եմ հետը վարվում, երբ որ մեր տունն ա գալիս. ի՞նչ անեմ, դու ես բերանս փակում, թե չէ ես վաղուց շեմքը շանց տված կըլնեի։

— Ա՜խ, Հեղնար, էլի դու երեխություններն սկսեցի՞ր. Սմբատի կոխած հողն ափսոս ա, որ մեր գեղի բոլոր տղերքի երեսին քսեն. դու մի հաց պտի ուտես, մինն էլ մատաղ տաս, որ աստված քեզ էդ բախտին տիրացրել ա. համա հիմի տեղը չի, լավն էն ա՝ սուս կենանք։ Իմ խնդիրքս մենակ էս ա, որ դու քեզ էսօր լավ պահես. հենց որ Սմբատը կգա, կուռդ կուզի բռնել յալլու խաղալու, հանգիստ ձեռդ իրան տո՜ւր ու խաղա՜։

[1] Լռել։ [2] Սուտ հիվանդ։ [3] Ծառաներ։

— Ասել ա, թե Արշակին իմ սրտիցս հանեմ, էլի՛։

— Չէ, մատաղ, չէ, ըտուր ժամանակը չի, դեռ էստեղ քեզ լավ պահի՛։

— Կմեռնիմ ու խոսքս կկատարեմ, քո սիրտդ Սմբատի վրա կտաքացնեմ,— մտքումն ասաց Հերիքնազը,— թեկուզ ինձ կյանք նստի։

— Հեղնարը հետս յալլի պտի խաղա՞, թե չէ,— մոտեցավ Սմբատը Հերիքնազին հացից հետո։

— Էրնե՛կ տամ՝ դու էդ կասկածները չունենաս, Սմբատ ջա՛ն, խի՞ չի խաղալ։

— Ա՛խ, Հերիքնա՛զ, դու իմացա՞ր, որ ճլորբու մեջն ինձ մորթեց, էլի դու նրա դիհը պահում ես, էլի ասում ես, թե ինձ սիրում ա։

— Թե որ սիրեր ոչ, ընենց համարձակ բարձր-բարձր, տեղն ու տեղը անումդ կասե՞ր։

— Տեսա՞ր ոչ՝ ի՛նչ ձենով ու սրտով էր ասում. ասենք՝ ուրիշները ոչինչ չհասկացան, ես հո՛ երեսի ռանգը տեսա, բարկությունից կապրտել էր։

— Ոչինչ, Սմբատ ջա՛ն, թե ինձ սիրում ես, իմ խաթեր չտեսնելու պտի դնես։

— Քեզ սիրում ե՞մ,— ասաց Սմբատն ու գլուխը կախ քցեց։

— Սո՛ւս, խոստմունքդ միտքդ բե՛ր,— աչքերն ոլորեց Հերիքնազն և ցուցամատը շարժեց Սմբատի վրա։

— Ա՛յ երջանիկ տղա,— ասաց խաչեղբայրը նորափեսին,— մեր Սմբատին տե՛ս, մի կուռը հարուստ նշանածն ա քցել, մեկել կուռը հրեշտակի պես քենուն ու յալլի թռչում։

ԺԳ

ՀԵՂՆԱՐՆ ՈՒ ՀԵՐԻՔՆԱԶԸ, ԿԱՄ ԳՈՂ՝ ՍԻՐՏԸ ԴՈՂ

Գյուղական կյանքի պատկեր նկարագրելու համար շատ պայմաններ են հարկավոր։ Այդ մարդկանցը ոչինչ աշխատություն չի պետք։ բավական է, եթե երկու-երեք տարի ապրելով որևէ գյուղում մարդ ծանոթանա նրանց վերունիստին, նրանց տարեկան գործողությունների հետ։ Այսքանով հետաքրքիր բանասերը կարող է յուր նպատակի մի մասին հասնել, մանավանդ եթե ինքը տեղացի է, բնիկ է, ոչինչ արգելքների չի հանդիպիլ։

Մեծ դժվարությունները՝ չասեմ անկարելիությունն ամեն մի քայլ

լափոխում շվարեցնում է գյուղացու մյուս կիսի հետ մոտիկ ծանոթանալ ուզողին։ Կանանց բնավորությունը ճիշտ պատկերացնելու համար պետք է կին ծնած լինել, կին սնած, կին մեծացած։

Պատճառները շատ պարզ են, հայ քաղաքացի կինը մեզ համար մի անմատչելի անձնավորություն է յուր ծածկված բնավորությամբն և փակված կյանքովը, ո՞ւր մնաց գյուղացի կինը, որի և այր մարդու մեջ մի չինական պարիսպ կա։

«Աղջիկը որ կա, անկտրել ձմերուկ է», ասում է առածը, իսկ ես կասեմ՝ այր մարդու համար գեղեցիկ սեռը ո՛չ միայն անկտրել ձմերուկ է,— նա մի երևակայական աշխարհի քնակիչ է։ Մենք թողունք ամուսիններին, որոնք բնական և աստվածային օրենքով պարտավորված են մինչև մահ անբաժան լինել։ Եթե մի փոքր խոր քրքրենք, մեր եզրակացությունը մինչև ամուսնական առագաստն էլ կթափանցի։ Շատ հետ ընկած գյուղերի մեջ կինն յուր մարդու համար քանի մի տարի նույն անկտրել ձմերուկն է։

Այսպիսի երևույթներն այժմ արդարև հազվագյուտ են, բայց երեքչորս տասնյակ տարիներ սրանից առաջ այնպիսի իրողություններ են կատարվել, այնպիսի գործողություններ են պատմվում ականատես ծերունիներից և պառավներից, որ մեզ միանգամայն անհավատալի է թվում։ Կինը մինչև որդի ծնելը իրավունք չի ունեցել յուր մարդու հետ խոսելու. անդրանիկ զավակի առաջին ճիչը պատռել է յուր մոր լեզվի կապանքը, և այդ մի կտոր շնչավորված միսն իրավունք է տվել յուր ծնողին սրտի ուրախությունն յուր լեզվով արտահայտելու յուր թանկագին կիսին՝ յուր սիրելի ամուսնուն, և այն՝ հեռի ամեն աչքերից, ամեն ներկայությունից։

Թողունք, որ տան արական սեռի անդամները մինչև մահը չեն լսած եղել յուրյանց հարկևոր հարսու աղջիկների ձայնը, չեն իմացել՝ ունի՞ն նոքա աստվածային պարգևներից մինը՝ խոսելու ընդունակությունը, պարզ ասել՝ համր են նոքա՞, թե խոսուն, թողունք այս ամենն և ասենք, որ այդ թշվառ արարածներն աստծու լույսիցն էլ երկար տարիներով զրկված են եղել, յոթը երկար տարիներ նրանց երեսից չի վեր կացել անթափանցիկ կարմիր մետաքսյա քողը, որ կրել են նրանք հարսնությյան առաջին օրը, արեգակի կենսատու լույսը չի լուսավորել նրանց հրաշագեղ դեմքը։

Օրըստօրե, դիցուք, թեթևացել է այդ անհավատալի, բայց իրոք ճշմարիտ սովորությունը, բայց կարելի չէ ասել, թե բոլորովին անհետացել է. նա դա, միայն ինչպես ասացի, թեթև չափով և ձևակերպված։

Նույն հարսներն են երեսը ծածկած՝ միայն բարակ քողով և ոչ այն-

քան երկար տարիներ, նույն չխոսկանությունն է, սակայն սկեսուրների, շափահաս տագրների և օտարականների դեմ, մի խոսքով նույն գերությունն է, որ ասել է, թե մեր կինը էլի նույն անկտրել ձմերուկն է։

Իրողությունն այսպես լինելուց հետո, խոսք չկա, որ մեծամեծ դժվարությունների և, ինչպես ասացի, անկարելիությունների պետք է հանդիպի աղջկանց և ջահել հարսների կյանքը ճշտապես նկարագրել ցանկացողը։

Մի բան միայն կարող է հեշտացնել սակավ մասնավորների համար այդ կետը։ Պետք է ծնած, մեծացած և մանկությունից փոքր-ինչ կրթված լինել գյուղի մեջ, որպեսզի մանկական սուր հիշողության մեջ տպավորվածը մարդ կարողանա ժամանակին արտահայտելու, կամ թե ազնիվ խարդախություն պետք է գործ դնել։

Հարկավոր է գրավել մի մերձավոր ազգական ժրագլուխ կնոջ համակրությունը, որոշյալ տոն օրերից մեկում ստիպել նրան՝ հրավիրել յուր մոտ գյուղի բոլոր ջահելներին, ազափ աղջիկներին և հարսներին, և դարան մտած՝ դիտել նրանց բոլոր շարժողությունները։

Եթե ընթերցողի ուշադրությունը գրավելու շնորհքին արժանացել է յուր խոսակիցը, ապա խնդրում է բարեհաճել մտնել յուր հետ մի այդպիսի հրավերքի ժամանակ, դիցուք, էլի մեծի պահոցը, փետրվարի 13-ին, տյառնընդառաջի նախատոնակ երեկոյին մի մութը հարկի տակ, ուր յուր քթին պետք է դիպչին յուղի, բոխի, բազկաթանի, ղավուրմի[1], և զանազան բռնվածքների ու թթուների աքաշներից[2] ու կարասներից բարձրացած անուշահոտ բուրմունքը։

Այո՛, ընթերցող, իմ քեռու աղջիկ սիրելի Նանոն արժանացրել է ինձ ու քեզ այս բարեբախտությանը։ Նա այդ օրը պատճառ ուներ իմ խնդիրը հարգելու. նրա տղեն այդ տարին էր պսակվել, նա յուր որդու դրնդեզն[3] էր կատարելու։

Նրանց կտերը նախապես պատրաստված էր դրնդեզը, որին մի խոտի վրան կարելի է կոչել։ Մի քանի փայտեր միմյանց դեմ տնկված են վեղարաձև և վրեն չոր խոտով ծածկած։

Մեր Նանոյի տղա Ազոն այդ երեկոյին Աշտարակու բոլոր նորափեսաների հետ եկեղեցումն է. այսօր ժամն էլ դուրսն են ասում։ Եկեղեցու բակումը մի ահագին դրնդեզ է շինած, որի շրջակայքը նորափեսայքը մի-մի մոմ բռնած՝ բոլորված են։ Ե. «Քրիստոս փառաց թագավորն» երգեցին, տերտերն առաջինը մոտեցավ դրնդեզին և վառեց. մոտեցան

1 Աղած միս։ 2 Փոքրիկ կարաս։ 3 Դրնդեզ՝ կարծեմ պետք է լինի տյառնընդառաջ բառի սղավազումն։

նորա հետ և բոլոր փեսաներն ու խոտը վառեցին։ Հուրը բորբոքվեց և ժամավորների ջերմեռանդությունը կրկնապատկվեց։

Ժամից հետո նորափեսայքը նույն մոմերը ձեռքին առանց հանգցնելու յուրյանց խաչեղբոր ու փեսեղբոր հետ եկան բարձրացան յուրյանց կտուրներն ու երեք ծունր կրկնելուց, ու իրանց է հայտնի, թե ի՞նչ մուրազ անելուց հետո, վառեցին յուրյանց դրնդեզները։

Նորահարսներին առաջուց չարսավավորված կանգնեցրել էին կտերը. դրնդեզը կպցնելու պես ամեն փեսա բռնեց յուր սիրելի հարսի կուռն և երեք անգամ վառված կրակի գլխովը պտույտ եկավ։ Այդ ֆառանֆակոխ չըլնելու համար է։

Մանր երեխայքն էլ, որոնք կտրները լցված, ատամները սրած՝ փոխինձ[1] ուտելու էին սպասում, նրանք էլ անվախ թռչկոտում էին բոցավառ կրակի գլխովը։

Մի հիանալի տեսարան էր ներկայացնում այդ երեկո մեր գյուղը մոտիկ հանդիսատեսին. երկինքը շառագունել է, լույսը մինչև հորիզոնն է խփել ու խառնվել երեկոյան վերջնալույսի հետ, իսկ այդ միևնույն բանը մի զարհուրելի պատկեր է հեռվից դիտող անծանոթին, այլապես չի կարելի երևակայել, թե ոչ մի ահագին հրդեհ՝ ամբողջ գյուղը բռնած. իհարկե այս երկյուղը մի քանի րոպե միայն կտևե։ Խոտը բռնկվեց ու իջավ առանց մեծ ծուխ պատճառելու։

Հրդեհը հանգչելուց հետո մեր Նանոն ցած տարավ նորահարսին և վեր բերեց տեփրի[2] մեջ փոխինձը քաղցրով շաղախած և գունդ-գունդ բաժանեց։

Այս փոխինձը, որ բոված կամ աղանձած ցորենի երկանքով աղացած ալյուր է, տարին երկու անգամ անխափան պետք է շաղախվի՝ սուրբ Սարգսի պահոց ուրբաթ երեկոյին և այս դրնդեզի օրը։ Այն օրն առանձնապես աղջիկների համար են շինում, գիշերը շաղախած թողնում, որ սուրբ Սարգինը գա, յուր ձիովը վրայովն անց կենա, իսկ այսօր դրնդեզի այցելուների համար է։

Նանոն վերջացրեց այս ծեսը, ձեռաց ընթրիք տվեց արական սեռի հյուրերին և ճանապարհ դրեց։

Ասպարեզը հիմա մեր սիրուններինն է։ Ուրեմն ականջներդ սրի՛ր ու աչքերդ չորս բաց արա՛, սիրելի՛ ընթերցող, դռան ճեղքը բավական է նպատակիդ հասնելու։

Լավ դիտի՛ր, մի՛ վախիլ, դրսից քեզ տեսնող չկա, ոչ ոքի մտքով

1 Բոված ցորենի ալյուրից քաղցր հեղուկով շաղախած խորիսխ։ 2 Տեփուր՝ բոլորակ մեծ ափսե է։

չի անցնում, թե հյուրասեր տանտիրուհին յուր սեռի դեմ այդպես անելի դավաճանություն կանի, վստահ եղիր, որ դու այդտեղ տեսնում ես ոչ միայն Աշտարակու բոլոր սիրունների միայն արտաքին գեղեցկությունը,— դու մասնակից ես լինում նույնպես և նոցա նվիրական գաղտնիքներին, նոցա սրտի մինչև խորքն ես թափանցում։ Մեր Նանոն երևելի քաղաքագետ է. նա այնպես հարմարեցրել, այնպես պարապացրել ու այնպիսի խոսքեր է ասել յուր հյուրերին, որ մեր ամոթխածներն անգիտությամբ ինձ ու քեզ իրանց խոստովանահայրն են շինել։ Բայց ոչ ես եմ մեղանչում նոցա խոստովանքը պատմելով և ոչ դու լսելով,— ոչ Նանոն և ոչ մեր սիրուններն այդ ուխտը մեզանից չեն առել։

Եթե Աշտարակու աղջիկների, չասենք բոլորը, գոնե մեծ մասն այստեղ են, ի՞նչ կարծիք, որ մեր մի ժամանակվան թոթովախոս անմեղության տիպար քնքուշիկներն, իսկ այսօրվան օրիորդության մեջ մտած Հեղնարն ու Հերիքնազն էլ այստեղ կլինին. նրանք ո՞ւմնից են պակաս, մանավանդ որ խեչանենց խեչանի տանիցն են և սրանցից մինն էլ նշանած է։ Նշանած աղջիկը պետք է այդպիսի տեղեր անպատճառ հրավիրվի, թեկուզ բարեկամ էլ չլինի։ Գյուղի մեջ ամենքը միմյանց ծանոթ են, շատերն էլ այգու կամ տան մոտիկ հարևան են։

Նանոյենց հացատունը լիքը ղժվժում են[1], պստի հարսների գլխի ոսկիներն ու ազատ աղջիկների վզերի շարքերն աչք են խտտղեցնում, բայց իհարկե այդ մեզ չի արգելում լավ դիտելու, ում ուզում ենք։ Նանոն այս երեկո իմ խնդրանոք մի-երկու ճրագուն մոմեր սովորականից ավելի պիտի բանացնի. մոմակալներ թեպետ ինքն երկուսից ավել չուներ, բայց չորս հատ էլ ուրիշներից փոխ ուզեց. տան չորս սյուներում խփած ճրագթաթների վերա էլ ձիթի ճրագներ է դրել. տունը շատ լուսավոր է։

Մենք թողնենք Հեղնարին ու Հերիքնազին երկու առանձին խմբակների մեջ կատակներ անեն, մտնենք մի ուրիշ ավելի խոհական խմբի մեջ, ուր ջահել հարսներն են ժողոված և կամաց-կամաց իրար հետ խոսում են։

Սրանց բերանները պինդ փակող ֆնքկալը հիմա կղակների տակն է ընկած, ապա թե ոչ յուրյանց ցածր խոսելու պատճառով մենք անձեռնհաս պետք է լինեինք լսելու։ Լավ նայի՛ր, ընթերցո՛ղ, սրանց քիթ ու բերանին, սրանց ծնոտներին, մենք այսպես հաջող դեպք էլ չենք ունենալ։ Եթե մինչև մեր վերջին օրն էլ սրանց հետ կյանք անցկացնենք, մի հարկի տակ ապրենք, կանացի գեղեցկության գլխավոր մասի ներքին

1 Խլրտում։

կեսը մենք չենք կարող տեսնել. ուրիշ ժամանակ մենք միայն գուցե բախտ կունենանք զմայլիլ սրանց կրակոտ աչքերի ու վառվռուն թշերի կիսի վրա։ Ճակատը, հոնքերը շղարշի տակ են ծածկված, իսկ քթի կիսից վայր այն անիծյալ ֆնթկալն է։ Երկու-երեք տարվան հարսների քնթկալը գոնե մի բավականին բարակ սպիտակ շղարշ է, որտեղից, թեպետ մեծ դժվարությամբ, սակայն և այնպես օդն անց է կենում, իսկ թշվառ նորահարսների քնթկալի վերա իբրև զարդ ավելացրած է և մի ուրիշ ասեղնագործ ծածկոց, որին չալ օշմաղ անունն են տալիս։

Տե՛ս, ուրեմն, ի՞նչ սիրուն գծագրություն, ի՞նչ փոքրիկ բերան, ի՞նչ բոլորակ ծնոտ, ի՞նչ հրեշտակային պայծառ դեմք. լավ նկատի՛ր, շատ աննշան բացառությամբ Աշտարակու կանացի սեռն ընդհանրապես գեղեցիկ է։ Այս ինձանից չեմ ասում, հայրենասիրական սնապարծություն չեմ անում.— մի հաստատված ճշմարտություն է այս, որ Երևանու նահանգումն Աշտարակու օղուշաղը[1] ամեն տեղերից սիրուն են։ Աշտարակից հետո նշանավոր են մի քանի ուրիշ գյուղեր՝ Քանաքեռ, Վաղարշապատ, Օշական և այլն։

Լսի՛ր, ուրեմն, մեր սիրունների դատողությունը մեր նախածանոթ Հեղնարի ու Հերիքնազի մասին։

— Ախչի՛, ընդուր են ասել՝ աստված ամեն բանով մարդի կորցնել չի, ամեն շնորհք էլ մի մարդի չի տալ, Հեղնարը որտե՞ղ, Հերիքնազը որտեղ։

— Ի՞նչ բանի համար ես ասում, Մաթան ջա՛ն։

— Քա՛ խի՞[2], բա ըսկի տեսնում չե՞ս, Հեղնարը ոչ մի սիրուն պատկեր ունի, ոչ մի օրինավոր խոսք ու զրից. հենց իմանաս մրղեզ[3] էծ ըլի, ունքերը բարակ, աչքերը չալ ու պստիկ-պստիկ, թերթևանունքները դեղին, պինչ ու բերանը մենծ, չանեն[4] երկար, շլինքը կարճ, դոշը նեքսև ընկած, մատները ցախի պես չոր-չոր, բոյը բարդու պես լողլող[5], ես ի՞նչ գիտեմ, ո՞ր մինն ասեմ. մի կարմիր թշեր էլա չունի՝ ասսու տվածից, որ մարդը պաչի ուրախանա։

— Հողեմ գլուխդ, ախչի՛, դու ջլիս[6] խեղճին հողի հետ հավասարեցրիր, Հեղնարն իմ աչքումն էդքան գեշ չի։

— Լա՛վ, թող մի քիչ էլ քո ասածն ըլի. համա նխնխան[7] բնությունին ի՞նչ կասես, մեծասրտությունի՞ն ինչ կասես, տրաքվիլ, կտոր-կտոր ըլիլ, քարափներիցը վեր ընկնելուն[8] ի՞նչ խոսք ունիս, որ քինթը կես գազ վերև ա բռնում, ոչովի հետ արժանի չի տեսնում խոսելու, բերան

1 Ընտանիք, գերդաստան. գլխավորապես կանանց համար է ասվում։ 2 Ընչի՞։ 3 Շիկագույն։ 4 Ծնոտ։ 5 Անճոռնի բարձրացած։ 6 Թոլորովին։ 7 Ոխակալ։ 8 Գոռոզանալ։

էլ որ բաց արեց, մի լաղաբ[1] էլ չունի, որ մարդի բան հասկացնի։ Խե՜ղճ Սմբատ, ափսոս չի՞, էնպես տղի կնիկը պտի դառնա սա։

— Ախչի՛, դու բախտն ասա՛, բա՛խտը. խոսքը բա՛խտն ա, էդ որ ըտենց ամեն բանով փնովում ես[2] հա՛, տեսնում չե՞մ, որ ինձ ու քեզ համար, կամ իմ ու քո քվեր համար ըտենց գլուխ պատռողներ էլել են, յա կա՞ն։

— Տո՛, քեզ մատաղ, էդ Խեչանի դովլաթն ա, նրա անհատնում հարստությունն ա, որ էգուց Սմբատին պտի մնա, ըտուր համար են իրար գլուխ պատռում, թե չէ Հեղնարի ընչի՞ն են կարոտ։

— Ը՛հ, կարեմ ես էդ ազափ տղեքանց աչքերը, մարդի կնիկն էլ պտի կնիկ ըլի. թքա՛ծ էն փողի ու հարստության վրա, որ Հեղնարի պես աղջիկը պտի բերի. ես որ տղա ըլնեի սաղ Աշտարակն էլ որ վրեն տային, Հեղնարին չէի առնիլ։ Ջրատա՜ր Սմբատ, ո՞նց պտի համբերի. էն հրեշտակի պես տղի երեսը վեր կբերի, դրա լեզվին ո՞վ կդիմանա։

— Բաս Հերիքնազը ո՞նց ա դիմանում։

— Չէ՛, ախչի՛, ես Հերիքնազին հարցրել եմ. ասում ա՝ Հեղնարի հենց չըրթփրթոցն[3] ա, թե չէ սիրտը շատ բարի ա. օրթում-կրակն էր ընկնում Հերիքնազը, որ էսքան տարեն աղջիկ են. մի տան մենծացել են, մի տեղում քնել են, դեռ մի օր Հեղնարիցը չի լսել, թե քամին դպա քեզ ըլի. ղորթ ա, ասում ա, մի քիչ իրա վրա մենծ կարծիք ունի, համա էդ էլ չի ըլնիլ, որ չունենա, ինքը հարստի աղջիկ ա, իր հոր ունեցածչունեցածի տերը։ Էս օրեն-օրս նշանած ա, ասում ա, համա էլի ուզողները դուռը կոտրատում են. դրա սիրտը ես ճանաչում եմ. մարդի գնա թե չէ, ամեն բան կմոռանա, էդ քամիները գլխիցը դուս կգան։

— Բալամ ջա՛ն, էդ Հերիքնազի բարեսրտությունն ա ասում. դու ի՞նչ գիտես, էդ ասսու քաղցր խնամքն ա, որ Խեչանի տանը էդ աղջիկը բհամ ա եկել[4]. թե որ Հերիքնազը չըլներ, Հեղնարը կապվիլ չէր. արմացքի բան ա, էսքան հո բամբասում ենք Հեղնարին, համա տե՛ս, թե մի օր Հերիքնազի խոսքիցը դուս գալիս ա՞. մենք դոնեդուռը հարևան ենք, ամեն օր ջրի գնալիս, յա քուչեն սրբելիս իրար տեսնում ենք. քանի Հերիքնազը դուս չի եկել, Հեղնարը հետներս ձեն էլ չի տալիս, բարի լիս, բարի առավոտ էլ չի անում, համա հենց Հերիքնազը երևաց թե չէ, մեղր ու կարագ ա դառնում, ասում, լսում, ծիծաղում։

— Ախչի՛, ասում են էդ ծակծկոտվելու Հեղնարը Սմբատին չի սիրում, Շունհետածողենց Արշակի հետ ա իրանց դրիջակովը[5] սիլի,

1 Վայելչախոսություն։ 2 Գարեավել։ 3 Մենծախոսություն։ 4 Առաջ է եկել։ 5 Երկու հարևան տների պատի մեջ մի փոքրիկ ծակ։

բիլի[1] անում. ասում են, սաքի էն աներես Արշակն էլ գնում տղեքանց միջին պարծենում ա, թե Հեղնարին ինքը պտի առնի։

— Չէ՛, սուտ կըլնի, հաչացող թազին[2] հորս չի կարող անիլ, հորս անողը տաղ կանի, տակնահան իր բանը կշինի. Արշակը թե որ առնելու միտք ունենա, մենծ-մենծ բրթբրթալ չի[3]։

— Սաքի Արշակը հո չի՞ մենակ դրա ուզողը, օրը հարիր խնամախոս ա գալիս. զարթնե[4] մեր գեղիցը, ասում են սաղ մհալը գրան ուզում են, ընչանք մենծավորներն էլ են գլուխ բարձրացրել։

— Է՜հ, քանի՞ ասեք, էն ա ամենքն էլ հացահաչ են տալիս, էլի։

— Համա ի՞նչ կանես, որ Սմբատն էս բանումը բախտավոր ա. ասում են՝ Խեչանն ըսկի գլուխը տակը չի տալիս, ամենին էլ դուռն ա շանց տալիս։

— Փառքիդ մեռնիմ, աստված, հացն ընչե՞ր չի անում. ո՞վ էր լսած, որ մենծավորը գեղրցու աղջիկ ուզի։

— Ախչի՛, ես մի բան լսեցի, ասում են՝ Սմբատը Հերիքնազին ավելի ա սիրում Հեղնարիցը։

— Ամա՜ն, ա՛յ կնանիք, ինչ բան ասեք՝ դուք կհնարեք, ձեր լեզվի տակիցն ո՞վ կպրծնի։ Ի՞նչ կա, որ քենուն սիրի ու նրա հետ խոսի, ժամանակ անցկացնի. քենին ո՞րն ա, քիրը ո՞րը, բաս հո գնալ չե՞ն աներեսի պես գլուխը դնել նշանածի ծնկանն ու նստել. յա թե չէ, էդ թավուր[5] երեսը պատռած փեսեն ի՞նչ տուն թողալու յա։

— Ախչի՛, թե մեռոնը կսիրե՛ք, դենը մտիկ տվե՛ք. փա՛ռք քեզ, աստված. մի Հերիքնազի սիրունությունը տեսեք, ո՞նց ա ծիծաղալուս պռոշները ետ բացվում։ Ես որ ազափ տղա ըլեի էս մառանումը տափ կացած՝ էս սհաթը դուս կպրծնեի, կկպչեի էն սիպտակ շարմաղ պռոշներիցն, էնքան կծծեի, որ արյունը դուս կգար[6]։

— Ի՞նչ շունն ես, ըտուր համար են պռոշներդ հաստացել ու կարմրել, մարդդ ամեն քշեր, ասա՛ էդ օյինն ա բերում գլուխդ, էլի՛։

— Քո գլխի տրաքոցը, քո փեշին ծունը դնելու ա, ո՞վ գիտա քո բողազովը կուլ չի գնալ։

— Ա՛յ անամոթներ, ինչ լավ, որ ազափ աղջկեքը մեզանից հեռու են, չեն լսում։

— Հանաքը դենը կենա, Աննման ջա՛ն, Հերիքնազի պես սիրուն աղջիկ չկա մեր գեղումը. մտիկ տո՛ւր նրա պայծառ երեսին, սպիտակ

1 Քաղցրախոսություն։ 2 Բարակ, որսկան շուն։ 3 Բարձրախոսություն անել։ 4 Բացի։ 5 Այդպես։ 6 Թող ների մեզ մեր համեստ խորհրդատուն, մենք ավելի կարևոր գործ ունինք կատարելու, որքան և ախորժելի լիներ. յուր առաջարկությունը, մենք մեր դարանիցը դուրս չէինք կարող դալ։

ու կարմիր թշերին, կասես, թուշուշուրիկ լող դեղձն ըլի, աչքերը հենց իմանաս մի-մին փիյալա[1] են, ճրագի պես վառվում են, աչքերի սև-սև պտուղները նետ ու անեղի պես մտիկ տվող սրտի մեջ են թաղվում. թամաշ արա[2] պինչը, բերանը, պտուղները, կզակը, ո՞նց մին-մնի մոտ սազում են, հենց իմանաս մի նաշխած պատկեր ըլի, շլինքը տե՛ս, ո՞նց ա բռնում, կասես էն սպիտակ երկարաշլինք ձկնակուլի զուշն[3] ըլի, որ ձմեռները մեր ձորումն երևում ա. դո՛շը, դոշը մտիկ տո՛ւր, ջուխտակ շամամնե՞ր են մին-մնի մոտ դրած, թե գարնան գետնասունկն, որ հողը բարձրացրել, ուզում են գլուխները հանեն ու ուտողի բերնումն ընչանք մահը համը թողան։ Վա՛յ, կրեմ ձեր գլուխն, ազատ տղե՛ք, աչքերիդ պիպիկը[4] տրաքի, թե որ սրան տեսնիք ոչ։ Ա՛խ, աստված փլավն ո՞ւմն ա տալիս, իշտահն ո՞ւմ. ընչի՞ ես տղա չեմ, էն էլ՝ ազատ տղա։

— Ա՛յ քիր, էդ սիրունությունը թո՛ղ, էսօր կա՝ էգուց ոչ. դու Հերիքնազի բնությունն ասա՛, էն քաղցր, անուշ լեզուն, էն շողոմքոր[5] խոսքերն ասա՛, էն բարի սիրտն ասա՛, որ մեր ազատ աղջկերանց մեջ ոչ մնումը չես գտնիլ։ Թե սուտ եմ խոսում, աչքս հանեցե՛ք, տեսե՛ք՝ ո՞նց ա գլխին հավաքել ու էնքան աղջիկներին իրանով արել։ Ես վարսս կկտրեմ, թե որ մի պետռ խոսք դրա բերանիցը դուս ըլի գալիս։ Անկաջ դրե՛ք, առանց ջանի ոչովի հետ չի խոսում. լսեցե՛ք, պատմում ա, թե հերու ծաղկազարդին ծաղկամորը ո՛նց են գովել։

— Բաս չէ՞ որ էս մի թորուն[6] աղջկերանց պես երեսի աբուրը[7] վեր եկած կըլնի, անկաջ դրե՛ք, ազատ տղեքանց վրա են խոսում։ Փչանաս դու, Նոյեմզա՛ր, լսեցի՞ք, ախչի՛, ի՞նչ ասեց. ես կուզեի, ասում ա, էս սհաթս ժամումը Շաժումենց Սոլոյի հետ գլուխ-գլխի տված, պսակվում ըլեի, թեկուզ մի շաբթից ետը մեռնեի էլ, սրտումս մի մսխալի չափ դարդ չէր մնալ։ Դե՛ հիմի ձեզ եմ հարցնում, Հերիքնազն իր բերանիցն էդպես խոսք բաց կթողա՞։

— Տո՛, Հերիքնազը որ կա, հոգի ա, հոգի՛։

— Տնարարությունին էլ խոսք չկա, մորը չի թողում, որ տեղիցը ժամ գա. լիսադեմին ամենքիցը շուտ ոտի վրա հազիր ա, տարթը, աթարը[8] կբերի, թունդրի շրթին կկիտի, ջուրը կբերի պղնձները կլցնի, նոր մորն ու Հեղնարին ձեն կտա. մերը վեր կկենա, թունդիրը կրակ կքցի. շատ անգամ կովն էլ ինքն ա կթում։

— Դե՝ասա՛ Հեղնարը սաղ օրը պարապ-սարապ անց ա կացնում, էլի՛։

1 Գավաթ։ 2 Նայիր։ 3 Թուշում։ 4 Բիբ։ 5 Հաճոյախոս։ 6 Խումբ։ 7 Գատկատանք։ 8 Քակոր։

— Պտի ասած, որ Հեղնարն էլ չի սիրում պարապ քաշ գալը, հա՝ մա Հերիքնազն ո՞ւմ ա բան հասցնում։

— Ախչի՛, բաս Հերիքնազի հընկերասիրությունը չե՞ս ասում, նրա հետ մի անգամ խոսողը նրա արևովն օրթում կուտի, օխտը քիր ու ախպոր համ ա տալիս էդ հերը լիս կտրածի աղջիկը։

— Թող Ովիկենց Սմբատի մխիթարանքն էլ էդ ըլի, որ դրա պես քենի ունի, ինչ որ նշանածը համ չտա, նա քենուցը կհանի։

— Համա ես որ Սմբատի տեղակ ըլեի, ոտով-գլխով հենց քենուս իրան կառնեի ու Հեղնարին քենի կշինեի։

— Ջէ՛, բալամ, Սմբատն էդ տղեն չի, նա իր հոր խոսքը գետինը չի քցիլ։

— Տո՛, աչքիս լի՛սը, ընչի՞ կքցի, Սմբատը չի, իր օխտը պապն էլ էդ բախտավորությունին չէին ջահիլ[1], չորս ոտով գարու հորն ա ընկել, էդքան հաց ու դուլաթ կըլնի՞, որ մուֆտա[2] իր ձեռը պտի գա. ի՞նչ անենք, թե նշանածը մի քիչ գեշ ա, յա իր ասածի ա, ես կասեմ էգուցէլօր էդ բնությունները կթողա։

— Հոգուդ մեղք ես անում, թեկուզ որ խեչանն օրվան հացին մուրացկան էլ ըլեր, Սմբատը նրա աղջկանը կառներ, ընդուր որ իր հերը բաշիֆյարթմա ա արել։

— Բաս ասա՝ մարդը ոտով-գլխով բախտավոր ա. համ լավ կնիկ, համ բոլ հաց. հենց դրա համար ա պսած. որտեղ հաց՝ ընտեղ կաց։

— Հերիք ա, բալա՛մ, Նանոն մոտ ա գալիս, խոսքը փոխենք, աստված Հերիքնազին էլ մի ջիվան[3] տղի ռաստ բերի, էդ հալալ կաթնակերը մի շեն օջախ ընկնի։

— Քա, խիզան, ի՞նչ եք բուլուլիճ[4] արել ու իրար յախից[5] ձավար հավաքում[6],— տուն մտավ Նանոն,— մի քիչ էլ ջանգյուլում ու խաղեր ասացեք, ուրախացեք, ի՞նչ անենք, թե մենք պաս ա. ձեզ ընդուր համար չեմ հավաքել, որ փոխինձս ուտեք ու քչփչաք. ո՞ւմնից եք ամանչում, ազատ տղեքը հո մեր մառանումը տափ չեն կացել ու դռան ճեղքիցը ձեզ վրա մտիկ տալիս։

Մեր Նանոն դեպի դուռը նայեց, ինձ աչքով արեց՝ ու ծիծաղեց։

Երկար կլիներ պատմել, թե ի՞նչ քաղցր երգեր սկսեցին մեր սիրունները, ի՞նչ ներդաշնակ ձայներ ունեին, ի՞նչպես պար բռնեցին ու երգելով պարեցին, ի՞նչ անարգական ոտանավորներ էին երգում դեպի տղայքը և ի՞նչպես յուրյանց մեջ ուրախանում էին, որ ոչ մի ազատ

1 Հանդիպել։ 2 Զրի։ 3 Նազելի։ 4 Թոլորակ։ 5 Օձիքից։ 6 Միմյանց բամբասել։

տղա իրանց լսող չկա, ապա թե ոչ յուրյանց լեզուն բունը կմտներ ու տղեքանց ասածներին կամաչեին պատասխանել։

— Ա՛յ ջահելներ, մեր տունը գող ա մտել, մեր մառանից մի ջահել, սիրուն, ազատ տղի ձեն եմ լսում. եկե՛ք մի ճրագ վերցնենք, տոն մըտնենք, տեսնենք հո ղորթ ձեր բուսունը պահող չի՞ էլել ըստեղ,— ասաց Նանոն ու ճրագը վերցրեց, դեպի մառանի դուռը եկավ։

Հարս ու աղջիկներից ավելի ես սիրթնեցա. ցնդե՞լ է, մտածեցի, այս կինը, ուզում է ինձ էլ, յուր պարկեշտ հյուրերին էլ խայտառակել։ Բերանս հուպ տվի, որ շունչս դուրս չգա ու ոտքիս բթերի վրա անց կացա աքաշների կողմը, մի անկյուն էի պտռտում մտնելու, այն էլ իմ տարաբախտությունից չկար։

Անպիտան Նանոն դուռն անգամ բռնեց և ձևացրեց, իբր թե բանում է։ Սակայն, ի՞նչպես ազատ շնչեցի ես, երբ քիթը բարձրացնելով ծաղրեց ինձ և դարձավ դեպի ինձանից ավելի գունատված ու շփոթված սիրունները։— Հի՞, հի՞, հի՞,— հեգնեց նա,— չեք ամանչո՞ւմ, որ ավատում եք, երևում ա դուք իմ ըստեղ չեղած ժամանակը ազատի տղեքանց սրտին դուր եկող խոսքեր եք ասել, որ հիմի ըտենց լերդապատառ էլաք. ընտուր են ասել, գող՝ սիրտը դող։

— Զո՛ռ քեզ, Նանո՛,— ասացի մտքումս,— չո՛ռ, քո ասածն ավելի ինձ վերա հարմարեց, ես կես միս եղա այստեղ։

ԺԴ

ՇՈՐՇՈՓ Ա ԴԻՊԵԼ, ԷՆ ԷԼ ԲԵՀԵՂԶԵԲՈՒՂԻ ՇՐՐՇՈՓ

— Զէ՛, ես էլ չեմ կարող համբերել, էս իշի նահատակություն ա, ես սաղ Աշտարակու միջին խոսելու առարկա եմ դառել, ո՛ր քուչովն անց եմ կենում, իմ անումն եմ լսում, մարդիկն էլ ինձ խեղճ են գալիս. ես ո՞նց ընչանք օրս տարել եմ. աստված մի՛ արասցե, որ էս բանը դրուստ դուս գա, թե չէ ես առաջ նրան կսպանեմ, հետո ինձ։ Հանաք մասխարություն չի՛, դանակն ոսկորին որ հասավ, հորս խոսքն էլ բանատեղ չեմ քցիլ, ես էլ երեխա չեմ, մարդ պտի մի քիչ էլ առ ու թասիբ[1] ունենա։ Ամեն կողմից լսում եմ,— հացի համար ա խեղդված տազ անում[2], թե չէ ընչանք օրս ո՞նց չտեսավ, հո Արշակը սուտ չի ասում. էդ ընչի՞ցն ա, որ օրը մթնում ա թե չէ, մտնում ա անորանց տունը՝ ընչանք կեսքշեր դուս չի գալիս ու մի հետ էլա վրա չհասավ։ Ի՞նչ։—

1 Գատիվ։ 2 Լռում։

Ո՞նց թե հացի համար, ո՞նց թե խեչանի դոլվաթին եմ խեղդված, ո՞նց թե վրա հասա ու տազ արի։ էն էլ ո՞վ. ե՞ս, ես ուրիշի դատած փոզի վրա աչք ունենամ, մահն ավելի լավ չի՞։— Զէ՛, չէ՛ շատ սխալվում են ինձ վրա խոսողները, ես շատ ուրախ կըլնեի, թե որ խեչանը վերջի աղքատը դառնար, մի կտոր հացի կարոտ մնար ու ես օրական մի քանի սև փող իմ ճակատի դառը քրտնքով աշխատեի, տուն բերեի ու իրան էլ պահեի, իր աղջկանն էլ։ Ա՛խ, երանի չէ՞ր, աստված խորհուրդս կատարեր, ես խալխին շանց տայի, որ ես հացահաչ տվողների ոչ մեկի հընկերը չեմ, աշխարհքին հայտնի անեի, որ Սմբատն իր հոր խոսքը իր գլխիցը հազար փառքով շատ կպատվի, իր հորը սևերես չի թողալ։ էս շատ լավ, էն թուք ու նախատինքն ի՞նչ անեմ, որ մի մենծախոսի մինը, որ ոչ կոնումը ուժ ունի, ոչ գլխումը խելք, ամեն տեղ նստում ա ու իմ նշանածի վրա խոսում, ամենքի մոտ պարծենում ա, թե իմ նշանածն ինձանից շատ իրան ա սիրում, թե ինքը դրիչակի ծակովն ամեն քշեր նրա հետ մասլահաթներ[1] ա անում... Օ՛, օ՛, օ՛, գլուխս պտտվում ա, ես էս թուք ու մուրը կուլ չեմ կարող տալ, արինն աչքերս կոխել ա, մի-մին բռունց ա՝ նրանց ջանը, հենց էս քշեր բանը քութահ կանեմ[2]. ե՞ս... ե՞ս... ե՞ս...— էլ չկարաց շարունակել Սմբատը, կանգնեց խեչանենց քուչումն ու գլուխը մի պատի դեմ տվուց, երեխի նման լաց եղավ։

Նրա բախտիցն երեկո էր, ամեն մարդ յուր հարկի տակն էր մտել, փողոցները դատարկ էին, ոչ ոք չնկատեց նրան։ Մի-երկու տեղ նշանավոր անկյուններում յափունջիներում փաթաթված քանի մի ջահելներ միայն դունչ-դնչի տված՝ շատ կամաց փսփսում էին ու սրա նրա աղջկա վերա դատողություն տալիս. սրանք էլ այդպես աննշան բաների համար չէին պարապած՝ սրանք հեշտությունով յուրյանց սիրելի անկյունը չէին թողնիլ։

Գլուխը կրկին բարձրացրեց մեր Սմբատը, աչքերը սրբեց, մի քանի քայլ էլ արեց և խեչանենց դռան առաջին կանգնեց։

— Կամ էս իրիկուն, կամ ոչ մի ժամանա՛կ,— մտածեց նա.— ի՞նչ լավ, որ դուռը կողպած ա, թե չէ ներս մտնելուս կիմանային. պատովը կբարձրանամ, տեսնենք մի բան շինում ե՞մ, թե ոչ։

Սմբատը մոտեցավ պատին ու ոտքը պատի խոռոչների մեկի մեջ դրեց։

— Զէ՛, էս էլ մի մարդություն չի, դողնովի ուրիշի տունը մտնել, խալիսի սրոն[3] իմանալ, լավն էն ա՝ էսօր էլ թողամ։

Նա ոտքը ցած դրեց ու ետ դարձավ։

1 Զրույց։ 2 Կվերջանա։ 3 Գազանիք։

— Է՜հ, ի՞նչ եմ ասում, սրանից էլ հարմար օ՞ր. տարին երեք անգամ չի ըլնիլ, որ իմ աներս էս վախտ տուն եկած չըլնի. հազիր իմ բախտիցը հերս նրան իրիկնահացի պահեց, հենց իմանաս աստված աներոջս տուն տվեց[1], որ ինձ ղրկեց իրանց տունը, որ երեխեքը մենակ չմնան։

— Ա՜խ, երանի թե մենք իրար ռաստ եկած[2] չըլնեինք ու ես հիմի էս ցավերիցն ազատ կըլնեի,— շարունակեց Սմբատը,— կամ թե չէ էնպես բան ըլներ, որ ընչանք պսակվելու օրս սրանց դռնովը ներս չմըտնեի ու էն օրը քոռեքոռ[3] գայի, Հեղնարի կուռը բռնեի, աչքերս խուփ պսակ գնայի ու հորս ասեի՝ իմ մեղքը քու շլինքը, խեր ու շառը քեզ.— ա՜խ, ի՜նչ լավ բան կըլներ... Է՜հ, ի՞նչ եմ գլխիցս դուս տալիս, ես ո՞նց կարայի Հերիքնազին մի օր չտեսնել, էն իմ ազիզ քենուն, ես նրա հոգուն մատաղ գնամ։ Օ՜հ, էրնե՞կ էն տղին, որ մի օր Հերիքնազի կռնիցը բռնած՝ մի դարդակ շապկով դուս պտի քաշի էն հրեշտակին. ես ուրախությունով խեչանի հարստությունն էլ Հեղնարի վրա կտայի, թե որ հնարք ըլեր նշանածներս փոխելու։ Վա՜յ ինձ, վա՜յ իմ հոգուն, փշվի ինձ պես փեսեն, որ քենու վրա աչք ունենա. էն էլ Հերիքնազի պես քենու։ Համա ի՞նչ անեմ, որ չի ըլնում, ես ընչո՞վ մեղավոր եմ, որ փլավը տանը թողած՝ ոսպախաշուն են դրել առաջս, թե կեր. որ բողազովս կուլ չի գնո՞ւմ. ես ի՞նչ անեմ, որ սիրում եմ. ո՞վ կըլնի էն մարդը, որ Հերիքնազին տեսնի ու չսիրի։ Հա՜, շատ լավ եմ հասկանում, որ էն հրեշտակն էլ ինձ ա սիրում, համա սրտումը պահում ա, նա էլ ինձ պես խեղդված ա, նա էլ չի ուզիլ, որ իր քեռու խոսքը գետինն ընկնի։ Չէ՜, Հերիքնազի սիրտը բարի ա, բարի՜, նա ինձ պես անպիտան չի, որ եփած կերակրի վրա սառը ջուր ածի. նա կմեռնի ու իր քեռու աղջկա ճամփին քար չի քցիլ։ Համա, աստված ջա՜ն, յարաբ Հերիքնազն էլ Շունհետածողենց թոռի չավ արած[4] խոսքերը լսե՞լ ա. յարաբ՝ թե որ դրուստ ա, ինչ որ ասում են, Հերիքնազը խաբար չի՞, բաս նա մի օր վրա չհասա՞վ։

— Դե՜հ, էլ ետացնիլ չի՜ պետք, աներս չգա հասնի,— վճռեց Սմբատը վերջապես և պատը վեր ելավ։

Հանդարտ քայլերով դիմեց Սմբատը դեպի երդիկը, ներս նայեց և գտավ ճրագը հանգցրած։ Պառկեց նա երդիկի մոտ, ականջը ներս քաշ արեց և լսողությունը լարեց։ Տունը լռություն էր։

— Ամո՜թ ինձ,— մտածեց Սմբատը,— խեղճերը ճրագն անցրել, հանգիստ իրանց համար քնած են, իմ մտքովս ի՞նչ չարություններն են

1 Ներշնչեց։ 2 Հանդիպած։ 3 Կույրզկուրայն։ 4 Հրատարակած։

անցկենում, էլոզլուի[1] ասած խոսքերն ես չվանի եմ դրել[2] ու խալխի մեջքն ընկնում։

Նույն զգուշությամբ վեր կացավ պառկած տեղիցն և կամեցավ վերադառնալ։ Երկու-երեք քայլ հազիվ էր արել նա, որ ոտքերը դողացին ու տեղնուտեղը ծնկները ծալվեցան, կարծես թե մխվեցավ մնաց։ Սմբատի ականջը փսփսոցի ձայն ընկավ. մի շշնջյուն էր լսում նա և չէր իմանում՝ ո՞ր կողմից, բայց երևում էր, թե շատ մոտիկից, խոսքերը պարզ հասկացվում էին։ Գիշերվան թանձր ամպոտ մթությունն էր միայն առարկան աչքից փախցնում։ Մի-երկու ոտք առաջ գնաց Սմբատն ու ականջը սրեց։

— Չէ, այս կողմից չի գալիս, ձայնը նվազեց։ Դեպի աջ դարձավ՝ էլի ոչինչ չկա. դեպի ձախ՝ նույնպես։

— Է՜հ, միտքս պղտորեց, էս վախտ ո՞ւմ ցավն ա կտրել կտրնեին քաշ գալ, զուր հոգուս մեղք եմ անում։

Սմբատը հանկարծ թափահարվեց, անձը փշաքաղվեց, նա կանգնեց՝ փնթփնթաց.— ի՞նչ, էս պատի տակին ըլնի՞ն... չէ՜, էդպես բան չի կարող պատահել. ինձ ասեցին, որ դրիջակի ծակովն են սիրահարություն անում, կտերն ի՞նչ բան ունեն։— Փոքր էլի մտածեց.— որ իրար ավելի մոտկանա՞ն... չէ՜, չէ՜, հիմար-հիմար բաներ են գլխովս անցկենում։

Մտածում էր Սմբատն ու մեքենաբար ոտքերը դեպի Խեչանենց ու Շունհետածողենց կտեր միջի պատը փոխում։ Երկու հարևանների կտուրը այդ ցածր պատն էր բաժանում։

Էլի կանգ առավ Սմբատը. այժմ երևակայություն չէր, նա պարզ քշփշյունը լսեց. նա այժմ մթան մեջ պատի այս և այն կողմից երկու գլուխ է տեսնում։ Շունհետածողենց կողմի մարդը պատը բարձրացավ, այս կողմն իջավ։ Սմբատը լսեց համբույրի ձայն։

Չգիտեմ՝ գիտմա՞մբ Սմբատը նստավ տեղնուտեղը, թե ոտքերն արգելեցին առաջ գնալ, բայց նա լսեց հետագա խոսակցությունը։

— Անջա՜խ մի անջա՜խ[3] մենք կարողացանք էս բաց երկնքի տակին իրար տեսնել, անջախ մի տարուց ետն իմ կռներս քո միջքովդ փաթաթեցի. մեռանք էն անտեր դրիջակի ծակով քուֆթի[4] քարի ու պղնձի որքերի[5] վրա նիլնելով ու ցած գալով, մի հալալ պռոշտի էլա չկարողացանք անել։

— Կամաց խոսի՜, ոչով չլսի։

— Է՜հ, ի՞նչ ես ասում, Հեղնար ջա՜ն, էս վախտ ո՞վ կգա ըստեղ.

1 Օտարների։ 2 Հավատացել եմ։ 3 Հազիվհազ։ 4 Մսով կերակուր է, որ քարի վրա թխում են։ 5 Կաթսայի քամակի կողմը։

քո անխելք նշանածը մեր բախտին, ասում ես, իրիկունս հորդ խաղեր իրանց տանն ա մնացել, չի եկել։ Հերիքնազն էլ շորերը հանել թեք ա ընկել, հորաքիրդ էլ ճրագն անցրել ա ու անշորահան ըլիլ՝ գլուխը պատին տվել խոմփացնում, որ հերդ գալուս գնա, դուռը բաց անի, մենք հիմի ըստեղ ոնց որ մեր տանն ենք, վախենալու ի՞նչ ունինք։

— Հիմի ինձ ընչի՞ զոռ արիր, կտուրը կանչեցիր, մին չէ՞ր, դրիչակի ծակով իրար հետ խոսում էինք։

— Չէ՛, Հեղնար ջա՛ն, պտի օրինավոր խոսանք, էգուց-էլօր մենք ձեր տունը խնամախոս ենք ղրկելու. հերդ որ չտա, ի՞նչ պտի անես դու. ասում ես՝ էս աշունք ձեր հարսանիքն ա, գնալու ե՞ս, թե ոչ։

— Ո՞նց չգնամ, հորս խոսքիցը ո՞նց դուս գամ. լավ էլ գիտեմ, որ Սմբատն իմ կիսին էլ չի արժան, ոչ նրա հերն ա իմ հոր հընկերը, ոչ նրանց տուն ու տեղը մերին կհասնի։ Համա հորս բնությունը լավ գիտեմ. մի անգամ որ խոսքը տվեց, պրծավ, գլուխն ետ կդնի ու իր ասածը կանի, նա Սմբատին աչքի լսի պես սիրում ա, աշխարհքի հետ նրան չի փոխիլ. էլ ես ի՞նչ կհամարձակվիմ պոռշ պոռշիս տալ։

— Դու պարզն իրան ասա՛, որ սրտով ինձ ես սիրում, դու Սմբատին կնիկ չես կարող դառնալ. դու կմեռնիս, թե որ քեզ ինձ չտան։

— Մին, որ ես հորս երես չեմ ըլիլ, մեկ էլ՝ որ թեկուզ ասեմ՝ ի՞նչ դուս կգա, զուր իմ տեղը կթեթևացնեմ, մի մսխալի չափ հորս չեմ կարող կոտրիլ, իր կյանքումն էլ հետս չի խոսալ։

— Թե որ հերդ Սմբատին շատ սիրում ա, թող Հերիքնազին իրան տա, նա էլ օտար չի, իր քվեր աղջիկն ա։

— Ա՜խ, ես Հերիքնազի ջանին մեռնե՛մ. նա ինձ համար մորից էլ, քվորից էլ շատ լավ ա, նա սաղ մհալի մեջ Սմբատից ավելի ոչ մի տղի չի հավանում, նա ո՞նց կթողա, որ ես քեզ վրա միտք ունենամ։

— Թե որ էդքան հավանում ա, խի՞ չի ինքն առնում։

— Շատ էլ որ մտքումն ունենա, նա իմ խաթեր գլուխը կսպանի ու էդ չի անիլ։

— Ասում են՝ նշանածդ էլ Հերիքնազին քեզանից ավելի ա սիրում։

— Նշանածս մեղավոր չի, ես եմ փիսը[1], քանի քեզ հետ տեսնվել եմ, էն օրվանից դեսը ես նրա երեսին մի քաղցր աչք չեմ քցել. ախար Սմբատը հո ամսներով նշանած չի, երեխությունից միասին ենք մեծացել։ Մի քանի հետ խեղճը հարցրել ա ինձ, թե ընչի՞ առաջվան պես էլ իրա հետ չեմ խոսում, թե դու ձեր տանիցը պատասխան կտայիր, ես էլ էնպես։ Միամիտ Հերիքնազը հենց գիտի, թե ամանչում եմ նշանածիս հետ խոսալը, Սմբատին սրտավորում ա, էլ չի իմանում, թե քո աչքերի ականաթն[1] ընկած օրից դեսը Սմբատին էլ եմ մոռացել ու իմ գլուխն էլ։ Էն ասսու գառը Սմբատն էլ ի՞նչ անի. տեսնում ա, որ իրան մոռում չեմ, Հերիքնազի հետ ա նստում վեր կենում. ես շատ ուրախ եմ, էրնեկ չէր՝ երկսի մեջը սեր մտներ ու նրանք իրանց մուրազին հասնեին, մեր ճամփեն էլ բացվեր. հոգի ունեմ տալացո՛ւկ, Սմբատը Հերիքնազին արժան ա, նրա սիրտը բարի ա։

— Բաս հիմի ո՞նց անենք։

— Ես խաբար չեմ. թե հորս կարացիք բան հասկացնել, գիտես որ ուրախ կըլնեմ, թե չէ, շլինքս ծռած, պտի խոնարհեմ։

— Տո՛, ես մեռել ե՞մ, Հեղնար ջա՛ն, որ քեզ ուրիշի ճանգը քցեմ. գիտես քեզ ո՞նց եմ սիրում։

— Հա՛, լավ միտս եկավ, Արշակ ջա՛ն, մի օր Հերիքնազի հետ խոսք բացվեց, նա ասեց, որ իմ ուզողները հորս կարողությունի համար են մեր դռները ջարդում. ես էլ միտք եմ անում, որ ըտենց ա. ա՛յ, հենց մինը դո՛ւ. չեք տեսնո՞ւմ, որ Հերիքնազն ինձանից հազար փառքով սիրուն ա, ընչի՞ չեք նրա քամակիցն ընկնում։ Հիմի թե որ դու էլ էդպես տղեքանցիցն ես ու ինձ սրտով չես սիրում, քո ոտդ կպաշեմ, որ մեր միջին ինչ որ անց ա կացել, քարը վերցնես, քարի տակը դնես ու գնաս քո ճամփեն. ես որ քեզ վրա սիրտ ունիմ, աչքիս լսի պես սիրում եմ, ես չեմ ուզում, որ դու փողի ու հարստությունի համար ինձ ուզելուս ըլիս։ Քեզ մատա՛ղ, Արշակ ջա՛ն, շուտ արա՛, մի դրուստ պատասխան տուր... էդ ընչի՞ սուս կացար, չըլնի՞ Հերիքնազի ասածները ճշմարիտ դուս գան։

Եթե մթնագիշեր չլիներ, առանց Արշակի պատասխանին սպասելու՝ Հեղնարը կարող էր խոսակցի դեմքից գուշակել, թե յուր սիրականն ի՛նչ պտի ասի։ Արշակն աչքերը գետինը ձգեց ու շփոթվեց, կարծեց, որ բռնվեց, բայց կրկին միտքն եկավ, որ յուր բախտից խոսակցությունը գիշերն է, Հեղնարն յուր երեսը չի տեսնում. դրանով ոգևորվեց նա ու ասաց.

— Ո՞նց թե քեզ սրտով չեմ սիրում, Հեղնա՛ր ջան, գլուխս քո ուղուրին[2] վեր եմ դրել, աշխարհքն իրարոցով կտամ, թե որ մինը համարձակվի քեզ իմ ձեռիցը խլելու. քո հարստությունի վրա ո՞վ ա ուշք դարձնում, իմ հերը քիչ ունի՞, ախպերտինքս գլուխս կոխել ե՞ն. կանչկանք՝ երկու ախպեր ենք. էնքան ունինք, որ մեր աչքը մեր դռանն ա. Ովիկենց պես աղքատ հո չե՞նք, քեզ հայտնի չի՞, որ իմ հերը գեղի

1 Վատ։

1 Որոգայթ։ 2 Քո պատճառով։

առաջին իշխաններից մինն ա. ինչքան որ մեր տանը չինովնիկների[1] ու մենծամենծների համար կիրակուր կեփվի, Սվիկենց հինգ տարի հերիք ա։

— Էդ ոչինչ, հարստությունը մենծ բան չի, իմ պսակվելուց ետը Սմբատն ամենքիցը հարուստը կըլնի. բանն էս ա, որ քո հերդ մարդամիջի մարդ ա. դու էլ քո հոր տեղը կբռնես, համա Սմբատն էդ թավուր բաներն ատում ա. նա ասում ա, որ իմ հոր պես աշխատանքի պոչը բաց չպտի թողա, էդ ի՞նչ մարդությունն ա. ասում ա՝ «մարդամիջի մարդս ըլի, հազար թուման պարտքս ըլի». ախար ես ո՞նց նրա կնիկը դառնամ, էգուց-էլոր Ջրագողենց, Էշներկողենց ու Մենծանկանչենց հարսներն ինձանից վերև պտի ձգվին, ինձ վրա պինչ պտի բարձրացնեն, թե ի՞նչ ա՝ իրանք գեղի քեթխուդեքի կնանիք են. համա ես իմ մալ ու դոլվաթովը պտի լիզուս ինձ քաշեմ ու ծակը մտնեմ, ի՞նչ ա՝ թե իմ մարդս գեղի միջին քեթխուդությունն[2] չի կարողանում անել։

— Իհարկե, որ գեղամիջում մարդ ըլիլը Սմբատի բանը չի, ինչ ասել ա՝ էն պտի դառնա. չէ, նրա հորն օղորմի, էգուց գեղը նրան տանուտեր չշինի, դիվան դատաստան չանել տա՞։

— Բաս ես էլ նրան ո՞նց առնեմ։

— Միտս եկավ, Հեղնար ջա՛ն, թե հորդ բնությունը լավ գիտես, որ քեզ ուրիշի չի տալ, արի քեզ փախցնեմ, գնանք, մի ուրիշ գեղում պսակվենք։

— Էն օրն իմ հորն ավելի կբարկացնենք, վանքական կանի մեր մուլքն ու մի քոռ կոպեկ չի տալ, որ աչքներս կոխենք։

— Էդ էլ դրուստ ա. կուզե՞ս՝ արի մի բան անեմ, Սմբատիդ արևը սևացնեմ, մեջտեղից վերցնեմ. մի գիշեր ձեր դռանը բուսուն պահեմ, շեմքի վրա դամեն[3] փորը կոխեմ՝ պրծացնեմ, որ մեր ճամփեն կապի ոչ։

— Լավն էն ա՝ առաջ ինձ մորթես. ես ոչովի արենպարտ չեմ ուզում ըլիլ. էնքան ապրի՝ ինչքան իր հոր սիրտը կուզի, նա ընչանք օրս ինձ ախպեր ու հընկեր ա էլել, մի վնաս չի տվել։

— Որ մեր ոտին կապանք ա, որ էգուց անկոտրում հորդ կամքովը նրա ձեռին հավի ճուտ պտի դառնաս, որ ինքը մի հասարակ գյադա՝[4] ձեր էնքան մլքերը պտի վեր կոխի, ուտի։ Չէ՛, չէ՛, Հեղնար ջա՛ն, իմ անումս Արշակ չըլնի, թե որ ես աչքս բաց՝ Սմբատի պես ետ ընկած տղին թողամ իմ սիրածին ձեռիցս խլի. թե որ քո խաթեր սպանեմ էլ ոչ հենց կանեմ, որ անումը մի փող կդառնա։

— Դու նրան ոչինչ չես կարող անել, Արշակ ջան, նա քեզ կհաղթի, նրա պես սրտոտ տղա դեռ մեր գեղումն երկուսը չկա. Հերիքնազն ասում ա՝ նա ամենքիցն էլ զոչաղ ա։

— Դու էլ ավատում ե՞ս, փչեմ՝ վեր կընկնի։

— Բաս Հերվա բարիկենդանինը միտդ չես բերո՞ւմ, ջիրիդը մոռացե՞լ ես։

— Էն էլ մի բան էր, ձիս բուղուրմիշ էլավ[1], գլխի վրա եկավ, թամքը շուռ անցավ, ոտս օրզանգուի[2] մեջ մնաց, թե չէ նա ո՞ւմ շունն էր, որ ինձ հետ ջիրիդ[3] խաղար։ Մին էլ որ՝ ընդոնք անցկացան. հիմի որ քո սերն իմ սրտումն ա, քսան Սմբատ բռիս միջումը քո անումովը լակ ձվի պես կփիլեմ, ըհ, ես քո ջանին մեռնիմ, ասաց Արշակն և ձեռքը ձգեց Հեղնարի մեջքովն, ուզեցավ փաթաթվիլ։

Բայց դեռ օրինավորապես մոտ չէր քաշել աղջկանը՝ պատի մյուս երեսից Թրխկոցի ձայնի հետ չախմախի տվին ու կայծերն օդումը խաղում էին։

— Վա՛յ գլխիս, սատանա ա,— թուլ ձայնով ասաց Հեղնարն ու իրանց սանդղաներովը ներքև վազեց։

— Սատանա՛,— շշկլված կրկնեց Արշակն ու ոտքերը դողացին, էլ ոչ մի քայլ չկարողացավ անել։

— Հա՛, սատանա՛,— պատասխանեց հրացանի կայծեր շաղ տալով երևույթն և պատը լոք տվեց, անցավ Արշակի մոտ ու երկու ձեռքով գլուխը բռնեց, վեր բարձրացրեց։

Արշակն երկյուղից ոչինչ չէր տեսնում և չէր էլ հասկանում։

— Քեզ եմ ասում, ա՛յ դդում, լավ մտիկ տո՛ւր ինձ, երեսիդ խաչ հանի՛՝ բերանդ մի կտոր հող քցի՛, քո գիրը ջնջվեց. ի՞նչ սատանա, ի՞նչ բան, դու քո հոգեառի ձեռին ես, էս սհաթս գլուխդ ծնկներիս միջին ճխլում եմ, մի քթալ արինդ ջներին լակացնում։ Ո՞ւմ հետ ես խաղ անում, անխելք աղջկերանց մոտ ո՞ւմ դեմն ես պարծենում, ո՞ւմ նշանածին ես քո մուտտաո[4] պռոշներովդ, քո կեղտոտ շնչովդ ապականում։ Երկինք ու գետինք, դժոխք ու սատանեք քեզ հիմի իմ ճանգիցը չեն կարող պրծացնիլ, գնա սատկի՛, քո տիրոջ հերն էլ անիծա՛ծ։

Մեր սարսափելի ստվերը, որին մենք արդեն ճանաչեցինք, այս խոսքերից հետո, երկու ձեռքով Արշակի գլխիցը բռնած՝ բարձրացրեց բոլոր մարմնով և ուզեցավ խփել պատովը, և եթե մի ձեռք նրա քամակիցը չէր բռնել ետ քաշել, մեր Արշակը մինչև հիմի յոթ պատան մաշած կլիներ։

— Սմբա՛տ, արենպարտ մի՛ ըլնիլ։

1 Աստիճանավորների։ 2 Իշխանություն։ 3 Դաշույն։ 4 Ծառա։

1 Սլքվեց։ 2 Ասպանդակ։ 3 Մական։ 4 Անասուր։

Այս ձայնը սլաքի նման թափանցեց մեր կատաղած հերոսի մինչև ամենանուրբ ջղերն և նա սարսեց։

Ինչպես եռացող ջրի վրա հանկարծ սառը ջուր լցնես, այնպես նրա-տավ մեր նախանձահույզ փեսացուի փուքը։

Նա վայր դրեց յուր որսին գետնի վերա և աչքերն ետ դարձրեց։

Ոչ ոք չկար։

Մի քանի քայլ յուր շրջակայքը ման եկավ։ Ոչ ոք չկար։

— Նա էր, նրա ձենն էր, հենց իմանաս ինձ էլ դիպավ, նա իմ հոգու մեջը խոսաց. նա չի ուզում ես ձեռներս սրա արնի մեջ թաթախեմ. թող գնա ապրի, ինչքան որ իր հոր սիրտը կուզի։

Շվարածի նման նա եկավ Արշակի մոտ և ձեռք տվեց։ Արշակը մի քանի անկապ ու անհասկանալի բառեր էր արտասանում, երևում էր, որ նրա լեզուն երկյուղից կպել էր։

— Արշա՛կ, Արշա՛կ,— մեղմ և քաղցր ձայնով կանչեց նա,— վեր կա՛ց, վեր կաց գնա՛ տուն, ամեն բան անց կացավ, ոչինչ չկա։

— Ես մեղա աստծու, ես գլուխս քարը տվի, էլ չեմ անիլ,— թոթոփվում էր Արշակն ու Սմբատի ձեռքերը համբուրում։

— Գնա՛, գնա՛ ու էլ ուրիշի ապրանքին աչք չունենաս. համա թե որ էլի կհիմարանաս, չախմախի պեծերը միտդ բե՛ր։

Այդ օրվանից Շունհետածողենց տանն Արշակի ներկայությամբ էլ չախմախի չէին կարող տալ, նրա լեզուն խառնվում էր, նրա ուշքը գնում էր, նա կանչում էր.

— Սատանի բերնիցը կրակ ա թափվո՛ւմ, ես գլուխս քարը տվի։

— Շորշոփ ա դիպել,— վճռեց շահրիարցի գրբաց տեր Հարությունը սողոմոնին բանալով և ռամ[1] ձգելով,— բայց դրան պրծացնիլն անկարելի ա. շորշո՛փ ա դիպել, էն էլ դևերի թագավոր՝ Բեհեղզեբուղի շորշոփը[2]։

ԺԵ

ԶՎԱՄԵՂԻ ԽԱԹԵՐ ԹԱՎԻ ԿՈԹԸ ԿՊԱՉԵՆ

— Կա՛ց, ո՞ւր ես փախչում ցնորվածի պես։

Այս խոսքերով մինը բռնեց Սմբատի թևն, երբ նա Արշակին իր ձեռքով բարձրացրեց, ներքև տարավ նրանց բակն և ինքը կրկին վեր եկավ ահերանց կտուրը, կամեցավ իջնել յուր ելած պատիցն և հեռանալ։

1 Վեց հազարյակի հաշիվներ տեսնելով։ 2 Շորշոփ դիպչել. նշանակում է մի երևույթից վախենալ և նրա վատթար հետևանքին ենթարկվել։

Սմբատը շատ ջտապով էր բարձրանում, դժվար թե երկու մարդ կարողանային նրան ետ պահել, բայց մի ձեռքի թույլ բռնվածք տեղնուտեղը կանգնեցրեց նրան։

— Ո՞ւր ես փախչում։

— Հա՞, բաս դո՞ւ էիր։

— Ես էի։

— Բաս քո ձեռովդ են էսքան բաներն անց կենո՞ւմ։

— Դու էլ հավատո՞ւմ ես, մտքովդ ա՞նց ես կացնում, հոգուդ մեղք չե՞ս անում։

— Բաս էս ի՞նչ բան ա, էս ի՞նչ խաղ ա, որ ինձ հետ անում եք. ես ձեր խաղատե՞ղն եմ, ես երեխա՞ եմ. բաս ես աշխարհքի ներեսին ո՞ւր եմ սաղ ման գալի, ի՞նչ երեսով ուրիշներին մտիկ եմ տալիս. ձեզ ի՞նչ եմ արել, որ ինձ խեղճ չեք գալիս, ձեզ ի՞նչ եմ արել, ի՞նչ վնաս եմ տվել...

Սմբատը չկարողացավ շարունակել, երեխու նման արտասուքն իրան խեղդեց, խոսքը կոկորդումը կիսատ մնաց, գլուխը կռացրել էր և հառաչում. նրա կրծքի ելևէջը մթի մեջ կարելի էր նշմարել։

— Սմբատ ջա՛ն, արևիդ մատա՛ղ։

— Չէ, էլ ինձ քաղցր խոսքեր մի ասիլ, սրանից հետը ես սաղ աշխարհքի մասխարեն[1] եմ, ես էլ մարդի կարգում չեմ, շան պես քացով տո՛ւր, տանիցը դուս քցի՛. աղքատի տղեն հարուստի աղջկա ոտի հողին էլ չի արժան. մի կտոր չոր հաց ողորմություն դուս գրկեցե՛ք, երբ որ կգամ շլինքս կծռեմ, ձեր դռանը մուրացկանություն կանեմ. ի՞նչ եմ ասում, հացն ափսոս չի՞, դուռն երեսիս ետ արե՛ք։

Սմբատը շարունակ լալիս էր։

— Սմբատ ջա՛ն, ականջ դի՛ր, ես ամեն բան տեսա, ես քեզանից ավելի՛ եմ գժված ու կատաղած, ես էլ առաջ բանից խաբար չէի. մի քանի օր է, որ դիպվածով տեսա ու ամեն հնարքով աշխատում էի քիչ-քիչ ետ կացնել։

— Ի՞նչպես, դու առաջ ոչինչ տեղեկություն չունեի՞ր, բաս դու զարավուլ չէի՞ր քաշում[2], որ սիրեկաններին ոչ ով խափանի ոչ։

— Ամո՞թ քեզ, Սմբա՛տ, ես հույս չունեի, որ դու էդ վատ կասկածը կունենաս ինձ վրա, ամո՞թ քեզ, որ ընչանք օրս իմ սիրտը չճանաչեցիր, ամո՞թ, հազար ամո՞թ քեզ։

— Բաս ասում ես՝ դու է՞լ բեխաբար[3] էիր, դու է՞լ նեղացել ես դրանց սիրահարությունների վրա, դու է՞լ, դու է՞լ...

1 Ծաղրելիքն։ 2 Պահապան չէիր կացել։ 3 Անտեղյակ։

— Հա՜, քեզ մատա՜ղ, քո ազիզ արևը վկա։

— Բաս ես գնամ, քարափովը վեր ընկնեմ ու պրծնեմ, էլի՞։

— Չէ՜, անումիդ մեռնի՜մ, չէ՜։

— Հերիքնազ ջա՜ն, գլուխս իմս չի, ես կգժվեմ,— ասաց մեր ողորմելին և փարվեցավ յուր քենուն, որ մթնումը կանգնած դիտելուս է եղել։

Ինչպես պատմեց Հերիքնազը Սմբատին, ինքը երկու-երեք շաբաթ առաջ դիպվածով տեսել ու լսել էր դրիշակի խոսակցությունը, թեպետ լույս էր ընկել, բայց չէր ուզեցել միանգամից հուսահատեցնել Հեղնարին. լավ էր համարել աստիճանաբար խոսք հասկացնել. իսկ այս գիշեր՝ դեռ քնած չի լինում, երբ Հեղնարը վեր է ելնում անկողնից, շորերը մթնումը հագնում ու դուրս գնում՝ ճրագը հանգչելուց հետո։ Յուր սիրտն էլ կասկած է մտնում, ինքն էլ նույնն է անում և հետևում Հեղնարին. նա հասնում է նույն ժամին, երբ երկու սիրահարներն առաջին անգամը պատահում են միմյանց. նա նույն բոպեին նկատել է Սմբատին, որ փոքր ժամանակ դեռնին նստելուց հետո, կամաց քաշվում է դեպի պատը, բարձրանում ցածր պատի մյուս երեսն և այնտեղից դիտում. վերջապես նա տեսել է սորա չախմախի տալը, լսել վճռական խոսքերն և յուր քնքուշիկ ու ազդու ձայնովը ետ է պահել սրան մարդասպանությունից. այո՜, նա սկզբից մինչև վերջը ներկա է եղել և, թեպետ մթնումն, բայց ամեն բան տեսել է։

— Հերիքնազ ջա՜ն,— գրկեց Սմբատն աղջկանն ու ճակատը համբուրեց։

Ոչինչ ընդդիմություն չարեց Հերիքնազը, նա պինդ կպավ Սմբատի գրկին ու մի քանի վայրկյան այդ դրության մեջ լռությամբ տեղիք տվեց նրա գրկախառնությանը։

— Բավական է,— ասաց վերջապես աղջիկը,— դե՛ հիմի սիրտդ հանգստացրո՛ւ, էս բոլոր անցկացածները մոռացի՛, ջահել աղջիկ ա, հեռու չի միտք արել, խաբվել ա, էդ թավուր բաներ շատ կպատահին. փառք աստծու, որ ինքդ անկաջովդ լսեցիր, թե դրանք առաջին անգամն ա, որ մին-մնի մոտ եկան, դրանց տեղը դրիշակն ա էլել, որ ինչպես իմացար, մեր քնելուց հետո վեր են կացել ու իրար հետ քշփշացել. մի՛ վախի, Սմբատ ջա՜ն, իմ շլնքին թող դրան ճամփու բերիլը, ես սկսել եմ խրատիլը. Հեղնարը քեզ ընենց կնիկ դառնա, որ դու ինքդ էլ արմանաս։

— Հերիքնազ ջա՜ն, էդ բանը մի՛ ասիլ. Խեչանի աղջիկն ինձ համար ըստուց ետը պաս էլավ, ես ուրիշի խոտրից[1] աղջիկ չեմ կարող հանել ու իմ գիրկն առնել. նա ոնց որ մի իժ օձ կփաթաթվի իմ շլնքովը։

[1] Գրկից։

— Թե որ ըտենց ա, դու ո՞նց չամաչեցիր ինձ դոշիդ[1] կպցնել, չէ՞ որ մի մարդ էլ թե ինձ ընենց հանդիպի, մի վիշապ պտի կարծի, թե որ մի օր ինձ ուրիշի կնիկ դառած տեսնի։

— Չէ՜, քեզ իմ գլխիցս ոչով չի կարող խլել, թող Խեչանն ում կուզի՝ աղջկանը տա, աստված իրան հետ, ես քո ձեռիցը բռնած՝ պտի դուս քաշեմ էս տանիցը, ըստուց ետը դու իմն ես։

— Սմբատ։

Սմբատի կոնները թուլացան, նա այժմ միայն բաց թողեց յուր երջանկությունն յուր գրկից։

— Էս վերջինն ըլի, որ քեզանից էդ խոսքը լսում եմ,— հրամայական ձայնով ասեց Հերիքնազը,— իմացած կա՛ց, որ թե դու Հեղնարի հիմարությունի խաթեր ոտդ մեր տանիցը կտրել ես, էլ հուրն հավիտենական իմ երեսը չե՛ս տեսնիլ. հենց կանեմ, որ մեր քուչովն էլ չես կարող անց կենալ. մտքումդ լավ պահի՛ր ինչ որ ասում եմ, մեռած էլ ըլիմ՝ գերեզմանիս վրա գալու իրավունք չեմ տալիս քեզ։

— Բաս ի՞նչ կհրամայես, որ անեմ,— լալով հարցրեց մեր ցավալի եղբայրը,— կուզե՞ս, որ անեռեսի պես գնամ, ինձ չսիրող աղջկանը շլինքս ծռած՝ ողորմությունի պես առնեմ։ Ախար որ էն մարդն ինձ չի սիրում, ես ընչի՞ եմ նրա մեղքն ընկնում, մեր մեջն ի՞նչ մարդ ու կնկություն, ի՞նչ սեր կըլնի. ես էս իրիկվա անցկացածները իմ մտքիցս ո՞նց պտի ջնջեմ. չէ՞ որ ամեն սհաթ պտի խեղճ կնկա երեսովը տամ։

— Երեսովը տված վախտն էս էլ ասա՛, որ դու էլ իրան չես սիրել, որ դու էլ ինձ ես փաթաթվել ու պաչել. ես էլ թե կպսակվիմ, իմ մարդին կասեմ, որ նա էլ իմ երեսովը տա, որ ուրիշի շունչն ինձ ա դիպել։

— Հերիքնազ ջա՜ն, ինձ ղնամիշ մի՛ անիլ[2], ես ի՞նչ անեմ ո՞ր սարերն ընկնեմ, ո՞ր չոլերը, ո՞ր ձորերը, ո՞ր գետերը, որ քեզ սիրում եմ։ Հա՜, ես Հեղնարին չեմ սիրում, նրա համար նշանածացուք շատ կան, Արշակին ես էլ չեմ ուզիլ որ տան, նա մի դատարկ տղա ա. լավ-լավ ուզողներ իրար գլուխ են ճղում, թող գնա մնի հետ բախտավորվի, համա թող քեզ ինձանից չհանեն։ Վաղո՜ւց, վաղո՜ւց մտքումս դրել էի քեզ իմ սրտիս փափագն ասեմ, լիզուս չէր պտրտում, էս անտեր երեսը մսից ա, չէր բռնում, համա մի՞թե դու իմ աչքերիցս չէիր հասկանում։ Խեղճ արի՛ ինձ, Հերիքնազ ջա՜ն, չէ մի՛ ասիլ, ինձ մի՛ կրակիլ, ես քեզ սիրո՜ւմ եմ, սիրո՜ւմ եմ, որ սպանես էլ՝ սիրո՜ւմ եմ։

— Անօրե՜ն, անխղճմտա՜նք, գոնյա մի՛ ասիլ, բաս ես սիրտ չունի՞մ, ինձ մեր չի ծնե՞լ, քարից եմ բհամ եկե՞լ[3], ես մարդ չե՞մ, թե մի

[1] Կրծքիդ։ [2] Մի մեղադրիլ։ [3] Գոյացել։

մատը երեխա եմ. էդ ընչի՞ցն ա, որ դու սեր կունենաս՝ ուրիշը չէ։ Լսի՛ր, Սմբա՛տ, ընչանք օրս քեզ ոչինչ չեմ շանց տվել, ոչինչ չեմ ասել ու հիմի ասում եմ. չեմ ասում ընդուր համար, որ սրտիդ հույս դնես,— չէ՛, ասում եմ, որ մտքիցդ էդ բանը հանես. իմացի՛ր, Սմբա՛տ, իմ մախալի չափ դու չես սիրում ինձ, ինչքան որ ես քեզ. էն օրը, որ քեզ չեմ տեսնում, իմ օրը սև ա ըլնում, աչքս ջուր ա կտրում՝ ընչանք դու մեր շեմքովն անց ես կենում. համա դու քո աստվածը՝ մի օրից մի օր իմ երեսիցս մի բան հասկացել ե՞ս.— չէ՛։ Հիմի էլ չէիր իմանալ, թե որ բանն էս տեղը չէր հասել, խոսքը տեղը չէր եկել. Սմբա՛տ, ես քեզ սիրում եմ, ու էս սերը պտի սրտումս թաղեմ, ինձ հետ գերեզման տանեմ։

— Ի՞նչ, դու ասում ես, որ ինձ սիրո՞ւմ ես։

— Հա՛, Սմբա՛տ, սիրո՛ւմ եմ, սիրո՛ւմ եմ իմ գլխիցս շատ և հենց էդ սերի անումովն էլ օրթում եմ տալիս քեզ. խոսք տո՛ւր ինձ, ընչանք մահներս իրար սիրենք. սիրենք ինչպես երեխայությունից ընչանք օրս սերը հասկացել ենք, ոնց որ քենուն ու փեսին կվայելի, ավելին ասեմ, ոնց որ քիր ու ախպոր մեջ սեր կըլնի։

— Հերիքնազ ջա՛ն, էդ խոսքն ինձանից մի՛ առնիլ։

— Չէ՛, Սմբատ ջա՛ն, թե ինձ սիրում ես, մոռացի՛ր՝ ինչ որ լսեցիր ու տեսար, մի օր Հեղնարի երեսովը չտաս. ես էլ խոսք եմ տալիս, որ նրան մատով շանց տալու կնիկ չինեմ քեզ համար, նա բարի աղջիկ ա. նա ինքն էս բանումը մեղավոր չի. ես ու դու ըլեինք նրա տեղակ, ավելի վատթարը կանեինք. մի կողմիցն էդ լպստված տղեն ա գլխահան անում, մեկել կողմիցը մեր ասսու ծրիցն էլած աղջկեքն են խեղճին քամի տալիս ու կեղծավորությունով գովասանքներ անելով՝ կոնատակը ձմերուկներ դնում, ի՞նչ ա՝ թե խելքը փչեն, որն իր տեգոր, որն իր ախպոր, մեկելն էլ քեռու տղի վրա սիրտը տաքացնեն, էն էլ, ի՞նչ ես կարծում, ընչի՞ համար։

— Նրա փող ու հարստությունի։

— Հա՛, շատ լավ հասկացար, բաս էլ մի՛ մեղադրիլ։

— Դե՛ ես էլ հենց էդ եմ ասում, որ թող Խեչանն իրա աղջկանը մի հարուստ տղի տա ու քո կուռն էլ դաբ-դարդակ բռնի ինձ տա։

— Քոռն ի՞նչ կուզեր՝ երկու աչք, համա որ էդ ըլնելու բան չի, ի՞նչ պտի անենք, անխելքություն չի՞՝ ձեռներս չհասած տեղը կուռ մեկնենք։ Իմ վերջին և առաջին խոսքս էս ա, որ ոչ դու քո հորը հակառակես, ոչ Հեղնարը։ Աստծու անումը տվե՛ք, ձեր ճակատի գրվածքին դեմ մի՛ կենաք, աստված էլածն օրհնի։

— Ախար ես քեզանից ո՞նց ձեռը վերցնեմ, լավն էն չի՞ էս սհաթս

հրամայես գնամ ջուրն ընկնեմ, խեղդվեմ ու էն աղջկա անբախտության պատճառ չըլնեմ։

Սմբատը գլուխը դեմ տվեց պատին։

— Ա՜խ, ընչի՞ ես էս սհաթս չեմ մեռնում, ընչի՞ ոտս չկոտրվեց բաշիֆյարթմի օրը, ընչի՞ ես տանուտերի կտրիցը չվեր ընկա ու բանհոգի[1] չելա. ընչի՞ մեր երեխա ժամանակը չմեռա պարզ սրտով, երբ որ աշխարհքիցս ոչինչ խաբարություն չունեինք ու իրեքս մի տեղ ընչանք իրիկուն անհոգս ալիրմաղու[2] պես հիքանոնցումը մի ծաղկից մեկելի կուշտն էինք վազում, մի թփից մեկելի տակին էինք տափ կենում։ Ասում եմ, ընչի՞ էն խոտերի միջին օձը իմ ոտը չկծեց ու ինձ չսպանեց, որ էս օրը չհասնեի։

Հերիքնազը փոքր միջոց ոչինչ չպատասխանեց. նա մտածում էր։

— Ինձ մտիկ արա՛,— Սմբատի կոնիցը քաշեց աղջիկը,— վաթաթվի՛ր ինձ, գրկի՛, պաչի իմ աչքերը։

Երկար հրամաններ չէր պետք. Սմբատը այնպես սղմեց սիրուն Հերիքնազին յուր կրծքի մեջ, որ մեջքը ծալվեց. երկար ժամանակ նրա աչքերիցը չէր պոկվում։

— Էլի՛, էլի՛, պի՛նդ, պի՛նդ հուփ տուր, Սմբատ ջա՛ն... հիմի էլ ճակատս պաչի՛ր։

Ձեզ եմ հարցնում՝ կկատարե՞ր, թե ոչ։

— Դե, հիմի հերիք ա, հիմի իմացա՞ր, որ ես էլ քեզ եմ սիրում, բայց իմ քեռու խոսքն իմ գլխիցս ավելի ա ինձ համար, հույս ունիմ, որ իմ խաթեր քեզ համար էլ ավելի կըլնի։ Խոսք տո՛ւր ինձ, Սմբատ ջա՛ն, որ մեր սերը մեր մեջը մեռցնենք, մեր սրտի խոր քնջումը թաղենք, թող մնա էն ետ ընկած տեղը մինչև մեր մահը անհանգչելի. չէ՛ չեմ ուզում, որ բոլորովին անցնի վերջանա, թող ծխա, բայց չվառվի, թող ծխա, որ միշտ մտքներս բերի մեր տված խոսքը, մտքներս բերի, թե մենք էդ սերը փոխել ենք ուրիշ ավելի սուրբ սերի վրա, փեսի ու քենու, քիր ու ախպոր սերի վրա։

— Հերիքնազ ջա՛ն։

— Հա՛, դու չես կարողանում քեզ զսպել, քո սրտիդ կրակը չես կարողանում հանգցնել, իրավունք ունիս, զորի բան չի, քանի քո սիրածն աչքիդ առաջին կենդանի ման ա գալիս, քանի որ դու նշանածիցդ ավելի նրա հետ պտի տեսնըվիս, ասես, լսես, սիրտդ թափ տաս, էս էլ եմ հասկանում, որ դժար բան եմ ուզում քեզանից։ Համա դրա դեղն ես գիտեմ, դրա հա՛մար շատ բան չի հարկավոր. էգուց առավոտ կեր-

[1] Անհոգի։ [2] Թիթեռնիկ։

թաս առվի թոմբը, Բաղալենց բաղչի[1] գլուխը, ծակ քարի կշտին կկանգնես ու ներքև մտիկ կտաս։ Դիտե՞ս ինչ կգտնես քարափի տակի անդունդումը.— դու կտեսնես նրան, որի պատճառով դու հորդ խոսքը չպիտի կատարես, դու կտեսնես մենծ թիքեն անկաջը մնացած մի լաշ[2] արնի մեջ շաղախված ու քո խաթեր իր ջահել-ջիվան[3] արևը մթնացրած։

— Ի՞նչ։

— Հա՜, էգուց էլ Հերիքնազդ չի՛ ըլնիլ, ու նրանից ետը՝ քո քեֆը, կուզես ա՛ռ Հեղնարին, կուզես՝ ոչ. էլ իմ աչքերս չեն տեսնիլ, իմ խղճմտանքս էլ ինձ չի տանջիլ, որ իմ խաթեր իմ հորից ավելի սիրելի քեռին օր ծերության դարդամահ պտի ըլնի, թե իր տված խոսքը չկատարվեց։ Էս ա իմ վերջին խոսքը, Սմբա՜տ, էլ ուրիշ ասելիք չունիմ, հիմի գնա՜, տերը քեզ հետ։

Ետ խփեց Հերիքնազն իր մոտիկ Սմբատին ու ինքը վերադարձավ շտապով սանդուղքներից իջնելու։

— Խոսք եմ տալիս, Հերիքնազ ջա՜ն, քո քաղցր անումը վկա, խոսք եմ տալիս, որ ինչ քո կամքն ա, էն անեմ,— քամակիցը վազեց, փեշիցը ձգեց Սմբատն ու ետ քաշեց,— խո՜սք եմ տալիս, որ ամեն տեսած ու լսածներս հենց էս սհաթը մոռանամ, որ Հեղնարին սիրեմ, սիրեմ՝ քո՜ սիրու խաթեր։

— Հիմի իմ ազիզ փեսեն ես, իմ քաղցր սիրեկան ախպերն ես,— դարձավ Հերիքնազն ու Սմբատի ճակատին մի սրտանց համբույր դրոշմեց։

ԺԶ

ԴՐԻՋԱԿ

Նահապետական պարզ սովորություններն օրըստօրե անհետանում են, բարեկամություն, հարևանություն սուրբ բառերն իրանց նշանակությունը միմիայն քաղաքավարության ձևերի մեջ են պահում. էլ չկա այն ընտանեկան կապը, որ օտարներին միմյանց հետ մի տան պես պահում էր. խոր գյուղերումը, որպես և իցե, այժմ կտեսնես նախկին քաղցրության ստվերը, իսկ քաղաքներումն ու մեծամեծ գյուղերումը՝ երբե՛ք։ Մի անմխիթար ապագա է գուշակում մեզ այս բանը։

Սրանից քսան կամ քսանուհինգ տարի առաջ, իմ լավ միտքս է, մեր գյուղերումն երկու դրացի մի տան պես էին ապրում. մի առած ունեին, որը պատգամի նման ընդունված էր ամենքից. «փոխը օխտը տուն ա պահել»։ Այս առածի սուրբ նշանակությունն ամենքին լավ հայտնի էր, պատեպատ հարևաններն եղբոր նման միմյանց կարիքին հասնում էին։ Ինչպես այսօր, ես հիշում եմ դրիջակը, որ բացած էր մեր և պատկից դրացի Ազատենց պատի մեջ։ Այս մի փոքրիկ թափանցիկ պատուհան էր՝ երկու հարևանների միջնապատումը շինած։ Ոչ վարագույրն էր ծածկում այդ պատուհանն և ոչինչ զգալի արգելք խափան էր լինում ականատես լինել միմյանց տան գաղտնիքին. մի բարոյական զգացմունք էր, որ հաստ պատի նման փականք էր դնում դրիջակի վերա, այն է՝ ամեն մարդ սուրբ պարտականություն էր համարում դրիջակը գործ դնել կարևոր ժամանակը. ճրագ ուզել միմյանցից, կերակրի բաժին տալ իրարու, քաղցր զրույցներ անել պարապ միջոցները, մեկս մեկի նեղությունին օգնություն հասնել։ Ահա ինչ էր դրիջակի նշանակությունը։ Ընդհանրական՝ աներելի հանցանք էր, եթե մինը չար դիտավորությամբ ձգտեր յուր դրիջակից դրացու տան գաղտնիքն իմանալ. եթե որպես և իցե դիպվածով նա տեղեկանար դրիջակովը յուր հարևանի տան որևիցե ընտանեկան խորհրդին, նա պատրաստ էր յուր լեզուն բնիցը պոկ տալ, քան թե մեղանչիլ դրացության սուրբ պարտականության դեմ։

Այսչափ մեծ էր այն նվիրական փոքրիկ պատուհանի սրբությունը մեր պարզ և առաքինի պապերի համար։

— Որդիք ջա՜ն, ամա՜ն, ձեզ մատա՜ղ, առանց պատը ծեծելու դրիջակովը մտիկ չտաք. ո՜վ գիտի՝ ինչ բանի են,— զգուշացնում էր մեզ ամեն ժամանակ իմ լուսահոգի մայրս։

Մի կողմից էլ որքան այս դրիջակները շինված էին փոխադարձ օգնության նպատակով և կամ, գուցե, պարսկական բռնակալությունից ազատվելու մտքով, այդ պատուհաններն էին պատճառը, որ հանկարծ լսում էիր, թե Կիրակոսն յուր աղջկանը տվել է Մարտիրոսի տղին, այսինքն՝ յուր դրիջակակից հարևանի որդուն։ Երկու սիրով հարևան տանտիկին մայրերն ազատ միջոցները ժամերով ծնոտները դեմ էին տալիս դրիջակի քարին և քաղցր զրույցների մեջ խորասուզվում, ուր և առանց յուրյանց ամուսինների ու որդվոց համաձայնությանը խնամի էին դառնում։

Շատ հաճախ էր պատահում, որ այս դրիջակները գիշերներն անխոս վկա էին լինում երկու ձեռների այս և այն կողմից միմյանց մեջ սղմված մնալուն, կամ ժամերով երկու շրթունքների իրարու պինդ կպած լինելուն։

Երկու հարևան տներից մագնիսական զորությունը դրիջակի պատուհանովը երկու զույգ աչքեր իրար քաշելով՝ մինչև այստեղն էր հաս-

1 Պարտեզ։ 2 Դիակ։ 3 Նորատի։

ցընում և որդեսեր ծնող մայրերը, մարդկանցից թաքուն, լսելով յուրյանց սիրելի զավակների պարզ խոստովանությունը, յուրյանց համաձայնությունն էլ վերան ավելացնելով, շատ հեշտությամբ առնում էին տան գլխի հաճությունը. մին էլ էն տեսար, որ՝ ախչի Սառան, Հեղնար, Գասպար, Վարդան, քիքիր, հոքիր, ափեր մտերմական բառերը, որոնցով կոչում էին իրարու, փոխվեցան խնամի ընդհանուր խոսքի։

Ահա այս դրիչակն էր մեղավոր, որ մի օր Հերիքնազին սաստիկ վախացրեց։

Խեչանենց Խեչանի տանը վաղուց ամենքը քնած էին. Մարիամը տնային ծանր աշխատանքից հոգնած՝ տեղը մտնելն ու խոմփոցը բարձրացնելը մին արեց. ինքը Խեչանն ամենքիցը շուտ էր յուր սիրելի անկյունումը հանգստանում, Հեղնարն էլ Հերիքնազի հետ մի անկողնում միմյանց գրկել քնել էին, ու բավականին գիշեր էր անցկացել։

Ի՞նչն էր ուրեմն պատճառը, որ հանկարծ մեր Հերիքնազին զարթնացրեց՝ չգիտենք. այսքանը միայն հայտնի է, որ նա յուր կողքը դատարկ գտավ։

Սկզբում Հերիքնազը շատ չմտածեց, բայց մինչ սպասում էր, թե ահա Հեղնարը կրկին յուր կողքը կմտնի, պարզ մի շշնջյուն լսեց, որ յուր անունն էլ մի քանի անգամ կրկնվեց։ Երկյուղը պատեց աղջկանը. ի՞նչ նորանշան երևույթ էր, գողե՞ր են մտել տունը, կամ թե ինքը Հեղնարը, միաբանած մեկի հետ փախչո՞ւմ է, մի դավաճանությո՞ւն կա։— Նա անկարացավ հասկանալ։ Ջա՞յն տալ արդյոք, թե մի փոքր էլ համբերի,— չկարողացավ վճռել. սառը քրտինքը ծածկեց նրա անձը։ Որպես և իցե Հերիքնազը հանեց գլխատակիցն յուր մինթանեն[1], գլուխն անցկացրեց ու տեղի մեջ մի քանի վայրկյան մնաց նստած։ Երևի թե շշունջ պատճառողները չլսեցին Հերիքնազի շարժվածքը, անընդհատ քչփչոցը շարունակվում էր։

Հերիքնազը լարեց յուր լսողությունն ու պարզ կարողացավ երկու ձայնից մեկը ճանաչել։ Էլ կասկած չկար, Հեղնարն էր մեկը, բայց ո՞ւմ հետ և ընչի՞ համար։ Այսքանը միայն հասկացավ Հերիքնազը, որ ձայները գալիս էին դրիչակի մոտից։

— Հա՞, հոգն իմ գլխին, ա՛յ, օյին[2], ինչ կըլնի, թող ըլնի,— մտածեց Հերիքնազն ու համարյա փորսող առաջ եկավ ու այնքան մոտեցավ ձայնին, որ յուր ձեռքը դիպավ Հեղնարի հագուստին։

Թե ի՞նչ լսեց, ի՞նչ սիրահարական ձեռնաշարժություններ եղան նրա առաջին, մենք ավելորդ ենք համարում մի առ մ՛ պատմել. մեզանից

1 Շրջազգեստ։ 2 Խազ։

ամեն մինը թող հիշի յուր պատանեկությունը, եթե նա մտել է խոհականության տարիքի մեջ, իսկ պատանիների համար՝ բոլորովին անտեղի եմ կարծում կրկնել. դեռ ես բերանս չբացած՝ իրանք ինձանից ավելի լավ թարգման կլինեն երկու քչփչողների խոսքերին. ի՞նչ ասենք, Հերիքնազը պարզ իմացավ, որ յուրյանց հարևանի տղեն՝ Շունհեռածոդենց Արշակը դրիչակի սրբության դեմ դավաճանել է և գողացել է մի գլուխը կապած[1] աղջկա սիրտ, ինչպես որ Հեղնարն էր։ Իհարկե, ոչ ոք այնքան չէր մեղադրել երկու պատանիներին ևս, եթե սրանցից մինն, ինչպես մեզ հայտնի է, նշանած չլիներ, անկասկած մի քանի օրից հետո երկու տունը խնամի կդառնային. բայց բանն այս է, որ Հեղնարն էլ յուր գլխի տերը չէր ու ինքն ենթարկվել էր Արշակի աչքերի ազդեցությանը։

Հիշեց Հերիքնազը, որ սկզբումն Արշակը շատ անգամ յուր կողմն էլ մի քանի տարօրինակ հայացքներ էր արձակում, որից ինքը փախս տվեց, սակայն շատ զղջաց խեղճը, որ այնքան հեռատես չի գտնվել, որ Հեղնարին էլ զգուշացներ Արշակի խարդախ և գրավիչ աչքերից։ Երբեք թույլ չէր տվել իրան Հերիքնազը մտածել, թե մի բաշիֆյարթմա արած աղջիկ կարող կլինի այդ աստիճան թույլ և անհաստատ գտնվիլ, որ ոտքի տակ տա հոր կամքը, օրիորդական համեստությունը, օտարների ասուլիսն ու ենթարկվի ուրիշների աչքերին։

Արդարև Սմբատն ամեն բանով գված էր, ամեն բանով շնորհալի, աշխատասեր և քաղցրալեզու, շատ ուժեղ և բարեկազմ, խարտյաշ և գանգրահեր. բայց մի հատկությամբ Արշակը ո՛չ միայն Սմբատից, գյուղի բոլոր երիտասարդներից էլ գերազանցում էր։ Այդ նրա թովիչ ու գրավիչ աչքերն էին։ Երբ որ նա յուր հաստ հոնքերը ցած էր թողում և աչքերը սևեռում մեկի վերա, մանավանդ եթե սիրաշաղախ լիներ նրա նայվածքը, ամեն բան պրծա՛վ. ամեն գոռոզ ու անընկճելի սիրտ պետք է խոնարհեր նրա հաղթանակի առաջին։ Մեծ հաստատակամություն պետք էր, որ դիմադրեր։

— Արշակի աչք ու ո՛ւնքն իմը պտի ըլնի, Սմբատի՝ բոյը, բուսաթն[2] ու մեկել շնորհքները,— ցանկանում էին գյուղի բոլոր երիտասարդները,— Բաղդադիցն էլ հուրի փարիներին[3] քամակիցս քցած՝ ընչանք ըսանդ քաշ կտայի։

Այս դիտելով, Հերիքնազը դատապարտում էր ինքն իրան՝ պատի տակին կանգնած տեղը, երբ լսում էր սիրո թևերի վերա նստած երևակայական աշխարհքի մեջ երկու կյանք վայելողների խոսքերը։ Նրա

1 Նշանած։ 2 Հասակն և տեսքը։ 3 Հավերժահարսներին։

բարկությանը չափ չմնաց, կանգնած տեղը դողաց, երբ նոցա համբույրի ձայնն առավ։

Սկզբում Հերիքնազը կարծեց, թե նոր է սկսել սրանց սիրահարությունները, բայց հիմա էլ կասկած չմնաց, պարզ լսեց, որ մոտ մի տարի է՝ ամեն գիշեր սրանք բոլորի քնելուց հետո՝ դրիշակի տակ ժամեր են անցկացնում։

— Ի՞նչ անեմ, լիս ընկնե՞մ, թե չիմանալու տամ ու կամաց-կամաց Հեղնարին խոսք հասկացնեմ ու էս չար ճամփից ետ դարձնեմ,— մտածեց նա և վերջինն ընտրեց։

Միևնույն ձևով փորսող ետ դարձավ Հերիքնազն յուր անկողինն և պինդ հազալով՝ Հեղնարի անունը տվեց։

Սիրտ ի թունդ, ափալ-թափալ[1] Հեղնարն իրան ձգեց անկողին։

— Հեղնա՛ր, Հեղնա՛ր,— կրկնեց Հերիքնազն և շարժեց ընկերուհուն։

— Ի՞նչ կա, Հերիքնազ ջա՛ն,— պատասխանեց կցկտուր Հեղնարը։

— Մի վատ երազ տեսա,— վրա բերեց Հերիքնազը,— սաքի թե դու արենծովն էիր ընկել, քանի ուզում էիր լող տալով ազատվիլ, մեր հարևանենց Արշակը կուռդ քաշում էր ավելի խորն ու խեղդել ուզում։ Մենք հույսներս կտրած՝ գլխներիս վեր էինք հատում, համա կռները քշտած՝ էն դհիցը Սմբատն առաջ եկավ, ընչանք կեսը ջուրն ընկավ ու Արշակին մի սիլլա[2] տվեց, ետ քցեց, քեզ ծտի պես ձեռների վրա առավ, ազատեց. դեռ ջրի ափը չէիր դուրս եկել, որ վեր թռա, տեսա տեղումս եմ։

Հեղնարի սիրտն սկսավ ավելի բարձր ու ցածր անել, նա լրջմտաբար հավատաց Հերիքնազին։

Մի քանի անգամ վճռեց Հեղնարը պատմել հանցանքն յուր ընկերուհուն, մի քանի անգամ սկսեց և էլի չկարողացավ շարունակել։

— Լա՛վ, լա՛վ, հերիք ա, ես ամեն բան գիտեմ, Հեղնա՛ր,— ընդհատեց Հերիքնազը,— դու էն բանն ես անում, որ մի օր հորդ ծնկները պտի քուչի մեջտեղը ծալվին, ինքը վեր ընկնի, հոգին տա. ո՞վ ա լսել, ա՛յ ճար կտրած, էդպես բան. աղջիկն երեխությունից նշանած ըլի, հերը գլխին կանանց ունենա ու էնքան երեսի մեռոնը վեր բերի, որ ուրիշի տղի հետ սեր անի՞. ի՞նչ կանես, ա՛յ հողը մեր գլխին, թե որ էգուց նշանածդ իմանա ու ետ կանի, ի՞նչ կանես, թե որ էդ պարծենկոտ տղեն էգուց աշխարհքովը մին անի[3]. դու հենց գիտես, թե դա սրտով ա քեզ սիրո՞ւմ, դա քո կարողությունի համար ա քեզ գերի դառել։

— Արևիդ մեռնի՛մ, Հերիքնազ ջա՛ն, էդ խոսքերն Արշակի համար մի ասիլ, նա ինձ համար գլուխը մահի կտա, նա ինձ սրտով ա սիրում,

1 Ի թթթել ական։ 2 Ապտակ։ 3 Հոչակի։

ես էլ իրան եմ սիրում. Սմբատն ինձ արժան չի, ես քնած-մոլորածի կնիկ դառնալու չեմ. իմ հոր հարստությունի տերն ես եմ, ես կուզեմ, որ իմ մարդը գեղամիջումը մի անում ունենա, ինձ էլ խանում ասեն, մեր դռանն էլ մենծավորներ վեր գան։ Վա՛յ ինձ, աստծանից թաքուն չի, քեզանից պահել եմ, մի տարի ա, որ Արշակի հետ ամեն քշեր դրիշակի ծակովը մեր սիրտն իրար բաց ենք անում։

Այս գիշեր երկու աղջիկները համարյա անքուն լուսացրին, ոչ մինն և ոչ մյուսը իրարու տեղիք չտվին, Հեղնարը պնդում էր, որ կամ Արշակը՝ կամ ոչ ոք, իսկ Հերիքնազը Սմբատի արժանավորություններն էր բարձրացնում ու Արշակին պարսավում։

— Ի՞նչ երեսով ես մտիկ տալիս Սմբատին, երբ որ խեղճը միամիտ գալիս ա մեր տունը՝ էն հուսով, որ իր նշանածին տեսնի։

— Ոնց որ քոռ գրող ու մահին. սաքի դու ո՞նց չես գլխի ընկնում, որ ես աչքով աչք չունիմ նրան մտիկ տալու. սաքի ինքն էլ ո՞նց չի հասկանում, որ մի տարուց ավել ա, որ ես հետը մի խոսք չեմ խոսել, անտեսի պես գալիս ա քեզ մոտ նստում՝ նստում ու վեր կենում հեռանում։

— Ամո՞թ քեզ, Հեղնա՛ր, ո՞վ մտքովն անց կկացներ, թե ուրիշին սիրելու համար ես նշանածիդ հետ սառը վարվում, մի քանի հետ խեղճ տղեն ինձ հարցրել ա, ես էլ՝ հողն իմ գլխին, միամտացրել եմ իրան, թե դու վաղվան երեխեն չես, ու ուսերը վեր էիր բերում. հիմի ամեն բան հասկանում ես, հիմի ամաչում ես նշանածիդ հետ խոսալը։

— Հերիքնազ ջա՛ն, շա՞տ ես հաճվանում դու Սմբատին։

— Վա՛յ, քոռանամ, մեր մհալումը նրա նման էլ ո՞վ կա, ծակ բերանը նրա գովքն ա անում, աշխարհքը նրա բարի սիրտն ու ղոչաղությունն[1] ա առակ շինել, ասում. ես ի՞նչ եմ, որ խալխիցը ջոկնվիմ, ես հո ամենքից ավելի եմ ճանանչում։

— Թե որ էդքան խելքամաղ ես էլել, ընչի՞ չես դու առնում նրան, հազիր ինձ էլ միանգամից կազատես իմ աչքի գրողիցը։

Հերիքնազը սարսափեց ու պինդ փաթաթվեց Հեղնարին. նրա մրտքումը նոր բան ծագեց. մինչև այսօր այդ բանի վերա երբեք չէր մտածել. իրա՛վ է, նա սիրում էր Սմբատին ամենայն սրտե, բայց իբրև եղբոր, իբրև յուր սիրելի քեռու աղջկա ապագա ամուսնու. այսօր նա ինքը քենի էր և քենին Հայաստանի մեջ հարազատ քրոջ հետ մի կարգումն է կանգնած, մի զանազանությամբ միայն, որ քենու վստահությունն ավելի մեծ է քրոջից։

Քույրն եղբորը, բնական է, կսիրի, բայց նրա մոտ ավելի համարձակ

1 Քաջություն։

չի լինիլ։ Մեր եղբայրները կարծում են, թե քույրերի պարտականությունն է յուրյանց գլխովը փարիլ, յուրյանց համար տոչորվիլ, գլուխը մահու տալ, եղբոր անունովը խանդաղատիլ, բայց յուրյանց կողմից բավական է, որ եղբայր են, դրանով վերջացավ փոխադարձ պարտականությունը, էլ գգվանք, էլ քաղցր վարվեցողություն, էլ ուրախ հայացք, մի անուշ խոսք՝ երբե՛ք, երբե՛ք, դրանք եղբոր կողմից ավելորդ են։ «Քույրն ասում է՝ եղբայր ունիմ, եղբայրն ասում է քույր չունիմ»,— ձայն է տալիս հասարակաց առածը. և եղբայրները կարծում են, թե ամենայն իրավամբ է հորինած այս նախադասությունը։ Փեսան այդպես չէ, մանավանդ նորափեսան, ևս առավել՝ նորանշան փեսան։ Նա ընդհակառակն յուր սրտի բոլոր քնքշությունները, որ պետք է գործ դներ նշանածի համար, անխնայաբար սփռում է յուր քենու առաջին, քենու գոգն է լցնում յուր բերած քաղցրեղեները, մի անկյունում կուչ եկած՝ քենու հետ կտուց կտցի է՝ տալիս ու մինչև գիշերվան կեսը քչփչում է։

Փեսան ու քենին ոչ ոքից չեն ամաչում, տան գլխավորները տեսնում և ուրախանում են, երբեմն էլ կատակով կրկնում.— ա՛յ խելոքներ, շատ մի՛ սիրիլ՝ ատել կա, շատ մի՛ ատիլ՝ սիրել կա,— բայց ոչ մինը սոցանից չի ամաչում պատասխանելը.— իմ փեսան ինձ համար գլխիցս առավել է, կամ թե՝ ով ինձ պես քենի ունենա՝ թող պարծենա, համ կսիրեմ, համ ամենքի կշտին էլ խոսքս բարձր կըլնի։

Իրավունք ունի նորափեսան պարծենալու. նշանվեցավ թե չէ, առաջինը քենին էր, որ հեշտացրեց յուր մուտքը նշանածի երեսը տեսնելու։ Շատ անգամ տղայի մտքովը դեռ չի անցկացած լինում կամ չի վստահացած լինում դեռևս զոքանչենց գնալու վերա մտածելու, որ իրեն դիմավորում է մի երեխա և հայտնում քիքիրի[1], դու հասկացիր՝ քենու, զարմացքը, որ ինքը փեսան արժան չի տեսնում նրան տեսություն գալու։

Մեզ հայտնի է, որ իգական սեռը բերան բանալու իրավունք չունի, որ նոցա լեզուները փակված են, որ կես դարու չափ սրանից առաջ ամուսինը տարիներով չի խոսել յուր լծակցի հետ, բայց զարմանալի է, որ փեսան բացառություն է։

Առաջին անգամը մեր ամոթխած քենին,— օրիորդ, թե տիկին— այդ միևնույն է, բայց գլխավորապես օրիորդը, դիմավորում է նորափեսային, բռնում սրա ձեռքը, սղմում յուր ձեռքի մեջ, ողջունում նրան և մինչև ականջները կարմրատակած փեսային քարշ տալիս դեպի տուն։

Մինչև այսօր էլ կան այնպիսի խստասիրտ և հնամոլ հայրեր, որ ոչինչ բանով չեն ցանկանում յուրյանց փեսաներին մինչև պսակի օրն

1 Քուրիկի։

յուրյանց դուռը ոտք ներս դնել տալ. բայց եթե այդ տանը կա մի քենի, հայրիկը թեկուզ երկինքը թռչի, նրա կամքը չպետք է կատարվի, փեսան մուտք կգտնի յուր զոքանչի տունը։

— Էս իրիկուն ես մեր դրսի պատի գլխին կաննած կըլնիմ,— ապսպրում է քենին յուր սիրելի նոր փեսային,— մութը որ լավ գետինն առնի, դու արի՛, պատովը բանձրացի՛, մի՛ վախիլ, ես կուռդ կրոնեմ, չեմ թողալ վեր ընկնիս, կամ թե՝ դրսի դռան բալնիքը մեջը կթողամ, ձեռդ սողնակովը[1] կոխի՛, մատդ կոտիտի[2] տակը տուր, հեշտ կբացվի, ես մեր չարդախի[3] փետերի տակին քեզ կսպասեմ։

Մի քանի օր ժամերով տուն չի մտնիլ մեր քենին, ձեռը ձգած փեսայի չուխայի[4] օձիքին՝ նրա հետ քաղցր զրույցներ է անում, իհարկե, յուր քրոջ վերա։ Տանն ամենքը գիտեն այս բանն և չիմանալ են ձևացնում։ Հայրն ևս մի օր նկատում է աղջկա շարունակ բացակայությունը, գլխի է ընկնում, բարկանում է կնոջ վերա ու վերջն ինքն էլ համոզվում է, որ ջահել տղա է, հարկավոր չի սիրտը կոտրել, աշխարհքի համար ադաթ[5] չի իրանց համար բեդաթ[6]։ Այս խոսքերը միտք բերելով, ձեռքը թափ է տալիս ափուն ու— գլխներդ քարն, ինչ ուզում եք արեք, ասում ու լռում է։

Այս մի դատարկ խոսքին էին մնում. զոքանչն ինքը դուրս է գալիս, աղջկանը ձայն տալիս, որ էդ գող կատվին, այսինքն՝ փեսային ներս բերի։ Քնքուշիկ փեսասեր քենին քարշ տալով անց է կացնում մեր սամաչկոտ նորափեսային այն նվիրական շեմքովը, ուր այժմ մի սիրտ բաբախում է։

Ոչ պակաս սրտատրոփ, պաղ քրտինքը ջանն առած գլխակոր, կարմրատակած, մոտենում է մեր նորափեսան, կամ լավ ևս է ասել՝ կուրորեն հետևում է յուր քենուն և դիմում դեպի տան վերին անկյունն, ուր հոնքերը կախ՝ կնճռած երեսով նստած է աներն, և նորահարսի նման համբուրում է նորա ձեռքը։

— Բարո՛վ ես եկել,— նույնպես հոնքերը չբարձրացնելով՝ ասում է անողոք աներն և լռում։

— Դե հիմի էլ նանի կուրծքը պաչի՛,— ներկայացնում է մեր ճարպիկ քենին,— սա էլ իմ մենծ ախպոր կնիկն ա՝ քո խանում բաջին[7],— Բոլորին ներկայացնում է նա, բացի մեկից, և այն մեկն, ամենքիս էլ հայտնի է, որ ինչպես ասած ա, մկան ծակը հազար թումանով է առել, ծալքի վարադուրի տակն է մտել, կամ մյուս սենեկում հոր գլխավերևն

1 Բանալու ծակը։ 2 Փայտյա փականքի միջի մանր առամները։ 3 Սրահ։ 4 Վերնազգեստ։ 5 Օրենք։ 6 Ապօրինավորություն։ 7 Խանում քույրը։

երեսը պատին տված՝ պպզած[1] է ու չի համարձակվում գլուխը բարձրացնել։ Քանի հայրիկն արթուն է, նա յուր դարանիցը չպետք է դուրս գա, իսկ հայրն այդ իհարկե լավ գիտե, շուտ անկողինը բանալ է տալիս, պառկում ու գլուխը վերմակի տակն արած՝ լուռ կենում։ Այնուհետև՝ ողջ մեկ է՝ ափուն քնած է. թե աչքերը պլստրակին արած, մի արանքիցը նապաստակի նման դիտում է, թե ինչպես յուր անպիտան փոքր աղջիկը քարշ է տալիս նշանած աղջկանն և քամակին մթնումը նստացնում, և հետո փոքր առ փոքր առաջ քաշելով՝ ծիծաղելով սասում.— դե լա՛վ, ամանչիլ մի՛. չեմ ուզում՝ ջերս քցի՛. մոտ արի՛, էս մեր թազա[2] խնամոնց տղին ձեռը տո՛ւր։

— Տո՛, տնաշենի տղա՛, դու էլ սրանից ավելի հարկևորն ես, բերանիցդ հո՛ քրեհ չե՞ն ուզում, կուռդ բան ուզովի հո չի՞, մեկնի՛ իրան, բարով տո՛ւր, հարց ու բարով արա քո աներանց մենծ աղջկանը,— քաջալերում է քենին փեսային։

— Բարո՛վ,— շատ կամաց, աչքերը գետնին ձգած, ձեռքերը դողալով, սիրտը վեր ու նիստ անելով, ձգում է մեր փեսան յուր ձեռքը։ Աներես քենին երկուսի ձեռքն էլ մոտեցնում է իրարու և պինդ սղմում։

— Դե ա՛ռ, հը, աստված տա՝ ընենց պինդ կպչի, որ էլ պոկ չգա։

Որքան և լինի՝ տղեն պնդերես է. այսչափը հերիք էր. այնպես է ձգում խեղճ աղջկա կուռը, որ փոքր է մնում պոկվի, թե որ նա կամավ մոտ չգա։ Ի՞նչ պետք է անել, ակամա հնազանդում է, առաջ է գալիս, չընդդիմանալով յուր ձեռքին ժամերով տրորվիլ յուր ապագա թագ ու պսակի ձեռքի մեջ։ Բայց թող այսքանով բավականանա մեր պարոնը, թող ուրիշ ոչինչ չսպասի, յուր նշանածի ձայնին ինքն արժանանալու չէ, թեկուզ հինգ տարի էլ նշանած մնան. այսչափս կրոնավորաց բավ է։

Եվ փեսան բավական է սրանով. նա ուրախ է, որ ամեն երեկո զոքանչենց տունը գալուս, կարող է յուր ձեռքի մեջ ունենալ նշանածի ձեռքն և մի անկյունում նստած՝ յուր սիրեկանի ու քենու հետ ասել, խոսել, ծիծաղել, հանաքներ անել, յուր խոսքերին քենուցը պատասխան առնել։ Քենին նշանածի բերանն է։ Եվ այս նվիրական էակը, այս քնքուշ արարածը, փեսայի և նշանածի միջնորդը՝ քենին է. քենին՝ նորափեսայի նոր քույրը, որին յուր բարեսրտությունի համար փեսան քրոջից ավելի է սիրում, սիրում է սուրբ սիրով, սիրում է առանց մի չար միտումի, սիրում է, ինչպես կսիրե քույրն իր եղբորը, մայրն յուր աղջկան և այլն։ Նույն և մի համակրությունն էլ, նույն և մի փոխադարձ սերն էլ այս պարզ, անմեղության տիպար քենին է տածում յուր մեջ՝ ի սեր

1 Կքել։ 2 Նոր։

յուր հարազատ քրոջ՝ դեպի նրա նշանածը։ Ոչ նոցա մտքովը մի օրից մի օր խղճի ընդդեմ բան կանցնի և ոչ մենք իրավունք ունինք բամբասելու։

Քենին ու քույրն՝ երկուսն էլ մեկ են. փեսան եղբորից ոչ ոք չի ջոկել. օրիորդն իրավունք ունի կուժն ուսին ջրի ճանապարհին մի քանի րոպե կանգնել ու քաղցր և հեզահամբույր դեմքով փսփսալ մի երիտասարդի հետ, և ամեն մի գյուղացի սրբապղծություն կհամարի մի չար խորհուրդ մտքովն անց կացնել.— քենի ու փեսա են՝ կասեն ու կերթան յուրյանց գործին։ Այո՛, քենի ու փեսա են, նշանածներ հո չե՞ն, որ իրար շվաք տեսնելուս մինը հարավ՝ մյուսը հյուսիս փախչի։

Այս սուրբ և նահապետական սովորության դեմ օրինակ չէ եղել, որ մեկը դավաճանի, էլ ի՞նչ զարմանք ուրեմն, որ մեր Հերիքնազն էլ կհետևեր. ի՞նչ կա, որ Հեղնարն յուր քեռու աղջիկն է և ոչ քույրը, նոքա երեխայությունից միմյանց մոտ են մեծացել և հարազատ քրոջ պես իրար սիրում են, ուրեմն Սմբատը Հերիքնազի փեսան է, իսկ փեսան սուրբ է մինչև մի քանի սերնդի համար ևս։ Չհասությունը մեր մեջ ոչ միայն օրենքով է արգելված, չհասությունը մահացու մեղք է և՛ ժողովրդի հայրենի սովորության համաձայն։

Հայոց ողջախոհությունը մինչև յոթը պորտն է ջոկել, իսկ մինչև այդ սահմանը բոլոր բարեկամներն յուրյանց ազգականների համար սուրբ և պաշտելի են եղել։

Չգիտեմ, օտարների ազդեցությունի՞ցն էր, թե ժամանակի պահանջն էր, որ մի քանի տարուց հետե մեր նախնյաց այդ սուրբ ավանդության պատը խրամատվել է, առաջվան նման էլ շատ չեն հարցնում, ազգակցական հարաբերություններն էլ այնքան պինդ չեն, երեք-չորս պորտից մարդիկը միմյանցից օտարանում են և ձգտում՝ խնամական կապով կրկին միանալու։

Մեր շահասեր սուրբ հայրերին էլ այդքանն էր պետք, իհարկե սակավ բացառությամբ. կանոնագիրքը ձեռքներին, յուրյանց խղճին է մնում այս չհաս համարել, մյուսը՝ հաս։ Վերջումն, իհարկե, ամենքն էլ հասնում են, երբ որ լիաբուռն աջհամբույրն նրանց գրպանը կամ խուցն է մտնում։ Իսկ այդ սիմոնականությունն, այդ կաշառակերությունը սակավ գայթակղության պատճառ չի դարձել, հոգևորականության վարկն և հարգը ստորացնելու սակավ առիթ չէ եղել։ Ժողովուրդն այսպես է, ինքը կտա կաշառը, ինքն էլ կդատապարտի առնողին։

— Հա՛, դրուստ եմ ասում, Հերիքնազ ջա՛ն,— կրկնեց Հեղնարը,— թե որ Սմբատին դու ըտենց սիրում ես, դրանից ավելի լավություն

անիլ ինձ, թե որ նրա սիրտը քեզ քաշես, քեզ վրա տաքացնես ու ինձ ազատես։

— Քոռանա՜մ ու կուրանա՜մ, օխտը տակ երկինքը փուլ կգա՜, ինձ տակովը կանի՜, թե որ էդ բանն ես միտք անեմ։

— Չէ՜, Հերիքնազ ջա՜ն, ոտիդ տակի՜ն ղուրբա՜ն գնամ, ինձ ազատի՜, Սմբատը թեկուզ երկնքիցն էլ վեր եկած ըլի՝ ոտներն ամպոտ, ինձ պետքը չի, իմ բերնի սրբությունն ա, ե՞ նրան չեմ կարող սիրել։

Շատ դժվար էր Հերիքնազի դրությունը. նա յուր ազնիվ սրտովը իրան թույլ չէր տալ քեռու հացին նենգությամբ նայել, քեռու փեսայի սիրտը գողանալ, բայց միևնույն ժամանակ յուր կամքի հակառակ՝ Հեղնարի ասած խոսքերը մտքիցը չէին դուրս գալիս։ Հերիքնազն երկմիտ չէր Սմբատի լավ հատկություններին մասին, նա կասկած չուներ նույնպես, Սմբատի յուր վերա ունեցած քաղցր ակնարկության համար. նա տեսնում էր, որ Սմբատը սրտամնա է լինում Հեղնարի կոպիտ վարմունքից, երբեմն էլ անբավականությունն իրան հայտնում էր, բայց այս նրան տեղիք չէր տալիս սրբության դեմ մեղանչելու։ Հերիքնազի վերա էր երկու կողմից միջնորդի դեր խաղալու պարտականությունը, երկու նշանածների սառած սերը վերանորոգելու պարտքը. բայց, մի կողմից, ինքը շատ անգամ ականատես էր լինում յուր ընկերուհու դրիջակից Արշակի հետ յուր կոչմանը հակառակելուն և, մյուս կողմից, չէր կարողանում բոլորովին ետ պահել Հեղնարին այդ տղայից։

Յուր ծանր և խոհեմ բնավորությամբ ու քաղցր լեզվովն, արդարև, մի քանի օր ներգործում էր Հեղնարի վրա, խոսք էր առնում, որ ետ կկենա Արշակից, բայց էլի փոքր միջոցից հետո ականջովն էր ընկնում դրիջակի մոտի քչփչոցը։

Շատ անգամ կամեցավ Հերիքնազն յուր մորն ու քեռուն հայտնել բանի էությունը, բայց միշտ ինքն իրան հաղթում էր։

— Չէ՜, թող ոչով չիմանա, ես եմ մեղավորը, ես չհասկացրի Հեղնարին Արշակի չար միտքը, հիմի էլ թող ես էնքան տանջվեմ, որ կարողանամ ետ դարձնել նրան էդ չար ճամփիցն ու իր նշանածի վերա սիրտը տաքացնեմ։

Որչափ և այս խոսքերով Հերիքնազն ինքն իրան քաջալերում էր, բայց մի բան յուր սրտումը ծիտում էր, նա օրըստօրե հալվում ու մաշվում էր։

— Ա՜խ, Հեղնա՜ր, քեզ ի՞նչ ասեմ, որ դու սատանեն իմ մտքումս ծնացրիր, էս կրակն իմ սիրտս քցեցիր, որ մի օր պտի ինձ էրի ու փոթոթի,— մտքումն հանդիմանում էր նա Հեղնարին, բայց շատ անգամ

ակամա քաղցր էր թվում իրան անձամբ խոսք բաց անել գիշերները նրա հետ։

— Հեղնա՜ր, դու ո՞նց չամաչեցիր՝ էն խոսքն ինձ ասեցիր։

— Հա՜, Հերիքնազ ջա՜ն, հիմի էլ եմ ասում, ինձ մի մենծ բեռից կպրծացնես, քիրություն, մերություն արած կըլնես, թե որ դու Սմբատի սիրտը քեզ քաշես. ի՞նչ, ես սուտ չեմ ասում, Սմբատը լավ տղա ա, երկուսդ էլ մին-մնի արժանի եք. համա մենք իրար չենք գալ, ձեր բնությունները մանկուց իրար բռնում էին։

— Ամո՜թ ա, ամո՜թ, Հեղնա՜ր, էն օրը մահ ըլի, որ քիրը քվոր նշանածի վրա սիրտ ունենա, քվոր բախտին խեթ աչքով մտիկ տա։

Վերջապես միշտ հաճելի էր Հերիքնազին Սմբատի և յուր մերձավորության համար Հեղնարից խոսքեի լսելը, բայց միշտ աշխատում էր ջնջել, անհետացնել յուր սրտից այդ սերը, որ քանի գնում՝ աճում և արմատները խոր էր տարածում։

Բայց Հերիքնազը պահեց, պահեց հաստատակամությամբ, հաղթեց այդ հորդավազ հեղեղի հոսանքին, մինչև որ մի քանի շաբաթից հետո էլ չկարողացավ դիմանալ, լավ համարեց ճշմարիտը խոստովանել Սմբատին, որով թե յուր կիրքը զսպել, թե Սմբատին յուր նշանածիցը չսառեցնել, խոստանալով Հեղնարին էլ համոզել։ Այդ միջոցը ընթերցողին քաջ հայտնի է, եթե նա չի մոռացել վերոգրյալ գլխներում պատմածներս։

Այն խորհրդավոր գիշերի համար եմ ասում, երբ Արշակին շորշոփ դիպավ, երբ նախանձահույզ Սմբատը մի ակնթարթ մնաց՝ պիտի ջախջախեր յուր ախոյանի գլուխը և, վերջապես, երբ ազատիչ հրեշտակը փրկեց Արշակի կյանքը։

Այո՜, ընթերցո՜ղ, հիմա կարծեմ քեզ հայտնի եղավ, որ Սաթումենց տան ճլորթու ժամանակը պատահածն էլ սրանից հետո էր. քեզ համար հիմի պարզվեց, թե ի՜նչ էր նշանակում այն օրվան Սմբատի շփոթմունքը. Հերիքնազի յուր ճկույթը կծելն և հաշտարարի ու մխիթարիչի դեր կատարելը։

Այն գիշերվան անցքից և տված խոստումից հետո Սմբատն էլ յուր խոսքին հաստատ կացավ. նա նույնպես սովորաբար հաճախում էր Խեշանենց տունն և աշխատում իրան ավելի ուրախ ցույց տալ։ Իսկ միամիտ Հեղնարն երբեք մտքովն էլ չանցկացրեց, թե հրահանի կայծեր ցայտող սատանան մարմնավորված՝ ամեն օր Ֆահրատի փշի պես յուր առաջին ցցված է, յուր չսիրած նշանածն է։

Իսկ կայծերի զորությունն այնքան ազդու եղավ, որ այնուհետև եր-

կու սիրականները հավիտյանս չհամարձակվեցան միմյանց երեսին նայել, մանավանդ երբ գյուղումը հռչակվեց, թե Շունհետածողենց Արշակն երկու-երեք շաբաթը մի անգամ դիվահարվում, բերանը փրփրակալում, վայր է ընկնում, մինչև Մողնու սուրբ Գևորգի ճկույթը մեջը թաթախած ջուր են բերում, խմացնում, նոր ուշքի է գալիս։

Այդ օրից Հեղնարը մի սառնություն զգաց դեպի Արշակն և խոստացավ Հերիքնազին՝ աշխատել յուր նշանածին սիրել։— Է՛հ, ի՞նչ անեմ,— հավելացնում էր երբեմն Հեղնարը,— պտի ճակատիս գրվածքին հնազանդիմ, համա էդ զոռով արշին կալ լծելու պես բան ա։

ԺԷ

ԹԱՎՉԻ

Ձմեռվան պղտոր օրերն անցնում են, մեծ պասը բերում է յուր հետ Արարատյան աշխարհի համար ջերմ և պայծառ արեգակը. ձյունները հալչում՝ առուներ են կազմում, գետերը բարձրանում են, գետինը կակղում կանաչում է, հազար տեսակ բուսեղենների ու բանջարեղենների հետ դուրս են գալիս գյուղացվող աշխատանքի քաղցր և կարևոր օրերը. Երկրագործն յուր գութանն է սարքում և մանը բռնած՝ դաշտը հերկում, այգեգործն յուր բահն ու հոտացն է սրում և այգին մշակում, թաղած տեղիցը Ղազարոսի հարությունը տալիս մեռած խաղողի բարունակներին և հոտոցն առնում, ավելորդ մատները կտրատում։ Գյուղացի կանանց գործն էլ շատացավ. առավոտվա դեմ շուտ հավաք-տեղակ են անում և մշակողների համար ճաշ կերակուր պատրաստում, ջահել հարսների ու աղջիկների հետ ուղարկում հանդը կամ այգին, հարսներին էլ պատվիրում են, որ հացը վեր դնեն, իրանք աղցան քաղեն իրիկվան բանվորների համար։ Պառավ կանայքն ու անգործ ծերունիքն էլ ուրախացել են. ժամերն երկարացել են, օրն երեք անգամ փայտը սյուն տալով ժամ են գնում, տերողորմյան քաշելով դուրս գալիս և տերտերների ու իշխանների հետ քաղցր զրույցներ անելով՝ տուն դառնում, արևկող տեղերումը նըստում ու աստուծո բարիքը, արևի տաքությունը վայելում։ Երեսփոխանն էլ զատկվան պատրաստության հետ է։ Անցյալ կյուրակի տերտերը քարոզեց.

— Օրհնյալ ժողովուրդ,— աղբրի նման բխում էր տեր Հոր բերանից այս ազդու խոսքերը,— գիտեք, որ մեր պապենական նախնյաց սովորությունն ա, զատկի կիրակի առավոտյան հայ քրիստոնեն պտի ծեգելահան ախաոի[1] մսով բերան բաց անի. շաբաթ իրիկունը նավակատիկ ենք ըլում, մսեղեն չենք ուտում. էն քրիստոնեն, որ ախաոով չմասնավորվի, սաղ տարին իրավունք չունի մսի համ տեսնելու։ Ախաոի եղը, որ կա, հայ քրիստոնեի նշանն ա. մենք էլ հո, փառք աստծու, հայ քրիստոնյա ենք. մենակ մենք չենք. աշխարհիս մեջ տասներկու խաչապաշտ կան, բոլորն էլ հայ քրիստոնյա են։ Դե՛, որ էդպես ա, ժամից հետո դռանը հավաքվեցե՛ք, երեցփոխի հետ երկու մարդ ջոկեցե՛ք, որ նրանք ախաոի համար փող հավաքեն զատկին մասնակցելու համար։ Աստված ձեր քիսի բերանը բաց պահի, որդիք, լիաբուռը տվե՛ք, մի՛ խնայեք, էլի ձեր վրա պտի բաժանվի, աղքատ-ուղքուտ պտի ուտեն. թե որ մի բան էլ փողիցն յա կաշուցը կմնա, էն էլ եկեղեցու, տերտերի բաժին կերթա, էլի վարձքը ձերը կըլնի։ Օրհնյալ եք և օրհնյալ եղերուք, ա՛մեն։

Մեր Խեչանը, ինչպես ասացինք, թեպետ ամեն բանից փախչում էր, բայց յուր մեջ ուխտ էր արել, որ ամեն տարի ախաոի փող հավաքողներից մինը ինքը պետք է լիներ։ Այս տարի էլ յուր պաշտոնը արիությամբ կատարում էր։

Տանուտերի և իշխանի գործերն էլ շատացել է այս մեծ պասին։ Գարունք է, գարնան հարկահանության օրերն են. աղքատի սև օրը դուրս եկավ։

Մի կողմից դաշտն յուր մշակությունն է պահանջում, մյուս կողմից տանուտերը կանգնացրել է յուր գգրին գյուղի մոտ, արգելում է տան գլխավորներին աշխատանքի գնալու, ստիպում է, որ ետ մնան գործից՝ թավշի[2] անելու. գործը շատ ստիպողական է, տանուտերը գիր է ստացել, երկու օրից յասավուլ պտի գա խարջ[3] հավաքելու։

— Գնացե՛ք, ի՞նչ կուզեք՝ արեք, ես մեն-մենակ մարդ եմ, գործիս շատությունից ձեռս բերանս չի հասնում, ես ի՞նչ կարող եմ անել, ինչ կուզեք՝ կտամ, թաք ինձ ազատ թողե՛ք,— խնդրում են ամեն մինը և գլխները հեռացնում թավշի անելուց ու աշխատում գնալ իրանց գործին։

— Չէ՛, գլուխդ քարը, թե հիքիդ էլ կշորանա, գութանիդ եզներն էլ կստանկոտին դաշտումը,— կշտամբում է տանուտերը խեղճ գյուղացիներին,— խարջ պտի հավաքվի, թավշի պտի ըլնի. ամենքդ էլ որ գնաք, էլ ո՞վ գեղի ցավը կքաշի, հարիր կտոր հո չե՞մ ըլնիլ։

— Թե ձեզանում մի փորացավանք չկա, ընչի՞ չեք կիրակի օրը քցում թավշին, հասարակությունը տանը կըլնի, ամեն մարդ էլ կիմանա, թե ի՞նչ եք անում,— պատասխանում են մի քանիսը։

---

[1] Զատկվան մատաղ։ [2] Նախահաշիվ։ [3] Հարկ։

— Կիրակի շատ ուշ ա, էգուց-էլօր յասավուլ կգա։

— Գնացե՛ք, այ տնաքանդնե՛ր, գեղի արյունը ծծողնե՛ր, գնացե՛ք, ինչքան կուզեք գրեցե՛ք, երեխես կնախեմ կտամ. ես էսօր գործից ետ չեմ կարող ընկնիլ. սաքի որ խալխը տանն էլան, ձեր անկուշտ բողազից մենք բան կարանք խլի՞լ. գնացե՛ք, ախպե՛ր, ես իմ կողմանե խոսք եմ տալիս, որ ոչ տաք խոսամ, ոչ հով. էսօրվան մի օրս հազար թուման արժի ինձ համար,— ասում են ամեն մինը և գլխները թափ տալով հեռանում։

— Ա՛յ, տեսե՛ք, էսօրեն էգուց էլ տանուտերի ու իշխանների վրա ծակ ու ծուկերումը մենծ-մենծ բրթբրթաք ոչ, չասե՛ք, թե թալչին հասարակությունից թաքուն են անում ու գեղի վրա մենծ-մենծ ծախսեր բարձում,— արդարացնում է յուր գլուխը տանուտերն և լինակատար իրավունքն յուր ձեռքն առած՝ գլխին հավաքում յուր մի քանի համամիտ իշխաններին և բազմում եկեղեցու պարտիզումը, կամ մի արևկող տեղ ու թավշի անում։

— Դե՛, տանուտե՛ր, դու քո արած ծախսն ասա,— ձայն է տալիս թավշի անողներից մինը,— տեսնենք, թե աշնանից ընչանք էսօր քո քիսիցդ գեղի համար ինչքա՞ն ես մսխել։

Տանուտերը հաշվում է.

— Յասավուլ Մարգարին երկու շաբաթ տանս պահեցի, երբ որ եկել էր դարավուլ հանելու. օրական նրա վրա ջոկ խարջ եմ արել մի-մին մանեթ. էս կանի 16 մանեթ. հիմի սրա վրա էլ ավելացրու նրա տված նեղությունները՝ մեր անհանգստությունը. էս ձեր խղճմտանքին եմ թողնում։

— Շատ իրավունք ունի տանուտերը, թե որ յասավուլը տանը չըլներ, կնիկը կարող էր դռները փակել, իր հարևանի տունը գնալ. համա զոնաղի համար կերակուր պտի էփվի, տաք ու հով պտի անվի, ես ինչ գիտեմ՝ հազար ու մին զալմաղալ. ես իմ խղճմտանքով կասեմ, որ էդ չարչարանքը 20 մանեթ պտի հաշվվել. դուք ի՞նչ կասեք, ա՛յ էլլիկ, մեր տանուտերը մեղք չի՞,— բարձրաձայն վճռում է մի հանդիսական։

— Դեռ քիչ ա, դեռ շատ քիչ ա,— ձայն են տալիս ամեն կողմից։

Տիրացուն, որ քարի վրա պպզել, մի թերթ թուղթ երկայնությունից միջի վրա ծալել, ծնկանն է դրել ու մի պղնձե երկաթակոթ պարսկական թանաքաման էլ մեջքին խրած, փետուրյա գրիչը ձեռքին սպասում էր ծախքը գրել, գրիչը մոտեցրեց թղթին։

— Կա՛ց, տիրացո՛ւ,— ձեռքը բռնում է մի ճշմարտախոսը, որին մենք Հաքուլ անունը տանք,— թե որ ինձ կհարցնեք, յասավուլ Մարգարի համար տանուտերը մի քոռ սև փող էլ չի խարջել իր քսից. իմ միտս

ա, որ գզիրն օրական տասը-քսան ճուտ էր կալնում սրա-նրա տանից, գավերով գինի էր ուզում, շուշեքանցով արաղ։ Մի օր աչքովս տեսա, որ բրինձն էլ փեշը լցրած՝ Մելումենց տանիցը տանում էր։ Ես իմ երեխեքանց կարմիր արևովն օրթում կուտեմ, որ յասավուլ Մարգարի գեղումն էլած վախտը տանուտերն իր օղլուշաղովն էլ նրա սայիցն[1] էին ապրում. ցախն ի՞նչ ա, հասարակ ցախը, էն էլ շալակներով խալխի հիքանոնցիցն էր կրել տալիս, ի՞նչ ա՝ թե Մարգարի համար կերակուր պտի էփվի։ Ղորթ չի՞, Թորո՛ս,— դարձավ յուր մոտ նստողներից մեկին,— մի օր՝ որ գզիրը հինգ ճուտ ձեռին ուներ, մինն էլ ուզեցավ Դռենց պառավի թխսի տակիցը բռնել, պառավն ուշունց տալով մոտ եկավ, ես ի՞նչ ասեցի։

— Իմ միտս չի,— մրթմրթաց Թորոսը։

— Տո՛, կեղծավո՛ր, ես չասեցի՞, թե Մարգարը մի մարդ ա, դու հինգ ճուտ ձեռիդ ունես, հերիք չի՞, որ խեղճ պառավի էլած-չէլած ութ ճուտիցը մինն էլ բռնում ես։

— Միտս չի, ասում եմ, ուրիշը կըլնի էլել։

— Տո՛, անաստված, դու չէի՞ր, որ կողքիս բրթեցիր, թե էդ ո՞ւր ես ասում. մի էս հարցրո՛ւ, թե յասավուլ Մարգարն էս քսան օրվա մեջ տանուտերի հացի պռունգը մի օր պոկել ա՞, անեռեսի պես օրը մնի տանը զոնաղ են տալիս։

— Չէ, ես չեմ ասել։

— Չքվի՛ս ու չորանա՛ս։

— Ձենդ կտրի՛, քեզ ճշմարտախոս ո՞վ դրեց,— աղաղակ են բարձրացնում ամեն կողմից,— համեշա դու պտի կոտրած քթալի պես մեջ ընկնե՞ս, մկան նման կարասը հոտացնե՞ս. քեզանից ի՞նչ պտի գնա, որ վատամարդի ես ուզում դառնալ. 400 տան վրա ամենքին մի-մին սհաբզոան[2] էլ չի ընկնիլ, քո բաժինը ես կտամ, թաք դու սուս կա՛ց։

— Չէ, ախպե՛ր, ես իմ հոգին սևացնիլ չեմ, ընդուր եմ ըստեղ նըստած, որ ամեն բանը հալալությունով դատեմ։

— Վեր կա՛ց, կորի՛ գետնի տակը, քամակիցդ համեցեքավոր հո չղրկեցինք,— բարկացավ տանուտերը,— ես էլ որ սուս եմ կենում, դուք էլ ջլիս գլխիս եք նստում, նհախ չէի ձեր գեղի հոգսն էլ քաշում, յասավուլին էլ ուտացնում ու խմացնում։

— Ես էլ էդ եմ ասում, բաս էլ ո՞ւր ես յասավուլի անումովը գեղի վրա ծախս դնում. դու ինքդ քո բերանովն ասեցիր, որ քո տանը նրա համար խարջ չունիս։

---

1 Շնորհիվ։ 2 30 կոպեկ։

— Շատ լավ ա անում, որ ծախս ա քցում, չուզողի աչքն էլ ա հանում. թե կուզես՝ կորի՛, գեղամիջին քունջ ու պուճախում փսփսա՛, ամենքին էլ հասկացրո՛ւ, որ յասավլի համար ավելնորդ ծախս են դրել. մին դու բան դուս կտանիս, մին էլ քեզ պես անիծելքները,— ճղճղացին տանուտերի համամիտները։

— Ախպե՛ր, ուզեցի ոչ, հորս խերին ըլնի, հենց իմանանք մի քանի մանեթ չիբիցս վեր ընկավ կորավ,— վիրավորված ասում է տանուտերը, հետն էլ յուր համախոհներին ակնացույց անում խեղճ Հաքուլին։

— Ո՞նց թե չուզեցիր. թե որ քո արած ծախսերը մեջ չդնենք, ասել ա թե իմ տված հինգ լիտր արաղն ու կես կարաս գինին ջուր կկտրըվի, էլի՛։

— Ի՞նչ գինի-արա՛ղ, Սեփո՛,— մեջ մտավ կրկին Հաքուլը։

— Աչքերդ չորս բաց արա՛,— ծղրտաց Սեփոն,— կաղանդին մովրովին ու քոմակչուն գնացած գինի-արաղն իմ կարասիցն ու տակիցն էր։

— Փչի, հա՛, լեզվիդ տակին ոսկոռ չկա, որ ծակի. տո՛, ես չէի տանո՞ղը, մի հարցրու տանուտերին ու գզրին՝ տեսնենք ո՞ւմ երեսը կսևանա. չէ՞ որ Անթանենց կարասիցն ես եմ չափել, ձիուս բարձել ու տարել։

— Ղորթ ա, մովրովի համար Աթանենցից էր, համա միրզեքանց ու ձեռ ու ոտի համար Սեփոյիցն առա ու քեզանից ետը ղրկեցի,— պաշտպան հանդիսացավ տանուտերը։

— Իմ տունը քանդվի՛, թե էդ օրն ինձանից ավելի Սև ջրի գլուխն աշտարակցի ոտ դրած ըլնի,— երդվեց Հաքուլը։

— Դու խաբար չես, Հաքո՛ւլ, օրթում-կրակը մի՛ ընկնիլ. թե ինձ չես հավատում, գզրին հարցրո՛ւ, ընենց չի՞, գզի՛ր, գնացել ա՞, թե ոչ։

— Տո՛, բաս չի գնացե՞լ։

— Ո՞վ գնաց,— պնդեց Հաքուլը։

— Ես ի՞նչ գիտեմ, ո՞ւմ միտն ա, օրական տասը մարդ հա գնում, հա գալիս է։

Հաքուլը դառն ծիծաղ բարձրացրեց, իսկ Սեփոն և յուր կողմնակիցները կատաղեցին.— մասխարա ունիս՝ գլխիդ տո՛ւր, տանուտերը սուտ չի ասում, խուլ ականջովդ լսեցիր, որ գզիրն էլ վկայեց։

— Իհարկե, ասած ա՝ տանտիրոջ վրա գիս վեր էկավ, ո՞վ տեսավ— գզիրը,— հոգոց հանեց Հաքուլը։

— Օրը ճաշ դառավ, տանուտե՛ր, ի՞նչ ես ամեն դարդակ խոսողի ասածը չվանի դնում,— գոչեցին այս և այն կողմից,— դու քո արած ծախսերն ասա՝ պրծի, էս խալխն էլ իրանցու գյորա գեղիցն առնելիք ունին՝ պտի գրվի. թե որ ամեն մի խոսքի համար սրա պես մարդիկը մեջ ընկնին, երկու շաբաթ կանց կենա՝ թավշի չի գլուխ գալ։

— Գրի՛, տիրացո՛ւ,— տնօրինեց տանուտերը,— քսանուհինգ մանեթ ձիու քրեհ եմ տվել մովրովի կուշտը գնալ-գալու համար։

— Իմ հոր գերեզմանը վկա, որ դու միշտ կոռի ձիով ես գնացել եկել. դեռ Երևանու բազարը քո տան համար առուտուրի էլ խալխի ձիովն ես գնացել, դեռ քո հանդի խուրձն ու հիքանոնց խոտն ու ցախն էլ կոռի ձիով ես կրել,— էլի խառնվեց մեր Հաքուլը։

— Ա՛յ իշխաններ, շիտակ ա խոսում էս մա՞ռդը։

— Չէ՛, չէ՛, գլխիցը դուս ա տալիս, դու քո օրումդ կոռի ձի չես նստել, քրեհ ես տվել։

— Տիրացո՛ւ, դու նշանակի 25 մանեթը։

— Էլ ի՞նչ ունիս, տանուտե՛ր, էս գրվեց։

Տանուտերը շարեց մի քանի ուրիշ ծախքեր, որոնց ամենքին էլ հակառակում էր Հաքուլը, բայց նրան լսող չկար, տիրացուն գրում ու գրում էր։

— Մի հաշվի՛, տե՛ս, իմ արած ծախսն ի՞նչքան էլավ,— վերջապես ասաց տանուտերը։

— 225 մանեթ։

— Ես ու իմ խղճմտանքը, որ շատ քիչ ա քցում, 300-ի-էլ կհասնի, թե որ մի քիչ աստվածդ ուրանաս,— շողոքորթում էին յուր խորհրդական աղաները։

— Խե՛ղճ աղքատ ժողովուրդ, էս ամենը քո ջանիցը պտի դուս քաշեն ու մարսեն,— խոր հառաչեց Հաքուլը։

— Հիմի, տանուտեր ջա՛ն, էլլիկից[1] տարածներդ ասա՛, որ գեղի հաշվումն առել ես։

Տանուտերը գրպանից հանեց մի երկար ծալած թղթի կտոր և կարդաց.

— Սարդարաբադու առուն հանելու մշակի մասին մովրովին տված կաշառքի համար Մաթոսից առա 200 մանեթ, Թաթոսից՝ 216 մանեթ, Սեփոյից՝ 300 մանեթ. սրանց ամենքին էլ ջոկ-ջոկ սանադներ[2] եմ տվել գեղի անումովը. հիմի վադեն[3] ա, պտի գեղամեջ դնենք ու տանք. շահն էլ տասին երկսով պտի հաշվենք։

— Էդքան կաշառքն ընչի՞ տվիք ձեղուգլխու։

— Ո՞նց թե ընչի՛ տվիք. միտդ չի՞, որ օրական 150 մշակ էին ուզում մի ամիս ժամանակի առվի վրա բանելու։

---

[1] Համայնքից։ [2] Մուրհակ։ [3] Ժամանակ։

— Հետո՞, չտվի՞ք։

— Էդքան չտվինք, 40, 20 մարդ գնաց՝ վերջացավ։

— Ա՛յ մարդիկ, աստվածներդ միաներ բերե՛ք, տուաջ՝ որ օրական ոչ թե 150, 15 մարդ էին ուղում մեր գեղից. մին էլ՝ որ ոչ թե մի ամիս, 15 օր էր գրած հրամանումը, և մեկ էլ՝ որ հաշիվ արինք, բոլորն էն ժամանակի գներովը բռնեց 250 մանեթի մշակ, իսկ դու հինգ-վեց հարիր մանեթի ծախս շանց տվիր էս մի բանի մեջ։

— Դու գրի՛, տիրացո՛ւ, ի՞նչ ես դունչդ ցցել սրան մտիկ տալիս, տանուտերը հո սուտ չի՞ ասում. սաքի մեզ էն մովրովի բնությունը հայտնի չի՞, որ քնած վախտն էլ ձեռը բաց ա քնում, թե ինչ ա, բան դնեն մեջը. թե մարդ կըլնիս, ամեն փուչ բանի համար կաշառք չես տալ, տես թե քո գեղի գլուխն ի՞նչ կգա.

— Ես ու իմ աստվածն, ըտենց ա,— արդարանում էր տանուտերը,— ջինգյանա[1] ուզվորի նման աչքը տուն մտնողի ջիբին ա. մհալ հարուստների անումն էլ հենց լավ սերտել ա, որ էլ խաբիլ չես կարող։ Մի օր ինձ ասում ա՝ ձեր խեչանենց խեչանն ա հարո՞ստ, թե Իսումը։ Ես էլ պատասխան տվի, թե մովրովն ապրած կենա, գեղրցու հարուստը ո՞րն ա. դառը քրտնքով մի կտոր հաց ոնց ըլում ա, աշխատում ենք ամենքս էլ։ Համա, երնում ա, որ հավատաց ոչ, գլուխը պտրտեց ու ծիծաղեց։

— Հլա լա՛վ, որ մեր Սաքոն մովրովի կշտին ա, գեղի դիհը պահում ա, թե չէ մենք կոռ ու բեգյառի տակից գլուխ չէինք բարձրացնիլ,— կցեց տանուտերի կողմնակիցներից մինը։

— Հա՛, շատ հոսկացել եք,— ընդդիմացավ Հաքուլը,— գառը գիլին պահ տվածի պես ա, Սաքոն տղրկի պես սաղ մհալի տրինն ա ծծում։

— Էլ ի՞նչ ունիս, տանուտե՛ր։

— Արաղի շիրախանեքը մհրելու[2] եկող մեծավորի համար կաշառքի փող վերցրի Մուրադից պարտք 200 մանեթ, Բարսեղն էլ տվեց մի կոբաս արաղ։

— Էդ բանումը գեղն ի՞նչ պարտական էր. մի քանի մարդիկ իրանց համար արաղ էին քցում, գյումրուկ[3] չէին տալիս, հետո ուզեցան խարջի տակ դնեն, քանի հետ գրեցին՝ ականջ չարիք, եկան մհրեցին։ Ուզում էին, որ արաղ քաշեն՝ օգուտ տեսնեն, իրանք էլ թող ճարը տեսնեն, գեղին դրանցից ի՞նչ օգուտ-վնաս, որ էդ ծախսն էլ գեղամեջ եք դնում,— էլի մեջ ընկավ Հաքուլը։

— Ո՞նց թե գեղին ինչ օգուտ,— ձայն ձայնի տվին մի քանիսը, որ

1 Թոշա։ 2 Կնքելու 3 Մաքս։

արաղ քաշողներն էին,— բաս էս ոչի՞նչ որ մովրովի կամ մենծավորի արաղ ուզած սհաթը տկերը լցվում ղրկվում են։

— Գեղի ի՞նչ հոգսն ա, որ չի ղրկվիլ։

— Ախպե՛ր, քանի՞ գլխանի ենք, որ չղրկենք. մեր մովրովն ա, հո օտար չի, էսօր ուզածը չենք տալ՝ էգուց ընենց կոռ կքցի մեր վրա, որ տակին կճկռենք։

— Տիրացո՛ւ, դու գրի՛ր, անկաղ մի՛ անիլ։

Տանուտերի ցույց տված ծախքերին եթե ուշադիր լինեինք, բոլորը կոռի, բեգյառի ու գավառական աստիճանավորներին տված կաշառքների պատրվակով էր, և այն՝ վերցրած յուր համամիտներից մուրհակով կամ առանց մուրհակի։ Այս բոլոր ավելորդ փողերը գյուղի հարկի հետ միացնում են, ժողովրդից ժողովում և մի քանի մարդով բաժանում։

— Տանուտե՛ր, ինչպես դուս ա գալիս, քո արած ծախսերդ բոլոր էս նստող մի քանի մարդկանցիցն ա, բաս գեղումն էլ ուրիշ ոչով ոչինչ չի տվե՞լ,— հարցրեց Հաքուլը։

— Խալխի հո՛րն օղորմի, շատ մենծ բան ա, որ ամեն մինը մի-մին լիտր գինի-արաղ տված ըլնի, մեջքներին քար ա ընկել, էն էլ հենց իմանանք, թե մեր քաշած էսքան նեղությունի տեղակ մեզ պատիվ եք տվել,— ասացին միասին տանուտերն ու իշխանները։

— Հաքո՛ւլ, գիտե՞ս ինչ կա,— վերջապես աչքերն ոլորեց տանուտերը.— թե որ դու ամեն մի դարդակ բանի վրա էսքան գլխացավանք պտի տաս՝ լավն էն ա, էս սհաթս վեր կենաս, քաշվիս երեսիդ ջրովը. հեր օրհնա՛ծ, էլ թողում չես, որ մարդ բերան բաց անի, ագռավի պես գլխներիս տնկված դուում ես. էլ չես ասում, թե սուս կենանք, էգուց բողաղներիս կլոքեն։

— Գլխներդ քա՛րը,— ձեռքը թափ տվեց Հաքուլը,— աստված էլ գիտի, որ ես իմ քիսի դարդումը չեմ. ոնց որ ըլի, մեր ջուրը ջրամանիցը կհանենք. խոսքս անճար աղքատների համար ա, որ թունդիրն ածես՝ շորահոտ չի վեր ըլիլ, ու դուք խղճմտանքներիդ դուռը պինդ կողպած՝ էգուց գլխներին սև պտի բերեք։ Թե որ շատ սրտներիդ դիպչում ա, ես էլ խեչանենց խեչանի պես խոսք կտամ, որ գլուխս քաշ քցեմ, ինչ ուզեք՝ տամ, ու գնացեք էն վախտը պղտոր ջրի թոռ քցեցեք, թարքներդ[1] ձկնով կլցվի։

— Ախպե՛ր, թագավորական խարջը հո բաշխիլ չե՞ն, թե որ ռահաթը չի խարջ տա, բաս ես աշխարհքս ո՞ւմնով ա կառավարվելու։

— Էդ ա. որ թագավորական խարջը ձեր հավաքած փողերի չա-

1 Ձկան որոգայթ՝ գետերի մեջ շինած։

րեքն էլ չկա, հալալ աղքատին մի քանի սև փող անչախ կընգնի. համա դուք էնքան պոչեր եք ավելացրել, որ ինձ պես տունն էլ դժարանում ա տալը։

— Ախպե՛ր, աստված վկա, մեզ էլ էնքան չի հասնում,— երդվեց տանուտերը,— նաչալնիկի տանիցը բռնած՝ խազինի[1] ծառայողներն էլ մեջ բերելով՝ ընչանք մովրովի վերջին մեհտարը[2] 1000 ծակ կա կալնելու։ Երևանա բազարումն էլ չեմ կարողանում ազատ ման գալ. վախում եմ, որ զուլլուզի[3] մարդկանցից մեկն ու մեկը կտեսնի ու վրես կնեղանա, որ քաղաք եմ եկել ու իրանց տեսության չեմ գնացել։ Լացդ կգա, Հաքո՛ւլ, որ հետս գաս՝ խարջը տանենք խազինեն տանք. դու մի տե՛ս, թե էն ասիգնացու[4] թղթերը ո՞նց են չորս աչքով մտիկ տալիս, մի ունկն են ուզում գտնել, որ յախա-մախեքս թուփ անեն, մեզ խաթի մեջ քցեն. աստված ոչ անի, որ մի թուղթ զալը դուս գա, թեկուզ մի մանեթանոց ըլի, էլ պրծնում չկա. տունս էլ որ ծախեմ՝ վրեմ դնեմ, էլի բերդումը պտի փտեմ. դե հիմի ասա, հեշտ ա՞, ես եմ էն թղթերը տպե՞լ, ես ճանաչում ե՞մ։ Ճարս կտրած՝ պտի դեռ առաջ գնամ խազնադարին[5] ու փող համբարողին առաջուց տեսնեմ, հետո խարջը տանեմ թաֆիլ տամ[6]. ախար էս ը՞նչով կըլնի, ես հո չե՞մ կարող իմ քիսիցը տալ։

— Ո՞վ ա բան ասում,— կոտրվեց ի վերջո մեր ճշմարտախոս Հաքուլը,— համա զոռ անելս էս ա, որ բանը խղճմտանքով անեք. ես տեսնում եմ, որ աղքատը շատ ա զբնվում[7]։

— Տո՛, ընչի՞դ ա պետքն, Հաքո՛ւլ,— կողքին հրեց կեղծավորներից մինը,— ընչի՞ ես վատամարդի դառնում, ըսենց եկել ա՝ ըսենց պտի գնա։

— Դե՛ հիմի հաշիվ արեք,— բոլոր ծախքերը գրելուց հետո ձայն տվեց տանուտերը,— տեսնինք՝ թե տան գլուխ քանի՞ մանեթ խարջ ա բռնում։

Մի ահագին գումար կազմվեցավ, քառապատիկ ավելի բուն արքունական հարկիցը։

Նույն տանուտերի համախոհները նշանակվեցան հարկաժողովներ և երեք բաժանմունքի վրա նշանակեցին որոշելու ժողովուրդը՝ մեծ կալվածատերեր, միջակ և ստորին դասակարգ։

Թեև հարկաժողովներն առաջին կարգին էին պատկանում, ուրեմն և ավելի պետք է վճարեին, սակայն նոքա ոչինչ չտվին։ Ժողովը ցրվեցավ։

— Մեր տղա՛, էլի մեջքներս տաքացավ,— յուր համախոհներից

1 Գանձարան։ 2 Ջիապան։ 3 Ծառայություն։ 4 Թղթադրամ։ 5 Գանձապետ։ 6 Հանձնել։ 7 Հարստահարվում։

մեկի ականջումը փսփսաց Մաթոսներից մինը։— Մարդագլուխ մեզ 50 մանեթից ավել կհասնի։

— Համա էդ անիծված տանուտերը թաքուն մեզանից շատ ա կերել։

— Է՛հ, գլուխը քարը, ավելի թիքեն ո՞ւմ փորն ա ծակել. սաքի դրուստը որ ասենք, մենք էլ նրանից թաքուն քիչ չենք պուճախներումը շալափուռ[1] արել։

ԺԸ

ՅԱՍԱՎՈՒԼ

Երևանու երկիրը պարսից իշխանության տակից իսպառ ազատվելուց հետո՝ վարչական ձևի կողմանե զանազան փոփոխությանց ենթարկվեցավ. սկզբներումն ավելի պարսկականին մոտ, բայց վերջերումը մի հաստատ վարչություն կազմվեցավ։ Երևանը նահանգական քաղաք կոչվեցավ, նահանգապետ, գավառապետներ և գավառակապետներ նշանակվեցան և այդպես տևեց մինչև հաշտարար ատյանների հաստատությունը։

Վիպասանությանս մեջ կատարված անցքերը լինում են գավառակապետների միջոցները, որ պարսկական ընդհանուր բառով մովրով էին կոչվում և որ ինքնին ունեին յուրյանց առանձին ատյանը՝ օգնականներով, գրագրներով և ստորին պաշտոնյաներով, որոնց յասավուլ անուն են տալիս։

Թողած մովրովի մյուս ծառայակիցքը, անտեղի չեմ համարում ես մի հայացք ձգել յասավուլների կազմակերպության վերա։ Ամենքից ավելի այս ստորին ոստիկանական սպասավորները ծանոթ ու մերձ են ժողովրդի կյանքին և սրանցով է այն մոտ հարաբերությունը, որ ունի գավառապետն յուր վիճակի ամեն դասակարգի հետ։

Որոնենք յասավուլի բունը և ներս մտնենք։

Ահա գավառակապետի բնակարանի մոտ, լայն բակի մեջ մի մեծ ու երկար ծածկի տակ մսուրքներ են շինած, ուր կարգավ մի քանի ձիանք կապոտած են։ Նույն գոմի վերի անկյունումը, մի առանձին բաժանման մեջ, մի սենեկանման մասը կա, ուր պատերի վերա յափունջիք են կախոտած։ Բարձրացրո՛ւ այս յափունջիներից որը կամենաս, և ահա փայլում, շողշողում է հրահանի վերա հորինած պարսկական արծաթյա օղերով հրացանը։ Երկու նույնանման ատրճանակ, մի յուղաման, մի

1 Զրկողություն անելով քսակը լցնել։

գլիր քակող գործիք՝ վառոդամանի և գնդակամանի հետ զարդարում են հրացանի բոլորքը։

Պատերի տակերին համարյա միշտ կգտնես թիկնած երկու կամ երեք հուժկու մարդիկ՝ արխալուղների թևերը վերև ծալած և կոները մինչև արմունկները բաց։

Ահա սրանք են յասավուլները։ Սրանց թիվը երբեմն մինչև տասի է հասնում։

Սրանց պաշտոնն է մովրովի իրավարանից դուրս արձակած բոլոր հրամանները տեղ հասցնել և ի կատար ածելու հսկել, հարկ, կոռ ու բեգյար ժողովելուս օգնել տանուտերերին և գավառական բոլոր ստորին ոստիկանական պաշտոնները կատարել։

Հավատարմության և ուշիմության մասին սրանց կարելի է նմանեցնել որսկան շների։ Որքան էլ նոր մարդ լինի գավառակապետը, նրանք ճշտապես կատարում են նորա կամքը։

Սրանք այնքան սուր են մարդաճանաչության մեջ, որ առաջին օրումն իսկ գուշակում են նոր գավառակապետի բռնելիք ընթացքը, այդ պատճառով յասավուլի և յուր տիրոջ մեջ սկզբի օրից մի սերտ համակրական հարաբերություն է կապվում. այդ է պատճառը, որ ամեն յասավուլ քանի մի ուրիշ պաշտոնակալներ է փոխում։ Ոչ մի նոր գավառակապետի հաշիվ չէ ձեռքից թողուլ այդ մարդկանցը, որոնք գավառի ամեն ծակ ու ծուկը գիտեն, ճանաչում են ամեն մի անձնավորություն և վերջին գյուղի շներն ու կատուներն անգամ համարած ունին։

Հետաքրքիր է յասավուլի ամեն մի քայլափոխը դիտելը։ Յուր ձիու կողքին գոմի մեջ նա թիկնած է՝ ինչպես պարսից խանն յուր թավիշյա բարձի վերա. յուր մեծավորի առաջին սպասավորության մեջը նա շան նման գալար է գալիս և ամենայն նվաստությամբ գլուխը ետ է դնում նրա հրամանը գետինը չձգելու։ Ճանապարհի վերա յասավուլն իրան ամբողջ գավառի տերն է համարում։

Յասավուլներ ընտրվում են առհասարակ տեղացիներից՝ գլխավորապես պարսիկներից։ Եթե մահմեդական կրոնի հիմնական կանոնների համաձայն մուսուլմանը պետք է խորշի քրիստոնեից, յասավուլներն ուրեմն սուրբ մարգարեի օրինակատար չեն. նրանց համար հայ, թուրք չկա, նրանք ամենքն էլ ընկերներ են. գլխարկը վերցրած ժամանակը կարելի է ճանաչել հային ու թուրքին. գլխի մեջտեղից ածիլած կտորն և ականջների վրայից կախված մազերի փունջակները պարսկական գլխի նշաններն են. իսկ ահագին ոչխարենին, կես փութ բուրդ վրեն, մինչև ականջը խոր քաշած, հաստ, ստվար և երկայն ընչացքներ ականջին երկու անգամ փաթույթ տված, ահռելի դեմքը վիթխարի հասակի հետ՝

շատ ծանոթ աչքերի միայն կարող են պարզել յասավուլի հայ կամ թուրք լինելը։

Առանց խտրության երկու հակառակ կրոնի որդիքն ուտում են միևնույն ամանից և խմում են նույն գավաթից. քրիստոնեին սրբագործող, իսկ մահմեդականին պղծող հեղուկն էլ միակերպ սիրելի է յասավուլի համար, թուրքը հայից պակաս չի կոնծում գյուղերումն և կատարը տաքացրած՝ յուր քաջագործությունները բանացնում։ Հայի հաց, խոզի միս, թուրքի պանիր, սրբի դռան մորթած մատաղ, որոնք երկու ազգությանց միայն կամ մեկելին գարշելի են՝ յասավուլի համար հարցնել չկա։

Եվ ահա պատրաստ է յասավուլն յուր պաշտոնը կատարելու։ Յուր տիրոջ մի չնչին հրամանը դուրս եկավ, և յասավուլը թռավ ձիու քամակն ու երկու վայրկենի մեջ աներևութացավ. մի մտրակ ձիու փորատակովը քաշեց, և նրա ձին կրակի նման թռչում է մեծ ճանապարհի միջովը։ Վա՜յ այն գյուղին, ուր դիմում է մեր յասավուլը, և առավել վա՜յ այն գյուղականներին, որոնց պատահում է նա ճանապարհի վերա։

— Է՛յ, ո՞ր գյուղացի ես, ո՞ւր ես գնում,— մի սառն ու հպարտ ակնարկ դեպի ճանապարհորդը դարձնելով՝ հարցնում է մեր յասավուլ աղեն, ձիու թամբի մեջ ծուռը նստած։ Վա՜յ, ասում եմ, խեղճ գյուղացուն, եթե սխալմամբ գտակը մոռացավ հանելը, կամ ուշացրեց խոնարհաբար գլուխ իջեցնելը։ Ցնցաց մտրակն օդի մեջ և պատատվեց խղճալու կիսամիրկ մարմնին, մանավանդ եթե նա հանդգնած լինի չշտապել ճանապարհից դուրս գալ և յասավուլին լայն ուղին թողուլ։

— Տո՛, խլանկա՛ջ, քեզ չեմ հարցնո՞ւմ՝ որտեղից ես, ի՞նչ ես դունչդ ծռել մտիկ տալիս, խոսի, էլի՛,— հետաքրքրվեցավ երկրորդ և երրորդ մտրակը։

Սև ու մութը կոխեց մեր անցորդի աչքերը. մինչև նա սթափվեց, լեզուն հանած՝ աղաչանք պաղատանք արեց, մտրակը մի քանի անգամ յուր պաշտոնը կատարեց։

— Ա՛դա՛, հիմար, ի՞նչ ես ծոմռատվում. քեզ հարցնում եմ՝ ո՞րտեղից ես, ո՞ւր ես կորչում, ասա՛ ու պրծի՛, էլի՛, տեսնում ես՝ հետդ մարդ ա խոսում, արժան չե՞ս համարում պատասխան տալու։

— Գլխիդ մեռնիմ, աղա՛,— հազիվ արտասանում է մոլորված գյուղացին,— այսինչ տեղիցն եմ, այնինչ գյուղն եմ գնում։

— Բաս որ ըտենց ա, էս սհաթս ետ դա՛ռ, գնա՛ ձեր գեղը, ձեր տանուտերին ասա՝ յասավուլ Ղահրամանը հրամայեց, որ չորս լիտր լավ բրինձ ղրկես մեր տունը. հալ հալբա՛թ, ասա, թող էգուց հասցնի, գինը կտամ, հասկացա՞ր։

Հիմի թե քաջ է մեր ճանապարհորդը՝ թող հանդգնի բացասել, բաղ

ուսա[1] չասելու և կամ խոստանա վերադարձին նրա հրամանը տեղ հասցնել, ըստ որում յուրյանց գյուղը շատ հեռու է մնացել, իսկ գնալիք տեղն արդեն մոտ է։ Բայց նա խելքը հացի հետ չի կերել, յուր կաշուցը ձեռք չի քաշել, այդ փորձն յուր հետ եթե առաջինն է պատահում, յուր ընկեր հարևանների շատերի գլխին է եկել և ինքը լսել, կամ տեսել է։— Աչքիս վերա, ասելով, ձեռքը սրտին՝ գլուխ է իջեցնում և յուր բախտն անիծելով վերադառնում։

— Ասե՛ս, հա՛. վայն եկել է քեզ տարել, թե որ չես ետ դարձել,— գոռոզաբար մտրակն օդի մեջ ցնցում է մեր յասավուլն և ձիուն կրնկում, բոլորովին վստահ եղած, որ նրա երեխայքը վաղը կամ մյուս օրը բրնձով փլավ կուտեն, իսկ խոստացած վճարքը նույն բոպեին մոռացման տվեց։

Մի փոքր առաջ գնաց մեր յասավուլն և հանկարծ մի ուրախ ժպիտ փայլեց նրա երեսին։

— Եղալի թիքա՛,— ծորելով դուրս թողեց այս խոսքն յուր բերանից, վսեմ դիրք առավ ձիու վրա ու շտապացրեց յուր երիվարը։

Դիմացիցը մի փոքրիկ կարավան է գալիս, օտար գավառի մարդիկ են. մեր յասավուլն ուղիղ դեպի նրանց աշտանակեց յուր ձին։

— Բարև՛ ձեզ,— փոքր-ինչ քաղցր դեմք առած՝ ասաց նա դեպի կարավանը դառնալով,— աստված բարի ճանապարհ տա. ո՞րտեղից եք, ո՞ւր եք գնում։

— Փամբակից ենք, գնում ենք Կողբ աղ բերելու։

— Շատ լա՛վ, շատ լա՛վ, բարի ըլնի. բայց դուք իմանո՞ւմ եք, որ օտար գավառի մարդն իրավունք չունի առանց բիլեթի իր մհալիցը դուրս գալ. դուք, իհարկե, կգիտենաք էս սաստիկ հրամանն ու բիլեթ էլ կունենաք։

— Չէ՛, աղա՛, ի՞նչ բիլեթ. Փամբակն ու Կարբու մհալը հարևաններ են, մենք պապենական հա՛ եկել, հա՛ գնացել ենք. ըսկի ղզլբաշի օրովն էլ մեզանից բիլեթ չէին հարցնում, հիմի հո՛ փառք աստծու, չիմս[2] էլ մի էլլիկ ենք։

— Հանաք եք անո՞ւմ։

— Չէ՛, ղորթ ենք ասում։

— Ո՞նց թե անբիլեթ եք. բաս էլ մեզ ո՞ւր են տոնլուղ[3] տալիս պահում, որ ամեն փախստական կարողանա արձակ-համարձակ, կապը կտրած՝ մհալե-մհալ ընկնել։ Գե՛հ,— հոնքերը կնճռում է մեր յասավուլը,— ետ դարձրե՛ք ձեր ձիանքը, գնանք էս մոտիկ գեղը, բոլորիդ

1 Գլխիս վրա։ 2 Բոլորս։ 3 Ռոճիկ։

անունն էլ պետք է գրվի, կոներդ կապոտվեն ու ղրկվիք ձեր մոզրովին. դուք փախստականներ եք, աղի գնացողը ձեր պես չի ըլնիլ։

— Աղա ջա՛ն, քեզ մատա՞ղ, մենք հայ քրիստոնյա ենք, մենք փախստական չենք, երեք օր ա ճամփա ենք գալիս, ոչ ովի մի առ[1] չենք արել, էս ա Կողբին մոտացել ենք, թող մեր ճամփեն գնանք, մի-մին բեռն աղ տանենք, մեր քյասիբությունին անենք[2]։

— Շատ ըմի՛ խոսաք,— գոռում է մեր Ղահրամանն ու ձիանոնց գլուխը ետ դարձնում յուր հրաշագործ մտրակովը։

— Աղա ջա՛ն, չգիտեինք, էս մինը բաշխի՛, մյուս անգամ առանց բիլեթի չենք գալ։

— Տո՛, ի՞նչ անհասկացողներն եք, երկ օր ա՝ բերանս հացի կտոր չի մտել, ոտքս օրզանդուից ցած չի եկել, թե որ ես ձեզ բաց թողամ, էլ ո՞ւր եմ ըստեղերանք ման գալիս։

— Աղա ջա՛ն, չտեսնելու դի՛ր, մենք քո ոտի ջաֆեն[3] կքաշենք։

— Դուք ինչքա՞ն պտի տաք ինձ, որ ես իմ թագավորին խային[4] մտիկ տամ, ձեզ բաց թողամ, էգուց-էլօր էլ բանն իմացվի, գլուխս զնդանի մեջ մտնի։

— Աղա ջա՛ն, շատեն-քչեն, մի-մին բան կհավաքենք, քո սիրտը կշահենք, աչքի տակով անց կացրո՛ւ գնա քո գործին, աստված բանդ հաջողի։

— Ախար գիտե՛ք ի՞նչ դժվար բան ա պատասխան տալը։

— Ոչի՛նչ, մեր խաթեր պտի յոլա տանես։

— Է՛հ, ի՞նչ անեմ, խեղճ եմ գալիս. դուք էլ քյուլֆաթի[5] տեր եք, եկել եք ըստեղ հասել, ետ դարձնել չի ըլնիլ, գնացե՛ք ձեր ճամփեն.— փամբակեցվոց փողերը գրպանը դնելով՝ ճանապարհ դրեց։— Բայց մտիկ տվե՛ք, տղե՛ք,— նախազգուշացրեց մեր յասավուլը,— բան է, եթե ուրիշ յասավուլներ ձեր առաջը կտրելու լինեն, ասացե՛ք, որ Ղարո բեգը մեզ իզին[6] տվեց, թե որ հարցնեն, թե բան տվի՞ք, ասացե՛ք՝ մի թեթև ծառայություն արինք. էն ժամանակն էլ ձեզ նեղություն չեն տալ։

— Աստված կյանք տա, աղա՛։

— Հիմարնե՛ր, աղոթք արեք չպատահին, թե չէ մինչև գրպանեերիդ բերանը կրկին չբանաք, ճանգերիցը չեք պրծնիլ,— փնթփնթաց ինքնաբավական Ղահրամանն ու ձիուն կրնկեց։

Արժան է տեսնել յասավուլին մոզրովի, կամ գիցուք, մի հասարակ աստիճանավորի հետ գնացած ժամանակը. այն առյուծն այժմ հեզ

1 Վնաս։ 2 Մեր կարիքը հոգանք։ 3 Ջարշարանքը։ 4 Նենգ աչքով։ 5 Գեղգաստանի։ 6 Թույլ տվեց։

գառն է դարձել. ամենայն խոնարհությամբ նստած է նա յուր ձիու վերա և բավականին տեղ ետ ընկած է գալիս. ոչինչ բան նա չի տեսնում, ոչինչ գոռոզ միտք նրա մեջը չի անց կենում. նա կատարյալ ծառա է և մի հոգսով միայն զբաղված է. ականջները սրած՝ ամեն բոպե սպասում է յուր տիրոջ հրամանին։

— Ցասավո՛ւլ,— հանկարծ դուրս է թռչում այս խոսքն աստիճանավորի բերանից։

— Բա՛լի[1], աղա՛,— պատասխանելն և մոտ գալը մեկ է լինում, բայց միշտ ձիու սանձը պինդ քաշելով, որ մի գուցե յուր տիրոջից առաջ անցնի։

— Կո՞ւյր ես, չե՞ս տեսնում, որ դիմացիցը մարդիկ են գալիս, քո պաշտոնդ մոռացե՞լ ես, միտքդ ո՞րտեղ է։

Հերիք է, յասավուլը հասկացավ ու ձիու կողքին այնպես կրնկեց, որ խեղճ կենդանին երկուտակվեցավ։

— Շո՛ւտ, շո՛ւտ ճանապարհիցը դուրս եկե՛ք, աչքեր չունի՞ք, չե՞ք տեսնում, որ աղեն գալիս է,— աջ ու ձախ մտրակահար անելով՝ շփոթը ձգում է ճանապարհորդների մեջը.— շո՛ւտ գտակ հանեցե՛ք, գլուխ տվե՛ք։

Ուռած-փքված քշում է աղեն յուր ձին ճանապարհի մեջտեղովն առանց մի սառն ողջույնի անգամ արժանացնելու իրեն մինչև գետին գլուխ իջեցնող գյուղացիներին։

Ահա ճշտությամբ կատարեց յասավուլն յուր պաշտոնն և կրկին յուր նախկին խոնարհ դիրքն և տեղը բռնեց։

Անմոռանալի է ինձ համար հիշողությանս մեջ տպավորված մանկությանս օրերում կատարված մի դեպք։ Այս մի իրողությունը պատմելով՝ կարող կլինեմ յասավուլների ճիշտ պատկերը նկարագրել հետաքրքիր բանասերին։

Աշունքն էր. Աշտարակու այգիների քաղը վերջանալու վերա էր. գյուղումը երևում են միայն կենդուկունդ ծերունիք. երբեմն-երբեմն փողոցներումը ձիուն դա՛ճ տալով դուրս են գալիս քաղցու կրողներ, որոնք լեքշերի[2] կամ արջառների անկպրել տկերի մեջ լցրած պճպճան եռացող քաղցուն՝ բարձած ձիանց շալակին, տուն են բերում կարասների մեջ ամանելու։ Շուտ-շուտ լեքշի բերանին ցցած փայտը հանել խրելով՝ քաղցուակիրները տկի միջից օդը դուրս են թողնում, որ տիկը չպատռվի։ Ես, ութ կամ ինը տարեկան մի մանուկ, ձմեռվան կախանի համար ժողովված պահոնի խաղողը մի փոքրիկ քթոցի մեջ ածած, ուսիս դրած՝ բերում էի տուն փռելու, որ մի-երկու օրից այգեկութը վերջանալուց հետո կախենք. այդ միայն իմ ժողովածն էր, ապա թե ոչ երկու ձիաբեռն այդպիսի պահոնի խաղող վաղուց տանը փռված էր։

Առաջին անգամը ոչինչ գլխի չընկա, երբ որ տեսա իմ առջևովս մի քանի մարդիկ այս և այն կողմն էին փախչում։ Բայց հետո սարսափս բռնեց, երբ— ամա՛ն, աղա՛, գլխիդ մատաղ, կսկծալի խոսքերն ականջս ընկան։

Մեկ էլ ի՞նչ տեսնեմ, մի յասավուլ անողորմաբար ծեծում է մտրակով մի գյուղացու, որ պինդ բռնած ունի յուր ձիու սանձից և չի տալիս յասավուլին։

— Ամա՛ն, քո տունը քանդվի՛, իմ տունը քանդվեց,— մղկտալով ծվաց գյուղացին,— աչքս դուրս եկավ։

Մի բաց դուռ կար այդ փողոցումը. ես ինձ այնքան չկորցրի, որ դողալով ներս ձգեցի բակն և դուռը վրես ծածկեցի, փակը քաշեցի ու դռան ճեղքովը դուրս նայեցա։

Արյունը վազելով ցած իջավ գյուղացու երեսովն, և նա գլխիվայր գետնին պառկեց՝ նույնպես ձիու սանձը պինդ բռնած։

— Թեկուզ քոռանաս էլ՝ հոգըս չի. թե դու սատկած, թե մի շուն՝ ղուլլուղի մարդի համար մին ա,— երկու աքացի էլ գլխին իջեցնելով բաց թողեց յասավուլն ընկած մարդուն և հարձակվեց, խոտորափողոցից քաղցուն բարձած դուրս եկող ձիու սանձը պինդ բռնեց։

— Շուտ վեր քցի՛ բեռդ էս պատի տակին,— հրամայեց նա ծործորակը քերող ձիատիրոջը,— ձին հարկավոր ա, լեկո[1] ա եկել, պտի նստի՝ Իլանչալան գնա։

— Էս ճամփի մեջտեղը ո՞նց կըլի եփ եկող քաղցուն վեր քցել.— քաշվելով պատասխանեց խեղճը,— համ էլ կոռի հերթն իմը չի, ես մեկել օրն եկա կոռատեղից։

— Ասում եմ՝ ձենդ կտրի՛— մի-երկու անգրելի հայհոյանք թափելով գոչեց յասավուլը,— դու էլ չդառար էդ աներես շան տղեն, որ քոռացավ ու ձիու նոխտեն[2] ձեռից չթողեց. հերիք ա հնտներդ խաղ անեմ, ա՛յ, հիմի ինքն իրան վեր կընկնի բեռդ։

Այս ասելն ու դաշույնը հանել՝ տկի մեջ ցցելը մին եղավ։

Քաղցուի հակն իսկույն դատարկվեց, մյուսն էլ հավասարակշռությունը կորցրեց, վայր գլորվեց ձիու մեջքից ու պատռվեց։

Ողորմելի գյուղացին մոռանալով, որ մի կարաս գինին հողի հետ խառնվեց, ընկավ յասավուլի ոտքերն ու աղաչում էր, որ խնայի իրան, ձին ետ տա։

1 Հրամայեցեք։ 2 Արջառի առանց կպրել տիկ, որով միայն քաղցու են կրում։

1 Բժիշկ։ 2 Երասանման։

— Տունս կքանդվի, էլած-չելածն երեք բեռն էր, մինը դու թափեցիր, երկուսն էլ տաքարի[1] մեջն ա, կմնա կքացախի, երեխեքանցս տարեն ապրուստը ջլիս կկտրվի. թող գնամ՝ էն երկու բեռը բերեմ, կարասներն ածեմ, իմ ձեռովը ձիս թամքեմ, լեկուին տանեմ՝ տեղ հասցնեմ ու ետ գամ,— լեզուն հանած՝ պաղատում էր խեղճ մարդը։

— Քո հորն օղորմի՛, հեքիմը գյուղը մնա, թե դու քաղցու պտի բերես. շատ մի քանիսի դարդն էր, թե քո լակոտներդ քաղցած կկոտորվին։

— Ախար իմ հերթը չի՛, ի՞նչ անաստվածություն ա,— վերջապես հուսահատ ձին ձեռքից թողեց ողորմելին և վիզը ծռած՝ մնաց յասավուլի քամակիցը նայելով, որ ձին քաշելով այս խոսքերը պատասխանեց ու գնաց.

— Էդ իմ բանը չի, գնա ձեր տանուտերին ասա՝ թող խրատվի ու մյուս անգամ հերթի ձին գեղիցը դուրս չթողա։

Յասավուլի հեռանալուց հետո արյունում շաղախված պնդերեսը վեր կացավ և փնթփնթալով գնաց. մտրակի ծայրը դիպել էր հոնքին և պատռել, որ եթե փոքր էլ ցած առներ՝ անպատճառ սա էլ զրկված կլիներ յուր աչքից, ինչպես մյուսն յուր մի կարաս գինուց և ձիուց։

— Գլուխը քարը, թե ունքս պատռվեց, հլա ձիս ձեռիցս չթողի, թե չէ սաղ տարին ապրուստից պիտի զրկվեինք,— ասաց նա ու գնաց, իսկ ես կամաց դուռը բացի ու շունչս մեր տանն առա։

ԺԹ

ԳԱՐՆԱՆ ՀԱՐԿԱՀԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Գարնան նուխահաշիվը կազմելուց երկու օր հետո Արարատյան գավառի ամեն գյուղերումն էլ միևնույն տեսարաններն են ներկայանում, ինչ որ մեր պատմության թելը պահանջում է Աշտարակում տեսածներս ասելու։

Լուսաբացին ամեն մարդ վեր է կենում յուր օրվան բանացնելիք մըշակների հոգսը քաշելու, բայց փողոց դուրս գալուն պես կամ շտապով տուն է ընկնում, յուր երկրագործական գործիքը վերցնում և այգին կամ դաշտը փախչում կամ թե նեղ սոխախներովը մի կերպ գլուխն առնում հեռանում է։ Գյուղումը տիրում է խորին լռություն, երթևեկը կտրվում է և մի քանի մարդիկ միայն այս ու այնտեղ երևում են, հետերը վերցրած կամ մի հաստընչացք բարձր յասավուլ՝ սպիտակ չերքեզի չուխան հագին, մտրակը ձեռքին և կամ մի ղազախ՝ նույնպես մտրակով։

Ահա յասավուլը վսեմ քայլերով փողոցն-փողոց է ընկել ու յուր հետ գնացող գզրի ցույց տված դռանն աքացիով խփում և անվախ բակն է մտնում։

— Է՛յ, ո՞վ կա այս տանը,— ճիչ է բարձրացնում նա։

Մի քանի անգամ հայհոյանքներ թափելուց հետո՝ ներսի սենյակների մեկի դռնից, ի վերջո, դողդողալով երևում է քիթ ու բերանը պինդ փակած մի պառավ, կամ միջահասակ կին, փեշիցն էլ մի փոքրիկ երեխա փաթաթված։

— Ու՞ր է էս տան տղամարդը,— թուրքերեն կամ հայերեն բարկանում է այն ահարկու պարոնը։

— Տանը չի,— անլսելի պատասխան է ստանում— գնացել ա Էջմիածին կամ Երևան, պարտք անի, բերի խարջը տա։

— Ընչանք օրս որտե՞ղ էր, ընչի՞ պտի նոր միտք աներ իր խարջի համար,— գոչում է յասավուլ աղեն և ետ հրելով խեղճ կնոջը՝ ներս մըտնում տուն և ձեռք ընկած անոթը հափշտակում, որ գլխավորապես լինում է կերակրի կաթսա։

Միջի հեղուկը տարածվեցավ տան մեջն և յասավուլի հոգսն էլ չեղավ. նա տվեց պղինձը գզրին և թոնթորալով դուրս եկավ։

— Թե որ ամեն մեի զուռնովը պար գալու ընինք՝ վեց ամիս խարջը չի հավաքվիլ,— արդարանում է նա յուր առաջնորդող հարկաժողովների և գզրի առաջին.— ա՛յ, էս պղինձը կծախենք, խարջը կվերցնենք, թող աներես տանտերը մնա ծոծրակը քորելով։

— Մարդար աղա՛, ինձ բաշխի՛ր, խնայի՛ր էդ ողորմելի որբևերուն, իր եթիմներին անճախ ա կառավարում, չգիտեմ ո՛ր անաստվածը դրա վրա խարջ ա դրել. ի՞նչ ունի, որ ի՛նչ տա,— խնդրում էր մի ծերունի մի բակի դռան մոտ յասավուլին, երբ որ վերջինս բռնցքով ետ էր խփում մի կնոջ և կաթնոտ պղինձը գզրի ձեռքը տված՝ դուրս էր գալիս, իսկ կինը ցած ձայնով արտասուքն աչքերին առաջ էր վազում ու աղաչելով շտապում փաթաթվելու յասավուլի ծնկները։

— Քո խաթեր համար ետ եմ տալիս, աղա խեչա՛ն,— պատկառանոք հարգեց յասավուլը խեչանենց խեչանի խնդիրն և գզրին առաջ արած՝ գնաց ուրիշ տուն մտնելու։

Այրի կնոջ աղիողորմ լացն և վերջումը հազարավոր օրհնությունները, որ անխնա տալիս էր նա յուր պղինձը թափողին, խեչանի սիրտը վիրավորեցին։

— Որքան մարդ չի ուզում գեղամիջի խառնվիլ,— ասաց նա ինքն

---

1 Հնձանի մեջ շինած գինու հորը։

իրան,— չի ընկնում. էսպես բաները մարդի սիրտը կտոր-կտոր են անում։

Այս խոսքերով նա գնաց դեպի տանուտերի դուռը, հանեց յուր գրպանից երկու մանեթ և ձգեց դեպի տանուտերը։

— Առե՛ք, աչքերդ կոխեցե՛ք խեղճ Եղսանի խարջը։

— Տո՛, ձեր տունը չքանդվի, էս ի՞նչ աղաղանք ա, որ քցել եք էս գեղը, բաս դուք ձեր խղճմտանքիցը վախենում չե՞ք. թե որ վերջին դառն աղքատիցն էլ խարջ եք առնում, բաս էլ ընչի՞ եք ամեն մարդի վրա էսքան մեծ փող հաշվում, կես տարվա մեջ գեղը հո էդքան ծախս չարե՞ց. թե որ ձեր անկուշտ փորը չի մտնում էսքան փողը, ո՞ւր ա գնում։ Լավ չեք անում, տանուտե՛ր, ասում ա՝ «գեղ կանի, գերան կկոտրի», էգուցէլօր դանակն ոսկորին կհասցնեք, դատավորը կիմանա ու էն ժամանակը ձեզ հոգվով-մարմնով պրծնում չկա։

— Է՛հ,— ժպտաց տանուտերն անտարբերությամբ փողը վերցնելով,— դու միայն կաս Երուսաղեմ, էլ չես գիտում, թե «աղվեսը մեր մարագումը ճուտ ա հանել, վաղի առածի պես, մեր թազու հզությունիցը[1] ա». թե որ դատավորի մատը խառը չըլեր, մենք քանի՞ գլխանի էինք, որ էս բաներն անեինք։

Խեղճ Խեչանը զարմացավ, որ տանուտերը ոչինչ դժվարություն չըցույց տվեց փողը վերցնելումը. նա կողմնակի լսել էր, որ մովրովները կաշառք են ուտում, բայց այս աստիճանի լինելը չէր իմանում։

— Մի՞թե թագավորական խարջիցն էլ մասնավորվում են,— հարցրեց Խեչանը տանուտերին,— խարջը գողանալ կըլնի՞։

— Ո՞վ ա ասում, թե գողանում են, ա՛յ, նստի՝ ասեմ քեզ. դատավորը մեզ ա պահում, մենք նրան. ինչքան էլ որ մովրովը խամ մարդ ըլի, իր գալուցն երկու օր ետը իմանում ա իր չուղուլներիցը[2], թե մհալի ամեն մի գեղը դավթարի[3] քանի՞ տուն ա, նաֆարի[4] քանի։ Իհարկե մեր պարտքն ա, երբ որ նոր դատավոր գա, բոլոր տանուտերներս մեր իշխաններով պտի գնանք՝ գալը շնորհավորենք, ճանանչվենք, էն էլ գիտես, որ դարդակ փետին, ասած ա, շուն չի հաշալ. մեր ըռխին[5] ո՞վ մտիկ կտա. թե որ տկլոր գնանք, ընտեղ ցցվինք. ամեն գեղից ասածու տվածիցը բերդն ենք կապում ու գնում.— բարով հազար բարի ես եկե՛լ, աղա՛, քո աչքը մեր մհալի վրա քաղցը ըլի՛, ոտդ խերով ըլի՛, ղայիմ դադիմի[6] ըլիս. էս թավուր մի քանի խոսքեր խարջում ենք. նա էլ իր կողմից գլուխը տմբացնում ա ու մի երկար քարոզ սկսում։

— Սաքի թե ի՞նչ։

1 Հեզությունից։ 2 Լրտեսներից։ 3 Մատյանի հաշվով, ցուցակով։ 4 Շնչի՝ անհատի հաշվով։ 5 Բերան։ 6 Երկարատև։

— Լսի՛ր։ Իհարկե, ինձանից առաջ շատ մովրովներ եք փոխել. առաջինը ես չեմ, վերջինն էլ չեմ ըլնելու. մենք ջուրն ենք՝ դուք կարմունջը, մենք գնացկան ենք, դուք մնացկան. համա իմացած կացե՛ք, որ ես ուրիշների պես չեմ. ինձանից առաջ եկածները ո՛նց են վարվել, ի՛նչ են արել՝ էս միտք էլ չունիմ քննել իմանալ, ամեն մարդ իր խելքի տերն ա. ես էս օրվանից իմ բնությունս ձեզ հասկացնեմ. ես կաշառք ասած բանն իմ դունովը տուն չեմ թողալ. ես շատ բարկացկոտ մարդ եմ, կաշառքի անում տվողին ուրետի տակին կմաշեցնեմ, հերս էլ որ մեղավոր ըլնի՝ հուրն հավիտենական կկորցնեմ, որդիս էլ ըլնի՝ Սիբիրումը կըփտացնեմ. բայց արդար մարդի դատաստանը դանակի պես կկտրեմ. հինգ օր չի քաշիլ, կտեսնեք, էնպես պտի անեմ, 10 տարեկան երեխեն ոսկին գլխին դրած՝ գեղե-գեղ մի մհալի մեջ կարողանա ման գալ. գոզերի ու ավազակների իզ ու թոզը պտի կտրեմ։ Վայն եկել ա էն մարդին տարել, որ մտքումը դնի փողի ու կաշառքի ձեռով իր գործը առաջ տանել։ Էս խոսքերը ձեզ ընդուր եմ ասում, որ դուք ձեր գեղերի տանուտերներն ու իշխաններն եք, էսօր գեղի տեղակ ըստեղ կանգած եք, գնացե՛ք, իմ բնությունս ձեր ժողովրդին հասկացրեք։

— Դե՛, էլ ի՞նչ ես ուզում, դրանից էլ լավ խոսքե՞ր։

— Համբերի՛, շատ մի՛ վռազիլ, Խեչա՛ն։

— Դե գնացե՛ք, ասում ա, տանուտերնե՛ր, շատ շնորհակալ եմ, որ եկել եք ինձ տեսություն։

— Բաս էն տարած փեշքյաշներն ի՞նչ արիք։

— Էն իրան կարգին վաղուց մառանումը դարդակվեց, ընդուր համար խոսք էլ չի ընկնում, դեռ դու ականջ դի՛ր։

— Էլ ի՞նչ մնաց։

— Ա՛յ ինչ։ Երկու-երեք ոտք դեռ փոխած չենք ընկնում, մին էլ յասավուլը քամակներիցս հասնում ա, թե աղեն հրամայեց, որ տանուտերներն առանց իրան տեսնելու չգնան։ Էդ իհարկե առանց էն էլ գիտեինք ու սպասում էինք։ Կես սհաթից մեզ մի-մին ներս ա կանչում ու սկսում նոր թամբահները[1], նոր հարց ու փորձերը։ Սաղ ըլի միկիտան Սաքոն, պատասխանն առաջուց մեր բերանը դրել ա։

— Գեղդ քանի՞ տուն ա, հարուստ ե՞ն թե աղքատ, հարուստներն ո՞վ են, տարեկան ինչքա՞ն արդյունք եք վերցնում, ինչքա՞ն հարկ եք տալիս, թագավորական խարջից սավահի ինչքա՞ն ավելի թավջի եք անում, նրանից ո՞ւմ ու ո՞ւմ համար եք բաժին հանում, գեղացիք հասկացող մարդիկ ե՞ն, թե կոպիտ ու անտուշներ, ինչքա՞ն գիր գիտեցողներ կան. ձեր մո-

1 Գատվեր։

տիկ գեղերի հետ ինչ փտած-մոռացված վեճեր կամ բաժանելու հանդեր ունիք,— ես ի՞նչ գիտեմ, քանի՞ էս տեսակ հարցմունքներ մին-մնի ետեվից շարում ա։

— Հետո դուք ի՞նչ եք պատասխան տալիս։

— Հիմի թե ղոչաղ ես, խեչա՛ն, ջոկ-ջոկ ամեն բանը մի՞ պատմիլ. դեռ դու բերանդ բաց չես արել, ինքն ա էլ ետ քեզանից շուտ ամեն բանի հաշիվը տալիս. մենք էլ ի՞նչ անենք, տեղնուտեղը ամեն բան կարգին հասկացնում ենք։

— Դե՛ հիմի գնա՛, ասում ա, քո խելքի կտրածի պես գեղը կառավարի՛. կես սհաթ առաջ, որ ես էն խոսքերը ձեզ ասացի, կարգ էր, պտի խոսեի. բոլորի մոտ չի կարելի սրտինդ պարզ ասել։ Բայց իմացի՛, որ մովրովն էլ ձեզ պես մարդ ա՝ ուտիլ ա ուզում, մրսիլ-տաքանալ ունի՝ հագուստ ա պետք, մեզանից բարձր էլ մարդիկ կան՝ նրանց էլ մտիկ տալ ա պետք. իմացած կա՛ց, որ գեղի պարտքն ա իր դատավորի տան տարեկան ապրուստը ղրկել, նրա քիսի խարշլիքը[1] չպակասացնել, որ նա էլ կարողանա իր մենծերի սիրտը շահիլ. մենծ բան չի, ռահաթի սիրտը լեն կըլնի, որտեղ իրան հասնելու երկու մանեթը կտա, երկու, երեքն է՛լ ավելի կարող ա տալ, առանց էն էլ ամեն գեղ թագավորական դավթարի հաշվով քիչ ա բռնած, որ մեկել ծախսերը միջիցը դուս գա. էդ բանն էդպես եկել ա, էդպես էլ պտի գնա. դուք չկարծեք, որ ձեր դատավորը չգիտի, թե ամեն գեղ քանի՞ տուն թաքցրած ունի խազնիցը։

— Հաղար անգամ կանգնի ու ասա՝ գլխիդ մատա՛ղ, զորթ ես ասում, գեղ ա, չի ըլնիլ, որ մի քանի տներ ավելի չունենա, համա դրանցից շատը աղքատ՝ օրեն հացին մուրացկան են. էդ ընդուր համար են պահում, որ էն աղքատների խարջն էլ ունևորների շլինքը քցեն։ Տես թե ո՞նց ա ծիծաղում. տո՞ գնա՛, լավ մա՛րդ,— ասում ա,— գնա գործիդ կա՛ց, գեղի վերջի աղքատն էլ կարող ա տարեկան մի-երկու մանեթ ճարել. էդ օրենք ա, պտի ասիլ. համա էս էլ կա, որ դուք էլ պտի ձեզ համար էլ, մեզ համար էլ միտք անեք։ Ես անխղճմտանք մարդ չեմ, ես չեմ ասիլ, որ խարջից ավելացածը բոլորն ինձ բերե՛ք ու դուք համը մի՛ տեսնեք. էնպես արե՛ք, որ համ դուք կուշտ ըլնք, համ մենք։

— Դե՛ ասա՝ ինքն ա սորվացնում գողությունն, էլի՛։

— Բաս էլ ո՞ւր ես ինձ կրակը դնում էրում, խեչա՛ն, բաս էլ ո՞նց չի նեղացնենք աղքատին, էլ ո՞նց յասավուլ չբերեմ։

— Թե աստված կսիրես, էն անսիրտ յասավուլների անումը մի՛ տալ. իլլաքի թե[2] էս գազան Մարգարը. աչքիս պեծը չախմախի տվեց, երբ որ

1 Նախսելիք։ 2 Մանավանդ։

էն խեղճ կնգա աղաչանքը լսեցի. համա յասավուլի համար՝ ոնց որ խաղ ու պար։

— Դեռ էլի ոսդ ցխոտ անես, Մարգարի երեսը քսես, էլի միջների լավը դա ա, էլի ինչքան ըլի՝ հայ-քրիստոնյա ա. բաս թե որ էն անօրեն թուրքերին տեսնես, յա դազախների արածները լսես, ի՞նչ կանես։

Տանուտերի ու խեչանի խոսակցությունն ընդհատվեց քուչի մյուս ծայրից գոռալով երեսն արյունլվիկ եղած մի բոբիկ տղայի դեպի նրանց վազելովը։

— Վա՛յ երեխեքս, վա՛յ գլուխս, վա՛յ մեջքս, ձեզ մատա՛ղ, էս ի՞նչ աստծու պատիժ ա,— աղաղակում էր տղան,— օգնեցե՛ք, դազախը մտավ տունս, հարբած էր, էլ չեմ հասկանում՝ ինչ էր ուզում, դամշու[1] տակը քցեց երեխեքանցս, դաղդղորիկն ածեց, ինձ էլ է՛ս օրը քցեց։

Նրա գլխիցն արյունը թափվում էր, նա հանեց յուր վրայի մետակ արխալուղն և մեջքը ցույց տվեց. լեղակի նման կապտացած էր։

— Ա՛յ տնաքանդ, յասավուլը հերիք չէր, դազախ էլ էիք բերո՞ւմ,— ասաց խեչանը տանուտերին։

— Դազախին ես չեմ բերիլ տվել,— պատասխանեց տանուտերը,— նա եկել՝ հինգ ձի էր ուզում, դուտսաղներ[2] պտի տանի Ապարանից մովրովի կուշտը։

— Էս տնաքանդի տղեն ձի էլ հո չունի՞, սրա տունն ընչի՞ էիք ղրկել։

— Ձիանքը վաղուց եմ ճամփու քցել. ինքը դազախը լակել էր, գզրին պատվիրեցի, որ մի քիչ շնթռկացնի ու ճամփու քցի, երևում ա քնել չի ու վեր ա կացել, տներն ընկել։

— Հիմի էս նաչար[3] տղի համար ի՞նչ պտի անես։

— Ոչինչ, ձեռներիցս ի՞նչ կգա. մովրովի համար դազախի ձիու անպետք դռնաղը[4] մեր գեղիցը շատ թանկ ա։

— Ձեր գլխին մեռնի՞մ, ոչինչ չեմ ուզում, միայն թե եկե՛ք տանիցս հանեցե՛ք էն անաստված անհավատին,— հուսահատած խնդրեց տղան։

— Էլ ի՞նչ ես նստել, դե վեր կաց գնա՛, տանուտեր. ո՛վ գիտա՝ խեղճի տունը հիմի ի՞նչ օրն ա քցել։

— Ես ոչինչ չեմ կարող հասկացնել, ա՛յ, յասավուլ Մարգարը գալիս ա, սրան տանենք, սա խոսք կհասկացնի,— ցույց տվեց տանուտերը մոտեցող յասավուլին։

— Շատ լավ կըլնի, խեչան աղա՛,— ընդունեց Մարգարը խեչանի խնդիրը,— ես էս սհաթս քո խաթեր դազախին գեղիցը դուս կհանեմ,

1 Մտրակ։ 2 Բանտարկյալներ։ 3 Խեղճ։ 4 Սմբակը։

բայց ընտեղից էլ գնանք, ձեր տանը մի-երկու թաս գինի իմենք. ասում են քեզ լավ գինի ունիս։

— Հերիքնազ չա՛ն, էն ի՞նչ այլակերպ մարդ ա յասավուլը. հենց որ հացը տեփրով տարա առաջները դրի ու աչքս նրա աչքին ընկավ, ոնց որ գրողն ու մահը տեսնեի. ես էդ մարդիցը վախում եմ, դրա ձեռովը մեր տան գլխին մի փորձանք կգա,— ասաց Հեղնարը՝ հոր հրամանովը շիրախանեն[1] հաց տանելուց հետո։

— Է՛հ, դրանց սեին էլ նալաթ[2], սիպտակին էլ. յարաբ դրանցում լավերը կա՞ն. ամենքն էլ մահը տանելու բաներ են,— պատասխանեց Հերիքնազը։

Այդ օրից Հեղնարը քանի յասավուլ Մարգարի անունը լսում էր՝ սիրտը դողում էր։

Ի

ԳՐԱԳԻՐ ՀԵՐՈՍԸ

Տարեցտարի խեչանի հարստությունն ավելանում էր։ 50 թվականների Արևելյան պատերազմի տաք ժամանակն էր. աշտարակցոցն ապրանքը գետնին չէր մնում. ինչքան քացախած գինի ու ջուր խառնած արաղ կուզես տար Գյումրի՝ բանակի մեջը, կեսօր չի քաշիլ՝ տկերդ կդատարկես կվերադառնաս։ Խեչանը թեպետ շարվադարություն[3] չէր անում, բայց յուր դռանն էլ այնպիսի գնովն էր ծախում, որ կարճ միջոցում մեծ օգուտ ստացավ. նա ի՞նչ կարիք ուներ օր ծերության չոլեչոլ ընկնիլ, Աշտարակի ջահելներն իրանք գալիս աղաչում էին նրան, տանում նրա ապրանքը, շուտ փող շինում ու մյուս շաբաթ բերում, թե նրան վճարում, թե իրանք էլ օգուտ քաղում։

— Մեր տղե՛ք,— ծաղր անելով, Ապարանու բքերի մեջ ձյունը ճղելով, կամ ամառվան տոթին գլխարկով երեսների քրտինքը սրբելով, Խեչանի գինի-արաղը ձիանց վերա բարձած՝ կատակներ էին անում Աշտարակի երիտասարդները.— հիմի Խեչանենց Խեչանի ոտները քուրսու տակին ցըրտատար էլան, կամ ուռի ծառերի շվաքումը քնած ժամանակը գլխին արևը խփեց։

— Բաս ձեռները տեսնես՝ ինչպես են կուցումել, կուլ եկել՝ Թունդրի ափին նստած, խորոված ի շամփուրը քաշելուս։

1 Գինետուն, մառան։ 2 Անեծք։ 3 Զիապանություն։

Եվ մեր ուրախ պատանիքն յուրյանց բարձր ծիծաղով և բաղցրաձայն երգելով վերև էին բարձրանում։

Երևանու նահանգն այս տարի մեծ նեղության մեջ էր. Շիրակու գավառը զորքը լցված էր, արյունահեղ պատերազմը ռուս և Թուրք տերության մեջ օրական հազարավոր զոհեր էր անում. Թնդանոթների ճայթյունները մի քանի բոպեի մեջ հարյուրներով մինուճար մոր աչքի սև ու սպիտակներ էին խավարացնում։ Բանակների մեջ պատերազմն էր յուր հունձն անում, գավառներումը տաժանելի ու դժվարակիր կոռ ու բեգյառն էին հասարակությանն առանց սրի ու մահացուցիչ գործիքների սպանում։

Ոչ այնքան օրինավոր և ուղիղ ճանապարհով եղած պահանջներն էին այսքան նեղությանց պատճառը, որքան ստորին և երկրորդակարգ պաշտոնատարների անկանոն գործողությունները։ Գողն ի՞նչ կուզի՝ մութ գիշեր. այդ խավարասերների օրերը դուրս էին եկել. ամեն մի նոր պահանջի ժամանակը նոր միջոց էր բացվում յուրյանց շահասեր նպատակներին հասնելու։ Օրինակի համար. բուն բանակիցը տնօրինություններ է լինում առատ վարձատրությամբ պատերազմական անոթներ և պաշարներ տեղափոխելու մի կետից մյուս կետը։ Անկարծիք, գյուղացի ժողովրդի համար այս եկամուտի աղբյուր էր, մի հարստության դուռն էր։ Ամենայն արագությամբ շրջաբերական հրամանը տարածվում է գավառակապետներին ի կատար ածելու, ուշացնելու ժամանակ չէ, հանգամանքը համբերել չի տալիս։

— Էլի՛ եկավ, էլի՛ նոր աղբյուր,— Թնդում է ուրախությունից պատվելի պաշտոնատարների սիրտը։ Հինգ բոպեի մեջ նոր գործակատարության ծրագիրը պատրաստ է, հրամանագրերը գրվում են բոլոր գյուղական տանուտերներին և մի երկու ղազախ, մի յասավուլ և մի դիվանատան գրագիր թռչում են դեպի օգուտի դուռը։ «Ուր գեշն իցե, անդր ժողովեսցին արծվիք»,— պատում է ժողովրդի բերանում այս գրաբար առածը, իսկ յուրյանից՝ այդ ռամիկ ու տգետ ժողովրդից ավելի յուղալի գեշ, կամ լաշ որտե՞ղ կլինի։

Դեռ տեղ չհասած՝ մեր ախոյաններն էլ յուրյանց գործողության ծրագիրն են կազմում. գրագիրը մի-երկու անգամ կարդում է յուր տարած հրամաններից մեկն և գլուխը պատում։

— Հեր օրհնածն էլ տեղ թողե՞լ է, որ մարդ յուր գլուխը միտք բերի,— վերջապես ասում է նա յուր քամակից եկող յասավուլին,— էս առաջին գյուղը որ պտի մտնինք, ընդամենը հիսուն տուն է, վաթսուն սայլ է ուզել. տնաքանդի գյուղումը բոլորը քսան սայլ հազիվ լինի, 30 լուծք եզը չի լինիլ, իրանք էլ քաղցած՝ ճաշին են քնում՝ հազիվ մովրովի ուզածը վճարեն, էլ մենք ի՞նչ տեղից կարող ենք օգտվիլ։

— Դու քեֆիդ կա՛ց, աղա միրզա՛[1], դու քանի կարող ես՝ թթու դեմք բռնի՛ր ու ինձ վրա բարկացի՛ր, դեռ թե կուզես՝ հասարակությունը հավաքված տեղը՝ մի երկու ապտակ էլ երեսիս կպցրո՛ւ, վնաս չունի, ձու չեմ, որ փխլվեմ,— ժպտալով և հեզությամբ պատասխանում է յասավուլը։

— Դրանով ի՞նչ առաջ կգցես։

— Էն՝ որ մեր ձեռքին ա՝ էսօր հրամանը գլուխ բերե՞լ, թե մի շաբաթի մեջ կատարելը։

— Հա՛, գլխի ընկա։

— Իհարկե, մեր հին արհեստն ա, տեսնո՞ւմ ես էս ղազախները, սրանց էլ հո գիտես, թե ի՞նչ վախտ եմ պետք ածելու։

— Կտեսնենք, էլի՛։

— Վա՛յ գլխիս, էլի եկան,— ետ նայեց տանուտերը դեպի գյուղի ափը և ձեռքով գլխին խփեց։

— Սաքի ուրախ չե՞ս,— ժպտաց գզիրը։

— Է՛հ, խալխումն էլ հալ չմնաց։

Մեր հրամանաբերները ձիանքը լցրած՝ կրակի նման գյուղի մեջ մըտան։ Ոչ միայն գյուղական ահեղ շների հաչոցն ու հարձակմունքը չեն կարողանում փոքր-ինչ սանձել նրանց կատաղի արշավանքը, քուչաներում խաղացող բոկոտն ու մերկ երեխայքն էլ նոցա աչքին ճանճ ու մժեղ են թվում։ Առանց աջ ու ձախ նայելու, թթված ու խոժոռ դեմքով դեպի տանուտերի դուռն են քշում նրանք յուրյանց ձիանքը։

— Փախե՛ք, փախե՛ք, երեխե՛ք, փախե՛ք, ձիանոնց ոտների տակին կճխլվիք,— գոռում են հեռվից երեխատերերն ու յուրյանք ծակերը մըտնում՝ թաքչում։

Այնպես կարծես, թե այս գյուղում մի հասակավոր մարդ չկա, բացի գզիրից ու տանուտերից, որ շլինքները ծռած՝ դրանց են սպասում։

Գտակը հանած՝ վազեցին տանուտերն ու գզիրը դեպի առաջին քշող ձիավոր գրագիրն ու մինը ձիու սանձը բռնեց, մյուսն ասպանդակը։

Մի ոտը դեռ ասպանդակի մեջ՝ խոսեց մեր աղեն.

— Շուտ արա՛, տանուտե՛ր, կանգնելու ժամանակ չի, 60 սայլ պետք է պատրաստես՝ ամեն մինը երեք լծով, ու ճանապարհ դնես այսօր իսկ Ալեքսանդրապոլ՝ պատերազմի դաշտը, այնտեղից գնդակներ պիտի բարձեն, ուղարկեն Ղարսա տակը։

— Գլխիդ մեռնի՛մ, մեր գյուղումը հիմի երկու սել չես գտնիլ, էլածելածը 15 կոտրատված սելեր են, էն էլ շատը Գյումրի փոդրաթի[1] ալիր են տարել, երեքն էլ գնացել են քոմակչու[2] օղլուշաղը[3] Երևանիցը բերելու։

— Դատարկ-դատարկ ի՞նչ ես գլխիցդ դուրս տալիս. ձեզ որ մնա՝ թագավորական սալդատը կռիվ չպիտի անի, որ ձեզ նեղություն չգա։

— Աղա ջա՛ն, քո գլուխը վկա՛, գեղումը մի սել չկա։

— Քեզ սել կշինեմ՝ կլծեմ, հիմա՛ր, ինձ հետ հանա՞ք ես անում. կանչի՛ էս սհաթս ձեր գեղի կոտորված խալխին, տեսնեմ՝ քանի՞ գլխանի եք, որ թագավորական հրամանը գետինն եք ուզում քցել։

— Աղա ջա՛ն, գեղումն էլ օրինավոր մարդիկ չկան, ջահելներն ամենքն էլ սելերի հետ կոռատեղն են, հալիվոր անկյալներն էլ՝ որը իրանց հանդերումն են, որոնք էլ ըսկի ոչինչ բանի պետքական չեն, տներումը հավեր են քշում։ Գեղի հալը որ իմանաս՝ լացդ կգա. վարուցանքներս մընացել ա, դեռ մի բուռը ցորեն չենք հողի մեջ շաղ տվել, ցանածներս էլ չորացել կծղել են հնձողի խաթեր. տաշտներումս հացի փշրունք չկա. հենց տուն կա, որ էսօր դուռն երեսին ետ արած՝ ոչ ով չունի, որ իրան մի սառը ջուր տա։

— Ի՞նչ ես գլուխ տանում, քեզանից ո՞վ ա հաշիվ պահանջում, քեզ ասում են սայլեր պատրաստի՛ր, կուզես՝ գետնի տակիցը հանիր տո՛ւր, էդ քո բանն է։ Տո՛, ի՞նչ ես դունդ ցցել, երեսիս մտիկ տալիս, շան տղա, յասավո՛ւլ,— մոտեցավ գրագիր աղեն յասավուլին ու մի ապտակ խփեց,— քո պաշտոնդ չե՞ս ճանաչում, շո՛ւտ էս բոպեիս տունը մի մարդ էստեղ ստեղծե՛ս։

— Գլխիդ մեռնիմ, մենք քո ղուլն ենք, դու պտի հրամայես, որ մենք կատարենք,— խոնարհաբար պատասխանեց յասավուլը։

— Հրամայում եմ, շուտ ղազախներին էլ հետդ վեր ա՛ռ։

— Ի՞նչ ես կանենք, հիմար անասո՛ւն,— հասավ յասավուլի մտրակը գզրի ուսագլխին,— առաջ ընկի՛ր, տես քանի՞ մարդ եմ հավաքներիցը դուս քաշում։ Ղազախնե՛ր, քամակիցս եկե՛ք։

Ինչպես մի քանի շներ, որ աղվեսի քամակիցն ընկած հալածում են ու մոլորված կենդանին օրհասը մոտ կարծելով՝ յուր ոտքերին է ապավինում ու փախչում, այդպես յասավուլի առաջին վազելով՝ տունետուն է մտնում գզիր Գիքոն։

— Հիմի ի՞նչ ես ասում, տանուտե՛ր, տալու ես սայլե՞րը, թե ոչ,— հարցնում է յուր մարդկանց հեռանալուց հետո գրագիրը, թիկնելով տանուտերի սենեկումը բարձի վերա՝ մի փոքր քաղցր դեմք բռնած։

— Աղա ջա՛ն, սուտ չեմ ասում, գեղումը ոչ մի սել չկա։

---

1 Գրագիր։

1 Կապալի։ 2 Օգնականի։ 3 Կնոջը։

— Ուրեմն ի՞նչ պետք է անենք։

— Քեզ լավ հայտնի ա,— ժպտալով պատասխանեց տանուտերը,— համա, աստված վկա, տնաքանդի ժողովրդի մեջ էլ հալ չկա, ընչանք բողազները պարտքի տակ թաղված են։

— Ոչինչ, որտեղ հարյուր մանեթ պարտք կա, տասն էլ կարելի է ավելացնել։

— Ով ա բան ասում, համա էլ վերցնելու տեղ չմնաց։ Աստված սաղ պահի աշտարակցի Խեչանենց Խեչանին. թե որ նա չըլներ, էս տարի սաղ մհալը հողի հետ կհավասարվեր. աստված նրա օջախը շեն պահի, գեղ չկա, որին նա ձեռ մեկնած չըլնի. ընենց խղճմտանքով ա վարվում, որ ամենքն էլ շնորհակալ են. ուրիշը որ ըլներ՝ մնին-մին շահ կառներ, համա նա շահի համար բան էլ չի ասում, ինչքան մեր սիրտն ուզում ա՝ վրեն ենք դնում, նա էլ ոչ մի խոսք չի ասում։

— Էլ ի՞նչ եք ուզում, աստված ձերն էլ տվել ա, Աշտարակը հեռու չի։

— Էլ երեսատեղ չի մնացել։

— Շատ խոսիլ չի հարկավոր, դու էլ գիտես, որ մեր երևալը քեզ էլ օգուտ է. հիմի ժողովուրդը կհավաքվին, ես քեզ վրա կբարկանամ, որ մինչև իրիկուն սայլերը պատրաստ լինեն, դու էլ մի քիչ դեմ ընկի՛ր ու հետո՝ երբ որ կտեսնես, որ շատ եմ նեղանում, խալխին դռանը հավաքի՛, խորհուրդ արեք, որ ես ձեզ երեք օր ժամանակ տամ, հետո կգնաք մովրովի մոտ, էնտեղ էլ մի տեսակ կվերջացնենք։

— Աղա ջա՛ն, լավ ես հրամանք անում, համա ռահաթի միջքի իրիկը[1] կոտրվել ա։

— Ի՞նչ պտի անես, ամբողջ աշխարհքի համար է, միայն քեզ համար հո՛ չի։

— Հա՛, իհարկե, ասում ա՝ «էլինան դարա գյուն բայրամ դիր»[2]:

— Փառք աստծու, որ դու ես ասում։

— Համա, աղա ջա՛ն, ի՞նչ ես կարծում, քեզ որ ինչպես ըլի, շնորհակալ անենք, մովրովին ինչքանով՞ յոլա կտանի։

— Դեռ իմն ասա՛, տեսնեմ՝ ինչքան պտի տաք, մովրովինն էլ ես կասեմ։

— Հինգ մանեթով անց կացրո՛ւ։

— Ի՞նչ...

— Գլխիդ մեռնիմ, էլ բերան մի՛ բաց անիլ, աստվա՛ծ, երկի՛նք, գետի՛նք, ծո՛վ, ցամաք՝ խալխումը ջան չմնաց, էլ վաղինը չի. էս կռիվը պրծնի անց կենա՝ էն վախտը ջանս քեզ մատաղ կտամ։

1 Ղնեաշար։ 2 Համայնքի հետ միասին՝ սև օրն էլ զատիկ է։

— Տո՛, էս հնձի ժամանակը որ մանգաղներս բթացնենք, ձեռներս խաչենք, տանը նստենք, էգուց երաշտ եղած վախտն ի՞նչ պիտի աշխատենք։

— Շատ լավ ես ասում, աղա՛, համա մեր գեղի համար չի ասած. հարուստ գեղեր շատ կան, ամեն տեղից էլ իրանուգյորա[1] կստանաք, աստված բարաքաթ[2] տա, դու ինձ լսի՛ր, հինգ մանեթով յոլա տա՛ր։

— Դե լա՛վ, քո խաթեր տասը մանեթով վերջացրո՛ւ, մի-երկու մանեթ էլ յասավուլի ու ղազախների աչքը կոխի, մովրովին էլ ես կգրեմ, որ խնայի, քիչ բանով ինքն էլ ձեր վրիցն էս կոռը վերցնի։

Թող սրանք իրանց խորհուրդն անեն, մենք հետևինք յասավուլ Մարգարին իր ղազախներով։

— Ո՞ւր են էս քանդվածի տերերը,— ճչում է յասավուլը բակումը կանգնած գզրի վրա,— կաշիդ կքերթեմ, թե որ էս սհաթս դուս չես բերել։

— Ես ի՞նչ անեմ, որ ասում են տանը չի, ո՛վ գիտա, ո՛ր արտն ա գնացել,— բարձրաձայն պատասխանում է գզիրն ու աչքով-ունքով դեպի տան դուռը ցույց տալիս։

— Հետս արի՛, ղազա՛խ,— ասում է յասավուլն և տան դուռը բաց անում։

— Ես ձեզ ամենքիդ էլ կսպանեմ, թե որ չասեք, թե ուր է տանտերը, — առաջ է վազում ղազախը դեպի վերի անկյունը, ուր ջահել կանայք ու աղջիկներն երեսները դեպի պատը դարձրած՝ գլուխները կախել են։ Փոքրիկ երեխայքը, որոնք շշկլված մտիկ էին տալիս այս տեսարանին՝ լացի ձայնը տունը ձգեցին ու...

— Վա՛յ, նանի ջա՛ն, վախո՛ւմ եմ, վա՛յ, նանի ջա՛ն, սա մեզ կուտի։

Ղազախը մի կնոջ ուսից բռնեց, առաջ քաշեց։

Երեխայքը, որ փոքր-ինչ լռել էին, կրկին իրանց նվագարաններն սկսեցին։

Խեղճ ամոթխած կինը գլուխը կրծքին է սեղմել ու անխոս՝ ղազախի քամակիցը գալիս։

— Ախար մարդդ ո՞ւր ա, սրանց ձեռիցը հո պրծնիլ չենք,— արդարանում է գզիրը,— Մարգար աղեն էլ շատ խնդրեց ղազախին, որ տուն չմտնի՝ չելավ, սրանց հո իմանում ես, լեզու չգիտեն, բան հասկացնիլ չի ըլնում։

Կինը ուսերը վեր է քաշում և նշանացի դեպի անդը կամ այգին ցույց տալիս։

— Սուտ ես ասում, հենց հիմի ես տեսա, որ գեղումն էր, դեռ մի

1 Ըստ յուր չափու։ 2 Լիություն։

երեխի էլ մեր ձիանոց ոտի տակից փախցրեց,— խոսեցավ յասավուլը,— ի զուր ուր ա թախ կենում. զազախին հրամայած ա, որ ամեն ծա-կուծուկ մտնի. թե խելք ունի՝ թող դուս գա, մորթելու հո չե՞ն, սելեր ենք ուզում, թե որ չի ունենալ՝ չի տալ։

Դողդողալով, աչքերը տրորելով ներսի սենեկիցը, կամ քթոցի տակից դուրս է գալիս տան գլուխն և հեռվումը կանգնում։

Յասավուլի աչքով անելովը զազախի մտրակը մի քանի անգամ խեղճի մեջքին պար եկավ և շլինքը ծռած իր հոգեհանների առաջն ընկած՝ գնաց նա դեպի տանուտերի տունը։

— Աղա Մարգա՛ր,— քո որդու արևին մատա՛զ,— ասում է մի ուրիշը մյուս տեղում,— ինձ էս մի հոգևոր անաստվածի ձեռիցն ազատի, ինձ տանուտերի դուռը մի՛ տանիլ, էս էլ քո ոտքի քրեհը։

Յասավուլը մանեթը գրպանը դրեց և զազախին առավ ուրիշ բակ մտավ։

Մի ժամ/ց հետո գյուղացիք տանուտերի դուռը լցված՝ ձայներն երկինքն էին հասցրել։

Ամենքից ավելի լսվում էր տանուտերի գոռյուն-գոչյունը, որ զանազան անհիշելի օրհնաբանություններով գյուղ հիմնարկողի և մինչև էսօր շարունակողների հոգվոց խնկարկությունն էր անում։

— Թեկուզ ճղճղա՛, թեկուզ միջիցդ երկու կտոր եղի՛ր, որ չունինք՝ ի՞նչ պտի տանք. մենք գեղով, էլլիկով կերթանք Երևան, նաչալնիկի ոտները կընկնենք, որ մեզ մի փրկություն անի. էսքան զահը ու արբաբ[1] կըլնի՞, երեխեքն էլ ծախենք՝ տակիցը չենք կարող դուրս գալ,— հուսահատված՝ հանդգնում էին տանուտերի դեմը մի քանիսը։

— Ո՛ւր կուզեք՝ գնացե՛ք, էս կովի վախտը ձեր դնչին մռող չի ըլնիլ,— համոզեց վերջապես տանուտերը։— Օղորմի էս մարդի հորը, 15 մանեթով կակղացրել եմ, տանք իրան, վեր կենա, կորչի գնա ուրիշ գեղեր, ընչքան մենք մի-երկու իշխանով գնանք մովրովի ոտներն ընկնենք, մի բանով խաթրն առնենք, չորս-հինգ սելով անց կացնիլ տանք, գնանք Զոբանով խաթրն առնենք, ընչանք տեսնենք մեր գլուխն ի՞նչ ա գալիս։

Մեր գրագիր հերոսն յուր խոստման համաձայն մովրովին մի միջնորդության գիր գրեց, 10 մանեթը ծոցը դրեց ու ճանապարհ ընկավ, ամենևին չմտածելով, թե տանուտերի քսակի մեջն էլ հինգ մանեթ մտավ կամ յուր յասավուլը միայն երկուսով բավականացա՞վ, թե իրանից ծածուկ մի քանիսն էլ տները ման գալուս էր յուր ծոցը դրել։ Ամենքից զուրկ

1 Ծանրություն և նեղություն։

միամիտ զազախներն եղան, որ մի-երկու գավաթ գինով և մի-երկու աբասի ծխախոտի փողով մինչև երկինք գոհ եղան։

Ամեն տեղ էլ գրագիր աղեն բարեսրտությամբ կարեկից գտնվեցավ ժողովրդի դժվարություններին և ամեն տեղից էլ միմյանց քամակից տանուտերները մի-երկու իշխաններով մովրովի քաղցր ներողամտությանն արժանացան։

Խոսք չկա, որ պաշտոնապես հրամայված սայլերի քանակությունն ամբողջապես գնաց յուր վերա դրած պարտականությունը կատարելու, իսկ մեջտեղը մովրովն յուր հավատարիմ պաշտոնակալներով այսպիսի հաջող հանգամանքներից չմոռացավ օգուտ քաղելը. նա ոչ միայն, ինչպես տեսանք, ավելորդ սայլեր էր բարդում և վերջը իջնում պատշաճավոր թվին, նա և ոչ մի կոպեկ սայլերի համար դուրս տված վարձի փողիցը յուրյանց տերերին չցույց տվեց։

— Է՛հ, սրանով ի՞նչ ծանրություն է գալիս գյուղացվոց վերա,— ասում էր մի անգամ մովրովը միկիտան Սաքոյին,— ամեն մի գյուղի վերա տասը սայլ ավելի հաշվելով՝ գյուղին մի զգալի վնաս չի հասնիլ, յուրաքանչյուր տան վերա մի աննշան գումար կհասնի, իսկ այդ մանր արծաթները միասին հավաքած՝ կարող են մի քանի մարդի պետք գալ։

— Եվ մանավանդ, որ դու դրանով իշխանության հրամանն էլ գետնին չես թողնում, գլխիդ դուրբան, վերա բերեց Սաքոն,— նրանց ուզածը քո մհալիցը 150 սել էր՝ թամամ[1] գնաց, նրանց ի՞նչ, թե դու ո՛ր գեղիցն ինչքա՛ն ստացար, կամ իրանց տված քրեհի փողերը դու տերերին բաժանեցի՞ր, թե ոչ, էդ տանու բան ա, քո տան գործը քեզ ամենքից լավ ա հայտնի։

— Գիտեմ, Սաքո, թե դու ընչի՞ ես մեր արածը հավանում. էն տանուտերները, որ մեզ մոտ են գալիս, առաջ քեզ մոտ են իջնում, դու էլ մեջտեղը շահվում ես։

— Դե՛, սաղ աշխարհքն ըտենց ա, աղա ջա՛ն, մարդս մարդով ա, մի ձեռը ծափ չի տալ, ամենքս էլ մի կտոր հացի համար ենք աշխատում, ես էլ քո սայիցը[2] մի կտոր հաց եմ ուտում՝ քեզ օրհնում։

— Ինձ զարմացնում է, Սաքո՛, ռահաթը. նա միշտ լաց է լինում, միշտ գանգատվում է, որ աղքատ է, ու էլի մի փոքր սեղմած ժամանակը փողը գոգերով է թափում. էս որտեղի՞ց է։

— Սաղ ըլի աշտարակցի Խեչանենց Խեչանի քիսեն. անհատնում ծով ա, ուզողին էլ չէ՛ չկա։

1 Ամբողջապես։ 2 Քո շնորհիվ։

— Լավ թիքա է, ա՛յ, դա, Սաքո, ո՞նց անենք, որ էդ մարդին մեր ճանգը ձգենք։

— Շատ հեշտ ա, աղա ջա՛ն. գեռ մի քիչ համբերիր, իմ աչքի վրա,— պատասխանեց Սաքոն և նրա վերա մի փոփոխություն եղավ ու պոռշները կրծեց։

— Ոչինչ, դեռ ուշ չի,— փնթփնթաց նա յուր մեջ։

— Ի՞նչ մոլորվեցիր,— նկատեց մովրովը Սաքոյի շփոթմունքը,— երևում է շատ դժվար բան է խեչանին որոգայթի մեջ ձգելը, դրա վրա ես մտածում։

— Համբերությունը կյանք ա, գլխիդ մատաղ. երբ որ օրը կգա բարին հետը՝ ես քեզ կասեմ։

— Բաս էս ցորենների գործը լավ չափ ու ձև արա՛, հետո արի ինձ ասի՛։

— Հիմար Սաքո՛, տեսար ի՞նչ եմ ձեռիցս թողել, խելքս ընչանք էսօր որտե՞ղ էր. հացը որտե՞ղ ա էլել, ես ի՞նչ տեղեր եմ քաշ գալիս։ Ես ընչի՞ պտի նոր զարթնեմ. հլա օղորմի մովրովի հորը, որ խոսք բաց արեց; թե չէ էն թավուր հացիցը պտի զրկվեի ու իմ մատը տանեի, իմ աչքը հանեի։ Համա ոչինչ, դեռ ուշ չի, դեռ ընչանք հիքանիքը չքաղեն, խեչանն իր աղջկանը պսակիլ չի, ընչանք էն օրը շատ բան կարելի ա կատարել. մի հենց հաց ճանգս քցեմ, որ ոչ հատնի, ոչ պակսի։ Դեռ ես էս ցորենների գործը ձեռից չթողամ, էս էլ պակաս թիքա[1] չի, Եզովպոսի շան պես բերաններիս մսի կտորը վեր չքցենք ու շվաքի քամակիցն ընկնենք։ Վնաս չունի, աղա խեչա՛ն, դու էս մի երկու ամիսն էլ դինջ նստի՛, աշունքը աղջկանդ Սմբատին տալու պատրաստությունը քաշի, մենք կտեսնենք, թե ո՛վ կաշխատի՝ ո՛վ կուտի։ Ոնց որ գիտեմ, որ երկու ձեռքիս վրա տասը մատ կա, ընենց էլ հաստատ հավատացած եմ, որ խեչանի աղջիկն էս իմ տասը մատներիս մեջ աղունիկի պես հուփ տված ա։ Թե տարեն գլխին մի չաղլիկ տղա էլ կբերի, ընդուց ետը ես գիտեմ, թե մեր գեշ նշանածի գլուխը ո՛նց եմ աղը դնում ու մի ուրիշ սիրուն, լիտիկ, ազատ աղջիկ առնում։ Ջան, Սաքո՛, էլի՛ ապրեցիր, հարուստ կնկա տեր էլ դառար։

Այս խոսքերը ծամելով մովրովի մոտից դուրս եկած՝ գնաց նա դեպի յուր գինետունը։

1 Գատառ։

ԻԱ

ՑՈՐԵՆ

Վերոհիշյալ անցքի մյուս առավոտը միկիտան Սաքոն մեծ գործերի մեջ էր. նա յուր գինետունը հանձնեց յուր սպասավորին մի քանի պատվերներով և ինքը նստեց ձիու վերա։

Նա հագել էր դեղին չերքեսի չուխա ու կ'հեշերը չուխի գրպաններովը հանել։ Նա մհալն[1] էր գնում՝ մի պարսիկ յասավուլ քամակը քցած։

— Մենք մեր բանը լավ ենք տանում, ինչքան կուզեն՝ նախանձու տրաքին,— մտածում էր նա ճանապարհին։— Շատ անդամ էի մհալը դուս եկել, բայց հիմիկվան պես ոչ մինը խերով[2] չի էլել. շատ լավ ա, ես իմ աստվածը, ես կգնամ՝ ժողովուրդը՝ կպատրաստեմ, ինքը մովրովն էգուց կգա, գործը կսկսի։ Ուրիշ մհալներ թե որ մեր պես հեշտ գլուխ բերեն ու մեջն էլ մեր չափ շահվին, թող պարծենան. վերջը հայտնի կըլնի, վերջն ա գովելի. ասում ա՝ խուփը գլորվել ա, կճուճը գտել, զորթ որ ես ու մեր հիմիկվան մովրովն իրար շատ լավ ենք բռնում, էնպես անում ենք, որ թուրքի ասածի պես նա շիշ յանսրն՝ նա քյաբաբ (ոչ շամփուրն այրվի, ոչ խորոված), ոչ իրան վնաս ըլի, ոչ ես զրկվիմ, ոչ էլ վերևից եկած հրամաններն երեսի վրա մնան։

— Ա՛յ Սաքո, էս ո՞ւր ենք էլի ոտնավորվել,— հարցրեց ճանապարհին յասավուլ Մահմատը։

— Քո ընչի՞դ ա պետք, ուր որ կերթամ՝ հետս արի, վնաս չես տեսնիլ։

— Ես գիտեմ, որ քո աչքն իմ վրա քաղցր է,— շողոքորթեց պարսիկը յուր ազգային բուն բնավորությամբ։

— Շատ լավ էլավ,— մտածում էր Սաքոն ինքն իրան,— մովրովի հետ լավ միտք արինք, առաջ Աշտարակից սկսենք. Աշտարակը մհալի աչքն ա, թե որ նրանք ղարուլ կացան[3], ուրիշ գեղերը ձեն ու ծպտուն չեն կարող հանիլ։

Այս երեկո Աշտարակումը տանուտերի տանը Սաքոյի հետ շատ երկար նստած էին մի քանի պորտաբույծ, ուրիշների հացին սովոր գյուղական իշխաններ։ Բավական միջոց նրանք փսփսում էին Սաքոյի հետ. երևում էր, որ ամենքն էլ նրա գալուցը շատ գոհ էին։ Նրանք միմյանցից չէին թաքցնում յուրյանց սրտի զգացմունքը. պարզ կարելի էր նկատել, որ Սաքոյի հետ սրանք նույն հարաբերության մեջ չէին, ինչ որ ուրիշ գյուղերի իշխանները, սրանց վարմունքը շատ մտերմական էր։

1 Գավառ։ 2 Օգուտով։ 3 Համաձայնեցան։

— Ինչպե՞ս է մեր սկսվածքը,— հարցրեց մովրովը մյուս օրը Սաքոյին առանձին, երբ ինքը մի քանի ձիավորներով իջավ տանուտերի տանը և գտավ Աշտարակու բոլոր իշխաններին իրան սպասելուս։

— Ոնց որ քո սիրտը կուզի, գլխիդ մատաղ։

— Քանի՞ խալվար[1] են համաձայնում տալ։

— Երեսուն խալվար, ինչքան դու ինքդ հրամանք արիր։ Աշտարակիցը սրանից ավելի էլ հարկավոր չի, աղա ջա՛ն. սրանք վար ու ցանքի տեր չեն, սրանցը գինին ու արաղն ա, որ քո բաժինը լիաբուռը հանում են. սրանց վրա էդ 30 խալվարն էլ նրա համար քցեցինք, որ մհալն իմանա, թե Աշտարակը տվել ա, իրանք էլ ոտի չկանգնեն։

— Քո ասելովդ ուրեմն սրանցից մենք ոչինչ ակնկալություն չպե՞տք է ունենանք։

— Անպատճա՛ռ. աշտարակցիք էն մարդիկը չեն, որ իրանց պարտականությունը չճանաչեն. ոնց որ դու հրամայել էիր, ես 100 խալվարիցը սկսեցի, 30-ի վրա կանգնեցի։

— Հետո ինչքա՞ն է մեր հասույթը։

— Դու գիտես, գլխիդ մեռնիմ, որ աշտարակցիք աղա մարդիկ են, իրանց հասնելիք ցորենի գնիցը մի կոպեկ չէին ուզում վերցնել. համա ես ասեցի՝ չէ՛, աղեն ձեզ լավ ա ճանաչում, էդքան էլ ձեզ չի զրկիլ, տասը խալվարի գնովն իմ խաթեր յոլա կտանի. մնացածն էլ ձեր քրեհի[2] մեջը գործ դրեք։

— Ուրեմն 450 մանեթից 150-ը մեզ ա հասնում։

— Հրամելի՛ք, 50-ն էլ միջի մարդկանցը՝ մնացածն էլ քրեհի վրա կդնեն։

Մի ժամից հետո Աշտարակու ամբողջ հասարակությունը տանուտերի դռանը հավաքված՝ սպասում էր մովրովի դուրս գալուն։ Մովրովի պատվիրանքին համաձայն ոչ ոք չի պակասել։

Մի վայրկյանի մեջ բոլոր գլխարկները վեր կացան և լռությունը տիրեց։

Մովրովը տանուտերի պատշգամբից հետևյալ ազդու ատենաբանությունն սկսավ.

«Սիրելի աշտարակեցի՛ք.

Որքան ուրախ եմ, որ ես այսօր իմ գավառի մեջ՝ունիմ մի այսպիսի ժողովուրդ, ինչպես որ դուք եք, որ իմ ասածներս կարող եք մի առ մի հասկանալ. հասկացող որդին հոր աչու աչքն է. մովրովը որ կա, յուր գավառի հայրն է, ուրեմն դուք էլ իմ երկու աչքերիս լույսն եք։

[1] Երևանի խալվարը 30 փութ է, կամ 100 լիտր՝ ամեն մի լիտրը 12 ֆունտ հաշվելով։ [2] Բեռնակրի վարձ։

Այսօր ես ամեն տեղ, ամեն մովրովների մոտ պարծենում եմ և տեղը ընկած ժամանակն էլ ամենքի վերևն եմ նստում, որովհետև ձեր մովրովն եմ։ Առաջին անգամն, երբ էս գավառն ինձ տվին, ես շատ տխրությամբ հանձն առա, բայց զարմացա՝ երբ տեսա, որ բոլոր գավառների մովրովները նախանձեցին իմ փառքի վերա։ Վերջն իմացա, որ արդարև նախանձելու տեղիք են ունեցել. ես իմ գավառիս մեջ Աշտարակ եմ ունեցել, որ հարկը պահանջած միջոցն իմ երեսը պետք է պարզեցնի։

Մինչև այսօր ես առիթ չեմ ունեցել մի այսպիսի գործի համար ձեզ դիմելու, և ահա այսօր եկել է ժամանակը, որ դուք իմ մեծավորների, իմ նաչալնիկների մոտ ինձ սևերես չթողաք։

Դուք գիտեք, որ հիմի ինչպիսի օրեր են, մեր երկիրն արյունը տանում է. օսմանցին ուզում է, որ մեզ յուր ձեռքի տակն առնի, մեզ բոլորիս թուրքացնի, մեր հոգին դժոխքի բաժին անի. բայց մեր քաջ զինվորները Ղարսի մոտ կուրծքները դեմ են տվել, օսմանցու քիթ ու պռունգն են փշրում. նրանք պատրաստ են իրանց արյունը թափել ու անհավատներին մեր աշխարհքը ոտք չդնել տալ։

Դուք տեսնում եք, որ ձեր ապահովության համար շատ մեծ-մեծ իշխաններ ու զորապետներ յուրյանց տուն ու տեղը, յուրյանց երեխեքանցն աստուծո հուսով թողել, եկել ձեզ համար թուր են քաշում։ Հիմի իմացե՛ք, սիրելի՛ք, որ ձեզ համար յուրյանց գլուխը չխնայողներն այսօր քաղցած են. նրանց համար պատրաստած հացը բավական չեղավ. նրանք իրանց տեղը շատ անթիվ ու անհամար հաց ունին, բայց ճանապարհի հեռավորության պատճառով դժվար է բերելը։ Եվ մանավանդ ի՞նչ կարիք կար բերելու. մենք մի՞թե պարտական չենք մեր կյանքը նրանց համար մատաղ տալու, մի՞թե մի կտոր հաց պետք է նրանց խնայենք։ Իհարկե, կասենք ո՛չ, այնպե՛ս չէ՞»։

— Իհարկե, գլխիդ մատա՛ղ, չպիտի խնայենք,— ձայն տվեց միաբերան հասարակությունը։

— Երբ որ խորհուրդ եղավ,— շարունակեց ատենախոսը,— թե ո՞ր գավառներից հաց խնդրեն, ո՛րը թողան, ո՛րն է շատ ոտքի տակի, ամենքը միաձայն վճռեցին, որ Շորագյալու և Սարդարաբադու գավառները շատ նեղությանց մեջ են, պատերազմը շատ մոտ է, շատ էլ կողոպտում են, պետք է այդ գավառներից ոչինչ չպահանջել։ Ես տեղիցս կանգնեցի և ասացի.— ո՛չ, ես իմ ժողովրդին շատ լավ եմ ճանաչում, նրանք յուրյանց փրկիչ զինվորների համար ուրախությամբ երեխաների բերանից հացը կառնեն և կտան. ես իմ գավառի պատասխանատուն եմ, ես գիտեմ, որ նրանք ինձ խիստ կմեղադրեն, եթե իմանան, որ այս բարի

գործին ես իրանց մասնակից չեմ արել։ Ասացե՛ք ինձ, լավ եմ արե՞լ, թե վատ։

— Շատ լա՛վ, շատ լա՛վ ես արել, գլխիդ մատաղ։

— Այս խոսքերն ասելուս դուք էիք իմ աչքիս առաջին, իմ հույսս Աշտարակ գյուղն էր, որ ինքն առաջինն օրինակ կդառնա էս բարի գործին և, ինչպես տեսնում եք, առաջին անգամը ձեզ մոտ եմ եկել, դեռ իմ գավառի մեջ այս բանը ոչ ոք չի իմանում։

Ես շատ լավ գիտեմ, որ դուք վարուցանքս չունիք, հողագործություն չեք անում, ձերը դինին ու արաղն է, ձեր տարեկան հացն էլ փողով եք առնում, բայց վստահ եմ, որ դուք ոչինչ չեք ասիլ ու կտաք։

Շատ չեմ խնդրում ձեզանից. թե որ համեմատաբար առնելու լինինք՝ Աշտարակ գյուղի մեծության համաձայն, մի քանի հարյուր խալվարներ պետք է պահանջեինք. բայց ո՛չ, չունեցած տեղիցը շատ վերցնելը մեղք է, ձեզանից այնքան ուզում եմ, որ ամեն տան վերա տասը լիտր հազիվ հասնի, ընդամենն 30 խալվար է Աշտարակի վճարելիքը. կարծեմ շատ չնչին բան է, այնպես չէ՞։

— Հրամելի՛ք, գլխիդ մատա՛ղ։

— Կարելի է՝ շատերը կկարծեն, թե այս ցորենը ձրի են պահանջում ձեզանից.— այդպես չէ։ Այն ձեր համար գլուխները ետ դրած իշխանները ձեզ շատ են սիրում, նրանք չեն ցանկանալ, որ ամեն բանով դուք վնասվիք. նրանց մեջ մի մարդասեր փոդրաթչի[1] կա, որ ձեռքը ջերն է տանում ու իր քսակիցն ամեն մի խալվարի համար 15 մանեթ ձեզ պարգև տալիս, որ գոնե քրեհի փողը դուրս գա. որովհետև նրանք լավ գիտեն, որ հիմի ցորենի խալվարն արժե 65 մանեթ և էստեղից մինչև Ախալցխա էլ, ուր որ պետք է ձեր անասուններին բարձեք ու տանիք, քրեհն էլ կարժի 20—25 մանեթ։

Ահա, սիրելի՛ք, էդպես բարի մարդիկ կան ձեր հոգսը քաշողներ. դուք էլ ձեր կողմից նրանց պատիվը պահեցե՛ք ու առանց ուշացնելու, որտեղից գիտեք՝ ճարեցե՛ք 30 խալվար ցորեն, բարձեցե՛ք ձեր ձիանցը, կամ սայլեր վարձեցե՛ք ուղարկեցե՛ք Ախալցխա, էնտեղ ամբարումը[2] պահ տվե՛ք, ապահովագիրը բերե՛ք, ինձ հասցրե՛ք։

Մովրովի գնալուց մի-երկու ժամ հետո, երկու ղազախ և մի յասավուլ փողոցներն ու տներն ընկած, անխնա ծեծելով, ամենքին քշում էին դեպի Կարմրավոր եկեղեցվո պատի տակը, ուր տանուտերն յուր համախոհներով սպասում էր թավշի անելու և ամեն տան վրա ըստ կարողության ցորեն բարդելու։

1 Կապալառու։ 2 Շտեմարան։

Կրկին աղքատների պղնձները մեջտեղ եկան, թեպետ մյուս կողմից պետք է խոստովանել, որ Աշտարակումն իսկական աղքատներ շատ սակավ էային, մանավանդ այդ տարին։ Ո՛վ մի հատ բեռի ձի ուներ, նրանով յուր տունը կառավարում էր, իսկ հարուստները գինի-արաղ ծախելով՝ լավ կարողություն էին շինել։

Այդ էր պատճառը, որ խեչանենց խեչանն այս տարի ավելի օտար գյուղացիներին էր պետք գալիս, քան թե աշտարակեցվոց։

Միկիտան Սաքոն, երեկվան յուր խորհրդակիցների և տանուտերի հետ մնացած 300 մանեթը հավասար բաժին անելուց հետո, իրան հասանելիքն ստացավ և մովրովին Աշտարակ թողած՝ յուր յասավուլի հետ գնաց առաջիկա պարսկական «Պստի» կոչեցյալ գյուղն՝ յուր քարոզչության պաշտոնը կատարելու։

Մովրովն Աշտարակումն յուր գործը վերջացրեց և յուր գնացքն ուղղեց նույնպես դեպի Պստի գյուղն, ուր էր Միկիտան Սաքոն։

— Տղե՛ք, ըտենց չէր, որ մովրովը քարոզեց,— ասաց մեր ծանոթ Հաքուլը մի-երկսին,— ես երեկ Գյումրի էի՝ իմացա։ Ռահաթին փոդրաթչու խաթեր են նեղացնում։ Կռիվը չսկսած՝ նա փոդրաթն էժան վեր ա կալել, հիմի հացը թանկացել ա, չի կարողանում հասցնիլ, պտի տուն ու տեղը ծախի ու տա։ Գոգերով փող ա վեր ածել, որտեղ հարկն էր, ու խեղճ խալխի շլնքին էս բեռը դրել. թե չէ տերությունն իր ռահաթին ըսենց նեղություն կտա՞ր։ Ցորենի խալվարը 65 մանեթ ըլի, 25 էլ քրեհը, մհալին կխեղդի՞, թե 15 մանեթով քո ձիուն բարձի, 6—7 օրեն ճամփա տար, կամ թե չէ էն փոդրաթչու աչքերն ուռե՞լ էին մեզ համար, որ իր քիսիցը խալվարին 15 մանեթ ողորմություն աներ։

— Գլխները քա՛րն, Հաքո՛ւլ, սուս կա՛ց, քո հորն օղորմի, սմեն բանում քանդվել ենք, էս էլ նրանցից մինն ըլի, աստված իրանց պատիժը տա,— պատասխանեցին լսողներն ու հեռացան։

ԻԲ

ՑՈՐԵՆԻ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄ ՄԱՇԱԴԻ[1] ՌԱՄԱԶԱՆԸ

Արագած լեռան արևելա-հարավային թմբի վերա է գտնվում Պստի գյուղը՝ Աշտարակից մի ժամաչափ հեռավորությամբ։

Այս գյուղն յուր անվան համեմատ և նշանակություն ունի։ 17 տուն մերկ ու քաղցած Սեղլու կոչված պարսիկներն են սորա բնակիչները։

1 Մաշադի— ուխտ գնացող պարսիկ։

Պստի գյուղն յուր սակավ հողովը շատ ցած գտնվելով ջրից, հազիվ տարեկան հաց է բաշխում յուր ծույլ և անգործ բնակիչներին։ Մեկ կամ ամենաշատն երկու նիհար եզն է բախտի այս խորթ որդվոց հարստությունը, իսկ կերածները՝ գարեխառն կամ կորկախառն ճաթ։ Մի միխթարություն ունին Պստի գյուղի բնակիչները. նոքա շատ առատությամբ միրգ են վայելում։

Արագածի լեռնադաշտի ստորոտի վերա են երևելի այգեշատ Աշտարակ, Օշական, Փարբի և այլն գյուղերը։ Շնորհիվ այդ այգիների՝ Պստի գյուղացիք շատ հաջողաձեռնությամբ լցնում են ամեն գիշեր յուրյանց տներն ամենատեսակ անուշահամ պտուղներով, առանց մի կոպեկ վճարելու։ Նրանց հոգը չէ, եթե երբեմն կբռնվին ու կբանտարկվին. գիտեն, որ էլի կազատվին և յուրյանց գործը կշարունակեն։

Ուրիշ աշխատանքի կերպ, ուրիշ տեսակ կենաց եղանակ անծանոթ է մեր այս քաղցրալեզու հարևաններին։

Ես այնչափ չեմ էլ մեղադրում նոցա, ի՞նչ անեն խեղճերը, ինչո՞վ կառավարվին. կթան չունին, որ կաթ ու մածնով լիանան, ավելորդ հաց չունին, որ ծախեն և յուրյանց անհրաժեշտ պիտույքների վերա գործ դնեն. մշակական աշխատանքի սովոր չեն, որ նրանով յուրյանց ապրուստը հոգան, դարերով արմատակալած սովորությունն իրանց թույլ չի տալիս այդ անելու. նրանք ի նախնյաց ավանդաբար ընտելացել են հարստահարության, յուրյանց դրացի հայերի ճակատի դառն քրտինքը վայելելու, իսկ հիմա, երբ պարսկական բռնակալության շրջանն անցել է, էլ չեն կարողանում հաշտվել արդար վաստակով հաց աշխատելու կերպի հետ։ Նոցա ամենասիրելի պարապմունքը գողությունն և բազեները ձեռքներին թռչնորսությամբ ձորերումն ու լեռներումը քարշ գալն է։

Շատ տեղերում բոլոր ոտնավոր անասունների տեղը բռնում են քանի մի նիհար հավեր, որոնք նույնպես յուրյանց տերերին կերակուր չեն լինում։ Երբ գողությունը չի հաջողվում, խեղճ Սեդլլուն սրտանց մի ա՞խ է քաշում ու մյուս առավոտը մի հավի ոտներ կապում, կախում յուր քրթոցիցը ու շալակած գալիս յուր ծանոթ այգետեր աշտարակեցու կամ փարբեցու տունն և մատուցանում նրան յուր ընծան. այն ժամանակ նա հաստատ գիտե, որ յուր ահագին քթոցը գլխե-գլուխ կլցվի խնձորով, խաղողով, դեղձով և այլն։

Մեր գովաբանած Պստի գյուղումը շատ անգամ հավեր էլ չես գտնիլ, ավելորդ հացահատիկներ չեն մնում, որ հավերին տան. ցորենի տականքը քան թե հավի կուտ անեն, յուրյանց երեխաներին լավ կուտ կդառնա։

Մի քանի օրվա մեջ Պստի գյուղացիք յուրյանց տարեկան աշխատանաց բերքը՝ ցորենը կալսում-լցնում են յուրյանց դռներին, կամ գյուղի

ափներում փորած հորերի մեջ, երեսը հողով ծածկում և յուրյանց սիրելի արհեստի հետ ընկնում։

Առհասարակ շատ գյուղերում այսպես է. ցորենի ամբար նոքա չունին, ցորենը պահում են գետնում բաց օդի մեջ։ Նոքա փորում են փափուկ գետնին երկու գաղաչափ խորությամբ, հորի տակին և կողքերին դարման են փռում, ցորենը մեջը լցնում և հողով ծածկում։ Այդ գետնի մեջ տարիներով մնում է ցորենը, ոչ փտում և ոչ ծլում է[1]։

Մի բան միայն խիստ զարմանալի է, օրական չի եղել, որ այդ բաց երկնքի տակ անխնամ թողած ցորենը գողանան։

Մի վատ հատկություն միայն ունեին այս սևգլլուները. իրարու դեմ դավաճանություն, հարևան հարևանին մատնել՝ սովորական է նոցա մեջ։ Լինում են և այնպիսիները, որոնք յուրյանց գյուղի գաղտնիքն ամենաշնչին ակնկալությամբ հայտնում են։

Ամեն գյուղում միկիտան Սաքոն ուներ յուր լրտեսները, ուրեմն Պստի գյուղումն էլ անպատճառ կունենար։

Սաքոն դեռ նոր էր իջել քյոխվի դռանը, որ Պստի գյուղացի մաշադի Ռամազանը ոտներն ու կռառջիները մինչև ծնկները բաց՝ եկավ Սաքոյի առաջին կանգնեց և մինչև գետինը խոր գլուխ իջեցրեց։

— Բարո՛վ, մաշադի։

— Բարո՛վ, աղա Սաքո՛, մեր գլխի՛, մեր աչքի՛ վերա։

— Ինչպես է առողջությունդ, երեխայքդ, ընտանիքդ։

— Է՛հ, աղա Սաքո՛, շատ թանկություն է, կորեկի ճաթ էլ չենք գըտնում, որ երեխայից բերանը քցենք։

— Ուրեմն գյուղումը ծախու ցորեն չի գտնվի՞լ։

— Հանաք ես անո՞ւմ, աղա Սաքո՛, հատիկ էլ չես գտնիլ։

— Հապա ինչպե՞ս անենք, մովրովի մոտ ես քեզ գովելով չափն անց եմ կացրել, հենց հիմի ինքն էլ կգա. զորքի համար ցորեն է հարկավոր,

---

1 Գետնի տակին դարմանով պատած հորի մեջ ցորենը ապրում է մինչև երեսուն տարի և յուր հատկությունը կամ արժանավորությունը չի կորցնում։

Մի այդպիսի փտաստ սրանից տասը տարի առաջ պատահեցավ Ծաղկոց ձորի գյուղերից մեկի մեջ. լավ չեմ հիշում Մաքրավա՞նք, թե Դդմաշեն գյուղումն էր։

Այդտեղի բնակիչները գաղթականներ են։ 40 տարի առաջ, նոր գաղթած տարիներից մեկում, մի մարդ մեռնելուս կտակում է յուր որդվոց, որ մի հոր ցորեն կա թաղած։ Մահը վրա է հասնում և մեռնողի լեզվին կապ է դնում հորի տեղը հայտնելու։

Ժառանգներն երկու-երեք տարի իզուր որոնում են գետնի մեջ, ցորենը չեն գտնում։

Տասը տարի սրանից առաջ այդ ընտանիքը նոր տան հիմք փորելուս գտնում են մի հոր լիքը ցորեն բոլորովին անարատ և մաքուր և շատ զարմանում են։

Ծերունիներից մինը հիշում է երեսուն տարի առաջ մեռնող մարդու խոսքերը։ Այդպիսով ապացուցվում է, որ 30 տարի առաջ կորած հորն է այս։

ամեն գյուղի վերա յուրյանց կարողության համեմատ ձգած է. ձեր գյուղիցն էլ չորս խալվար են ուզում, որտեղի՞ց պետք է ճարեք։

Ռամազանը մտածության մեջ ընկավ։

— Թե որ տեղը գիտես՝ ասա՛, հիմի է քո պետք գալու օրը, մովրովի աչքի լույսը կդառնաս։

— Չորս խալվար չէ, բայց երկու կճարվի, կես խալվար Մահմատ-Վալու հորումը, 25 լիտր՝ Քյալբալայ Նաղու, կես խալվար՝ Լալ-Ղուրբանի, մնացածն էլ՝ հինգ-տասը լտրով կհավաքվի։

— Եզնե՞ր ինչքան կան։

— 12 հատ կան, բայց երեք-չորսը միայն դյուղումն են, մնացողը Երևանից քրեհ են տարել Գյումրի։

— Այդ ցորնատերերից ո՞րն իր կամքովը կծախի։

— Ոչ մինը. իրանց երեխայից ապրուստն է, թե որ այն էլ ծախեն, բերանները քամուն պետք է բռնեն։ Բայց թե որ մովրով աղեն կամենում է, նրանց ո՞վ է մտիկ տալիս։

— Ի՞նչ տեղ է պահած։

— Գյուղի ափերումը, հորերի մեջ. եթե կուզես՝ քանի ոչ ոք չկա, գընանք՝ ես քեզ ցույց կտամ։

— Չէ, երբ որ յուրյանց հոժար կամքովը չեն տալ, ես մովրովին առաջուց կսովորեցնեմ, որ հրամայի հորերը ցույց տալ. թե չանեն, մովրովի աչքը քեզ վերա կընի, դու իբր թե առաջուց քեզնուքեզը հեռանում ես, մովրովն էլ քո քամակիցը ժողովրդի հետ կգա, որտեղ դու կկանգնես, գլուխդ կքորես, յասավուլները կփորեն։

Սաքոն Ռամազանին մի մանեթ ընծայեց։

— Քյոխվա,— ասաց Սաքոն տանուտերին,— քո ժողովրդին կանչի՛, խրատի՛, որ առանց հակառակության չորս խալվար ցորեն պատրաստեն զորքի համար. պետք է ձեր եզներովը տանիք Ախալցխա հանձնեք։ Ես եկել եմ, որ առաջուց իմաց տամ ձեզ, հիմի մովրովը կգա ու երկար չի մնալ այստեղ։

— Գլխիդ մատա՛ղ, Սաքո աղա՛, չորս լիտր ցորեն չկա մեր գյուղումը, ոչ թե չորս խալվար։

— Եելք ունիս՝ մի՛ չքիլ, թե չէ բերդումը կփտիք. մի՛ վախեք, ձրի չեն ուզում, խալվարին 15 մանեթ ողորմություն է դուրս եկել, որ հասարակությունը շատ չնեղանա։

Մի փոքր դիմադրելուց հետո տանուտերը խոստացավ Սաքոյի համար քսան հավ ուղարկել, միայն թե մովրովի բարկությունից յուրյանց ազատի, ինքն էլ յուր ժողովրդի հետ միասին սպասեց մովրովի գալըստյանը։

Մովրովի քարոզն այստեղ այնքան երկար չեղավ. մի խիստ հրաման էր, որ արձակեց նա ու ոտքերը գետին զարկեց, մանավանդ երբ Սաքոյից իմացավ, որ սրանց ոչինչ բանով չի կարելի կոտրել։

— Պառկացրե՛ք առաջավոր իշխաններին,— հրամայեց մովրովն և մի փառավոր ոռզգի[1] ծեծեց մի քանիսին։

— Ես գյուղը կրակ կտամ, հավերի կուտն էլ կկտրեմ, ցույց տվեք ինձ ձեր հորերը,— գոչում էր մովրովը։

— Աղա ջա՛ն, ոտքերիդ մատաղ, մենք հորեր չունինք, բոլոր հորերըն էս տարի դարդակ են. եթե չես հավատում՝ համեցե՛ք, աչքովդ տե՛ս։

Մովրովը աչքը դեպի Ռամազանը դարձրած գնում էր տանուտերի առաջնորդությամբ։

Մի քանի հորեր արդարև դատարկ էին։

— Յասավո՛ւլ,— հրամայեց վերջապես մովրովը,— փորեցե՛ք էս մարդի կանգնած տեղը։— Նա յուր ձեռքով ետ խփեց Ռամազանին և մի ապտակ էլ տվեց։

— Ի՞նչ ես առաջիս ցցվել, կանգնել, շո՛ւն դու,— բարկացավ մովրովն Ռամազանի վերա, որը գլուխը քորելով՝ մի կողմը քաշվեց։

Յասավուլներն առաջուց պատրաստած բահերով սկսեցին փափուկ գետինը փորել։

Եզան նման բառաչելով, ոռզգի ծեծվածներից մինը՝ Լալ-Ղուրբանը առաջ վազեց և ընկավ փորած տեղի վրա։

— Առաջ ինձ բահով սպանեցե՛ք, հետո երեխեքանցս բերանի ապրուստը կտրեցե՛ք,— գոռում էր Լալ-Ղուրբանը։

— Քաշ տվե՛ք, ետ ձգեցե՛ք,— բարկացած հրամայում էր մովրովն և յասավուլ ու դազախ խեղճին երեսի վերա թրևում, հեռացնում էին հորի բերանից։ Բայց ողորմելի մարդը կրկին դուրս էր ընկնում նոցա ձեռքիցը և պառկում հորի վերա։

Այս միջոցին հեռվումը կանգնած մանր երեխաների միջից երկուսն անվարտիք, ոտաբոբիկ, մեջքների վերա մի-մին քրչահին ձգած, 10, 12 տարեկան հասակում՝ առաջ վազեցին ճչալով և բազմության մեջը պատռելով, տարածվեցին հորի վերա՝ յուրյանց հոր հետ միասին։

— Սատկացրե՛ք այդ շան լակոտներին,— ծղրտաց մովրովն ու չկարողացավ համբերել, ինքը մոտեցավ և փոքրիկ մանուկներին մի-մի աքացի տվեց, յուր ձեռքովը քաշեց, հետ ձգեց։

---

1 Ռոզգին այն պտուտիճն է, որ մարդուն երեսի վրա տարածում են գետնին, հեռուները բաց անում և բարակ մահակներով ծեծում։

— Ռոզգի՛,— հրամայեց նա, և խեղճ Ղուրբանին այնքան ծեծեցին, որ շարժվելու կարողությունից զրկվեցավ։

— Բավակա՞ն է,— հրամայեց գթասիրտ մովրովը։ Անշնչացած մարդին յասավուլները մի կողմ ձգեցին, հորը բաց արին և անարգել ջվալները լցրին։

— Հերի՛ք է,— գթաց մովրովն և դարմանի մեջ մնացած հորի տակին եղած 10 լտրաչափ ցորենը թողին Լալ-Ղուրբանի երեխայից տարեկան սնունդ։

Մովրովը վեհանձնաբար հանեց գրպանից յոթը մանեթ փող կես խալվարի համար, և տվեց տանուտերին՝ Ղուրբանի ցորնի գինը։

Դրանից հետո բոլոր ցորենով լիքը հորերի վերա մաշադի Ռամազանի գլուխը քոր եկավ և ցորենը հորերի միջից ջվալների մեջ փոխադրվեցավ։

Իհարկե, այժմ էլ դիմադրություններ չեղան, Լալ-Ղուրբանի դասը հերիք էր մյուսներին խելքի բերելու։ Ցորնատերերը բավականացան հեռվումը գլխիկոր կանգնելով, մի-երկու ծերունի մոլեռանդորեն էլ հիշելով յուրյանց կորցրած երջանիկ օրերը, չկարողացան աչքով տեսնել, քաշվեցին յուրյանց տներն, երեսների վերա ընկան և գլխներին ծեծեցին։

— Աղա՛, գլխովդ պտույտ գնա՞մ, գոնե ազատիր մեր գյուղը տեղ հասցնելու ծանրությունից,— խնդրեց տանուտերը։

— Ես երեսպաշտություն չեմ սիրում, ինձ համար բոլոր գավառը հավասար է, պետք է տանիք և ապահովագիր բերեք. եթե բեռնակիր անասուններ չունիք, ինքներդ շալակով տարե՛ք. սալդատը ձեր համար արյուն է թափում, դուք էլ նրա համար մի փոքր չարչարանք կրեցե՛ք,— վճռեց մովրովն և ոտքը դրեց ձիու ասպանդակին։

— Շնորհակալ եմ,— ասաց նա ցած ձայնով ասպանդակը բռնող թուրքին,— քո արած ծառայությունը չեմ մոռանալ, քեզ աչքիս տակին կունենամ, Սաքոն քո հավատարմությունդ ինձ պատմեց։

— Աստված կյանք տա՛, աղա ջա՛ն, ամեն ժամանակ պատրաստ եմ քո ղուլլուղին գտնվելու[1],— պատասխանեց մաշադի Ռամազանն և մինչև գետինը խոր գլուխ տվեց.

— Ապրի՛ Սաքոն,— մտածում էր ճանապարհին մովրովը,— թե որ նրա խելացի տնօրինությունները չլինեին, ես չէի հավատալ, թե այս թանկության տարին հնարավոր լիներ Պստի գյուղի պես աղքատ տեղիցը ցորեն ստանալ։

— Իմ բանը մովրովիցն հաջողակ է գնում, Պստի գյուղիցն էլի իմ բաժինը դուրս եկավ. 20 հավն էլ լավ բան էր. բայց մովրովը ոչինչ չը-

1 Քեզ ծառայելու։

կարողացավ դուրս տանել,— մտածում էր Սաքոն մովրովից առաջ Պստի գյուղից ձի նստած դեպի Կարբի գյուղը գնալու ժամանակը, ուր պետք է նախապատրաստեր մովրովի գալուստն և ցորենի վճարքը։

Ոչ մի գյուղում Սաքոն ամոթով չմնաց. ում բան հասավ, կամ ոչ՝ նա յուրն ստացավ. առանց ոտքի քրեհի ոչ մի տեղից դուրս չգնաց։

Սաքոյի գործ դրած խելացի հնարքի շնորհիվ այս տարի շատ ընտանիք երեխայից ձեռքերը բռնած՝ ողորմություն սկսան հավաքել։

Հետևանքն այն եղավ, որ մեր հարևան պարսիկները գրգռվեցան և յուրյանց վրեժը հայտնապես մովրովից ու Սաքոյից չկարողանալով հանել՝ ձեռք առան ասպատակություն. գիշերները հարձակվում էին հայ գյուղերի վերա, ցերեկները ճանապարհներին ու դաշտերումը հայերին ոչխարի նման մորթում էին։

ԻԳ

ՊՍՏԻԿ Ա. ՈՒ ՃՍՏԻԿ Ա.

Մենք չենք մոռացել այն խոսակցությունը, որ դիպվածով առաջ եկավ մովրովի և Սաքոյի մեջ։ Ընթերցողը լավ հիշում է, թե ինչպես կապվեցավ Խեչանենց Խեչանի անունը գավառից պահանջած սայլերի հետ և ի՞նչ առաջարկեց մովրովը Սաքոյին։

— Լավ թիքա է Խեչանը։

Ահա այն երկու բառերը, որ Սաքոյին շփոթեցին։ Մինչև էսօր ինչպե՞ս նրա մտքումն այդ բանը չէր ծագել։ Ահա ի՞նչ էր նրա պառոները կրծելը, ի՞նչ էր նրա շփոթմունքը։

— Ոչի՞նչ. դեռ երկու ամիս էլ ժամանակ կա, դեռ ուշ չի,— հուսադրեց Սաքոն ինքն իրան։

Եվ արդարև, ներկա ցորենների գործը հետաձգել չէր կարելի. միջից դուրս գալու արդյունքն ակնհայտնի էր, Սաքոյի բախտիցը բուն մովրովը[1] պատերազմի դաշտն էր գնացել, իսկ նրա տեղը նշանակված էր յուր օգնականը։ Այս մարդն այնպես գործերին լավ ծանոթ չէր, հարստանալու էլ մեծ ցանկություն ուներ, ուստի և Սաքոն իրեն համար լավ մեքենա էր։ Նախկին մովրովի ժամանակը Սաքոյի աստղը, փոքր մնաց, պիտի խավարեր. նա ոչ կաշառակեր էր և ոչ ժողովրդի բնությանն անծանոթ։ Սաքոյի բախտիցն և ժողովրդի տարաբախտությունիցն էր, որ նա գնաց։ Ճշմարիտն ասած՝ ավելի շուտով զրկեցին նրան, քան թե ինքը գնաց։

1 Պետրոս Մատաթյանցը։

Նաչալնիկն երբ որ հայտնեց այդ ժողովրդասեր և անշահամոլ մովրովին ցորեն հավաքելու գործը, նա բացեիբաց ցույց տվեց, որ գավառի այս նեղության ժամանակը մեծ ոճրագործություն կլինի նոր հարկ բարդել ժողովրդի վերա, և թե ինքը հրաժարվում է այդպիսի մի պահանջը կատարելուց։ Նաչալնիկն, իհարկե, ոչինչ չասեց, միայն աչքերն ոլորեց և այդքանը բավական էր մեր արդարասեր մովրովին հասկանալու համար, թե այսուհետև անհնար էր իրան գավառ կառավարելը. լավ համարեց գլուխ առնել ու քաշվել պատերազմը։

Վերջապես այժմ միջոցը Սաքոյինն էր և դեպքը ձեռքից թողալն հիմարություն կլիներ։

Սաքոն ման եկավ ամբողջ գավառը։ Նրա սրի երկու կողմն էլ կտրում էր, ցորենները նրան լավ վեր քաշեցին, ոչ միայն Սարդարաբադու գավառումը՝ ամբողջ Երևանա նահանգումը նրան չճանաչողներն էլ անունը տալիս էին, ո՛րը զարմացմամբ, ո՛րը շնորհակալությունով և ո՛րը հայհոյանքով ու անեծքով։

Սաքոն յուր այս ճանապարհորդության մեջ միշտ արծարծում էր յուր մտքումը Խեչանենց Խեչանի փեսայության խնդիրն և միշտ ինքն իրան մեղադրում էր։

— Ա՜խ, ինչպես ուշ գլխի ընկա, հիմա՜ Սաքո, Խեչանենց Խեչանին ես նո՞ր էի ճանաչում, նրա կարողության չափը ես նո՞ր գիտեի. ընչի պտի էս տեղը հասցնեի, որ հիմա դժվարություն քաշեմ ու մոլորվիմ։ Ծվիկենց Աղաջանի տղեն էգուց-էլոր դատած մալի տեր պտի դառնա, իսկ ես տանից-տեղից զրկված՝ սրա-նրա աչք ու ունքին մտիկ տալով, տնաքանդությունով, գող ու ավազակների ընկեր դառնալով, խալխի մեղքը պտի վեր կալեմ, թե ի՞նչ ա՝ մի կտոր հաց պտի աշխատեմ, էն էլ՝ կեսն արյուն։ Տո՜, հազիր պատրաստ ա հացը մեր դռանը, եփած կերակուրն առաջիս, էլ ընչի՞ եմ քացի տվել դեն գցել. էս խելք չի՝ տիրոնջը պատիժ ա՞։

Երկու բան միայն երբեմն կասկածի տակ էին ձգում Սաքոյին։ Աշտարակումն եղած ժամանակը նա լսել էր, որ Խեչանի աղջկանը շատերն ուզել էին ու նա չէր տվել, ամենքի հույսն էլ կտրելու համար Խեչանը մոտիկ օրերս հանդիսով նշան էր դրել Սմբատի հետ։ Մեկ էլ իմացել էր, իբրև թե Շունհետածողենց Արշակն յուր առողջ ժամանակն ամեն տեղ պարծենալուս է եղել, թե մի ամբողջ տարի Խեչանի աղջիկն իրան էր սիրում։ Շատ անգամ այս բանի վերա ժամերով մտածում էր Սաքոն. նա որքան և շահասեր, բայց ասիական նախանձավորությունը ցեցի պես սիրտը ուտում էր։

— Է՛հ,— ձեռը թափ տվեց մի օր,— չոր ցեխը մարդի փեշին չի կպչիլ. ցնորված Արշակի խոսքերն ո՞վ կշեռքի մեջ կդնի. ներելի ա էնպես աղջկանը, որ սաղ մհալի չափ հարստություն պտի բերի իր հետ, մեկ էլ ես հո Խեչանի աղջկանը չե՛մ առնում, նրա մալն ու դովլաթը պտի ընի իմ կնիկը. աղջիկը թեկուզ քոռ ու քաչալ էլ ընի, թեկուզ ինձ չսիրի էլ, նրա կյանքը ընչանք երեխա բերիլն ա. ընդուց հետո բարի՜ ճանապարհ, թե իր կամքովը չգնա՝ ղրկելն իմ շինքին։

Աշունքացել էր. աշտարակեցիք յուրյանց այգիների գործերից պրծել էին, ամենքն ըստ կարողության հարստացել էին, հարսանիքների օրերը մոտեցել էին, ազատ տղայոց արյունը եռալ էր սկսել, որդեսեր մայրերի տված հույսերը նրանց կողքերումը նստել էին. գիտեին մեր պատանյակները, թե որքան և հայրերը ցանկություն չունենան իրենց պսակելու, էս ձմեռ անց կացնելու չեն, քանի որ նաեռն իրանք ուզում են իրենց ազիզ բալեթանց թագ ու պսակին արժանանալու, ուրեմն ինչպես լինի, այս քանի օրս խնամախոսների օրերը դուրս կգան։

Այս ամենը լավ գիտեր միկիտան Սաքոն և նա ուզեցավ ժամանակից ըն օգուտ քաղել։

— Ի՞նչ անեմ, ո՞նց սկսեմ. դիմացե-դիմաց իրան Խեչանին գնամ, երեսե-երես աղջիկն ուզեմ՝ չի ընիլ, վա՛յ թե խրտնացնենք, ունքը շինելու տեղ՝ աչքն էլ հանենք։ Ախար ի՞նչ կասի, թե ո՞ր երեսով դու գալիս ես իմ նշանած աղջկանն ուզում. ուրիշի ձեռքով էլ, ասած ա՝ փուշ բռնի՛։

Շատ ծանր ու թեթև արեց Սաքոն, շատ գիշերներ գլուխը կռացրած նստեց յուր գինետան ներսի սենյակումն և մտքի հետ ընկավ՝ ոչ մի վրճռական ելք չկարողացավ տալ. ո՛ր կողմը դարձնում էր, գործն յուր հակառակ էր երևում։

Մեզ լավ հայտնի է, որ գյուղացին մեծ հավատ է ընծայում նախապաշարմունքին. մեր Սաքոն թեպետ բացառություն էր կազմում, բայց այս անգամ էլ թերահավատացավ։

— Էս լավ նշան չի,— հուսահատվեցավ նա,— մի ունկը չեմ գրտնում, որ բռնվիմ. ո՛ր կողմը քաշում ես՝ կտրվում ա։ Ես Սաքոն ըլիմ ու էսքան վախտ մոլորվի՞մ։ Դեռ ի՞նչ լավ, որ իմ գործի համար ա. ի՞նչ կըլներ իմ հալը, թե որ մովրովը մի խորհուրդ հարցներ, ու ես էնպես երկար ժամանակ կմկմայի, չկարողանայի պատասխանել։ Չէ, սիրտս մի բան ա զգում. հենց իմանաս՝ քիթս քարին պտի առնի, սառած պտի մնամ։

Անտանելի էր Սաքոյի դրությունը, մի անգամ այնպես քաշեց երկու ձեռքով յուր գլխի մազերը, որ փոքր մնաց՝ ցնորվում էր։

Հաստատ քայլերով մի քանի անգամ սենեկի մեջ ման եկավ նա ու հանկարծ կանգ առավ, ցուցամատը ճակատին խփեց ու ասաց.

— Էլ ո՞ր օրի համար եմ պահել, ամենքիցը հո փող չպիտի՞ առնենք. էս մինն էլ առանց փողի ըլնի, էս մնի փողն էլ իմ քիսիցը դուս գա։ Հենց հիմի Խեչանի անումովը մեդալ գրել կտամ ու էգուց կերթամ Աշտարակ. ո՞վ դեղին պոլիմպրյալ, քո պսպղալուն մատա՞ղ, քո զորությունը շանց տալու օրերն եկել ե՞ն, պստի՞կ ես ու ճստի՞կ ես։

ԻԴ

ՄԵԴԱԼ

— Հը՛, էլի նոր մարդի՞կ։

— Հրաման քե՛զ, գլխիդ մատաղ, դեռ ո՞ւր ես, դեռ մհալի կեսը սիրտ չի անում. մեռնում եմ տանուտերերին ասելով, որ սրանից վնաս չի հասնիլ, ձեր առաջավոր իշխանների պատիվը չի վեր ընկնիլ, ղրկեցեք՝ ում ձեռը ջերն ա հասնում, անկաջ չեն անում, չեն ուզում, որ վերջի հասարակ մարդիկն մեդալ կախ տան, իրանց հետ ձգվին։ Վերջապես խոսքս կտրուկ էլավ, դեռ շատերը պտի գան, հիմի մի հինգ հատ եկել են, պտի գրվին, պոլիմպրյալները բերել եմ, համեցե՛ք։

Եվ Սաքոն մովրովի առաջը դրեց հինգ հատ պոլիմպերյալ։

— Քեզ քանի՛ անգամ ասել եմ, որ պոլիմպերյալի թիվը միտդ պահես,— բարկացավ մովրովը,— քեզ ասում եմ, որ միայն 184... թվականինը վեր կալ, ի՞նչ ես գլխացավանք տալիս. հո գիտես, որ էն տարվա կտրածն ամենքի վրա ծանր է, ոսկի է, հո պղինձ ու երկաթ չի՞։

— Շատ լավ ես հրամայում, աղա ջա՛ն,— արդարանում էր մի-կիտան Սաքոն,— համա բոլորը տես ու ճանանչ մարդիկ են. քանի հետ ասում եմ՝ չի ըլնում, աղանչաք են անում, երեսիցս կախ են ըլնում, ես էլ խաթրներիցը[1] չեմ կարենում անց կենալ. կպչում են յախես, որ փոխեմ, հո գիտես, ես էլ ոսկի չեմ կտրում, մի քանի հատ ունեի՝ քեզ տվի, քո չարը տանի՞ն, ջանս էլ չեմ խնայիլ քեզ համար, գլուխս քո ուղուրին[2] հետ եմ դրել, բայց հիմա որ չկա՝ ի՞նչ անեմ։

— Բաս ինչպե՞ս պետք է լինի։

— Էդ շատ հեշտ բան ա. քո մոտ հիմի պոլիմպրյալներ շատ կան. դրանք ինձ տո՛ւր, ես կտանեմ ինձ մոտ կպահեմ, մեդալ գրվելու համար եկողներիցն իրանց ոսկին կառնեմ, սրանց հետ կփոխեմ ու թող էլի բերեն քեզ տան. ամեն մեկի վրա էլ մի քանի կոպեկ ավելի փոխելու համար կվերցնեմ, էն խուրդեն էլ կբերեմ՝ քեզ կտամ։

1 Պատիվներից։ 2 Բախտավորության համար։

— Վա՛յ թե դու շատ առնես, ինձ քիչ տաս։

— Է՛հ, աղա՛, դու Սաքոյիդ դեռ չես ճանանչում, հո գիտե՛ս, որ ամեն մի պոլիմպրյալը երկու շահուց ավել գլուխ չի ունենալ, թափավորը[1] շատ քիչ ա. քո խաթեր ես մի-մին սաղ աբասի[2] էս սհաթը քեզ ավել կըտամ, թող մեջտեղն իմ երկու սաղ շահին կորչի. օտարի հո՞ չեմ տալիս, քո արևին փոխ ըլի՞։

Սաքոն ստացավ մովրովից հարյուրի չափ պոլիմպերյալ՝ 184... թվականի՝ գնացական գնիցը մի աբասի ավելի հաշվելով և թղթադրամով վճարեց մովրովին։

— Հիմի ես էն մարդկանցը ետ կտամ իրանց ոսկիքն, աղա ջա՛ն. կասեմ, որ դու հրամայել ես, որ ամեն մարդ իր ձեռովը տուն բերի. պատվիրի՛, որ մեկ-մեկ ներս մտնին, ու երբ որ էդ ոսկիքը կդնեն առաջդ, բարկացի՛ր, գլխներովը տո՛ւր, ետ դարձրո՛ւ, թող գան ինձ մոտ, ես կըտեսնեմ։

— Գիտե՞ք ինչ կա, տղեք ջա՛ն,— ասաց Սաքոն յուր խանութումն անհամբեր սպասող պոլիմպերյալների տերերին,— ճար ու իլլաճ չելավ, վեր չի կալնում, թե որ 184... թվինը չըլնի, ասում ա՝ անկարելի ա. հիմի ձեր փողերն ետ եմ բերել. թե կուզեք՝ դուք ինքներդ տարեք տվե՛ք։

— Մենք էն թվինը որտեղի՞ց ճարենք, մենք հո չե՞նք կտրողը։

— Թե կուզեք՝ ինձ մոտ կա, ես հատուկ դրա համար Երևան եմ գընացել, մնին կես մանեթ ավել տվել. թե կկամենաք համեցե՛ք, ձեզանից մի կապեկ օգուտն ինձ հարամ ըլի, ոնց որ ինձ վրա նստեր՝ա, տամ՝ տարեք տվե՛ք իրան. որտեղ մի պոլիմպրյալը կգնա, թող կես մանեթ էլ վրեն ավելի էրթա։

Մեդալասեր պարոնները մեծ ուրախությամբ համաձայնեցան, իսկ Սաքոն ձեռաց մովրովից ստացած ամեն մի ոսկուց 30 կոպեկ աշխատեց։ Միայն այդքանը չէր. առաջուց Սաքոն ստացել էր սրանցից օգնականի, գրագրների, յասավուլների անունով մի քանի մանեթներ ևս, որոնց կեսը միայն սովորաբար ըստ պատշաճին հասցնում էր, իսկ մյուս կեսը նույնպես յուր դրամարկղի մեջն էր մտնում։

Այնուհետև ամեն ոք յուր ձեռքով Սաքոյի հետ փոխում էր պոլիմպերյալն և անձամբ մատուցանում մովրովին ու անունը գրել տալիս, բայց միշտ Սաքոյին նախապես ներկայացնելովը։

Մենք դեռ չբացատրեցինք, թե այս ի՞նչ մեդալներ և պոլիմպերյալներ են։

Արևելյան պատերազմը վերջացավ, այդ նշանավոր արյունահեղու-

1 Ջանազանություն։ 2 20 կոպ. արծաթ։

թյան հիշատակի համար տերությունը դուրս տվեց այն փոքրիկ պղնձյա կարմիր մեդալը, որի վերա սաղմոսի մի տան հետ պատերազմն սկսող և վերջացնող ինքնակալաց անուններն է դրոշմած. այդ փոքրիկ հիշատակարանը պատերազմին մասնակցող բոլոր անհատները պետք է կրեին յուրյանց կրծքին իբրև անմոռաց նշան անձնանվիրության։

Ընդհանուր շրջաբերականով հայտնվեցավ բոլոր գավառակապետներին՝ նշանակել յուրյանց տեսչության ներքո եղած գավառների մեջ պատերազմին մասնակցողների անունները, որոնք ըստ քանակության թվույն մեդալ պիտի ստանան։ Միայն պատերազմումն արյուն թափելը չէր համարվում մասնակցելը. ով ինչևիցե գործում պետք է եկել պատերազմի միջոցը, վայելելու էր այդ արտոնությունը։

Մի քանի գավառակապետներ մատը կծեցին և յուրյանց գործունեության շրջանն ընդլայնեցին։ Այս խմորը շատ ջուր կվերցներ, ո՞վ ասես՝ կարող էր մասնակցած համարվիլ։ Մեկը գինվորաց պաշարը կարող էր յուր գրաստովը բերած լինել, մյուսը՝ ցորեն կաղար ջրաղացումը, երրորդը՝ գինի, արաղ ծախած կլիներ բանակումը, մի ուրիշի եզները կամ ձիանքը քրդերի ու ասպատակող թուրքերի ճանկն ընկած կլինեին պատերազմական դաշտից տուն դառնալուս և այլն և այլն. հազար ու մեկ պատճառներ դժվար չէր հնարել, և ահա ամեն ոք մասնակցեց այդ մեծ գործին և մեդալ կրելու արժանացավ։ Հարց ու խնդիր անողն ո՞վ է. իշխանության ներկայացուցիչն ինքը գավառակապետն է, յուր վկայականն է այդ առանձնաշնորհության արժանանալու իրավունք տվողը։

Մի քանի գավառակապետներ փոքրով չբավականացան, մեծ գին նշանակեցին մեդալի համար, ուստի և վերջումը հասկացան յուրյանց արած մեծ սխալմունքը, իսկ մեր հեռատես մովրովը Սաքոյի խորին քաղաքականության շնորհիվն յուր գործը բռնեց և տարավ։ Մի պոլիմպերյալը մեծ բան չի, ամեն մի նախրորդ էլ կարող է ճարել։ Սաքոն յուր բերանացի շրջաբերականը տարածեց մեր գավառի բոլոր գյուղերը, թե՝ ո՞վ մի պոլիմպերյալ կբերի, նա մեդալ կստանա։

Մեդա՞լ, փոքր բան չի, կրծքին կախելու նշան ա, ամեն գյուղացու այս բանը շատ լավ հայտնի է, թե նշանավորին ոչ ոք իրավունք չունի ծեծելու, նրանից ոչ միայն մարմնական պատիժն է բարձվում, ինքը մովրովն էլ իրավունք չունի մի մատը բարձրացնել նորա վերա։ Շատ անգամ գյուղացիք ականատես են եղել, երբ մովրովն ուզեցել է մի խաչավորի, մի ավազակ նշանավորի ապտակ խփել, բայց չի համարձակվել ձեռք բարձրացնելու, բավականացել է միայն բանտարկելով։ Ուրեմն մեր նոր մեդալն էլ, նոցա հասկացողությամբ, այդ իրավունքների տերն է։

Ամենքի սրտումն էլ հուսո կայծեր սկսան արծարծվիլ, մեդալ-ճարելը հեշտացել է, պատվո ճանապարհը հարթվել է. մի պոլիմպերյալ գըտար պարտքով՝ խարջով, որտեղից և ինչպես եղավ՝ մովրովին տվիր, անունդ գրվեց՝ պրծավ. մի երկու շաբաթից, ամենաշատը մի ամսից մեդալը լանչդ կզարդարե, և այնուհետև դու ազնվական ես, յուզբաշի[1] ես, բեգ[2] ես։

Թեպետ պատերազմի պատճառով Երևանա նահանգումը ոսկին շատացել էր, բայց գինը բարձր էր, թղթադրամն յուր հարգը փոքր-ինչ կորցրել էր։ Հիմա ոսկի ասած բանը սև աղվեսի պես հազվագյուտ և թանկագին դարձավ. ունեցողը մեկն յուր համար ետ դրեց և մյուսներից օգտիլ մտածեց. մի պոլիմպերյալը մինչև մովրովին հասնելն և անունը գրել տալը ձագեր էր հանում, մինչև տասը մանեթի էր հասնում, մանավանդ թոռներ էլ ունենում էր, երբ հանկարծ այդ նվիրական դեղին մետաղը նպատակին չէր համապատասխանում։

Շատերը մովրովի դռանն էին իմանում, որ 184... անիծյալ թվականին է շնորհաբաշխ և զորավորը։ Ճարահատյալ՝ մի-երկու մանեթ էլ նոր ավելացնելով՝ Սաքոյից առնում էին մովրովի քսակից դուրս եկած պոլիմպերյալն և կրկին նրան տանում, անունները նշանակել տալիս և աղա մովրովի քաղցր ակնարկությանն և հուսադրությանն արժանացած՝ սրտի ուրախությամբ վերադառնում էին տուն, աչքը կթած սպասելով օրվանն և ժամուն, երբ տանուտերը հրամանաթուղթն և մեդալը ձեռքին, գյուղի առաջավորների հետ կգա յուր ոտքն և յուր ձեռովը կկախի կրծքիցը։

Ոչ ոքի դժվար և ցավալի չէին թվում այն մի քանի ավելորդ մանեթները, որոնք Սաքոյի ձեռքով, իբրև թե, մտել էին մյուս պաշտոնականների ծոցը. ոչ ոք չէր էլ ցանկանում մտքովն անցկացնել, թե ազնիվ ու բարեկամասեր Սաքոն օգուտ քաղած կլինի այդ դեպքից։

Այո, լինում էին երբեմն փոքր տրտունջ հայտնողներ, թե Սաքոն չպետք է դավաճաներ հավատարիմ և սրտակից բարեկամությանն և այնքան թանկ չպետք է առներ պոլիմպերյալը փոխելու համար, բայց դրանք էլ վերջը հիշելով Սաքոյի ջերմեռանդ աշխատությունները և սրտառուչ եղբայրական միջնորդությունը, նրա մոր կաթի նման հալալ էին անում այն չնչին կոպեկները։

Այս երջանիկներից մի հանդուգն միայն ուզեցավ ընդհանուրի կարգից բացառություն լինել։ Դա աշտարակցի Շահազիզյան-Կամսարականների սերնդից մեկն էր, որ յուր ծագման վերա մեծ համարում ունենալով՝ այլապես չէր ուզում կոչվիլ, եթե ոչ յուր անվանը մոտ յուր հոր անունը ավելացնելուց հետո՝ Շահազիզյան-Կամսարական Աշտարակեցի բառերն էլ հետը կցելով։ Մենք նորա երկար անվանակոչությունը մի փոքր

[1] Հարյուրապետ։ [2] Ազնվական։

կարճացնենք և վերակոչենք նրան միայն Կամսարական-Աշտարակեցի։

Հարյուր անգամ Սաքոն իբրև մոտիկ բարեկամի հանդիպեց մեր Կամսարական-Աշտարակեցուն, որ յուր էժանագին պոլիմպերյալովը շներկայանա մովրովին. բարեկամությունից խեղդվելով՝ նա խոստացավ մինչև անգամ ուրիշներից մի-երկու շահի էլ պակաս տալ 184... թվականի պոլիմպերյալը, տասն անգամ հասկացրեց Սաքոն, որ մինչև մովրովի ոտ ու ձեռին բաժին չտա, անկարելի է մեդալի հույս ունենալը՝ անհնար եղավ։ Կամսարական-Աշտարակեցին, ինչպես ասած է, սատանի ձին էր հեծել, իր ասածի էր. երևի յուր վերա մեծ վստահություն ուներ, առանց ներկայացնելու, համարձակ ներս մտավ մովրովի մոտ ու գլուխ տվեց։

— Բարև՛, Կամսարական-Աշտարակեցի,— անհնչան ժպիտով խոսեցավ մովրովը,— ի՞նչ զուլլուզ[1]։

— Քո ողջությունն, աղա՛, մեդալի համար եմ եկել, իմ անունն էլ գրի, ես ումնի՞ց եմ պակաս։

Նա դրեց սեղանի վերա յուր պոլիմպերյալը։

— Ի՞նչ եք մարդի ձանձրություն տալիս,— խոժոռվեցավ մովրովը,— մի՞թե մինչև հիմա չիմացաք, որ 184... թվականինն է հարկավոր։

— Աղա ջա՛ն, ինձ ուրիշի ոտքի մի տանիլ, քո Կամսարական-Աշտարակեցին եմ, անց կացրո՛ւ. չկար, չճարեցի, թե չէ ինձ համար մին էր։

— Շատ գլուխ մի՛ ցավացնիլ, չճարեցիր ու մեդալ էլ մի՛ քաշ անիլ, որտեղից եկել ես, այնտեղ գնա՛, ես քո զրուցարկները չեմ։

Կամսարականիս պոլիմպերյալը ֆոֆոաց[2] դռան տակը։

— Վեր կա՛լ դուրս կորի՛, էլ իմ երեսը չհամարձակիս գալ. մեծախոսությունը տեսե՛ք, քո Կամսարակա՛ն-Աշտարակեցի՛ն եմ, շնորհք է համարում ինձ, եթե ես արժանացրել եմ յուր տանը մի անգամ իջնել. ա՛յ մեծ բան, ինձ տուն կպակասե՛ր։

Կամսարական-Աշտարակեցիս յուր լուսո նման փայլուն գլուխը քորելով, վերցրեց շեմքի մոտ ընկած պոլիմպերյալն ու փնթփնթալով և մտքումն սպառնալիքներ տալով՝ դուրս գնաց։

Էլ տոհմական ազնվականս ներս չեկավ. Սաքոն փոխեց նորա պոլիմպերյալը, բայց այժմ ոչ երկու շահի պակասով, ընդհակառակն՝ մի աբասի ավելով, ըստ որում, ինչպես ինքը երդմամբ հավատացնում էր, յուր վերջինն ուրիշի էր տվել, իսկ այս մեկը նրա պես ազնիվ բարեկամի սիրուն յասավուլիցը ճարեց ավելի թանկ գնով, այսինքն Կամսարականին յուր գինետանը թողեց, դուրս գնաց, մի գրպանից հանեց՝ մյուս գրպանի մեջ դրեց և բերեց։

1 Ի՞նչ խնդիր ունիս։ 2 Թռավ։

— Վնաս չունի՛,— գլուխը շարժում էր Կամսարական-Աշտարակեցին, երկու մանեթ էլ մյուս ծառայողների համար ցնծալով,— դեռ ես մեդալն ստանամ պրծնիմ, հետո դրա ղուլլուղն իմ աչքի՛ վրա. թող ը-պարծենա, թե ինքը մովրով ա, ռահաթն իրան ոչինչ չի կարող անել. մըրջիմն էլ պստիկ ա, համա, ասում են՝ ասլանի անկաչն ա մտնում, էնքան գլխի վրա պտիտ-պտիտ անել տալիս խեղճ գազանին, որ շշմացնում, վեր ա քցում։ Ջատիկ շաբաթ օրը թե անկաչը լուն կծի, թող իմանա որ ես եմ։

— Ոչի՛նչ, Կամսարակա՛ն ջան,— ճանապարհ դրեց նրան Սաքոն,— մեծավոր ա՝ կբարկանա էլ, կսիրի էլ, քեֆի վատ վախտն ես հանդիպել. ես քեզ առաջուց ասեցի, որ մի քանի շահու համար էն մարդի սիրտը չցավացնես, բայց էլ նոր որտե՞ղ, ինչ էլավ՝ էլավ, գնա քո գործին. ես հենց հիմի պոլիմպրյալդ կտանեմ իրան կտամ ու անումդ գրել կտամ։

Սաքոն ճանապարհ դրեց Կամսարական-Աշտարակեցուն ու երկու պոլիմպերյալ վերցրեց մովրովի մոտ տարավ։

— Էս Կամսարականի պոլիմպրյալն, աղա ջա՛ն, մի քանի շահու համար էնպես մարդի սիրտը չպիտի կոտրեիր, նա քեզ շատ ա պետք եկել։

— Թող կորչի՛ մեծախոսը, հենց իմանաս հորեղբորս որդին լիներ, այնպես էր վստահ հետս վարվում։

— Էդ թողանք, անց կացած բանին էլ օգուտ չկա, թե որ ես նրա սիրտը չառնեի՝ նրանից մեզ վնաս կգար,— խոհական նայվածքով վճռեց Սաքոն,— նրա անունը գրի՛։

— Ասենք՝ ոչինչ չէր գալ, բայց քո խաթեր համար։

— Էս մինն էլ խեչանենց խեչանի մեդալի գինը,— ժպտաց Սաքոն։

— Հա՛, վերջապես ընկա՞վ, հապա ասում էին, որ նա փառասեր մարդ չի՞։

— Դու գրի՛, աղա ջան, դու նշանակի՛, դեռ դրա համար մենք հետո կտեսնենք։

— Ինքն է եկե՞լ։

— Ո՛չ, ես ինձանից եմ տալիս, բայց դու էլ շատ մի՛ քրքրիլ, միայն մի գիր տուր Աշտարակու տանուտերի վրա, սաքի թե, դու ինքդ լսել էիր խեչանենց խեչանի կռվի վախտին արած լավությունները, քեզնուքեզն արժան տեսար նրա համար մեդալ գրել։ Էդ գիրն ա ինձ էս սհաթս ամենից հարկավորը, ես պտի իրիկունս Աշտարակ ըլիմ։

Սաքոն առավ այս վկայականը, ծալեց, գրպանը դրեց և ձին նստավ։

Այս գիշեր նա Աշտարակումն էր։

ԻԵ

ԱՐԵՎԸ ՎԱՏ ՏԵՂՆ ԷՐ ՄԵՐ ՄՏԻ

Աշունքն անց կացավ, ժողովուրդն յուր աշնանային հարկը վճարելումն այնքան չծանրացավ. ամեն ոք յուր բերքի մի մասը ծախեց, օրինավոր հարկը վճարեց և յուր տան պակաս-պռատը կարգի բերեց. յասավուլներըն ու ղազախներն այս անգամ շատ չնեղացան մարդ ծեծելով, եղած տեղից ամեն մարդ օգուտ կստանար, հետին աղքատն էլ մի-երկու բուռը սերմն է գետին ձգում և Արարատյան աշխարհի բարեբեր ու առատաբաշխ հողի շնորհիվ յուր տարեկան ապրուստը վերցնում։ Դժվարությունը գարունն է, որ ամեն պաշար վերջանալու վերա է լինում, ժողովուրդը դատարկաձեռն է, երկրագործության անհրաժեշտ ծախքերի հետ խառնըվում է գարնան հարկն և այնքան ճնշումների պատճառ դառնում։

Այս աշունքն ամենքը լի էին, պատերազմը վերջացել էր, հասարակ գյուղացին կոռ ու բեգյառից թեթևացել էր, տարին առատ էր, ամենի ամբարն, ամենի կարասն ու քունջ ու պուճախը լիքն էր. այդ պատճառով շատ հարսանիքներ էին լինում։ Մինչև խելոքը միտք կաներ, հանկարծ լսում էին, որ գիժը տղին պսակել էր։

Այսպես էլ պատահեցավ մեր Խեչանի հետ։

Նա միտք ուներ ամենքից շուտ իր աղջկան ամուսնացնել, սակայն այսօր վաղը ձգելով՝ ձմեռվան ութօրեքի արազուլին[1] հասցրեց։

Մի կողմից, այնպես կարծես, թե այդ մեր Սաքոյի գործին գալիս էր. հանգամանքները, կարծես, նրան օգնում էին, յուր նպատակին հասնելու համար միջոցներն երկարանում էին, բայց իրականապես այդպես չէր դուրս գալիս, հենց իմանաս Սաքոյի մաստակն, ինչպես ասած է, ցեխն էր ընկել, չէր հաջողում։

Եթե այդ դժբախտ դեպքը մի ուրիշին պատահած լիներ, ամեն մարդ կարող էր այնպիսի անձի դրությունը հասկանալ, բայց Սաքոյի վերա շատ դժվար էր նկատելը. շատ խորամանկ աչք պետք է լիներ, որ կարողանար Սաքոյի անախորժ և տխուր հայացքից բան գուշակել։ Բայց և այնպես մի բան բոլորի աչքից չէր փախչում, որ ամբողջ աշունքն ու ձմեռը Սաքոյի մի ոտն Աշտարակ էր՝ մյուսն յուր միկիտանխանայումը։

— Էս ի՞նչ ա պատահել քեզ, այ Սաքո՛, էս տարի Աշտարակ շուտշուտ ես գնում, ջրի ճամփա ես շինել,— հարցնում էին շատերն ու բավականանում նրա տված կարճ պատասխանովը.

— Ոչինչ, տնային հանգամանքներս են։

1 Եխստ ցուրտ։

Բայց այս տնային հանգամանքները շատ բազմաճյուղ էին, դրանք շատ գիշերներ մեր քարասիրտ Սաքոյին լացացրել են։ Այնպիսի գիշերներ են եղել այս աշնանը, որ մեր Սաքոն բաց աչքով լուսացրել է, երբեմն մի տեղ ձեռքը ծնոտին ժամերով նստելով և երբեմն աշխատանքի մեջ։

— Երկուսի՛ց մեկը, կամ ես Սաքոն չեմ, կամ պետք ա ասածս անեմ. եթե իմանամ, որ թուրն երեսիս պտի խաղացնեն, ես ետ դառնողը չեմ. հանաք մասխարություն չի, դեռ ընչանք օրս իմ օգտիցն ոչ ով չի եկել, հիմի մի հասարակ հալիվոր պտի ինձ հաղթի՞, տեսնե՛նք։ Էս ես, էս դու, ա՛յ Խեչանենց Խեչան, ես մտքումս դրել եմ քո մլքերին տեր դառնամ, դու ուզում ես Ովիկենց Սմբատին թողալ. ո՛վ տանի՝ պարծենա։

— Հը՛, սրան տե՛ս, մեդալն էլ չէիր ուզում, ո՛նց կամավորվեցիր. ախար ընչի՞ չպտի համաձայնեիր, ուրիշներն իրար գլուխ են պատռում, դու հանգիստ հարկևոր քո տանդ նստած՝ իրան ոտովը դուռդ եկավ. համա շատ ետ եկածն էր անիծա՛ծը, հոգիս հանեց՝ էնքան չարչարեց։

— Ոչի՛նչ, հալալ ա, Սաքոյի չարչարանքը նրան էժան չի նստիլ, մի երկու-երեք օր ջիբիցս պոլիմպրյալ բաց թողալով, համ երկուսը տեղակը ծոցս դրի, համ էլ Խեչանի աղջկա հետ նրա մուլք ու դովլաթն էլ վրեն կառնենք. ասենք մի քիչ սիրուն չի, բայց ո՛վ_ա հարցնում՝ կուտվի, հարբստությունը գեշին կսիրունացնի, լալին լեզու կտա, չոլախին ջուխտ ոտք, քոռին էլ երկու սուր աչքեր։ Ասենք մի քիչ դժար ա ձեռք ընկնում, համա մի բան որ հեշտ ճարվի,էն բանի ղադրն[1] ո՛վ կիմանա. ոսկին որ հեշտ աշխատելու ըլներ, էսքան նրա համար ո՛վ գլուխ կպատռեր, ո՛վ էսպես կաստվածացներ ու կսիրեր՝ ոնց որ մեր մովրովն ու ես։

Այս հուսադրություններով Սաքոն ոգի առած՝ տանում էր բոլոր արգելքները. նա այն հասարակ մահկանացուներից չէր, որ կիսաճանապարհին վհատեր։

Առաջին անգամը Սաքոն չէր կարծում, թե Խեչանն այն աստիճանի կդիմադրեր։ Ինչպես մեզ հայտնի է, Սաքոն մեդալի ներկայացրեց Խեչանին. ոչ թե մի դատարկ խոսք էր բավականացել այդ ներկայացման համար, այլ զուտ ոսկի էր տվել, 184.... թվի սիրեկան պոլիմպերյա՛լ։ Խուփը գլորվել էր, կճուճը գտել, մովրովն ու Սաքոն լավ էին միմյանց հանդիպել. Սաքոն շատ լավ գիտեր, որ յուր աղեն իր հարազատ հորիցն էլ կաշառք կվերցնի, իր որդուն էլ աչք չի պահիլ, կմեռնի ու առանց փողի ոչինչ չի անիլ, էդ պատճառով էլ մի պոլիմպերյալի գլխիցը վճռեց անց կենալ։ Դրա համար Սաքոն չէր ցավում, նա փոխարենը Խեչանից ստանալու հույս էլ չուներ. նա կամեցավ, որ էդ մի պոլիմպերյալովը

1 Արժեք։

սրտի ցանկությունին հասնի։ Բայց հենց այդ բանումն իր խոփը քարին առավ։ Երկու օր ինքն ու տանուտերը մեծ աշխատելով՝ հազիվ կարողացան կոտրել էն անկոտրում Խեչանին, որ համաձայնի մեդալ ստանալ։

Ասենք՝ այսօր նա մեդալը չառավ ու կրծքից չկախեց. դեռ ներկայացումն էր գնում, դեռ հայտնի չէր, թե ե՞րբ պիտի բաժանվեր, բայց հարկավոր էր, որ Խեչանը մի դատարկ շնորհակալություն հայտներ. մի խոսքն ի՞նչ է, որ նա կողքը գետինը չէր տալիս ու չէր ասում։

— Չէ՛, չէ՛ ու չէ՛, ձեզ ո՞վ խնդրեց ինձ համար մեդալ գրել տայիք. ես որ ուզենայի, մի պոլիմպրյալ կգտնեի դրա համար։

Հազար անգամ կաց ու ասա՛, թե մովրովը քաղցր աչք է ունեցել քեզ վերա, նա ինքն առանց խնդրանաց գրել է,— Խեչանը հավատալ անգամ չէր ուզում, մանավանդ երբ իմացավ, թե Սաքոն է միջնորդել, սաստիկ զայրացավ, իսկ երբ միամիտ տանուտերն յուր կողմից բերանից դուրս թողեց, թե Սաքոն գրպանից պոլիմպերյալ է մսխել, բոլորովին կատաղեց. ներս մտավ Խեչանը տուն, հանեց երկու պոլիմպերյալ և քաղաքավարությունը մոռացած՝ ձգեց Սաքոյի առաջը։

— Ես ոչովի ողորմությունին կարոտ չեմ. գլխներովդ դիպչի ձեր արծաթը։

Վերջապես Խեչանն այլապես չկամեցավ ընդունել մեդալի առաջարկությունը, եթե ոչ երկու պոլիմպերյալ մեկի փոխարեն վճարելուց հետո։

Մեզ այնպես է թվում- թե այդ Սաքոյի սրտի ուզած բանն էր. բայց ոչ, շատ տհաճությամբ վերցրեց և գրպանը դրեց նա։

Արևը վատ տեղն էր մեր մտել. էն Սաքոն, որի առաջին ոչինչ փակ դուռը չկար, որ երբեք խոսքի տակ չէր մնացել, հիմի ստիպված էր լեզուն բունը դնել և Խեչանի պես մարդուն գոնե առժամանակ տեղիք տալ։

ԻԶ

ԱՆՀԱՋՈՂ ԽՆԱՄԱԽՈՍ

— Ա՛յ Խեչան,— ասաց այս անցքից մի քանի օր հետո տանուտերը,— քեզ մի բան պտի ասեմ, համա բարկանաս ոչ։

— Ի՞նչ կա բարկանալու, ես գիտեմ, որ կամ աղներդ կըլնի պակաս, կամ մաղներդ, էլ ի՞նչ անօգուտ տեղ փող տալու բան կա, որ ձեր քխին շահ չի բերիլ, իմ շլինքը կըլնեք քցում, ասա՛ տեսնեմ։

— Չէ՛, Խեչա՛ն, անկաց դի՛ր, դու ե՞րբ պտի աղչկանդ պսակես։

— Ի՞նչ կա, էս մի քանի օրս միտք ունիմ, չըլնի՞ թե պատրաստություն ես ուզում տեսնիլ, տանուտե՛ր, ախար խաչախպեր ես, Աղաջանենց հետ դուք ախար խաչքավոր[1] եք. գիտես, Սիմո՛ն, շատ թանթանեք[2] մի սարքիլ, քանի կարաս՝ պակաս բռնի՛։

— Է՛հ, էդպես բաներն ամոթ ա, Խեչա՛ն, ի՞նչ ծախս պտի անենք. պապենական ինչ որ տեսել ենք, էլի էն ճամփովը պտի գնանք. էդ ոչինչ, ես ուրիշ բան էի ասում։

— Ասա՝ տեսնեմ։

— Չի ըլնի՞լ, Խեչա՛ն, որ միտքդ փոխես։ Ընչանք օրս, հո գիտես, 100 մարդ քո աղջիկն ուզել ա, ես միջնորդություն չեմ արել։ Հախ աստծու Սմբատն օրինավոր տղա ա, համա էսօր, երբ մի ավելի արժանավորն ա լիս ընկել, ես իմ աղջկա բախտավորությունի պես քո մինուճարին էլ բարի կկամենայի։ Արի՛, Խեչան, ինձ ականջ դի՛ր, խոսքդ ետ տո՛ւր, աղջկանդ ձեռաց էս մի քանի օրս պսակենք մեր Սաքոյի վրա։

— Ի՞նչ Սաքո։

— Սաքի չիմացա՞ր, մեր միկիտան Սաքոյի։

— Ի՞նչ։

— Նրա թրի երկու դիհն էլ կտրում ա, էսօր մեր մհալումը նրա պես հաջողակ տղա չկա՝ խոսքով, անումով, փողով ու երեսատեղով. դու գիտես, որ գզրից բռնած ընչանք մովրովը նրա ձեռի տակին ենք, մովրովի հետ ոնց՞որ ես ու դուն. ախպոր պես հետն ախպեր ա. էն թավուր տըղեն, որ քո փեսեն ըլի, էսօր դու մհալումն ամենի վրա երկար լեզու կունենաս։ Ես իմ աստվա՛ծը, արի դու երեխիդ բախտին քացով մի՛ տալ։ Աստված իր հորը բաշխի, Սմբատին էլ ես փնովում[3] չեմ, համա նրագի առաջին չախմախի չեն տալ. աստված քեզ բաշխի՝ քո աղջկանիցը սիրունն ունիս տանդ, քվերդ աղջիկն էլ տուր Սմբատին, էլի քո որդին կըլնի։ Արի՛, Խեչա՛ն, գոգիդ քարը վեր ածա[4], ինձ լսի՛, եկող շաբաթ երկու հարսանիքն էլ մի օր անենք, վերջացնենք։ Հը՛, ի՞նչ ես սուս կացել, տեսնում եմ, որ միտքդ տարտղան[5] ա, կամքի գալու պես ես, ձեռդ տո՛ւր, առ էս մատնիքը, աստված շնհավոր անի՛, ասենք ու ծերին կապ տանք, հազիր ինքը Սաքոն էլ գեղումս ա. իրիկունս էլ իրան կբերեմ, ձեռքդ կպաշի։

Խեչանը լուռ էր։

— Մտիցս ընկավ,— շարունակեց տանուտերը,— ես Սաքոյի խոսքովը չեմ քեզ մոտ եկել խնամախոս. երեկ ես Սև ջրի գլխին էի, ինքը մովրովը հատուկ ինձ կանչեց, պատվիրեց, քեզ էլ շատ-շատ բարով արեց, ասում էր՝ ես հույս ունիմ, որ Խեչանն իմ խոսքիցը դուրս չի գալ,— մով-

---

1 Խաչքավոր կնշանակի երկուստեք կնքահայրեր, որոնք փոխադարձաբար միմյանց կնքահայր են։ 2 Մեծ հանդես։ 3 Գարսավել։ 4 Համոզվիր։ 5 Երկմիտ ես։

ռովն ինքն էլ ուզում ա խաչախպեր կաննի։ Սրանից ավելի, խեչա՛ն, էլ ի՞նչ բախտ ես ուզում. ասում ա՝ յա զառն գյարամ՝ յա զառն (կամ ոսկի պետք է ունենաս, կամ ույժ). դու դրանով երկուսն էլ ունենում ես. ասածու տվածիցը՝ մի կտոր հալալ հաց ունիս՝ էդ քո զառը, մովրովն էլ քեզ զառ՝ քեզ թե ու թիկունք։

Խեչանը պատասխան չտվեց։

— Հա՛, ասում ա՝ անաստված տեղը կա՞ց, անարխայ[1] տեղը մի՛ կենալ. չըլնի՞ թե դու քո փողովը ղառահ[2] ըլնիս, միտք անես, թե քեզ ոչով բան չի կարող անել. մի՞տդ ա Ջանգիբասարու մհալի մովրովի օյինը[3], որ բերեց իր մհալի հարուստներից մնի գլուխը. անումն էլ մոռացել եմ, էն որ մի լավ քյահլան[4] Արաբստանու ձի ուներ. մովրովն ուզեց էդ ձին՝ նա չտվեց. վերջն ի՞նչ եկավ գլուխը։ Աղիս արդա անեմ, որ դու ես[5], մի օր էլ դրա տունը կտրեցին, ինչ ուներ՝ չուներ, սրբեցին տարան ու քյահլան ձիու յալ[6] ու պոչն[7] էլ տակիցը խուզեցին, շինեցին նոր ցրկնած քուռակ։ Գնալու վախտն էլ իրան պարզ աշկյարա ասեցին, թե էս մովրովի ինադն[8] ա, որ քեզանից հանում ենք. թե որ չես սվատում, կուզես էգուց գնա մովրովի հավաքած ձիանոց մազերի միջին քո քյահլանի մազերը ջոկի՛։

Ախար հո մի՞տդ ա, խեչա՛ն, մի տարի ամեն մհալումն էլ չոլերումն արածող ձիանոց յալ ու պոչը խուզում էին ու երկար ժամանակ չիմացվեցավ, թե էդ ի՞նչ ֆանդ[9] էր. մին էլ էն լսեցինք, որ մովրովներն ամեն գեղերում տանուտերներին թաքուն հրաման էին տվել, որ ինչ կուզեն՝ անեն, ձիու մազ հավաքեն։ Է՛, ո՞վ էր գժվել իր ձին խուզի, մովրովին տա. երեխեն գիտա, որ ձիու շենք ու շնորհքը յալ ու պոչն ա, խուզեցիր՝ նրա գինը կես փող. համա էդ տարին երեք-չորս մհալի ձիանքը բոլորը պոչիկացան։ Վերջը հո իմացվեցավ, թե ինչի համար էր։ Դու մի՛ ասիլ, հեքիմների պատմելով ձիու մազով շինած դոշակը[10] ջանի[11] համար սաղլամություն ա[12]. մեր նաչալնիկն էս բանն իմանում ա ու գրում մովրովներին. թե կուզեք ասղի ծակիցը հանեցե՛ք, ինձ համար ձիու մազ ճարեցե՛ք։ Խեղճ մովրովներն էլ ի՞նչ անեն, ձեռ ու ոտ են ընկնում, ումնից ուզում են՝ մխուր չեն գալիս[13], իրանք էլ էս խելքն են բանացնում, թաքուն մարդիկ են քցում, խուզիլ տալիս։ Ի՞նչ պտի անեիր, ախպե՛ր, տանուտերին էիր գանգատ անում, ասում էր՝ գնացեք մովրովին ասեցե՛ք, մովրովն էլ վազի սաղն էր քոքում[14], գողդ գտի՛, դիվանն անեմ, ըտուր միտքը ամեն մարդ հասկանում ա,— սաքի թե ասում ա՝ դե՛հ, թեզով, քանի շաղ տա-

[1] Անօգնական։ [2] Վստահ։ [3] Խաղ, հնարք։ [4] Նժույգ։ [5] Հայտնի լինի հարգությանդ։ [6] Բաշ։ [7] Ապի։ [8] Վրեժ։ [9] Հնարք։ [10] Մահիճ։ [11] Անձի։ [12] Առողջություն։ [13] Ժխտել, բացասել։ [14] Նախկին նվազարանն էր հնչեցնում, այսինքն՝ սովորական խոսքերն են ասում։

մարդ թեմել չեմ[1], գլուխդ առ կորի. խալխի ճարն էլ կտրում էր՝ սուս էին կենում։

— Իմ երկու ձին էլ խուզեցին,— վերջապես կամաց ասաց խեչանը։

— Օղորմի՛ քո հորը, ո՞ւմ պտի բան ասեիր, ումնի՞ց գանգատ անեիր. թուրքավար ասած ա, թե գեղը գժվելուն՝ մոլլին ա հարցնում, մոլլեն որ գժվի՝ ո՞ւմ պտի հարցնենք. հիմի մերն ա, մովրովը որ ընենց էր ասում, մենք ի՞նչ անեինք, էլ ո՞ւմ դուռը ջարդեինք։ Ասենք, մովրովներն իրանք էլ մեղավոր չէին. չգիտեմ՝ ո՞ր մհալի մովրովը, քիչ մնաց, էդ դարդակ բանի համար տեղիցը սլքվում էր. նաչալնիկը նրա վրա երեք փութ մազ ա քցած էլել, խեղճն երկու փթից ավել չի կարողացել ճարել. դրա վրա նեղացել ա. սաստիկ բարկացել. տանիցը դուրս արել ու քամակիցն էլ մարդ ա ղրկել, որ խնդիր տա, հեռանա։ Ի՞նչ մունաթ՝ չիք[2], ի՞նչ աղաչանքներ, վերջը-վերջը՝ դրան մի լավ կլպում պլոկում ա, սաղ տարեն աշխատածը ձեռիցն առնում, հուփ-հուրիան[3], դառը դարդակ ետ ղրկում իր մհալն ու բաց թողնում ժողովրդի ջանին։ Հիմի լսեցի՞ր, խեչա՛ն, որ բզի գլխին բռնցքով տալ չի ըլնիլ. երբ որ խոսքը վերևիցն ա, դու էլ պտի լսես։

— Պրծա՞ր։

— Շատ-շատ օրինակներ կարող եմ բերել, որ մովրովին չլսողը վերջը փոշիմանել ա[4], համա խոսքս երկարում ա։ Մի՞տդ ա մեկել տարին Փարբու տանուտերի բանը։ Երկու-երեք տարի էր՝ տանուտեր էր, իր տեղը ծանր նստած՝ իր պաշտոնին էր։ Շատ լա՛վ, ասենք թե ինքը տանուտեր նստելուս մովրովին փող տվել ա, համա էսքանը միտք չարեց, թե նոր մովրով ա փոխվել, ինձանից խեր չի տեսել, ըսկի որ չըլնի՝ նոր տարի ա գալիս, զատիկ, ջրօրհնեք ա գալիս, մի հարյուր մանեթ փող կապեմ, տանեմ իրան տամ՝ ձենը կտրի։ Իրանից ի՞նչ պտի գնար. ասում ա՝ ինչ որ գնում ա, բաղիցն ա գնում, բաղմանչուցն ի՞նչ ա գնում. շեն կենա Փարբի գեղը, մի քանի կոռ ավելի հաշիվ կքցեր՝ համ էն փողը դուս կգար, համ էլ իր ոտի քրեհ կմնար։ Չէ, մեր աղա խելոք տանուտերը ծանրագոգոթ իր տեղը նստեց. ինչքան մենք իրան քարոզեցինք՝ իլլաճ[5] չէլավ, մովրովն էլ իր մարդկանց բերանովը հասկացրեց՝ անկաշի քամակը քցեց։ Մին էլ, ջանըմ սան[6], մովրո՛վ, արի՛ Փարբի նստի ու տանուտեր փոխելու հրամանը տո՛ւր։ Նոր ոտին ձեռին ընկի՛, նոր պոչին գլխին արա՛, էլ ի՞նչ կօգտես, փող ունիս՝ միջտեղ արի՛։ Է՛, դու ինձ ասա՛, խեչա՛ն, էն նեղ ժամանակը որտեղի՞ց պտի փող ճարեր, առաջվա իրավունքը ձեռին

[1] Քանի չեմ պատժել։ [2] Միջնորդներ։ [3] Վերջին կտոր հացից ղրկած, մերկացրած։ [4] Ջղջացել։ [5] Ճար։ [6] Կեցցե՛ս։

պտի ունենար, որ քարի տակիցը հաներ։ Ընչանք մեր տանուտերը փող գտավ, մովրովն իր կողմից ուրիշ տանուտերացուք մեջտեղ հանեց։

— Վե՞ջը։

— Վերջն էն, որ գեղն երեք կտոր արեց. մի մասը հնին էր ուզում, մնացած երկուսն էլ մեկելներին։ Ղոչաղ[1] մովրովն էլ ամեն մեկիցն 300-ական մանեթ առավ, երեքին էլ խոսք տվեց. մին էլ էն լսեցինք, որ Փարրու պես մի բուռ գեղն երեք տանուտեր ունի։ Աշխարհքը մնաց զարմացած, թե էս ինչպե՞ս կարելի ա, համա երկու շաբթից հետո՝ ամենքն էլ գլխի ընկան։ Դու մի՛ ասիլ, մովրովն ընենց ա սարքում, որ էդ երեք թայֆեն էլ գալիս խնդիր են տալիս, թե գեղը ձեռաց գնում ա, տանուտերների մեջը համաձայնություն չի ընում, աստծու սերը, մովրովը խնամք անի իրանց, էլ ետ երեք տանուտերից մնին թողա։ Կրկին լսեցինք, որ էն երեք խեղճ հներին էլ հանել ա, մի ուրիշի դրել ու 400 մանեթ էլ էս նորիցն առել։ Բանն ընենց դուս եկավ, որ էս նոր ընտրվածն էլ անհասկացողի մինն ա ըլնում, երեք-չորս ամսից հետո դրան էլ գեղցոնց խնդրքովը դուս ա քցում ու էլի Հառաչվան մեր խելոքին դնում ու 300 մանեթ էլ նոր առնում։ Հիմի լսեցի՞ր, Խեչա՛ն, որ մենծի ասածը պտի կատարենք, թե չէ գլխներս կցավի. դու էլ ինձ լսի՛ր, մովրովի աչքը վրեդ մի՛ ծռիլ, Սաքոյին փեսա շինի, աստված էլածն օրհնի։

— Էլ բան մնա՞ց։

— Էլ ոչի՛նչ։

— Դե հիմի դու ինձ լսի՛ր, վեր կաց գնա՛ քո Սաքոյին ասա՝ համով հարկևորով[2] որտեղից եկել ա՝ դենը գնա, օխտը քոռ աղչիկ ունենամ՝ մինն իրան չեմ տալ։ Դրա համա՞ր էր մեդալի թուղթն ինձ համար բերել. հենց իմացավ, թե երկու ոսկին որ իրան տվի, էն ա իր սրտին էլ սին էլավ. երբ որ ես մեդալ քաշ անեմ, թող էն օրն էլ ինքը պարծենա, թե ինձ ողորմություն արեց, ինձ համար մեդալ բերել տվեց. ես էն ոսկիքը գլխիցս ուռդ անելու համար իրան սեցրի[3], հիմի հասկացա՞ր, տանուտեր. Սիմո՛ն։

— Հասկացա՛, համա լավ չես անում, Խեչա՛ն, մեղքը քո շլինքը։

— Հիմի ուրիշ բան լսի՛ր. էս ա՝ ութօրեքը վերջանում ա, հինգ-վեց օրից խաչախպեր ես, Սաքոյին բան չասես. մի իրիկուն հարսանիքը կընստացնենք, մեկել օրն ամենի հաչոցն էլ իմ տանիցը իվերանա. հիմի բարով եկա՛ր։

— Թաք ըսենց ըլի, խեղճ ա էն աղչիկը, ծակ բերանը նրա վրա խոսաց։

1 Քաչ։ 2 Հարգանք։ 3 Գլխովը տվի։

— Ճամփի կիսիցը ետ դառնալը նամարդություն ա, աչի՛նչ, ուրիշ հնարք գործ կդնենք, ատամերն հույս ա տալիս,— վճռեց Սաքոն տանուտերից Խեչանի բացատրությունը լսելուց հետո և ձին հեծավ ու դեպի Սև ջրի գլուխը։

ԻԷ

ՑԱՏՄՈՐ ՈՐԴԻՆ

Մի քանի օր Սաքոն մտածեց հանգիստ տալ յուր երեխայի և տատանյալ մտքին. տանուտերը խաբել էր, որ Խեչանի ասելով նա էլ էս տարի իր աղջկանը պսակելու չի, ուրեմն շտապելու կարիք չկար։

Այս ապահով դրության մեջ նա մի շաբաթի չափ, համարյա՛, մոռացավ Աշտարակը, Խեչանին, յուր հարստությունը և այլն։

Մի երեկո, մովրովի մոտ եղած ժամանակը, հանկարծ խոսքը կրկին Խեչանի վրա եկավ, մովրովը հիշեց Սաքոյի խոստմունքը, զարմացավ նրա թույլ շարժվելու վերա, նախատեց, որ Խեչանին թակարդ ձգելու տրված խոսքից հետո՝ ահա երկու ամիս է անցել, մեդալի էլ ներկայացրեց, բայց, այնուամենայնիվ, ոչինչ օգուտ գեռ չի դուրս եկել։

— Շատին համբերել ես՝ քչին էլ համբերի, գլխիդ մատա՛ղ, Սաքոդ էն ջանավարը[1] չի, որ բան մոռանա, կամ որսը ձեռքիցը բաց թողա. էնպես գիտեցիր, որ Խեչանը ճանգերիդ միջին հուլի տված ունիս։

Այսպիսի մի քանի խոսքերով Սաքոն ցանեց մովրովին ու շտապեց դուրս գալ։ Մի ահագին գավառի կառավարիչը չկարողացավ հասկանալ, որ իր սիրելին իրան խաբում, արածացնում է։

Կես ժամ չէր անցել, որ Սաքոն սրտաբորբ, մեռելի գույն առած, աչքերն արենկալած, շփոթության մեջ՝ կրկին ընկավ մովրովի մոտ։

— Աղա ջա՛ն, գլխիդ մատա՛ղ, օգնի՛։

— Ի՞նչ կա։

— Ես կես սհաթ առաջ քարոզում էի, որ համբերես, բայց բանն ուրիշ տեսակ ա էլել, թե էս երկու օրը Խեչանին հազի ճուտի պես մեր ձեռումը կարացինք բռնել՝ շատ լա՛վ, թե չէ՝ ղշի պես դուրս կթռչի ու մեր աշխատանքը ջուրը կերթա։

— Ի՞նչ ես ասում, ո՞ւմ ձեռիցն ա դուրս թռչելու, ի՞մ։

— Հա՛, գլխիդ մատա՛ղ, հա՛, քո՝ մի սաղ մհալի տիրոնջ ձեռից։

1 Գաղտն։

— Ինչպե՞ս։

— Երկար հարցմունքներ մի՛ անիլ, որ ասում եմ՝ դու էլ ավատա, իմացի՛ր, որ Սաքոն մի տականի[1] չի. դու էս սհաթս մի բարովագիր գրի՝ էջմիածին՝ մեր մհալի գործակալ վարդապետին, խնդրի՛, որ ինչ կուզի անի, միայն թե աշտարակցի խեչանենց խեչանի աղջկա պսակը քանդի. քո կողմից մի հրաման էլ Աշտարակու տանուտերին գրի՛, որ բան ա՝ եթե վարդապետը քո խնդիրը չկատարեց, յա թե որ տերտերը չուզենա գործակալի հրամանին լսելու, տանուտերն եկեղեցու դուռը փակի ու լը-թողա պսակելու։

— Չեմ հասկանում, Սաքո՛, ի՞նչ ես ասում։

— Վարդապետին գրի, որ դու լսել ես, թե էս գործի մեջն արնի բան կա, մարդասպանությունի նշաններ են երևացել ու դու միտք ունիս՝ լավ քննել իմանալ, հետո գործին ձեռը տալ։

— Ի՞նչ ես ասում, նկատում եմ, որ դու խելքիդ չես։

— Գրի՛, որ էս բաներն իր մեջ թաքուն խոստովանքի պես պահի ու իր կողմանե հրամանի մեջը գրի տերտերին, թե ինքը լսել ա, որ խեչանի աղջկա պսակի մեջ չհասություն կա՝ դրա համար ա արգելում։

— Պարզ խոսի՛ր, ա՛յ տղա, Սաքո՛։

— Գրի՛, որ սաքի դու էլ քո կողմից նրանց չհասությունը լսել ես ու իրան գործակալին հայտնում ես, համ էլ դու չես ցանկանում, որ էս պսակը գլուխ գա։

— Ի՞նչ եղավ քեզ, Սաքո՛, այդ դրության մեջ առաջինն է, որ քեզ տեսնում եմ. մի փոքր հանգստացի՛ր, կարգով ասելիքդ պատմի՛ր, որ ես էլ բան հասկանամ։

— Ոտներիդ զուրբա՛ն, աղա ջա՛ն, ինձ երկար հարցուփորձ մի՛ անիլ, ինչ որ խնդրեցի՝ շուտ գրի՛ ու ինձ տո՛ւր. ասում եմ, որ թե էս երկու օրս խեչանին չբռնեցինք, մեր բանը շատ վատ կերթա, հիմի էլ խոսացնելու վախտը չի. ես հենց հիմի կերթամ էջմիածին, ինչ որ պետքն ա՝ կանեմ, մեր առաջին գործն էս պտի ըլնի՛, սհաթ կորցնելու ժամանակը չի։

Սաքոն չոքեց մովրովի առաջին ու ծունկը համբուրեց և այս քարասիրտ մարդու աչքերին արտասունքի կաթիլներ երևեցան։

— Վեր կա՛ց, վեր կա՛ց,— հրամայեց մովրովը,— իսկույն խնդրածներդ կստանաս։

— Դե, ընչանք քո գլել-գրծնելն ես էստեղ կընեմ,— ասաց Սաքոն ու դուրս ընկավ։

1 Միամիտ։

Մովրովը մի քանի անգամ ուսերը վեց քաշեց։ Սաքոյի ազդեցության տակ ոչինչ երկար մտածել չուզեց.— երևի մի վտանգ կա, որ ուզում է Սաքոն առաջն առնել։— Այս խոսքերով նա կանչեց գրագրին ու հրամանները թելադրեց։

Ինչպես վերն ասացինք, կես ժամ այս գործողությունից առաջ Սաքոն շատ հանգիստ սրտով խաբեց մովրովին՝ խեչանին թակարդ ձգելու վերաբերությամբ։

Նա խորամանկ ժպիտով դառնում էր ինքնաբավական դեպի յուր գինետունը և ճանապարհին ծիծաղում մովրովի դյուրահավատության վրա։

— Ո՞նց չէ, գոգդ դեմ արա՛, թե ես խեչանի աղջիկը կառնե՞մ, դու շատ խեր դուս կտանիս. մենծ բան էր, որ մովրով ես. քեզ պես մի քանիսին ենք տեսել. թե մի քիչ էլ շատ կխոսաս՝ արածներիդ կծիկը բաց կանեմ, մեջը կխճճվիս, կմճճվիս ու էլ չես կարող դուս գալ։ Բայց թե որ աստված գլխիս կխոռովի, Սաքոն Սաքո չի ըլնիլ, մտքիս դրածը գլուխ չեմ կարող բերիլ, էն վախտը շլինքս ծռած՝ փեշիցդ ճոլոլակ կլնեմ, երկուսս մին կըլլենք, մեր աղա խեչանի բողազին հենց հուպ կտանք, որ աչքերը գագաթը կթռչին։

Այս խոսքերով նա ոտքը ներս դրեց գինետունն և նրա առաջին՝ ինչպես գետնից՝ բուսավ աշտարակցի տատմոր տղեն։

Այս տատմեր կամ մանկաբարձ կոչվածը տղամարդի նման մի միջահասակ կին էր Աշտարակումը։ Ցուր այրիանալուց հետո մանկաբարձության մեջ գործնականապես վարժվել էր և ամեն դուռն յուր համար բացվել էր։ Նա չէր նմանում յուր համասեռներին, ոչ ոքի մոտ նրա սև կտավյա քնթկալը քթի ծայրին չէր դիպել՝ ինչպես առհասարակ կանացի ամոթիածության նշանն է. յուր կնքահոր մոտ էլ բարձր ձայնով էր խոսում և յուր խոսքերի մեջ այնպիսի խեղկատակ բաներ էր գործ ածում, որ ծերունիների և պատկառելի անձանց զղվանքն էր զարթեցնում. իսկ պատանիների և թեթևամիտների ծիծաղը շարժում։ Շուտով տատմերն յուր շրջակայքը ժողովեց գիշերաշրջիկ երիտասարդներին և նրանց հաճույքներն ի գլուխ բերելու էր ծառայում։ Ես չեմ ասում, թե Աշտարակումը բարոյականությունն այդ աստիճան խանգարյալ դրության մեջ էր. մեծ մասամբ տատմերը պարապում էր ազգի տղայք ու աղջի աղջիկներ սիրահարեցնելով և նոցանցից միմյանց մեջ խոսքեր տանել-բերելով, քան թե սրբության դեմ մեղանչելով. թեպետ ըստ առածին՝ «Երուսաղեմ էլ առանց շների չէր»։

Մի քանի տան խաղաղությունն այդ անպիտան տատմոր շնորհիվ

վրդովվեցավ, նրա արվեստն ակնհայտնի իմացվեցավ և նա պարկեշտասեր աշտարակցիների տներումն զգուշալի երևեցավ։

Այնուհետև տատմերը լեղվագարությամբ էր պարապում, սիրելի բարեկամների մեջ ատելություն էր սերմանում, մեկին մյուսի հետ կռվացնում էր, լրտեսություն էր անում և ուրիշների տան գաղտնիքը դուրս խլում։

Սույն իսկ կնոջը վարձել էր Սաքոն, լրտես էր կարգել խեչանի տան վերա՝ Հեղնարի սիրտն յուր վերա տաքացնել և Սմբատին ատել տալու պատվերներ էր տվել, մեծ-մեծ պարգևներ խոստանալով։

Ահա այս կնոջ որդին էր, որ գինետանը դիմավորեց Սաքոյին։

— Ի՞նչ կա, խե՜ր ըլի էս վախտ էսպես անժամանակ։

— Մերս ասում էր՝ գլուխդ էգտեղ թրջի, էստեղ վեր արա՜, էս իրիկուն խեչանի աղջկա հարսանիքը նստում ա, էգուց պտի պսակվի։

— Ի՞նչ ես ասում,— զարմացավ Սաքոն,— խեչանն էս տարի աղջկանը պսակելու միտք չունի։

— Չէ՜, աղա ջան, թագավորը (նորափեսան) Մողնի գնաց, ես դեսն եկա։

— Բաս նո՞ր եք իմաց տալիս,— գոչեց Սաքոն կատաղաբար։

— Ոչով չէր իմանում, տաշտադրեք էլ չեն արել, հարսանիքի մսացուն էլ առանց դափ ու զուռնի են մորթել։

— Գնա՜, կորի դժոխքի տակը,— բարկացավ Սաքոն և առանց տղայի վերա ուշ դարձնելու՝ դուրս ընկավ ու վազեց մովրովի մոտ։

Հետևանքը մեզ հայտնի է. Սաքոն մովրովից երկու թղթերը գրելու խոսքն առած՝ էլ ետ գինետուն վազեց։

— Ետ դա՜ռ էս բոպեիս, գնա՜ Աշտարակ, թող ոչով չիմանա, որ դու էս կողմն ես եկել. թե մի մարդ էս բանի հոտն առել ա, ձեր տունը ձեր գլխին կքանդեմ. մորդ ասա՝ ոնց կուզի անի,— իրան քցի հարսանքատուն, հարսին բալքի տեսնի, բալքի կարողանա իմ ասածներս գլուխ բերել. ինքը գիտի, ասա՜ թող ինչ որ անց կենա՝ աչքից չփախցնի։ Ահա առ, էս երկու մանեթը, տար մորդ տո՜ւր. թող իրան քնթկալագին անի։

Այս խոսքերով ճանապարհ դրեց Սաքոն տատմոր որդուն և ինքը լեռդապատառ տուն ընկավ կրկին մովրովի մոտ։

Համարյա թե հափշտակեց և ոչ հաճեստությամբ առավ մովրովի ձեռքից նվիրական թղթերը, թռավ ձիու քամակը և երեսն ուղղեց դեպի Էջմիածին։

ԸՆ

ԳՈՐԾԱԿԱԼ ԿԱՄ ԲԱՐԵԿԱՐԳ

Զյունն երկիրը պատած էր, գիշերը բավականին պարզկա[1] էր, երկրնքումն ամպի կտոր չէր երևում. լուսինը յուր բոլոր շնորհքը, կարծես, այս գիշեր կամեցել էր ցույց տալ, նա փայլը սփռելով ձնի թերթիկների վերա, գիշերվան մթության մեջն էլ պեծերը մարդու աչքեր խաղտում էին. ճանապարհը լավ կոտրված էր և լուսնի լուսով պարզ երևում էր. լռությունն ամբողջ աշխարհը բռնել էր, ամեն շունչ կենդանի յուր համար մի ապաստարան էր գտել՝ մեջը մտել, ոչինչ շշուկ չէր խանգարում բընության մեռելությունը։ Քաղցած գայլերն էլ, երևի, իրանց համեղ որսի հոտը չէին առել Արարատյան ընդարձակ դաշտի վերա, որ թողել հեռացել էին Էջմիածնի տափարակի վրայից. միմիայն Սաքոյի ձիու ոտի ճռռվողությունն էր, որ պարզկայի շնորհիվ կոտրված կիթառի նման միանվագ ծորում էր։ Գյուղերին մոտեցած ժամանակն երբեմն այս միակերպությունը ընդհատվում էր գյուղական գամփռների ոռնոցներովը, որոնք ավելի օրուշի[2] էին հաշում, քան թե մի որոշ նպատակավ։

Այս ամենի վերա Սաքոն ուշք չէր դարձնում, նա մտքով գործակալի մոտ յուր փաստերն էր առաջ բերում, յուր խոսելիք ճառն էր պատրաստում, իսկ կրնկներով խեղճ ձիու փոնչոցը ոտքերի ձայնի հետ խառնում։

Բավական հեռու տեղից լուսնի պարզ լուսովը վերջապես Սաքոյի աչքին ընկավ Էջմիածնի գմբեթի փայլուն գլուխն և նրա ձեռքն ակամայից հայ-քրիստոնեի սովորության ազդեցությամբ երեսին բարձրացավ։

— Սուրբ Իշմանտեղի լիս գագա՜թ, քո զորությունին մատա՜ղ, դու էս բանը գլուխ բերե՜ս։

Սաքոն որքան և անդարձ ու կամակոր, տնքանդ, որքան և ամեն սրբություն ոտքի տակ տված անխղճի մեկը, որքան և համոզմունքը խախտված, այնուամենայնիվ, նա ազատ չէր նախապաշարմունքից, նա հաճախ չարագործություն անելուս էլ սրբերի օգնականությունն էր խնդրում։

Իավականին գիշեր էր անցել, որ Սաքոն իջավ Վաղարշապատի հրապարակում շինած հասարակաց զոմի դռանը, ձին կապեց և յուր քայլերն ուղղեց դեպի Ղազարապատ, ուր բնակվում էր գործակալ հայրսուրբը։

Դռնապանը, նստած դռան քամակի քարե նստարանի վերա, խորդում էր երազների մեջ. մեծ երկփեղկյան դուռն, իհարկե, վաղուց փակած էր։

[1] Պաստիկ ցուրտ։ [2] Աննպատակ։

Սաքոն մի-երկու անգամ բախեց դուռը։

— Ո՞վ է,— հորանջելով աչքերը տրորեց դռնապանը։

— Դուռը բաց, մղդսի՛, գործակալ հայրսուրբի մոտ եմ եկել, մովրովից վռազ թուղթ ունիմ տալու։

— Դու ո՞վ ես, յասավուլ ե՞ս, ի՞նչ ես։

— Ես միկիտուն Սաքոն եմ։

— Արի՛,— փնթփնթալով դռնակը էտ քաշեց դռնապանը, շա՛տ կը-ղարթնացնես։

Սաքոն բարձրացավ պատշգամբի վերա և բախեց գործակալի սենեկի դուռը։

Բայց թե ի՞նչ գործ ուներ գավառի գործակալը Ղազարապատումը, ո՞ւր է նրա բնակության տեղը, ի՞նչ է նրա գործը և հարաբերությունը ժողովրդի հետ՝ մենք թողենք Սաքոյին դուռը բախելուս և այդ բանի վերա փոքր-ինչ բացատրություն տանք։

Գործակալ կամ բարեկարգ՝ սոքա են ամբողջ գավառի հոգևոր գործերի անմիջական կառավարիչները, սոքա են առաջին դուռն, ուստի պետք է մուտք գտնենք դեպի մեր հոգևոր բարձրագույն իշխանությունը. սոքա են քահանաներից հետո ժողովրդյան հոգևոր ներկայացուցիչները, ժողովրդին առաքինության և աստվածապաշտության ճանապարհը ցուցողները, գյուղացվոց հոգեկան ցավերին դարման տանողները, նրանց նեղության մեջ մխիթարողները և միևնույն ժամանակը ժողովրդից հոգևոր իշխանությանը հասանելիք պտուղ և ամեն տուրքերն ստացողները։

Այս արդյունավետ պաշտոնի մեջ ընդհանրապես վարդապետներ են նշանակվում և կոչվում են գործակալ, իսկ հեռատես և մարդաճանաչ Ներսես Ե. Աշտարակեցի կաթուղիկոսը զեղծումներ արեց և քահանաներ կարգեց, որոնք կոչվեցան բարեկարգ. տեղ-տեղ էլ բոլորովին աշխարհականների հանձնեց այդ իրավունքը՝ հոգևոր գործոց վերատեսուչ անվամբ։

Ներսեսի մահից հետո դարձյալ նախկին կարգը մտավ, աշխարհականներն ու քահանայք ետ մղվեցան և դարձյալ վարդապետներն յուրյանց պաշտոնը ճանաչեցին, թեպետ ոչ առանց սակավամասն բացառության. մի քանի տեղեր քահանայք բարեկարգ մնացին։

Ներկա վեհ հայրապետը՝ նույնպես քահանաներին վարդապետներից գերադասեց։ Այս մասի մեջ խոհական մեծ դիտապետների տնօրինությունները հարգելի են։ Փորձը շատ անգամ ցույց է տվել, որ միշտ քահանայք և աշխարհականք ավելի սակավ պահանջելովն էլ վարդապետներից շատ արդյունք են ցույց տվել։

Էջմիածնի միաբան վարդապետը գործակալություն ստանալուն պես ձիավորվում էր, մի թվանքի էր վերցնում իրեն շարունակ ծառայելու և յուր բնակարանը փոխում էր էջմիածնական խցից գավառի մեջ գտնված մի վանք, իսկ եթե այդպիսին չկար՝ յուր ընտրած մի գյուղ յուր նախածանոթներից մեկի մոտ, կամ ուղղակի երեսփոխանի տունը։

Այդ տեղերից նա ավելի հարմարություն էր ունենում ձիու վերա նստած՝ շարունակ յուր գավառի գյուղերն այցելելու, յուր հոգևոր զավակացն ուրախացնելու։

Ամեն մի գյուղ գալուն պես՝ երեցփոխը քահանաներով և մի քանի իշխաններով դիմավորում էր գործակալ հայրսուրբին, ընդունում նրան և յուր տանն իջեցնում։

Հայրսուրբը քննում էր բոլոր հոգևոր գործերը, ժողովում արդյունքները, ուղարկում ուր հարկն էր և մի քանի օր մեծ պատիվներ ստանալուց հետո՝ ուղևորվում դեպի մի ուրիշ գյուղ։

Այս, իհարկե, ավելի ամառներն է պատահում. ձմեռն ընդհանրապես հայրսուրբն յուր կացարանումն է և գործ ունեցողները նրա մոտ են գնում։

Մեծ են գործակալ հայրսուրբների պարտավորությունները, դժվար է և սրանց դրությունը։ Իբրև վարդապետ, հոգևոր հայր, նոքա պետք է ժողովրդին ոչ թե նեղություն պատճառեն, այլև տեղն ընկած միջոցը ձեռքից եկածին չափ յուրյանց կողմից օգնություն հասնին։ Բայց իբրև գործակալ, հոգևոր շահերի պաշտպան, նոքա պիտի նեղացնեն ժողովրդին, ստիպեն շատ արդյունքներ տալ, աշխատին վանքական եկամուտները շատացնել։

Ահա այն դժվար դրությունը, որի մեջ կաշկանդված է մեր հայրսուրբը։ Բայց տարաբախտաբար պետք է պարզ խոսենք, որ շատ հազիվ կգտնվի այնպիսի բարեխիղճ գործակալ, որ յուր երկու պարտավորությունն ևս հիշելով, աշխատի յուր հեզահամբույր բնավորությամբ, յուր ազգու քարոզներովն, յուր անշահասեր հատկությունովը, մի խոսքով՝ յուր կյանքի օրինակովը հեշտացնել, անզգալի անել իրեն հանձնած հոտի ծանրությունը։

Այո՛, ժողովուրդը ճնշված է, ինչպես տեսնում ենք, մովրովների հարստահարությանց ներքո. շատ անգամ զանազան դժբախտ դեպքերի՝ երաշտությունների, մարախի և այլ ձախորդ պատահարների պատճառով ժողովուրդը յուր գերդաստանն անգամ դժվարանում է կտուավարել, բայց եթե գործակալները գիտենային վարվել բարեպաշտ ու ջերմեռանդ հայ ժողովրդի հետ, վերջիններս յուրյանց բերանից կկտրեին և յուրյանց հոգևոր հասույթը կտային։

Ցավոք սրտի պիտի ասեմ, որ վերոգրյալ եղանակավ սակավ է գործ տեսնվում. գործակալն երևում է գավառումն իբրև մի երկրորդ մովրով. յուր հետ ունելով թվանքին՝ շատ տեղ նրան յասավուլի փոխարեն է գործ դնում. պտղի, պսակահարկ, ճոգեբաժին և այլ ամենայն վանքական հասանելիք շատ գյուղերում գործակալն առնում է կրկնապատիկը. մանավանդ պսակահարկ և հոգեբաժին պահանջելուս շատ նեղացնում է խեղճ ռամկին։

Ես ականատես եմ եղել մի-երկու հայրսուրբների, որոնք արտասուք են կաթեցրել թշվառ գյուղացու աչքերից. հազար անգամ ողորմելիքն հրդվել են նրանց սուրբ կարգովը, որ էլ ավելի չունեն՝ ինչքան բերել են, բայց հայրսուրբը չի հավատացել, լսել անգամ չի կամեցել, բարկացել և դուրս է վռնդել։

— Գնա՛, որտեղի՛ց կուզես՝ ճարի՛ր, բե՛ր, աթոռահարկը տո՛ւր և հետո պսակիդ հրամանը կամ ննջեցելույդ յոթը կատարելու իրավունքն ստացի՛ր. եթե իմ ուզած փողը չես բերիլ, որդիդ, կամ եղբայրդ կմնա անպսակ և ննջեցյալդ կզրկվի դրախտից։ Մեծ բան է, թե պարտքի տակ ես ընկել. որտեղ 100 մանեթ պարտք կա՝ թող 10-ն էլ ավելի լինի։

Ահա գործակալ հայրսուրբի պատասխանը, ահա իսկ և իսկ այն խոսքերը, որ գրագիր հերբսը մխթեց գյուղացի տանուտերի մոտ։

Ի՞նչ անի խեղճ գյուղացին. նրա եղբայրը մի՞թե թուրք է, որ անպսակ մնա, իսկ նրա ազիզ ննջեցյալին յոթը չկատարելով դրախտից զրկելը նրա վերա սարսափ է բերում. գործակալ հայրսուրբի հրամանավը քահանան իրավունք չունի ոչ մի մեռելի յոթը կատարել, մինչև որ աթոռահարկը վճարելու ապահովագիրը չբերեն։ Ջա՛նը դուրս գա, թող աղքատը գնա, որտեղից կուզի, ճարի, տա, բայց ո՛րտեղից ճարի. օտար գյուղ, օտար մարդիկ. խեղճ գեղջուկը մի օրվան ճանապարհը բքի ու ձյունի պատճառով երկու օրն է ոտքով եկել, փոքր մնաց բքից խեղդվում էր և այժմ ինչպե՞ս վերադառնա գյուղն և գա։

Ճարը հատած՝ քաշվում է խղճուկը մի կողմը, գլուխը պատին դեմ տալիս և յուր սրտի կսկիծը լացով աշխատում թեթևացնել։

Գործակալ հայրն այս ամենը տեսնում է, նրա սպասավորը հեռվից հետևում է գյուղացու գործողություններին։ Երբ սուրբ հայրը հավաստիացավ, որ մարդու մոտ արդարև թաքցրած փող չկա, նա՝ ուղարկում է յուր հավատարմին՝ իբրև սրտացավի տեղեկանալ մեր լալկանի վշտերից և կարեկցել նրան։

— Ախպեր, ընչի՞ ես լաց ըլում, ո՞վ ա քեզ վիրավորել,— մոտենում է նրան վարդապետի ծառան։

— Խուրբա՛ն քզի, իմա՞լ[1] էնեմ, օր չի լամ,— պատասխանում է ապարանցի ռամիկը,— չեմ գինա[2] դո՞ր[3] կորսվիմ. էկեր ենք խբա[4] մըր խայրսուրբ, ծառա եմ էնոր աջուն, ճիժս[5] կարգելու խրամանք կուզենք (կամ հոգեբաժին), եղած-չեղած մըր քիսի փարան, մըր քյասիբ տեղով, խինգ մանեթ էր, մկա տաս մանեթ կուզա՝ խրամանք չի տա. ես հո՞սսա[6] ճարեմ. մըր գեղ չենք, հորթա[7] գլուխս ի քարեքար տինք[8], գտնենինք, իդա[9] տեղ լե մըզի ոչ բարեկամ, ոչ ճանանչ ունենք, իդա ձուն-ձմռան, իդա բորյազին[10] ես կրնա՞մ մեկ լե դառնալ մըր գեղ ու գալ, սրրբ Կարաբեդ լե գինա, որ փշուր մը[11] մացավ[12], բուք մըզի խեղդեր։

— Ո՞ր գեղիցն ես։

— Աստվածընկալու[13] ինք, խուրբա՛ն, մըր վանք քո մուրատն[14] ի տա։

— Գիտես, ախպե՛ր,— գթաց անծանոթը,— սիրտս ցավեց քեզ համար, ուզում եմ քեզ օգնեմ, թե որ դու հայրսուրբին կխնդրես, որ նա գրի ձեր տերտերին, թե ընչանք քեզանից հինգ մանեթ չառնի, քո հարկը չըկատարի, ես քեզ հինգ մանեթ պարտք կտամ, տար գործակալին տուր, հրամանդ առ. գնա՛, խեղճ ես, զարիբ ես։ Ես քեզ էս լավությունը կանեմ. դու էլ ինձ համար եղից, պանրից, հավից, ինչ կուզես փեշքյաշ[15] ղրկի փողի հետ։

— Օտացդ[16] մեռնիմ աղա՝ եսիր[17] կթափես, վըր իմ ջուխտ աչուլ[18] թո[19] էղնի, դու զմբր բան յոլա տար, մընք լե հորթա գացինք մըր գեղ, իմալ եղնի, ճարինք զքո փարեն, տերտրոնջ ի տանք, խետ լե խինգ նուգի[20] եղ, երկու խիտր[21] պանիր քըզի փեշքեշ համա դու զքու անում մըզի բախշա՛, հոր իմանանք, թե վիր[22] կուշտ խրկենք։

— Վնաս չունի, դու ղրկի հայրսուրբի անումովն, ինձ կհասնի։

— Աղեկ[23], խուրբա՛ն արևուդ։

Գյուղացին տասը մանեթը գործակալին տվեց, հրամանն ստացավ, բայց մի ուրիշ թղթի վերա գրած էր, որ մինչև այս գրաբերից հինգ մանեթ փող, հինգ նուգի եղ, երկու լիտր պանիր չստանա, հարկը չկատարի. ստացած բոպեին էլ իրան հացնի։

Մենք, իհարկե, իմացանք բանի որպիսությունը. ապարանցու անծանոթ բարերարը՝ վարդապետի ծառան յուր տիրոջից հինգ մանեթ ստացավ ու դուրս գնաց, յուր անունովը գյուղացուն պարտք տվեց, յուղ ու պանիրն էլ տոկոսիք ստանալով։

Այս իսկ և իսկ մովրովի և Սաքոյի մեջ կատարված ոսկիներ փոխե-

1 Ինչպե՞ս։ 2 Չգիտեմ։ 3 Ո՞ւր։ 4 Մոտ։ 5 Թրդիս։ 6 Որտեղի՞ց։ 7 Որ։ 8 Տալի։ 9 Այս։ 10 Բուք։ 11 Փոքր-ինչ։ 12 Մնաց։ 13 Աստվածընկալ մի վանք է Ապարանումը, որի անունով և մոտի գյուղն է կոչվում։ 14 Մուրազ, խնդրվածք։ 15 Պարգև։ 16 Ոտքերիդ։ 17 Գեքի։ 18 Աչքերս։ 19 Թող։ 20 Չափ է։ 21 Լիտր։ 22 Ում։ 23 Լավ։

լու նկարագիրը չէ՞, ընթերցո՛ղ, քեզ եմ հարցնում. հայր գործակալն ինչո՞վ է զանազանվում մի շահամոլ մովրովից։

Գուցե կկարծեք, որ այդ բոլոր ստացած հասույթներն և աթոռահարկը գործակալը ճշտությամբ տեղ է հասցնում։ Ք՛ավ լիցի, շատ կսխալվիք։ Էջմիածնապատկան պտղի կոչեցյալ տուրքի քանակությունը որոշված է, իսկ մեր հայրսուրբը կրկնապատիկն է ստացել. աթոռահարկն յուր ազատ կամքին է թողած՝ ստանալ յուրաքանչյուր մարդուց ըստ կարողության, առանց ճնշելու, և նեղություն պատճառելու։ Եվ որպեսզի ոճիր կամ գողություն չգործվի, պատվիրած է գործակալներին տերտերների անունով տրված պսակի կամ յոթը կատարելու հրամանաթղթի մեջ նշանակել ստացած աթոռահարկի որքանությունը։

Գործակալն իսկությամբ կատարում է այդ կետը. բայց ինչպե՛ս.— փոխանակ ստացած տասը մանեթի՝ նա պատվիրում է յուր գրագրին երեք մանեթ նշանակել։

Տիծաղելի էր մի անգրագետ գործակալի արարքը. գյուղացու մոտ յուր գողությունը ծածկելու համար նա սկսում էր երգելով ասել այբուբենը. ո՛ր գրի վերա կանգնեց ու այն տառը մի քանի անգամ կրկնեց, այդ ասել էր, թե այսքան մանեթ նշանակիր։

Աստուծո տված ից ոչ մեր քահանայքը կարդալ գիտեն, որ տված փողի քանակությունն իմանան, և ոչ գյուղացին կհամարձակվի գանգատվել։ Տերտերը հազիվ բրդգնելով՝ գտնում է իրեն կարևոր տողերը. «Ինրամայեմ ձեզ պսակել կամ կատարել զյորն»։

Մենք մեր գործակալի գիտության չափը վաղուց տեսանք՝ խեչանի աղջկա պսակն արգելելու համար գրած հրամանաթղթի մեջ, և եթե ինքը գործակալն այսպես, ավելորդ է երևակայել, թե սրանց ձեռնադրել տված քահանայքն ի՞նչ կլինին։

Ամեն հիսուն տնաչափ գյուղում երկ-երեք քահանայք կան. սրանց ամենքի ուսումն էլ, համարյա՛, հավասար է. քանի մի տարի տերտերի մոտ ութ կանոն սաղմոս, կտակարան, ժամագիրք ու շարական քրքրելուց հետո, նրանք անգիր սովորում են եկեղեցական պաշտոնատարությունները. այնուհետև ո՛վ շատ տվեց գործակալին, նա շուտ է տերտեր դառնում, պարապ տեղ, կամ պահանջ կա՞ թե ոչ— հարցնել պետք չէ։

Շատ անգամ, երբ գործակալը տեսնում է, որ քահանայացուների աղուությունն է, ինքն է հարց ու խնդիր լինում և ո՛ր գյուղի մեջ գտնում է այբուբեն գիտեցող մեկին, կոչում է յուր մոտ, հայտնում է նրան, որ ինքը լսել է նրա բարի համբավը, նորա օրինակելի վարք ու բարքն և ցանկանում է քահանայացնել։

Այնուհետև տիրացուն պարտքի տակ է ընկնում, գործակալ հայրսուրբին է բերում, որ սա էլ յուր կողմից, ուր հարկն է, հոգա յուր գործն և բանն յուր կարգավն առաջ է գնում։

Մի քանի ժամանակից հետո մենք այդ տգետ մարդու ձեռքը համբուրում ենք։

Ձենք կարող հոգիներս սևել և ասել, որ գործակալն յուր վերցրածները բոլորն ինքն է ուտում, ո՛չ, մեղք է սուտ խոսելը. նա յուր կողմից տարին մի քանի անգամ կոնսիստոր և սինոդ է գնում, անդամներին տեսնում և յուր տեղն ամրացրած՝ վերադառնում։ Այդ պատճառով էլ նրա միջնորդություններն առանց բացառության կատարվում են, այդ պատճառով էլ ամեն ոք գիտե, որ գործակալի վերա տված բողոքներն անուշադիր են մնում։

Խոսելով գործակալ հայրսուրբի գործողությունների մասին, մի քանի խոսք էլ բարեկարգ քահանաների համար ավելորդ չէր լինիլ ասելը։

Ինչպես վերն ասացինք, սոքա ավելի բարեխղճաբար էին կատարում յուրյանց պաշտոնը, բայց և սոցա մեջ եղել են այնպիսիները, որոնց տեսնելով, գյուղացին ափսոսելով հիշել է նոցա նախորդներին, իսկ նոցա կարգող բարձր իշխանությունը վերջը շատ զղջացել է յուր ընտրության մեջ։

Մեկ բարեկարգի համար ավանդությունը պատմում է, որ շրավականանալով ժողովրդին գոփելով ու ժապավինյալ մատյանների մեջ պակաս եկամուտ նշանակելով, հնարքներ է որոնելուս լինում մատենի մեջ գրածն էլ տեղ չհասցնելու. մի օր ասում է՝ տունս կտրեցին, մատենները տարան. երկրորդ անգամ՝ երեխան հանկարծ մատյանը հացի վառած թոնրի մեջ է ձգել և երրորդ անգամին արդարև բախտն իրան լիովին հաջողվում է։ Հիսուն մանեթի չափ աթոռահարկ ծոցին էջմիածին գնալուս ճանապարհին կողոպտվում է։ Գողերը բավականանում են միայն փողը ձեռքիցն առնելով, իսկ հնարագետ տերտերը խնդրում է, որ յուր հնամաշ հագուստն և ժանապարհին ձին էլ տանին։

Այդ մերկանդամ դրությամբը սատանա տերտերն իրան ձգում է էջմիածնի վանքը և լալով հայտնում, որ 250 մանեթ աթոռահարկի հետ յուր ամենապատվական ձին և նոր կարած հագուստն էլ ավազակները տարել են։ Յուր ճարտար լեզվովը նա կարողանում է 250 մանեթ շահվիլ աթոռահարկից, մի պատվական ձի ստանալ վանքապատկան ձիանցից և մեկի փոխարեն հինգ-վեց հատ վերարկու այս և այն վարդապետից դուրս կորզել, դեռ, ասում են, հանդերձատանիցը հաջողեցնում է մի

Թավիշյա եպիսկոպոսական վերարկու ևս յուր տիրուհու համար քյաթիբացու[1] ստանալ։

Այժմ, ասում են, այսպիսի չարագործություններ շատ սակավ են լինում։

Ահա՛ մի շաբաթ էր, որ գործակալ հայրսուրբն յուր վիճակից դարձել էր մայր աթոռն՝ յուր հավատարմության պարտքերը կատարելու։

Նա պաշտոն ստացած օրից թողնում է յուր աղքատիկ խուցն յուր համեստ եղբայրակիցներից մեկին ժառանգություն և ինքն էջմիածին եկած ժամանակը կամ յուր ընկերակիցներից մեկի մոտ իջնում և կամ իբրև հյուր՝ Ղազարապատի հյուրանոցի սենեկներում։

Սաքոն լսել էր գործակալի էջմիածին լինելն և այստեղ եկավ։

Դուռը երկար բախելուց հետո՝ վերջապես բացվեցավ։ Սաքոն նախ քիթ ու պռունգով և ապա մեծ սիրով ընդունվեցավ և բավական միջոց հայրսուրբի հետ խոսակցելուց հետո՝ ստացավ մեզ հայտնի նշանավոր հրամանաթուղթն և ձին նստավ ու շտապեց Սև ջրի գլուխը։

ԻԹ

Նույն և մի շտապմամբ՝ որ եկել էր Սաքոն էջմիածնից, աճապարեց յասավուլխանեն[2]։

Գոմի դուռն, իհարկե, փակելու հարկ չկար. վաղի առաթի պես՝ օձն յուր պորտովը, ղուշն յուր թևովը կհամարձակեի՞ն այդ բակը մտնել, որ ադամորդին մտներ չար մտքով։ Սաքոյին հայտնի էր անկասկած, թե որտե՞ղ է պառկած յասավուլ Մարգարը՝ մեր վաղածանոթը։

Յասավուլն և ընդհանրապես ստորադրյալ անձինք, որոնք ամեն ժամանակ ենթարկված են ազանների կամայականությանը, շատ արթուն են։ Առաջին գիշերը չէր, որ յասավուլ Մարգարն անժամանակ քնահարամ էր լինում։ Մի աղոտ ձիթի ճրագ վառվում էր սյունի վերա, և Մարգարն ոչքերը բանալուն պես ճանաչեց իրեն հրող Սաքոյին։ Էլ բերան չկարողացավ բանալ Մարգարը, որպես և իցն շտապավ հաղնվեց և հետևեց իրեն նշանացի անողին։

— Ի՞նչ կա, ընչի՞ համար ա աղեն էսպես բեվախտ[3] քեզ ինձ մոտ զրկել, իրա կշտին հո յասավուլ կա՛ քնած. երևում ա շատ թաքուն բան ա, որ ոչով չպտի իմանա, հա՞,— հարցրեց Մարգարը։

1 Կանանց վերնազգեստ։ 2 Յասավուլների կացարան։ 3 Անժամ։ Նախ

— Լավ գլխի ընկար, հետս արի՛ անխոս. բայց չէ՛, ես կերթամ դուքան[1], դու շուտ էս սհաթս ձիդ թամքի՛, ասպասներդ[2] քաշ արա՛, ինձ մոտ արի՛։

Մարգարն ուսերը վեր քաշեց և անխոս կատարեց իրեն հրամայողի կամքը. եթե Սաքոն այսպես խոսում է, անտարակույս մովրովի հրամանն է։

— Ձիդ նստի՛ ու առանց ժամանակ կորցնելու, առանց աջ ու ձախ աչք թեքելու՝ էս թղթերը ջեբդ դի՛ր ու կրակի նման թռի՛ Աշտարակ։

— Տամ տանուտերին. հետո՞։

— Էստեղ երկու թուղթ ա, չխառնես. մինը ծոցդ դի՛ր, մեկելը՝ գտակածալդ. ծոցինդ տանուտերինն ա, մյուսը տերտերին պտի հասցնես։

— Է՛հ, պրծա՞նք, վանքի թվանքչի էլ դառա՛նք, էս էր պակաս։

— Լսի՛ր, հանաք չեմ անում, գործը շատ շտապ ա, քո օգուտին ա, գլուխդ էստեղ թրջի՛, Աշտարակ վեր արա՛. էլի կասես թե Սաքոն ինձ վրա քաղցր աչք չի քցում. քեզ հենց մարդ շինեմ, որ երազումդ տեսած չլինիս, մտքովդ անց կացած չլինի, դեռ իմ լավությունը դու հետո կիմանաս, համա ի՛նչ օգուտ, որ իսանումն[3] էհտիբաք[4] չկա. էն օրն ինձ մարդատեղ էլ չես ցցիլ, չես ասիլ, թե քեզ ատված ա ատեղծելլ։

— Մասխարա[5] ես քցո՞ւմ, Սաքո ջա՛ն։

— Ի՞նչ ես խոսում, հանաքի վախտ չի, լիսք նոր ծեգելուս դու պտի քո թղթերը տերեցտեր արած ըլնիս, թե չէ էլ պետք չեն. էն ժամանակ ես կգրկվիմ մի պատիկ քաղից, համա դու դարդակմտհրում[6] ես կնստես մի սիրուն նշանածից ու անթիվ անհամբերք մաչ ու դոզլաթից։

— Սաքո ջա՛ն, դի՛ շուտ ասա, քոռ[7] դանակով կիսամորթ արիր ինձ, ես գիտեմ, որ աչքդ ինձ համար ուռել չէր[8]. ասում ա իշին ճարսանիք համեցեք արիք, ասեց՝ իշարկի ջուր կրելու ետ տանում, հիմի իմն ա. բայց ի՞նչ անենք, մեր արհեստն ա, պտի գնանք. համա էլ երկարացնել չի ուզիլ, ինչ ասելու ես՝ ասա ու պրծիր։

— Ախպերությունը վկա՛, Մարգար ջա՛ն, խոսքումս սուտ չկա, էս գործը քո օգտին ա, քեզ մի հացի տեր եմ շինում, որ ինձպես տասը ծառա ուզենաս՝ դռանդ պահեն. չիմանաս, թե մեջն ինձ շահ չկա, սուտը՝ սուտ ա, էդ տասված խաբել ա, տուն ի հոգե տատանար ա, ես էլ իմ բաժինն ունիմ, հիմա ոնց որ իմը մի կաթիլ ջուր, քունը՝ մի մենծ կուժ լիքը։ Ի՞նչ անեմ, ախպե՛ր, ամեն մարդ իր հաշիվն ոնի, ինձ համար էն կաթիլը թանկ ա՝ի ուրիշների լիքը կժերիցը. ես միտք արի, որ թոռ ես իմ սրտի

1 Խանութ։ 2 Ձեռք։ 3 Ադամորդի։ 4 Երախտագիտություն։ 5 Մաղում ես։ 6 Ջեռնոփ լինել։ 7 Բութ։ 8 Աչքը մեկի համար ուռել՝ նշանակում է տրտում լինել, կարեկցել։

ուզածին հասնիմ, թող Մարգարն էլ շատի տերն ըլի. դու էլ օտար հո չե՞ս, քեզ հայտնի չի՞, որ ես էս տանը քո զունգը ամենքի գլխի հետ չեմ փոխիլ։

— Շատ շնորհակալ եմ, Սաքո ջա՛ն, համա էլ ի՞նչ ես ծամծմում, չի ըլնի՞, որ շուտ ասե՞ս։

— Համ պտի ասիմ, համ հարկավոր պատվերները պտի տամ, որ մտքիցդ ոչինչ չքցես։

— Դե ասա էլի՛։

— Գիտե՞ս ինչ կա, Մարգար ջա՛ն, աշտարակցի խեչանենց խեչանին ո՞վ չի ճանանչում, նրա հարստության ձենն ո՞վ չի լսել, ընենց չի՞։

— Ընենց ա, ընե՛նց, ճլերք[1] մի՛ քցիլ, է՛։

— Էդ մարդը իմ ներքի բաղի մոտ մի բուդ ունի, ոչ մեջտեղը պատ կա, ոչ մի ջոկած չահրատ[2], ափս ափին, թումբս Ըմբանն ա կպած, շատ անդամ խառնվում ենք, նա իմ հավուղն ա քաղում, ես նրանը. տարի չիլնի՝ որ մեր մեջն անբավականություն չի դուս գա. թե հախն ասես, կամ նա պտի ծախի՝ ես առնեմ, կամ ես պտի իրան տամ, ձեռը քաշեմ. բանն էս ա, որ ես իմ մուլքն աչքիս լսի պես սիրում եմ, նա էլ հարուստ մարդ՝ ի՞նչ կարոտություն ունի։ Քանի հետ մարդ ղրկեցի, էն բաղի չորս գինը խոստացա տալ, ինքս, քեզ հայտնի ա, որ էս տարի Աշտարակ շատ գնալով-գալով ծիծաղատեղ եմ դառել ամենքի մոտ, ճար չելալ, 100 էնքան էլ որ տաս՝ խեչանը մոտ չի թողնում. վերջն էն տեղը հասավ, որ կռնիցս բռնեց տանիցը աղքատի պես դուս քցեց. քեզ մատա՛ղ, Մարգար ջա՛ն, խոսքը քեզ մոտ մնա, իմ թուք ու մուրն էլ ջոնն ա։

— Է՛հ. ամոթ չի՞, Սաքո ջա՛ն, խոսքդ շարունակի՛։

— Ճարս ի՞նչ. հո գիտե՞ս, որ Սաքոն իր կաշվումը կենողը չի, էդ խայտառակությունը, էդ անումկոտրությունը կուլ չի կարող տալ, երկու շաբաթ ա՝ քուն ու դադար չունիմ, ի՞նչ անեմ, ո՞նց անեմ, որ էն բաղն իմ ճանգը քցեմ ու խեչանիցը մուրը[3] հանեմ։

— Տեսնեմ ի՞նչ ես միտք արել։

— Շատ հնարքներ միտք արի, Մարգար ջա՛ն, համա չէ՛, ոչ մինը խելքումս չնստեց, ոչ մնիցը խելքս ջուր չխմեց, քամու պես եկան անց կացան։ Մին էլ հանկարծ դու միտս եկար։ Ա՛յ խելոք բան, ասեցի ու դործի քամակիցն ընկա։

— Ես ի՞նչ կարամ անել։

— Չեմ գիտում, դու իմանում ե՞ս, որ էդ խեչանը մի սիրուն նշանած աղջիկ ունի։

[1] Բարակացավ։ [2] Սահման։ [3] Վրեժ։

— Հա՛, ո՞նց չէ, մի օր տեսա, հաց էլ բերեց մեզ. շատ լավ տնտղեցի, շատ էլ գիր եկավ ինձ, համա ինքը հենց իմանաս ինձանից վախեցավ։

— Լավ աղջիկ ա, չէ՞։

— Շատ սիրուն չի, համա լավն ա։

— Խեչանի էլած-չելածն էդ մինուճար աղջիկն ա. ինքն երեք տարեկան ժամանակից բաշիֆյարթմա ա արած մի աղքատ տղի հետ. էգուց առավոտ լիսը բացվելուս պսակվում ա, էլ շատ խոսալու վախտը չի. թե որ դու խոսք կտաս, որ եթե ես քեզ համար խեչանի աղջիկն ուզեմ, դու էլ իմ ասած բաղն էժան գնով ինձ ծախես, էս թղթերը քեզ կտամ, առ՝ գնա ու պսակը խափանի՛։ Մնացածն իմ շլինքին։

— Սաքո ջա՛ն, շատ շնորհակալ եմ, համա խեչանն ինձ ո՞նց աղջիկ կտա, էլ նոր իմ ի՞նչ պսակվելու ժամանակն ա. քեզ հայտնի չի՞, կնիկ ու երեխեք եմ թաղել, նոր էս բեղերին կսազի՞ 20 տարեկան աղջկա երեսի դիպչել, կամ թե չէ օրենքը կհասցնի՞. էտով հո էլած հոգուս կտորն էլ կրակի մեջը կքցեմ, առանց էն էլ թուրք ենք դառել։

— Դո՛ւ գիտես, ախպե՛ր, չես ուզում՝ բարով եկար. ետ դառ գնա՛ բանիդ, խոզի գլուխը խալիչին կենալ չի. ես մարդ կգտնեմ ղրկելու. հրե՛, Ղահրամանը քեզանից սիրուն, քեզանից ջահել, քեզանից ղոչաղ. ուզում էի օր ծերության քեզ պես մի բարեկամ ունենամ, թե չէ ընչի՞ս էր պետք։

— Սաքո ջա՛ն, մոլորվը գիտի էս բա՞նը։

— Անխելք մարդ ես էլած, տո՛, դեռ մի էս հարցրո՛ւ, թե ես էս սհաթս որտեղի՞ց եմ գալիս, դեռ գնա՛, իմ ձին տե՛ս, քրտինքը վրիցը ծլծլում ա. ես հենց հիմի էջմիածին էի, էս դտակածալը դնելու թուղթը որ կա՝ գործակալի հրամանն ա տերտերի վրա գրած, որ պսակը խափանի, էս մինն էլ մոլորվիցն ա տանուտերի վրա, որ չթողնի պսակելու։ Հենց որ իմ չուղուլն[1] Աշտարակիցը մթնով տուն ընկավ ու հայտնեց, որ լիսը բացվելուս պսակելու են, մազերս բիդ-բիդ էլան։ Վազեցի մոլորվի մոտ, կես սհաթ լիզուս հանած աղանչանք արի, ընչանք գործակալի վրա մի բարովագիր առա. հետն էլ Աշտարակու տանուտերի վրա էս հրամանը գրել տվի, ծոցս դրի՝ ու թռա Թառլանիս[2] քամակը, ինձ քցեցի Ղազարապատը. գնալ-գալս չորս սհաթ չի քաշել, թե կուզես՝ ձեռդ բեր, քրտինքս տես. էլ կասե՞ս, թե Սաքոն քեզ չի սիրում։

— Ֆարազիմ[3] ասում եմ, Սաքո ջա՛ն, ո՞րն ա, մեկի տեղակ երկու բաղն էլ քեզ ջաբբա[4], թաք[5] դու էդ բանը գլուխ բերես։

[1] Կտրես։ [2] Ջիու անունն է։ [3] Դիցուք։ [4] Ընծա։ [5] Միայն թե։

— Դե՛, որ ըտենց ա, Մարգար ջա՛ն, իմացած կաց, որ քո անումն էլ գրել եմ տվել գործակալի հրամանի մեջը, որ քո պատիվն ու լիզուն երկար ըլի, համա բան ա՝ թե որ կտեսնես, որ տերտերը ոչ գործակալի թղթին ա ուզում անկաղ կախի, ոչ տանուտերին ա լսում, մտքումը դրել ա անպատճառ պսակի, քե՛զ տեսնեմ, ինչ զորություն ունիս՝ գործ դի՛ր, զամշուդ տակը քցի՛ր փեսին էլ, խեչախպորն էլ, հարսանքավորներին էլ ու սալջարդ արա[1]. մի խոսքով, տանուտերն էլ որ նրանց դիհը կպահի, ընչունքի խեչախպերն ինքն ա, անկաղ մի՛ անիլ, տո՛ւր, ես պատասխան կտամ։

— Էդ ես գիտեմ, ինձ յասավուլ Մարգար կասեն, ինձ երեխա ժամանակս շան ծիծ են ուտացրել, ինձանում շատ մահմադի[2] չկա։

— Դե՛, շուտ, երկարացնելու ժամանակ չի՛, ձիդ նստի՛ ու ապտված հետդ ըլի. միտդ պահի, որ լիսը չբացված՝ դու մենծ գործ ունիս կատարելու ու էն էլ՝ քո՛ օգտի համար, մեջը հաց կա։

— Գործս աջ ա գնում, պսակը վերջանալուս էլ ըլի, Մարգարը ժամիցը կիսատ դուս կանի, գիտեմ ի՛նչ գազանն ա, հայ յասավուլների մեջ սրա պես ոչ մինը չկա։ Խեղճ ախմա՛խ[3], խոսքերս նաղդ[4] ապրանքի տեղ առավ, միամտաբար հավատաց. ատամները վեր ա թափել, ղրջո[5] տեղովը ազատ աղջկա մարդ ուզեցավ դառնալ, Խեչանի փող ու հարստությունի համը[6] բերանը ջրակալացրեց. հիմա՛ր, հիմա՛ր, ինչքա՛ն անհասկացող ու երկար չմտածող մարդիկ կան աշխարհքումս. Սաքոն էս քանի ամիս ա՝ էլ սատանություն չմնաց բանացրեց ու դեռ ոչինչ չի արել, սա պտի ձեռաց Խեչանի փեսեն դառնա ու-ինձպես էլ նոքարներ ունենա։ Շա՛տ լավ կըլնի, Մարգար ջան, դու մի պսակը խափանի՛, էն ժամանակը կտեսնենք։ Ծոծը բարակ[7] Մարգար, ի՛նչ շուտ խաբվեց, խեղճը չի լսել էն առակը, որ ասում ա՝ անհնավատ բանին մի հավատալ. ի՛նչ էլ ուրախացավ, ոտները գետնիցը կտրվեցին։ Ի՞նչ անի, ոչովի մեղադրելու չի, ամեն մարդ էլ հացի ա ման գալի, հացի խնդիր ա։

Երկար ժամանակ լուսնի լուսով դիտում էր Սաքոն Մարգարի քամակից, մինչև որ նա իսպառ հեռացավ, որից հետո վերոգրյալ խոսքերը փնթփնթալով՝ ներս մտավ յուր սենյակն ու հանգիստ քուն մտավ։

1 Ծեծիր։ 2 Իրավունք, արդարություն։ 3 Հիմար։ 4 Ջուտ։ 5 Ջառամյալ, 6 Ճաշակ։ 7 Խելապակաս։

Ա.

Մեր վիպասանության առաջին գլուխներից ընթերցողին հայտնի է Մարգարի առաքելության արդյունքը. մենք գիտենք, թե խեղճն ի՛նչ մուրազով, ի՛նչ հույսերով գնաց, ի՛նչ վտանգներից ազատվեցավ, ինչպե՛ս հաջողեցրեց յուր պաշտոնն առանց ընդդիմության և ինչպե՛ս քաղցած ստորով ավետիքը Սաքոյին հասցրեց։

Եթե ոչ ոք չի մոռացել, Սաքոն մի քանի փիլիսոփայություններ անելով, ինչպես ասում են, Մարգարի գլխատակը փափուկ բարձ դրեց և մոտավ յուր ներսի՝ ուրիշների համար անմատչելի սենյակն, ուր մեր ծանոթ Մահմատ-Հասան՝ ահռելի, աշխարհքը սասանեցնող ավազակապետն էր յուր մարդակեր ընկերներով։

Արենարքուների այսօրվան այցելության պատճառը մենք գիտենք. նոքա կոչված էին Մովրովից կողոպտելու Թալին գյուղի մոտով անցնող տաճկաստանցի վաճառականներին. և Մովրովի հետ իրենց կողոպուտը բաժանելու, գոնե Սաքոն այսպես բացատրեց Մարգարին։

— Մեր աղե՛ք, իգիթնե՛ր, էսքան ժամանակ է մենք եղբայրներ ենք, իրար ճանաչում ենք,— խոսք բացեց Սաքոն պարսիկների հետ,— բայց դուք մինչև այսօր առանց ձեր սեփական օգուտը միջիցը հանելու՝ բացառապես ինձ ոչինչ բանում պետք չեք եկել. հիմի հասել է օրը, որ դուք մի փոքր նեղություն քաշեք ինձ համար. հույս ունիմ, որ խնդիրս ուրախությամբ կկատարեք։ Իրա՛վ է, մի քիչ դժվար գործ է, կարելի է արյուն թափելու կարիք էլ պատահի, բայց ձեր պես քաջերի համար դրանից հեշտ ի՞նչ կա[1]։

— Աղա-Սաքո՛,— պատասխանեց Մահմատ-Հասանը,— քեզ պես հավատարիմ եղբոր համար ոչ թե ուրիշի արյունը՝ մերն էլ ուրախությամբ մատաղ կտանք, էնքան լինի, որ տեղին ու գործին ծանոթ լինենք, մի քանի անգամ մեզանից մինը կամ երկուսը գնան աչք ածեն, ամեն դռներն իմանան, որ վերջը մենք քեզ մոտ ամոթով չմնանք։

— Շատ շնորհակալ եմ ձեր եղբայրությունից, բայց էս գործը շատ հետաձգել չի կարելի. այս գիշեր այն վաճառականների հետ հաշիվներդ վերջացրե՛ք, էգուց գիշեր մի ուղեցույց պատրաստ կլինի, նա ձեզ կառաջնորդե՝ ուր հարկն է, իսկ մինչև այդ ժամանակը ես ամեն՝ բան կարգի կբերեմ։

— Ուրեմն դու մեզ հետ չպե՞տք է լինես։

1 Ինչպես այս գլխում, նույնպես և ամեն տեղ օտար լեզվով խոսակցությունները մենք գրել ենք գրական բարբառով։

— Ո՞չ, իմ ներկայությունս կարող է ձեզ արգելք լինել. օրինքի առաջին գործին ուրիշ ձև տալու համար ինձ հարկավոր է հեռու քաշվիլ, բայց, իհարկե, ես մոտիկ տեղում ձեզ սպասելուս կլինեմ։ Եթե այսպես չանենք, ես էլ, դուք էլ ու մովրովն էլ կարող ենք կորչիլ։

— Հետո մեզ առաջնորդողն աչքաբացի մե՞կն է, չի՞ շփոթվիլ ու գործին վնասիլ. գիտե՞ս՝ էսպես տեղերում քնքուշ պահած-մեծացրածներն իշի նման են, որ դայլին տեսնելուս զռում ու վազում են նրա հետ կատակներ անելու։

— Միամիտ կացե՛ք, ձեզ այնպիսի ընկեր տամ, որ մոր ծիծ կտրող լինի. իրավ է՝ ձեր կիսի չափ ույժ, հասկացողություն և փորձառություն չունի, բայց յուր կյանքի կեսը ճանապարհներ կտրելով է պարապել և գլխավորն այս է, որ մինչև օրս ոչ նկատողություն է ենթարկվել և ոչ բռնվել է։ Դեռ նորա կողոպտածները տեղ չեն հասած լինում լուր տալու, նա յուր տանը ամեն բան կարգի դրած և մի կողքին փափուկ բարձի վերա թիկնած է լինում. շատ անգամ ինքն է ձիավորվում յուր կողոպտածներին, իբրև թե, օգնություն հասնելու նպատակով։

— Հա՜, կան էդպիսի երջանիկները,— ա՜խ քաշեց խեղճ Մահմատ-Հասանը,— և այն՝ յուրյանց կյանքը շռայլության և զանազան մոլությանց մեջ անցնող աստիճանավորների ու կալվածատերերի որդիքը. ես գլխավորապես դրանց ոխերիմ թշնամին եմ. գյուղացուն, վաճառականին մենք միայն կողոպտում ենք մեր ապրուստը հոգալու համար, որ այրերի ու քարափների ծերպերի մեջ քաղցած չկոտորվինք, որ մի կտոր ուտելու հաց ունենանք. շատ անգամ պատահում է, որ բոլորովին աղքատ գյուղացիներին օգնում էլ ենք. մեր հափշտակածներիցը բաշխում ենք, իսկ այդ աղազադեքը[1] ձեռներս ընկնելուն պես՝ առաջին գործներս լինում է մաս-մաս անել։

— Ընչի՞, մեղք չե՞ն։

— Չէ, աղա Սաքո՛, դրանց մեջ այնպիսիներն եղել են, որոնց մենք սպանել, սիրտը ճղել ու արյունը տաք-տաք բուռն արել, խմել ենք, բայց էլի, եթե արդարությամբ դատելու լինինք, փոքր է։

— Ինչպե՞ս։

— Մի՞թե քեզ հայտնի չեն այդ բեգզադեքանց արածները, որ էլի հարցնում ես։ Գիտե՞ս, որ դրանք պարապում են միայն բազեներ պահելով և որսի շներ քամակները ձգած՝ ձորերի մեջ քարշ են գալիս։ Ոչ աշխատել գիտեն այդ մարդիկ և ոչ մի օրինավոր գործ ձեռներիցը գալիս է. նրանք միայն վատնում են յուրյանց հայրենական ժառանգությունները և խեղճ գյուղացիների աշխատած՝ արյան քրտինքով վաստակած բերքը տղրկի պես ծծում։ Այս անկանոն կյանքի մեջ, իհարկե՛, որչափ հարստություն էլ լինի, տարվան մինչև կեսը չի բավիլ։ Ի՞նչ պետք է անեն։ Անկարծիք նապաստակի քամակիցն ընկած ժամանակը հրացանաձգության մեջ էլ վարժվել են այնքան, որքան մի մանուկ, որ մի ոտնաչափ տեղ թռչելով, կարծում է, թե մի ահագին վհի գլխով է թռել։

Այդ նշանավոր քաջասրտությամբը նոքա տասը հոգի միացած՝ ոտից մինչև գլուխ զինավառվում են և թագ կենում խոտորնակի ճանապարհների մոտ գտնված խոր ձորերումը։ Հենց որ անզեն գյուղացվույն միամիտ երգելով անցնելուս տեսնում են, հարձակվում են նրա վերա և մորթ-մերկ տկլորում, և ավարն իրանց ծառաների ձեռքով պարտակելուց հետո՝ յուրյանք գալիս են արձակ-համարձակ մերձակա քաղաքումը կամ գյուղումը ման գալիս։

— Այս ամենը, պիտի ասես, մեզ վնաս չէ տալիս, մեղքն իրենց վիզը, մենք ընչի՞ պետք է վշտանանք, այնպես չէ՞, Սաքո՛։ Բայց ոչ, մենք ուրիշ ցավ ունինք, լսի՛ր։

Սովորաբար մի առպատակություն պատահած միջոցն իշխանությունն այդ պարոններին է հրավիրում գողերը գտնելու, որովհետև չի կարելի ասել, թե նաչալնիկները տեղեկություն չունենան դրանց ավազակությունների մասին։ Դրանք էլ ի՞նչ անեն, որ հավանելի լինի.— ամեն իրանց արած ավազակությունները ինձպես նշանավոր մեկի կամ մյուսի վերա են բարդում և ոչ միայն իշխանության արդար բարկությունն են մեր վերա ավելացնում, այլև մեր գլուխը գնահատել տալով՝ անամոթաբար բացարձակապես մեծագումար դազախներ ու ձիավորներ են վերցնում, մեր քամակիցն ընկած ման գալիս։

Դիցուք, որ մենք ավազակ ենք, մի անգամ դուրս ենք ընկել, բայց մի՞թե մենք մարդիկ չենք, մենք արյուն ու մարմին չունինք, մենք կյանքը գնահատել չգիտենք. հո չե՞նք կարող երկու-երեք հոգով այդչափ բազմության դեմ հանդգնել դուրս գալ։ Ստիպված ենք լինում շաբաթներով պաշարներս վերջացած ժամանակն անգամ մեր քարանձավների մեջ տոգորվելու։ Սրբ էլ հնարավորություն չի լինում բնական պահանջին հաղթել, արյուններս աչքի տակ առած՝ դուրս ենք գալիս։ Ի՞նչ ես կարծում, Սաքո ջա՛ն, էդ անպիսանններիցն և ոչ մեկը չի վիրավորվում. հեռվումը կանգնում են ու խեղճ դազախներից շատերին մեր գնդակներին զոհ տալիս և, իհարկի, մեղանից էլ մի երկուսը կյանքը դնում են։

Լա՛վ է, եթե բախտը միշտ հաջողեր մեզ մեր չարաբաստիկ եղբոր դիակն ազատել. շատ անգամ ստիպված ենք լինում մեր գլուխը միայն

[1] Ազատանիք. հեգնական բառ է։

մի հնարքով պրծացնելու։ Մյուս օրը մին էլ լսում ես, որ այդ սնապարծ նապաստակների գովասանքը բերնե-բերան ման է գալիս, իսկ մեր արևազուրկ ընկերի, եղբոր, ազգականների, շատ անգամ և որդվոց դիակը անարգակոծ է լինում ու անպատվում. քանի՜ անգամ աչքովս տեսել եմ դատարկաշրջիկ սրիկաներին մեր նվիրականության երեսին թքելուս և միսս ծամելով հեռացել եմ, և այս ամենն ո՞ւմ շնորհիվ՝ քո գոված աղաղադեքանց։

— Իրա՛վ որ շատ դժվար է, ես գիտեի դրանց ավազակ լինելը և գող բռնելու պաշտոնները, բայց այդքան ցածրություն և երկչոտություն չէի կարող երևակայել դրանց մեջ,— տեղի տվեց Սաքոն ոգևորված Մահմատ-Հասանին։

— Է՜հ, ո՜ր մինն ասեմ, աղա Սաքո՛, քեզ լավ հայտնի է մեր վերջին սև օրը. մտածի՛ր, տե՛ս, թե ի՞նչ է եռում մեր ամեն մեկի սրտումն, երբ մենք կախաղանի սանդխտի գլխից, վիզներս սապնած օղակի մեջ անցնելու րոպեին՝ աչքերիս են ընկնում այդպիսի դավաճան, անաստված անխղճմտանքները։

— Ա՜խ, բե՛գ,— գլուխը բարձրացրեց ու խոսեց ավազակներից մեկը, որ մինչև հիմի լռել ու իրան իրավունք չէր համարում ընդհատել յուր մեծավորի խոսակցության թելը,— ա՜խ, բե՛գ,— ասաց սա Մահմատ-Հասանին,— միայն նրա՞նք են մեր թշնամիները. ում համար որ սուր ենք քաշում, տեղն եկած միջոցը նրանք են ամենից առաջ մեզ ուրանում և արդարության ձեռքը տալիս։ Ուրիշները թողած, խոստովանք լինի, մեր գողակից և կողոպուտների մեծ բաժինը վայելող մովրովները քանի՞ անգամ իրանք մեզ զրկել են ասպատակության, և երբ բռնվել ենք, փոխանակ մեզ ազատելու, Սիբիր են քշել տվել կամ կախաղանի վերա բարձրացրել։

— Հա՛, միտքս է Ահմատը,— ասաց Սաքոն։

— Է, ի՞նչ հետևանք ունեցան Ահմատի խոսքերը. միտքդ է՞, աղա Սաքո՛, ի՞նչ ասաց։ Խեղճը թույլտվություն խնդրեց երկու խոսք ասել՝ հետո խեղդվել։ Ոչ ոք չէր մտածում, թե ի՞նչ պետք է խոսեր, ապա թե ոչ՝ ե՞րբ կթողային։— Այստեղ հարկավոր էր շինել ոչ մեկ, այլ երեք կախաղան,— ասաց Ահմատը կախաղանի գլխից,— մեջտեղը մեր մովրովի համար, աջակողմը՝ յուր օգնականի, իսկ ձախակողմն ինձ համար։ Մենք երեքս ընկեր ենք եղել ամեն հափշտակությանց մեջ, և դրանք ինձանից շատ ավելի են վերցրել։ Այս էլ իմացե՛ք— շարունակեց Ահմատը,— որ թեպետ ես շատ մարդասպանություններ և հափշտակություններ արել եմ, ես արժանի եմ այս պատժին, թեպետ արդարությունն իմ 12 հանցանքներից միայն ինն է հաշվել, բայց այս հանցանքի համար, որի մեջ իզուր տեղը ձգել է ինձ մեր մովրովը, ես բոլորովին արդար եմ։

— Բանն այս է, որ այն երկու պարոնն էլ, որոնց վերա մատնացույց եղավ Ահմատը, ներկա էին պատժելու տեղը և լսում էին,— ասաց մի երրորդ ավազակ,— և նրանք չամաչեցին բարձր-բարձր ծիծաղել։

— Ամա՛ն, Սաքո ջա՛ն, սրա խոսեցածը մեր ներկա մովրով աղին չվերաբերես, մենք սրանից հոգով շնորհակալ ենք, սա ուրիշների պես չէ,— մեջ մտավ բազմափորձ Մահմատ-Հասանը։

— Զարմանալի խոսքեր ես ասում, բե՛գ, մի՞թե դու ինձ նոր պիտի ճանաչես,— յուր հավատարմությունը հաստատեց Սաքոն։

— Այս ամենը թողունք և քո գործքի վերա խոսենք, Սաքո աղա՛,— սկսավ Մահմատ-Հասանը,— ո՞վ է այդ անպիտան կալվածատերը, որ պետք է մեզ առաջնորդ և ընկեր լինի, գուցե մենք նրա դեմ հին ոխ ունենանք և իմ աչքին երևալուց առաջ, իմ քաջ ընկերներիս սրին մատաղ լինի։

— Մաշադի Մահմադ-Բաղրը բեգն է,— պատասխանեց Սաքոն։

— Վնաս չունի, նա դեռ երեկվա երեխան է, նրա սրտումը դեռ օձեր չեն բնակալիլ, նրա արածները մանկական շարություններ են, մենք նրան թույլ անգամ չենք տալ, որ մոտենա վտանգի տեղին, այնքան՝ որ մուտքը մեզ ցույց տա։ Հիմա մեզ ասա, թե մենք ո՞ւր պետք է գնանք և ի՞նչ պիտի անենք, ո՞ւմ պետք է էն աշխարհքը ղրկենք և ո՞ւմ խնայենք։

— Եթե կարող եք՝ ոչ մեկի արյան տակը մի՛ մտնեք։ Գործն էլ այս է, որ գուք պետք է փախցնեք աշտարակեցի խեչանենց խեչանի աղջկանը. խնդրեմ մի հատ կապեկի ակնկալություն չունենաք և բավականանաք աղջկանը փախցնելով և ինձ հասցնելով։

— Մեր աչքի՛, մեր գլխի՛ վերա։

— Մուտքը ձեզ Մահմատ-Բաղրը ցույց կտա, իսկ տունը գլուտեսի մի կին, որը բոլոր անելիքը կասի ձեզ Մահմատ-Բաղրին։

— Հիմա այնպես իմացի՛ր, Սաքո աղա՛, որ աղջիկը կոզքիդ նստած ա։

— Ուրեմն այս գիշերվա գործն հաջողությամբ ավարտելուց հետո՝ էգուց գիշեր ես հույս կունենամ իմ սրտի սիրեկանին՝ իմ ազնիվ ախպեր Մահմատ-Հասանի գավակիցն ստանալ Երևան՝ Նորքա ձորակի գլխի պատշգամբավոր տան դուռն առաջին։ Ես ձեզ կդիմավորեմ Աշտարակու կամրջի մյուս երեսին, և մենք մինչև Նորք միասին կերթանք, լավ կլինի՞, թե ոչ։

— Զույգ աչքի՛ս վերա։

— Էսօր ձեր ընթրիքն և ճանապարհի պաշարը շուտ պատրաստ կլի-

նի, մի ժամից կբերեմ և ինքս կգնամ այս գործը հոգալու։ Մաշադի Մահ-մատ-Բազերը ձեզ կսպասի Աշտարակա այգիների վերջումը՝ Օշականա առվի վերա։

Այս խոսքերից մի ժամ հետո Սաքոն հիշեցրեց կրկին թուրքերին յուրյանց խոստումն և ձին նստավ, աճապարեց դեպի Արագած լեռան ստորոտի գյուղերից մեկը։

ԼԱ

ՔՈՒՅՐ ԵՎ ԵՂԲԱՅՐ

— Գնացե՛ք ասացեք՝ պսակը մնաց,— ապսպրեցին տերտերն ու տանուտերը յասավուլ Մարգարին ճանապարհ դնելուց հետո։

Պսակը մնա՞ց, պսակը խափանվե՞ց, շատ հեշտ բան է բերանով ասելը. հարսանիքի կես ծեսը կատարված, կոչնականները տունը լիքը, նորահարսնության հալավն օրհնած՝ հագցրած, ձեռք-ձեռքի տալու պատրաստ, ու պսակը մնա՞ց, այն էլ ո՞ւմ պսակը. գավառի մեջ ամենից հարուստ և ամենից պատկառելի մարդու միանուագար դստեր, մի ահագին հարբստության օրինավոր ժառանգի, այն նվիրականության, որ բոլոր որդեսեր ծնողների իդեալն էր։ Ամենքի հույսն ի դերև ելավ, ամենքն էլ ձեռք վերցրին, ամենքն էլ երանի տվին Ծվիկենց Աղաջանի որդուն, և ահա եկել էր ժամը, երբ պիտի նա տեր դառնար այն մեծ կարողության, որի նկարագիրը տասնյակ տարիներ շարունակ աչքի առաջն էր, ահա այդ ամենը գործակալի մի կտոր թղթով խափանվեցավ, ցրվեցավ, քամուն տրվեցավ այնպիսի մեծ շինվածքն, և շուտով նրա փոշին ամբողջ Երևանու նահանգը բռնելու է։

Պսակը խափանվե՞ց, ի՞նչ հեշտ տանելու բան է մի ջերմեռանդ քրիստոնյա հայի համար, որի եկեղեցական սրբազան կանոնները պսակն յուր խորհուրդների, յուր հավատո էական մասների կարգումն է դրել, որի ազգային նվիրական ավանդությունների մեջ պսակը մարդուս կյանքի ամենից երջանիկ օրն է համարվել և հիմա մի այսպիսի տան մեջ երկու խոսքով հրաման է գալիս, թե պսակը մնաց։

Ամբողջ տունը, բոլոր հյուրերը, որ նշանակում է ողջ Աշտարակը, ջուր մաղվեցավ, ուրախությունն ընդհանուր տխրության և շփոթի փոխվեցավ. դեռ, իհարկե, առաջին անգամը շատ մութն և անհասկանալի թվեցան այս երկու բոթալից խոսքերը, բայց հետզհետե նշանակության մեծությունն ու ահավորությունն ամենքին զգալի եղավ, ամենքը քստմնեցան, ամենքը ապշած ու սառած՝ իրար երեսի նայել սկսան։ Մի քանի բոպե բոլոր տունը լռության մեջ ընկավ, կարծես ոչ ոք չլիներ, կարծես հարսանիքատուն չէր, բայց հետո ցնորքն անցավ, խսկությունն ահռելի եղավ և ամենքն իրար դիպան։

Գուժատու լուրը դեռ նորահարսի սենյակը չէր անց կացել, ջահելները հարսին զարդարած՝ պատրաստ սպասում էին դրսի ձայնին, որ հանեն ձեռք-ձեռքի տալու, և ահա հանկարծ անհեռատես պառավներից մեկը գլխին տալով ներս ընկավ.

— Վա՜յ գլխիս, իմ ախպոր տունը քանդվե՞ց, քանդվի՞ ու քարատակվի՞ գործակալի հոր օջախը։

Այս ճիչն արձակելով պառավ Մարիամը՝ Հերիքնազի մայրը ներս ընկավ ջահելների սենյակը, գրկեց, կրծքի մեջ սեղմեց խեղճ Հեղնարի գլուխն ու կոծում էր։

— Ա՜յ պառավ, հերիք ա, բա՜ց թող էդ անբախտ երեխին, իր ցավն իրան բավական ա, սև կոսպանդ[1] կապի՞ դրա բախտին քար քցողը, սնապսակ ըլի՞ դրա պսակը խափանողը,— մոտեցավ մի ուրիշ կին և ուզեցավ հեռացնել Մարիամին։

Թշվառ Հեղնարը հիմա հասկացավ յուր գլխի եկած փորձանքը. նա պարզ իմացավ, որ իր պսակն արգելվել է և այս բանի վերա մի երկու բոպե յուր մտքի մեջ խորասուզվեց։ Մեղ քաջ հայտնի է, որ Հեղնարը սրտով չէր ամուսնանում Սմբատի հետ, հոր կամքից չդուրս գալն և Հերիքնազի շարունակ քարոզները՝ մի քանի հարակից հանգամանքների հետ, նրան ստիպել էին մտնել այդ լծի տակ. մենք չենք մոռացել նրա խոսքերը. «պտի ճակատիս գրածին հնազանդիմ, համա էդ զոռով արջին կալ լծելու պես բան ա»։ Ահա դեպքն ինքն իրան այնպես է բերել, որ Հեղնարն ազատվում է յուր տված խոստմունքից, ուրեմն պետք է ուրախ լիներ. իր սրտի ուզածը-կատարվում է և ինքը չի մեղավորը։ Այս էր նորա մտածմանց մեջ ընկնելու պատճառը։

Ինչպես ասացի, շատ երկարատև չեղավ Հեղնարի մտածմունքը. ընդամենն երկու բոպե էր, և ինչ մեծ փոփոխություն. այն աղջիկը, որ համոզված էր, թե ինքը բռնությամբ է ամուսնանում յուր չսիրած մարդու հետ, հիմի բոլորովին նոր մարդ վերածնեցավ. նա այդ բոպեից սիրեց Սմբատին, սիրեց այնպես, որ երբեք չի սիրել ոչ ոք նրանից ավելի։ Այնքան մեծ եղավ այս սերը, այնքան ահավոր եղավ յուր սիրեկանից զրկվելու հարվածը, որ երբ յուր հորաքույր Մարիամը կորզեց, դեն ձգեց յուր գլխից հարսնության քողը, ինքն էլ մի սուր ճիչ արձակեց ու թուլացավ, գետին ընկավ։

---

[1] Նորափեսայության նշան։

Ահա Հեղնարի դրությունը։

Դառնանք այժմ այդ սենեկի մյուս անկյունը։ Մի քանի նորատի աղջիկներ՝ ժողոված մի դալկացած օրիորդի գլխի, ջուր են սրսկում նորա երեսին և աշխատում են հրահանի պողովատիկը խցկել նորա կցված ատամների մեջ. երբեմն աղջիկը բանում է յուր թարշամած աչքերը, դարձնում դեպի գետնին տարածված նորահարսն և կրկին թուլանում, դարձյալ հրահանի բանատեղ լինում։ Թվի թե ամենքը տան գլխավորներից մոռացել են սրան և միայն ընկերուհիքն են խնամ տանում։

Մենք, կարծեմ, ճանաչեցինք սրան. սա ողորմելի Հերիքնազն էր։

Մի քանի վայրկենի մեջ զարդարված նորահարսին մերկացրին և յուր ամենօրյա զգեստը հագցրին, կամ լավ ես ասել, փաթաթեցին մեջը, որովհետև անհնար էր անշունչ դիակի նման աղջկանը շոր հագցնել։

Մենք միտք չենք բերում և ուրիշ գլխավոր գործող անձինքներին։

Նորափեսայի բարեկամները, նրա հայրը որքան և աշխատեցին առնել յուրյանց որդուն և դառնալ, Սմբատն յուր հորն անգամ չլսեց։

— Գնացե՛ք, ամենքդ էլ հեռացե՛ք էստեղից,— գոչեց նա,— հարսանիքը վերջացավ, ես ընչանք օրս էս տան փեսան չէ՝ որդին եմ էլել, էլի էն եմ. ինձ հետ ի՞նչ ունիք, էս իմ տունն ա։

Սմբատը մտավ ներսի սենյակը, նրա աչքին ընկավ գետնին տարածված Հեղնարը։ Մոտ վազեց նա, ետ մղեց պառավներին, գրկեց աղջիկան և համբուրեց մի քանի անգամ նորա ճակատը, որ դուցե կյանքի մեջ առաջինն էր։

Հակառակեց, ասեցինք, Սմբատը յուր ծնողին, որի խոսքից մինչև հիմա չէր դուրս եկել, խեչանի որդի՛ն համարեց ինքն իրան, նրա տան անդամը, վստահացավ ներս մտնել այն սենյակը, ուր արական սեռից, բացի եղբորից և ծնողից, ոչ ոք իրավունք չուներ ոտք դնելու, և ի՞նչ եք կարծում՝ նա բոպեական ոգևորության զորությա՞մբն արեց այս ամենը։— Օչ, նա գույժը լսելուն պես ուշքը հավաքեց, խորհեց, կշռեց և վճռեց։

— Հեղնար ջա՛ն, մինչև հիմի էմ նշանածս, ըստուց ետը իմ հալալ քիրս Հեղնա՛ր,— ձայն տվեց Սմբատը,— աչքերդ բաց արա՛, տես՝ ում գրկումն ես, դարդ մի՛ անիլ, ազիզ քիր ջա՛ն, ստված իրանց հե՛տ, մեր թշնամիքը դրանով վնաս չեն կարող տալ. թե ընչանք էսօր նշանած ունեիր, հիմի աստված քեզ ախպեր տվեց. Սմբատն էսօրվանից քո ախպերն ա, քո ախպերը, որ իր քվոր պատիվը, ամոթն իր գլխիցն ավելի կպահի. աչքերդ բաց արա՛, հոգի ջա՛ն, իմ քիր ջա՛ն։

Այս անգամի համբուրի հետ Հեղնարն աչքերը բաց արեց և Սմբատի երեսին նայեց։

— Սմբատ ջա՛ն, իմ պահապան հրեշտակը դա՞ռ, ինձանից մի՛ հեռանալ,— թոթովեց Հեղնարն և նորից աչքերը փակեց։

— Քեզ մոտ եմ, մաամա՛ղ, Սմբատն էլ քեզ չի թողալ։

— Հերիքնա՛զս, ո՞ւր ա Հերիքնա՛զս,— աչքերը բացեց Հեղնարը,— Սմբատ ջա՛ն, Հերիքնազիս գտի՞ր, նրան ձեռքից մի՛ թողալ, շո՛ւտ վեր դիր ինձ, նրան գտի՞ր, նրան մոտս բե՛ր։

Հերիքնա՛զ.— Սմբատի միտքն եկավ այս անունն և սարսեց. այն բազուկները, որ մինչև ցայժմ այնքան հերոսությամբ գրկել էին Հեղնարին՝ թուլացան, մազ մնաց՝ վայր էր ձգում կյանքի բերած աղջկանը, բայց այդ իսկ բոպեին՝ հագուստը գրեթե թաց միացավ դրանց Հերիքնազն և երկուսին միասին գրկախառնեց։

— Ի՞նչ մենծ ուրախություն ինձ համար, Սմբատ ջա՛ն, որ քսենց քեզ տեսնում եմ, ի՞նչ բախտավոր քենի եմ. էլ ես դարդ չունիմ, էսօրվան անբախտությունը հիմի ոչինչ ա ինձ համար, սրանից ավելի ի՞նչ եմ ուզում, ես երբ որ տեսնում եմ քեզ իմ սիրեկան քվորը տեր դառած՝ թագավորի պես գլխին կանգած։ Նանի ջան, էլ լաց մի՛ ըլիլ, ա՛յ թանկագին ղոնաղներ[1], խնդրում եմ, գնացե՛ք հիմի ձեր տները, մենք հարսանիքը պրծանք, տեսնո՞ւմ եք, մեր փեսեն մեր գրկին ա, թողե՛ք մեզ ու հեռացե՛ք, երբ որ էլի համեցեքավոր կունենանք՝ ձեզ ամենքիդ էլ կկանչենք։

Բոլոր կանայքը շփոթված՝ շշկլված նայում էին և ոչ ոք չէր շարժվում։

— Բաշխեցեք համարձակությանս,— շարունակեց Հերիքնազը,— ինձ չի վայելիլ իմ մոր ու մենծերի առաջին ըսենց խոսալ, համա լեզուս ի՞նչ մեղավոր ա, սիրտս ա խոսում, դուք հենց գիտեք, թե ես խելքս կորցրել եմ, բայց չէ, Հեղնարիս ու Սմբատիս՝ իմ ազիզ քվոր ու ախպոր արևը վկա՛, որ սրտով ուրախացել եմ. էն վախտը, մեր գլխին դահր[2] կըլներ, թե որ Սմբատիս սիրտը կոտրվեր, թողար ու հեռանար. ի՞նչ ա էլել, փա՛ռք աստծու, մեր շարակամներն էսօր խափանեցին հարսանիքը, մի շաբթից հետո էլի կանենք։

— Խնամի Աղաջա՛ն,— մոտ եկավ խեչանը,— ի՞նչ ես հրեխի պես աղլուխն[3] աչքերիդ դրել լաց ըլում, հոգս մի՛ քաշիլ, հույսդ առաջ աստծու, նրա ողորմությունովն էլ ինձ վրա դի՛ր, իմ ունեցած կարողությունս բոլորը կմսխեմ ու իմ ուխտը չեմ քանդիլ։ Տեսա՞ր քյալաշ[4] որդուդ՝ իմ քաղցր փեսին,— ո՞ւր ա.— նա գնաց իր պարտքը կատարի, գնաց իր նըշանածին ու քվորը մխիթարի. տղամարդը նրա պես կըլնի. մենք հալիվորներս նրանից պտի օրինակ առնենք. դու հենց էսօր կտեսնիս, որ ես

1 Հյուրեր։ 2 Պատուհաս։ 3 Թաշկինակ։ 4 Կորիճ։

իմ կաշումը կենալ չեմ, ես աշխարհքին շանց կտամ, թե Խեչանենց Խեչանը, որ ընչանք օրս ոչ մի գործի չի խառնվել, իր կյանքի մեջ դատավորի դուռ չի գնացել, կարող ա իր տան պատիվը հաստատ պահել։ Ո՞ւր կորան, ընչի՞ մկան նման գլխներն առան, ծակը մտան տերտերն ու տանուտերը՝ մեր աղա խեչախպերը, թե որ նրանք ինձանից տատի[1] կացան, ես իրանց կդտնեմ, էս անբախտությունի վատճառը կիմանամ, հետո կտեսնենք։

— Ես շատ լավ գիտեմ,— կրակված խոսում էր Խեչանը,— թե էս բանի հետը[2] որտեղի՞ց ա, նա իմ ձեռիցս չի փախչի, օ՛, օ՛, օ՛, նա շատ մարդի տուն ա քանդել, բայց իմ տունս չեն կմնա ու նա իր մուրազին չի հասնիլ։

Այս խոսքերից հետո տանուտերն ու տերտերը ներս մտան։

— Բարո՞վ հազար բարի՞,— առաջ գնաց Խեչանը,— լա՛վ որ գլուխ չառաք, գեղիցը փախաք, երեսներիդ փարդա[3] քաշեցեք, որ էսքան մարդկանց մոտ անպատիվ չըլնիք. տո՛, քանց թե գզրին ու ժամհարին էիք ղրկում, դուք չէիք կարող գա՞լ. ոնց որ իմ ուրախությունին մասնակից էիք, իմ տխրությունին էլ հընկեր կդառնայիք։

— Համբերի՛, Խեչա՛ն, որդյա՛կ, աստված սրտիդ համբերություն տա՛, աստված մարդիս միշտ փորձում ա, մի օր էլ ետ ինքը խնամք կանի, մեր սիրտն ա նեղ, թե չէ աստծու սիրտը շատ լեն ա ու ողորմությունի դարգյահը[4] բաց։

— Ծառա ե՛մ աստծուն, տերտե՛ր, ես անբավական չեմ, ես ձեզանից մենակ էս եմ խնդրում, որ էն հրամանաթղթերն էսքան խալխի միջին կարդաք. տեսնենք ի՞նչ պատճառով եփած կրակի վրա սառը ջուր լցրին։

Դերձիկ Ստեփանի որդին, որ արդեն ներկա էր, կրկին առաջ կոչվեցավ, կրկին հրամանաթղթերը կարդաց։

Մովրովի հրամանն ավելի հասկանալի աշխարհաբառ էր գրած. այնտեղ պատվիրած էր տանուտերին, որ եթե տերտերը չհարգե գործակալի հրամանը, ինքը յասավուլի օգնականությամբն եկեղեցու դուռը փակի և պսակը խափանի։

— Յասավուլ Մարգարի անումը գործակալի հրամանի միջին ի՞նչ բան ունի, տիրացո՛ւ, ես չհասկացա, ինձ մի գլխի քցի՛,— հարցրեց Խեչանը դերձիկի տղին։

— Ուղիղն ասեմ, ես էլ չեմ հասկանում, և կարծեմ գրողն ինքն էլ յուր գրածից ոչինչ չի հասկացել. մեր գործակալը հայերեն այնքան գիտի, որքան ես ֆարսի լեզուն. բայց որքան և նկատում եմ, կարծեմ ուզեցել է ասել՝ թե ի պատիվ Մովրովի և յասավուլ Մարգարի, ես հրամայում եմ պսակը քանդել։

— Սո՛ւտ ա, սո՛ւտ, տանուտե՛ր, կարկատովի՛ ա, թաղա սիպտակ կարկատան ա՝ հին սև շորի վրա, քոռ աչքն էլ կչոկի, ես շատ լավ գիտեմ, թե էս բանի հոտը որտեղի՞ց ա գալիս. ընենց չի՞, տանուտեր Սիմո՛ն, մի՞տդ ա մեդալի թուղթը։

— Խեչան ջա՛ն, իմ որդկերանց արևը վկա՝ ես բանից խաբար չէի, ախպե՛ր, մարդիս էլմը-ֆելմը[1], ադամորդու սատանությունն ո՛վ կիմանա, ես դրուստն ասեմ, յասավուլ Մարգարի խոսքիցն էնպես էր դուս գալիս, որ ինքն ա քո աղջիկն ուզում. մովրովն էլ, սաքի թե, իր խաթեր գործակալից պսակը քանդելու հրաման ա խնդրել ու ընչանք իր անումն էլ հրամանի մեջը գրել ա տվել։ Ես էլ դրա համար շատ խնդրեցի, աղանչաքարի, խոսք տվի, որ իր համար սիրտն ուզած տեղիցն աղջիկ ուզեմ, քեզանից էլ մի քանի շահի առնեմ իրան սեցնեմ՝ վերկենա, կորչի. չելա՛վ, ու չելա՛վ. մին էլ սկսեց վրես բարկանալ, թե ես մովրովի հրամանը ոտի տակ եմ տալիս։ Ընչանք հաթաթա[2] էլ տվեց, թե ժամումն էլ ըլին, կես կարգն էլ կատարած ըլներ, զամշու տակը կքցեր ամենքին ու դուս կաներ։ Տերտե՛ր, դու ըլիս քո անտոնական կարգը, խոսքումս սուտ կա՞։

— Ո՛չ, իմ կարգը վկա, իմ պաշտում-պատարագը վկա. իմ օծումը գիտենա՛, տանուտերի խոսքերը՝ ո՛նց որ ավետարանի կողքին գրած։ Ես էլ շատ խնդրեցի յասավուլին, շատ էլ դարդ արի, բայց ի՞նչ կանես, որդի՛ս, իշխանություն ա, գործակալ ա, կարա՞ս չլսել. էգուց թվանքչին կգա, միրուքս չղրեխի[3] մեջ կքցի ու քաշ տալով կտանի ծակը կոխի. էն վախտն ի՞նչ կանեմ, որդի՛ս, մի տուն լիքը մանր որբ թոռների տեր եմ, քեզ հայտնի չի՞, որ նրանց ճանգն ընկնողը հեշտ ու հանգիստ պրծնիլ չի։

Խեչանը տերտերի խոսքի շարունակությանն ականջ չկախելով՝ դուրս թռավ, բայց պերճախոս տեր հայրն ուշք էլ չդարձրեց այդ բանին, բավական էր, որ ամենը լռությամբ լսում էին։ Նա, որքան լեզվումը ճարտարություն ուներ, հաստատեց յուր անմեղությունը, խստացնելով յուր իշխանավորների անողոք և քարասիրտ բնավորությունները։

Ամեն ոք տանուտերին ու տերտերին իրավունք տվին, տերտերին ավելի արդարացրին, հաստատելով, որ պատասխանատվությունից աղատվելը նրան ավելի դժվար է և մեծամեծ ծախքերի կարոտ։

Հասարակ գյուղացիները շատ լավ ճանաչում է յուր թե՛ հոգևոր և թե՛ մարմնավոր կառավարիչներին. նրա ցույց տված սերն ու հարգանքը

1 Թաքվեցին։ 2 Սկիզբը։ 3 Վարագույր։ 4 Դուռը։

1 Հնարագիտություն։ 2 Սպառնալիք։ 3 Բամբակ մաքրելու գործիք։

առ հոգևորականությունը՝ յուր քրիստոնեական ջերմ զգացմունքների արտահայտությունն է, իսկ առ մարմնավոր իշխանությունն՝ յուր հպատակության պարտքը հոժարակամ կատարելը։ Այս պարտավորություններն առավել մեծ սիրով և ավելի ուրախ սրտիվ կկատարե նա, եթե երկու կողմից յուր մերձավոր իշխանավորների քաղցր, մարդասիրական, արդար վարմունքն ու հայրական որդեսիրությունը տեսնի։ Բայց խոր հառաչանքն ելրեք գյուղական ժողովրդի սրտից դարերով չի կարվել։

Այս վշտերն ունենալով յուրյանց սրտումը, հարսնևորներն, ասացի, բոլորն էլ միաբերան արդարացրին տանուտերին ու տերտերին։

— Ինձ տվե՛ք էդ հրամանաթղթերը, տերտե՛ր, տանուտե՛ր,— ձեռքը ձգեց խեչանը դրսից ներս գալով,— ընչանք իրիկուն էշմիածնումն էլ, Երևանումն էլ բանը կբացվի. թող տեսնենք՝ ի՞նչ գտան մովրովն ու գործակալն իմ երեխի պսակի միջին, որ խափանեցին։

— Բաշխի՛, խեչան ջա՛ն, երեխես ուզես՝ քեզ փեշքյաշ, համա ես իմ տունը եսիր[1] չեմ քցիլ, դու գիտես, որ սիբիրական կլնենք,— արդարացավ տանուտերը ձեռքը բացասաբար շարժելով։

— Դու ի՞նչ ես ասում, տերտե՛ր, դու էլ չես տալի՞ս։

— Աստված մի՛ արասցե, ա՛յ որդի, Դավիթ մարգարեն ասում ա իր Գործք առաքելոցի 117 գլխումը, թե զի ով հակառակ կա իշխանության, խածեսցե զնա զօձն անապատի։ Գիտե՞ս ինչ ասիլ ա.— ով որ, ասում ա, իշխանության հրամանաթուղթն ուրիշի ձեռքը քցի, խածեսցե՝ էս շատ խրթին գրաբառ ա. էնպես չի՞, ա՛յ ձվից դեռ գլուխը չհանած՝ գործակալին չհավանող տիրացո՛ւ,— ժողովրդի մոտ դերձիկ Ստեփանի որդու գիտությունն արհամարհելով՝ ծաղրեց տերտերը։

— Ի՞սկ էդպես է, խածեսցե շատ թունդ գրաբառ ա, ես չեմ հասկանում,— քամահրելով պատասխանեց պատանին։

— Ապրի՛ս, որ պակասությունդ ճանաչում ես. հա՛, խածեսցե՝ ասիլ ա կկծի նրան անապատի օձը, որ հրեայքը, այսինքն Քրիստոսին թշնամի ջհուդները շինել էին պղնձից ու փետի վրա քաշ արել Մովսես մարգարեի հրամանովը. ով որ Քրիստոսին հավատում էր, ծառա եմ իրան, խաչապաշտ էր դառնում, նրան էդ օձը չէր դիպչում, բայց ով որ կռապաշտ էր մնում, կամ թե Մահմատին, Ալլուն էր հավատում, նրա երեսին թքելուն պես՝ ուռչում, բազմությունի միջին տրաքվում էր։

— Երկար քարոզների ժամանակ չէ, տերտե՛ր, ըտոնք հիմի զղումս[2] չեն նստում. դու կարճ ասա՛, հրամանը տալիս ե՞ս թե չէ,— նեղացած հարցրեց խեչանը։

1 Գերի։ 2 Ուղեղ։

— Տաթևացին ասել ա՝ ոչ տեսանես զե՞... զի՞... պը՞... տո՞ս։

— Որ ըտենց ա, իմ աղիզ զոնաղնե՛րս[1], թողություն արեք, ամենքդ ձեր տները գնացե՛ք, իմ տունը դաբդաղեցե՛ք, ես գործ ունիմ,— շեշտեց խեչանը։

Ծառան ներս եկավ և հայտնեց, որ ձին արդեն պատրաստ է։

— Մնաք բարո՛վ, ես ճամփա ունիմ էսօր կտրելու, ոնց որ խընդրեցի, գնացեք ձեր բանին,— ասաց ու դուրս գնաց խեչանը։

— Աստված սիրողը բանի՛ դրան,— շտապեց տանուտերը,— կերթա պուխն ավելի մեծ փորձանքի մեջ կքցի։

Բարեկամները քամակիցը դուրս վազեցին և ձի նստելու ժամանակ առաջը կտրեցին։

— Խեչա՛ն, ա՛յ, խեչան, մեր խաթեր դեռ շտապիլ մի՛, դեռ մի քանի օր համբերե՛նք, տեսնենք՝ գլխներդ ի՞նչ ա գալիս։

Խեչանը լսել անգամ չէր կամենում. նա ուզում էր որպես և ինչ այսօր բանը տեղ հասցնել։

— Խեչա՛ն,— վերջապես դուրս եկան տերտերն ու տանուտերը,— մի շաբաթ համբերի՛ր, թե որ մի տեղից ձենը դուրս չգա, մենք երկու հրամանն էլ քեզ տանք, գնա՛, որտեղ հարկավորն ա, խնդրքով տո՛ւր. մենք էլ գեղահավան՝ տունը մի մարդ վեր կենանք, գանք քո թասիրը քաշենք[2]։ Էս անպատվությունը մենակ քոնը չի, սաղ գեղինն ա. էսօր քեզ արին, էգուց էլ մեզ կանեն։ Դուք ի՞նչ եք ասում, ա՛յ էլլիկ, համաձայն ե՞ք, թե ոչ։

— Մեր աչքի՛, մեր գլխի՛ վրա։

— Այ այսպեր, երկաթը տաք-տաք կծեծեն, ինձ բանդ մի՛ անեք, թողե՛ք գնամ։

— Չէ՛, խեչա՛ն, ոտդ ձիու օրղանգուին դրիր թե չէ,- աչու աչքիս վերի կոպը խաղաց, շատ վատ եմ փորձել. աբի էսօր սատանի գլուխը տրորի՛, էդ ճամփից ետ կա՛ց,— ասաց տանուտերը։

— Ո՛, օ՛, օ՛, որդի՛, թե որ էդպես ա, ես քեզ չեմ թողալ, որ մի ոտն առաջ դնես. երազահանն էֆեմերդու գրքի միջին ասում ա՝ «եթե աչ աչքի վերի կոպի ներքի տամարն խաղա, ծախարդություն պատահեսցի», էսօր էլ լուսնի 13-ն ա, օրն շար է, գրած ա՝ երազն օրն կատարի։

— Ո՛չ, խեչա՛ն, քեզ հետ մի բեռն աղ ու հաց ենք կերել, ես քեզ չեմ թողալ, որ էն սևագլխների երեսը գնաս. շատ լավ ա ասում մեր տանուտերը. մի շաբաթից հետո, թե որ քո երեխի պսակի հրամանը չեն տալ,

1 Հյուրեր։ 2 Քո կողմը պահենք։

գեղը քեզ համար կանանց ա, մեջք-մեջքի կտաք՝ սարեր շուռ կտաք. էնպես չի՞, իմ սիրելի ժողովո՛ւրդ։

— Ըտենց ա, աչիդ մատա՛ղ, քո կարգը մեզ խռով կենա, թե որ մենք խեչանի համար մի շաբթից հետո ընչանք Դաղստան էլ ըլնի՝ չգընանք։

— Աստված օրհնեսցե՛, որդի՛ք, ես էլ ձեզ օրհնող կըլնիմ։

— Թող ձեր խոսքն ըլի՛, ես լավ գործին հակառակ չեմ կենալ։ Դեհ, խնամի Աղաջա՛ն,— ձայն տվեց Խեչանն,— ուրախացի՛ր, էս սհաթս մարդ ղրկի՛, թող պսակաճաշը պատրաստեն, մեր բարեկամներովը գնանք մի լավ ուրախություն անենք, մնացողն աստծու կամքին թողանք, ընչանք օրը գա՛ բարին հետը։

Աղաջանի տանը պսակաճաշն արդեն պատրաստ էր. կարգն այն էր, որ պսակից դուրս գան ու նորափեսայենց տանը ճաշեն։ Բոլոր բարեկամներով մինչև երեկո մեծ հացկերույթ արին։

Խեչանի տանը մնացին միայն չորս հոգի՝ Մարիամը, Հեղնարը, Հերիքնազը և ինքը նորափեսա Սմբատը, որ ոչինչ բանով չհամաձայնեցավ աղջիկներին թողուլ։

— Հերիքնա՛զ ջան, էսօր ինձ աստված՝ ախպեր տվեց,— կրկնում էր հաճախակի Հեղնարը։

— Մի ախպեր, որ իր գլուխը քեզ համար մահի կտա, որ աչքը քո աչք ունքին պտի ունենա, կրակի մեջն էլ ղրկես՝ գնա, քարափովն էլ քցես՝ վազեվազ ներքև ընկնի,— պատասխանում էր Սմբատը։

— Էդպես խոսքերով իմ սիրտս արին եք կաթացնում, ջիգյարիս մեջ շամփուր եք ցցում,— ձեռքը մեկի և մյուսի բերանին սղմում էր Հերիքնազը.— թե որ դուք էսօր ձեր թշնամիների փորած հորի մեջն ընկաք, ես հույս ունիմ, որ շատ չի քաշիլ, ձեր ճամփի քար քցողի աչքը դուս կգա, դուք ձեր բախտին կտիրանաք, ես էլ իմ մուրազին կհասնեմ։

Սմբատի և Հեղնարի համար ամենաերջանիկ օրն էր այսօր, իսկ Հերիքնազը հոգվով տրտում էր. նս յուր սերն սպանեց յուր սրտումը, յուր ներքին ձայնին հակառակեց, տարիներով աշխատեց, որ իր քեռու սիրտն ուրախացնի, իսկ այսօր մի րոպեի մեջ բոլոր աշխատությունը ջուր կտրվեցավ։

Իսկ ի՞նչ էր անում պառավ Մարիամը— ոչինչ, նա մի անկյունում նստել՝ առանց արտասուք թափելու լալիս էր։

ԼԹ

ՄԱՐԴԱՍՊԱՆ ԱՂՋԻԿ

Աշտարակ գյուղի հյուսիսային ափումը՝ Թորոսենց կոչված կալի մոտ՝ գտնվում էր մի լայն բակ, որի արևելյան կողմումը մի մեծ սրահի տակ կարգով ընկած էին մի հացատուն երեք-չորս սենյակներով։

Բակի դուռն ուղիղ բացվում էր կալի վերա և նայում էր Մողնու Թառ անվանված բարձրավանդակին, ուր ի հնուց մի քանի գերեզմանների թվում մինչև այսօր էլ կան երեք թե չորս խաչարձաններ։

Լուսինն այս գիշեր երեկվան նման շատ չէր փայլում, երկինքն ամպոտ էր, բայց ոչ շատ մթնագիշեր. աշտարակցիք վաղուց հանգիստ քնոտած էին, ամեն բան խաղաղ էր։

Խաչարձանների քամակին յափունջում կոլոլված՝ ոտից գլուխ զրահավորված՝ հինգ ձիավոր սպասում էին։

Փոքր միջոցից հետո դրանց մոտեցավ և մի ուրիշ ձիավոր. նա գյուղի կողմից էր գալիս. մթնումը մենք նրա երեսը չենք տեսնում, բայց նրան ճանաչողը կասեր մեզ, որ նա մի դեռահաս, գեղեցկադեմ, բարձրահասակ պարսիկ բէգզադա էր։

— Ժամանա՞կն է, բե՛գ,— հարցրեց նորեկին սպասող ձիավորներից մեկը, որի հրամայական ձևերից, թվի թե, մյուսների վերա գերազանցություն ուներ, կամ նրանց գլխավորն էր։

— Ո՛չ, աղա՛, դեռ շուտ է. թեպետ փողոցներումը ոչ ոք չկա, տատմեր պառավն էլ ասում էր, որ փեսան այս գիշեր շատ վաղ է գնացել, հայրն և հորաքույրը կես ժամից ավել է քնած են, բայց դեռ երկու աղջիկները արթուն են յուրյանց փոքր սենեկի մեջ։ Տատմոր ասելովն աղջիկներն հենց հիմի իրան ճանապարհ են դրել ու անկողինները փռել։ Շատ խորամանկն է այն տատմերը, Խեչանը տուն չի թողնելուս եղել, բայց ոնց որ եղել՝ մտել է, աղջիկների թույլ կողմը գտել ու ամեն տեղեկություն, ինչ որ մեզ կարևոր է, մի առ մի հարցրել։ Մեր փախցնելու աղջիկը պառկած կլինի այն կողմը, ուր մենք պատը պիտի ծակենք։ Մակելու տեղը շատ բարակ է, ներսից մի խուվ պատուհան է, որի մեջ այժմ ոչինչ չկա դրած։ Մի փոքր էլ սպասենք, աղջիկները խոր քնի մեջ մտնեն և ապա գործը սկսենք, դժվարությունի չենք հանդիպիլ, այսօր ցորեկով ես քանդելու տեղը լավ զննեցի. մի քար կա, լինկը տակը տալու պես դուրս կգա, և ահա՛ մուտքը բաց է մեզ համար։

Աղջիկներն անկողին մտնելուց հետո շատ ժամանակ չքնեցին, նրանք

յուրյանց տան գլխին եկած փորձանքի վերա խոր հառաչանքներ քաշելով, միմյանց մխիթարում էին։

— Հեղնար ջա՛ն, թրխկոց չես լսո՞ւմ, հենց իմանաս մեր պատը քամակից քանդում են,— փսփսաց Հերիքնազն յուր ընկերուհու ականջին։

— Հա՜, Հերիքնազ ջա՛ն, պատը քանդում են, ես վախո՞ւմ եմ, գողեր կլինի՞ն։

— Մի՛ վախի, մատա՛ղ, վերկաց մինթանեդ[1] շլինքդ քցի, գնանք քեռուն զարթնացնենք։

— Ոտներս բռնվո՞ւմ են... Հերիքնազ ջա՛ն... ծնկներս ծալվո՞ւմ են... ես չե՞մ կարողանում վեր կենալ,— հազիվ ատամները միմյանց խփելով՝ արտասանեց Հեղնարն այս մի քանի բառն և մնաց տեղումն ընկած։

Մինչ այս, մինչ այն, Հերիքնազը մթության մեջ նշմարեց պատուհանից ներս թափանցած խավար լուսո շառավիղը, տունը ցրտեց և մի մարդու ներս սողալու շարժմունքի հետ աղջիկը լսեց հետևյալ խոսքերը.

— Զգույշ եղի՛ր, չշփոթվի՛ս, չմոռանաս, որ դու ասացիր, թե մեր փախցնելու աղջիկը պատի կողմի պառկածն է, շլինի թե մյուսին մոտենաս. հանկարծ գրկի՛ր ու ծակին մուտեցրո՛ւ, մենք ձեռիցդ կառնենք. տե՛ս թաշկինակդ բերանը կոխելը չմոռանաս, որ ձայն չկարողանա հանել։

Ի՞նչ աներ Հերիքնազը, նա ուզեցավ բարձրացնել Հեղնարին, բայց տեսավ, որ խիստ ծանրացել է, թույլ տվեց։ Նա իրան չկորցրեց, նա վեր թռավ տեղիցն և առանց ձայն հանելու վազեց դեպի անկյունը։

Խեչանի տանն ի հնուց անտի մնացել էր մի եռանկյունի սրածայր խիշտ մի հասարակ փայտյա պատենի մեջ։ Այդ խիշտը ջուհարդար[2] էր. չգործածվելուց ժանգոտել և անպետքացել էր։ Տարիներով ոչ ոք ուշք չէր դարձրել այդ խշտի վերա, միայն մի քանի շաբաթ առաջ, դիպվածով, Սմբատի հետաքրքրության առարկա եղավ այդ հազվագյուտ հնությունը և նա շատ դժվարությամբ պատենիցը դուրս հանեց։ Ափսոսալով մի այսպիսի զենքի վերա՝ Սմբատը ջրով սրբեց և յուղեց։ Այնուհետև մի քանի անգամ էլ յուղել էր նա խիշտը, որով ժանգի ներգործած տեղերը սև բծեր միայն մնացին, իսկ պատենի մեջ շատ հեշտությամբ մտնում ելնում էր։

Հերիքնազը վերցրեց այդ խիշտը և մոտեցավ պատուհանին, այժմ

1 Շրջազգեստ։ 2 Թունավոր է. ասում են, որ ջուհարդարի պատճառած՝ վերքն անբուժելի է։

աղաղակ բառնալն ուշ է,— մտածեց նա և առաջին տուն սողացողի ձախ կոնատակիցը ներս խցկեց։

Հերիքնազն՝ այն թույլ աղջիկը, մոռացել էր այդ բոպեին յուր սեռը. նա այնպես հաջողականությամբ կատարեց այդ գործը, որ յուր նպատակին լիովին հասավ. կարծես թե յուր կյանքի մեջ նա միշտ սրի հետ է խաղացել, թշնամյաց դեմ մի քանի անգամ յուր գլուխն է պաշտպանել և մարդուս մարմնո ամենավտանգավոր ու երկյուղալի մասի հետ քաջ ծանոթ է. կոխեց նա խիշտը ներս մտնողի ձախ կոնատակն և մի երկու անգամ ոլորեց։

— Օգնեցե՛ք,— հազիվ ճիչ արձակեց գողը,— ես սպանվեցի՛։— Նա խոխոռոցն ընկավ, նա էլ ոչ մի խոսք չկարողացավ խոսել։

— Մաշադի՛, Մահմատ-Բաղրը բե՛գ, ի՞նչ եղավ, ի՞նչ պատահեց,— դրսիցը ձայն տվին մյուսները, բայց պատասխանը Բաղրը բեգի խոխոռոցը միայն եղավ։ Նրա ընկերները ձեռք տվին նրա ոտքերին և գտան մահվան բոպեի գողման մեջ. մի փոքր միջոցից ամեն բան վերջացավ. նա էլ չէր շարժվում։

— Օգնեցե՛ք, գողեր են եկել։— ձայն տվեց Հերիքնազը յուր գործը վերջացնելուց հետո և վազեց մյուս սենյակը, զարթնացրեց քեռուն և մորը, որոնք քնաթաթախ միայն անկապ բառեր և ճիչ էին արձակում։

— Մի՛ շփոթվիք, ճրագ չվառե՛ք, նոքարներին[1] զարթնացրե՛ք,— տնօրինեց անահ աղջիկն և ինքը կրկին խիշտը ձեռքին դուրս թռավ յուրյանց սենյակը։ Նա պատուհանի բացվածքովն այս խոսքերը լսեց.

— Տղե՛ք, մեզ չհաջողեց, այսուհետև դեմ դնելն ավելորդ է. մեր միտքը գողություն, կողոպտել չի. իզուր տեղը գուցե մի երկուսի արյունն էլ կթափվի, ահա բակի մեջ ծառաներ։ Ձայնն էլ բարձրացավ. ոտքերի տրտփյուններ եմ լսում, հեռանալը խոհեմություն է. ձիանքդ նստեցե՛ք՝ քաշվինք։

— Իսկ այս խեղճի մարմինը կվայելի՞ այստեղ ձգել ու երթալ, աղա՛,— հարցրեց ընկերներից մինը խոսողին։

— Դա մեր ընկերը չէ, դրան ո՞վ խնդրեց առաջ ընկնել, իրան պաշտոնն էր միայն ճանապարհները մեզ ցույց տալ, ես քանի անգամ ստիպեցի թույլ տալ մեզ գործել, ականջ չարեց, ուզեցավ մեզ զարմացնել յուր քաջությամբն և՝ ահա պատիժն առավ։ Դե՛հ, տղե՛ք, մի նստեցե՛ք, աղաղակը մեծացավ։

Եվ արդարև, Խեչանի գոյուն-գոչյունը զարթնացրել էր գոմումը քնած ծառաներին, որոնք դուրս գալով բակը՝ օգնություն էին կանչում։

1 Ծառաներին։

— Հիմի ճրագ վառի՛, նանի՛, աստված մեզ աղատեց, գողերը փախան, մենակ մինն իր պատիժն առավ,— ձայն տվեց Հերիքնազն ու ներս ընկավ, մոր ձեռքիցը խլեց հրահանի պողովատիկը և ճրագը վառեց։ Մոր ձեռքերը դողում էին։

Սարսափելի էր տեսարանը. Հեղնարը համարյա՛ անշունչ ընկած է անկողնումը. մի երկայն դիակ էլ տարածված է պատի մեջ, մարմնո կեսը ներսը սենեկի մեջն է՝ գլուխը պատուհանից վայր կախված, իսկ ոտքերը դուրսը. կողքից բխած արյունը սենեկի մեջ լերդացել է։

Հարևանները բոլոր զարթնեցան, փողոցը, կտրները, բաղն և բակը մարդկանցով լցվեցան, դռները բացվեցան և բազմությունը տուն թափվեցավ։

— Մահմատ-Բաղրը բե՞գը, մաշադի Մահմադ-Բաղրը՞,— զարմացմամբ ճանաչեցին ամենքը սպանված երիտասարդին.— էս ի՞նչ բան ա։

— Ես սպանեցի,— օրիորդական ամոթխածությամբ գլուխը կորցրած՝ պատասխանեց Հերիքնազը,— դա մենակ չէր, մի քանի հոգի էին. ոնց որ խոսում էին՝ եկել էին Հեղնարին փախցնելու։

Հերիքնազը պինդ բռնած ուներ ձեռքին եռանկյունի սրածայր արյունոտ խիշտն և ամենքին ցույց էր տալիս։

— Վա՛յ, նանի ջա՛ն, էս ի՞նչ ա,— ճչաց նոր ուշաբերած Հեղնարը, երբ որ ճրագի լուսով տեսավ պատուհանումը ձգված դիակը և արյունը։

Հեղնարը կրկին ուշաթափվեցավ։

Խեղճ Խեչանն այս տեսարանները չկարողացավ տանել, սրտաբեկ, ծնկակոտոր վայր ընկավ մի տեղ և լաց եղավ։

— Ափսո՞ս իմ Մահմատ-Բաղրը, դու չպետք է սպանվեիր, քեզ գըլխահան անողը պետք է էդ պատժին գար,— հաճախ կրկնում էր Խեչանը։

— Ի սե՞ր աստծու, աղջկանս օգնեցե՞ք, Հեղնարիս ետ բերե՞ք, ինձանում ջան չմնա՞ց, էս երկօրն իրար վրա իմ գլխին պատուհա՞ս ա գալիս, աստծուն փա՞ռք, ի՞նչ կարամ անիլ, հալբաթ մեղավոր եմ,— կոծում էր ծերունին։

Հերիքնազը յուր մոր և ուրիշ կանանց հետ թեպետ ուշաբերին Հեղնարին, բայց նա խիստ թույլ էր, հարկավոր էր անկողին դնել նրան։

Այդ միջոցումը լերդապատառ տուն ընկավ Սմբատը. նա շատ ուշ էր իմացել, նրանց տունը հեռու էր։

— Լաց ըլնելու ժամանակ չի, Սմբա՛տ ջան,— կտմաց մրմնջաց Հերիքնազը,— արի Հեղնարին գրկի՛, տանենք հացատանը թեք քցենք։

Ամբողջ կիշերը Հեղնարը դառանցում էր, ցնորքի մեջ էր։ Սմբատն ու Հերիքնազը ոտքերի մոտ էին նստած, իսկ ուժահատ ծերունի հայրն ու Մարիամը ձեռքները ծնոտին՝ գլխավերևը։

— Էս մեյիդն[1] էսպես մնա՞, ոչով ձեռը չտա,— տնօրինեց տանուտերը,— տղե՞ք, ձիավորվեցե՞ք, մի երկուսը ձեզանից ինձ հետ գան՝ գնանք մովրովին իմաց տանք, մնացածներն էլ բաժին-բաժին էլե՞ք, ամեն ճամփով էլ գնացեք գողերի քամակիցը։ Ձեզ մատա՞ղ, ջահելնե՞ր, բան ա՝ թե որ պատահիք, աշխատեցե՞ք, ինչպես ըլի՝ սաղ բռնել, մինին էլ որ ձեռք քցեք, հերիք ա, թե չէ, երբ որ տեսաք ճար չկա, ձեր գլուխը պտի կորչի, տեսաք՝ որ նեղն եք ընկնում՝ գյուլլա բանեցրե՞ք, հո՛ դիտե՞ք՝ ի՞նչ օրերի ենք հասել, մովրովի հրամանն ա, որ գողը գալիս ա քեզ սպանի՝ դու իրան մի՛ սպանիլ, աշխատի սաղ բռնես, հենց իմանաս գառն ա, կամ թե չէ՝ նոր ոտն էլած հավի ճուտ։

Այս արկածը պատահեցավ Սաքոյի Մահմատ-Հասանի հետ խոսեցած երկրորդ գիշերը։

Մյուս օրն առավոտյան լույսը նոր բացվում էր, որ մովրովը մի գրագրով, յուր թարգմանովն և մի քանի յասավուլներով տանուտերի հետ Աշտարակ մտավ։

— Աղա ջա՛ն, ինչ կուզի ըլնի, էլ խեչանին ձեռաց չթողաս, մեղքը բոլոր նրա շլինքը քցի ու կռները կապած հետդ բեր. հազիվ ինքն իրան մեր ճանգն ընկավ,— ասաց մովրովին Սաքոն, երբ տանուտերի բերած համբավը մտավ հաղորդելու։

Ընթերցողն իհարկե գիտե, որ Սաքոյին հայտնի էին այս գիշերվան հանգամանքները։ Նա Աշտարակի ձորի կամրջի մյուս երեսին սպասում էր Մահմատ-Հասանին և նորա ընկերացը։ Գործի անհաջող ելքը լսելով Մահմատ-Հասանի բերանից, բաժանվեցավ նրանցից և ծռվեց դեպի Սև ջրի գլուխը։

ԼԳ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

— «Բոլոր մեղքը Խեչանի շլինքը քցի՛, կռները կապած հետդ բե՛ր, հազիվ ինքն իրան մեր ճանգն ընկավ»։

Այս տրամադրությամբը մովրովն Աշտարակ մտավ։ Որսն յուր ճանկն էր ընկել, բաց թողալն անխելքություն էր։ Սաքոն այստեղ յուր հաշիվն ուներ, իսկ կարճատես մովրովը չկարողացավ թափանցել յուր հավա-

[1] Դիակ։

տարմի գաղտնիքների մեջ. կույր զկուրայն նրա տված կանոններին հետևեց։

Ի՞նչ առավոտ էր, որ այսօր բացվեցավ Աշտարակումը, ի՞նչ սարսափելի ու քստմնեցուցիչ տեսարան էր։ Ոչ միայն աշտարակեցիք՝ նոր ոտքի ելած երեխաներից մինչև ծերերը, մերձակա գյուղերն ևս հայ և պարսիկ ամենքն, ամենքը դեպի Աշտարակ էին վազում։ Վատ համբավը շուտ տեղ կհասնի, ասում է առածը, իսկ այս տխուր դեպքից մեծ ի՞նչ վատ համբավ։ Խեչանի պատը ծակել են, աղջիկն ուզեցել են փախցնել և մի ուրիշ թույլ ու անզոր աղջիկ, մի ակար արարած, Մահմատ-Բաղրի նման կտրիճ տղամարդին սպանել է։ Երկու տունն էլ նշանավոր. մինը՝ գավառի ամենից հարուստը, մյուսը՝ քաջատոհմ բեգզադա, հոր մինուճար, մի մեծ գյուղի կալվածատեր, մի տան ճրագ. իսկ այդ երկու տներն երկար տարիներ է խոնախա[1] են իրար հետ, տես ու ճանաչ են։ Մահմատ-Բաղրը տարվան մեծ մասն Աշտարակ էր անցկացնում և յուր իջևանն էր Խեչանի տունը։

Ահա բուն պատճառը, որ Սաքոն անմիտ երիտասարդին իրեն գործիք ընտրեց։

Մահմատ-Բաղրը դավաճանեց աղ ու հացի ու բարեկամության դեմն և պատիժն առավ։ Նա պարսիկ էր և օրենքով հայի հացի պռունգ չպետք է կտրեր, յուր ծանոթի տանը պիտի բավականանար խաշած ձվով հյուրասիրվելով, բայց Մահմատ-Բաղրը նոր երիտասարդ, յուր նմանների պես չէր պահում այդ կանոնը. Խեչանի տանը նա ուտում էր, ինչ որ յուր առաջը բերում էին և ամենափառավոր կերպիվ վայելում էր Խեչանի գովական գինին ու արաղը։ Մահմատ-Բաղրը զոհ գնաց Սաքոյի շահերին, իսկ ինքն՝ այսքան թշվառությանց պատճառը՝ մի կորկի շափ ցավ չզգաց, չզղջաց յուր շարագործության վերա։ Նա մի բանի համար միայն խիստ ցավեցավ. նրա ծրագիրը ոչնչացավ, ինքը հավիտյանս զրկվեցավ Խեչանի հարստությունից. նա մի բանի համար միայն երկմտեցավ և դորա առաջն առնելն էր յուր ճիգը։ Հանգամանքն այնպես բերեց, որ կարելի էր հետևցնել, թե Խեչանը կարող էր գուշակել յուր անբախտությունների բուն պատճառը. առանց Խեչանի ցանկության ինքը Սաքոն մեդալի էր ներկայացրել նրան, մի քանի օր առաջ էլ խնամախոս էր խրկել և ահա այս ամենից հետ՝ հանկարծ Խեչանի աղջկա պսակը խափանվում է և տանը մարդասպանություն է պատահում։

— Սրա առաջը պտի առնել, թե չէ իմ գլուխն էլ զնդանի տակ կմշտանի ու մովրովինն էլ,— մտածեց Սաքոն և հնարքը գտավ։ Երկյուղը մենակ Խեչանիցն ա, թե որ նա բռնվի, փակի տակ դրվի, էլ ո՞վ պտի գլուխ ցավացնի, բանը կքնի ու կփտի, համ մենք ապահով կըլնինք, համ էլ մեջը մենծ օգուտ կքաղենք։

Այս ընթացքովը Սաքոն պատրաստեց մովրովին և Աշտարակ ուղարկեց։

— Այստեղ դավաճանություն կա, բոլորը հնարովի խոսքեր են, ի՞նչ աղջիկ փախցնել, ի՞նչ աղջիկ մարդասպան, այս տղամարդի գործ է և հին ատելության ու վրեժխնդրության հետևանք,— գուշեց մովրովը դիակը զննելուց հետո,— պատը գիտությամբ է քանդած և խեղճ երիտասարդին բռնությամբ կամ խաբեությամբ ներս է մտցրած. ես իսկույն հանցավորը կգտնեմ և նրա չարագործության արժանի պատիժը կտամ։

Մովրովը Խեչանի սենեկներից մեկում ատյան նստեց և ծառաներից սկսավ հարցմունքի սկիզբը դնել։

Եղելությունը ոչ ոք չէր իմանում բացի Հերիքնազից, որին մովրովը մոտ անգամ չէր ուզում թողնել։

— Քո ույժդ ու բազկիդ զորությունը ի՞նչ է, որ դու այդպիսի երկայն խիշտը կարողանաս ձեռքումդ շարժել և հաջողությամբ սրտի մեջ ցցել։ Այդ հին փտած հնարքներ են՝ գլխավոր մարդասպանին աչքից փախցնելու համար,— բարկացմամբ խոսում էր մովրովը,— կամ թե պարսիկը հայի աղջկանն ընչի՞ պետք է փախցներ, ի՞նչ հաշիվ ուներ. քրիստոնյան մահմետականի կին չի կարող դառնալ, և ինչպես դու ինքդ քո բերանով վկայում ես, սրա մյուս ընկերներն էլ պարսիկ են եղել։

— Ես ինչ որ լսել եմ, ինչ որ արել եմ, էն եմ ասում, սուտ խոսելու կարիք չունիմ, հիմիկից ետը կամքը քո հրամանոցն ա,— պատասխանեց Հերիքնազը և մովրովի ձեռքով նշան տալու վերա հեռացավ։

— Առաջ արի՛, աղա Խեչա՛ն,— հեգնաբար հրամայեց մովրովը,— ի՞նչ ես գլուխդ կախել, սուտ տրտմություն երեսիդ կիտել. քեզ պես ծեր աղվեսների շատ եմ հանդիպել, իմ ձեռքիցս չես կարող փախս տալ։ Ես վաղուց գուշակում էի, որ դու ճգնավորի հագուստով սատանա-պետք է լինեիր, վաղուց քո հետքը դիտում էի, բայց չէի կարողանում բռնել քեզ, սատանա էիր և սատանաների ամենից խելացին ու ճարպիկը. գառնազգեստ գա՛յլ դու, գավառի բարերարն էիր հանդիսանում, առանց տոկոսի փող էիր պարտք տալիս, աղքատների ու անկարողների հարկերն էիր վճարում, ամենքի աչքերն էլ հող ու մոխիր էիր փչում ու ռամիկ ժողովրդի գովասանքն ու համակրությունը գրավում. նշանակում է, որ դու վաղուց մտքումդ դրել էիր ես խեղճ բեգզադայի արևը մթացնելու և վերջը ժողովրդի միջնորդությունովը ու վկայությունովը արդարության ձեռքից դուրս պրծնելու։ Չէ՛, չէ, Խեչա՛ն, քո դիմացիդ մարդը նա չէ՛,

[1] Խանութ, բարեկամ։

որին դու ջուրը քաշես. լավն այն է, քանի քեզ շատ չեմ ստիպել, ուրիշ օրինավոր միջոցներ ձեռք չեմ առել, պարզը խոստովանիս ու պրծնիս. էս ամենը քո արածներն են, քո դողդողացող ձեռքերն են, որ գիշերվան մթության մեջ շատ առույգությամբ բռնել են խշտի դաստակը և ողորմելի Գրիտասարդին քո ոխակալությանդ զոհ արել։

— Լավ միտք արա՛, աղա մովրո՛վ, թե ի՞նչ ես խոսում. Խեչանենց Խեչանի ազգը պապե-պապ մի ճանճ էլ չի սպանել, մրջիմը չի կիչորել, ու հիմի ես քո ասելովը պտի 20, 30 տարվեն մեր ու Մահմատ-Բաղրբենց տան աղ ու հացին խային[1] մտիկ տայի. ես էդ խեղճի հոր հետ ախպոր պես եմ էլել, իրան որդուս պես եմ ընդունել, ի՞նչ քեն ունեի դրա դեմը, որ բերում էի իմ տանը սրտիս մուրը հանեմ, էն էլ ի՛մ տանը. թե որ ես մարդ սպանել ուզեի, ուրիշ տեղ չկա՞ր։ Իմ քվոր աղջիկը եղելությունը քեզ տեղնուտեղը պատմեց ու պրծավ։ Դու հենց իմանում ես, թե ես որ զարթուն ընեի, էս անբախտությունն իմ տանը կպատահե՞ր, բայց ջահել անփորձ աղջիկ՝ ինչ որ խելքին փչել ա, էն ա արել։ Ես չգիտեմ, էս ի՞նչ աստծու բարկություն ա, երկնային թագավորն իմ ո՞ր մեղքն ա երեսովս տալիս, հալբաթ մեղավոր եմ, որ 100 տարիքով չլսված բանն իմ տանը տեսնվեց. երեկ մինուճար աղջկանս պսակը ձեռ-ձեռի տալու տեղը խափանվեց, էսօր էլ աղջկանս քամակիցն ընկնողներն էս խեղճ ջահել-ջիվան բեգի արյունը մտան ու իրանց մուրազին էլ չկարողացան հասնի։

— Լավ որ դու ես ասում, թե աստված քո մեղքն ա երեսովդ տալիս. շար մարդը միշտ կպատժվի. մենք դատավորներս աստծու արդար աչն ենք, որ քեզ պես չարագործներին պատուհասում ենք։

— Ես շատ լավ գիտեմ, մովրով աղա՛, թե փորձանքների ծերն ո՞ւմ տակին ա. գործակալն ի՞նչ իրավունք ուներ իր տված հրամանը քանդելու, ի՞նչ չհասություն կա մեջը՝ որ գրում ա, ի՞նչ կապ ուներ յասավուլի, կամ թե քո անումն իմ որդու պսակի հետ. քո հրամանն ի՞նչ գործ ուներ եկեղեցական կարգերի մեջը. դու մարմնավոր դատավոր ես, հոգևոր դատավոր հո չե՞ս, դրա համար կանսիստոր կա, էջմիածին կա։ Թե որ երեկ մեր գեղացիք ինձ թողային կաթողիկոսի ու նալալնիկի մոտ գնալու, հիմի ամեն բան հայելու պես պարզ կերևար. բայց արևը վատ տեղ մեր մտավ։ Վնաս չունի, դու դեռ քո քննությունդ պրծի գնա՛, էջմիածինը հեռու չի, մնացողն իմ գործն ա։

— Զայնդ կտրի՛, շնծե՛ր, դեռ սպառնալիք է՞լ ես տալիս, ի՞նձ ես ուզում քո չարագործությունների մեջ խառնել. դու կարծում ես, որ այ-

[1] Նենգորեն։

սուհետև լույս արևը պիտի տեսնես, որ մարդու երես գնաս,— բարկացավ մովրովն ու տեղիցը վեր թռավ, մի այնպիսի խիստ ապտակ տվեց խեղճ Խեչանին, որ նա շարժվեց ու վայր ընկավ։

— Տանուտե՛ր,— հրամայեց մովրովը,— իսկույն այստեղ կանչել տուր քահանային, թող բերի յուր հետ գործակալի հրամանը, իսկ դու տո՛ւր իմ գրած հրամանաթուղթը։

Տանուտերը հանեց ծոցից մովրովի գրածն և տվեց իրեն։

— Այս մեկ, Խեչան աղա՛, քո փաստերից մեկը ոչնչացա՛վ,— հեգնելով պատառոտեց մովրովը յուր գրած գիրը և վառարանի մեջը ձգեց։

— Այս էլ քեզ երկրո՛ղը, սրանից էլ ձեռքերդ լվա՛, գործակալն էլ ազատվեցավ պատասխանատվությունից։— Տերտերի հրամանաթուղթն էլ, ձեռքիցն առնելով՝ կրակի մեջ ձգեց մովրովը։

— Ա՛յ աղա, իմ վկան էլ, իմ տերն էլ նա ա,— պատասխանեց Խեչանը երկինքը մատնացույց անելով,— նա ամեն բան տեսնում ա։

— Այդ թողանք, Խեչա՛ն,— շատ ուշ ձեռք առավ անփորձ մովրովը խորամանկությունը,— օրենք է, դատավորը կսպառնա էլ, կսիրի էլ. ես փորձելու համար քո վերա բարկացա, ես գիտեմ, որ իմ գավառումը քեզ նման առաքինի և բարի մարդ չկա. արի՛, ճշմարիտը խոստովանիր. իմացած կաց, որ ինչքան և մեղավոր լինիս, ես քեզ բոլորովին կարդարացնեմ. ասա՛՝ ընչի՞ համար այս բանը գործեցիր, ի՞նչ ոխ ուներիր պարսկի դեմ և ինչպե՞ս մտածեցիր այդ հնարքը։

— Աղա՛, դու զուր ինձ էդպես հարցմունքներ մի՛ անիլ, ես ուրիշ ասելու բան չունիմ. ես հենց էն ժամանակը վրա հասա, որ քվորս աղջիկը բանը վերջացրել էր. ամեն բան նա ա լսել. ինչ որ քեզ ասեց, մեզ էլ երեկվանից դեսն էն ա ասում։

— Հերիք է, Խեչա՛ն, մեղք է ուրիշներին մեղադրելը. եթե ամանչում ես այսքան մարդկանց մոտ խոստովանելը, ես բոլորին դուրս կհանեմ, ինձ ծածուկ պատմի՛ր, մեր մեջը կմնա։— Այս խոսքերից հետո մովրովը դուրս հանեց բոլորին. նա հասկանում էր թուրքերեն։

Երկար ժամանակ մովրովը Խեչանի հետ փակված մնաց, շատ հորդորներ, քաղցր խաբեական խոսքեր, սպառնալիքներ կարդաց, ծերունու բերանից միայն լսեց ճշմարտությունը։

— Ի՞նչ,— հանկարծ դուրը ետ բանալով գոչեց մովրովը,— դու ի՞նձ ես սպառնում ես սպանելու. իմացի՛ր՝ ո՞ւմ հետ ես խոսում. յասավո՛ւլ, սրա ձեռները կապեցե՛ք, ոտքերը շղթայեցե՛ք. գրագի՛ր, արձանագրի՛ր, որ սա սպառնացավ ինձ ես Մահմատ-Բաղրբի նման սպանել, եթե ես իրան ազատ չթողնեմ. այդ բոլորովին պարզ յուր հանցանքը

խոստովանել կնշանակի, գրի՛ր, թող բոլոր բազմությունն այս խոսքերին վկա դրվին։

— Աղա՛, գլխիդ մատա՛ղ,— տուն մտավ հանկարծ Սմբատը,— ասենք էս բանի մեջ ոչ ես եմ մեղավոր, ոչ էս ողորմելի հալիվորը, բայց ես խնդրում եմ, որ սրան բաց թողաս՝ իմ կոները կապես, ինձ զնջլի[1] մեջ դնես. սա ծեր մարդ ա՝ չի կարող տանիլ, համա ես, փառք աստծու, դեռ կոներումս ուժ ունիմ. խեղճ արի՛ դրան ու իր միանուճար աղջկանը, որ գլխամեռիս նշանածն ա. երեկվանից խեղճ աղջիկը տաքության մեջ ընկած էր. հիմի, երբ որ իր հորաքիրը գոռալով տուն ընկավ, որ դու սրան կապել-չարբանդել ես[2], հիվանդ-հիվանդ տեղիցը վեր թռավ, ուզում էր գա քո ոտքերն ընկնի, ուժահատված տան մեջտեղը փռվեց ու սիրտը գնաց. արի՛, աղա, քո աչքովը տե՛ս ու խեղճ արի՛։

— Դու ո՞վ ես, որ համարձակվում ես իմ դեմս խոսել։

— Ես էս տան անբախտության պատճառն եմ. եթե Խեչանն իր տված խոսքը քանդեր, աղջկանն ուրիշ հարուստ տղի տար, հիմի էս պատուհասն իր տան գլուխը չէր գալ. ոտներիդ մատաղ, աղա՛, ի՞նձ զնջլի դրա տեղակ։

— Կորի՛, աչքիցս հեռացի՛, ես իմ հանցավորին լավ եմ ճանաչում։

— Որ ըտենց ա՝ ես եմ մարդասպանը, ես մի-երկու շաբաթ առաջ իմ ձեռովս խիշտը սրեցի, ես խաբնով Մահմատ-Բաղրը ըստեղ բերի, ես պատն առաջուց քանդեցի ու թուրքին մեջը կոխեցի, իմ ձեռովս էլ սպանեցի. հիմի լսեցի՞ր. դե՛, անմեղ մարդին բաց թո՛ղ ու ինձ բռնի։ Էս խոսքը քեզ մոտ էլ եմ ասում, նաչալնիկի մոտ էլ կասեմ, թող էսքան բազմությունը, հայ ու թուրք լսեն ու վկա ըլնին. հրամայի՛ գրագրիդ՝ ասածներս մի-մին նշանակի, ես էլ տակին ձեռք քաշե՛մ։

— Ա՛յ ջամիհաթ[3], անկաջ դրե՛ք,— դարձավ Սմբատը դեպի բազմությունը,— Մաշադի Մահմատ-Բաղրը բեգին ե՛ս եմ սպանել, իմ բերանովս իմ մեղքս խոստովանում եմ, դուք էլ վկա կացե՛ք։

— Սուտ ես ասում, Սմբա՛տ, հոգուդ մեղք մի՛ անիլ,— ներս ընկավ հանկարծ Հերիքնազը, որ պարապած էր Հեղնարի հետ.— աստծուն էլ հայտնի ա, որ էս թիլիկ-միլիկ ձեռներն են սպանել, թե որ չեք ավատում, ա՛յ, արևի նշանները։ Ե՛ս եմ սպանողը, եթե բռնվել ա՝ ես պտի բռնվիմ, աղա՛, ոտիդ տակին մեռնե՛մ,— չոքեց աղջիկն ու փաթաթվեց

1 Շղթայի։ 2 Կաշկանդել։ 3 Բազմություն։

մորովի ծնկները,— ոչ իմ քեռին ա մեղավոր, ոչ իմ փեսեն. մինն սպանելուց ետն իմացավ, մեկելը խալխիցը շատ ետո հասավ. ես եմ արել, ինձ բռնի՛ր ու ինձ կախ տո՛ւր։ Աստված ինքն էլ իմանում ա, որ իմ սրտումս չարություն չի եղել. ես իմ քեռու աղջկա պատկառանքը պահելու ու մեր գլուխն ազատելու համար եմ արել. ես ոչ իմացել եմ տուն մտնողը Մահմատ-Բաղրը ա, ոչ նրա դեմ մի ոխ եմ ունեցել. թե ես նրան սպանած չըլնեի, հիմի ոչ իմ քեռու աղջիկն ըստեղ կըլներ, ոչ, շատ կարելի ա, մենք սաղ կըլնեինք. ես մթան միջին տեսա հինգ զոռբա[1] ձիավորներին, թե որ նրանք մեր տունը մտնեին, ի՞նչ կըլներ մեր հալը[2]։

— Թողե՛ք, բալեք ջա՛ն, թողե՛ք, մորով աղեն շատ արդար դատավոր ա. ես սրանից շատ շնորհակալ եմ, որ ձեզ մարդատեղ չի քցում, ձեզ մհալ չի գնում[3], ես ծերացել եմ, օրերս անց են կացել, մի ոտս գերեզմանումն ա, ես եմ պատժվելու արժանի,— աղջկա խոսքն ընդհատեց Խեչանը։— Սմբատ ջա՛ն, քեզ եմ հանձնում իմ տունս կառավարելը, դու իմ երկու որբերին հերություն, ախպերություն, տիրություն արա. էլ ըստուց ետը դու ձեր տունը չգնաս, բոլոր իմ ունեցածներս քեզ համար էր ու էսօր էլ տերը դու ես. ես էս բոպեից իմ հայրական օրհնությունը ձեր գլխին եմ թափում. թե որ բան ա, ես էս փորձանքիցն էլ պրծնեմ ոչ, պսակվի՛ քո նշանածի հետ ու քո քեռուն՝ իմ սիրելի Հերիքնազին՝ քո հալալ քվեր պես պահի՛ ու մի լավ տղի տուր, հետն էլ քվեր պես անխնա բաժինք տո՛ւր։

— Ափու ջա՛ն, խոսք մի՛ խառնի, թող մորով աղեն ինձ բռնի։

— Սո՛ւս, էլ իրավունք չունիս խոսելու, ես քեզ հրամայում եմ։ Հերիքնազ ջա՛ն,— դարձավ ապա Խեչանը դեպի յուր քրոջ աղջիկը,— դու քո պարտքդ կատարեցիր, մեր տան ամոթը վերացրիր, աստված քեզ վարձահատույց ըլի՛. վնաս չունի, քեզ մատա՛ղ, ես կպատժվեմ, դու քո քվերդ լավ մտիկ տո՛ւր, միշտ մխիթարի՛ նրան, մորդ սիրտ տո՛ւր. ես գիտեմ՝ ջրատար պառավն էսքան ցավերը չի կարող տանել, շուտով գերեզման կմտնի. դու մի՛ տրտմիր, սիրուն բալե՛ս, Սմբատին ախպոր ու հոր պես ընդունի՛. ես ինքս կերթամ, նեղությունը կքաշեմ ու բանտի միջից էլ աստծուն աղոթք կանեմ, որ ձեր վերջին նեղությունն էս ըլի։

— Չէ՛, չէ՛, դու չես գնալ, ես եմ մարդասպանը, ես պտի պատժվիմ,— առաջ վազեց Սմբատն ու փաթաթվեց ծերունու վիզը։

— Ոչ դու ես, ոչ նա, ե՛ս եմ մարդասպանը, ե՛ս. էսօրվան մարդասպանն աղջիկ ա, թող աղա միրզեն գրի իմ խոսքերը, թող աղա մոր-

1 Հուժկու։ 2 Դրություն։ 3 Բանի տեղ չի գնում։

ռովն ինձ բանտարկի.— Հերիքնազը մոտեցավ ու գրկեց քեռուն ու Սրմ-բատին։

— Ձգրե՛լ ոչ այս ցնդած տղայի և ոչ այս հիմար աղջկա խոսքերը,— բարկացավ մովրովը գրագրի վերա, երբ նա ուզում էր արձանագրել նոցա ասածները.— ես իմ հանցավորին լավ ճանաչեցի, յուր բերանովը խոստովանեց, դրանք իրանց գլխից ձեռք վերցրած անմիտներ են. բայց ես խելք ունիմ, հասկացողություն ունիմ, ես անմեղներին ու ցնորված-ներին պատժելու միտք չունիմ։

— Որտեղի՛ց եկել եք, այնտեղ կորե՛ք, հեռացե՛ք երեսիցս,— հրա-մայեց մովրովն, և յասավուլները աղջկա կոնից քաշելով ետ մղեցին, իսկ Սմբատի վզակոթը տաքացնելով՝ դուրս վռնդեցին։

Բոլոր բազմությունը լուռ էր. շատերը շարժված այս աղիողորմ տե-սարանիցը՝ ծածուկ արտասվում էին. ամենքը պարզ համոզվեցան, որ սպանողը Հերիքնազն է եղել և շատ իրավացի է արել. Մահմատ-Բաղրը բեգի հորեղբոր որդիքը, որոնք նույնպես ներկա էին, իրանք ևս արդա-րացնում էին աղջկանը։

— Տանուտե՛ր, հասարակությո՛ւն,— ի վերջո խոսեցավ մովրովը,— եկե՛ք այս արձանագրության ներքև ամենքդ էլ վկա գրվեցե՛ք. դուք լսե-ցիք, որ Խեչանն իր բերանովը խոստովանեց, թե սպանողն ինքն է և թե հին ոխ է ունեցել Մահմատ-Բաղրի հետ և թե խաբեությամբ յուր տունն է բերել և այս չարագործությունը կատարել։ Ես այս րոպեից սրան բանտարկում եմ. մի քանի ժամանակից սա Երևանի բերդը կեր-թա. մենք սրա գործերը մանրամասն կքննենք, ուր հարկն է՝ կուղար-կենք, իսկ ինքը եթե փաստեր կունենա, թող տեղն արդարանա։

— Աղա՛, գլխիդ մատա՛ղ,— մոտ եկան մի քանի առաջավորներ հայերի և պարսիկների միջից, որոնց հետ էին և սպանվողի ազգակից-քը,— մեզ բաշխի՛ր, բա՛ց այդ ծերունուն. գործիցն երևում է, որ դա անմեղ է և աղջիկն է սպանողը. նա էլ իրավունքով է արել, մեր ամեն մինը նույնը կաներ. երբ պատդ ծակում են ու տունդ մտնում, էլ ուրիշ ի՞նչ կարաս անել. գրի՛ր ինչ որ ճշմարիտ է, մենք ամենքս ուրախու-թյամբ ստորագրենք։

— Կորե՛ք ամենքդ էլ իմ աչքիցը, անպիտանն՛ե՛ր,— բարկացավ մովրովը,— ձեզ ես մարդատեղ եմ դնում, բան ասում, դուք էլ նազ եք անում. ոչ մեկիդ ստորագրությունն ինձ հարկավոր չի՛, ես իմ քննու-թյունը վերջացրի։

Ամենքը ետ քաշվեցան և գլուխը կախեցին։

— Մահմատ-Բաղրի դիակը հանձնում եմ յուր ազգականներին,— տնօրինեց մովրովը,— թող տանեն յուրյանց գյուղումը հողին պահ տան, մինչև որ գավառական բժիշկն Երևանից վերադառնա և գնա վերքը քննի. իսկ դու, Աշտարակու տանուտե՛ր, 10 ղրահակիրներ պատրաստի՛ր, որ այս բանտարկյալին տանեն գյուղե-գյուղ Սև ջրի գլուխը։

Այս անաչառ քննությունն անելուց հետո մովրովը ձի նստավ յուր մարդկանցովն ու վերադարձավ յուր կացարանը։

— Շատ խելոք քննություն ես արել, գլխիդ մատա՛ղ, հիմի ջերիդ բերանն արխային ետ բաց արա՛ ու մի կողմը կանգնի, ուրախ-ուրախ մտիկ տո՛ւր, փառավորվի՛. Խեչանենց Խեչանի փողերը մի-մին ոտնա-վորվելու են ու քո քիսումը բնակալելու։ Ես մոռացա հրամանաթղթերի համար բան ասել, համա քո խելքդ առանց էն էլ ծով ա, ինձանից լավ ես հասկացել ու կրակը քցել, իզուրթոզը[1] ջնջել, որ ըսկի բռնելու տեղ չունենա. ախար ես քո ոտի պճեղի[2] չափ հասկացողություն ընչի՞ կու-նենամ։

Ահա Սաքոյի խրախուսականը, որ կարդաց մովրովի գլխին, երբ նա Աշտարակից վերադառնալով՝ կանչեց և յուր կատարած գործերի հաշիվը տվեց յուր մտերմին։

ԼԴ

ԱՆԱԿՆԿԱԼ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Գիշեր էր, Զեյվա հայաբնակ գյուղումը ոչ մի ճրագ չէր երևում, միայն գյուղի ափին շինած մի հատիկ գեղեցիկ տների սենեկներից մեկի ճրագը դեռ չէր հանգել։

Այս շինությունը մովրովի տներն էր։ Սև ջրի գլխից այժմ Սարդա-բաբադու գավառակապետի կացարանը Զեյվա էր փոխվել. Սև ջրի գլուխն այժմ ամայի էր։

Հիշյալ պատուհանի ճրագն էլ հանգավ և խավարն ամեն տեղ բռնեց։

Մովրովի բակումը մթնի մեջ նրա կացարանից բավական հեռու մի ուրիշ տուն կար։

Վերջին լույսը հանգչելուց փոքր-ինչ հետո՝ մթնումը մի տվեր խարխափելով դիմում էր դեպի այս երկրորդ տունը։ Նա յուր քայլերն զգուշացրեց, երբ մոտեցավ այդ տեղին. նա ոտքի մատների վերա էր

---

1 Հետք։ 2 Կճեպակ։

առաջ գնում։ Մի շատ փոքրիկ վանդակապատ լուսամուտ էր երևում պատի վերա. ստվերը դեպի այդ լուսամուտը առաջացավ և ականջը դեմ տվեց։ Երևի թե նա մի քչքչուն էր լսում, բայց խոսքերը չէր որոշում. շատ անհամբեր շարժմունքներ էր անում և անբավական էր ներսը կատարված իրողությունից։

Ստվերը հեռացավ պատուհանից և չոքչոք դեպի տան դուռը գնաց. այս կերպիվ հաստատապես տեսավ, որ յուր քայլվածքի ձայնը չի վեռելնում։ Դուռը ծածկած էր և ոչ փակած. անծանոթը մեծ զգուշությամբ բանալ սկսավ, այնպես որ դռան ճռռոցը երբեք չբարձրացավ։ Ստվերը շեմքն անց. կացավ և նույն զգուշությամբը առաջ գնաց. նա մոտեցավ մի երկրորդ ծածկած դռան. ականջը դեմ տվեց բանալու ծակին և բերանը բացեց։ Ներսի խոսակցությունն այժմ լսելի էր այստեղ։ Անծանոթը կանգնած տեղը դողում էր, կարծես թե յուր սրտին անախորժ խոսքեր էր լսում։

Թող այս դարանամուտն այստեղ յուր հետաքրքրությունը լցնի, իսկ մենք մտնենք այդ խորհրդավոր բնակարանի ներսը դիտելու։

Գարնան զվարճալի օրերն են. երկիրն յուր ծաղկափթիթ դրության մեջն է. բնությունը ձմեռվան մերկությունից դուրս եկած, զմայլեցնում է յուր փառավորությամբն ամեն մեկին. մարդիկ ազատվել են կրակով յուրյանց անձը տաքացնելու ծանրությունից, իսկ այս տան մեջ մտնողը սաստիկ սառնություն է զգում. մի խոնավ և գարշելի ծանր օդ ցրտության հետ սարսափ է բերում մարդուս վերա։ Եթե գիշերը այս բնակարանի մեջ մտնողը երկբայության մեջ կընկնի այս տան այս ժամանակվան խոնավության մասին, ցորեկն իրան շատ բնական կերևի. տունը նոր է շինած, դեռ պատերը չեն չորացել, իսկ մեջը բնակություն են հաստատել։ Վա՜յ, ուրեմն, այս տան անբախտ բնակողի ոսկրներին։

Դրսից լրտեսելու ժամանակը ներսը մի անկյունում երկու մարդ կամաց խոսում են. նոցանից մինը մի ալեոր ծերունի է, որի ձեռք ու ոտքը շարժելուս շղթայի շառաչյուններ են լսվում, իսկ մյուսը մի առույգ երիտասարդ է։ Միակ փռվածքն և տան բոլոր կահ-կարասիքը մի կիսամաշ եղեգնյա փսիաթ է, որի վերա այժմ նստած են երկու խոսակիցները, իսկ գետնին ծերի կողմը դրած է մի բեբանը կոտրած հին ջրի փարչ։

Երիտասարդը շատ ժամանակ չէ այստեղ է. կես ժամ հազիվ է, որ նա մտավ տուն ու կալանավոր ծերունու ձեռքը համբուրեց։ Նրան ներս բերողը մի թուրք յասավուլ էր, որ գրպանիցը բանալին հանեց, տղայի կոնիցը բռնեց, տուն տարավ՝ ձեռքին մի աղոտ ճրագ բռնած, ներկայացրեց ծերունուն և ինքը կրկին ճրագն առավ դուրս գնաց, պատվիրելով, որ ինչքան կարելի է տեսակցությունները երկար չշարունակեն, ըստ որում իրեն հրամայված է շուտ ճանապարհ ձգել։

Ներն առաջին անգամը ճրագն այստեղ եղած ժամանակը երիտասարդին չճանաչեց. նա յուր սուր հայացքն ուղղեց այս անսովոր տեսարանի վերա և զարմացմամբ նայեցավ. բայց և երիտասարդն ապշած մնաց և մի բոպե կասկած անգամ տարավ։ Սա՞ էր արդյոք, որին ինքն անձկանոք ցանկանում էր տեսնել. երկու-երեք ամսի մեջ այս աստիճան փոփոխություն կարելի՞ էր սպասել։ Մի առույգ և պատկառելի ծերունու փոխարեն երիտասարդը տեսավ մի վտիտ, աչքերը խոր գնացած և սապատողն կմախք։ Ահա ի՞նչ էր նրա կասկածելու պատճառը։

— Ափու ջա՜ն,— վերջապես աչքերի հայացքից ճանաչեց երիտասարդն ու մոտ վազեց կալանավորին,— ափու ջա՜ն, էդ ի՞նչ օրն ես ընկել։

— Սմբատ ջա՜ն, էս դո՞ւ ես, բալա ջա՜ն, քեզ էլ ըստեղ բերին. դե՛ ասա՝ իմ դուռն հավիտյան փակվեց։

— Ափու ջա՜ն...— կամենում էր շարունակել Սմբատը։

— Իմ երեխե՜քս, իմ երեխեքս անտեր մնացին,— կրկնեց ծերունին, որին կարծեմ ճանաչեցիր, ընթերցո՛ղ. սա չարաբաստիկ Խեչանն էր, որ Սմբատին գրկեց և ուշագնաց եղավ։

— Ափու ջա՜ն... վա՜յ գլխիս... ափու ջա՜ն, մի՛ վախիլ, ես դուսաղ[1] չեմ, ես ինքս եմ եկել քեզ տեսնելու, ես քեզ համար շատ բարով եմ բերել Հերիքնազիցն ու Հեղնարիցը։

— Հեղնա՜րս... իմ անբախտ բալե՜ս...— Երկու խոսք՝ և ծերունու գլուխը ծանրացավ Սմբատի ուսի վերա։

— Հեղնարը լավ ա, ափու ջա՜ն. Հեղնարն էլ, Հերիքնազն էլ, Մայրան հոքիրն էլ շատ լավ են ու քո կարոտն են քաշում։

— Հեղնարս լա՞վ ա,— կրկին ուշքի եկավ Խեչանը,— երեխես սա՞ղ ա[2], դարդ չի՞ անում, Հերիքնազս ու Մայրանս առո՞ղջ են, Սմբատ ջան, ասա՛, ասա՛։

— Հա՛, ափու ջա՜ն, ամենքն էլ լավ առողջ են ու քո կարոտն են քաշում. դու էլ, աստծով, շուտ կազատվիս էս տարտարոսիցը. մեր բարեկամը խոսք ա տալիս, նա խոստանում ա իր գլուխը քեզ համար ետ դնել։

— Մեր բարեկա՞մը, Սմբատ ջա՜ն, էդ ի՞նչ բարեկամ ա, որ աշխատում ա մեզ օգնել. մեզ ըտենց բարեկամ չունինք, ամենքն էլ մոռացել են մի անտեր-անտիրական բեխզբալ[3] հալիվորի։

---

1 Կալանավոր։ 2 Ո՞ղջ է։ 3 Անբախտ։

— Չէ՛, ափու ջա՛ն, մենք լավ բարեկամ ունինք. նրա ասելովն երկու շաբաթ չի քաշիլ, դու կազատվիս, մենք էլ կուրախանանք։

— Ո՞վ ա էդ բարեկամը։

— Սաքոն։

— Սաքո՞ն... ի՞նչ Սաքո... շո՛ւտ, շուտ ասա, Սմբատ ջա՛ն։

Ծերունին ամբողջ մարմնով դողում էր, նրա ատամները միմյանց էին առնում։

— Հա՛, Սաքոն, մոլրովի միկիտանը։

— Վա՛յ գլխիս, իմ տո՛ւնը, իմ երեխե՛քը, սո՛ւս կաց, Սմբատ ջան... սո՛ւս... էդ խոսքը մի՛ ասիլ... ձենդ կտրի՛... էդ անումն էլ բերնիցդ չհանես...

Ծերունին դողդողալով ձեռներն ածում էր, նա գտավ Սմբատի բերանն ու այնպես սեղմեց, որ եթե քթածակերը չլինեին, շունչը կկտրվեր։

— Սո՛ւս եմ ասում, Սմբատ ջա՛ն,— կրկնեց նա,— իմ տունը քանդողին, իմ դուռը շարողի՛ն, իմ երեխեքանց անբախտության պատճառո՛ւն, ինձ էս տեղը քցողին բարեկամ մի՛ ասիլ, սո՛ւս... սո՛ւս...

— Ի՞նչ ես ասում, ափու ջա՛ն,— ազատվելով յուր բերանը փակող ձեռքերից, ասաց Սմբատը.— թե որ Սաքոն չլիներ, ինձ ո՞վ կարժանացներ քո տեսությանը. երեք ամիս ա, քանի դու բռնվել ես, էլ մարդ չի մնացել, տանուտերից բռնած՝ ընչանք ջրպետն ու քոմակչին էլ միջնորդ ենք քցել, տանը գինի-արաղ չենք թողել՝ ծախել՝ սրա-նրա փորն ենք ածել, մոլրովի սիրտը չենք կարացել քաղցրացնել. խեղճ Սաքոն էլ, ինչքան լեղու ուներ՝ թափեց, անջախ մոլրովին կոտրեց, կես սհաթով քեզ մոտ գալուս հրամանն առավ. հիմի էլ խոսք ա տալիս քեզ մի երկու շաբաթից ետն ազատել տալ։

— Մի՛ ավատաք, բալե՛ք, միամիտ երեխե՛ք. փորձանքի կես ճամփիցն ետ դառնալը խելոքություն ա։ Սաքոն մտել ա ձեր տամարը[1], որ իմ տունը կարողանա հիմքիցը շուռ տալ. մի՛ ավատաք նրան, տուն չթողա՛ք, ոչինչ սրո[2] չբացանեմ։

— Չէ, ափու ջա՛ն, չէ, Սաքոն լավ մարդ ա, նա շատ սրտացավ ա քեզ համար. քեզ բռնելուց ետը մի շաբաթ չէր անցկացած ըլնիլ, որ ինքն իր ոտովն եկավ գեղը, ինձ կանչել տվեց տանուտերի տունը ու խոստացավ քեզ ազատել տալ։

— Ասել ա, թե հենց էն օրիցը, որ ես իրան իմ երեսը չթողի, իր սատանա լեզվիցը չխարվեցի։ Տեսա՞ր ինչ եկավ իմ գլուխը. ես գիտեի, որ կեղծավոր տակնահան ա, բայց ընչանք էդտեղը միտք չարի։

1 Երակ։ 2 Գաղտնիք։

Խեչանը կարգավ պատմեց Սմբատին մեդալի գործը, տանուտերի խնամախոսությունն և յուր կասկածները, որ ուներ պսակը խափանելու մասին։

— Անպատճա՞ռ էդ փուչ-կենդանու մատը խառն ա ձեր անբախտության ու իմ տան գլխին եկած փորձանքների մեջ, Սմբատ ջա՛ն,— շարունակեց Խեչանը,— իմ սիրտս տուն ա տալիս[1], որ մի խոսքս սուտ չպտի ըլնի. հեռու կացեք էդ մարդիցը, մի՛ խաբվիք նրա շողոմքոր լեզվիցը, նրա լեղվի տակին իժ օձի թույն կա. ասա Հեղնարիս՝ էդ անզգամին երեսը չթողա, դեռ դու էլ վախեցի, մի օր քո գլխին էլ մի օյին չբերի. խեղճ Մահմատ-Բաղրրին միտդ բեր, նա Սաքոյի խաչովը խաչվեց. դրա ձեռներն արնոտ ա, նա ուզում ա ինձ փեսա դառնա, որ իմ մլքերն հափշտակի. ա՛յ, ի՞նչ ա նրա մտքինը, Սմբատ ջա՛ն, բայց քանի ես սաղ եմ, քանի իմ շունչս ղնկիս ծերին ա, նա իմ ապրանքիցը մի չոփ չի կարող դուս տանիլ, փեսես չի՝ թեկուզ ինձանից ծնած զավակս էլ ըլներ. մեռնելուս էլ կտակ կանեմ, որ շան ու գիլի փայ ըլնի՛, վանքական ըլնի՛, ղուրդ ու ղուշն ուտի ու Սաքոյի ձեռը չընկնի։ Ամա՞ն, Սմբատ ջա՛ն, Հեղնարիս մուղայիթ կաց[2], չըլնի՞ թե էդ օձի ճուտի թալաքն[3] ընկնի, թող իմանա, որ իմ սրտիցը դուս եկած անեծքը իր վրա ու իր սերնդի վրա կըլնի։ Ասա՛՝ Սաքոյի միտքը դու չես, նրա աչքն ուռել չէր քեզ ուզելու համար, նրա սրտինն իմ կարողությունն ա, ճանգն ընկավ թե չէ՝ քեզ էլ մի օր կոչնչացնի։ Էս բանումը, Սմբատ ջա՛ն, ես ամենքիցդ ավելի Հերիքնազիս վրա հույս ունիմ. ասա՛ նրան իմ կողմից, աղաչանք արա՛, բերանն, աչքերը պաչ արա՛, ասա՛, որ հոր պես, մոր պես, ախպոր պես պտիտ-պտիտ անի Հեղնարիս գլխովը, չորսաչքանի դառնա, մաղի մեջ պահի իր քեռու աղջկանը ձվից նոր դուս եկած հավի ճուտի պես, թե չէ ուրուրը կտանի. ասա՛՝ էն գիշակեր գազանի սիրտը չար ա իմ տան վրա, ասա՛ Հերիքնազիս, իմ հույսս նա ա, նա իմ տան չորս սինն ա։

— Ես չեմ հասկանում, ափու ջա՛ն, դու էնենց բաներ ասեցիր, որ մազերս բիզ-բիզ էլան,— պատասխանեց Սմբատը շվարած.— էն մարդի լեզվիցը մի օրից մի օր ըտենց խոսք չի դուս թռել, նա ինձ քո բռնված օրից դեսն ախպոր պես սիրում ա. Աշտարակ եկած վախտն ընչանք ինձ չտեսնի, աղջիկներիցդ չհարցնի, քեզանից խաբար չտա, մեզ չսրտավորի, ոտը գեղիցը դուս չի դնիլ։ Պտի պարզն ասեմ, որ մի երկու հետ էլ տուն ա եկել, Հեղնարին սիրտ ա տվել ու գնացել։ Ղորթ ա, Հերիքնազն ըսկի չէր ուզում տուն թողալ, ըսկի երեսը տեսնելը զաբուլ չէր

1 Վկայում է։ 2 Զգույշ պահիր։ 3 Որոգայթ։

անում[1], քեզ պես նա էլ չէր ուզում ավատալ, բայց Մայրան հոքիրն էլ, ես էլ ու Հեղնարն էլ շատ դնամիշ արինք ու կամքն առանք։ Ես բան չեմ ասում, շատ կարելի ա, նա մտքումն ունեցել ա Հեղնարին առնիլ, քեզ լավ հայտնի ա, որ նրա ուզողները շատ էին, համա հիմի մենք Սաքոյի մեջ էդ բանը վարավուրդ չենք անում։

— Սմբատ ջա՛ն, ինձ լսի՛, ես քեզանից ավելի փորձված եմ, ես մարդի աչքերիցը սիրտը կհասկանամ. երեք ամիս ա՝ էդ օձն ամեն հնարք գործ ա դնում, մարդ չի թողնում՝ մեջ ա քցում, աներեսի պես գալիս կողքիս նստում ա քարոզում, որ ես իրան բարեկամ ճանաչեմ, մոտ չեմ թողում, գլուխս էլ չեմ բարձրացնում, երեսին մտիկ տալիս։ Առաջին օրերը դեռ Սև ջրի գլխին մի շաբաթ չոր գետնի վրա էին վեր քցել ինձ, օրը մի կտոր ցամաք հաց ու էս փարշովը ջուր էին դնում կուշտս, հերիք չէր ոտներիս բխովը[2] ու ձեռներիս զնջիլը, մնջքիցս էլ մի պարան էին քցել, պատին կապել, որ ըսկի չկարողանամ ժաժ գալ։ Վերջն էդ նեռան ձագն եկավ ինձ տեսավ, գլխին տվեց, սաքի թե վրես ցավվեց, որ էդպես անխղճմտանք կերպով ինձ տանջում են, ետ դառավ գնաց մովրովիցը հրաման առավ ձեռ ու ոտս ետ անիլ տվեց, տակս խսիր ու քեշա փռեց, տաք կերակրի իրավունք էլ առավ, դեռ իրիկները ճրագ էլ վառել տվեց։ Ես ոչ մի բերան շնորհակալություն արի, ոչ ձեն տվի, ընդուր որ մտքինը գիտեի, որ էնպես էլ կատարվեց։

— Հետո լա՞վ բան ես արել։

— Լսի՛ր, Սմբատ, էդ բաներից մի երկօր անց, մի առավոտ քշերով քշերհանա, դուռը բաց արեց, տուն մտավ ու սկսեց գլխիս գիլի ավետարան կարդալ, որ ես խոստովանվիմ իրան, ասեմ, որ Մահմատ-Բաղրին ես եմ սպանել, դրանով, սաքի մովրովը կքաղցրանա վրես ու գործը շուտ կտա, ինձ կարդարացնի։ Մեռա՛վ, կտրվե՛ց, մի ծպտուն չհանեցի։ Նրանից ետը գլուխս դանգ ու սար էր արել[3]. մի օր գալիս էր, թե 100 մանեթ գրագրին տանք, որ քո գործը փոխի, մեկել օրը՝ թե քոմակչին[4] նորից քննություն անելու պտի գնա Աշտարակ, 500 մանեթ որ տանք, գործին ուրիշ ձև կտա. մի անգամ՝ թե չորս թուրք կան, ամեն մինը 50-ական մանեթ են ուզում, որ ինձ համար վկա դառնան, որ սաքի իրանք քուչովն անց կենալուս պատը ծակող ձիավորներ են տեսել, մի օր էլ ուզիղ եկավ ասեց, թե մովրովը 1000 մանեթ ա ուզում, որ էսօր ևեթ ինձ բաց թողա։ Չելա՛վ, չելա՛վ, միկիտան Սաքոն իմ բերնիցը մի խոսք լսեց, ու երբ որ հույսը կտրեց, տակիս քեշեն հանիլ տվեց, բաժինս քշացրեց, կապերս էլ ավելացրեց։

[1] Չի համաձայնում։ [2] Կողպեք։ [3] Ջանձրացրել էր։ [4] Օգնական։

Հիմի տեսնում եմ, Սմբատ ջա՛ն, որ սատանա Սաքոն իր սրտի փափագին ուրիշ կողմից ա հասել. համ իմ տունն ա մտել, համ խաբեբայությունով իմ փողերը կերել։

— Հա՛, ափու ջա՛ն, չեմ գիտում՝ Սաքոն իր համա՞ր տարավ էդ փողերը, թե ուրիշներին ուտացրեց, համա ում ի՞նչ տվել ենք, Սաքոյի ձեռովն ենք տվել։

— Տեսա՞ր, տեսա՞ր, որդի՛, տեսա՞ր, որ ես սուտ չեմ ասիլ. լսի՛ր, Սմբատ ջան, ես ինչպես իմ տան տերը, ինչպես հեր, հրամայում եմ, որ էդ միկիտանին ըստուց ետն իմ շեմքը չթողաք, երեսին մտիկ չտաք ու մի քոռ կապեկ իմ գործի համար առանց գիտությունի չխարջեք։ Չգիտեմ, երեխեքանցս երեսը տեսնելու արժանի պտի ըլնիմ, թե ոչ, համա ասում եմ, բան ա՝ թե որ պարանը շլինքս քցելու վախտն էլ Սաքոն գա ձեզ ասի, թե ինձ մի սառը բարով տվեք՝ ձեր հորն ազատեմ, ինքներդ թե որ կարող եք ձեր ձեռովը գլուխս օղակի մեջն անցկացրե՛ք ու Սաքոյի ձեռով ձեր տունը մի բախտավորացնեք. էս ա իմ վերջին կտակը։ Հիմի բեր աչքդ պաչեմ, վեր կա՛ց, առանց էդ օձի ձագին տեսնելու հեռացի՛ր էս մարդակեր տեղիցը. ոտի ձեն ա գալիս, երեում ա յասավուլն ա տուն մտնում, որ քեզ ճամփու քցի։

Ծերունին համբուրեց Սմբատին, նա էլ սորա ձեռքը մի քանի անգամ լալով պաչեց ու սպասում էր դուռը բացվելուն, բայց ոտքերի տրոփյունն ընդհանուրակն հեռացավ և բոլորովին մեռելությունը տիրեց։

— Էստեղ գափաճանություն կա, Սմբատ ջա՛ն, մեզ անկաջ դնող ա էլել,— ասաց ծերունին,— թե որ էս բանի տակիցը մի փորձանք դուս գա, իմացի՛, որ հեր միկիտանի տակին էր, հենց ավատաս՝ ինքն ըլներ։

— Ափու ջա՛ն, շատ ես վախեցել դու էդ մարդիցը, շատ կարելի ա, յասավուլն ըլներ, եկավ դիպավ, տեսավ խոսում ենք ու ետ դառավ,— ապահովացրեց Սմբատը։

Այս միջոցին նա յուր կողքից կախած ատրճանակին ու սրին ձեռը տվեց։

— Տասը մարդ որ վրա թափի, վախում չեմ,— մտածեց Սմբատը։

Փեսացու և աներացու, կամ ճիշտ՝ հայր և որդի, նորից յուրյանց ցավերի վերա խոսեցան։ Ծերունին պատվիրում էր Սմբատին աղջիկների սիրտը չցավացնել յուր նեղ վիճակը պատմելով, նա խրատում էր յուր դրությունը լավ կողմից նկարագրել և Սմբատն էլ հավանություն էր ցույց տալիս և խոստանում էր ճշտությամբ կատարել նրա պատվերները, ինչպես և կատարում էր աղջիկների խնդիրը։ Նոքա արգելել էին յուրյանց ներկա վիճակն յուրյանց հորն իսկությամբ հայտնելու։

Շատ երկար խոսեցան խեչանն ու Սմբատը, ամեն բան հիշում էին,

ամեն խոսքի մեջ աղջիկների անունն էին տալիս, դյուղի բարքությունն էլ չմոռացան մտաբերելու։

Խեչանի կասկածները քանի գնաց ավելացավ, յասավուլը շատ ուշացավ։ Ի վերջո, նրանք լսեցին շատ ոտնաձայն և հրամայական խոսակցություններ, որոնք իրենց էին մոտենում։

Բանալին շարժվեց փակի մեջը, դուռը խիստ կերպով ճռնչաց և չորս-հինգ հոգի, ճրագուն մոմերը ձեռքներին, տուն թափվեցան։

Լե

ՔԱՐՆ ԷԼ Ա ԻՐԱՆՑ ԶՆՌԻՆ, ՊՈՊՈՔՆ ԷԼ

Դեռ բանալին պտտվում էր փակի մեջ, որ Սմբատը տեղիցը վեր թռավ, հանեց ատրճանակը, վերի ոտքը քաշեց և պաշտպանողական դիրք առած՝ բանտի մեջտեղը կանգնեց։

Ներս եկողները, որոնց ոտնաձայնից զգալի էր վստահություններն և աներկյուղ առաջ գալը, շեմքն անց կացան, բայց էլի մի ակնթարթի մեջ ետ-ետ քաշվեցան. մի քանիսը շեմքի մյուս երեսումը մնացին։ Սոքա ընդամենը վեց հոգի էին, հինգ յասավուլ և մի գրագիր, նույն հերոսը, որին մենք պատահեցանք սայլեր հանելուս։ Նա հագած ուներ յուր պաշտոնագգեստն և մի արծաթապատ լեգզու սուր կողքից քաշ արած։

— Ի՞նչ եք ուզում էս կես գիշերին,— հանդարտությամբ հարցրեց Խեչանը։

— Օրենքի անունով ես եկել եմ բանտարկելու այստեղ աշտարակցի Սվիկենց Սմբատին. ես պատրաստվում էի Աշտարակ գնալ, բայց լսեցի, որ նա գտնվում է քեզ մոտ. եթե այս երիտասարդն է, թող անձնատուր լինի։

— Ի՞նչ է արել սա, ի՞նչ է սրա մեղքը, որ բռնում եք,— նվազ ձայնով հարցրեց Խեչանը։

— Էդ ոչովի իմանալու բանը չի, օրենքը դրան բանտարկում է։

— Լսեցի՞ր, Սմբա՛տ, որդի՛ս, տեսա՞ր տակ փորելը ոնց ա էլել. էս քո բարեկամի սարքած թալաքն էր. քո ոտովը կրակ ընկար, հիմի իմ աունս սուգ էլավ, դու էլ բռնվեցիր, իմ հույսը դու էիր։

— Քանի Սմբատի շունչը վրեն ա, նա թալաք չի ընկնիլ, ափու ջա՛ն, միամիտ կա՛ց, ով իր գլխիցը ձեռն ա վեր կալել, թող առաջինը մոտ գա ու մի կոներս զնչիլ քցի՛. ես հիմի տեսնում եմ, որ քո խոսքերդ ճշմարիտ են։

— Աղա՛,— դարձավ Սմբատը դեպի գրագիրը,— դու ըստեղ մի՛

աշխատիլ ինձ քո ճանգը քցելու, ես փախստական մարդ չեմ, ճամփա տվեք ես հեռանամ, գնամ մեր գեղը, էս հալիվորիցը մի խաբար տանիմ իմ օղլուշաղին, էգուց առավոտ համեցեք ընտեղ՝ իմ աչքի վրա, թե որ մի մազաչափ մեղք ունիմ, բռնեցեք աչքս հանեցե՛ք։

— Ինձ ասա՛ առաջուց՝ դո՞ւ ես աշտարակցի Սվիկենց Սմբատը։

— Ես եմ, ու դու էլ շատ լավ ճանաչում ես ինձ, զուր տեղը խոսքը կտուրը մի՛ քցիլ, անկաշկիդ բուրդը հանի՛, ինձ չես կարող դիպչիլ, խեղճ ես, դու էլ ինձ պես ջիվան-ջահել ես, աչքը ճամփին սպասող կունենաս։

— Ես քեզ խորհուրդ եմ տալիս առանց հակառակության վեր դնել զենքդ, թողալ, որ կոներդ շղթայեն. էս ես ինձանից չեմ ասում, օրենքին ամենքս պտի հնազանդինք. ապա թե ոչ, ես կստիպվիմ բռնություն գործ դնել. տեսնո՞ւմ ես էս քաջերը, որ մի հրամանիս են սպասում։

— Հը՛, հը՛, հը՛,— դառնապես ծիծաղեց Սմբատը գրագրի խոսքերի վրա,— աղա՛, ես շատ ղոչաղներիցը[1] չեմ, ես իմ գլուխս շատ չեմ գովում, համա իմացած կա՛ց. պստիկ բզեզին էլ, որ ուզում ես բռնել, նա իր գլուխը պրծացնելու համար աշխատում ա մարդ կծելու։ դու ըսկի թռչունք վեր քցե՞լ ես, սաչմա[2] դիպած մի մատնաչափ ծիտն իր սպանողին, քանի սաղ ա, ուզում ա պստիկ կտցովը ցավացնել ու ընենց սատկել. հեր օխնա՛ծ, մի լավ միտք արա՛, բաս ես մի ծտի, մի բզեզի չափ չկա՞մ, բաս իմ ձեռներս գոթրումացնե՞լ են[3]. ընչի՞, չե՞ս հավանում, փշտովն (ատրճանակ) էսպես չե՞ն բռնում, ոտը որ վեր քաշեմ բերանը դալա ձեզ արած, բա էսքան խալխի միջին մնին չի՞ դիպչիլ, իմ բարութի[4] մեջը հո ջուր չի՞ լցրած էլել։ Փշտովս էլ որ փրստ անց կենա[5], բաս էս կողքիցս քաշ արած զզլբաշի թուրը քո լազգու թրիցը քո՞ռ ա, բաս ըսկի սրանով գիլի շինք չե՞մ թոցրել, բաս ես շուն վախացնելու համա՞ր եմ քաշ տվել, բաս էս խանչալի ծերն էնքան սրություն չունի՞, որ մի երկսիդ սրտի մեջը ցցվի։ Ես հո չե՞մ ասում, թե քո մարդիկը կատվաճուտեր են, օրինավոր չանգռել էլ չեն կարող. ես դրանց զորությունը շատ եմ տեսել, որ անասպապ[6] ու խեղճ գեղացոնց վրա փորձել են, իմ մեջքն էլ դրանց ղամշու համն առել ա, համա ավատացած կա՛ց, աղա՛, որ անխելքություն ա յարալու էլած[7] արջին մոտենալը, ինչքան էլ սատկելուս ըլի, էլի շունչը փչելու հրոպեին վա՛յ նրան մոտեցողին. էլ ի՞նչ երկարացնեմ, աղա միրզա, թե գլխիցդ չես ձանձրացել, որտեղից մտար, դենը դուս ի՛լ, ես էլ թողամ գնամ խաբարը տանելու։

---

1 Քաջերից։ 2 Հրացանի կոտորակներ։ 3 Գոսանս։ 4 Վառոդ։ 5 Զդիպչի։ 6 Անզեն։ 7 Վիրավորված։

— Ի՞նչ սպառնալիքներ ես տալիս, Սմբա՜տ, հո՞ տեսնում ես, որ դու մին ես, մենք՝ վեց. աչքով անեմ թե չէ, կդառնան 66, 106, ես ի՞նչ գիտեմ, քանի քո սիրտը կուզի. բայց ես այդ չեմ կամենում, ես ինձանից ոչինչ չեմ անում, ես մի հրամանակատար մարդ եմ, երդում կերած չինովնիկ եմ, իմ եղբորս որդուն էլ չեմ խնայիլ, արի ինձ լսի՛ր ու զենքդ թափի՛ր, թույլ տո՛ւր, որ քեզ բռնեն։ Ծերունի՛, եթե սրան չես համոզիլ, որ անձնատուր լինի, քեզ էլ մեծ վնաս կհասնի, սրան էլ, ես խղճալով քեզ առաջուց ասում եմ։

— Ախար դեռ ասացե՛ք, ի՞նչ ա սրա մեղքը. մովրովն ինձ գտավ հանցավոր, ի՛նձ մարդասպան ճանաչեց ու դատում ա, էլ սրանից ի՞նչ բան ունի։

— Էգքանն ես էլ չգիտեմ, միայն այս կասեմ, որ մովրովն էլ մեղք չունի, օրենքի առաջին ամենքը պատասխանատու են։

— Սմբա՜տ,— կամենում էր խոսել Խեչանը, բայց Սմբատն ընդհատեց.

— Ափու ջա՛ն, խոսքդ մի՛ խարշիլ, ես մտքումս դրել եմ, որ ընչանք քեզանից խաբար չտանիմ, իմ ջանս սաղ-սաղ սրանց ձեռը չեմ տալ։

— Առա՛ջ, յասավուլնե՛ր,— հրամայեց գրագիրը և ինքը մի կողմ քաշվեցավ,— առաջ եկե՛ք, մի՛ դիպչեք էս հանդուգն երիտասարդին. ճամփա տվե՛ք, թողե՛ք անց կենա, գնա իր համբավը տեղ հասցնի. բայց չէ՛, ինչ որ ձեզ հրամայած է, դուք կատարեցե՛ք, թողե՛ք ամեն բանն էլ իր աչքովը տեսնի և այնպես մանրամասն լուր տանի, թողե՛ք գնա պատմի, թե խեղճ ծերունին գլուխն օգակի մեջն անց կացրած ժամանակը՝ հոգին փչելուս՝ քանի՞ անգամ զկոտաց. թող գնա ասի, թե շատ կարելի է, որ այս ողորմելի բանտարկյալը մի քանի շաբաթից պետք է ազատվեր, բայց այս գիշեր յուր պես մի կամակոր երիտասարդի պատճառավ խեղդվեցավ և ոչ ոք էլ վրեժխնդիր չի կարող լինիլ. գործն այնպես է տարած, որ իբր թե Խեչանին Երևանա բերդն ուղարկելուս յուր մարդիկը ճանապարհիցը փախցրել են և հիմի հետքը չի երևում։

Մի յասավուլ փեշի տակից մի կարճ պարան հանեց և երկու հոգվով մի քանի քայլ ծերունուն մոտեցան։

— Սպասեցե՛ք,— հրամայեց գրագիրը,— նախ դուք երեք յասավուլներդ հանեցե՛ք ձեր զենքերը և այս անձնապաստան տղայի առաջը կտրեցե՛ք, որ չհամարձակվի մոտ գնալ. օրենքի անունովը հրամայում եմ ձեզ՝ գործ դնել ամենայն զորություն, կյանք չխնայել, սպանվիլ, սպանել, միայն թե արգելել սրան ծերին մոտենալու. դուք ծառայողներ եք, դուք պարտական եք սրի, կրակի առաջը գնալ, կատարեցե՛ք ձեր

պարտքը. վնաս չունի, թող սա ձեզնից մեկին սպանի, ինչպես ինքն ասում է՝ արյունն աչքի տակն է առել. բայց մինչև ձեզանից մեկի հետ յուր գործը կպրծնի, էս երկուսն էլ ծերունուն խեղդած կլինին. վերջապես մեռե՛ք երեքդ էլ, ես էլ թող ընկնիմ ձեզ հետ, միայն թե այս երկուսը ծերունու կյանքը բառնան։

— Կացե՛ք,— ձեռքը բարձրացրեց Սմբատը,— սպասեցե՛ք, ես լավ չհասկացա, ի՞նչ ասացիր դու, աղա միրզա՛, մին էլ ինձ գլխի քցի՛։

— Այն, որ քո բռնվելովդ այս ծերունին մի երկու շաբաթից կարող է ազատվիլ. քննիչը գործը նորից արթնացնեց և գտավ, որ դու ես մարդասպանն, ինչպես որ ինքդ Աշտարակումը խոստովանել էիր, երևեցավ, որ խիշտն էլ դու ես սրած եղել, այժմ ինձ հրամայած է քեզ բռնել, ես ձիավորվել էի Աշտարակ գնալ, յուր բերին, որ այստեղ ես. մովրովն, երևում է, լավ է իմացել քո կատաղի բնությունդ, ինձ հրամայեց, որ եթե դու հակառակություն կանես և քեզնուքեզ չես բռնվիլ, ծերին խեղդենք, քեզ բաց թողանք, դրանով գործն էլ վերջանա. կարելի է այնպես հարմարեցնել, որ այնուհետև էլ մեղքը քո վիզը ձգել. վկաները պետք է հաստատեն, որ Խեչանին Երևանու բերդն ուղարկելուս դու մի քանի ձիավորով եկել ճանապարհիցը փախցրել ես։

— Թե որ ըտենց ա, թե որ էս խեղճ հալիվորը պտի ազատվի, ա՛յ էս իմ ասպապը[1], առե՛ք, եկեք հիմի էլ կոներս կապեցե՛ք,— զինաթափ լինելով մոտ եկավ Սմբատը։

Յասավուլները կոները քամակիցը կապեցին և ոտները բխովեցին[2]։

— Ա՜խ, Սմբատ ջա՛ն, էդ ի՞նչ արիր դու,— հազիվ արտասանեց ծերունին։

— Վնաս չունի, ափու ջա՛ն, ես շատ ուրախ եմ, որ դու մի քանի օրից կփաթաթվես քո սիրեկաններին ու նրանց կմխիթարես. ես մի գլուխ ունիմ, թող ինձ մատաղ գնա, ասա՛ Հեղնարին ու Հերիքնազին, որ Սմբատն ընչանք էսօր ախպոր պես ա էլել իրանց հետ ու ախպեր էլ պտի մեռնի։

— Միամիտ տղա՛, դու քո ոտքովդ ականատի[3] մեջն ընկար, ըստոնք բոլորը քո բարեկամի սարքած բաներն էին. ըստուց ետը ո՛չ դու կազատվիս և ոչ ե՛ս. սև ու մութն եկել ա՝ իմ երեխեքանցը տարել։

Այդ միջոցումը ներս մտավ բանտը միհիտան Սաքոն։

— Վա՛հ, էս ի՞նչ եմ տեսնում, էս ի՞նչ բան ա, աղա միրզա՛, դու էս վախտ էստե՞ղ, Սմբատը զնջլա՞ծ, ընչի՞ համար,— զարմացած հարցրեց Սաքոն։

---

1 Զենք։ 2 Փականքի մեջ դրին։ 3 Որոգայթ։

— Դո՛ւս, դուս կորի՛, անաստվա՛ծ, անխղճմտա՛նք, անհոգի՛, անհավատ, ո՞ւր ես եկել, ի՞նչ անելու էիր՝ արիր, թե խեչանի մլքերին տեր չդառար, նրա տունը հո՛ հիմքից շուռ տվիր, էլ ի՞նչ ես ուզում, ընչի՞ ես եկել. հերիք չի արածդ, հիմի էլ եկել ես աչքովդ տեսնես, ուրախանա՞ս,— ճչաց խեչանը Սաքոյի վերա։

— Աղա խեչան,— կեղծավոր դեմք առավ Սաքոն,— թող աստված իմ դուռը բերի, ինչ որ ես քեզ համար կամենում եմ. չգիտեմ՝ ընչո՞վ ես քո աչքին փուշ եմ դառել. Սմբատին հարցրո՛ւ, նա քեզ կասի իմ արածները, էս աղա միրզին հարցրո՛ւ, էս յասավուլներիցը մի-մին խաբար ա՛ռ, ամենքն էլ քեզ կասեն, թե ես ի՞նչ եմ ցանկացել ձեզ համար ու ի՞նչ եմ արել. հարցրո՛ւ՝ թե ո՞վ էր, որ մովրովից խնդրեց քո աղջկա կամքը կատարելու ու Սմբատին մի անգամ քեզ մոտ թողալու հրամանն առավ։

— Բոլորը լսեցի, բոլորն էլ իմացա՝ դո՛ւ էիր, դո՛ւ արիր, որ իմ աղջիկների աչքերը ճամփին թողաս. էս տղեն էր իմ տան տղամարդը, արիր, որ սրան էլ ճանգդ քցես ու էգուց առավոտ գնաս օձի պես ներս սողաս իմ տունը, սուտ ու զորթ խաբարներ ասես, քեզ սրտացավ շանց տաս ու ջահել աղջիկներին խաբես. մի օր էլ, բալքի՛, քո շար մտքի դրածին հասնիս, բայց իմացիր, մարդակեր գազա՛ն, որ քո մտքինդ գլուխ չի գալ, խեչանի մի ծղնոտն էլ չես կարող ճանգել, որ աչքդ կոխես։

— Խե՛ղճ հալիվոր, ես քեզ ղնամիշ չեմ անում[1].— կարեկցել ձեվացրեց Սաքոն,— մի օր դու ինքդ քո բերանովդ կասես, որ սխալ էիր. բայց ես զարմանում եմ, թե էս ի՞նչ բան ա, որ էս խեղճ Սմբատին բռնեցին, ես, իհարկե, գիտեի, որ սա իրիկունս բանտն եկավ, մովրովիցը հրամանն ես էի առել. շատ որ ուշացավ, սիրտս կասկած ընկավ, միամիտ վերկացա, գամ տեղեկանամ, թե Սմբատն ո՞ւր մնաց, մին էլ աչքիս էս թամաշեն[2] ընկավ, խնդրեմ ասա, աղա միրզա՛, էս ի՞նչ փորձանք ա, ի՞նչ նոր խաբար ա։

— Այն է, որ օրենքով Սմբատը մեղավոր է, ես Աշտարակ էի գնում սրան բանտարկելու, լսեցի, որ այստեղ է, ներս եկա և բռնեցի։

— Ո՞վ արեց էդ քննությունը։

— Ես և Երևանից խեչանի գործի համար ղրկած նոր չինովնիկը։

— Չի՞ ըլնիլ, որ գնանք նրան խնդրենք՝ Սմբատին արձակի։

— Նա հենց այս երեկո գնաց։

— Քեզ չի՞ կարելի խնդրել, որ արձակես Սմբատին. թե որ սա էլ

1 Մեղադրում։ 2 Տեսարան։

բռնվեց, էդ խեղճ ծերի տունը կքանդվի. տանը մնացին երկու ջահել աղջիկներ ու մի չորացած պառավ կնիկ։

— Էգուց գնալու եմ այն երկու աղջիկներին էլ բանտարկելու։

— Վա՛յ էլիսս,— ծվաց ծերունին,— տեսա՞ր, Սմբատ ջա՛ն։

— Ա՛խ,— կատաղաբար աստամները կրճտեց Սմբատը,— պրծար իմ ձեռքիցը, միկիտան Սաքո, դու բարեկամության անումով մեր տակը ջուր կապեցիր ու բանն էս տեղը հասցրիր։

— Դու էլ ավատացիր, Սմբա՛տ,— արդարացավ Սաքոն,— վնաս չունի, մի օր ես ձեր առաջին կարդարանամ. աղա միրզա՛,— դարձավ Սաքոն դեպի գրագիրը,— թե որ հիմի գնամ մովրովին խնդրեմ, էս տղին ու էն աղջիկներին ազատելու հնարք կա՞։

— Մովրովը չէ՝ նաչալնիկն էլ չի կարող ազատել, գործը փոխվել է։

— Բաս ի՞նչ պտի անենք, չի՞ կարելի, որ չբռնած՝ գործը քննես։

— Բայց եթե փախչին, ի՞նչ կանենք, ո՞վ պատասխան կտա։

— Ե՛ս, ես իմ գլուխս օրենքին մատաղ կտամ, սրանց տեղակ Սիբիր կերթամ, թե որ սրանք փախչին։

— Պետք չի՛, ինձ հարկավոր չի՛, ես քեզանից ողորմություն չեմ ուզում,— մեջ ընկավ ծերունին,— գլխովդ դիպչի քո արած լավությունը, սատանա Սաքո. չէ՛, աղա՛ միրզա՛, չէ՛, սրա խոսքը պարանի մի՛ դնիլ, ինձ բռնել եք, փեսացուիս էլ բռնեցիր, վեր կաց գնա՛ իմ աղջկանն էլ, իմ քվորն էլ, իր աղջկանն էլ բռնոտի՛, իմ տունը, իմ մլքերը վանքական արա՛, իզ ու թոզը[1] կտրի՛, էս օձի ճուտի ձեռը մի ծեղ մի՛ քցիլ, աղանչանք եմ անո՛ւմ քեզ, ոտներդ եմ ընկնո՛ւմ։

— Աղա միրզա՛,— խոսեցավ Սաքոն,— խեղճ խեչանը մի քիչ գաղազած[2] ա խոսում, սա մեղք չունի, քանի ամիս ա՝ մարդի, արևի երես չի տեսնում, իր շվաքիցն էլ կասկածում ա. ողորմելին հենց գիտի, թե ով որ իր համար լավ ա խոսում՝ նա ա իր տակը փորողը. ես քեզ խընդրում եմ, դու սրա ընտանիքին խնայի՛, ես ինքս զամին[3] եմ ընում, որ ոչ Սմբատը, ոչ էն աղջիկները չեն փախչիլ. թե կուզես՝ գրի, ես տակին ձեռք քաշեմ.դու քո ձեռիցն եկածը սրանց համար մի՛ խնայիլ, ես քո լավությունը կվճարեմ. դու հենց հիմի Սմբատին բաց թո՛ղ ու էս հալիվորի գործի համար էլ լավ գլուխ դի՛ր։

— Ես զարմանում եմ, խեչա՛ն, Սաքոն իր գլուխը ձեր համար ետ է դրել, դու սրան հայհոյում ես, այս ի՞նչ բան է, դու ի՞նչ ես ասում, Սմբա՛տ,— հարցրեց գրագիրը։

— Ես էն վախտը կհավատամ դրա խոսքերին,— պատասխանեց

1 Հետք։ 2 Հուսահատ։ 3 Երաշխավոր։

Սմբատը,— թե որ էս սհաթս էս ձեռից-ոտից ընկած հալիվորին ազատել տա, դրա ու իր ընտանիքի համար զամին ըլնի ու ինձ թողա՝ մնամ դրա տեղը բռնված։

— Թե որ դու սրտով էդ ցանկանում ես, Սմբա՛տ,— ասաց Սաքոն,— ու թե որ էդ կարելի ա, ես կխնդրեմ աղա միրզին, թող քո սրտի ցանկությունը կատարի. բայց ավելի լավ կըլներ, թե որ դու, աղա միրզա՛, իմ զամինությունովս բոլորին էլ բաց թողայիր։

— Ո՛չ, օրենքը չի հրամայում,— ասաց գրագիրը,— կամ խեչանը, կամ Սմբատն ու խեչանի աղջիկները։

— Բաս ո՞րն իրանք կամենան ես պատրաստ եմ,— ձեռքը կրծքին խփեց Սաքոն։

— Ափու ջա՛ն,— դարձավ Սմբատը դեպի ծերունին,— ասա՝ թող քեզ ազատեն, գնաս տունը, ես մնամ էստեղ ձեր տեղակ։

— Չէ՛, բալես, չէ՛, Սաքոյի խնդրքով արքայություն էլ չեմ ուզում գնալ։

— Միտդ բե՛ր Հեղնարին, Հերիքնազին, մտածի՛, թե ի՞նչ ուրախություն կըլնի նրանց համար, երբ որ քեզ տեսնեն։

— Քո արյունի գնո՞վը պտի ճարեմ էդ ազատությունը, Սմբա՛տ։

— Ա՜խ, ափու ջա՛ն, ես ջահել եմ, կքաշեմ, աստված ինձ չի կորցնիլ։

— Չէ՛, որդի՛, թե որ ազատվելու ա՝ դու ամենիցը շատ իրավունք ունիս, դու զուր տեղն իմ խաթեր կրակումն էրվում ես. բայց թե ինձ կլսես՝ Սաքոյի տարած արքայությունն էլ մի՛ ուզիլ։

— Ա՜խ, ափո՛ւ, ես ինձ համար ոչինչ չեմ ուզում. ես քեզ խնդրում եմ՝ խոսք տաս քեզ ազատեն։

— Ո՞ւմ ձեռովը, միկիտան Սաքոյի՞, հարամկեր, արենխում Սաքոյի՞, հը՞, հը՞, հը՞։

— Երկար սպասելու ժամանակ չէ՛,— տնօրինեց գրագիրը,—սրանք արժանի են էս պատժին, գնանք մեր գործին. յասավուլնե՛ր, տարե՛ք այս երիտասարդին մյուս բանտը, կապեցե՛ք սյունիցը և այս գիշեր թող սյունին փաթաթված՝ կանգնած մնա, իսկ մենք գնանք Աշտարակ, այստեղից, լուսադեմին աղջիկներին բանտարկենք. գնա՛նք, Սաքո՛։

Յասավուլները Սմբատին քարշ տվին, ամենքը ձևացրին, իբրև թե դուրս են գնում։

— Խեչան աղա՛,— խոսեցավ Սաքոն,— էս ի՞նչ իրասածություն ա, որ դու արիր. հերիք չի՞ ինքդ բռնված ես, քո խեղճ աղջիկների, էս պատվական տղի արնի մեջ էլ մտար, արի՛ կոտրվի՛, խնդրենք աղա միրզին՝ բաց թողա Սմբատին։

— Շատ զորթ ես ասում,— գլուխը կախած պատասխանեց Խեչանը,— ես իմ երեխեքանց ու Սմբատիս մահապարտն եմ ուզում դառնալ, իմ մեղքի համար սրանց էլ եմ ուզում պատժիլ տալ. լսի՛, Սաքո՛, թե որ սրտինդ էլ էդ ա, ինչ որ լեզվինդ ա, ես քո առաջին ոտով-գլխով մեղավոր եմ, թե չէ լեզուդ ուրիշ ա՝ սիրտդ ուրիշ, թող աստված քո դատախազն ըլնի՛, ես չէի ուզում կոտրվիլ, իմ ընտանիքի խաթեր էլ չէի գլուխ ծռիլ, թե որ Սմբատը մեջտեղ չըլներ. հիմի ես կոտրվում եմ, ես խոնարհում եմ, ես ըստուց ետը քեզ ինձ բարեկամ եմ ճանաչում ու խնդրում եմ, որ իմ երեխեքանցս ու Սմբատիս ազատիլ տաս։

— Ոչինչ, աղա Խեչա՛ն, ես քեզ վրա չեմ նեղանում, ոնց որ ասեցի, իմ արած ծառայությունը դուք հետո կհասկանաք. ես ուրախությունով իմ շլինքն եմ առնում Սմբատի ու քո աղջիկների զամինությունը։ Աղա միրզա՛, հատուկ խնդրում եմ, որ էս ջահել տղին բաց թողաս, Խեչան աղի աղջիկներին չբռնես ու աշխատես գործը սրանց՝ օգտին փոխել,— խնդրեց Սաքոն։

— Յասավո՛ւլ, ե՛տ արեք այդ երիտասարդին,— հրամայեց գրագիրը,— այս օրվանից, Խեչան աղա՛, ի պատիվ Սաքոյի, ես էլ ձեր բարեկամների շարքումն եմ. եթե Սաքոն ձեզ օգնում է, այդ նշանակում է, որ դուք անպարտ եք։

— Աստված քեզ վարձահատույց ըլնի, աղա միրզա՛, Սաքո ջա՛ն, դու էլ բաշխի՛ ինձ,— ձեռքը ձգեց ծերունին։

Սաքոն բռնեց ու համբուրեց։

— Տեր աստվա՛ծ, դու փոշիմանություն[1] չտաս,— աչքերն երկինք բարձրացրեց ծերունին և Սաքոյի գլուխը համբուրեց։

Եթե ծերունին ինքը դողդողում չլիներ, նա կզգար Սաքոյի դողոցը, որ վերջին համբույրի հետ նրա անձի մեջ ընկավ։ Բայց Սաքոն շատ շտապով իրեն ուղղեց և դարձավ դեպի գրագիրը.

— Աղա միրզա՛, մի խնդիր էլ ունիմ. չի՞ ըլնիլ, որ Խեչան աղի ձեռներն ու ոտներն էլ զնջլից ազատես ու հրամայես, որ հանգիստ պահեն, թե որ գործը քո ձեռին ա, էդ մի ողորմությունն էլ արա՛։

— Կարելի է,— հրամայեց գրագիրն և ծերունու կապերը քակվեցան։

Սմբատը շտապեց գնաց այս ավետիքն Աշտարակ տանելու, իսկ Սաքոն ձեռք բերեց Խեչանի մտերմությունը։ Այնուհետև օրը մեկ էր, Սաքոյի ելումուտը տասը։

Սաքոյի խնդրանքով՝ Սմբատը հաճախացրեց յուր այցելությունները

[1] Հոգում։

խեչանի մոտ, որի սենյակն էլ փոխեցին, երեկոները լույս էլ տվին և տաք կերակուր էլ վճռեցին։

Նա ապրում էր իբրև մի միայնակյաց։

Սաքոյի ասելովը՝ մոտենում էին խեչանի աղատության օրերը։

ԼԶ

ՍՏՎԵՐԸ ԿԱՄ ԱՆԿՈՂ ՀՅՈՒՐ

Մենք թողինք խեչանին կալանավորելուց հետո նրա տունը խառնաշփոթ դրության մեջ. Սմբատից միայն իմացանք, թե Հեղնարը սպանության գիշերը զառանցանքի մեջ է եղել, իսկ մյուս օրը հոր շղթայվիլն իմանալով, վեր է թռել տեղիցը և տան մեջ վայր ընկել։

Ահա այդ օրից Հեղնարն անկողնից չվեր կացավ, շարունակ տաքությունը և հոր կսկիծը նրան հալումաշ էին անում. շատ գիշերներ բոլորովին անքուն էր մնում; ինքը տանջվում և յուր հետ իրեն նայողներին էլ տանջում էր։

Պառավ Մարիամը ոտքի վերա իսպառ չորացել, կմախք էր դարձել. եթե Հեղնարին պետք գալու կարիքը չզգար, շատ կարելի է ինքը վաղուց մի օր առանց հիվանդության հավիտյան աչքերը փակած կլիներ։ Սմբատը դարձել էր այս տան մշտական անդամը. նրա հարաբերությունները աղջկանց հետ բոլորովին եղբայրական էին։ Հերիքնազն յուր կյանքը միանգամայն նվիրել էր Հեղնարի պահանջներին. երեք հիվանդապահներն էլ անքնությունից և անհանգստությունից թարշամել, դալկացել էին. ոչ Սմբատի առույգությունը, ոչ Հերիքնազի քնքուշ գեղեցկությունը և ոչ պառավի կայտառությունը կար։ Մարիամը շատ անգամ ստիպում էր յուր աղջկանն ու Սմբատին գլխները փոքր միջոց բարձին դնել, բայց ինքն էլ նույնն էր լսում մեկից կամ մյուսից։ Ճարը կտրում էր, ինքն էր աչքերը քիչ ժամանակ փակում և դեմք ցույց տալիս, իբր թե քնած է, բայց իրոք, սատանեն կքներ, նա՝ ոչ։

— Դե՛, հիմի հերթը ձերն ա, ես շատ քնեցի, դնջացա, գլուխս օխտը բեռը դառավ,— խնդրում էր Մարիամը,— հիմի էլ մի քիչ դուք քնեցե՛ք։

Բայց նոքա ևս միմյանց խաբում էին. շատ էլ, գուցե, ուզում էին քնել, ո՞ւմ քունը կտաներ. կիսակենդան հիվանդն օրըստօրե դեպի վատն էր գնում, յուր տաքության հետ մի խեղդիչ հազ էլ սկսավ, որ բռնելուս գլուխն երկու կտոր էր անում. այդ բանը միանգամայն մորթ և ոսկր շինեց նրան. էլ տեղից վեր կենալու հնարավորություն չկար։

Բժշկաց օգնության դիմելը դեռ մեր քաղաքներն էլ նոր է մտնում, դեռ հասարակ ժողովուրդը դեղերով բժշկությունը համարում է խաբեբայություն. ո՞ւր մնաց, որ գյուղերումը. Հիպոկրատի որդիքը միայն պաշտոնապես գավառապետների մոտ են նշանակված և պետք են գալիս սպանվածներին բժշկական քննությանց վկայականներ տալու դատաստանական գործոց համար։ Այս բանումն էլ, ճիշտ աղբյուրից կարող եմ ասել, որ նոցա վկայությունները հիմնվում են շատ անգամ յուրյանց ուղեղում ստեղծած պատճառների վերա, հարյուրից մեկին դեռ բժիշկը չի կտրատում և զննում. մի քանի մանեթներ, քանի մի ամսվան ապահովություն, և ահա անակնկալ պատճառներից դիակն առանց անհանգիստ լինելու և բժշկի դանակի սրությունը փորձելու ավանդվում է հողին, իսկ գործի հետ կարվում է մի թերթ լատինական բառերով և մեկ՝ մահկանացուներիս համար, անհասկանալի բացատրություններով։

Ճարը մնացել էին թիզ բացողները, աղոթողները, նետ դնողները, գրբացներն ու նարեկ կարդացող ծերունի քահանայքը։

Մարիամի պարապմունքներից մինն էլ այդ էր. բացի սովորականայցելու հարևան բարեկամներից՝ այս ծակ մարգարեները տանիցը ոտ չէին դուս դնում։ Ջերմեռանդ Մարիամն էլ ջվալներով ալյուր, քթոցներով չիր և կարասներով գինի-արաղ էր այդ խաբեբաների փորը ածում։ Էլ Մողնու սուրբ Գևորգ, Հախնու սուրբ Գևորգ, Կոշա սուրբ Գևորգ, Բերդի սուրբ Գևորգ, ես ինչ գիտեմ, Նորագավթու սուրբ Գևորգ չմնաց, էլ Մեռելհարույց ավետարան, Թուխ Մանուկ, Աղջաղալա գյուղի պառավի տուն չմնաց, խունկ ու մոմեր, մատաղներ, որ ղրկում էր. դեռ օձ մատնածող Օջաղօղլու խորհրդովը մի երկու պարսկական մեչիդների էլ սպիտակ ղոչեր[1] ղրկեց, բոլորը, բոլորն էլ անօգուտ։ Հեղնարը, կարծես, մտքումը դրել էր պառկած տեղիցը չվեր կենալ։

— Ափու ջա՛ն, ա՜խ, յարաբ ո՞ւր ես։

Հեղնարի այս բացականչությունները ոչ միայն լսողի սիրտն էին կտրատում, իրան՝ հիվանդ աղջկանն էլ այն աշխարհն էին տանում ու ետ բերում, իսկույն հազը սաստկանում էր, և մնձիմահ վայր ձգում։

Շատ խորհրդակցելուց հետո Հերիքնազն ու Սմբատն եկան այն եզրակացության, որ պետք է շուտ-շուտ հնարովի լուրեր և ավետիքներ բերել հիվանդին հորից և այս բանովը բավականին թեթևացրին նրա ցավերը։

Մի օր Սմբատը տուն էր գալիս և հայտնում, որ յասավուլի ասելովը ամբուն բոլորովին ազատ է, միայն թե դեռ մովրովի մոտից հեռա-

---

1 Խոյ։

նալու իրավունք չունի. մյուս օրը՝ թե քննիչը գործը վերջացնելու վերա է և այս քանի օրս նա բոլորովին կվերադառնա. երրորդ օրը նամակ էր բերում, կարդում հոր կողմից գրած, որով հայտնում է յուր հանգիստ վիճակն և խնդրում է չհոգալ յուր համար. մյուս օրն ինքը տանուտերն էր տուն գալիս և այս բուկեիս Խեչանի մոտից գալն և նրանից բերած ողջույնը հայտնում։

Այս բաներն սկզբում յուրյանց բարեբեր ներգործությունն էին ունենում, բայց, ի վերջո, Հեղնարը կասկածի տակ ընկավ. նա նշմարում էր յուր պահապանների երեսի թանձր տրտմությունն և դրանից գուշակում էր, որ իրան սնոտի հույսերով են պահում։ Երբ այդ կասկածն էլ շինծու և ուրախալի դեմքով փարատեցին, մի ուրիշ կողմից Հեղնարի կասկածները սաստկացան. օրերն անց էին կենում, խոստացյալ ազատության ժամանակները մի քանի անգամ լրացել էին և դեռ յուր աչքը ճանապարհին էր։

Վերջապես, ինչպես ինքը Սմբատը պատմեց Խեչանին, որ Սաքոն կարողացավ ոտքը ներս դնել Խեչանի տունը և այն հուսովը, որ իրանք մինչև հիմի հիվանդին էին պահում, նույն հույսը Սաքոն դրանց տվեց և զանազան ստահոդ պայմաններով փողեր էր, որ դուրս կորզեց։

— Է՛հ,— մտածեց Սաքոն,— այսուհետև ձեռներս պտի լվանամ, էս աղջիկն ինձ համար պաս էլավ, դժար թե սա վեր կենա տեղիցը. հիմի ինձ հարկավոր ա, քանի հալիվորը բռնված ա՝ նրա կարողությունը դուրս ծծել։

Սաքոն լավ գիտեր, որ Խեչանի համար յուր ընտանիքը ոչինչ չեն խնայիլ և ձեռք առավ այդ հաջող հնարքը, ու պետք է ասել, որ նպատակին հասավ։

Հերիքնազը թեպետ սկզբում շատ հակառակեց, մի ներքին հակակրական ձայն նրան ասում էր, որ այդ ժանտախտը տուն թողնելու չէ, բայց տանուտերի համոզմամբը Հեղնարի ստիպմունքին չկարողացավ ընդդիմանալ։ Սաքոն տուն մտավ և յուր շողոքորթ լեզվովը հիվանդի սրտումը կրկին հույս զարթնացրեց։ Այս պատճառով Հերիքնազը հոգ էլ չէր անում, թե Սաքոն խարդախությունով է փողերը դուս ծծում. ղգալի օգուտն այն էր լինում, որ հիվանդը թեթևություն էր զգում և այս բավական էր։

Շատ գիշերներ Հերիքնազն ու Սմբատը ժամերով նստած հիվանդի մոտ, նրա քնած ժամանակը կամաց խորհուրդ էին անում, հնարներ էին մտածում Խեչանին ազատելու, բայց ոչ մի եզրակացության չէին կարողանում գալ։ Գյուղացիք ու տանուտերն էլ վախենալով մովրովի վրեժխնդրությունից, խորհուրդ չէին տալիս բարձր իշխանության դիմելը։ Գործը մովրովի ձեռին էր, նա կարող էր այնտեղը բերել, որ մի օրվան մեջ Խեչանին ազատելու, Սիբիր ղրկելու կամ հրացանով ծակծկելու վճիռ կայանար։ Էլի ամենից օգտավետը Սաքոյի ձեռքով փողի շնորհիվ բան տեսնելն էր։

Ահա գլխավոր պատճառներից մինը, որ Հերիքնազը արտաքուստ միայն ընդունելություն էր ցույց տալիս Սաքոյին և զսպում էր յուր իրավացի գրգռված կիրքը։

Խե՜ղճ Հերիքնազ, չգիտեր թե փորձված Սաքոյի աչքից չէր փախել յուր պատրվակվելը. ապա եթե այդպես չլիներ, Սաքոն վաղուց յուր մեքենաները լարած կլիներ նրա դեմը. Սաքոն շատ լավ նախատեսում էր, թե Խեչանի հարստությունն ի վերջո ո՞ւմ է մնալու։ Սաքոն յուր մեջ հաստատապես վճռել էր, որ Հեղնարի կյանքն երկարատև չի, թե ջերմը փոխվել է թոքախտի, կամ ինչպես իրանք ասում են, ճլերքի, թե Հեղնարի գերեզմանը մոտենում է և թե օրինավոր ժառանգն յուր առաջին պտտող մարդասպան գեղեցկուհին է, որ կա։

Այսքանը գիտեր Սաքոն, յուր մի ոտքն էլ ամեն օր Խեչանի վերի անկյունումն էր, Հերիքնազի հետ էլ ժամերով միայնակ անցկացնելու միջոցը ձեռքին ուներ և չէր լարում յուր մեքենաները, գիտեր, որ յուր ատամները փուխր են այդ պողովատիկը կրծելու համար և յուր ջանքն անօգուտ պիտի անցնի. Հերիքնազն իրան սիրողը չի, նրա հաստատակամությունը ոչ ոք դրդվել չի կարող։

Միակ միջոցը, որով Սաքոն յուր նպատակին մասամբ հասած պիտի լիներ, յուր բռնած ճանապարհն էր։ Դեռ քանի Խեչանի այգիների և արտերի բերքը չէր պրծել, ուրեմն և փող կար տանը, նա տնեցոնց կխաբեր, այդ եկամուտից գոյացած զուտ դրամը կհափշտակեր, վերջն, երբ այդ պրծավ, նորա ընտանյաց ձեռքովը Խեչանի մոտ մուտք կգտներ ու փողի տոպրակը կդատարկեր։

Ահա ի՞նչ էր նրա ծրագիրը։

Բայց մեզ հայտնի է, որ Սաքոն Խեչանի բանտարկվելու օրից չկարողացավ ներս սողալ նորա մոտ, և այդ մեծ ցավ էր սրտին։ Իսկ որովհետև ինքը խոսք էր տվել մովրովին՝ Խեչանին ճնշելով նրան յուրյանց ճանգը ձգել, Սաքոն ամոթով էր մնում յուր պաշտպանի մոտ։

Մի քանի անգամ մովրովը սաստիկ հանդիմանեց միկիտանին, որ ինքը նորա հորդորանոքը անմեղին իբրև մարդասպան բանտարկել է, իսկ հիմա անկարանում է նորա կարողությունից օգուտ տեսնել։

— Սաքոն իր միսը կուտի ու մաքի դրածին կհասնի, աղա ջա՜ն, աչքներս լի՜ս,— տուն եկավ միկիտանը մովրովի մոտ,— ոտս տուն դրի, հիմի Խեչանն իմ թոռի միջին ա։

Նա պատմեց մովրովին յուր հաջողությունը և խեչանի տանը եկ ու մուտ անելը։

Այնուհետև շաբաթական մանր վաճառականաց ապառիկի նման խեչանի տանից շահված փողի կեսը մովրովի գրպանն էր մտնում, մյուս կեսը՝ Սաքոյի դրամարկղը։

Երբ Սաքոն տեսավ, որ խեչանի տանն էլ ոչինչ չի մնում ծախելու և փող շինելու, Սմբատին խեչանի հետ տեսակցելու իրավունքն առնելն ավետեց։

Միակ հնարքը, որ պետք է պսակեր Սաքոյի աշխատությունը, խեչանի հայրական զգացմունքը գրգռելն էր. միակ տղամարդը, որ հարմար էր խեչանի տան համբավը ճշտությամբ իրան հասցնելու, Սմբատն էր։ Այս կերպով միայն Սաքոն կարող էր թե՛ խեչանի ընտանյաց կասկածը փարատել և թե՛ նրա բարեկամությունը և կարողությունը շահել։

Եթե ընթերցողը դժվարացավ հասկանալ, կամ կասկած ունի բանտի դուռը չոքեչոք անցնող լրտեսի անձնավորության վերա և նրա վերա ճիշտ տեղեկություն առնել ցանկանում է, ապա թող միամտվի, որ այն գիշերաշրջիկը ոչ այլ ոք էր, եթե ոչ ինքը՝ միկիտան Սաքոն։ Նա ինքն էր իհարկե Սմբատին բերել տվել, յուր տնօրինությամբն էր յասավուլը ներս տարել տղային ծերունու մոտ և դուռը վրեն փակել, իրան՝ Սաքոյին էլ շատ հետաքրքիր էր խեչանի ու Սմբատի մեջ եղած խոսակցությունը։

Սաքոն ականջ դրեց բանալու ծակովը, լսեց և գույնը տվեց։ Նա գուշակում էր, որ խեչանը ամեն թշվառության պատճառը կարող էր իրան համարել ու կասկած տանել, բայց այսպես մանրամասնաբար մի առ մի ամեն բանին տեղյակ լինելը Սաքոյի մտքովն երբեք չէր անցել։

Խեչանն այնպես տեղնուտեղը պատմեց ամեն բանը Սմբատին, որ ոչինչ վկայություն չէր հարկավոր. օրենքի առաջին իրողությունը հայտնվելուն պես Սաքոն էլ, մովրովն էլ կդատապարտվեին։

Սմբատին այս բոպեից բանտարկել տալ։ Ահա ի՞նչ ծնավ Սաքոյի մտքումը։ Մի-երկու քայլ ետ կացավ նա յուր դարանից, ուզում էր գնալ մովրովիցն այդ իրավունքն ստանալ, բայց կանգ առավ. մի նոր խնդիր ծագեցավ նրա մեջ։

Սմբատին բանտարկելը շատ զգալի միջոց է, հարցը կծանրանա և բարձր իշխանության ականջը կհասնի. վտանգավոր ձեռնարկություն է այս, պետք է Սմբատին ազատ թողուլ, պետք է խեչանի տանից երեսատեղը չկտրել, պետք է ամեն հնարք ի գործ դնել, խեչանին ստիպել,

որ յուր՝ Սաքոյի բարեկամությունն իրան համար կարևոր համարի և այն՝ նույն երեկոն չլուսացրած։

Սաքոն երկար մտածել չէր սիրում, նա ձեռաց գտավ մեզ հայտնի հնարքը՝ Սմբատին բանտարկելը, աղջիկներին կալանավորելու սպառնալիքը, գրագրի քննչական իրավունքի տեր լինելը և ի վերջո յուր՝ Սաքոյի երաշխավորությամբ Սմբատին ու աղջիկներին ազատ թույլ տալը։

Այն մի քանի բոպեն, որ խեչանին արդարացի կասկածի մեջ ձգեց յուրյանց խոսեցածը լրտեսելու մասին, այն մի քանի բոպեն բավական եղավ Սաքոյի համար մովրովին քնած տեղիցը զարթնացնել և յուր մտադրության բառացի կատարվելու հրամանն ստանալ։

Ընկճվեցավ, հաղթվեց խեչանը և յուր ձեռքովն յուր կարողության սպառվելուն օգնեց։

Սմբատի գնալու մյուս առավոտից սկսած՝ խեչանի մուրհակներից օրը մի-երկուսը Սաքոյի ձեռքն էին անցնում և փողերը մովրովի հետ կիսվում։

Լավ դուռն էր բացվել Սաքոյի և մովրովի համար, բախտը նրանց ծիծաղացել էր։ Խեչանի համար էլ այս մեծ ուրախություն էր. նա Զեյվումը բոլորովին ազատ էր ապրում, Սմբատի այցելությունները շաբաթը մի-երկու անգամ լինում էին, խեչանն յուր ընտանյաց բարի համբավն անդադար առնում էր, էլ ի՞նչ հոգն էր նորա, թե յուր փողերը գնում էին։

Սակայն ի՞նչ կա աշխարհումս հարատև. աշխարհս մի անիվ է, որ շարունակ պտույտ է անում. դարձավ և մովրովի բախտի անիվը. Երևանու նահանգը մի նոր քննիչ գալու համբավն իրան հասավ։

Խեղճ մովրովը կարծեց, թե այս քննիչն էլ իրանից առաջ եկած շատերի նման պիտի շոշափեր ծառայողների քսակի բերանն և ուրիշ ոչինչ. այդ պատճառով էլ մեր խելացի մովրովը առաջին գործն արեց խեչանին շղթայելն ու առանց գործի որպիսություն իմաց տալու, առանց գործերը հետը դնելու, խեչանին մի համառոտ առաջարկությամբ Երևանա բերդն ուղարկելը, մինչև քննությունը վերջանալը։ Իսկ խեչանի գործերը պատառեց ու ոչնչացրեց, հավաստի գիտելով, թե քննչի հեռանալուց հետո կարող է անարգել արձակել տալ կալանավորին կամ կրկին յուր մոտ պահանջել։

Այս հուսով մովրովն յուր մյուս գործերն էլ կարգի չբերեց, բայց շատ զղջաց. բանից դուրս եկավ, որ այս նոր քննիչն յուր նախորդներին ոչինչ բանով նման չի եղել։ Մի առավոտ յասավուլը վստահաբար մոտեցավ մովրովին ու զարթնացրեց, մի քանի խոսքով իմաց տալով, որ քննիչն եկել, իրավարանը կողպել ու իրան սպասում է։

Ամպերը հավաքվեցան մովրովի գլխին. առավոտը նրա համար մութը թվեցավ, աչքերը սևացան և այդ դրությամբը ներկայացավ դաժան ու անկոչ հյուրին։

Լէ

ՔՆԻՉ

Մարդս չի իմանում, թե վաղն յուր գլխին ի՞նչ պետք է գա. նա, որ այսօր երջանիկ է, չի մտածում, թե կարող է մի տարուց, մի ամսից, մի ժամից հետո վերջին թշվառը դառնալ։ Անպատսպար չքավորը, որ յուր կյանքը անբախտության շղթայի մեջ կաշկանդված է համարում, հանկարծ մի ընչին պատճառից տեսնում է իրան երջանկության ծայրին կանգնած։

Բայց այսպիսի հազարավոր օրինակները, մեր աչքի առաջին ամեն օր պատահած կյանքի փոփոխությունները մարդուս վերա սակավ տպավորություն են անում. բախտավորը էլ վաղվան համար չի ուզում մտածել, անբախտն էլ իրան հավիտյան կորած է համարում։

Եթե մարդս այս բանը կարողանար առանց ուշադրության թողնել, եթե աղքատը չհուսահատեր յուր ներկա դառն դրության վերա, եթե հարուստը միշտ աչքի առաջ ունենար այս փոփոխությունները, այսքան զեղծումներ չէին պատահիլ, տնանկությունը արհամարհած չէր լինիլ, իրավունք, արդարություն և պարտաճանաչություն իրանց նշանակությունը պահպանած կլինեին և մարդկությունը յուր բռնելիք ընթացքից չէր շեղվիլ։

Մարդուն տված է գործել, աշխարհքիս բարիքը վայելելու, երջանիկ կյանք անցնելու համար քրտինք թափել, տքնիլ, գլուխը վտանգի ենթարկել, բայց արդարության դեմ չմեղանչել, ուրիշի ունեցածը անուղղակի միջոցներով չհափշտակել, ծուռն և պարսավելի ճանապարհով արծաթի ու փառքի համար անձնուրաց և ընկերադավ չլինել. այս բաները ներելի չեն հոգեկան և մտավոր արարածին։

Ամեն գործիդ մեջ ճշմարտասիրություն, ամեն ընթացքիդ մեջ արիություն և խոհեմություն, ամեն քայլափոխիդ հեռատես աչալրջություն։ Ահա այն կանոնները, որ պետք է առաջնորդեն մարդին։ Ցավալի է, սակայն, որ այս սուրբ օրենքը չենք պահում, չենք պահում՝ մոռանալով մարդուս վիճակի փոփոխությունը։

Պատմությունն, ավանդությունն և փորձը միշտ ցույց են տվել, որ այս օրենքի դեմ մեղանչողը ժամանակին յուր պատիժն ստանում է,

բայց մենք էլի չենք խրատվում, էլի աներեսի նման մեր պարտքը չենք ճանաչում և մեր հանցանքի փոխարենը ստանալով՝ փոխանակ արդար ճատուցում համարելու, ուրիշներին ենք մեղադրում։

Գալով մեր պատմության շարունակությանը, ես ընդհանուրից մասնավորին եմ անցնում. ժողովրդին թողած՝ ես կրկին դիմում եմ նրա կառավարիչ առաջնորդներին։ Խոսքս մեր մովրովների վերա է։ Ես պատրաստ եմ դաշն կապել, թե նոքա յուրյանց պաշտոնի մեջ մտած օրից մոռանում են, թե մի օր իրանց արարքը ուշադրության պետք է առնվի, թե իրանց բարի կամ չար արարքը արդարության առաջին հատուցում կստանա։

Մենք տեսանք շատ մովրովներ, իրանց պարտքը չճանաչողներ, մեր այսչափ պատմածներից հազիվ մեկի վերա մատը դրինք, որ կաշառք չի կերել, իրեն հանձնած հոտի նեղությունը չի կարողացել տանել, թողել յուր երեսի ջրովը հեռացել է պատերազմական դաշտը։ Գնաց նա և չդդջացավ, յուր պատիվը պաշտպանեց, հարգանքն ավելցրեց և վերջն յուր նախկին պաշտոնի մեջ վերակոչվելուս յուր ժողովրդի համակրությունն և անկեղծ սերը գրավեց։ Մյուս մովրովները օրենքի աչքից էլ եթե փախել են, հասարակաց դատաստանը, ռամկի անեծքը նրանց քամակից հետևել է. իսկ այդ հասարակաց դատաստանը, այդ անողոք դատավորը շատ անգամ խիստ է պատժում, շատ անգամ պատճառ է լինում օրինաց ուշքը յուր դատապարտած չարագործի վերա դարձնելուն։

Արևելյան պատերազմի ժամանակ մենք տեսանք, թե որքա՜ն ոճիրներ գործվեցան, որքա՜ն հափշտակություններ, գողություններ, ճնշումներ, հարստահարություններ էին լինում, հասնող-հասնողի, տանող-տանողի էր, ում ձեռն իրավունք էր անցնում, դեռ հոգուտ յուր պաշտոնի ոչինչ չարած, այդ արտոնությունից շահվել էր ուզում. զորապետը զորքի եկամտին էր ծուռ աչքով նայում, արյան դեմ գնացող զինվորի սև հացի պատառին էր դավաճանում, մատակարարները նախ յուրյանց գրպանն էին պարարում, սև հացի կեսը հող ու կիր էին անում. վաճառականն յուր փտած ու թթված մթերքովն ազնիվ գողություն էր անում և յուր գողակից իրավատերի քսակից դեպի յուր արկղը քաշում. գավառակապետները ռամկի վերա դրած հարկը տասնապատիկ էին ծանրացնում, միով բանիվ՝ պղտոր ջուր էին գտել, ամեն ոք կարթ և ուռկան պատրաստած՝ չորս ձեռնանի էին դառել և որսում ու որսում։

Միջոցը չէր ներում, կրիտիկական հանգամանքը չէր թույլ տալիս արդարությանը վրեժխնդիր լինել. գուցե բուն արդարությունը շատ հեռու էր, գուցե շատ արդարասեր կարծված հավատարիմներ իրանք ես

ձկնորսները էին գարձել այսօր. սակայն մի բան նախատեսվում էր, թե կգա մի օր, և արեգակի լույսն ամեն ծմակներ կթափանցի, հասարակաց դատաստանի սղոցը կտապալե թավ անտառների մեծամեծ և սաղարթախիտ ծառերը և ծմակներն ամենքի աչքին ևս ձեռնահաս կլինեն։

Հասարակաց դատաստանն էր, լրտես սատանի նենգությունն էր, թե նույն իսկ արդարության հեռատեսությունն էր՝ մենք ավելորդ ենք համարում հետախուզել, բայց վերջապես արևելյան պատերազմից հետո արդարությունը վրա հասավ և ամեն բան տակնուվրա արավ։

Փոքրաթիվ առաքինությունը ճիաց, խայտաց, իսկ մեծամասնությունը դողաց, սարսեց. խիղճը հանգիստ մարդը ողջունեց անմեղության պաշտպանին, ռամիկ ժողովուրդն օվսաննայիվ դիմավորեց, իսկ մեր հաջող ձկնորսների ձեռքերը թուլացան, ուղկանները ձեռքիցն ընկան. ըստ որում թեպետ պատերազմը դադարել էր, ջրերը պարզել էին, բայց ազահությունը մոլություն է, և մոլությունից ազատվելը հեշտ չէ։ Անիծվի՛ սովորությունը, որ ուզես կամ ոչ, երկրորդ բնություն է դառնում և մարդու արյունի հետ մերվում։

Բանն այս է, որ արդարությունը շատ արագ թռիչք ունեցավ. դեռ ամեն ոք յուր տանը հանգիստ քնած, դեռ ոչ ոք մի շշուկ չիմացած, հանկարծ անկոչ հյուրը ներս է մտնում Երևանու նահանգը, հական թոթափել դադարեցնում է ամեն գործառնություն, կնիք, փականքի տակ է գնում բոլոր թղթեր ու գործեր և յուր հետազոտությունն սկսում է։

Մի քանի զգաստներ շուտ հոտն առան և յուրյանց գլուխն ազատեցին, սակայն այսպիսի բացառություններ շատ սակավ եղան։ Եթե չեմ սխալվում, առաջին իրավարանից մինչև վերջին գյուղական տանուտերների ծոցը՝ բոլորի բանալին արդարության ձեռքն անցավ։

Մեր շրջանը մեզ չի թույլ տալիս ընդլայնել այս խնդիրը և մուտ գործել մի առ մի բոլոր գավառներն ու գավառակները։

Մենք մեր գավառակի հետ գործ ունինք և մեր տան անցքն ավելի լավ ու ճշտիվ կարող ենք դիտել։

— Լսե՞լ ես՝ ի՞նչ կա,— ուրախ-ուրախ պատմում են միմյանց գյուղական ժողովուրդը,— աչքերդ լի՛ս, ասում են՝ մի մեծ մարդ ա եկել, բեղաֆիլ[1] ամեն դատաստանների բալնիքները հանել, իր ջեբն ա դրել ու դռները մհրել[2]. ասում են՝ մեր մովրովը դեռ քնած ա էլել, դեռ նոր գեղացիկ նախիրը արոտ են քշելուս էլել, որ էդ աղա մարդն եկել ա Ջեյվա գեղը, մտել դիվանխանեն[3] ու գործերը թափած տեղը մհրոտել[4] ու նո՛ր մովրովին զարթնացրել։

1 Հանկարծ։ 2 Կնքել։ 3 Դատարան։ 4 Կնրել։

— Աչքի լիսով կենա՛ս, բաս հենց գիտեիր, թե աստված հախը նահախին կտա՞[1]։

— Խե՞ղճ մովրով,— սրտանց ցավում էին տանուտերներն իրանց առաջավորներով,— տղե՛, տուտը մեզ չհասնի։

— Շատ լավ էլավ, բաս էս խալխի աղաղանքը պտի մնա՞ր, քանդեց մեր մհալը կովի վախտը. ձեր քինքն էլ որ մի քիչ տրորվի, շատ լավ կըլնի, ջլիս ձեր աստվածն ուրացել էիք,— պատասխանում էր հասարակ ժողովուրդը։

— Ուրախացե՛ք, տղե՛ք, թե որ մեր ջիբիցն անօրենությունով խլած փողերը ետ էլ չենք կարող առնիլ, հաստատ պտի ավատանք, որ պոլիմպրյալ տվողներն իրանց մեդալը կստանան,— հուսադրում էին ծաղրելով մեդալասերներին չմասնակցողները։

— Աշկյարա գողություն չէր, բաս ի՞նչ աստծու կրակ էր. ասենք կոռից, բեգյառից, խարջի ավելնորդից, սելից, ցորենից, ղարավուլից մի քիչ իրավունք ունեին ուտելու,— մեղր ծախողը մատը կլպստի,— համա, էս մեդալը բոլորովին անիրավություն էր. տնաքանդի մովրովն էս կովումը խագինա կանպեց՝ հերիք չէր, մեդալի անումն էլ վեր արեց, խեղճ խալխի ջիբի պոլիմպրյալները գողացավ։

— Ես ու իմ աստվածը, տեղն ա, որ դրան մի լավ պատժեն։

— Անխե՛լք, քրտնել ա՞, թե մեջքը մշակություն անելով երկուտակվել ա. ինձնից, քեզանից առած պոլիմպրյալների կեսն էլ որ տա, հերիք ա, արդարացավ՝ պրծավ։

— Էդ էլ ես շիտակ ասում, համա էս ի՞նչ գիտեմ, ասում են՝ էս նոր եկող քննիչը կաշառք ուտող չի. դեռ, ասում են, մի քանի օր ա եկել ա, Երևանի մեջը շատ չինովնիկների քարը ծովն ա քցել, ամենքն ուռի տերևի պես դողում են։

Այս ժողովրդի կարծիքն և դատողությունն էր։

— Տեսա՞ր՝ գլխներիս ի՞նչ եկավ։

— Հա՞, ախպե՛ր, հա՞, սրա ծուխը մեր քթիցը դուրս չի գալի։

— Գիտե՞ս, ասում են՝ էստեղից են մատնել։

— Ես գիտեմ՝ ո՛վ են այդ կարաս հոտացնող մկները, եթե կրկին իմ իշխանությունը ձեռք կբերեմ, կտեսնեն այդ անպիտանները, այնպիսի փորձանքի մեջ ձգեմ, որ հավիտյանս չաղատվին։

— Է՛հ, եղբա՛յր, ո՞ւր ենք իզուր տեղն երկրորդական պատճառների քամակիցն ընկնում, ամանը լցվել էր, պետք է շրթունքներիցը թափվեր. մենք ծառայողներս մեզ բոլորովին մոռացել էինք, մեր անիրավության

1 Արդարությունն անպատիժ չի թողնում մեղավորին։

ձայնն ամեն տեղ բարձրացել էր, ռամիկ ժողովրդի մեջ արյուն չթողինք՝ ոգրկի պես ծծեցինք ու քամեցինք. պատերազմը վերջացավ, ժողովուրդը դեռ շունչ չի առել, մենք էլի չենք դադարում մեր հարստահարություններից. իհարկե, որ այս լուրը մի օր տեղ պետք է հասներ, որ ուրիշն էլ չմատներ, քամին կտաներ։

— Ինչ անես, եղբայր, արի՛ ու մի՛ անիլ, ես էս պատերազմիցը մի գոգ ոսկի եմ դուրս բերել, հիմա ինձ հարցրո՛ւ՝ քառորդը մնո՞ւմ է. ինչպես առածն ասում է՝ քթալ-քթալ հավաքում ենք, շերեփ-շերեփ դուս տալիս. ճանճն ածում է, ճիճուն կրում։

— Ի՞նչ ես արել։

— Ինչ որ դու ես արել. ինձանից ուժեղին՝ իմ նաչալնիկին եմ տվել, ի՞նչ պետք է անեի։

— Իսկ եթե հիմա ետ ուզելու լինի՞ն։

— Այն ժամանակը սև ու մութը մեզ կտանի։

— Դու ի՞նչ կանես, եթե մեդալներիդ պոլիմպրյալներն ետ պահանջեն։

— Եթե միայն այդքանը լինի, կարող եմ տալ. դու ասա ցորենի, սայլերի և ուրիշ տեղերից եկած արդյունքների տեղը չիմանան։

— Վերջապես աստված է մնացել, ապա թե ոչ, այդպիսի սառնասիրտ քննիչի ձեռքից մենք բոլորս էլ կկորչենք։

— Այդ է բանը, որ ոչնչով չես կարողանում մուտք գտնել. այսպիսի անշահասեր քննիչ իմ 24 տարվան ծառայության մեջ ես չեմ տեսել։ Մենք իմացել ենք, որ քննիչներ գալիս են, տեսել ենք սկզբումը նրանց կծու, բայց մի երկու ժամից հետո, ոսկիների շնորհիվ, քաղցրացած դեմքը. ականատես ենք եղել նրանց ձևի համար արած գրագրությանցը, ուտացրել, խմացրել, վայելչություններ ենք ցույց տվել նրանց և մի քանի հարյուր մանեթի մնաս բարով ասելով, շատ սիրով ճանապարհ ենք դրել։ Բայց այս մարդը բացառություն է, մինչև օրս քննված մեր աստիճանավորների հետ գործ դրած վարմունքը մեզ օրինակ է. խեղճերը գլխավորապես յուրյանց առաջարկած կաշառքի պատճառով նրա խիստ բարկությանն ենթարկվեցան։

— Կարելի է քի՞չ են տվել։

— Ո՛չ, եղբա՛յր։ ես իմ ձեռքովս եմ համարել իմ պաշտոնակցի տվածը. ոչ մի քննիչ այդքան չի ստացել։ Բայց տե՛ս, թե այդ նոր պարոնն ի՞նչ է արել. ամենայն քաղաքավարությամբ փողը ետ է տվել. այս պահեցե՛ք,— ասել է,— ձեր երեխաներն ինձանից ավելի մեծ կարոտություն ունին, ես ինձ համար հաց ունիմ։ Երբ որ գործը քննել ու հանցավոր է գտել,— հիմա,— ասում է,— գնա բեր թե՛ ինձ առաջարկած փո-

ղերն և թե՛ տասն այնքան ավելի. ես հիմա համոզվեցա, որ այն փողերը ոչ թե քո երեխաների ուտելիքն է, այլ խեղճ ռամկի մերկ ու քաղցած մանուկների բերանի պատառը. այդ փողերն յուրյանց տերերին պետք է վերադարձնել։

— Աչքներս լո՛ւյս. բավական չէ, որ պաշտոնազուրկ պետք է լինինք, աղքատությամբ և մուրացկանությամբ պիտի մեր օրն անցնենք։

Այսպես խոսում էին ամեն տեղ երկու-երեք աստիճանավորներ միասին հավաքված ժամանակը։

Այս խոսակցությունից մենք հասկացանք, որ Երևանու նահանգումն այժմ ավելի մեծ շփոթ է՝ քան թե անցյալ պատերազմի միջոցը. ամեն ոք նոր քննիչի և յուր գործողությանց վերա էր խորհում ու խոսում։

Այս պարոնը մի հազվագյուտ անձն էր՝ բարձր կոչման տեր. նրա վսեմ դեմքը և հեզահամբույր բնավորությունը արդարամտությունը գծագրել էին նրա երեսին. նրա շարժվածքը վեհ էր և ծանրաբարո, նրա գործքն անաչառ էր և անկողմնապահ, իսկ պարզ հագուստը և քաղցր վարմունքը մատչելի էին արել նրան ամեն կարգի մարդկանց։ Շատ չտեվեց, գյուղացիք իբրև հայր ճանաչեցին նրան, որևէ անբավականություն ունեցողներն առանց նախապես հայտնելու՝ ներս էին մտնում նրա մոտ. նա ամենքին նստացնում, խոսեցնում, վշտերն իմանում և հուսադրությամբ հերթը գալուն հրավիրել խոստանում։ Ոչ ոք երկմիտ չէր դեպի նրա խոսքերը, ամենքն էլ անդրդվելի հավատ էին ընծայում նրա խոստմունքներին և յուրյանց բողոքի կեսը կատարված համարում։

Օր չէր անցնիլ, որ նոր դեպքեր լսվեր, նոր փոփոխությունների և ծառայողների, կանգնման կամ գլորման ձայնը վեր չըլներ։ Նոր քննիչը թեպետ դատավոր չէր, բայց կարծես թե անզուսպ ավազակներն էլ պատկառում էին այդ մարդից. ոչ մի գավառում ասպատակությունների ձայն չէր լսվում։ Այս, իհարկե, շատ քնական էր, ավազակներին խրախուսողներն այժմ դրանով պարապելու միջոց չունեին, յուրյանց գլուխը միայն փրկելու հոգսումն էին. արդարությունն ամբողջ նահանգում յուր թևերը տարածել էր, և ո՞ր գողը, կամ ճանապարհ կտրողն էր ցնդել արդարության բարկությունն յուր վերա թափել. կաշառելով ազատվիլ անհնար էր, հատուցումը Սիբիր կամ կախաղան էր լինելու. հնարագետ ավազակներն էլ յուրյանց գլխի ճարը տեսան, թողին հեռացան առժամանակ ուրիշ նահանգ կամ արտասահման. նրանք շատ տերտերից լավ են հասկացած եղել այն խրատը, որ ասում է. «փախիր, և թաքիր առժամանակ մի, մինչև անցցե բարկություն տյառն»։

Իզուր չէր արևելյան պատերազմի ժամանակ ծառայողների երկյուղը, անտեղի չէր նոցա սարսափը. նոր քննչի շնորհիվ մի քանի աստի-

ճանավորների տներ այնպես քանդվեցան, որ փոշին մինչև այսօր էլ բարձրանում է. թեպետ նա յուր բարեսրտությամբը ոչ ոքի անվերջ կորստյան պատճառ չդարձավ, որի համար մեծ իրավունք ուներ, բայց շատերին ծառայական պաշտոնիվ հաց աշխատելու միջոցից հավիտյան զրկեց, բոլոր հափշտակածները ձեռքերիցն առավ և ժողովրդի վերա բաժանեց. մանավանդ այնպիսի փողերը, որոնք մի նշանակյալ գործի համար ստացել էին։

Այդ ծառայողներից ոմանք շատ թշվառ վախճան ունեցան, այլք գործակատարներ մտան, մի քանիսն ավելի արդար վաստակով պարապեցան, յուրյանց տնտեսական դրությունը բարվոքելու հետևիցն ընկան։ Այժմ կենդանիքն յուրյանց ծերությունը, իսկ մեռածների ժառանգներն յուրյանց կյանքը բարօրությամբ են անցկացնում։

Եղան, այո՛, և այնպիսիքը, որոնք խույս տվին արդարադատ քննչի աչքից, մեծամեծ պալատներ ու արդյունաբեր շինվածքներ կանգնեցրին և ճոխության մեջ հղփացած՝ այսօր էլ պարծանքով հիշում են յուրյանց քաջաբար ճողոպրիլը, բայց դրանք շատ սակավ են։

Մենք, իհարկե, չենք կարող ամենքին հիշել կամ ճանաչել։ Կարծեմ այս դուրս պրծնողներիցն եղել են և այնպիսիները, որոնք այստեղից ազատվելով, ուրիշ գործում արդարության ձեռքն են մատնվել և ժողովրդի արյան գնով ձեռք բերածները կորցրել ու ամենադառն աղքատության մեջ յուրյանց վախճանը տեսել են։

Թե այսպես և թե այնպես, 50 թվականներին Երևանու նահանգն եկած քննիչը մի դատախազ երկնային աջ էր ոմանց համար և արդարահաս փրկիչ ընդհանուր ժողովրդի համար։

Հետևյալ գլուխները ցույց կտան, թե որքա՛ն ճշմարիտ է մեր ասածն այդ զարմանալի մարդու համար, թե արդարացրե՞ց նա ժողովրդի հավատը և թե հերթի սպասողներն ի՞նչ էին շահվում յուրյանց բողոքից։

ԼԸ

ՀԻՆ ՄԻԿԻՏԱՆ, ՀԻՆ ՄՈՎՐՈՎ

Ճշմարիտ է այն խոսքը, թե մարդուս գլխավոր դատավորն յուր խիղճն է. նրանից արդար և ոչ մի դատաստան անող չի եղել ի սկզբանե անտի և չի էլ լինելու. ի՞նչ գործում ես՝ բարի կամ չար, խիղճը քեզանից անբաժան է, տեսնում է արածներդ և յուր վճիռն ամենքից առաջ տալիս է, կամ գափնի պսակ և կամ հանցավորի սև կնիք է դնում ճակատիդ։

Ոչ մի վճիռ, կարելի է ասած, այնպես զգալի չի լինում, ինչպես մարդուս ներքին դատավորի, ամենքին իրան է հայտնի, թե ինքն ինչո՞ւ այսօր խիստ ուրախ է, կամ ի՞նչ կնճիռներ են պատել նրա երեսին. կուզես փակվիր սենեկումդ, կուզես անկողնի մեջ մտիր, գլուխդ վերմակի տակը կոխիր, եթե դու քո դատավորի առաջին սևերես ես, մի սուր խայթոց ծակում է սիրտդ, իսկ եթե պարզերես՝ մի հրճվանք, մի ուրախություն փառավորում է քեզ։

Աշխարհքս առանց փորձանքի, առանց պատահարի չի անցել. շատ անդամ անմեղն իզուր տեղը պատժվել է և ավելի շատ սարսափելի չարագործը փառքերով ու պսակներով և օվսաննայիվ ընդունվել։ Մենք թողենք այդ երկու անհատների արտաքին երևույթը և ներսը քննենք, տեսնենք, թե անմեղն ինչպե՞ս է դիմել դեպի յուր կորուստը և չարագործն ինչպես յուր փառքին դիմավորել։ Տե՛ս, ահա աշխարհքը դատապարտում, թքում ու գանակոծ է անում մեկին, որի երեսին թեպետ նըշմարվում է փոքր-ինչ տրտմություն, նրա մարմինը ցավում է, բայց նրա հոգին խաղաղ, նրա սիրտն անվրդով է, նա արհամարհում, ծիծաղում է մարդկանց հիմարության և անմտության վերա, նրա տված պատասխանները լինում են շատ պարզ, առանց կակազանաց. ընչի՞,— որովհետև ներքին դատավորը՝ խիղճը վաղուց նրան արդարացրել է։

Մյուս անձնավորությունը հաղթական կամարի տակովն անցնելուս, դափնիների և ծաղկների փնջերը նրա գլխին թափվելուս անգամ, կարծես թե տխուր է. նա իրան պատվող ամբոխից կարծես ամաչում է, չի վստահանում յուր վսեմ բարձրության գլխից նոցա երեսին նայել. նա համարում է, թե այս ամեն պատիվներն աչք շլացնելու և իրեն ծաղրելու համար են. նա բոպե առ բոպե սպասում է, թե ահա՛, նույն փառաբանող բազմությունը կգահավիժի իրեն մինչև անարգանաց անդունդը, նրա երեսին է միայն ծիծաղը, իսկ սիրտն արյուն է։ Ընչի՞, ո՞վ է նրա հանցանքը տեսել. աշխարհքը միաձայն վկայում է նրա առաքինությունների, քաջությունների, հայրենասիրության և այլ մեծագործությունների համար. բոլորը հիացած են նրա վերա, և ի՞նչ է ուրեմն մեր դյուցազնի կասկածի առիթը.— նրա ներքին դատավորը, այն խայթոցը, որ ամեն քայլափոխում ծակում է նրա սիրտը, այն ցավը, որ մաշում է նրա հոգին, այն ներքին ձայնը, որին մենք այլապես չենք կարող կոչել, եթե ոչ աստուծո ձայն։

Չի կարելի ասել, թե ամեն մի անպիտանի վերա այնքան փայլուն կերպիվ ներգործում է խղճի ձայնը։ Առհասարակ անզիղջ չարագործի համար ասում են, թե նրա խղճմտանքը մեռել է։ Այդ ճշմարիտ չէ, խիղճը միշտ կենդանի է. բայց երկարատև չարագործությունը, շարունակ

անպիտանությունն անօրենի համար սովորական է դարձել, բթացել է նրա նուրբ զգացողությունը, նրա հոգին անընդունակ է դարձել խղճի ձայնին ենթարկվելու, և այդ թշվառ էակը հավիտյանս կորած է համարել իրեն և արհամարհանք է նայել ամեն առաքինություններին։ Սակայն ես համոզված եմ, թե պատահում են մարդուս կյանքի մեջ այնպիսի օրեր, երբ ներքին ձայնն ահավոր կերպիվ զարթնում է անդարձ մեղավորի աչքին՝ նրան ավելի սարսափելի կերպիվ պատժելու համար։ Եթե առօրյա կյանքի մեջ ես չպատահի, վերջին րոպեին այդպիսի թշվառն ամենքի կարեկցությանն արժանի է։ Ահա նա անհույս հիվանդ է. նա զգում է, որ ցավն յուր մագիլները թաղել է յուր մեջ, քայքայել է իրա մարմնի կազմվածքի ցանցը, և մի քանի րոպեից՝ ինքը թողուլ հեռանալու է յուր սիրած աշխարհից։ Հավատա այդպիսին մի ուրիշ անդրաշխարհյա կյանքին կամ ոչ, ինչ կրոն կամ համոզմունք ունեցել է, այդ միևնույն է, նա բաժանվում է աշխարհքիցս, և այդ բավական է. նա այդ րոպեին թշվառ է, նա անիծում է յուր բոլոր անցյալը, յուր արած անօրենությունները։

Այդպիսի մահի դեմ գնալուց ոչ պակաս երկյուղիվ դիմավորում են արդարության ատենին, երբ հանկարծ երևում է մինը, որ յուրյանց գործերը քննելու է, երբ լսում է, թե մի դատաստան պիտի կտրվի նրա արածների վերա։

Այսպիսի թշվառներից մեկը համարվելու էր մեր մովրովը, երբ հանկարծ, ասացինք, յասավուլը զարթնացրեց նրան և հայտնեց քննչի գալուստը և դատարանի կնքելը։ Մի կայծակ էր, որ շեշտեց խեղճ մովրովի սրտումը, թե մի անդունդ էր, որ յուր ամենայն ահավորությամբը բացվեց նրա առաջին և պատրաստ էր նրան կլանելու։

Ներքին ձայնն յուր ազդեցությունն ունեցավ. նրա բոլոր արած անիրավությունները, հարստահարությունները, օրինաց և յուր պաշտոնին ընդդեմ գործածները, ինչպես մի հայելու մեջ, նրա առաջին պարզ երևվեցան. նրա իզուր տեղը դատապարտածները, ի թիվս որոնց, իհարկե, և մեր խեչանը, աչքի առաջին ցցվեցան և դատապարտում էին իրեն։ Որքան և կամեցավ մովրովը լրաբեր յասավուլի առաջին անտարբեր մնալ, չկարաց, պարզ աչքի պոչով տեսավ, որ յուր հլու հնազանդ ծառան նկատեց յուր շփոթմունքն և ձիծաղեց յուր շարժմունքի և երկչոտության վերա։

— Կորի՛, ի՞նչ ես կանգնել այստեղ, ես իսկույն գալիս եմ,— յուր վրդովմունքը կորցնելու համար բարկացավ մեր աղեն և որպեսզի հագնվեցավ միայնակ, նա որ յուր կյանքի մեջ առանց ծառայի չէր

հագնվել. հագնվեցավ, և սփրթնած, աշնան ծառի տերև դարձած, ներկայացավ մեր քննչին։

Խորազնին աչքերը կարդացին մովրովիս երեսին սույն իսկ րոպեից նրա հանցավորության ցուցակը, իսկ մովրովի կարկտանման երկարացրած սառը ձեռքը անսուտ վկա եղավ քննչի արդարացի նկատմունքին։

— Պատիվ ունիմ հարգանք ներկայանալ ձեր մեծապատվությանը... քննիչ Երևանու նահանգի։

Քաղաքավարական ձևերիս մեջ մովրովը պարզ գլխի ընկավ, թե ի՞նչ է ուզում ասել այս անագորույն մարդը. նա հասկացավ այդ բառերի ճիշտ նշանակությունը, որ էր՝ հոգեառ հրեշտակդ եմ, կամ ինչպես մեզանում ասած է՝ քոռ գրողդ։

— Շատ... շատ... ուրախ եմ,— թոթովեց մեր մովրովը։

— Լավ գիտեմ,— անձայն պատասխանն էր, իհարկե, քննչի։

— Ես քեզանից ավելի լավ գիտեմ,— մտքումն ասաց մինը, որ մի պատի տակից մովրովի և քննչի աչքից անտեսանելի կանգնած՝ դիտում էր։ Այդ մարդը նոր չէր այստեղ. սա էլ մովրովի նման քննչի գալստյան հոտն առել էր և նույն կարծիքին էր, որ այս քննիչն իրանից առաջ եկածների կարգիցը պիտի լինի, բայց նա մովրովի նման անհոգ, կամ ավելի լավն ասենք կարճատես չէր գտնվել, այդ բանի վերա մի քանի գիշեր մտածել էր։

Այս պարոնը թեպետ շատ լավ գիտեր, որ ինչքան անաչառ քննիչ լիներ, չէր կարող յուր վերա արատիք բերել, չէր գտնիլ մի հաստատ փաստ, որովհետև գրավոր և ոչ մի կետ չկա յուր վերա, ոչ մի մատենի, մի մատնաչափ թղթի վերա յուր անունը չէ դրոշմած, յուր գործածները բոլորը բանավոր մատենների մեջ են եղել, բայց և այնպես ապագա զգուշության համար լավ համարեց խոհեմությունը ձեռքից չթողնել, այս բանին հետախուզել։

Երեկ երեկոյան նա հանկարծ թամքեց յուր ձին և գնաց Երևան։ Թեպետ շատ մթնով տեղ հասավ, բայց հաջողեց մի քանի մերձավորներից և գործին ծանոթներից տեղեկություններ հավաքել նոր քննչի մասին։ Դողաց այդ պարոնը, երբ մի քանիսի անկումը լսեց. իսկույն եզրափակեց, որ շտապելու է սրա առաջն առնել։ Որքան հնարավորություն ուներ՝ արեց նա։

Աքաղաղները երկու անգամ խոսեցել էին, որ հեռատես պարոնը ձի նստավ ու շտապեց դեպի Զեյվա։ Եկավ խեղճը, բայց շատ ուշ։ Նա մի բան աչքից փախցրել էր. նա ավելորդ էր համարել հարցնել, թե յուր Երևան գտնված միջոցը ո՞ւր է նոր քննիչը։ Գուցե ոչ ոք չկարողանար հաստատ պատասխան տալ, ըստ որում ոչովի մտքից չէր անցել, թե

այդ սարսափելի մարդը մութը գետինն առնելուց հետո կարող էր փոստայի կառքով ճանապարհ ընկնել դեպի Զեյվա։ Մի խոսքով՝ շատ զղջաց անծանոթ պարոնը, որ ինքն այդ հարցն ուշադրության չէ առել։

Դեռ արեգակի շողը չէր սփռել Մասյաց կատարից Արարատյան դաշտի վերա, որ գիշերաշրջիկն եկավ, ձին կապեց և աչքին փոստայի սայլակն ընկավ, որ դատարանի դռանը կանգնած էր։

— Ափսո՜ս իմ աշխատանքը, մենք կորանք, քննիչն ըստեղ ա, անկարծիք գիշերս ա եկել, էջմիածին սպասել և լիսադեմին Զեյվա հասել։

— Էն ի՞նչ փոշտի տրոյկա[1] ա կանգելյարի դռանը կաննած,— հարցրեց անծանոթ պարոնը յուր սպասավորին։

— Չգիտեմ, կես սհաթ կըլնի, որ մի աղա մարդ եկավ ու մտավ մովրովի բակը,— պատասխանեց սպասավորը։

Պարոնը դուրս թռավ և սփրթնեց, երբ հեռվից տեսավ մեզ ծանոթ գրագիր հերոսին, որ ճրագը ձեռքին դողալով բռնել էր, իսկ մի անծանոթ մարդ, որին իհարկե կարողացավ իմանալ, որ քննիչն ինքն է, կընքում էր դատարանի դուռը։

Այդտեղ էին բոլոր գավառական պաշտոնյաները, բացի մովրովից։

— Սրա ձեռիցը պրծնիլը շատ դժար ա, կասմ անկարելի,— գուշակեց խելացի պարոնը,— մեր խեղճ մովրովը խաբվեց, որ կարծում էր, թե սա էլ առաջինների պես փողահաչ տվողներից կըլնի։ Չէ՛, սա շատ մարդի գլխի վրա շուռ կտա, մենք կորանք։ Տե՛ս, ի՞նչ զալումն[2] ա, քշերհանա եկել ա, քոմակչուն ու գրագրին վեր կացրել, մովրովին թողել քնած. ափսո՜ս, որ ես ճամփին ռաստ չեկա[3], թե չէ սա իմ առաջիցը չէր կարող փախչիլ, հիմի մեր մովրովն իմացած կըլներ ու շատ գործեր հիմի խեչանի աղջկա պսակի հրամանաթղթերի օրն ընկած կլինեին. բայց հիմի էլ շատ ուշ ա, մենք կորա՜նք։

Ընթերցո՜ղ, կարծեմ հասկացար հիմա մեր պարոնի ո՜վ լինիլը. սա միկիտան Սաքոն էր, թե, չէ մովրովի մոտ ո՞վ կար այդպես նախատեսանողը։

— Է՜հ, շատ հարկավոր ա, ի՞նչ եմ գլխումս մտցրել, թե մենք կորանք. հազիր ասեմ, որ մովրովն իր մարդկանցովը կորավ, ինձ ի՞նչ, ես մի միկիտան մարդ եմ, իմ գինի-արաղն եմ ծախում. ով էշը կըլնի, ես փալանն եմ, հորս որդին հո չի՜. սա չի՝ սրա հորոխպոր տղեն թող ըլնի, ինձ համար մին ա. համա ընչանք էս մրրիկն անց կենալը մեզ ըստեղ մնալը խելոքություն չի։

Միկիտան Սաքոն էլ չհեռացավ քննչից, այսինքն՝ ոչ թե մոտ գնաց,—

1 Սայլակ։ 2 Ճարպիկ։ 3 Չհանդիպեցա։

նա գիժ չէր, որ յուր ոտքովը գնա որոգայթն ընկնի,— նա պատերի տակովը, քննչի աչքից անտեսանելի, դիտում էր նրա արածները։

Մեկ մտածեց Սաքոն գնալ ծածուկ մովրովին զարթնացնել, բայց էլ ի՞նչ կօգտեր, բանը բանից անցել էր. Սաքոն թողեց ճակատագրին խաղալ մովրովի վիճակի հետ։

Սատանայական էր ժպիտը, որ Սաքոյի երեսին երևեցավ, երբ որ նա պատի տակիցը տեսավ մովրովին թույլ ոտքերով և պատի ծեփ դարձած՝ դեպի քննիչը մոտենալուս։

— Գիտեմ, թե ինչքա՜ն ուրախ ես,— մրթմրթաց Սաքոն մովրովի «շատ ուրախ եմ» կակազելով տված պատասխանին.— չէի՞ր ուզիլ, որ էս սհաթս մի թեթև խոլեր դրա փորը մտներ, ձեռաց կոլոլեր, էն աշխարհքը զրկեր. համա, խեղճ մարդ, հենց իմացի՛ թե խոլերը քիսեդ մտավ ու քեզ էլ հալից[1] քցեց, էլ դու ըստուց ետը ձեռներդ լվա՜ մհալի մեջ փորդ հաստացնելուց. հենց իմանաս, թե էսօրվանից ես տեսնում եմ քեզ զզզված չինովնիկների կարգումը։— Եվ Սաքոն պատի տակից դաժան կերպիվ ծիծաղեցավ իր բարերարի, կամ ճիշալը՝ յուր զոհի վերա։

— Դուք ներեցե՛ք ինձ,— խոսեցավ քաղաքավարությամբ քննիչը,— որ ես ձեզ անժամանակ նեղություն տվի և առանց ձեր ներկայության ձեր իրավարանը կնքեցի։ Մենք ամենքս պաշտոնական մարդիկ ենք և հավատարմության երդում ենք տված. իմ պարտքս այդպես էր պահանջում և հիմա էլ ստիպյալ եմ հայտնել ձեզ, որ այս րոպեից դադարում է առժամանակ ձեր գործունեությունը. դուք ազատ եք պաշտոնակատարությունից՝ մինչև ձեր գործերն աչքի անցնելն և ապա այնուհետև, եթե արդար դուրս կգաք, որի մասին կասկած չունիմ, այդ է ամեն մի ազնիվ մարդու պարտականությունը, այնուհետև, ասացի, դուք ընդունելով իշխանության շնորհակալությունը, կշարունակեք ձեր պաշտոնը։ Ձեր տեղն այժմ ժամանակավորապես պաշտոն է վարում ձեր օգնականը՝ նոր գործեր սկսելով յուր համար, իսկ ձեր գործերը մնում են ինձ մոտ, ես պետք է քրքրեմ։

— Ինչպես ձեր կամքն է։

— Կխնդրեի միայն, որ դուք այսօր իսկ շնորհ անեիք գնալ Երևան և սպասել իմ գալստյանը, գործերն այնտեղ պետք է քննվին, իսկ ձեր ներկայությունը ձեր իրավարանը քննելուս՝ ինձ ավելորդ կլիներ։

Մովրովը լուռ էր. նա գուցե որևիցէ բան էլ ուզում էր ասել, բայց լեզուն բերնումը չէր դառնում, և եթե հանկարծ աչքը դեպի դիմացի պատը չդարձներ, շատ կարելի է վայր կընկներ։ Նրա աչքերն ընկան յուր

1 Բարվոք դրությունից։

մտերիմ աչքերին. մի հենական կետ եղավ Սաքոն մովրովի համար, յուր սիրելու ներկայությունը ոգևորեց մովրովին, նա մի բոպե քաջալերվեց, կարծես մի օգնություն էր սպասում Սաքոյիցը, որն արդարև հասավ։

Աչքով, գլխով նշանացի արեց Սաքոն պատի տակից մովրովին և մատները շփելով հասկացրեց այս բոպեին ինչ ընթացք բռնելը։

Մովրովն իմացավ Սաքոյի միտքը. նա խորհուրդ էր տալիս ներս հրավիրել քննչին յուր սենյակը, թեյի խնդրել և կաշառք առաջարկել, և այն ոչ թե չնչին գումար, այլ հազարներ։

— Տունդ քանդվի՛, էլ ձեռդ ի՞նչ ճար ունիս, էլ ի՞նչ ես կուչ եկել, տզաթենել[1] հիվանդ հավի պես. տեսնո՞ւմ ես, մի խոտքով պոչդ պոկեց, դե՛ բաց արա տոպրակի բերանը, էլ ո՞ր օրի համար ես պահում,— ոտքով, գլխով հասկացրեց Սաքոն մովրովին։— Բայց, խեղճ մա՛րդ, ես անց որ ռավուշիցը[2] տեսնում եմ՝ քո քարը ծովն ընկավ, փողն էլ չի օգտիր. էդ մարդը նրանցից չի երևում. դա ինձանից շատ ետ եկածն[3] ա։ Բայց կուզես նկատեմ, գլուխս գրավ կտամ, թե դրա ատամներն ինձ վրա բռնին. մեռնի՛, կտրի՛, Սաքոյի կողքովը չի կարող անց կենալ. սպասի՝ տեսնենք։

— Խնդրեմ դեռ շնորհ բերեք ինձ մոտ՝ թեյ խմենք, մի փոքր հանգստացե՛ք, մինչև իմ ձիս էլ պատրաստ լինի,— խոնարհությամբ հրավիրեց մովրովը քննչին։

— Թեյի մասին ես շատ շնորհակալ եմ, ես թեյ խմելու սովորություն չունիմ, իսկ ձեր սենյակ մտնելն առանց այդ էլ պետք է լինեիր։ Դուք ուզեք ինձ ներողություն խնդրել և ասեք, որ դուք այլապես չեք կարող ընդառաջել ձեր սենյակը, եթե ոչ իմ և այս պարոնների հետ միասին, և թե դուք ոչինչ չեք կարող վերցնել այնտեղից առանց մեր գիտության. ձեր ամեն խնդիրը, բացի մի ձեռք հագուստից, որ նույնպես պետք է ականջ դնենք, դուք չդնեք և վերցնեք. ձեր ունեցած փողն էլ կնքվի ձեր ներկայությամբ և կուղարկվի գանձարան պահվելու, մինչև քննությունը վերջանալը, իսկ ձեզ ծախսելու համար կտրվի գանձարանից մի որոշյալ չանակություն։

Մովրովն էլ ուժ չունեցավ խոսելու կամ կանգնելու, նա էլ չկարողացավ զսպել խրան և բոլոր մարմնով դողաց և, եթե յասավուլը մոտ չէր վազել և կուռը չէր բռնել, անպատճառ գետին կընկներ։

— Մի՛ շփոթվեք, խնդրեմ, նստեցե՛ք փոքր-ինչ այս նստարանի վրա և հանգստացե՛ք,— քաղցրությամբ խորհուրդ տվեց քննիչը,— հուսամ, որ այս պաշտոնական ձեռնարկությունից ձեզ վնաս չի հասնի։

1 Բնդ կախել։ 2 Գործի հանգամանքները։ 3 Ճարպիկ։

— Ես հիվանդ եմ,— պատասխանեց թույլ ձայնով մովրովը։

— Ուրեմն ավելի շուտով հարկավոր է ձեզ շտապել Երևան, ուր կարծեմ, ինչպես նահանգական քաղաք, լավ բժիշկ կգտնվի։

— Դե՛, Սաքո՛, էլ մի՛ կաննիլ, փասա՞փուսեդ[1] հավաքի,— մրմնջաց Սաքոն ու երեսը ետ դարձրեց դեպի գինետունը։

Կես ժամից մովրովն երկու յապավուլի ուղեկցությամբ, ձի հեծած, գնում էր դեպի Երևան։ Նա մի վերջի անգամ էլ ուզեցավ յուր հավատարմի հետ խոսել. մոտեցավ գինետանը և ի՞նչ տեսավ. միկիտանխանն բոլորովին դատարկ և Սաքոն մի-երկու ղեյվացվոց հետ կանգնած, փող է համարում. նրա ձին թամբած, դռանը կանգնած էր։

— Էս ի՞նչ բան է,— հարցրեց մովրովը Սաքոյին դուրս կանչելով։

— Ոչի՛նչ, աղա՛, գլուխ պրծացնելու տարի ա, դուքանիս մեջը ծախեցի, առուտուրս վերջացրի, փողերն առնում եմ, որ գլուխս առնեմ քաշվիմ, ընչանք էս սելավն[2] անց ելնա, տեսնենք՝ գլխներս ի՞նչ ա գալիս։

— Միջի ապրանքն ի՞նչ արիր։

— Դատարկեցին, տարան, էժան տվի, որ ոչինչ չթողան, միկիտանխանի հոտը կտրվի էս տանիցը. շատ վնաս արի, համա ի՞նչ անենք։

— Դե՛, արի ինձ հետ գնանք։

— Չէ՛, աղա՛, էսօրվանից մենք էնպես պտի անենք, որ սաքի իրար ճանաչում չենք. երկուսիս օգուտն էլ էս ա, դու աջ կերթաս՝ ես ձախ։

— Հիմի դու աջ գնացիր, ես ձախ,— մովրովի քամակիցը գլուխը շարժելով ասում էր Սաքոն,— բայց ոնց որ ես ճին միկիտան Սաքոն եմ, դու էլ ճին մովրովը, էսպես էլ գիտեմ, որ իմ գործս աջ գնաց, քոնը՝ ձախ։

ԼԹ

ՇԱՀԱԶԻՉՅԱՆՑ—ԿԱՄՍԱՐԱԿԱՆ—ԱՇՏԱՐԱԿԵՑԻ

Երևանու իրավարանների մեկի դռանն ասեղ քցես՝ գետինը չի ընկնիլ. բազմություն, աղաղակ, բարձրաձայն ծիծաղ, Հայհոյանք, խառնվել են իրար, ոչինչ բան չի հասկացվում։ Մի բառ միայն շուտ-շուտ լսողի ականջին է դիպչում՝ մեղալ, մեղալ։ Այսքան բազմության մեջ մի քաղաքացի, մի մաքուր հագնված մարդ չի երևում. բոլորը խառնիճաղանջ

1 Ունեցած-չունեցածդ։ 2 Հեղեղ։

ռամիկներ են, Թուրք, հայ, քուրդ միմյանց մոտ ուծված են։ Հեռվում միայն մի քանի քաղաքացիք կանգնել, ծիծաղում են միամիտ ռամկի վերա։

Երկու ոստիկանական Թուրք ստորին պաշտոնատարք շատ անդամ կամեցան մահակներով հեռացնել ամբոխն իրավարանի դռնից, որ ներս ու դուրս անելը չարդելվի, հնար չեղավ։ Շատերը բարձրացել էին լուսամուտների վանդակների վերա և ներս էին նայում։ Երբեմն-երբեմն մի քրքջյուն, մի ծիծաղ բարձրանում էր պատուհանների կանգնողներից և հեռագրական մագնիսի նման լուր տալիս ներքևի կանգնածներին ներս մտած մարդու գլխի եկածը։ Իսկույն բոլորը միասին մի խնդակցական ծիծաղ էին բարձրացնում և էլի լռում, սպասելով իրավարանից դուրս եկողին։

— Հը՛, ի՞նչ արիր,— քանի մի հարցեր տեղում էին այդ մարդու գլխին,— մեղալը դոշիդ չի երևում, բեգզադա չես դառել։

— Աստված ոչ գիտա մեր մովրովի գլուխն ու արևը, իմ դեղին պոլիմպրյալի տեղակ էս հինգ մանեթը տվին ու դուս արին. օղորմի՛ իրանց հորը, էս էլ որ չտային, ի՞նչ պտի անեինք, կեսը կտրելու հո չէինք։

Եվ ներսից դուրս եկողը ցույց էր տալիս յուր ձեռքում ճմլած հինգ մանեթանոց թղթադրամը։

Անմիջապես ներսից դուրս եկողի քամակից մի գրագիր կանգնում էր իրավարանի շեմքի վրա և ձայնելով՝ մի մարդու անուն տալիս։ Բայց այս ժամ անցնում էր, մինչ կոչված մարդը, ճղելով ամբոխը, առաջ էր գալիս, ներս մտնում իրավարանը, որից հետո իսկույն դուռը վրեն փակվում էր։

Նույն և մի գոչյունը, նույն հոհոցը, նույն ծիծաղն և հայհոյանքը կրկնվում էր մովրովի ստվերի դեմ։

— Շահազիզյանց—Կամսարականն—Աշտարակեցի՛,— ձայն տվեց ի վերջո գրագիրը.— Կամսարականն Աշտարակեցի՛,— կրկնեց ժողովրդի արձագանքը.— Կամսարականն Աշտարակեցի,— երեքկնեց ու չորեքկնեց ամեն ոք, և դեռ մարդ չի երևում։

— Այստեղ չէ՞,— գոչեց գրագիրը։

— Էստե՛ղ էր, հենց հիմի էստե՛ղ էր, էս սհաթս ես տեսա, սղմվել էր խալխի մեջն ու դուս չէր կարում գալ։

— Ձեր տունը չքանդվի՛, ես կարա՞մ էս հեշատքի[1] մրջովն անց կենալ, փորիս ճխիլը դուս կգա,— մի ձայն լսվեցավ ամբոխի քամակի կողմից։

[1] Ամբոխի։

Բավական միջոց անցավ, որ ոստիկանները փայտի զորությամբ մի անցք բաց արին և քրտնքում կորած Շահազիզյանց—Կամսարականին ներս բերին. բանից դուրս եկավ, որ խեղճ Կամսարականս դիպվածով ընկել է խաժամուժի կուտակի մեջ և կես ժամ հազիվ կարողացել է դուրս ընկնել բաց օդի մեջ։ Քաղաքացիք դրա վերա մի կուշտ ծիծաղացել են։

— Բարո՛վ,— պատասխան տվեց նախագահական բազկաթոռի վրայից քննիչը Կամսարականի խռնարհ ողջույնին,— որտեղի՞ց ես, քո անունն ի՞նչ է։

Կամսարական Աշտարակեցին աչք ածեց շուրջ բոլորը և քթի տակին ժպտալով՝ պատասխանեց.— ես աշտարակցի եմ, իմ անունս է... Շահազիզյանց—Կամսարական—Աշտարակեցի։

— Այդ ի՞նչ երկար անուն ունիս,— հարցրեց քննիչը քաղցրությամբ։

— Ես իմ հոր հարազատ զավակն եմ, աղա՛, իմ պապերս էլ ազնվական են էլել ու երկու ազգ են ունեցել՝ Շահազիզյանց—Կամսարական, ինքս էլ բնիկ աշտարակցի եմ. ոչ ուզում եմ հորս երախտիքը մոռանալ, ոչ պապերիս պատիվը վեր քցել, ոչ էլ իմ ծնած տեղս՝ իմ հայրենիքս ուրանալ։

— Շատ լա՛վ, շատ լա՛վ. հիմա ասա՛ ինձ, բարի Շահազիզյա՛նց,— ասաց քննիչը,— ես նկատեցի, որ դու տուն մտնելուս շուրջ նայեցիր և ժպտացիր, ի՞նչ էր պատճառը։

— Ոչի՛նչ, գլխիդ մատա՛ղ, լավ մարդկանց երեսը տեսնելուս մարդի բան հաջող կերթա, սիրտը կուրախանա. մեր աղին տեսա, ուրախացա։

Կամսարականը ցույց տվեց մովրովին։

— Շատ լա՛վ, դիցուք քո ասածը լինի, այժմ պատասխանի՛ր ինձ. դու լավ ճանաչո՞ւմ ես քո ցույց տված պարոնին։

Քննիչը նույնպես գլխով ցույց տվեց մովրովին՝ առանց երեսը նայելու։

— Ո՞նց չեմ ճանաչում, գլխիդ մատա՛ղ, դա մեր աղեն ա, մեր տերն ա, մեր հերն ա, մեր մհալի բարերարն ա, քոռ պտի ըլեմ, որ չճանաչեմ։

— Քեզ ինչ հարցնեմ, պետք է իսկությամբ պատասխան տաս, թե չէ լավ չի լինի քեզ համար. սուտ խոսողն աստուծո առաջին սևերես մնալուց հետո՝ օրենքի առաջին էլ պատժվում է։

— Մեռնիմ աստծուն էլ, օրենք դնող թագավորին էլ, երկուսի համար էլ մեր գլուխը մատաղ կտանք. թե որ նրանց մենք խաբենք, մահի ենք արժան։

— Շատ շնորհակալ եմ, երևում է, որ դու մինչև հիմա ներս եկողներից շատ բարձր ես կրթությամբ և հասկացողությամբ. այդ շատ-ուրա-

խալի է, որ ժողովրդի մեջ քեզ պես օրինավոր մարդիկ գտնվում են. ես մինչև հիմա ոչ մեկից չմխիթարվեցի։

— Ես արժանի չեմ այդքան գովասանքին, գլխիդ մմատա՛ղ։

— Ասա՛ ինձ, սիրելի՛, ձեր մովրովին դուք երբեմն-երբեմն պարգևներ, ընծաներ տալիս էի՞ք։

— Էդ մեր պարտքն ա. մովրովը որ կա, ես արդ տրի թե մհալի հերն ա. որդիքը պարտական են իրանց հորը պատիվ տալու, իրանց աշխատանքից նրան բաժին հանելու. մեր սաղ մհալը էդ շատ լավ հասկանում ա, ու իր պարտքը կատարում. ամեն գեղ իր մասիլիցը[1] մովրովի բաժինը պտի ջոկի ու ղրկի. մի՞թե մեր ազա մովրովը ձեզ չի ասել, իր մհալիցը շնորհակալություն չի արել. ես ուրիշ մհալ չեմ ասել, համա հույս ունիմ, որ մեր աղեն իր ժողովրդիցը շատ բավական կըլնի. ընենց չի՞, մովրով ազա,— ասաց Կամսարականը։

Պատասխան չեղավ։

— Ճշմարի՞տ է այս պարոնի ասածները,— հարցրեց քննիչը մովրովից խոժոռ դեմքով։

— Այո՛, ընծա բերում են։

— Իսկ եթե չտանեք,— դարձավ սիրալիր դեմքով քննիչը դեպի Կամսարականը,— ի՞նչ կանեն ձեզ։

— Չտանե՞նք, ո՞նց թե չտանենք. չենք տանիլ, համա մեր կորկոտը կեփվի[2]. դեռ տանելով, տալով, կաշառքի զուռով գեղը պարտքի տակից չենք կարողանում ազատել, ժողովուրդն ընչանք շլինքը նեղության մեջ ա, թե որ չտանենք, հո՛, որդիքս ծախենք՝ չենք ազատվիլ։

Կամսարականը մովրովների բոլոր հարստահարությունները, կաշառակերությունները, ճնշումները մի առ մի պատմելուց հետո եզրափակեց, որ ժողովուրդը կաշառության համար տրտունջ չունի յուր կառավարիչներից. ի հնուց այսպես եկել, այսպես էլ շարունակվում է։ Միայն թե ինչ բանի համար որ կաշառ առնում են,— վերջացրեց Կամսարականը,— այն գլուխ տանեն, մենք ուրախությամբ պարտքի տակ կընկնենք և կտանք. սակայն ցավն այս է, որ կաշառներ առնում են, փողերն իղուր գնում են և ոչ մեկի դատը չի վերջանում։

— Ընչի՞ գանգատ չեք անում, ընչի՞ լռությամբ տանում եք,— հարցրեց քննիչը։

— Ի՞նչ ես ասում, աղա ջա՛ն, մենք ի՞նչ կհամարձակինք բերան բանալ. դու դեռ չես իմանում, թե ինչ ասել ա՝ ռահաք ու մովրով, էդ

1 Բերքից։ 2 Կպատժվինք։

կնշանակի, ռովիվ և ոչխար. մի՞թե ոչխարը պտի անբավական ըլնի իր բուրդը խուզողիցը. կամ թե չէ, որ գանգատ անենք, տակիցը կարա՞նք դուս գալ։ Հիմի էլ լեգուս ընդուր համար ա բացվել, որ պարզ գիտեմ, թե մեր աղեն իր մհալիցը շատ շնորհակալ ա, ու էն մի քանի բաներն էլ, որ իր օբովն էլել են, իր մեղը չեն. ոնց որ ասեցի, չէր տալ՝ չէր մնալ, թե չէ միաս կերել էի՞, որ գլխիցս ձեռ էի վերցնում. թե կուզես մի-երկու բան կպատմեմ, լսի մեր առաջվա մովրովների արածներից։

— Ասա՛։

— Չեմ ուզում հիշել, թե ո՞ր մհալումն էր, հարկավոր էլ չի իմանալը, էսքանն իմացի, որ էդ մհալի մովրովը շատ հարամկեր մարդ էր, ռահաքի հոգին հանել էր, ունեցածների շատ բաժինը աշկյարա ձեռքներիցը խլում էր, ընչանք ձուն ի՞նչ ա, համբարել էր տալիս ու երկուսն ինքը վերցնում, մինը տիրոջը թողում. քանդող-քանդողի, տանող-տանողի էր. մի երկու տարումը ցամաք հացը մհալից կտրվեց. գողություն, ավազակություն, մարդասպանություն սովորական բաներ էին դառել. գլուխը մի սոխ էր. տանիցդ մի վերստ հեռու գլխիդ տերը չէիր. ի՞նչ անես, լավ էլ օբով-ցերեկով 100 մարդ տեսավ, որ քո հարևան գեղացի թուրքը քո ախպորն սպանեց, տավարդ հանդիցը քշեց տարավ՝ ձենդ փորդ էիր քցում, ո՞ւմ գնաս, դիվան դատաստան չկա, ու թե որ աստված գլխիդ խռով կացավ, դարդակ ձեռով գնացիր, իմացի՛, որ վերջին օրդ ա։ Վերջը դանակը որ ոսկորին հասավ, մհալի գլխավորներիցն երեք մարդ խելք-խելքի տվին, արիեն աչքների տակն առան ու գնացին քաղաք, նաչալնիկին խնդիր տվին։ Դե՛, գեղացին ի՞նչ գիտի, թե օրենքը ո՞րն ա, կամ օրենքի գրքի մեջն ի՞նչ ա գրած։ Դրանք մի գրագիր են գտնում, իրանց արվեն գրել տալիս։ Դու մի՛ ասիլ էդ գրագիրը օրենքի գրքի 10 և 15 հատորումը մի-երկու տուն ա գտած էլել ու գրել, որ նրանցով մովրովին իր արածների համար Սիբիր կարելի ա ղրկել։

Մի օր սաղ մհալը թնդում ա, որ մովրովին նաչալնիկը շատ բարկացած հալ-հալբաթ՝ տարել ա։ Խեղճ ժողովուրդը ձեռն առ աստված բռնած՝ փառք ա տվել, մի երկու գյուղում էլ մատաղ են մորթել դրա համար։ Երեք-չորս օրից մին էլ ի՞նչ տեսնես, մովրովն եկավ ու թունդ եկավ, 20—30 ձիավոր քամակիցը քցած՝ թոզն երկինքն ա հանել։ Իհարկե, էն ա, ասեցին եկել ա, որ ինչ ունի-չունի՝ վերցնի ու քաշվի հեռանա։ Դու ո՞չ մեռնիս, աղա ջա՛ն, աչքդ բարին տեսնի, ինչ որ էս խալխն ա տեսնում. հրամայում ա մովրովը, որ սաղ մհալն իր կացած գեղը հավաքվի։ Իհարկե, որ էն իրեք արդա[2] տվողներին էլ կանչած կըլներ։

1 Անհապաղ։ 2 Եռգիր։

— Ողջի՛,— ձեն ա տալիս մովրովն ու մի սել լիքը կակող ճիպոտ դրա դռանը թափում են։

— Դուս տարե՛ք իմ կառավաթը[1],— հրամայում ա մովրովն ու իր բակի դռան մեյդանումն[2] իր կառավաթը դնիլ ա տալիս, էն օրենքի 15 հատորը դնում գլխատակն ու սաղ խալխի միջին թեք ընկնում ձգվում։

— Դե հիմի վեր կոխեցե՛ք էն իրեք մարդին,— գոռում ա մովրովն ու իր պառկած տեղիցն էն խեղճ խնդիր տվողներին էնքան ծեծել տալիս, որ դու էլ ասես՝ հերիք ա։

— Ջոքեշոք մոտ եկե՛ք,— պատվիրում ա նա էդ ծեծվածներին,— գպա ինձ։— Ինքն ըսկի գլուխը տեղիցը չի վերցնում։

— Ա՛յ, ձեր արխեն[3] ու քոմակը[4] գլխատակիս ա, եկեք մին էլ աղաչանք արե՛ք, կարելի ա սա կլսի ու ձեզ կօգնի։

— Տեսնո՞ւմ եք, որ ձեր պաշտպանը չկարողացավ ձեզ պետք գալ,— ծիծաղում ա բարձր-բարձր մովրովը,— խեղճը պինդ ծալված՝ գլխատակիցս չի կարողանում դուս գալ։— Տո՛, հիմարնե՛ր,— ասում ա նա,— դուք կարծում էիք, թե էս թղթի կտորները ձեր հավարին պտի հասնի՞ն. դուք որ սրա տեղն իմացել եք, բաս ես չգիտեի՞, բաս սրա հոդվածների դեմը ես պատրաստած բան չունեի՞. ո՞ւմ ինչ արիք. ձեր մատը տարաք՝ ձեր աչքերը հանեցիք. ամեն մի հոդվածի դիմացը 1000 մանեթ եմ պատշ։ բել, էդ փողերը ձեր ջանիցը պտի հանեմ, իմ քիսիցը հո՛ չեմ տալու։

Քննիչը ծիծաղեցավ։

— Հա՛, աղա ջա՛ն, հա՛, տես ի՞նչ ա անում.— հրամայում եմ ձեզ,— ասում ա,— որ էդ իրեք մարդդ ամեն մինդ ձեր քիսովն էդ պատերը շարեք. գնացե՛ք, 1000-ական մանեթ բերե՛ք, էս գրքի վրեն դրեք, եթե չեք ուզում, որ ձեր կաշիքը դաբաղխանումը[5] փտին։

— Ի՞նչ պտի անեին, աղա ջա՛ն. համ տվին, համ էլ շլինքները երկարեց. լավ որ իրենք էլ ունևոր մարդիկ էին, թե չէ խեղճերը հիմի որդով ընտանիքով Սիբիրումը կըլնեին։

— Իսկ ձեր մովրովն այդպիսի բաներ արե՞լ է,— հարցրեց քննիչը։

— Չէ, աղա, մեր մովրովն էդքան չի արել, բայց դե՛, ո՞նց կըլներ, որ մեղր ծախողը մատը չլպստեր. կովի տարի էր, օգուտ քաղելու տարի էր, պտի շահվեր. էսպես տարի հո միշտ չի ըլնում։

Քննիչն երկրորդ խոժոռ հայացքը ձգեց մովրովի վրա և այդքանը բավական եղավ խեղճի ոտք ու ձեռքը դողացնելու.

— Ասացիր, որ դու ես... Շահազիզյան—Կամսարականն—Աշտարակեցին,— խոսեցավ քննիչը,— քո անունն այս մատենի մեջ նշանակած է։ ուրեմն դու տվել ես փող, որ պատերազմական մեդալ ստանաս, այնպես չէ՞։

— Հրամելի՛ք, գլխիդ մեռնիմ։

— Պատերազմ գնացե՞լ ես։

— Ո՛չ։

— Պատերազմական գործերումը խառնվե՞լ ես։

— Ո՛չ։

— Ուրեմն ի՞նչ իրավամբ դու կարծում էիր, որ մեդալ կստանաս։

— Մեր մովրովի հրամանը դուս եկավ, որ մի պոլիմպրյալ բերողը մեդալ կառնի. ես էլ հավատացի ու տվի։

— Հրամանաթուղթ կա՞ր դրա մասին։

— Հը՛, աղա՛,— ծիծաղեց Կամսարականը,— ամեն բանի համար որ հրաման գրվի, որտե՞ղ կերթա, էլ թուղթ ու մրաքավ[1] չի հերիք անիլ։ Դրա համար յասավուլներ կան, միկիտաններ կան, տանուտերներ կան, նրանց բերնով եկած խաբարին մի՞թե մենք չենք հավատում. բաս էլ յասավուլն ընչի՞ ա պետք, որ նա իր աղի կամքն էլ չպտի կարողանա բերանացի հայտնել ու դամշու տակը քցելով կատարել տալ։

— Շատ կարելի է այդ մարդիկը սուտ յուրյանց օգտի համար մովրովի անունով պահանջներ են անում և մովրովը բոլորովին տեղեկություն չունի։

— Չէ՛, գլխիդ մեռնի՛մ, տեղ հասած օրը մենք իմանում ենք։

— Ուրեմն ա՛ռ էս փողն և գնա։

Քննիչը վերցրեց սեղանի վերա ծալքով դարսած հինգ մանեթանոցներից մի հատ և տվեց Շահազիզյանցին։

— Էս ի՞նչ փող ա, որ տվիր ինձ, աղա ջա՛ն,— հարցրեց Կամսարականը։

— Այդ քո մեդալի համար տված փողն է. օրենքի զորությամբ մեդալ ստանում են միայն պատերազմին մասնակցողներն, իսկ դու ասացիր, որ ինքդ չես մասնակցել։

Մեր... Շահազիզյանց—Կամսարականը նոթերը կիտեց ու կանգնած տեղիցը թղթադրամը շպրտեց սեղանի վերա։

— Այս ի՞նչ կնշանակի,— զարմացմամբ հարցրեց քննիչը։

— Ես իմ մեդալը կուզեմ։

— Քեզ ասացի, որ մեդալ անհնարին է քեզ ստանալ, բավականացի՛ր այդքանով և դուրս գնա՛։

1 Մահճակալ։ 2 Հրապարակ։ 3 Պաշտպան։ 4 Օգնական։ 5 Կաշու գործարանումը։

1 Թանաք։

— Բաս կամ ոչինչ մի տալ, ես ձեզանից զոռով չեմ ուզում, էդ էլ թող շատերի հետ գնա, կամ իմ փողս տվե՛ք։

— Մենք էլ քո փողն ենք տալիս։

— Ես իմ պոլիմպրյալը կուզեմ, պոլիմպրյալը, 184... թվի պոլիմպրյալը. ես վրեն մի տեղ էլ դանակի ծերով պստիկ նշան եմ դրել. էն որ չըլնի, ես ոչինչ չեմ ուզում, էդ էլ բաշխել եմ մեր աղին։

Կամսարականը մատով մովրովին ցույց տվեց։

— Բացատրի՛ր խոսքդ, ես չեմ հասկանում,— ասաց քննիչը։

— Էս սհաթս, գլխիդ մեռնի՛մ։ Ես Աշտարակու մեջ, չկարծես, որ ետ ընկած, հասարակ մարդկանցից եմ. ասենք իմ աղնվությունի համար էստեղ խոսք բաց անիլը տեղը չի, բայց ռահաթի մեջ էլ, փառք աստծու, մարդ եմ՝ ինչ որ մարդին կսազի. ես էլ ինձ համար անում ունիմ, պատիվ ունիմ, հաց ունիմ, տուն ու տեղ ունիմ. թե որ մի երկսիցը ցած ըլիմ, տասիցն էլ բարձր եմ։ Ի՞նչ երկարացնեմ, Աշտարակու իշխաններից մինն եմ, էս արխալղին, էս թևերիցս կախ-կախ էլած ծլանքներին[1] մի՛ խաբվիլ, կամ կարկատած չուխիս. ռահաթը պտի իր ռահաթությունի գյորա[2] վեր ու նիստ անի. մենք քաղքցոնց սպես չենք կարող փողներս քաղցած պահել, ամսներով տաք կերակրի համ չտեսնել, բազարումը մի-երկու կապեկի հացով ու թարաքյամա թուրքի երեսը քաշած աղվեսի պանրով օրներս անցկացնել ու զլպլտվիլ մահուդներով, ղանավուզներով ու բուխարա դտակներով։ Մենք մարդին շորով չենք պատիվ տալիս, կամ ճանաչում. ուզենանք էլ լավ շորեր հագնիլ, չենք կարող։ Հիմի ասենք, ես աղա մարդ եմ, բայց իմ տան ծառեն եմ. ինձ շատ ամոթ ա, որ իստակ հագնվեմ, ձեռներս սապնով լվանամ ու իմ տան, իմ հանդի, իմ հիքու գործը թողամ երեսի վրա ընկած. աստված մեզ էդ հացը չտա, էդ կսազի քաղքցուն, որ ընչանք իրիկուն ձեռները զումաշների[3], ապրշմեղենների ու գուլբաթինների[4] մեջ ա խառնում. պապական մենք հողագործությունն ենք տեսել, հողագործությունը մեզ, մերը հողն ա, ես նրա բարաքաթին[5] մեռնե՛մ։

— Շատ լավ բաներ ես խոսում, սիրելի՛ս,— ընդհատեց քննիչը,— բայց գործից հեռանում ես։

— Չէ՛, գլխիդ մատա՛ղ, մի քիչ էլ, խնդրեմ, համբերես։ Ասեցի, որ ես մեր գեղի առաջավոր իշխաններից մինն եմ, զոնաղասիրությունն[6] ամեն հայ քրիստոնեի պարտքն ա, էդ ամենքս էլ ունինք. մեր աղեքանցը, մեր մհալը կառավարողներին, զուլլուղի մարդկանցը պատիվ տալը համ պարտք ա, համ հրամանակատարություն. իհարկե, էդպես մեծավորին մեր գեղը գալուս՝ մենք չենք կարող հասարակ տներում ցած բերել. ասում ա՝ ճարկս ճարկավորաց՝ պատիվս արժանավորաց, ում որ լավ տներ ունի, իր աղին ընդունում ա։ Աշտարակու մեջը թե մի-երկու, երեք լավ տներ կան, մինն էլ իմ տներն ա (ասենք փառք իմ աստծուն, սաղ մհալի մեջը մեր գեղի պես լավ տներ ոչ մի տեղ չկա)։ Էլ կարծիք չկա, աղա ջա՛ն, որ մենծամենծ մարդիկն իմ շեմքովը շատ ներս ու դուրս արած կըլնին. մեր աղա մովրովն էլ, իհարկե, իրան էլ լավ հայտնի ա, որ ըսկի գործ էլ չունենա, քեֆի համար էլա տարենը մի քանի անգամ Աշտարակ ա գալիս ու շաբաթներով կենում. ի՞նչ ասիլ կուզի, որ շատ բաժինն իմ տանն ա վեր գալիս, իմ սառը ջուրն ա անուշ անում, իրան հալալ ըլնի՛։

— Էլ մնա՞ց։

— Էն ա, հա՛, գլխիդ մատա՛ղ, շատին դիմացել ես, քչին էլ դիմացի՛։ Մին էլ սաղ մհալի մեջը հռչակվում ա, թե ով որ մի պոլիմպրյալ բերի, մովրովին տա, անումը գրիլ տա, նա մեդալ կստանա։ Տունը մի մարդ կար՝ պոլիմպրյալը ճարեց, Զեյվա գեղը վազեց, երկուսը կային՝ գնացին. պատրաստությունի համար մի քանի մանեթ էլ ավել էին վերցնում ու որը ոտով, որը ձիով, որն էլ երկու մարդ մի ձիու կամ մի իշի վրա նստած՝ իրանց քցում Զեյվա։ Էս բանի համար ես ամենքիցն ավելի ուրախացա. աղեն (գլխովը մովրովին ցույց տվեց) ինձ խիստ լավ ա ճանաչում, տես ու ճանանչ ենք. միտք արի ու առանց փողի դուրս ընկա խելի[1] տեղ գնացի. ախար ես ումնի՞ց եմ պակաս. իմ գյադեն[2], իմ ծառեն մեդալ ստանա, ծեծից ազատվի, աշխարհքն աղնվական դառնա ու ես՝ Շահազիզյանց—Կամսարականս մնամ զո՞ւրկ։ Գնացի՛, գնացի,— շատ ու քիչ աստված գիտա,— մին էլ կաննեցի ու միտք արի. ա՛յ տղա, ես անփող ո՞ւր եմ գնում, բան ա, բալքի[3] մովրովը պատիվս չպահեց, անփող ինձ չգրեց, աշխարհս վաղվանը չի, մի քիչ սառնացել ա,— հազիր պատրաստ գնամ. մի պոլիմպրյալով մարդի երեսը չվեր բերեմ, տանեմ տամ, թե վերցրեց, մի աչքս լիս, թե չվերցրեց, երկու աչքս լիս, իմ փողն իմ ջիբին կմնա։ Նոր ետ եմ դառել, աղա ջա՛ն, կիսաճամփիցը, տուն եկել ու մի պոլիմպրյալ ծոցս դրել ու գնացել։

Քննիչը, թվի թե, շատ ձանձրացել էր, գլուխը կախել, ուշադրություն չէր անում։

---

1 Ցնցոտիներ։ 2 Համաձայն։ 3 Մետաքսեղենների։ 4 Ոսկեթելների։ 5 Լիություն։ 6 Հյուրասիրություն։

1 Բավականին։ 2 Ծառա։ 3 Գուցե։

Կամսարականն այս նկատելով՝ ծնոտը բռնեց և աղերսալից խընդրեց.

— Գլխիդ մեռնի՛մ, աղա՛ ջան, տեսնում եմ որ բեզարեցիր[1], գլուխդ տարա, համա կխնդրեմ, որ մի քիչ էլ լսես, էս ա պրծնում եմ։

— Շատ լա՛վ, շատ լա՛վ,— ժպտաց քննիչը և ուշադրությունը սրեց։

— Դեռ ձիուցը նոր էի վեր եկել,— շարունակեց Կամսարականը,— որ մովրովի միկիտանն ինձ ասեց, թե քո պոլիմպրյալը պետք չի, պտի 184... թվականինը տանիս ու մի քանի մանեթ էլ մովրովի ձեռ ու ոտի համար խարշես, որ խնդիրդ կատարվի։ Ինձ մոտ,— ասեց միկիտանը,— երևանից բերած էն թվի ոսկիք կան, թե կուզես՝ իր գլխովը, կամ թե չէ քո խաթեր մի բան էլ պակասով քեզ ծախեմ, տար տուր մովրովին։ Ես լսիլ էլ չուզեցի, մովրովն իմ բարեկամն ա, իմ խաթրը կպահի, ասեցի ու դուզ քշեցի, աղիս օթախը ներս մտա։ Ի՞նչ ես ասում, գլխիդ մեռնի՛մ, քո դուշմանի գլուխը չգա, ինչ որ իմ գլուխն եկավ. ոնց որ ես սովուղ-սաղկալ[2], խաղք ու խայտառակ էլա։

Կամսարականը պատմեց յուր և մովրովի մեջ պատահած անցքը։

— Դեռ ես չհամարձակվեցի, հինգ մանեթանոցը կամանց ստոլիդ վրա քցեցի, բայց իմ խեղճ պոլիմպրյալը, որի պսպղոցն աչքեր էր ծակում, ընչանք դռան շեմքը մին ֆռռաց։

Հիմի ես դրա համար եմ ասում, աղա ջա՛ն, կամ տալիս եք, պոլիմպրյալս տվե՛ք, կամ մեդալս, կամ թե չէ ես ոչինչ չեմ ուզում։ Գլխիդ մեռնի՛մ, թե իմ խոսքերումը սուտ ըլի, աչքս հանի՛, թե չես ավատում, մեր մովրով աղին՝ իրան հարցրո՛։

— Կամսարակա՛ն, դու էլ էդպե՞ս,— հոգվոց հանելով ասաց մովրովը հայերեն։

— Աղա ջա՛ն, դու էլ էդպե՞ս,— պատասխանեց նույնպես հառաչելով Կամսարականը,— մի՞տդ ա, որ ասեցի, թե, աղա ջա՛ն, քո Շահազիզյանց—Կամսարականն եմ, ախա՛ր էդ խոսքն ես ինձանից հո չէի ասում. ընչանք քեզնից իրավունք չունենայի, ո՞նց կվստահանայի։ Մի՞տդ ա, որ միշտ ինձ կանչում էիր՝ իմ Կամսարական. էլ էն մարդը չէի՞, էլ քո ոտն Աշտարակ չպտի ընկնե՞ր, երես-երեսի չէինք ստնի՞լ։

— Ուզի՞ղ են այս պարոնի պատմածները,— դարձավ քննիչը դեպի մովրովը։

Մովրովը սևացել էր։

— Այո՞,— հազիվ լսելի եղավ մովրովի բերանից։

[1] Զանձրացար։ [2] Նախատակոծ։

— Տնօրինել, որ դրսի ամբոխը չցրվի, ամենքն ետ բերեն յուրյանց ստացած փողերն և սպասեն,— հրամայեց քննիչը,— իսկ դուք, պարոն գավառապե՛տ, բարեհաճեցեք այս բոլոր հինգ մանեթանոցները փոխել 184... թվի պոլիմպերյալի վերա, և եթե չկան այդպիսիները, այն ժամանակվան գնացական գնովը թղթադրամով վճարեցե՛ք. իսկ այս պատվական անձի ոսկին գտնել անպատճառ և նույնը վերադարձնել, երևի պահած կունենաք։

— Քո արդարադատության համար, գլխիդ մեռնի՛մ, ես ոչ մի կոպեկ չեմ ուզում, խնդրեմ ինձ հասնելիք փողը ղրկես բերդը էն անմեղ դուսսաղներին, որոնք իզուր տեղը տարիներով արևի երես չեն տեսնում ու չոր հացից սավահի ոչինչ չեն ուտում,— մեջ մտավ Շահազիզյանց—Կամսարականն—Աշտարակեցին.— ըստուց ետը մեռնիմ էլ, դարդ չունիմ, աստված ինձ էն օրին արժանացրեց, որ իմ աչքերս քեզ պես մի ադալաթ[1] քննիչ տեսան։

— Քո խնդրվածքդ կկատարվի,— պատասխանեց քննիչը՝ Կամսարականի ձեռքը թոթվելով,— այս րոպեից ավետում եմ քեզ, որ բանտերն էլ շուտով արդարության ձայնը կլսեն, այն տեղերն էլ չեն մնալ առանց իմ այցելության։

Ամեն մարդ յուր փողը թղթադրամով ոսկվո կուրսի հաշվովն ստացավ և շնորհակալություն արեց քննչին։

— Միամտացնում եմ ձեզ,— խոսեցավ քննիչն ի լուր ամենեցուն,— որ ձեր տված բոլոր պարգևներն ու կաշառքներն, ինչքան հնարավորություն կա, կպահանջվին ձեր մովրովներից, և որովհետև շատ մասն հայտնի չէ, թե որքա՛ն է վճարված և ումնից, այդ ամենը կերթան հոգուտ բանտարկյալների և պատերազմի մեջ վիրավորված զինվորների, և այդ կարվի իբրև ժողովրդից նվեր. համաձայն ե՞ք, թե ոչ։

— Համաձայն ենք, գլխիդ մատաղ,— ձայն տվեց ամբոխը։

Շատ սակավ մովրովներ արդարացան, քննիչը, համարյա՝ պատժեց բոլորին, զրկելով ոմանց ծառայությունից, այլոց մի քանի տարի պաշտոնաղուրկ անելով և շատ սակավներին բոլորովին անբախտացնելով։

Մեր մովրովը վերջիններիս կողմն անցավ։

[1] Արդարադատ։

Խ

ԱՆՇՆՈՐՀՔ ԱՎԱՋԱԿՆԵՐ

Սմբատը շատ սառնությամբ լսեց միկիտան Սաքոյի շողոքորթական ցավակից խոսքերը, երբ մի օր ինքն եկավ Խեչանին տեսություն և իմացավ, որ իբր թե մի նոր քննիչ էին ուղարկել Երևանից, որը անմիջապես հրամայեց Խեչանին բերդը տանել։

— Հա՞, տարա՞ն, սաքի ուզում եմ ասել զրկեցիք, բաս սուտ չէին խեղճ հալիվորի մտածածները, շատ լա՛վ, տարան՝ տարան, մենք էլ ըստուց ետը տանողի ու տանել տվողի դուռը կճանանչենք։

Այս խոսքերը պատասխանելով միկիտանին, Սմբատը ձիու գլուխը թեքեց դեպի Աշտարակ։

— Սմբատ ջա՛ն, ա՛յ Սմբատ, ախար մի քիչ կա՛ց, տես՝ ի՞նչ եմ ասում, ախար դու հենց գիտես, թե մենք մեղավոր ե՞նք, ախար ես Խեչանի բարեկամն եմ. թե որ իմ թափած արտասունքը տեսնեիր, իմ շոքիլ աղանչաք անիլը լսեիր, մովրովի գտակը հանել քննիչին խնդրելուն ականատես ըլնեիր, էդպես անհավատ չէիր ըլնիլ։— Այսպիսի խոսքեր միայն քամու բերելովը Սմբատի ականջին էին դիպչում, բայց նա ուշք չդարձրեց, մի րոպեի մեջ Սաքոյի աչքիցն աներևութացավ։

— Սատանի հե՛րն անիծած,— մտածեց Սաքոն,— մարդի չարխը[1] որ թարսվի[2], 1000 տարի գլուխ տրաքացրո՛ւ, օդուտ չունի։ Ասենք դրանք մեզ ոչինչ չեն կարող անել, 10 տարի էլ Խեչանն անտեր բերդումը փտելու ըլնի, ոչով հարցնող չի ըլնիլ. էն նոր եկած քննիչը հո չպտի գնար քանտի բարբոսնած հոտերի միջին քաշ գար, որ իմանար, թե մի աշտարակցի Խեչան ա էլել ու զուր տեղն էնտեղ ճանչում ա։ էդ կողմից մեզ փորձանք չի գալ, բայց մենք մեր մտքի դրածիցը կզրկվինք. ես սաքի ուզեցա, որ տխուր երես շանց տամ, դարդոտ[3] երևամ Սմբատի մոտ՝ Խեչանին ատանելու համար, վերջը մի քանի սուտ հույսեր տամ, որ սաքի թե մովրովը կարող ա մի քանի մարդի տեսնելով, կամ էն քննչի տակը փող դնելով ազատել Խեչանին. բայց էս կոպիտ լակոտը իմ սարքած ֆանդերքս[4] հիմքն արեգակը շուտ տվեց. հիմի պտի գնա Աշտարակ, տանը խաբար տա ու մենք էլ ձեռքներս կլվանանք Խեչանի չալչալ[5] մանեթների սանադներիցը[6]։ Էս չի ըլնիլ, սրան պտի էս մտքի վրա տեղ չհասցնել, պտի ճամփեն կտրել, մեր սուտը ղորթի տեղակ ուտացնել ու հետն երթալ Աշտարակ։

Թե որ հաջողվեց՝ շատ լավ, թե չէ կոտրվեց ոչ, պտի կյանք ու արևը

1 Անիվը։ 2 Շրջվի։ 3 Վշտալի։ 4 Հնարք։ 5 Խայտաբղետ։ 6 Մուրհակ։

Արդար Դավթի քյալավեքումը մեզ տալ ու գնալ Խեչանի օջախումը շեն ու բոլ ձգվել։ Շատ լավ վախտն ա, հազիր Փերսի գեղացի Նարխն իր հընկերներովն էստեղ են, էլ ժամանակ չպտի կորցնել։

— Տեր աստված, ես ի՞նչ անեմ, ես ո՞նց հասկացնեմ Հեղնարին էս տխուր խաբարը. առանց էն էլ հազը խեղդում ա, օրը մի շարեք արին ա վեր ածում սրտիցը. հիմի որ էս էլ լսի, ձեռաց կմեռնի. Հերիքնազին էլ դժար ա ասելը, վա՛յ թե մերը բան հասկանա ու էն վախտը պրծավ, համ ինքը կմեռնի, համ Հեղնարին կսպանի։ Է՜հ, գլուխս տրաքվում ա, ըսկի չեմ գիտում, ո՞ր ջուրն ընկնեմ, ճար չկա, էլի պտի Հերիքնազի հետ խոսամ մի հնարքով։

Այսպես մտածելով գառնում էր Սմբատը դեպի Աշտարակ և շարունակում.

— Ա՜խ, հիմա՛ր եմ, հիմա՛ր, ո՞նց շուտ եմ խաբվում, քոմմա[1] էն սատանա Սաքոյի արածն ա, խեղճ հալիվորն ըսկի մոտ չէր թողում, ախար ես ընչի՞ պտի էսպես քոռանալուն ըլեի. ես ինչպե՞ս տուն թողացի, նաչար մարդի հոգին վկայել ա. ես հիմի հասկանում եմ, որ էն դռան քամակի գևի ձենն էլ Սաքոյինն էր, նա իմ քամակիցը մտել ա բանտը, բալնքի ծակովն անկաջ դրել, մեր խոսեցածները լսել, վախեցել ու գնացել էն օյինը սարքել, գրագրին՝ ու յասավուլներին տուն ղրկել, ախա՜ր ես ընչի՞ չտվի առաջ գրագրին, ետո յասավուլներին, վերջն էլ էդ բելիարին սատկացրի, ընչի՞ պտի թողայի ձեռներս շարանդեն[2]։ Էն հո անց կացավ, էսո՞ր ընչի չսատկացրի, հո կեղծավորությունը երեսին երևում էր, ուզում էր գլուխս եղել, որ սաքի Խեչանի համար սիրտը շատ ցավում ա, կամ թե չէ մովրովը շատ դարդոտ ա էդ մասին։ Ոչի՛նչ, միկիտան Սաքո՛, սպասի՛, էս խեղճ հիվանդի դարդը քաշեմ, Հեղնարին հանգստացնեմ, գնամ խաբեմ, որ իր հերը լավ ա, սրանով սիրտն ուրախացնեմ, բալքի հազը մի քիչ թեթևանա, ու հետո հալբաթ[3] մի տեղ իմ ձեռս կընկնիս։ Դեռ կաց, ես գնամ Երևան, ամեն բան տեղնուտեղն իմանամ, քո շանորդությունը հասկանամ, ետո կտեսնենք։

— Ա՛յ տղա, ասած ա՝ վա՛յ հախին, վա՛յ նհախին,— կրկին մտածմունքը փոխեց Սմբատը,— ես հենց էն մարդին կրակն եմ դնում, էրում, բալքի ղորթ նա մեղք չունի, ո՞ւր եմ էսօրվանից էն մարդի շվաքի քամակիցը թոնթորում[4], դեռ մի քանի օր սպասենք, հիվանդին հանգստացնենք, Երևան գնանք, բանի տակն իմանանք ետո, դեռ ջուրը չհասած՝ ստներս ընչի՞ ենք հանում...

1 Բոլոր։ 2 Կապեն։ 3 Գուցե թե։ 4 Տրտնջալ։

Ահա այսպիսի շփոթ մտածմանց մեջ Զեյվիցը հեռանալուց հետո Սմբատը թույլ թողեց յուր ձիու սանձը և գնում էր հանդարտ դեպի Աշտարակ։ Հանդարտ էր գնում, որովհետև կարիք չկար շտապելու, դրանով կարող էր Խեչանի ընտանյաց կասկածը զարթնել. երբեք այդպես շուտ չէր դարձել նա Զեյվիցից։

— Սմբատ ջա՛ն, ախար էս ի՞նչ արիր դու։

Սմբատն յուր մտքի հետ ընկած չէր լսել ձիու ոտնաձայնը, որ իրեն հետևում էր. նա շփոթմամբ գլուխը ետ դարձրեց և տեսավ իրեն մոտեցող Սաքոյին։

— Ջե՞ս ամանչում, հերիք չի՞ ինչքան սիրտ ես ծակել,— նախատել սկսավ Սմբատը միկիտանին,— ճամփեն էլ չես թողում հանգիստ գնամ, այ անաստվա՛ծ, անաստվածի զավա՛կ, ի՞նչ ես ուզում էն խեղճ հալիվորի տանիցը, ձեռ չես վերցնում, քանդեցիր ու քարատակեցիր, ունեցած կարողությունի կեսը դուս ծծեցիր, լափեցիր, ու երբ որ տեսար, թե ձեր խաբեբայությունները կամաց-կամաց դուս կգա, սուտը պոչ ունի, մի օր կխայտառակվիք, համբերությունները կհատնի, աշխարհքի միջին թուք կանենք քեզ ու քո մովրովին, վեր կալաք էն արդար մարդին, էն անմեղ ծերին հուրն հավիտենական կորցրիք։

— Սմբատ ջա՛ն, լավ տղա ես,— սկսավ Սաքոն,— բայց ջահել ես, քո ջահելությունը որ չըլներ, շատ կարելի ա մեր մեջը վաղուց անբավականություն դուս եկած կըլներ. ախար ես զարմանում եմ, դու ո՞նց չի հասկացար ինձ, ընչանք օրս ծանր ու թեթև չարիր։ Ես բան չեմ ասում, մարդ ենք, սխալական ենք, ես իմ գլուխն արդարացնում չեմ, ես էլ պակասություններ կունենամ, դոստ ու դուշման[1] կունենամ, մնին լավություն, մեկելին վնաս կըլնեմ տված, բայց դու ո՞նց չհասկացար, որ Խեչանի տանն ու տեղին, նրա աղջկանը, ազգ ու ընտանուն, նրա մլքերին ես աչքիս լսի պես եմ մտիկ տալիս. ո՛ւմ արի, ո՛ւմ չարի՝ Խեչանին ի՞նչ արիր։ Ես մի բան եմ միտք անում, կարելի ա, դու լսել կըլնես, որ ես քո նշանածին ուզել եմ՝ նախանձում ես. համա դու քո աստվածը, ասա՛, մենակ ե՞ս եմ էլել ուզողը. ասենք՝ դու երեխությունից գլուխդ կապած ես ունեցել Հեղնարի հետ, բաշիֆյարքմա եք, համա, ախպե՛ր, դե՛ մարդիս շապիկն իր ջանին մոտիկ ա, ասած ա՝ առաջ մերը, հետո մերոնցը, ոչով իր աչքը քոռ չի ուզի. միտք արի, թե բալքի Խեչանն իր միտքը փոխած ըլնի, օրինավոր նշան չի էլել մեջը, 10, 12 տարի առաջ մի գինու քեֆ ա անց կացել, դրա համար ես էլ վեր կալա մարդ ղրկեցի. դե՛, մի ծառի պտղի 1000 մարդ քար ա քցում, ո՛ւմ զսմաթն[2] ա՝ նա ա տանում.

1 Թարեկամ և թշնամի։ 2 Բախտ։

աստված քեզ արժանի անի, Հեղնարը քո ճակատի գրվածն էր՝ դու ես տանում։ Իհարկե, լավ կըլներ, որ էն փորձանքն եկած չըլներ, չար մարդկանց բղբզելով պսակը խափանված չըլներ ու դուք էլ հիմի մուրազներիդ հասած ըլնեիք. բայց աստված էլածն օրհնի, բալքի խերն էս էր. աստծով նշանածդ էլ կլավանա, վեր կկենա, ընչանք էն օրն էլ Խեչանը բերդիցը կազատվի ու մենք մի լավ քեֆով հարսանիք կուտենք։ Ախպերությունը վկա, Սմբա՛տ, բանն էսպես ա էլել, որ ես քո անոր մոտ խնամախոս եմ ղրկել, թե չէ ո՞ր անօրեն անխղճմտանքը կերթար եման չրի վրա սառը ջուր կլցներ։

— Հիմի դու ուզում ես ինձ ավատացնես, որ դու Խեչանի սրտացավ բարեկամն ես, էլի՛, նրա բռնվելու, Սև ջրի գլխին, Զեյվումը ու հիմի էլ Երևանու բերդի չորս պատի միջին տանջանք քաշելու պատճառը դու չես, էլի՛. դու ուզում ես իմ խելքումս նստացնես, որ քո ձեռքով փչացած փողերը բոլորն իրանց տերերին են գնացել ու քո քիսեն չեն մտել, էլի՛, բաս դու ինձ մի մատը քորփա[1] ես կարծում, էլի՛. դու հենց գիտես, թե ես չեմ հասկանում, որ ընդուր համար ղրկեցիք բերդը, որ էլ խաբեությունների ծածկելու տեղ չմնաց, որ շուտով գողությունների կբռնվին։ Չէ՛, Սաքո՛, չէ, ես Խեչանի խոսքերը մտքիս մեջը դեռ տպած ունիմ, որ իմ բռնվելու գիշերը գրագրի առաջին քեզ ասեց. Խեչանը մարգարե էր, իմաստուն էր, անխելք ու կարճամիտը ես էի, որ քո օձի լեզվիցդ խաբվեցի ու մարդի տունը բարեկամությունով քանդեցի, դուռը իր օղլուշաղի վրեն շարեցի. ես հիմի եմ գլխի ընկնում, որ դու սուտ էիր ասում, թե քեզ համար մին ա, թե ո՛րը մեզանից ազատվեր. էս սհաթը ուրես[2] տալիս ա, որ դու կխեղդվեիր ու չէիր թողալ ոտը բանտի շեմքիցը դուս դնել. սիրտս վկայում ա, որ գրագրի գալն էլ, ինձ ու Խեչանի ընտանիքի բռնելու սազ ու բազն[3] էլ, բոլորը շինովի էին, սուտ խաբարներ էին, ոչ քննիչ կար, ոչ հարցնող։

— Սմբատ ջա՛ն, հոգուդ մեղք մի՛ անիլ,— կեղծավորում էր Սաքոն,— թե որ ես չար սիրտ ունենայի, Խեչանի դեմ մի քան, մի նախանձ սրտումս պահած ըլնեի, հիմի չէի ձիավորվիլ ու ձիուս տրաքացնելով քամակիցդ հասնիլ, որ քեզ մխիթարեմ, մի ճամփա սորվացնեմ, որ գնաս էն ողորմելի հիվանդին սիրտ տաս, չերթաս անմտածել տուն ընկնես ու դուզդան դուզ[4] էդ վատ խաբարը տաս, խեղճ նշանածիդ արենպարտ ըլնիս։

— Ուզում ես ասել, թե եկար, որ խոսք դուս քաշես, իմանաս, թե ես, որ ընչանք օրս քեզանից խաբվելով սուս եմ կացել, հիմիկեց դենն

1 Մանուկ։ 2 Զգացողություն։ Ուրես տալ։ նշանակում է զգալ։ 3 Հնարք։ 4 Ուղղակի։

էլ քո պարանի վրա պտի պար գա՞մ, թե պտի Երևանու դիվանխանեքաց[1] գռները շարդոտեմ, մովրովիդ ու քո անօրենությունները աշխարհքովս մին առեմ ու Խեչանին ձեր քցած հորից հանեմ, էլի՛, էդ ես ուզում ասել, ընենց չի՞։ Իմացիր բաս, Սաքո՛, ես ոչովից չեմ վախենում, ես էս մի քանի օրս, ոնց ըլի, Աշտարակումը պտի մթնացնեմ, որ Հեղնարի սիրտը կասկած չընկնի, բան չֆահմի[2], ու մի քանի օրից պտի գնամ Երևան. ասում են մի նոր քննիչ ա եկել Թիֆլիզից, որ մովրովների ախրին նըստում ա[3], առանց աջ ու ձախ թեքվելու. պտի ուղիղ գնամ նրա ոտներն ընկնեմ, ամեն բան տեղնուտեղն իրան հասկացնեմ։ Թե որ նրան էլ ձեր կողմը քաշած ըլնիք, թե որ հույսս Երևանից կտրվի, մի ջուխտ քիբարի[4] տրեխներ պտի գործեմ, հագնեմ, գնամ Թիֆլիզ, էլ մենծամենծներ չթոշամ, թոլորին էլ բանի էությունը հասկացնեմ, նրանց ողորմությունը խնդրեմ։ Հասկացա՞ր, ադա Սաքո՛, սիրտդ տեղն ընկա՞վ,— ծորելով հարցրեց Սմբատը։— Հիմի ետ դառ գնա՛, զուր տեղը մարդի գլուխ մի՛ տանիր, էդ դու, էդ քո եկած ճամփեն։

Որքան և Սմբատը սաստիկ հարձակվում էր Սաքոյի վերա, միկիտանն ընդհակառակն ավելի փաղաքշանոք էր խոսում և ուզում էր յուր մտերմությունը ցույց տալ։

Ոչինչ բանով Սմբատը չկարողացավ հեռացնել Սաքոյին. նա մի խոսքի փոխարեն հարյուրն էր մտխում և հետը գնում։

— Լա՛վ, դու ինձ ասա՛, Սաքո՛,— հարցրեց Սմբատն, երբ որ Մոլլադուրսուն գյուղն անցել էին և մոտենում էին Արդար Դավթի ավերակներին,— հիմի միտքդ ի՞նչ ա, ետ չես դառնալո՞ւ, հետս Աշտարակ ես գալո՞ւ։

— Ախար չգամ ի՞նչ անեմ, ո՞նց թողամ քեզ պես ախպեր-տղին տխուր, տրտում, մտքի հետ ընկած ըստեղից Աշտարակ գնաս։

— Թե որ էդպես ա, ես հիմի հասկացա, որ դու սրտով բարեկամ ես էլել Խեչանի հետ ու ինձ հետ էլ ախպոր պես ախպեր ես. ես տեսնում եմ, որ զուր եմ քեզ վրա վատ աչքով մտիկ տվել. էլ նեղություն մի՛ քաշիլ, ախպե՛ր, էլ ձիուդ մի՛ շարդի՛լ. էս քար ու քոռքը մի՛ ընկնիլ, ետ դա՛ռ, գնա՛. ոնց որ ասում ես, կերթամ Հեղնարին մի հնարքով կմխամըտացնեմ, հոքիցը լավ-լավ խաբարներ կասեմ ու երեք-չորս օրից ետո կգամ Զեյվա, քեզ կտեսնեմ, իրար հետ խելք-խելքի կտանք, բալքի թե Խեչանին մի լիս ու ճար անենք։

Սաքոն բուռ մատը կծեց. նա պարզ տեսավ, որ Սմբատն իրան ցանում է և յուր խոսքերի ստությունները նրան շատ լավ հասկանալի են եղել։ Եթե երկու օր առաջ լիներ այս բանը, Սաքոն շատ հոգս գուցե չաներ. ինչպես ասել ենք, նա սկզբումը շատ փոքր հավատ ուներ նոր քննչի արդարամտության վերա, բայց մի քանի օր էր, որ հոտն ուրիշ տեսակ էր փչում, քննչի անունն ուրիշ տեսակ էր տարածվում. այդ պատճառավ էլ Սմբատի խոսքերը ծանրակշիռ երևեցան նրա համար։

— Շատ լավ, շնորհակալ եմ, որ սիրտս ճանաչեցիր, հիմի կերթամ,— պատասխանեց Սաքոն։

Այս խոսքերի հետ միկիտանը ձեռքը գրպանը տարավ, հանեց թաշկինակը և քիթը սրբեց։ Այս միջոցին սոքա ձորակի բերանումն էին, որտեղից պետք է բլուրը բարձրանային։

Այս ձորակի մեջն են Արդար Դավթի կոչված ավերակները, որոնց ավանդությունը ես առիթ եմ ունեցել ուրիշ տեղ պատմելու[1]։

Ճանապարհից մի քանի քայլ հեռու ձորաբերանի մոտ գտնված ավերակի միջից հանկարծ չորս ձիավոր գուրս եկան և հարձակումն արին մեր ճանապարհորդների վերա։

— Վա՛յ գլխիս, գողեր են,— գոչեց Սաքոն և ձիու գլուխը վերադարձրեց կրկին դեպի Մոլլադուրսուն գյուղը։

— Ձիաթա՛փ եղիր, անպիտան հա՛յ,— գոչեցին երկուսը Սմբատի առաջը կտրելով և կամեցան արգելել նրա ճանապարհը. իսկ մյուս երկուսը կտրեցին Մոլլադուրսունի ճանապարհը։

Փախչելու տեղ չմնաց. Աշտարակ տանող ուղին մի քարքարուտ նեղ ճանապարհ է, որի միջից եթե դուրս ընկար, անհնար է քարուտ տեղերովը մատ գալ. ուղիղ և հարթ ճանապարհը քամակի երկու ձիավորներն են փակել։

Սմբատը մնաց բլրի ստորոտումը՝ մեջտեղը կանգնած։

— Ձիաթափ եղի՛ր, ասում ենք, կամ ետ գարձի՛ր, ձորակը մտի՛ր,— գոռաց թուրքերից մեկը,— ապա թե ոչ տեղնուտեղդ գետինը կփոենք։

Այս ասելով ավազակը հանեց ատրճանակը և ուղղեց դեպի Սմբատը։

Մեր տարաբախտ փեսացուն լավ գիտեր, որ ինչպիսի գլխից ձեռք վերցրած ավազակ ես՝ լինի, չի վստահանալ այս բարձրաբավանդակի քարքարուտի մեջ զենք շարժել, մինչև նա յուր զոհին ձորակը չգոխի. նոցա կանգնած բարձրությունից Մոլլադուրսունը և ամբողջ մերձակա գյուղերի տափարակն երևում է. քառորդ ասպարիզաչափ տեղ գութանավորն յուր

1 Իրավարանք։ 2 Նկատեմ։ 3 Հոգին հանել։ 4 Կոկիկ։

1 Տե՛ս «Կովածաղիկ» վիպասանությանս մեջ։

հանդն է հերկում, ուրեմն մի այդպիսի հանդուգն քայլ դժվար էր սպասել այս տեղումը։

— Իսկո՛ւյն, իսկո՛ւյն, շատ բարի՛, պատրաստ եմ կատարել հրամաններդ,— պատասխանեց Սմբատը ավազակներին, և ձիու գլուխը փոքր ինչ ետ ծռելով՝ դեմք ցույց տվեց, որպես թե վերադառնում է, բայց նա հանեց յուր կողքից կախած լայնափող զարաբինա կոչված ատրճանակն և երկու ավազակաց առաջին գետնի վերա կրակեց։

Ավազակները շփոթվեցան, ծուխը նոցա աչքերը լցվեցավ, նոցա ձիանքը խրտնեցան և դուրս ընկան ճանապարհի միջից քարքարուտների վերա։

Օգուտ քաղելով այս հնարքից, Սմբատը կարողացավ յուր առաջին բացված ճանապարհովն արշավել դեպի վեր, որքան ձիումն ույժ կար. բլրագագաթն էր հասել նա, որտեղից բացվում էր հարթ ճանապարհը։ Սմբատը ետ նայեցավ և տեսավ, որ յուր առաջը կտրող ավազակներից մեկի ձին գլորվել էր քարովը ներքև, նոցանից երկուքը ձին էին աշխատում բարձրացնել, իսկ մինը նստած էր ձիու տիրոջ մոտ և նրա գլուխը թաշկինակով կապում։ Թուրքի երեսից իջնող արյունը պարզ նշմարվում էր։

— Որտեղ ձերն ասեք, իմն էլ էնտեղ ասեցե՛ք,— ծաղրեց Սմբատն անշնորհք ավազակների վերա ու ձիու գլուխը բաց թողեց մինչև Հոշականա կամրջի ձորաբերանի մուտքը, կամ խրամը։ Այստեղից երևում է մեր հայերիս գրականության պաշտպան Մեսրովբի վկայարանը։

— Քո զորությունին մեռնի՛մ, ո՛վ սուրբ թարգմանիչ,— երեսին խաչակնքեց Սմբատն և իջավ ձիուցը, սանձը քաշելով հետիոտս սկսավ խրամն իջնել։

Սմբատն յուր ազատության փոխարեն մի քառորդ ժամից ջերմ աղոթք էր անում սուրբ Մեսրովբա գերեզմանի առաջին չոքած, որին արժանի լինի՞ն ամեն կարոտակեզ եռանդուն հայեր։

— Էս չէլավ, պտի գնալ Երևան, էն քննչի համար հարց ու փորձ անել, չըլնի՞, զորթ, սատանի անկաչը խուլ, կաշառք ուտող չըլնի ու էս լակոտի խոսքովն ամեն բան տակնուվրա անի։

Այս խոսքերով նույն իսկ երեկոյին ձի նստավ Սաքոն և գնաց դեպի Երևան, նախապես ավազակներիցը լսելով յուրյանց անհաջողությունը։

Հետևանքը մեզ հայտնի է։

ԽԱ

ԿԵՆԴԱՆԻ ԱՐՁԱՆ

— Սմբատ ջա՛ն, էս անգամ Զեյվից գալուց ետը շատ տխուր ես երևում, հենց իմանաս երեսիդ ծիծաղն էլ շինովի ըլնի, ափունի համար շատ քիչ ես խոսում. երեկ տանուտերի հետ տուն մտնելուս ես վարավուրդ արի[1], որ մատդ բերնիդ դրիր, հասկացրիր, որ բերանիցը բան չի բաց թողա, մի խոսքով շատ կոտրված ես. էս ի՞նչ բան ա, թե որ մի նոր անբախտություն ա պատահել, ընչի՞ ես պահում, վախում ես, որ ցավս ավելի սաստկանա՞. դարդ մի՛ անիլ, ես սովորել եմ։

— Չէ՛, Հեղնար ջա՛ն, զուր ես միտքդ ցրիվ տալիս, ոչինչ չկա. ափունն[2], փառք աստծու, շատ լավ ա. քեզ ասեցի, որ մի նոր քննիչ ա եկել, գործերը տակնուվրա ա արել ու ափունին էս երկրորը կարդարացնի. էս կողմից էլ դարդ անելու ոչինչ չունինք, բայց դու ինձ ասա՛, ընչի՞ վրա ուրախանանք, ընչանք ե՞րբ պտի լհեբին[3] քացի տալդ տեսնենք. հազդ որ բռնում ա, իմ սիրտս 100 կտոր ա ըլնում։

— Չէ՛, ախպեր ջա՛ն, ես վաղուց եմ ավատացել, որ դու ինձ սիրում ես, որ իմ հիվանդությունը քեզ զորությունից քցել ա, վարդի պես կարմիր երեսդ պատի ծեփ ա շինել, կոլոր թշերիդ ոսկորները դուրս են թափել. էդ իմ հիվանդանալու օրից դեսը ես տեսնում եմ, համա հիմի էն չի, քեզանում մի բան կա, մի ուրիշ ցեց երեք օր ա սիրտդ կրծում ա ու դու չես կարողանում ասիլ։ Ա՛յ, հոքիրս ու Հերիքնազս էլ տխուր են, համա սրանք քեզ պես չեն. ես կասեմ, որ սրանք էլ բանից խաբար չեն, ընեեց չի՞, Հերիքնազ ջա՛ն, դու Սմբատի աչքերիցը վարավուրդ չե՞ս անում, որ սրտումը մի դարդ ունի մեզանից թաքուն։

— Չէ՛, Հեղնար ջա՛ն, ես բան չեմ կարողանում ֆահմել[4], ես տեսա, որ մեկել օրը Զեյվիցը սիրթնած ետ եկավ, դրուստ ասեմ, շատ էլ վախեցա, բայց երբ որ պատճառն իմացա, սիրտս հանդարտվեց. պստիկ փորձանքից ա ազատվե՞լ, չորս գողի միջից դուրս պրծնիլը հեշտ բան է՞ր. ես կարծում եմ, որ հիմի էլ էն շորշոփն ըլնի, ուրիշ ոչինչ։

— Իհարկե էդ ա, ուրիշ ոչինչ,— Հերիքնազի խոսքից ոգևորվեց Սմբատը։ Այս գյուտը, որ Հերիքնազն արեց, Սմբատին օգնություն հասավ, ապա թե ոչ, հիվանդ աղջկա խոսքերն այնպես շփոթեցրին նրան, որ եթե մի փոքր էլ շարունակելու լիներ, գուցե անկարող պիտի լիներ ծածկելու։— Շատ կարելի ա, որ գողերի զարզանդը[5] դեռ վրես ա, պտի

1 Նկատեցի։ 2 Հայրիկը։ 3 Վերմակ։ 4 Նկատել։ 5 Սարսափ։

դրուստն ասեմ, որ շատ վախեցա,— ուզեցավ հավատացնել Սմբատը։

— Հը՛,— թույլ ժպիտ երևեցավ Հեղնարի երեսին,— ի՞նչ որդի ես, դու էն պտուղն ես, որ երեք օր վախն երեսիդ մնա՞ր. դեռ քո էն օրվան սիրթնիլդ էլ, ես ասում եմ, որ վախից չէր։

— Էլ ուրիշ ոչինչ չկա իմ սրտումս, Հեղնար ջա՛ն, հավատացնում եմ քեզ, ես արմանում եմ, որ դու ինձ վրա ուրիշ կասկածներ ես տանում։

— Է՛հ, ես մեղա աստծու,— հոգվոց հանելով լռեց Հեղնարը։

— Դու չկարծես, թե մենակ Հեղնարն ա վարավուրդ արել, Զեյվիցն ետ եկած սհաթն ես քեզ փոխված տեսա,— ասաց կես ժամից հետո Հերիքնազը մյուս սենեկումը։— Երեկ մեկել օրը, դրուստն ասեմ, միտքս շատ ցրիվ էր. մին միտք էի անում, թե գողերի ահն ա քեզ վրա իր շորշոփը թողել, մին էլ խելքումս նստում չէր, էսօր հո՛, ինչքան կուզես կուշ ու ձիգ արի, աշխատի մեզ ցանես, քեզն ու քեզը բռնվում ես։ Մի սհաթ առաջ ես ուզում էի քեզ հարցնել, ժամանակ չելավ, շատ էլ ցավում եմ, որ Հեղնարը կարողացել ա հասկանալ. շատ ափսոսում եմ, որ թե դրուստ մի բան կա, ինձանից պահում ես, մենք երկսով խե՛լք-խելքի կտայինք, մի բան միտք կանեինք։ Դու ինձ ասա տեսնիմ, Երևանումն ի՞նչ բան ունիս, որ երեք օր ա ամեն սհաթ ասում ես, թե պտի գնաս. ի՞նչ առուտուրդ ա մնացել, քանի՞ վախտ ա, առուտուրից էլ ես կտրվել ու տանից տեղից էլ։

Սմբատը չկարողացավ համբերել, նա լաց եղավ, հեծկլտոցը խեղդում էր նրան։

— Տեսա՞ր, որ բռնվեցիր, տեսա՞ր, որ խեղճ Հեղնարը սուտ չի ասել, ես շատ դրուստ եմ նկատել. ինչ էլել ա՝ էլել ա, էլ մի՛ պահիլ, ասա տեսնենք, էլ նոր ի՞նչ փորձանք ա աստված մեր գլխին բերել,— ստիպեց Հերիքնազը։

Սմբատը լացախեղդ էր եղել, նրա սիրտը չէր նստում. կարծես նույն տղան չէր, որ ամենայն սառնությամբ և անտարբերությամբ առաջին անգամը Սաքոյից լսեց Խեչանին բերդը տանելու բոթը։ Երկուսից մեկը սուտ էր. եթե նա Սաքոյի մոտ յուր հաստատակամությունը կարողացավ անդրդվելի պահպանել, այժմ էլ կարող էր, նշանակում է նրա արտասուքն այժմ կեղծ էր։ Բայց ոչ, երկուսն էլ ուղիղ էին, վեհասիրտ Սմբատին չէր կարելի թույլ տալ Խեչանի տունն անբախտացնող միկիտանի մոտ ընկնվիլ. նա նույն րոպեին հասկացավ Սաքոյի ինչ լինելը և յուր տոկուն բնավորությամբը բարոյապես սպանեց նրան, ստիպեց նրան շան նման յուր քամակիցն ընկնել, ծծնվիլ, կեղծավորիլ և յուր փծնի

հնարքներովը Սմբատին չխաբելուց հետո՝ արենարբության դիմել, նորա կյանքը բառնալու տքնիլ։ Իսկ այժմ Հերիքնազի առաջին, յուր ամենից սուրբ և նվիրական էակի դեմն ի՞նչ կարող էր անել, եթե ոչ սրտի զգացմունքն արտահայտել. նորա այդ զգացմունքն այնքան վառ էր դեպի Խեչանի տունը, նոցա վշտերն այն աստիճան մոտ էին յուր հոգուն, որ լացով միայն կարեր հանդարտեցնել յուր վրդովմունքը։

— Ասա՛ ու պրծի՛, էլ ի՞նչ ես երեք տարեկան երեխի պես լաց ըլում, դու է՛լ լաց ըլիս, մենք է՛լ լաց ըլինք, էլ քո տղամարդությունդ ընչո՞վ ջոկնվի. լացը կնիկարմատին ա տված ու երեխեքանցը. տղամարդի կեսն էլ որ կտրեն, հոգը չպտի ըլնի,— մեղադրում էր Հերիքնազը Սմբատին։

— Սաղ ջանս էլ որ կտոր-կտոր անեին, էլի դարդ չէի անիլ, կամ մի կաթիլ արտասունք թափիլ, թե որ ինձ հանդիպեր է՛ն, ինչ որ ուրիշի գլուխն ա եկել։

— Քանի՞ կախ քցես, դե ասա էլի՛, տեսնում ես, որ համբերություն չկա, տրաքվեցի, խոճմտանք չունե՞ս, թե իմ սիրտս պողպատից ա։

— Հերիքնազ ջա՛ն... ափո՛ւն,— էլ չկարողացավ ոչինչ արտասանել Սմբատը, փաթաթվեց աղջկա վզովն ու մզկտալով լալիս էր։

— Ափուն ի՞նչ... ի՞նչ էլավ քեռիս... մեռա՞վ, մեզ տնաքանդ արե՞ց,— ինքն ևս հեկեկանքն ու լացը խառնեց Սմբատի հետ Հերիքնազը։

— Չէ՛, քեզ մատա՛ղ, չէ... ափուն էլ Զեյվումը չի, բերդն են տարել,— հազիվ շնչարգել լինելով կապեց միմյանց հետ Սմբատն այս մի քանի բառերը։

Կայծակի հարվածի նման ներգործեցին այս խոսքերը Հերիքնազի վերա. փոքրիկ երեխային էլ լավ հայտնի է, որ բերդը տարած բանտարկյալին էլ ազատություն չկա. բերդ և գերեզման՝ երկուսը մի բան են նշանակում. կալանավորը քանի մովրովի մոտ է բանտարկված, որչափ և նեղությանց ու ճնշումների ներքո լինի, հույս կա, թե երբևիցե կարող կլինի ազատվիլ. այդպիսի օրինակներ շատ են եղել, մովրովները տարիներով կարողության տեր հանցավորներին յուրյանց մոտ պահել են, վերջին կոպեկը դուրս կորզել և դարձյալ, թեև, շատերին նոցանից ուղարկել են բերդը, բայց մի քանի բարեբախտներին, կամ որ ճիշտն է՝ անմեղ դատապարտվածներին, արձակել են։ Սակայն հավիտենական կորուստը կուլ է տվել այնպիսի չարաբախտներին, որոնք խորասուզվել են Երևանա որկրամոլ բերդի անկուշտ փորի մեջ. այդ արենարբու համր գազանը քանի՞ քանի արդարների սիրտն է կերել. սև է բերդի դուռը, սևացնում է յուր շեմքով մի անգամ անցնողի արևը. մահ է նրա նշա-

նաբանը և նա յուր դեիզին խիստ հաստատ է. այդ արյունռուշտ հովազը պարսկական բռնակալ տիրապետության ժամանակ բացառապես հայի մսով էր կերակրվում, օր չանցկենար, որ մի քանի հայերի ոսկրներ չփշրեր յուր ժանիքների մեջ. իսկ այնուհետև նորա կերակուրը պակասեց, նա սկսավ անխտիր լափել օրենքի առաջին դատապարտվածներին, էլ զանազանություն չարեց ազգությունների և կրոնների մեջ. առավելապես պարսիկներ էին վերջերումը նրա կերակուրը, քան թե հայեր։ Եթե հայերը դատապարտվում էին միմիայն յուրյանց կարողությունով դատավորներին փարթամացնելու համար, պարսիկներին ինքն արդարությունն էր ամեն մի քայլի վերա յուր ճանգը ձգում. գողություն, ավազակություն, մարդասպանություն, մի չնչին պատճառով օրով-ցերեկով բազմության մեջ ընկերի փորը դաշույնով թափել և վերջապես ամենատեսակ քաղաքական և քրեական աններելի հանցանք պարսկի համար սովորական են եղել։

Մեզ հիմա հասկանալի է Սմբատի ամենախիստ տխրության պատճառը, հիմա էլ մենք չենք զարմանալ, թե Հերիքնազը,— որքան և մի խոհեմ աղջիկ, որչափ և յուր գլուխը ծանր պահող,— բերդ բառը լսելուն պես մի խիստ ճիչ արձակեց և թուլացավ, և եթե Սմբատի հետ գրկախառնված չլիներ, գետին կընկներ։

Կարելի է շատ կտևեր Հերիքնազի թուլությունը, եթե նույն րոպեին յուր ականջին չդիպչեր յուր արձակած ճչից մի ավելի խիստը՝ ծածկած դռան մյուս երեսին։ Սթափվեց աղջիկը, ուշքի եկավ, բայց արդեն ուշ էր. դրսի ճիչը քանի գնաց՝ սաստկացավ, ամբողջ տունը թնդացրեց, մինչև հիվանդի սիրտը թափանցեց։

— Վա՜յ, ախպեր ջա՜ն, վա՜յ, վա՜յ, քո քիրը մեռնի՜, խեչան ջա՜ն, քեզ բերդ են տարել, դու մեր դուռն երեսներիս փակեցի՜ր,— գոռալով տուն ընկավ Մարիամը Հեղնարի մոտ և տարածվեց հիվանդի վերա, սխմեց ողորմելի, կիսամեռ աղջկանն յուր կրծքի մեջ և եթիմ Հեղնարս գոչելով՝ սուգ էր անում։

— Վա՜յ գլխիս, մերս անկաջ ա դրած էլել,— աղաղակեց Հերիքնազն ու Սմբատի հետ միևնույն ճանի և մյուսը հոգիր ձայն տալով՝ վազեցին Հեղնարի մոտ։

— Նանի՜, քո տունը քանդվի՜, մեր տունը քանդեցիր,— հառաչում են Սմբատն ու Հերիքնազը և ուսերիցը ետ քաշելով շատ դժվարությամբ խլում են հիվանդին, կամ ավելի լավն ասել, մեռած Հեղնարին Մարիամի ձեռքից։

— Ճար կտրածի կնի՜կ, էս ի՞նչ արիր,— գոչեց Հերիքնազը...— Սմբատ ջա՜ն, ջուր հասցրո՜ւ, մեր քիրը ձեռից գնաց։

Ջրի մեջ համարյա լողացրին Հեղնարին, ողջ անկողինը լճի մեջ կոխած, հանածի պես արին, բավական միջոց շարշարեցին, քիթը քաշեցին, ականջները տրորեցին, մինչև հիվանդին աչքերը բանալ տալու հաջողեցան։

Անիրավ թոքախտը վաղուց մաշել և հալել էր Հեղնարին, այժմ բոլորովին մեռելի կերպարանք ստացած, աչքերը մատնաչափ խոր ընկած, եղունգները կապտած, մարմինը սառուց կտրած՝ մի թույլ հայացք ձգեց յուր պահապան հրեշտակների վերա և ափո՜ւ ջան բառերի հետ դարձյալ նախկին դրությունն ստացավ։

Կարեկցության արժանի էր Մարիամի դրությունը. նա Հեղնարի վրայից ետ քաշվելուց հետո կանգնել էր պատի տակին, պատն իրեն հենարան շինել և լուռ ու մունջ, գլխիկոր նայում Սմբատի և յուր աղջկա արարքներին. արտասուքը չորացել էր նրա աչքին, նա դարձել էր իբրև մի անկենդան արձան։

Նախկին հնարքը գործ դնելով՝ Հերիքնազն ու Սմբատը կրկին ուշքի բերին Հեղնարին։ Նրա շրթունքը ետ բացվեցան և ափու բառը դեռ չէր լրիվ դուրս եկել բերանից, որ Հերիքնազը շտապեց նրա անունը տալ։

— Հեղնար ջա՜ն, դու մեզ սպանի՞լ ես ուզում, խեղճ չե՞ս գալիս էս ջրատար պառավին, գլխամեռ քվորդ, էս մեր կրակումն էրվող ախպորդ։

Ահա՜ այն խոսքերը, որ հիվանդին ոգևորեցին։

— Ես մեղա՜ աստծու, ձեզ մատա՜ղ, էլ չեմ անիլ, սիրտս ուրախ կպահեմ,— հանցավորի նման ներողություն խնդրեց Հեղնարը.— Հերիքնազ ջա՜ն, իմ տեղս փոխեցե՜ք, էս ջրի միջից ինձ հանեցե՜ք ու մոտ եկե՜ք, կողքիս նստեցե՜ք։

Առաջին անգամը չէր, որ Սմբատն յուր հարազատ քրոջ նման ներկա էր լինում Հեղնարի մոտ այդպիսի դեպքումը։

Մարիամն յուր դիրքը չփոխեց, նա յուր տեղիցը չշարժվեց, մինչև որ հիվանդին ուրիշ անկողնի մեջ պառկացնելուց հետո՝ Հերիքնազն ու Սմբատը մոտեցան խղճալուն և բերին նստացրին յուր սովորական տեղը՝ հիվանդի գլխավերևը։

— Հիմի դուք էլ նստեցե՜ք իմ աջ ու ձախ կողմս,— տնօրինեց Հեղնարը։

— Լսեցե՜ք, իմ հոքի՜ր, իմ մոքի՜ր, իմ ախպե՜ր, լավ ականջ դրե՜ք, ինչ որ ասելու եմ. բայց չէ, դեռ առաջ խոսք տվե՜ք, որ պտի կատարեք, օրթում կերե՜ք իմ արևովը, ափունիս կյանքովը, որ «չէ՜» չասեք, հետո բերանս բաց կանեմ։

— Հեղնար ջա՜ն, քեզ մատաղ գնա քո քիրը. ոտիդ տակին մեռնե՜մ,

քեզ հիմի խոսալ չի կարելի, դու էսօր ջլիս[1] հալից[2] ընկար, ուժ չմնաց մեջդ. խնդրում եմ, թե որ մեզ սիրում ես, էսօր մի՛ խոսալ, ընչանք մի քիչ ջանի գաս,— պատասխանեց Հերիքնազը։

— Ես էլ Հերիքնազի հետ աղանչաք եմ անում, Հեղնար ջա՛ն, ազիզ քի՛րս,— խնդրեց Սմբատը,— քո առողջությունը խնայի՛, դեռ քեզ խոսալու ժամանակ չի՛. մենք քեզ խոսք կտանք, որ էգուց ինչ ասես՝ անկաջ անենք, համա հիմի քիչ դնչացի։

— Ես ձեր խոսքը կլսեի, թե որ ինձ լավ չղգայի, տեսե՛ք՝ էլ չեմ հեթում, էլ շունչս չի կտրվում, սիրտս էնպես հանգիստ ա, որ երկու շաբաթ ա՝ ըսենց լավ չեմ էլած. դուք միտք չանեք, թե ես ձեզ միամտացնելու համար եմ ասում, ձեր քաղցր արևը վկա՛, ափունիս գլուխը վկա, սուտ չեմ ասում։ Ղորթ ա, մի սհաթ առաջ ափունիս բերդը տանիլը որ լսեցի, էլ չկարողացա համբերել, կարելի ա կմեռնեի էլ, թե որ դուք ետ չբերեիք, համա հիմի անցկացավ. ո՞վ գիտա, հերս բերդիցը դուս պտի գա՞, ես էլ նրա երեսը տեսնելու, նրա ձեռը պաչելու արժան պտի ըլի՞մ. բայց փառք աստծու, իր կամքն ա, ոնց որ նա տնօրինել ա, ես հակառակում չեմ։

Հեղնարը խոսում էր ամենայն լրջությամբ և հանդարտությամբ։

— Սաքի ի՞նչ կըլնի, որ էսօր քո խոսալիքդ թողաս,— խնդրեց Սմբատը։

— Թե որ մին էլ ասել եք, թե որ ինձ չեք թողալ սրտինս ձեզ հայտնեմ, էս սհաթս ավելի կվատանամ ու Լողմանի հեքիմն ինձ մահի ձեռիցը չի կարող խլել, ձեր քաղցր ըմբրովն[3] ու արևովն եմ օրթում ուտում,— ասաց-լրջորեն Հեղնարը։

— Լսում ենք, ասա տեսնենք,— վճռեց Հերիքնազը։

— Խոսք տվե՛ք, որ բերանիս փակ չդնեք, թողաք, որ սրտինս դուս ասեմ։

— Տալիս ենք։

— Գիտե՞ք ինչ կա,— սկսավ Հեղնարը,— վաղուց ես տեսնում եմ, որ ինձ վերջ չունիմ, իմ օրերս համբարած են, էսօր, էգուց, թե մի ամսից, երկու ամսից, չեմ կարող ասել, բայց էս տեղերիցն էլ ես վեր կենողը չեմ, էս ցավն ինձ գերեզման պտի տանի։ Չկարծեք, որ ես դրա համար մի մազի չափ հոգս եմ անում, մի օր եմ պարտ իմ աստծուն, կտամ ու կպրծնեմ. էս ուզտն ամենքի դռանն էլ չոքելու ա, ամենքն էլ էս ճամփեն պտի գնան։ Չեմ կարող ասիլ, թե աստված մեր ո՞ր մեղքի համար զահր արեց[4], որ էս փորձանքները մեր գլխին եկան. իմ հերն

1 Բոլորովին։ 2 Ուժից։ 3 Կյանքով։ 4 Փորձանքի մեջ ձգեց։

իր կյանքումը մրջիմ չի կխչորել[1], իր բան ու գործն էլել ա աղքատներին ու խեղճերին օգնելը, իր հոգու, իր ժամի ճամփիցը դուս չի եկել. ողորմածիկ մերս էլ մի հրեշտակ էր, հավերին էլ չէր անիծում, շատ որ զահլեն տանում էին[2], ասում էր՝ ձեզ տեսնեմ թոնդիրը թափվիք, էրվիք ոչ, էս էր լիսահոգու տված մենծ անեծքը. իմ ջրատար հոքիրս իրեքիս գլխովն էլ փարվան ա գնում[3], ինքը սոված կկենա ու դուռն եկող աղքատին ու ղարիբին առանց տուրքի ճամփու չի դնիլ։ Դու, Հերիքնազ ջա՛ն, քո բարի սրտովդ սաղ գեղի աղջիկներին օրինակ ես էլել, Սմբատն էլ իր օրումն ոչովի սիրտը չի կոտրել։ Ինչքան ես միտք եմ անում, տեսնում եմ, որ էլի՛ իմ մեղքն ա, որ մեր երեսովը գիպավ, ես եմ էն փչանալուն, որ համ հորս խոսքն ուզեցի երեսահանց չկոտրել, համ իրանից թաքուն, քեզ հայտնի ա, Հերիքնազ ջա՛ն, թե ինչ անպիտանություն եմ արել։ Հորս հոգին վկայել ա, աստված իրան տուն ա տվել, իմացել ա, որ հինգ-վեց տարեկան Սմբատը աստծու գառը պտի մենծանա, իր միանուճար զավակի բախտավորությունն ա ցանկացել ու էս թավուր տղի հետ իմ գլուխս երեխայությունից կապել ա։ Էն ի՞նչ քաղցր օրեր էին, որ մենք երեխա ժամանակներս անց էինք կացնում, էն ի՞նչ սեր էր, որ մենք ունեինք. հորս սիրտը փառավորվում էր, որ իր սիրեկան երեխեքն ընենց սիրով էին։ Ա՜խ, ի՞նչ կըլներ՝ էն վախտը մեռնեի ու հրեշտակների դասը դասակվեի։ Անցկացան էն անմեղ տարիքը, տարան իրանց հետ մեր տան սերն ու քաղցրությունը։

— Ջնեղանաս, Հեղնար ջան, խոսքդ չեմ կտրում, համա մի քիչ հանդստացի՛ ու էնպես խոսա՛. բարկանաս ոչ, քեզ մատա՛ղ, խոսքդ մոռացնելու համար չեմ ասում,— ընդմիջեց Հերիքնազը։

— Շատ լա՛վ,— համաձայնեց հիվանդն և հինգ րոպեաչափ լռեց։

— Գլուխս քամիներով լցրած, հորս հարստությունների վրա զառահ էլած[4], մեր գեղի աղջիկների կեղծավոր խոսքերից խաբվելով, ես ինձ շատ մենծ ոմն էի կարծում, դունչս շատ վեր էի բռնում, իմ նշանածիս չէի հավանում։ Խեղճ Սմբատս էլ հենց գիտեր, թե նախրումն էլ ունի, գալիս էր իր նշանածիցը սեր ու քաղցրություն հասկանալու, էլ չգիտեր, թե ի՞նչ տեսակ ծակծկոտվելուն ա իրեն թուլ էլել[5]։ Քեզ հայտնի ա, Հերիքնազ ջա՛ն, թե իմ հիմարություններս ի՞նչ տեղ հասան. չգիտեմ՝ Սմբատս իմացա՞վ, որ իր անպիտան նշանածը մի պարծենկոտ տղի աչքերիցը խաբված՝ սաղ տարի հետը սազ ու բազ[6] էր անում ու համ իրան խաբում, համ իր հորը, համ աստծուն. չգիտեմ՝ սա հասկանո՞ւմ էր, թե ո՞նց էի աստվա՛ծ աստվա՛ծ անում, որ մեր պսակը գլուխ

1 Տրորել։ 2 Ջանձրացնել։ 3 Բոլորվել։ 4 Ապաստանած։ 5 Դիպել։ 6 Քաղցրախոսություն

չգա։ Ղորթ ա, ոչ մի օր ես Սմբատիս համար չար միտք չեմ արել, բայց բաց ասեմ, ոչ ամաչեմ, քոռ գրողի ու մահի երեսը տեսնել ցանկանում էի, Սմբատիս ոչ։ Մի բարկանալ, Սմբատ ջա՛ն, իմ ազիզ ախպե՛ր։

— Չէ՛, հոգի ջա՛ն, դու սիրտդ շուռ մի՛ տալ, անցկացած բաների վրա ես միտք էլ չեմ անում։

— Հա՛, Սմբատ ջա՛ն, էնքան տեղը քեզ ատում էի, որ քեզնից ազատվելու համար ուզում էի մի հնարք գտնել, քեզ իմ սիրեկան Հերիքնազիս հետ սիրացնել, ու ձեզ իրար հետ սիրացնել տալ։ Ա՜խ, ես իմ մտքովս չարություն էի ուզում, համա չէի իմանում, թե դրանից մենք լավություն իմ կյանքի մեջ չէի կարող արած ըլնիլ, թե որ ձեզ, երկու արդար ու բարեսիրտ հրեշտակներիդ, իրար հետ միացնեի։ Գիտե՞ս, ինչքան ուրախացա, երբ որ հոտով վարավուրդ արի[1], որ դուք երկուսդ տաք սիրտ ունիք մին-մնիդ վրա. չէ՞ չասես, Սմբատ ջա՛ն, դուշմանի[2] աչքը սառաֆ[3] ա, ես ամեն բան տակից իմացա։ Էս ա, պրծա, ասեցի ու Հերիքնազիս սկսեցի քարոզել, սրա տամարը[4] մտա, որ քեզ վրա պսակվի։ Պտի ասեմ, որ ինքն էլ իր սիրտն ինձանից չծածկեց, խոստովանվեց, որ սիրում ա քեզ, համա պսակվելու համար գլուխը մահի էր տալիս, ոչինչ բանով հանձը չառավ։ Հերիքնազն էն հոգին չէր, որ իր քեռու սիրտը կոտրեր, իր սերն իր մեջ մեռցրեց, քեզանից պահեց, ու ոնց որ տեսնում եմ, էսօր էլ քեզ ախպոր պես ա սիրում։ Մի՛ ուրանալ, Սմբատ ջա՛ն, որ շատ կարելի ա, դու ավելի հույս ունեիր սրանից, համա սա իր խելոքությունովը քեզ էլ սառեցրեց, ու թե որ չեմ սխալվում, քեզանից հաստատ խոսք առավ, որ իրան քիր ու քենի ճանաչես։ Սուտ եմ ասո՞ւմ, Հերիքնազ ջա՛ն, ձեր մեջը խոսակցություն չի՞ էլել, դուք ձեր սերն իրար չե՞ք հայտնել։

— Սուտ չի՛, իսկ էդպե՛ս ա, մենք մեր սերն իրար բաց ենք արել և ուխտ ենք դրել, որ մեր մեջը թաղենք, երկուսս էլ քո ուզուրին[5] մեր սիրտը մատաղ տանք։

— Ապրի՛ս, որ խոստովանվեցիր, ես էլ հենց էդ տեղն եմ գալիս. դուք էդպես կամեցել եք, բայց աստված արդարադատ ա, ողորմած ա, նա չէր թողել, որ սիրող սրտերն իրարից հեռանան. նա դարուլ չի կենալ[6], որ Հեղնարը չսիրելով՝ Սմբատի պես լավ տղի կնիկը դառնա ու Հերիքնազը մեջտեղը Հեղնարի խաթեր իր սիրտը մեռցնի։

— Հեղնար ջա՛ն, էսօր թողանք,— խնդրեց Հերիքնազը։

1 Նկատեցի։ 2 Թշնամու։ 3 Հեռատես։ 4 Երակ։ Տամարը մտնել՝ կնշանակի հորդորել։ 5 Ի շահ քո։ 6 Չի համաձայնիլ։

— Մի՛ մոռանալ, որ դու ինձ խոսք տվիր չարգելես. խոսքդ պահի, թե չէ կբարկանամ։

— Բախշի՛, սուս կկենամ, համա նեղանում ես։

— Չէ՛, հանդարտ եմ. լսեցե՛ք, էն ա պրծնում եմ։ Ընչանք էն սհաթն էլ, Սմբատ ջա՛ն, որ մեզ ձեռ-ձեռի պտի տային, ես քեզ չէի սիրում. ղորթ ա, Հերիքնազիս խոսք էի տվել, որ հորս խոսքիցը դուս չգամ, բայց սիրտս չէր կպչում. ինչ կըլնի՝ թող ըլնի, ասեցի ու ճակատիս գրվածքին հետևեցի։ Հո՛ տեսաք՝ ի՛նչ էլավ, աստծու մատը մեջն էր, ու մեր պսակը խափանվեց. խափանվեց՝ ուրիշներին ցավ, բայց ինձ համար ամենից բախտավոր օրն էլավ։ Էդ օրն ես իմ չսիրած նշանածի տեղակ գտա մի սիրած, մի մոր արգանդից ծնածի պես ազիզ ախպեր, որ խոստացավ իր գլուխն ինձ համար չխնայել, որ իր խոսքը կատարեց ու կատարում ա։

— Ու պտի մինչև իր վերջին շունչը կատարի,— վրա բերեց Սմբատը։

— Ես կասկած չունիմ, քո քիրը գիտի էդ բանը ու դրա համար էլ ուզում ա իր ախպորը ցանկանա էն, ինչ որ ամեն մի քիր իր ազիզ մինուճար ախպորը կցանկանա։ Գիտե՞ս՝ ի՛նչ եմ ասում, Սմբա՛տ, աստված իմ հորն իրանից ծնած տղա չի տվել, բայց տվել ա մի տղա, որի պես ոչ մի հալալ[1] զավակ իր հորը չէր կարող մխիթարել։ Աստված իմ հորը տվել ա մի աղջիկ, բայց էն աղջիկը նրա գլխին ցավ ա էլել, իր հորն էնքան փորձանքների պատճառ ա դառել։ Բայց մի-բան կա, ասենք՝ իմ հերս էսօր մահապարտի պես Երևանու բերդումը բռնված ա, ու էգուցէլօր էլ շատ կարելի ա կամ գյուլլախորով[2] ըլի, կամ Սիբիրի ճամփին մեռնի, համա էլի աստված իմ հորս սիրում ա, նա հորս ոչ-փուչ աղջկա տեղակ տվել ա Հերիքնազի պես մի աղջիկ, որ եթե խեղճ հալիվորի կենդանության ժամանակն էլ չկարողանա մխիթարել նրան, մեռած վախտն էլա պտի նրա հոգու մխիթարանքն ըլի, հորս հոգին թե մի կողմից կտրխրի իր աղջկա վրա, մեկել կողմից կուրախանա Հերիքնազի պես բարի ժառանգ ունենալով։

Այստեղ հիվանդը փոքր-ինչ կանգ առավ։

— Հերիքնազ ջա՛ն, քեզ մատա՛ղ, իմ գլուխը կսիրես՝ դրուստն ասա՛, ինձ սիրո՞ւմ ես,— հանկարծ խոսքը փոխեց Հեղնարը։

— Ի՞նչ ես ասում, Հեղնար ջա՛ն, մի՞թե դու չդիտես։

— Սմբատ ջա՛ն, իմ արևը կսիրես, ինձ սիրո՞ւմ ես,— դարձավ հիվանդը դեպի տղան։

1 Հարազատ։ 2 Գնդակազարկ։

— Ոչ մի ախպեր, ես կարծում եմ, չի սիրած էլել աշխարհքիս մեջ իր քվերը, ոնց որ ես քեզ,— պատասխանեց Սմբատը։

— Հոքիր ջա՛ն,— աչքերը վեր բարձրացրեց Հեղնարը դեպի պառավ Մարիամը,— ինձ թաղես՝ թե դրուստ չասես, ինձ սիրո՞ւմ ես։

Մարիամն յուր անշարժ դրությունից չէր դուրս գալիս, նրա աչքերումը միայն կենդանության և սրտի թախծի նշան կար։

Սմբատն ու Հերիքնազը մնացել էին իրար երեսի նայելով։

— Վնաս չունի, քո լուռ մնալդ էլ ինձ համար պատասխան ա, հոքիր ջա՛ն, քո աչքերդ լեզվիդ տեղակ խոսում են. ես գիտեմ, որ դու ինձ սիրում ես,— ասաց Հեղնարը,— ես շատ լավ իմանում եմ, որ ամենքդ էլ ինձ սիրում եք, ոչ մնիդ սերի վրա կասկած չունիմ. հիմի էլ էն սերի անումովն օրթում եմ տալիս ձեզ, Հերիքնա՛զ ու Սմբա՛տ, ձեր քվերը բախտավորացրե՛ք։

— Ի՞նչ կուզես, որ անենք,— կարմրելով հարցրեց Հերիքնազը։

— Ա՛յ ինչ. ձեր քիրն երկար չի ապրելու, ոնց որ էլվախտ ասեցի, շատ կարելի ա ամիսներ քաշի, համա վերջս մահ ա. ինձ խոսք տվեք, որ իմ մահից ետ դուք իմ սրտիս ցանկությունը գլուխ կբերեք. էն բանը, որ մի ժամանակ ես շար մտքով էի կամենում, հիմի ուրախությունով եմ ուզում. հորս օջախը ծխելու, հորս հոգին փառավորելու համար եմ ցանկանում, հասկացա՞ք ինչ եմ ասում, վեր կացեք անխոսալ իմ առաջին կանեցեք, մոտացեք հոքորս ձեռն էլ պաչեցեք, նրա օրհնությունն առեք, եկեք, որ ես էլ ձեզ պաչեմ։

— Հեղնար ջա՛ն,— ուզում էր խոսել Սմբատը։

— Սո՛ւս, մի խո՛սք, մի ծպտո՛ւն, մի չէ՛ թե որ բերաններիցդ դուս ա եկել, ես էս սհաթս կմեռնիմ, բայց ես գիտեմ, որ ոչ մինդ ձեր քվեր մահը չեք ցանկանալ։

Հերիքնազն ու Սմբատը գլխները կախել էին, շփոթը, տրտմությունը, Հեղնարի խոսքիրն այն աստիճան շարժել էին սրանց, որ բացի լռությամբ կրծքերը բարձր ու ցածր անելուց՝ ոչինչ խոսք չէին գտնում պատասխանելու։

— Շո՛ւտ, շո՛ւտ արեք, սիրտս նեղանում ա, մենակ ձեր խոսքը կարող ա ինձ հանգստացնել,— ստիպում էր Հեղնարն և սրտնեղում։

Եվ ահա այն արձան կինը, այն ուրվական Մարիամը վեր կացավ տեղիցը, առաջ եկավ և Հերիքնազի կուռը բռնեց, անցկացրեց Սմբատի կողմը։

Աղջիկն անխոս հետևում էր մորը։

— Ո՛չ մի խոսք դուս չգա բերանիցդ,— հրամայաբար լեզու էլավ արձանը.— ինչ որ Հեղնարիս կամքն ա՝ պտի կատարեք, երեխիս բերնովն ասված ա խոսում, ձեռդ տուր, Սմբատ,— ասաց Մարիամը,— ա՛ռ էս քո նշանածը, քո քիր Հեղնարի հրամանն ա, բռնի՛ Հերիքնազի ձեռը։

Արձանացած Մարիամի խոսքերի ազդեցությունը սարսափ բերին մինչև անգամ Հեղնարի վերա։

Սմբատը բառացի կատարեց պառավի հրամանը։

— Փառք քեզ աստված, հիմի հանդարտ սրտով կարող եմ մեռնիլ,— աչքերը երկինք բարձրացրեց հիվանդը։

— Իմ ախպոր ու նրա գլխամեռ քվոր օրհնությունն ըլի ձեր գլխին, բալեքս, անարժան մեղավոր բերանովս խնդրում եմ աստծուց, որ ձեզ բախտավորացնի ու ձեր քվորը լավություն տա ու իմ ախպորս էլ սաղ սալամաթ իր երեխեքանց տեսությունին ու իր քվոր գլուխը հողը դնելուն արժանացնի,— ձեռները վեր բարձրացրած՝ օրհնում էր Մարիամը։

Պառավ Մարիամն այս դրության մեջ մնաց երկար ժամանակ. նա մին նայում է Հերիքնազի ու Սմբատի վերա, մին էլ Հեղնարի. վերջինիս վերա աչք ձգած ժամանակը նրա աչքերիցն արտասուքը կաթում էին։

— Հիմի ինձ մոտ եկե՛ք,— ասաց հիվանդը և պառկած տեղիցն առանց օգնության նստեց։ Շատ ժամանակ է, որ նա այս կարողությունից զրկվել էր։

Հեղնարը համբուրեց փոխադարձաբար երկու սիրեկանների երեսները. նոքա թաց էին անում ամեն մեկը արտասուքով հիվանդի չորացած ձեռքերը։

— Հիմի լսի՛, Սմբա՛տ,— ասաց վերջապես հիվանդը պառկելով,— ես ինձ շատ լավ եմ զգում. ես գիտեմ, որ ընչանք իմ սրտիս փափագը իմ լեզվովը հորս չասեմ, նրա օրհնությունը ձեր համար չխնդրեմ՝ մեռնողը չեմ։ Հիմի քեզ հարկավոր ա գնալ Երևան ու ջանդ չխնայել, իմ հորն ազատելու ճարը տեսնել. հույսս հաստատ ա, որ պտի ափունիս ձեռը պաչելու արժանի ըլնիմ։

Մյուս օրն Սմբատն Երևանումն էր։

ԽՈ

ԵՐԿԱՔՂ ՏԱՔ-ՏԱՔ ԿԵՏՄՆ

Դու աջ գնա՛, ես ձախ, ասաց Սաքոն մովրովին ու յուր գինետան հաշիվնէրը վերջացնելուց հետո՝ այնպես կտրեց յուր խանութի հետքը, որ յուր հանապազօրյան այցելու Բաքոսի պաշտոնյա ղազախներն էլ չէին գտնիլ։

Յասավուլ Մարգարը, որին մենք մոռացել էինք, ինքն իրեն շատ դատապարտում էր, Խեչանի տան պատահած բոլոր թշվառությանց պատճառն իրան էր համարում. նա ուզում էր մի օր ներկայանալ Խեչանին և խոստովանիլ, որ ինքը միտք չուներ նրա աղջկանն ուզելու, Սաքոն էր իրեն տաքացրել. ուզում էր ներողություն խնդրել, բայց ամոթն իրան խեղդում էր, խիղճը խիստ տանջում էր։ Յասավուլն է՛լ խիղճ է ունեցել։

Մարգարը այս պատրաստության մեջն էր. նա մտքումը դրել էր գավառից, ուր ուղարկվել էր, վերադառնալուն պես՝ յուր սիրտը հանգըստացնելու, բայց այնտեղ լսեց, որ Խեչանին Երևանու բերդն են տարել։ Կատաղեց յասավուլը և ուխտեց, որ ետ դառնալուն պես Սաքոյի վերա թուլը թափի, կամ ինչպես ինքն ասում էր, մի լավ լվանա, որ անմեղ մարդի արիւնն ընկավ։ Ետ դարձավ Մարգարը, զենքը ձգեց ու սուրն առանց քակելու շտապեց դեպի միկիտանխանեն։ Ոչինչ փոփոխություն իրեն դեռ հայտնի չէր։

Շթոփվեց Մարգարը, գինետան դուռը կրնկի վերա բաց էր, մեջը բոլորովին դատարկ էր, մի քանի տեղում էլ խունկ էր ծխում. կարծես՝ այս տանիցը նոր են ննջեցյալք դուս տարել։

Մարգարը սարսափեց, երեսին խաչակնքեց ու դուս էլավ։

— Ո՞նց թե ծախեց,— հարցրեց երկրորդ անգամը դրսը կանգնած գյուղացուն։

— Ծախեց, էլի՛, առուտուրը վերջացրեց ու ինքը ձին նի էլավ, քշեց դպա Ալագյազ։

— Բա ծառե՞ն։

— Ծառեն էլ հետը տարավ. մի խոսքով մարդն է՛լ միկիտանություն չի ուզում անիլ. տեսնո՞ւմ ես, գինու հոտը տանիցը կտրելու համար մի քանի տեղ իր հոր հոգուն խունկ ա ծխում,— ծիծաղելով ասաց գյուղացին։

— Ես նրա հախիցը կգա՛մ, էսօր մովրովին ամեն բանը կասեմ,— մտածեց Մարգարն ու գնաց դեպի յասավուլխանեն, բայց իհարկե սառած մնաց, ամեն փոփոխություն իրեն հայտնի եղավ և նա լռել ստիպվեցավ։

— Աստված քո դիվանն[1] անի, ուստանա Սաքո՛, էս բոլոր օյինները քո բաներն են. եթե դու չէիր էլել, գառան նման մովրովը գել չէր դառնալ, մհալի տունը չէր քանդիլ, խեղճ Խեչանին էլ փորձանքի մեջը չէր քցիլ, ինքն էլ էդ կրակի մեջը չէր ընկնիլ։

1 Դատաստան։

Այս խոսքերն եղան Մարգարի վերջին մտածմունքը Սաքոյի ստվերի դեմ, սրանցով միայն ողորմելին իրան խիղճն արդարացրեց։

Բայց Սաքոյի հոգը չէր. առածն ասում ա՝ շունը կհաչա, քարվանը կքոչա։ Մեր միկիտանը Զեյվից այդ ժամանակը շատ հեռու էր, այդ խոսքերը նրա ականջին չէին հասնում։

Գնաց Սաքոն, արդարև, դեպի ձախ, գնաց Աշտարակ, բայց գյուղը չմտավ. նա իջավ յուր այգումն և կանչեց տատմորը, նրանից իմացավ, որ Սմբատը դեռ գյուղումն է, բայց շուտով Երևան է գնալու։

Միկիտանը ճանապարհ դրեց տատմորը, սաստկացրեց ամենախիստ հսկողության պատվերներն և ինքն վեր կացավ՝ կանգնեց յուր այգու գլխին։ Երկար խորհրդածություններ նրա մտքովն անցկացան։ Այս այգին բռնեց Սաքոն Մարգարին խաբեությամբ պսակը քանդել ուղարկելու պատճառը. հիմա էլ տեսավ, որ այս մնաց յուր վերջին հույսը, նա զույգ ձեռքով գրկեց այն միտքը։— Խեչանը յուր հետ այգեկից հարևան էր, թումբը-թմբան, ծառը-ծառի, միջնակը-միջնակի հետ խառն էր. ինքը Սաքոն միտք ուներ Խեչանի բոլոր կալվածքը սեփականացնել և այդ երջանիկ երևակայությունն այժմ երազական ցնորք լինելուն կասկած չմնաց։ Ի՞նչ աներ, ուրեմն, այս միակ այգին է՞լ ձեռքից հաներ, այս է՞լ չկարողանար շահվիլ. ամոթ չէ՞ր իրան, իրան՝ Սաքոյին, ոչ մի բանում ցարդ անհաջող չգտնված Սաքոյին Խեչանի նման մի գյուղացու դեմ ընկնվիլ։ Դիցուք Խեչանի հարստության քառորդ մասն ինքը ծծել է, բայց այդ միայն փողով է եղել, այդ յուր ջերմ աշխատությամբ Խեչանի տան գլխին բերած մեծամեծ փորձությունների վարձատրության 100-րդ մասն էլ չի կարելի համարել. մի՞թե Սաքոն այդքան միայն սպասում էր։ Եթե անպիտան քննիչը կոտրած քթալի նման անժամանակ ներս ընկած չըլներ, նա Խեչանին Զեյվումը պահելով՝ մտադիր էր վերջին կոպեկից զրկելուց հետո, նրա անշարժ կալվածքի կծիկն էլ հետզհետե յուր ձեռքն առնել. բայց զզվելի քննիչը մկան նման կարասն ընկավ ու հոտացրեց։ Եթե նա Սաքոյին անձամբ վնաս էլ չհասցնի, յուր քննության ցանցի մեջ նրան չկարողանա կաշկանդել, այսքանն էլ փոքր վնաս չէր, որ զգալի կերպիվ հասցրեց, խեղճ Սաքոյի եկամտի աղբյուրները ակներիցը ցամաքացրեց։ Ողորմելի Սաքոն անպիտան քննչին մի վնաս չէր տվել. որտեղի՞ց են երբեմնապես այսպիսի որոմները առաջ գալիս և Սաքոյի նման ժիր, աշխատասեր գործունեի աշխատանքը ոչնչացնում։

— Դե՛, էդ դարմանի տակի ջուրը հո ինքն ինձ զոռով[1] չեկավ, չասեց, թե Սաքո՛, մովրովիցն ու մհալիցը ձեռներդ լվացիր, պրծար, հիմի

1 Բռնի։

էլ միկիտանխանեդ՝ բնակալդ Զեյվիցը ցաքուցրիվ տո՛ւր, գլուխ ա՛ռ, կորի՛. դե՛, քննիչն ըսկի երազումն էլ չէր կարող իմանալ, թե աշխարհը մի մովրովներ արածացնող միկիտան Սաքո կա՝ նրան թալաքի մեջ քցեմ։ Բայց չէ, Սաքոն մենակ փողի սառաֆ[1] չի, մարդի սառաֆ էլ ա. ես մովրովը չէի, որ ախմախի պես ճաշքուն տամ, թողամ, որ քննիչը գա գլխիս կանի, ոտ ու ձեռս շարբանդի[2], գործերս մհրի[3], նոր աչքերս չռեմ, դունչս ծռեմ ու մնամ մոլորված, էդպեսներն ի՞նչ մարդիկ են, դրանք գլուխը քոր գալուս ոտի տակն են քորում։ Չէ՛, ախպե՛ր, մհալի տիրոնջ հերն էլ անիծած, միկիտանխանինն է՛լ, իմ ջանիցը հո՛ լավ չե՞ն, էսօր կային, էգուց թող չըլնին. էլօր մին էլ տեսար՝ քո խիալ[4] շարած տեղդ ինքն իրան պուպուզ՝ գլուխը հանեց։ Ապրի՛ս, Սաքո ջա՛ն, ինչ որ արիր, շատ լավ արիր, միկիտանխանեդ մի սհաթի մեջ ծախծխոտեցիր, քեզ վնասված ավատացրիր առնողներին, լավ գինին ու արաղը մուշտարիքանցը[5] շանց տվիր ու կիսից շատ եռացրած ջուր խառնեցիր, գլխները կապեցիր. չալ-չալ[6] մանեթները, շղշղկան ասիգնացիքը[7] ջեբդ դրիր, միկիտանխանումդ էլ, սաքի հորդ հոգու համար, էնքան խունկ ծուխ տվիր, որ գինու-արաղի հոտը բնավ չի գալ, դու էլ ձիդ նստեցիր, ծառայիդ ցանեցիր, դպա Ալագյազ ղրկեցիր, ինքդ դեսն եկար։ Հիմի քո առաջին գործն ա՝ Երևան մտնես թե չէ, չինովնիկներից, ղուլլուղի մարդկանցից հեռու ման գալ, մովրովիցն ու իր թայֆիցը ցանվիլ, մեջ ուտիլ, ղրաղ ման գալ, տեղն եկած վախտը փողիդ տոպրակը բաց անիլ, կոպեկներ տալ, մանեթների գործ շինել. ի՞նչ կուզես անիլ, թաք ըլի էսօր Երևանու բերդի միջին քո տան պես ըլնիլ, բերդի դռնովը քեֆդ ուզած վախտն ազատ ելումուտ անել, խեչանի աչքը մտնել ու էնքան կորցրած մալ ու դովլաթից էս մի հիքին էլա քո ձեռը քցել։

Սաքոն այս մտածմանց մեջ ձին սանձեց և հեծավ։

— Հա՛, մի բան էլ մոռացա,— շարունակեց նա յուր խորհրդածությունքը,— մենծ էշն ախոռումն ա մնացել, պտի ամեն հնարք բանացնիլ, Սմբատի համար քննչի դուռն ու խեչանի երեսը պաս անիլ։ Թեկուզ որ մտածածներս քամին տանի, ոչ մինը գլուխ գալու չըլնի, պտի գարդ չի անեմ, դեռ ինձանից պտի խարջեմ, խեչանից շահվածներս էլ ետ էս գործի համար փչացնեմ, իր եղն իր գլուխը քսեմ ու Սմբատի ոտը էն երկու տեղի շեմքովն էլ տուն չթողամ։

Բախտը Սաքոյին աչքիցը չէր ձգել. այդ իսկ երեկոյան նա յուր վազածանոթ բանտապետի ձեռքով խեչանի մոտ մուտք ունեցավ։ Այս անգամ նրան այնպես դժվար չեղավ ծերունու համակրությունը գրավելը, նա փորձված էր, էլ չէր սխալվիլ։

Այդ օրը բանտապետը տուն մտավ և խեչանին ավետեց, որ մովրովը սաստիկ վիրավորվել է քննչի արած տնօրհնություններից՝ խեչանին Երևանու բերդն ուղարկելու մասին. նա պաշտոնական թղթով հայտնել է նաչալնիկին խեչանի անմեղությունը. մովրովի հայացքով սպանության գործի մեջ ոչ ոք մեղավոր չէ, Մահմատ-Բաղրը բեգն իրև ավազակ արժանի էր սպանվելու (Սաքոն խեչանին բերդն ուղարկելուց փութացել էր հասկացնել նրան, թե իրեն ուղարկողը ոչ թե մովրովն է, այլ Երևանից նրա գործի համար հանկարծակի ուղարկված քննիչը)։

Այժմ, ասաց բանտապետը, նաչալնիկն իրեն կանչել էր և պատվիրեց՝ խեչանին ծանր հանցավորների միջից հանել և առանձին մաքուր սենեկում պահել. այս երկու-երեք օրս էլ, անկասկած, նրա ազատության հրամանը կհետևի։

Անկարծիք, մեծ ուրախություն էր խղճալի ծերունու համար այս լուրը և մեծ թեթևություն մահապարտ, խաժամուժ և ռամիկ չարագործների միջից առանձին խցիկի մեջ փոխադրվելը։

Ի՞նչ նեղություն արդյոք չէր տանում նա այդ անզեղջ ավազակների մեջ, ի՞նչ կշտամբանք, ի՞նչ հայհոյանքներ չէր լսում անպատկառ արյունարբու բանտարկյալներից։ Նրա ալիքն անարգվում և այպանվում էր, նրա երեսն ամեն օր թուք էր տեսնում. անամոթ գազանները, որոնք իրանց կյանքի մեջ միայն մարդասպանությամբ են պարապել, որոնք պատիվ, մարդկություն, հարգանք երբեք չեն՝ իմացել, ամենատեսակ տանջանք տալիս էին ողորմելի ծերունուն, սուտ ճգնավոր էին կոչում, երեսին խաչակնքելուս ձեռքն էին բռնում, ետ քաշում, գետնին թքելու պատրվակով նրա երեսին էին թքում, սուտ կռիվներ էին հնարում և որպես թե միմյանց հետ ծեծի բռնված ժամանակ՝ անզգուշությունից նրա գլխին էին ընկնում. մի քանիսն, իբր թե նրան ազատելու նպատակով, յուրյանք էլ մյուսների հետ խառնված, ոտնատակ էին տալիս խղճալուն, իրարու հասանելիք բռունցքը հանկարծակի սխալմամբ եղած ձեվացնելով՝ ծերունու մեջքին էին իջեցնում, պատերի տակի փոշիների մեջ նստում, հողի մեջ կոլոլվում և դալիս նրա մոտ թոթվում էին, աչք ու բերան հողով լցնում, բանտը փոշիի ամպով ծածկում, աղաղակ, հարայ-հրոցը բարձրացնում և մինչև բանտապետի ականջը հասցնում։ Եվ ահա, երբ հանկարծ բանտապետի ոտքի ձայնն իմանում էին, վազում հանդարտ տեղերը նստում էին ու բոլոր հանցանքը միաձայն խեչանի վրա բարդում։— Խելացնոր է,— գոչում էին,— գլուխը պատեպատ է տալիս, ճիչեր է արձակում, մեզ հայհոյում է, հողը գետնիցը քանդում՝ պանը

1 Սեղանավոր։ 2 Կաշկանդել։ 3 Կնքել։ 4 Կասկած։ 5 Հաճախորդ։ 6 Փայլուն։ 7 Թղթադրամ։

ցրիվ է տալիս, անխտիր հայի և թուրքի հավատն է հայհոյում, և շատ այսպիսի զրպարտանքներ շարում էին իրենց անսանձ լեզուներովը։

Տգետ բանտապետը, գիտությա՞մբ թե անգիտությամբ, հավատում էր այդ չարագործների խոսքերին, յուր սովորական աննկարագրելի հայհոյանքներով սրտի թույնը թափում էր կրկին տարաբախտ Խեչանի գլխին, դեռ մի քանի մահակ էլ նրա կռացած մեջքին էր իջեցնում և հանդարտել հրամայում։

Այս ամենը լռությամբ միայն տանում էր առաքինի ծերունին և չէր ուզում երբեք տգետ ու բիրտ բանտապետի մոտ յուր անմեղությունը հայտնել, դիտելով անշուշտ, թե այս վայրենի մարդուն անծանոթ է արդարությունը, նրա իրավախոհությունը միայն յուր գազանաբարո վարմունքի մեջն է, նրա արժանավորությունը յուր ահռելի դեմքն ու անագորույն ձայնն է, որով միայն դողացնում և սասանեցնում է բանտի ճիվաղներին։ Որտեղի՞ց ուներ մի զինվորականությունից անընդունակության պատճառով արտաքսված ստորին աստիճանավոր այնքան խոհականություն, որ առաքինությունն ու մոլորությունը զանազանել կարողանար։

Ավելորդ էր համարում վերոգրյալ պատճառներով Խեչանը յուր անձը բանտապետի մոտ պաշտպանել, լավ էր դատում էլի համբերել և յուր չարագործ ընկերների տված նեղությունները տանել։

Հավանական էր ուրեմն, որ բանտապետի այսօրվան տված ավետիքը՝ սենյակը փոխելու տնօրինությունը՝ Խեչանի համար մեծ երջանկություն էր։

Այս փոփոխությունից մի ժամ հետո բանտապետի խոսքերը մնանդամայն փարատեցին Խեչանի մտքից երկմտության նշույլը։ Բանտապետը մի նամակ բերեց և ծերունու մոտ թարգմանելով կարդաց։ Նամակը, որպես թե, Զեյվի մովրովիցն էր յուր վերա գրված։ Մովրովը խնդրում էր իրանից Խեչանին շատ Հանգիստ պահել, հետը պատկառանոք վարվիլ և , եթե նրա մոտ գալու լինի այսուհետև նրա փեսացու Սմբատ Ծվիկյանցը, շարունակ այցելության իրավունք տալ։ Նամակի մեջ մովրովը հայտնում էր, որ ինքը շուտով կուղարկի Խեչանի մոտ յուր հավատարիմ միկիտանին, որը կսովորցնի նրան նաչալնիկի մոտ բռնելիք ընթացքը և տալիք պատասխանները։ Եվ որովհետև Սաքոն գավառն է ուղարկված պաշտոնական գործերով, մովրովն երեկ նրա քամակից մարդ է ուղարկել և ետ կոչել. նա խոստանում է Սաքոյին վերադառնալուն պես փութանակի առանց բուլե կորցնելու Երևան ղրկել,որպեսզի ուշ չլինի, ինքը, որպես թե, նաչալնիկից թուղթ է ստացել, որ առաջիկա օրերս պետք է քննվի Խեչանի գործը։

Խե՜ղճ ծերունի, այս երկրորդ լուրն էլ հալած յուղի տեղ ընդունեց, հավատաց միկիտանի լարած որոգայթներին և ինքն իրեն դատապարտում էր, որ սխալ կասկածներ է տարել մովրովի ու Սաքոյի վերա, յուր բերդն ուղարկվելու պատճառը նրանց է համարել, յուր բարերարների ստվերի դեմ տրտնջացել է։

Այսպիսի ճարտարությամբ փորած դարանից հետո՝ դժվար չէ, ուրեմն, մեզ երևակայել, թե ի՞նչ գրկաբացությունով այս իսկ երեկոյին մութը գետինը կոխած ժամանակը ընդունեց Խեչանը Սաքոյին, ի՞նչ ջերմ սիրով համբուրեց նրա ճակատը, երբ որ միկիտանն արտասուքն աչքերին մոտեցավ, բռնեց նրա դողդոջուն ձեռքը, մի քանի անգամ միմյանց ետևից համբուրեց և ասաց.

— Խեչան աղա՛, ջանս դուս գա քեզ համար, էս ի՞նչ օրն ես ընկել։

— Անիծվի՛ էդ քննիչը՝ մրդեզ[1] էծը,— շարունակեց Սաքոն,— նոր եկած մարդ ա, ոչինչ չի ըլում հասկացնել, ոչովի լսել չի ուզում. գիտե՞ս, թե մեր խեղճ մովրովը քեզ համար ինչ լեզու ա թափել. գտակը վեր կալավ, աղանչաք արեց, խոստացավ ինքը քո տեղակ զամին[2] ըլնի, թաք ըլի քեզ Զեյվիցը բերդը չղրկի, չելա՛վ ու չելա՛վ։ Մի ինչ-որ օրենքի գիրք էր բերել հետը, շուտ-շուտ բաց էր անում, մատը վրեն դնում, թե ըստեղ էս ա գրված, մեկել տեղն՝ էն։ Հենց իմանաս, թե մեր մովրովը խոտ ա արածել, դրա գրածների տեղը չգիտի, հո չի՛ կարելի ամեն բանի մեջ շուտ-շուտ օրենքի գրքի պոչիցը բռնել ու կախ ընկնել։

Խեչանը ոչինչ բանից տեղեկություն չուներ. նա չէր լսել ոչ նոր քննչի գալը, ոչ մովրովի քննության ենթարկվելը և ոչ Սաքոյի միկիտանությունը թողնելը։ Նա ի՞նչ կարող էր մտածել, թե Սաքոն էլ իրավունքի տեր չի, թե յուր տեղափոխվիլը, մովրովի նամակը՝ բոլորը Սաքոյի սարքած բաներն են, ուզեցավ յուր գործի դրությունը հասկանալ։

— Սաքո ջա՛ն, հիմի ի՞նչ հույս կա,— հարցրեց Խեչանը։

— Էնպես ֆանդ ու ֆելեր[3] բանացրինք,— շարադրեց Սաքոն,—որ էդ քո քննչին գլխի վրա տնկել ենք, մովրովն էն թուք ու մուրն ուտո՞ղն էր, կամ թե չէ ես մեռել էի՞, որ քշեր-ցերեկ տամարը չմտնեի[4] ու ոնց որ սիրտս ուզեր, էնպես չշուռ տայի։ Գլխին զուրբա՛ն նաչալնիկի, մովրովի թուքն ստանում ա թե չէ, ձեռաց քննչին կանչում ա ու լավ լվանում— «պոչը-մոչդ կխուզեմ,— ասում ա,— թե որ դու էն թավուր օգուտ տվող մովրովի խաթրին դիպել ես»։ Ախա՛ր դու ինձ ասա՛, Խեչան աղա՛, նաչալնիկը խելք չունե՞ր, որ իր հացին քացով տար. ոչ մի մհալի մովրովից էնքան օգուտ չի գալիս իրան, ինչքան որ մեր մովրովիցը։

---

1 Շեկ։ 2 Երաշխավոր։ 3 Հնարքներ։ 4 Համոզեի։

— Մի՞թե մովրովներն իրանք էլ կաշառք տալիս են,— զարմացմամբ հարցրեց Խեչանը։

— Բաս դրա համար ա, որ խեղճի անումը մի քիչ կոտրվել ա, թե կաշառակեր ա. հոգի ունիմ տալացո՛ւկ, ձեռս սրտիս դրած կասեմ, որ մեր մովրովի առած ընծեքանցից 1000-ից մի բաժինն իրան չի մնում։

— Հիմի իմ գործն ի՞նչ տեղ ա։

— Հենց դրա համար էլ գլուխս պատռելով եկել եմ, թե չէ էս վախտ ես Երևանում ի՞նչ բան ունեի։ Մհալն էի գնացել, մին էլ մովրովից մի մատը գիր եմ ստանում, թե՝ գլուխդ էդտեղ թրջի, էստեղ վեր արա՛, ընչանք իրիկուն շան պես չարչարվել էի, բերանս նշխարք չէր մտել, նոր նստել էի հացի. դեռ երկու թիքա[1] բերանս չէր մտել, որ գիրն ստացա։ Միտք արի, որ հացից վեր կկենամ, կերթամ, բայց, արևս մեռնի՛, աղա Խեչա՛ն, թե սուտ եմ ասում, թիքեն բողազովս կուլ չգնաց, հենց իմանաս, թե մինը կողքիցս բրթեց, թե չոռ ու ցավ ուտե՛ս, հալբաթ մի բան կա, որ մովրովը քեզ վռազ կանչել ա, էլ ի՞նչ քո հաց չողամիշ ըլնելու[2] վախտն ա, վեր կաց կորի՛։ Թիքեն բերնումս վեր եմ թռել ու ձիու քամակն ընկել։ Խեղճ Թառլանս[3], ա՜խ, ես նրա տոնաղներին[4] մատա՛ղ, էն հալն ընկավ, որ ոտս օրղանգուից հանելս ու ձիուս գետնին ձգվիլը մին էլավ. ափսո՜ս իմ ձի, ինձ վրա շատ երախտիք ուներ։

Սաքոն ձեռքն աչքերին տարավ և արտասուքը, որպես թե, սրբեց։

— Ի՞նչ էլավ,— հարցրեց Խեչանը։

— Փռվեց քյահլան Թառլանս մեջքի վրա ու ոտները չռեց. ընչանք ես մովրովի կշռիցը դուս եկա, տեսա, որ յասավուլները քաշ են տալիս պոչիցը, մինն էլ դանակը սրել՝ հետը գնում ա, որ կաշին քերթի։

Սաքոն աչքերիցը թափեց։

— Դարդ մի՛ անիլ, Սաքո ջան,— մխիթարեց Խեչանը,— ջանդ սաղ ըլի՛, խոսքս խոսք ըլի, որ էս դժոխքիցը դուս եկած սհաթը քո հավանած ձին քեզ համար առնեմ. մնին հինգ կտամ ու տիրոնջ գոմիցը դուս կքաշեմ։

— Է՛հ, դու ողջ կենաս, Խեչան աղա՛, 100 ձի քեզ դուրբան, նրա համար ո՞վ ա հոգս անում. էնքան էր, որ միտքս ընկավ, լացս եկավ. թե չէ քսկի ես մոտ էլ չգնացի, կամ մնիցը բան էլա չհարցրի. տեսա, որ ձիս սատկել ա, գնացի մտա գոմը ու աչքիս առած յասավուլի ձին դուս քաշեցի, վրեն թռա ու ինձ Երևան քցեցի։ Գոմի դռանը ցած եմ եկել. թավլաբաշան[5] ձեն տվի, որ ձին կապի, խոտ տա ու ինքս շտապեցի ինձ բերդը քցել. հենց իմանաս յասավուլի ձին էլ Թառլանիս օրը կընկնի։

1 Գատառ։ 2 Լափելուգ 3 Սաքոյի ձիու անունն է։ 4 Սմբատի։ 5 Ախոռապետ։

— Ախար ընչի՞ համար շտապելով էիր գալիս, ի՞նչ կա որ։

— Էն կա, որ մովրովն ինձ ղրկեց քեզ պատրաստեմ, քեզ սարվացնեմ, որ քնչին կամ նաչալնիկին էն պատասխանը տաս, ինչ որ ինքը գրել ա քեզ համար, չըլնի թե ուրիշ բան ասես, քո պատասխանը նրա գրածիցը ջոկ ըլի ու բանը փչանա. նաչալնիկը մովրովին գրել ա, որ քո գործն էս երկու-երեք օրը պտի քննվի։

— Ա՜խ, Սաքո ջա՛ն, թե որ մովրովն ինձ էստեղից ազատիլ ա տվել, դու տես, թե դուս գալուց ետո ո՞նց պտի նրա ոտը գնամ ու շնորհակալություն անեմ։

— Էտ ետի բան ա, Խեչան աղա՛, դու դեռ լսի՛. երբ որ քեզ կհարցնեն, ասա, որ ինքդ հիվանդ էիր էն քշերը. թուրքի խոխոռոցը լսում էիր, բայց ուժ չունեիր տեղիցդ վեր կենալու. վերջը տեսար, որ քվորդ աղջիկը խիշտն արնոտ եկավ ու պատմեց, ինչ որ անց էր կացել։ Դու էլ, ասա՝ հիվանդությունդ մոռացար, վեր թռար, շփոթ քցեցիր, բայց խալխի մոտ էլ ետ ույժդ կտրվեց՝ նստեցիր։ Մովրովն եկած վախտն էլ, ասա՝ դու քո անմեղությունդ հայտնեցիր, համա երբ որ տեսար, թե քվորդ աղջկանն ու փեսացուիդ պտի բռնեն, մեղքը քո շլինքը առար։

— Դե՛, իմ ասելիքս հենց էդ ա,— զարմացմամբ ասաց Խեչանը։

— Չէ՛, դու քո հիվանդությունն անպատճառ ասա՛, մին էլ որ՝ դու վախեցել ես, թե քո քվոր աղջկանն ու փեսին կբռնեն, ընդուր համար ես մեղքը քո շլինքն առել։

— Շատ լավ կըլնի՛,— մեքենաբար պատասխանեց Խեչանը։

— Ես մհալը գնալուս Աշտարակովն անց կացա, երեք օր առաջ էնտեղ էի,— ասաց Սաքոն։

— Հա՛, Սաքո ջա՛ն, հենց հիմի ուզում էի քեզ հարցնել, երկու շաբաթ ա, որ ինձ Չեյվիցը բերել են ու տանիցը խաբարություն չունիմ, յարար ո՞նց են երեխեքս։

— Քո ըստեղ բերելու օրն ես գնացի Աշտարակ՝ դուզ[1] ձեր տունը. վախեցա, որ էդ խաբարն ուրիշից կիմանան ու կնեղանան. գնացի, սիրտ տվի, որ դարդ չանեն։ Խեղճերը, ղորթ ա, լսելու պես աչքներիցը թափեցին, համա ես օրթում կրակն ընկա, որ իմ գլուխս կսպանեմ ու քեզ բերգումն երկար չեմ թողալ տալ։ Սմբատն հենց էդ օրն ուզում էր Երևան գալ, բայց ես հասկացրի, որ զուր ա, բերդի դուռն էլ չեն թողալ մտնելու. ա՛յ, հիմի մովրովը նաչալնիկիցը խնդրեց, որ բանտապանին հրամայի Սմբատին տուն թողալու. սրա վրա էլ ջոկ գիր ա գրել։ Հիմի ես քեզանից դուս կերթամ, կխնդրեմ, որ Սմբատին չի արգելի. քանի էստեղ ես՝ ամեն

1 Ուղղակի։

ժամանակ կարողանա գալ ու գնալ, ոնց որ Զեյվումն էր. դու միամիտ կաց։

— Ինքը բանտապանն ինձ ասեց,— պատմեց Խեչանը։

— Հա՞, բաս շատ լավ. ես էս երկու-երեք օրը Երևանումը պտի մնամ, քո գործի համար մարդիկ պտի տեսնեմ, Զեյվա ետ դառնալուս Աշտարակովը կանց կենամ ու Սմբատին ինչ որ պատվերներն ա՝ կտամ ու կասեմ, որ գա քեզ տեսնելու։

— Հա՛, Սաքո ջան, հա՛, էդպես մի բան արա՛, երեխեքանցիցս կառեկածավոր եմ։

— Անպատճա՛ռ, անպատճա՛ռ, բարի քշեր,— ասեց Սաքոն ու դուրս եկավ Խեչանի մոտից։

— Ամեն բան եղի պես դրստվեց,— խոսում էր Սաքոն ինքն իրեն յուր իշևանը վերադառնալուս.— էգուցվանից մենք մեր բաղի բանը հոգանք. երկաթը տաք-տաք կծեծեն։

ԽԴ

ՂՈՆԱՂՆ ԱՍՏՈՒՆՆԱ

Երկու-երեք օր թափառեց Սմբատն Երևանումը, շատերից խորհուրդ հարցրեց, շատերի մոտ գնաց և ամենքից միևնույն խոսքը լսեց, թե քննիչն արդարադատ մարդ է, նրա աչքից ոչինչ չի փախչիլ և նրան մատչիլը շատ հեշտ է։

— Ուրեմն սուտ չէր ասում Սաքոն, Խեչանի գործերը քննել են, բայց մովրովը չի խնդրել, մովրովն ինքն ա սխալացրել քննչին, թե չէ քոռ մարդ պտի ըլներ, որ չիմանար, թե խեղճ հալիվորը զուր ա բռնված. գործն ինքն իրան բղավում-ճղավում ա, որ էդ քննիչն է՛լ մի բան չի էլել, մովրովի չվանովն ա հորը մտել, մովրովը ոնց շանց ա տվել, էնպես ա դարձրել,— ամեն տեղ ասում էր էս խոսքը Սմբատը։

— Ի՞նչ ես ասում, ախպե՛ր,— հանդիմանում էին նրան ամենքը,— էս քննչի մոտ մովրո՞վը կհամարձակի ձեն տալ. անճախ աստված էս աշխարհքին մի լիս ու ճար ա արել, մի մարդ ա ղրկել, որ աղեքանցը ծակն ա կոխել, պոչը-մոչները պոկել ա, ոչ մորթում ա, ոչ ապրացնում. երևում ա՝ էդ քո Խեչանը մեղավոր էր, թե չէ նրա անմեղությունն էլ քննչի աչքիցը չէր փախչիլ, արդար մարդին սա բերդը չէր ղրկիլ։

— Ասում են՝ դեռ էս քննիչը բերդը չի մտել, մհալների մովրովների

գործերը պրծել ա, հիմի էլ քաղաքի ծառայողների ջանին ա ընկել, շուտով էլ բերդը պտի մտնի,— խոսեցավ մի ուրիշը։

— Ասում են՝ ձեր մովրովին հենց օրն ա քցել, Սմբա՛տ, որ քո նոքարի գլուխը չգա,— ասաց մի երրորդը,— հոգին բուռն ա հավաքել. հալբաթ ձեր... Շահազիզյանց-Կամսարականիցը լսած կըլնիս, ասում ա նրա խոսելու ժամանակը մովրովն ուռի պես դողում էր։

— Չէ՛, ես չեմ տեսել Կամսարականին, իմ գեղումն էլած վախտը նա էնտեղ չէր, ի՞նչ կա որ, մի՞թե քննիչը մեր մովրովին նեղացրել ա, քննիչն ո՞վ ա, որ մովրովի վրա իրավունք ունենա,— զարմացմամբ հարցրեց Սմբատը։

— Տո՛, դու ըսկի բանից խաբարություն չես ունեցել. ախար մի նոր քննիչ ա եկել, մովրովների ու ղուլլուղի մարդկանց գործերն ա քննում, ձեր մովրովիցն, ավատաս, հինգ-վեց հազար մանեթ առավ ու էն սհաթը ռահաթի մեջը բաժանեց մեդալի համար,— մեջ մտավ մի չորրորդը և պատմեց մեդալի անցքը։

— Վա՛յ գլխիս, բաս ես հենց գիտեմ, թե քննիչը մենակ Խեչանի գործի համար ա եկած էլել, մկար մեր մովրովին ա ծակը կոխե՞լ. բաս Խեչանին ո՞վ ա բերդը ղրկել. չըլնի՞ թե Սաքոն ինձ խաբեց, կամ թե մովրովն ինքն ա իր գլուխն ազատելու համար Զեյվիցն ռադ արել. որտեղ ըլի՝ ես էս քննչին պտի գտնեմ։

Սմբատը թողեց ու գնաց, նա շատ շուտ գտավ քննչի պարապելու տեղը։

Մեծ բազմություն հավաքված էին դռանը. Սմբատը նայեց, որ ամեն մարդ դռան կանգնած թուրք պոլիցիականին մի խոսք ասելով ներս էր ընդունվում։

Սմբատը դողալով առաջ եկավ և ներս գնալու թույլտվություն խընդրեց։

— Դու ո՞վ ես,— հարցրեց պոլիցիականը։

— Ես աշտարակցի եմ, իմ անունս Ովիկենց Սմբատ ա։

— Մտի՛ր,— ասաց թուրքը և ինչպես կամենում էր դուռը ետ բանալ, մի աներևույթ զորություն կարծես կրկին պինդ ծածկեց։

— Էգո՛ւց արի, էսօր աղեն ժամանակ չունի,— ասաց թուրքը։

— Հալբաթ էս քննիչն էլ թիլացավ, յա բեզարեց,— քշփչացին մի քանիսը բազմության միջից,— թե չէ ընչանք հիմի ո՞վ էր լսել, որ արդարուն ետ դարձնեն, ուզողի համար չէ՛ չկար։

— Էս ո՞վ էր, որ ոտներս կոխրճելով առաջ եկավ ընչանք դուռն ու ետ դառավ, գի՞ժ էր, ի՞նչ ա, մի մտիկ տվե՛ք, հենց իմանաս քամակիցը մի մհասիլ ընկած ըլի, ո՞նց ա թողել փախչում,— խոսեցավ մի մարդ։

Այս խոսքի վերա շատերը ետ նայեցան, որոնց թվումն և Սմբատն էր։

Մեկը շատ շտապով վազում, էդ տեղիցը հեռանում էր։

Սմբատը ճանաչեց, ինքն իրան բազմության միջից, ինչպես եղավ, դուրս ձգեց և անծանոթի քամակիցն ընկավ։

— Տեսա՞ր ոնց կորավ, հալբաթ էս տեղրանք էլ մի չարություն ունի,— մտածեց Սմբատն ու կանգ առավ.— չըլնի՞ թե ինձանից փախավ, չըլնի՞ թե սրա ասելովն յասավուլն ինձ քննչի մոտ տուն մտնելու չթողեց, թե չէ ի՞նչ կնշանակեր դուռը բաց անելն ու էլ ետ ծածկելը։

Այս մտածմունքով կրկին ետ դարձավ Սմբատն ամբոխի մեջ և հեռվից դիտում էր. ամենքին էլ տուն էին թողնում։

— Մին էլ փորձեմ,— վճռեց նա ու մոտ եկավ։

— Ես ուզում եմ քննիչ աղին տեսնել, շատ հարկավոր գործ ունիմ, խնդրում եմ ներս թողաս ինձ։

— Համեցե՛ք,— ասաց թուրքն և ուղեցավ դուռը բանալ առանց երեսին նայելու, բայց հանկարծ աչքն երեսին առավ և անունը հարցրեց։

— Էլվախտ ասեցի, որ իմ անունս Սվիկենց Սմբատ է։

— Քեզ ասեցի, որ էգուց արի,— բարկացավ պոլիցիականը և երկու ձեռքով Սմբատին ետ մղեց։

Խեղճը գլուխը քորելով ետ գնաց։

Ամեն մարդ այս բանի վերա մնաց զարմացած. առաջին խնդրատուն էր, որին քննչի դռանը մերժում էին։

— Ոչինչ, թող էսօր էլ մթնի,— մտածում էր Սմբատը Երևանի փողոցները չափելով,— էգուց էլ կերթամ, էլօր էլ կերթամ. ընչանք ես էդ քննչի ոտները չընկնիմ, հույսս չեմ կտրիլ։ Բայց տեր աստվա՛ծ, թե որ էն փախչող մարդը նա էր՝ ո՞նց աներեևույթ էլավ, երեսը չտեսա, շորերն էլ հենց իմանաս փոխած ըլներ, համա ման գալուցը նրան նմանացրի. նա իմ ձեռիցն ընչի՞ պտի կորչեր, ինձանից հո վախում չէ՞ր։ Թե ասեմ աչքս ինձ խաբեց՝ ուրիշն ըլներ՝ էլ չեմ կարող ասիլ, իսկը նա էր, որ կար.— է՛հ, հերն անիծա՛ծ, դրա համար ի՞նչ եմ գլուխս ցավացնում, ես իմ դարդի վրա միտք անեմ։

Գլուխը քաշ արած, խեչանի վրա մտածելով, գնաց Սմբատն երեկոյին յուր իջևանը, կամ. որ ճիշտն է, յուր ծանոթ երևանցու տունը։

Իջևանները կամ հյուրանոցներ առաջ մեր աշխարհքումն անծանոթ էին, հիմա էլ հասարակ ժողովրդի համար դա մի վերացական բառ է։

Հայոց հյուրասիրության վերա մենք շատ անգամ ենք խոսացել. այդ միևնույն բանը, սակավ բացառությամբ կարող ենք սեփականացնել հայաստանցո՞ւն ասեմ, չգիտեմ, թե ասիացուն։ Վերջինիս համար

ես չեմ կարող ճիշտ գաղափար տալ, սակայն Հայաստանի բնակիչների համար հատկապես կարելի է վճռել, որ այդ երկրի օդ ու ջրի, նրա կլիմայի զորությամբը նրա միջի բոլոր ժողովուրդը՝ բնիկ, թե եկավոր, առանձնապես հյուրասեր են։

Գյուղացիների համար երկար բացատրություններ տալ չի հարկավոր, մի անգամ ասա՝ դոնաղն ամստուն ա՝ պրծավ։ Քաղաքացիք ես ոչինչ բանով պակաս չեն գյուղացիներից։ Վերցնենք օրինակի համար Երևանը։

Այս քաղաքն արդարև մի վաճառաշահ տեղ չէ, մեծ առևտրական կապեր չունի ընդհանուրի նշանակությամբ, հարթված և հեշտացրած հաղորդակցություններից զուրկ է, սակայն ի հնուց եղել է Այրարատ նահանգի կենտրոնաքաղաքը, այստեղ էր նստում, մեզ հայտնի է, պարսից կուսակալը սարդար անվամբ, այս էր Թավրիզից ետը առաջին քաղաքը, այստեղ է այժմ այս երկրի նահանգապետի կացարանը, այստեղ են հավաքվել և հավաքվում երկու-երեք ավուր ճանապարհից բոլոր Երևանու շրջակա գավառի ժողովուրդը առևտրական գործով։ Ամեն օր պատահել և պատահում են խաժամուժ ամբոխի բազմություն՝ զանազան լեզվով և բարբառներով խոսողներ ու այլևայլ ազգություններին պատկանող ժողովուրդ։ Երևանի հրապարակներն ու ախոռները լիքն են լինում գյուղացվոց ձիանք ու գրաստներ։ Այս ամենն, ինչպես ասացինք, շրջակա գավառացիք են։

Համարձակ կարելի է՞ասել, որ եթե ոչ մեծ մասը, գոնե մի նշանավոր մասը այս եկավորների՝ գիշերը պատսպարվում են Երևանի քաղաքացվոց տներումը։

Հյուրանոցն, ասացի սկզբումը, որ այստեղ անծանոթ էր, այժմ էլ շատ սակավներին, կամ դիպվածով այս կողմերն ընկած եվրոպացի ճանապարհորդներին է պետք գալիս, իսկ հասարակ ժողովուրդը, իսկ գրսեցի վաճառական դասը երևանցվոց հյուրն է։

Շատ սակավ գիշեր կպատահի, որ երևանցի հայը կամ թուրքը մի երկու հյուր չունենա, երևանցու հացի եզրը օտարական չկտրի։

Ցորեկն երևանցին ինքն էլ յուր տանը մի կտոր հաց չի ուտում. նա ամբողջ օրը նստած է ծալապատիկ, կամ շոքած է յուր խանութի դռանը և յուր մանրավաճառությամբն է պարապած. մի փոքր փողոցի հաց և սակավ ինչ պանիր է նրա կերածը. իսկ երեկոյին՝ նա գիտե, որ յուր տանը հյուրեր ունի և նրա սեղանը լիքն է բարեհամ խորտիկներով։ Երևանցին ուրախ է, որ կարող է հյուրասիրել ամեն տես ու ճանաչին։

Մեր երկրումն անկողինը բացառապես մի անձի համար չէ, սովորաբար մի վերմակի ներքո քնում են տան անդամներից մի քանիսը, մեր

մահիճները բավականին լայն են և մեր վերմակներն ընդարձակ։ Գերդաստանի գլխավոր երկու ամոլները մեջ են առնում յուրյանց մանրիկ զավակներին և երկու պատնեշների նման մինն այս և մինն այն կողմից պահպանում ու փայփայելով քնացնում յուրյանց սիրելիներին։

Բայց մի քանի ձեռք ավելորդ և թանկագին անկողին միշտ դարսած է երևանցու ծալքումը «զոնաղի տեղաշորը» անունով և այդ անկողինը շատ սակավ գիշեր անգործադրելի կմնա. մի կամ մի քանի հյուր անսպատճառ պառկում են նրա տակին՝ շատ անգամ միմյանց բոլորովին անծանոթ։

Վնաս չունի, այդ հարկի տակ մտնողներն ամենքն էլ աստծու հյուրերն են և միմյանց եղբայր, եկել են Երևան առևտրի. ո՞ւր պետք է իջևանեին, իհարկե յուրյանց ծանոթի տանը։ Դեռ ես կարող եմ ասել, որ սոցա մեջ լինում են այնպիսիները, որոնց հետ բարի տանուտերն առաջին անգամն յուր սեղանի վերա է ծանոթանում. մեկն ու մեկը այդ հյուրերից իրանց հետ բերել են մի ուրիշին։ Այդ պարոնն էլ այսուհետև այս տան հյուրը դարձավ։

Շատ լավ էլ գիտի երևանցին, որ անշուշտ յուր տանն այս երեկո հյուրեր կլինեն, բայց էլի ինքը որոնում է շուկայումն այնպիսի եկավորներ, որոնք ծանոթ չունին և հրավիրում է բաժանելու յուր հետ մի գավաթ ջուրն յուր հարկի տակին։

Այսպիսի հյուրասիրական հատկության լոկ պատմությամբը միայն ուրիշ երկրներում պատահել է ինձ զարմացնելու բոլորին։ Ոչ միայն եվրոպացիք, որոնց մեջ մի կտոր անփող հացն անհերևակայելի է, նույն իսկ մեր տարաբնակ եղբարց, Հայաստանի հողից ուրիշ տեղ պատվաստված հայերի համար իմ պատմածներս կծու հայրենասիրական ցույցեր են համարվել, ոչինչ բանով ես չեմ կարողացել համոզել, թե հնարավոր է ամեն երեկո հյուր ունենալ։ Այդ բանն ինձ համար մեծ ցավ է եղել, հայաստանցին հեռանալով յուր բնիկ երկրից, այդ աստիճան փոխվել է յուր նախնյաց ազնիվ բնավորությունից։ Այո՛, համեմատաբար էլի՛ ամեն տեղ հյուրասիրական զգացմունքը հայերի մեջ առավել է, բայց Հայաստանի հետ բաղդատելով ուրիշ տեղերը, իմ տեսած քաղաքների հայերը իմ աչքումս խորթ եղբայրներ են երևում։

Այս ասելով ես չեմ ուզում մեծամեծ ներբողներ խոսիլ հայաստանցու ազնիվ բնավորությանց վերա. ընդհակառակն, ուրիշ բաներում շատ ետ է հայաստանցին օտար տեղերից, գլխավորապես հայը ետ՞է մնացած։

Երևանի ժողովուրդը հասարակական գործերի և ազգային լուսավորության հարցի մեջ մեռած է։ Ահա այն մեծ պակասությունը, որ սև կնիքի նման դրոշմած է Երևանու նահանգի հայերի ճակատին. և մի՞թե այս արատիքը բավական չէ կլանել մեր ամեն ազնիվ հատկությունքը։

Վերջապես տեղը և ժամանակը մեզ չեն ներում երևանցու զանազան բնավորությանց վերա երկարորեն ճառել. հյուրասիրությունն էր, որ մեր Սմբատին էլ անզգայաբար քաշեց դեպի Շհար կոչված Երևանու թաղերից մեկի մի հայի տուն։

Գիշերեց Սմբատը, առավոտ տանուտերի հետ մի նախաճաշիկ անելուց հետո վերադարձավ դեպի փողոց, ուր մոտ էր քննչի խորհրդարանը, և քայլերը դեպի այն կողմն ուղղեց։

ԽԴ

ՔՆՆԻՉԸ ԲԱՆՏԻ ԽՈՐՔԵՐՈՒՄԸ

Քննչի դուռը այսօր բոլորովին դատարկ գտավ Սմբատը. մի հայ միայն թափառում էր այնտեղ, որին մոտեցավ նա և հարցրեց վախվխելով.

— Ըստեղ չի՞ նոր քննիչը։

— Հրե՛, հա՛,— մատը բարձրացրեց մարդը,— էսօր չես կարող տեսնիլ, բերդը գնաց բանտարկվածներին տեսնելու։

Սմբատը վազեց դեպի բերդի կողմն, ուր մեծ բազմություն էր գնում։

Ամբոխը մոտ էր բերդի դռան և Սմբատն շտապեց հասնել։ Շատ վազելով շնչարգել էր եղել և ոտքերի զորությունը կտրվել. ճարը կտրած գոռաց.

— է՛յ, աղա քննիչ, ա՛յ գլխիդ մատաղ, այ քո ջանին մեռնիմ, մի ոտն ի՛լ, կանգնի՛, խնդիր ունիմ։

Սմբատի ձայնն ուշադրության չառնվեցավ։ Ժողովրդի կեսը բերդի դուռն անցել էր ներս, երբ նա հասվեհաս էր։ Ուժահատ հանդարտեցրեց նա յուր ձայնն ու քայլերը և աչքով միայն հետևում էր բազմությանը. խեղճը հալից ընկել էր։

Բոլորը ներս անցան, բերդի դռանը մնացին պահապանները։

Սմբատի աչքերից ժողովուրդը ծածկվեցավ բերդի խոտոր պատերի տակին և ինքը մեն-միայնակ հասավ պահապանների մոտ։ Երևի թե արգելված չէր բերդը մտնելը, Սմբատը կարողացավ անց կենալ. բայց մինչ դառնում էր նա դեպի արևելյան կողմի շինության մյուս երեսը, հանկարծ ականջին յուր անունը դիպավ։

Շփոթված կանգնեց նա ու ետ նայեց, ոչ ոք չկար. իսկ ձայնը գալիս էր հանդիպից, ուր ինքը ծռվելու էր։

Կանգնեց Սմբատն և հետագա խոսակցությունը լսեց.

— Շատ շնորհակալ եմ, որ երեկ տուն չթողիր, առ էս մի քանի կաս.եկը քեզ բաղնիքի մսխելիք, իսկ հիմի աչքերդ չորս բաց արա՛, նա դեպի բերդն է գալի, ես նրան տեսա այս կողմը վազելուս. չըլնի թե կարողանա քննչի երեսը տեսնել։

— Միամիտ կա՛ց, նա իր կյանքումը մեր աղի երեսին արժանի չի լինիլ,— ասաց երկրորդն, և երկուքը միասին առաջ եկան։

— Էլ չես կարող գլուխդ ինձանից պահել, սատանա Սաքո,— հարձակվեց Սմբատը յուր դիմացն եկող նախկին միկիտանի վերա,— ես երեկվանից քեզ ճանաչեցի, որ էս թուրքին սորվացրիր՝ ինձ տուն չթողաց. հիմի ի՞նչ պտի անես։

Սաքոն մի բոպե իրեն կորցրեց, բայց կրկին ոգևորվելով թուրքին ասաց.

— Ես գնացի, դու քո խոսքդ կատարի՛։

Ետ փախավ Սաքոն դեպի ամբոխն և բազմության մեջ խառնվեցավ։

— Ո՞ւր ես գնում, անպիտա՛ն,— ճչաց պոլիցիական թուրքը Սմբատի վերա,— քեզ ասում են, որ այսօր անկարելի է քննչին ներկայանալ։

— Պետք է տեսնի՛մ,— հակառակեց Սմբատն և ուզում էր փախս տալ թուրքից։

— Կարո՛ւ,— ձայն տվեց պոլիցիականն, և դռնապահ զինվորները առաջին բուսան։

Մի երկու աղճատյալ ռուսերեն բառերը պոլիցիականի բերանից իջեցրին խեղճ Սմբատի ուսերքին հրացանի կոթի հարվածները։ Դրանց հետևից ոստիկանի մտրակը, որոց զորությամբ և զինվորների ուժեղ բռան շնորհիվ Սմբատը կրկին դուրս մղվեցավ բերդից, իսկ թուրքի մըտրակը հալածեց նրան մինչև սուրբ Սարգիս եկեղեցու մոտերքը։

— Էսօր էլ չելավ,— հուսահատ ա՛խ քաշեց Սմբատը,— բայց կմեռնեմ ու կտեսնիմ, հալբաթ քննիչն էսօր կխոսացնի Խեչանին. իրանից մի բան կիմանա։

Սմբատի ենթադրությունները սխալ դուրս եկան. քննիչը մտավ բերդը, այցելեց բոլոր բանտարկյալներին, պահանջեց կալանավորների ցուցակը, ստուգեց թիվը, բայց ոչ Խեչանին տեսավ, ոչ նրա անունը հանցավորների կարգումը կարդաց։

Մեզ հայտնի է, որ Խեչանն ուղարկված էր մովրովից առանց գործերի, իսկ Սաքոն նախապես տեղեկանալով քննչի այդ օրվան բանտը գալու մասին, տեղափոխել էր տվել Խեչանին ավելի ապահով և մաքուր սենյակ. բանտապետի ննջարանն այժմ Խեչանի բանտն էր դարձել։ Սա-

կայն քննիչը ոչ իրավունք և ոչ տեղիք ուներ մտնել այդ ննջարանը։ Այցելեց բոլոր բռնվածներին, շատերից մանրամասն տեղեկություններ հարցրեց, մի քանիսին գտավ արդար և նույն բոպեին արձակեց. ոմանց գործերը պահանջեց և այլոց վերա խոժոռ դեմք դարձրեց։

Բազմությունը, որ հետևում էր քննչին և ամեն տեղ իրավունք էր ստացել նրա հետ ներս մտնելու, զարմանում էր քննչի սրամտության վերա, թե ինչպես է կարողանում արդարը մեղավորից զանազանել։

Սաքոն տեսնում էր քննչի խելոքությունը և յուրն ավելի գովում։

— Վա՛յ կգար մեր մովրովի գլխին, թե որ Խեչանն էլ էստեղ ըլներ,— մտածում էր նա,— բայց աֆարի՛մ Սաքո, դու քննչի վրա խելոք ես, դա իր մահվան օրը կիմանա ու Խեչանի երեսը չի տեսնիլ։

Միամիտ Խեչանը Սաքոյի թակարդի մեջ այնպես էր անզգալաբար կաշկանդվել, որ երբեք չէր մտաբերում, թե նույն բոպեին, երբ ինքն ուրախ նստած է բանտապետի ննջարանումը, պատի մյուս երեսին ի՞նչ հրաշքներ են գործվում։ Շատ ցանկալի կլիներ, իհարկե, Խեչանին, որ ինքն էլ նույն ժամին գտնված լիներ յուր մարդասպան ընկերների հետ, հայտներ յուր ցավերը արդարադատ քննչին, քան թե հանգիստ նստած յուր ընտանյաց վերա է մտածում և Սաքոյի ու մովրովի համար կյանք ու արև խնդրում։

Երկար ժամանակ քննիչը բերդից դուրս չեկավ, ամեն մի անկյունը նա մի քանի անգամ մտավ ու ելավ, ամենատեսակ տեղեկություններն ու բողոքները գրի առավ և սիրտը ցաված գործված անիրավությունների վերա՝ դարձավ յուր բնակարանը։

Ով չուշտ[1] նա կուշտ, մինչև բերդի դուռը աչքով ճանապարհ դրեց Սաքոն քննչին և ուրախ-ուրախ ետ եկավ, մտավ Խեչանի մոտ։

Այդ օրը Սաքոն մինչև մութը գետինն առնելը ծերունու մոտից չհեռացավ։

Սաքոյի գնալուց հետո Խեչանին կրկին փոխադրեցին յուր միայնարանը։

ԽԵ

ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ

— Ա՛յ, աղա Խեչա՛ն, եկավ քո ցանկացած չինովնիկը, զաբալեն[2] գրիլ եմ տվել, պատրաստել, մնացել ա քո ձեռք քաշելը. սա կտեսնի իր

1 Շուտ։ 2 Կալվածագիր։

աչքովն ու կհաստատի,— տուն մտնելով մյուս օրը Խեչանի մոտ՝ Սաքոն բերեց մի գրագիր յուր հետ։

— Հետո խոստմունքը պտի կատարվի՞,— հարցրեց Խեչանը։

— Երկու սհաթ չի քաշիլ. ամեն բան վերջացած ա, միայն էս թղթի համար ա բանդ էլած։

Սաքոն ծոցիցը հանեց մի դրոշմավոր գրած թերթ և դրեց Խեչանի առաջը։

Թե ի՞նչ թուղթ էր այդ, ի՞նչ չինովնիկ էր՝ մենք մեզ թույլ ենք տալիս ետ դառնալ երեկվան օրը։

Ասացինք, որ Սաքոն մինչև բերդի դուռն աչքով հետևեց քննչին և երբ միամտվեցավ, որ նա էլ դառնալու չէ, ինքն ուրախ-ուրախ մտավ Խեչանի մոտ և մինչև գետինը մութը բռնելը՝ այնտեղից դուրս չեկավ։

Ահա՛ թե ի՞նչ էր անում Սաքոն ծերունու մոտ։

Ով չուշտ՝ նա կուշտ. էս էր Սաքոյի վճիռը. նա մտածում էր՝— տո՛, ընչանք ե՞րբ համբերեմ, իմ դովրանն[1] անց կացավ, իմ բարեկամ մովրովն էլ ոտի կանողը չի, նրա ժամերը դուս եկան, թե էս մի բանն էլ ձեռից թողամ, ըստուց հետո մի ասեղ չի ընկնիլ ձեռս, որ մատիցս փուշ հանեմ։

Այս մտքով նա մտավ Խեչանի մոտ և յուր պերճախոսությունը գործ դրեց։

— Աչքդ լի՛ս, աղա Խեչա՛ն,— ժպտալով տուն ընկավ Սաքոն,— համա ավելի լավն էն ա, ասենք՝ մեր աչքը լի՛ս։

— Ի՞նչ կա։

— Էն կա, որ էգուց քո նեղություններին վերջ կլինի, էսօր բանտումը մնալուդ վերջին օրն ա. ամեն բան պրծավ, մովրովն եկավ նաչալնիկի մոտ, երկար խոսաց ու էգուց պտի գա իր ձեռքովը քեզ ազատի։

— Սաքո ջա՛ն, բերան չի՝ տաճար ա՞, դու ինձ համար ավետաբեր հրեշտակ ես դառնում, ես քո լավությունի տակիցը ո՞նց պտի դուս գամ։

— Իմ վարձքս հենց էն ա, որ դու ազատվում ես. ես մի անգամ քեզ ասել եմ, որ կմեռնեի, որ քեզ ըստեղ թողայի։

— Շատ շնորհակալ եմ։

— Բայց, Խեչան աղա՛, բարկանաս ոչ, մի բան եմ արել, ես գիտեմ, որ ինձ հարկավոր չէր առանց քեզ հարցնելու ինձուգլուխ ուրիշի ապրանքի վրա իրավունք բանացնելը, համա էլ ժամանակ չկար։

— Ամեն բան քեզ մատա՛ղ, Սաքո ջա՛ն, թեկուզ սաղ մլքերս էլ վեր կալած սրան-նրան բաշխած ըլիս՝ դու ողջ ըլիս, ինձ դաբուլ[2] ա։

1 Բարեբախտ ժամանակը։ 2 Ձանձրի։

— Չէ՛, ախար ինձ հարկավոր չէր ինձուգլուխ բան անիլը։

— Ի՞նչ ես արել։

— Իմ հիքու մոտի քո ունեցած հիքին ծախել եմ։

— Ո՞ւմ ես տվել։

— Ես ինքս ինձ վրա եմ ծախել, ծախողն էլ ես եմ, առնողն էլ. զարմանալ մի՛, Խեչա՛ն աղա, առաջ լսի՛, հետո ինձ քարկոծ արա՛։ Դու գիտես, որ ժամանակիս ախպերն էլ առանց կաշառքի բան չի շինում. քո հիքին ես կաշառք տվի։

— Սաքո ջա՛ն, չեմ հասկանում՝ ի՞նչ ես ասում։

— Հենց հիմի կհասկանաս։ Էս տարի մի օր մովրովն ինձ ասեց, որ ուզում ա Աշտարակ ինձ մեր հիքումը ղոնաղ[1] գալ։ Ուրախությունով ընդունեցի ու մի լավ քեֆ շանց տվի, սաղ Աշտարակը, մհալի առաջավոր իշխանները կանչված էին։ Դեռ հացը չքաշած, տեսա, որ մովրովը տանուտերին քցել ա առաջն ու ողջ հասարը[2] մեր երկուսի բաժինն էլ ման ա գալիս։— Ի՞նչ լավ բաղ ունիս, Սաքո՛,— ետ դառնալուս ասեց մովրովը,— շատ հավանեցի։

— Քեզ փեշքյաշ[3] ա,— ասեցի,— գլխիդ մեռնիմ։— Շատ շնորհակալ եմ,— ասեց,— քո ընծեն սիրով ընդունում եմ, բայց ինձ ասա՛, բոլոր հասարը քոնն ա՞, թե ուրիշի էլ կա։— Չէ՛, աղա,— ասեցի,— կեսն էն նաչար[4] Խեչանինն ա, որ հիմի բերդումն ա։— Հա՞,— ծիծաղեց մովրովը,— ի՞նչ ես կարծում, Սաքո՛,— հարցրեց նա,— Խեչանն էլ իր բաժինը չի՞ ընծայիլ ինձ, եթե ես նրան Սիբիրից ազատելու լինիմ։— Ընչի՞ չէ,— ասեցի,— գլխիդ մեռնի՛մ, դու էդ լավությունն արա՛, իմ աչքի վրա քո ղուլլուղը։

— Էդ խոսքն էդպես մնաց, հացը կերան, քեֆը քաշեցին ու վերկացանք իրար հետ գնացինք Զեյվա։ Ի՞նչ ես ասում, աղա Խեչա՛ն, դու մի՛ ասիլ, էդ մարդը դրուստ մտքումը դրել ա մեր երկսի հիքին էլ զավթի[5], յախիցս[6] կպավ, ձեթ դառավ, պոկ չեկավ. թե քո բաժինն էլ, Խեչանի բաժինն էլ ինձ համար ձեռք բե՛ր։— Ի՞նչ անեմ, ո՞նց անեմ, ջանս ցավում ա, ես ո՞նց վերցնեմ աչքիս լսի պես պահած բեջարած[7] հիքին տամ մովրովին։ Կմկմում եմ ու սուս կենում։ Մի քանի օր ըսենց անց կացավ։ Մի առավոտ յասավուլն եկավ ինձ կանչեց։ Տուն մտա թե չէ, ոնց որ մի քար վերցնես, մարդի գլխի քցես, էնպես մովրովի խոսքերն ինձ կիսաջան արին։

— Տե՛ս,— ոչ տարավ, ոչ բերեց մովրովը,— ինչքա՞ն անպիտանն

1 Հյուր։ 2 Պարիսպը։ 3 Ընծա։ 4 Անեծար։ 5 Տիրապետել։ 6 Օձիք։ 7 Մշակված։

ես, թե դու իմ խաթրս չէիր կոտրել, քո բաղն ու քո հարևանի բաղն ինձ էիր ծախել, խեղճ ծերունին հիմի Սիբիրից պրծած կըլներ։

— Ի՞նչ ծերունի, ի՞նչ Սիբիր,— դողալով հարցրի ես։

— Է՛ն, ասեց,— որ խեչանի գործը վճռվել ա, երեք օրից Սիբիր կտանին, դու որ էն բաղն ինձ զմիշ շարիր[1] տալը, ես էլ գրեցի նաչալնիկին, գործն ինքն իր ձեռովը քրքրեց խեչանին սիբիրական արեց։

— Ամա՜ն, աղա ջա՛ն, ոտիդ տակին մեռնի՞մ,— գոռացի ու ծընկները փաթաթվեցի,— էդ վճիռը փոխիլ տո՛ւր, մնի տեղակ հինգ հիքի քեզ մատաղ։

— Ինձ մինն ա պետք,— ասեց մովրովը,— թե որ դու էլ ու խեչանն էլ էն բաղն ինձ վրա կծախեք, խեչանը կպրծնի, թե չէ՝ թող գնա կորչի՛։

— Գլուխդ ի՞նչ ցավացնեմ, խեչան աղա՛,— շարունակեց Սաքոն,— էն քարասիրտն ինձանից մի ձեռագիր առավ, որ սաքի, թե ողջ երկուսիս բաժինն էլ իմն ա, ու ես իր վրա ծախեցի, զաբալեն էլ սրանից երկու տարի ետվան թվականով գրիլ տվեց։

— Էդ ծուռը-մուռը ճամփեքն ընչի՞ էր բռնում,— հարցրեց խեչանը։

— Ընդուր որ իզը[2] կորչի, թե կաշառք ա վերցնում, սաքի թե երկու տարի առաջ, որ ասել ա՝ հիմի, ես քեզանից առել եմ քո բաժին հիքին ու երկու տարի ետն իրան ծախել։ Հիմի կուզես բարկացի՛, կուզես նեղացի՛, խեչան աղա՛, ես մեր երկսի բաժինն էլ միացրել եմ ու առանց քեզ հարցնելու մովրովի անումովը զաբալա տվել. թե որ ինձ զաբալա կտաս, որ դու էլ ինձ ես ծախել՝ շատ լավ, թե չէ նրա տեղակ իմ մեկել բաղերն էլ քեզ կտամ, թող իմ բաժինը կորչի, թաք ըլի[3] դու ազատվիս։

— Էդ ի՞նչ խոսք ա, Սաքո ջան,— դարձավ խեչանը դեպի նախկին միկիտանը,— դու ինձ համար որ էդ բանն արիր, հենց գիտես, թե ես կթողա՞մ, որ քո արքատն[4] ինձ վրա կորչի. գնա՛, մի զաբալա գրիլ տո՛ւր, բե՛ր ես ձեռք քաշեմ, տար մովրովին. երբ որ ըստեղից դուս կգամ, տես թե քո բաժին հիքու տեղակ ինձանից ի՞նչ ես ստանում։

Ահա այդ կալվածագիրը, կամ զաբալեն էր, որ մյուս օրը Սաքոն մի վարձկան գրագրի հետ տուն բերեց ու խեչանի առաջը դրեց։

— Աղա՛,— խոսեցավ խեչանը գրագրի հետ,— ես իմ խելքիս թամամ[5] ժամանակը իմ հոժար կամքովս Աշտարակումն ունեցած իմ Լրի առվի տակի հիքին ծախեցի Սաքոյին ու էս գլխիցն էլ փողերն ստացա, թե որ օրենքի առաջին պատասխան տալու բան կա, խնդրում եմ դու վկա ըլնիս։

1 Խնայեցիր։ 2 Հետը։ 3 Միայն թե։ 4 Խազդի վազի մասը։ 5 Կատարյալ։

— Սաքոյի խոսքովը ձեր զաբալեն ես գրեցի,— պատասխանեց գրագիրը,— բայց մինչև քո հրևսդ չտեսնեի, ես իրավունք չունեի սրան տալը, հիմի քեզ մնում է գրիչն առնել և ստորագրել։

Խեչանը դողդողալով կալվածագիրը ծնկան վրա դրեց։

Սաքոն հանեց գրիչը, թաթախեց պղնձյա երկայնակոթ թանաքամանի մեջ և տվեց խեչանի ձեռքը։

Գրչի ծայրը դեռ թղթին չէր առել, դեռ նոր խեչանն ուզում էր գտնել ստորագրելու տեղը, որ բանտի դուռը ետ բացվեցավ և տուն ընկավ Սմբատն երկու պոլիցիական աստիճանավորների հետ։

— Ափու ջա՛ն, դու ազա՜տ ես,— գոռաց Սմբատն ու վազելով մոտեցավ խեչանին։

Ծերունու ձեռքերն ես ավելի դողացին, գրիչը ձեռքիցը վայր ընկավ։

— Սմբատ ջա՛ն, քե՞զ եմ տեսնում,— ասաց ծերունին ու իրեն չիմացավ. նա Սմբատի գրկումը սեղմված էր։

Չեմ կարծում, որ Սմբատը նկատած լիներ տուն մտնելուս Սաքոյին ու գրագրին. նա ինքն էլ այն ժամանակ միայն ուշքի եկավ, երբ յուր հետի եկող պոլիցիականները խլեցին նրա գրկից խեչանին։

Փեսա և աներ աչքները բաց արին և իրանց մոտ գտան միայն երկու աստիճանավորներին և բանտապետին. վերջինս սիրթնած՝ կանգնած էր դռան մոտ և երկյուղից դողում էր։

— Բայց ի՞նչ եղավ Սաքոն յուր գրագրի հետ,— հարցնում ես ինձ, ընթերցո՛ղ։

— Լսի՛ր. Սմբատի տուն ընկնելուն պես Սաքոն խլեց խեչանի ձեռքից կալվածագիրը, վերցրեց գրիչն ու յուր հետի գրագրին աչքով անելով՝ դուրս ընկավ սենեկից։ Այնքան արագ կատարվեցավ այս գործողությունը, որ պոլիցիական աստիճանավորները մի-մի ստվեր միայն նկատեցին ու չի էլ հետաքրքրվեցան նոցա մասին։

— Դու ազա՜ տ ես, ափու ջա՛ն,— կրկնեց Սմբատը խեչանին,— ասված հաթը նհաթին չտվեց, մի նոր քննիչ ա եկել, նա քեզ ազատեց։

— Էս ազատությունն ինձ համար ավելի էն պատճառով ա թանկ ու սիրելի, որ քո բերանիցդ լսեցի, Սմբատ ջա՛ն,— ասաց խեչանը,— ի՞նչ էլավ Սաքոն, հիմի թող զաբալեն տա՝ ձեռք քաշեմ, հիմի հեշտ ա, էլ ձեռս չի գողդողալ։

— Ի՞նչ Սաքո, ի՞նչ զաբալա, ափու ջա՛ն,— սարսափեց Սմբատը։

— Մեր միկիտան Սաքոն, ի՞նչ էլավ, ո՞ւր գնաց, հենց հիմի էստեղ էր, Լրի առվի տակի հիքին իրան ծախեցի մովրովի համար, զաբալեն բերել էր, որ ձեռք քաշեմ։

— Ամենքն էլ իրանց պատիժը կստանան, ափու ջա՛ն,— հուսադրեց

Սմբատը, կարծելով, թե խեչանը ցնորքների մեջ է.— էսօր Սաքոն էլ մովրովի օրը կընկնի, քո թշնամիքդ գլխի վրա շուռ անցան։

Ծերունին ու Սմբատը միմյանց չհասկացան ու շատ էլ չհետևեցին։ Խեչանը լույս աշխարհ տեսավ. նա այս երեկո Աշտարակումն է։

ԽԶ

ԿՐԿԻՆ ՅԱՍԱՎՈՒԼ ՄԱՐԳԱՐԸ

Մի շաբաթ յասավուլ Մարգարը քուն չուներ, հանգստությունը նրանից փախել էր, ոչ ցերեկվան պաշտոնատարության ժամանակն և ոչ գիշերը պառկած տեղը չէր կարողանում մոռանալ Խեչանին ու Սաքոյին, առաջինի բերդն ուղարկվելը, նրա տան գլխին եկած նեղությունները, աղջկա մահամերձ դրությունը և սրա հետ միասին Սաքոյի միկիտանությունը թողելը, յուր գինեվաճառության հետքն այնպես ճարպիկ կերպով կորցնելը Մարգարի մտածության առարկան էին դարձել. ո՛ր կողմը դարձնում էր գործը, ինքը Սաքոյի գործիք լինելն էր հաստատվում և այն բոլոր թշվառության պատճառն իրան էր համարում։

Սկզբումն, ինչպես մեզ հայտնի է, Մարգարն պատուծո դատաստանին թողեց Սաքոյի անիրավությունը Խեչանի տան դեմ և դրանով կամեցավ բավականանալ, բայց՝ վերջումն այդ բանն էլ չօգնեց իրեն. յուր խիղճը դրանով չհանգստացավ, մանավանդ թե ավելի խոր խոցեցավ, երբ մի անգամ էլ գնաց Աշտարակ և տանուտերիցը տեղեկացավ, որ Խեչանի աղջիկը շատ չի ապրիլ։ Այն բոպեից նրա աչքերը կայծակի տվին, վրեժխնդրության ախտը նրա սրտումը բուն դրեց, և նա վճռեց մինչև վերջին շունչը Սաքոյից յուր վրեժն առնել։

— Ըսենց բան չի դառնալ,— մտածեց Մարգարը,— օրեցօր քցելով՝ իմ խղճմտանքս ծանրանում ա, սատանա Սաքոն իր օգտի համար իմ ձեռովը մի մհալի միջին գովված ընտանիքի կորչելու պատճառը դառավ, էլ անիրավություն չմնաց՝ արեց ու ամենքն էլ փորձանքի մեջ քցեց, ինքը վեր կացավ կորավ. ես նրա մեկել չարությունների համար չեմ նեղանում, աստվածանից իր պատիժն առնի, բայց ընչի՞ համար պտի Խեչանի տունն իմ ձեռովը քանդեր. թող աստված ընչանք էն օրն իմ ջանը սաղ պահի, որ միկիտանին գտնեմ, ինադս առնեմ ու հետո թեկուզ մեռնիմ էլ, դարդ չունիմ։ Չե՛ս կարող փախչիլ ձեռիցս, միկիտան Սաքո՛, որտեղ ըլիս՝ կգտնեմ, գետնի տակիցը կհանեմ ու քեզ հետ իմ հաշիվս կվերջացնեմ։ Ոչի՛նչ, ես սովոր եմ մարդի տուն քանդել, ես հին յասավ-

վուլ եմ, խղճմտանքս մեռել ա, քեզ էլ չեմ խնայիլ. դեռ կաշխատեմ օրենքի ձեռովը քեզ աշխարհքի միջին խայտառակել, թե որ էնտեղից էլ դուրս պրծար, իմ գյուղի առաջիցը հո՛ չես կարող փախչիլ, ընչանք աշխարհքի էն գլուխն էլ որ գնացած ըլիս, քամակիցդ կգամ ու մի օր ինձ քո աչքին կերևացնեմ։

Այս էր նրա Զեյվից հեռանալու գիշերվան վերջին հրաժարականը. նա կամաց վեր կացավ տեղիցը, դուրս քաշեց յուր ձին ու աննպատակ ուղղեց դեպի Աշտարակ։

Շատ ժամանակ չէր, որ Մարգարն այն տեղից դուրս էր եկել. նա հաստատ գիտեր, որ Սաքոն այնտեղ չէ, բայց էլի գնաց, գյուղի այս գլխից մտավ, մյուս կողմից դուրս եկավ և ուղղակի ձին քշեց դեպի Երևան։

Երեք օր էր՝ թափառում էր յասավուլը փողոցե-փողոց, ամեն տեղ Սաքոյիցն էր հարցնում և բոլորից էլ Երևանումը լինելու պատասխանն էր ստանում, բայց թե ո՞ւր էր իջևանած, ի՞նչ տեղ է գտնվում՝ այդ ոչ ոք չգիտեր։

Էլ գում ու ախոռ չթողեց՝ հարցրեց Մարգարը, Սաքոյի ձիու հետքն էլ չերևաց. սիրտը կոտրած՝ հուսահատ ուզեցավ վերադառնալ և էլի գավառներումը որոնել նրան։ Հենց այդ տեղն էր, որ բախտն իրան քաղցր աչքով նայեց և Սաքոյին երևեցրեց։

Այս այն ժամանակն էր, որ բազմությունը մուտ և ել էին անում քննչի մոտ, և Սմբատը թուրք պոլիցիականիցը հալածվեցավ։

Սաքոն, իհարկե, չտեսավ Մարգարին բազմության մեջ, ապա թե ոչ, այնպես անխոհեմ գործ չէր բռնիլ ու Մարգարի ներկայությամբը թուրքին չէր սովորեցնիլ, որ Սմբատին ներս չթողնի։

— Էս լավ էլավ, կաղը կարմնջումն եմ բռնել,— մտածեց Մարգարն ու այդ բոպեից Սաքոյի հետքը չթողեց.— դեռ թող մի երկու օր էլ մնա՝ տեսնենք սրա միտքն ի՞նչ ա։

Այս խոսքերով նա քայլ առ քայլ հետևեց Սաքոյին։ Նա տեսնում էր, թե ինչպե՞ս բերդն էր մտնում ու ելնում, նա մինչև անգամ տեղեկացավ Սաքոյի և բանտապետի բարեկամության համար, բանտապետի սպասավորի ձեռքով նրանց խոսեցածներն իմացավ, և ինքն էլ յուր ծրագիրն էր կազմում։

Երբ որ Մարգարը հաստատ իմացավ, թե Սաքոն մի քանի օր դեռ Երևանումը մնալու է, ինքն յուր անելիքը մտածեց։ Ամեն բանից ավելի լավ համարեց նա այս նոր քննչի ձեռքով Սաքոյի անիրավությունները բաց անել։ Այդ համոզմունքով նա հաջողեցրեց քննչի ծառաների հետ բարեկամություն հաստատել։

— Ես քննչի դիվանխանումը չեմ ուզում երթալ, դիմացիս թշնամին շատ հեռու ա տեսնում, թե որ բան գլխի ընկնի, գլուխը կառնի կկորչի, լավն էն ա՝ մի իրիկուն իր տանը տեսնեմ ու ամեն բան տեղնուտեղն իրան հայտնեմ։

Ահա այս վճռի վերա հաստատված՝ նա աննպատակ թափառում էր Երևանի հրապարակներումը, երբ աչքովն ընկավ քննիչը ամբոխի առաջն ընկած՝ դեպի բերդը գնալուս։

Մարգարն ամբոխի հետ ներս մտավ բերդն և քննչի քամակից գնում էր։ Նա հանկարծ կանգ առավ. նրա աչքովն ընկավ Սաքոն, որ շփոթվածի նման քայլերը փոխելով ժողովրդի հետ, մի աչքը դեպի ետ էր։

Մարգարը լսեց Սաքոյի և պոլիցիականի խոսքերն և տեսավ Սմբատին գուրս անելը։

Էլ չհետևեց յասավուլը քննչին, Սաքոյի հեռանալուց հետո ինքն էլ դուրս գնաց Սմբատի քամակից և նրան հանդիպեց ճիշտ այն ժամանակ, երբ խեղճը հալածված պոլիցիականի մտրակից, հուսահատ կանգնած էր սուրբ Սարգիս եկեղեցու կողմերն և չէր իմանում՝ ո՛ւր դնա, կամ ի՞նչ ճանապարհ բռնի։

Մուքը գետինն առել էր այսօր, որ քննիչը տուն եկավ։ Նա յուր տունը մարդ չէր ընդունում և կարիք էլ չկար, ամեն ոք կարող էր ազատ մտնել նրա իրավարանն և յուր ցավերը հայտնել։

Ծառայի մի-երկու խոսքը բավական եղավ քակտել տալ քննչին յուր դրած կարգը. նա իսկույն հասկացավ, որ յուր ձեռքի տակն էլ շարագործություններ են կատարվում, որ ամեն խնդրատու ներս չեն առնվում, որ ինքն յուր այդքան ճշտության մեջն էլ դեռ շատ պակասություն ունի և յուր կամաց հակառակ՝ չի կարողանում ժողովրդի պահանջը կատարել։

Իսկույն նա ընդունեց յասավուլ Մարգարին և Սմբատին։

— Աղա ջա՛ն, գլխիդ մատա՛ղ,— երկուքն ի միասին քննչի ոտքերն ընկան։

— Ի՞նչ ունիք, պատմեցե՛ք,— բարձրացրեց նրանց քննիչը,— մեկա՛ միտ եղե՛ք, որ ձեր խնդիրն առանց ուշադրության չի մնալ։

Մարգարը մի առ մի պատմեց յուր խաբված օրից, ինչ որ անցել էր, կցելով դրա հետ և Սաքոյի ու մովրովի բոլոր արածները, իսկ Սմբատը շարունակեց խեչանի տան ներկա գրությունը պատմել։

Քննչի անձը քստմնեցավ, նա սլսալվեց. նա յուր արած քննությանց մեջ շատ գործեր էր բաց արել, բայց այսպիսի եղեռնագործություն առաջին անգամն էր լսում։ Նա երբեք չկասկածեց ճշտությանց մասին։

— Ո՞ւր է այժմ այդ ձեր ասած զարմանալի հանճարի տեր միկիտանը,— հարցրեց քննիչը։

— Հիմի Երևանում ա, գլխիդ մատա՛ղ,— ասացին երկուսն էլ,— բայց նրա կացարանը ոչով չի իմանում։

— Գետնի տակից կհանեմ,— շեշտեց քննիչը վերջին բառը։

— Էդուց ինքը լիսնակի պես ոտներդ կընկնի, աղա ջա՛ն,— ասաց Մարգարը,— նա քո դիվանխանի դռներից չի հեռանում, նա ուզում ա իմանալ, թե ի՞նչ տեղ մնացին մովրովի գործերը. նա գիտի, որ Սմբատն աշխատում ա քո երեսը տեսնել, ինքն էլ դրա համար քանի ջանումը ջան կա, պտի չարչարվի, որ էդ բանը գլուխ չգա. էդ բանի համար նա յուր կարողությունի կեսը կտա։

— Այս ինչպե՞ս է, որ ես այսօր բանտումը չկարողացա տեսնել ձեր ասած խեչանին,— ատամները կրճտելով ասաց քննիչը,— մի՞թե իմ աչքից այդպիսի բանը կարեր փախչել. ես ամեն տեղ մտա եկա բանտի մեջ, բոլոր մատյանները քրքրեցի և այդպիսի մի անուն չտեսա։

— Բանտապետի սենյակն էլ մտա՞ր, գլխիդ մեռնի՛մ,— ասաց Սպասալով Մարգարը,— նրա քնելու օթախն էլ բաց արի՞ր։

Քննիչը զարմացական դեմք առավ։

— Ոչինչ բանի վրա մի՛ զարմանալ, աղա ջա՛ն. դու իմաստուն մարդ ես, շատ մարդիկ ես տեսել, բայց ես իմ գլուխս կտամ, թե որ միկիտան Սաքոյի պես մարդ տեսած ըլիս։

— Այս րոպեիս ես ինքս կերթամ բանտն և ամեն անկյունները ներից կխուզարկեմ,— ասաց քննիչն ու տեղիցը կանգնեց։

— Թե ինձ կլսես, աղա ջա՛ն, չես շտապիլ,— ասաց յասավուլը,— ծակ ու ծուկեր քրքրելու կարիք չկա. խեչանը հիմի էլ ետ իր օթախումն ա, քո գնալուց ետը բանտապետի ննջարանիցը հանեցին. եթե ինձ չես հավատում, էգուց առավոտ ինքդ գնա՛ ու տե՛ս։

Քննիչն անպայման լսեց Մարգարի խորհուրդը, հրամայեց երկուսին էլ գիշերել յուր տանը և մյուս օրն առավոտյան երկու պոլիցիական աստիճանավորների հետ ուղարկեց նրանց խեչանին ազատելու։

— Սաքոն հիմի ըստեղ կըլնի, գլխիդ մեռնի՛մ,— ասաց Մարգարը,— էս քշեր նա քնած չի ըլնիլ. ես լսեցի, որ նա ուզում ա խեչանի բաղը ճանդը քցել. դու Սմբատին ու էս երկու ազիքանցը հրամայի բանտը մտնին, ինձ հրաման տո՛ւր, որ դուանը Սաքոյի բուստնը պահեմ, որ աչքից չփախչնեմ։

— Իրավունք ունիս,— հրամայեց քննիչն և ճանապարհ դրեց նրանց, բայց ավելի զգուշության համար մի քանի դարանակալներ էլ նրանց քամակիցն ուղարկեց։

Մեզ հայտնի է, թե ինչպե՞ս նեռս մտավ Սմբատը Խեչանի մոտ, ինչպես Սաքոն հափշտակեց Խեչանի ձեռքից կալվածագիրն և դուրս ընկավ յուր ընկեր գրագրի հետ։

Ոչ դարանակալներն և ոչ Մարգարն իրավունք ուներ ձերբակալել Սաքոյին, նրանք միայն աչքով պահեցին։

Խե՜ղճ Մարգար, հոգին դուրս եկավ Երևանի շուկան պտտելով, հարյուրավոր ծանոթ ու անծանոթից հարցրեց, ոչ ոքից բավարար պատասխան չառավ. Սաքոն մի կաթիլ ջրի պես Երևանու մեջ աներևութացավ։ Դարանակալներն էլ յուրյանց պաշտոնը չկարողացան կատարել։

Շատ զղջաց քննիչն յուր անխոհեմության մասին, յուր մեծագործությունները յուր աչքին նվաստացան, ինքն իրեն հաղթված համարեց Սաքոյի մեծության և հանճարի առաջին։

Երեք օր ամբողջ պոլիցիան Երևանը տակնուվրա արեց քննչի հրամանովը. Սաքոն չկար, ու չկար։

Գավառակապետներն էլ հոգեհան եղան, միկիտան Սաքոն չերևաց։

— Ցավն այս է,— նեղանում էր քննիչը,— որ այս մարդն արդարև կա, ամենքը նրան ճանաչում են, և այժմ աներևութացավ։

— Աշխարհքի էն ծերն էլ գնացած ըլիս, միկիտան Սաքո՛, ես երկաթի տրեխներ պտի հագնեմ, երկաթե գավազան ձեռս առնեմ ու քո քամակիցդ գամ, քո իզը չես կարող կորցնել, իմ ձեռիցը չես պրծնել։

Էս վճիռը տվեց յուր մեջ յասավուլ Մարգարն ու գյուղե-գյուղ, քաղաքե-քաղաք, ձիու վրա նստած, ամիսներով պտտում էր Սաքոյին։

Խէ

ՀԱՐՍԱՆԻՔՆ ՈՒ ՄԱՀԵՆԻՔՆ ԱԽՊԵՐ ԵՆ

Շատ զարմացավ Խեչանը, երբ Աշտարակ մտավ, իրենց տանը մոտեցավ և յուր ընտանիքից ոչ ոք նրա առաջը չդուրս եկավ։ Նա տեսնում էր, որ ամեն մարդ գալիս, աչքալիս էին խոսում, ջահելներից շատերն էլ վազում են դեպի յուրյանց տունը ավետելու, կամ ժողովրդական խոսքով՝ անկաջբռնուկ տալու, բայց յուրյանցից առաջ եկող չկար։

Առանց այդ էլ Խեչանի վերա ուժ չէր մնացել, հիմա երբ կասկածն ավելացավ, երբ յուր ընտանիքը տեսնելու փափագի վերա յուր տանը մի դժբախտ արկածք պատահած լինելու երկյուղն էլ վրան եկավ, բոլորովին ձեռաց գնաց, փոքր մնաց դեռ յուրյանց դուռը չհասած՝ ձիու վրայից վայր էր ընկնում։

Բակի դռան շեմքի մյուս երեսին էր, որ Հերիքնազը ծերունու ձեռքը համբուրեց։

— Բաս ո՞ւր ա Հեղնարս,— դողդոջուն ձայնիվ հարցրեց Խեչանը։

— Տանն ա, մի քիչ քեֆ չունի,— շատ նվազ պատասխան եղավ։

— Ախպեր ջա՜ն,— սենեկի դռանը ծերի վզովը փաթաթվեց Մարիամը,— ախպեր ջա՜ն, քո քիրը մեռնի՜, էդ ի՞նչ օրն ես ընկել,—ճչաց նա և ուշագնաց եղավ։

— Այ քի՜ր, աչքերդ բաց արա՜, նվաղելու վախտ չի, էսօր մեր տանն ուրախություն պտի ըլնի, համա սիրտս ուրիշ բան ա ասում։ Հեղնարս չի երևում։

Շրջապատողներից ոմանք ետ քաշեցին Մարիամին։

— Հեղնա՜րս, ուր ա Հեղնա՜րս,— տուն մտնելով գոչում էր Խեչանը,— չըլի՞ թե աչքս դուս ա եկել։

— Էստեղ եմ, ափու ջա՜ն,— շատ թույլ ձայն եկավ վերին անկյունից։

Հիվանդն ինքնին կարողացավ նստել անկողնի մեջ։

— Վա՜յ գլխիս...— ահա այն միակ հնչյունը, որ լսելի եղավ թշվառ ծերունու բերանից։

Այստեղ իմ գրիչս կանգ է առնում. խոսքեր չեմ գտնում այս սրտաշարժ տեսարանը նկարագրելու. ամեն ոք թող ինքը մի քանի րոպե աչքի առաջ բերի այդ տխուր հանդեսը և կդա։

Հայր ու աղջիկ, երկուսն էլ հիվանդ, երկուսն էլ հալումաշ եղած, երկուսն էլ ուժահատ, խոսելու կարողությունից զրկված՝ գրկախառնված մնացել են. հորը Սմբատն է գրկել քամակի կողմից ու պահպանում, իսկ աղջկանը՝ Հերիքնազը. լռությունը տունը տիրել է, ներկա եղողների միայն աչքերի արտասուքն է երևում և հառաչանքների ձայնն է գալիս, ամենքն անշարժ են և տխուր վկա են այս հոգեմաշ տեսարանին։

Փոքր-ինչ հեռվումը երկու հոգի ևս բռնել են մի պառավ կնոջ, որի հեկեկանքը միայն չի լսվում և աչքերումն արտասուք չի տեսնվում։ Խեղճ Մարիա՜մ, նա թեպետ սթափվել էր եղբոր խոսքերից, բայց նախկին արձանացած դրությունն էր ստացել և, եթե չխնայեմ ասելը, խելքը կորցրել էր ու չէր իմանում արածը։ Նրա երեսի մկանունքը միայն շարժվում էին, երբեմն ծիծաղական էին այդ ծամածռությունքը, երբեմն բարկացկան և երբեմն զարմացկան։

— Սմբա՜տ, ի՞նչ ես սպասում,— կամաց քչփչաց Հերիքնազը,— երկուսն էլ ձեռաց գնացին, ետ քաշենք սրանց։

Նեչանի ուշքը գլխին էր, նրա ականջը սուր էր. Հերիքնազի խոսքերը նրան, ինչպես քնից, զարթնացրին. նա ինքն ամենայն զգուշությամբ ետ բացեց դատեր կռներն յուր վրից և Հերիքնազի ու Սմբատի օգնությամբ պառկացրեց անկողնումը։

— Ափու ջա՛ն, բարո՛վ, հազար բարի՛ ես եկել,— աչքերը բացեց Հեղնարը,— կբաշխես, որ քեզ տեսնելու վրա ուրախացա ու սիրտս թիլացավ. հիմի էլ երկյուղ մի՛ անիլ, խելքս գլխիս եկավ. հիմի ես հասկանում եմ, թե դու ի՛նչ նեղություններ ես քաշել, որ էդքան փոխվել ես. մի կողմից թե՛ մեր հոգսն ա քեզ մաշել, մեկել կողմից պարզ երևում ա, որ շատ ես տանջվել ու չարչարանք քաշել, թե չէ մի դարդը, ասած ա, մարդ չի սպանիլ։ Այ ազգակա՛ն, բարեկամնե՛ր,— դարձավ դեպի հանդիսատեսները,— շատ շնորհակալ եմ ձեզանից. գիտեմ՝ դուք էլ ուրախացել եք իմ հորս ազատվելու վրա ու եկել եք ձեր սրտի ուրախությունը մեզ հայտնելու. բայց թողություն կանեք, էս իրիկունը մեզ մենակ թողեք, մեր սրտի կարոտը իրարից առնենք, ու էգուց ամենքդ էլ համեցե՛ք մեր տուն աչքալիս, մեր գլխի վրա տեղ ունեք։ Հոքի՛ր,— ձայնը բարձրացրեց հիվանդը,— հերի՛ք ա, ուշքի արի՛, մոտացի՛, մեր կշտին նստի՛։

Ամենքը դուրս գնացին։

— Ես քո ջանին մեռնի՛մ, Հեղնար ջա՛ն,— ասաց Նեչանը,— դու էդ ի՞նչ հալի ես, մկար[1] Սմբատն ինձ խաբում էր, որ ամեն վախտ գալիս քո առողջությունի խաբարն էր բերում ինձ. ես տեսնում եմ, որ դու իմ գնալուց ետը տեղաշորի միջից վեր չես կացել։

— Էդ ամենը թո՛ղ, ափու ջա՛ն, մեզանից ոչ մինը մեկելիցը պակաս չի չարչրվել. քո վրիցդ երևում ա՝ ինչ որ քաշել ես բանտի մեջ. քիրդ տեղնուտեղը ոսկու ա դառել, Հերիքնազս էլ քո թողած ալ վարդը չի, ավելի վատթար կըլներ, թե որ սաղ տան զահրը[2] շնքին չըլներ. Սմբատն էլ քիչ չի վեր գիպել... ախ, ափու ջա՛ն... էս ի՞նչ փորձանք էր, որ մեր գլխին եկավ...

Հեղնարն էլ չկարողացավ շարունակել, հազն և շնչարգելությունը նրա ձայնը կտրեցին։ Ողորմելին չէր ուզում տեղիք տալ այդ արտքլքներին. շատ ուզեցավ էլի սկսել խոսակցությունը, բայց հնար չեղավ. ճարը կտրած՝ լռել, հոբ երեսին նայելով արտասուքի կայլակներ էր թափում աչքերից։

— Հեղնա՛ր ջա՛ն, արթիդ մեռնի՛մ,— խոսեցավ Հերիքնազը,— ի՞նչ բանի ես, միտք արա՛, որ դրանով քո հորդ ոգը-ողը գերեզման կգնա,

[1] Մի՛թե։ [2] Հոգս։

հանդարտվի՛, սիրտդ բռնի՛, քեռուս անդանակ մի՛ մորթիլ ու քերթիլ. տե՛ս թե ի՞նչ օրն ա ընկել։

Հիվանդը փոքր առ փոքր հանգստացավ, հազը դադարեց. նա աջ ձեռքով նշան տվեց, որ ինքն այժմ իրեն լավ է զգում։

— Ափու ջա՛ն,— մի քանի ժամանակից հետո ասեց Հեղնարը,— օխտոս նստեց, ես ուզում եմ քեզ հետ խոսալ, պտի անկաջ անես։

— Քեզ մատա՛դ, Հեղնար ջա՛ն,— մեջ մտավ Հերիքնազը,— դեռ դրա վախտը չի, դեռ թող քեռիս էլ մի քիչ դնշանա, դու էլ մի փոքր ուժի արի՛, փառք աստծու, հիմի էլ հո՛ գնալու չի։ Հիմիկից դենը ամեն օր մեր կշտին ա, էգուց, էլօր կխոսաս։

— Չէ, խնդրում եմ, ինձ ոչ ով չխառնի,— հրամայաբար ձեռքը բարձրացրեց հիվանդը,— էլ քաստուց հարմար ժամանակ չի ըլնիլ. ես ափունիս գալուն էի սպասում, իմ ասելու խոսքերը սիրտս կրծում էին, շատ վախտ ա՝ էս օրին էի մնում ու հիմի, փառք աստծու, արժանացա, իմ ասելիքը մենակ ա էլել, խնդիրս գնանին չիորոշ։

— Ես ուզում եմ, որ խոսա երեխես,— մեքենաբար ընդհատեց ծերունին,— դրա ասածներն ինձ համար սուրբ են, դրա խոսքերն ալիքատրանի պես պտի կատարեմ, դա վատ բան չի հանիլ իր բերնիցը։

— Շատ շնորհակալ եմ, ափու ջա՛ն, քո հոգին էլ վկայել ա, սրանք դեռ ջահել են, ոչինչ չեն հասկանում,— ոգեորվեց հիվանդը.— բաս լսի՛, ինչ որ ասում եմ. քո բռնվելու օրից դեռ իմ մեջքս գետնիցը չի կորվել, ես էս տեղաշորին եմ տեսել, տեղաշորն ինձ։

— Իմ աչքերը դուս գան, բալա ջա՛ն,— մեջ բռնվավ Նեչանը։

— Չէ, վնաս չունի, ես ուրախ եմ էս բանի համար. աստված արդարադատ ա, նա հաթը նհաթին չի տալիս, ես էլ պատժին արժանի եմ եղել. թե որ ես չպատժվեի, շատ պտի նեղանայի։ Ղորթ ա, ափու ջա՛ն, մեր տունը մի հալալ տուն ա էլել, ղորթ ա՝ դու միշտ ճշմարտությունի հետ ես դնացել, բայց դու քանից խաբար չես. ոնց որ քո սիրտն ա, ուրիշի սիրտն էլ ընենց ես կարծել։ Դու չես իմացել, թե քո տանը մի փուչ կենդանի կար, որի պատճառով աստված մեր ողջ ընտանիքին պատժեց, պատժեց ու դրանով ինձ ուրախացրեց. թե որ չէր պատժել նրան, թե որ նրա տեղակ մենակ դու ապաշխարանք քաշեիր, ես շատ պտի նեղանայի։

— Իմ տանն ուրիշ մեղավոր չկա, բալա ջա՛ն. ես եմ քո ասած անպիտանը, ե՛ս եմ, ու աստված էլ իմ մեղքն իմ երեսովը տվեց,— խոսքը խլեց Նեչանը։

— Չէ՛, դու չես, ափու ջա՛ն, աստծուն բարկացնողն ես եմ, իմ

պատճառովը դու էլ զուր տեղը կրակի մեջ ընկար. քո մեղքը հենց էնքան էր, որ ինձ պես անպիտան աղջկանն երես տվիր ու սիրեցիր, ու երբ որ ես աստծու ընդդեմ բան էի անում, դու կոնիցս բռնած՝ ետ չքաշեցիր։ Մենակ դու չես մեղավորը, էս տան գտնվողներն ամենքն էլ մեղավոր էին ու իրանց մեղքն ապաշխարեցին։

— Ի՞նչ ես ասում, Հեղնար ջա՛ն, ես քո խոսքերդ չեմ հասկանում, ոչ ով էս բանի մեջ մեղավորություն չունի, դուք ամենքդ էլ լսի պես արդար եք։ Թե որ աստված մեր տան վրա բարկացավ, ասեցի, որ իմ մեղքիցն էր, դուք իմ տեղակ տանջվեցիք. ասում ա՝ հերերը ժուռ կերան, որդկերանց ատամն առավ։

— Համբերի՛, ափու ջա՛ն, ես իմ խոսքերս մի-մին պարզեմ. գիտե՞ս ինչ ա մեր մեղավորությունը. դու մեղավոր ես ընդով, որ մի մատը անհասկացող երեխի գլուխը կապել ես, բաշիքյարքմա ես արել. ես մեղավոր եմ ընդով, որ խելքի եկած օրիցս քո խոսքը չեմ ուզեցել կատարել, քո հակառակ եմ գնացել. թողած իմ նշանածին սիրել եմ մեր հարևանի տղա Արշակին ու կամք եմ տվել իրան գնալու. հոքիրս մեղավոր ա, որ մի կողմը թիլա[1] ա թողել, վրես լավ չի հսկողություն ունեցել. դրա համար էլ՝ ես իմ չափս չեմ ճանաչել. Հերիքնազս մեղավոր ա, որ իմացել ա մեր միջի սերը ու քեզ չի ասել. Սմբատն էլ մեղավոր ա, որ իր աչքովը տեսել ա իր նշանածին օտար տղի հետ խոսալուս, ու չի թքել հեռացել, ընդհակառակն, ավելի սերն ավելացրել ա ու, ոնց որ տեսնում ես, վերջին շնչումս էլ չի ուզում ինձ թողալ։

— Ի՞նչ ես ասում, Հեղնար ջա՛ն,— սարսափեց ծերունին։

— Հա՛, ափու ջա՛ն, խոսքումս ստություն չկա, քո աղջիկդ քեզ որդի ասվելու արժանի չի, ղորթ ա, աստծուն էլ ա հայտնի՝ որ իմ ու Արշակի մեջ դատարկ խոսքերից ու երեխայական հիմարություններից ավելի ոչինչ չի անց կացել, համա էդքանն էլ շատ ա։

— Դու Արշակի վրա աչք ես ունեցե՞լ, Հեղնա՛ր,— հարցրեց խոժոռած հայրը։

— Հա՛, իմ հե՛ր, աստծուց թաքուն չի, քեզանից ի՞նչ պահեմ. դրա համար էլ աստված իմ մեղքն իմ երեսովը տվեց, ու ես շատ ուրախ եմ. հիմի խղճմտանքս հանգիստ ա, գիտեմ, որ դու պտի ներես, թե ասեմ, որ հիմի ապաշխարել եմ ու մեղքիս թողություն ստացել։ Տե՛ս, տե՛ս, ափու ջա՛ն,— վառվեց Հեղնարի դեմքը,— տե՛ս, երկնքի դռները բացվել են, հրեշտակներն երեք պսակ են բռնել իրանց ձեռին. դրանց մինը հորաքվերս ա, մինը իմը ու երրորդը քոնը. մտիկ տո՛ւր, առաջին պսակին արժանանում ա հոքիրս, մեջտեղինն իմ գլխին են դնում, վերջինը քեզ են տալիս։

— Հեղնար ջա՛ն,— թոթովեց ծերունին,— էդ ի՞նչ ես ասում. իմ տունս մի՛ քանդիլ։

— Չէ՛, չէ՛,— ոգևորված շարունակում էր հիվանդը,— ես սուտ չեմ ասում, մենք իրեքս էլ ճամփորդ ենք. էսօր դեռ ես ու հոքիրս կերթանք, մի քանի օրից էլ դու մեր քամակիցը կդաս։ Բայց ընչանք խոսքս չլսես, դրախտի դռները մեր համար չեն բացվիլ. մի բան էլ ունեմ ասելու, խոսամ ու վերջանա։

— Ասա՛, ասա՛, բալե՛ս,— աչքը հիվանդի վրայից չվերցնելով՝ սոսկալի դեմքով ասաց ծերունին։

— Ես ասեցի, աստված մեր մեղքը մեր երեսովը տվեց, բայց նա ինքը շատ ողորմած ա, նա չի ուզում, որ խեչանենց խեչանի օջախն էս աշխարհքումն անցնի ու վերջանա։ Էս երկուսի մեջը (Հեղնարը մատնացույց արեց Սմբատի ու Հերիքնազի վերա) աստծու հրամանովը սերը վաղուց վառվել էր, բայց սրանք ուզեցան, որ իրանց սրտի ցանկությունն սպանեն իրանց մեջը, էլ չիմացան, թե աստված ինչ որ տնօրինել ա, էն պտի ըլնի։

— Հեղնար ջա՛ն,— մրմնջաց Հերիքնազը։

— Իմացի՛ր, ափու ջա՛ն,— ուշք չդարձրեց Հեղնարը,— աստծու կամքն էն ա, որ ինչպես երեխությունից դու Սմբատին փեսա ես ընդունել, էնպես էլ հիմի ճանաչես, ու ինչպես որ Հերիքնազին քո հալալ աղջկանից չես ջոկել, էսօր էլ էն աչքովը մտիկ տաս. Հեղնարն ու Հերիքնազը քեզ համար մին են էլել, աստված էլ քեզ ու մեր ամենքին միխիթարելու համար կամենում ա, որ Հերիքնազը Հեղնարի տեղակ Սմբատի նշանածը դառնա։ Ղաբո՞ւլ ես, ափու ջա՛ն, աստծու հրամանին։

— Մեռնիմ աստծուն, ա՛յ, որդի. ասեցի, որ քո խոսքերդ ինձ համար ավետարանի կողքին գրվածի պես են. ես էլ հիմի հասկանում եմ, իմ հոգիս էլ վկայում ա, որ դու ղորթ ես ասում. երկնքի դռները բացվե՛լ են ու մեզ կանչում են. եկեք, որդի՛ք, Հերիքնա՛զ, Սմբա՛տ, եկե՛ք, ձեր քվոր առաջին չոքեցեք,— դարձավ ծերը դեպի նոցա.— ա՛յ պառավ քիրս, դու էլ օրհնի՛ էս երկու երեխին, ու մենք մեր ճամփեն գնանք։

Արձանացած Մարիամը մի փոքր առաջ նստեց, իսկ՝ սիրահարներն աչքները կախ՝ արտասվում էին։

— Ի՞նչ եք գլխներդ կախ քցել,— ձայնը բարձրացրեց Հեղնարը,— էս էլ հո ես չե՞մ, իմ հերս՝ էս տան տերն ա ձեզ հրամայողը։

[1] Թուլլ։

Սերունին տեղիցը կանգնեց, նա բռնեց երկու ամուլների կոներիցն և առաջ քաշեց։

— Զոքեցե՛ք,— հրամայեց խեչանը։

Նոքա հնազանդեցան։

— Իմ հայրական ձեռովս միացնում եմ ձեր ձեռները,— ասաց ծերը,— ես օրհնում եմ ձեզ, իմ զավակնե՛րս, թող աստծու օրհնությունն էլ ձեր վրեն ըլի, Հեղնաբիս կամքը թող կատարվի։

— Հիմիկից դենը ես ուրախ սրտով իմ աչքերս կփակեմ. աստվածանից խնդրել եմ, որ ձեզ էս աշխարհքումս բախտավոր անի,— դողդոջուն ձեռքերն երկինք բարձրացնելով մաղթեց Հեղնարն ու համբուրեց նրանց։

Երեք ձեռք իրար հետ դրվեցան նորանշանների գլխին, երկու ձեռքերի տերերը բերանացի օրհնություններ և բարեմաղթություններ էին կարդում, իսկ երրորդը միայն լռել՝ աչքերով էր յուր սրտի զգացմունքը հայտնում։

Այդ Մարիամն էր։

— Խնամի Աղաջա՛ն, տանուտե՛ր, հասարակությո՛ւն,— ասաց խեչանը հավաքված բազմությանը,— դուք մի՛ տխրեք իմ ու աղջկանս կամքը լսելով. ճակատի գրվածը չի ջնջվիլ, ինչ որ աստծու կամքն ա, էն պտի ըլնի. իմ խնդիրս մենակ էս ա, որ Սմբատիս մի փառավոր հարսանիք անեք ու Հերիքնազիս օրինավոր ժառանգ ճանաչեք։

Խեչանի խնդրանոք դերձիկ Ստեփանի տղեն գրեց կտակն և գյուղական կարգով ստորագրվեցավ։

Մյուս օրը խեչանի տանից երկու գագաղ էին գուրս տանում. այգ Հեղնաբիին ու Մարիամին էին։ Ամենքը լալիս էին, իսկ ինքը խեչանը ձեռքերն երկինք տարածած՝ հեգամռունչ աղոթում էր։

Այդպիսի մի մահենիք էլ մի շաբաթ ետը պատահեցավ յոթը կատարելու ժամանակը Հեղնարի գերեզմանի վերա։ Մի ծերունի գլուխը շիքիմի վերա գրած՝ լուռ ու մունջ լալիս էր։ Տերտերն քստ սավորության օրհնությունը վերջացնելուց հետո ծերի կանիցը բռնեց, ուզեցավ բարձրացնել, որ մխիթարանք խոսի։ Քահանան ձեռքը շտապ ետ քաշեց։— Ձեր տունը չքանդվի, ձայն տվեց, նա,— սա մեռած ա։

— Խեղճ մա՛րդ, մեռոնվեցիր,— կրկնեցին ամենքը,— գնա՛, աստված հոգիդ լուսավորի, պարտական ըլի էն մարդը, որ քո օջախին խեթ մտիկ տվեց։

— Աղաջան,— հառաջ կանչեց տերտերը մյուս օրը գերեզմանատանը թաղման ժամանակը Սմբատի հորը,— մեր հանգուցյալ խեչանի

կամքն էր, որ իր մեռնելուց հետո՝ դու ընիս իրա ժառանգների հերը և աշխատես իրա օջախի ծուխը չկտրել, շուտ հարսանիքի պատրաստություն տես, եկող շաբաթ էսքան տրտմություններից հետո մի ուրախություն պտի վայելենք։

Սմբատի ու Հերիքնազի հարսանիքը շատ հաջող անց կացավ. ամենքն ուրախ էին, բայց նորապսակների սիրտը կոտրած էր։ Փոքր առ փոքր ժամանակն ինքը բուժեց խոցված սրտերը։

ԽԸ

Ի՞ՆՉ ԵՂԱՎ ՄԻԿԻՏԱՆ ՍԱՔՈՆ

Մի անգամ Պարսկաստանի խորքերում մի գյուղի հրապարակի վերա ամբոխը հայհոյելով քարշ էր տալիս մի թշվառ մարդի. շատերն էլ քարեր էին ձգում նրա վերա։

— Հերի՛ք է, շունը փչեց, դժոխքը գնաց,— գոռաց մի մոլլա,— դադարեցե՛ք. այժմ պետք է գյուղից շատ հեռու մի հոր փորեք և մեջը ձգեք։

— Այս ի՞նչ շփոթ է, ո՞վ է այս մարդը,— հարցնում էին միմյանցից նոր եկող հետաքրքիրները։

— Քեշիշ-աղա-մոլլեն ասում է, որ սա մեր հավատը հայհոյող է և թե պետք է սրան քարկոծել,— պատմում էին մյուսներն և նորեկների մոլեռանդությունը գրգռում։

— Ո՞վ էր այդ սպանվողը և ո՞վ քեշիշ-աղա-մոլլեն,— հարցնում ես դու ինձանից, ընթերցո՛ղ։

Լսիր։ Քեզ հայտնի է, որ միկիտան Սաքոն արդարության ձեռքից անհետացավ. յասավուլ Մարգարն էլ նորա քամակիցն ընկած որոնում էր։

Երկու տարի էր՝ Մարգարն ամեն տեղ հարց ու խնդիր էր լինում և միկիտան Սաքոյի հոտը Պարսկաստանումն առավ։

Նա, արդարև, գնաց գտավ միկիտանին մի գյուղում և ճանաչեց։

Սաքոն այժմ թուրքացել, մոլլա էր դարձել, և չգիտեմ ընչի՛, գուցե քրիստոնեությունից Մահմեդի կրոնքը փոխվելու պատճառով, կոչվում էր ժողովրդից քեշիշ,աղա-մոլլա էլիաց։

Մինչ խեղճ Մարգարը հնարքներ էր որոնում մոլլա-քեշիշ-աղայիցն յուր վրեժն առնելու, մեր նախկին Սաքոն յուր բնական խելքովը հաս-

կացավ Մարգարի գալստյան պատճառն և գրգռեց յուր ժողովուրդն ընդդեմ յասավուլի, ասելով, որ այդ մարդը մարգարեի սուրբ հավատը հայհոյող է և ինքը մարգարեիցը երազումը պատվեր է ստացել նրան քարկոծել տալու։

Քեշիշ-աղա-մոլլայի կամքը կատարվեց։

Հիմա ասում են, որ Սաքոն մի մեծ գյուղի մոլլա է։ Նա շատ թշվառության պատճառ է դառնում, ամեն օր գյուղականաց հետ կռիվներ է անում և բոլորին ձանձրացրել է։

ՅԵՅԵՐ

Մեր տաղանդավոր թատերգու
ԳԱԲՐԻԵԼ ՍՈՒՆԴՈՒԿՅԱՆՑԻՆ
յուր 25-ամյա հոբելյանի առթիվ
ՍՐՏԱԲՈՒԽ ՆՎԵՐ ՀԵՂԻՆԱԿԻՑ

ՍԻՐԵԼԻ ԳԱԲՐԻԵԼ

Անցյալ հոկտեմբերի 23-ին լրացավ fn 25-ամյակը, թնդաց այս ձայնը և արձագանք տվեց բոլոր հայաբնակ տեղերում։

Եթե fn անփառասեր համեստությամբդ արգելք եղար տաղանդդ հարգողներին գործնականապես վկայել քեզ յուրյանց սրտալիր հարգանաց և անկեղծ սիրո հավատիքը, մի՞թե կարող էիր սահման դնել այն սրտերին, որոնք մոտդ նստած՝ առաջին թատրոնական պիեսդ գրելուս ականատես են եղել fn երիտասարդական բորբոքալից գործին՝ հայ թատրոնի սկզբնավորության և հարատևության համար կրած ջանքերին։

Դու հիշում ես անշուշտ, Գաբրիել, այն երեկոն, երբ առաջին անգամ Թիֆլիսի քաղաքական թատրոնումը հայ ժողովուրդը տեսավ կանոնավոր հայ ներկայացումն։

Արշակ Բ-ն էր այն։

Ներկայացնողները մի քանի աննշան նորահաս պատանիներ էին, որոնք նախապաշարմունքներին հանդգնեցին դիմադրել և այսօր մոռացության տված մի ժամանակակից գործիչի՝ Գրիգոր Իզմիրյանցի օգնությամբը բեմը մատչելի արին հայ ամբողջության։

Անշուշտ դու չես մոռացել Արշակ Բ-ի ներկայացման ժամանակ երկու բարձր շրջանին պատկանող երիտասարդների արարքը։ Նրանք կրակ էին կտրվել, նրանք իրենց գլուխը մոռացել էին, նրանք անդադար ժողովրդից բեմ և բեմից ժողովրդին էին վազում, նրանք դրամական օգնությամբ ներկայացնողներին քաջալերում էին և հանդիսականների համակրական զգացմանցը բարգման լինելով՝ մի բուռ հանդուգներին յուրյանց անմիջական գործակցությունն էին առաջարկում։

Նրանք պահեցին իրենց խոստումը. նրանք միաբանած Թիֆլիսի առաջնակարգ շրջանի ներկայացուցիչներից 12 անձանց հետ՝ մյուս օրը

համախմբվեցին Գ. Իզմիրյանցի շուրջը, հովանավորեցին պատանիներին և ընդհանրացրին թատրոնը:

Հայ տարեգրության պատմությունն, անկարծիք, կգտնեն այն անուններն յուր էջերի մեջ, բայց դու քաջ ճանաչում ես այն երկուսից մեկին, որ Արշակ Բ-ի ներկայացման արժանահիշատակ երեկոյից սկսած միշտ անբաժան է եղել թատրոնական գործիչներից և յուր սահուն գրչով, յուր անուշ լեզվով, յուր թատրոնական հաջող գրվածքներով օգնել է հայոց թատրոնի հարատևությանը:

Այդ մարդը դու ես, Գաբրիե՛լ, իսկ մյուս ընկերդ անմոռանալի արժանահիշատակ բժշկապետ «Միքայել Տեր-Գրիգորյանցը», որ նույնպես մեծ հույս էր խոստանում ապագայում, եթե անգութ մահը չկարներ նորա կենաց թելը:

Հիշատակն արդարոց օրհնությամբ եղիցի:

Այո՛, Գաբրիե՛լ, չգիտեմ զուգադիպությամբ, թե մի վերջին նախազգուշությամբ, «Յեցերս» «Մուրճ» ամսագրի խմբագրության առաջարկությամբ գրեցի նույն ձմեռը, նույն նշանավոր տարին, երբ լրանում էր քո 25-ամյա գործունեության շրջանը:

Այդ ժամանակ ճիշդությունս մեջ կենդանանում էին մեր անցյալ և փառավոր օրերը, ներկայանում էիր աչքիս դու քո վառվռուն թարմ երիտասարդությամբդ և կասեիր, առանց հետս խոսելու, իբրև այս էիր տալիս՝ անընդհատ գրելու գրել:

Ամիս ու կես տևեց սկսած օրից և ներկա երկս ավարտեցավ:

Այնուհետև ինձ մնում էր լսել ներքին բառն զգացմանս թելադրությանը՝ «Յեցերս» նվիրել քո անվանը:

Թույլ տո՛ւր ուրեմն, սիրելի Գաբրիե՛լ, համբուրել ճակդ և ջերմ սրտիս առնավատությամբ՝ շնչին աշխատասիրությունս նվիրելով քո 25-ամյակին, ցանկալ ճակդ երկար տաճինես, երկար կյանք և արդյունավոր գրչիդ առավել բեղմնավորություն, իսկ հայ թատրոնական նվաստս շնչին՝ նոր ոգի և արբնություն:

ՊԵՐՃ ՊՈՌՇԱՆՑ

Դ.

ՈՒՐԲԱԹԱԼՈՒՍ

Արարատյան նահանգի մեծ գյուղերից մեկի բնակիչ էր Պետրոսենց Սամփսոնը: Նա հոր միակուսակ էր: Նա գյուղի պատվական համարված երիտասարդներից մեկն էր. խիզախ, կորիճ, ջահելների մեջ առաջիններից էր, ընկեր-հարևանի, թայ ու թուշի (հատակակից) սիրելին էր, մեծ ու փոքրի պատիվը ճանաչող էր:

Սամփսոնը գյուղի առաջավոր տների զավակ չէր, բայց վերջիններից էլ չէր, միշտ կարողության տան որդի էր, հարգելի ու պատվելի մսագործ Գալոյի, կամ, ինչպես ամբողջ գյուղը կոչում էր, Գալ-ափունի տղեն էր:

Ընկերական խմբակներում երեկոյան ոտքը խաղաղվելուց հետո, երբ փողոցները գատարկվում էին և երթևեկությունը մնում էր միայն ազատ տղեքանցը, Սամփսոնն անբաժան մասնակից էր:

Բայց նա գյուղը սասանեցնող խմբակների անդամ չէր, այն փչացած, լկտված և զզվելի տանու գողերի, որ գուրսը, դաշտումը մի վինավորված մարդ տեսնելիս՝ կամ քարերի տակ ու փոսերի մեջ կմտնեն, կամ երկչոտությունից լեզուները կկապվի, անցորդի ձիու ոտքի տակը կընկնեն, գոռոշները կպատռվի, արյունը կերթա և ա՛լ, աղա՛ (ա՛ռ, առ՛ռ) ասելով իրանց հրացանն ու զենքերը միամիտ ճանապարհորդին կտան ու կգնան գյուղի մեջ կպարծենան, որ Եղիկը, Եչոն կամ Քյարամն իրանց թալանեց: Սամփսոնն ատում էր այդպիսիներին, որոնք դուրան այն ատելան կնատ են վարվում, իսկ գյուղումը լեզուները երկու գազ մեծացնում են, ո՛չ մեծ են հարցնում, ո՛չ փոքր, ամեն բանի մեջ խառնվում են, գոռում են, հայհոյում են, կռիվ են քցում և վերջը սպառնալիք տալով՝ ժողովում են միասին, խորհում, թե ո՞ւմ հանգստությունը խանգարեն, ո՞ւմ հավերը գողանան, ո՞ւմ խոտի դեղերը, հասած բամբակի

արտերը կրակ տան, ո՞ւմ այդու խաղողի պտղատու որթերը կիսահաս խաղողով արմատից՝ հողի բերանից կտրատեն, թափեն ու յուրյանց վրեժն առնեն։

Ո՛չ, Սամփսոնը հեռի էր այդպիսիներից. նա պատկանում էր այն խմբին, որոնք տանը՝ գյուղամիջին աստուծո գառն են, ծնողների ու ծերունիների հնազանդ, իսկ դուրսը ավազակների դեմ ճակատե-ճակատ կռվում են, մեռնում են գնդակը կրծքից ստացած կամ ցրում են հրոսակների բազմությունը։

Սրանք էլ ունեին յուրյանց ժողովները. պատանեկական անմեղ զվարճախոսությունների ժողով էր այն. սրանք էլ իրանց հաշիվն ունեին— ո՞ւմ աղջիկն էր սիրուն, ո՞րը ո՛ւմ բախտ կլինի, ո՛վ կարող է Նազլուի աղջիկ Սիրամի սիրտը գողանալ, Սիրամի փոքր եղբոր ձեռքով նրան կարմիր խնձոր ուղարկել և այլն։

Էս խմբակի մեջ ամեն մեկն իր սրտի գաղտնիքը հայտնում էր. մեկը պարծենում էր, որ եթե չտան՝ կփախցնի, մյուսն ուխտում էր սուրբ Կարապետի պասն յոթը տարի պահել, եթե յուր սրտի առարկան իրան վիճակվի, մեկն ախ էր քաշում, մյուսը սիրտ էր տալիս, մի երրորդն էլ լուռ լսում էր։

Այս վերջինների կարգից էր մեր Սամփսոնը. նա միշտ լուռ էր, միշտ լսում էր, շատ-շատ մի բառով յուր կարծիքը կհայտներ։ Այդ էր պատճառը, որ նա յուր ընկերներից ստացել էր «Ուրբաթախոս» մականունը և անգոհ չէր։

Եթե հանկարծ ընկերի մեկը խոսքը Սամփսոնին դարձներ ու հարցներ, թե դու ո՞ւմն ես սիրում, այս կողմից մյուսը ձեռաց մեջ կխառնվեր, թե՝ է՛հ, դրան ի՞նչ ես հարցնում, չգիտե՞ս, որ դա ուրբաթե-ուրբաթ կխոսի, դա ճգնավոր է, դրանը պաս օրն է։

Այդ նկատողության դեմ Սամփսոնը քթի տակին կժպտար ու կասեր, որ ուղիղ է։

— Մեր տղե՛ք, մի եղալի թիքա ա մենծանում,— խոսք բաց արեց մի երեկո խմբակի անդամներից մեկը.— էս ձմեռ Ալեքենց Բարսեղի աղջիկ Սոնեն իրար միս կոծելու պատճառ կդառնա. ինքը սիրուն, Բարսեղի էլած-չելածն էլ շալակին, նրա մերն էլ պտղողը չի։

Լա՛վ, որ սաստիկ մուքը գիշեր էր, մի քիչ էլ ցուրտ էր, ամենքն էլ յափունչիքը գլխներին էին քաշել ու քշփշում, թե չէ մեր Սամփսոնի կերպարանքից ընկերները կվախենային։

Նորա անձի մեջ սարսուռ անցկացավ։

— Մոտ եկողի սիրտ ու թոքը խանչալովս կթափեմ,— դուրս պրծավ հանկարծ ընկերներից մեկը՝ Դոնդարենց Ասոն։

— Սրա՛ն մտիկ տվեք, տո՛, դու գզրի ձեն չես լսե՞լ, չե՞ս իմանում, որ Սոնեն միանգամայն ա ու աշխարհքի մլքերի տերը. դու քանի՞ գլխանի ես, որ գլամնու, սուդիեքանց ու հարուստների ատամներիցը Սոնա դուրս քաշես։

— Ձեզ ասում եմ, որ Սոնեն իմն ա, ոչով չի կարող տանիլ։

— Ը... ը... ը՛...— մի շշուկ դուրս եկավ Սամփսոնի բերանից, բայց նրա լեզուն կպավ, ոչինչ չկարողացավ ասել։

— Ի՞նչ ես կմկմում, ա՛յ ուրբաթախոս, մի պտղունց բարութ ունիս քցելու, մի խոսք ունիս ասելու, ասա՛ ու պրծի, է՛լի։

Սամփսոնը ոչինչ չի խոսում։

— Տո՛, քեզ չեն ասո՞ւմ,— ձեռքը քաշեց Ասոն,— դու ի՞նչ մտքի ես, կարա՞մ տանել Սոնին, թե...

Ասոն խոսքը չվերջացրեց, նա հանկարծ ճչաց.

— Վա՛հ, մեր տղե՛րք, սա մահվան դողմանի ա դիպել, մի տեսեք՝ ի՞նչ օրումն ա։

Սուտ չէր ասում Ասոն. Սամփսոնը զընգըր-զընգըր դողացնում էր։

— Էս ի՞նչ ա, տո՛, հիվանդ հո չե՞ս. կուզես ցրվինք, գնա տուն,— ամեն կողմից դարձան դեպի Սամփսոնը։

— Տղեք ջա՛ն, ձեզ մատա՛ղ,— հազիվ մրթմրթաց Սամփսոնը։

— Ի՞նչ կա, ի՞նչ պատահեց։

— Ասո ջա՛ն, ինձ ոպանի ու Սոնի անումը մաստակ մի շինիլ, ծամիլ։

— Օ, հո՞,— քրքջացին ամենքը,— տեսա՞ր արևը որտե՛ղ ա էլել մթնած. ա՛յ դու դարմանի տակի ջուր, մտքումդ բան ես ունեցել հա՞, ընդո՞ւր ես ուրբաթախոս, հասկացա՛նք, հասկացա՛նք։

— Ձեզ մատաղ,— լեզուն բացվեց Սամփսոնի,— ընչանք օրս ես պստիկ ախպոր պես ձեր խոսքի մինն երկու չեմ արել, ջանս ուզել եք. չեմ խնայել. հիմի թե ախպեր եք, էդ մի թևավորն էլ թողեք իմ ականատի մեջն ընկնի, էդ մի աղջիկն ինձ բաժին հասցրե՛ք։

— Քեզ փեշքա՛շ, քեզ հալա՛լ, քեզ ջաբբա (պարգև)։

— Դու ի՞նչ ես ասում, Ասո ջա՛ն։

— Ես էլ քեզ խաչախպեր։

— Դե արի՝ մի պռոշտի անենք։

Սամփսոնն ու Ասոն համբուրվեցան։

— Բայց մեր տղա՛, վայ թե քո ատամների համար թթու ընկի. մեր աղեքը հիմի վաղուց մատնահաշիվն արել, պրծել են։

— Էդ ինձ թողե՛ք, էն էլ մի պայմանով։

— Ի՞նչ։

— Խոսք տվե՛ք, ձեր կորիճ տղամարդության վրա օրինում կերե՛ք, որ էս խոսքն էս ուռու տակին թաղվի, քարը վեր կալե՛ք, քարի տակը դրե՛ք, հասարակության բերանը չքցե՛ք. վերևն ասուած գիտենա, ներքևը մենք՝ էս չորս հոգիս։

— Սեարես ըլնի, ընկերի մոտ թուք, խաղք ու խայտառակ մնայ, իգիթ (քաջ) տղամարդ չըլնի, գդակի տակ լաշտի ծածկի, ով որ բերանիցը հանի,— ձայն-ձայնի տվին տղեքը։

— Ու ով որ էլ գլուխը ետ չդնի, մեր Սամփոնի ուղուրին չկանգնի (չօգնի), երբ որ իր սիրտը կուզենա։

— Ամե՛ն, ամե՛ն։

— Պայմանը մի-մին պոշտի ա։

— Թող ըլի։

— Չըրը՛պ, չըրը՛պ, փըրը՛պ, կըրը՛պ և քարի գիշեր։

Գ

ԱՐՏԵՄ ՍԵՐԳԵՅԻՉԸ

Մի մեծ և խոր ձորի վերա է շինված Օ. գյուղը։ Ձորի քարափի վերա է հինավուրց պատմական բերդը։ Բերդի ավերակների վերա է այսօր գլուխը ցցել ու պարծենում Գոմշակերենց Արտոյի խում-քարե ու ցխեն տունը։ Կոփածո բերդ, վրեն հողե տուն— կարմիր մետաքսյա թանկագին շորի վերա պառավ տատի հաստ խլկով մանած ու իր տղա ծոներես ենգոյի գործած խամ սպիտակ կտավե կարկատան չէ, ի՞նչ է բաս։

Ուրախ է Արտեն, կամ առավել շավ է՝ յուր պառվանունովը կոչենք, Արտեմ Սերգեյիչը, յուր պալատովը։ Նա առանց բավականության չի պառկում յուր «գահլիճ» կոչված սենեկի վերի կողմը և լուսամտից ականջ դնում ձորի խորքում հոսող գետակի քրքչոցին։

Չորս սենյակներ ունի տունը։ Նրանցից երեքն ընտանեկան կառավարության են հատկացրած, իսկ ամենամեծը— դահլիճը, կամ ըստ Արտեմ Սերգեյիչի՝ զալան, բարձրաստիճան հյուրերի համար է։ Ներսի սենյակները կահավորված են տեղական սովորության համեմատ. հողե հատակի վրա փռված են եղեգնյա խսիր, վրան ծածկած կամ հասարակ կարպետ կամ քրդի թաղիք, իսկ դահլիճը բացառություն է կազմում. նա զարդարված է կիսահայկական, կիսաեվրոպական ճաշակով։

Մի քանի դյուրագին աթոռներ, մեկի ոտքը դուրս եկած ու շորի փաչլասով ամրացրած, մյուսի գլխի տախտակը պակաս, շարված են աններկ

քարդի ծռից քաշած տախտակի հատակի վերա. մի հասարակ սեղան, խառատ Ավետիսի ճարտարվեստության ապացույց, բազմացրած է ձռաքաղմի լուսամտի առաջին. նորա վրան ծիծաղում է մեջը նայողի երեսին նույն Ավետիսի հանճարեղ ուղեղի ծնունդ բոլորակ հայելին, աջ և ձախ կանգնած յուր պահապան հրեշտակներով՝ նույնպես ուստա Ավետիսի շինած ընկուզյա աշտանակներով։

Դահլիճի մյուս կողմը Վրաստանին հատուկ մի տախտ բռնել է սենեկի կեսը։ Տախտի վրա փռված են երկու հատ քրդի թաղիք, երկու թաքյամի կարպետ և պսակն այդ շռայլությանց մի փամբակեցի կամ վայոցձորեցի հաչ կնոջ գործած գորգ վրայից ծածկած։

Դահլիճի պատի դրսի կողմից, ձորաթմբի ապառաժ ժայռի միջից, կարծես դուրս էր ցցվել կիսախարխուլ պատշգամբը։ Հրաշալի է տեսարանը, անմման է այդտեղից բնությունը. առաջին ձորն յուր կարկաչահոս գետակով, լեռնաշատ քարափները սուր ու խորդուբորդ ծայրերով, դիմացի բլուրներն յուրյանց լայնարձակ հովիտներով հիանալի են։ Անկարագրելի է մանավանդ գարնան պարզ երեկոյին, երբ բլրներից՝ ամենաբարձրի ետեից նազանազան դուրս է գալիս գիշերի երկնային ճաճանչավորների պսակը՝ 15 օրական ժպտաժիծաղ լուսինը և պատշգամբի առաջի ձորից վեր բարձրացած հսկայական բարդիների ճյուղերի տերևների միջից հաղար և մի կտորներով լույսեր է սփռում մինչև դահլիճի խորքը։

Արտեմ Սերգեյիչն իրավ որ ճաշակի տեր է. էս ժամանակները նա միշտ-ճրագը հանգցնում է յուր հյուրերին ամենամեծ զվարճություն պատճառելու համար։ Երբեք խոսքով է նա յուր սրտի անչափ բերկրանքը արտահայտում. «великолепно! чудно! безподобно!».

Ինքը հարգելի Արտեմ Սերգեյիչը բնիկ Օ. գյուղացի է։ Վարժ խոսում է ռուսերեն և շատ հաճախ էլ հայերեն խոսելուս սիրում է ռուսերեն խառնել. օրինակ՝ «честное слово, клянусь честью, подлец я буду» և այլն։

Հարկավոր չէ դիմացի մարդին գիտենալ ռուսերեն. Արտեմ Սերգեյիչի համար այդ մի ենթադրություն է, նա վարժվել է այդ ձևի խոսակցությանը և շատ անգամ խոսքերն անգիտակցաբար են դուրս թռչում նորա բերանից։

Արտեմ Սերգեյիչը մանկությունից բացակա է գտնվել յուր հայրենի գյուղից. նա ծառայել է զանազան արքունի կապալառուների մոտ, վեր ու նիստ է արել շատ աստիճանավորների ու ղազախների հետ, շատերին ծանոթ է, ինչպես ինքն ասում է բոլորի հետ «на ты» է։

Արտեմ Սերգեյիչն յուր գյուղացիների մեջ էլ պատիվ ունի. նա շատ քաղցր, քաղաքավարի և աղ ու հացավ մարդ է. մեծի հետ մեծ, փոքրի

հետ փոքր, յուր անուշ լեզվովն, անմեղ կատակներովն և զվարճախոս հատկությունովն ամենի սիրելին է։

Եթե Արտեմ Սերգեյիչն յուր երիտասարդության թարմ ուժը գործ դրեց յուր հայրենի ծննդավայրից դուրս, այսօր խոհականության և փորձառության տարիներում, մոտ 50 ամեռներ ճանապարհ դրած, Մասյաց գլխի նման ջինջ սպիտակացած, իսկ դեմքի կայտառությամբ դեռ զվարթ, դեռ ջահելների կարգումը՝ նա մեծամեծ ծառայություններ է անում իր մանկության օրորանին։

Այսօր իշխանությունից մի հրաման եկավ, Արտեմ Սերգեյիչն է կատարելու ձևը ցույց տվողը։ Վաղը մի գործակալ, մի առաջնորդ, մի պատվելի հյուր այցելեց գյուղը, Արտեմ Սերգեյիչն է հյուրասիրում, պատվում, նորա արձակած սուրբ աթոռի հրամանը կատարել տալիս և հարգանքով ու լիաբուռն աջահամբուրով ուղևորում։ Արտեմ Սերգեյիչն յուր ընտանիքի մեջ էլ պատվական մարդ է. օրը հինգ անգամ տուն կգա յուր սիրելի լծակցի պայծառ երեսը տեսնելու, դեռ պատշգամբը չբարձրացած՝ ձայն կտա— Մաշուրկա, գոլուբուշկա, Մարա՜ն ջան, Թառլա՜ն ջան, կնի՛կ ջան, գալիս եմ։ Այս բանը գյուղի և գավառի ժողովրդի հասկացողությամբը շատ ամոթ բան է. տղամարդին ի՞նչ կսազի իր կնոջ հետ ատամները բաց անել, հանաքներ անել, ջան ասել. տղամարդն ո՛վ, կանանց գործերի մեջ խառնվիլն ո՛վ, նրանց հետ վեր ու նիստ անելն ո՛վ. մարդը պետք է մարդ լինի, ինչ որ մարդին կպատկանի. բայց Արտեմ Սերգեյիչը ոչ միայն յուր սեփական կնոջն էր ջան ասում, ջան լսում, ուրիշների հետ էլ միևնույն էր. նա էս բնավորությունովը գավառի մեջ մի բացառություն էր կազմում. նա տանիցը մինչև փողոց գալն ամեն մի պատահած կնոջ հետ հաճոյախոսություն էր անում, քաղցր բարի լույս էր տալիս, ժպտալով՝ հարսի, քիքիր (Ֆույտիկ), նանի, քեռու աղջիկ, սանամեր, քավորակին բառերն էր շռայլում, օրիորդներին էլ ուղղակի աղջի Մարգարիտ, Ալմաստ ջան, խնամու աղջիկ խոսքով էր պատվասիրում, պառավների առողջությունն էր հարցնում, ջահել հարսների հետ նրանց մարդկանց անշնորհքության վերա էր խոսում, պատվիրում էր գիշերը հետը չխոսել, երեսը շուռ տալ, խռովել, աղջիկներից տեղեկություն էր պահանջում, թե ո՞ւմ տղի վրա աչք ունին և այլն, և այլն։

Բանն այս է, որ նա ոչ մեկի հետ կանգ չէր առնում ճանապարհին. հարցմունքներն իրար քամակից հետևում էին քայլերին, իսկ որ ամենից նորանշան երևույթ է մեր աշխարհի համար՝ մեր չխոսկաններից ոչ մեկը նրանից չէր ամաչում, չէր քաշվում և անպատասխան չէր թողնում. պառավներն ուղղակի ողջ կենաս, քեզ մատաղ, Արտո ջան էին սլատասխանում. ջահելներից շատերը քաղցրաժպիտ աչքերով, քնթիալները քթից

ցած թողած, սիրուն ատամները ցույց տալով՝ մի կիսաձայն հաճոյախոսությունով նախատում էին նրան, որ իրանց գլխավորի անունը բերանը չառնի, ծիծաղատեղ չշինի։ Աղջիկներն էլ բավականանում էին համեստորեն ժպտալով և գլուխ տալով։ Մի խոսքով՝ մեր հարգևորները Արտեմ Սերգեյիչին հոր, եղբոր և մերձավորի պես էին ընդունում և սիրում. և սերը սրտանց էր։

Անկարծիք, ոչ մի տղամարդ, ծեր, երիտասարդ, երեխա էլ չէր մնում գյուղումը, որ նորա քաղցր բարևին չարժանանար և մի քանի խոսք էլ նրան ասելու կամ նրանից լսելու բախտը չունենար։

Արտեմ Սերգեյիչն, ինչպես ասացինք, արդեն 50-ին մոտ սպիտակագլուխ ծերունի էր (երեսի համար մի՛ հարցնեք, ես միշտ նրան երիտասարդ էի տեսնում, անբեղ, անմիրուք. անիծածը բեղ ու միրուք օրը մի անգամ իր ձեռովն ածելում էր), բայց գյուղի շատ ալևորներ նրան որդու տեղ էին ընդունում և դեմ ու դեմ Հաթո, Հարթուն կոչում՝ նորա մանկական անունով։ Ընդհանրապես գյուղին և գավառին Արտո անվամբ էր ծանոթ, վերջերումը մի քանի ուրիշ գյուղեր աղա բառը պոչիցը կարկատեցին, իսկ նոր քաղաքակրթված և լուսավորվածների համար նա Արտեմ Սերգեյիչ էր. միայն տերտերներն ու հայոց ծխական ուսումնարանի վարժապետներն են պ. Հարությունն հայ խոսքով նրան մեծարանում, և ի պատիվ մեր Արտեմ Սերգեյիչի պետք է ասենք, որ ինքն էլ յուր կողմից մաքուր հայ գրականական դարձվածքներով քահանային ու վարժապետին գիտե գոհացնել։

Ասացինք, որ Արտեմ Սերգեյիչն յուր հայրենի գյուղին մեծ ծառայություններ է արել, սուտ չասացինք։ Դեռ նոր էր նա եկել հանգստանալու մի քանի ժամանակ յուր ընտանեկան հարկի տակ, երբ առաջին անգամը մտան գյուղական ինքնավարությունները։ Հասարակության ընտրած անդրանիկ տանուտերն Արտեմ Սերգեյիչն եղավ. նա միաձայն սպիտակ քվե ստացավ։ Ամբողջ հասարակությունը գրկաբաց ընդունեց նոր օրենքները. նրանք ազատվեցան հին տանուտերական ճնշումներից։ Առաջները՝ ո՛ր գրպանից զնգոցի ձայնը բարձր էր ղողանջում, նա՛ էր ճիպոտը ձեռքն առնում, գլուխը ջարդում. այսօր համայնքն յուր հոժար կամքովն Արտեմ Սերգեյիչի պես մարդին է յուր համար գլուխ ընտրել։

Մեծ էր ոգևորությունը. ամեն բերան օրհնում էր բարերար օրենքը, մանավանդ երբ Արտեմ Սերգեյիչն յուր հանճարեղ կառավարությունով ապացուցեց սուրբ օրենքի գերազանցությունն ու փրկարարությունը։

Գյուղի փողոցները մաքրվեցան տարիներով դարսված աղտոտություններից. գյուղն ազատվեցավ ընտանի ցեցերից, կաշառակեր տանուտերներից, երեսպաշտ իշխաններից, աղքատին խեղդող գզիրներից,

տանու գողերից և հարամկեր հարկաժողովներից, մեծ ու պստկի մեջ փոխադարձ սեր, հարգանք և պատվապահություն մտավ. վերացան գյուղից սովորական, անվայել հիշոցներն ու անկարգ զրույցները. ամեն մարդ յուր պարտքը ճանաչեց, յուր հերթը հասկացավ. էլ հարուստն ամիսներով անվրդով չէր պառկում, քնում, իսկ աղքատն երեք օրը մի անգամ գիշերապահության հերթ կատարում։

— Գլավնի աղա՛,— գալիս էր մեկը և դռակը վերցնում, բերանը բաց անում գանգատ անելու...

— Չէ՛, գլավնի մի՛ ասիլ, տանուտեր խոսք կա, դու տանուտեր ասա՛. դու քո ոտդ իմ կարպետին մի՛ մեկնիլ, իմ լեզուն վատ է սովորել,— ընդհատում էր Արտեմ Սերգեյիչը։

— Տանուտե՛ր, էսօր չրի հերթն իմն ա, փալանդուզ Պետոն ինձանից չրգլխի ա, իմ չուրը կտրել ա, իր պոլոճինը չրում։

Գզիրը վազեց Պետոյին բերեց։

— Ծա՛կը,— հրամայում է անաչառ տանուտերը։

Պետոն բանտարկվեցավ։

— Տանուտե՛ր, Մելիք-Բաղալի կովն ընկել էր իմ բամբակի արտը, դուս էի անում, Մելիքը վրա հասավ, վրես բարկացավ, ինձ շան որդի ասեց։

— Ուղի՞զ է, Մելիք-Բաղա՛լ։

— Տո՛, դրա հերն անիծած...— ուզում է բացատրություն տալ Մելիք-Բաղալը, բայց խեղճի խոսքը բերանումը մնաց, տանուտերն աչքով արեց, գզիրն ական թոթափել Մելիքի արծաթե գոտին արձակեց ու մի մանեթի փոխարեն գրավեց։

— Տո՛, շան տղա գզի՛ր.— բարկանում է Մելիք-Բաղալը,— դու քանի՞ գլխանի ես, որ ինձ դիպչում ես։

Նորից տանուտերի աչքը ճպպաց, գզիրը վազեց Մելիքենց տունը, մի պղինձ վերցրեց, գյուղամեջ բերեց և վաճառ է հանում։

— Ի՞նչ բանի ես, Արտո՛։

— Այո՛, Մելիք չա՛ն, իմ աչքի լույս, իմ գլխի տեր, հերի՛ք, որքան մինչև օրս բերաններիդ անսահման իրավունք եք տվել. այսուհետև հայհոյանք անելու, ուրիշին պակաս խոսք ասելու իրավունք չկա, ուշունցի խոսքը մի մանեթ է, нет, не пушу!

— Հանաք հո չե՞ս անում, Արտո չա՛ն։

— Գլուխդ վկա, սիրակա՛ն, և տե՛ս, որ խոսքս ուղիղ է։

— Հասարակությո՛ւն,— դառնում էր տանուտերը դեպի խուժանը.— այս պղինձը գնահատում եմ մի մանեթ, ո՞վ է ավել տալիս, кто больше?

Սկզբներումը դեռ անմեղ կատակներ էին կարծում՝ այն ամենօրյա

քաղաքախոսություններից հետևեցրած, որ Արտեմ Սերգեյիչն ու Մելիք-Բաղալը բարեկամական սեղանի վերա իրար հետ անում էին. բայց երբ տանուտերը հավատացրեց, որ ասածն օրենքի հիման վերա է, ոչ ոք Մելիքի ահու ձայն չտվեց, բայց սպասում էին տեսնել, թե տուտը որտե՞ղ է կտրվելու։

— Ո՞վ է ավելի տալիս,— կրկնեց տանուտերը։

— Մի մանեթ հինգ կոպեկ ինձանում,— ցած ձայնով ասեց կանգնողներից մեկը։

— Դու ինձ վա՛յ տաս, հարամկերի աման լպստող խուդո,— ատամները կրճատեց Մելիքը.— դու հիմի մարդ ես դառել, մարդամեջ ես մտել, որ Մելիք-Բաղալի պղինձը տոլկով (անուրդ) առնում ես, էլի՞։

— Ձայնդ քեզ քաշի՛, Մելիք-Բաղալ,— պաշտպանեց տանուտերը,— խուդն էլ իրավունք ունի, ամեն մարդ էլ։

— Մի մանեթ հինգ կոպեկ, кто больше?— նորից ձայները բարձրացրեց տանուտերը։

Ոչ ոք ձայն չհանեց։

— Մին մանեթ քսան կոպեկ ինձանում,— այս անգամ ինքը տանուտերը ամբոխի մեջ մտավ։ Եվ որովհետև խուդն խռովեց ու հետ քաշվեց, պղինձը մնաց իրեն՝ տանուտերին։ Հանեց գրպանից մի մանեթ քսան կոպեկը, տվեց գանձապետ դատավորին, իսկույն մանեթը տուպանքի տոմարի մեջն անցկացրեց, ավելորդը տվեց Մելիք-Բաղալին։

— Է՛, մեր ուղե՛ք, եթե Մելիք-Բաղալի լեզուն բունը մտավ, մենք մեր գլխի ճարը տեսնենք, լեզուներս սանձ դնենք,— ասացին ամենքն ու հայհոյանքի տոպրակը գյուղական դատարանի ջենքի տակին թաղեցին։

Եզը Մելիք-Բաղալը բավական տուժեց։ Վեց ամիս էր՝ Արտեմ Սերգեյիչը տանուտեր էր, և Մելիքն ամենից շատ տուգանքը տվեց, բայց իհարկե, նա տանուտերից չէր նեղանում, յուր վատ սովորած լեզվին էր մեղադրում։

Հախ ասածու ինքը Մելիք-Բաղալը վատ մարդ չէր, բարեսիրտ էր, զվարճախոս էր, սրախոս էր և գյուղի այուներից մեկն էր, գյուղի համար գլուխը դրած ուներ, մեծ ու պստկի, իրավորի-օտարի, հեքիմ-դատավորների առաջին էլ խոսքը դուրս էր գնում։ Միակ վատ բնավորությունն այս էր, որ չէր կարողանում թարգը տալ թաքուն, աշկարա ձեռքն ընկած տեղից մի չնչին կաշառք վերցնելուց։ Այդ յուր անցյալ տանուտերության երջանիկ օրերի սովորությանց հետևանքն էր, իսկ մյուսը՝ առավել վատթարը՝ նա չէր կարողանում լեզուն ետ սովորեցնել ուշունցաստվությունից. արշալույսից մինչև վերջալույս շարունակ ուշունց էր դուրս գալիս

բերանից։ Վնաս չուներ, նրա ուշունցից ոչ ոք խամ չէր և չէր էլ նեղանում, բայց խեղճին էժան չէր նստում։

Թույլ տանք Մելիք-Բաղալին ինքը պատմի յուր ցավը։

Գ

ԽՈՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՂԸ

Օ. գյուղը իրարանցումի մեջ է. տանուտեր Արտեմ Սերգեյիչն իր գլուխը չի ճանաչում, գզիր ու յասավուլ, առվազ (ջրպետ) ու գյուղումը հաց կիտելու համար ետ ընկած նախրչի՝ բոլորը գործի մեջ են, տանուտերի, սուդիեքանց և հարուստների տներում էլ թանկագին կարպետ ու խալիչա չի մնացել՝ կրվում են դեպի ձորը բազմադարյան կամրջի ականջին գտնված ծառուտը և փռվում կանաչ խոտերի վրա. վերի կողմը տարածած է փափուկ մահիճն և վրան դրած երկու հատ պատվական մուքաբա։ Հեռվումը մի ծառի տակի մորթված է պարարտ ոչխարը, սարքված են օջախին պղնձներն և շարված են փայտյա դալար շամփրների վերա խորոված ները։ Գետի ափին բխող ականակիտ աղբրի ակնումը շարված են կարմիր գինով լիքը շիշերը։

Ահա եկան Օ. գյուղի բոլոր իշխանները։ Ահա և հաստաշլինք Պապի Գևոն շապկանց՝ մինչև ծնկները բաց, մսոտ և մազոտ կրծքի վերա մանկամարդ կնոջ ստինքներից մեծ-մեծ ծծերը կախ գցած, թոռի պարանը երեք տակ կոնատակովը վիզը ձգած՝ վայր դրեց թաց թոռն և հրամայեց իր օգնական գելխեղդ Թորոսին խլպլտան ձկներով լիքը ձիու տոպրակը գետի ջրի մեջ դնել, մինչև ինքը կհրամայի։

— Եկա՛վ, եկա՛վ,— ձայն տվեց հեռվից քարափի վերա կանգնացրած պահապանը։

Ամենքը հառաջ վազեցին. տանուտերը բոլորի գլխին ծառուտից դուրս կանգնած էր։

— Գդակնե՛րդ,— ձայն տվեց տանուտերը և առաջ վազեց։

— Բարև՛ ձեզ,— ձիուց ցած թռչելով բարձր ողջույն տվեց թանկագին հյուրը։

Դա գավառի նաչալնիկն էր։

Նա միայն չէր. մի քանի աստիճանավորներով էր շնորհ բերել։

Նա այս անգամ պաշտոնական գործով չէր եկած։ Այսօր նա Օ. գյուղացվոց հյուրն էր։

Շատ տարի էր նա նաչալնիկ էր և տարեն մի անգամ այս քաղքը աղբրի ջուրը խմում էր։

— Բարի՛, հազար բարի՛ ես եկել, աղա՛ ջան, մեր գլխի, մեր աչքի վրա ես եկել,— առաջ եկավ Պապի Գևոն թոռի մեջ կոլոլած մի ահագին մեծությամբ խլպլտալով կարմրախայտ ցած թողելով կանաչի վրա,— քեզ փեշքե՛շ, աղա ջան, 20 տարի ա, գլխիդ մեռնե՛մ, ես էս գետի ամեն մի քարի տակը, ամեն մի խոր գյոլի ձկան ծվարատեղը տարին հարյուր հետ քրքրել եմ, խոլխոլել եմ ու դնո էս չափին կարմրախետ տեսած չեմ, անմահակա՛ն ա, անմահակա՛ն, հոգահա՛մ ա, հոգահա՛մ, թիքեն մի պաճախլու ածի, տեսնում ես, աղա ջա՛ն, ոնց ա թրպռտալով ոտդ պաչում, որ հրամայես իրան մատաղ անեն ոտիդ տակին ու իր ղրղրչան քյալլեն քո հրամանքդ անուշ անես։

— Շնորհակալ եմ, Գևո՛րգ, քո կալած ձկներն ես ամեն տարի էս ծառերի տակին կերել եմ, ոչ մեկն անհամ չի եղել։

Նաչալնիկը հինգ մանեթանոցը մեկնեց Գևոյին։

— Տո՛, էս թղթի կտորն ինձ ի՛նչ պտի տաքացնի, աղա ջա՛ն, սաղ օրը ջրումը թրջված մուկն եմ դառել, մրսել եմ, մի քո օրհնած բերանովդ հրամայես՝ մի թաս քրտնքի դեղ տան, ոսկորներս տաքանա, ավելի լավ ա։

— Արտեմ Սերգեյի՛չ, մեր Գևորգին մի թեյի բաժակով արաղ։

— Էդ ա, է՛, ջոմարդ մարդի բերնին մեռնեմ,— ասաց Գևոն, առավ ձեռքն արաղն և՝

— Աղա՛ ջան, քո կենացը։

Ճաշի թեժ ժամանակն է. սեղանի ծաղիկը Մելիք-Բաղալն է. ամեն մի բաժակի վերա նա երկար ատենաբանություն է անում և բոլորին ծիծաղացնում։

Նաչալնիկն իր կողմից խմեց Օ. գյուղի հասարակության կենացը և մի կարճ հորդորով կշտամբեց նրանց անտարբերությունը նոցա անուստմնասիրության առթիվ։

Նաչալնիկը դարձավ դեպի Մելիք-Բաղալն և ասաց.

— Իսկ դու, Մելիք-Բաղա՛լ, միանգամայն մեղադրելի ես, լեզո՞ւդ ասեմ, թե գործդ. քո աչքն ինչպե՞ս է վերցնում, որ այսօր ձեր գյուղումն ուսումնարան չկա։

Այդ ժամանակ դեռ տարրական դպրոցի հարցը վերջնական ելքի չէր հասել։

— Նաչալնիկ աղա՛, գլխիդ ու արևիդ մատաղ,— տեղիցը կանգնեց Մելիք-Բաղալը,— հրամանք արա՛ մի երկու խոսք ասեմ սրտիս փուքը դատարկեմ, հետո աչքս հանի։

— Իրավունք եմ տալիս։

— Նաչալնիկը հաստատ կենա՛, քեզ էլ հայտնի ա, որ մենք հերե-

նական, պապենական բոի անտաշ գեղջցի ենք, ուսումնարան չենք մտել, քաղաք տեղ չենք ման եկել, կոպիտ, վայրենի ենք, էշ կերել ենք, էշ մեծացել— գեղջցունը որ կա՝ իր աշխատանքն, իր ժամն ու տավարն, իր օրհնությունն ու ուշունցն ա. ասում ա՝ խերն ու շառն ախպեր են, էնպես էլ օրհնենքն ու ուշունցը մի հալալ մոր ջխտակներ են, մենք ոչ տղեքանց ու քաղքցոնց պես կարանք առանց ժամ գնալ մնալ, ոչ առանց ուշունց ու քաղքցոնց պես կարանք առանց ժամ գնալ մնալ, ոչ առանց ուշունց տալու համբերիլ. ժամիցը դուս գալուս մեր «օղորմի աստծու» հետ «շան որդին» էլ մեկել ատամի տակիցը պետք ա դուս սլա. ուշունցը մեր խոսք ու զրցի, մեր խոսակցությունի աղն ա, անաղ կերակուրը համ չի ունենալ, էնպես չի՞, աղա՛ ջան, ջանի՛դ մեռնեմ։

— Լա՛վ, հիմի խոսքդ ի՞նչ ա։

— Չէ՛, դեռ մի հրամանք արա բարի բերանովդ, սուտ ա՞, թե զորթ։

— Ասենք թե ուղիղ ես ասում, գյուղացին ու նաչալնիկն երկուսն էլ առանց ուշունցի չեն կարող կառավարվիլ։

— Հա՛, դե տեսա՞ր, որ գլուխս ճշմարտախոս մարդի ոտի տակին փարվան կանեմ։ Դե՛, աղա ջա՛ն, դե հիմի աբի երկաբ խելքովդ դատի՛, մեր դրությունի մեջը մտի՛ր, մեր հալն ու աֆալն (դրությունը) իմացի՛, մեզ խեղճ արի՛, մեզ էս բաբելական կրակիցն ազատի՛, էրված ենք ողջ հասարակությունով։ Էս ա վեց կոլոլ ամիս ա, քանի էս նոր օրենքները դուս եկան, մեր Հաթոն մեզ շամփուրն ա քաշել, բռնել մարմանդ կրակին. ոչ մի անգամ խորովում ա, մոխիր շինում, ոչ էլ կրակն ա հանգցնում, մեզ հովություն տալիս։

— Ի՞նչ Հաթո, Մելիք-Բաղալ։

— Տո՞, էս մեր... ը՛մ... ը՛մ... ը՛մ... էս... շ... շ... շ... մեղա՛, քիչ էր մնացել էրեխեքանցս էս օրվա ապրուստը շան ու գիլի բաժին էի անում... ո՛չ, ո՛չ, մեղա՛ աստծու...— ծամծմոտեց Մելիքը,— էս մեր պարոն Հաթոն, մեր տանուտեր գլավնին, որ իմ մենծ տղիցը վեց ամսով ու երեք օրով պատիկ ա, ախար սա չիք-չորեքշաբթի օրն ա ծնել, ա՛յ չքվի սրա գլուխը...

— Մելի՛ք-Բաղալ,— համեստորեն ձայն տվեց տանուտերը,— մաննեքը գլորվեց։

— Դե՛, աղա ջան, լսեցի՞ր,— դարձավ բազկատարած Մելիքը նաչալնիկին։

— Ես բան չհասկացա,— ուսերը թափ տվեց նաչալնիկը։

— Չէ՛, դու ինձ ասա՛, էս խոսքի համար ա՞ժի՞, որ մեր ագա գլավնին ինձանից մի մանեթ շտրաֆ խլի։

Նաչալնիկը գլխի ընկավ. նա, դիցուք, վաղուց գիտեր Մելիք-Բաղալի թափը։

— Ես քեզ լիակատար իրավունք եմ տալիս,— ասաց,— էս ձորի ծառերի շվաքումը, էս սառն աղբրի մոտ, էս գետի ափումը, էս բաց երկնքի տակին, ոչովից չքաշվես, ինչ քո սրտի ցավն է՝ հայտնես, ինչ սիրտդ քեզ իրավունք է տալիս՝ չխնայես, մի՛ վախիլ, ոչով քո փեշին էսօր չի կարող դիպչել, էսօր քեզանից ինչքան տուգանք խլեն, իմ վզիս։

— Հա՛, աստված որդիքդ պահի, հիմի կասե՛մ, հիմի թող ինչքան ուզում ա՝ բվա մեր բայղուշ Հաթոն, դուռ մեր ագռավը։

— Ա՛յ մարդ, Մելի՛ք-Բաղալ,— ժպտալով դարձավ նաչալնիկը,— ինչի՞ ես մեր տանուտեր Արտեմ Սերգեյիչին անպատվում, քաղաքավարի անունը տաս ի՞նչ կլինի. մեկ՝ որ տանուտեր է, մեկ՝ որ քո ազգականդ է և մյուս էլ՝ որ գյուղի ու գավառի մեջ պատվելի մարդ է։

— Տո՛, քեզ մեռնեմ, քո սուլթան բալեքանցը (որդվոցը) մեռնեմ, ախար դա որտեղի՞ աղեն ա, ախար ոնց որ ասում էի ու բերնիս եկավ, դա՞իմ հորոխպոր թոռ օղորմածիկ Սաքոյի տղեն ա. էդ չքվելուն լիս աշխարհ եկավ չիք-չորեքշաբթի օրը առավոտեն ծեգը քցելուս։ Խալխին տղա ա ըլնում՝ ուրախանում են, համա մեր խեղճ Սաքոն ամպեց ու մրրած եղկնքի պես աչքերիցը թափեց, ինչ ա թե՝ հենց էս չիք-չորեքշաբթի օ՞րը պտի ծներ. որ մի օր հառաջ, կամ մի օր ետն էր արշա ընկել (երևացել), աշխարհքը կքանդվե՞ր, մեղք կլինե՞ր համա չէ, փիսը փիս կլլնի. էս օրն ամեն բան չքվում ա, սա գլուխը դուս ա պրծացնում։ Ինչևիցե. բերինք, դատիկ օրը մկրտեցինք, որ չիք-չորեքշաբթու շորշոփը վրիցն անց կենա, վեր կալանք, անումը դրինք Հարություն։ Դե մեր տանեռումն ո՞վ ա երեխին Հարություն կանչում, անումն էլ երեխի հետ պտի կամաց-կամաց մեծանա. մինը Հաթո ասեց, մեկելն Հարթեն, մենք էլ՝ ա՛յ թուլա (այ շնիկ) էինք կանչում ու ձեռներիս թոցնում, ուրախանում։ Եկավ որ սա ընկավ Երևան՝ ռուների մեջը. ընտեղերանք ի՛նչ արեց, ի՛նչ չարեց, քանի՛ փոդրադչու աչքեր հող ու մոխիր փչեց, դազախին հողաթառը հաց ուտացրեց, փորհարինք քցեց, նրանց ձիանոնցը ջուրն ընկած գարով ուտացրեց՝ սպանեց, իր ջեբը տոզացրեց. մի օր էլ տեսնենք մի քանի իրպեսներին՝ Երևանի ջահել-ջուհուլին հավաքել ա, բերել գեղը, բարեկամների տներումը սրապատիվ տալի, մի շաբաթ քեֆից աչք չի բաց անել տալիս, մեր հաշվովը զոնաղներ ա ման ածում, թե ի՞նչ ա, սաքի պատիվ եմ տալիս, դու մի՛ ասիլ, սա դրանց բերել ա, որ դրանց բերնովը մեզ հասկացնի, որ իր անումն էլ Հաթո չի։

— Թաս ի՞նչ ա,— չհասկանալ կեղծեց նաչալնիկը։

— Ես ի՞նչ գիտեմ. էն տղեքանցից ո՛րն Արտո էր կանչում, ո՛րն Արտուշ, մինն Արտուշկա, Արտամուշկա, մի քանիսն էլ Արտեմ Սերգեյիչ, ոնց որ դու հիմի, աղա ջա՛ն, հրամանդ ասում ես։ Էն օրից գեղք

մենք էլ Արտո ենք կանչում, ընչունքի տեսնում ենք, որ «Հաթո» ասելիս քինքը վեր ա քաշում, սաքի թե ինքն էլ Հաթո ըլնի, մեր գլիր քուրդ Հաթոն է՞լ։ Դե «Հարությյուն» խոսքն էլ մեր լեզվի լաղաբը չի (վայել չի), տերտերի ու վարժապետի բառ ա։ Համա իմ քրքրված հոգին գիտենա, ես ուրախ կլինեի՝ մեր քուրդ Հաթոյի հընկեր դառնալ, քան թե փթած սերգևիլ. էդ ի՞նչ խոսք ա՝ Սերգևլլիչ. էլի՛ մարդ կարմիր պահունի խրնձոր, կամ մալաչա տանձ դառնա՝ մեղրի պես քաղցր, որ ուտողի բերանը համ տեսնի, քան թե տոփպ սերգևիլ, որ կախան են անում թե չէ մի շաբաթից հոտում, փթում ա ու՝ վեր ա թափում, ոնց որ մեր Հաթոն, վեց ամիս ա՝ քանի տանուտեր ա դառել, ամեն օր հոտում ա մեր վրա ու մեր խոսքի լաղաթը (ախորժակը), մեր քաղցր մալաչահաթը, մեր ուշունցը կտրում, մանեթն առնում. շներոց անում։ Բաս էդ մեղք չի՞, աղա ջա՛ն։

— Ախար էլի բան չասացիր, Մելիք-Բադալ, կարճ կտրի տեսնենք։

— Դե էն եմ ասում, որ քեզ հայտնի ա, որ մենք գեղրցի ենք, հընկեր-հարևան ենք, իրար հետ հաշիվ, առնելացուկ տալացուկ ունինք, պատկից ենք, հող ունինք, բաղ ունինք, բամբակ ու ջնջիթ ենք ցանում, ջուր ենք ջրում, ախպեր ենք՝ բաժանվում ենք, ես ի՞նչ գիտեմ, հազար տեսակ կապ ունինք, դե ո՞նց կըլնի, որ տարեն 12 ամիս սիրով, սոհբաթով ջան ասենք, ջան լսենք, անմեղ հրեշտակների պես միշտ երեխա մնանք. դե մեր մեջը խոսք ու զրից կըլնի, տուր ու ծեծ կարող ա պատահիլ, ինչպե՞ս դիմանանք, սրտներիս փուքը ո՞նց նստացնենք, որ ուշունց չի տանք։ Ես քո հորը կքաշեմ, դու իմ օխտը պորտն Ադամա դեսը թումբե-թումբ, շոլե-շոլ կքցես, ես քո կնկա սիրտը կշահեմ, գլխի լաչակիցն ընչաք գյուլբեքը կփառաբանեմ, դու իմ հարս ու քվեր անումը կտաս. բան ա, աշխարհքն էլ կկառավարվի, սիրտ ա՝ կնստի, յոլա կերթա, ուշունցը հո էն հրոպեին տեղ չհասավ, ասում ա՝ դարդակ խոսքը քամին տանի. էդպես չի՞, աղա՛։

— Խե՛ղճ իմ Մելիք-Բադալ, հիմի տեսնում եմ, որ ծերացել ես, մի ժամ է խոսում ես, միայն իմ ու քո հայրն ու մայրն ես անհանգիստ անում ու բան չես կարողանում հասկացնել. բան ունիս՝ բանդ ասա՛, իմ կնկա շորերի հետ ի՞նչ բան ունիս. կա՛ց գնամ իրան ասեմ, էլ մեր տունը ոտ չես կարալ դնել, յասավուլով ու ղազախներով մինչև ձեր գյուղը մեկ քշել կտա։

— Վա՛յ գլխիս, աղա ջա՛ն, ես ի՞նչ ճանճ ու մժեղ եմ, որ քո խանումին պակաս խոսք ասեմ, կամ չար սրտով աչք քցեմ նրա վրա. նա իմ քիրն ու մերն ա, իմ քեռնի սրբությունն ա, ես առակ եմ ասում, օրինակ եմ բերում, ասում ա՝ առակն անխոտելի ա, ես մեր գեղական հաշիվն եմ ասում։

— Հանա՛ք եմ անում, Մելիք-Բադալ, դու խոսքդ շարունակի՛ր։

— Դե էլ ի՞նչ գլխացավանք անեմ, քեզ զուրբա՛ն, մեր հալը հասկացար, էլ ոչ բերաններումս լիզու ա մնացել էս մեր չիք Հաթոյի գլավնությյունի օրումը, ոչ սրտներումս եղ. էլ գեղամիջին մի ձեն, մի աղաղակ, մի հարայ-հրոց չես լսիլ, ախար ո՞նց ղալմաղալ (աղմուկ) անենք, երբ որ մեջն ուշունց չկա. չէ՞ որ կռվի աղն ուշունցն ա, պստի հա՛բան ա շինել մեզ էս անիծածը։ Ճարներս հատել ա, մի բան ենք միտք արել. առավոտը որ զարթնում ենք, դեռ երեսներիս խաչ չքաշած՝ դռները պինդ փակում ենք, երթիկ ու փանջարա ծածկում ենք, մի բեռն ուշունց դեռ առաջ մեր խեղճ պառավների (կանանց), մեր հընկերների գլխին ենք թափում, մի քանի էլ, հախ ու նհախ, վեր հատում, ախար ուշունցը հո առանց տուր ու դմփոցի յոլա չի գնալ, ու հետո մեղքս ի՞նչ թաքցնեմ, մեր էս աղա գլավնի տանուտեր սերգևիլի Հաթոյի՝ Նոյան տապանիցը բռնած՝ ինչքան արդար ու մեղավոր ննջեցելք ունի, լցնում ենք մի նեղարերան շուշի մեջ, ինչքան էլ քաղցր ուշունցներ կա մի տեղ ենք հավաքում, շուշի բերանը խցկում, որ տեղ չունենա դուրս փախչելու էս որ պրծանք, նոր դռները բաց ենք անում երեսներս լվանում, գնում ծամ, մի քանի ծունր դնում հանգիստ սրտով ու ժամից դուրս գալիս իրան՝ էդ անիծածին «օղորմի աստված» տալիս։ Դա էլ իր մեջն ուշում, փքվում ա, թե ինքը նոր օրենքի գլավնի ա, հին տանուտերերից չի, մեզ ճամփի ա բերել, մեր ուշունցը կտրել ա, մեզ քաղաքավարի ա շինել։

— Էդ լավ հնարք եք մտածել, Մելիք-Բադա՛լ,— ժպտալով ասաց նաչալնիկը,— բայց խեղճ կանանցը զոռ է հասնում։

— Էլի ուրիշ հնարք ենք գտել, աղա ջա՛ն, ասենք՝ ես քեզ հետ մի դավի (վեճ) ունիմ, ես իմն եմ ասում, դու քոնը. երբ որ տեսնում ենք, որ յոլա չգնացինք, սրտներս չնստեց, առանց ուշունցի վերջանալու չի, ես կացինն եմ վերցնում, գնում եմ բաղը, դու բահն ես առնում, էրթում դպա ձեր ջաղացի առվի ուռի ծառերը. գնում կանգնում ենք, հոգոց քաշելով՝ ամենքս մի ծառի տակ։ Ես ասում եմ. ա՛յ ծառ, քո անումդ Գրիգոր ա. դու էլ, իհարկե, ասում կըլնիս՝ Բադալ ա. հետո սկսում ենք՝ ես կացնով, դու բահով ծառին շրխկացնում, թրխկացնում ու հետն էլ ուշունցի տոպրակը դադարկում։ Էն տեղ էլ Նոյը մոտիկ ա, Ադամիցն ենք սկսում, ընչանք Ուռնայի կալը գնում, կենդանի ու մեռել իրար խառնում ու «օխա՛յ» անելով, գալիս մի կուշտ ու կուռ հալալ հաց ուտում։

— Բայց մի՛ մոռանար, Մելիք-Բադա՛լ, որ մի ժամից ավելի է խոսում ես, կնոջս պատվեցիր հերիք չէր, մեռել-կենդանս էլ անհանգիստ արիր և էլի խնդիրդ չասացիր։

— Աղաչանքս էն ա, ոտներդդ մեռնեմ, որ դու մեր գատավորն ես,

Մեր ցավերի դեղ ու դիր անողն ես, առաջ մեր էս դարդն իմանաս, սրրտ ներիցս հարցնես, հետո ես դառնաս, երեսիս թքես, թե Բաղա՛լ, ձեռ մեկ-նի՛, աշխատի՛, ուսումնարան բաց արա՛, որ երեխեքը կարդան։ Ես կարդալու հակառակ չեմ, աղա՛ ջան, համա սրտումս եղ չի մնացել։ Եթե գիտես, որ իմ ձեռքից բան կգա, թե ուզում ես, որ ես գործի մեջ խառնվիմ, գամ քո ոտներն ընկնիմ, ուրիշին շլինք ծռեմ, աղորմություն ուզեմ, իմ հարևան բարեկամին սիրտ տամ, ուսումնարան բաց անենք, դու էլ հրաման տո՛ւր էս լեն ու բոլ տեղումը, էս քչքչան գետի ափին, էս սիրտս խորոված հասարակության առաջին լեղվիս կապերը քանդեմ, ո՛ւմ սիրտս ուզում ա՝ մի սրտալի, կուշտ ու կուռ ուշունց տամ, ջանս ու հոգիս գնացնեմ, հետո, ինչ որ հրամայես, պատրաստ եմ գլխիս վրա կատարելու։ Թե մի օրվա մեջն ուսումնարանը գլուխ չեկավ, կաշիս քերի՝ թել տուր յասավուլ սարի տրջ Մահմատին։

— Ուրեմն եթե քեզ իրավունք տամ ուզած մարդիդ հայհոյել, ղրկիր բաց բաց անո՞ւմ ես մի ամսի մեջ,— հարցրեց Նաչալնիկը։

— Չխաբվիս, Մելիք-Բաղա՛լ,— մեջ մտավ ծիծաղելով տանուտեր Արտեմ Սերգեյիչը,— Նաչալնիկը քեզ փորձում է, էդ Նաչալնիկի իրավունքը չի, էդ տանուտերի վերաբերյալ գործ է, մեղք ես, պարտքի տակ չմնաս, ես էս գլխից Նաչալնիկի ներկայությամբ քեզ ասում եմ, որ ամեն մի ուշունցը մի մանեթ տուգանք ունի։

— Դե ձենդ քի՛զ քաշի, չլուսը քամի անո՞ղ, դու էլ շատ ես հմարտացել, չես հասկանում, թե ո՛ւմ առաջին ես խոսում. կրակի առաջին չախմախի չեն տալ, ասում ա. «երեսիդ արեգակ՝ կոբնչեն ասաղը»։ մեր գլխի տերը, մեր աղեն էստեղ՝ դու ի՞նչ կհամարձակես ծպտուն հանել թո՛ղ մի-մի օգորմի, հրաման տա, տես իմ բերանից ի՞նչ դուս կթափի, ո՛ւմ գլխովը վեր կգա, էդ հետո մենք կտեսնենք, թե դու իմ մի հատ կապեկին ո՞նց ես դիպչում։

— Իրավունք եմ տալիս,— բարձրաձայն վճռեց Նաչալնիկը։

— Ղո՞րթ, գլխիդ մեռնեմ։

— Էս բոլոր հասարակությունը թող վկա լինի, եթե տանուտեր Արտեմ Սերգեյիչը քո մի կապեկին դիպչի, հնգապատիկ վճարեմ։

Էլ չեմ խոսում, էլ իմ գրիչն այն շնորհը չունի, որ Մելիք-Բաղալի բերանից հորդաբուխ աղբրի նման դուրս թափվածները մի առ մի թղթի երեսն առնի. դուք, եթե ցանկանում եք, գտնե՛ք իրեն՝ տանուտեր Արտեմ Սերգեյիչին, և թող ինքն յուր այրված սրտովն յուր դարդերը ձեզ լա ու պատմի։ Մեզանից ոչ մեկը, համոզված եմ, յուր կենաց շրջանում այնքան բազմակողմանի և բազմատեսակ հայհոյանքներ լսած չունի. երևակայել անհնար է, թե մեր Մելիք-Բաղալը, երբեք տանուտերին դարձրած, ի՞նչ խոսքեր դուրս թափեց յուր բերանից խեղճ Արտեմ Սերգեյիչի հասցեին։ Ես քաղաքդ, դուք կես ժամ առացեք, շարունակ մի-մի ծանրծանր արտասանած հայհոյական խոսքի հետ՝ ձեռաց շարժումով էլ տեղն էր հատկացնում։

Ամենքը ծիծաղից թուլացել են, ինքը Նաչալնիկը՝ մատը կոտրես՝ չի իմանալ, ետ է փռվել բարձերի վերա և փոր ու փորս բռնած հչկչում։

Մելիք-Բաղալն իր խոսքին տեր էր, մի ամսի մեջ դպրոցը գլուխ բերեց. նույն օրը Նաչալնիկից ու նորա հետի աստիճանավորներից ու ծառայակիցներից 500 մանեթի չափ նվերը առավ։ Իսկ ի ցավ Օ. գյուղի բոլոր հասարակության և նույնիսկ իրա՝ Մելիք-Բաղալի, Արտեմ Սերգեյիչի տանուտերությունը շատ կարճատև եղավ. մի ազդեցիկ մարդու գործ դրած մեքենաները նրա հրաժարականը շտապեցրին։

Այդ մասին Մելիք-Բաղալը մինչև էս օր էլ ախ է քաշում։

Գ

ՏՂԱՄԱՐԴԻ ՀՈԳԻՆ

Բարելից աշնան ամենաառատ ժամանակն է։ Օ. գյուղի բոլոր այգիներն ամենաքաղցր պտուղներով լցված են. խնձորի, տանձի, սերգևիլի, դեղձի ծառերը, որ գարունքը գժատուտ պատանու նման գլխները ցցել, երկնքի հետ էին կռիվ տալիս, որ գույնզգույն անուշաբույր ծաղիկներով փթթած՝ կարծես ամենքին իրենց գլուխն էին ցույց տալիս, այսօր այդ բոլոր ծառերը բեռնաշալակ մշակի նման կռացել, փոքր է մնում գետնին կպչեն։ Եթե տասնավոր նեցուկները չլինեին, որոնց վրա զառամյալ ալևորի նման հենվել են մեր ծառերը, հիմա ամենքն էլ վաղուց ճեղքնակոտոր կլինեին։ Այգիների միջնավայրերն էլ միաբանվել են ափների ծառատնկի հետ, խաղողի որթերը կախ են արել յուրյանց հատ ու կոխուն ողկույզներն և յուրյանց տասնավոր գույներովը նմանվում են ճիշտ գոհարազարդ ոսկի անոթի։ Մարգարի՞տ կոչես ապիտակ քիշմիշի ասված խաղողին, շողա՞կն անվանես թափանցիկ շողշողուն ասկյարուն, զմրո՞ւխտ ասես մեծապտուղ ծիրանագույն հալաղուն, հակինթի՞ նմանեցնես եղան աչքի խոշորությունն ունեցող եղնաչքին, դեղին ու սև ասթի՞ հետ համեմատես սև ու ապիտակ, արնից դեղնած խարջուին կամ կանաչկենուն. ո՞ր մեկը համարես. գոհարների տեսակները չեն կարող մրցել Արարատյան դաշտի խաղողների տեսակ-

ների հետ. հետաքրքրվողներն ասում են՝ մինչև 54-ի են հասել, ես կասեմ՝ էլի լրիվ չէ։

Ուրախ է գյուղացին, նա երջանիկ է, նա այսօր ժողովում է աստուծո տված բարիքը, օրականը ծախում է լեռնացի բեռնակիրներին, որոնք Մրջյունի կարավանների նման քթոցները ձիանցը բարձած խռնվում են այգեշատ գյուղերումը, իսկ պահունին զգուշությամբ կրում է յուր մառանը և ճկուն ուռենու բարակ ճղնիկների վրա կախան անում, մառանի առաստաղը զարդարում, յուր սիրուն փոքրիկների ձմեռվան պաշար պատրաստում։

Գյուղական կյանքն եռում է. ամենածեր պապերից և ատամնազուրկ պառավ տատերից բռնած՝ մինչև նոր ոտնավորված թոթովախոս մանուկը, ամենքն էլ գործում են. մինն ուռ է քաղում, մյուսը կախանում է, երրորդը բեռն է բարձում, չորրորդը քթոցը ոտքի տակին կախ է տալիս, կանայք դեղձ են կլպում, աղջիկներն ալանի են շինում, երեխայքը չորացածներն են հավաքում տնագործ տափարակ ուրյա մատուցարանների— սալաների մեջ, ա՛յս են անում, ա՛յն են անում, ես ի՞նչ գիտեմ՝ ի՞նչ են անում, բայց որ ամենքն էլ բանի են, ամենքն էլ շտապում են ծառապտղից պրծնել, որ կպչեն այգեկութին՝ ամենայն երջանկությանց գագաթնակետին։

Աստուծո աչքն այս տարի քաղցր է նայել գյուղացոնց վերա. թըրթուր, մարախ, խորշակ, կարկուտ, ժանգ, փոթորկալից քամի, գարնային հորդահոս հեղեղներ ու տարափներ, ոչինչ երկնային ցասում գյուղի գլխովը չի անցկացել, ոչ մի ծաղիկ ունայն տեղը գետին չի ընկել, ամեն կոկոմած բացվել, բեղմնավորվել և պտուղ է դառել։

Ուրախ են առավելապես այս տարի նշանվելու կտրիճ պատանիքն ու արբունքի հասած հրեշտականման աղջիկները. ցնծում են նրանք և հաստատ հույս ունին, որ իրանցից ոչ մինն այս ձմեռ չի մնալ առանց բարձակից ընկերի, ամենքն էլ արժանի կլինին կանաչ ու կարմիր նարոտին՝ սուրբ պսակին։

Ամբարն ալյուրով լիքը, կարասները գինվով փորերը տկղած, մառանը հազարավոր բարիքներով փքված, յուղն ու պանիրը կճուճ-բժուքից դուրս են թափում. էլ ծակ փորով ման չի մնացել. վերի այվանումը մինչև առաստաղը բամբակի կորզովն է կիտվել, չանաքավոր է կանչում, կտավատը ձիթահանքումն է ճմլում, ձեթ դառնում, քնջիթը բովվում է դային խանումը, և մի քանի օրից արդար յուղից չզանազանվող շիրբախտի ձեթը պետք է տկերը լցվին ու Թիֆլիս ղրկին. ուրեմն էլ ջահելներին բախտավորելու ի՞նչ արգելք կա։

Իսկ եթե ամեն նորահարսներ ապագայի հուսով են խնդում, դեռ

յուրյանց մեջ վիճակ չգտած, թե ճակատագիրը ո՞ր խումար աչքերը պիտի իրան հանդիպեցնի, ինչի՞ չպետք է ցնծա ու ճխա մեր Սամփսոնը, որ իր պատկից հարևանենց աղջիկ Սոնան ոտը 16-ի մեջ է դրել ու այս ձմեռ յուր կողքը պետք է տաքացնի։

Էլ այսուհետև ումնի՞ց կասկած ունի Սամփսոնը. Ասոն խաչեղբայր դառնալ խոստացավ, իշխաններն ուշ զարթնեցան կամ դեռ խոմփում, մրափում են հիմարության մեջ, իր դժվարությունները վերացել են, ամենից մեծ արգելքներն յուր և Սոնայի ծնողներն էին, որ երկու շաբաթ առաջ իրենց մեջ համաձայնություն են կայացրել, մի-մի բաժակ գինվով խոսք են տվել, խոսք առել գյուղական պարզ և համեղ սեղանի վերա այգու ափումը, տերևաշատ ծառերի հովումը։ Մնացել է միայն ձևականությունը, որ այգեբանը և դաշտային գործերը վերացնելուց հետո մի օր հայտնեն իրենց զավակների նշանը և մի-երկու շաբաթից հարսանիքի հոգսը քաշեն։

— Երկուսինս էլ մինուճարներ են, մի-մին ծառի շիվ են, թող իրար փաթաթվին, ճղճղնոտին, մեծանան, ծաղկին, պտուղ տան, որ ծերության մեջ մեզ մխիթարեն,— առաջարկեց դասաբ Գալ-ափուն,—լավ չե՞մ ասում, հարևա՛ն ջան։

— Քրիստոսի բերնովն ես խոսում, ես իմ աստվածը, Գալո ջան, իմ կողմանե էս օրվանից աստված շնորհավոր անի,— վճռեց Ալեքենց Բարսեղը.— հալբաթ աստծու մի մատը կար էս բանի մեջ, մեր խնամոնց աղջիկը (կինը) ասում էր, որ երկու-երեք տարի ա, մեր երեխեքն իրար սիրել են։

— Շատ էլ լավ են արել, դուշմանի (թշնամու) աչքն էլ են հանել. տո՛, պապենական մենք բաղի հարևան էլ ենք, տան դրկիցներ էլ. մեր հերերն իրար հետ են նստել, վեր կացել. մենք մանկուց իրար հետ ենք տոնդգի տվել էս բաղերի կանանչ ափներումը, մեր կնանիքն են մինմնի հետ փսփսացել, հացփոխ արել, մեր երեխեքն են պստկուց անփոխան, փորը բաց էս առուների ցեխերի միջին քաշ եկել, իրար հետ կլպրտալով «տափկենալուկի» խաղացել, երբ որ էլ մենծացել են, իրար հասկացել, էն էլ դո՛ւ ասա։ Էլ ես քեզանից ո՞ր լավի դուռը պտի ծեծեի, աղջիկ ուզեի, կամ դու իմ ընչի՞ն չպետք է հավանեիր, որ երես թեքեիր, չտայիր։

— Կամ ընչի՞ պետք է մեր սերն ու ախպերությունն ավելի չպընդացնենք, Գալո ջա՛ն։

— Մեր ջուխտ մինուճարների արևներովն եմ երդվում, Բարսե՛ղ ջան, որ մեր երեխեքը մեզանից խելոք են էլել, իրանց գործն էլ գլխիցն են տեսել։

— Ցո՛, բա նո՞ր ես գլխի ընկնում, որ էսօրվան մի մատը քորփեն տասն իմ ու քո խելքն ունի, էս օրվան օխտը տարեկանը շատ ա հասկանում, քան թե մեր ժամանակի 20 տարեկանը. մեր ջահել վախտը դու աղջիկ-տղա իրար սիրել, խոսք տալ լսե՞լ ես, որ մեր սատանի ձագերն էս հասակումն երկու-երեք տարի ա, մերն ասում էր, իրար խոսք են տվել։

— Ես էլ, Գալո՛ ջան, իմ պառավիցն (կնոջից) իմացա, թե չէ հինգ տարի մնար, ես բան չէի հասկանալ, ախար տղամարդի խելքն էդպես բանի կհասնի՞։

— Մենք տղամարդիքս ի՞նչ ենք որ, Բարսե՛ղ ջան,— սկսեց փիլիսոփայություն անել Գալ-ափուն.— մենք աստծու պարզ միամիտ ախպերներն ենք ու մեր կնանոնց ձեռի տղխները։ Անումն էն ա, սաքի, որ տան գլուխը մենք ենք. շատ սուտ ա, դարդակ, սիրտ հովացնելու խոսք ա, տղամարդը կնիկարմատի անհախ անվարձ ծառան ա ու նրա սրտի ցանկությունների կատարողը։ Կնիկն էլ որ կա՝ տղամարդի հոգին ա։ Ինչ ուզում ես՝ մտքովդ գի՛ր,— տունդ ո՞նց կառավարես, գործդ ինչպե՞ս տանես, ի՞նչ բան բռնես, ե՞րբ ղարիբությունի՝ քրեհ-քարվանի գնաս, որդուդ ե՞րբ պսակես, ո՞ւմ աղջիկն ուզես, ո՞նց նստես, վեր կենաս, ես ի՞նչ գիտեմ, ամեն բան ու գործիդ՝ տնային կառավարությունիդ մեջ ընչանք կնկանդ մատը խառը չլինի, մինչև նրա սրտովը չլինի, գլուխ չի գալ։

— Սուտ չես ասում, Գալ-ափո՛ւ։

— Ո՞նց թե սուտ, խոսքերս ավետարանի կողքումն են գրված, փորձի՛ ու տե՛ս։ Մեկ էլ, ասենք, մտքումդ դրիր մի ձի առնես, քո բերքն ու մասիլը բարձես վրեն, տանես քո ձեռքովը սաղացնես, օգուտը ուրիշին չուտացնես։ Կնիկդ միտք չունի, քեֆումը չի գոմում ձի տեսնել։ Մեկ էլ գիշերը պառկել ես, ոդը օրն եզի պես բանել, չարչարվել ես, վեր ես ընկել, ոտներդ ձգել, որ մի քիչ հանգստանաս, էգուց գիշերահանց աքլորականչին վեր կենաս, մութ-մութ գնաս քո աշխատանքին։ Մեկ էլ տեսար՝ խանումդ եկավ, կողքդ մտավ, պառկեց. դե՛, քո կողակիցն ա, աստծու տված հընկերն ա, քո թուլակողքն ա, հո ջոկ տեղաշոր չպտի՞ քցի իր համար, էդ աստված էլ կբարկանա, հայ-քրիստոնեի հավատին էլ հակառակ ա. դե էն օրից, որ կանանչ-կարմիր բարակ աբրեշումե պարանն երկուսիդ շընքովը պատ տվին խաչ ու ավետարանի տակին, ձեռ-ձեռի տվին, միացրին, կնիկը քո մեջքն ա, քո շընքի կապն ա, քո կողքը չմտած, դռան տակին օխտը ճամփի միջին հո չպտի՞ վեր ընկնի, աստծու պատվերը հո քանդվիլ չպտի՞։

— Հը՛մմ...

— Հա՛, մեկ էլ տեսնում ես՝ եկավ։ Ուրիշ վախտ ուզում ես հետը քաղցր զրիցներ անիլ, քո տան խեր ու շառի վրա խոսիլ, երեսը շուռ ա տալիս, տնքում, ճռռում, վազում, թե հիվանդ եմ, թող քնեմ, դու էլ՝ գունդ քարին ա դիպչում, քեզ համար տազ ես անում, վեր ընկնում. իսկ էսօր, որ մտքումը դրել ա ջեմքովը ձի տուն չթողա, տեսնում ես քաղցր մասլահաթների տոպրակը բաց արեց.— ա՛ մարդ, քեզ մատա՛ղ, սրտումս դարդ ա մնացել, չգիտեմ, էս օրվա տոլմեն հավանեցի՞ր, թե ոչ, ալը հո շատ չէ՞ր, լղար հո չէ՞ր, քո ազիզ արևով եմ օրթում ուտում՝ երեսի ողջ եղը քաշեցի քեզ զրկեցի հանդը, քոռանամ ես, քա ջա՛ն, վալ թե սառել էր, համ չտեսար, գնդերը բկումս շարվեցին, կուլ չգնացին, ոնց էլավ՝ երկու հատ բերանս դրի ու ոնց որ դու հանդիցը մատդ վրեն չդրիր, ես էլ էնպես, ախար ի՞նչ կուլ կերթա, առանց քեզ հալալ հաց կուտվի՞, հլա բոյիդ մեռնեմ, ա՛յ քա, տոլմեն լա՞վն էր, թե ոչ...

— Ա՛յ կնիկ, շա՛տ լավն էր, լավ էլ իշտահով կերա, դե հերիք ա, քունս տանում ա, աչքերս գնում են, էսօր էնքան գուլթանի մաճի հետ թրև եմ եկել, մեջքիս իլիկը կոտրվում ա, թող քնեմ մի քիչ, որ էն գլուխեն ջուրը մերն ա, պտի գնամ՝ բամբակի վերա կապեմ, կիսաշոր ա էլել։

— Դե լա՛վ, կգնաս,— ասում ա ու խունջիկ-մունջիկները (շողոքորթությունը) սկսում կամ թե չէ՝ թնգթնգում, տնքտնքում, լաց ըլում, թե իրան շան տեղ չես քցում։ Ի՞նչ անես, Բարսեղ ջա՛ն, թաղա խնամի՛, գու հո քար չե՞ս, քնատիրոնց հերն եմ օրհնել, կողքս տաքացնողի սիրտը պակասցնեմ, թե հանգստանալու ե՞մ։

— Է՛... է՛... է՛... Գալո ջա՛ն, ըսկի էդ ըլելու բան ա՞, հանգստանալ ես ուզում, հանգիստը գերեզմաններն են՝ որ կան։

— Էնպես չի՞, Բարսեղ ջա՛ն, ճակատներիս գրածն՝ երբ որ լրանա, կերթանք կպառկենք մեջքի վերա, էնքան կհանգստանանք, որ Գաբրել Հրեշտակը կգա, կողքներիս իր զուռնովը կբզի, Ուռնայի կալը ցույց կտա։

— Դրանից փախչիլ չենք կարող, դու բա՛նդ ասա։

— Շուռ ես գալիս, ախպե՛ր, սկսում ես կտուց-կտրցի տված քչփչալ, մի քիչ դեսից, մի քիչ դեռնից, ինքդ չես հասկանում, թե ո՞նց կնիկդ խոսքը փոխեց, բերեց ձիու վրա, ո՞նց գժվարություններն ու ձիու տված վնասները մի-մին գերանի չափ աչքիդ առաջին շարեց, ո՞նց քո խելքումն էլ նստեցրեց, քեզ համոզեց, բերանիդ խոսք առավ, որ մեր գոմի մուրքը ձի չի տեսնիլ։ Հենց էնպես էլ ամեն բանի մեջ, լավ խմացած կաց, մինչև կնիկդ չցանկանա, աստծու արևի շողքն էլ տանդ միջին չի կարող պտիտ գալ։

— Դե դու ասեցիր, թե կնիկը «տղամարդի հոգին ա», էլ ո՞ւր ես երկարացնում, Գալո ջան, ախար դու հենց գիտես՝ իմ մտքովն անց ա կացել քո տղին աղջիկ տալը, դո՛ւ ոչ մեռնիս, ամեն օր Սամփսոնդ, աստված քեզ բաշխի, աչքիս առաջին ա, փառք աստծու, հասած, կատարած, բեղերն եկած տղամարդ ա, ես էլ ազապ աղջկա տեր եմ. երեք տարի ա իմ աղջկա ուզողները դուռս ջարդում են՝ չեմ տալիս, դռնովն եմ դուրս անում, երթիկովն են մտնում. ես էլ չեմ տալիս, թե դեռ ջահել ա։ Որտեղի՞ ջահելն ա, դու հիմիկվա ծեսերը գիտես ո՞չ, որ 13 տարեկան աղջիկ չեն թողնում տանը մնա. համա մերը մի հատ էր, տղեն ու աղջիկը գլխներս կոխել հո չի՞, որ շտապենք ռադ անել. դե մերն էլ խեղճ ա, հարսը չունի, ունենալու էլ դուռը չկա, որ գա իրա մատիցը փուշ հանի. չէինք վռազում, բայց տուն ա, առանց խոսալ չի ըլնիլ, մեր միջումը սրա-նրա տղի վրա վիճակ էինք ջցում, մեկին հավանում, մեկելին փնովում (պարսավում), հիմա քո տղի անումն ընչանք օրս մտքովս չի անցկացել, մեր քեյվանին էլ բան չէր ասել։ Ինչ կանես՝ չգիտեմ, մեջտեղն ընչե՞ր անցկացավ, որտեղի՞ց խանումիս գլխումը պտիտ եկավ. էս երկու շաբաթ ա՝ էդ կնիկը տամարս ա մտել, սատանա ա դառել, ինձ հանգիստ չի տալիս,— ա՛յ մարդ, Սամփսոնը լավ տղա ա, էսօր Սամփսոնը մի բեռն եղ ու պանիր ձիուն բարձած, ինքն էլ քիբարի (կոկ) միջին նստած տուն բերեց. Սամփսոնը էս գեղի տղեքանց աչքն ա, Սամփսոնը հորն ու մորը հնազանդ ա, Սամփսոնը է՛ս ա, է՛ն ա, վերջը՝ Սամփսոնը լավ փեսացու ա, Սամփսոնին աչքիս լսի պես սիրում եմ, Սամփսոնը մեր աղջկանը սիրել ա, մեր աղջիկն էլ Սամփսոնին ա սիրել, ես իմ երեխին Սամփսոնիցը հանիլ չեմ, դու էլ պտի կամք տաս։ Ես էլ տեսա, որ խաթունիս ձեռիցը չկարացի ազատվիլ, ոչ տարա, ոչ բերի՝ ասեցի.— իմ կողմից աստված շնորհավոր անի։

— Դե տեսա՞ր, Բարսեղ ջա՛ն, որ կնիկը տղամարդի հոգին ա։

Ե

ՀՆՁԱՆԱԲԱԳ

Մի արևկող այգու հարավային անկյունումն այսօր էլ դեռ երեսը դեմ տված կանգնած է Հնձանաբագը։ Այդ մի ավերակ է, որի գաղափի երկարությամբ քառանկյունի կոփածո քարերի երեսները ժամանակի մաշող զորությունից տեղ-տեղ խորդուբորդվել են։ Հնագետը նրան առ սակավն 700—800 տարիներ կընծայի։ Ո՛չ տաճարի է նմանվում այս ավերակը, ո՛չ մի հնադարյան իշխանական պալատի և ո՛չ մեր աշխարհքում մեծ անցքերի և ճանապարհների վերա շինված քարվանսարա կոչված իջևանատեղերի։ Ոչ մի հիշատակարան կամ արձանագրություն ենթադրության տեղիք չի տալիս. միայն Հնձանաբագ անունն է, որ փարատում է ամենայն տարակուսանք. այդպես կոչվում են Արարատյան աշխարհի այգեշատ գյուղերի այգիների մեջ տեղ-տեղ մնացած հին հնձանների ավերակները. անունն ինքը ցույց է տալիս, որ դոքա բոլորը հնձանատեղիներ են եղել, ուր տրորվել են ու մզվել մեր պապերի ձեռքով տնկած ու հասցրած խաղողները՝ նոյ մեծ պապից սկսած մինչև մեր օրերը։

Հնձանաբագը դրսից ոչինչ չի ներկայացնում, այգետերերը, երևում է, թափված քարերը ժողովել են ու թափել ներսը գավթի մեջ. այդպես էլ է. բակումը քարի կույտերից ավելի ոչինչ չկա, խոտն էլ՝ այգու անբաժան ընկերը, տեղ չի գտել, որ դուրս գա. տեղ-տեղ միայն անթերսի պես գլխները դուրս են հանել քարածերպերից եղինջի թփերը, որոնք մարդաչափ բարձրանում են և աշունը չորանում։

Զգարմանաք, եթե ասեմ, որ Հնձանաբագը դարերով ոչ միայն ադամորդու ոտք չի մտել, արևն ու անձրևն էլ դժվար են թափանցել։ Հինավուրց հաստաբուն թեղի ծառի խիտ և անխնամ թողած ոստերն են հովանավորել ամբողջ ավերակի վերա, ծառը բարձրացել է և նորից վրանանման կռացրել յուր ճղքները և մինչև գետինը փռել. էլ ո՞ւմ ցավն էր կտրվել, աչք ու երես ծվատել և մի դատարկ հետաքրքրությունից ներս սողալ Հնձանաբագը։

Թեղու փշանման բարակ ոստերի ծայրերը չէին միայն, որ Օ. գյուղացիների ոտքը կտրել է Հնձանաբագիցը. երկու արդելք կար և երկուսն էլ օրինավոր. առաջինն այն էր, որ թեղուն դիպչելը մեղք էր համարված. թեղին Թուխ-մանուկի տնկածն էր. գյուղի երեխեն էլ գիտեր, որ թեղու ոչ մի ճեղքին դանակ, էտոց, կացին չպետք է դիպչեր, ապա թե ոչ արյուն դուրս կգար. թեղին հենց ինքը Թուխ-մանուկն ա, բարակ ոստերը Թուխ-մանուկի երակներն են, իսկ տերևները նորա գզգզված մազերն են։

Թուխ-մանուկը մերձակա պարսկական գյուղի մոլլի որդին էր. նա քրիստոնյա է դառել, նրա մոլեռանդ հայրը կամեցել է որդուն սպանել, հալածելով հասցրել է մինչև Օ. գյուղի Հնձանաբագը։ Մանուկը տեսնում է, որ հայրը հասվեհաս է, խնդրել է աստծուն, որ իրան ծառ շինի, հոր ձեռքից ազատի։ Խնդիրքը կատարվել է. մանուկի գզգզված մազերը ճղքներ են դարձել և մոլլի մտնելուն արգելք եղել։ Կատաղած մոլլեն այնուամենայնիվ մի փոքր յուր փափագին հասել է, թրով տվել է ծառի

մի ճյուղը քերծել։ Այսօր էլ կտեսնես քերծված տեղում չորացած ու սեաացած արյունը։

Երկրորդ ավանդությունը Հնձանաբաղը շինում է օձերի թագավորի պալատը. թափված քարերի խոռոչներն են թագավոր-օձի ապարանքները, այնտեղ են նրա զորքերը, այնտեղից է օձի թագավորն յուր ամբողջ բանակով հազարավոր օձերով կռվի գնում Մասիսի ձորաթմբերում, կամ Արագածի կրծքի ճղվածքում Ամբերդա անդնդախոր ձորի մեջ գտնված թագավոր-օձերի վերա։

Հնձանաբաղի օձի օջախի դուռը փոքր-ինչ հեռու գտնված քարակույտերի տակին է[1]։ Շատերը տեսել են բռնաչափ բազմանկյունի աղամանդը, այն նույը, որ օձի թագավորը բերանումն է պահում ու արեկող արած ժամանակ հանում, բազմացնում յուր շորս պողերի մեջտեղը, թագի տեղ գործ ածում։ Այն անում է, որ գոհարի շողշողյունը խտրտղեցնի մտիկ ավողների աչքերը, որ չգան իր խաղաղությունը խռովեն, ժամանակ-ժամանակ թագավոր օձն ինքն էլ սիրում է զվարճանալ յուր անգին գանձով. նա հուլիսի կրակ թափող շոգերին ճիշտ կեսօրին երբեմնապես դուրս է գալիս յուր նազիր-վեզիրներով, յուր անհամար զորքերով ու գալարվում, կուտակ-կուտակ գալիս օջախի ծակի առաջին, հանում է բերանից շողակը և ժամերով վերև շպրտում, բերանով բռնում, քցում, կալնում։

Հենց էս խառնիխուռն պատմություններն են, որ Հնձանաբաղի ներսն անմատչելի են արել նույնիսկ այգու տերերին։

Դեռ էլի նոր առասպելներ կարող էին հնարվիլ վերջին երկու տարիների մեջ, եթե դյուրահավան պառավներից մեկին կամ մյուսին հանդիպեր լսել Հնձանաբաղի ներսի հաճախակի փսփսոցները, կամ տեսնեին, ինչ որ մենք պիտի տեսնենք։

Անկարծիք, շատ ապահով են եղել երկու հոգի, որ յուրյանց խորհրդատեղին ընտրել են Հնձանաբաղը։

Եվ արդարև, ո՛չ Ալեքենց Բարսեղն յուր կնոջով և ո՛չ հանրահռչակ Գալ-ափուն մի օրից մի օր մտքներովը չանցկացրին, թե ինչի՞ իրանց մինուճարները ժամերով անհայտանում են իրենց այգիների խոր թմբերում։

Գասկած տանելու տեղիք էլ չկար։ Ամփսոնք մանգաղը ձեռքին թմբերի մեջ՝ումն էր, ուրեմն աշնան հունձն էր անում, խոտ էր հնձում.

1 Այսպիսի օձաքներ այսօր շատ գյուղերում կան, 100-ավոր մի կանգնաչափ օձեր մեջտեղը գլխի թափված՝ հավաքվում են բեի կամ օջախի առաջին և ժամերով վայելում արևի տաքությունը։ Օջախի օձերը ոչ յուրյանց բեի առաջից կհեռանան և ոչ կկծեն։

իսկ Սոնան դեղձի ծառերի տակերն է ժողովում, տանում յուրյանց և հարևան Գալ-ափունենց լայն միջնապատի քարերի վերա շարում, չորացնում։ Բանն այն է, որ ոչ թմբերի խոտն է հնձելով վերջանում, ոչ դեղձն է պրծնում, ոչ էլ մեր ջահելներն են թմբերիցը դուրս գալիս։

— Ը՞ս...ս...ս...

— Ը՞ս...ս...ս...

Առաջին շշուկը լսվում է Հնձանաբաղի դրսից, երկրորդն արձագանք է տալիս ներսից։

Եվ ահա մի բարձրահասակ սևաչյա աղջիկ, առնելով յուր խուլ սուլոցի արձագանքը, շորս կողմը զգուշաբար աչքը պտտեց և ներս սողաց Հնձանաբաղը։

— Մեռա սպասելով, աչքս ջուր կտրեց։

— Ջէր կարելի, մերս հազար բանի ա դնում։

— Նատի՛, ոչինչ։

Աղջիկը նստեց կոկ շարաքարերից մեկի վրա։

Նորա կողքին, բավականին հեռու, տեղավորվեց խուսակիցը։

— Քիչ էլ հեռու, մինթանես (շրջազգեստ) կտրորես, մերս կիմանա, լավ չի։

— Էլ ո՞նց հեռու, քարի պանգին եմ, քիչ ա մնում՝ վեր ընկնեմ, երկուսիս մեջտեղն երկու մարդի տեղ կա։

— Լա՛վ։

Խոսակիցը մի խոր հոգոց քաշեց և մուրացկանի պես վիզը ծռած՝ աջ ձեռքը պարզեց։

Օրիորդը հանդարտությամբ նրան երկարացրեց յուր կողմից ձեռքը։

Առավ անծանոթն յուր կոշտացած մատների մեջ օրիորդական քնքուշիկ մատների ծայրերն և հեռվից շարունակ շփում էր։

Այս գործողությունը կատարվում էր ժամերով՝ լռիկ-մնջիկ։

Բնության հանդարտ ժամանակը, այն էլ միայն գիշերը, երբ ամեն շնչավոր մրափած են և օդն ամենանուրբ է, ամենասուր ականջը շատ մոտից հազիվ կարող էր որոշել երկու անընդհատ միապաղաղ շնչառության ելևէջները։ Ուրիշ ոչինչ ձայն չէր խանգարում Հնձանաբաղի խաղաղությունը։

— Հերի՛ք է, հոտ չառնեն, աշխարհքի մեջ մի մատը մեղր չդառնանք։

Պատասխանը երկու ուսերի վեր բարձրանալն է, որ ժողովրդի մեջ ակամա համաձայնության արտահայտիչ է, այսինքն թո՛ղ քո ասածը լինի։

Տեղերումը շարունակում են պինդ նստել։

Անցնում է էլի կես ժամ, ավել, պակաս։

Մի նոր շարժում, գլխով դեպի այդու ափը ցույց տալով, աղջկա կողմից։

Հոժարակամ համաձայնության նշան՝ գլուխը դեպի աջ ուսը թեքելով։

Աղջկա բարակ մեղրամոմանման մատները պինդ սեղմվեցան ընկերի փայտյա կոշտ մատների մեջ, մի-մի խանդաղատական հայացք դուրս ցոլացին երկուստեք, սևեռվեցան փոխադարձ միմյանց աչքերում, թեղի ծառի թփերը ետ բացվեցան, և մեզ ծանոթ Սոնան արդեն թափ էր տալիս մեծ-մեծ ալանու դեղձերը, քաղլակի մեջ լցնում, ուսի վրա դնում և դուրս գալիս թմբերից։

— Աղջի՛, տարի՞ ա քաշում քո թումբ մտնել-դուրս գալդ,— կըշտամբում է մայրը։

— Է՛, ես ի՞նչ գիտեմ,— սրտատրոփ հևալով փսփսում է, քան թե պատասխան է տալիս Սոնան ու քաղլակը վայր դնում։

Բավական րոպեներ են անցնում, մինչև նորա կրծքի տախտակն յուր վերա բարձրացրած երկու բռնցքաչափ գնդակներով դադար է առնում բարձր ու ցած անելուց։

Սոնան նստել, դեղձ է կլպում։ Երևանի նահանգի դաշտային մեծ այգելից գյուղերի աղջկանց սիրելի պարապմունքն է այս։ Ալանի են անում նրանք, այդ տեղական ազնիվ մրգերից մինն է՝ ձմեռը նորափեսաների զոքանչների կողմից թավազա անելու։ Ոչ այլ ինչ է ալանին, եթե ոչ կլպած, չորացրած, կորիզը հանած, ներսի դատարկությունը մանր ծեծած ընկույզով լցրած դեղձը։

Թնդում է Ալեքենց Բարսեղի կին Մարգարտի սիրտը. նա աչքի պոչով նայում է յուր հոգու ճրագ դստեր վարդանման ու շառագունած դեմքին և ցնծում է ուրախությունից։ Մայրական գորովն արտափայլում է Մարգարտի երեսին. հազար ու մի խառնաշփոթ, ուրախ ու տխուր մտածմունքներ կայծակի պես սլանում են նորա գլխով։ Նորա աղջիկը հասել է, երեսը 15 օրական լուսնի նման ետ է գնացել, սև-սև աչքերը երկայն ու խիտ արտևանունքներով զուգաչափություն են կազմել, թանձր թուխ-թուխ, կեռ-կեռ հոնքերի հետ. յուր Սոնայի չափավոր արծվի քիթը միանգամայն հարմարվել է կիսաձվաձև, կիսակլորիկ ծնոտի կամարի հետ, նորա կխտարի փոքրիկ բերանը բարակ և թափանցիկ շրթունքների տակից փայլին տվող լուսաշար մանրիկ ատամների հետ անգիտակցաբար ետ է բացվում, որ կարմիր այտերի ծայրերին շարունակ խաղացնի համեստ կուսական ժպիտը։ Հապա լայն, փայլուն ճակա՞տը, որի վերին մասը ծածկված է մետաքսյա թաշկինակի տակ, հապա երկայն բարակ մե՞ջքը, եղջերվի սիգապանծ պարանո՞ցը, կանոնավոր իրա՞նը, 12 հաստ հյուսերը վրան ծածանող թիկո՞ունքը,— բոլորը, բոլորը միասին առած՝ մի կատարելություն են ընծայել Սոնայի չքնաղ կազմվածքին, մանավանդ այս րոպեին գեղեցկությունն յուր գահը դրել է նորա երեսին։

Մարգարիտը լուրջ աչքերը դեպի երկինք բարձրացրեց, նորա շրթունքները հանդարտորեն շարժվեցան, նա աղոթք է մրմնջում, գոհանում է յուր բաժին աստվածանից, սուրբ տիրամոր պաշտպանությանն է հանձնում յուր անուշ զառնուկին և մի բարի բախտ է խնդրում։

Իսկ աղջի՞կը։

Նա, ինչպես ասացինք, երեսն արևմուտք, նստած է ծառի տակին, գեղձ է կլպում և ժամանակ առ ժամանակ աչքի պոչով դեպի հարավ է նայում. նա կարծես վախենում է, թե յուր շարժմունքները կասկած կարող են զարթնացնել մոր սրտումը, դեմքն իրան կմատնե, այդ պատճառով նորից աչքերը կորացնում է։

Մայրը բան չի հասկանում, բայց Սոնան հանգիստ չէ. գող, սիրտը գող. նա սպասողական դրության մեջ է։

Այո՛, Սոնայի աչքը երկար ժամանակ որոնում է խաղողի որթերի տերևների միջից մեկին. նրա սիրտն իրեն կրծոտում է. նա մեղավոր է համարում յուր գլուխը, որ այդքան շուտ զրկեց մի ուրիշին երջանկությունից, որ կապել կաշկանդել է նվիրական քարի վերա յուր անմոռուչ խոսակցին։

Գարտական էր Սոնան մտածել. մոտ մի ժամ է՝ թողել է ինքը Հընձանաբաղը, իսկ թեղի ծառի ոստերը դեռ ետ չեն բացվել։

Մարգարիտը ոչինչ նկատողություն չարեց, երբ յուր աղջիկը պատվական խոշոր դեղձերի կեսը միայն կճաթեց, մյուս կեսը շտապով ճզոտեց, սալայի մեջը շարեց, դրեց գլխին և թմբերի միջով ուղղվեցավ դեպի միջնապատը։

— Ը՞ս... ս՞... ս՞...

— Ը՞ս... ս՞... ս՞...

Նորից թեղու ճղնիկները շարժվեցան։

Սոնան մի րոպե կանգ առավ քարի առաջին, գլուխը ծանր տարավ ու բերեց դեպի աջ ու ձախ ուսերը՝ իբրև հանդիմանության նշան և ակամայից պարզ հեղուկը առավոտյան ցողի շիթերի նման ցած իջավ աչքերի աղբյուրակներից։

Նա նոր բան չարեց. նորա աչքերը հետևեցին քարի վերա արձանացած՝ քան թե նստած էակի տեսանելիքին. դիմացի աչքերն արտասունքից ուռել էին։ Սոնան նստեց. Սոնայի մատները նորից շփվեցան։

— Ամոթ չի՞, երեխա ե՞ս,— շշնջաց Սոնան։

— Սպանի՛ր, որ չե՛մ կարողանում, ընչանք ե՞ք, ասա՛ ու պրծի՞, ելի՛, մի անգամ մորթի՛ կամ կենդանացրո՛ւ։

— Ա՛ տղա, ո՞նց ասեմ. ախար էս անտեր երեսը միս ու արյուն ա, դարախանի կաշի հո չի՞, ախար մեր գյուղումն էսպես գլուխը քարը տալ ել լսել ե՞ս, ինչ որ մենք արինք։

— Քո կամքը չի՞, թե չես ուզում, քացով տո՛ւր, դեն քցի՞։

— Ամա՜ն, Սամփսոն ջա՛ն, գլխովդ պտիտ գնամ, էդ խոսքն ինձ մի՛ ասիլ, իմ օրն առանց քեզ սև ըլնի։

— Բաս ես ո՞ր քարովը տամ իմ գլուխը, երկու-երեք կոլոլ տարի ա զուլ ես շինել, ոտդ կոխած տեղն երեսս եմ դնում, աչքդ թեքած վախտը մահս եմ միտս բերում, գիշերը քունս ա փախել, ցերեկը անդնդում կեչեղակ եմ դառել, օրերն իրար քամակից չարխի նման գլորվում են, ընկեր-տղեքանց միջին մատով ցույց տալու եմ դառել. ոչ բերանումս ա լեզու մնացել, ոչ գլխումս՝ խելք. նրանք հազար են հարցնում, ես մին չեմ կարողանում պատասխան տալ. մի ժամանակ գիժ մոգի էր անումս, հիմի ուրբաթախոս են դրել. ուզում ես ընչանք կենամ, որ գեղի գազանները, իշխաններն ու քեդխուդեքը քեզ հափշտակեն, իրանց լոբբազ, պարծենկոտ, հավաղող տղեքանց ճանկը քցեն, ես էլ էս գդակը գլխիս՝ Սամփսոն անումով, ողջ-առողջ գետնի երեսին համ ինքս ման գամ, համ էլ իմ թշնամի՞ն. նա էլ երեսիս բան չասի, հընկեր-տղերքանց մոտ պարծենա, թե էս մի հոգևորի կաքավն իմ թոռն ընկավ. իրիկունն էլ գա քեզ մոտ, մնին տասն ավելացնելով իր գլուխը գովի, ինձ վրա ծիծաղա. դու էլ քիթդ թափ տաս ու ասես՝ աչքն էլ հանեցիր, նա ի՞նչ իմ մարդացու արժան տղա էր...՝

— Սամփսոն ջա՛ն...

— Հետո դու էլ քո թայ ու թուշ (հասակակից ընկերներ) հարս ու աղջիկների մոտ բերնե-բերան քցես, ասես, որ երեք դիր, քաղցր թիքի տեղակ թող ու փեյին փչեցիր աչք ու բողազս...

— Ամո՛թ քեզ, Սամփսո՛ն, որ երկու տարի ա, անպարտն կապել ես ինձ ոտիցդ, քաշ ես տալիս ու էլի վրես կասկած ունիս։

— Աղչի՛, կասկած չեմ անում, գիտեմ, որ թագավորի տղի հետ ինձ փոխիլ չես, բայց քանի՞ քոռ կապեկ ածի։ Էսօր աշունք ա, աստծու բարիքը վերեքվում (հավաքվում) չի, էս տարի գյուղումն ինչքան տղա ու աղջիկ կան, որ քթներն անջախ են սրբում, պսակվելու են. քեզ հայտնի ա, որ երեք տարի ա, ողջ գեղի աչքը քո վրեն ա, սիրունությունդ էլ որ ետ գնենք, հոր մինուճարությունդ, էսքան մուլք ու կայանքը քեզ ա մնալու, եղալի թիքա ես. տեղիցը վեր կենողը գատած ապրանքի ա

ման գալիս, թե որ էգուց եզան նման ականջիցդ բռնի, տա մի գլավնու կամ սուդիի տղի, դու ի՞նչ կանես, կարա՞ս ծպտուն հանիլ, կարա՞ս հակառակիլ։

— Վա՛յ գլխիս, Սամփսոն ջա՛ն, վատ-վատ, սիրտը պատռող խոսքեր մի՛ ասիլ, աստված մի արասցե, աստված ինձ էն օրը մահ տա։

— Տո՛, ի՞նչ մի արասցե, դու չգիտե՞ս, որ երեք տարի ա՝ սոված գիլանոնց նման քամակիցդ հոտոտալով ման են գալիս, չգիտե՞ս, որ ոտդ 13 տարին դրիր թե ոչ, օրը մին ա, խնամախոսներդ՝ տասնումին։

— Ղորթ ա, բայց տեսնո՞ւմ ես, որ հերս չի տալիս։

— Տո՛, էն օրն ասում էր աղջիկս ջահել ա, էս օր ի՞նչ խոսք ունի. տո՛, էս տարի որ քեզ չպսակեց, էս ձմեռ մեր քար ու քանդ գեղի նամարդ ազապ տղերքը ձեր մարագումն անկրակիլ խոտ կթողա՞ն, ձեր բաղերի բարունակներն ու տաշնակները քոքի վրա կմնա՞ն, ձեր գոմումը տավար, ձեր թառերի վերա հավեր կթողա՞ն. չե՞ս իմանում, որ մի կարգ ջահելներ կան, որ տնքանդությունից ու գողությունից ավելի ձեռքներիցը բան չի գալիս. չե՞ս իմանում, որ էգ վախլուկ լապստրակները շալումը մուկն են դառնում, գեղումը՝ կատու։ Հիմի էլ որ քուչովն անց ես կենում, դու ես բերանների մաստակը։

— Է՛հ, հոգեմ դրանց գիժ ու խև գլուխն էլ, իրանց վրա թքողինն էլ. քո մի մուտտառ մազը կփոխե՞մ նրանց գլխի հետ։

— Էդ ես շատ լավ գիտեմ, բայց թե որ խոսքը քեզ հասցնեն, քո կամքը հարցնեն. ոնց որ բռիս միջին գիտեմ, որ էգուց հերդ իմ մուլքն էրվելուց ու կտրատվելուց ազատելու համար աչքերը հուպ ա տալու, քեզ գիլանոնց ոեխը քցելու։

— Դե լա՛վ, գուք էլ շատերից մինը, թող քո հերն առաջկտրուկ անի, գա ինձ ուզի, հերս էլ կտա, շենքով շնորհքով տղա ես, էլ ինչի՞ ինձ զոռ անում, հոգիս կատիկս հասցնում, որ ես մորս ասեմ։

— Աղչի՛, բա դու չե՞ս իմանում, որ հիմի շնորհքն ու խելքը չեն հարցնում. հերդ գի՞ժ ա, որ սուդիա-տանուտերների դնչերին տա, ետ դարձնի, թե ես դասաբ Գալոյի տղին եմ աղջիկ տալու։

— Ցխեմ սուդիեքանց գլուխը, նրանց ամենքի տղերքն էլ մի-մի բլնգյազ անշնորհքներ են, քո ոտը չարժեն, նրանց ո՞վ կառնի։

— Տո՛, ջանիդ մեռնեմ, տղի լավությունին ո՞վ ա մտիկ տալիս, սուդիեքն են քո հորը պետքը, որ էգուց գեղամիջին քամակին կանգնեն պահապան հրեշտակի պես, դու որ սուդիեքանց կամ գլավնու հարս դառնաս, հորդ ոչով չի կարող ասել, թե աչքիդ վերևն ունք կա, ձնից ու արևից ավել ձեր բակն ոչով չի ետ դնիլ. գզիր-յասավուլի ձեն ձեր քուչումն էլ չի լսվիլ։

— Բաս քո հորն ասա՛՝ ամենի աչքն էլ հանի, էգուց գա հորիցս ուզի, նշան դնի, բոլորի բերանն էլ ցխի։

— Հազար հետ եմ քեզ հասկացրել, որ իմ հերը ձեր դռնովն անց չի կենալ. նա գիտի, որ դու մեր ատամի ծամ չես, նա իր ոտն իր կարպետից դուրս չի մեկնիլ։

— Ընչի՞, դուք ումնի՞ց եք պակաս էս գեղումը. ձեր կարողությունը մերիցն ընչո՞վ ա պակաս, մենք էլ երեք բաղ ունինք, դուք էլ. ձեր արտերը մերիցը շատ, ձեր տունը մերիցն ավելի լավ, քո հոր պատիվն գեղամիջումն իմ հորիցն առավել։

— Էդ հո էդպես ա, բայց հերդ խելքը հացի հետ չի կերել, որ գլավնուն Գալ-ափունի հետ փոխի։

— Բաս ի՞նչ անենք։

— Էլի ասե՞մ, երկու տարի ա գլխումդ հալում եմ, դեռ էլի՞ հարցնում ես. հասկանում եմ, դու ինձ շինել ես մի հասարակ ձեռի աղլուխ, քիթդ կսրբես, կսրբես ու մի օր, երբ աբրշմե խաս աղլուխը ձեռդ կընկնի, ինձ դեն կշպրտես։

— Սամփսոն ջա՛ն, խեղճ արի՛։

— Հա՛, հա՛, ի՞նչ ես կորցնում, երկու երեք տարի ա՝ քո շունն ես շինել, քամակիցդ քցել, մի օր մի մսի կտոր չես քցել բերանս. երկու տարի ա՝ ոտիդ տակին փռված եմ, թող էս անլիզու քարը լիզու ըլնի վկայի, ձեռդ բռնելուց ավելի ինչի՞ եմ արժանացել. շունդ շնչիս կպե՞լ ա, երեսս երեսիդ դիպե՞լ ա, բերանս բերանիդ գոլն առե՞լ ա. շորիդ էլ չեմ համարձակվում դիպչել։ Քարասի՛րտ, թե որ սրտումդ սեր կա, ե՞րբ խնայեցիր, ե՞րբ մոտ նստեցիր, ե՞րբ թողացիր մատս երեսիդ կպչի, ասա՝ ե՞րբ։ Մի ուրիշը, որ ներս մտնի Թուխ-մանուկի տունը, էս Հնձանաբաղը, մեզ էսպես տեսնի, չի ասի՞լ խռոված տեքերակիններ ենք. էս քարն էլ էնքան մեծ ա, որ մեր արանքումը հաստափոր գել-Մուկուչին տեղ կանի։

— Սամփսոն ջա՛ն, չէ՞ ես աղջիկ եմ։

— Սաքի նոր խոսք ասեցիր. առաջինն ա, որ խուլ ականջս լսում ա, դեռ մի սաղ տարի հոգիս դուրս եկավ աչքով-ունքով թփերի տակիցը, ծառերի շվաքիցը քեզ հասկացնելով, որ նեքսես օջախ ես վառել. խրրտնած եզան նման օխտը հավողի թումբը մին էիր թռչում, մորդ կուշտն ընկնում. կամաց-կամաց աստված սիրտդ գութ քցեց, սկսեցիր մի տարեն ճամփա հեռվից ջանղալների (խոիվ) արանքից գող կատվի պես մարաղ մտնել, ինձ մտիկ տալ, քիչ-քիչ ոտդ առաջ դրիր, իհարկե, քարասիրտ հո չէիր, տեսնում էիր, թե ո՞նց եմ շլինք թեքել, անխոս քեզ պոնկնոտում, աղաչանք-պաղատանք անում, ո՞նց էի մղկտում...

— Հերիք չի՞, Սամփսո՛ն։

— Հետո, հը՛... հը՛... հը՛... հը՛... քիչ, քիչ, քիչ, քիչ երկար կանգնեցիր մեր միջնապատի տակին, ձեր թփերի միջին, ու շլինքդ ծռած՝ մունջ-մունջ մնացիր։ Ա՜խ, քո ցավը տանեմ, էն ի՞նչ օր էր ինձ համար, ի՞նչ պատկերք էիր դառել, ինչպե՞ս էիր կարմրել առավոտվան նոր ետ բաց էլած կոկոմ վարդի նման ու վռշնել, քիչ էր մնացել ամանչելուցդ երեսիդ կաշին պատռվի, արյունը գնա։ Ըսկի մտքիցս չի ընկնում, ոտներս գետնիցը կտրվել էին, վերացել էի. հենց իմացա, թե էս ա՝ հրեշտակս գրկումս ա, էս ա՝ ջեյրանս իր ոտովն ա եկել. անումդ տվի, Սոնա ջա՛ն, ու մղկտացի։ Գառան նման շլինքդ ծռել, կաննել ես. ոչ ձեն, ոչ ձուն։

— Է՜հ, Սամփսո՛ն, հազար հետ ասել ես։

— Կթողա՞ս մոտդ գամ,— հարցրի քեզ. ձեն չկա։— Սոնա՛, ախար ես քեզ սիրում եմ,— ասեցի։ Դու քարացել, տեղդ մխվել ես։

— Աղչի՛, մի ձեն հանի տեսնեմ, դու էլ ինձ սիրո՞ւմ ես, թե չէ,— հարցրի քեզ։ Էն ի՞նչ քաղցր հրոպպա էր, երկնային թագավո՛ր, բերանդ փակ մնաց, բայց մեռնեմ էդ ծիծեռնակի թև աչքերիդ, որ մի մտիկ տալով սրտիդ սրոը (գաղտնիքը) քեզանից դուրս խլեցին. աչքերդ քեզ մատնեցին. էն ի՞նչ նետ ու գյուլլա էր, որ աչքերիցդ մխեցիր սրտիս մեջ։ Ջանիդ մեռնե՛մ, ասեցի, ու ոնց որ թազին ծլունգ-ծլունգ անելով՝ երկու զոլաջ (մոտ 2 սաժեն) տեղը մին ա թռչում, իր որսի քամակիցն ընկնում, ես էլ պատի գլխովն ինձ ձեր բաղը քցեցի։

— Շա՛տ ճանգդ ընկավ, ա՜յ։

— Հեռու չէիր փախչիլ, համա քո մի մատը թափ տալն ինձ անշունչ քար շինեց, տեղն ու տեղս թողեց. անիրա՛վ, ո՞նց շունչդ բաղի ափումն առար։

— Տեսա՞ր, որ երկօրից էլի ետ եկա, քիչ-քիչ թողացի ինձ մոտ գաս, մենակ հեռու կանգնես։

— Բայց որ ձենի՛դ չարժանացա։

— Ընտուր հնարքն էլ գտար, էլ ի՞նչ ես ուզում։

— Մեռնեմ Թուխ-մանուկի զորությունին, որ թեղի ա դառել, ճրղճղքոտնել, Հնձանաբաղի վրա փլվել իսանորդու չի թողնում իր փեշի տակը մտնել։ Հալբաթ իր կամքն էր, որ մտքումս տուն տվեց, ինձ դպա իրան քաշեց։ Միտք անելով հոգիս բերանս հասավ, թե որտե՞ղ մի խոլվաթ, աչքից հեռու տեղ գտնեմ, քեզ տանեմ, որ մեր գալ-գնալն աշկյարա չըլնի. կարծես մինը կուռս քաշում ա դպա թեղու փչալը, տո՜, մի մտնեմ, տեսնեմ՝ ի՞նչ կա էստեղ ասեցի ու երես ու ձեռ ճղոտելով

ներս մտա, աղջիկներն ետ բաց արի և էս տավակ սև քարը մեզ համար նստելու տեղ ջոկեցի։

— Ես էլ ի՞նչ շուտ կամ եկա՛։

— Անիրա՛վ, դու մտքումդ դրել ես ինձ ողջ-ողջ գերեզման դնել. երկու շաբաթ օձի լիզու թափեցի, քնչանք կարողացա երկու մատդ բռնել ու թեղու տակը մտցնել։

— Դե համ տարար, համ ձեռներս խաղալիք ես շինել, էլ ի՞նչ ես ուզում։

— Ուրի՞շ։

— Ուրիշ՝ էլ ո՛ւս, քանի նշանվել չենք, ըտուց ավելին պա՛ս, աղապ աղջիկն անկտրիլ շամամ ա։

— Բաս մարդ երկու տարի շամամը ձեռումն ունենա ու նրա հոտին չարժանանա՞։ Սպանի՛ր ինձ, Սոնա՛, էլ չեմ կարող, կուզես ճշա՛, աշխարհքը գլխիդ հավաքի՛ր, ես պտի իմ շամամիցը հոտ քաշեմ. ի՞նչ ես ասում, ասա՛, հրամայի՛ր, վճռի՛ր, թող մի հոտ քաշեմ քեզանից, թող մոտ նստեմ, քարի վրա արանք չմնա, մի երեսս երեսիդ առնի, Սոնա ջա՛ն։

Սոնեն լուռ էր։

— Սոնա՛, մոտ նստի՞մ։

Ոչինչ ձայն։

Սամփսոնը մոտեցավ։

Սոնի կողմից ոչինչ շարժում կամ բացատրություն։

— Սոնա՛, կթողա՞ս կուռս շլնքովդ պատ տա՞մ։

Սոնայի պարանոցն ինքն իրեն ծռվեց դեպի Սամփսոնը։

Նրանց շրթունքները մոտեցան։ Երկու ամբողջ տարվա մեջ առաջին համբույրն էր, որ Սամփսոնը քաշեց յուր սիրելուց։ Կուսական սուրբ համբույր։

— Հիմի ի՞նչ ես ասում,— բոպնական գրկախառնությունից հետո հարցրեց Սամփսոնը։

— Ի՞նչ պետք է ասեմ. էս իրիկուն սևերես մահապարտի պես պտի մորս ոտներն ընկնեմ, ամեն բան նրան հայտնի անեմ։ Կասեմ՝ ա՛յ մեր...

Սոնան դողում էր ամբողջ մարմնով, խոսքերը կցվեցան ատամների մեջ։

— Ի՞նչ ես սիրտդ կոտրում, Սոնա՛ ջան, ինչի՞ փոշիմանածի պես դառար. թե չես ուզում, թե ես ուրժանի չէի քո մի պաչին, կարող ես մի շահ-սիլլա տալ։ դեն քցել ինձ, գնալ քո սրտի սիրածին ուզիր։ Փառք աստծու, իրան էլ լավ հայտնի ա, որ էս երկու տարվա մեջ առաջին անգամը շունչս շնչիդ, պռոշս պռոշիդ գիպաչ, վարդի տերևն էլ մի հետ

ձեռը տալով չի սալարում, չի շմքում. թե մի պաչով աչքիցդ ընկա, թե չես ուզում իմն ընկել, կարծի՞ր, թե աստված քեզ մի ախպեր ա տվել՝ օտարությունի մեջ էր, քվերը կարոտել էր, եկավ գրկեց, համբուրեց, սրտի փափագն առավ, ուրախությունից սիրտը պատռվեց, մեռավ։ Հենց իմանում ես՝ դժվա՞ր բան ա գլուխս քեզ մատաղ տալը։ Ջնտեղ նստի՛, գնամ՝ մեր հնձանից դամես բերեմ, կտեսնես։

Սամփսոնը վեր կացավ և գնում էր։

— Ո՛չ, ո՛չ, սխալվում ես, Սամփսո՞ն, տեղդ պինդ նստի,— կուռը քաշեց Սոնան,— զուր ես դամի քամակիցը գնում. գու դամեն բերնումդ ունիս, որ սրտիս մեջն ես ցցել ու խառնում, սիրող սրտի վրա ծիծաղում։ Ես փոշիման չեմ քեզ սիրելուս համար. դու՝ իմ գլուխն ես, իմ ջանն ես, իմ սիրտն ես, գլխիս տերն ես, դու էդ մի պռոշը պռոշին կպցնելովդ՝ չտիրեցիր իմ սրտին. ի՞նչ երկու տարի, ինչի՞ չես ասում երեք, չորս, հինգ... իմացի՛ր, երեխությունից աստված մեզ իրար համար ա արշա քցել, տներս ձեր տանը, բաղերս ձեր բաղին կպցրել, որ իրար հետ մեծանանք, իրար հետ խաղանք, իրար ճանաչենք, իրար սիրենք, իրարից անբաժան մեռնենք դրախտ թե դժոխք՝ իրար հետ մտնենք. երեխությունի տերն ուրիշ էր, մենծացանք՝ ուրիշ փոխվեց, բայց երկսի անումն էլ տեր ա, առաջինը վերջինիցը պարզ սրտով, վերջինն առաջինիցը խելոք մտածած, չափ ու ձև արած, քաղցր ու հաստատ։

— Թե էդպես էր, էլ ընչի՞ մի պաչը քեզ փոխեց, ընչի՞ ուրի տերևի պես դողում էիր քամի չէլած տեղը։

— Ա՜խ, Սամփսոն ջա՛ն, հիմի եմ հասկանում, որ տղի ու աղջկա մեջը սարեր կան, հիմի եմ գլխի ընկնում, որ ինչ բան տղի համար հեշտ ա, ամոթ չի, աղջկա համար սար շուռ տալ ա. քեզ համար ոնց որ մի կում շուր կուլ տալ՝ դժար չի ամեն տեղ նստել, ասել, որ Սոնին սիրում ես, Սոնին պաչել ես, Սոնին ուզում ես, բայց ես իմ ծնող մորս մոտ էլ քաշվում եմ։ Երկու տարի ա դու ինձ զոռ ես անում, երկու տարի ա՝ ամեն օր մտքումս դնում եմ իրիկունը սիրտս բաց անել մորս մոտ ու մուրը կոխելուս՝ լեզուս խպռնվում ա, բերանս փակվում, Զաքարիայի պապանձումն ա գալի վրես, ամոթն աչքերս կոխում ա, արտասունքն ինձ խեղդում ա, ընկնում եմ տեղաշորիս մեջ, գլուխս բարձի տակին պահում։ Ընչաք էսօր էլ իմ տեղերն ամենքիցը շուտ ա վեր քաշվում, թե ինչ ա, մերս հանկարծ բարձիս ձեռը չտա տեսնի, որ թաց ա։ Ա՛յ, հենց էդ միտքն էր հիմի, որ ինձ դողմանի բերեց, ընչունքի հասատատ մտքումս դրի՝ էս գիշեր անց չկացնել, ամեն բան մորս ասել, ոտներն ընկնել, աղաչել, պաղատել, որ մի հնարքով հորս բան հասկացնի, մեր նշանը շուտ վրա բերի ու գեղիս շուն ու գիլանոնցից ինձ

ազատի։ Ինձ համար Սամփսոնիս կոխած հողը հազար գլավնի, սուդիա, Գոգաբարձու, դատավոր-մենծավորի գլխից լավ ա, դու միամի՛տ կաց։

— Ես մեղա աստծու, հոգի՛ ջան, գլուխս քարովը տվի. ես հենց իմացա, թե պաշի վրա հերսդ եկավ։

— Որ էլ մտքովդ փիս բաներ անց չկացնես Սոնիդ վրա ու կասկածանք չանես, էս ես, էս իմ գլուխը, իմ սաղ ջանս, իմ մարմինս։ Որ դու էլ սրանից հետո ղամի ու խանչալի ետևից չգնաս, Սոնիդ համար Սիմավոն ծերունի դառնաս, էս էլ թող ըլի երկու։

Սոնան այս անգամ ինքը փաթաթվեց Սամփսոնին։

Զ

ԱԿԱՄԱ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹՅՈՒՆ

Մարգարիտը ոչինչ նկատողություն չարեց յուր աղջկանն, երբ նա պատվական խոշոր սպիտակ ալանու դեղձերը չկճաթեց, ալանի չլինեց, այլ գլխահան արեց, ճղճղոտեց և առավ գնաց դեպի չնղիլը. ոչինչ բան չասաց նա Սոնային, բայց ինքը յուր մեջ շատ զարմացավ և կասկածի մեջ ընկավ։

— Հենց կարծես իմ Սոնեն չըլնի, քշվածի պես ա երևում. նա ու էսպես բան բռնի՞, ալանու դեղձը ճղոտի, կամ էսպես հաստ կլպոտի՞. կասես եզան մեջքից կաշու զոլեր ա հանած, ափսոս չե՞ն, էլ դեղձերումն ի՞նչ ա մնացել, մսի մենծ բաժինը կլպի վրա ա թողել։ Չէ, երեխիս պինչը, հենց իմանաս, մի մուխ ա մտել. էս առաջինը չի, քանի օր ա՝ մին տեսնում ես կարմրեց, ալվան վարդ դառավ, մին սփրթնեց, անց որ ջուլհակի հորից նոր կտրած կտավ. կուրանա՛ն իմ աչքերը, ես էլ գըլխահան եմ անում, բանի տեղ չեմ քցում, ըսկի չեմ հարցնում։

Նա տեղիցը կանգնեց ու դեպի չնղիլը նայեց։ Սոնան դեռ չնղիլի վրա էր։

— Փառք իմ աստծուն, երեխիս թևերն եկել են, թռչա՛ն ա, թռչա՛ն. էս տարի գեղի ազապներն իրար գլուխ կջարդեն. մեռնի՛մ էն տղի ջանին, որ ինձ նանի պտի ասի ու Սոնիս ինձանից խլի. բերանիս ազիզ թիքեն կտամ նրան, ջանս իրան էլ ղուրբան, իր յարին էլ. մի էն օրը տեսնեմ ու մեռնիմ, գերեզմանիս վրա օխտը թիզ մանիշակ դուրս կգա...

Մարգարիտն աչքը տնկել էր՝ ինքնամոռացության մեջ ընկղմված. նա մտիկ էր տալիս հեռվից յուր միևուճարին ու փառավորվում, այս րոպեիս նա ամենաերջանիկ մայրն էր։

— Մեռնի՛մ մարալին ու ջեյրանին, ո՞վ տեսնի էն սուրաֆի (ձողաշափ) բոյն ու չգժվի։

Մայրն իրավունք ուներ. Սոնան գործը պրծավ և կանգնեց չնղլի վերա. նա աչքերը դարձրեց յուր շուրջը. նրա գլուխը պարանոցի վերա մի-երկու պտույտ արեց եթերի անհուն տարածության մեջ. նա ինքն էլ չէր կարող հաշիվ տալ իրեն, թե ո՞ւր է նայում, ինչի՞ է նայում։

Շատ չտևեց այդ դրությունը. նա ցած իջավ պատից և մտավ խաղողի թմբերը. նա էլ չէր երևում։

Մարգարտի երևակայական ցնորքներին, նրա ուրախությանց հետզհետե տեղի տվին կասկածանքներն ու սրտամաշ տարակուսանքները. մի ժամից ավել ա Մարգարիտն աչքը դարձրել է բոլոր դեղձենիներին և իզուր սպասում է, թե ահա այս ու այն ծառը կշարժվի և դեղձերը թփթփալով գետին կթափվին. շատ չի քաշիլ՝ Սոնան գեղձը քաղլակի մեջ ածած, ուսած, թմբերից դուրս կգա։

Մարգարտի ոտքերն անգիտակցաբար շարժվեցին, բայց շատ չկարողացան առաջ գնալ։ Շուտ-շուտ ծնկները ծալվում և կանգ են առնում։

Կասկածը կրծում է մոր սիրտը. նրա մտքովը մի բան անցկացավ, և նա շտապեց դեպի չնղիլը։

— Հո՛ղն իմ գլխին, ցե՛խն իմ արևին, ես ի՞նչ կանեմ, որ մտքիս (կասկած) ուղիղ դուս գա. մենք աշխարհքումը թուք կըլնենք, Բարսեղն ինձ թավեն կդնի, կտապակի։

Մարգարիտը վեր ելավ չնղլի վերա։ Նրա ձեռքերն ինքնին բարձրացան դեպի երեսը, եղունգների ծայրերն այտերին քսվելով քնթկալի վերայով ծնոտից ցած իջան։

Այդ ամոթի ու նախատինքի նշան է։

— Քոռանա՛մ ես,— գլուխը շարժելով՝ շարունակ դեղձերին էր նայում նա.— էս ո՞նց ա շարել, էս ի՞նչ օրն ա քցել, ցխի պես իրար վրա թափել ա ու թողել։

— Չէ՛,— հաստատ վճռեց նա,— երեխես շիտակ փոխվել ա, նրա գլխովը մի բան ա անցկացել, հենց է՛ն ա, որ կա։

Մարգարիտն աչքերը դարձրեց յուրյանց հարևան Գալ-ափունենց այգու կողմը և հետաքրքրությամբ դիտում էր։

Այգու ափումը Գալոյի կին Զարմանն էր պտտվում, ինքը Գալ-ափուն էլ նստած՝ քթոց էր գործում։

Մարգարտի կասկածը քանի գնաց սաստկացավ, Սամփսոնը ոչ մի տեղ աչքի չընկավ։

Մարգարիտը ցած իջավ պատից, նա գնում էր թմբերի միջով, բայց ինքն էլ չգիտեր, թե ո՞ւր. շատ անգամ ուզեցավ ձայն տալ, բայց կար-

ծեռ, թե մինը նրա շրթունքները հուպ էր տվել, լեզուն չէր շարժվում. և ի՞նչ կհամարձակեր ձայն տալ, հարևանները ե՞րբ են նրա ձայնը լսել, որ հիմա լսեն. մի՞թե կարելի է՝ մի կին այնքան կորցնի յուր գլուխը, որ բաց երկնքի տակին բաթարդիր այգու մեջ այնպես խոսի, որ կողքի հարևան տղամարդը լսի. գետինը վեր խորտակվի՝ լավ չի՞ այդպես ալաչուգի դանչղը (Բոդի վրանի մոտից չհեռացող էգ շունը)։

Երկու անգամ Մարգարիտն այգու թմբերը պուլե-պուլ (թմբերի անցքերը) ման եկավ, բոլոր դեզՀՆոնց տակը տեսավ, անցկացավ մյուս հարևանների կողմը, հեռվից նրանց աղջկանց ու հարսներին էլ տեսնելը. Սոնան նրանց մեջն էլ չէր։

Մարգարիտը գողում էր, լալ էր ուզում, արտասունք չէր գալիս։

— Ջե՛մ կարծում... ո՞չ... ո՞նց կըլնի, էդպես բան ե՞րբ ա լսված, է՛հ...— տարակուսանքների մեջ խորասուզված, անկապ հարցերով ուսերը հաճախ թափահարելով, ձեռքերով, գլխով թերահավատության շարժումներ անելով՝ առաջ էր մղվում նա մի ներքին նախազգացությունից դեպի մեզ ծանոթ Հնձանաբաղը։

Մարգարտի աչքերը մթնեցան, նրա մազերը ոզնու փշերի պես ցցվեցան. մի էլեկտրական ցնցում ամբողջ ոսկրաշարքը դրգռեց. նա վայր կընկներ անշուշտ, եթե մերձակա նշենին հենարան չհանդիսանար. նա գրկեց ծառի բունը և գլուխը դեմ տվեց փտած փուչակին (ծառի փտած խորշ)։

Անտեղի չէր երկյուղը. խեղճի կարծիքն իրականություն է, չհավատացողը թող Մարգարտի աչքերով նայի Հնձանաբաղի թեղի ծառին և որդեսեր մորը շմեղադրի։ Տեսե՛ք՝ ահա թեղու թփոտ ճղճիկները բարձրացան և տակից կոտրած դուրս եկավ,— ի՞նչ եք կարծում, ո՞վ— մոր սրտի սյունը՝ նրա սիրելի աղջիկը։

Սոնան տկանատես եղավ այս տեսարանին. մի վայրկյան նա կանգ առավ, մյուս ակնթարթում երկու մեծ քայլեր արեց, երևում էր, որ նա վազել էր ուզում, մորը բռնել էր ցանկանում, բայց ոտքերն իրեն չէին հնազանդում, աջ ու ձախ կասում էին. Սոնան քարշ էր գալիս, քան թե քայլում էր։

Վերջապես նա մոր մոտ է, տեսնում է մոր դողոցը, տեսնում հեծեծելտանքն ու արտասունքի ցած գլորվելը և չի վոտահանում մոտ գալ, բռնել. նա ամոթապարտ հանցավորի նման երկու քայլաչափ հեռու կանգնել է և յուր ոտքերի ծայրերին շարունակ նայում։

— Ա՜խ,— հանկարծական սուր ճիչ դուրս թռավ մոր կրծքից ու ոտքերը տեղն ու տեղը ծալվեցին։

Սոնան շատ լավ հասկացավ մոր ճչալու պատճառը. թեղու ճղքները նորից բարձրացան, ստվերի պես մինը լոք-լոք տալով անհերևութացավ թմբերի մեջ. սրաթև արծիվը միայն այսպես արագ կարող էր ճղել մրթնոլորտը։

— Սև սրտի աղջի՛կ,— հազիվհազ հեկեկաց Մարգարիտը։

Սոնան չոքեց մոր առաջին, նրա գլուխն ակամայից ցած գլորվեցավ և մոր ծնկների վերա հենվեցավ։

— Հորն ու մոր թքա՛նք, էս ի՞նչ սև բերիք մեր գլխին։

Սոնան միայն հեթհեթում էր։ Նրա արտասունքը թրջեց մոր շրջազգեստը և ներս անցավ։

— Էս ինչ օրի հասցրիր մեզ, ա՛յ գետինը վեր խորտակվես գո՛ւ էլ, քո մերն էլ։

— Նանի՛ ջան,— հազիվ լսելի եղավ աղջկա բերանից։

— Չոռ ու ցավ քեզ, որ քո ծնողի գլուխը դուս կտրեցիր. սև ըլներ քո ծնելու օրը, փորումս չակ ձու կարվեիր, ջուր դաանայիր՝ աշխարհք չընկնեիր, որ էսօր քո հոր անունը հողի հետ չհավասարեցնեիր, աշխարհքի մեջ խոսելու բանատեղ չդնեիր։

— Նանի՛ ջան...

— Սև սրտի աղջի՛կ, թեղու տակին ի՞նչ բան ունեիր, ում՝ մահի տարած, ընչի մեր անունն աշխարհքով մին արիր։

— Նանի՛,— աչքերը շորի փեշովը սրբեց, գլուխը բարձրացրեց Սոնան.— շատ ուրախ եմ, որ դու ինքդ քո աչքովը տեսաք ու իմացար, թե բանն ինչումն ա. երկու տարի ա՝ ամոթը բուկս հուպ էր տալիս, չէի կարողանում ոտքերդ փաթաթվել, սիրտս բաց անել։ Ես խոսք տվի Սամփսոնին, որ օրն էս օր հենց էս իրիկուն մսերքս ուտեմ, սիրտս պրնդացնեմ ու ամեն բան քեզ ասեմ։ Հալբաթ աստված ըսենց էր կամեցել, հալբաթ ինքը գիտեր, որ ես էլի սիրտ չեմ անիլ— էլի կպապանձվեմ ու Սամփսոնին կխաբեմ, քո սիրտը կտրած քցեց, դեսը քաշեց, որ քո բարի աչքովն ամեն բան տեսնես... Նանի ջա՛ն, ես Սամփսոնին սիրում եմ, երկու տարի ա՛ խոսք եմ տվել։

Թե ի՞նչ խոսքեր ասաց, ի՞նչ փաստեր առաջ բերեց, այդ յուրյանց գործն է, բայց մենք տեսնում ենք, որ Մարգարիտը հանգստացավ, նա մինչև անգամ համբուրեց յուր սիրելի գլուխը։ Նա անկեղծորեն հավատացավ յուր աղջկանն և ուրախ եղավ, երբ իմացավ, որ առաջին անգամն այսօր յուր սիրելին անմեղ գրկախառնությամբ ամրացրել էր սիրտ անքակտելի շղթայով։

— Բերանս քսկվեր, բալա ջա՛ն,— ասաց նա,— լեզվիս ծերբեր թռածները ծոցս թափվին ու ոչ քո և ոչ քո սրտաց (սրտակից) յարի գլխը չկտրվի, որ ես քեզ դուր տեղն անիծեցի։

— Քո անեծքն ինձ ու Սամփսոնին օրհնություն ա, նանի ջա՛ն։

— Սրտիդ չառնես, աչքերիդ մեռնեմ, բեր էդ փիալա (ճրագ) աչքերդ պաչեմ. ը՛հ, մեռնի՛մ էս կրակ կորված թշերին էլ ու սրանց դիպչող պռոշներին էլ, մեռնի՛մ թագավորի պես փեսացվի ջանին. նանի գլուխը մատաղ գնա Սոնին ու Սամփսոնին։ Տես անումներն էլ ինչ լավ սազում են, փառքիդ մեռնեմ, աստվա՛ծ։

— Բա՛ս, ափունին (հայրիկին) ե՞րբ կասես, նանի ջա՛ն,— մոր ձեռքն անդադար համբուրելով հարցնում էր Սոնան։

— Հենց էս գիշեր, հենց էս գիշեր տեղը մտավ թե չէ, չեմ թողալ քնի, տամարը կմտնեմ։

— Բա Սամփսոնի մորը բան չես ասի՞լ։

— Թող Զարմանին էլ իր տղեն ասի, աշխարհքը մեր վերա կծիծաղի, թե աղջկեքը գլխները կոխե՞լ էին, որ ինքը գնաց, տղատիրոջ դուռը կտրեց, թե եկե՛ք, աղջիկս ուզե՛ք։

Մյուս օրն երկու հարևանները— Գալ-ափունի կին Զարմանը ու Ալեքենց Բարսեղի կին՝ Մարգարիտը— կտուց-կտուցի տված՝ երկար զրույց էին անում և երկուսն էլ շատ ուրախ էին։

Համաձայնությունն երկուսի մեջը կայացել էր։ Հետևանքը մեզ հայտնի է. ծառի տակին նստած՝ մեզ յուրյանց բերանով պատմեցին Գալ-ափուն ու Բարսեղը, երկար ու բարակ խոստովանվելով իրարու կինարմատի մեծ ազդեցությունը։

Է

ՑԵՑԱԳԵՏԸ

— Բալասան աղե՛ն, Բալասան աղե՛ն,— քլփլոցն ընկավ Օ. գյուղը։

Արդարև, հեռվից երևեցան երեք-չորս ձիավորներ, որոնց ամենքի առաջին գալիս էր պատվական կապույտ նժույգի վերա վեհորեն մի կողմի թեքված մի հաստափոր պարոն։

Ձիավորն յուր ուղեկիցներից երկու ձողաչափ հեռու էր գալիս. այդ նշան էր, որ հետևողները նրա սպասավորներն էին։

Նա միջին տարիների մարդ էր, 45-ից մինչև 50 տարի կարելի էր տալ նրա հասակին, նայելով լայն և կոկ ածիլած երեսի թարմությանը և գեր եզան հաստ կզակի (թափանի հաստ մասերը) նման երեք ծալք իրար վերա կիտված կզակին. միայն ջինջ սպիտակ գլուխը, պաշտոնական նշանակը ճակատին փայլող գլխարկի տակից, 70 տարեկան ալեհորի պատկառելի դեմք էր ընծայում նրան։

Ահա ամեն կողմից գլխարկներ բարձրացան. փողոցում քարերի վերա շարվածները բոլորը ոտքի կանգնեցան, մինչև մեր ձիավորը— Բալասան աղեն հասարակության ողջունին կիսապաշտոնական ժպիտով առանց մի բառ արտասանելու ծռեց գլուխն և առաջ անցավ։

Երկար ժամանակ բազմություններ ոտքի վերա էր. բավական միջոց մի շշունջ չէր լսվում քանի-մի րոպե սրանից առաջ հարայհրոցը երկինք հասցրած ամբոխի միջից։

Վաղուց Բալասան աղեն թեքվել էր դեպի նեղ խոտորափողոցը, կամ կարելի է արդեն իջել, հանգստանում էր յուր օթևանում, բայց ժողովուրդը ոտքի վերա սառած մնացել էր՝ բերանները կիսաբաց և երեսները թեքված դեպի ձիավորի անցկացրած կողմը։

Օտարը կկարծեր, թե գյուղը առասպելական կախարդի անեծքին է ենթարկվել, կամ մի շար հրեշտակ է երևացել ու մարդկանց դարձրել անխոս արձաններ։ Ինչպես ասած է աղոքած էշ էին դառել։

Հակառակ կողմից երևեցավ եվրոպական հին վերարկուն ծածկած մի միջահասակ մարդ։

Նա զարմացավ ամբոխի շփոթ դրության վերա։ Նա կամենում էր հարցնել մի բան, բայց կանգնողներից մինը հազիվ լսելի ձայնով ասաց.

— Գնա՛, խուդո՛, գնա՛, Բալասան աղեն եկավ։

— Մեր աղե՞ն,— բացականչեց խուդոն,— վաղո՞ւց։

Խուդոն էլ պատասխանի չսպասեց. նա լեղապատառ վազեց ետևից՝ ինչպես տիրոջը կորցրած շուն, որ հոտը կառնի ու առանց աջ ու ձախ նայելու մին կվազի։

— Թո՛ւ...— գլուխը թափ տվեց մինը խուդոյի քամակից և նստեց։

— Աշխարհքս էդ շարխի վրա ա պտտվում,— պատասխանեց մի ուրիշը թքանք արձակողին և էլի նստեց։

Ամբոխը կամաց-կամաց յուր նախկին դիրքն ստացավ, բայց էլ առաջվան աղաղակը չկար։

— Տեսնես ընչի՞ ա եկել,— խոսեց մինը։

— Ո՞նց թե տեսնես. տեսնելու ի՞նչ կա, հայլու պես պարզ ա։

— Ախար երեկ-մեկել օրը չէ՞ր էստեղ, զատկից հետո չէ՞ր, որ եկավ զատիկը գեղի պնչերիցը հանեց, շատերի ձեռը ծոցումը թողեց. տարենը Հինգ հետ հո չե՞ն գալ։

— Մենակ մենք հո չենք, եկած կլինի մոտիկ գեղը, մի քանիսի տունը քանդած, բանը պրծած, հիմի եկել ա իր նոր մլքերին մի գլուխ քաշի։

— Ցո՛ չէ՛, ախպեր, չէ՛, մարդը գործ ունի, ինչ ա. խելքներդ չլիս կարճ ա. ո՞նց չեք հասկանում. դրա գալուց առաջ ի՞նչ գոռգոռոց էր։

— Դե գլավնի փոխելու վրա էինք խոսում, բայց դրան ի՞նչ։

— Բաս քամակիցը վազող թազի՞ն։

— Վա՛յ գլխիս, չլինի՞ ուզում ա գլավնի էլ շինիլ. սուդիա շինեց՝ չատ խեր տեսա՞նք. խստակ երեխանց տակի փալասն էլ դուրս կքաշի։

— Ցե՛ց ա, որ մտել ա մեր ջանը։

— Ցեցը նա չի, ցեցը նրա ոտքերը լիզողներն են. ա՛յ, մինը դա, որ քամակիցը վազեց, ինքը որ կա՝ ցեցերի ցեցն ա։

— Էլլիկ չե՞ք (համայնք), հասարակություն չե՞ք, դրան մի՛ լսեք, գեղ կանգնի, գերան կկոտրի. գեղովի խոսքը մին արե՛ք, սև քշեցե՛ք, ձեր կուռն ո՞վ ա բռնում։

— Ի՞նչ հեշտացնում ես. թե մարդ կըլնես՝ ձեռդ սև ծակին մոտեցրո՛ւ, հացդ կերար, թողդ երկինք կբարձրանա։

— Ա՛յ մարդիկ, խոսելու բան չունի՞ք, դուք տանտեր չե՞ք, ցավ ու հոգսներդ պրծել ա՞, ինչ եք էգուցվան գալու բաների վրա գլուխ ցավացնում. ինչ աստված կամեցել ա՝ կգա, ուրիշ բաներ խոսեցե՛ք,— ընդհատեց մի ծերունի ընդհանուր խոսակցությունը՝ նշանացի ցույց տալով անկյունում կուչ եկած մի նորահարս երիտասարդի վրա։

Նորից խուլ լռությունը տիրեց, խոսողների լեզուն բունը մտավ։

— Սա էստեղ չէր, որտեղի՞ց բուսնվեց,— փսփսացին էրարու և մեկ-մեկ քաշվեցան։ Հեռացողը մի արհամարհական հայացքով արտահայտում էր յուր տհաճությունը դեպի երիտասարդն և գնում։

— Ո՞նց հալածակվեցին, ձեր հե՛րն անիծած,— փսփսաց մարդն և ամենքից հետո ինքն էլ քաշվեց։

Ը

ՄԻ ԿԱՐԵՎՈՐ ՄԱՍՆԱԺՈՂՈՎ

Օ. գյուղի արևելյան ափումը, գյուղական տներից 200 քայլաչափ հեռու, ճանապարհից փոքր-ինչ ծռանց, այսօր էլ անցորդի ուշադրությունը գրավում է հողե բարձր ցանկապատի ներսի կողմը եղած գեղեցիկ պարտեզն՝ յուր կենտրոնումը գլուխը հպարտ բարձրացրած փառավոր երկհարկանի շենքովը։

Ճոխ պալատը, համարձակ կարելի է այսպես կոչել, ներքուստ և արտաքուստ ոչինչ բանով նմանություն չունի գյուղական շինություն-

ներին, նրա առաջի պարտեզը միանգամայն զանազանվում է գրացի քնակիչների պարտեզներից և այգիներից։

Մի մեծ շատրվան՝ վճիտ ջրով լիքը ծիծաղում է այցելուի երեսին և ծակում է յուր ձողաչափ բարձրությամբ շաղ տված ջրի հյուլեների փաղմունքով նայողի աչքերը, երբ արևի ճառագայթները հազար կտոր եղած՝ ամեն մի հյուլեն մի-մի շողակնի են փոխում։

Ցանկապատի երկփեղկյա գարվազեն միշտ կողպ է. չի բացվում ջաքաթներով նույնպես և դարվազի միջի դռնակը։

Եթե երբեմն-երբեմն մի կոացած թիկունքով ծերունի, աբխալդի գուրջը հարյուր տեղից կարկատած, ամառները միշտ ոտաբոբիկ, իսկ ձմեռները մի ծակծկված տրեխ ոտներին՝ ներս ու դուրս չանի բահն ուսին դրած, կարելի է ասել, որ տունը միանգամայն անմարդաբնակ է։ Ծերունին միակ բնակիչն է իշխանական պալատի։

— Հը՛, Թաթո՛ս պապի, էսօր քնֆդ տեղն ա, ազեն եկել ա, լավ-լավ կերակուրներ կուտես։

— Ջա՛ռը գնա ջհանգա՛մը, ոտը կոտրի, ըսկի չգա։

— Ընչի՞ ես ըտենց ասում, պապի՛, քո ախպերն ա, ուլուխ չե՞ս, որ նրա նման ազա ախպեր ունիս։

— Ուրախ կըլնեի, որ էսօր շնսատակ ըլներ, իմ ձեռովս նաշը (գազաղը) բռնեի, տանեի թաղեի ու հետո, մի հոգի ենք տալացուկ ասաբծուն, տայի ու պրծնեի։

Տարին մի քանի անգամ ծերունին երկու-երեք օրով կհեռանար յուր կացարանից։

Այդ այն օրերն էին, որ մի մեծավոր երեք-չորս սպասավորներով կգար, կիշներ դարվազի առաջին և ծառաներին կհրամայեր բախել դրոնակը և գարվազեն բաց անել տալ։

Երևի ձիանց ոտնաձայնից արդեն ծերը ճանաչում էր եկող հյուրին։

Նա էլ սպասել չէր տալիս դռան բախելուն, իսկույն դռնակը բաց էր անում, դարվազի կողպեքի բանալին շպրտում գետին ու ինքն առանց աջ ու ձախ նայելու՝ թողում, թոնթորալով հեռանում դեպի գյուղը։

Ահա այդ օրերումն էին, որ տունը կյանք էր առնում։

Վաղուց այդ տան տեղն ագարակ էր. ծերունի Թաթոսն այնտեղ ամեն տարի համեղ դուխմեք և մեծ-մեծ ձմերուկներ էր հասցնում. ագարակի գլխումը շինած մի հատիկ խրճիթումն էլ ինքն էր կենում։

Այժմ էլ այն խրճիթը կա պալատի քամակին։ Շատ աշխատեց Բալասան ազեն խրճիթն էլ քանդելու, բայց Թաթոսը ոչինչ բանով չհամաձայնեցավ։

— Ի՞նչ ես ուզում, ա՛յ գետինը մտնելու,— ասաց նա, գեմ ու գեմ

իր եղբորը՝ Բալասան աղին,— մեր հայրենական կայքից էս մի քյալավեն (ավերակ) է՞լ չես տալ ինձ. վե՛ր կալ, բոլորն ա՛չքդ կոխի. թող իմ մեյիդն (դիակը) էս ծածկի տակիցը դուրս գա, վերջը էս է՛լ քեզանով Սև ծովը, ես հո հետս չե՞մ տանելու էն աշխարհը. մեր չորս ախպորից էլ ո՞վ մնաց. ես էս ա՛ մի ոտս գերեզմանումն ա. դու ես մնացել, մին էլ հեռու ջհանդամներումը կորած պստիկ լակոտը՝ մորդ սիրեկան տղեն, որ էգուց-էլօր, ես գիտեմ, նա էլ քեզանից ավելի օձի կծածը պտի դուրս գա կամ քո խաչովը պտի խաչվի խեղճ Վրթոյի պես, որ գինովացրիր, բերանիցը թուղթ առար, թե իր բաժինը քեզ ա ծախել, ու տուն ու տեղից զրկեցիր, դարդամահ էլավ, ժուռ ու մուռ նշանված մեռավ, նշանածն ուրիշին բաժին էլավ։ Ա՛յ մահի տարած, ասենք ես էի խորթ, հորից մին էինք, մորից՝ ջոկ, ջրատար Վրթոն հո քո մորի՞ցն էր, ի՞նչ կըլներ՝ երկու բաղից մնի կեսն էլ նա ուտեր։

Բալասան աղեն տեսավ, որ իր մեծ եղբայրը շատ պետք է փընթփընթա, ամենքի մոտ իրան միշտ պետք է դատապարտի, վճռեց չքանդել Թաթոսի տնակը միայն մի պայմանով, որ նա յուր պարտիզին ու տներին հսկողություն անի ու պահպանի։

Թաթոսն էլ ուրախությամբ հանձն առավ, մանավանդ երբ Բալասան աղեն թույլ տվեց իրան պարտիզի մյուս ծայրին մի փոքրիկ տեղ յուր համար ագարակ անել։

Բալասան աղեն, հայտնի չէ, թե ի՞նչ նպատակով շինեց այս տունը. նա այդ արեց, երբ պատերազմը պրծավ։

Բալասան աղի կենսագրությունը քաջ գիտեցողներն այսպես են պատմում նրա անցյալը։

Նրա հայր քաշալ Մեսրոբը շատ չքավոր է լինում։ Նա մտնում է Երևանում մի մեծավորի այգեպան և միաժամանակ այգու մեջ շինած ջրաղացին ջրաղացպան։ Կերևի՝ խելացի մարդ է լինում, որ չորս-հինգ տարուց հետո Ս. գյուղումը գնեց երկու այգի և մի ագարակատեղ, որոնց մասին վերը հիշեցինք։

Մեծավորը մի օր տեսել է ջրաղացումը փոքրիկ Բալոյին, հավանել է նրա գեղեցկությունը և վերցրել է յուր առաջին փոքրավոր։

Ինչպե՞ս է լինում՝ աղեն դրան ղրկում է Մոսկով կարդալու։ Նա մի քանի տարի մնում է այնտեղ, անշնորհք է լինում, բան չի սովորում, կիսատ վերադառնում է և մտնում մի դիվանատուն որպես գրագիր։ Երկու տարուց հետո, նրա գլխումն ո՞վ է փչում, Վարշավ է գնում, էնտեղ ձիավոր է գրվում, էնտեղ չին է առնում և ետ գալիս։ Բախտը նրան հաջողում է, լավ-լավ պաշտոններ է ճարում, իր մեծավորների աչքն է մտնում, վերջը պատերազմի տարին, ինչպես է լինում, դրա ձեռքը մի

տեղից մի գումար է ընկնում և դրանով դնում է յուր հարստության սկիզբը։ Ասում են, որ դրան է հանձնված եղել պատերազմից վնասվածներին մատակարարելիք նպաստը. ամենքին լիուլի բաշխելուց հետո իր գլուխն էլ չի մոռացել։ Մեղր ծախողը մատը կլպստի։

Ոմանք էլ պատմում են, թե մինչև վերոհիշյալ գումարը Բալասան աղեն փող էր շինել։ Նա միշտ կատարել է յուր ծառայության մեջ նշանավոր պաշտոններ։ Նույնիսկ յուր պաշտոնակիցները հաճախ ծրարներում դրած դրամական նվերներ են ուղարկել նրան, մի տեսակ բարեկամական կապ պահելու յուրյանց ազդեցիկ ընկերի հետ։ Մի հիմարը միայն չի ուզեցել ճանաչել Բալասան աղայի առավելությունը. վերջը շատ էլ զղջացել է, գլխին վայ է տվել, բայց շատ ուշ. այսօր քաղցած փորով, պալտոյի բամբակները կախկախտված՝ քարշ է գալիս գինետների առաջին, երեխայքն էլ թափառաշրջիկ մուրացկաններ են դարձել։

Ամենից խելոքը վարվել է մի գործավարի օգնական։ Դիվանատան ատենադպիրը հիվանդ է լինում, նրա տկարությունը երկարատև բնավորություն է ունենում, բժիշկները նրա վերջը մահ են գուշակում. մինչ ամենքն ատամները սրած՝ սպասում էին և կողմնակի կերպով էլ աշխատում էին, թե ե՞րբ պետք է մեռնի ատենադպիրը, որ ձեռք բերեն բարձր պաշտոնը, մեր գործավարի օգնականը լուռ ու մունջ գնում է նոտարիուսի մոտ և այսպիսի մի մուրհակ վավերացնել տալիս. իբր թե ինքը պարտ է Վլադիմիր Նեստորիչ Մելնիկովին հինգ հարյուր մանեթ՝ երեք ամիս ժամանակով, մեջն էլ գրավական է նշանակում յուր այգին։

Նրա բախտիցը ատենադպիրը մեռնում է նույն օրը, երբ լրանում է ժամանակամիջոցը։

Դնում է նա մուրհակը ծրարի մեջ մի ուրիշ թղթի հետ, թե ըստ որում չունիմ միջոց վճարելու, ինքնահոժար փոխարենը պատրաստ եմ ձեռք քաշել այգուցս։ Իհարկե, մի փոքրիկ տոմսակով Բալասան աղայի հովանավորությունն է խնդրում։

Հինգ օր չի անցնում, գործավարի օգնականը, որ միևնույն է թե մի գրագիր, ստանում է ատենադպրություն։

Այսօր խելացի պարոնը և՛ լավ հաց ունի, և՛ բարձր պաշտոն. շատ մոտ բարեկամ է մեր Բալասան աղին և օրհնում է Մելնիկովի կյանքը։

Մենք մոռացանք ասել, որ Բալասան աղայի անունը քաղաքավարի լեզվով Վլադիմիր Նեստորիչ Մելնիկով է։ Բավական մեծ վիճաբանության առիթ է տվել նրա անվանափոխությունը. մի մասնաժողով է կազմվել դրա մասին. Բալասան կամ գյուղական կոչումով Բալո՝ Վալոդի խոսքին մոտ է եղել. ինչպես հայտնի է՝ Վալոդին Վլադիմիր բառի փա-

զաքշական կրճատումն է. այդ հեշտ են գտել. դժվարություն չեն կրել և ազգանուն որոշելու ժամանակ. նրա հայրը ջրաղացպան էր և այգեպան. մասնաժողովի անդամներից մինը ցանկացել է բարդ ազգանուն կազմել Սադովնիկով-Մելնիկով կոչումով, բայց մեծամասնությունը հակվել է առավելություն տալ հոր ջրաղացպանությանը, մանավանդ որ կարճ և քաղցր է «Մելնիկով» խոսքը։ Ինքը Բալասան աղեն էլ շատ է սիրել այդ բառը։ Մեծ տարակուսություն է առաջ եկել Մեսրոբ բառը փոխելիս՝ Մոյսեյ, Մինայ, Մեդվեդ, Միտրոֆան, Միֆոդի և ուրիշ շատ Մ տառով անուններ շարել են, երբ տեսել են, որ ոչ մինը չի սազում, ընտրում են Ն-ով Նեստոր անունը։ Մեկը միայն հակառակել է, ասելով թե Նեստորը վիրավորական է, նա եկեղեցու հակառակ հերձվածող է եղել, բայց ինքը Բալասան աղեն ասել է, որ եկեղեցուն նշանակություն չպետք է տալ, Նեստորը խելոք մարդ է եղել և այդ իր համար սիրելի է. ուստի և ջնիռ են կայացրել Բալասան աղին մեծաբանել Վլադիմիր Նեստորիչ Մելնիկով պատվանունով։ Յուր ցանկության համաձայն՝ այսպես էլ կոչված է նա յուր ծառայության ցուցակի մեջ։

Գ

ԳՅՈՒՂԵՐՆ ԷԼ ԵՆ ԼՈՒՍԱՎՈՐՎԵԼ

Երեկո է. վերոհիշյալ պալատի վերնահարկի պատուհանները լուսավորված են. վերնահարկումը ոչ ոք չկա, մի փոքրիկ սենեկում միայն ճահճակալի վերա, խալաթը հագին, նստած է ճաղատ ճակատը բաց մեկը. նա քրքրում է սեղանի վրա գրված պայուսակը։ Նա հանեց մի կապոց մուրհակներ և սկսեց մի առ մի թերթել։

— Այս մե՛կ. սա մեզ շատ հարկավոր է, ատամնաշոր կծան շուն է, պետք է ժանիքը փշրել, ժամանակն էլ լրացել է։

Նա ետ դարսեց մուրհակը։

— Այս երկո՛ւ,— ձեռք առավ նա մի ուրիշ թուղթ.— սա ծակերում հաշացող է, կծել չի կարող։ Այս երե՛ք. հերիք է սրան տոկոսից մի ընչին բան կոտրել, և ահա յուր հարազատ եղբոր տակը կփորի։ Այս չո՛րս, հի՛նգ, վե՛ց, յո՛թ,— շուտ-շուտ մուրհակների տերերի անունները կարդալով, ինքնագոհ ժպիտն երեսին մի կողմն էր ետ գնում նա,— սրանք բոլորն էլ իմ գործիս ու նպատակներիս կգան, բավական է միայն իմ կողմից մի թեթև հրաման։ Է՛հ, ի՞նչ եմ երկարացնում,— նորից խառնեց նա մուրհակների ծալքը,— ոչ գյուղն իմ ստրուկն է, և գեռ երկմբտում եմ։ Գեռ մի դրամագլուխը հաշվեմ, տեսնենք՝ որքա՞ն կլինի,— ասաց նա և հանգիտը վերցրեց մեկ-մեկ քցեց։

— 55.000 մանեթ. օ՜հ,— բարձրաձայն կանչեց նա,— էս գլուխը, իսկ եթե տոկոսը, տոկոսի տոկոսը վրան գալու լինենք, ո՞ւր կերթա, 70.000-ից կանցնի... Ո՞վ է,— ձայն տվեց Բալասան աղեն դռան սենեկի հաղորդին։

— Ես եմ, աղա ջան։

— Դու ե՞ս, Խուդո՛, նե՛րս արի։

Խուդոն խոնարհ գլուխ իջեցրեց, ձեռքերը սրտին խաչած կանգնեց։

Մեզ անծանոթ չէ Խուդոն. սա այն մի հատիկ գյուղացին էր, որ մեջ մտավ Մելիք-Բաղալի աճրդի ժամանակ և էլի շուտ փախավ. մենք չենք նկարագրիլ սրան. շատ չի քաշել, ինքն իրան գլուխը ցույց կտա. այսքանը միայն իմանանք, որ Բալասան աղայի ընդհանուր կառավարիչն էր Օ. գյուղում և առաջին հավատարիմը։

— Ի՞նչ եղան,— հարցրեց աղան։

— Մի-երկուսն եկել են, գլխիդ ղուրբան, բայց մնացողները հենց իմանաս փախս են տալիս. Մելիք-Բաղալը, սաքի թե, գլխացավ ա բռնել, տեղն ա մտել քնել. ոնց որ տեսնում եմ՝ աղվեսասատկ ա տվել. մինը հանդն ա գնացել, մեկելը ջուր ա ջրում, Ղազարն էլ ասում էր, թե թուրքերը նախրիցը մեր կովը քշել տարել են, մաշադի Նասիր-Բեգին երեք մանեթ եմ խոստացել, գնացել ա տեղն արել, գնում ենք ետ բերելու. իմ կարճ խելքովն ամենքն էլ մհանեք են սարքած, դրանք պտի հավաքված ըլնին Մելիք-Բաղալի տունը, դուռը ծածկած՝ Արտոյի համար քար հավաքելու պատրաստություններում ըլնին, չեն ուզում գալ։

— Տո՛, գի՞ժ ես, ի՞նչ է, անգե՛ռ հայկան, ձողու պես բարձրացել ես, տարին տասներկու ամիս զորությունս տեսնում ես, գիտես, որ թրիս երկու կողմն էլ կտրում է ու էլի դուրս ես տալիս, թե չեն ուզում գալ, ի՞նչ կհամարձակվեն, թող մի չգան, տեսնեն։

— Աղա՛ ջան, որ Արտոյի քարը դուս գա, ի՞նչ կանենք, էդ թղթերի կեսը ջուր կդառնա։— Խուդոն գլխով ցույց տվեց սեղանի վրա դիզված մուրհակները։— Համա դու ինձ գլավնի շինի, տես ո՞նց եմ տարին չբոլորած շղշկան մանեթներն առաջիդ կիտում. տես հինգ-տասը մանեթով ո՞նց եմ քեզ հազարներ ածող քաղերի ու մեին հարիր արդում (արդյունք) տվող հողերի տեր շինում. հո՞ գիտես, որ ձեռիցս կգա։

— Դե՛, ձայնդ քեզ քաշի՛ր, կո՛վ, դու էլ կարծում ես, թե քո շնորհքն է, որ այսօր մարդամեջ ես խառնվել ճոպտում ես. տո հիմա՛ր, ես որ Ավդալովին չխնդրեի, քեզ ձիավոր չգրել տայի, վերջը զեմսկի ստրաժի ուրյադնիկ չանել տայի, քեզ ո՞վ շան տեղ կդցեր. տո՛, ասում են՝ ձի թիմարելու շնորհը էլ չես ունեցել. տասն անգամ ուրյադնիկը գանգատվել է Ավդալովին, թե ձեռքիցդ ոչինչ շնորհք չի դո՛ւս գալիս, բայց նա

հրամայել է իմ խաթեր պահել։ Տո՛, եթե ես ամեն բանում քեզ չհովանավորեի, հացի տեր չանեի, դու հիմի՞ որտեղ կլինեիր, քեզ ո՞վ սուդիա կշիներ։ Կորի՛ աչքիցս, հիմա՛ր ապերախտ, լույսը չբացված՝ իմ դիմաց կշիներ։ Կորի՛ աչքիցս, հիմա՛ր ապերախտ, լույսը չբացված՝ իմ փողերս բե՛ր, որ հինգ տարի է՝ առանց շահի վրադ տնքում է. ես կարողեմ առանց քեզ իմ պարտքերս հավաքել. բավական է, որ Արտոյին կանչել տամ, երես տամ, դռանս շունը կդառնա, իսկ եթե էգուց մլքերդ ծախել տամ, փողս վերցնեմ, դու քաղցածությունից ճաշին կքնես։

Խուդոն տեղն ու տեղը չոքեց։

— Ես գլուխս քարովը տվի, ոտներիդ մեռնիմ, քո մի բալի գլխովը պտիտ տո՛ւր ինձ ու աչքդ վրիցս մի՛ հեռացնիլ. ես քեզ բարկացնելու մտքով չասեցի. խոսք էր. լեզվիս տակից փախավ։ Ողջ գեղն ու մհալն ա վկա, որ ես, իմ կնիկը, իմ երեխեքը, տունս տեղս քո ծոխանքաջրովն (աման լվացած ջուր) ենք ապրում, քո թիկունքովն ենք մարդամիջի մարդ, թե չէ ես ո՞վ, Խուդո բեգն ո՞վ։

— Հո հիմի հասկանո՞ւմ ես։

— Ջանս էլ չի դուս գալի՞ս, ինձ ոչով գզիր չէր շինիլ, որ թե սուդիա ու էգուց՝ գլավնի։

— Ադա՛, ա՛յ գլխամեռ, իրա՛վ, ինչպե՞ս ես դատավորություն անում. ախար դու գիր չգիտես,— ժպիտն երեսն առած քաղցրացավ աղան։

— Տո՛, գլխիդ, արևիդ մատաղ, ո՞վ՝ ա բան հասկանում, որ ես հասկանամ. սարքի, հոգի ունիմ տալացուկ, տեղն եկած վախտը մարդ պտի ճշմարիտն ասի, մեր էս ողջ մհալումը նոր օրենքները հասկացող գլավնի միայն Արտոն էր, որ կար, վեց ամսից զզվացրինք՝ թոցրինք, թե չէ ի՞նչ դատաստան, ի՞նչ կարգ ու կանոն, մենակ պիսըլն ա խզմզում ու սուդիեքս էլ՝ ձեռք գիտցողը ձեռք ա քաշում, դալամ չիմացողի տեղակ էլ ետ ինքը պիսըլը գրում ա ու տակն ավելացնում, թե «գիր ոչ գիտենալով՝ խնդրանոք գրեցի և վկա եմ»։ Հենց էս դրսի ֆորմերն են, թե չէ էլ ետ վաղուցվան տանուտերությունն ա, դատաստանն օր առաջ տանուտերն իր քուրսու տակին ա տեսած ըլնում ու փողերը ջեբն ածում, մենք էլ մի դհիցն ենք մեզ համար ճանգում ու ծծում. նորը հնից ընդով ա ջոկ, որ առաջ ուտողը մին էր, հիմի՝ մի քանիսը։

— Էդ թո՛ղ, եկողներն ո՞վ են։

— Դարբնենց Մատոն ու Փոշմանենց Սարոն։

— Փողերը բերել ե՞ն։

— Դեռ, աղա ջա՛ն, փողի վրա խոսք մի՛ քցիլ։

— Հետո դրանց ձեռքներիցը բան գալիս է՞։

— Ո՞նց չէ, աղա ջա՛ն, մինն էսօր գլավնու կանդիտատ ա, մեկն

էլ ամբարդար ու ըսպորշիկ՝ սարքի խարջ հավաքող, երկուսի դունչն էլ մեղրի միջին թաղված ա. մեր գլավնին Սարոյի հետ չէ, որ իր կանդիտատն ա, համա Մատոյի հետ մին են, ամբարի ցորենը քամուն են տվել պրծել, հավերի կուտ էլ չի մնացել. երկու շաբաթ ամեն դիշեր դուս էին տալի, էշակշու քարավանով ղրկում Երևանա բազարը, ծախում, վերջը մի գիշեր էլ տան ծածկը քանդեցին, թափեցին ու ախտ (ակտ) գրեցին, թե ամբարը քանդվեց, ցորենը հողի հետ խառնվեց, խարջ հավաքելուս էլ խարջի չափ մասրաֆ (գյուղամիջի եղած ներքին ծախք) են քցում ու հավաքում, իրար հետ լափում, քանդե՛լ են գեղը, քանդե՛լ։

— Լա՛վ, լա՛վ, կանչի՛ր՝ ներս գան։

— Հա՛, աղա ջա՛ն, լավ միտս եկավ, յախես ազատի՛ մեր լակոտի ձեռիցը։

— Ի՞նչ լակոտ, Խուդո։

— Իմ շան տղի՝ մեր երեխի, քեզ ծառա Կարոյի. գլուխս տանում ա, թե՝ Ալեքանց Բարսեղի աղջիկն ինձ համար ուզի՛։

— Տո՛, գետինը մտնես, ես լսել եմ, դու էդ ի՞նչ գլուխդ քարովն ես տալիս, ուզում ես քեռուդ թոռն ուզիլ տղիդ. բաս դու աստվածանից չե՞ս վախում, գլխիդ կրակ կթափի երկնքից։ Դու հիմի սուտ չե՞ս հաչում, թե Կարապետն է զոռ անում, հիմի քո միտքդ չէ՞ Բարսեղի կայքին տիրանալ, արի ուզիղն ասա՛։

— Քո ոտն իմ գլխիցը շատ գիտի, էն ա հասկացել ես. մեր պապի ետ քցածը քանց Պետրոսենց Գալոն տանի ուտի, ուշունց տա, հազիր մենք ուտենք, օղորմի տանք։

— Ադա՛, էդ ո՞ր ճանապարհովն ես ուզում անիլ։

— Քո սայովն (օգնությամբ), իմ գլխի տե՛ր ու տիրական ջան։

— Ա՛յ անհոգի, մի տես ինչքա՛ն չհաս է, մեջն արյուն է խաղում։

— Է՛հ, աղա ջա՛ն, քո ձեռին չի՞, արյունն էլ կցամաքացնես, չհասն էլ հաս կանես։

— Քանի՞ պորտն է։

— Պորտի ու փորի հետ ի՞նչ բան ունիս, աղա ջա՛ն, սուտ չկա՝ հա։ լալ քեռուս թոռն ա, որ ուզում եմ իմ Կարոյին։

— Աղջիկը շա՞տ է սիրուն, որ տղեդ գժվել է վերան։

— Քո մեղաց պարտական ըլիմ, թե աչքս աչքին առած ըլնի, կամ Կարոյի մտքովն անց կացած ըլնի. մլքերի համար եմ ուզում։

— Ասում են՝ աչքի մեկը կույր է, տնաքա՛նդ,— հեգնեց Բալասան աղան։

— Տո՛, թող քաչալ էլ ըլնի, գլխիդ մեռնիմ, իր բաղերի թփերիցը

ելքաղենք, գլուխը կծածկենք, իր հավողի պտղները աչքը կդնենք, պիպիկ (բիբ) կշինենք. երեք էնպես բաղ ունի, մի քանի էն տեսակ բարեկի հաղեր ունի, որ օխսը ձեռնանի ախպոր պես ամեն վախտ նեղությունից կհանեն։

— Ա՛յ գետինը մոռած, ախար Գալ-ափունի տղեն մեղք ա, ասում են՝ երկու տարի ա իրար սիրել են, ասում են՝ հաստատ խոսք են տվել-առել, էգուց, էլօր նշան պետք է դնեն։

— Է՛հ, աղա ջա՛ն, էն վաղ էր, որ նշանն ու հաստատ խոսքն անց էր կենում, հիմի պսակված կնիկն էլ, ասում են, մարդին չի հավանում, թողում ա գնում ուրիշի կողքը տաքացնում. հիմի, ասում են, աշխարհքը լուսավորվել ա, գեղերն ընչի՞ չպտի լուսավորվեն։

— Բաս մեղք չի՞։

— Մեղքն ու վարձքը ձեր չինովնիկներիցն ու գիտուններիցը հարցրո՛ւ. ասում են հիմա էս ա դուս գնում. տեսար մնի կնկա աչքումն եղ կա, ուժումդ կա, գլխին բամբաչի՛, ձեռիցը խլի՛։

— Է՛, շատ լավ, ասենք թե հոգիներս մի քիչ ժամանակ սևենք, քանը գլուխ բերենք, ես ընչո՞վ պետք է հոգուս ճանապարհը մաքրեմ, չէ՞ որ այս մեղքը քավել կուզի, ժամպատարագի խաչհամբույր է պետք, որտեղի՞ց։

— Քո գագաթը ողջ կենա, քիչ կա՞, տեսնո՞ւմ ես պստի Մասիսը, խուդոն ժպտալով աչքով ցույց տվեց մուրհակի կույտը։

— Ա՛յ անպիտան, ադա՞, դու բոլորովին մուֆթախոռ (ձրիակեր) ես եղել, դեռ տանուտեր չես դառել աչքդ ուրիշի դռանն է։

— Ընչի՞, քեզ մատաղ, երեք տարի ա սուդիա չե՞մ։ —

— Ուրեմն շատ կաշառք ես կերել։

— Քո գլխովն եմ երդում ուտում, անհատնում աղբյուր ա, որ լիուլի խմում ենք ու քեզ կյանք ու ուրև խնդրում։

— Չէ՛, խուդո՛, չէ՛,— լուրջ դեմք առավ Բալասան աղեն,— շատ դժվար գործ է այդ, մինչև գործակալին ու վանքումը բան կհասկացնեմ, մինչև ճանապարհը կգտնենք, հոգեհան կլինենք, իհարկե մեջտեղը փոշ կխաղա, առանց գրան չի լինել, այդ ամենն լուր կարդին դու կքաշես, բայց պետք է ինձ հաստատ խոսք տաս, որ պսակվելուց հետո Բարսեղի վերի բաղն ինձ տաս։

— Ողջ տուն ու տեղս քանն ա, ադա ջա՛ն, բայց ես Բարսեղին ո՞նց խոսք հասկացնեմ. նա քանի կենդանի ա, մեզ մի լոփ չի տալ, որ աչքներս կոխենք։

— Դու էսօրվանից ինձ խոսք տո՛ւր, մնացածն իմ վզին։

Ինչպես երևում է՝ խուդոյին շատ հաճո չեղավ լուր պառաստանի առաջարկությունը. նա հաստատ գիտեր, որ Բալասան աղան այս անգամ կատակ չի անում. այն էլ իրան քաջ հայտնի էր, որ աղայի համար դժվար չէր ամեն ճանապարհ հարթել. խեղճն ստիպվեց ծործորակը քոքելով կամաց քրթմնջյունով արտասանել.

— Քո ցավը տանի, աղա ջա՛ն, էնքան ըլի դու բանը գլուխ բերես, Կարոյիս գլուխը մեղրի պուկումը թաղես, էն մի բաղն էլ քո գառը բալուկին՝ պստիկ աղին. Ջալաբու հավողն ա, դու էլ կեր, մենք է՛լ։

— Որ այդպես է, գնա ներս բե՛ր այն պարոններին։

Ф

ՎԱՍՆ ՄԵՂԱՑ ՅՈՒՐՅԱՆՑ ԽՈՆԱՐՀ ԵՂԵՆ ՀՈՒՅԺ

Վսեմ քայլվածքով, ձեռքերը խալաթի գրպանը դրած՝ չափում էր Բալասան աղան սենեկի հատակը, երբ դուռը բացվեց և խուդոյի առաջնորդությամբ շարվեցին յուր առաջին երեք հոգի և բարի գալուստ մաղթեցին նրան։

— Օհո՛, դու է՞լ, սուդիա Դավի՛թ, մեր խուդոն քեզ համար բան չասա՞ց։

— Ես նոր եկա, աղա ջա՛ն։

— Էլ ի՞նչ փորացավանք ունիս։

— Դեռ սրանց հրամանք արա՛, հետո կխոսենք։

— Սրանց ի՞նչ ունիմ ասելու, ես չեմ կանչել. մեր խուդոն եկավ ասեց, որ ուզում են ինձ տեսնել։ Իհարկե պետք է գային, իրանք իրանց պարտականությունը գիտեն. Մատոյի պարտքի ժամանակը մի շաբաթ է՝ լրացել է, Սարոյինն էլ երկու օր կա. շնորհակալ եմ, գիտեն, որ ինձ փող է հարկավոր, բերել են. սպասեք մուրհակը հանեմ։

Աղան ձեռքը ծոցը տարավ և մի քանի թղթեր հանելով՝ սկսեց քրքրել։

— Նեղություն մի՛ քաշիլ, աղա ջա՛ն,— միաբերան խոսքը դուրս թռավ երկուսի լեզվի տակից.— մենք պատրաստությունով չենք եկել, սուդիա խուդոն մեզ կանչեց։

— Թե չէ գալու չէի՞ք։

— Պետք ա ժամանակ տաս, աղա՛ ջան, թուղթը նորեն։

— Բերան չբաց անեք, Նեսկոն մեռնի, թե սուտ եմ ասում, մինչև վիզս թաղված եմ։

— Խնդրում ենք կենտ երկու ամիս, բամբակը գնումն ա՝ չանան քենք, չդրխենք մաշինումը, ծախենք, մեր հոգու պարտքը տանք։

— Մի օր չեմ կարող համբերի, պետք է, Նեսկոյիս արևն եմ ասում, տանը հաց չկա, երեխա ծախելու տարի ա։

— Կարասները գինով լիքն են, քնջիթը դային-խանումն (շիրբախ-ան ձիրանանք) ընկած ա, հերթ չկա, խալվարներով չալթուկին էլ տեղ չկա, բայց որ ոչ հանած ա և ոչ գին ա գնում, ժամանակ տո՛ւր կիսագնի ջուրը չլցնենք։

— Մարդ եք, հասկացե՛ք, գրպանումս մսխելու կոպեկ չկա, ոռճկիս արտն է՛ն գլխիցն եմ հնձել, կնկանս շոր չունի, ինձ փող է հարկավոր, էգուց ևթ, դրա համար եմ բանից, գործից ավարա եղել, եկել. ես հո ձեզ պես անգործ մարդ չեմ, մի օր եթե ղուլլուղի գործը ետ թողամ, տնով-տեղով սիբիրական կըլնիմ։

— Ի՞նչ անգործ մարդիկ ես գտել, աղա՛,— ասաց տանուտերի կանդիդատ Սարոն,— գարունքը գալիս ա՝ մատներիս միսն ուտում ենք, գիշեր-ցերեկ տնորդովի շան նման տանջվում ենք, հետն էլ գեղամիջին հասարակության ցավն ենք քաշում, խախալի (ցորենի մաղ) գլուխը մի բան չենք քցում, էլի երեխեքը տկլոր, էլի մի կտոր ցամաք հացի կարոտ. դե՛, ո՞ւր ա գնում մեր աշխատանքը, իհարկե քո հրամանոց քիսեն ա մտնում, գլուխս քարովը տվի, ասացի իմ պապի արհեստը թողամ, սովդյաքարություն անեմ, եկա՝ քեզանից 150 մանեթ վեր կալա. էս ա հինգ տարի ա, հինգ էնքան տվել եմ, դեռ 500 մանեթ էլ կա։ էլ ի՞նչ ես ուզում, աղա ջա՛ն. խալխը գնում են, բաղ են տնկում, հողագործությունի մեջ կյանք ու արև են մաշում; տավար, ոչխար են պահում, արևի տակին, սարերի թմբին գող ու ավազակի, գել ու գազանի հետ են կռվում, թե ի՞նչ ա՝ մի կտոր ցամաք հաց գտնեն իրանց երեխեքանց համար. դու քո հրամանքդ ամառը յայլաղների (ամառանոց) հովերումը, ձմեռը գոգռան (բորբոխված) բուխարու կողքին կակուղ բարձի վրա թինկն ես տալիս, էլ գեղացու վրա միտք էլ չես ցավացնում, հիմի էլ եկել ես, երկու ոտներս մի մաշիկ դնում (ստիպել), բողազներիս չոքել ես, թե տվե՛ք, հե՛ր օրհնած, մեզանից էլ լավ կթի կովե՞ր. ոչխար չենք, բաս ի՞նչ աստծու կրակ ենք, բուրդներս խուզի՛, մլքիդ եկամուտը անքըրտնել, անհնձել տուն ածա՛, պատրաստ բրդած կերակրի գլխին նստի՛ ու աստծուն փառք տո՛ւր։

— Դե՛, անպիտա՛ն փուչ,— հանկարծ կրակ կտրվեց աղան և ինչպես թնդանոթի պայթյուն՝ տունը լցրեց իր խրոխտ ձայնով.— ո՞ւմ գլխին ես գայլի ավետարաններ կարդում, ո՞ւմ հետ ես կաստամանին քցել (խոսակցել), քաղցր զրույցներ ու կծու հանդիմանություններ անում։— Мужик ты этакий! Նո՞ր ես իմանում, որ տասնապատիկը կստանամ, քեզ համա՞ր եմ դառը քրտինք թափել. քամակիցդ վառած

մեղրամոմե՞ր ուղարկեցի, եկա ո՞տքդ, խնդրեցի, որ գաս ինձանից փո՞ղ տանես. հենց գիտեիր, թե փողը ցանա՞ծ է. դու ժամանակին բիրիր պարտքդ տվիր՝ ես չվերցրի՞։ Կորի՛ այս բոպեին, իմ փողերս բե՛ր, թե չէ էգուց վիզդ պարան կքցեմ, սուդի դուռը քաշ կտամ. շո՛ւտ, ասում եմ։

— Բաշխի՛, աղա ջա՛ն, հանաք էի անում. ես չասացի, որ նեղանաս։

— Ջա՛յնդ, անտաշ անպիտա՛ն, ո՞ւմ հետ ես հանաք անում, ես քո հանաք ընկե՞րն եմ, չափդ ճանաչի՛ր, տես ո՛ւմ հետ ես խոսում, մուժի՛կ գյուղացի, սկատինա՛, անասո՛ւն. չորացի՛ առաջիս, ուղիղ կանգնի՛ր, սմիրնո՛, պոդլե՛ց, սվինյա՛, բերդումը կփթացնեմ քեզ, դու չինովնիկի հետ հանաքներ ես անում, հա՞, երես տվի, աստառ է՞լ ուզեցիր։

— Գլուխը քարը տվեց, գլխիդ մեռնեմ,— մեջ մտավ սուդիա Դավիթը։

— Մեր գլավնու կանդիդատ Սարոն լավ մարդ ա, աղա ջա՛ն, նեղրի՛ր, դա միշտ իր գլուխը քեզ համար ետ դրած ունի,— առաջ եկավ Խուդոն։— Ինքը մի քիչ հանաքչի ա. մեզ որ ասում ա՝ ծիծաղում ենք, հենց իմանում ա, թե ամենքին էլ մի գազով կչափեն. դե էշ գեղացի ա, ի՞նչ ա իմանում, թե մուժիկն ո՞վ ա, չինովնիկն ո՞վ։

— Ջոքի՛, Սարո՛, չոքի՛ ոտը պաչի՛ր,— կուռը բռնեց ու կռացրեց Դավիթը.— մեր աղեն ա, թող իր քաղցր բալին (երեխա) բաշխի։

Խեղճ Սարոն ծնկների վրա եկավ և լուռ գլուխը ծռել էր։

— Հետո փողերս ե՞րբ պետք է տաս։

— Մի-երկու ամսից, աղա ջա՛ն, կվերջացնեմ։

— Տո, վեր կա՛ց, ա՛յ տխմար,— նորից բաղցրացավ Բալասան աղան.— դու որ քո անգետ գյուղացիությունովդ հանաք գիտես, բաս մեծավորներս չգիտե՞նք. տեսա՞ր՝ ոնց փորդ կատու քցեցի, չէ՞ որ ես էլ քեզ էի փորձում, հա՛, հա՛, հա՛. այ հիմար, քեզանից ո՞վ ա վող ուզում։

— Կատվին խաղ ա, մկանը մահ ա. լեղիս ջուր շիննցիր, գլխի՛դ ծատաղ. ախար ես էլ զարմացա, էնպես բան չասացի, որ սրտիդ դիպչի,— կմկմաց Սարոն։

— Դու էլ սրա պես, էլի՞, Մատո՛, թուղթը նորո՞ւմ ես։

— Հա՛, աղա ջա՛ն, ժամանակ տո՛ւր։

— Ա՛չքիս վրա, էգուց գնացե՛ք, երկուսդ էլ մուրհակներ գրել տվեք, «ըստ առաջին պահանջման», գլավնու փեշատը թեկուզ չլինի էլ, վնաս չունի, բայց դնել տվե՛ք. եթե գյուղումը վեքսիլ թուղթ չճարվի, ինձ մոտ կա, երեկ կոզնաչեյը տվեց. թե քեզ մոտ շատ եկողներ են լինում՝ ծախի՛ր, խաղնին փող ա պետք։

— Մի՞թե խաղնեն էլ կարիք ունի, աղա ջա՛ն,— հարցրեց Խուդոն։

— Հենց էդքա՞նը. օրն էգո՛ւց։

— Ղո՞րթ, աղա ջա՛ն։

— Նեսկոն մեռնի, թե սուտ եմ ասում։

— Վա՛յ, ես քո ոտքերին ղուրբան գնամ։

— Տո, վատը դո՛ւք եք, դո՛ւք, ա՛յ անաղուհաց շնե՛ր, ես միշտ ձեր քամակին մեծ Մասսի պես կանգնած եմ, բայց դուք չեք հասկանում, ձեզ լավ հայտնի է, որ էս ուեզդումը գեղ չկա, որ ինձ պարտ չըլնեն— Վաղարշապատ, Աշտարակ, Եղվարդ, Փարբի, Բիրական, Շարուր, Դարաչագյաղ— բոլորն իմ ճորտերս են. քաղաքումը բանկերն են ինձ պարտ. գիտե՞ք բանկն ի՞նչ ա. բայց ի՞նչ ձեր հիմար խելքի բանն է, էդ թող, սուլթաններն ու խաներն են բռումս. դրանք ամենն իր կարգին, ես միայն իմ գյուղն եմ սիրում, ընչի՞— որովհետև մարդիս համար իրանը միշտ քաղցր է, իմ պորտս էս գեղումն է կտրվել, իմ ծնած տեղն է, իմ հող ու ջուրն է, ինձ համար ձեր մի մազը ուրիշի գլխից բարձր է։ Ինչ ցավ ունիք՝ ասացե՛ք, իմ սիրտս կպատռվի, որ բաց աչքով տեսնեմ իմ գեղացու նեղությունն ու չօգնեմ, որտեղ նստում եմ՝ ձեր վերա եմ խոսում, մեր մեծավորների հետ ճաշի վրա ձեր կենացն եմ խմում։

— Աստված կյանքդ երկար անի, աղա ջա՛ն. իհարկե, որ մեր պարծանքն ես, համա մի խնդիր էլ ունիմ, աղա ջա՛ն,— շողոքորթ հաճոյախոսությամբ ասաց Դավիթը։

— Ասա՛, մի՛ վախիլ։

— Մի քիչ փող էլ ա պետք, մի 150 մանեթի ձեռ բռնի։

— Ա՛ռ վեքսիլի թուղթը, էգուց գրել տո՛ւր, բե՛ր։

— Տարով եմ ուզում, աղա ջա՛ն։

— Վնաս չունի, դու մի տարվա շահն էս գլխից հաշվի՛ր թումանին մի աբասով. գրիր ըստ առաջին պահանջման, մինչև տարին քեզանից փող ուզող չկա։

— Էն ա դուզ տարի գրենք, էլի՛։

— Չի կարելի, օրենքը թույլ չի տալիս։

— Էդ օրենքն ամենքի համար ա, աղա ջա՛ն։

— Ո՛չ, միայն մեծավորների պատիվն է այս։

— Քո կամքն ա։

— Նստեցեք, տղե՛ք, կանգնած ոտքներդ սև ջուր վեր եկավ։

— Դե գնանք, աղա ջա՛ն, էլ քեզ ի՞նչ նեղություն տանք,— ասացին ամենքն և գլուխ իջեցրին։

— Ի՞նչ անշնորհք մարդիկ եք, ա՛յ մուժիկներ. վեց ամիս կա՝ գյուղ չեմ եկել, մեկդ չեք հարցնում. հիմի էլ եկաք, ձեր գործը հոգացիք ու ձեռաց գնում եք. նստեցե՛ք, քիչ զրույց տանք, ասուլիս անենք։ Ադա՛մ

— Տավա՛ր անասուն, թագավորի խազնին պրծնում կա՞, կոզնաչեյը մեզ՝ իր բարեկամներին տալիս է, որ ամեն մի թղթի գնից մի-մի աբասի ավել առնենք, իր համար չայ-շաքարի փող դուս գա. դե խազնումը որ ծախվի, նշանակած գնից ավել չի կարող առնել։

— Հա՛...

Բալասան աղեն պորտֆելը վերցրեց, հանեց ծալքերից մի կապ վեքսիլի թուղթ, ջոկեց երկուսը և տվեց Խուդոյին։

— Ահա՛, սրանց կտաս, թող գրել տան, նշանակած գներից էլ հինգ-հինգ շահի ավելի կառնես, կբերես։

— Մի շահին էլ ճուտեր հանե՞ց, աղա ջա՛ն,— ծիծաղելով ասաց սուդիա Դավիթը։

— Ա՛յ անհասկացող, առունդ դրել ես դատավոր ու գլուխդ քարից պինդ է, բաս նեղություն չե՞մ քաշել, շալակել, հետս բերել. էն էլ իմ ոտքի վարձն է։

— Մեր գյուղի դուքանները լիքն են, աղա ջա՛ն, նրանք ամեն մի թղթից երկու շահի են ավել առնում։

— Դե նրանք հասարակ դուքանչիք են, նրանց ծախսը քիչ է, հինգ կոպեկն էլ բավական է, բայց դու արի՛ ու մեր մեծավորներիս ծախսին դիմացի՛. աստված վկա եմ ասում, մինուճար Նեսկոս մեռնի, թե խոսքումս ստություն կա. հայ՛ենք՝ հավատացե՛ք, ծախսի ձեռքից գլուխ չենք թափում. գիտե՞ք ինչ թանկություն ա, երեխա ծափելու տարի ա, Նեսկոն մեռնի, թե սուտ է։

— Հեռի՛ քեզանից, աղա ջա՛ն, հավատում ենք...

— Դե էլ հո բան չունի՞ք ասելու, գնացե՛ք, ըստ առաջին պահանջմանը չմոռանաք, հիմի նոր օրենք է դուրս եկել, էլ ժամանակ նշանակել չկա։

— Աղա ջա՛ն, թող երեք ամսով գոնե դրվի, վայ թե շատ նեղություն քաշենք։

— Ա՛յ տղեք, էլի քիչ մնաց բարկություն բերում էիք. տո՛, ձեղանից ո՞վ է փող ուզում, պահեցե՛ք ինչքան ձեր սիրտը կուզի։

— Է՛, խնամի՛ Դավիթ, դո՞ւ ինչ զուլլուղ. կամ աղդ կլինի պակաս, կամ մադդ, էլի՛։

— Քեզ հայտնի ա, աղա ջա՛ն, որ ինը տարի ա ես սուդիի կանդիդատ եմ. որ սուդիեն դատարան չի գալիս, ինձ են քաշ տալիս նստացնում. աշխարհքը չնի ու մենծությունի տեր դառնան, ես մի մեդալի կտոր էլ ա չունիմ, բաս իմ պատվին ամոթ չի՞. ի՞նչ կըլնի խնամքդ բաց անես, ինձ համար մի մեդալ բերել տաս, ես էլ քաշ անեմ, շատ ա սիրտս ուզում։

Խուդո՛, էն շկաֆը բաց արա՛, արաղի բութիլը բե՛ր, էլի ես ձեզ պատվեմ, թե չէ ձեզանում քաղաքավարություն չկա։

Ամենքը նստեցան և մի-մի կթղա օղիով օրհնեցին Բալասան աղայի կյանքը։

— Տե՛ս էդտեղ ի՞նչ միրգ կա, բե՛ր՝ թող բերանները քաղցրացնեն,— հրամայեց աղան, և Խուդոն մի քանի խնձոր հառաջ բերեց։

— Բե՛ր, ա՛յ որդի, բե՛ր, մուժիկից շնորհքը վերացել է, բաղերի, բոստանների, չալթուկի, շիրբախտի, լավ մրգերի տերերն իրանք են, ես եմ դրանց համեցեք անում։ Ասենք՝ էս մեր Խուդոյի կինն էր ուղարկել, անփող է, բայց մեր տան վերջին չուքն էլ փողով է ներս գալիս. ոչ մի բարեկամ, ծանոթ, ազգական, գյուղացի, ընկեր միտք չարեց, թե տարվա յուր բերքի ժամանակ, քլից-շատից, ինձ համար բաժին ուղարկի։ Ձեզանից ի՞նչ կպակասի, որ ամեն մեկդ իր ունեցած գինուց, արաղից, մրգից, բրնձից, լավ ձավարացու սպիտակահատ ցորենից իմ բաժինը հանեք, նրանով հո քանդվիլ չե՞ք. աղքատ եք՝ հարստանալ չեք, հարուստ եք՝ աղքատանալ չեք։ Սո՞ւտ եմ ասում, տղե՞ք։

— Մեզ համար շատ ամոթ ա, աղա ջա՛ն, լավ ես հրամանք անում,— կրկին դեմքը ծռեց Դավիթը,— մեր աչքի վրա։

— Արաղը քո շլնքին, Մատո՛, ես եկող շաբաթ մեծ ճաշ ունիմ, մի մեծավոր ինձ դեպեշ է տվել, որ մի օր ճաշին ինձ մոտ պետք է լինի. երկու լիտր արաղ կերթա, էդ թող քո պարտքը լինի։ Մյուսներդ էլ ձեր մեջ հաշվեցե՛ք, թե էն օրվան տանձ ու խնձորը ո՞րդ եք բերում. մյուս բաներն էլ ուրիշների վզին կբարձենք։

— Քո ցավը տանի մի տիկ արաղն, աղա ջա՛ն. բայց աչքս էլ որ հանես, ճշմարիտը պետք ա ասեմ, մի՞տդ ա, հերու, որ քեզ համար երկու լիտր մեղը բերի՝ լսից սպիտակ։

— Հա՞, հոր հոգու չէր, հասի համար էր։

— Ինչ կուզի ըլնի, մին ա. բանն էս ա, որ հրամանքդ բալկոնի վրա կանգնած էիր ու քո բարի աչքովդ տեսար, որ քո ծառեն աշխանեդ էլ չթողեց ինձ, բակի դռնից ետ դարձրեց։ Քեզ շիտակն ասեմ, աղա՛, սրտիս շատ դիպավ։

— Հետո ես բալկոնումը միայն էի ու քեզ վերև չկանչեցի՞, հետդ չխոսեցա՞։

— Չէ՛, մոտդ մի ուրիշ աղա էլ կար։

— Ես էլ հենց դրա համար չկանչեցի, է՛. բաս դու չգիտե՞ս, որ ինձ անպատվություն էր ուրիշ անծանոթ մեծավորի մոտ մուժիկի հետ կանգնել, մալալահաթներ անել։ Ի՞նչ անենք, թե ծանոթ բարեկամ ես. իմ հարազատ եղբայրն էլ որ գալիս է, էլի իմ սենյակը չի մտնում, նրա տեղը

կուխնին է, որ կա։ Օղորմածիկ հերս էլ որ կենդանի լիներ, վերև չէի թողնի։ Ի՞նչ կասեին ինձ իմ ընկերները, ձեզ եմ հարցնում. չէի՞ն ասիլ, թե սա ի՞նչ մարդ է, որ իր հայրը սա է։ Ախար դուք չգիտեք, մի անգամ քիչ մնաց երկրիս մեջ թքանք էի դառնում, լուսահոգի մայրս մի ձմեռ յուր տունն այստեղ թողած, եկել է, թե ուզում եմ ձմեռը քեզ մոտ անցկացնել, մխից ձանձրացել եմ. ասում է՝ հազում եմ, ծերացել եմ, էլ չեմ կարող դիմանալ, որպես թե նրա պորտը ծխի միջին չի կտրվել։ Ինչևիցի, մի սենյակ հատկացրի իրեն, որ այնտեղ վեր ու նիստ անի մեր պառավ քոծի հետ, յուր համար ուտի, խմի, քնի, հանգստանա։ Դու մի ասիլ, դա խիստ նեղացել է, որ մեզ հետ սեղան չենք նստացնում, քոծի հետ ենք ճաշ տալիս։ Դե գյուղացի մուժիկի պառավ կին է, նրան ինչ վայել էր գլխաբաց հասկացող հարսի հետ ձգվել։ Սա մըտքումը խեթը պահում է։ Մեկ օր մեզ մոտ քսանից ավելի խանումներ են հավաքված, լոտո են խաղում, մյուս կողմումն էլ սեղանը սարքած է, քաղցրեղենները շարած, որ լոտոյից հետո վեր կենան, անուշ անեն։ Հենց լոտոյի տաք ժամանակը, հանկարծ իմ խայտառակի մայրս, գլուխը փալասներով փաթաթած, ճղճղոտված շորով, բոբիկ ոտներին հին չստերը (մուճակ) ծլմփացնելով տուն է գալիս, բարի իրիկուն ասում ու մոտենում, կարգով բոլորին ձեռք տալիս։

— Ղոչա՛ղ քեռակին,— հավանեց Մատոն։

— Էլ ի՞նչ ղոչաղ, հյուրերի մեջ փսփսոցն ընկնում է, իրարու աչքով են անում և քթի տակ ծիծաղում։

— Նանի՛, որտեղացի՞ ես,— հարցնում է խանումներից մեկը։

— Հենց էստեղից եմ որ կամ,— ծանրագոգոթ սուրյոգնի ասում է մայրս,— ես դադեն (մատաղ), էս տան մեծն եմ, Բալոյիս մերն եմ, սա էլ իմ հարգելի հարսն ա, դուք էլ իմ ազիզ աչքի լիս զոնաղներն եք, համեցե՛ք, քաղցրեղեն անուշ արեք։

Հիմա դուք իմ խեղճ կնոջ դրությունը հարցրե՛ք, աչքերը սևանում է, քիչ է մնում՝ սիրտը թուլանա. բայց որ խելոք է, կարողանում է իրեն զսպել. էն կողմիցը գոքանչս վեր է կենում, թե՝ աղջկե՛ք, ղորթ է ասում խնամիս, հերիք է, ինչ խաղացինք, համեցե՛ք, միրգ անուշ արե՛ք։

Ամենքը վեր են կենում, լոտոն քանդվում է։

Երկու ամիս տներումն էլ ուրիշ խոսակցություն չկար, մենք էինք բերանների ծամոնը։

— Հալբաթ դու էլ ընդուր համար ետ ղրկեցիր օղորմածիկ մորդ, աղա ջա՛ն,— ասաց Մատոն.— լուսահոգին շատ էր տրտնջում՝ ջանս քանգեցի, սև օրով մեծացրի, բերանիս թիքեն կտրեցի, մարդ չինեցի, ասում էր, որ էսօր ինձ մարդատեղ չդցի՞։

— Ա՛յ եղբայր, էլ ի՞նչ կարող էի անել, ձեռքիցս եկածն անում էի, երկու տարեն մի շալ շոր էի կարել տալի, բայց նա գոհ չէր, տարեն մեկ շոր էր ուզում, գլխի շալ, սաղրի մաշկներ, կարմիր ղանաուզ, դոշով շապիկ, ղալամքյար արխալուղ էր պահանջում. ախար ես ընչի՞ տեր էի, միլիոններ հո չունե՞մ. Նեսկոն մեռնի, թե սուտ եմ ասում, առած ամսականս ծայրեծայր չի հասնում, պարտքով ենք ապրում. դն հո չե՞մ կարող այս մի քանի շահին ջուր շինել։ Հլա փա՛ռք աստծու, մեռավ, պրծավ. ականջներս հանգստացավ։

— Դե բարի գիշե՛ր, աղա՛,— ասացին ամենքն և վեր կացան։

Խուդոն սաստիկ անհանգստացավ։

— Ի՞նչ եք շտապում, Դավի՛թ, դեռ նստեցե՛ք, մի քիչ հանաքներ անենք, մորս անունը միտքս եկավ, սիրտս նեղացավ։

Ծոքա նորից նստեցին։

— Է՛, ասա՛, Սարո՛, ի՞նչ կա ձեր գյուղումը, ի՞նչ չկա, բերքն ինչպե՞ս է էս տարի։

— Փա՛ռք բարերարին, իրա տվածից ամեն ինչ առատ ա։

— Գյուղն էլ հանգստությո՞ւն է, տանուտերներդ լա՞վ է կառավարում. դա մի կողմով չեղավ, թե տեսնենք դու ի՞նչ շնորհքի տեր ես. ուրիշ կանդիդատներ բախտավոր են եղել։ Պողոսը, մի տարի չքաշեց, իր տանուտերը պոդսուդի (ինստիտուտ) տակ ընկավ, տեղը տիրապետեց. Մարկոսն ավելի բախտավոր էր, Ղամեքը մեռավ, տեղն իրան մնաց. բայց էդ քո պնդերես Կարապետը ոչ այն աշխարհն է գնում և ոչ գործի մեջ է ընկնում. ինչպես ես նկատում եմ, դու մինչև նոր ընտրությունը կանդիդատ էլ մնալու ես։

— Էս ա մեր պոչն էլ կխուզեն, էլի՛,— ասաց սուդիա Մատոն։

— Ինչպե՞ս։

— Ժամանակը լրացել ա, նաչալնիկն ապսպրել ա, որ երկ օրից ձիթահանքումը հավաքվինք, քար քցենք, գլավնի ու սուդիներ ընտրենք։

— Հա՞,— զարմացական դեմք առավ Բալասան աղան,— մեկել օրը ես նաչալնիկի մոտ էի, բան չասաց. սխալ կլինիս, ա՛յ տղա, կարծեմ դեռ մի տարի կա։

— Ֆէ՛, աղա ջա՛ն, թուղթն արդեն եկել ա, հինգշաբթի բիբոր (ընտրություն) ա։

— Հետո ձեզանից ո՞րդ եք գլավնի դառնում, ո՞րդ սուդիներ։

— Ո՛չ մինս, ո՛չ մեկելս,— ասաց Դավիթը,— ջահել-ջուհուլներն են հիմի ատամները սրել, հիմա նրանք են գեղի քթդխուդները, մեր ոխին մտիկ տվող չկա։

— Մեղավորը հայրերդ եք, ընչի՞ եք ձեր որդվոցն էդքան իրա-

ունք տվել, ինչի՞ մի քանիսին հասարակական վճիռ չեք շինում՝ Սիքիր քշել տալիս։

— Ո՞ւմ քշենք, աղա՛. մինն իմ տղեն ա, մինը քո, մինը սրա հորեղբոր թոռն ա, մեկելը մի իշխանի քվեր որդին ա, ամեն մեկին ինձ պես, քեզ պես օխտը պաշտպան ունի. ոչ դու կթողնես, ոչ ես. էնպես ա՞, թե ոչ, Խուդո՛։

— Դուք էլ այնպես բան արե՛ք, որ աչքները վախենա. վերցրե՛ք մի քանի խեզճ, անտեր աղքատի տղա գեղից դուրս արեք, թող ձերոնք տեսնեն ու օրինակ առնին։

— Ո՞նց, արդարը մեղավորի տեղակ կորցնե՞նք։

— Որպես թե ագռավները սև կհագնեն, եթե տասը չքավոր ոչընչանան. միշտ այդպես է, թուլը զորեղի համար է ստեղծված, արջը գայլին է խեղդում, գայլը՝ ոչխարին, աղվեսը՝ հավին, կատուն՝ մկանը. ե՞րբ ես լսել որ մուկը կատվին հաղթի. աշխարհքս էդպես եկել է, էդպես էլ շարունակվելու է,— խրատում էր Բալասան աղեն.— ինձանից ձեզ խորհուրդ; ձեռքդ ընկավ, տեսար, որ քեզանից անուժ է՝ փշրի՛, ոչնչացրո՛ւ, մեջտեղից քո օգուտը հանի՛ր։

— Բաս մեղք ու վարձք չկա՞,— հարցրեց Մարոն։

— Մեղքն ու վարձքը տերտերների սարքած թոռն ա, որ ձկան պես քեզ մեջը քցի, կալնի ու իր համար կեր հանի։ Շատ էլ լավ են միտք արել. բաս նրանք ապրելու չե՞ն։ Բայց էս թողնենք,— խոսքը փոխեց Բալասան աղեն,— հմի մտքներդ ի՞նչ է, ո՞ւմ եք ուզում տանուտեր դնել։

— Գեղը ոչչ կանեղ ա, էլ ետ Արտոյին են ուզում,— ասաց Սարոն։

— Արտոն էստեղ է՞։

— Ո՛չ, աղա՛, Նախչվանի կողմը ղազախներին գարի ա պահ տալի, ինքն էլ իսկի չի ուզում, բայց գեղը նոր ա հասկացել, որ էս նոր սուդերի սարքված օրից իրանք մի տանուտեր են տեսել՝ էդ էլ Արտոն էր, որ միայն վեց ամիս համ տվեց ու վերջն իր պատվիրը վախեցած՝ թողեց քաշվեց։

— Լավ էր կառավարում, հա՞։

— Ա՜խ, մեր գեղն էր օրն էր բախտավոր, գառն ու գելը իրար հետ արածում էին։

— Դե որ էդպես է, հիմի էլ Արտոյին ընտրեցե՛ք, էլի։

— Գլխներիս վրա, կընտրենք, աղա ջա՛ն, թե որ համաձայնի. ասում են՝ թուղթ ա գրել, չի ուզում, ասում են՝ ամիսը հարիր մանեթ փող ա առնում։

— Հա՛, հա՛, հա՛,— բարձրաձայն քրքիջը երկար ծոր էր տալիս

բարձի վերա ետ գնացած Բալասան աղեն,— Հա՛, հա՛, հա՛, Գոմշա-կերենց Արտոն տանուտերությունից փախչում է, միամիտ մուժիկնե՛ր, դուք էլ հալած յուղի տեղ եք առնում էդ խոսքերը. հարյուր մանե՛ք, տո, հիմարնե՛ր, ե՞ս լավ գիտեմ, թե դուք. հինգ օր չկա, Արտոյի խաղեիները ինձ մոտ ճաշի էր. մի ամիս ա, որ գողությունը բռնել ա ու քո Արտոյին քաղցած փորով դուրս շպրտել. դեռ ուզեցել է պոդսուդի տակ գցի, բայց նա շան պես ոտքերն է ընկել, լիգել, ինքն էլ խղճացել է։ Տո, դուք հենց գիտեք՝ Արտոն հիմի է՞լ էն է. գողերի թագավորն է. գյուղը տակն ու վրա կանի, մոր ծիծ կկտրի. պետք է ասած՝ այն ժամանակ էլ նույնն էր, բայց մաշեննիկ էր, իր տեղն էր ուզում տաքացնի, որ հետո ձեզ տզրուկի նման ծծի, բայց խոփը շուտ քարին առավ։

— Ո՞վ նրա իշին չոշ ասեց, աղա ջա՛ն, ինչքան էլ աղաչեցինք, պոնկնոտացինք, չելավ, թողեց հեռացավ։

— Դուք էդպես կարծեցե՛ք, բայց եթե չէր հեռացել՝ հիմի կատրժնիկ կլիներ, թող գնա՝ ինձ կյանք ու արև խնդրի, որ աչքով արի, մաշեննիկը դուրս պրծավ։

— Նա ի՞նչ էր արել, աղա ջա՛ն։

— Բաս էն ոչի՞նչ էր, որ օրական նա մի մարդից երեք մանեթ շտրաֆ էր խլում. բաս էն ոչի՞նչ, որ մեծ ու փոքր չհարցրած՝ բանտ էր գնում. էն ոչի՞նչ, որ ինքնագլուխ սրա-նրա տանից պղինձը դուս էր քաշում, տորգ անում, ինքը ծախում, ինքն առնում. չէ՞ որ իրավունք չուներ։ Ջայնը տեղ հասավ, ռևիզորը պատրաստ էր, մյուս օրը պետք է գար սելսկի սուդը (գյուղական դատարան) պեշատեր (կնքել), ք. Արտոյի հրաժարականը հենց էն օրը տեղ հասավ։ Ցոթը ժամը լեզու եմ թափել նաչալնիկին, որ հրաժարականը նույն օրը հասցրել է, թե չէ, գնացել էր քո Արտոդ— պոդլե՛ց, ռազբոյնի՛կ, գող-ավազակը։

— Դե լավ, աղա՛, մեր կարճ խելքովը մի լավ մարդ Արտոն էր. Նա էլ մաշեննիկ դուրս եկավ, էլ ո՞ւմ ընտրենք,— հարցրեց Սարոն։

— Տո՛, հիմար, լավ մարդս ո՞րն ա, վատը ո՞րը, ամենքդ էլ մի սանտրի կտավ եք. ընչի, դու չե՞ս կարող լինել, սա չի՞ կարող, նա չի՞ կարող. ահա մեր Խուդոն, դուք հո լավ գիտեք, որ գյաղի միանն էր, աչքումս լավ խաղաց, առաջ քաշեցի, մարդամեջ հանեցի և էսօր Ս. գյուղի պես տեղի սուդիեն է, իշխանն է. պակա՞ս մարդ է, ձեզ եմ հարցնում։

Մատոն ու Սարոն միմյանց նշանացի ակնարկներ արին, կարծես թե գլխի ընկան։

— Ի՞նչ եք լռել,— կրկին հարց տվեց Բալասան աղան,— մեր Խուդոյին որ տանուտեր չինենք, չի՞ կարող գլուխ տանել։

Մատոն ու Սարոն տարակուսական ուսաշարժություն արին։

— Դու ի՞նչ ես կարծում, խնամի՛ Դավիթ,— դարձավ աղան դեպի վերջինս։

— Մեր կարճ խելքովն Արտոն լավ էր, բայց որ քո օրհնած բերանով հրաման արիր, ես ի՞նչ իրավունք ունիմ։

— Դուք եկեք ինձ լսեցե՛ք, ինչ ասեմ՝ կատարեցե՛ք, թե ձեր գյուղը դրախտ չդառնա, ինձ հայհոյեցե՛ք։

— Լավ ասողի ջանին էլ կմեռնենք։

— Օգորմի ձեր հորը. ա՛յ ձեզ գլուխ-գլուխացու մեր Խուդոն, ես սրան եմ կամք տալիս, դուք էլ ինձ օգնեցե՛ք, քարը դուրս բերե՛ք, ձեր երեքին էլ սուդիա շինել կտամ. ինչ պակասություն որ ձեր գյուղին գա՝ մեղքն իմ վզին։

— Դժվար թե գեղը Խուդոյին կամք տա, աղա ջա՛ն։

— Ընչի՞։

— Էս գլխամեռը աղքատ-ուղքուտի տունը քանդեց, աղա ջա՛ն,— ասաց Սարոն,— մի շահով կաշառք էր ուտում, էդ գլուխը քարը, բայց որ քո հրամանոց սանադները շուտ-շուտ էր մեջ բերում, վճռում ու խեղճերի էլած-չէլածը ծախում, ողջ գեղը հետը թշնամացել ա։

— Ա՛յ տղա, ուրեմն աշխարհքս առ ու կուլ է՞, հիմա դուք վիզներդ յոթը զազ կախել եք. փող եք ուզում, աստված կվերցնի՞, որ տանեք և ժամանակին չտաք։

— Լավ ես ասում, աղա ջա՛ն, բայց անխղճմտանքությունն էլ բանի պետք չի. սա շահը շահին կոխացնում ա, մի ծակ կապեկ չի բաշխում, հասարակությունի տունն էլ քանդում ա, մի քիչ յոլա գնալ ա հարկավոր։

— Շա՛տ լավ, եկե՛ք ձեզ հետ մի պայման կապենք, Նեսկոյին թողնում, թե սուտ ասեմ. դուք ինձ օգնեցեք՝ Խուդոյին տանուտեր շինենք, քանի սա նստած ա, գյուղիցը մի կոպեկ կպահանջեմ. համաձայն ե՞ք։

— Սարի, աղա՛, սա ինչի՞ ա տաք-տաք կպել, չգիտի՞ որ գործը չի։

— Սա չի կպել, ես եմ ուզում. ես հենց կանեմ, որ սա Արտոյին ձեր մտքիցը կձգի, ի՞նչ եք ասում, իմ խաթե՛ր։

Երեքն էլ լռել էին։

— Դե վեր կացե՛ք, դո՞ւրս կորեք, ապերախտ անպիտաններ,— գոչեց հանկարծ տեղիցը վեր թռչելով Բալասան աղեն.— մուժիկի որդի մուժիկնե՛ր, ես էլ ձեզ մարդատեղ դրի, եղբոր նման հետներդ քաղցր խոսք ու զրույցներ արի, դուք էլ գլխիս եք ուզում նստել. մա՛րշ, դո՛ւրս. այդ երկուսդ, լույսը չբացված, փողերս բերե՛ք, դու էլ, Դավի՛թ, որ-

տեղ փողը շաղ են տալիս, էնտեղից վերցրո՛ւ, ով որ էլ քեզ համար ազնվության մեդալ բերել կաս, նրան դեմ՛ը, երեք օրից կպարզվի, թե ո՞վ է տանուտերը. տեսեք՝ սկատինա (անասուն) Գոմշակերի թոռի օրն ինչպե՞ս կսևանա, դո՛ւրս, շո՛ւտ, կորե՛ք, փողերս բերե՛ք։

— Մի՛ բարկանալ, աղա ջա՛ն,— ասաց Դավիթն՝ աչքով անելով մյուսներին,— թե որ քո կամքդ ա Խուդոյին գլավնի շինել, մեր աչքի վրա, էգուց ևեթ գեղը շուռ տանք։

— Ի՞նչ կասեմ օրինավոր խոսքին, ես էլ ձեր երեքին էլ սրան թև ու թիկունք շինեմ, դատավոր ընտրեմ, լույսը բացվի, թե չէ, որքան փող, Դավի՛թ, կամենաս, առաջիդ համարեմ, նորանց էլ եթե պետք է թող վերցնեն, տոպրակի բերանը բաց է։

Կարելի է խոսակցությունը երկար տևեր, եթե դրսի սենեկից ոտնաձայնը մի ուրիշ անձնավորության ներկայությունը չծանուցաներ։

Խուդոն դուրս գնաց և շուտ վերադարձավ. նրա ակնարկն աղային շատ բան ասեց։

— Դե՛, տղա՛յք, ձեզ տեսնեմ, իմ աչ կուռն եք, էլ ձեր առաջին փակ դուռը չի լինիլ, երեքդ էլ այսօրվանից սուդիա եք՝ որ կաք, Դավիթն էլ սուդիայի մեդալի մոտ մի դեղին պոլիմպերիալի չափ ազնվությունը մեդալ կրծքին է կախում։

— Բարի գիշե՛ր։

— Հո չտեսա՞ն վանեցուն,— հարցրեց աղան Խուդոյից նոցա գնալուց հետո։

— Ո՛չ, աչքով արի, մտավ ծալքատեղը։

— Լա՛վ ես արել, նե՞րս կանչիր։

Ներս եկողը մի նիհար, ծաղկատար երեսով, բարձրահասակ, կապտագույն եվրոպական կիսամաշ սերթուկը սև այրխալուզի վերա հագած, մուճակները ոտքերին երիտասարդ էր։

Նա գյուղական գրագիրն էր։

ԺԱ

ԷՋՄԻԱԾՆԻ ՈՒԽՏԱՎՈՐԸ

Արարատյան նահանգի ամեն մի գյուղացու աչքին սովորական է հաճախ տեսնել եկեղեցումը դռան առաջին կանգնած մի-մի օտարական ժամավորի, որոնք կուրծքը կոծելով անդադար ծունր են դնում և առանց աջ ու ձախ նայելու, Հիսուսի ներկայացրած մաքսավորի նման

գլուխը խոնարհեցրած՝ միմյանց տեսնում են յուրյանց բամբակի թելից գործած տրեխները։

Ամեն մի երեխա, ամեն մի սուր աչք գիտեն, թե ո՞վ է ջերմ աղոթականը, ո՞ր աշխարհքիցն է և ո՞ւր է եկել։

— Էլի եկել են,— արմնկով հրում են և ցույց են տալիս ժամավորներն իրար և քթներիցը զայրալի հուսահատական ծուխ արձակելով՝ լռում։

Ժամն արդեն դուրս է եկել. ժամավորները ավետարանը համբուրել են, տվել են ժամկոչին «օղորմի ասուվածը» և լսել նրա մեքենայաբար «օղորմի ծնողացդ» պատասխանը. տերտերներն արդեն՝ ծալել են յուրյանց փիլոնը և կախել կանանց դասի վանդակից ու յուրյանք դուրս եկել ժամից, խառնվել դրսեը ժողոված ժամավորներին։ Ժամհարը հանգցրեց վերջին ճրագը և մոտեցավ օտարականին. բայց նորեկը ոչինչ չի տեսնում, նա մտքով սլացած է հրեշտակների դասը, նա վերացած է անցավոր աշխարհից։

Երկու անգամ ժամհարը զգուշությամբ շարժել է ազոթականին, բայց նա չի շտապում, նրա շրթունքները՝ մրմնջում են «Ծկեսցե»-ն։

— Տերտերն ինձ սպասում է, տիրացո՛ւ, պաշտումահաց ունինք,— կրկնում է ժամկոչը. բայց օտարականը կարծես անտարբեր է դեպի այդ առաջարկը։ Նա մի երկու ծունր ևս կրկնում է. և երկյուղածությամբ ուղղում է քայլերը դեպի բեմը, ամեն մի խաչ, ամեն մի պատկեր կարգով համբուրում է, ամեն ճլունի անկյունին երեք անգամ մոտեցնում է շրթունքը և ամեն մի համբույրին երեք անգամ խաչակնքում է երեսը։

Վերջապես աստուծո մարդը եկեղեցու արտաքին շեմքից առավ յուր փափագը և գլխիկոր, հաշված ու համեստ քայլերով, գնում է առաջ, շարունակելով Խաղաղականի «Հավատով խոստովանիմ»-ը։

— Օղորմի ասուվա՛ծ, տիրացո՛ւ,— խանգարում է մեր ճգնավորին տերտերը եկեղեցու բակում։

Պանդուխտը հանդարտորեն գլուխը վեր բարձրացրեց, հառաջեց դեպի ձայնը և մի անլսելի շշուկով արտասանած «օրհնյա տեր» խոսքի հետ ակնածական համբույր դրոշմեց տեր Հոր սուրբ աջին և ամենահամեստ ու ամոթխած նորահարսին պատշաճ խոնարհությամբ երկրպագություն տվեց շուրջ բոլորած ժողովրդին։

Ն-քա. ժամավորներն էին, նոցանից ոչ մինը չէր հեռացել եկեղեցու բակից, ամենքը սպասում էին այս ներկայացմանը։

— Բարի՛ գալուստդ, տիրացո՛ւ եղբայր, վանեցի՞ ես։

— Այո՛, սուրբ հա՛յր։

— Հայրիկի աշակերտներիցը կլինի՞ք։

— Ծառա եմ։

— Ինչպե՞ս է Հայրիկը։

— Օրհնող է։

— Հիմա ո՞ւր է։

— Վանեն նվաստությունս ճանապարհ դրավ ու ինքը Վարագ գնաց, հոն դպրոցին հանդեսը կդիտեր։

— Ո՞ր կողմն է աստված ձեզ առաջնորդում, ո՞ւր եք գնում։

— Սուրբ Էջմիածնի ուխտավոր ենք։

— Խնդրվածքիդ կատարումն։

Պատասխանը՝ խոնարհ երկրպագություն։

— Որտե՞ղ եք իջևանել։

— Բաց երկնից տակ, բայց սիրելի, հարազատ և հյուրասեր հայ հարց և եղբարց հովանիին ներքո։

— Լավ ձայն ունի՞ք, լավ երգել գիտե՞ք։

— Որչափ սուրբ հոգին անարժանս օժտեր է։

— Էջմիածին գնացի՞ք։

— Ո՛չ, Կարսեն Աղվանյան սրբազանին հանձնարարականով Ալեքսանդրապոլի հաջորդ Հուսիկ հայր սուրբին ուղղվեցա, ան ալ զիս այս կողմեն ճանապարհ դրավ քսանի մը աշտարակեցի եղբարց ուղեկցությամբ։

— Ուրեմն ձիո՞վ եք եկել։

— Իմ ոտքերս ամուր են, անբան անասունը նեղելու հարկ չկար Հայրիկ մեզի հաճախ ոտքով քալելու և շարքաշության տոկալու վարժություններ կավանդեր, ինքն ալ մեզի հետ Վանա շրջակայքը կպտտեր, գյուղերը մեզի քարոզություն ընել կուտար։

— Հայրիկն աշակերտներ շա՞տ ունի, տիրացո՛ւ ախպեր,— խոսակցության մեջ խառնվեց մի գյուղացի։

— Մեկ կողմեն կհավելին, մյուս կողմեն կպակասին, դպրոցն ավարտողներուս կփոխարինեն նորեկներ։

— Դուք ե՞րբ եք ավարտել։

— Երկու տարի կա։ Հայրիկին պատվիրանավ Կարնո կողմերն երբ ուսուցչություն կընեինք, ամիս մը հառաջ վերակոչեց զիս և բարեհաճեց այս կողմերն առաքել յուր սուրբ գրավոր հրամանավ։

Տիրացուն ձեռքը ծոցագրպանը տարավ, հանեց մի մեծադիր փոստի թղթի լայնությամբ հաստ թղթի վերա խոշոր տառերով գրություն և տվեց տերտերին։

Թուղթը ձեռքե-ձեռք պտտեց, գրագետ-անգրագետ մի թեթև հայացքով. մի հաստատուն գլխի շարժումով հավաստի եղան նրա անկեղծությանը։

— Հայրիկի, իր ձե՛ռքն է,— վավերացրին ամենքը։

— Հազար թղթի մեջ կճանաչեմ Հայրիկի ստորագրությունը,— պարծեցավ մի երիտասարդ յուր կողքին կանգնած ընկերին։

— Շատ դժվար բան էր, ա՛յ,— կշտամբեց խոսողի սնապարծությունը մի ուրիշը.— ամեն երեխա կճանաչի «Հայրիկ» ստորագրությունը։

— Քիչ ենք տեսնո՞ւմ, շարթական քանի՞սն են գալիս ու անց կենում,— քչփչաց երրորդը։

— Կասելի է կեղծ են,— պատասխանեց առաջինին մի անհավատ թովմաս։

— Դե Հայրիկը մի առատագութ և բարեսիրտ մարդ է, ուզողին գրում, տալիս է, էլ ընչի՞ պետք է շինովի լինի։

— Տիրացու ախպե՛ր, մեր գեղումը վարժապետ չկա, չե՞ս մնալ մեր երեխանցը կարդացնիլ,— հանկարծ առաջարկություն արեց տանուտերը։

— Սրբազան պարտքերնիս է ազգիս մանուկ սերունդ կրթել. բայց գեռ ժամանակ կա, գուցե նվաստությունս անարժան թվի ձեր մեծասքրությանն, կամ մի այլ հանգամանք խոչընդոտ կըլլա։

— Էլ ի՞նչ դժվարություն, Հայրիկի թուղթը քեզ համար լավ ա վկայում, մենք էլ վարժապետ չունինք, գեղումս էլ մի օրինավոր գրագիր չկա. գեղական դատարանումը օրինատեսր կա, քեզ կտամ, քիչ-քիչ կսորվես, քեզ էլ օգուտ կըլլի, մեզ էլ։

— Մենք այդ օրինատեսրեն մի հատ մը ձեռք բերած ենք, բովանդակություն մեզի քաջ ծանոթ է, անոր հմտաձայն գործավարություն ընել մեզի համար դյուրին է։

Տիրացուն հանեց նույն ծոցագրպանից մի գյուղական օրինագիրք։

— Դե բանը գլուխ եկավ, էլի՛,— հուսադրեց տանուտերը.— կա՛ց, մի վախիլ, դու էստեղ մեծ շահմունք կունենաս, մի սիրուն աղջիկ էլ կուզենք քեզ համար, կպսակենք։

— Աստված չընե, միայնակեցություն ուխտեր եմ ի մանկութենե։

— Տերտերը թողություն կտա, վնաս չունի։

— Կա՛ց, տիրացո՛ւ, կա՛ց, լավ է ասում մեր տանուտերը. էս է՝ ես ծերացել եմ, մի քանի տարուց հետո քեզ կձևնադրենք,— խորհուրդ տվեց քահանան։

— Տեր ինքն ինչպես տնօրիներ է, անոր սուրբ կամքը թող օրհնյալ ըլլա։

— Անունդ ի՞նչ ա, տիրացո՛ւ,— մեջ խառնվեց Մելիք-Բաղալը։

— Ավազանիս անունը Մաղաքիա Բաստուրմաճյան է, բայց դպրոցական անունս Հայրիկ հաճեցավ կոչել Տաճատ Գնթունի։

— Արտակ Պալունի, Հմայակ Դիմաքսյան, Խորեն Խոռխոռունի...

— Արա Արամյան, Հավանակ Վաշտակյան, Հոյ Հուսակյան...

— Ցոլակ Արբակյան, Պարույր Պաճուճյան, Պերճ Արրունյան։

Այս անունները միմյանց ետևից կրկնողներն երեք երիտասարդներ էին. նոքա ոչ ոքի չէին խանգարում, նոքա բերան գիտեին Հայրիկից եկած երիտասարդների դպրոցական կոչումները և իրանց մեջ ծաղրում էին փսփսալով ու ծիծաղելով։

— Ուրեմն, տերտե՛ր, գործը վճռվեց,— ձայնը բարձրացրեց Մելիք-Բաղալը,— մեր տիրացու Տաճատը կմնա մեր գեղումը. շատ լավ իրար ենք ընկել, մեզանում դինին բոլ ա, սրա էլ հին անունը Բաստուրմաչի, նորն էլ Գնթունի, էս վերջինի թ գիրը դուս կգցենք, մենք շուտ խոսող մարդիկ ենք, լեզվներիս տակիցը կսլա, դուս կընկնի, կմնա Գնունի. հետո կնստենք, լազաթին բաստուրմեն տժտժալով շամփրիցը սիպտակ լավաշի մեջը դուս կքաշենք, գյոգրով (դդմասրվակ) գինին էլ կլցնենք դնչներիս, էլ ի՞նչ դարդ ունինք, կե՛ր ու կոնծա՛, դե քե՛ֆ արա, Բաստուրմաչի-Գնունի, ծծա ու ծծա՛, կաց ու պռոշներդ ծպծպացրո՛ւ, բեղերդ լպստի, վախիլ մի՛, հատնիլ չի։

— Ներեցե՛ք, հարգամեծար իշխա՛ն, որքան ալ մեր հին ու նոր ազգականներ հարմար են ձերին ասուիյան, բայց մենք նախ ուխտած ենք յոթ տարի սուրբ Կարապետու պահք պահել, և երկրորդ գինիի հոտ էլ համ առած՝ չենք ցարդ։

— Դե կարդացողը դու ես, մենք անգետ գեղջի ենք, հիմի դո՛ւ ասա, հայ-քրիստոնեի հավատը գինու վրա չի կապա՞ծ։

— Ան ուրի՛շ բան։

— Դե տեսա՞ր, որ ես իմ բռաղյալ (ազգա) տեղովս քեզանից շատ բան գիտեմ, դեռ էն մի խոսքն էլ քեզ բաշինեցի, չասեցի, թե ո՛վ ա տարին 12 ամիս բանջարեղեն ուտում։

— Բայց արդեն դուք գիս արբեցողի մը ընկերն ըրիք և խոտակեր կոչեցիք, ադ փոքր-ինչ վիրավորական է։

— Ը՞էյ, խելքդ որտե՞ղ ա, տիրացո՛ւ, ես քեզ իմ հընկերը շինեցի, ի՛մ, ինձ չե՞ս հավանում, քեզ պես օխտը տղա ունիմ. ես որ մի օր գինի չեմ խմում, իրիկունը գնում եմ տերտերի առաջին շոքում, մեղա ջալի. Բողություն առնում. հենց գիտես մենք հայ-քրիստոնյա չե՞նք. գինի էլ ենք խմում, պաս էլ ենք պահում. բաս՝ քո ասելով մենք պիտ-

նիցներ (արբեցող) ու հայվաններ ենք, էլի՛. խոսք էր, սազեց, տեղն եկավ, ասեցի, ի՞նչ ես փալանդ շուռ տալի (վիրավորվել)։

— Մի՛ նեղանալ, տիրացո՛ւ Տաճատ, մեր Մելիք-Բաղալը հանաք է անում, սա մեր գյուղի իշխանն է, սրա քաղցր խոսքերը քեզ էլ դուր կգան, ականջներդ կվարժվին,— հասկացրեց տերտերը։

— Այնժամուս կհասկնամ, որ հարգամեծար Մելիքին ըրած անմեղ կատակ մ'է։

— Տո, արի՛, խելո՛ք, վախիլ մի՛, մենք կբարեկամանանք,— նորից քարունակեց Մելիք-Բաղալը,— արի գնանք, էս գիշեր մեր տանը մի լավ քեֆ անենք, կնիկս իր դմբոճիկ (փափկիկ) ձեռներովը քեզ համար մի կակուղ տեղ կքցի, թե կուզես՝ ոտներդ էլ կմաժի (շփել). վախիլ մի՛, ես ծեր եմ, բայց կնիկանս աչքումը դեռ եղ կա, գիշերն երազումդ կտեսնես, կերածդ կմարսես, առավոտը քեֆով վեր կկենաս։

— Հրամանքնիդ բավականին զվարճախոս անձ մը կերևիք, անմեղ կատակներ կսիրեք, ինձի նման նորատի պանդուխտին քիմք կուզեք պարարել ձեր պարկեշտուհի տիկնոջ մայրական հրապուրանքներով և հայուն հատուկ հյուրասիրությամբ։

— Օ՜... օ... օ... լա՛վ ես, լա՛վ, մե՛ր տղա, բերանումդ համ ես ունեցել, ձեռաց հասկացար, որ հալիվոր մարդի հընկերն ատամները թափված պառավ կրլնի, գունդ ջահելների փեշերքին ես մեկնում. վախիլ մի՛, իմ խաթունը վրա հինգ կնիկս ա, քո տարիքումն անճախ (ճազիվ) ըլնի, ամեն մի աչքը ձեր հոսհոսների զայֆի ֆնջաններից մեծ ա, ա՛սլը (իսկ և իսկ) քեզ պես սուտ ճգնավորի ու խաբեբաների շալակը տալու ապրանք ա, արի՛ գնանք։

— Շա՛տ շնորհակալ ենք, սակայն արատիք կբերեք անբծությանս։

— Դե՛, գե՛, արի՛ գնանք, ա՛յ դարմանի տակի ջուր. խաչագող վանեցի չե՞ս, գոզ կատվի աչքերիցդ ա մալում (ճայտեի), թե ի՞նչ պտուղ ես. ամեն մի մազիդ տակին օիտը սատանա կա. ախար Օսմանլուի խաչագողներն էլ վանեցիք են, սալմաստցոնց հարևան եք, է՛։

— Այդ արդեն կարի անարգական է,— դեմքի վերա տհաճություն արտահայտեց Գնթունին։ Բայց Մելիք-Բաղալը նրա վզակոթը թոթվելով, շարունակեց յուր ծաղրածությունները և դեպի յուրյանց կողմը քաշեց։

— Տերտե՛ր, տանուտե՛ր,— գարձավ Մելիքը դեպի վերջիններս,— դուք էլ եկե՛ք գնանք, մեր Գնունի-Բաստրմաչու հետ մի քիչ սեր ու սոհբաթ անենք, սրան երկու տարեկան քուռակի պես խամահանուկ անենք (վարժեցնել), թե չէ սա շատ ա տռճինկ քցում։

Ավելորդ է ասել, թե էջմիածնի ուխտավորի ուխտը ետ թողվեց դիպող ժամանակին կատարելու։

0. գյուղի հյուրասիրությունը, Մելիք-Բաղալի համեղ կատակները, երևսուն երեխեքանց ուսուցչական առատ վճարքը և, որ գլխավորն էր, տանուտերի առաջարկությամբ գյուղական գրագրի յուղալի պաշտոնը խիստ հաճոյական թվեցին Հայրիկի առաքյալին։

Ի պատիվ Գնթունուն պետք է ասենք, որ նա մինչև էսօր էլ գինու հոտը չի առնում, ուխտադրուժ գտնվեց միայն սուրբ Կարապետի դեմ, առաջին իրիկունը Մելիք-Բաղալի համոզմամբ պասը բաց արավ՝ ծերության օրերում ուխտը վերանորոգելու պայմանով։

ԺԹ

ՇԱՆ ՀԵՏ ԱԽՊԵՐԱՅԻ, ՓԵՏՔ ՁԵՌԻՑԴ ՄԻ՛ ՎԵՐ ՔՑԻԼ

— Բարև ձեզ, պարոն Գնթունի՛, ինչպե՞ս եք,— ծանրախոհ դեմք առած՝ երկու մատի ծայրով արժան տեսավ Բալասան աղեն դիպչել գյուղական գրագրի իսնարհությամբ պարդած ձեռքին, երբ վերջինս շողքորթ ժպիտով անվստահ առաջ եկավ դեպի Մելնիկովը։

— Ողջությունները կցանկամ, վսեմափայլ տե՛ր, իշխա՛ն հայկազն։

— Ինչպե՞ս եք կառավարվում այս լեռնային արշերի մեջ, նեղություն չե՞ք կրում, չե՞ք հուսահատում։

— Սկզբներ շատ խորթ կթվեր մեզի ասոնց անկրթություն, բայց հետզհետե վարժեցանք, այժմ իրենց ալ սակավիկ մի քաղաքակրթեցինք, մարդավարության ուղի՛ն առաջնորդեցինք։

— Հետո օտարությունը ձեզ դպալի չէ՞։

— Անշուշտ, հայրենյաց անձուկ շարունակ կտուշոթե հոգիս, սակայն պարկեշտ լծակից մը և գողտրիկ մանկիկ մ՚ունենալես վերջ՝ բոլորն ալ անցան։

— Լսել եմ, այո՛, մեզ հայրենակից ես դարձել, շատ ուրախ եմ. իմ կարծյոք, դժվար կլինի ձեզ օտարության մեջ առանց սեփական տուն ու տեղի, առանց այգու և հողի միայն գրագրական սահմանափակ ռոճկով ընտանիք կառավարել։

— Ձեր շնորհիվ, ողորմած բարերա՛ր, այժմ տնակ մը և փոքրիկ այգի մի ևս ձեռք բերած ենք, նախախնամություն մի պատառիկ ցամաք հաց ալ խնայած չէ, կալորինք կերպիվ իվիք։

— Հա՞, այդ չգիտեի, շատ շո՛ւտ, կարծյոք, ձեր դալը հինգ տարուց ավելի չէ։

— Այո՛, այդպես է, բայց մեր դատավոր Խուդավերդի բեգին շնորհիվ, գյուղական տանուտիրոջ մարդասեր ներողամտությամբ տեսակ մը կենաց եղանակ գտած ենք։

— Մեր վարժապետը հիմի լավ-փող էլ ունի, աղա՛,— մեջ մտավ Խուդոն,— շահով տված ա մոտիկ գեղերի Թուրքերի մեջ. սրա ֆանդ ու ֆելը (ճնարագիտություն) ոչով չի իմանալ. մենք ինչքան ուզենք՝ ձեռը պատը կքսի, մխուր չի գալ (ուրանալ) ու երկու օրից հետո, մին էլ տեսար, Թուրք հաջիներից մնի հինա դրած միրուքը ճանգել ա ու իծի պես տկի-տկի անելով (մկկացնել) բերում, կոխում դատարան, սանդը զավերնի անում (заверить— վավերացնել), փեչատը (կնիք) կոխում ու ճամփու քցում։

— Որքա՞ն է մեր լված, քանի մը կոպեկներ,— արդարացավ Գրնթունին։

— Հենց էդ ա, է՛,— շարունակեց Խուդոն,— Հաջի Մուստաֆեն սրան տասը մանեթ էր պարտ. ուզեցա իմանալ, թե քանի՞ մանեթ էր պարտքի գլուխը. նա ասեց՝ դրանից ո՞վ ա փող առել, դատարանումը գանգատ ունեի, վճռեցիք իմ օգտին, հրամայեցիք ըսպոլնի (исполнительный лист— կատարողական թերթ) տալ. գնալով-գալով հոգիս դուրս եկավ, չարես կտրեց կաշառք խոստացա. երկու մանեթի Թուղթ առավ բերնիցս մի ամիս ժամանակով, էս ա երկու տարի ա, վեց ամսե վեց ամիս շահը շահին գալով, տասը մանեթ ա դառել, ես ի՞նչ եմ հասկանում, ասում ա՝ ինքը գրել ա տալիս իր մոնթերին, ինքը հաշվում, ինքը հաստատում։

— Հետո ստացա՞ք Թուրքից ձեր փողը, վարժապե՛տ,— հարցրեց Բալասան աղեն։

— Ստացավ, էն էլ ո՞նց, աղա ջա՛ն,— պատասխան տվեց Խուդոն.— վճռեցինք՝ յասավուլը վերկալավ, գնաց դաշտիցը խեղճ Մուստաֆի ոչխարի սուրուլից (հոտ) չորս հատ էնպես դավուրմացու շիշակ (երկու տարեկան խոյ ոչխար) բերեց, որ ախպերն ախպորը հինգ մանեթով չի տալ. Մուստաֆի հոգին դուս եկավ աղաչանք անելով, որ մինը ետ տա. էս սնիրավը քարացավ, քար կտրվեց։ Էս գլխամեռն էն ոչխարներից 17 մանեթ փող հանեց ու ո՛չ՚տանուտերին, ո՛չ դատավորներին մի-մի շամփուր խորովածացու էլ չղրկեց, որ բերաններս եղոտեինք։

— Եթե ոտքի վերա ողջ-ողջ է ծախել, ինչպե՞ս ուզարկեր,— պաշտպան հանդիսացավ Բալասան աղան։

— Տո, չէ՛, աղա՛, քա՛ր ընկնի սրա գլխին. դասաբին մի չարեք մես խոստացավ, ~~ժորթիլ ովեց, ծախեց, փոքրը նաղդացրեցրեր~~ բը

լցրեց, ոչ իր տունը մի մախալ միս դրկեց, ոչ դասաբ Պապի Գևոյի միսը տվեց. ասենք՝ Գևոն սրան հում-հում կուտեր, կխեղդեր, բայց լեզուն կարճ էր, դատարանումը գործ ուներ, պարտքատիրոջ սանդը վճռած՝ սրա ձեռին էր, սպոլնին կտար, փողի տերը Գևոյի տան ծածկի կոճերը կքաշեր։

— Որքա՞ն տոկոս եք ստանում, վարժապե՛տ,— հարցրեց Բալասան աղեն։

— Տո, աղա ջա՛ն, դրանից ի՞նչ կիմանաս, դու ինձ հարցրո՛ւ,— կրկին ընդմիջեց Խուդոն.— անումը տասին երկու շահովն ա, բայց սրա պարտքատերերն էնքան տիմար են, որ ինչ գրում ա՝ անչատում են. հինգ մանեթին մի տարում և հինգ մանեթ էլ շահ ա առնում։

— Հետո կորչում չե՞ն փողերդ, վարժապե՛տ։

— Հատ կոպեկը չի կորչիլ, աղա ջա՛ն, քանի սա դատարանումը պիսը (զրագիր) ա, ոչով չի համարձակվիլ սրա քոռ սև փողին խեթ մտիկ տալ։ Գլխովդ եմ երդում ուտում, աղա՛, ոնց որ քեզ արդ եմ արել՝ գլավնի՛ն էլ, սուդիե՛քն էլ սրա բռանն ենք մտիկ տալիս, տանուտերի հետ միացել ա ու վճռում ա սա՛, կարգադրում ա սա՛, մենք հենց բերաններս բաց՝ ճանճին անող ձիու պես գլխներս տմբտմբացնում ենք ու ձեռք քաշում։ Ի՞նչ ես կարծում, աղա՛, ինչքա՞ն փող ունենա։

— Իմ կարծյոք սա հիմա փող պետք է չունենա. այդ էլ մեծ բան է, որ հինգ տարվա մեջ տան և այգու տեր է դարձել։

— Դու ո՛չ մեռնիս, աղա ջա՛ն, 3000 նաղդ Նիկոլայ-մանեթ ունի, ես եմ բոլորը ձեռք քաշել։

— Ուրեմն սա Տաճկաստանից գալուց յուր հետ փող է ունեցել։

— Ի՞նչ ես հրամանք անում, աղա ջա՛ն, ի՞նչ փող, ի՞նչ գենի՛շկա (կես կոպեկ), մի ջուխտ թելից գործած փորշքակի տրեխ ուներ, տակը հարիր տեղից կարկատան, մի հին պատռտորված Վանի մագի շալից կարճ շուխի պես բան ուներ, արմնկիցը միսն երևում էր։ Մելիք-Բաղալին հարցրո՛ւ, տես՝ ի՞նչ կպատմի, երկու-երեք ամիս նրա տանն էր կենում. մի սիպտակ կտավի շապիկ ուներ, ասում ա, որ կեղտումը փթել էր, կնիկս, ասում ա, զզվեց, որ լվանա, իմ շապկահինն ա ճղել, գլուխն անց կացրել, մի տեսակ յոլա տարել ընչանք գնացել ենք Պուլուզի գուքանիցը նիսիա (ապառիկ) մի քանի գազ ամբրջյան վերցրել, շուշալել, շլինքը քցել։

— Կարծեմ գլխիցը գուրս է տալիս, վարժապե՛տ, էս փչի տասը խոսքից մինն ուղիղ չէ,— նորից պաշտպանողական ձևով տարավ Մելնիկովը։

— Մասամբ ճիշտ է, գերազնիվ տե՛ր, Վանեն ելա մաքուր հագուստով, բայց քյուրդեր ճանապարհին զիս կողոպտեցին, բոլոր ինչքս տարին, մնացի մերկանդամ, մերձակա գյուղացիանք զիս գտին, յուրյանց ցնցոտիքներով զիս պատսպարեցին։ Անոնց հնոտիքովն է, որ մտանք այս գյուղ։

— Տո՛, աղա ջա՛ն, դու սրա խոսքին մի՛ ավատալ, ի՞նչ թալանել, ի՞նչ քուրդ, թալանվողի ձեռքին թղթերն ի՞նչ բան ունեին, շորերը կատանեին ու մի խուրձը գրեր ետ կտայի՞ն. սրա ծոցը լիքը թղթեր էին։

— Այս ի՞նչ գրեր է պատմում, վարժապե՛տ, իհարկե չեմ հավատում. սա սովորել է ափեղցփեղ, անկապ, անտեղի ցոփաբանություններ անել և, անտարակույս, այժմ էլ կատակ է անում,— հարցրեց Մելնիկովը։

— Մեր հարգո դատավոր Խուդավերդին իրավ կրսե, հետո Հայրիկին և քանի մը հատ ալ ուրիշներու հանձնարարականներ ունեինք, որոնք քյուրդեր մեզ վերադարձուցին՝ զիջյալ մեր աղերսագին թախանձանքներեն, մեզի նման անփորձ և անստակ ուղևորին անշուշտ կարելը են անոնք չերմեռանդ հայ ժողովրդին մեջ արժանավայել ընդունելություն գտնելու, ինչպես ալ մեզի հետ եղավ, ամենուրեք հարգանք կպատվասիրեին։

— Իրա՛վ, այդ հանձնարարականներն ինչպե՞ս են ձեռք բերում, վարժապե՛տ, ինձ շատ է պատահել Տաճկահայաստանից եկածների ձեռքներին տեսնել Հայրիկից և զանազան վանահայրերից ու առաջնորդներից տված հանձնարարական թղթեր, և մի՞թե անպատճառ կարեոր են նոքա։

— Անշո՛ւշտ։

— Հե՞շտ են ձեռք բերվում։

— Հայրիկեն խնդրելու ոչինչ դժվարություն չկա, ան գթոտ և բարեհամբույր հայր է ընդհանրության, անգամ մը եթե դիմես իրեն, կուտա՝ ով կուզի թող լինի. մեծամեծ դժվարությանց կհանդիպին մյուս վանահայրերու և առաջնորդներու քով, առանց ստակի (դրամ) հաղիվ կհաջողի ի՞նչ ընելու է, պիտի տալ, ապա թե ոչ նպատակին անհնար է հասնել։

— Մի՞թե։

— Այո՛, տե՛ր, հայ ժողովուրդ վարժած է այդ հանձնարարականներուն, վանահայրեր այդ քաջ գիտեն և ստակի կկապեն. ըստ իս՝ ամենայն իրավամբ. անոնց թուղթ մեծպսպես կնպաստե, մանավանդ որք խոշոր գումար մը շահելու կը միտին։

— Դուք էլ փող տվի՞ք։

— Քանի մը տեղ Հայրիկին հանձնարարականն օգնեց. սակայն

սուրբ-Կարապետ՝ սակավ մնաց Հայրիկին հանձնարարականե զրկվեինք և մենք ալ գանակոծ դուրս մնացինք։

— Ինչպե՞ս։

— Մենք տեղյակ չէինք սուրբ-Կարապետա միաբանության տհաճ տրամադրութենեն առ Հայրիկ, հյուրընկալին, դիմեցինք հանուն Հայրիկի մեզի պատսպարելու. նա առժամայն բռնկեցավ, խաբեբա, վանեցի և այլ վիրավորական ածականներ տեղաց մեր գլխուն և կոչեց յուր սպասավոր, մեզ պարսպեն վանել հրամայեց։ Բիրտ ծառայն մեր բազուկ ճմլեց վայրենի քյուրդի նման և հայհոյանքներ թափելով՝ մեզ դուրս վռնդեց։ Երեկո էր, ուր երթալնիս չդիտեինք, ընտրեցինք ստակի անվամբ մեր գործ տեսնել։ Հասինք բաղանացս, քանի մը զուրուշ կորուսինք, բայց հոգ չէր, գործերնիս հաջող ելք ստացավ։

— Այդ շատ հետաքրքիր է, խնդրեմ պատմես, վարժապե՛տ։

— Սպասավոր գաղտնապես մեզ յուր սենյակն առավ, խորհուրդ տվավ մեզ Հայրիկի անուն չտալ, հարցասիրաց քով հայհոյանք խոսիլ անոր դեմ, կշտամբանք ու լուտանք թափել նորա ստվերին և հանձնարարականին հիշողությունը չընել։ Մենք ալ այնպես ըրինք։ Մյուս օր սպասավորին ձեռք քսան զուրուշանոց աջահամբույր մեզի կարապետեցառ հյուրընկալ։ Քանի մ՚օր ալ այնտեղ մնացինք, վանահոր ծառային ծանոթացանք, շահեցինք, վերջ՝ քառասուն զուրուշնոցով հանձնարարական մը ձեռք բերինք։ Ի՞նչ ընելու էր, սուրբ-Կարապետա անվամբ հայ գյուղական շուտ կրգևորի. անոնց թուղթ մեզի մինչև Կարին շատ ձեռնտու եղավ, ամենուրեք հյուրասիրություն գտանք, քանի մը ստակ ալ ճանապարհի պարեն առինք, որով թե մեր պիտույք հայթայթեցինք և թե Կարնո առաջնորդին հանձնարարականը շահեցանք։

— Ուրեմն ընդամենը զուք երեք թուղթ եք ունեցել ձեզ հետ։

— Տո՛, դրա խոսքի քանի՞սը մի շահով կառնեմ, աղա ջա՛ն,— էլի կոտրած դրգալի նման մեջ խառնվեց Խուդոն,— դա որ եկավ, ծոցաչեքերը հենց էին տռզած, կասեիր երկու շաբթեն ջահել ծնդկանի ծծեր ըլնեին. ի՞նչ երեք թուղթ, ինչքա՞ն սուտ-սուտ փեչատներ, ի՞նչ Տերկամ որդու կոնդակներ, ի՞նչ մատնահարներ, մմոտ թղթեր, սրբի պատկերներ։

— Ուղի՞ղ է ասում, վարժապե՛տ։

— Բաղուրանքներ կբարդե մեր վերա, մեր ունեցած թղթեր մեր հիշատակարաններ էին. արդարև կուգան այդպիսի թղթերով Տեր-Հուսկան որդվո, Պտկա սուրբ Դևորգա զուլեր, կոնդակներ ու մատնահարներ կբերեն, խաչեր ևս կունենան, բայց այդ մենք չենք, օտարք կբնեն։

— Դե բոլոր ձեր վանեցիքն են, էլի՛,— ընդհատեց Խուդոն,— սա-

ղի ի՞նչ ես թաքցնում. մենակ դու հո չե՛ս, օրը մին ա, եկողը՝ տասը. ձեր ոտը կոտրվի, գեղ չկա, որ բուն դրած չըլնիք, քանդեցիք, քարատակեցիք էս երկիրը։

— Կմեղանչես, թափառաշրջիկներ, տգետ ռամիկներ են։ Արծվի Հայրիկին ճետեր միայն վսեմ գաղափարներ և լուսավորություն կտարածեն, ուր կերթան։

— Սաքի ո՞վ են քո Հայրիկի աշակերտները։

— Դուք ինձմե քաջ կճանաչեք, ամբողջ Այրարատ նահանգ, Գողթնիք, Սյունիք յուրյանց գյուղերով անոնց դաստիարակություն կվայելեն, որոնցմե վերջին նվաստս, կարծյոք, ըստ կարյացս սակավ ծառայություն ըրած չենք ձեր գյուղին. սնապարծություն կատեմ, բայց ճշմարտություն գաղել՝ հանցանք կհամարիմ։

— Ձեր ճամփեն փուշ ու տատաշ դառնար, էս աշխարհքը չմտնեիք. էլ գեղ, տուն, օջախ, ընտանիք թողե՞լ եք, որ չփչացնեք. ամեն տեղ հիմն արեգակ շուռ տվիք, Իգդիրը ձեր ձեռովն ընչանք էսօր էլ արնի մեջ լեղ ա տալիս, Աշտարակ՝ հերը որդուց հանեցիք, բաժան-բաժնություն ջցեցիք, երեխեքանցն իրար հետ թշնամացրիք. Ղամարլու՝ աղքատների բերանից սուտ-սուտ սանադներ շինեցիք, հարուստներին ծախեցիք, Մարգարի գեղումը միամիտ հարսներին ճանգեցիք, աղջիկ փախցրիք, դեղն երկու թիրա (կուսակցություն) արիք, էսօր էլ իրար միս են ուտում. Ագուլիս, ասում են, քիչ մնաց ձեր ձեռքովը հաստատ ուսումնարանը շուռ գա, ո՞ր մինը միտս բերեմ, քանի՞սը շարեմ, հավողի մատն ուտող դաղձի պես բռնել եք էս աշխարհքը. փաթաթվել խեղճ ժողովրդի բողազին, հուսի ելք տվել, աչքերը կապաթն եք թոցրել, հլա էլի խոսում ե՞ս...

— Կարծեմ ինձնե օգտե ավելի ոչինչ տեսած չեք, ձեր եկեղեցին այսօր պայծառ կփայլի նվաստիս ջանքով, մանուկներ հրեշտակաց հետ սրբասացություն կընեն. ինքնին խոստովանեցար՝ ձեր գյուղ բարվոք կկառավարվի, ամենուդ ևս ձեռքե եկածին չափ կծառայենք. այժմ ալ գերազնիվ հայրենասեր տեր-Մելքիսեդեկյան իշխան մեզի հրաման ունի արձակելու, որ շնորհ ըրեր է յուր լուսափայլ դիմաց տեսության անարժան արժանացնելու։

— Հետո մեջը ոչինչ շահմունք չունիս, էլի՛։

— Մենք անգոհին մենկը չենք, այդ մասին կանխավ խոսեցանք։

— Մի՛ նեղանար, վարժապե՛տ,— խոսեց Վլադիմիր Նեստորիչը,— սրանք ողջ գյուղով ի նախնյաց անտի այերարխտ շներ են, ինձ դեմ էլ ապաշնորհություն են անում. ձեզ հե լավ հայտնի է, թե այս գյուղին ի՞նչ մեծ բարերարություն եմ անում։

— Քաջ գիտակ եմ, տե՛ր, մուրհակներ բոլոր մեր գրածն է։

— Հապա տեսնո՞ւմ եք, սրանք է՛լի իմ շվաքիս վրա հաշում են։

— Կմեղանչեն։

— Թողնենք այդ, պ. Գնթունի՛, մենք գործ ունինք կատարելու։

Բալասան աղան աչքով նշանացի արեց Խուդոյին, և նա դուրս գնաց։

— Գիտեք, իհարկե, թե ընչի՛ եմ ձեզ կանչել։

— Կգուշակեմ, մուրհակների թվականներ փոխելու,— շշնջաց գրագիր վանեցին։

— Բավակա՛ն չէ։

— Գումարն ևս շարժելու է անշուշտ։

— Հասկացա՛ր. մի քանի անպիտաններ երկար ժամանակ ինձ տանջում են, պետք է սեղմել դրանց. դիցուք՝ ես վերջը կբաշխեմ, բայց այժմ այդ մեզ պետք է։

Բալասան աղան նախապես պատրաստած ուներ ցուցակը և փոխելիք գումարների որքանությունը։ Այդ պատճառով էլ նա կարիք չունեցավ մի առ մի թելադրել Գնթունուն։ Վերջինս շատ քաջավարժ էր երևում քերել-ջնջելու և նոր գրելու մեջ։ Նրան օգնում էր յուր փոքրիկ, հրդկված, ոսկրե կոթով սրածայր գրչահատը։ Մեծ գործ էր տեսնում քերված տեղը թանաքը չծծելու համար վանեցու գտած հնարքը. եթե շոշափելու լինեիներ նրա ձախ բութ մատի եղունգը և համեմատեիներ աջի հետ, ձախը շատ բարակ կգտնեիներ։ Գրագիրը քերում էր եղունգը և փոշին քերած տեղը դանակի կոթով տրորում. թանաքը գործում էր ինչպես մաքուր թղթի երեսին։

Մինչ վանեցի վարժապետն յուր գործը տեսնում էր, Վլադիմիր Նեստորիչը շարունակ սենեկի երկայնությունը չափում էր յուր քայլերով։

— Վերջացավ, բոլոր կատարվեցավ գերաղնվությանդ կարգադրության համաձայն,— ասաց Գնթունին։

— Լա՛վ, այժմ վերցրո՛ւ մի թերթ թուղթ և գյուղի կողմից նաչալնիկի անվամբ մի խնդիր գրի՛ր, որի մեջ հայտնի՛ր ամբողջ հասարակության ջերմ ցանկությունը Խուդոյին տանուտեր ունենալու յուրյանց մեջ։

— Աղի՛կ մտածեր եք, մեր ալ փափագն է, Խուդավերդի բեգ կատակներ կսիրե, բայց մեզ հովանավոր է։

— Ես եմ քո հովանավորդ, վարժապե՛տ, ե՛ս. քանի ես կամ, դու ապահով ձևի ու կտրի, ոչ ոք մազիդ չի կարող մոտենալ։

— Ցմահ երախտապարտ եմք,— ասաց գրագիրն և թուղթը ձեռքն առավ։

— Պատրաստ է,— փոքր ժամանակից ձայն հանեց նա։

— Այս կմնա ինձ մոտ,— պատասխանեց Մելնիկովը,— վաղը մի քանիսին կկանչեմ, ինքս ստորագրել կտամ, անգրագետների կողմից էլ անելիքը քո բանն է, Խուդոյի ձեռքով քեզ կուղարկեմ, բայց աշխատի՛ր, որ ձեռքերը, որքան կարելի է, միմյանցից զանազանվին։

— Միամիտ կարող եք ըլլալ, տե՛ր, մենք երեսունյոթ տեսակ գրության մեջ վարժված ենք. Վարագ՝ դպրոցն այդպիսի վարժություններ կընեին։ Հայրիկեն գաղտնի, գավառներ կարևոր են դոքա, անգամ մ՝ ալ Հայրիկ տեղեկացավ, շատ վշտացավ և պատվիրեց գեթ ի չարն գործ չարկանել։

— Վե՛ր կալ հետդ այս մուրհակի թղթերը։

Վլադիմիր Նեստորիչը տվեց գրագրին բավականին մուրհակի դրոշմած թղթեր։

— Կնքեմ, այնպես չէ՞,— ընչանցքի տակին ժպիտի նշույլ երևցնելով հարցրեց գրագիր վանեցին։

— Հետո էլ վավերացրո՛ւ։

— Տանուտեր Կարապետի ձեռք կբավե՞, թե դատավորներուն ևս դնեմ։

— Այն մեկը, որ ձեռք գիտե։

— Անհո՛գ եղիք, պարծա՛նք հայրենյաց, գյուղիս բոլոր ազդեցիկ անձանց ձեռք մենք կարող ենք կեղծել, յուրաքանչյուրին վերա ժամեր վատնած ենք։

— Ուրեմն մի քանի թերթ հասարակ մաքուր թուղթ ևս վերցրո՛ւ քեզ հետ։

— Կնիք շա՞տ մոտ ըլլա։

— Որը մոտ, որը հեռու, զանազան նպատակների համար։

— Քաջ գիտեմ, երեկոյան օր հարյուր թերթի չափ կնքեցինք և վավերացուցինք տանուտեր Կարապետի համար. նա կզգա, որ առաջիկա ընտրության իրեն հերթ հասնելու չէ. նվաստիս հանձնեց յուր համար պատրաստել։ Քանի մը հատ ալ մեզի համար կնքեցինք։

— Ընչի՞ դ էր պետք, կամ տանուտերն ի՞նչ պետք է անի։

— Ազգային մեծ կարևորություն կա, խնդրողներ անպակաս են, զանազան կեղծ կալվածագիրներ, կեղծ մուրհակներ, կանխավճար ապահովագիրներ շինելու պետք կըլլան։

— Հետս չե՞ս վախենում հայտնվելուց։

— Հզոր պաշտպանս ողջ ըլլա։

— Իսկ եթե ես չպաշտպանե՞մ։

— Մենք աներկմիտ ենք, թե կգնահատեք ընչին ծառայություններս և չենք թույլ տար օտարաց օգնության և միջամտության գիմելու։

— Օ... օ՛... վանեցի՛, լավ եմ հասկանում, ուզում ես ասել, թե գողն ու գողակիցն ի միում պատժի կան. ձեռաց կմատնես, էնպես չէ՞, ուղի՛ղն ասա։

— Վստահ ենք, որ գործն այդտեղ հասուցանելու փույթ չլինիր։

— Աղա ջա՛ն,— ներս մտավ Խուդոն,— լավ միտս եկավ, երեկ ադվակատ Ջոլախ-Հարությունն էստեղ էր, որ քո հրամանքի կողմից գնացել էր Դվակոթենց Հայրոյի մոտ։ Ասում էր՝ մի թուղթ ա հարկավոր գրել տալ, որ գեղջիք վկայեն, թե Դոնդարենց Ասոյի սպանված օրը Հայրոն սաքի գեղումը չէր, բամբակները տարել էր Երևան ծախելու. ասում էր՝ մի թուղթ էլ ինքը՝ շինել կտա Երևանի դանթարի (կշռարդ) տակի թուրք դալալներին կողմից, սաքի թե Հայրոյի բամբակներն են, որն իրանք են ծախել, Հայրոն ընչանք իրիկուն՝ դանթարի տակին ա էլել։

— Իրա՛վ, վարժապե՛տ,— քաղցր դեմքով դարձավ Մելնիկովը դեպի գրագիրը,— մի այդպիսի թուղթ էլ պատրաստի՛ր էն Հայրոյի համար. ի՞նչ հիմար բան դուրս եկավ. ես պատվիրեցի գնդակն այնպես արձակել, որ պառուհանը կոտրի, գնա առաստաղը ցցվի, որ միայն երկյուղ տանք փուչ Ասոյին. անշնորհքն այնքան ցած է նշան տվիլ, որ գնդակը դիպել է Ասոյի գլխին և սպանել։ Դիցուք արժեր, փշերի մեկն էր, ասում են՝ սրտե ի սիրտ ընկեր էր Պետրոսենց Սամվսոնի հետ. եթե նա չլիներ, Սամվսոնն անարտունչ կհեռանար Բարսեղի աղջկանից. ասում են, որ հերու էլ այն փուչն է եղել մեր դռանը կուպր քսողը. շատ լավ էր, որ վերջացավ, պրծավ. բայց ի՞նչ օգուտ, որ անպիտան Հայրոն գլխներիս ցավ դարձավ. ուզեմ-չուզեմ, պետք է ազատեմ։

— Խոհեմություն վսեմությանդ հատկանիշն է, գռեհկին մեկն է Հայրապետ, կարող է բերանեն հանել և ձեր անբիծ անվանն արատիք պատճառել։

— Ընչո՞վ կապացուցանի։

— Աստվածաբարո հայր Վարդան, կարծեմ, Սիսակին ձեռքով ինքնաձեռագիր ստորագրություն մ, առեր է գյուղականաց շատերեն, որով կստուգվի, թե Հայրապետ Դվակոթյանց գյուղին մեջ շարունակ գողությամբ կպարապեր և անոր գողացած իրեղենք երկիցս գտեր են ձեր քեռորդի Վասակին քով. պղնձապատ գոտու անցք ալ մեջ հիշեր է։

— Հապա՛, այդ գոտին էլ քիչ աղմուկ չհանեց, անպիտան Հայրոն մի քանի բաների հետ այդ գոտին բերել էր քաղաք մեր տունը։ Ես, իբրև անպետք բան, անկյունը ձգեցի։ Կինս միամտաբար բաշխել էր մեր ծառային. նա էլ կապել էր մեջքը, գնացել փողոց։ Սատանեն հակառակ է լինում. հենց այդ օ՞րը պետք է Անտոնենց Սահակը քաղաք գար։ մեր

ծառային հանդիպեր, գոտին ճանաչեր, պոլիցիա կանչեր և մեջքիցն արձակեր։ Հիմար ծառան էլ պարզ ի պարզո խոստովանել է, թե տիկինն է բաշխել։ Գիտե՞ք, վարժապետ, որչափ նեղությամբ կարողացա պոլիցիականին մի տեսակ արձանագրությունը փոխել տալ և գրել, իբր թե ծառան փողոցումը մի թուրքից է գտել։ Անելիքն արինք, պատասխանատվությունից ազատվեցանք, բայց ժողովրդի բերանից՝ ոչ. ամբողջ ամիսներով գյուղ ու քաղաքի խոսակցության առարկան էր։

— Աղա ջա՛ն, մի գիր էլ գրել տուր, թե Բարսեղի աղջիկն իմ քեռու հալալ թոռը չի, խորթ ա,— խնդրեց Խուդոն։

— Ահա, վարժապե՛տ, ձեզ տգետ գյուղացի,— շարունակեց Բալասան աղեն,— կարծում է, թե գիրն է, որ չհասը հասցնելու է. քանիցս իրեն ասել եմ, դարձյալ յուրն է կրկնում. տո, անասո՛ւն, թղթով գործ չի առաջ գնալ. մինչև ես վանքի խցերն օրական հինգ անգամ անլվա ել ու մուտ չանեմ, մինչև դու քսան անգամ լիքը չգնաս, դատարկ վերադառնաս, մինչև գործակալի ձեռքով երդմնական քննություն չկատարվի, գործ առաջ կերթա՞։

— Ներողություն կխնդրեմ ազգասիրությանդ ձանձրույթ մը պատճառելու,— շշուքորթ ժպիտն երեսին՝ պարանոցը ծռեց Գնթունին։

— Ասա՛, ի՞նչ կա։

— Ակներև է, որ եթե Սիսակ գյուղական գրագիր լինի, վսեմությանդ այս ամենայն դյուրությունք կդժվարին. կանխավ ձեր մեծության կհայտնեմ, որպեսզի ամենատեսակ հնարք ի գործ դրվի Գոմշակերյանց Հարությունին ընտրություն խափանելեն ետ՝ առաջիկա ընտրելիք տանուտերին պատվեր մ՝ արձակել՝ անարժանությունս ձեռքե չհանել. նվաստս կխոսի հօգուտ աշնվությանդ, Սիսակ ձեր շահերուն չի բռներ։

— Գնա՝, ապահով եղի՛ր, վարժապե՛տ, ես ողջ մնամ քեզ համար, երկյուղ մի՛ կրիր, ոչ ոք քեզ դիմադրել չի համարձակիլ, հինգ օր չանցած՝ Սիսակին բանտարկել կտամ, դու աշխատի՛ր վարժվել նրա ստորագրությունը կեղծելու։

— Ծառայդ արդեն հաջողած է, մեծագիր երեսներ կարենք գրել անոր ձեռքով։

— Ուրեմն բարի գիշեր, վաղն այդ բոլորը պատրաստ լինին։

— Կա՛ց, կա՛ց,— նորից վերադարձրեց Մելնիկովը գրագրին մյուս սենեկից,— լավ հիշեցի, անցյալ օրը փաստաբան Վասիլևիչն ասաց Հայրոյի գործի մասին, թե վատ չէր հանցանքը մի ուրիշի վերա կարկատվեր. ի՞նչ ես կարծում, ի՞նչպես անենք, ո՞ւմ վերա բարդենք, թուղթ ի՞նչպես հարմարեցնենք։

— Սպանութենեն մի քանի մ՝ օր առաջ ոմանք տեսեր են Սիսակ հրացան՝ ի հուս Հայրապետանց տան քովեն անցնելիս. հարցանողաց պատասխաներ է, թե յուրյանց այգվո մեջ աղվես մը բուն դրած է, կերթա սպանելու. մենք արդեն սևագրություն մ՝ալ պատրաստած ունինք. ծոցս է, եթե կամիք կարդամ։

Վանեցին ձեռքը տարավ ծոցագրպանը։

— Շատ ետ եկածն ես, վարժապե՛տ, վա՛յ նրան, ով քեզ չճանաչի,— գլուխը շարժելով ասաց աղան.— դեռ դու Սիսակին թող, ես ասում եմ Գալ-ափունի Սամփսոնը լավ հրացան արձակել ա իմանում, մեր խուդոյի սիրտն էլ շահենք։ Դիցուք Գալ-ափուն լավ մարդ է, որդին էլ մի հատիկ է, բայց այդ իմ գործն է, դեռ Հայրոյին ազատենք, մեր խուդոյի տղին էլ պակենք Բարսեղի աղջկա հետ, հետո որպես և իցե Սամփսոնին ես ազատել կտամ։

— Մենք խուդավերդի բեգին հետ ընելիք կընենք, դուք ալ այս գիշեր կարևոր խորհեցե՛ք, կանուխ, խոնարհ ծառայդ եմ։

— Էլ մտածել հարկավոր չի, դու Սամփսոնի մասին շարադրի, հիսուն մարդի ստորագրություն էլ դի՛ր, բայց չկնքես։

Վանեցի գրագիրը խոնարհ երկրպագությամբ բարի գիշեր մաղթեց յուր խնամակալին և հեռացավ։

— Ադա՛, վեգդ ալչու կանգնեց, փուչ կենդանի՛,— դարձավ աղան դեպի խուդոն,— Սամփսոնիցդ պրծար, տղիդ ոտքի տակի քարերը սրբրվեցին, մնաց չհասի դժվարությունը, այն էլ մի փոքր թիկունքիդ ծանրություն կլինի, բայց վանքցոնց կամքի կբերենք. դու ա՛յս ասա՝ ձայն ու ձուն չկա, տղայքը շատ ուշացան, էն շատ հարկավոր է։

— Ես վաղուց եմ զրկել, մի կուժ նավթ իմ ձեռովս եմ հանել քո զերուզամբից (նկուղ), իրանց ավել։

— Տեսնենք՝ տերտերն ի՞նչ կանի։

— Տերտերն իր գործը գիտի։

— Գլուխդ մեռնի, մինչև ե՞րբ ես քեզ համար աշխատեմ, դե գնա՛, գնա տե՛ս՝ տղայքն ո՛ւր մնացին, Գալ-ափունին պետք է խճճել։

ԺԳ

ՍԻՍԱԿ

Միևնույն երեկոյին Պետրոսենց Գալոյի տանը մեծ պատրաստություն կար, ինչպես ասում են՝ ձեռների մեկը յուղումն էր, մյուսը մեղրումը։ Մեծ հացատան թոնիրը դուրս է թողում յուր փորից կատաղի

բոցի կույտերը և մոտ եկողին կլանել է սպառնում. միայն տանտիկինն է, որ խաչերկաթով սանձել է անզուսպ կրակի զորությունը և մեծ-մեծ կաթսաները վերան շարել։ Ահա քլթքլթում, փլթփլթում են անուշահամ կերակուրները, ահա ճենճի ցայթքումները թոնրի մեջ են թռչում, մի պայծառ լույս արձակում ոսկեգույն բոցի և կրկին չքանալուց հետո անուշ բուրմունքով քթեր պարարում։ Մյուս կողմից, վերնահարկի սենյակը զորգերով ու կարպետներով զարդարված՝ կարծես ժպտում է ուրախ և սպասում սիրալիր ընդունելություն տալ այս երեկոյին յուր մեջ բազմողներին։

Դեռ սենեկումը մի քանի ամենամոտ բարեկամներ են վեր ու նիստ անում, ավելի պատվելի հայրերի են սպասում։

Ամենքի հետաքրքրության աստրկան լուսամուտի վերա դրված մատուցարանն է՝ երեսը ծածկած մի սփռոցով։ Երբեմն-երբեմն ժողովվածներից մեկն ու մեկը մոտենում, բարձրացնում է ծածկոցը և չոր մրգով լիքը մատուցարանի միջից վերցնում մետաքսյա թաշկինակի ծայրին կապած հակինթյա մատանին, տնտղում, գովու մև ցած դնելով՝ ձեռքն առնում տասներկու պաճախ հոլլանդական ոսկե մանյակը, գլխի շարժումով հավանությունը հայտնում և կրկին ծածկում։

Այդ Գալ-ափունի տղի՝ մեր Սամփսոնի նշանն է, որ շուտով պետք է տանեն Ալեքենց Բարսեղի տունը։

Քիչ-քիչ սենյակը կենդանություն ստացավ։ Բավականին անձինք ժողովվեցան, սպասավորողներն էլ մի կողմից սեղանի պատրաստություն են տեսնում։ Գալ-ափուն մինուճար որդու նշանը փառավոր անելու համար մի փոքր շեղումն էր արել սովորական կարգից, կամեցել էր բարեկամներին քնքրիքով պատվել և ապա նշանը տանել նոր խնամոնց տունը։

— Էս ինչի՞ ուշացան,— սկսեց լսվել անհամբերության տրտունջը,— ի՞նչ էլան Գալ-ափուն և Սամփսոնը։

Նոքա երկուսն էլ տանը չեն, հայրը քահանայի քամակիցն է գնացել, որդին՝ տանուտերի, Մելիք-Բաղալի և մի քանի պատվելի իշխանների. բայց ոչ մինը կա և ոչ մյուսը։

Նոքա ամենքը հավաքված էին Մելիք-Բաղալի մոտ կարևոր խորհրդի։ Առաջիկա տանուտերական ընտրության համար էին նոքա մտածում։ Ցանկանում էին ընտրել մի մարդ, որ կարողանար ազատել դյուղը ներքին և արտաքին ցեցերից։

Այս մարդը կար, մեզ ծանոթ Արտեմ Սերգեյիչը կարող էր չարիքների առաջն առնել, իսկ նա հեռու էր։ Նախիջևանի կողմերումն էր։ Նրան

էին՝ դիմել սրանք գրավոր և նրանից եկած պատասխանը լսելու համար էին ժողովվել։

Շատ չէին հավաքվածները, Մելիք-Բաղալն էր նախագահի դեր կատարում, տանուտեր Կարապետն էր, որին մի կերպ քարշ էին տվել. ամենքից հարգված Ղազար բիձեն էր, հին երեցփոխ Նավոն և ժամահար Սուքիասի Թոնն՝ երիտասարդ Սիսակը։

Վերջինս բնիկ Օ. գյուղացի էր. սա էր միակ օրինավոր գրագետը։ Սրան էր միշտ ակնարկում գրագիր վանեցին, սրանից միայն միշտ երկյուղի մեջ էր. վաղուց չէր, որ Սիսակը վերադարձել էր Օ. գյուղը Գեվորգյան ճեմարանից՝ աչքերի հիվանդության պատճառով։

Մինչև այս նորատի երիտասարդի գալը՝ գրագիր վանեցին անարգել գործ էր դնում յուր սուր գրիչը, բայց այնուհետև շատ տեղ, ինչպես ասած է, խոփը քարին է հանդիպում։ Սիսակը միշտ պաշտպան էր հանդիսանում գյուղական և հասարակական շահերին։ Նա ինքն էր, որ ծնեցրեց ժողովրդի մտքումը Արտեմ Սերգեյիչին վերընտրելու, ինքը սկսեց նամակներով հաճեցնել Գոմշակերյանցին՝ ձեռք քաշել Նախիջևանու կողմերի սահմանապահ զազախներին գարի և ցորեն մատակարարելու շահավետ պաշտոնից և գալ հայրենի գյուղը կորստից փրկելու։

Սիսակը դիմադրեց Մելնիկովի մի վնասակար նպատակին։ Վերջինս յուր հեռու ձգտումների համար համախոսական էր առել Օ. գյուղացիներից՝ բանալու այնտեղ մի հաստատություն, որը միանգամայն վնասակար էր գյուղից ներկա և ապագա սերնդին։ Սիսակը բաց արեց յուր հայրենակիցների աչքերը, հասկացրեց ժողովրդին Բալասան աղայի գիտավորությունները, և գլուխ եկած գործն իսպառ խափանեց։

Սիսակի նշանակությունը և ապագայում կատարելիք դերը քաջ հասկանում էր միայն գրագիր վանեցին. նա Սիսակի բարոյական ազդեցությունից յուր և յուր նմանների կործանումն էր գուշակում։ Այս բանը նա Բալասան աղայից շատ շուտ էր հասկացել, և ինքն առաջինը Մելնիկովի աչքերը բաց արեց։

Մխիթարականը վանեցու համար այն էր, որ Սիսակին չէր հաջողում շարունակ յուր ցանած սերմերը կանաչած տեսնել. գյուղացիք, եթե սրտանց համակրում էլ էին յուրյանց միջից դուրս եկած մի մարդի, բայց արժանի հարգանքը չէին տալիս։

— Ադա՛, խեչո՛, տեղիցդ կանի, գդակդ հանի՛ր գլուխ տո՛ւր, տեսնում չե՞ս Սիսակ աղեն ա,— աչքով ցույց տալով ընկերին՝ ծաղրում էր խեղճին մինը։

— Ա՛յ գլխամեռ, կամաց խոսի՛ր, մարդը չինովնիկ ա, թագավորական շկոլից դուս եկած ա, տեսնում չե՞ս՝ չներր կնդքիցը քաշ ա.

էգուց-էլօր, ասում են, նաչալնիկի դիվանխանումը սեկլետար ա դառնալու։

— Քյամուլ ա էլել մարդը (կատարելագործվել), ումնի՞ց ա պակաս, ասում են՝ սա Բալասան աղիցը շատ չին ունի։

— Բաս տեսել չե՞ս, պալտոնի տակին թրի վրա քաշ ա արած, ֆարազիմ (դիցուք) մարդը չի ուզում յուր գլուխը ցույց տալ, խոնարհություն ա բանեցնում, թաքցնում ա. թե չեք հավատում՝ վանեցի վարժապետին հարցրե՛ք։

— Ավատաս սա մեր վարժապետի պաշտոնը խլի, ա՛յ, պիսըլություն էլ լավ կանի։

— Անխե՛լք, պիսըլությունն ու գեղի վարժապետությունն ի՞նչ բան ա, որ Սիսակ աղեն վայել համարի, մարդը մի քանի օրից հանելու ա իր մեծ Սուքո պապի խազինեն ու Բալասան աղի պես գեղի վրա ցրվի, գեղն իրան ճորտ անի։

Եվ հանդուգն երիտասարդները ծաղրում էին խեղճ տղային և հեռանիցը հոհոալով ծիծաղում։

Լսում էր այս ամեն սառն արհամարհանքները Սիսակը և չէր նեղանում. նա քաջ ուսումնասիրել էր տգետ գյուղացվոց թույլ կողմը և աշխատում էր շարիքն արմատից կորզել և այդ փոքր առ փոքր իրեն հաջողվում էր։

Սիսակը դիմել էր հրապարակախոսների և գրքեր հրատարակողների և խնդրել էր գրքեր ու լրագիրներ։

Սկզբում դեռ փախչում էին ամենքն այդ բաներից, բայց հետզհետե ընտելացան. շատերն իրենք դիմում էին Սիսակին և խնդրում կարդալ յուրյանց համար նորություններ. գրագետները մինչև անգամ վերցնում էին նրանից և յուրյանք կարդում։

Գրագիր վանեցին տեսնում էր այս և յուր գլուխը կոծում։

Սակավ առ սակավ Սիսակի մտքերը թափանցեցին ժողովրդի բարձր դասակարգի մեջ ևս. խոսքս գյուղի՝ առաջավորների մասին է։

Այս երեկոյան Մելիքի տան ժողովն էլ Սիսակի նախաձեռնությամբ էր եղած։

Երեք անգամ Սամփսոնը բախեց այս երեկո Մելիք-Բաղալենց դուռը և երեք անգամ էլ ինքը Մելիքը նրան մի-մի սրախոսությունով ճանապարհ դրեց։

— Ադա՛, ի՞նչ ա փորդ կատու մտել, ա՛յ Սամփսոն,— ասաց Գալափունի տղին Մելիք-Բաղալը, երբ նա երրորդ անգամ գալով, լեզուն հանած՝ աղաչում էր շտապել, նշանը շուտ տանել.— սպասեցե՛ք, մի քիչ հաշիվ ունինք, վերջացնենք ու էս ա գալիս ենք. առանց ինձ, տանուտերի

ու իշխանների հո չե՞ք կարող նշան տալ, բոլորն էլ ինձ մոտ են։ Դո՛ւ գիտես, կուզե՛ք գնացե՛ք, առանց մեզ նշանը տարե՛ք, վայն եկել ա քեզ տարել, էլ հարսանիքիդ կառավարիչ (թամադա) չեմ դառնալ, ձեթ մարդկանց ձեռը կընկնես, լավ քեֆ չի լինիլ, նշանածդ կխռովի, քացով կտա։

— Քանի քո շունչը ղնգիդ ծերին ա, բիձա ջա՛ն, նամարդ (ամարդ) կըլնի քեզնից սավահի ուրիշ կառավարիչ ջոկողը։

— Դե գնա՛, էս ա պրծնում ենք։

Թող մի փոքր Սամփսոնի նշանն ուշանա, մենք հետևենք Մելիք-Բաղալի տան ժողովին։

Դռները ներսից պինդ փակված են, Մելիքի որդին ականջը ձայնի՞ ուրիշ սենեկում հսկում է։ Նա երկու անգամ հեռացրել և տուն չի թողել Բալասան աղայից եկող բանբերին։ Ալդ Մելնիկովի քեռորդի Վասակն էր, որ յուր քեռու կողմից եկել, Մելիքին կանչում էր, բայց երկու անգամն էլ պատասխան ստացավ, թե գլխի սաստիկ ցավից անկողին է մտել և քունը տարել է։

— Բա տանուտերի, Ղազար բիձի ու երեցփոխ Նավոյի տեղն էլ չգիտե՞ս, քեռիս նրանց էլ էր ուզում,— ասաց Վասակը.— գնալով-գալով հոգահան էլա, իրանց տներումը չեն, ասում են՝ ձեզ մոտ են։

— Մեզ մոտ ոչով չկա,— կտրակտ արեց Մելիքի որդին։

— Բաս էն ի՞նչ ճրագի շառավիղ ա, որ հորդ օջախի դռան ագանքից երևում ա. թե որ հերդ քնած ա, էլ ճրագն ընչի՞ ա վառ։

— Մերս ա ման գալիս։

Վասակը շատ աշխատեց մի հնարքով Մելիքի դռանը մոտենալ, բայց Մելիքի որդին շարունակ խափան գտնվեց նրա ցանկությանը։ Զգում էր Վասակը մի հնարքով ներսից ձայներ գոնե լսել, բայց Մելիք-Բաղալի շան հաչոցից ոչինչ չէր լսվում։

— Ինքը սուդիա՞ խուդոն ա եկել, ասում ա՝ հորդ զարթնացրու,— ներս մտավ մյուս սենեկով Մելիքի որդին և հայտնեց հորը. բայց պատվեր ստացավ տուն չթողնել և ասել, որ տաքության մեջ ուշքը կորցրած քնած է, մայրը թույլ չի տալիս անհանգիստ անել հիվանդին։

Խուդոն էլ ձեռնունայն վերադարձավ։

— Խորվածի հոտ ա առել, մեր տղե՛ք,— ասաց Մելիքն իր խորհրդակիցներին.— բայց թե մեր գլխինը գդակ ա ու լաչակ չի, պետք ա դրա քթի տակին մի բրդոտ էշ խանձենք։

— Ի՞նչ են քամակներիցս ընկել, ուզում են՝ տանին հիմարացնեն ու խուդոյի համար քար քցել տա՞ն,— զզվանք հայտնեց Նավոն։

— Մեր աչքն էլ են հանում, ախպե՛ր,— շեշտեց Մելիքը,— աղվեսը մարագումը ձագ ա հանել՝ մեր թաղու հղությունիցն ա. ծառը դանգատ

գնաց աստծու մոտ կացնի ձեռիցը, որ իրան կտրում ա, ասեց՝ կոթը քեզանից ա։ Մենք որ մի խոսքի ընկնենք, իրար տակ չփորենք, իրարից շուղությունը (լուռեսություն) չանենք, Ջաղացպանենց Բալոն մեզ ի՞նչ կարող ա անել։

— Ի՞նչ չի կարող, Մելիք-Բաղա՛լ,— պատասխանեց Ղազար բիձեն.— մարդս հինդ-տասը շահի ենք պարտք առել՝ ճուտեր ա հանել, մեր վրան պառկել, տակիցը դուս չենք կարում գալ, մեղավոր սևերեսի պես լիզվրներս կարճ ա, առաջին գլխներս ծռում ենք. էդուց-էրեր ունեցած-չունեցածներս տալկի (անուրդ) կկապի, կծախի։

— Էդքանով որ բավականանա՝ գլուխը քարը, կդիմանանք, բայց քե գեղումս բան կա՞, որ էդ անիրավ որդամեռի մատը խառը չընկնի. ըսկի տեղեկանո՞ւմ եք, թե մեր ջահել-ջուհուներին ո՞վ ա փչացրել. ում մարագը կրակվել ա, ում բաղերը կոտորվել են, ում տունը կտրվել ա,— պոչը դրա տակին ա. ձեզ քաջ հայտնի ա, որ մեր գեղի սարսափ ջուհեների գլուխը դրա քվեր տղա Վասակն ա, պահող, պարտպղոն էլ մեր բարեհոգի խուդոն,— գեղիս արդար դատավորը. նա մեջտեղից հալալ բաժին ա անում, կեսը մեր փչերին ա տալիս, մեկել կեսիցն էլ իր բաժինը վերցնում ա, մյուսը ղրկում քաղաք՝ տնաքանդ Բալասան աղի տունը։

— Դեռ մենք ողորմություն ենք, պարոննե՛ր,— խոսեց Սիսակը,— մյուս գյուղերն իսպառ ավերել է. մեզանից որքան և իցե քաշվում է. իրրև հայրենակիցներ մենք տեղյակ ենք յուր անցյալին, ուրիշ գյուղերում միանգամայն չափից անց է կացնում։

— Իհարկե իրան հայտնի ա, որ մենք իր օխտը պորտը գիտենք. դրա հերն երեկ-մեկել օրը չէ՞ր, որ Երևան խոջենց ջաղացի զամբը (ալյուրի փոշին) լիզելով՝ հոգին դուս էլավ,— գլուխը շարժեց Նավոն։

— Էն օրը Գառնու գլավնին արին էր լալիս. ասում ա՝ բերել ա Զոլախ-Հարությունին պավերնի (հավատարմատար) ա շինել, բաց թողել մեր ջանին. ո՛չ բաղերումս ա հավող թողում, ո՛չ դնգերումս չալթուկ, օրը տասի հացն ա կտրում։

— Էդ տնաքանդն ընչանք Գառնու մհալն էլ ա դունչը հասցրե՞լ։

— Էդ թո՛ղ, Սիսա՛կ, դու մեր ցավը հոգա՛, Գալ-ափուն հինգ հատ մարդ ա ղրկել. դու էս ասա՝ ի՞նչ գիր ես ստացել մեր Արտոյից. պտի գա՞, որ գլավնի ընտրենք իրան, թե ոչ. էս բիրորին (ընտրություն) թե նա դուս չեկավ, գեղը հոգեց-հոգի կկորչի։

— Պ. Հարությունն Գոմշակերյանցն ինձ գրում է,— պատասխանեց Սիսակը Մելիք-Բաղալին,— որ ինքը թեև միտք չունի միանգամայն հանձն առնելու, բայց զիջանելով ամբողջ գյուղականաց խնդրանքը՝

այն պայմանով միայն կգա, եթե գյուղացիք միահավան թուղթ տան նաչալնիկին՝ առանց քվեարկության ընտրել իրեն տանուտեր. իսկ եթե նաչալնիկն օրենքի վրա հիմնված չհամաձայնի, այն ժամանակ միայն ջվեի դնեն յուր անունը։

— Աստված յոր որդիքը պահի, ա՜խպեր, ես իմ հոդին, էլի լավ մարդ ա, որ մեր խաթրը պահեց. մենք էլ տունը մինը կա՝ կգնանք, հինգը կա՝ կգնանք սիպտակ կքցենք։

— Դե հիմի վեր կացե՛ք գնանք, մեր Գալ-Ափունի տղի շլինքը կարմիր նոխտա կապենք, նշան դնենք,— ասաց Մելիք-Բաղալը, երբ Սիսակը թուղթը գրեց վերջացրեց, և ներկա եղողները ստորագրեցին։

Մյուս օրը երկու թերթ էր գյուղամիջին ձեռքե-ձեռք անցնում. մեկը մեզ ծանոթ ստորագրությունն էր Սրտեմ Սերգեյիչի համար, մյուսը Խուդոյի օգտին էր։

Եթե երկու թերթիկներն էլ դիտեիր, շատ միևնույն անուններ կգտնեիր երկուսի մեջ էլ ստորագրած։

Երկու տեղ ստորագրողներից մի քանիսին մենք ճանաչում ենք. Վլադիմիր Նեստորիչի երեկոյան խոսակիցներն էին նոքա։

Վերջին թերթի մեջ շատ ձեռքեր միանմանություն ունեին. քաջավարժ աչքը միայն կարող էր պնդել, թե այդ ամենը մի մարդու ձեռքով հերյուրած կեղծ ստորագրություններ են։

Այդպիսի քաջագործություններ առաջինը չէր, որ կատարում էր գյուղական գրագիր վանեցին։

ԺԳ

ԿՐԱԿ

Գալ-ափունի հյուրերը բոլորը ժողովել են. Մելիք-Բաղալն յուր մոտ հավաքված իշխանների հետ բազմել է վերի կողմը, մի-մի կթղա օղի և մի քանի հետ չամիչ էլ վայելել է, բայց հիմա ինքը Գալ-ափուն ուշացավ։

Այս երրորդ անգամն է, որ Խլղաթենց տեր Հուքիասի քամակիցն են ուղարկել և նա չի գալիս, իսկ առանց տերտերի նշան դնել մի ժամանակ կարելի էր, բայց 15—20 տարի ա, որ հոգևոր տիրոջ հրամանովը նշան եղած տեղը քահանա պետք է գտնվի նշան օրհնելու՝ հայոց հին ծիսին համաձայն։

Գալ-ափուն ստիպվել է ինքն անձամբ գնալ քահանային կանչելու,

բայց ամենքի համբերությանն էլ չափ ու սահման կար. հրավիրվածներն սկսեցին նեղանալ և Գալ-ափունի վրա տրտնջալ։

— Տո՛, մեղրի պուլիկը լպստող Սամփսո՛ն, վատ հոգեռի պես թողիր էլ ոչ, թե մեզքներս խոստովանվինք, պարզերես գնանք դրախտի դուռը ծեծենք. ընչանք գնացիր, եկար՝ խորհուրդներս կիսատ թողիր. լեզուդ կես գազ կախ էիր քցել մղկտում, թե եկեք նշանը դրե՛ք, որ ինձ տուն քցեմ. բաս ո՞ւր ա քո՝ շահի թամբալ (ծույլ) հերը, ի՞նչ ա գնացել չանեն (ծնոտ) կախ քցել ու տերտերի հետ Աշուղ-Ղարիբի առակներն սկսել. դե գնա՛ կանչի, է՛,— ձայն տվեց Մելիք-Բաղալը։

— Երեք հետ եմ գնացել, բիձա ջա՛ն, հրես մին էլ եմ վազում։

Սամփսոնի գնալուն կարիք չմնաց, Գալ-ափուն ինքը տուն մտավ թթված, քացախած։

— Ադա՛, չորս ոտնանոց հրեշտա՛կ, Գալ-ափո՛ւ,— իր ձևով հարցրեց Մելիքը.— դու դալլաք (սափրիչ) Ջաքո՞ն ես, որ հարսանիքն իրանց տանը թողել ա, գնացել ուրիշի տանը հացի նստել. ի՞նչ ես նոյան ագռավի նման լեշով (գեշ) ընկել, ի՞նչ էլավ տերտերը, դե պրծե՛ք գնանք, է՛։

— Իմ աչքի լույս թանկագին ղոնաղնե՛ր (հյուրեր), կբաշխեք, որ ձեզ նեղություն տվի,— ասաց հանկարծ Գալ-ափուն սաստիկ հուսահատ ձայնով.— ամենքդ վեր կացե՛ք, գնացե՛ք ձեր տները, ես էլ նշան դնելու որդի չունիմ։

Բոլորը սառեցին, քար կտրվեցին, բայց Մելիք-Բաղալն սկսեց.— ա՛դա, ա՛յ մեռած, շատ գինովներիցն էլ չես, թե ասեմ՝ գնացել ես, գլուխդ կոխել գինու կարասի մեջ, ծծել, կատարդ տաքացրել, խելքդ կորցրել. էդ ինչե՞ր ես դուրս տալիս, տերտերն ի՞նչ էլավ։

— Ի՞նչ տերտեր, ախպե՛ր, տերտերն իմ ընչի՞ն ա պետք, երևում ա՝ ես թուրք եմ, որ չհաս աղջիկ եմ ուզում տղիս։

— Ադա՛, ի՞նչ ես ձավար անում (ցնորաբանել)։

— Ա՛յ մարդիկ, ամենքդ էլ էս գեղիցն եք, էս նշանի մեջ չհասություն կա՞։

— Տո, տխմա՛ր, գեղն արմացած մնացել ա, որ էս տարի մի պսակ պետք ա ըլնի, որի մեջ չհաս չկա. քանի մեր Խլղաթի զարմ երեցը գինիարաղ ծախիլը թողեց, փիլոն ծածկեց, հասն էլ դզվեց, հավասարվեց, չհասն էլ. հիմի դու ի՞նչ ես գլխիցդ դուս տալիս։

— Դե՛, ա՛յ հընկեր հարևաններ, մին-մին քար վեր կալե՛ք գլխիս քցեցե՛ք, ինձ տնով տեղով կրակը դրե՛ք, էրեցե՛ք, որ ձեր հայ քրիստոնեության հիմքը շուռ եմ տալիս, տղիս համար չհաս աղջիկ եմ ուզում։

— Ախար ի՞նչ կա, է՛։

— Ձեզ զուրբա՛ն, լսեցե՛ք ու ինձ քարով քարկոծեցե՛ք։

Դե, կարգ ա, ասում ա՝ ոչ հեր անմեռ, ոչ որդի անպսակ, աչքիս սև ու սիպտակն էդ մի երեխեն ա—Սամփսոնս ա. աչքս ջուր կտրվեց լենքս ու երկենքին մտիկ տալով. աստված ձերն էլ պահի, չունեցողին էլ ինքը տա, ուրախացնի. մտքներումս դրինք՝ էս ձմեռ տնավորենք, մենք էլ հարսնատեր դառնանք։ Հալբաթ աստծու իր կամքն էր, որ մեր Ալեքենց Բարսեղի նշանածի (կնոջ) հետ մեր տանտիկինը (յուր կինը) ամառս բաղումը ծառի հովումը քազցր զրիցների մեջ խոսք էին տվել, խոսք առել։ Դե լավ ու վատս ո՞րն ա, Բարսեղի աղջկանը մի տղա էր պետք, իմ տղին էլ մի՝ աղջիկ. ես էլ, Բարսեղն էլ կամք տվինք (համաձայնել) ու ասացինք՝ աստված շնհա՛վոր անի։ Բայց, դե, բան ու գործի խառը ժամանակն ո՞վ պտի նշան դներ. ասացինք՝ քարը վերցնենք քարի տակը դնենք (ծածկել), աշխարհքովս մին չանենք, բաղաբանից, հանդաբանից պրծնենք, նշան դնենք, պսակենք։

— Էս ժամանակին թաքուն բան կմնա՞,— ասացին այս ու այն կողմից.— երկու օրից ձենը վեր էլավ։

— Դե ի՞նչ անենք, թե վեր էլավ, գողություն հո չէի՞նք արել, բայց դուք բանը լսեցե՛ք։ Մի օր մեր մեծ եղեցը ծիծաղելով ինձ ասում ա. Գալ-ափո՛ւ, շտրաֆ (տուգանք) ունիս, տղիդ աղջիկ ես ուզել, ինձ չես հարցրել։

— Է՛...

— Աչիդ մեռնիմ, ասում եմ, առանց քեզ ո՞նց կլինի, էգուց-էլօր քո սուրբ օրհնությունով ենշանենք, ամենքն էլ կիմանան։

— Չէ՛, ասում ա, դու մտքումդ դրիր թե չէ, իմ ծուխն ես, պտի գալիր, ինձ հարցնիր. եբր որ ես խորհուրդ կտեսնեի, կամ ինքս իմ ուտովս կերթալի խնամախոս, կամ ուրիշին կդրկեի։

— Կարգիդ կապված ըլնիմ, տերտե՛ր ջան, ասում եմ, թե ես տեղյակ էլած կամ. մերերն իրանք են ծառի հովումը ավել ու առել։

— Ես խաբար չեմ, կպել ա, մեծ շտրաֆ կա շլինքիդ։

— Դու ողջ կենաս, ասում եմ, ինչ որ քեֆդ ա (ցանկանաս), հրամանիդ կանգնած եմ։

— Կապուտ շապկավորն, ասում ա, իր ուտովը պտի գա մեր տունը։

— Քո ցավը տանի, տերտեր ջա՛ն, ասում եմ, աշխարհքի ծախս ա գնալու մի գլուխ շաքարն էլ դու անուշ արա, հալբաթ աստված միտք կբերես, մի օր մեզ մի թաս չայ կխմացնես։ Բայց, տերտեր ջա՛ն, ասում եմ, էդ քո կապուտ շապկավորը, կամ ուղիղն ասենք՝ մի գլուխ կապուտ թղթով փաթաթած շաքարը դու չհաս տեղիցն ես վերցնում. ես ընչի՞ պտի ղրկեմ, փառք աստծու, մեջը չհաս-մհաս չկա։

— Թարջիման (տուգանք) ունիս, ասում ա, լավ իմացի՛ր, որ ընչանք կապուտ շապկավորը, հետն էլ մի գրվանքա իր սիրեկանիցը (թեյ) կապած, փեչատած, ծերիցն էլ արճիճը կախ ընկած՝ մեր ջեմքովը ներս չգան ես ո՛չ քո տունն ոտ կկոխեմ, ո՛չ նշանդ կօրհնեմ, ո՛չ կպսակեմ։

— Տերտեր ջա՛ն, ասում եմ, շատ լավ ես հրամանք անում, գրկեմ՝ բայց մեղքս գեռ չընքիս դի՛ր, հետո ծանր ապաշխարանքն էլ մեջքիս բարձի։

— Դու, ասում ա, էդ աղջկանն ուզելով՝ իմ տանիցը մի քրդի կարմիր կարպետ խլեցիր։

— Կարգիդ մատաղ, ասում եմ, ի՞նչ կարպետ, մեր տանը քրդի կարպետ չկա, մենք կարպետներ ունինք, բայց բոլորը թարաքյամի են՝ Երեվանա բաղարումն առած։

— Ախմա՛խ, ասում ա, դե, տեսնում ես, որ տավարի հրեշտակությունից— զասաբությունից ավելի՝ գլուխդ ոչինչ բանից չի դուրս գալիս. քրդի կարպետ՝ հարյուր մանեթանոց թուղթ փողի անունն ա։

— Այո՛, տերտեր, ասում եմ, հայ-քրիստոնեի տանը 100 մանեթն ի՞նչ բան ունի, ես սովդաքյա՞ր եմ, վաճառակա՞ն եմ, բամբակիս հակները Թիֆլի՞ս հասել, արաղի բեռները Ջալալօղլի՞ն ա անց կացել, որ 100 մանեթի երես տեսած ըլնիմ, մենք մեր էլած-չէլածը մեր դռանը ծախում ենք, մեր ցավը քաշում, վախտվախտ էլ մի ոչխարի կամ տավարի գլուխ ենք կտրում, նիսիա (ապառիկ) բաժանում, միջիցը միերկու շամփուր խորովածացու աշխատում, աստծուն փառք տալիս։

— Հանաքը մի կողմը կենա, ասում է, Գալ-ափու, դու ինձ հարիր մանեթ վնաս տվիր. տասը տեղից Բարսեղի աղջկանն ուզում էին, տասն էլ չհաս էր. մեջտեղն էլ իմ ջեբն էր լցվում. դու ո՞րտեղից ներս մտար, հաս տեղից աղջիկ ուզեցիր, որ ինձ մի կոպեկ օգուտ չլինի։ էդ ամենն էլ ոչինչ, դու իմ տունը քանդեցիր, իմ բարեկամի ու բարերարի մոտ սևերես արիր։

— Ի՞նչ բարեկամ-բարերար,— հարցնում եմ։

— Բալասան աղի։

Խոսքերը միանգամից անմիջապես ցնցվեցան, սարսափն ու սառը քրտինքը մեծ ու փոքրին պաշարեց. մինչև հիմա Գալոյի պատմությունը կատակ էր թվում, կամ շատ-շատ քահանայի ջահասիրության և շարությանն հետևանք, այժմ գործի ծանրությունն ինքնաստինքյան բացատրվեցավ։

— Խոսքդ շարունակի՛,— երկար շշուկից հետո առաջարկեց Մելիք-Բաղալը։

— Ո՞նց թե Բալասան աղին վրեդ բարկացրել եմ, ա՛յ երեց,— շփոթված հարցրի ես,— կցեց նորից Գալոն յուր երկար պատմությունը։

— Բալասան աղի կամքն ա, ասեց, որ Բարսեղի աղջկանն ուրիշի համար ուզի, մի շաբաթ Հառաջ ինձ կանչել էր՝ գնացի. հրամայեց, թե փիլոնդ ծալի՛ր, գործակալին ղրկի՛ր, թե որ դու Պետրոսենց Գալոյի տղի նշանն օրհնել ես։

— Հետո, տերտեր ջա՛ն, ասում եմ, հիմի ի՞նչ ես հրամայում, մենք գնանք ո՞ր ջուրն ընկնենք։

— Ոչի՛նչ ասաց, մազաչափ է լ բանի տեղ մի՛ դնիլ, Բալասան աղի ասածը շատ ա չհաս. ինքն իրա աղա տեղովն օրն օխտն անգամ էլ եթե վանքի խցերը տունուդուսանի, շեմքերը մաշի, գլուխ չի կարող բերի. ինչպես քեզ ասում եմ դու մի գլուխ շաքար, մի գրվանքա չայ մեր տունը ղրկի՛, բոլորի բերանն էլ ցխիլն իմ բանն ա։ Դեռ Բալասան աղեն իրան ա տեսել, դեռ իմ սատանայությունից տեղյակ չի. ուզենամ թե չէ՝ հենց կլխկոնձի տալ տամ, որ փոսն ընկած ձիու պես թափահարվի, օձի պես կուտակ-կուտակ անի ու թաղվի մնա, իրա հերն եմ օրհներ խաթրն եմ պահում, ինձ պետք է գալիս՝ սիրտը շահում եմ՝ թե չէ՝ երկ՝ օրումն իժ օձի պես հենց կշանթեմ, որ ձենը երկինքը կհասնի. ինձ խլղաթենց մենծ տեր Սուքիաս կասեն։

— Ի՞նչ պտի անեի, ախպե՛ր, ձեզ եմ հարցնում, սուտ էր ասո՞ւմ, քիչ տուն ա քանդե՞լ, միտք արի, միտք արի ու նշանի քացրեղենի հետ մի գլխի տեղակ երկու գլուխ շաքար առա ու մի գրվանքա կապած, փեշատը կախ չայի հետ Սամփսոնիս ձեռքովն իրան ղրկեցի։

— Ուրախ-ուրախ վերցրել էր չայ-շաքարը,— շարունակեց Գալոն,— Սամփսոնիս հետ էլ բավական հանաքներ էր արել, նշանը մի հենց հաստատ պտի քցեմ քո նշանածիդ շլինքը, ասել էր, որ օխտը լուծ գոմեշը չկարենա ետ պոկել։ Մենք էլ մեզ համար ապահովացանք, խնամոնց հետ խոսացինք, էս իրիկուն նշանի հոգսը քաշեցինք, շնորհակալ եմ, դուք էլ եկել եք մեզ պատվելու։ Դեռ կանչվածները նոր էին հավաքվում, Սամփսոնիս ղրկեցի տերտերի հետևից։ Դուռը ծեծում ա ու ձեն տալիս. ինքը ձենը ճանաչում ա ու տղին հրամայում, թե ասա՝ տանը չի։ Դու մի՛ ասիլ, Սամփսոնս հեռվից տեսած ա ըլնում, որ տերտերը Բալասան աղենց տանիցը դուրս եկավ ու իր առաջն ընկած գնում ա։ Էլ չի ուզում վազի, քամակիցը հասնի, թողում ա՝ մինչև տուն ա մտնում։

— Ո՞նց թե տանը չի,— պատասխան ա տալիս Սամփսոնս,— հենց հիմի Բալասան աղենց տանից դուս եկավ ու իմ աչքի առաջին եկավ, տուն մտավ։

— Արի՛, Սամփսոն, արի, հանաք եմ անում,— ձեն ա տալիս

տերտերը ներսից.— էդպես կվախեցնեմ, լեղիդ ջուր կշինեմ, ա՛յ։ Դու գնա՛,— հրամայում ա,— ես էլ, հրոպպե չի քաշիլ, էնտեղ եմ։

— Ի՞նչ կասես, Մելի՛ք, բոլորը հավաքվեցին, մնացիք դուք՝ մի քանի իշխաններդ ու տերտերը. խեղճ Սամփսոնս տերտերից ձեզ էր վազում, ձեզանից՝ տերտերին։ Վերջը որ դուք ասել էիք, թե հենց հիմի գալիս ենք, համբերությունս հատավ, ինքս վեր կացա, գնացի դպա երեցն ու առանց դուռը ծեծելու՝ թուշ տուն մտա։ Ի՞նչ եք ասում, ախպե՛ր, մի քարափ շուռ անցավ, թե մի կայծակի ամպ էր՝ տրաքվեց դա իմ գլխին, չթողեց թե բերան բաց անեմ, orհնյալ ի տեր ասեմ. ձենը գագաթն առավ ու աշխարհքի լափը գլխիս ածեց.— ի՞նչ եք ինձ անհանգիստ անում, ձեր հերն է՛լ, ձեր տերտերինն է՛լ. ես էլ քո տան քահանեն չեմ, գնա՛ տեր Մարկոսին տար։

— Կարգիդ մեռնե՛մ, ասում եմ, ախար էն վազ էր, որ ծուխ ու մուխ չկար, տերտերների միջին սեր, խաղաղություն կար, իրար հավատալ կար, մի սև փողը հավասար ախպերաբաժին կանեին. քո ձեռնադրվելուց դեսն էն բաներն ո՞վ ա տեսել. իմ ու քո եք արել. մեզ հայվանների պես միջներիդ բաժին եք արել, անումներս ծուխ եք դրել ու կարգին էլ չեք հովվում. առաջ պատահած ժամանակը, ո՛ր տերտերին գնում էինք, ձեռաց հասնում էր, հարամներս հալալում, նեղացածին օրենք հասցնում (ճաղոռդել), հիմի հենց օր ա ըլնում, որ եթե ծխատեր քահան գեղումը չի գտնվում, մեկելդ չեք էլ ուզում տեղից շարժվիլ. հիմի էս կես գիշերին ես ո՞ւմ ոտը գնամ, ո՞ր տերտերը կհամարձակվի իմ հարկը կատարել։

— Չէ՛, ասում ա, Գալո, չէ՛, քանի շանը բաց չեմ թողել, քեզ գզգզիլ տվել, համով, հարգևորով (պատվով) վե՛ր կաց, քաշվի՛։

— Տերտե՛ր ջան, ասում եմ, ախար ինչի՞, ի՞նչ սհաթ անցկացավ, որ փոխվեցիր, էն օրը դու ինձանից չայ-շաքար ուզեցիր, առա ու ղրկեցի, էլ ի՞նչ անեմ։

— Մի շատ մեծ բան էլ չես արել, ասում ա, մեջքիդ զոռ ա հասե՞լ, որ 25 տարի ա՝ քո տանու քահանեն եմ, մի գլուխ շաքար ես ղրկել. հարյուր հետ գերեզմանն օրհնել եմ, տվածդ մի-մի աբասի ա էլել, ջաքարն էլ նրանց հաշվում դուս արի։

— Դե, տերտեր ջա՛ն, ասում եմ, իմ ուժս էնքան՝ ա պատել, էն եմ տվել, գեղրցու աբասին քաղքցու մանեթից թանկ ա։

— Շա՛տ չեն դուս տալ, ասում ա, ես քո նշանն օրհնողը չեմ, մեջը շհասություն կա, էգուց կտանեն, միրքիս ձարերը (մազ) մին-մին կքաղեն։

— Ի՞նչ շհասություն, ի՞նչ ա գլխիցը դուս տվել,— բարձրագոչ աղաղակ վեր ելավ բազմականների միջից։

— Ես էլ ձեզ պես էդ խոսքի վրա քար կտրվեցի, սառած մնացի,— շարունակեց Գալոն.— ոտիդ մատաղ, տերտե՛ր, հարցնում եմ, ի՞նչ չհասություն կա։

— Էդ մենք կպարզենք, ասում ա, երբ բանը տեղը կընկնի. դեռ է՛լի ուրիշ արգելքներ կան, որ ժամանակին կասենք։ Վերջապես, ասում ա, Գալո, դու էլ հացակեր ես, էն օրն ես քեզ ցերեկի պես պարզ հայտնեցի, որ իմ բարերարս Բարսեղի աղջկա համար ուրիշ մտքի ա, դու անմեղ տեղը ծախսի ու խարջի տակ մի՛ ընկնիլ, էն աղջիկը քո Սամփսոնի կնիկը չի կարող դառնալ, ականջիդ բուրդը հանի՛ր։ Հիմի էլ բարեկամաբար ես քեզ հասկացնում եմ, որ Բալասան աղի մի դատարկ հրամանը ձեր ողջ գեղի հետ ինձ համար հավասար ա. թեկուզ որ էսօր ասի՝ փիլոնդ վեր դիր, մտի՛ր մեչիդը, անխոս կերթամ, ալլահն ու ակպյար կանեմ. միտքդ ի՞նչ ա, ես կարամ նրա հրամանը գետինը քցի՞լ, ինձ հրամայած ա ասել, չհաս ա, ես էլ մինչև հոգևոր տիրոջ ոտքը չհաս գոռալով պետք է գնամ։

— Ա՛յ, կապվա՞ծ ըլի նա իր անտոնական կարգին, ինչքան նա հաս ու չհաս ա հարցնում,— ընդհատեց Մելիք-Բաղալը.— ա՛յ մարդիկ, դուք ու ձեր աստվածը, էս գեղումն առաջ հարյուր պսակից մինը չհաս պատահո՞ւմ էր, ո՞վ առաջինն էդ սովորությունը մեր մեջը մտցրեց, էդ պրոճոկվածը չէ՞ր։

— Բաս ո՞ր անիծածն էր,— պատասխանեց Սիսակը,— մոռացե՞լ եք այն տարվա 14 չհասները, որ ինքը հորդորեց, ինքը նշանեց, տասնական մանեթ ստացավ յուր համար, վերջը չհաս հրատարակեց, 14 գլուխ շաքար բարձեց ձիուն, տարավ տեղ հասցրեց ու հրամանը բերեց, և ահա այն օրից ցայսօր մեր մեջ կարգ է ընկել— օտարին թողած՝ արենակիցներին ենք վազում.

— Գալ-ափունի ջանն էլ ենք հանում,— կատակի տվեց Մելիք-Բաղալը.— իր քվեր աղջիկն օխտն օրեն ճանապարհ կորցրեց, Կողբումը մարդի տվեց, որ իր մորթոտած տավարի հետ անփող աղ լպստի, ու գեղի ծեսը քանդեց, տեղին հաս տեղից աղջիկ ուզեց։

Ամենքը ծիծաղեցին, բայց այդ դառը ծիծաղ էր, հուսահատ սրտից արտաժայթքված մաղձ էր քահանայի ստվերի դեմ։

— Հետո՞, հետո՞, խոսքդ վերջացրո՛ւ, Գալո՛,— ասաց Մելիք-Բաղալը,— հիմի չի գալիս նշան օրհնելու, է՛լի։

— Գալո՛,— ասաց ինձ վերջը,— թե ինձ կլսես, գնա կանչած զոնախներիդ մի հնարքով ցանի՛ր, ճամփու դի՛ր, Բարսեղի աղջկանից ձեռք քաշի՛ր, թե չէ՝ գլխիդ շատ խաթաբալեք կգան, ես քեզ...

— Կրա՛կ, կրա՛կ,— աղաղակելով տուն ընկավ հանկարծ մի երիտասարդ.— Գալ-ափո՛ւ, հասի՛ր, գոմդ ու մարագդ էրվում են։

Ամենայն ինչ մոռացվեցավ. բազմությունը բոպեական դուրս թափվեցավ։ Աստված հեռու տանի, երկինքը շառագունել է, Պետրոսենց Գալոյի գոմի ծածքը փլել է, տավարի բառաչն ու ձիու խրխինջը լսողի սիրտ է կտրատում, մարագը միանգամայն բոցի մեջ հուրհրատում է։ Գյուղում կուժ ու բղուղ չմնաց՝ դուրս եկան, բայց օգուտը՝ սակավ, մարագն ամբողջ այրվեց, քարաշար պատերը մնացին ցցված, գոմերն էլ հինգ կով յուրյանց հորթերով և մի ձի ծխախեղդ եղան։

— Լավ նշան չդրե՞ց, ո՞նց էր,— փսփսում էին իրար հետ բազմության մեջ խառնված երկու երիտասարդ։

— Դե հիմի թող գնա, իմ նշանածը տանի, Վասակ ջա՛ն։

— Քեռուս կյանքն երկար ըլի, Կարո ջա՛ն, նա որ չհրամայեր, քո հերդ ի՞նչ կհամարձակեր երկու կուժ նավթն ազերուզամբիցը (նկուղ) դուս բերել, մեզ տալ ու ղրկել կրակ տալու. կամ թե չէ՝ շատ էլ, որ քո հերն ասեր, ես կլսեի՞։

— Բաս ո՞նց էլավ։

— Էս իրիկնապահին որ քեռիս ձիուցը վեր եկավ, ինձ ղրկեց Գիլակերենց դուքանի դուռը. գնա՛, ասեց, բազմությունն էնտեղ հավաքված ա, քեզ համար մի քնչում (անկյուն) կանգնի՛ր, ականջդ կախ արա՛, տե՛ս ում բերանիցն ի՞նչ ա դուս գալիս։ Էս ու էն շատ պտի վայրահաչություն անեին քեռուս շվաքին, բայց մաշակար (կոշկակար) Համբոն, էն սուրբ Կարապետի ծեր դևը, չթողեց, աչքով- ունքով խալխին հասկացրեց, որ ես էնտեղ կանգնած եմ, նրանք էլ ցրվեցին, քուչեն դատարկվեց։

— Հետո՞։

— Ես էլ գնացի քեռուս հայտնեցի։

— Վնաս չունի,— ասեց աղեն,— ես էգուց ամենքի հերն էլ կանիծեմ, դու մեր Խուդոյի տղի հետ պատրաստ կա՛ց, մութը գետինն առավ թե չէ, Խուդոն ո՛ւր կղրկի, ի՞նչ բանի կդնի, տեղն ու տեղը կատարեցե՛ք։

— Դե մնացածը գիտենք, հերս նավթը հանեց աղենց զերուզամբիցը, մեզ տվեց ու ղրկեց Գալ-ափունի մարագն ու գոմը կրակելու, մենք էլ արինք։

Խոսողներն էին Բալասան աղայի քրոջ որդի Վասակը և Խուդոյի տղա Կարապետը։

СПАСИБО!

— Էգուց գլավնու՝ սուդիեքանց բիբոթ (ընտրություն) ա, ճաշից հետո տունը մի մարդ հավաքվին ձիթահանքի բակը, ինքը նաչալնիկն ա գալիս բիբորի. չեկողի մորը կլացացնեն, մի մանեթ շտրաֆ ունի,— Օ. գյուղն ընկած ձայն էր տալիս կապկերես քաչալ գզիր Ցակոն։

Հարկավոր չէր տուգանքի անունով երկյուղ տալ. տան գլուխ մեկը կար՝ գնաց, երկուսը կար՝ գնաց. մի-մի լավաշ հացի մեջ և մի կտոր պանիր, կամ աղը դրած ձուկը փաթաթում էր ամեն ոք ու գրպանը կոխում, վազում դեպի Ձիթահանքը։

Ձիթհանք կոչված տեղն Օ. գյուղումը չէր։

Մի փոքրիկ պարսկական գյուղի մոտ, Օ. գյուղից ժամաչափ հեռավորությամբ գտնվում էր մի ավերակ։ Ոչինչ հիշատակարան կամ փորագրություն չէր նշմարվում ավերակի վերա. միայն հիմքն և արևելյան կողմում մի շարք սրբատաշ քարեր ազատվել էին ժամանակի անողոք ճանկերից, իսկ մյուս քարերը թե ո՞ւր էին, հաստատ չէր կարելի ասել. ոմանք ենթադրում էին՝ պարսիկ ռամիկների ձեռքով յուրյանց գոմերի հատակը սալահատակած. այլք հակառակն էին պնդում, ըստ որում պարսկական գյուղը շատ փոքր էր և շատ աղքատ. մի կամ երկու նիհար եզներ և հինգ-վեց հատ հավ էին նոցա տնտեսության առարկայքը. պարսիկներից շատերը գոմ էլ չունեին. մի կիսագետնափոր, կիսախարխուլ խրճիթի մեջ մի անկյունում եզն էին կապում, մյուս կողմը մերկանդամ պարսկաձագերն էին կուչ գալիս յուրյանց բոոկտն ծնողների հետ, էլ ընչի՞ վերա պետք է գործ դնեին քարերը։

Ավերակն, ինչպես երևում էր, մի փառավոր անցյալ պետք է ունեներ, այդ աշկարա էր շրջապատված մեծանիստ պարսպատեղի հետքերից։

Եթե հավատ չընծայենք պարսկական արևելյան ճաշակով հերյուրած ավանդություններին, ապա ավերակը հայկական սրբարաններից մեկի մնացորդն էր անշուշտ։ Տեղական պարսիկների շռայլ երևակայությամբ՝ այն հնությունն յուրյանց նախկին տիրապետող իշխանի ապարանքն էր. նրա մոտի ապառաժ քարի ճեղքվածքից դուրս բխած առատահոս և ականակիտ աղբյուրը տուփասեր իշխանի մարմարյա շատրվանին ջուր է մատակարարել. նրա փղոսկրից ճերմակ հոլանի կանանց և հուրիփարի հարճերի նրբակազմ ու լուսափայլ մարմինները զովացնող ու թավշային փափկություն տվողն է հանդիսացել։ Իսկ հասուն և խոհական դատողությամբ՝ աղբյուրը սրբավայրի ջերմեռանդ միաբանական եղբայրության միակ ըմպելիքն է եղել, նոցա անդերն ու մարգաստաններն է ջրել, նոցա ջրաղացներն է պտտե, և հետզհետե յուր մեջ առնելով ներքևներում բխած մեծ ու մանր աղբրակները՝ մի գետակ է կազմել։

Ավերակի շրջակայքն այսօր հառաջվանից տարբեր մի այլ պատկեր է ներկայացնում. գյուղի ներկա տիրապետող քաղցած պարսիկ բեգի պարտեզն է կոչվում դա, որ ըստ ինքյան ոչ այլ ինչ է, եթե ոչ սաղարթաշատ ուռենիների երկու շարք, որոնց հովանու ներքև փափուկ սեզի վերա արժե ամառները սրտակից և սիրելի բարեկամների հետ պարարտ գառան տժտժան խորովածներ վայելել, վրեն էլ դատարկել Օ. գուղի հեշտախում և զվարթացուցիչ գինին, անշուշտ բարեխառնած աղբյուրի քաղցրահամ և սառը ջրով։

Այդպես էլ անում են. ամառվան շոգին կյուրակի օրերը միշտ կլսվի ծառերի տակից մերձակա գյուղորերից կտրիճների երգերի ելևէջները։

Այստեղ էր կարգադրել նաչալնիկն Օ. գյուղի տանուտերի ընտրելատեղին, ոչ թե գրավված տեղի հրապուրանքներից, այլ դիտմամբ ընտրությունը գյուղից հեռու կատարելու նպատակով. ըստ յուր ասության, որպեսզի անգործ հետաքրքիրների խառնաշփոթ խանգարմունքն արգելք չդառնա գործի շարունակությանը։

Բազմափորձ գավառապետի բազմամյա պաշտոնավարության գործնական կողմն էր այս։

Բազմությունը շատ մեծ է, Օ. գյուղն էլ մեծ է. «մեծ տունը մեծ ընտանիք կունենա»։

Անհրաժեշտ է ասել, որ ավերակի հարավ-արևելյան անկյունում միերկու սևացած—քարեր միմյանց թիկնած՝ կազմել են տակը մի պատուհանաձև խորշ. անձրևն ու արևը չեն ծեծում այդ խոռոչը, ուրեմն չէին էլ կարող ի հնումն հանգցնել այն ձիթաճրագները, որոնք հաճախ վառվում են եղել ջերմեռանդ հայ և թուրք ուխտավորներից. կերչակի ձիթի թանձրը ծուխը մրոտել, սևացրել է ամբողջ խորշը և նրա մեջ ընկած ձիթաշաղախ քարը, որին հայերը Ձիթահանքի քար են ասել, իսկ պարսիկներն՝ օջախ, որին հայերը մի նշանավոր բազմավաստակ հայ գործողի գերեզման են անվանել, իսկ պարսիկներն՝ իսլամի հավատարիմ ավանդապահի դամբարան։ Ա՞յս է եղել, թե այն, ո՞րն էր ուղիղ—մենք կարևորություն չունինք խորաղնին գտնվելու. փաստ է, որ այդ տեղը վաղ ժամանակ միապես հարգված է եղել երկու այլակրոն դրացիներից։ Այսօր եղածների հետքերն էլ չքանում են։

Ահա եկել է գավառապետը. նա կանգնած է ավերակի բաշի վերա. նրա տեղը բարձր է ամենքից, նա նմանում է այսօր մի թիսի, որի ձագերը, համեմատաբար, շատ փոքր են իրանից։

Գավառապետը ձեռքը բարձրացրեց։

Ընդհանուր և մեռյալ լռություն։

Բոլորեցունց գլուխները բաց են. երեք պաշտոնական գլխարկ միայն հանգիստ նստած են յուրյանց տեղը. երեք ճակատ միայն փայլում է երեկոյան պահու կարմիր արևից ցոլացող ճառագայթներից. մետաղյա աստղը պսպղում է երեք հոգու ճակատին. նոցանից մինը գավառապետն է, մյուսն յուր ատենադպրի օգնականը և երրորդը՝ մեզ քաջածանոթ Վլադիմիր Նեստորիչ Մելնիկովը։

Շատ ժամանակ չէ վերջինիս գալուստը. նա գավառապետից հետո, յուր սանձակոտոր նժույգը հեծած սիգապանծ մտրակելով եկավ, իջավ, ձին տվեց վաղուց իրեն սպասող խուդոյին և մոտեցավ, սեղմեց քազբրաժպիտ գնչքով գավառապետի ձեռքը։

Տհաճության կնճիռները խորշոմեցրին գավառապետի ճակատը. բազմությունը հաճությամբ նկատեց այս և ուրախացավ, ոչ ոքից ծածուկ չմնաց, որ սրտանց էր գավառապետի սառը վարմունքը Բալասան աղայի հետ։

— Հրամայեցե՛ք, Վլադիմիր Նեստորի՛չ,— փնթփնթաց նա և ձեռքով յուր ձախակողմյան քարը ցույց տվեց նստելու։

Մի թեթև ու թոռցիկ հայացք բավական էր գավառապետի համար ապահով լինել, որ յուր սիրելի ժողովուրդը չէր երկմտում յուր եկած անախորժ տրամադրության ստուգության մասին։

Եթե գավառապետն յուր բազմամյա փորձառությունով և բարակ խելքովն ուսումնասիրել է յուր կառավարած գավառի մեծ ու պստկին, շատերին հականե-հավանե ճանաչում է, ժողովուրդն էլ կշռել ու չափել է յուր սիրած նաչալնիկի ամեն մի շարժվածքը։

— Գդակներդ դրե՛ք գլխներիդ, սիրելի՛ք,— առաջին հրամանը գուրս եկավ գավառապետի բերանից։ Հրամանը կատարվեց։

— Ջորս-հինգ ամիս է՝ ես ձեր մեջ չեմ եղել,— սկսեց բարձր և հատ ձայնով նաչալնիկը,— և ինչպես տեսնում եք՝ տանուտերի ընտրություն այսօր թուրքի գյուղում եմ կատարում։ Դուք, իհարկե, պատճառը չգիտեք, բայց ես ձեզանից խռով եմ։ Այս վերջին տարին, մեր անշնորհք տանուտեր Կարապետի հիմարությունից, ձեր գյուղը միանգամայն աստծու երեսից ընկել է. օր չի անցկենում, որ մի խայտառակ դեպք չպատահի. մարագ կրակել, հնձան այրել, այգի կտրատել, արտ կրակ տալ, իրար գլուխ ճղել, վերջապես սպանություն— միմյանց վերա կարդում ես տանուտերի հայտարարության մեջ, կարդում ես ու շփոթված մնում. ի՞նչ դարձան այս մարդիկը, մտածում ես, կարծես սրանք Օ. գյուղացիք չեն։ Մի ժամանակ սրանք ոչ միայն մեր գավառի՝ բոլոր

Արարատյան աշխարհի օրինակն էին, ամենքից հարուստ էին, հացով, քաղաքավարությունով, լեզվով աշխարհքի բերանն էին փակել, այսօր ընդհանրական ամեն տնաքանդություն ձեր միջից է դուրս գալիս. քառասուն տարի է՝ ես պոլիցիական ծառայության մեջ եմ, կյանքիս մեծ մասը ձեր գավառումն եմ անցկացրել, հայր ու որդու նման ձեզ հետ աղ ու հացկեր եմ դարձել և այսքան անպիտանություն, ինչպես այս վերջին երկու-երեք տարում եմ ձեր գյուղիցը տեսնում, միտքս չեմ բերում. ո՞վ էր լսած ու տեսած Օ. գյուղացուն բանտ նստած, շղթայակապ բերդը տարված, բայց այսօր քանի՞սը կան։ Ինչո՞ւ եմ ասում։

— Աստված պատճառի տունը քանդի՛, որդիքը կոտորի՛, աղա ջան,— կոտորած դրգալի պես մեջ մտավ Մելիք-Բաղալը.— ով մեր գեղի հալալը հարամեց, ով մեր դառը քրտինքով աշխատած տխտմորի (խմոր) մեջ արուն խառնեց, ցեց դառավ՝ մեր քիսեն (քսակ) մտավ, գնդքն իրար քցեց, մեր գառան պես խոնարհ ջահելներին օձեր շինեց, մեր բեգերը (պարանոց) փաթաթեց, նրա տունը հրեղեն սուրբ մոնի, էս Ջիթհանքի օջախը նրան գունդ ու ֆծիծ ածի (խնդեցնել), հավի պես թարրատացնի, էստեղ վերքցի, գու, աղա ջա՛ն, ասա՝ ամեն։

— Է՛, ձենդ կտրի՛, Մելիք-Բաղա՛լ, քեզ անեծք չի սազում, քոնը խամ-խամ ուշունցներն են, որ եթե բերանիցդ հանել ես, լեզուդ կծակեմ, պարան կանցկացնեմ ու էս ծառիցը կախ կանեմ,— կատակի տվեց գավառապետը։

— Ջէ՛, աղա՛, չէ, գլխի՛գ մեռնեմ, աստծով ֆառանի էս խալին իր արյունը ծծողին իր աչքի առաջին բղղալով (բառաչել) գետինը դիպչելու. էն սուրբ Լուսավորչի լույս հավատիցն եմ խնդրել, որ քեզ էլ, էս էրված ու խորովված հասարակությունքին էլ, ինձ՝ էս գերեզմանի դուռը հասած անքեզ, անմիքուք հալիվորին էլ արժանը անի բաց աչքով էն օրը տեսնելու։

— Է՛հ, ծերացել ես, խելքդ ետ է տվել, Մելի՛ք, ձենդ կտրի՛, թող խոսիմ. չաչանակի (շատախոս) պես բերանիս մի՛ գալ։

— Խոսի՛, աղա ջա՛ն, հրամանք արա՛, դու էլ գիտես, թե քամին ո՞ր կողմիցն ա փչում։

— Ի՞նչ եք շանն իրավունք տալիս հաչալու,— կամաց հրելով գավառապետին՝ փսփսաց ռուսերեն Բալասան աղան։

Գավառապետը չլսել պատրվակեց, բայց դեմքից երևեցավ, որ ներսն արյունն եփ եկավ։

— Ինչ և իցե, Օ. գյուղի հասարակությո՛ւն,— նորից շարունակեց գավառապետը,— ես ձեզ ժողովել եմ այս սրբատեղի մոտ՝ լայն ու ազատ դաշտում տանուտեր ընտրելու։ Ահա քվեատուփը դրած է ճիշտ ուխտա-

տեղի մոտ, այս գիտությամբ է արած, դուք պետք է հիմի մոտենաք ա-
տիին. թող մոտ գնացողը առաջ համբուրի սևացած քարը, հետո քվեն
ձեռք առնի։ Ես իրավունք եմ տալիս ձեզ երեք հոգու քվեարկել, ում որ
դուք ցանկանում եք. ով որ, իհարկե, օրենքի զորությամբ ընտրվելու
իրավունքից զրկված չի լինել. ում սպիտակ քվեները շատ կլինի, նա
կլինի ձեր տանուտերը։ Աստված կսիրեք, սիրելի՛ք, ընտրեցե՛ք մի օրի-
նավոր մարդ, որ ձեր ցավերին դարման տանի։

— Ողջ Օ. գյուղի հասարակությունն, աղա ջա՛ն, իմ ձեռովս էս
թուղթը քեզ ա տալիս։

— Էդ ի՞նչ թուղթ է, Մելիք-Բաղա՛լ։

— Էս էն թուղթն ա, նաչալնիկն ապրած կենա, որ մենք տանուտեր
ենք ուզում էն մարդին, որից, թե միտդ ա, քեզ ձորումը ձուկն ուտելուս
դանգատ էի անում, որ իմ ջիբի կապեկները կտրեց շտրաֆ առնելով, որ
իմ բլբուլի լիզուն ծակն էր կոխել, որ ուզում էր մեր գեղի վրից ուշունց-
նատու անունը վերացնի, որ մեջը կարգ ու կանոն մտցրեց, որ...

— Դե լա՛վ, Մելի՛ք, խուլ չենք, հասկացանք, դուք ուզում եք Ար-
տեմ Սերգեյիչին. ես էլ շատ ուրախ կլինեի, բայց, նախ, կարծեմ նա չի
համաձայնիլ յուր պաշտոնը թողնել և, երկրորդ, թող ձեր փոխարեն քվեն
խոսի։

— Գլխի՛դ մեռնիմ, մեր ցավը մեզ էլ հայտնի ա, քեզ էլ, քար մի՛
քցիլ տալ, վայթե տակիցը Մոլլա Նասրադինի եղի պուլկի պես շոռ դուս
գա։

— Օ. գյուղի հասարակությո՛ւն,— ձայն տվեց գավառապետը,—
ցանկանո՞ւմ եք միաձայն ընտրություն, այս թուղթը ձեր գրա՞ծն է։

— Ցանկանում ե՛նք, ցանկանում ե՛նք, ոտիդ զուրբա՛ն, նաչալնի՛կ,
թուղթն էլ մեր բերանն ա։

— Աղա ջա՛ն,— առաջ եկավ ամբոխի միջից Բալասան աղայի քրոջ
որդի Վասակը,— թող էս թուղթն էլ խոսի։

Գավառապետը բաց արավ երկու հանրագրությունները. առաջինն
Արտեմ Սերգեյիչի մասին էր, երկրորդը՝ Խուդոյի օգտին։ Գավառապետը
մնացել էր մոլորված. ուսերի բարձրանալու հետ դեմքի վերա տարա-
կուսանքն էր արտափայլում.

— Ամո՞թ ձեզ, Օ. գյուղացի՛ք,— զզվանքով արտասանեց նա վեր-
ջապես,— այսչափ էլ մի հասարակություն իրեն ստորացնի՞, մի մարդ
երկու տեղ ստորագրի՞։ Դու սրանո՞վ ես խոսում, Մելիք-Բաղա՛լ։

Գավառապետն սկսավ կարդալ երկու թերթի վերա միաժամանակ
ստորագրողների անունները։

Մի քանիսն, արդարև, ամոթահար սևացան ու լռեցին. նոցա ձեռ-
քերը կեղծ չէին. բայց մեծամասնությունը բարձրաձայն աղաղակեց.

— Գլխի՛դ մեռնենք, նաչալնի՛կ, մենք մենակ Գոմշակերենց Արտո-
ի թղթիցն ենք տեղյակ, մենք ուրիշ տեղ ձեռ չունինք։

— Այս խնդիրներն ո՞վ է գրել, տանուտե՛ր,— հրամայեց գավա-
ռապետը։

— Առաջինն իմ գրածն ա,— մոտ եկավ ամբոխի միջից Սիսակը։

— Երկրո՞րդը։

Ո՛չ մի ձայն։

— Այստեղ արի՛, ա՛յ տղա,— կանչեց գավառապետը Վասակին,—
այս գիրն ո՞ւմ գրածն է։

— Երևան ենք գրիլ տվել,— հանդգնաբար պատասխանեց Վասակը։

— Սո՛ւտ ես ասում։

— Սուտ չեմ ասում, ես ինքս եմ տարել, մի աղա մարդի հինգ մա-
նեթով գրիլ տվել։

— Ո՞վ է գրել,— շեշտեց գավառապետը բարձր և թնդաձայն։

— Ինձ տվեք՝ տեսնեմ, նաչալնի՛կ,— առաջ եկավ Սիսակը և ձեռ-
քիցն առավ։

— Առե՛ք,— ետ տվեց նա թուղթը,— ես գրողին քաջ ճանաչում եմ,
բայց հաստատել դժվար է. գողն ինչքան կամեցել է թաքցնել յուր գո-
ղացած աքաղաղը, բայց պոչը դուրսն է մնացել. Տաճկաստանի ոլոր-մո-
լոր գրվածքներն երևում են։

— Կխնդրեմ հարգոյաբար ձերին գերազանցությենն՝ հրաման ընեք
արձանագրություն կազմել. պարոն Սիսակ մեզի կակնարկե, մենք պա-
տիվ կպահանջենք՝ օրինակ որոշյալ հոդվածոց հիմանց ապավինած։

Ժողովրդի միջից մի ընդհանուր քրքիջ և դառն տհաճություն դուրս
բռավ գրագիր վանեցու բողոքին պատասխան։

Սա պաշտոն ուներ այստեղ, ձեռքին բռնած ժողովրդագրական ցու-
ցակը՝ սպասում էր անունները կարդալու։

— Իրավունքս պաշտպանել կխնդրեմ, տե՛ր Հայրիկին ճետերն ամեն
նախատինք կտանին, բայց պատվո խնդիր կենսական է յուրյանց հա-
մար։

— Լա՛վ, լա՛վ, այդ վերջին բանն է,— արհամարհական հայացքով
պատասխանեց գավառապետը վանեցուն և վճռեց.— ոչ մի թուղթ չեմ
ընդունում, քվեատուփը թող խոսի։

— Որ էդպես ա, նաչալնի՛կ,— ասաց Մելիք-Բաղալը,— թող քար
քցողների անունները վանեցին չկարդա։

Գավառապետի հրամանով յուր քարտուղարը կարդաց։

Քվեի դրվեցան նախ Արտեմ Սերգեյիչը։

Քվեներն Օ. գյուղի հասարակության ընկուզենիների պտուղներն էին։

Ամենքից առաջ քվեատուփին մոտեցավ Մելիք-Բաղալը։

— Օ. գյուղի հասարակությո՛ւն,— գոչեց նա,— էն ա՝ ժամեժամքը մոտ ա, օրը մթնում ա, բայց թող իմ պոպոքն (քվեն) արևի պես լույս տա։ Աստված էլ, բանդեն էլ (մարդը) Արտոյին է ցանկանում. էս էլ իմ սիպտակ քարը։

Հասարակությունն ուրախ էր, որ Արտեմ Սերգեյիչի քվեատուփը լցվեց. բացի Խուդոյից, Դարբնենց Մատոյից, Փոշմանենց Սարոյից և սուդիա Դավթից, բոլորն էլ սպիտակ քվե տվին։

Վերջիններս Բալասան աղայի անցյալ գիշերվան խորհրդակիցներն էին. սրանք էլ, դիցուք, չէին ցանկանում Խուդոյի տանուտերությունը, բայց ահը վեր էր, քան մահը, հոգեհանն այնտեղ նստած էր և մի առ մի դիտում էր ամենքի ձեռքի շարժումները. ուստի ստիպվեցան սևանալ հասարակության առաջ, քան թե Բալասան աղայի, և սև քվե տվին։

Մեղադրելի չէր։

Մի դեպք միայն անհասկանալի մնաց ամենքի համար։

Օրենքով քվեատուփի երեսը պետք է վարագուրած լիներ։ Մոռացա՞վ արդյոք գավառապետն այս կետը, չենք կարող ասել, առայժմ դեռ մեզ համար այդ արկածքն Աղամա մութն է։ Խոսքս այն անթափանցիկ աղջամղջի մասին է, որ մեր Աղամ պապին հուսահատության մեջ ձգեց։

— Դե՛, հասարակությո՛ւն, էլ ո՞ւմ եք ուզում քար ձգել,— ձայն տվեց գավառապետը։

— Դու տեսար, աղա ջա՛ն, որ բացի մի քանի ցածահոգի ոտ լպրստողներից, ողջ գյուղն Արտոյին ա կամենում, էլ ո՞ւր ես քեզ գլխացավանք տալիս,— հառաջ եկավ Մելիք-Բաղալը։

— Օրենքն է հրամայում։

Քվեարկվեցավ և նախկին կանդիդատ Սարոն, բայց սակավ քվե ստացավ։

Մութն արդեն գետինն առնում էր։

— Շուտ արե՛ք, իմ ճանապարհն էլ է հեռու, ձերն էլ,— ձայն տվեց գավառապետը,— ո՞ւմ եք ուզում քվեարկել։

— Խուդոյին,— գոչեց միայն Վասակը։

— Ո՛չ, նաչալնի՛կ, ո՛չ,— կանչեց Մելիքը։ Նրա հետ ձայն տվին մի քանին էլ, բայց ձայնը փոխած՝ քունջ ու պուճախից։

Խեղճերը ճշմարտությունն ասել վախենում էին. Բալասան աղեն յուրյանց կորկոտը կեփեր։

— Ու՞մ եք քար քցում։

— Խուդոյին,— դարձյալ լսվեցավ Վասակի ինքնավստահ ձայնը։

— Խուդոյին՝ հո՛ Խուդոյին,— հրամայեց նաչալնիկը և ընկուզները նորից բաժանվեցան։

Մութն արդեն գետինն առավ. սարերի գագաթները սևապատվել էին. միայն Մասիսն էր յուր արևմտյան այտով աննշմար ժպտում. մարդիկը հազիվ ճանաչում էին իրար. մինչև թուրքի սոված աղայի տանից ձիթի ճրագը կբերեին, քվեատուփը լցվելու վերա էր։

— Էլ մարդ չմնա՞ց քվե տալու, եկե՛ք,— հրամայեց գավառապետը։

— Քանի՞ ձեն տաս, աղա ջա՛ն, ես իմ աչքովս տեսա, թե ինչեր անցկացան. հենց մարդ կար՝ երեք-չորս հետ էր տփին մոտ գալիս, ջիբիցը բուռ-բուռ հանում էր պոպոքներն ու լցնում,— արդ արավ Մելիքը։

— Թե որ շատ եք նեղանում, Օ. գյուղացի՛ք,— ձայնը բարձրացրեց գավառապետը—եկե՛ք՝ ինձ լսեցեք, էլ Խուդոյի քարերը չհամարենք, Արտեմ Սերգեյիչին գրենք տանուտեր, Խուդոյին կանդիդատ։

— Ինձ թեև խոսք չի հասնիլ,— ասաց Բալասան աղան,— բայց իմ կարծյոք, պ. նաչալնիկը շատ խելոք է դատում, Նեսկոս մեռնի՝ թի սուտ եմ ասում, թող Արտեմ Սերգեյիչը լինի տանուտեր, Խուդոն՝ կանդիդատ. գլուխը քարն ա տվել Խուդոն, աչքն ինչքան բարձրանա, ունքից վերև չի բարձրանալ. երկուսն էլ իմ բարեկամներն են, բայց Խուդոն Արտեմին չի հասնիլ։

Մելիք-Բաղալը լռվեց. ձայն չհանեց, բայց բոլորեքյան համաձայնեցին։

Գավառապետի հրամանով ճրագի լուսով տանուտեր գրվեցավ Արտեմ Սերգեյիչը և նրան կանդիդատ՝ Խուդոն։

— Ի՞նչ կասեք, տղե՛ք, սուդիեքանց ընտրությունը ետ թողնե՞մ, թե միաձայն ընտրություն անենք։

— Միաձա՛յն, միաձա՛յն։

— Ո՞ւմ եք կամենում։

— Թողեք էս անգամ էլ ես խոսեմ,— կրկին միջամտեց Մելնիկովը,— եթե Մելիք-Բաղալին իր հասակն արգելք չլիներ, ես ոչ-ոքի իրավունք չէի տալ նրանից հառաջ ընկնել. բայց ըստ որում դրան հիմի հանգստություն է պետք, ես լավ եմ համարում առաջարկել Մատոյին, Սարոյին և Դավթին։ Լավ չեմ ասո՞ւմ, Մելիք-Բաղա՛լ։

— Շա՛տ լավ ես ասում, Բալասան աղա՛, թուրքն ասում ա՝ հընկերը հընկերին թե չգտնի, աշխարհքս սիխ ու վախով անց կկենա. ես էսօրվանից հոտն առնում եմ, ես լավ գիտեմ, թե տանուտերն ո՞վ պտի ընի. խեղճ իմ Արտո՛, մեր ձեռովը քո տունը քանդեցինք. բայց հոգ չի,

վերևն աստված կա. վնաս չունի, թող սուդիեքն էլ ըլնին Սարոն, Մատոն ու Դավիթը։

— Համաձա՞յն եք, հասարակությո՛ւն,— կրկնեց գավառապետը։

Մի քանի ձայներ միայն խուլ արձագանք տվին Վասակին. ընդհանրությունը լուռ էր։

— Լռությունը համաձայնության նշան է,— վճռեց նաչալնիկը և քարտուղարը ձայն տվեց.

— Ընտրվեցան Օ. գյուղի համար հասարակության ստարշինա կամ տանուտեր՝ Արտեմ Սերգեյիչ Գոմշակերով, նրան կանդիդատ՝ Խուդավերդի Դուքաներվածով, իսկ սելսկի սուդիեք կամ գյուղական դատավորներ՝ Մարտիրոս Դարբինով, Սարիբեգ Փոշիմանով և Դավիթ Կաշեպոզով։

— Կճուճը գլորվեց, խուփը գտավ,— ասաց Մելիք-Բաղալն ու գլուխը, դարձրեց դեպի Օ. գյուղը։

Ամենքը տրտունջներ արձակելով՝ քարշ էին գալիս հուսակտուր և խավարի մեջ այս ու այն քարին դիպչում, գնում էին և օրհնում պատճառի յոթը պորտը։

Ամենքից վերջը ձիավորվեցան գավառապետն յուր մարդիկներով և Մելնիկովը։

— Спасибо! (շնորհակալություն),— սեղմեց Բալասան աղեն այս խոսքով գավառապետի ձեռքը։

Վերջինս չպատասխանեց. նա հուզված էր։ Գավառապետը մտրակեց յուր ձիուն և աջ գնաց՝ դեպի յուր կենտրոնատեղին, իսկ Մելնիկովը դեպի ձախ՝ Օ. գյուղը։

ԺԶ

ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ

Օ. գյուղացիք բոլորը ջուր մաղվեցան. ամենքի բերանն էլ բաց մնաց։ Երբ հրամանը բարձրաձայն աղաղակեց Օ. գյուղի հասարակության տանուտեր հաստատված է կանդիդատ Խուդավերդի Դուքաներվածովը, իսկ սուդիեք՝ Մարտիրոս Դարբինովը, Սարիբեգ Փոշիմանովը, Դավիթ Կաշեպոզովը։ Իսկ Արտեմ Գոմշակերովին քննության ենթարկված լինելու պատճառով՝ մերժվում է։

Արտեմ Սերգեյիչի անհաջողության մանրամասնություններն իմանալու համար մենք հետևենք Բալասան աղային։

Տանուտերի ընտրությունից հետո մի շաբաթ կացավ Մելնիկովն Օ. գյուղումը և այս շաբաթումը նա մեծ գործ կատարեց։

Նորա հրավիրանոքը մյուս օրն եկավ գյուղը հաշտարար դատավորն յուր պրիստավով։ Նոքա իջան Վլադիմիր Նեստորիչի մոտ։ Երրորդ օրը հրապարակական աճրդախոսություն եղավ. մի քանի մուրհակատերերի շարժական և անշարժ կայքերը սակարկության դրվեցին։

Գյուղականներից ոչ ոք մոտ չեկավ, բացի Խուդոյից և մեզ ծանոթ դատավորներից, որոնց հաստատությունը դեռ չէր եկել այս ժամանակ։ Սոքա էլ շուտ ետ քաշվեցան աճրդից. յուրյանց ասելով՝ ուժերիցը վեր էր։

— Ի՞նչ արած, ստիպված եմ ե՛ս ավելացնելու,— խղճաց բարեխիղճ Բալասան աղեն.— թեպետ ինձ վնաս է, բայց լավ է ինձ վնասվել, քան խեղճերի ապրանքը կիսագնի կորչի։

Շատ գթոտ մարդ է եղել Մելնիկովը, ամեն մի վաճառի հանված կալվածքի նշանակյալ գնի վերա հինգ, տասը մանեթ ավելի էր տալիս և յուր վերա թողնում աճուրդը։

— Ի՞նչպես անեմ, եղբա՛յր,— բացատրում էր նա հաշտարար դատավորին,— բոլորեքյան իմ ազգ ու ընտանին, իմ համագյուղացիքն են, ես ի՞նչպես թույլ տամ խեղճերի կայքը կիսագնի ի կորուստ մատնվի. իմ ազգի զավակներն են, ամենքիս սուրբ պարտքն է ազգասեր լինել։

— Անշարժ կալվածքները չեմ կարող գնահատել, կամ գինը մերձավորապես ճիշտ որոշել, որով և ձեր բարեսրտության աստիճանը՝ նշանակում է, չեմ կարող չափել. բայց ինչ վերաբերում է ձեր գնած շարժական առարկաներին, դուք, Վլադիմիր Նեստորի՛չ, արժողության քառորդ մասը չվճարեցիք,— սառը պատասխան տվեց հաշտարարը։

— Կարելի է ուղիղ էլ է ձեր ասածը,— արդարացավ Մելնիկովը,— բայց այդքանն էլ ավելորդ եմ տալիս. այդ իրեղեններից ոչ մեկն ինձ պիտանի չեն, մեր մառանումն ավելորդ տեղ միայն պիտի բռնեն։

— Էդ տնաքանդ որդամեռը ո՞նց պտի մարսի,— փսփսում էին բոլոր գյուղացիք.— հաղար մանեթանոց բաղն երեք հարյուր մանեթ ա գնահատել տվել, իր պարտքն 290 մանեթ ա, հիմի 310 մանեթով իր վրա ա թողում. դեռ պարծենում էլ ա, թե քսան մանեթ ավել ա տվել, ողորմություն ա արել։

— Ա՛յ ձեզ ղուրբան, ո՞վ ասեց, որ էդ անաստվածի պարտքը 290 մանեթ ա, ընդամենը դա հարյուր մանեթ էր տվել, 300 հասցրել եմ, էլի 290 մնում ա,— պարզեց տարակուսանքը պարտապանը։

Միայն մի այգի չէր այս անգամի աճրդի դրվածը. շատերի տունը քանդվեց։

Ամենից զգալին էր զառամյալ մահտեսի Առաքելի դեպքը։

Հաշտարար դատավորը վերջացրել էր յուր գործը և վերադառնում է։

Նորա ճանապարհն է մի ջրաղացի առաջով։ Ուղիղ ճանապարհի մեջտեղովը դիմացիցը փայտի վերա կոթնած գալիս է մի ծերունի։

Հաշտարարի ուղեկից ձիավորը հեռվից ձայն տվեց ծերին՝ մի կողմը կանգնել. բայց եկողը ուշք չի դարձնում և ոչ գլուխն է բարձրացնում։ Ձիավորը առաջ աշտանակեց և մտրակը բարձրացրած սպառնում էր խփել, եթե ծերը ճանապարհից դուրս չգա։

Ծերունին դողդողում է և մեջտեղը կանգնել է։

Հանկարծ նա սաստիկ երերաց ամբողջ մարմնով և երեսի վրա ընկավ։ Հաշտարարի ձին խրտնեց, քաշը ցցեց, կանգնեց առաջի ոտքերի վրա և մազաչափ էր մնացել, ոտքերով պիտի կանգներ ծերի վրա, եթե դատավորը չհաջողեր սանձը թափ տալ և ետ քաշել։

Ամենայն դժվարությամբ նա կարող եղավ զսպել ամեհի երիվարի կատաղությունը և ցած թռչել թամբից։

Հաշտարարը հրամայեց յուր ուղեկիցներին վերցնել ծերին։

Նորան նստեցրին ջրաղացի պատին դեմ տված։

Ջրաղացի ցրդոնի (անիվի տեղը) տակից դուրս ցայտած ցողերը և սառը հովը ետ բերին ուշաքնաց ալևորին։

— Օխա՜յ, ես քո ցելթուքսիդ (ցայտյուն) մատաղ,— վերջին շնչումս էլի դու ինձ ետ բերիր,— յուր սառած աչքերը դեպի ջուրը դարձրած՝ մրմնջում էր ծերունին.— բայց սրանից հետո ապրեմ ո՞ւմ համար. դու էիր իմ մխիթարանքը, կորած որդուս եթիմների (որբ) ապավենը, որ ձեռիցս դուս եկար. ի՞նչ անեմ, աստված պատճառին բարի տա իր գործքովը...

Ծերի խոսքերը դատավորի հետաքրքրությունը շարժեցին. նա մոտեցավ ալևորին և երկար հարց ու փորձերից այս իմացավ, որ յուր միակ որդին ընկել է ջրաղացի անիվի թևերի տակ և խեղդվել։ Գավառական բժիշկը կամեցել է անպատճառ անդամահատության ենթարկել նորա մարմինը, իսկ հայրը երեսուն մանեթ պարտք վերցնելով Բալասան աղայից՝ շահել է լեզու չհասկացող օտարազգի բժշկին և ազատել սիրելի որդու դիակը մաս-մաս հոշոտվելուց։ Այն երեսուն մանեթը տոկոսակալել է, 500-ի է հասել, և այսօր որդուն կլանող ջրաղացը նորա վեց որբերին էլ կենդանի-կենդանի թաղում է յուր մեջ. անտեր թշվառների ապրուստի միակ միջոցն էր հայրասպան ջրաղացը, որ որդվոցն էլ քաղցածության մեջ մահացնելու դատապարտած սեփականություն է դառնում այն մարդի, որը, ինչպես ծերունին վերջումն ստուգել է, դրդել է բժշկին կտրատել և ապա ինքն է համոզել ծերին կաշառքի միջոցով ազատել յուր մեռելն անդամահատելուց։

Հաշտարարը մի սառը զզվանքով ձին մտրակել, հեռացել է սրտախաշ տեսարանից, թողած ծերունուն նույն օրն յուր հաշիվը վերջացնել անցավոր աշխարհքիս հետ՝ ճակատագրի կամայականությանը հանձնելով վեց խմորակերներին։

Ծերունու վերջին խոսքերը հասավ բառացի կերպով Մելնիկովի ականջին. մի շարք անեծքներ են եղել նոքա Բալասան աղայի ժառանգներին ուղղած, բայց նա—շունը կհաչի, քարվանը կքոչի՝ պարսկական առակն է պատասխան ուղարկել անշնչացած դիակի հետևից ու ինքը հաշտարար դատավորի գնալուց հետո հրավիրել է յուր մոտ փաստաբան չոլախ Հարությունին, կարգի է դրել նորա ձեռքով Դոնգարենց Ասոյին սպանող Դվակոթենց Հայրոյի թղթերն ու շտապել դեպի քաղաք։

— Մի քանի օր էլ կա՞ց, աղա ջա՛ն, Բարսեղին կանչի՛, համոզի՛, կլինի որ քո խոսքդ լսի ու էլ շտա իր աղջիկը Գալոյի տղին,— խնդրեց Խուդոն։

— Հիմա՛ր,— ասաց Բալասան աղեն,— իմ հետ մնացած յուրաքանչյուր ժամը կարող է քո գործը ծովը ձգել. հանկարծ Արտեմ Սերգեյիչը կհաստատվի տանուտեր և քո ոտներդ սառը ջրումը կմնան. ես շտապեմ, որ բանը փոխեմ։

Վլադիմիր Նեստորիչն ուղիղ կր. եթե մի շաբաթ էլ ուշացած լիներ. Արտեմ Սերգեյիչը հաստատված էր։

Գավառապետն օգուտ էր քաղել Մելնիկովի գյուղում ուշանալուց և մյուս օրը փութացրել էր ընտրողականը ներկայացնել հաստատության։

Բալասան աղեն յուր աչքերովը տեսավ դիվանատանը հաստատության հրամանը պատրաստ. մնում էր միայն ստորագրելու։

— Թող երկու չէ՝ չորս շաբաթով էլ ետ մնա հաստատությունը,— խոստացավ Մելնիկովի շնորհքով տեղ ստացած ատենադպիրը և հրամանը գործերի տակը դրեց։

— Ուրեմն ի գո՛րծ,— վճռեց Վլադիմիր Նեստորիչը և ներկայացրեց քրեական ատենին յուր բերած թուղթը նրանց ստորագրողների հետ։

Բանն ի՞նչ էր։

Չորս տարի հառաջ գավառի գյուղերից մեկից մի հայ աղջկա փախցնելու ժամանակ սպանվեց մի թուրք բեգ և կալանավորվեցին նորա երկու սպասավորները։ Վերջիններս խոստովանեցան, որ յուրյանք մասնակցել են սպանված կալվածատեր բեգի հրամանով։ Փաստաբան Ս. Ա. Պարոնի ճարտարախոսության շնորհիվ թուրքերը դատապարտվեցին մի տարվա բանտարկության։ Նոքա յուրյանց ապաշխարանքը լրացրել էին։ Այժմ այդ մարդիկը, կաշառված Բալասան աղայից, թուղթ են տվել և անձամբ էլ եկել միայում են, թե յուրյանց ուղարկողն և բեգի սպանվելու

պատճառն եղել է Արտեմ Սերգեյիչը, որի եղբոր որդու համար, իբր թե, փախցնելուս են եղել աղջկանը։

Այն թղթովն առաջնորդեց Մելնիկովը թուրքերին դեպի քրեական դատախազը։

Վերջինս անմիջապես հեռագրեց յուր օգնականին՝ Գոմշակերովին կալանավորելու և դատի ենթարկելու։

Բալասան աղան այսքանով չբավականացավ. մի հեռագիր ևս քաշեց Թիֆլիս Արտեմ Սերգեյիչի տիրոջը և այս մանրամասնությունների հետ հայտնեց, թե յուր մոտ գրավոր փաստեր կան նորա ստորին գործակատարներից, որոնցով ապացուցում է, թե Արտեմ Սերգեյիչը խալվարն ութ մանեթով գնած գարին հաշվել է տիրոջ վերա 12 մանեթով. հետևաբար ամեն մի խալվարի մեջ չորս մանեթ գողացել է տիրոջից։

Այժմ ինքը Մելնիկովն առաջարկում է յուր պատրաստականությունը երաշխավոր լինելու կապալառուին և փականքի տակ դնելու Գոմշակերյանցի շարժական և անշարժ կայքերը։

Երկու օր էր անցել այս անցքից, և ինչպես ասացինք սկզբումը, Օ. գյուղացիք սարսափով լսեցին Խուդոյի տանուտերության հրամանը և յուրյանց աչքովը տեսան չոլախ Հարությունին կնքելուս Արտեմ Սերգեյիչի ունեցած-չունեցածը։

ԺԷ

ՀԱՍԱՐԱԿԱՑ ԴԱՏԱՍՏԱՆ

— Բալասան աղե՞ն։

— Օ՜հ, չպրծանք այդ զզվելի մարդից,— խոժոռ դեմք առած՝ բացականչություն արավ գավառապետը, Օ. գյուղի ընտրության օրից մի քանի օր անց, երբ որ թուրք յասավուլը ներս մտավ նորա առանձնասենյակը և հայտնեց Մելնիկովի գալուստը։

— Ասա՝ ներողություն էր խնդրում, հարկավոր գործեր է ստացել, ուրիշ ժամանակ շնորհ բերե՛ք։

Յասավուլը քայլերն ուղղեց դեպի դուրս։

— Ի՞նչ եմ գժվել. էլ կպրծե՞մ. օրն էգուց յուր քսությունը գործ կդնի, ա՛յ անիծած դաժան հոգի, սպասի՛ր,— հրամայեց գավառապետն այս կարճ մտածողություններից ետ յասավուլին.— ասա՝ խնդրում էր։

Վերջին խոսքի հետ ինքը վեր կացավ և հառաջեց դեպի դուռը։

— Օ... օ... օ՜... Վլադիմիր Նեստորի՛չ, мое почтение! շատ ուրախ

եմ,— զվարթ դեմքով ձեռքը ձգեց նաչալնիկը տուն մտնող թանկագին հյուրին,— այդ ո՞ր քամին պտրտեց ձեզ դեպի մեր աշխարհքը. հրամայեցե՛ք։

— Спасибо!— և Բալասան աղեն երեք անգամ պինդ սեղմեց գավառապետի ձեռքը։

— Ջարժե՛։

— Ինձ համար շա՛տ և շա՛տ արժե, Գրիգոր Պետրովի՛չ, դուք ամեն ժամանակ իմ խնդիրներս կատարել եք, իսկ այս վերջին անգամն Օ. գյուղում ինձ մեծ բարեկամություն ցույց տվիք։

— Դե ի՛նչ անենք, Վլադիմիր Նեստորի՛չ, օրենքից թեև մի փոքր շեղվեցինք, բայց պատվական բարեկամի համար մի չնչին ծառայություն անելը մեր պարտքն էր։

— Ի՞նչ էլ հարմար տեղ էիք ընտրել և ժամանակ. մի ժամեն ճանապարհ, թուրքերի մեջ, երեկոյան դեմ, հա՛, հա՛, հա՛, ловко, брат, ловко, нечего сказать, да! որքան խելոքություն, ի՞նչ հեռատեսություն. ո՛վ ընտրվեց, ո՛վ հաստատվեց, да! մեր նահանգումը ձեզ նման գործ հասկացող ոչ եղել է և ոչ կլինի, այդ ես միշտ տեղումն ասել և գրել եմ և այժմ նույնպես կգրեմ։

— Մի՛ նեղանաք, խնդրեմ, Վլադիմիր Նեստորի՛չ։

— Ի՞նչպես, արժանավոր մարդի համա՞ր. այդ խորին պարտականություն է իմ կողմից. մենք գործի մարդիկ ենք, գործը պահանջում է լավ ու վատ ամեն բան տեղ հասցնել. թող որոշվին, թող ճանաչվին հավատարիմն ու ապերախտը, բարեմիտն ու վնասակարը. թող անպիտաններն արժանի պատիժը, իսկ արժանավորները վարձատրությունն ստանան։ Այդպե՞ս է, թե ոչ, Գրիգոր Պետրովի՛չ։

— Անկարծիք, Վլադիմիր Նեստորի՛չ, մենք ումնից հաց ենք ուտում, պետք է նորա շահերն աչքի առաջ ունենանք, բայց ամեն ժամանակ, տեղի-անտեղի, աննշան և չնչին դեպքերի համար ձանձրություն տալը սորան կամ նորան՝ ավելորդ է։

— Սխալ եք, Գրիգոր Պետրովի՛չ, ես այդպես չեմ հասկանում, հավատարիմ ծառան հավատարիմ շան նման է, նա պետք է դունչը կոխի ամեն քունջ ու պուճախ (անկյուն), յուր սուր հոտոտելիքը լարի, պտտի, քրքրի և ամեն գտածն յուր տիրոջը ներկայացնի. ես միշտ այդպես եմ անում, խորություն չեմ դնում միջոցների մեջ, մեծի ու պստկի, հասկացողի ու ռամկի մեջ, ինչ տեղից ինչ կասկածավոր հոտ առնում եմ՝ ձեռաց հասցնում եմ, և դուք տեսնում եք, որ ես սխալված չեմ. ամենքի մոտ պատիվ ունիմ, ամենքն ինձանից քաշվում են, կամքս կատարում են, ինչպես դուք ասի՛ք։ Իրավ է, արածդ մի մեծ բան չէ, ձեզ համար

միևնույն էր Մարկոսը լիներ տանուտեր, թե Կիրակոսը, բայց դուք չգիտեք, թե խուդոն ո՛րքան է ինձ պետք. ձեզ շատ քաջ հայտնի է, որ գյուղական հասարակությունն այնքան մեր չինովնիկիցն ահ չունի, ինչքան յուր տանուտերից, և բնական է, նորան է միշտ տեսնում. նորանից անմիջական կախումն ունի, նորա աչքին է շարունակ նայում, բոլոր յուր գործը նորա ձեռքովն է կատարելու, և իհարկե, նորա ազդեցությունն ավելի կլինի։ Դուք չգիտեք, թե գյուղերի մեջ ես որքա՞ն անձնական հաշիվներ ունիմ. մի տեղ փող ես տվել՝ դժվար է ստացվում, մյուս տեղ լավ կալվածք կա ձեռք քցելու, երրորդ տեղում մեկը ճանապարհիդ քար է գլորում, մի ուրիշի ռեխը չի, ուղղակի, քեզ դյուր գալիս. դրանց բոլորի հառաջն առնելու է նույն տանուտերի ձեռքով։ Ես այսօր մեր գավառի տանուտերներից շատերին իմ ձեռքիս տակն ունիմ առած, ամեն տեղ իմ ցանկացածներն են ընտրվում։

— Բայց շատ էլ ժողովրդին ճնշել հարկավոր չէ, Վլադիմի՛ր Նեստորի՛չ, ես վախում եմ հասարակաց կարծիքից. էգուց, եթե օրենքը դատախազ չլինի, աշխարհքը կդղրդա, թե բարեկամի համար ժողովրդի շահերը ոտնատակ է տրվել, ժողովրդի ցանկացածը մի տեսակ գլորվել է կանդիդատին ընտրել տալու համար, բաց քվեարկություն է եղել..

— Հա՛, հա՛, հա՛,— քրքջաց Մելնիկովը։

Դեռ ծիծաղի վերջավորության ծայրը ծորում էր, որ գուռը բացվեց և կիսաբաց արանքիցը երևեցավ գավառապետի կրտսեր օգնականի գլուխը։

Այս մարդը մի հին ծառայող էր, հիսուն տարին լրացրած մեկն էր երևում. նա յուր կյանքի մեծ մասն անց էր կացրել գավառների դիվաններում. չգիտեմ ո՛րտեղ, մի-երկու տարի կարողացել է գրաճանաչ լինել և մտել է հին գավառական դիվանատներ որպես ստորին գրագիր, բավական տարիներ գրագրի ոճկով կատարել է յուր մեծավորների տան սպասավորի և ծախսարարի պաշտոնը, վերջին արտոնությունն առավելապես վայելել է ամուսնացած մոլրովների մոտ, յուր շողոքորթ աղվեսական ծամածռություններով, ստորաքարշ շարժումներով, կանացի մանրը պահանջները ճշտությամբ հասկանալու համար նա միշտ տիկնոջ ներքին հանձնարարությանց պաշտոնյան է եղել։ Շատ գավառներում է նա պաշտոններ վարել և միշտ երկրորդական դերի մեջ. շատ գրագիրներ եկել, իրանից առաջ են անցել, բարձրացել են, ատենադպիր, օգնական են դարձել, յուր վերա իշխանավոր են կարգվել և ինքը միշտ՝ քթի տակին ծիծաղելով՝ հայտնել է յուր ուրախությունը նրանց բարձրանալու մասին։

Քանի անգամ նրան ծառայությունից արձակելու խնդիր է ծագել և միշտ նա հնարքը գտել է տեղումը մնալ և շատ էլ ուրախ է, որ յուր երեսնամյա պաշտոնավարության մեջ կրտսեր օգնականից չի բարձրացել։

Ահա հենց այս մարդն էր, որի գլուխն երևեցավ և կրկին ետ քաշվեցավ. խոհեմությունը թույլ չէր տալիս նրան առանց յուր մեծի հրամանին ներս գալու։

— Ну, вот, вот! Թող Վասիլ Վասիլիչը վճռի՝ ուղի՞ղ եմ ասում, թե ոչ,— էլի շարունակեց յուր ծիծաղը Մելնիկովը՝ հետն էլ չսպասելով տանտիրոջ կոչմանը, ինքը ձայն տվեց,— милости просим!

Վասիլ Վասիլիչը զգույշ մկան նման, ներս դրելով բնավորոշ հատկությամբ և ժպիտով՝ դեռ մի աչքով յուր մեծավորին էր նայում։

— Մտե՛ք,— կիսաբշխանական եղանակով հրամայեց գավառապետը, և օգնականը ներս եկավ, անվստահությամբ ձեռք տվեց Մելնիկովին ու նստեց դրան մոտ՝ հեռվումը դրված աթոռի եզրին. նա նման էր փշի վերա նստողի։

Սկզբումը Վլադիմիր Նեստորիչին հեշտ չեղավ կարծիք դուրս կորզել Վասիլ Վասիլիչի լեզվից, ամեն մի խոսքի հետ դեռ նախ գլուխը դարձնում էր նա դեպի յուր մեծավորը, և երբ բոլորովին ապահովեցավ, որ յուր խոսքերը չպիտի գրգռեն յուր իշխանավորի զայրույթը, սիրտ առավ, աթոռն հառաջ քաշեց և սկսեց Մելնիկովին արդարացնել։

Նա միանգամայն համաձայն էր Բալասան աղայի հետ, թե պաշտոնյան մի մեքենա է, յուր սեփական կամքը չպետք է ունենա, պետք է աշխատի յուրաքանչյուր ազդեցիկ մարդի կամքովն ընթանալ և այլն, և այլն։

— Բայց ի՞նչ կասե հասարակաց կարծիքը, Վլադիմիր Նեստորի՛չ,— ասաց գավառապետը։

— Քանի՞ կոպեկի կառնեմ հասարակաց դատաստանը. իմ բանն աղ է, թող ով կուզի՝ հաչե, այնպես չէ՞, Վասի՛լ Վասիլիչ։

Օգնականը կմկմաց. նա հասկացավ յուր սխալը, յուր մեծավորը համաձայն չէր Մելնիկովի հետ, այժմ ի՞նչ պատասխան տա, որ երկու սրի արանքից դուրս պրծնի։

— Да не бось, брат (եղբա՛յր, մի՛ վախիր) ասա՛ կարծիքդ, ես նեղացող չեմ, ես գիտեմ, որ դու վաղուց այդ թեորիային ես հետևում,— հրամայեց գավառապետը։

— Իմ կարծյոք՝ Վլադիմիր Նեստորիչի դատողությունը ճշմարիտ է,— կիսավստահ, վիզը ծռած արտասանեց Վասիլ Վասիլիչը.— հիմի չկա հասարակաց կարծիք, ամեն գլխից մի միտք է դուրս գալիս, մարդ ո՞ր մեկին լսի. նա, որ հետևիցդ քեզ դատապարտում է, երեսիդ շողոքոր-

թում է և՛ քո խնկարկուն է դառնում. խելոքությունը Վլադիմիր Նեստորիչի ասածին համաձայն վարվելն է։

— Այո՛, ա՛ռ կե՛ր, քանդի՛ր, օգուտդ ճանաչի՛ր, մեծիդ կամքը լավ հասկացի՛ր, թող ով ինչ կամենում է՝ խոսի, միայն քո գրպանդ լիքը լինի քո իշխանությունից պատիվներ ստանաս,— հաստատում էր Մելնիկովը։

— Մեզանից ամեն մեկը,— կրկնեց Վասիլիչը,— մի հասարակ գյուղացու որդի է, իհարկե, բացի ձեզանից, Գրիգոր Պետրովի՛չ,— սխալն ուղղեց նա.— իմ հայրս կապոցն ուսին գյուղերումը թափառում էր. Վլադիմիր Նեստորիչը մի գյուղացու որդի է. ամեն մեկս մի հնարքով դուրս ենք եկել մեր նախկին դրությունից. բայց ի՞նչ կդառնայինք, եթե մեր քսակը մոռանայինք և մեր իշխանությանը հակառակ գնայինք։

— Ջուր ես կեղծավորում ինձ, Վասիլ Վասիլի՛չ,— ասաց նաչալնիկը.— ես ինքս էլ մի իշխանական ցեղից չեմ, բայց իհարկե, երկուսիցդ էլ առավել պատվելի տանից եմ և համալսարանական կրթությամբ։ Խոստովանում եմ՝ համալսարանի գաղափարները հետզհետե օրը ցնդեցին, շրջանն յուր ուժեղ թաթն իմ վրա էլ դրեց, ականջներս խլացրել եմ բարձր ձգտումների և ներքին ձայնի դեմ, ինքս էլ հավասարապես դատապարտելի եմ, բայց չես կարող ուրանալ ճշմարտության դատաստանի հավանությունը։

— Կարելի՞ է,— դուռն երեք անգամ բախելով՝ դրսից գոչեց մի ձայն։

— Դե հիմա խոսի՛ր, Վլադիմիր Նեստորի՛չ,— գլխով դուռը ցույց տվեց գավառապետը և առաջ գնաց և դուռն յուր ձեռքով բաց արավ։

Ներս եկավ մի մաքուր հագնված երիտասարդ, քաղաքավարությամբ ողջունեց ամենքին և ասաց.

— Ջխանգարեցի՞։

— Ընդհակառակն, շատ ուրախ եմ, հրամայեցե՛ք նստել,— աթոռ ցույց տվեց գավառապետը։

Օգնականն, օգուտ քաղելով հարմար դեպքից, գլխարկն առավ և շտապ գլուխ տալով՝ առանց նկատվելու դուրս ծլկվեց։

— Ինչպե՞ս եք, պարո՛ն Սմբատ,— քաղաքավարի հարցրեց Բալասան աղան։

— Շնորհակալ եմ, պարոն Մելնիկյանց։

— Ի՞նչ եք անում, ընչո՞վ եք պարապած։

— Այժմ ես, պարոն Մելնիկյանց, մեր ժողովրդի ներքին կյանքն եմ ուսումնասիրում, անմխիթար է, վերին աստիճանի տգիտություն, աղքատություն...

— Այո՛, պարոն Սմբա՛տ, այո՛, ինչ պետք է լինի մեր ստորին դասակարգի վիճակը. ամեն կողմից ճնշումն, հարստահարություն, վաշխառուների ճիրանների մեջ սեղմված, տնտեսական դրությունն անապահով, ներքին և արտաքին ցեցերից կերված, կեղեքված, տգիտության մեջ թաղված, նայողի աչքիցն արյուն է կաթում։ Հինգ րոպե հառաջ պարոն գավառապետի հետ այդ ցավերի մասին էինք խորհրդակցում, մոլորվել, մնացել ենք. այնպես չէ՞, պարոն Գրիգո՛ր։

— Ը՞մ... մ.. մ...— արավ նաչալնիկն և ուսերը անխոս վեր քաշեց։ Այդ նշանակում էր չգիտեմ՝ ի՞նչ ասեմ աներես ստախոսության համար։

— Հա՛, շա՛տ ցավալի է, շա՛տ, պարո՛ն Սմբատ. մի քանի օր առաջ մեր գյուղն էի գնացել.— շարունակեց Մելնիկովը.— տարին մի-երկու անգամ սովորություն ունիմ գնալու. գնում եմ, ժողովում եմ հասարակությունը, յուրյանց պակասությունները հասկացնում, միջոցներ եմ առաջարկում նոցա վիճակի բարելավության համար, իմ կողմից հանձն եմ առնում ըստ կարյացս նյութապես օգնելու, ազգասեր և հասկացող մարդկանցից օգնություն խնդրելու և այլն, և այլն։ Դե, հարկավոր է, գիտեցողը չգիտեցողին պարտական է. հայրենասիրությունը մարդուս առաջին պարտականությունն է, ազգասեր մարդն ազգի շահերի համար յուր կյանքը պետք է զոհի, տգետ ընկած եղբոր համար յուր կարողությունը չպիտի խնայի։ Այս անգամ էլ գնացել էի հոգալու, որ մի տարրական դպրոց բանանք մեր գյուղումը. իմ կողմից, որքան ձեռքիցս կգար, հանձն առա նպաստել, շնորհակալ եմ պարոն գավառապետից, սա ևս յուր աջակցությունը չխնայեց. այն օրը տանուտերի ընտրություն ուներ, ինքն յուր գործը թողած՝ ինձ հետ միասին խրախուսում և հորդորում էր. գործի հաջողության համար էլ մի արժանավոր մարդի տանուտեր ընտրեց, որը բավական հասկացող և ուսման նշանակությունը ճանաչող անձն է։ Ես այսօր եկել եմ իմ շնորհակալությունս մատուցանել պարոն գավառապետին ըստ որում երեկ նոր տանուտերն ինձ մոտ էր, ավետեց, որ ինքը ժողովրդի մեծամասնության համաձայնությունն արդեն ստացել է։ Ես էլ ձեռքը սեղմեցի, մոտս ճաշի պահեցի և խոստացա յուր արածները լրագրում հրատարակել տալ. շատ ուրախացավ խեղճը, պատվական տղա է։

— Լսել եմ ձեր այդ հասկացող գյուղացու մասին, Գոմշակերյանց ծաղրալի ազգանուն ունի. ասում են՝ բավականին զարգացած մարդ է, ցանկանում էի հետը տեսնվել։

— Ո՛չ, ձեր ասածը չկամեցավ տանուտեր լինել, նա օտարության մեջ է. այս նոր տանուտերը նորա կանդիդատն էր, փոքր ի շատե կարդալ-գրել էլ գիտե, շարունակ կարդում է իմ ուղարկած լրագիրները, ուրիշներին էլ տալիս է կարդալու. ես այժմ իմ չնչին ծառայությամբս

կարող եմ պարծենալ, որ մեր Օ. գյուղը գավառի բոլոր գյուղերից հառաջադեմ է. ձեզ էլ կխնդրեի մի անգամ իմ՝ այնտեղ եղած ժամանակը ջնորհ բերել. շատ կհավանեիք և կուրախանայիք. այնպես չէ՞, պարոն գավառապե՛տ։

— Ը՞մ... մ... մ... այսի՞նքն... ը՞մ... մ... մ... ну, да!

— Կարծեմ, պարոն Սմբա՛տ, դուք ևս իմ և պարոն գավառապետի հետ համաձայն եք, որ հարկավոր է շարունակ մտրակել ազգի ցեցերին, աստիճանամոլ և հացկատակ պաշտոնյաներին, ժողովրդի արյունարբու վաշխառուներին, դավաճաններին, մատնիչներին և այն բոլորին, որոնք անձնական շահի համար խեղդում են ժողովրդի մեջ ամենատեսակ բարի ձգտումը։

— Ի՞նչ կարծիք։

— Միևնույն մտքի ենք ես և մեր Գրիգորը՝ պարոն գավառապետը,— խոսակցությունը հասարակաց դատաստանի մասին էր. մենք երկուքս նշանակություն էինք տալիս հասարակաց դատաստանին, բայց պարոն օգնականը... (վերջին խոսքի հետ Բալասան աղեն դարձավ դեպի Վասիլ Վասիլիչի նստած աթոռը և զարմացական դեմք ցույց տալով՝ հարցրեց գավառապետին) այս ե՞րբ գնաց, որ մենք չտեսանք։

— Նա գնաց, շտապում էր,— գլուխը շարժեց գավառապետը։

— Ինչևիցե,— շարունակեց Մելնիկովը,— պարոն օգնականը մեր հակառակն էր պնդում. նա ասում էր, որ ծառայողը մեքենա է յուր իշխանավորի նպատակներին, ասում էր, որ յուր օգտի համար մեղք չէ մարդուս հափշտակել, գողանալ, մատնություններ անել, ժողովրդի արյունը ծծել, ասում էր, որ հասարակաց դատաստանը հիմար բան է, հիմարների և իմաստակների ստեղծածն է, և եթե ողորմելի ու ծիծաղելի են այն մարդիկը, որ ազնվություն, սրբություն, պատիվ բանի տեղ դնեն և յուրյանց քսակին կվնասեն, պնդում էր, որ բարձրանալու համար ոտնատակ տալու է ամենայն նվիրականություն, թե հազարավոր մարդիկ սպանել և վրայովն անց կենալ խղճի ընդդեմ չէ և կարևոր է, եթե մյուս կողմում քո նպատակիդ իրագործումն է։

— Հրեշի՜ խոսքեր,— բացականչեց Սմբատը։

— Մեղադրելի չէ, խեղճը տգետ, փտած, դիվանատների ստորին խավերի պտուղ է. ստորաքարշությունից ավելի ի՞նչ եք պահանջում։ Այդպիսիների կարծիքն ինձ համար հավասար է զրոյի։ Ուրիշ բան էր, եթե պարոն գավառապետի նման զարգացած մարդիկ ասեին. թքանք էր, եթե բերանից դուրս գար. ձեր մասին՝ բերանս էլ չի զորիլ խոսելու. դուք միանգամայն թարմ ուժ եք, գնացել եք, մտավոր զարգացումն ստացել և եկել. պաշտոն, կոչումն, հաց, ամենայն ինչ մոռացել եք և

հոգվով, մտքով ու մարմնով նվիրվել ազգային վերաշինության սուրբ գաղափարին։ Գլխով մատաղ կլինիմ ձեզպեսներին։

— Ամենքիս պարտքն է։

— Չե՞ք հավատում, հոգիս փառավորում է, երբ մեր նոր երիտասարդության ձգտումները դիտում եմ. ձեզ քաջ հայտնի է իմ պաշտոնս, որ պահանջում է ճշտակատարություն։ Բայց անիծվիմ ես իմ ազգովս, Վասակ կոչվիմ, եթե ես իմ ազգի զավակներին խեթ նայեմ. կարծիքներս լինում են միշտ նպաստավոր։

— Աննպաստ ոչինչ էլ չկա. այսօր ամեն մի բանագետ մարդու պարտքն է յուր գիտեցածը տգետ եղբորը հաղորդել. նույն ուղղությամբ կբքում է ամեն մի լուսավոր վարչություն յուր նոր սերնդին. ի՞նչ կարծիք, ուրեմն, որ նա ուրախ կլինի, երբ յուր տված դաստիարակությունն արդյունաբեր է լինում։

— Իրավ եք ասում, սիրելի պարոն Սմբա՛տ, բայց իմ փոխարեն ուրիշը կարող էր զանազան հայեցակետներից նայել ամենքի բռնած գործին և ըստ այնմ յուր անելիքը կարգադրել. այսօր դիցուք, պարզ ուսումնասիրական նպատակավ դուք ժողովրդի կյանքն եք հետախուզում. մի՞թե գժվար էր ինձ ծուռը մեկնություններ տալ այդ ամենին։

— Հրեշների մեծն այդպես անպիտանները կլինին։

— Մի՛ զարմանաք, կլինին և կան, բայց ես նրանցից չեմ. ինձ համար հասարակաց դատաստանը սուրբ է, պարոն գավառապետը կարող է վկայել։ Սակայն այդ թողնենք, պարոն Սմբա՛տ, ամեն մարդի գործ յուր համար կվկայի, չկա ծածուկ, որ չհայտնվի. դուք այս ասացե՛ք, չէ՞ր կարելի ձեր կողմից մի բանով մասնակցեիք մեր ձեռնարկությանը. վատ չէր լինիլ, եթե լրագրության մեջ մի քանի տող գրվեր, ժողովուրդը կքաջալերվեր, և իմ չնչին ծառայություններս կարող էին ուրիշների բարի նախանձը շարժել։

— Ամենայն ուրախությամբ, պարոն Մելնիկյանց, ես շարունակ գրում եմ պարբերական թերթերում, այդ ես անպատճառ կհաղորդեմ։ Սակայն ներեցե՛ք, ես ուշանում եմ, մեկին ժամադիր եմ։ Ես եկել էի պարոն գավառապետից մեր գավառի հայ ժողովրդի վիճակագրական տեղեկությունը խնդրելու, բայց մյուս անգամ կգամ. այժմ ցտեսություն։

Այս խոսքերով երիտասարդ Սմբատը հրաժարական տվեց յուր խոսակիցներին։

— Ա՛մմ... մա՛... լեզու, Վլադիմիր Նեստորի՛չ,— բացականչեց գավառապետը։

— Այդպես տխմարներին ուրիշ տեսակ չի կարելի, Գրիգոր Պետրո-

վի՛չ. հասարակաց դատաստանը գորա նման հիմարների ստեղծածն է, դրանց զենքն է, պետք է դրանց փշրել յուրյանց զենքով։

— Սխալվում ես, սիրելի՛ս, ճշմարտությունը չի մեռնիլ. դուք ասացիք, որ ամեն գաղտնիք հայտնի կլինի։

— Իհարկե, եթե հիմարի պես կքնենք ու այդպեսներին լայն ասպարեզ կտանք։ Մի հարցնող լինի, թե ո՞վ ես, ինքն երեկվա մածնի ման լպստողն է, հայրը դիվանատանը գրագրություն անելով մի քանի կոպեկ հավաքեց,— աշխարհքի կույր ժամանակն էր,— լավ-լավ կալվածքներ ետ ձգեց, որ այս տգետն անխնա փչացնի. բարեգործություններ է անում, ընկերներին է ուղարկում, գյուղումն է վատնում, հենց կարծում է, թե շարունակ անսպառ աղբրի նման կբխի. արդեն շատ չի քաշիլ, մեկ այգին իմ ճանկը կընկնի, յուր խնամատարի հետ ծրագիրը կազմել ենք վաղը մյուս օրը փողի կարիք պետք է ունենա և ինձ դիմի։ Խելքից պակա՛ս, դեռ մեծ-մեծ է փրթփրթում, դեռ նոր է եկել, թող լիառատ ցրվի. հետո ուշքի կգա, այդպես մնալ չի. շատերին ենք տեսել բարձր իդեա, վսեմ գաղափար, ազգային զգացմունք, ազնվություն, ճշմարտություն և այդպիսի անհամար բառեր թութակի պես կրկնելուս, անգիր արած փչելուս. բայց ո՞ւր են. եկել են, խառնվել մեր մեջ, կյանքի հոսանքին ենթարկվել և մեզանից ավելի նյութապաշտ ու շնական դարձել։ Այդպեսներից մեկն էր իմ խելոք փոքր եղբայրս՝ Արտեմը. չգիտեմ՝ լսե՞լ եք, որ նա սկզբումը Պետրոս էր, յուր ծննդականումն էլ գրված էր Պետրոս Մեսրոպով. այդ անունովն էլ գիմնազիումն էր շարունակում։ Գնում է այնտեղ, ինչպե՞ս է լինում, ո՞վ է խելքին փչում, աշխատում է անունը փոխել Արշավիր Մեսրովբյանց։ Ես, իհարկե, նեղացա, երբ ստացա յուր նամակը, բայց հիմա՞ր էի որ խոսեմ կամ դեմք ցույց տամ. դեռ հավանություն տվի և խրախուսեցի։ Վերջը, երբ եկավ այստեղ, ծառայություն մտցրինք, մի տարուց, տեսնեմ, տրտնջում է յուր արած հիմարության վրա, թե շատ անհաճո և դժվարալուր է ականջի համար Աշավիր Մեսրոպովիչ Մեսրովբյանց կոչումը, և կամենում է կրկին փոխել։ Նստել ենք, մի քանի օր մտածել և հազիվ կարողացել ենք Արշավիրը փոխել Արտեմ Նեստորիչ Մելնիկով։

— Հապա էլ ինչի՞ էր սկզբումը հիմարանում, որ վերջն այդպես պետք է աներ,— հարցրեց գավառապետը։

— Դեռ այդ ոչինչ, ծիծաղելին պսակվելուց հետո մարդ ու կնոջ գործերն էին. նշանվելու օրից մտել էր հարսնացվի տամարը, որ Իսկուհի անունը փոխել տա Վասիլիսա և նորա հոր՝ Արշակի անունն էլ շինել տա Ալեքսեյ։ Քանի նշանած էին, աղաչանքներով էր ուզում համոզել, բայց պսակվելուց հետո բանը մեծացավ, փոքր մնաց՝ ահագին անբավականություն էր դուրս գալիս։ Ոչինչ բանով հարսս թույլ չտվեց յուր անվան փոփոխությունը. Իսկուհի մկրտվել եմ; ասում էր, Իսկուհի էլ գերեզման եմ մտնելու։ Վերջը մի տեսակ ընտանեկան խորհրդով այդ կրակը հանգստացրել ենք, վճռել ենք, որ ամենքին էլ վարժեցնենք հարսիս տիկին կոչել. և, ինչպես տեսնում ես, հարսս յուր կարգի կանանց մեջ միակ բացառությունն է, որ տիկին բառով է վերակոչվում։

— Ես այդ չգիտեի. ինչպես երևում է՝ եղբայրդ սկզբումը շատ եռանդոտ է եղել։

— Ի՞նչ եռանդ, Գրիգոր Պետրովի՛չ, ինչպես ասում են, գլուխը հոպպներով լիքն էր. օհ, боже мой (աստված իմ), ի՞նչ նամակներ էր գրում, ի՞նչ փոթորիկներ էր բարձրացնում, ի՞նչ ցնորամիտ առաջարկություններ էր անում ինձ այնտեղից, смешно (ծիծաղելի է), ասում եմ՝ настоящий фанфарон (կատարյալ թեթևսոլիկ), то есть (այսինքն) օրական հինգ նամակ էր գրում։

— Թե ի՞նչ, որպես թե...

— Գլխիս գայլի ավետարաններ էր կարդում,— շարունակեց Մելնիկովը,— թե լսում եմ, որ ինձ համար ուղարկած 150 մանեթը դու ժողովել ես մի չքավոր ուսանողի անունով, մի հայաբնակ քաղաքում, այն էլ կրկնապատիկն է եղել, կեսը քեզ համար ես վերցրել, մյուս կեսն ինձ ես ուղարկել և գրել ես, թե մի մասը քո արդար վաստակից և մյուս մասը մեր հայրենական կալվածքի եկամտից ես ստացել, թե ինձ տեղեկություններ են հասնում, թե դու վատ ճանապարհի վերա ես կանգնած, կաշառակեր ես, ճնշող, հարստահարող ես, մատնիչ ես, անարժաններից կաշառք առնելով՝ ժողովրդի վերա մոլորեցուցիչներ ես կարգում արժանավոր դեկավարների փոխարեն, թե վատ և անբարեբարո անձանց շրջանումն ես, ուղղվի՛ր, ասում է, մեր տան անվանը թքանք մի՛ լինիր, և հազար ու մի սրանց նման կույր պառավի քարոզներ։

Ես իհարկե քթիս տակին ժպտում էի միայն։

Մեկ էլ դա ինձանից փող է խնդրում և ճանապարհ ընկնում, գալիս է. և ի՞նչ. լսում եմ, որ ամեն տեղ ծանոթի և օտարի մոտ իմ ստվերի դեմ է կռվում, հայհոյում։

— Գետինը մտնի Բալասանը, փչվի Բալասանը, ես կգնամ, եթե իմ խորհուրդս չլսի և յուր չարություններից ետ չկենա, ազնիվ մարդ չդառնա, ես նրան բարև չեմ տալ։ Որ քաղաքը մտել է՝ զուռնա փչելով իմ օձիքից է ձավար ժողովել (բամբասել)։

— Հա՞, այդ չեմ լսել, Վլադիմիր Նեստորի՛չ,— զարմացական նշաններ արավ գավառապետը։

— Ականջ դի՛ր, Պետրովի՛չ, դա այդ քամիներովն է գալիս. ես այս-

տեղ դորա համար յուր ասած անբարեբարոների շրջանում յուր նախկին պաշտոնն եմ ստեղծում։ Քեզ քաջ հայտնի է, որ նորա պաշտոնը առաջին անգամը մեր պարոնի մտնելով բացվեցավ այն դիվանատանը. ճիշտ է, ծրագիրը կար, բայց բացվելը ես փութացնել տվի բարեկամների եռանդալից աշխատությամբ։

Եկավ, իշավ, առաջին եղբայրական համբույրի հետ առաջին խոսքն եղավ ինձ կշտամբելը.— ես քեզանից վշտացած եմ, մեր ազգի անունը խայտառակել ես։

— Թշնամու խոսքեր են,— ասում եմ,— ահա եկել ես, քարի աչքովդ տե՛ս և ստուգի՛ր, հետո պատրաստ եմ խոսքդ լսելու։

— Հետաքրքիր է, Վլադիմիր Նեստորի՛չ, խնդրեմ պատմե՛ք։

— Այո՛, դեռ հագուստը չփոխած՝ ես սկսեցի հիմիկվա հիմարին ծախած խոսքերս նորան էլ շռայլել,— բարձր ձգտումներ, ազնվություն, ժողովուրդ, ուսում, ստորին խավեր՝ սովորական ռճերով ու նախադասություններով դորա քաղցած ուղեղը լցրի։

Այդ հիմարը ձեռաց խոսքերս հալած յուղի տեղ ընդունեց, վեր թռավ, նորից գրկեց ինձ ու սկսեց գատապարտել իմ մասին սուտ-սուտ լուրեր տարածողներին՝ իրեն վրդովողներին։ Մյուս օրն առանց երկար մտածելու գրեց այնտեղ յուր ընկերներին, որ իբր թե, ինձ վերա ասվածները բոլորը չարալեզուների մտացածին զրպարտանքներ են։

— Попался несчастный (թակարդն է ընկել թշվառը)։— Попался և այն ի՞նչպես։ Դա, իհարկե, փող չուներ. սկզբներումը թույլ ես չեմ տալիս խնդրելու։ Ամեն առավոտ քնած ժամանակն մտնում էի սենյակն և իմ ձեռքով կարմիր տասանոց թղթադրամը քսակը դնում։ Առաջին անգամը միայն զարմացավ, թե հրաշքով յուր քսակումը փող է երևացել։ Միամտացրի, որ ես եմ գրել՝ ձեռքին մսխելու և ծխախոտի համար։— Օ՜հ, ասաց, մարդկային հբեշավոր ագիտության մեծն այդ անպիտան բույսը գործածելն է. ես ոչ ծխում եմ և ոչ ծխողներին սիրում։

— Հիմա բերանիցը չի ձգում այդ ցանցառը՞։

— Համբերի՛ր։ Մի օր ատամս ցավում էր, ասաց, ծխախոտը ձեռքովս վառեցի և առաջարկեցի ծխել, ծուխն ատամի տակին պահել։ Թեև մեծ դժվարությամբ, բայց համաձայնեց։ Իմ բախտից ծուխը զորավոր ազդեցություն գործեց։ Այդ իմ պարզամիտս սկսավ օվսաննաներ կարդալ հրաշագործ ծխախոտի մասին։ Ես, իհարկե, այդքանն էի ցանկանում. նոր վարժվող ձիու մտրուկի նման սկսեցի փոքր առ փոքր վարժեցնել. ձրի ծխախոտ բարձր տեսակից, քսակումն անվաստակ փող մեկի փոխարեն հինգն էր ծծում և փքուն-փքուն բառեր ցրիվ տալով քամիներ անում։

— Պետք է տեսնեիք, Գրիգոր Պետրովի՛չ, ի՞նչ ոստոստյուններ էր անում, երբ պաշտոնի անուն էի տալիս.— ի՞նչպես, ինքը պետք է մտնի նեխած մթնոլորտի մեջ, սեահոգիների շրջանը։ Լսել չէր ուզում, ականջները փակում էր, անկյունից անկյուն էր փախչում. մանավանդ կատաղում էր, երբ յուր ծառայակիցների անունն էր լսում։

— Անմե՛զ երեխա։

— Կա՛ց, ասում եմ մտքումս։ Սկսում եմ դրա օրաթոշակը պակասեցնել, տասանոցի փոխարեն հընգանոց, հետզհետե երեքանոց, միանոց, և մի օր էլ՝ բան չկա։ Մոռացա ասել, որ այդ ցանցառն յուր հաշիվները չէր հասկանում, և ի՞նչ հարկ կար, քանի որ յուր ասածով և իմ հաստատածով փողը ձեռքի աղտոտություն է, շարժեր ուշադրություն անել. անմիտը տեսնում էր, որ տասանոցի մանրորդը քսակումը չէ, և չէր էլ հետաքրքրվում, թե ո՞ւր է։

— Ի՞նչպես թե քսակումը չէ,— հարցրեց գավառապետը։

— Ո՞րտեղից կլիներ, միշտ ես հանում էի. երեկոյան անկողին մտնելուս քսակն անհոգ շպրտում էր սեղանի վերա. ես քնելուց հետո ներս էի գնում, դատարկում և մի կարմիր տասանոց փոխարենը գտնում, դուրս գալիս։ Եղբա՛յր, այդ խելքի պտուկը ոչ մի օր չհետաքրքրվեց, թե յուր փողերն ո՞ւր են։

Մի օր էլ, ինչպես ասացի, ո՛չ ծխախոտ կա և ո՛չ փող։ Զայն է տալիս ծառային և բարկանում.— ինչո՞ւ այստեղ ծխախոտ չկա։

— Որովհետև մեծ ազայի մառ փող չկա, որ գնենք,— ասում է նախապատրաստված ծառան և ավելացնում է.— այսօր իմ ձեռքը հաքանից մի մանեթ խնդրեց։

— Ի՞նչպես, — աչքերը չռելով զարմացմամբ հարցնում է ծառային,— դու ասում ես, որ եղբայրս փող չունի՞։

— Ո՞րտեղից պետք է ունենա խեղճ մեծ ազան, խաղինա (դրամ) հո չէ՞ կտրում,— կրկնում է ատատանա ծառան.— քանի դուք եկել եք, օրըստօրն պարտքի տակ է ընկնում, որանից, նրանից վերցնում, ձեզ էր տալիս և հիմա ամենքը մերժում են։

— Ուրե՛մն, ես մեծ ծանրություն եմ եղել քեզ համար,— ասում է ինձ այդ օրվան մեր սովորականից աղքատիկ ճաշի վերա։

— Ընդհակառակն, պատասխանում եմ, քա եկած օրից ուրախություն սահման չկա, թշնամյացս լեզուները պապանձվել են, ինքդ աչ ձախ հարց ու փորձ ես անում և ստուգում, որ հակառակորդների մեքենաներ էլն իմ դեմ յուրյանց տարածած լուրերը։

— Այդ թե՞զ, եղբա՛յր, վշտացած ընդհատում է ինձ. ես լսում եմ, որ դու պարտքեր ես անում իմ հաճույքներիս համար։

— Ջարժե, ասում եմ, դորա վերա խոսել։ Թեպետ քանի մի օր է՝ անպիտանները զլանում են ինձ պարտք տալ և այն, անկասկած, շարակամներիս դրդմամբ, բայց ես առաջիկա ծննդյան տոներին իմ պաշտոնատեղից հարյուր մանեթ պարգև պիտի ստանամ, ամենքին կվճարեմ և քեզ համար էլ փոքր ինչ ծախսելու փող կխնայեմ. դժվարն երկու շաբաթի չափ է. համբերի՛ր, մի տեսակ կառավարվի՛ր՝ հետո։

— Ասում ես կառավարվի՛ր,— ներս է գալիս պարոն եղբայրս մյուս օրն ինձ մոտ.— ի՞նչ անեմ, ծխախոտ չունեմ, թերատ թափածներս երեկոյան ժողովեցի, կառավարվեցի, իսկ այսօր գժվածի պես ծխել եմ ցանկանում և չունեմ։

Համբերենք, ասում եմ, ես ևս չունեմ. անպիտան վաճառողն էլ մի քանի մանեթ պարտականությանս պատճառով ապառիկ տալը մել ժում է։

— Եվ մի՞թե որևիցե գործ չեմ կարող ես կատարել,— հարցնում է ինձ հուսահատության գագաթնակետումը,— մի ծխախոտի գի՞ն ևս չեմ կարող վաստակել։

— Մի տեղ միայն կա պաշտոնի մտնելու, ասում եմ, բայց փտած մթնոլորտի մեջ չէի ցանկանալ քո մաքուր և լուսավոր միտքդ պղտորել։

Հետո առաջարկում եմ խելքի բուն սիրելույս յուր համար նախապատրաստած տեղը, ուր եթե խոսք կտա չտգորվիլ շրջապատողների փչացած բնավորություններով, ապա ինքը վաղվանից կարող է շարունակել։

— Երեխա՞ եմ, ինչ է,— վիրավորված պատասխանեց եղբայրս,— փորձանաց բովի մեջ է զտվում ոսկին ուրիշ խառնուրդներից։— Եվ, որ գլխավորն է,— շարունակում է նա,— ես հույս ունիմ անձնական աղնվությունով օրինակ հանդիսանալ այդ սևամաղձ և սևահոգիներին՝ դառնալու դեպի յուրյանց կորցրած ճշմարտության ճանապարհը։

— Եվ, որ գլխավորն է,— կրկնում եմ յուր խոսքերը,— ես առավելապես ցանկանում եմ քո այնտեղ մտնելդ, որպեսզի և այնտեղի մասին փարատես քո թյուր կարծիքներդ. ինչպես արիր իմ վերաբերությամբ, իսկ մեր մեծը, ի՞ պատիվ իմ, քո երեք ամսականդ այս գլխից է խոստանում վճարել՝ իբրև նոր մարդի։

— Մտնե՛լ, անպատճա՛ռ մտնել,— շեշտեց եղբայրս,— ճիշտ է, ես աննպաստ գաղափարներ եմ կազմել ձեր պաշտոնակիցների և մանավանդ ձեր գլխավորի դեմ, խոշոր-խոշոր հանցանքներ եմ լսել, բայց այսօրվանից սկսում եմ համոզվել իմ ակամա սխալանացս վերա։

— Այո՛, այո՛, հաստատում եմ ես և մյուս օրը ոտնամուտը շնորհավորում 225 կլորիկ մանեթներով՝ իբրև թե մեր գանձապետից ստացած և ի հաշիվ յուր ստորագրած։

— Մնացյալն ավելորդ է,— ընդհատեց Վլադիմիր Նեստորիչի երկար ու ձիգ պատմությունը գավառապետը,— այնուհետև ես քս եղբորդ քեզանից լավ եմ ուսումնասիրել, թե նա ի՞նչ պտուղ է. այժմ նա անպիտանությունով քեզանից ամեն բանում երկու աստիճան առաջ է գնացել. դու ողորմություն ես. վաղն ասված հհռու տանի, քո թշնամին չընկնի նրա որոգայթների մեջ։

— Ճիշտ եղբորս նման է այժմյան գնացող մեր ցանցառ Սմբատը. միամիտ ողորմելի. դեռ քամիք են գլխումը բզզում, վզզում. դեռ նոր է շնորհ բերել, դեռ հայրենական դառը վաստակը ջուրը գցելու օրերն են։ Թող անի, թող ժողովուրդ ուսումնասիրե. դեռ սպասենք մի քանի ժամանակ. եթե դա էլ չմտավ փորձանաց բովի մեջ՝ իմ եղբոր նման ոսկի դուրս գալու, այն ժամանակը մենք կմաքրենք մեր աշխարհքն այդպիսի ցավերից. կամ այնպես կանենք, որ ինքը կխրտնի, պոչը տնկած մին կփախչի, կամ կվազի մեղամվորի նման, որ չէր կամենում դժոխք մտնել, գլխին վեր հատելով կգլորենք անդունդ և կամ կկակղի, կուտի, և, ինչպես առածն ասում է, եկել է մեր մեշեն (անտառ), կսվորի մեր փեշեն (արհեստ)։

— Ը՛հ, օ՛ֆ,— փնչացրեց Մելնիկովը,— այդպիսների ոխերիմն եմ. դրանք մեր անունը մեռցնողն են. դրանցից մեկն էլ մեր գյուղումը կա. թող ես դավաճան անուն տանեմ, միայն թե այդ երկաթի ձվաներ ածող նոր-նոր հավերի արմատը կտրեմ։

— Ո՞ւմ մասին է խոսքդ,— հարցրեց գավառապետը,— մի Գոմշակերյան ունեինք, գլուխը խաշեցիր։

— Նրանից ավելի վտանգավոր Սիսակն է, Գրիգոր Պետրովի՛չ. եթե մեռնի, նա էլ Արտոյի հացը կուտի։

Վլադիմիր Նեստորիչի շարունակությանը վերջ տվեց գավառապետի ամուսինը, որ տուն եկավ, ողջունեց և նորա թևը մտնելով ասաց.

— Հերիք է, շատ խոսելով կատիկդ չորացավ. ձեր ձայնը չէր թողնում իմ գառնուկին օրորոցումը հանդստանալ. հիմա գնանք, մի լիքը օդիով թաց անենք կոկորդդ։

ԺԸ

ՏԱՆՈՒՏԵՐ ԽՈՒԴՈՆ

Տանուտեր Խուդոն երկու-երեք շաբաթ է՝ պաշտոնի մեջ է յուր ընկեր սուդիաների հետ. նա ամենքին ծակն է կոխել. բարակ կարմիր քթլիի փայտի ճիպոտը ձեռքն է առել, տանուտերական մեղալը պա-

բանոցից կախել, շղթան երևցնում է, իսկ մեդալը դեղնագույն ուղտի բրդից չուխայի վերնածոցումը թաքցրած՝ գյուղի էլ գլխիցը մտնում, մյուս ծայրիցը դուրս է գալիս։

Խուդոյի առաջին գործն եղավ դատարանք կարգի բերել։ Գեղավարական օրինագրքի կանոնների համաձայն, տանուտերը դատարանի վճիռների կատար ածողն է միայն, իսկ նա յուր քամակին կանգնած հովանավորողի ուժով ամենից առաջ յուր բռան մեջ ժողովեց դատավորներին։

Խուդոն բաղված է մի հողահատակ շինության մեջ սեղանի ճակատին. նորա աջ կողմից շատ մոտ նստած է գրագիր վանեցին. սեղանի աջ և ձախ երկայնությամբը դատավորներն են երկայն իշոտնուկ ասած նստարանի վերա կկզած. սեղանի վերա անկարգ, անկանոն սփռված են մի քանի թղթեր, երկու մատյան և կիսաբաց գյուղական օրինատետրը։

Մինչև այսօր դատարան նստում էին գործից ազատ օրերը. իսկ հիմա տանուտեր Խուդոյի նոր տնօրինությամբ շաբաթն երեք անգամ դատարան կա և միշտ բողոքավորներն անպակաս են։

Այս դատարանն է, որ լիքն է գյուղացիներով։

— Ով գանգատ ունի, առաջ գա,— ձայն է տալիս գրագիրը. և ահա մոտենում է մեկն յուր տրտունջը հայտնում։

— Դու մեղավոր ես, կամ գլուխը քարն է տվել քո հակառակորդը,— գոռում է Խուդոն և խելքի կտրած վճիռը դնում ու հրամայում գյուղական գրագրին գրել և առաջարկել դատավորներին ստորագրելու։

Դատավորներն անխոս և հլու հպատակ են Խուդոյին։ Սկզբներումը գրագիրը ծածուկ, աշկարա մի քանի անգամ օրենքի տառը հիշեցնելով Խուդոյին, հասկացրեց յուր ապօրինի վճիռները, բայց նա շան տեղ չդրեց յուր Մենտորին։

— Շատ մի՛ դուրս տալ,— ասում է տանուտերը,— առաջնորդը ես եմ, բակլեն խաշած եմ ցանում. ես քեզ հրամայում եմ պիսքլությունդ անես, ինձ խելք չսովորեցնես, թե չէ պոչդ կխուզեմ, լակոտներդ կատվի պես ոտքդ տված՝ բոբիկ ոտով մինչև Վան մին կփախցնեմ։

Վանեցին ծոծրակը քորեց ու ձայնը փորը քցեց։

— Ձեր ոտքը մեր գլխեն առավել կհասկանա, արդարություն ձեր բերանով կհաղթանակե,— շողոքորթեց նա և տազ արեց։

Խուդոն միայն դատարանումը չէ վճիռ կտրում. ո՛ր փողոցումը կուզես, ի՛նչ քունջ ու պուճախում ասես, նա է բուսնում. էնքան լինի, որ լսեց, թե մի տան մեջ երկու եղբայր իրար սառ խոսքեր են ասում, մարդ ու կին մի ընտանեկան խնդրում անհամաձայն են գտնվում, մեկի անասունը հարևանի բակն է մտել, մեր շունը ձեր կաները հաշացել է՝ վերջացավ. հանկարծ կամ փայտը հեռվից վրեդ թափ տալով ինքն է անձամբ հարձակվում կատաղի գայլի աչքերով, կամ թե գզիրն ու յասավուլն երկուսը միասին եկան, առանց այլևայլության քեզ քարշ տվին տանուտերի դիմաց, և այն ժամանակը վա՛յ քո օրին. խոհեմությունը պահանջում է լռել, ապա թե ոչ, կակուղ թբլխին թիկունքիդ շամփրի նման երկար շերտեր կթողու։

Սակավ մարդիկ մնացին գյուղումը, որոնց փողը չմտավ կարճ միջոցում Խուդոյի գրպանը. արդար ես, թե մեղավոր, միևնույն է, դու էլ, քո հակառակորդն էլ պարտական եք տալ. հերթը քոնն է, թե ուրիշինը, քո գործը չէ քննելը. դու լռիկ-մնջիկ մի մարդի օրավարձ տո՛ւր, կամ գնա՛ արքունի կոռ ու բեգյառը քաշելու. կարևորություն և պահանջ կա, կամ ոչ՝ քո հարցնելիքը չէ՛. տանուտերը հրամայում է ձիդ հեծնել, սայլդ լծել, կամ հետևակ գնալ մի տեղից մյուս տեղը զինվորական պաշար տեղափոխելու, թուղթ տանելու, մեծավորի ուղեկցելու և այլն։

Ի՞նչ անելու է, առավել լավ է 40—50 կոպեկ վճարել, քարեքար, սարեսար չընկնել, քան թե գզիր-յասավուլի անպատկառ հայհոյանքներին և տանուտերի սահակներին ենթարկվիլ, քան թե պատիվդ ոտնատակ անել և բանտումը մի օր փակվիլ։

Մի քանի հոգի միայն ազատ էին պրծել Խուդոյի հալածանքներից չհաշված դատավորներին, յուր մերձավորներին ու վանեցի գրագրին՝ նորա էին Մելիք-Բաղալն ու Սիսակը։

— Դրանք բռնումս հուպ տված են, դեռ դրանց համար պահած ա, չեմ շտապում,— ախ էր քաշում մի երեկո վանեցու մոտ Խուդոն.— փորս եփ ա գալիս, որ չեմ կարում ճանգս քցել Գոմշակերի թոռանը— մեր աղա Արտեմ Սերգևիլիչին։ Ասենք՝ հոգին հանել ենք, ունեցած-չունեցածը փեշատի (կնիֆ) տակ ենք դրել, բայց ինքը Նախշվանում ընկած օխտն օրվա ճամփա հեռու ա, ինքը պտի ձեռս ընկնի, որ օրը մեջ ծակը կոխեմ (բանտարկել), խեղդեմ, հոգին կատիկը (կոկորդ) թոցնեմ։

— Դուք այնքան բարի գտնված եք, սակայն, որ Գոմշակերյանի եղբայր մանրավաճառ Պետրոս շարունակ ձեր ստվերին դեմ կտրտնջա, յուր եղբոր վրեժ ձեզնե առնել կսպառնա և դուք ազատ թույլ կուտաք զնա յուր փոքրիկ խանութով գյուղ կեղեքել,— համեստ պատասխանեց գրագիրը։

— Շաբաթ չի անցկենալ, որ ես նրան շտրաֆի տակ չքցեմ, կոռ ու բեգյառ չառնեմ. էլ ի՞նչ անեմ, մարդը գիլդի ա (մաֆս) տալիս, առ ու տուր ա անում, հո չե՞մ կարող դուքանը փակել,— զարմացավ տանուտերը։

— Սակայն օրինազանց միշտ կարելի է պատժել, եթե ձեր բարեսրտություն թույլատրե զձեզ։

— Ախար ի՞նչ դռնով,— մտամոլոր հարցրեց Խուդոն։

— Բավական է, եթե մի հատ երիզ քակած ծխախոտի փաթեթ գտանք խանութին մեջ, այդ ինքնին մաքսանենգություն է։

— Պետոն էն շունն ա, որ բաց արած պապիրոսի պաշկեք պահի՞։

— Մենք երեկ մեր ձեռքով չորս-հինգ հատ քակեցինք և ետքի կողմը թաքուցինք, երբ ինք տաճկին փշատ կվաճառեր,— աչքով արեց Գրնթունին։

— Հա՞, բաս թող լիսը բացվի,— ուրախությունից ճխաց տանուտեր Խուդոն։

Լույս չբացվեց, սև ու մութ բացվեց Արտեմ Սերգեյիչի եղբայր Պետոյի գլխին։

Կիսագազը ձեռքին՝ չիթը չափում էր հաճախորդի համար, որ տանուտեր Խուդոն յուր դատավորներով, գրագրով ու գզիր-յասավուլով տուն մտավ, առաջ գնաց դեպի Գնթունու աչքի պոշով ցույց տված ապրանքի շարքը, քրքրեց ծխախոտները, ջոկեց նրանց միջից տասնի չափ բաց արած փաթեթներ և բարձր ձայնով ասաց.

— Թագավորի խազինին խեթ մտիկ տվողին օրենքը պատժում ա. դու պաշկեքանցից (փաթեթ) հատով պապիրոսներ ես ծախել. էս օրվանից դուքանդ փեչատում եմ (կնքել), մինչև ատցիզնի չինովնիկի (մաքսապետ) և սլեսարչու (ֆնեիչի) գալը։

— Պապիրոսի պաշկեքն իրավունք ունիս փեչատելու և պրատակոլ (արձանագրություն) անելու,— մեջ խառնվեց հաճախորդը,— բայց դուքանի վրա փեչատ դնելու՝ ոչ։

— Ընչանք ե՞րբ Ֆահրադի փուշ դառնաս, առաջիս ցցվես, դուզ ճամփիս քար շաղ տաս,— բորբոքված հարձակվեց տանուտեր Խուդոն ճըշմարտախոս մարդի վերա, և ձեռքի թբլխի կակող ճիպոտն այնպես անզգուշաբար վրա բերեց նորա կրծքին կախած ոսկե մեդալին, որ ճիպոտի ծայրը երեսախառն դիպավ աչքի աղբյուրականը և արյունը չոռաց՝ ինչպես շատրվանի խողովակից։

— Ա՛յ մարդիկ, վկա կացե՛ք,— դարձավ վիրավորը դեպի խանութի առաջին ժողոված հասարակությունը,— Մելիք-Բաղալն օր ծերության՝ ոսկե մեդալը դոշին՝ հարամկերի աման լպստող Խուդոյի ձեռքով ծեծ կերավ. փոշիմանդի (զղջացող) մերը տղա բերի։

— Ձեռիցդ Լկածը չխնայե՛ս,— հեռացող Մելիքի քամակից ճիպոտը ճոճեց տանուտեր Խուդոն և Գոմշակերենց Պետոյի դուքանը փեչատեց։

Հաճախորդը Մելիք-Բաղալն էր։

ԺԹ

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐ

Երեկո է. տանուտեր Խուդոյի վերնահարկումը բոլորակ բարձին թիկնած է մեծ տախտի երկայնությամբ մի կարճահասակ, թխադեմ և շնչ պարոն. նա օտարական հյուր է։ Անծանոթի հագուստը մի խառնուրդ է հին և նոր տարազի. գավառական քաղաքի թերուս եվրոպական դերձակի կարած սև սերթուկի տակին երևում է հայաստանցի նորահարսի պտղունցով բամբակած կինամոնագույն արխալուղը. նորի գլխին դրած ռուս մուժիկի մահուդյա գդակին հակասում են տախտի առաջին դրված սև սեկի կոշիկներն ու ոտքերի խորասանու նշանակար գուլբեքը. նորա մեջքը պնդող արծաթապատ փոկե գոտին անհամեմատաշխ է կապտագույն կիսազինվորական անդրավարտիքին. մի խոսքով՝ պարոնի մեջ ակնհայտնի նկատվում էր համեստ արհեստավորի շրջանից տեղական աղաների կամ ծառայողների դասակարգին հասնելու զգալի ձգտումն։

Օտարականը միայն չէր. նա երբեմն-երբեմն գլխի ծանր շարժումներով, կամ բացասական նշաններով յուր հավանությունը կամ տհաճությունն էր արտահայտում յուր ոտքերի մոտ տախտին նստած խոսակցին։

— Ա՛յս բոպեին,— ասաց հյուրը և վեր կացավ, մոտեցավ սենեկի մյուս անկյունումը դրած ճանապարհորդական խուրջին կոչված պայուսակին և հանեց նորա միջից մի կապոց։

Հիմա նա անծանոթ անձնավորություն չէ. յուր կաղ ոտքն իրեն մատնեց. նա հանրահռչակ փաստաբան չոլախ Հարությունն գյուղական աղվակատն է։

Պարոն Հարությունն յուր կապոցով եկավ նստեց տեղը, քակեց փաթեթը և տախտի վերա փռեց նորա միջի առարկայքը, որ ոչ այլ ինչ էին, եթե ոչ մի քանի թերթ հասարակ թուղթ, մի-երկու կարած գործնական մատյաններ և մի հաստ ու կարճ գույնզգույն շերտավոր կազմած գիրք։

— Սա՛ կխոսի, սա՛, տանուտեր Խուդո՛,— ինքնապարծությամբ երեք անգամ ձեռքով զարկեց փակած գրքին չոլախ Հարությունը և բաց արավ գիրքը.— տեսնենք դեռ ի՞նչ է ասում զակոնը մեդալավորին ծեծելու համար, հետո մեր չանգալները քցենք չորս կողմից։

— Բաց ասեմ, ոչ ամաչեմ, պարոն Հարությո՛ւն, ծեծել եմ, սուտ չի. հենց տվի ճիպոտով, որ ծծի վրա կախ ընկած ոսկի մեդալի զնգոցը քո Մելիք-Բաղալի կնկա ականջը հասավ գլուխը խմորի թունդիրը կոխած ժամանակ, աչքի արյունը օխտը գաղ շրկրկի էր տալիս. ափսո՛ս, որ

միանգամից պիպիկը չպըլխաց (չպատռվեց), որ լուսավորվեր (կուրանալ), վերջանար,— չթաքցրեց տանուտեր Խուդոն։

— Да-брат. դժվար է, զակոնը շատ ստրոգի է (խիստ է),— ծանր-ծանր գլուխը շարժեց փաստաբանը։— Բայց այնումդ մի քցիլ, տանուտե՛ր, ես ողջ լինեմ քեզ համար, հենդ այնչափ էլ ծեծած լիներիր, կմարտե՛ր, ես ողջ լինեմ քեզ համար, հենդ այնչափ էլ ծեծած լիներիր, կմարտեիր, էնքան լինի՝ էս գյուղից լոնգի Բարանովի ոտը կտրես, իմ կլիենտներս (ծխերս) նրա ճանգը չքցես։

— Էդ ի՛մ շլնքին, էնպես ոտը կտրեմ էս գեղիցը, որ շվաքը չերևա. էն վախտը քանի կարաս ծոցդ տոզացրու թուղթ փողի ծայքերով. ա՛յ, հենց հմի որտեղ որ ա, մի գմպռճիկ կարմրախետ ձուկը թոռդ կընկնի։ Հոգս մի՛ անի, դու քանի կուզես՝ հուպ տո՛ւր, նրա խոսքերից սիրտդ չպակասի, տեղը կա. ինչքան փող պետք գա, մեր Բալասան աղի քիսեն ոսկ ըլնի, մի թղթի կտոր ա, կգրիլ տանք ու փողերը քո չե՛ր կլցնենք։

— Սողոն էստեղ ա,— ներս մտավ և հայտնեց գզիրը։

— Կանչի՛ր,— հրամայեց տանուտերը։

Զոլախ Հարությունը շտապեց կրկին թիկնել բարձի վերա և հոնքերը ժողոված, քիթը կախած և աչքի բիբերը սեղմած՝ առաստաղին նայել. կարծես խորիմաստ փիլիսոփայությունով ուզում էր տան թանձր ծածկի միջով թափանցել երկնից համաստեղության գաղտնիքը զննելու. նա արժան անգամ չհրամայեց գեթ մի ակնարկ ձգել ներս մտնող գյուղացի երիտասարդի խոնարհ երկրպագությանը.. նա, ինչպես ասում են, վերացել էր և յուր ոտքի տակը չէր տեսնում։

— Ադա՛, փուչ կենդանի Սողո՛մ,— ցածր և ակնածական ձայնով ու հնչումով ասաց ներս եկողին տանուտերը,— էդ ի՞նչ հալի (դրությամբ) ես տուն գալիս մի պատվավոր աղա մարդի առաջ. կարծես թթի ղշերին (թոչուն) վախացնելու համար թթենոնց վրա դրած հին շորերից ճղքան վրա հագցրած ույուղ ըլնիս. չես կարում մի քիչ շնորհքով, շենքով հագնվի՞լ։

— Գլխի՛դ մեռնիմ, տանուտե՛ր, քեզ հայտնի չի՞ իմ աֆալը (դրությունն). հենց կարողանանք պստիկներին չուչիկ ու փուփու (հագուստ և կերակուր) հասցնել, որ մեր գլխի հոգսն էլ քաշե՞նք։

— Ընչի՞, դեռ եկամուտդ չես ծախե՞լ։

— Ի՞նչքան մասիլ (բերք) ունիմ ինձ, որ ի՞նչ փուչ հանի իմ մատիցը. չհանդամի էն գլխին կորած երկու տախտակ բաղ ունինք, որ դեռ հավողը ջուր չընկած չըշալած (թերահաս լինել) որը ծտերն են կոցահարում, որը թուրքն ու շունն ա տանում. մի կալատեղի չափ հող ունինք, էնքան չի բերում, որ եկող տարվա սերմացու վեր ունենք, դառը քրտնքով, ատամներս հուպ տալով՝ մի տեսակ ծերը ծերին անջախ ենք հասցնում, էլ ո՞րտեղից հագուստի քամակիցն ընկնիմ։

— Հիմի որ ես քեզ հարստացնեմ, էս գյուղի առաջավոր մարդկանց շարքումը կարգին համփա շինեմ, ինձ ի՞նչ ես տալիս, ձեռս պաչո՞ւմ ես։

— Ձեռդ չի՝ ոտդ կլիզեմ. բայց դու հո աստված չե՞ս, որ բոնով հողը վերցնես, ոսկի շինես, գոգս լցնես. մեր ճակատին ըսենց ա գրված, էապես էլ պետք ա ըլնենք։

— Հանաք չեմ անում, էս արևը, Սողոմ, մեղքս գալիս ես. ես ուզում եմ քեզ ձեռիս տակն առնեմ։ Ասում ա՝ «մի առվով որ մի ժամանակ ջուր ա գնացել, էլի կերթա»։ Քո լիսահոգի հերդ էս գեղի սներից մինն էր, առաջին համփեն էր. բայց քեզ պարտական են քո մոտ բարեկամները, որ դու որբ մնացիր, նրանք քեզ զրկեցին ու ահագին կարողությունը փոքրերը քաշեցին։

— Էլածն էլել, անց ա կացել, տանուտե՛ր, էլ հին դարմանը քամուն տալն ի՞նչ կանենք։

— Էս կանենք, որ ես կընկնեմ էս փիլիսոփա աղա մարդի ոտները (տանուտերն աչքով ցույց տվեց չոլախ Հարությունին), կխնդրեմ, կպաղատեմ, ձեռդ սրա փեշը կտամ, Պետրոսենց Գալոյի աժդահա (ահագին) բաղը, որ վեր ա կոխել ուտում, ետ խլել կտամ ու իր տիրոնջը կարժանացնեմ։

— Ի՞նչ ես հրամանք անում, տանուտե՛ր, երկնքիցը կեծակ (կայծակ) կտրաքի գլխիս. Գալ-ափունի դառը քրտինքն ինձ ո՞վ հալալ կանի։ Էսօրվա պես միտս ա գալիս, ես տասը-տասնումեկ տարեկան հոտաղ երեխա էի, որ ողորմածիկ քեռիս հորս պարտքի տեղակ ծախեց. դեռ նոր երկու տարեն տնկած բաղ էր, թփերն էլ հետը պոկեիր, մի քթոց հավող չէր հավաքվիլ։ Խեղճ Գալ-ափուն ջանը քանդեց, բիջարեց (մշակեց), բաղ հասցրեց, որ ես էսօր գնամ նրա հասած տղամարդ մլքի գլխին ցցվեմ, թե մի ժամանակ մերն ա էլե՞լ. աստված մի՛ արասցե, իր մոր կաթի պես իրան անուշ ըլնի։

— Ադա՛, շաշ հայվարա (ագետ), օրենքն ա հասցնում, դու հո զոռով չե՞ս խլում, քո հերենական կայանքն ես ետ առնում, հո ուրիշի մլքին չե՞ս տեր կանգնում։

— Ջէ, տանուտեր ջա՛ն, իմ խելքս ջուր չի խմում էդ տեսակ օրենքից, ոնց որ տեսնում եմ, դու ուրիշ հրամանքդ ունիս անելու. պտի ասես՝ հիմի հանաք ես անում հետս կամ իշի տեղ ես դնում. բայց չէ՞ որ մենք էլ հացակեր ենք։

— Ջէ՛, իմ որդոնց արևը, ո՛չ հանաք կա խոսքերումս, ո՛չ չանաք (չհանաք). թե չես ավատում, թող աղա Հարությունը գլխումդ մի-մին

հալի, հասկացնի. փառք աստծու, ինքն ա Երևանա հոդի (նահանգի) առաջին զակոնագետ (օրենսգետ) ադվակատը։

Վերջին խոսքերը Խուդոն բարձրաձայն շեշտում էր։

Զոլախ Հարությունն, առանց գծագրությունը փոխելու, մի հայացք ձգեց Սողոմի երեսին, մի արհամարհական ժպիտ խաղացրեց շրթունքի վրա և աչքի կոպով ոտից գլուխ դիտում էր յուր դիմացը կանգնած մոլորված մարդանման կենդանվույն։

— Աղա՛ Հարություն,— սկսեց Խուդոն,— սա իմ ասած տղեն ա, ինքը շատ պատվական հոգի (անձն) ա, երեք տարի ա՝ պսակված ա, երեք երեխա ունի, իր հոր ապրանքն ուրիշներն վեր են կոխել, ուտում ու իր քորփեքը (մանկունք) թունդիր ածես, էրես՝ շորահոտ չի գալ։ Ես սրան խորհուրդ եմ տալիս քո վեշը բռնիլ, մի քանի ամսից իր հոր մլքին տիրանալ. սա հենց կարծում ա, թե իր վրա ծիծաղում եմ. խնդրեմ, սա խեղճ գեղջցի անգետների մինն ա, հրամանքդ սրան գլխի քցես բանի լուությունը։

Փիլիսոփա փաստաբանն ինքնագոհ ժպիտով սկսեց մատները խաղացնել առաջին ընկած շերտավոր օրինագրքի կազմի վերա և հետևյալ պատասխանը տվեց.

— Կերևի մեր եղբայրը մի պրոստոյ մուժիկ (հասարակ ռամիկ) է, զակոնի ստատիևքանցից (օրենքի հոդվածներից) տեղեկություն չունի, ապա թե ոչ խելոք մարդն իր դախոդից (օգտից) չէր փախչիլ. զակոնն ինքն է պաշտպանում որբերին ու նեսովերշենոլետնիքանցը (անչափահաս)։ Ես, իհարկե, կարիք չունիմ գլխացավանքի մեջ մտնել, ժամանակս էլ չի ներում էդպես պուստոյ (չնչին) գործերը վերցնել, գիշերցերեկ պարապած եմ, գիշերները պրոշենիրն ու զայավլենիքն (խնդիր և զեկուցում) եմ պատրաստում, ցերեկը սդերումն եմ զաշչիշչատ անում (գատարաններում պաշտպանել). բայց որ ինքդ, տանուտեր Խուդավերդի, ինձանից սովետ (խորհուրդ) ես հարցնում՝ կասեմ, գիտեցողը չգիտեցողին պարտական է։ Ես տեսնում եմ, որ դու բարեսիրտ տանուտեր ես, չես ուզում, որ քո ժողովրդի մեջ անիրավություններ կատարվին։ Լսի՛ր ուրեմն. եթե, ինչպես ականջովս ընկավ ձեր խոսելու ժամանակը, այս եղբայրը 10 տարեկան մանուկ է եղել, երբ քեռու ձեռքով սրա այգին ծախվել է, սա կարող է այժմ յուր հայրենական անշարժ կալվածքը ետ ստանալ։ Հարկավոր է մետրիշկի սվիդետելստվո (ծննդական վկայական) ձեռք բերել. դժվար չի, կոնսիստորի շլեններին (անդամ) կամ սեկրետարին (ատենադպիր) մի քանի շահի կամ մի գլուխ շաքար ուտացրիր, 30 տարեկանը տասը կշինեն։ Երբ որ այդ վկայականը ձեռքիդ ունեցար, կայքիդ էլ կտիրանաս, ծախված օրից մինչև այսօրվա դախոդին

(եկամուտ) էլ հետը. թե որ չանեմ, աչ ձեռս կկտրեմ, սդի մեջտեղը շլեններ (անդամ) առաջին դեն կձգեմ ու դուս կգամ, որ իմ ոտս սդի դռնովը մյուս անգամ ներս չմտնի։

— Էդ ասա է՛, աղա Հարություն, մի լավ հասկացրո՛ւ էս անպոզ անասունին, արի ու սրա պեսներին լավություն ցանկացի. ծամում ես, բերաններն ես դնում, չեն ուզում կուլ տալ, կամենում են, որ մատով ներքև խցկենք,— արդարացավ տանուտերը։

— Ա՛յ ձեր գլխին մեռնիմ,— ուսերը վեր քաշեց Սողոմը,— ախար մին, որ մեր բաղը հորս պարտքի տեղակ ա ծախվել. մեկ էլ, որ նաչար Գալ-ափուն իր մատների միսը կերել ա, ընչանք հասցրել ա. էդ ո՞ր ղակոնը կարա հալալ աշխատանքին խեթ աչքով մտիկ տալ։

— Այդ բոլորը ոչի՛նչ, սիրելի եղբայր Սողոմոն. նախ՝ այդ պարոն Գալուստը զակոնի ստատիայի դեմ է գնացել, մեղավոր է. նորան ասած էր, իրավունք չունի նեսովերշենոլետնի մանուկի ապրանքին մոտ գնալու. ի՞նչ ասնովանիա (հիմունք) ուներ չլսելու, և երկրորդ, որ նա քո այգու դախոդն է կերել. ուրեմն դու իրավունք ունիս առանց մեծ փող մըսխելու՝ կայքին տիրանալ։

— Գալ-ափուն օրենքն ի՞նչ էր հասկանում։

— Է՛... սիրելի՛ս, ամեն մի թագավորի հպատակ պարտական է օրենքը գիտենալ. դու այդ խոսքով մեղանչեցիր. մեկ անգամ բերանիցդ հանեցիր, մյուս անգամ դուրս չթողնես ուրիշի մոտ, թե չէ փորձանքի մեջ կընկնես. քեզ խրճում եմ, մեր տանուտերի բարեկամն ես, թե չէ իսկույն պրոտոկոլ կկազմեի և դու կկորչեիր։

— Բաշխի՛ր, աղա Հարությո՛ւն, լսելու դի՛ր, գլուխը քարը տվեց,— միջնորդեց տանուտերը և դարձավ Սողոմին.— տո, ավանա՛կ, իշի քուռա՛կ, դու թագավորի ադվակատի մոտ թագավորի օրենքին չես հավատո՞ւմ. հիմի վեր կենա՞մ կաշի-մաշիդ պլոկեմ։

— Բաշխի՛, աղա ջա՛ն, ես մեղա աստծու,— վիզը թեքեց Սողոմը։

— Այդ ոչինչ, ես անհիշաչար հայ մարդ եմ. դու այժմ կարճ կապի՛ր. եթե չես ցանկանում քո սեփական այգիդ ետ ստանալ, քո կամքդ է, գնա՛, իսկ եթե հոժար ես, կարող ես մի քանի մարկա (դրոշմանիշ) առնելով իմ ձեռքովս կարճ միջոցից մի պատվական այգու տեր դառնալ։

Տշան ծործորակը քերեց, նա մտածմանց մեջ ընկավ՝ աչքերն անպատակ հառելով հիմար ոչխարի նման։

— Դե ի՞նչ ես կմկմում, գյադա (տղա), մորքրոզլի՝ (մորաքեռորդի), աղա Հարությունին պավերնի (երաշխավոր) չինո՞ւմ ես, որ քեզ ձեռաց էս գեղի համփեքանց շարքումը խաունի. թե չէ՝ ասեմ տխտոր (աբ-

ճանագրություն) գրի, ընչանք Սիբիր մին քշի,— կիսահեգնորեն, կիսասպառնալից հարցրեց տանուտերը Սողոմին։

— Քո կամքն ա։

— Դե արի՛, բալա՛մ (զավակս), արի՛ աղա Հարությունի ոտը պաչի, հարցրո՛ւ՝ ինչքան մարկի փող կհարկավորի, գնա բե՛ր, թող էգուց էս մարդն երեսին խաչ հանի ու գործիդ ձեռք տա։

— Առայժմ դեռ 20 մանեթից ավել պետք չունինք, հարկավոր է առաջ միրովոյ սդումը (հաշտարար ատյան) պոշլին (մաքս) տամ, թղթի փող տամ, հետո երբ գործն օկրուժնոյ սուդը (նահանգային դատարան) կմտնի, այնտեղ էլ մի չնչին բանով գլուխ կբերենք,— ապահովացրեց փաստաբանը։

Սողոմը նորից գլուխը քերեց և վախվախելով տանուտերի աչքերին նայեց։

— Հասկացա,— գլուխը շարժեց տանուտերը,— մեր Սողոմը պատրաստ փող չունի։ Վնաս չունի, որդի՛,— սիրտ տվեց նա,— առավոտը Տաճատ վարժապետին 40 մանեթի մի վեքսիլ (մուրհակ) գրել տուր մեր Բալասան աղի անումով, զավերնի անիլ տուր, բեր փեշատը դնենք, ես աղա Հարությունին յոլա կտանեմ, մնացածն էլ գործիդ համար կհարկավորի, թող ինձ մոտ մնա, ուտեմ էլ՝ կորած տեղ չի, մի օր քեզ պետք կգամ։

Մի քանի անգամ էլ ծոմռատվեց Սողոմը, փեշերքն ուղղեց, թևքով քիթը սրբեց, աջ նայեց, ձախ նայեց, թակարդում բռնված աղվեսի նման ոտքի մեկն առաջ դրեց, մյուսը ետ, վերջը մի հազաց ու համաձայնեց տանուտերի առաջարկությանը. խոստացավ մյուս օրը գնալ աղա Հարությունի հետ հաշտարար-նոտարի մոտ նրան երաշխավորական տալու Գալուստ Պետրոսյանից յուր հայրենական այգին ետ պահանջելու մասին։

Բայց, քար ընկնի Սողոմի գլխին, տանուտերի տանից դուրս եկավ և ուղղակի Գալ-ափունի դուռը բախեց, ամեն ինչ մանրամասնորեն նորան հայտնեց։

— Խիղճս տանջում է, ասում է, չեմ կարող թաքցնել, զուգանների ճանգն եմ ընկել, ձեռներից չեմ կարող ազատվել, հավատացնում էր, բայց դու, Գալ-ափո՛ւ, ինչ գիտես՝ էն արա՛։

— Ի՞նչ անեմ,— մտածեց Գալոն Սողոմի գնալուց հետո և տրեխները հագավ, շտապեց Մելիք-Բաղալենց տունը։

Այս անգամ Գալոյի գործը լավ հաջողեց։

Մելիք-Բաղալին հյուր էր գավառական մյուս փաստաբանը,— յոլախ Հարությունի ախոյան լոնդի Պողոս Բարանովը։

Նրան հրավիրել էր ինքը Մելիքը՝ յուր ծեծվելու վրեժը պահանջելու տանուտերից։

Նորա առաջին էլ թափված էին նույն օրինագիրքը, նույն թղթերն ու գործերը, ինչ տեսանք չոլախ Հարությունի մոտ։

Արդեն Մելիքի բողոքագիրը պատրաստ էր, որ Գալ-ափուն մտավ և ամեն բան մի ըստ միոջն հայտնեց։

— Ես էդ քո չոլայն շանն էն օրը քցեմ, էնպե՛ս փախցնեմ սդիցը, որ մկան ծակը հարյուր թումանով առնի. էդ քո Սողոմոնիդ էլ տկլորացնեմ, վերջին շապիկը թողնեմ, սուդեբնի իզդերժկեին էլ (դատարանական ծախքերը) վրին բարձեմ և չթույլ տամ պարոն Գալուստի այգու մոտովն անցնելու. այս բոպեին տասնվեց ավել այդպիսի գործեր ունիմ այդ անպիտան չոլախի դեմ,— պարծեցավ Բարանովը։

— Ընդուր են ասել՝ փեշաքյասրը (արհեստավորը) փեշաքյարին թըշնամի ա,— նկատեց Մելիք-Բաղալը։— Լիսը որ բացվեց, ձի կնստենք, պարոն Պողոսի հետ կերթանք սրան պավերնի կշինենք, ինչ ծախս էլ կհասնի, կտանք,— կարգադրեց ինքը Մելիքն ու Գալոյին ճանապարհ դրեց։

— Եղբա՛յր սիրելի, քսան անգամ այդ անպիտանին առաջարկել եմ, որ աղնիվ խոսք տանք միմյանց, ույեզդի (գավառ) բոլոր գյուղերը վիճակ ձգենք մեր մեջ, ես նորա բաժինը ոտք չդնեմ, նա իմը. բայց չի լսում. ո՛ր գյուղը գնում եմ, լսում եմ, որ եկել է՝ խառնշտորել, չեղած տեղից իսկեր (պահանջ) ստեղծել ու վերցրել։

— Դե, էդ հո՛ քո օգուտն ա, մեկդ գործ սկսողի կողմից կլնիք պավերնի, մեկելդ՝ դիմացի մարդի, ինչպես որ մեր Գալոյի գործումը, եթե չոլախ Հարությունը Սողոմին չհամոզեր, դու նրանից շահմունք կունենա՞ր,— հարցրեց Մելիքը։

— Ավելի օգտակար չէ՞ր լինիլ, եթե գործն էլ ստեղծեինք, երկու կողմից էլ ստանայինք։

— Հետո ինչպե՞ս էիր վերջացնում, ո՞ւմ օգտին։

— Վերջ ի վերջո օգուտը մերը կլիներ, իսկ գործի տերերը կամ կհաշտվեին, կամ միանգամայն կքանդվեին, այնպես ետ կկանգնեին։

— Ձեր այդ ադվակատությունն ու տերտերությունը մին ա,— ընչացքի տակից ժպտալով ասաց Մելիք-Բաղալը,— մեռելից էլ եք առնում, կենդանուցն էլ։

— Պարոն Պողոս, ասաց մյուս օրը Մելիք-Բաղալը, էսօր իմ ու Գալոյի քեզ ընկերանալը ետ մնաց, խիստ հարկավոր գործ ա պատահել. դու հրամանքդ գնա՛, մենք մի երկ օրից կգանք քեզ մոտ, թղթերը շինել կտանք։

— Ձեր խարերա հե՛րն անիծած,— ձեռքը թափ տվեց Մելիք-Բաղալը Բարանովի քամակից.— սատկած իշան եք գտել նայները քաշել եք, խեղճ գեղրցոնց արյունն եք ծծել. թե չեմ մեռնիլ, երկուսիդ ոտն էլ էս մհալիցը կկտրեմ ու էնպես ադվակատների կերթամ, որ գործ շինեն, ոչ թե ինձ աղբատացնեն։

Ի

ԽՈՓԸ ՔԱՐԻՆ ԱՌԱՎ

Ամեն տան ճրագները հանգել են. Օ. գյուղի փողոցներում ոտքը խաղաղվել է. պառավները մի հանգ քնել են ու զարթնել, դուրս գնացել իրանց հովին տվել ու տուն մտել։ Այդ միջոցումը մի տան վերնահարկի պատշգամբի վրա մի յափնջում կոլոլված մարդ մոտենում է լուսամուտին և ետ քաշվում։ Պատշգամբը երկու դուռն ունի. նոցանից մեկը տանում է տան մեծ սենյակը, մյուսը՝ նույն սենեկի հետ ներսի դռնով կապ ունեցող կանանց բաժինը, ուր միաժամանակ կերակուր եփելու փոքր թոնիրն է սարքած։ Շարժումներից երևում է, որ գիշերաշրջիկն այս տան համար օտար էր. նա սովորական դռնովը չէր բարձրացել պատշգամբը, նա ուղղակի փողոցից պատովն էր վեր ելել։

Ահա կանանց սենեկի դուռը բացվեց, մի նորահաս աղջիկ դուրս եկավ, քարշեց յափնջին ու երկուսը միասին մոտեցան պատին։

Պատշգամբի պատի տակին մի ծառի մեծ կոճղ տարիներով ընկած է և նստարանի տեղ է պետք գալիս։

Այս տեսակցությունն առաջինը չէր երկու ժամադիրների մեջ։

Այն օրից, երբ Օ. գյուղացիք աշնան բերքը ժողոված՝ տուն հավաքվեցան կոճղի պաշտոնը մեծացավ. այս տարի գիշերն էլ անշունչ փայտի կտորը չհանգստացավ. խաղաղությունը տիրելուն պես այդ երկու հոգին միևնույն կանացի սենեկից էր դուրս գալիս, մյուսը պատիցն էր վեր բարձրանում և, կոճղի վերա նստած, փսփսոցի մեջ էին մտնում։

Աքաղաղն առաջին անգամ թևը թափ էր տալիս և դեռ նոքա նստած էին լինում։ Ինչքան երևում էր, սենեկի մեջ քնած երկու ուրիշ անդամներից մեկին անհայտ չէր անքուն պեռի (դևերի) այս արարքը։ Սակավ չէր պատահիլ, որ մի միջահասակ կին զգուշությամբ բաց կաներ կանացի սենեկի դուռը, գլուխը կհաներ, իսկ մայմնով ներսը կմնար, որպեսզի յուր շապկանց լինելը չնկատվի, և ներս կկանչեր կոճղի վրա նստողներից մեկին, իսկ մեկելին քաղցր հանդիմանությամբ իսրհուրդ կտար բավականանալ և գնալ քնելու։

— Հենց հիմի գնում եմ, հենց հիմի գալիս եմ,— լսում էր միամիտ կինը երկուսից միասին և մի կնճիռով յուր տհաճությունը հայտնում ու գնում անկողին մտնում։ Խառը երազները չէին թողնում մտատանջ կնոջը երկար քնել. էլի շուտով զարթնում էր, ձեռքով շոշափում յուր աջ կողմի դատարկ անկողինը, ճրբրալով վեր կենում, նոր խոստումն առնում իրեն դիվադադար անողներից և նորից պառկում։

Երկու նստողները մեր լավ բարեկամներն են. Սամփսոնն ու Սոնան էին նոքա։

Այն օրից, որ Գալ-ափունը ու Բարսեղը այգու ծառի տակին արևելյան խնդիրը վերջացրին, Բարսեղը թեթև աչքով էր նայել և չէր բարկացել երեկոները շատ ուշ երբեմնապես Սամփսոնին յուր պատշգամբումը տեսնելուս։

— Ադա՛, դեռ ջուրը չհասած, ոտքերդ հանեցիր,— նկատողություն արեց առաջին երեկոյին Բարսեղը Սամփսոնին։ Բայց երբ ամաչկոտ փեսացուն կարմրեց ու գլուխը քարշ ձգեց, Բարսեղն յուր մի նկատողությամբ ամենայն փակ դուռը բաց արեց։

— Դու մեղավոր չես, որդի՛, աշխարհքն ա շուռ անցել, փչացել. մեր ժամանակը պտեիր, որ աթարոցով ետ ածեի, փեսեն աներանց շեմքից քթեթի (նորահարսին հագցնելու շորերը) հետ պետք է տուն մտներ։ Բայց հիմի ամեն ինչ փոխվել ա, տեսնում ես՝ նշան էլ չես դրած, մի դարդակ խոսք ենք տվել, արևի շողքի պես, պուպուզ, տուն ես ընկել. վնաս չունի, ջահել եք, քեֆ քաշեցե՛ք, հիմիկվա սերը քաղցր կլինի։

— Քիչ մնաց՝ մկան ծակը հարյուր թումանով էր առնում, երբ ոտիդ շփիթոն (ձայն) առավ, ուզում էր գող կատվի պես փանջարովն իրան վեր քցի. համա էլ ո՛րտեղ, դուռը բաց արիր, հոգեառի պես գլխավերևը ցցվեցիր, մեր լեղին էլ ջուր շինեցիր,— շողոքորթեց կինը մարդուն։

— Բաս էդ անզգամ Սոնին չե՞ս ասում, որ քունջն ա մտել, պանրագող մկան նման գլուխը կախ քցել, աչքերը սլլկացրել; սաքի թե շատ ամանչում ա։ Դե, շա՛ն աղջիկ, հրե՛ս, ա՛ռ ոտներն աչքդ կոխի՛, ոտով գլխով քեզ բաշխեցի,— կիսակատակ տալով բռնեց Բարսեղը Սամփսոնի կուռը և հրեց դեպի աղջիկը։

— Գնա՛, Սամփսո՛ն, գնա անորդ ձեռը պաչի՛, որ քեզ իզին (իրավունք) ա տալիս մին-մին գալ-գնալ. ես զմիշ չէի անում սիրտդ կոտրել, բայց հենց որ երևացիր, մահվան դող տվի. մտքումս ասում էի՝ հիմի Սոնի հերը տուն կգա, քեզ քարհալած, ինձ ու Սոնիս էլ սալջարդ կանի, բայց լավ սհաթի ռաստ եկար (նանդիպեցար), բախտդ կտրուկ ա։

Ուղիղ էր Մարգարտի ասածը. եթե Բարսեղն էս բոպեին Սամփսոնենց սեղանի վրիցը չի վերկացած լիներ, եթե նա Գալ-ափունի հետ

երկարակոթ դդումը ջան ասելով վայելած չլիներ, էսպես թեթև չէր անցկենալ փեսացվի առաջին հանդիպումը։

Սատանա էր Սամփսոնը. հենց որ նկատեց, թե հոր ու աներոջ քիֆը տեղն եկավ, ինքը դռնի դո՛ւրս, ու կատվի նման վեր շուլալվեց (բարձրացավ) նշանածենց պատիցը։

— Դե գնացե՛ք գյազմի վրա (պատշգամբ) մի քիչ ասուլիս արեք, թող հերդ թեք ընկնի, քնի,— ձեռքով դուռը ցույց տվեց Մարգարիտը փեսացվին ու աղջկանը։

Այդ օրից Սամփսոնի համար Սոնենց տունը ջրի ճանապարհ էր դարձել, նորա ոտքը բացվել էր։

Այդ օրից Սամփսոնն յուր ընկերների համար ուրբաթախոս չէ. կատակներն ամենքից վաղ ինքն էր սկսում. պատմում էր, որ նշանածի մոտիցն է գալիս, որ զոքանչի ձվաձեղը սիրտը բռնել է և այլն։ Այդպիսի միջոցները միշտ հիշում էին յուրյանց ընկեր թշնամու գնդակի զոհ գնացած խեղճ Դոնդարենց Ասոյին, հայհոյում էին, ուխտում էին վրեժխնդիր լինել նրան սպանող Դվակոթենց Հայրոյից, որ շատ ժամանակ չէր՝ Բալասան աղի երաշխավորությամբ արձակվել էր բանտից։

Բայց ահա մի քանի օր է, որ Սամփսոնը ոչ ցերեկն է գյուղամիջին երևում և ոչ գիշերներն ընկերական խմբակին է այցելում։

Զարաղետ նշանի երեկոյից հետո էր այս։

Մի քանի անգամ Սամփսոնի ընկերները բախեցին նրանց դուռը, հորը հարցրին, մորից տեղեկություն խնդրեցին, բայց միշտ մի տեսակ անորոշ պատասխանով վերադարձան։

— Տղե՛ք, մեր գլխինը լաչակ ա, թե որ մեր ընկերի հավարին չհասնենք (օգնել), մենք խոսք ենք տվել՝ մեր գլուխը Սամփսոնի ուղուրին ետ դնել, պոռշտով էլ պայման ենք կապել. էսօր մեզ ամոթ ա, որ թողանք նրա թշնամիքն ուրախանան. մենք պտի կաշիներիցս դուս գանք, նրանց տունը կրակոդին գտնենք, շամփուրը քաշենք, խորովենք ու, ով որ էլ նրա սրտի մուրազն ուզում է խափանել, Սամփսոնի նշանածին կամենում է տիրանալ, պտի բռնենք, կամ խոսք առնենք, որ ետ քաշվի, կամ թե չէ շլինքը մի սև զազիլ (մազե առաջան) պետք ա կապենք, ձեռները կպրի մեջ հինա դնենք ու արևը մեր մտցնենք։

Սամփսոնի ընկերները կատակ չէին անում, նրանք գտան տունը կրակ տվողներին. տանուտեր Խուդոյի տղա Կարապետն յուր բերանով պարծեցել էր, որ ինքն է կրակ տվել Բալասան աղայի քրոջ որդի Վասակի հետ և թե, շատ չի քաշիլ, ինքը Սոնային էլ կտիրանա։

Սամփսոնի տրտմության պատճառն իսկապես ոչ նշանի հետ մնալն և ոչ հրդեհն էր։

Ցուր աները մյուս օրը յուր բերանովն էր հրամայել, որ սիրտը չկոտրի, գա ու գնա, Սոնի հետ խոշ ու բեշ անի։ Բարսեղը Գալ-ափունի հետ էլ խորհուրդ էր արել, որ մենծ տերտերի խոսքերը պարանի տեղ չդնի, մի կերպով գյուղի մյուս քահանային համոզի. մեկի ծուխը դառնա, նրանց ձեռովը մի իրիկուն նշանը տա, մեկել օրը հարսանիքը նրստացնի, պսակի, դուշմանին (թշնամի) տրաքացնի, իրավորեն ուրախացնի։

Եվ աշխատում էր Գալոն, և շարունակում էր յուր երեկոյան այցելությունները Սամփսոնը. բայց շատ չանցավ, հոր ու որդու ոտքը միանգամից քարին առավ։

Գալոյի երեսին ամեն դուռը փակվեց, գյուղի երկու տերտերները կտրական կերպով մերժեցին նորա խնդիրը, պարզ ասացին, որ մեծ տերտերը երկու տարի յուրյանց երկուսի հետ էլ խռով էր, խռով էլ պաշտոն էր կատարում, հետները չէր խոսում, իր լեզվովն էր պատվիրել նրանց, որ չհամարձակին էդ նշանի գործի մեջ խառնվիլ, ապա թե՝, սպառնացել էր մեկին Սևանի խոնավ խցերի մեջ փտացնել տալ, մյուսին Խորվիրապի Լուսավորչի վիրապի մուտքի դռնապանն անել։

— Եթե բանն էդտեղն ընկավ, Սամփսոն ջա՛ն,— դեմ ու դեմ երեսին ասաց մի երեկո Բարսեղը,— էսօրվանից իմ տունը քեզ համար պաս էլավ. իմ աղջկա անունը ես չեմ թողալ աշխարհքումը մին ընի։ Երկու շաբաթ ձեզ ժամանակ, գնացե՛ք, քարեքար դիպե՛ք, թե կարացիք մաղի գլուխը մի բան քցել (հաջողացնել) էս քո տունը, էս քո նշանածը, արի դուրս քաշի տա՛ր, մորդ կաթի պես քեզ հալալ։ Թե չէ՝ դուք ձեզ համար, ես ինձ համար, զոռով բան չի գլուխ գալ. ճակատներիդ ինչ գրած ա, էն պտի կատարվի։

Ահա հենց այս սառը պայմանն էր, որ Գալոյի տունը սգի մեջ էր դրել. հայրը մոլորված չգիտեր՝ ինչ աներ, որդին երեք օր ցորեկը մթնասենյակից դուրս չէր գալիս, իսկ գիշերը Բարսեղենց պատի տակից չէր հեռանում։ Ինչպես ասում են՝ Սամփսոնի խոփը քարին դեմ եղավ։

— Է՛հ,— վճռեց մի երեկո էլ Սամփսոնը,— ջուրն ընկնողն անձրևից չի վախիլ. ես էլ մի կյանք չի, որ քաշում եմ. ասում ա՝ պղինձը վեր ընկավ, չկոտրվեց, բայց ձենը վեր էլավ։ Աշխարհքին հայտնի ա, որ ես Բարսեղի փեսացուն եմ. հիմի ես թողամ իմ նշանածն ուրիշի ճանգն ընկնի ու ապրի՞մ. թող որտեղ բարակի, էնտեղ կտրվի։

Այս խոսքերով նա կապեց յուր երկսայրի դաշույնն ու քայլերն ուղղեց դեպի յուր սովորական պատի ճանապարհը։

— Ուրիշներն անծանոթ տեղից աղջիկ են դուս քաշում, փախցնում, իրանց մուրազին հասնում, իմ Սոնին մի խոսք ասեմ, հետս Հնդստան

կերթա, գնամ բերանիցը խոսք առնեմ, էկուց իրիկուն ձին նստեմ, թարթ քաշեմ, գործակալի առաջին հետը չոքեմ, պսակվեմ ու օրով-ցերեկով կուռը բռնած՝ գեղը մտնեմ, տեսնեմ ո՞վ չի ասիլ բարաքյալլահ (կեցցես)։

— Դա՛ց, Սամփսոն, մեռանք քեզ ման գալով,— Բարսեղենց պատի տակին շրջապատեցին նրան երեք-չորս հոգի։

Մեղավոր չէր Սամփսոնը, որ գլուխը երևակայություններով լիքը, միտքն օդի մեջ պտտելուս, նա առաջին անգամից չճանաչեց յուր ընկերների ձայնը և դաշույնը պատենիցը հանեց ու կամենում էր յուր ճանապարհը կտրողների վերա հարձակվել։

— Ադա՛, մենք ենք, Սամփսո՛ն. Սոնայիդ տրեը կսիրես, ջժությունդ ետ դի՛ր։

Սիրեկանի անունը նրա կոները թուլացրին, նա ուշքի եկավ և ճանաչեց իրեն շրջապատողներին։

Ընկերներն ամեն բան պարզեցին նրան, խոստացան յուրյանց աջակցությունը, պատրաստականություն հայտնեցին Բալասան աղայի դուրը կուպր քսել, տունը կրակել, տանուտերի այգին արմատահան անել, նորա ախոյան Կարապետին էն աշխարհքն ուղարկել։ Բայց Սամփսոնը մերժեց բոլորը։

— Իմ խնդիրքս ձեզանից էս ա, իմ ադիլ ախպերնե՛ր,— ասաց նա,— որ էս տանիցը դուք մի քանի օր հեռու ման գաք, պետք եկած վախտը ես ձեզ կկանչեմ։

Ընկերները հեռացան՝ սրտները կոտրած. իսկ Սամփսոնը բարձրացավ պատովն և ոտքերի ծայրով մոտեցավ լուսամուտին ու ներս նայեց։

Ոչինչ ձայն, ոչինչ շշուկ, ամենքը խաղաղ քնի մեջ են։

Բայց ահա ներսի մթության մեջ, կրակ կտրած պստտանուն քաջ ծանոթ կետից, ուր նորա աչքերն էին հառած, մի ստվեր սլացավ դեպի տակին տվեց։

Սամփսոնի սիրտը ժամացույցի ճոճանակի նման սկսեց ճկճկալ. նորա բերանն անդիտակցաբար ետ բացվեցավ, ձեռքն ու ոտքը բարակ ծղոտի նման, ինչպես մի խիստ քամուց. կանգնած տեղը դողդողում էին. նա մխված մնացել է տեղը, նորա ուշքն էլ իրան չի զեկավարում, նորա աչքերը սևացան. մի բոպե, և նա գետնովն է դիպչելու և աղմուկ բարձրացնելու։

Հիրավի նա ընկավ. բայց մի գրկի մեջ. նորա ընկնելու ձայնը չվեր էլավ։

Սառել էր Սամփսոնի անձը, սակայն սկսեց տաքանալ, ջերմությունը սկիզբն առավ ճակատիցը. այն ի՞նչ կրակ էր, որ ճակատի ուղիղ միջակետից մի ակնթարթում տարածվեցավ բոլոր ջղերի մեջ։

Այդ յուր նման քունը կտրվածի համբույրն էր, որ դյութական բալզամի ազդեցությունը գործեց։

Այդ Սոնան ինքն էր. մի քանի գիշեր է, մինչ հայրը ճանապարհ էր ցույց տվել յուր տպագա թագ ու պսակին, Սոնան անքուն սատանա էր դառել, մտնում էր անկողին, գլուխը բարձի տակը կոխում ու հեկեկանքների մեջ խեղդվում, որ հայրը չլսի յուր հառաչը, որ մայրը չկրշտամբի յուր հանդգնությունը։

Հայրն ուշք չէր դարձնում, բայց մոր սրտազգաց աչքերից չէր փախչում զավակի երեսի թափիծը. նկատում էր յուր սիրելու զգալի կերպիվ փոփոխությունը, գունատությունը, խոր ընկած աչքերը և յուր վիշտն յուր սրտումն էր խեղդում, ոչ մարդին, ոչ Սոնային էր մի բան ասում. ամուսնուցը վախենում էր. իրեն խստիվ պատվիրած էր Սամփսոնին ներս չթողնել, ապչկանն էլ խնայում էր։

Զգում էր Սոնայի սիրտը. նա անհամբեր սպասում էր ամեն երեկո, նա մինչև անգամ զարմանում էր, որ երեք գիշեր իր սրտի սիրելին կարողացել է համբերել ու պատը չբարձրանալ։

Մի քանի անգամ նա ծնողաց խոր քնի մեջ մտած ժամանակ դուրս էր գալիս պատշգամբը, աչքերն ուղղում էր յուրյանց հարևան տան մթության մեջ նշմարվող լուսամուտին, ժամերով կանգնում էր և նորից տուն մտնում։

Գիշերն այս գործողությունը անընդհատ կրկնվում էր։ Հենց այս բոպեներից մեկն էր, երբ Սոնան չթողեց վայր ընկնել յուր գրկի մեջ ապաստարան գտած ուշագնացին։

— Ո՛չ,— պատասխանեց աղջիկը Սամփսոնի վճռական քայլի գեմ,— էդ ճամփեն ամեն սհաթ մեր առաջին ա. հորդ ասա թող էլի դես ու դեն դիպչի, բալքի մի հնարքով պսակի հրաման բերի. թե չէ, որ բանն էդտեղ հասնի, հինգ օր առաջ, հինգ օր ետ, ես քոնն եմ, դու իմը, քեզանից սավահի ուրիշներն իմ նաշս (դազաղ) մենակ իրավունք ունին էս տանիցը դուս տանելու։

— Բայ ես ո՞նց համբերեմ, անումիդ մատաղ. երեք օր ա՝ ես ոչ կենդան եմ, ոչ մեռած. մի օր որ քեզ չեմ գրկում, հենց իմանաս մահն ա շլնքիս փաթաթվում։

— Հուդս մահի գլխին, ո՞ւր եմ Բողնում, որ տեղս բռնի. ընչանք բանի գլուխը գալը հորն ու մորս քնելուց հետո քեզ կառնեմ, կմտնեմ մեր գոմի օդեն ու վզիցդ պոկ չեմ գալ՝ ընչանք աքլորի երեք բերան կանչելը. թե որ մեր աքլորն էլ շուտ կկանչի, կխեղդեմ։

Այդպես էլ անում էին սիրահարները. հավերը պատրաստվում էին թառից իջնել, որ Սամփսոնը հեռանում էր իր սիրելուց։

ԻԱ

ՄԻԿԻՏԱՆ ՍԱՔՈՅԻ ԵՐԿՎՈՐՅԱԿԸ

Նոյեմբերի մառախլապատ և ցուրտ երեկոներից մեկն է. աղքատ ու հարուստ կուչ են եկել իրանց տներումը. շքավորները վաղուց յուրյանց ունեցած չուլ ու փալասի տակն են հավաքել կիսամերկ երեխաներին՝ իսկ իրանք մարդ ու կին կողքերից աջ ու ձախ պառկած՝ յուրյանց մարմնի բնական տաքությամբն ու արտաշնչությամբը մի փոքր ջերմություն են ավելացնում անմեղ արարածների մեջ, մինչև որ քունը նրանց աչքերը փակում է. իսկ հարուստները կերել են ամուրծ տված ընթրիքը և քուրսու շրջակայքում տաք թոնրի բոլորքը հաստ ու փափուկ անկողինների մեջ հանգստանում։

Միայն Սամփսոնն էր, որ տեղը մտած՝ սուտ խումփացնում էր և երբ հոր ու մոր քչփչոցն իսպառ դադարեց, հագավ շորերն ու ծածուկ յուր ծանոթ պատը բարձրացավ։

Ի՞նչ է այս. Սամփսոնի աչքերը սևացան. նա սարսափեց, մնաց կանգնած Բարսեղենց պատշգամբի վերա և չէր վստահանում մոտենալ նվիրական պատուհանին ու որոշյալ նշանը տալ. նա սկսեց աչքերը տրորել՝ ճիշտ քնից նոր զարթնածի նման, որի աչքերը առավոտյան արեգակի ճառագայթներից ինքնաբերաբար ծածկվում են և շփվելով միայն փոքր առ փոքր ընտելանում են լույսին։

— Երազում հո չե՞մ,— մտածեց Սամփսոնը և նորից աչքերը ճմռեց։

— Ի՞նչ երազ, ճրագ է՝ որ կա,— ինքն իրեն պատասխանեց նա մտքումն և ամենայն զգուշությամբ անցավ Բարսեղենց կանացի սենյակը, մոտեցավ մեծ լուսամուտին ու աղոտ ապակուց ներս նայեց։

Սամփսոնը հանկարծ թափահարվեց, ամբողջ մարմնի մեջ ցնցումն անցկացավ և ծնկները ծալվեցին. նա շոքեց լուսամուտի առաջին և սուր աչքերով դիտում էր տան ներսը։

Անտեղի չէր Սամփսոնի երկյուղը. Բարսեղենց տանը հյուրեր կային, այնպիսի վտանգավոր մարդիկ, որոնց դեմ ինքը պետք է ընկճվեր կամ նրանց կործաններ։ Եվ նա դաշույնը հանեց. երկու քայլ, և սենյակի ներսն արյունհեղություն էր կատարվելու, բայց նա այդ չարավ, խելոքություն համարեց սպասել։

Այժմ նա նստեց լուսամուտի տակին։

Նորա բախտից պատուհանի մի աչքը կոտրված էր, թուղթն էր բռնել ապակու տեղը. դաշույնի ծայրով զգուշությամբ խաղեց թուղթը։ Մի

փոքրիկ ծակ բավական էր ականջը դեմ տալու և ներսի խոսակցությունը լսելու։ Նա թղթի խազածը մատով լայնացրեց և ականջը դեմ տվեց։

Այժմ գործում են նորա տեսանելիքն ու լսելիքը. ներսի գործողությունները բոլորը կատարվում են նորա ներկայությամբ։

Հյուրերից մեկը ետ բաց արավ յուր լայնաքղանց վերնահագուստը, ձեռքը գրպանը տարավ, հանեց մի թղթի փաթեթ և պարզեց քուրսու վերա։ Մի բաղդադի մետաքսա թաշկինակի ծալքից փայլին տվեց ոսկյա մանյակը, իսկ տակից դուրս եկած մատանու կարմիր հակնթյա գոհարի շողշողյունը ծակեց ուղղակի մեր դժբախտ երիտասարդի սիրտն ու աչքերը։

— Ահա՛, էս մեր նշանը, Բարսե՛ղ. կամ վե՛ր կալ, ասա՛ աստված շնհավոր անի, կամ տուր գլխներովս ու մեզ երեսի վրա ետ դարձրու,— ոսկի շարքը ձեռքին բարձրացրած՝ շխշխկացրեց երկարահանդերձը։

— Ա՛յ ձեզ մատաղ, ախար էդ ո՞նց կըլնի, բաս հայ-քրիստոնեություն չկա՞, բաս հախ միայն տերը (աստված) կրակ չի՞ շաղ տալ մեր գլխին. ախար մեջտեղն արյուն կա, չհաս ա։

— Քո ի՞նչ բանն է, Բարսե՛ղ,— ընդհատեց խոսողին հոգևորականը.— օրենք դնող-քանդողը մենք ենք, հասցնողն էլ՝ վանքցիք. ես ասում եմ՝ չհաս չի, նրանք էլ հրամայում են։

— Ախար, տերտեր ջա՛ն, կամ դու ո՞նց կասես, կամ նրանք ի՞նչպես իրանց հոգին կսևացնեն։

— Մեր աղի քյալլեն (գազար) ողջ կենա, վանքցոնց կհրամայի, ձեռաց պսակի հրամանը կառնի,— պարծեցավ մյուս խոսակիցը։

Կարծեմ հիմա հասկանալի է թանկագին հյուրերի ով լինելը. առաջինը Օ. գյուղի ավագ երեցն էր, մեզ հայտնի տեր Սուքիասը, մյուսը՝ ինքը տանուտեր Խուդոն։

Տանուտերի կապերը Բալասան աղայի հետ մեզ քաջ ծանոթ են. բավական է իմանալ. որ տերտերի ավագ քահանայությունը, իառա փիլոնը և թավշյա կամիլավկան Մելնիկովի միջնորդությանց արդյունքն էր, և ահա մենք կտեսնենք, որ Վլադիմիր Նեստորիչը մի ձեռքով բռնած ունի Օ. գյուղի հոգևորական և աշխարհական իշխանության ներկայացուցիչներին՝ կարևոր ժամանակն յուր օգտին պետք ածելու համար։ Սակայն խոստովանվում էր Բալասան աղեն, որ հաճախակի տերտերի հմտությանց դեմ ինքը տեղի է տալիս։

— Հիմի հասկացա՞ր, Բարսե՛ղ, որդյա՛կս, թե աղջիկդ սրա տղին տալով՝ ի՛նչպես մարդի շվաքի տակն ես մտնում. ուրիշները փող կմըսխեին ու էսպես չհաս չէին կարող գլուխ բերել. իսկ հիմի ոչ տանուտերի,

և ոչ քո քսակից մի կոպեկ չի գնալ. Բալասան աղեն կամեցավ թե չէ, էն օրը պսակի՛ր։

— Ախպե՛ր, ես ոչ աղջիկ ունիմ Խուդոյի տղին տալու, ոչ կաշառքներ մսխելու հոգս քաշեմ. ես մի անգամ հաստատ խոսք եմ տվել Գալոյի տղին, աստված իրան արժանի անի։ Էլ ես ձեզ ասեմ, որ դեռ նշան չենք դրել, բայց գյադեն (տղան) կապը կտրած շան նման ամեն գիշեր ներս ա ընկնում։ Դե, ղորթ ա, քչփչոցից ավել բան չկա միջներին. համա ձեզ լայաղ չի (վայել չէ) ուրիշի շունչը առած աղջկանն ուզել. մերը երդում-կրակն ա ընկնում, միայն ես չեմ հավատում, որ մի հատ էլ ա աղունիկների պես իրար գուրգուրած, կտուց-կոցի քսած չըլնին։

— Հեր օրհնած, հմի ազափ տղեքը որբևերի կնիկ են առնում, չեն ամաչում, քո պաչած աղջիկը տանուտերի տղի կատիկին դեմ կառնի՞։

— Տերտերը ուղիղ ա ասում, մեզ հաճո ա,— հաստատեց տանուտերը։

— Շատ էլ ձեզ հաճո ա, բայց իմ սրտովը չի. ես Գալոյի Սամփսոնից աղջիկ չեմ հանիլ։

— Կփոշմանես, Բարսե՛ղ,— սպառնաց Խուդոն։

— Աստված ինքը ոչ փոշմանություն տա, շատ անեք՝ բաղերս պտի քանդել տաք, հնձանս պտի կրակեք, ոնց որ խեղճ Գալոյի գլուխը բերիք. գնացեք, արեք։ Գալոյի տղեն աղջկանս իմ մլքերի սիրու չի ուզում, նա տկլոր դուս կտանի, մենք էլ շատվոր չենք, մի տեսակ օրերս կմթնացնենք, ընչանք Սամփսոնի ձեռի հողին կարժանանանք։

— Շատ ես սիրո՞ւմ Սամփսոնին,— խորամանկ հարց տվեց տեր-Սուքիասը։

— Աչքիս լսի պես։

— Նա էլ քո աղջկանը չի կարող առնել։

— Ումնի՞ց կվախենա։

— Ոչովից։

— Դու չես պսակիլ, գործակալին իրան կկանչեմ։

— Տեսնե՛նք։

— Բաս, աջի՛դ մեռնիմ, վե՛ր կացեք, ոնց որ եկել եք, գնացե՛ք, հավաքեցե՛ք ձեր բերած նշաններն ու ուրիշի դռնովը ներս մտե՛ք. ես իմ փեսեն ունիմ, Սամփսոնի կտրած ղունգը հազար տղի հետ չեմ փոխիլ։

— Վե՛ր կաց գնանք, տանուտե՛ր,— ասաց տերտերը,— պարզ երևվում է, որ սա էլ բանի մեջ խաուն է, ապա թե ոչ՝ մարդասպանին, արենկերին ո՞վ է գժվել աղջիկ տա։

— Ի՞նչ ես ասում, տերտե՛ր։

— Հանի՛, տանուտե՛ր։

Տանուտերը ծոցիցը հանեց մի թերթ բառածալ թուղթ։

— Էդ ի՞նչ թուղթ ա,— շփոթված հարցրեց Բարսեղը։

— Առ կարդա՛ ու իմացի՛ր,— առաջարկեց տերտերը։

— Ես որ կարդալ իմանայի, օրինավոր մարդ կլինեի։

— Ուրեմն լսի՛ր։

Քահանան սկսեց բարձրաձայն կարդալ.— Մենք մեր աչքովը տեսանք, որ Ասո Դոնդարովի սպանողը Սամփսոն Գալուստովն էր և ոչ թե Հայրապետ Դվակոթովը։ Հայրապետն այդ օրը գյուղումը չէր, նա բամբակ էր տարել Երևան ծախելու։ Մենք մեր ասածն երդումով կհաստատենք։

— Էդ գիր տվողներն ո՞վ են,— զունատված հարցրեց Բարսեղը։

— Ով իր աչքովը տեսել ա ու էստեղ ձեռք քաշել, գլավնու փեշատովն էլ զավերնի արել (տանուտերական կնքով վավերացնել),— պարծեցավ Խուդոն.— տեսնո՞ւմ ես, հիսուն հոգուց ավել են. էն օրը դատարանումն ինձ խեղդում էին, ես Սամփսոնին խեղճ էի գալիս, չէի ուզում հաստատեմ, նրանք դատարանը գլխներն էին առել, քիչ էր մնացել՝ խեղճ գրաքրերին ոտնատակ էին տալիս, որ զավերնին մի քիչ ետացրեց։— Թե չես հաստատիլ, ասում էին, մենք կտաննենք նաչալնիկի իրան փեշատը դնիլ կտանք, քեզ վրա էլ գանգատ կանենք, թե Գալոյից կաշառք ա կերել։ Ես էլ վախեցա ու ձեռք դրի։

— Ա՛յ ձեր տունը մահ մտնի,— վիզը թեքեց Բարսեղը,— դուք ո՞նց եք անմեղ մարդի արյունն ընկնում՝ խեղճ Գալոյի տունը քանդում. հերիք չէր՝ տունը կրակեցիք, տասը տարեն տնկած բաղն եք ետ խլում, հիմի էլ աչքի սև ու սպիտակը մի տղեն ա, ուզում եք նրա վային նստել ձեր չար մտքերի համա՞ր։ Տերտե՛ր, քո անտոնական-կարգին կապված ըլնեմ, թե սուտ ասեմ. էն գիշեր աքլորն երեք բերան կանչել էր, որ Սամփսոնն աղջկանս հետ մեր գյաղմումը (պատշգամբ) փսփսում էր։

— Էդ ա, որ աստված էլ գլխին բարկացավ, աչքը հանեց, է. նա ի՞նչ իրավունքով, դեռ նշան չտված, ուրիշի աղջկան անունը կոտրում էր։ Աղջիկը որ կա, անկտրիլ ձմերուկ ա, ձեռք տալ չի ըլնիլ,— նեղացած ընդհատեց տանուտերը։

— Ախպե՛ր, նշանս ո՞րն ա, մեջը չհասություն չկա, երեխեքն իրար սիրել են, մի օր պսակվելու են. իր ապրանքն ա, թող էնքան գզգզվին, որ բիղարեն։

— Դե թող ըստուց հետո գզգզվին,— սպառնաց տանուտերը.— քանի օր ա՝ էս թուղթը ծոցումս պահում եմ, լապուռ (հայտարարություն)

չեմ գրում նաշալնիկին, Սամփսոնին խեղճ եմ գալիս. բայց որ բանն էստեղը հասավ, ի՞նչ ես խորհուրդ տալիս, տերտե՛ր։

— Ի՞նչ պետք է խորհուրդ տամ, ինչ որ անցյալ օրը Բալասան աղեն քեզ հրամայեց, պարտական ես անել։

— Քեզ հավատացնում եմ, Բարսե՛ղ,— ասաց Խուդոն,— մեր աղեն Սամփսոնի համար շատ ցավեց, բայց վերջը խորհուրդ տվեց, որ բանի եղելությունը քեզ գլխի քցեմ, նշանը վերցնեմ, գամ քեզ մոտ, էս թուղթն էլ ցույց տամ. թե նշանս վերկալնես, մի հնարքով Սամփսոնին ազատենք, թե չէ՝ օրն-էգուց կոները կապեմ քամակիցը, երկու զարավուլի (պահապան) առաջն անեմ, ղրկեմ նաշալնիկին։

— Դու էլ կանես, է՛լի։

— Լիսը դեռ չբացված։

— Էլ լուսանալուն ընչի՞ ես սպասում,— առաջարկեց տերտերը,— քո տեղակ լինեմ՝ այս րոպեիս բռնել կտամ. չե՞ս տեսնում, մեր պարոն Բարսեղը ձեռաց կփախցնի։— Եվ քահանան վեր կենալ ձևացրեց։

Հանկարծ մյուս սենեկի դուռը բացվեց և Բարսեղի կնոջ գլուխն երևվեցավ։

Նա ձեռքով նշանացի խնդրեց տերտերից նստել, իսկ ամուսնուն ներս կանչեց։

— Գնա՛, գնա՛, տե՛ս՝ խնամի Մարգարիտն ի՞նչ ա ասում,— դարձավ քահանան դեպի Բարսեղը,— դա տասը քեզ չափ խելք ունի, դրա խոսքին լսի՛ր, մենք կսպասենք։

— Տունդ քանդվի՛, դուռդ շարվի, ա՛յ մարդ, մենք կորած ենք էնտեղ արնքի (աբյան) բանատեղ ա դառնում. գնա մի տե՛ս՝ քո գյազմի վրա (պատշգամբ) ի՞նչ կա. լա՛վ, որ թիկոցի ձեն լսեցի, դուրս էլա աչքովս տեսա ու եկա, էն ճարը կտրածի աղջկանը ղրկեցի։

Կնոջ կցկտուր խոսքերից Բարսեղը ոչինչ չհասկացած՝ կամեցավ անձամբ հասու լինել պատշգամբի վերա կատարված եղելությանը. բայց էլ կարիք չմնաց գնալու. ահա Սոնան բաց դաշույնը մի ձեռքին, մյուսով ներս է քաշում սարի պես տղամարդին՝ Սամփսոնին։

Նա Սամփսոն չէր, երկու տարեկան թոթովախոս երեխա էր, որի ձեռքը բռնած՝ կարող ես ցանկացած տեղ քարշ տալ. մանուկը ոչ ուժ ունի քեզ դիմադրելու և ոչ լեզու՝ յուր տհաճությունն արտահայտելու. նա միայն լացով է հասկացնում յուր կամքը։ Մեր Սամփսոնը ներկա րոպեին այդ միակ հատկությունից էլ զուրկ էր. ոչինչ դիմադրություն, ոչինչ լաց կամ խոսք. և ի՞նչ էր զգում խեղճը, որ սրտի ցավ հայտնել կարողանար, Սամփսոնը մի անբան, տնային անասունի, քան բանա-

կանի էր նման. քթի ծակերից պարբերաբար դուրս փչած շնչի տուրևառության հեծկլտանքն էին միայն կյանքի նշույլներ տալիս։

— Էս ի՞նչ ա,— ուզում էր ձայն արձակել Բարսեղը, բայց Սոնան ընդհատեց. նա ձեռքը բարձրացնելով՝ հասկացրեց հորը լռել, իսկ ինքն յուր քարշ տված էակին, կամ ավելի հարմար ասենք, առարկային, նստացրեց մի անկյունում։

— Ձեն ու ձուն չհանե՛ս, տեղիցդ չշարժվի՛ս, թե չէ ասածս ձեռաց կկատարեմ,— հրամայեց աղջիկը իբրև մի մայր, որ պատվիրում է երեխային լռել, ապա թե ոչ՝ հայրիկին կասի, նրան սյունից կկապի, մինչև երեկո քաղցած կպահի։

— Ափու ջա՛ն (հայրիկ),— շոքեց Սոնան հոր առաջին.— ոտիդ տակին մատաղ, գնա՛ էդ մարդկանցը խոսք տո՛ւր, բելգյահը (նշան) վեր՛ կալ։

Սամփսոնն իրան թափ տվեց. մինչև այդ րոպեն նորա բաց աչքերն ու բերանը ոչ մի կենդանության արտահայտություն չէին երևեցնում. մի ապուշ էր, մի անշունչ արձան էր, որի հայացքն յուր հրամայողի երեսից չէր հեռանում. իսկ այժմ նրա գլուխը բարձրացավ, դիրքն ուղղություն ստացավ, բերանը փակվեց ու աչքերի մեջ բարկության ու կատաղության կայծեր ցայտեցին։

— Ջլլնիմ, չիմանամ՝ ձեն ու ծպտուն հանես,— խանչալը Սամփսոնի վերա շարժեց Սոնան,— թե չէ՝, ըհը՛...— և նա ծռեց դաշույնի սուր ծայրը դեպի յուր կուրծքը։

Երկչոտ երեխայի վերա ազդեցին մոր սպառնալիքը, և նա հանդարտվեց։

— Էդպե՛ս, սո՛ւս կաց. իմ արածներս հետո կհասկանաս. ժամ մի՛ գալ. տեղդ ծաներ նստի՛ր,— կրկնեց աղջիկն յուր պատվերը Սամփսոնին ու դարձավ դեպի հայրը։

— Գնա՛, ափո՛ւ, ասա՛ էդ մարդկանցը, որ իմ աղջիկը յուր հոժար կամքովը Խուդոյի հարսն ա դառնում, բայց նա երկու խնդիրք ունի ձեզանից. առաջինը, որ էստեղ ևեթ Սամփսոնի թուղթը ճղեք, նրան չդիպչեք. մեկելը, որ մի շաբաթ խոստովանք պահեք, գեղը չավ չանեք (չհոչակել)։ Ասա՛, թե որ մի անլիզու երեխի բերանից էլ էս խաբարը դուս ա եկել, թե ձեր բելգյահը մեր տանն ա, իմ ոտը ձեր շեմքովն անց չի կենալ, ժամիցը՝ սեղանի տակիցը ետ կդառնամ ու չեմ պսակվիլ։

Սուր էր այդ րոպեին Սոնայի ձայնը, նորա ամեն մի խոսքը լսողն անձը սարսափեցնում էր, ճրագի տակին նորա կերպարանքը վսեմ և սքանչելի էր, դողդոջուն ձայնը խիստ ազդու էր։

— Ասա՛,— շարունակեց գռեհիկ գյուղականի ամաչկոտ աղջիկը,—

ա՛յ բաղդադի աղլուխն ու մատանիքը թողան էստեղ, ոսկիքը ետ տանեն։

— Դե՛, էն գինու գավը տո՛ւր, ա՛յ կնիկ,— անգիտակցաբար ասաց Բարսեղը Մարգարտին,— տանեմ մի-մի թաս աշքալիսեք լակացնեմ (խմեցնել) ու ճամփու քցեմ։

— Մի կաթիլ էլ չի՛ կարելի,— վերցրած գավը մոր ձեռքիցը խլեց Սոնան,— ասա՛՝ աղջկանս կամքն ա, որ էս իրիկուն նշանը թողալուց ավելի ձեր բերանը ոչինչ չպիտի մտնի։

— Ախար էդ ի՞նչպես կըլնի, ա՛յ աղջիկ, բաս նշան կտան ու աշքալիս չեն խմի՞լ։

— Ա՛յ էսպես,— ասաց Սոնան և դաշույնը ձեռքին շտապեց բաց անել միջին դուռը և ուզում էր դուրս ընկնել մյուս սենյակը։

— Կա՛ց, ճար կտրածի աղջի՛կ,— առաջ ընկավ մայրն և արգելեց։— Գնա՛, տնաքանդի՛ մարդ, գնա ասա՛, էլ ի՞նչ ես ուշացնում։

Մարգարիտը դուռը կիսաբաց արավ և մարդին դուրս հրեց հյուրերի մոտ։

— Ծիծն ուտեմ խելոք բալուկի, դու էլ գնա՛, դռան արանքը մի՛ քիչ ծերպ արա՛ (դուռը կիսաբաց արա), թող մեր տանուտերի հարսնացուն իր բարի աչքովը տեսնի, որ տերտերն իր ազիզ խաթեր համար հարյուր կտոր է անում նրա առաջվա նշանածին գործի տակ քցող թուղթը. ասա՛՝ քանի ես կենոք կենդանի եմ, ոչով չի կարող Սամփսոնի մազին դիպչել։

Տերտերն յուր խոսքը կատարեց. Բարսեղը դեռ նոր էր դուռը բաց արել և երեսը դեպի նոր խնամին դարձրել, տեր-Սուքիասը ձեռքի թուղթն արդեն պատառոտել էր և ցրիվ տվել հատակին։

— Դե՛հ, տանուտեր խուդո՛, վե՛ր կաց,— տեղիցը կանգնելով ասաց տերտերը,— հարսդ-համ խելո՛ք է, համ բարի՛. թե քո կարապետին բախտավորացրեց, Սամփսոնին էլ Սիբիրից ազատեց։

Հյուրերը մետաքսյա թաշկինակն ու մատանին թողին քուրսու վերա իբրև նշան և իրանք գիշեր-բարի մաղթելով՝ հրաժեշտ տվին։

— Հենց իմանաս, տերտե՛ր, միկիտան Սաքոյի հետ մի հոգի, մի մարմին ըլնիս,— ասաց նրան փողոցումը տանուտեր խուդոն։

— Ի՞նչ միկիտան Սաքո։

— Էն, որի պատմությունը դու անցյալ շաբաթ մի գրքում կարդացիր ձեր տանը։

— Դու ի՞նչ գիտես, թե մենք երկուսս մի հորից, մի մորից չենք։

— Հանաք չեմ անում, դու միկիտան Սաքոյի խելքը բանացրիր։

— Ինչպե՞ս։

— Ախար էն սհաթը ո՞րտեղից միտդ ընկավ Բարսեղին ետ դարձնել

դուռը բաց անելու ու ինքդ վրադարին (հապճեպով) իսկական թուղթը ջերդ կոխեցիր, մի ուրիշ անպետքը հանեցիր ու պատառոտեցիր, նրանց էլ ավատացրիր, թե հենց Սամփսոնի թուղթն էր, որ ոչնչացրիր։

— Դե, փառք աստուծո, քո բերանովը վկայեցիր, որ միկիտան Սաքոյի հետ մի հոգի, մի մարմին ենք, մի հոր որդի ենք, էլ ո՞ւր ես իմ խելքի վերա զարմանում,— պատասխանեց բազմակողմանի դիտումներով կատարյալ միկիտան Սաքոն, քան նորա երկվորյակ տեր-Սուքիասը։

ԻԲ

ԽՈՍՔԸ ՇՈՒՏ ՎԵՐԿԵՆԱԼԸ ՉԻ, ԽՈՍՔՆ ԱՍՏՈՒԾՈՒՆ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆՆ Է

Շատ ժամանակ չէ, որ փոքր-ինչ հեշտացել է Խրամի մուտքը։ 1520 տարի հառաջ դևերի անցք էր ներկայացնում նա։

Ասածս Օ. գյուղի ճանապարհն է, որ հաղորդակցություն ունի գլխավոր կենտրոնների հետ։ Խրամ կամ Ջորամուտք կոչելն յուր հիմնական պատճառն ունի. բնությունը նեղելով մեր աշխարհի անուշահամ գետակներից մեկը անդնդախոր ձորի անմատչելի ժայռերի մեջ, չի կամեցել իսպառ զրկել կենդանի էակներին յուր ամենաանհրաժեշտ բարիքներից մեկը վայելելուց։

Ջորը, որի մեջ անսահման հավիտենականությունից հոսում է կատաղի գետակը, նմանում է մի կիսագալար տարածված վիշապ օձի, որի գլուխն ավելի է մեծ, քան թե ամբողջ մարմինը, որի տուտը և մարմինը փռված է ընդարձակ դաշտի մեջ, իսկ գլուխը հասցրել է յուր գալարումը մինչև մեծանիստ լեռները, որի բերանի ճեղքվածքը, թեև համեմատորեն ոչ այնքան լայնարձակ, բայց սուր-սուր ժանիքը, ծնոտների երկու կողմից դուրս ցցված, սարսափ են ներշնչում տեսնողին։ Ահագնատեսիլ խորդուբորդ քարափներն են գետակ վիշապի ատամները, կապույտ ու պարզորակ ջուրն է նորա երկայն և բարակ լեզուն։

Երեսունի չափ հայ գյուղորայք շարահարված են գետատի շրջակայքումը՝ սկսած ճիշտ այնտեղից, ուր չքանում են ժայռերը, ուր դադարում է կարկաչաձայն խոխոջումը և անհայտանում են փրփրադեզ ալիքները, ուր ականջ խլացնող շատախոս կաչաղակը պապանձվում, հանդարտվում և քնած, մեռած՝ հառաջ է հոսում ավազի և տղմերի միջով, ընդարձակ տափարակի վերայով, ողջույն տալու և միախառնվելու տասնապատիկ իրանից մեծ գետին՝ հայ աշխարհի մայր— հինավուրց Արաք-

սին։ Բայց մեր գետակն ըղձատոչոր է լինում՝ հենց ժայռերի պաշտպանությունից զրկված տեղումը, ինչպես ասում են՝ նորա մուրաղը փորումն է մնում, փափագին չի հասնում. քաղցած գայլերի նման հարձակումն են գործում նույն տեղում յուր վերա բնակվող գյուղերը և առուներով գետակի վերջին կաթիլն էլ հափշտակում։ Մեր գետակը շատ արդյունաբեր է, նորա ջուրը քաղցրահամ է, նորա ամեն մի կաթիլը ոսկի և արծաթ է։

Որչափ դյուրամատչելի է դառնում մեր գետակը դաշտային տավարակի վերա, դորա հակառակը՝ հեշտությամբ մուտք չի տալիս իրանից օգտվելու լեռնոտ վայրերում, ուր, ինչպես ասացինք, խոր անդունդում՝ սանդարամետների կացարանից շատ մոտ է վազում։

Երկու կոփածո կամուրջ միայն հաջողեցրել են նախնիքը կանգնել այն գետակի վերա. բնությունը հիսուն վերստաչափ տարածության մեջ պատառել է ընդամենը երկու խրամ կամ ձորամուտ, որպեսզի շընդհատվի գետակի երկու ափունքներին բնակվողների հարևանությունը։

Թեպետ երթևեկը չի դադարում այդ ճանապարհով, սակայն ածան չի նստում անցվորականին նորանից օգտվելը. անիվը դարերով կռվել է և վերջերս միայն հաջողացրել է գլորվիլ երկու հիշյալ խրամներից մեկ կամրջովը, իսկ մյուսով դեռ ոչ մի հեծյալ, ոչ մի քաջ ձիավոր սիրտ չի արել ձի նստած անցնելու։

Վերջինս Օ. գյուղի մուտքն է, Օ. գյուղի խրամն է։

Այս կողմից մտնես, հանդեպից դաս՝ միևնույն է, խոնարհի՛ր, իջի՛ր ձիուդ սանձը ձեռքդ ա՛ռ և զգուշությամբ քաշելով ձորը մտի՛ր, ձորից վեր բարձրացի՛ր։

Գեղեցիկ է նայել ճանապարհորդներին՝ միմյանց հետևից ձիանքը քաշելուս. ուղտի շարքի են նմանում նոքա իրար հետևից կապած, այն զանազանությամբ, որ ուղտերի ոտնաձայնը չի լսվում, իսկ այստեղ ձիանց պայտերի և քարքարուտների շարունակ կռիվը միանալով գետակի գոչգոչյունին, մի խառնաձայն շաչյուն և շառաչյուն է բարձրանում. արժե, մանավանդ սաստիկ մութ գիշեր ժամանակը՝ խաղաղ եղանակին, նստել մեր անբախտ Արտեմ Սերգեյիչի պատշգամբի վերա և դիտել հեռվից կայծերի բազմությունը, որ օձաձև ցոլում են պայտերի և քարերի միմյանց ընդհարվելուց։

Ահա այս դժոխային ճանապարհով Օ. գյուղի խրամով իջան դեպի ձորն երեք հոգի և մոտեցան կամրջին։

Նոքա սառած մնացին կամրջի ականջին մխված, երբ նկատեցին ձորի մյուս երեսից խրամի նեղ անցքը մուտ գործելուս տասնի չափ ճանապարհորդների։

— Վա՛հ,— բացականչեց անգիտակցորեն երեք ուղեկիցներից մեկը։

— Էլ ի՞նչ վահ։

— Գնա՞նք։

— Ուզենանք էլ՝ չենք կարող գնալ, տեսնենք՝ էս փոթորիկն ո՞ւմ գլխին ա տրաքելու. չես տեսնո՞ւմ՝ քանի հոգով են գալիս։

— Քանի նրանք մեզ չեն նկատել, եկեք մտնենք կամրջի կամարի տակը, թող գան անց կենան, կոբչին, մեզ չտեսնեն,— ասաց երրորդը։

— Ո՞ւմ աչքին ես պոզ տալիս (շեղվիլ) փախչում. տե՛ս, ինչպես է գայլի ժանիքը ետ բաց արել, փառ-փառ ծիծաղում. նա, երևի, մեր մեջ յուր որսը գտել է և պատմում է յուր առաջից եկողներին,— ասաց առաջինը։

— Բաս ի՞նչ անենք։

— Սպասենք, թող գան, անց կենան, հետո կմտածենք։

Վերջին խորհրդածությունն ավելորդ էր, ուղեին կամ ոչ, պարտավոր էին կանգ առնել՝ մինչև դիմացի ճանապարհորդների գալ և անցնելը. ամենալայն անցքը, ուր կարելի էր կանգնել և եկողին տեղ տալ, կամրջի երկու ականջների մոտի հետ բացված փոքրիկ հրապարակներն էին։ Այստեղ են սպասում միշտ անցվորները՝ միմյանց ճանապարհ տալու։

Դիմացի եկող ճանապարհորդները մոտեցան։

— Բարի լույս, Մելիք-Բաղա՛լ,— հանդուգն ժպտով, գլխի արհամարհական շարժումով ողջույն տվեց նրանցից մեկը։

Բարև տվողը քարավանի մեջ երրորդ տեղն էր բռնում. նրանից առաջ ուրիշ երկուսը բավականացան լռությամբ ձեռքերը մոտեցնել պաշտոնական գլխարկի եզրին և անց կենալ. քաղաքավարության պահանջն էր այս։ Մելիք-Բաղալն յուր երկու ընկերների հետ պատկառանքով գլխարկները հանած՝ վաղուց սպասում էր դիմացի եկավորներին։

— Հը՛, Գալ-ափո՛ւ, քիֆդ ո՞նց ա, էս ո՞ւր բարով. ա՛յ տղա, Սիսակ, դո՞ւ դեպի ուր, էլ ի՞նչ խորհուրդ եք կապել, էլի մի տղուն կուենենաք աղալու,— հարցերն իրար քամակից շարեց նախկին ողջունողը մեր երեք մոլորածներին։

— Ոչինչ, աղա՛,— դառն հեգնությամբ, բայց համեստորեն պատասխանեց Մելիք-Բաղալը.— գնում ենք մեր քյասիբությունին (կարիքը հոգալու). երեխեքը տկլոր են, մի քանի գազ խամ կտավ պիտի առնենք, բընդ-մընդորենք (վատ կարել), շլինքները քցենք. ի՞նչ աղուն պտի աղանք. աղունն աղում ա ջաղացի մեծ քարը, ատամները սուր, ինքը հաստ, օր ու գիշեր ծամում ա ծամում ու չի կշտանում։

— Ցորենի ջանն էլ է հանում, նրան ո՞վ է ասում՝ զա ընկնի քարի տակը, որ ճխլվի,— պատասխանեց աղա կոչվածը և, երևի մեծապես գոհ յուր սուր և կծու պատասխանից, սկսեց կչկչալ ձուածան հավի պես ավելի բարձր, քան դետի կարկաչյունը։

Քարածերպերը շատ հնում տարան նորա ծիծաղի արձագանքը։

— Կարծեմ հարկավո՞ր է, Վասիլ Վասիլի՛չ,— հարցրեց աղեն ռուսերեն յուր առաջից գնացող գավառապետի օգնականին։

— Ինչպես կամենաք, Վլադիմիր Նեստորիչ,— պատասխանեց Վասիլ Վասիլիչը։

— Մահմա՛դ, էստե՞ղ ես,— դարձավ գավառապետի օգնականը դեպի սարի արջ կոչված, քամակից եկող յասավուլը և ցուցամատով մի նշան տվեց։

Յասավուլն երևի լավ գիտեր յուր տիրոջ նշանները. նա կանգ առավ կամրջի սկանջին, կանգնեցրեց յուր համապաշտոն երկու ուրիշ յասավուլներին և երեք դաղախներին ու ինքը մոտեցավ Մելիք-Բաղալին և գլխով վերադարձ ցույց տվեց։

— Եկե՛ք, տղե՛ք,— ասաց Մելիքն, և ետ դառան։

— Գալ-ափո՛ւ, տղիդ ե՞րբ ես պսակում,— առանց ետ նայելու ձայն տվեց Բալասան աղեն.— շո՛ւտ արա, մի հարսանիք ուտացրո՛ւ իհարկե, անշնորհք չես լինի, կհրավիրես։

— Բարով էն օրը հասնինք, հեշտ է,— սառը պատասխան տվեց Գալոն։

— Գնում ես գործակալի մոտ, է՛լի.. հա՛... հա՛... հա՛...— նորից պարանոցը ետ թեքելով կչկչաց Մելնիկովը։

Գալոն լռեց։

— Լավ եք միտք արել. Գալ-ափուն պսակի հրամանը կխնդրի, Մելիք-Բաղալը միջնորդ կընկնի աթոռահարկը քիչ առնելու, Սիսակն էլ թղթերն ու խնդիրները կգրի, եթե, բան է, գործակալը հրաման տալու չլինի. էդպես բաներում Սիսակը վարժ է, գրիչը սուր է, օրական հարյուր խնդիր սուտ և ուղիղ կշարադրի, ձեռք կընի, կտա, մեկի տունը կշինի, մյուսինը կքանդի. ապրի ինքը, լավ տեղերում է յուր գիտությունը գործ դնում,— թունալից ժպիտով շարահարեց Մելնիկովն այս խոսքերը։

— Ես ոչ վանեցի եմ, ոչ վանեցու խորհրդակից և ընկեր,— կարճ կտրեց Սիսակը։

— Շատ չի քաշիլ, կտեսնենք։

Մեծ դժվարությամբ դուրս եկան վերջին խոսքերը Բալասան աղայի բերանից. արյունը գլուխը տվեց, ատամները կցվեցան բարկությունից.

վերջին բառը երկար դողդոջումով ու ծորումով ձգվում էր նրա ատամների կրճտումի հետ։

Լավ որ խրամի նեղությունը տեղ չտվեց Բալասան աղային ետ դառնալու և այդ սրտովը Սիսակի վերա հարձակվելու, ապա թե ոչ, եթե կարողանար և Սամփսոնի էլ ուժն ունենար, Սիսակին նա միջից երկու կես կաներ։

Մեր Սոնայի սիրահար Սամփսոնի համար չէ խոսքս. սուրբ գրքի հերոս, առյուծի բերան հղող, տիկին Դալիլայի ձեռքի խաղալիք Սամփսոնն եմ ասում։

Ճանապարհորդները խրամը դուրս եկան։

Ջորամուտքի բերանին ամենքը ձի հեծան։

Թանկագին հյուրերն իջան Բալասան աղայի տանը։

ԻԳ

ԲԱՐԵԲԱՐԸ

Օ. գյուղը դղրդում է, վայնասունը տանում է, յասավուլ, դաղախ ընկել են փողոցներն և պատահողի վերա մտրակները հոնում։

Մեկից խոտ են պահանջում, մյուսից գինի, օղի, հավ, ձու, յուղ, բրինձ և ամենայն բարիք, ընչով գրաստների հետ իրանք էլ կարող են բարեկենդան անել։

Տանուտերը գզրի ձեռքով գյուղական իշխաններ է հրավիրում Բալասան աղայի տունը։ Կանչվեցին և Գալ-ափուն ու Մելիք-Բաղալը։

Մելնիկովի դահլիճում ատյան բացվեց։

Նստած են քննիչը, Վասիլ Վասիլիչը և ինքը Վլադիմիր Նեստորիչը։ Սրա կողքին է և տեր-Սուքիասը։

Գյուղի իշխանները ոտքի վրա են։

Սպասում են։

— Սամփսոնը չի երևում,— ներս եկավ և բանավոր զեկուցումն արավ տանուտերը։

Բալասան աղեն թարգմանեց Վասիլ Վասիլիչին։

— Գետնի տակից հանեցե՛ք, բերե՛ք, թե չէ գյուղը կրակ կտամ,— ոտքը հատակին զարկեց Վասիլ Վասիլիչը։

— Ի՞նչ ես կարծում, ո՞րտեղ կլինի թաք կացած,— քչփչում էր Մելնիկովն յուր կողքին նստածի ականջին։

— Հագիս չպետք է լիներ այս, գետնի տակիցը դուրս քաշեի, գլուխդ վկա։

Խոսակիցը ցույց տվեց Բալասան աղային յուր լայն քղանցքը։

— Եթե տեղը գիտես, խուդոյին աչքով արա՛, թող գնա բերի։

— Ուրեմն ինչո՞ւ է տանուտեր, եթե այդքան էլ գլխի չի ընկնում. ձուկն ինքն իրան ա թոռն ընկել, դա աչքի առաջին թողած, չոլերն (անապատ) է չափում. միայն մեր խուդոյի բանն աջ է, Բարսեղն էլ խաբել չի կարող, գողն և գողակիցն ի միում պատժի կան։

— Ի՞նչ ես ասում, տերտե՛ր, պարզ խոսի՛ր։

— Ասում եմ, որ Սամփսոնն այս րոպեիս Բարսեղի տանն է։

— Է՛հ։

— Կարգս վկա։

— Ընչի՞ց գիտես, տերտե՛ր, չէ՞ որ խուդոն ասում էր, թե յուր տղայի նշանը վերցրել է Բարսեղը, ես էլ կարգադրել եմ, հենց հիմի գործակալը կգա, քննություն կանի, խորթություն կմտցնի չհասի մեջ և գործը կվերջանա։

— Հենց էդ է, որ շան աղջիկը զալում (խորամանկ) էր, նշանը վերցրեց, առաջինն՝ իր խելքով Սամփսոնի մահապարտական թերթը պատռել տալու դիտմամբ, և երկրորդ՝ մի շաբաթ ժամանակ նշանակելով, որ միջոց գտնեն, գործակալից մի հնարքով իրավունք խնդրեն պսակելու։ Բայց ի՞նչ մարդի պոչ էին սառցի կապում. նրանց ցերեկը ման եկած տեղերն ես գիշերն եմ հազար անգամ ոտնատակ տվել. հասարակ թուղթը պատռեցի, իսկականը պահեցի, գործակալի հայտարարությունը պատրաստեցի և ձեր քամակից մարդ ղրկեցի շուշանալ.— երկաթը տաք-տաք կծեծեն։

— Փառավորվիս, լավ ես մտածել, էդ վիճայություններն այսօր մեզ շատ պետք են. աշխատելու է որպես և իցե Դոնդարենց Ասոյի սպանությունը Դվակոթենց Հայրոյից հեռացնել, Սամփսոնի վզովը փաթաթել, Բարսեղի աղջկանն էլ պսակել մեր խուդոյի տղի վրա։

— Էդ երկու գործն էլ վերջացած համարի։ Էնքան լինի՝ Սամփսոնը փոքր կասկածանքի տակ ընկնի, Բարսեղն իր ձեռքով դուս կքաշի աղջկանը. կտա խուդոյի տղին, եթե, ինչպես ասում ես, խորթությունը հաստատվի։

— Բայց ինչի՞ց գիտես, որ Սամփսոնը Բարսեղի տանն է. քննիչը տասն անգամ սպառնաց թաքցնողին խստիվ պատժել. մի՞թե Բարսեղը գիտությամբ լռեց։

— Բարսեղն անասունների մեկն է. աղջիկն յուր նմաններին օրական տասն անգամ կտանի ջուրն ու ծարավ ետ կբերի. նա յուր հորն ու մորն էլ է խաբել։

Եթե մինչև խուդոյի նշանը վերցնելու օրը Սամփսոնը միայն գիշերներն էր գնում Բարսեղի տունը, այնուհետև ցերեկներն էլ նրանց գոմից չի դուրս գալիս, ես հսկել եմ տվել և ստուգել։ Այդ էր պատճառը, որ ձեր գալը փութացրի. ի՛նչ լավ տեղն էլ պատահել եք. ինչպես ասած է՝ կաղը կամրջի վրա եք բռնել. աղջկա խորհրդով Գալոն Մելիքին ու Սիսակին առած՝ գործակալին էր գնում։

— Էդ թո՛ղ, տերտե՛ր, հիմի ասում ես խուդոյին ուղարկենք Բարսեղի գոմը պատելո՞ւ,— հարցրեց Մելնիկովը։

— Կարիք չկա, ես ամեն բան կարգադրեցի. հենց հիմի տանուտերի օգնականը կբերի. բերանս քեզ հետ էր խոսում, աչքերս նրան էր բան հասկացնում։

Ուղիղ էր տեր-Սուքիասի խոսքերը. երկու դազախի հսկողությամբ տանուտերի օգնականը ներս բերեց Սամփսոնին։

— Ո՞րտեղ էր,— հարցրեց Վասիլ Վասիլիչը։

— Բարսեղի գոմումը,— պատասխան տվեց տանուտերի օգնականը։

— Կանչել Բարսեղ Ալեքովին և Գալո Պետրոսովին,— հրամայեց Վասիլ Վասիլիչը։

— Մենք ենք,— առաջ եկան ժողովրդականների միջից Գալոն և Բարսեղը։

— Դու ի՞նչ իրավունքով տանդ թաքցնում ես մարդասպանին,— հարց տվեց քննիչը Բարսեղին։

— Ի՞նչ մարդասպան, աղա՛։

— Սամփսոն Գալոևին՝ քո փեսային։

— Մեկ, աղա՛ ջան, որ Սամփսոնն իմ փեսեն չի. մի դարդակ խոսք էինք տվել, էն էլ տերտերին ու տանուտերին հայտնի ա, որ խոսքս ետ առա. մեկ էլ, որ մի շաբաթից ավել ա, ես Գալոյին ու իր տղին ասել եմ որ սրանից հետո իրանց կորածն ինձանում չպտռեն. հիմի էլ զարմանում եմ, թե ինչպե՞ս էլավ, որ Սամփսոնն իմ գոմիցը դուս եկավ։

— Թողեք ես պատմեմ,— խնդրեց Սամփսոնը։

Նրան իրավունք տրվեց խոսելու։

— Սուտ չի, որ Բարսեղ ափերը (պատվանուն) մի քանի օր ա, ինձ տուն չի թողնում. բայց էն էլ ճշմարիտ ա, որ քանի դուս արած չէի, մենակ գիշերներն էի գնում, ընդուց հետո ցերեկն էլ եմ նշանածիս հետ սհաթներով գոմումը ջան ասում, ջան լսում. աստվածանից թաքուն չի, աղա՛, էս բազմությունն էլ թող իմանա։ Ոչ իմ հերն էր գիտում, թե քանի

օր ա իր տղեն ո՛ւր ա կորչում, ոչ Բարսեղն ու իր կնիկն էին իմանում, թե իրանց աղջիկն ընչի՛ ա շո՛ւտ-շուտ վերև-ներքև անում բակը։

— Այժմ ասա՛ ինձ, Սամփսո՛ն Գալուստով,— հրամայեց քննիչը.— հաստատ վկայություններով դու մեղադրվում ես Ասատուր Դոնդարովի սպանության գործում. հանձն առնո՞ւմ ես, դո՞ւ ես սպանել, քեզ հանցավոր ճանաչո՞ւմ ես։

Քննիչը ցույց տվեց Սամփսոնին հրաշքով կենդանացած տեր-Սուքիասի ձեռքով պատռված վկայագիրը մի քանի ուրիշ թղթերի հետ։

— Ասված էլ գիտի, աղա՛, որ ես էդ բանիցն անտեղյակ եմ. ընչանք էսօր ինձ կախ տային, էլ պետք ա ձեն ածեի, թե անմեղ եմ. բայց էսօր նշանածս, չգիտեմ՝ ո՛ր մեղքիս համար, կտրական ինձ ասաց, որ իր հոր հրամանն ա կատարելու, տանուտեր Խուդոյի տղին ա առնելու։ Թե որ էդպես ա, ապրելն ի՞նչ կանեմ, լավն էն ա՝ մի անգամ հա ասեմ ու պրծնեմ. հրամելիք, աղա՛, Դոնդարենց Ասոյին ե՛ս եմ սպանել։

Ուղիղ էր ասում Սամփսոնը. Սոնան այդ հնարքն էր մտածել իր սիրեկանի ազատության համար։

— Ես քո սիրային հարաբերությունների հետ գործ չունիմ,— խոժռվեց քննիչը,— դու ինձ կարճ պատասխան տո՛ւր, սպանե՞լ ես Ասատրին, թե՞ ոչ։

— Սաքի չէ էլ ասեմ, պրծնելու չեմ, ճղճղատված թուղթը նորացել ա, վկայքն էլ պատրաստ են. ազատվեմ էլ՝ աշքս բաց չպտի կարողանամ նշանածիս ուրիշի կնիկ դառած տեսնել. մահը՝ հա՛ էսօր, հա՛ էգուց. լավն էն ա՝ կասեմ սպանել եմ, ու էսօրվանից կազատվեմ էս քանդվելու աշխարհքից. հա՛, աղա՛, հենց ես եմ սպանել իմ ձեռքով։

— Օրենքի առաջին երկդիմի խոսքն ավելորդ է. կարճ ասա՛, Սամփսո՛ն Գալուստով. մի քանի դոկումենտներով հաստատվում է Ասատուր Դոնդարովի սպանությունը քո ձեռքով կատարված. ճանաչո՞ւմ ես քեզ հանցավոր այն գործում։

— Արդեն ինքն յուր բերանովը խոստովանեց, էլ ի՞նչ կարիք կա նոր հարցմունքների,— ընդմիջեց քննիչին Մելնիկովը ռուսերեն։

— Սխալվում եք, հեգնաբար և պատճառաբանյալ խոսքերն ապացույց չեն կարող լինել,— պատասխանեց նրան քննիչը և շարունակեց բազմակողմանի հարցերի դիմել։

Մելնիկովի և յուրայնոց հուսախաբությունը աստիճանաբար ավելանում էր, յուրայնոց քաջ հայտնի էր վանեցու ձեռքով պատրաստված գրավոր ապացույցների անզորությունը, իսկ Սամփսոնը համառվել մնացել էր։

— Ես իմ ասելիքներս վերջացրի,— վճռաբար շեշտեց նա քննիչին,— նշանածից զրկվելուց՝ Սիբի՛ր գնալը շատ կուզեմ։

— Ես ստիպված եմ ուրեմն քեզ բանտարկել և վկաներին հարցնել,— հասկացրեց քննիչը Սամփսոնին։

Դժվար էր ենթադրել, թե ինչ խորախորհուրդ միտք հղացավ այն րոպեում տեր-Սուքիասի ուղեղում, որ հական թոթափել մոտ կանչեց Բարսեղին, ինչ-որ քչփչաց նրա ականջին և հաղորդեց Մելնիկովին։

— Կարելի՞ է խոսք խնդրել,— հարցրեց հանկարծ քննիչից Բալասան աղեն։

— Կարող եք։

— Կինդրեի թույլ տալ ինձ երկու րոպե առանձին տեսակցել Սամփսոնի հոր հետ, իսկ մինչև այն ժամանակը դադարեցնեիք հարցմունքները։

— Գալ-ափո՛ւ,— մի կողմը քաշած՝ իրավունք ստանալուց հետո ասաց Բալասան աղեն,— Սամփսոնը դեռ երեխա է, նա չգիտե, որ ես իրան իմ նեսկոյի չափ սիրում եմ. Նեսկոս մեռնի, թե սուտ եմ ասում, դու ականջովդ լսեցիր, որ Սամփսոնն իր բերանովը խոստովանեց. քննիչին այդքանը բավական էր, նա ի՞նչ կհարցնի, թե սիրածի սառը պատասխանի պատճառով է ուզում կորչիլ։ Էս րոպեին քննիչը տղիդ կրունները կկապի, կղրկի բերդը. բայց այդ ինձ համար մեծ ցավ է, դու էլ մեղք ես. եթե դու ինձ հաստատ խոսք կտաս, որ տղիդ Բարսեղի աղջկանից ձեռք քաշել տաս, ես երաշխավոր կլինիմ, չեմ թողնիլ բռնի, վերջը մի տեսակ բոլորովին կազատենք։

— Ոտներիդ մեռնիմ, աղա ջա՛ն, իմ տան ճրագը մի՛ հանգցրեք. վերև աստված, ներքևը դու. ըստուց հետո Բարսեղի աղջիկը քաշովը մին ոսկի էլ ածենա, մեզ պետք չի, աստված իրա հետ, ում կուզի՝ թող տանի տա։

— Ես քեզ հավատում եմ, Գա՛լ-ափու, դու լավ մարդ ես. միամիտ կա՛ց, քո տղեն կազատվի,— ապահովացրեց Մելնիկովը։— Բայց պետք է աշխատել, որ քննիչը չթշնամանա հետը. շատ զուր է Սամփսոնը նրան բարկացնում. մին հա է ասում, մին չէ, էդ իրան վնասում է. ամենից լավն էն է, մի անգամ վճռաբար ասի՝ ես եմ սպանել ու ծերին կապ տա. ես էստեղ չե՞մ, չեմ էլ թողալ բռնեն. փառք աստծու, աչքիդ առաջին ազատ ման ա գալիս Դվակոթենց Հայրոն. տեղիցը վեր կենողը ձեն էր տալիս, որ նա է սպանել, բայց ես գնացի, երաշխավոր կանգնեցի և բերդիցը հանեցի։

— Աստված կյանքդ երկար անի։

— Դե տեսա՞ր, որ ձեռքիցս գալիս է. քո խելքդ ո՞րտեղ է. թոկից

փախածին որ տեր եմ կանգնում, քո գառը միևուճար տղին դեն կշպրտե՞մ։

— Հիմի ի՞նչ ես հրամանք անում։

— Պետք է խոսք հասկացնես Սամփսոնին, որ քննիչին կտրական պատասխան տա, հա՛ ասի ու պրծնի։

— Բայց որ հա՛ ասի, մեջը թաղվի ու իմ տունը քանդի՞։

— Անգե՛տ, ես մարդ չե՞մ, ես որդի չունե՞մ, ես խղճմտանքից զո՞ւրկ եմ. ես կուզե՞մ, որ քո տղի մազը թեքվի. Նեսկոյիս թաղեմ, թե որ էս սհաթը չազատեմ։ Այ, թե չես հավատում, քո առաջին հարցնեմ քննիչից օրենքը։

— Պարո՛ն քննիչ,— դարձավ Մելնիկովը,— եթե Սամփսոն Գալուստովը հանձն առնի մեղադրանքը, կարելի՞ է սրան ազատել բանտարկությունից կամ պատժից։

— 3000 մանեթ գրավականը կազատե սրան ժամանակավորապես, իսկ վերջը կամ տաժանակիր աշխատանքի կդատապարտվի, կամ գուցեև ազատվի։

— Հիմի ո՛նց է, Գա՛լ-ափու, խոսքս խա՞սք է, թե՞ ոչ, կարո՞ղ եմ ազատել, թե՞ չէ։

— Ի՞նչ ուզես, աղա ջա՛ն, որ ձեռքիցդ չգա։

— Դե ինձ լսի՛ր, համոզի՛ տղին, որ ասածս կատարի, հա՛ ասի։

— Սամփսոն ջա՛ն, արևիդ մատաղ, ձեռքդ աղի փեշը քցի, սրան լսի,— վիզը ծռած՝ խնդրում էր հայրը։

— Ինչ ես կամենում, աղա՛, որ անեմ. ուզում ես որ Բարսեղի աղջկանիցը ձե՞ռք քաշեմ։

— Ոչինչ չեմ ուզում,— լրջորեն պատասխանեց նրան Բալասան աղեն,— քո հոր խաթեր ես պատրաստ եմ 3000 մանեթը տալ, քեզ ազատել, թե որ դու մի անգամ վերջնական խոսքն ասես։

— Շատ զուր ես ասում, աղա՛, սլեստչին պարզն ասաց՝ մարդասպանի տեղը Սիբիրն ա։

— Դու ջահել ես, Սամփսո՛ն, գլուխդ քարովն ես տալիս. քո հորն եմ խեղճ գալիս. մի սխալմունք ա, արել ես կամ չես արել, կորածը կորել է. սաղին էլ հետը կորցնելով՝ ձեռքներս բան չի ընկնիլ. իմ պարտքն է քեզ օգնելը, ես երաշխավոր կլինեմ քո փոխարեն։

— Ջփոշիմանես, աղա՛։

— Սամփսոն ջա՛ն, հորդ ծերությունին խեղճ արի՛, աղին լսի՛, աստված իր բալեն պահի, թող քեզ օգնի, թող զամին (երաշխավոր) կանգնի. իմ դուռը մի՛ փակիլ,— աղաչում էր Գալոն։

— Սպասի՛ր, Սամփսո՛ն,— հառաջ եկավ տեր-Սուքիասը՝ նախապես ակնարկ ձգելով Մելնիկովի աչքերին,— եթե Բարսեղի աղջիկը քեզանից չհանվի, աղին իրավունք կտա՞ս, որ զամին կանգնի, քեզ ազատի։

— Դու է՞լ, տերտե՛ր,— հեգնաբար պատասխանեց Սամփսոնը,— չլինի՞ թե ուզում ես սաղացած թուղթը նորից պատռտել, բելգյահը ետ վերցնել։

— Հա՛, որդի՛, հա՛, էս ձեռքովս քանդածը նորից մեկել ձեռովս կշինեմ, էս աչովը քեզ կպսակեմ. աջս խռով կենա, թե սուտ եմ ասում, էս բազմության մոտ եմ խոստանում. թաք ընկի դու հորդ խղճաս, թողաս աղեն երաշխավոր դառնա։

— Ոնց որ տեսնում եմ՝ տանուտեր խուդոն էլ ուրախ կլինի, որ ես էս փորձանքից ազատվիմ ու Բարսեղի փեսեն դառնամ, չէ՞, տերտեր, ամենքդ ինձ ձեր որդոնց պես սիրում եք.— դառն ժպիտով գլուխը շարժում էր Սամփսոնը։

— Հա՛, Սամփսո՛ն, հա՛, թեպետ դու ծաղրում ես, բայց հենց էդպես ա, որ կա. ի՞նձ լսիր, հորդ ծերությունին խնայի՛ր, դու թող մեր աղեն զամին ընի. խոսք եմ տալիս, որ ինքս քո խաչ-խաչերը դառնամ, Բարսեղի աղջիկն իմ ձեռքով դուս քաշեմ, քեզ տամ,— մեջ մտավ խուդոն՝ տեր-Սուքիասի և Մելնիկովի աչքերի հայացքից թելադրված։

— Էլ ի՞նչ ես ուզում, ա՛յ որդի, Սամփսո՛ն, բաս ես մեղք չե՞մ, բաս քո մերը խեղճ չի՞, ընչի՞ ես ուզում մեզ ողջ-ողջ գերեզման դնել. թող աղեն զամին ընի, քեզ ազատի,— լալով աղերսում էր Գալ-ափուն։

— Թող քո ասածն ընի, միամիտ իմ հե՛ր,— խորին հառաչանքով գլուխը տարուբերում էր երկար ժամանակ Սամփսոնը։

— Ասա՛ վերջին խոսքդ, Սամփսո՛ն Գալուստով,— կրկնեց քննիչը։

— Թող Բալասան աղեն իմ տեղակ զամին ընի։

— Ուրեմն խոստովանո՛ւմ ես հանցանքդ։

— Հը, հը՛, հը՛...

— Ամոթ է, Սամփսո՛ն, քննիչին էդպես չեն պատասխանիլ,— հանդիմանեց նրան Բալասան աղեն.— ի՞նչ ես վախենում կամ կասկածանք անում. ես ողջ կենամ քեզ համար, սարի պես քամակիդ կանգնած եմ. Նեսկոս մեռնի, թե սուտ եմ ասում, ասա՛ սպանել եմ ու վերջացրո՛ւ, թող էն անմեղ Հայրոն էլ ազատվի պրծնի։

— Ընչունքի դու՝ քո հրամանքդ կամենում ես, որ ես իմ լեզվովս ասած ընեմ, թե ես եմ սպանել, նոր զամին գենաս, աչքիս վրա, քո թանկագին խաթեր համար կասեմ։

— Սլեստչի աղա՛, խնդրեմ գրես, որ Ասատուր Դոնդարովին ես իմ ձեռքովս եմ դյուլլախորով արել (գնդակահար), հավի պես թպրտացրել, վեր քցել. Հայրո Դվակոթովը մեղավոր չի. Բալասան աղեն ասում ա՝

Հայրոն խեղճ ա, անմեղ ա, ինդրում եմ Բալասան աղի խոսքը կատարես, Հայրոյին ազատես, իսկ ինձ բխովես (շղթայել), բերդը տանես ու Սիբիր ղրկես։

— Դուք կարող եք ձեր երկդիմի խոսքերով արդարանալ կամ դատապարտվիլ դատարանում, բայց ես գրավոր ապացույցների ճշտության վրա հիմնված՝ օրենքի անունով ձեզ բանտարկում եմ,— վճռեց քննիչը և պատվիրեց կապել Սամփսոնի կոները։

— Ես կցանկանայի նշանակյալ փողը վճարել և երաշխավոր լինել մեղադրվածի համար, եթե օրենքն այսօր թույլ կտա,— հարց առաջարկեց Մելնիկովը։

Այս միջոցումը տանուտեր Խուդոն ներկայացրեց քննիչին մի նամակ՝ Սիսակի ձեռքով գրված, որ ըստ յուր ասության, մի քանի օր հառաջ բռնել էր։

Նամակը գրված էր Սիսակի կողմից փաստաբան Բարանովին, որին մանրամասն պատմելով Աստուր Դոնդարյանցի սպանության գործը, խորհուրդ է հարցնում նրանից, թե ինչպե՞ս պետք է վարվել այն դեպքում, եթե գործով մեղադրված և Մելնիկովի երաշխավորությամբ ազատ թողված Հայրապետ Դվակոթյանցն արդարանա և նրա փոխարեն մի ուրիշը հաստատ վկայություններով հանցավոր ճանաչվի. հնարավորություն կա՞ արդյոք հաստատ մարդասպանին արդարացնել, իսկ միանգամ մեղադրված Հայրապետին կրկին դատապարտության ենթարկել տալ։

Նամակի մեջ Սիսակն ինքը խոստովանում է Դվակոթյանցի անմեղությունը, բայց նորա ազդեցիկ պաշտպանին բարոյապես կործանելու համար ցանկանում է անմեղ մարդի կորուստը։

Նամակում հիշված էր Մելիք-Բաղալի և Պետրոսենց Գալոյի անունները՝ սրանք էլ, իբր թե կամակից են Սիսակին և խոստանում են Բարանովին 300 մանեթ, եթե նա կարող լինի Սամփսոնին ազատել, իսկ անպարտ Դվակոթյանցին մեղքի տակ ձգել։

— Մեր գյուղի տունը, սլեստչի աղա՛, էդ նոր ուսումնականներն են քանդում,— նամակը ներկայացնելով բողոքեց Խուդոն.— թե մի բաբերարություն անես, էս տեսակ խարդախների ու խառնակիչների արմատը մեր գյուղիցը կտրես, գեղովի քեզ կյանք ու արև կխնդրենք։

Քննիչը նամակը լավ զննելուց հետո հրամայեց կանչել Սիսակին։

Մարդ ուղարկելու կարիք չմնաց, դուռը բացվեց և լերդապատառուն ընկավ Սիսակը՝ մի կապոց կոնատակին մեծ խնամքով հուպ տված։

ԻԴ

ԵՐԵՍՓՈԽԱՆ

Որպեսզի իմանանք, թե ո՞ւր էր մինչև հիմա Սիսակը, ինչո՞ւ ներկա չէր քննությանը, ի՞նչ կապոց էր նորա՝ կոնատակին սեղմածը, մենք պետք է մի փոքր հառաջ գնանք։

Սիսակն ավելորդ էր համարել առանց հրավիրանքի ներկա լինել քննությանը. նա ձիուց իջավ, քաշվեց յուր տունը, վստահ լինելով, թե հենց այստեղ է որ՝ յասավուլը կամ գզիրը դուռը բաց կանի և իրան կպահանջի։

Սակայն որքա՞ն զարմացավ Սիսակը, որ քիչ միջոցից ժամհարը ներս մտավ և հայտնեց, որ գործակալ հայր սուրբն եկել է, իրան խնդրում է։

— Ո՞րտեղ է իջել, ե՞րբ և ընչի՞ համար է եկել, ո՞վ կա հետը, ո՞ր կողմիցն է գալիս,— մի քանի հարց միասին առաջարկեց Սիսակը։

— Իջած է երեցփոխի տանը,— կարճ պատասխանեց ժամկոչը։

— Բարի լինի, հայր սո՛ւրբ, որտեղից և ընչի՞ համար,— կրկնեց Սիսակը ժամհարին տված հարցերը գործակալին։

— Իմ վանքից՝ ուղղակի մեր երեցփոխան ծերունի Ղազարին հյուր,— ժպտաց գործակալը։

— Բայց ի՞նչ առիթով։

— Օրհնած հոգի, ամբողջ գավառումը մի հատ երեսփոխան ունինք, որի սիրտն յուր մեծ դռնից ավելի լայն է բաց բոլոր հոգևորականներիս համար, և դու զարմանո՞ւմ ես, որ առանց օրինավոր պատճառի սիրտս ուզեց մի-երկու օր ուրախ անցկացնել Ղազար հայրիկի և բարեկամաց հետ միասին։

— Ղազար բիձեն մեր գյուղի հայր Աբրահամն է, հայր սո՛ւրբ, բայց դուք, կարծեմ, առանց օրինական պատճառի չէիք նեղություն կրիլ։

— Շատ մի՛ շտապիլ, Սիսա՛կ, դեռ նստի՛ մի փոքր գոտիներս պնդացնենք, հետո կխոսենք. չե՞ս տեսնում՝ Ղազար հայրիկը քանի տեսակ իսորտիկ է դիղել սփռոցի վերա. բարեպաշտ մարդը կարծում է, թե լեռնից իջածներ ենք՝ աշխարհք չտեսած։

— Թողություն կանեք, աջի՛դ մեռնեմ, ձեր տունն ա, ավել-պակասը բաշխեցե՛ք. «Աղ ու հաց՝ սիրտը բաց», վնաս չունի; մի քիչ նհար (նախաճաշիկ) արե՛ք, իրիկունը գյուղի իշխաններն էլ կհավաքվին՝ մի լավ քեֆ կանենք,— ներողություն էր խնդրում երեցփոխ Ղազար բիձեն։— Մեկ էլ շատ լավ էլավ, որ շնորհք բերիր,— ավելացրեց նա.— էն ա՝

տարին վերջանալու մոտ ա, էգուց հասարակությունը կհավաքեմ, եկեղեցու հաշիվները մաքրենք, ինձ էլ ազատեցե՛ք, էս ա՝ մի ոտս գերեզմանումն ա, ծերացել եմ, էլ չեմ կարողանում առաջվա պես պարտքս կատարել, հոգուս մեղք ա ընում։

— Իրավունք ունիս, Ղազա՛ր հայրիկ, երեսփոխանությունը շատ ա-ժան չի նստում քեզ. դու այսօր հայ նախկին երեսփոխանի բուն տիպարն ես. վեց տարի է՝ ես գործակալ եմ, մի քանի շրջաններ էլ ուրիշ ժամանակներ եմ կատարել և այսօր միայն քեզ եմ գտնում երեսփոխան, բառի էական նշանակությամբ, կերակուրը թողած՝ ճառաբանում էր գործակալ հայրը։— Դու, իհարկե, չգիտես երեսփոխան բառի բուն նշանակությունը, բայց մեր Սիսակին հայտնի է. այդ խոսքը ոչ թե խսկապես երեցի, քահանայի փոխարեն է նշանակում, ինչպես շատերը կարծում են. իմ հասկացողությամբ դա ավելի լայն նշանակություն ունի. երեսփոխան՝ ասել է ամբողջ հասարակության—համայնքի երեսի կամ անձի փոխարեն. հայ ժողովուրդն ընտրելով՝ յուր անդամներից մի հարգելի և վստահելի անձնավորությունը իր աստծու տանը տնտես և կառավարիչ, նա կարգել է նույն մարդուն յուր ամբողջության երեսի իրավունքի տերը՝ աստծու անունով ժամանակ-անժամանակ շնորհ բերող հոգևորականներին, անծանոթ պանդխտին, մեծին, փոքրին, տնանկին, անտունանտեր չքավորին պատսպարելու և ճանապարհ դնելու։

— Իմ կարծյոք այդպիսիները շատ սակավ են, հայ պատվակա՛ն, կամ ավելի լավ է ասել, գաղափարական են, բայց, իհարկե, բացառություններ միշտ կարող են լինել, ինչպես մեր Ղազար բիձեն,— ընդհատեց Սիսակը։

— Այսօր, սիրելի Սիսա՛կ, քո խոսքն ուղիղ է, արդեն իմ կյանքի արևն էլ թեքվել է դեպի մուտքը. գլուխս Մասսյաց կատարից ճերմակ է, և ես մեծ հուսահատության մեջ եմ, որ մի ժամանակվա իրականը այժմ բացառություններ և գաղափարական են համարում, և մի օր, գուցե, իսկական երեսփոխանի հետքը չմնաց։ Կարող եմ քեզ հավատացնել, որ քանի կեղծ քաղաքականությունը ներս չէր մտել հայ աշխարհը, քանի սակավապետությունն առաքինություն էր և քանի շռայլ ունայնասիրությունը քաղաքավարության և հյուրասիրության աստիճանաչափ չէր ընդունված, մեր բոլոր երեսփոխաններն իմ նկարագրածներից էին, որոնց վերջին ներկայացուցիչը, մեր ծերունի Ղազարը, դեռ առկայծում է։ Շատ լավ հիշում եմ, թե ինչպես ի հնումն տարին մի անգամ երեսփոխանն իմ առաջին, բոլոր հասարակության աչքի առաջ, կպարզեր յուր հաշիվները։

— Եվ իհարկե գրավո՞ր,— հարցրեց Սիսակը։

— Ի՞նչ ես ասում, որդյա՛կ, ո՞ւր էր գիր, ո՞ւր էր գրիչ։

Ահա մի հրապարակում ամբողջ գյուղական համայնքը հավաքված լռությամբ լսում էր յուր երեցփոխի բանավոր հայտարարությունը.

— Գանձանակից, մոմավաճառությունից, լուսագնից և այլ եկամուտներից ընդամենը եղել է այսչափ գումար. ծախսված է այսչափ, տակը մնում է այսչափ. խնամի Պետրոսի վրա պարտք կա առանց մուրհակի այսքան, ուստա Գրիգորի վրա՝ այսքան, մահտեսի Առաքելի վրա՝ այսքան. մեկի ժամանակը լրանում է աստվածածնի պասի շորեքշաբթի օրը, մյուսինը՝ նավասարդի շաբաթ օրը, երրորդինը՝ անառակի կյուրակե օրը և այլն. մեկի տոկոսը ստացել եմ, մյուսից ցորեն պետք է ստանամ, երրորդին խղճացել, առանց տոկոսի եմ տվել. այժմ եկեղեցին ունի զուտ փող այսքան և այլն, և այլն։

— Աստված որդիքդ պահի, հոգվով մխիթարվես, սուրբ եկեղեցին քո մինը հազար անի, քո փչացրածն աստված ինքը լրացնի,— լսում և մխիթարվում էր երեցփոխը։ Մանավանդ սահման չէր լինում նորա ուրախությանը, եթե համայնքն անուշագիր էր գտնվում գեպի նորա առաջարկությունը, կրկին թողնում են նրան պաշտոնի մեջ, ես, իբրև գործակալ կամ տեղտերը, մեր անարժան բերանով, մի պանդպանիշով վերահաստատում էինք նոր երեսփոխանությունը։

— Ես երևակայում եմ, թե ո՞ր աստիճան հոգեպես վարձատրված էր համարում իրան այդպիսի բարեպաշտ երեսփոխանը, հայր սո՛ւրբ,— ասաց Սիսակը։

— Վարձը, որ երեսփոխանն ստանում էր ձրի կատարած ծառայությունների համար, շատ վսեմ էր, շատ մխիթարական էր. այդ նրա հոգեկան ուրախությունն էր, այն քաղցր համակրանքն էր, որ գյուղի մեծ ու փոքրը, իշխանն ու ազքատը նրան հարգում էին, նրան սիրում էին, նրան ընդունում էին։ Երեսփոխանն իրավունք ուներ քահանայի հետ միասին, շատ անգամ միայնակ, եկ ու մուտ անել ազատորեն յուր երաշխավորող ժողովրդի հարկի տակ, խորհուրդ ստանալ, խորհուրդ տալ, կարիք ունեցողի կարիքն իմանալ, դարմանելու հոգսը քաշել, նրանց ուրախությանն ուրախակից, նրանց տրտմությանը տրտմակից և վշտերին կարեկից լինել։

— Բնական էր ուրեմն, որ հասարակության այնպիսի պատկառելի անդամակիցը համահավասար սիրելի կլիներ ամենքին,— եզրակացություն արեց Սիսակը։

— Համ սիրում էին, համ խոսքը գետինը չէին քցում,— միջամտեց Ղազար բիձեն.— մենք ի՞նչ մութավելի (երեցփոխ) ենք, մութավելին իմ լսի բաժին հերս էր. ես նրա ոտքի հողին չեմ արժան, մի մազ պտի ըլնեի՝ նրա փեշիցը կախ, գլուխը ետ դրած էր էս գեղի համար.

30 տարի մութավելություն էր արել, քանի դուս էր գալիս՝ նոր ընտրում էին. ինքն էլ ուրախությունով ընդունում էր ու իր դուռը ավելի լեն բաց անում։ Ես ջահել էի, լավ հիշում եմ. հորս երեսը ծիծաղ չէր գալ, եթե մի օր մեջ տար ու մեր մեծ օդումը, տանը և օթախումը երկու-երեք վարդապետ, օտար տերտեր, ճամփորդ ուզվոր, մուրացկան չըլնեին. մեր սեղանի վրա զարիբ-զուրբաթ (պանդուխտ) չնստեր, մեր հացի պռունգը աստծու ղոնաղը (նյուր) չկտրեր, մեր մարագի ծաղիկը ծերին շորացրած յոնջա խոտը (առվյուտ) դիզումը հանգիստ մնար։— Ա՛յ ճար կտրածի մարդ,— մի-մի անգամ թոնթորում էր ողորմածիկ մերս,— ախար ո՛չ ջաններումս ջան մնաց, ո՛չ տաշտերումս հաց. հիմի էլ թող ուրիշներն անեն, մենք հո էս գեղին տնով-տեղով ճորտ չե՞նք գրված. ընչանք ե՞րբ, հերիք չի՞։— Ձե՛նդ, ձե՛նդ, ա՛յ Եվայի աղջիկ,— բարկանում էր հերս,— ուզում ես ինձ ճամփից հանե՞ս, ընչի՞, մենք էս գեղըցի չե՞նք, մեր երթկի մուխը գեղի մխի հետ չի խառնվում, երկինք բարձրանո՞ւմ. գեղը որ կա, մի մենծ տուն ա. տերտերն էն տան հոգևոր գլուխն ա, տանուտերն ու երեցփոխը տերտերի մեծ որդիքն են. մինը պտի էն տան անդամների աշխարհային հոգսերը քաշի, նրանց ապրուստին, նիստ ու կացին, լավ ու վատին գլուխ քաշի, մեկելը նրանց աստծու հրամանները կատարելու ճամփեքը պատրաստի։ Տերտեր, տանուտեր, մութավելի, գզիր, ջրբաժան, ժամհար— բոլորս էլ մեծ գերդաստանի ծառեքն ենք, նրա ընտրածներն ենք. մեր տունն էլ, մենք էլ մեր ունեցած-չունեցածն էլ մեր գեղինը, մեր հասարակությունինն ա, էդ մի պարտք ա, պտի հատարենք։ Էսօր ես եմ, էգուց դու ես, երկու տարուց՝ Պողոսը, հինգ տարուց՝ Պետրոսը. մենք մին-մնու համար ենք. մի ձեռ ծափ չի կարող տալ. ունեցողը չունեցողին, հարուստն աղքատին, զորեղը անզորին պարտական է. էսօր ինչ իմն ա՝ քոնն ա, ինչ որ քոնն ա՝ նրանն ա, ով որ ինքը տվել ա, ինքը ստեղծել ա, ինքը ամենքիս էլ մի աչքով իր աթոռից մտիկ ա տալիս։ Ա՛յ սրանք էին իմ հոր պատասխանները իր տանտիկնոջը։

— Դե ասա՛ դու էլ քո հոր ճանապարհն ես բռնել, էլի՛,— ընդհատեց Սիսակը։

— Մեղա՛ աստծու, կիսին էլ արժան չեմ,— գլուխը շարժեց երեցփոխը.— իմ հոր սիրտը կվերցնե՞ր, որ հայր սուրբս գար, վեր գար ու հիմի մենակ քեզ հետ նստեր էս աղքատ սեղանի վրա, հաց անուշ աներ. սրա պես թանկագին ղոնաղի պատիվը բարձրացնելու համար պտի սրա չորս կողմը շարված ըլնեին գեղիս առաջավոր իշխաններն ու սիպտակմիրուք հալիվորները։ Գալիս էին, նստում, վայելում, ժամանակ անցկացնում եկող պատվելի ղոնաղի հետ ու վեր կենում, գնում։

— Ո՞վ գիտե, մի դատարկ շնորհակալություն էլ չէին անում,— հետաքրքրությամբ հարցրեց Սիսակը։

— Ի՞նչ շնորհակալություն. մարդ իր տանն իրանից շնորհակալություն կանի՞. շնորհակալ էին ըլնում աստվածանից, որ էսպես ազիզ ղոնաղ էր ղրկել մեզ համար։

— Այժմ համեմատեցե՛ք, հայր սո՛ւրբ, ներկա երեսփոխաններին մեր Ղազար բիձի լուսահոգի ծնողի և յուր հետ. քանի՞սը կգտնեք սրանց օրինակին հետևողներ, սրանց պես հավատարիմ ավանդապահներ։

— Ի՞նչ եք ասում, սիրելի Սիսա՛կ,— հոգվոց հանեց գործակալը.— այժմյան երեսփոխանությունը խայտառակություն, նախատինք է մեր ազգի համար։

— Եթե ձեզ նեղություն չի լինի, մի ընդհանուր պատկեր ներկայացնեիք, շատ հետաքրքրական է. դուք քաջ գիտակ եք և փորձված,— խնդրեց Սիսակը։

— Ցավալի է, բայց ասեմ. այժմ մարդիկ երեսփոխ են դառնում ոչ իրանց դռները. այլ գրպանները լայնացնելու համար. եկեղեցին նրանք ստանում են իբրև մի եկամտի աղբյուր՝ սեփական քսակը լցնելու. ոչ միայն գործակալին կամ օտարական հոգևորականին է սառն ընդունելություն անում երեցփոխը, այլ չքավոր մուրացկանի դեմ էլ աչքերը փակում է. դժվարը ոտքը եկեղեցու շեմքով ներս դնելն է. շարշարվի՛, թե պետք է կարողանաս նրանից հաշիվ պահանջել կամ արձակել. ո՛չ ժողովրդի պահանջը, ո՛չ հոգևոր իշխանության հրամանները չեն ազդում նրա վերա, մինչև ուժ չես գործ դնում։ Անունը կա, որ կոնսիստորիայի կնքով ժապավինված տոմար ենք տալիս՝ տարեկան եկամուտը մանրամասնորեն նշանակելու, բայց երբ կամիս՝ պահանջի՛ր, մեր այժմյան երեսփոխանը քեզ ներկայացնում է մաքուր և անգրիլ տետրակը նույնությամբ, ինչպես ստացել էր։

— Ձե՞ք պահանջում։

— Բերան ցավացրո՛ւ՝ որքան կուզես, ամենամեծ շնորհքը, որ նա քեզ անում է, այդ մի կտոր թղթի երեսի անկարգ, անկանոն խզմված, իբր թե, հաշիվն է՝ այս բովանդակությամբ։

— Հինգ մկրտությունից, երեք պսակից, երկու ննջեցելքից լուսգին՝ այսքան, գանձանակից՝ այսքան և այլն։ Եթե դիցուք տարեկան եկամուտ ցույց տվեց երեսուն մանեթ, դու ինքդ պետք է ենթադրես, որ եկեղեցին մի քանի կոպեկներ ծախքը դուրս գալուց հետո անշուշտ պարտ է մնացած՝ մեր հավատարիմ երեսփոխանին, որ յուր բարեպաշտական զգացմունքների թելադրությամբ առատաձեռն սրտով ընծայում է եկեղեցվուն, ինչպես ինքն առանց կարմրելու ասում է՝ «յուր հոր խերին»։

— Ուրեմն նա յուր հափշտակությունները ծածկելու համար խոհեմություն գործ դրած կլինի եկեղեցական զարդ ու անոթներ ավելացնել, մի քանի նորոգություններ անել, որտեղից միջոց ունենա գողանալու։

— Գոհ ենք, եթե գրով ու ցուցակով իրան հանձնված խաչ ու սփոռոցներից յուր դստեր համար օժիտացու, յուր որդու նշանի համար մատանի չի դուրս տանի։

— Բայց մի՞թե եկեղեցին ոչինչ գումար չի ունենում։

— Շատ էլ ունի, բայց ումնի՞ց ի՛նչ ես պահանջելու. ժողովուրդը մի առ մի հայտնում է գումարի քանակությունը, գիտե էլ, թե ո՛վ ո՛րքան է կլանել. բայց ոչ երեսփոխանն է խոստովանում և ոչ նորա հետ միասին մաքրագարդողներն են հանձն առնում. և ի՞նչ ես կարծում, ո՞ւյք են ընդհանրապես երեսփոխանի պաշտպանները։

— Գրավ կդնեմ, եթե գյուղական իշխանները չլինին։

— Այո՛, տանուտերը, դատավորները, հառաջավորները և հարուստները։ Բողոքում է նոցա անիրավության դեմ հասարակությունը, փաստերով տեղն ու տեղը ցույց են տալիս, բայց անօգուտ. գրավոր և ոչ մի ապացույց չկա. ստիպվում ես կամ լռել և քո ձեռքով տված տոմարիդ մեջ բավականանալ երեսփոխի ցույց տված կեղծ հաշիվներն արձանագրելով և կամ դիմում ես կողմնակի միջոցների։

— Ինչպե՞ս։

— Ինձ հաջողվել է մի քանի տեղ բանալ այդ դեղծումները, նեղը ձգել խարդախ երեսփոխանին և մի գրավոր մուրհակ ստանալով իրանից՝ մի քանի ամսից հետո օրենքով պահանջել։ Սակայն ի՞նչ օգուտ, որ նախ՝ ամեն տեղ և ամեն ժամանակ չի հաջողվում, և երկրորդ՝ մեկ խարդախին պատժում ես՝ մյուսի որկորին կերակուր տալու համար. ում ձեռքն ընկնում է, նա է ուտում։

— Միակ միջոցն ուրեմն երեսփոխանությունը քահանաներին հանձնելն է։

— Այդ էլ եմ արել, սիրելի՛ս, բայց շատ տեղ իրանք քահանայքն ու ինքը բարեկրոն գործակալը աջակցում են անխիղճ երեսփոխանին նորա մուրը գործերի մեջ և որկրամոլ հարսի նման մածնի սերը նախապես երեսիցը քաշում, անհագաբար լպստում ու հետո տակի մնացած շինճուկը դնում սկեսոր կամ հյուրերի առաջը։ Է՛հ, սիրելի Սիսա՛կ, սիրաս արյան ծով է դար...— ուզում էր շարունակել գործակալը, սակայն Ղազար բիձեն, որ շատ ժամանակ չէր՝ բացակա էր, կրկին ներս մտավ, ձեռքին մի կախան խաղող և ասաց.— ջանս դուրս գա քեզ համար, հայր սուրբ ջա՛ն, կերակուրը սառեց, ինքդ սոված մնացիր, գոնե քաղցր հավող էլ ա անուշ արա՛։

— Բայց, հայր սո՛ւրբ, մենք խնդրից շատ շեղվեցինք. դուք ինձ շնորհեցիք ձեր շնորհ բերելու պատճառը,— հարցրեց Սիսակը գործակալից։

— Դորա համար էլ քեզ կանչել եմ,— ասաց նրան վարդապետը,— այսօր դու պետք է օգնես ինձ՝ կատարելով քարտուղարի պաշտոն. ես եկել եմ քննել մի չհաստության գործ, համաձայն ձեր ավագ քահանայի ներկայացրած ճյուղագրության և բարձրագույն իշխանության կողմից ինձ հանձնարարած հրահանգի։

— Եվ ո՞ւյք են ամուսնացողքը։

— Ձեր տանուտերի որդի Կարապետը՝ Բարսեղ Ալեքյանի դստեր հետ. ինչպես քահանայն հայտարարում է, մեջը թեև խորթություն կա, բայց տերտերն յուր վրայից պատասխանատվությունն իսպառ վերցնելու համար խնդրում է գրածները քննությամբ և երդումով հաստատել։

— Վա՛յ, նրա տունը քանդվի, ի՛նչ տերտեր ա,— բացականչեց Ղազար բիձեն։

Սիսակը որովհետև գիտեր իրողությունը և սպասում էր այդ օրին, չվհատվեց, այլ բարձրաձայն քահ-քահ խնգաց։

Խե՜ղճ Սիսակ, քթերից դուրս եկավ ծիծաղը. նրա աչքը դիպվածով առավ սենեկի լուսամուտի կոտրած ապակու փոխարեն կպցրած թղթին և նա այնպես ծլունգ եղավ նստած տեղիցը, որ նորից վայր ընկավ տախտի վերա։

— Ի՞նչ է այն,— ծղրտաց Սիսակը և վեր ցատկեց, մոտեցավ լուսամուտին։

— Եղեռնագործությո՛ւն, հայր սո՛ւրբ,— գոչեց նա և, չկարողանալով անչափ վրդովմունքից խոսել, սիրտը բաբախելով մատով գործակալի ուշադրությունը հրավիրեց դեպի թուղթը։

Վարդապետը շտապով մոտ գնաց պատուհանին և խորագետ աչքերով ակնոցի օգնությամբ սկսեց որոշել գրվածքը, բայց բան գլխի չընկավ. թուղթը թափանցիկ էր, լույս տալու համար դաղ արած ձեթ էր քսած։

— Ի՞նչ է այս, Սիսա՛կ, ես ոչինչ չեմ հասկանում։

— Աղաչում եմ, հայր սո՛ւրբ, օգնեցե՛ք ինձ, իմ ձեռքերս դողում են, նեղություն կրեցե՛ք զգուշությամբ դուրս պոկել այս եղեռնային փաստը։

Գրչահատի ծայրով գործակալն առանց դժվարության քակեց լուսամուտից ալյուրի շաղախով ամրացրած թուղթը։

— Այժմ ասա՛ ինձ, Ղազար բիձա՛, ո՞րտեղից է այս թուղթը կպել ձեր պատուհանին,— հարցրեց Սիսակը։

Երեցփոխը ոչինչ բացատրություն չկարողացավ տալ. իսկ նրա կի-

նը, պարզն ասաց, որ ոչ միայն այդ մի թերթը, դորա նման շատերը միասին ինքն ստացել է Տաճատ վարժապետի կնոջից, որոնցից մի քանիսով թղթած ունի մյուս սենեկի ապակի չունեցող պատուհանները. մյուս ավելորդները դեռ թափած են յուրյանց տան խորշումը։

Եվ արդարև, տանտիկինը գոգը լցրած ներկայացրեց բավականին թղթի կտորտանք և ցույց տվեց բոլոր պատուհանները։

— Ի՞նչ է այս, սիրելի Սիսա՛կ, այս ի՞նչ թղթեր են, բացատրի տե՛սնենք, ինչո՞ւ այդպես վրդովվեցիր,— զարմացմամբ հարցրեց վարդապետը։

— Ներեցե՛ք, հայր սո՛ւրբ, որ ձեզ ոչ միայն անպատասխան եմ թողնելու, այլև պետք է ձանձրություն պատճառեմ ձեզ՝ անձամբ կատարել քննությունն, առանց ուրիշ գրագրի մասնակցության. հանգամանքները փոխվեցին, ինձ այլևս ձեզ պիտանի լինելն անպատեհ է. շտապում եմ ձեռնհաս միջոցից օգուտ քաղելու։ Իմ խնդիրս այս է, որ դուք փութացնեիք ձեր քննությունը, իմ գնալուց մի քանի րոպե հետո դրեիր քննիչին ետ թողուլ յուր գործը մինչև վաղը, և դուք ձերը վերջացնեիք։

Գործակալի դրական պատասխանն առած՝ կապեց Սիսակն յուր թանկագին գյուտը թաշկինակի մեջ ու վազելով ընկավ Բալասան աղայի բակը։

— Ա՛յ, սլեստչի աղա՛, հրես մատաղն ինքն իր ոտովն ա եկել,— ուրախ-ուրախ զեկուցումն արավ տանուտեր Խուդոն.— սա ինքն ա մեր գեղի փիլիսոփեն՝ պարոն Սիսակ Ժամհարյանցը, որին էս սհաթը դու քո հրամանքը ցանկանում էիր ծանոթանալ։

Տանուտերի խոսքերը միանգամայն անուշադիր մնացին Սիսակի կողմից. հաստատ կարելի է ասել, թե նա չլսեց անգամ յուր հաշվին արած կծու երգիծաբանությունները։

Առաջին անգամը նա շփոթվեց, երբ ամեն կողմից աչքերն յուր վերա սևեռվեցին. նա նման էր այս բոպեին որսի հոտով թակարդի մեջ ընկած բազեի, որի վերա հանկարծ դռները փակվեցին, ու դուրս թռչելու անցք չգտավ։

Նա մի-երկու քայլ ետ գնաց, յուր շուրջը նայեց և մնաց կանգնած մեջտեղը։

— Ներեցե՛ք,— տեղ ցույց տվեց քննիչը Սիսակին։

— Տեր քնի՛չ,— մեքենաբար արտասանեց վերջինս և կրկին լռեց։

Ուրիշ ի՞նչ պետք է աներ, որ չլռեր։

Նորա լեզուն չէր շարժվում, հևոցը խեղդում էր նորա ձայնը կոկորդումը. նա նմանում էր մի գորովագութ մոր, որ յուր սիրելի մանուկը խլած լինի ավազակի ճանգից նույն բոպեին, երբ դաժան գաղանի սուրը

վերջ պետք է դներ անմեղ գառնուկի կյանքին։ Ի՞նչ գորովանոք նա կսեղմեր յուր սիրելի զավակին. ի՞նչ սրաթև արծվի արագությամբ կփախցներ յուր անգին գանձը, իրան հետապնդող մարդասպանից ազատվելու։

— Նստեցե՛ք,— կրկնեց յուր առաջարկությունը քննիչը Սիսակին։

— Շնորհակալ եմ.— ասաց նա զգաստանալով և քաշվեց մի կողմ։

— Դո՞ւք եք պարոն Սիսակ Ժամհարյանցը,— քաղաքավարությամբ հարց տվեց քննիչը։

— Այո՛։

— Մի քանի հարցմունքներ ունիմ ձեզ առաջարկելու, կարո՞ղ եք պատասխանել։

— Իրավունք ունիք, այժմ հանգիստ եմ։

— Դուք մեղադրվում եք սպանությունը ծածկելով, անմեղին զրպարտելով, իսկ մարդասպանին արդարության ձեռքից ազատելու ձգտումն անելու փաստերով։

— Ի՞նչ ապացույցներ ունիք։

— Ձեր սեփական ինքնաձեռագիր նամակը։

— Ես ոչինչ այդպիսի թղթեր չեմ գրել, իմ ձեռքս աշխարհին հայտնի է։

— Իհարկե, և դուք կճանաչեք։

— Անշո՛ւշտ։

— Առե՛ք։

Երկու-երեք բոպեաչափ Սիսակն աչքերը նամակի վերայից չէր հեռացնում. բոլորի ուշադրությունը դեպի նա էր։ Ամենքը կարծում էին, թե նա կշփոթվի, բայց սխալվեցան։ Սիսակը ընչացքի տակին մի անանշան ժպիտ խաղացրեց և լուրջ դեմքով թուղթը ետ տվեց։

— Սպասում եմ պատասխանի,— կարճ հարցրեց քննիչը։

— Դուք ուղիղ եք։

— Ուրեմն ճանաչո՛ւմ եք ձեր հանցանքը։

— Պարոն քնի՛չ,— արհամարհական նայվածքով յուր շուրջը դիտելուց հետո բարձրաձայն շեշտելով խոսեց Սիսակը.— ամեն բան կհավատայի, բայց այս աստիճան խարդավանք՝ թույլ չէի տալ ինձ երևակայելու. այս նամակն իմ սեփական գիրս է, բայց ոչ իմ ձեռքով գրած։

— Պարզ խոսեցե՛ք։

— Ավելի ոչինչ չեմ կարող ասել, միայն թե գիրն իմն է, գրողը ես չեմ. եթե, հիրավի, այս գրությունն ապացուցվի, և մարդասպանը, որին, իբր թե, ես պաշտպանում եմ, խոստովանի յուր հանցանքը կամ ուրիշ վկայություններով նա դատապարտվի, ապա օրենքի հիմամբ իմ պա-

տիժս հավիտենական աքսորն է. սակայն կրկին կարող եմ հավատացնել ձեզ, որ ես այս նամակի մասին տեղեկություն չունիմ։

— Իսկ ձեռքը խոստովանո՞ւմ եք, որ ձերն է։

— Ճիշտ և ամենաճիշտ։

— Ուրեմն դուք կամ հիվանդ եք, կամ ստում եք։

— Հայելու պես պարզ է ինձ համար գործը, գիտեմ էլ գրողը, բայց մարդը կատարելագործված է արվեստի մեջ դպրոցական նստարանից. կեցցե՛ դիտությունը։

— Դուք ուրիշի՞ն եք կամենում մեղադրել։

— Երբեք, ավելորդ ևս է, փաստեր առայժմ չկան, իսկ կեղծած է այն աստիճան ճշտությամբ, որ ես ինքս իմ խոսքերիս վրա տարակուսում եմ։

— Մի դրական պատասխան եմ պահանջում ձեզանից։

— Առայժմ խոսքերս հակասական պետք է լինին. գրողն ես չեմ, ձեռքն իմն է, այդ ձեզ համար, իհարկե, նշանակություն չունի. ես այժմեն շնորհավորում եմ իմ ոսոխների ժամանակավոր հաղթությունը. օրենքով հիմա դուք իրավունք ունիք ինձ բանտարկել, եթե կամենան իմ բարեկամներս. ես ընդդեմ չեմ, մինչև ծայրը մի տեղից գուցե կերևի։

— Կարո՞ղ եք երաշխավոր ներկայացնել։

— Ո՛չ կարող եմ և ո՛չ էլ կցանկանամ որևէ մարդի անբախտության պատճառ լինել. երաշխավորողին փրկություն չկա. մենք գյուղով, հասարակությունով մեր գործը լավ գիտենք. այս նստողներն ամենքն էլ շատ լավ հասկանում են ասությունս։

— Շատ իզուր եք կողմնակի բարուրանքներ բարդում, պարոն Սիսա՛կ,— մեջ խոսնվեց Մելնիկովը,— եթե կամենաք՝ ես երաշխավոր կլինեմ։

— Սխալվում եք, աղա Բալասա՛ն, ա՛խ, ներեցե՛ք, Վլադիմիր Նեստորի՛չ ձեր հաշիվների մեջ. դուք ձեր բարերար երաշխավորությամբը ոչինչ զգալի արդյունք չեք դուրս տանիլ. մի բան մի՛ մոռանաք, որ ես Երասխն ու Ախուրյանն էլ չեմ տեսած, ուրեմն և տաճկական սահմանը չեմ անցած։

— Ձեր խոսքերն և՛ անհասկանալի են, և՛ վիրավորական։

— Առաջինը կարող եմ պարզաբանել, իսկ երկրորդի համար ձեզ եմ թողնում մտածել։ Այո՛, պարո՛ն, ես վանեցի չեմ. հաջողած կլինեի՝ անշուշտ թղթեր կեղծել, եթե հինգ տարի առաջ, դեռ վանեցին չեկած, դեռ ինքս դպրոցի ստորին դասասան աշակերտ, ամառը հայրենի օդը մի-երկու ամիս ծծելու ժամանակս լսած լինեի մի մարդու, գործիք դառնայի նրան և վարժություններ անեի՝ կեղծելու նրա մուրհակներն և ուրիշ

թղթերը։ Այդ պարոնին դուք քաջ ճանաչում եք, պարոն Մելնիկո՛վ. նա մի հաստափոր աղայի անվանակից է. դուք ինքդ շատ լավ մարդ եք, բայց նա ողջ գավառի ցեցերի մեջ ցեցապետն է, ծծել է ժողովրդի արյունը և սարսափ է դարձել ամենքին։

— Խնդրեմ լռեցնել դրան,— դարձավ Բալասան աղեն դեպի քննիչը,— դա պատիվ է շոշափում։

— Այո՛, գերազնիվ տե՛ր, ձերին հետ մեր ալ պատիվը կշոշափե,— գլուխը շարժեց գրագիր վանեցին։

— Գրեցե՛ք, ավելացրե՛ք, պարո՛ն քննիչ,— շարունակեց Սիսակը,— որ ես ասում եմ և պնդում, թե իմ շեշտած ցեցապետը գող է, ավազակ է, մատնիչ է, ազգի դավաճան է, ժողովրդի արյունարբուն է, այս բոլոր թշվառությանց պատճառն է, այս խարդախ գործերի հեղինակը և մեղսակիցն է. ավելացրե՛ք, որ ես մերժում եմ ձեր ցույց տված նամակի ճշտությունը, որ ես փաստեր և հաստատ գրավոր ապացույցներ ունիմ, թե ո՛ր խարդախ ձեռքով կեղծված և ո՛ւմ թելադրությամբ կատարված են այս ամենը. և որպեսզի պարոն Մելնիկովը չթույլ տա ծաղր առնել ինձ՝ առաջարկելով յուր անզոր երաշխավորությունը, և չպարծենա յուր տարած հաղթանակով, ահա այս կապոցը թող վերականգնե ճշտությունը։

Սիսակը քակեց կապոցը և քննիչի առաջին փռեց մի կույտ ճմռլված, ճխլտված թղթեր։

Ամենքը լուռ են, ամենքի հետաքրքրությունը ավելացել է, բոլորի աչքերը հառված են դեպի այդ թղթի կտորները։

Հանդիսատեսներից մի մարդ միայն կորցրեց յուր գլուխը։

Քննության բոլոր ժամանակն այս պարոնը շատ ուրախ տրամադրության մեջ էր. նա թեպետ չէր խոսում, բայց տեր-Սուքիասի և Մելնիկովի քամակին նստած՝ երբեմնապես մեկի կամ մյուսի ականջին, քաշվելով և անվստահությամբ, ինչ-որ խոսքեր էր փսփսում։

Այժմ այս մարդը շփոթվեց և իրան կորցրեց։

— Ես չեմ թույլ տար, կբողոքեմ, դժոխք և սանդարամետք օգնություն կկոչեմ. հափշտակությո՛ւն, ավազակությո՛ւն, կատաղի՛ք գեհենին,— տեղիցը կանգնած՝ բացականչում էր մարդը ձեռքերն օդումը շարժելով և մեկ դռանը նայելով, մեկ քննիչի մոտ ընկած թղթերի կապոցին։

Հանկարծ երկու գործողություն միասին կատարվեցավ. այստեղ հարձակումն գործեց գլուխը կորցրած մարդն արկածալի փաթեթի վերա, իսկ այնտեղ հեռատես Վասիլ Վասիլիչի բազմափորձ հմտությունը դռան

անցքը արգելեց։ Նորա մի հայացքը բավականին եղավ՝ սարի արջ Մահ-մադին և զազախներին դուռը կողպել տալու և չարաբաստիկ Գնթունու ձեռքից հետաքրքրության արժանի կապոցը խլելու։

Հուսահատ թշվառականը գրագիր վանեցին էր։

Նույն րոպեին ժամկոչը տուն մտավ և մի նամակ տվեց քննիչին, տերտերին էլ ասաց, որ գործակալ հայր սուրբն եկել է և կանչում է։

— Դուք, տանուտե՛ր, և տեր հա՛յր, կարող եք գնալ հոգեվոր իշխանության ներկայացուցչի հրամանները կատարելու, իսկ դուք, պարոն Սիսա՛կ, առայժմ ազատ եք,— վճռեց քննիչը։

— Իսկ ես կինդրեի,— պատասխանեց Սիսակը,— այս րոպեիս, առանց ժամավաճառ լինելու, պարոն օգնականի ներկայությամբ փութալ և խուզարկել պատվելի Գնթունու տունը։ Այս թղթերի մնացորդը հարկավ դեռ շատ բաներ պետք է պարզե, եթե կարելի է, ես ևս կցանկանայի ձեզ հետ լինել։

— Բայց դուք ինձ չասացիք, թե այս ծրարը ձեր ձեռքն ի՞նչպես անցկացավ։

— Թող տիկին Գնթունին յուր բերանով պատմե ձեզ եղելությունը։

Հասարակության պատվելիներն երկու խմբի բաժանվեցան. մինը տանուտերի և տեր Սուքիասի հետ դիմեցին երեսփոխի տունը, մյուսը՝ քննիչի, Վասիլ Վասիլիչի և Սիսակի հետ տանուտերի օգնականի առաջնորդությամբ մտան գրագիր վանեցու կացարանը։

Բալասան աղեն և այստեղից մեկնվեցավ Սիսակի զեկուցման համաձայն։

Գործակալի քննությունը երկար չտևեց. տանուտերի ժողոված տասներկու վկայքն այնպիսի անձինքներից էին, որոնք առանց ձիգ ու բարակ մտածմունքների, արտաքին աչքերի հետ խղճմտանք էլ փակեցին և մոտեցան խաչ ու ավետարանին։

Նրանք միաձայն հաստատեցին, որ Բարսեղի կինն երկրորդն է, որ Սոնան կնոջ հետ բերովի է, նորա առաջին ամուսնությունից է և ոչ Խուդոյի հարազատ քեռու թոռը, ինչպես որ ավագ երեց տեր-Սուքիասի հայտարարության մեջ ճյուղավորված էր։

Վկաներից մեկը միայն սկզբումը դուրսը խորհրդակցել և համաձայնվել էր բոլորի հետ. բայց երբ խաչ ու ավետարանը տեսավ, ներքին ձայնի խայթից դողաց։

Ամենքն արդեն համբուրել էին սրբությունները և պնդերեսությամբ

սպասում գործակալի հարցմունքներին, իսկ այս մարդը դեռ տատանվում էր։

Սա հին երեցփոխ Նավոն էր։

— Շուտ արա՛, պարոն Նավասա՛րդ, ես շտապում եմ, համբուրի՛ր, որ գործ սկսենք,— հրամայեց գործակալը։

— Աչի՛դ մեռնեմ, դժար ա, կրակին մոտ գնացողը կերվի։

— Ո՛չ, որդի՛, ճշմարտությունը խոստովանելը հանցանք չէ. ինչ գիտես, ա՛յն ասա։

— Ճշմարիտ խոսողի տակին մի Արաբստանի ձի պտի, ոտներն օրղանգվումը (ասպանդակ), ղամշին (մտրակ) ձեռին, ծառայե՛մ, որ ասելիքն ասի ու ընչանք խուդաֆրին կրնգի ու մին պոկ գա։

— Ո՛չ, սիրելիս, դու հին մարդ ես, այդ պատճառով քեզ հեշտ է թվում. հեռագիրը թռչունից էլ արագ է,— կատակով պատասխան տվեց գործակալը։

— Ջուրն ընկնողն անձրևից չի վախիլ, պարո՛ն Նավո, գյահկիր (ետ մնացող) ձին քարվան չի կաբող կտրիլ. ասում է՝ մեկը գնաց մի աշխարհք, տեսավ բոլորը կույր են, ինքն էլ աչքերը պինդ կապեց, որ Էրանցից չզանազանվի,— մեջ խառնվեց տեր Սուքիասը։

— Բաս Գաբրիել հրեշտակի հրեղեն սո՞ւրը, տերտե՛ր։

— Տերտերը Գաբրիելի ճանապարհը կծռի, պարո՛ն Նավո։

— Է՛հ, քո ասածը թող ըլի,— հոգվոց հանեց Նավոն և այս խոսքերով մոտեցավ բազմոցին։

— Ո՛վ սուրբ խաչ ու ավետարան, մեռնե՛մ ձեր ոտքի տակին, սուտն ու ղորդը ձեզ էլ շատ լավ հայտնի ա. բայց ով որ առաջին անգամ էս սովորությունը մտցրեց մեր գեղը, չհասը հաս արեց, հասը չհասի փոխեց, դուք նրա պատիժը տաք։

— Ագռավի ձեն որ ասված լսեր, Վարդավառին ձյուն կգար,— միմյանց մեջ փնթփնթացին տերտերն ու տանուտերը։

— Ուրեմն, հայր-սուրբ, աշխարհքը խաղաղություն ընկավ, խեր ու շառը կոտրվեց, բարեկամն ուրախացավ, թշնամին պատռվեց. մի մատը գիր տո՛ւր՝ պսակենք էգուց,— խնդրեց տանուտեր Խուդոն։

— Վաղը տերունական տոն է, պսակ չի լինի, մյուս օրն էլ պաս է, նույնպես անկարելի է. ես շտապում եմ մերձակա գյուղը, երկու օր այնտեղ կլինեմ, վերադարձին կհրամանագրեմ,— կարգադրեց գործակալն ու ժողովն արձակեց։

Թ

ՆՈՐՆՆ ԴԵՊԻ ՎԱՆ

Գիշեր է. մի շատ մութն և ականակիր գիշեր, ձմեռվա այն աղջամղջուտ և ծանր գիշերներից մեկը, որի համար ժողովուրդը սովոր է ասել՝ մահ մանածողն աշխարհքի վրա թևերը փռել է։ Սուտ չէր, օդի թանձրությունն ամբողջ Օ. գյուղացվոց սրտի վրա փթանոցի նման ծանրացել, նստել է. կարծես ողջ գյուղը մի գերդաստան լինի, և այդ ընտանիքի ամենասիրելի ու պիտանի անդամը հենց այսօր կյանքն ու արևը քեզ է տվել և բոլորի աչքիցն այնքան արտասունք է թափել, որ արտասունքի պարկերը դատարկվել են, և աղբյուրակները չորացել, կարծես այնքան են գլխներին վեր հատել, որ սկավառակներում ուղեղի փոխարեն կապար է լցվել, կարծես այնքան են գոռացել, որ կոկորդում ձայների թելերը կտրատվել են, էլ չեն գործում, որ մարդիկ իրարու միտք հաղորդեն։

Բավականին գիշեր է անցել, բայց ոչ քնողն է քնել՝ ինչպես հարկն է, ոչ արթունն է բավականություն ստացել. քնածներն անհանգիստ երազների մեջ են խորդում ու խեղդվում, արթունները չարդված, վհատված ու լքված՝ հազիվ մի-երկու խոսք լռիկ-մնջիկ փոխանակում են միմյանց հետ։

Այս ամենը դժնդակ օրվան համատարած անախորժ լուրերն էին ազդել. ո՛վ հաղթվեց, ո՛վ տարավ, ո՛վ պետք է իսկապես ուրախանար ցորեկը կատարված դեպքերից,— ոչ ոք հաշիվ չկարողացավ տալ իրան. համայնքի մեծամասնությունը սրտաբեկ էր՝ անմեղ ու աղնիվ երիտասարդն իզուր տեղը դատապարտվել էր. տանուտերի վկաների խղճերը, ճիրաններն ու ժանիքները սրել էին և ծվատում ստախոս տերերի սրրտերը. ինքը տանուտեր Խուդոն յուր մեծ հովանավորի հետ ավելի իրավունք ունեին տրտմելու, քան թե ուրախանալու. ի՞նչ արժեք ունի նրանց այս օրվան հաղթանակը՝ Սամփսոնի բանտարկությունը և չհասի հաս ապացուցելը. Սիսակի թղթերի կապոցը և Գնթունու տանից խուզարկությունից հետո դուրս եկած չարագուշակ փաստերը մեծ հեզաշրջություն պետք է տան տարիներով մտածած, կազմած և իրագործվելուն մի քայլ մնացած ծրագրին։

Ստույգ է, ո՛չ Բալասան աղեն, և ո՛չ յուրայինք գիտեն Սիսակի կապոցի և վանեցու գզրոցից դուրս հանած մի քանի թղթերի ու նամակների բովանդակությունը, բայց եթե նրանք յուրյանց համար անեպատ և կասկածելի չլինեին, ինչո՞ւ ապա քննիչն յուր խուզարկությունը վերջանալուն պես տնօրինեց բանտարկել Տաճատ վարժապետին և ցանկություն

հայտնեց փոխվիլ մի այլ տուն, ուր, իբր թե, բատ յուր ասության, ոչ ոք իրան չխանգարե պարապելու։

Մեծ տեղիք ուներ Վլադիմիր Նեստորիչը քննիչի յուր տանից փոխվելուց և գործակալի նոր թողած իջևանը՝ երեցփոխ Ղազար բիձի տունը գնալուց հետո կրճտել ատամները мальчишка (տեսաս երեխա) քննիչի վերա և Վասիլ Վասիլիչի մոտ սպառնալ, որ հինգ օր չի քաշիլ, այս նահանգից նրա ոտքը ինքը կտրել կտա։

Ի՞նչ ուներ Վասիլ Վասիլիչը Մելնիկովի օրինավոր վրեժխնդրական հուզմունքի դեմ, բացի հավանություն տալուց և քննիչի դեմ արդար բարեկամությամբ տհաճություն արտահայտելուց. երեկվան երեխայքը այսօր եկել են և տարիներով ծառայության մեջ կյանք մաշած գործողների վարկը ոտնատակ տալիս։

— Իմ կարծյոք, ի պատիվ ձեր, Վլադիմիր Նեստորի՛չ,— ասաց Վասիլ Վասիլիչը,— քննիչը պարտական էր բազմության առջև ձեզ սառը խոսք ասել, հանդգնողի բերած անպետք թղթի կտորտանքը կրակն ածել և յուր ասած անպատկառ խոսքերի համար նրան անմիջապես բանտարկել տալ, այլ ոչ թե մի աչքի պոչով բոպեական զննությունից հետո նրա հետևիցն ընկնել, գնալ, երկար տարվան արժանավոր գրագրի տունը խուզարկել և վնրջը նրան էլ բանտարկել, за что, про что?

Այո՛, Բալասան տղի խորհրդապահ Գնթունին էլ բանտարկված էր, և այդ հանգամանքը մի հատ ջրազացքարի պես նստել էր Մելնիկովի սրտի վերա։

Բանտարկված էր վանեցին միևնույն հարկի տակ, միևնույն տանը, ուր վարժապետից երկու ժամ առաջ մտել էր և գլուխը կախ, բայց խիղճը հանգարտ նստել Սոնայի անփորձության զոհ սիրելին՝ չգործած հանցանքը վիզն առնող Սամփսոնը։

Մտել էր Գնթունին իբրև կալանավոր Գյուլնազարենց խանութներից մեկի մեջ, որ շատ ժամանակ չէր՝ բանտի տեղ էր պետք գալիս. բայց նա չէր տեսնում Սամփսոնին. միևնույն հարկի տակն էր արդարև Սամփսոնը, բայց երկուսին անջնտող միջապատ կար։

Հին մոմրովության ժամանակները գյուղերումը բանտեր չկային. դատաստանը շատ բաղադրյալ չէր. ծանր հանցավորին մի-երկու ժամով կոխում էին մի գոմ կամ մի մարագ և դուռը վրեն փակում. իսկ թեթև, տանու գողերին գյուղական տանուտերը ծերունիների և քեղխուդեքանց բանավոր վճռի համաձայն մի քանի ապտակ էր հասցնում կամ մի-երկու ժամ ծառիցը կապում ու բաց թողնում։ Իսկ հաշտարար օրենքներից հետո՝ հասարակության տանուտերը գյուղական դատավորների համաձայնությամբ մի հարմար տուն է վարձում բանտի համար։

Օ. գյուղի հասարակության բանտը Գյուլնազարենց դատարկ երկու խանութներն էին։

Շատ տարապայման վճիռ էր կայացրել այս անգամ քննիչը, տանուտեր Խուդոյին էլ հետ էր կանգնեցրել պաշտոնավարությունից. այդքանն էլ բավական չէր. իր սեփական տանը հրամայել էր ինչպես կալանավոր մնալ այս գիշեր, իսկ տանուտերի օգնականին բացարձակապես պատվիրել էր երկու պահապան բանտի դռանը դնել, մեկն էլ տանուտերի փողոցումը շրջեցնել։

Գիշերից բավական անցել էր. Մորփեոսի շաղ տված խաշ-խաշի փոշին արդեն յուր ազդեցությունն էր արել Օ. գյուղի բնակիչների վերա. Թշվառ Գալ-ափուն էլ իրանից ավելի անբախտ կնոջ հետ լացել, գլխները կոծել էին և շորերով նստած տեղը՝ նդղել, ննջացել, բայց քնի մրափեցնող աստվածը կամ լավ չէր տեսել, կամ չտեսնելու էր տվել մի քանի հոգու, որոնց աչքերից քունն իսպառ փախել էր։

Ահա միաժամանակ բոլորովին զուգադիպությամբ երկու տանից դուրս եկան երկու հոգի. նրանցից մեկը դեպի աջ փողոցը թեքվեց, մյուսը՝ դեպի ձախ. նրանք իրար չեն տեսել. մութը խիստ է։ Մենք չենք կարող նշմարել երկու խորհրդավոր գիշերաշրջիկների դեմքն ու հագուստը, սակայն եթե նրանցից մեկին ճրագի լույսով մի տեղից տնտղեինք, կտեսնեինք, որ լայն ու երկայն դաշույնի կոթի վերա փայլում են երկու արծաթյա բևեռագլուխներ։ Մյուսի մասին ավելորդ է հետաքրքրվել, նա ոտով գլխով մեզանից աննկատելի մնաց։

Անհայտ անձնավորությունները զանազան խոտորնակ փողոցներից դուրս եկան Օ. գյուղի ծայրը և մեկը «Յոթն եղբոր» կոչված գերեզմանների կողմից, մյուսը կիր այրելու մեծ հնոցի տակից մոտեցան մի շինության. այսպես ասել՝ մեկը հյուսիսից և մյուսը հարավից հառաջեցին դեպի միևնույն շինությունը։ Ոչինչ տուն, ոչինչ ուրիշ շենքեր չկային այդ միահարկ, մի կարգի կառուցած սենյակների մոտ. նոքա շինված էին գյուղից դուրս Օ. գյուղի խրամը տանող ճանապարհի վերա։

Ահա հյուսիսային կողմից եկողն անցկացավ շենքի քամակը. նույնն արեց և հարավից եկողը, բայց սա չծռվեց դեպի շինության հետևի կողմը, այլ կկոցեց հարավային պատի մոտ եղած ձիաքար մահարձանի տակին։

Հյուսիսայինը հանեց դաշույնը և սկսեց շենքի պատի վերա փոքրիկ ատնատեղիներ փորել։

— Լավ է,— մոմոաց նա և կատվի նման պատը չանգռելով՝ վեր բարձրացավ շինության կտուրը և հյուսիսային բաչի վերա բացված ծխնելույզի ծակից գլուխը ներս խցկեց։

— Վարժապե՛տ, վարժապե՛տ,— շատ հաղիվ ներս թափանցեց սենյակի մեջ անծանոթի խուլ ձայնը։

— Վասա՛կ, եղբայր, դո՞ւ ես,— մի նույնպիսի բութ պատասխան եղավ ներքևից։

— Թե կարաս՝ վերև արի՛, աղեն բան ա ասել, պտի քեզ հասկացնեմ։

— Ինձ վեր ելլել անհարմար է, աղնի՛վ Վասակ, ծխնելույզի ձանձախարիթ (մուր) մեր հագուստ սևցնելով՝ վաղը մեզի կմատնե. եթե կուզես նե՝ ինքդ իջիր։

Վասակը, որ արդեն հասկացանք, Մելնիկովի քրոջ որդին էր, ոչինչ ընդդիմություն չարավ, քսվելով մտավ ծխահանի մեջ և դժվարությամբ իջավ շինության ներսը, որը, ինչպես տեսանք, բանտն էր։

—Պահապաններ չնկատեցի՞ն քեզի,— հարցրեց կալանավոր վանեցին։

— Մեռելի պես քնած են չարդախի ծածքի տակ, մին ուզեցա մոտենամ, ձեռս կոխեմ, ջիբներիցը բանտի բալնիքը հանեմ, բաց անեմ, դռնովը տուն գամ, մին էլ սիրտ չարի, ո՛վ գիտա՝ որի ջիբին ա։

— Որքան մենք լսեցինք, Գասպար առաջարկեց Շամոյին պահել բանալին։

Թողնենք Մելնիկովի երկու հավատարիմներին խորին խորհրդակցության մեջ, մենք անցնենք բանտի հարավային պատի մյուս կողմը և հետևենք մեկել անծանոթին։

Երկար ժամանակ անհայտ անձնավորությունը նստած էր դամբարանի մոտ. նա այլայլված էր. նա չէր կարողանում սրտի տրոփը հանգըստացնել։

Երևում է, որ անծանոթը Վասակի նման քաջասիրտ չէր. մի տեսակ վստահություն, մի աներկյուղության ուժ կարծես պակասում էր յուր կյանքի մեջ առաջին անգամ այսպիսի համարձակ քայլ անող էակին։

Խավարի թանձրության մեջ նա մի քանի անգամ շուրջը նայեց, ամեն մի գերեզմանաքար, ամեն մի դիմացի այգիների ծառի կատար մի-մի հսկաներ, մի-մի գլուխն երկնքում, ոտները գետնքում՝ ալք (քաջ) էին թվում նրա աչքին, և նա դողում էր։

Հանկարծ դեպի գյուղի գլխի բոլորը ետ նայած ժամանակ ամպաթից երկնքի պատռվածքի միջից սակավաթիվ աստղերի ցոլացրած աղոտ լույսով փայլին տվեց բլրի լանջի վերա դարերով հառաջ շինված մատուռը։

Անծանոթը հրեսը դեպի ավանդատունը դարձրեց և երեսին խաչակնքելով՝ մի երկու աղոթք մրմնջաց։

— Ո՛վ կոնդի (բլուր) գլխից հուրհրատող (փայլող) սուրբ մատուռ, քե՛զ եմ ապավինել. դու էս տաք ջրին մի հով ջուր ածես, դու իմ սիրտս պնդացնես։

Անշուք տաճարը սուրբ Սարգսի նման ոգևորեց ջերմեռանդ հավատավորին։

Նա վեր կացավ և հառաջեց բանտի դուռը։

Զգույշ էին նորա քայլերը, բայց վստահ։ Նա մոտեցավ երկու քնած պահապաններին և շատ հետաքրքրությամբ դիտեց նրանց դեմքերը. երևի պահապաններից մեկին էր պատում նա, որ գտավ և ամենամեծ զգուշությամբ շարժեց՝ ականջումը փսփսալով նորա անունը։

— Շամո՛ ջան, Շամո՛,— կանչեց նա անլսելի կոչյունով։

— Ը՛... ը՛... ը՛...

— Վեր կա՛ց։

— Ո՞վ ես,— աչքերը ճմռելով, չիմացած՝ թե ո՛ւր է, հարց տվեց Շամոն։

— Հետս արի՛,— ասաց վերջինս և նորից անցկացավ բանտի հարավային պատի կողմը, նստեց նախկին դամբարանի վերա։

Շամոն անգիտակցաբար հետևեց։

— Աղջի, Սոնա՛, դու գժվե՞լ ես. էս կես գիշերին, էս անվերիվերի (վայրի) անապատումն ի՞նչ բան ունիս,— ճանաչեց և հարցրեց պահապան Շամոն։

— Շամո ջա՛ն, անումիդ մեռնի քո Սոնեն, ինձ տուն տա՛ր Սամփսոնի մոտ։

— Աղջի՛, գետինը չե՞ս մտնում, ուզում ես աշխարհքի մեջ թուք անես քո հորն ու մորն է՛լ, ձեր ազգ ու ընտանուն է՛լ. էդ ի՞նչ ես արել, էդ ի՞նչ ես ասում։

— Արևիդ մատաղ, Շամո ջա՛ն, թե մի մազի չափ սիրում ես քո քեռու աղջկանը, խնդիրքս կատարի՛, ես քեզ համար քեռու աղջիկ չեմ էլել, օխտը հալալ քվեր համ եմ տվել։

— Ախար դու ո՛վ, Սամփսոնն ո՛վ, դեռ մի դարդակ խոսք ա հորդ տվածը. էն էլ էսօր խալխի միջին ասել ա, որ ստունց հետո քեզ գետը կքցի ու Սամփսոնին չի տալ։

— Ես էլ չեմ ուզում Սամփսոնին, Շամո ջա՛ն, բայց սրտումս դարդ կմնա, թե որ երկու խոսք ունիմ ասելու՝ չկարենամ իրան հասցնել։

— Դե ինձ ասա՛, ես Սամփսոնին կհասցնեմ։

— Չէ, քեզ մատա՛ղ, իմ լիզվովս պտի ասեմ, կենտ երկու բերան խոսք։

Շատ դիմադրեց Սոնի հորաքրոջ որդի Շամոն, բայց վերջը ստիպվեց բանալ բանտի դուռը, և ներս թողնել Սոնային և դրսից դուռը փակել։

Մի թույլ հազ միայն Սամփսոնի կողմից հայտնի արավ նորա արթնությունը։

Սոնան հառաջեց դեպի հաղը, նախապես մեղմ արտասանելով մեզ քաջածանոթ Հնձանաբագի սուլման նշանաբանը։

— Ը՛ս... ս... ս...

— Ը՛ս... սս... ս...

Վերջին ըս հնչման վերա մի հարցական շեշտեց Սամփսոնը։

— Ը՛ս... ս... ս...— հետևեց դրական պատասխանը աղջկա կողմից։

Սամփսոնը վեր թռավ, կուռը բռնեց և նստացրեց յուր տակը փռած չոր եղեգնյա խսիրի վերա։

— Դու այստե՞ղ, հոգի ջա՛ն, և ի՞նչպես։

— Հորաքվերս տղա Շամոն տուն թողեց. լսի՛ր, թող հանգստանամ, տես իմ հալը,— ասաց Սոնան և բռնեց Սամփսոնի ձեռքը, պինդ սեղմեց յուր կրծքի վերա։

Մրրկածուփ լճի լեռնացած ալիքների նման ընդհարվում էին աղջկա սրտի կափարիչներն յուրյանց ափունքին։

Սամփսոնը հնազանդեց. նա լռեց։

— Աստված իմ, էս ի՞նչ թպրտոց էր,— շշնջած Սամփսոնը և ականջը դեմ տվեց յուր թիկնած պատին։

Արդարև, պատի մյուս երեսին, բանտի մեկել կիսումը, մի թեթև թրխկոցից հետո լսվեցավ խոսակցություն։

— Լսի՛ր։

Երկու սիրահարները բերանաբաց ականջ էին դնում։

— Դու կասես, Վասակ եղբա՛յր, թե քեզ մեր գերազնիվ պաշտպան Մելնիկյա՞ն ուղարկեց մեզ մոտ։

— Հա՛, հենց քէռիս ինքն իր բերանովը հրամայեց, որ գամ քեզնից իմանամ։

— Այո՛, ազնվափայլ տեր՝ Բալասան աղան կցանկա գիտել, թե ի՞նչ թղթեր էին ատելի Սիսակին բերածներ, որք տգետ ամուսնույս անփորձ հիմարութենեն անցեր էին Երեսփոխան Ղազարի կնոջ ձեռք ու ան տեղեն դիպվածով մեր ոսոխի վրիժառության փաստեր դարձած. այո՛, կրսես մեր քաջ հովանավորին, թե ինչպես այն թղթեր, նմանապես և շատ ուրիշ աներկայելի ապացույցներ խուզարկության ատեն այս երեկո անցան քննիչի ձեռք. ես այժմ մի առ մի չեմ կրնար բացատրել, գրելու ձեռնհատ միջոց ալ չունինք. բայց փութա՛ հայտնել իրեն, որ եթե ան թղթերն այս գիշեր մի տեսակ չառնե քննչեն և չայրե, մոխիրն ալ հողմերու չհանձնե, զմեզ, զտանուտեր և ինքը զինքը մեծապես

պիտի վնասե, մեր ոյներիմներ վաղ առավոտ կարդարանան և այս հիմար անձնադավ Սամփսոն, որ չրածը բերանովն անտեղի խոստովանեցավ, պիտի ազատի, թշնամիք պիտի հրճվին, և նույն ինքն նախկին տանուտեր ամբաստանյալ Հարությունն Գոմշակերյանց պիտի անմեղ ելլե ու կրկին տանուտեր վերակոչվի։

— Ցավն էլ հենց էդ ա, որ շան տղի քննիչը քեռուս տանը չկացավ, դունչ ու պռունգը քեռուս վրա կիտեց ու վեր կացավ, գործակալի գնալուց հետո կորավ, մութավելի Ղազարի տանը քնեց։

— Սևահամբույր սանդարմե՛տք, յոթնգլխյան վիշա՛պք, տարտարոսի՛ն զավակներ, մենք կորած ենք,— այնպես խիստ ճչաց վանեցին, որ Շամոն դրսից լսեց և մոտ եկավ, դռանը խփեց և հարցրեց.

— Ի՞նչ ես գոռում, վարժապե՛տ։

— Ոչի՛նչ, ազնիվ Շամի՛ր,— սառն հանդարտությամբ ներսից պատասխանեց Գնթունին.— անհանգիստ երազներ զմեզ արթնցուցին։

— Ալ քեզի մնալ անհնար է,— քրթմնջեց Վասակի ականջումը գրագիրը.— շուտ գնա՛ և հայտնե մեր բարերարին։ Թող հնար մի գտնե։

Վասակը ծխնելույզի ծակովը վեր բարձրացավ։

— Նորեն դեպի Վան, կայք, կին, զավակ ամենայն տեղ դյուրին է ի ձեռս բերել, իսկ անձին ապահովություն, իսկ իրեն ես, իրեն գլուխ՝ գեր ի վերո է, քան զամենն. «զի՞նչ օգուտ է մարդո. եթե զաշխարհ ամենայն շահեսցի և զգանձն յուր տուժեսցե»։

Դեռևս թարմ և կայտառ է մեր դեմք, սևաթույր մեր հերք զմեզ 25-են ավելի հասակ չեն ընծայեր, թեպետ 35-են և 40-ին մեջ կխաղա. ամենուրեք կարելի է, դրամն ի քսակ, կրկին ամուսնանալ. բնություն գեղահրաշն Վասպուրականին աղջկունք առավել չքնաղ է կերտեր և բարեկազմ, քան զկապկանմանս Արարատա։ Բարեբախտ դեպք մի էր տանճիկ Սալիմ բեգին յուր 150 ռուբլի պարտք այսօր վճարելն, խոհեմություն էր մեր կողմեն խուզարկության առեն 500 ռուբլիով լի քսակս ծոցս սոնել. հապա 350 մանեթ գյուղական հա՞րկ, որ երեկ տանուտեր մեզ հանձնեց ծրարել գանձարանն առաքելու և մեր գրպան մնաց. հապա 175 ռուբլի տաճկահայ սովելոց անվամբ ժողոված նպաստ, որ գավառես ժողոված իմ քով իբր ավանդ էր։ 1175 մանեթով զկես տաճկահայը կարելի է գնել և բոլոր փաշաներ ու քյուրդերու շեյխեր յուր գործուն ծառայեցնել։ Ցնծա՛, անձն իմ, և ուրախ լե՛ր, բազմի՛ր բախտին քառաձի կառք և սլացի՛ր ուր երկիր առավել բեղմնալից կսպասե ճարպիկ և հմուտ վայելողի,— քշփշաց ինքն իրեն վանեցին և կայլկի արագությամբ վառարանի ծխնելույզից դուրս մագլցեց, պատն իջավ ու քայլերն ուղղեց

ոչ դեպի յուր տունը, այլ խրամը ցած գնաց և Տաճկաստանի ճանապարհը բռնեց։

Հա՛, մոռացանք, յուր տան հանդեպ հասած ժամանակ Գնթունու ներսից մի ձայն, կարծես, թելադրում է նրան ետ նայել, կին և որդի մի վայրկյան սլացան նրա հիշողության մեջ, բայց խոհեմ և կամքի տեր մարդը ժխտական մի շարժումով փշրեց սրտի շենքը և սառն ու դառն հեգնությամբ բավ համարեց ծաղրել յուր մարդկային թույլ հատկությունն ու հառաջ ընթանալ։

— Ոնց որ երևում ա, ձենը կտրվեց,— շշնջաց Սոնան,— վանեցին կարծես բուխարու ծակովը Վասակի հետ դուս գնաց։

— Ջառը գնա, ջհանդամը, Սոնա ջա՛ն։

— Ինձ համար ուրախությունն էն ա, Սամփսոն ջա՛ն, որ դու էդուց կազատվիս նրա թղթերով։

— Քանի՞ կոպեկի կառնեմ, ընտեղ կազատվեմ, էնտեղ էլ ինձ կսպանեմ։

— Ի՞նչ ես ասում։

— Սուտ չեմ ասում, ինձ հո բռնիլ տվողը վանեցու շինած սուտ թուղթը չէր. քո էսօրվա գոմումն ասած խոսքն էր. դու չէի՞ր, որ ասացիր՝ պտի հորդ լսես, տանուտերի հարսը դառնաս։

— Դու էլ հալած եղի տե՞ղ ընդունեցիր խոսքերս, ես մախսուս (դիտմամբ) ասացի, որ տանուտերի օգնականը լսի ու սլեստչու մոտ վկայի, ես տեսա նրան ներս գալուս։

— Սոնա ջա՛ն, զո՞րթ։

— Սոնեն գլխովդ պտիտ գա, ես եկել էի քեզ ասեմ, որ գլուխ առնես թռչես. հույսս մեր Շամոն էր, որ մի հնարքով քեզ բաց թողար. բայց հիմիկեց դենը միամիտ եմ, լիսը կբացվի, դու էլ իմ գիրկը կընկնիս։

Դուռը բացվեց և պահապան Շամոն ներս մտավ։

— Ա՛յ աղջի, հերիք ա, արի գնա՛, է, հիմի հընկերս կզարթնի, գետինը կմտնենք։

— Էս ա գնում եմ, բայց դու հընկերիդ զարթնացրո՛ւ, վանեցու քամակիցն ընկեք. հենց իմանա բուխարու երդիկովը դուս փախավ,— ասաց Սոնան և յուր եկած ճանապարհովը վերադարձավ։

Մեջ գիշերին գյուղը դղրդոցն ընկավ. պահապան Շամոն ու Գասպարը մի քանի հրացանի պայթյուններով ամբողջ գյուղը ոտքի հանեցին։

— Վանեցին փախել է,— տարածվեցավ գյուղը,— բուխարու ծակովը դուրս է գնացել։

ԻԶ

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Հետևյալ առավոտն երեցփոխ Ղազար բիձու տանը քննիչի հրամանով տանուտերի օգնականի ձեռքով, կրկին հավաքվեցին Օ. գյուղի առաջավորները. խոսք չկա, այնտեղ էր և այսօր առաջին տեղն էր բռնել։ Երեկ նա մի անկյուն էր քաշվել և սպասում էր, թե մի բոպեից, մի ժամից իրան էլ կկանչեցնեն քննիչի առաջ. բայց օրը մթնեց ու նրան ոչ ոք հարցմունք չարավ։

— Հա՞, Սիսակ ջա՛ն, ասում ես բանն ըտենց փոխվե՞ց, վանեցու տանիցն էդ լավ-լավ թղթերը դուս եկա՞ն. մեռնեմ աստծու ողորմությունին. հախը նհախին չի տալիս (արդարադատ է). ուրախությունից գիշերս քունս չի տանիլ. զրկենք աջուդ Սալանուն բերել տանք, սազը քոքենք, մի քանի մեր սրտի բարեկամներ էլ կանչենք, սուփրեն բաց անենք, իմ ձեռով կոտորած աղն ու տաքտեղը արած՝ գինին էլ վերեն լցրած բաստուրմեն մի կողմից շամփուրը քաշենք, տժժացնենք, մի կողմից յալլա կանչենք, քեֆ անենք ու Բալանու աստծ Ջյոռոզլուի ու Շահ-Իսմայիլի հեքիաթները լսենք, հետն էլ նոր-նոր հայավար տաղեր ասենք, խոզի արնի պես կարմիր և նոր կտրած պոլբմբոյալի պես դեղին պսպղուն գինին վրեն կոնծենք. խեղճ Գալ-ափունի ցավերն էլ մտիցը քցենք, ընչանք բարի լիսն ամեն հայ-քրիստոնի հետ մեր վրա էլ ծագի, աստծու ողորմության դուռը բացվի, գնանք մի տեսնենք, թե մեր վռըշիկ խաչագող Գնթունին ի՛նչ պատասխաններ պտի տա սլեստչուն։

Վերոգրյալ միջոցն առաջարկեց Մելիք-Բաղալը՝ գիշերվա երկայնության դեմ կռվելու և յուր անհամբերությունն անզգալի կացուցանելու համար, երբ նախընթաց երեկոյին մթնով շատ ուշ Սիսակն եկավ և վանեցու տանից խուզարկության ժամանակ դուրս եկած փաստերի մասին պատմեց։

— Չէ՛,— ասաց Սիսակը Մելիքին,— դու լավ կանես՝ սիրտդ հանգիստ թեք ընկնես, քնես, որ էգուց միտքդ բաց՝ լավ լսես քննիչի հարցմունքներն ու վանեցու պատասխանները։

Լա՛վ էլ քնեց Մելիքը, շատ էլ վաղ եկավ երեցփոխի տունը, բայց վանեցու երեսը չկարողացավ տեսնել. նրա քամակից ընկնողներից մինն էլ իր տղեն էր, որ զենք ու զրահ կապած, գյուղի կորիճ ջահելների շարքումը, ձիավորվել էր ու Վասիլ Վասիլիչի հետ վանեցու քամակիցն է ընկել։

Զմեռվան արևն երկու ձողաչափ բարձրացել էր, ինչպես ասում են՝

ով օխտն էլ ուներ, կերել, պրծել էր, որ Վասիլ Վասիլիչին իր պալտոյի մեջ ցրտից կուչ եկած, մի բռունցքը դառած, իր ձիավորներով տուն ընկավ քննիչի մոտ և ասաց. էդ մարդը, ինչպես երևում է, սատանա էր, նա հիմի գետնի տակին բեհեղեբուղի կողքին նստած իր քաջագործությունները կլինի պատմում, թե չէ ես Վասիլ Վասիլիչը լինեմ, մինչև երասխի կամուրջը տեղ չթողնեմ՝ ոտնատակ տամ, գյուղերը չթողնեմ՝ փոթորիկ բարձրացնեմ և երկրի երեսին չգտնե՞մ, էդ անհնարին է։

— Եթե այդպես է՝ մեր գործը տեսնենք,— վճռեց քննիչը և ժողոված մարդկանց մոտ կարգաց վանեցու տանից դուրս եկած թղթերը՝ սկսելով հետևյալ նշանավոր հիշատակարանից։

Զմոռանանք ասել, որ ժողովին ներկա էր Վլադիմիր Նեստորիչը, տանուտեր Խուդոն և երեկվան կալանավոր Սամփսոնը։

— «Առաջին թերթ, առաջին տարի, առաջին երես»,— բարձրաձայն գոչեց քննիչը և կարդաց.

«10 սեպտեմբերի 18... ամի, Վան։ Ըստ Խորենացվույն՝ «սահմանք քաջաց զենն յուրյանց, որքան հատանեն, այնքան ունին»։ Մեզի համար այս երկիր որչափ և սիրելի՝ իբրև մայրենի տնակ, բայց ապարդյուն. հողն առատ, դրամ սուղ, հարստություն՝ կենաց նպատակ, հայրենասիրություն՝ անոր ուղին հարթող պատրվակ։ Հայրիկին հանձնարարական և ի դյուրահավան երկիրն Արարատյան»։

«13 սեպտ., հոլող ելք, բարի ճանապարհ, ողջամբ մնա՛, Այգեստա՛ն, մանկությանս օրորա՛ն...»։

— Սոքա մեր գործերին չեն վերաբերում,— աչքի տակով մի երկու երես անցնելով ասաց քննիչը և կանգ առավ երրորդ երեսում։

«20 սեպտ. Աղեքսանդրապոլ, Սհաթչոնց խան. Կարուց սրբազանի հանձնարարական մեզի մեծ հույս տվավ, բայց տեղվույս պաղարյուն հաջորդ Հ. վարդապետին հանդիմանություն և անհյուրասիրություն փոքրինչ զմեզ կխռովե. եթե բոլոր էջմիածնականք ասոր նման խորագետ և խոշընդոտ ելլան մեզի, մեր ձեռնձգությունը կդժվարին։ Որքան կհիշեմ անսիրտ վարդապետին հայացք և անոր կծու խոսքեր՝ կքստնմիմ. ուխտավորին, կասե, այս թղթեր պիտո չեն և ոչ մեզի դիմելու հարկ կա. ահա էջմիածին, գնացե՛ք, ուխտներնիդ կատարեցե՛ք և դարձե՛ք։ Ձեր երկիր ավելի կարիք ունի ձեզ նմանների, կասեր, մեզ բավական են մեր գործիչք։ Սակայն չգիտեմ, կհասկանա՞ վարդապետն, թե մեզի համար նշանավոր է ոչ գործ, այլ գործին անվամբ մեր քսակ»։

«21 սեպտ., ի նանիր աշխատությունդ, Հայր Հ., մենք քո քթիդ տակ գտնանք մեզի համար ընծայողք. կաթոլիկ քահանայի մի ծանոթացանք, զմեզ պապին երկրպագունելու մին ներկայացուցինք, որ կերթա,

իրբ թե, յուր կորուսյալ եղբոր որոնելու և անոր մոլեռանդության շնորհիվ հինգ ռուբլի—մոտ 100 ղուրուշ շահեցանք և մի ժամեն աշտարակեցվոց ուղեկցությամբ յուղի կանկանիմք՝ նախապես գնած և ծանոթացած գյուղական օրենագրքին հետ, որ զռամիկն շահելու կնպաստե մեզ. կասեն՝ կաթոլիկ հոգևորականն ևս մեր կարծածին չափ տգետին մեկ չի եղել, նա ևս յուր հաշիվն ունեցած է, մեր անվամբ ժողովածին կեսն իրեն է պահեր. կեցցե՛. գիտե գործել»։

«22 սեպտ. Ապարան։ Այս գավառ մեր երկրե խավար կերևի. կարժեր այս կույր աշխարհեն օգտվիլ. բայց աշտարակեցի ուղեկիցքս էջմիածնի շուրջ կգերադասեն. հարկ է երթալ և այդ Ավետյաց երկրին քաղցրություն ճաշակել։ Շատ հյուրասեր են աշտարակեցիք, մեզ և ոչ մի ասպարեզ թույլ տվին հետի քայլելու, յուրյանց զավակ կառնեն մեզի։ Ափսո՛ս, որ նախապես խմիչք ասող հայտնեցի զիս. յուրաքանչյուր քայլափոխին կարելի էր Աշտարակա գինով զվարճանալ, ձիանց վերա բարձած՝ անընդհատ ի վաճառ կտանին աշտարակեցիք գինի և օղի, ամեն բեռնակիր կառաջարկե վերադարձուներուն անուշ ասել, ինչպես իրանք կըսեն»։

Քննիչը մի-երկու թերթ ևս շրջեց և կանգ առավ։

«25 սեպտ., Օ. գյուղ։ Այս է հանգիստ իմ, ի սմա բնակեցույց, զի հանեցա ընդ սա։ Մեր օթևան փե՛ք հարմար է. Մելիք-Բադալ թեպետ հեգնաբան ոմն է, հաճախ զմեզ խաչագող կանվանե, բայց մենք չհասկընալ կձևացնենք. թող ասե, օր կուգա՝ ծուխ յուր քթեն կհանենք, առ այժմ երեսուն մանկանց ուսուցման վարձ և գյուղական գրագրի բեղմնալից պաշտոն մեր վարկ բարձրացույց և այդ շատ է մեզ»։

Այնուհետև հիշատակարանի մեջ շարունակվում էր Օ. գյուղի մեջ վանեցու հաստատվելը, ժողովրդի հետ յուր վարվելու եղանակը աշխատությունը նախապաշարմունքների նշանակությունը բարձրացնելը, յուր ամուսնությունը և այլն։

Այս ամենը թռուցիկ հայացքի տակով անցկացրեց քննիչը և կարդաց.

— «18... թվական. երկրորդ տարի. 5 փետրվարի. Օ. գյուղ։ Գործերնիս լավ կերթա. տանուտեր Կարապետի ագիտություն մեզի կնպաստե, ինքն կառաջարկե շատ քչե շահվիլ. զարիբ ես, կասե, օգտվի՛ր.— ալ չգիտե խղճուկ, թե նոր ահա երկրորդ տարին կսկսի մեր գալն, և այսօր մենք տոկոսով բավականաչափ դրամ տված ունինք»։

«20 փետրվարի։ Քաղաք գնացինք տնային պիտույք ընելու. կտավեզենք ծրարած լրագիր զմեզ գնած կտավեն առավել ծառայեց. Տաճկահայքին մեջ քանի մը հիմարք ձերբակալված են եղած.

երեկ հաջողեցանք անոնց խենթություն ազգային նահատակության անվամբ այստեղ համբավել, Խարիտոնի Խորենին կողմանե մի նամակ շարադրեցինք և ասոնց կարդացինք, որ իբր թե ազգին անպարտ զոհերուն ընտանիք անսնունդ մնացած են, ազգայնոց ձեռնտվություն կհուսացվի. Հայրիկին կողմանե ալ Խորենին նամակին մեջ շրջաբերականի մի մասն եղած հավելինք, հորում, Հայրիկ, իբր թե, կառաքն յուր ճետեր ի սփյուռս աշխարհի՝ ազգասեր հայերու գթության փշրանք ժողովելու։ Մեր հանճարեղ գյուտին սկզբնական հաջողություն առավել շահավետ ապառնի կավետե։ 15 ռուբլի հանգանակեցինք և Կարուց վերայով տեղ հասուցած քարոզեցինք։ Մասամբ իրավ ըսին՝ դրամ մեր քովեն ելավ. Հ. գյուղացի մաշադի Օրոջին տոկոսով տվինք, վեց ամիս ժամանակամիջոցով, քսան ռուբլի հաշված»։

«10 մայիսի։ Փա՛ռք ճակատագրույն, մեր կարծածեն առավել երջանիկ ենք եղած. ընդհանուր խլրտում մի կհուզի այս կողմեր. Ա. Ընծայնոց զինքն գլխավոր գործակալ կքարոզե ամենուրեք. այս ավուր իրմե ստացած նամակիս մեջ ծարայալ վկայագիր մը զիս Արարատյան լայնատարած դաշտին կեդրոններու միույն վարչության մենաշնորհությունը. կու տա։ Հունձք բազումք են և մշակք սակավք, կգրե սիրելին Ընծայնոց, հնձե՛ որքան ուշիմությունդ կթելադրե. ցորենին մի մաս սեպտեմբերանիդ մեջ ամբարե, մյուս մաս մեզի բաժին հա՛ն, իսկ աննշան մասն ալ հարդին փոշուն հետ աչքեր խտտղելու համար խստաշունչ հողմոց բերան տալուն և տեղ հասուցանելուն մի՛ հուլանար. երբեմնապես քո գործունեությունեն բարձրաբարբառ հաշիվ տալ պարտք համարի՛ր, նվերք և դրամք, իբր թե, մեր Հակոբոսին ձեռք կեդրոնական հանձնաժողովին ուղարկած նշանակե մի՛ մոռանար զՀայրիկ ցուցանել ատենապետ կեդրոնին, անոր անուն միակ զորավիգն է մեր քաջակորով շահադիտական ձեռնարկությանց»։

«Խորամանկ Ընծայնոց շարունակ կատեր զՀայրիկ և կհայհոյեր, իբրև անբարբարոս գինքն Վարագեն վանելու առթիվ. այսօր նա ելեր՝ հանուն Հայրիկի զաշխարհ կթնդեցնե։ Վնաս չունի, մենք ևս չենք սիրեր զՀայրիկ, բայց ի պահանջել հարկին նույնը կնենք»։

«7 հունիսի։ Ա. Ընծայնոց կգրե, թե մի շահավոր առևտուր սկսած է ինքն մեր նախկին ընկերաց հետ. արագաձիգ ռուսական ձևի հրացանք մեծ արժեք ունին ի Տաճկահայս, քյուրդեր հոտերով ոչխարք չեն ինայեր մի հատ ձեռք բերելու։ Ես կգրե Ընծայնոց, հարյուրեն ավելի ժողոված և վանեցու տարազ մտած հայախոս քյուրդ Մստոյին ձեռք Իգդիրի ճանապարհով ի Բագրևանդ հասուցած եմ. այնտեղ մեր Արտակ Պալունին կսպանա և քյուրդերուն մեջ ի վաճառ կհանե։ Այստեղ երեկ.

կասե, մի հատ մը ինքս վաճառեցի 25 ռ. ճանապարհորդ բժշկի մը։ Այժմ, կասե Ընծայնոց, հրացան և փամփուշտ խնդրել օգտավետագույն կդատեմ, քան դրամ, զի հանուն քյուրդերուն և տաճիկներուն ձեռք հարստահարյալ հայ եղբարց՝ հրացան և փամփուշտ խնդրելը տեղվույն թեթևամիտ դյուրահավանաց գրգիռը կշատացնե և մեր ոտաց ներքո հողն առավել ամուր կընե»։

«30 հուլիսի։ Ա. Ընծայնոց կկշտամբե զմեզ ցարդ և ոչ մի հրացան չառաքելուս համար. երկիցս կգրե՝ Մստոն առ քեզ է ուղղվեր և ձեռնունայն վերադարձեր։ Հավատարիմ աղբյուրներե ինքը լսեր է, թե մեր կողմեր, մանավանդ Ա. քաղաք, հայրենասիրական վառ եռանդ առավել շատ կարելի է արծարծել, իսկ այնտեղ հրացանի փամփշտի մեծ պաշար կա և հեշտիվ ի ձեռս կուգա»։

«Միրեմ զքեզ, ըստ Հայրիկին, միամիտ իմ Ընծայնա՜ց, մենք արդեն քո առաջին նամակ ստացանք և անհապաղ գրեցինք ի Վան, կոչեցինք մեր եղբայր Մարտիրոս և 150 հրացան 10.000 փամփշտաց հետ առանց մի վճարքի Մարիղամիշու կողմով եղբորս ձեռք Կարին ուղարկեցինք. եթե Բագրևանդա սովալլուկ քյուրդեր հայերու հոտեր կողոպտելով կարող են լավ գին վճարել, Կարնո ճոխ տաճիկներ և բազմաթիվ քյուրդերու ազգապետք, որք անպակաս կվխտան անդ, միմյանց ընդդեմ մրցելով՝ տասնապատիկ կհատուցանեն»։ «20 օգոստոսի։ Մարտիրոս կգրե, թե ինք երկու ավուր մեջ վաճառեց հրացաններ և կխոստանա յուր բաժին դրամ ի Վան տանել և փութով վերադառնալ. հոգ չէ, արժանի է մշակն վարձու յուրո. սակայն, անիծյալ Սադայե՛լ, օր-ավուր տարակուսանք կալեծփե ներսս։ Մարտիրոս շատ ուշացավ. արդյոք քյուրդեր կողոպտեցի՞ն, թե հարազատ զհարազատն դավաճանեց։ Վերջինս առավել հավանական կթվի։ Մարտիրոս խոժոռեցավ, երբ վաճառքեն քառորդ մասն միայն իրեն բաժին որոշեցի. ըստ իս, կբավեր. բազմահմուտ խոհարարին ձեռք պատրաստած անուշահամ կերակուր ամենոք կարեր ուտել...»։

Այս տեղից սկսած քննիչը երկար չէր կանգ առնում երևելի հիշատակարանի վերա. նա հետևում էր գտնել յուր գործին վերաբերյալ հարակից դեպքեր։

Եվ ահա, բավական թերթ անցնելուց հետո, նա կարդաց.

«18... թվականի, երրորդ տարի, 20 սեպտեմբերի։ Բախտին ժպիտ քաղցր է առ՝ իս. գավառիս հզորագույն աստիճանավորներեն ամենազորավոր և ամենավտանգավոր մեզ յուր գաղտնի խորհրդական ըրավ, յուր բարձր հովանավորություն մեր վերա ունիլ խոստացավ. մենք այսուհետև յուր ծածկապահ դպիր և նոտարն ենք»։

«18... թվական, չորրորդ տարի...»։

Քննիչը բարվոք դատեց լռությամբ կարդալ և անցնել։ Նա երբեմնապես մի-մի կես-հեգնական, կես-արհամարհական և կես-հանդիմանական ակնարկ էր դարձնում դեպի Մելնիկովը և նրա ականջին փսփսում։

— Վերջապես, ներողություն եմ խնդրում, Վլադիմիր Նեստորի՛չ,— ասաց նա,— որ ես ստիպյալ եմ այս հիշատակարանից մի քանի կտորներ, որոնք ձեր պատիվն են շոշափում, իսկ մեր գործի շատ մութն և կարևոր կետերը լուսաբանում, իբրև քաղվածք արտագրել։

Նա կարդաց։

«18... թվական, հինգերորդ տարի. 25 հոկտեմբերի։

«Այս գիշեր Մելնիկով հանձնեց մեզ կնքելու յուր համար շատ չգրված մուրհակի դրոշմյալ թղթեր և բավականին հասարակ գրելու թերթեր. մենք փոխեցինք նրա հանձնարարականով բաղում մուրհակաց թվականներ»։

«...Այս անձ, որքան խարդախ, այնքան սնապարծ, ստախոս է. ցայսօր յուր շատ խոստումներեն և ոչ մին կատարեց, շարունակ կուզե յուր ազդեցությամբ մեզ ընկճած պահել, կխոստանա յուր հովանավորություն, եթե մեր գաղտնի գործեր հայտնվելու ըլլան. մենք ալ բառախաղերով իրեն հասկացուցինք մեր ուժ։ Այլևս անազան է, ինքն այժմ մեզմե առավել կախումն ունի, քան թե մենք իրմե. սպառնացինք զինքն երևան հանել. եթե մեզի շարիք մը հասնել դիպի»։

Քննիչը նորից լռեց. մոտ երկու ժամ հիշատակարանից կտորներ էր արտագրում նա։

Սարսափելի է Բալասան աղայի և յուրայնոց դրությունը, երբ քննիչն ընդհանուր ուշադրություն հրավիրեց և կարդալով մի առ մի համեմատեց երեցփոխ Ղազար բիձի լուսամտից և վանեցու տանից հանած թղթերը։

Այստեղ պարզվեցան Մելնիկովի թելադրությամբ կատարված բոլոր չարիքները— Դավակոթենց Հայրոյի ձեռքով Դոնդարենց Ասոյի սպանությունը, Արտեմ Սերգեյիչ Գոմշակեբյանցի անկումը, Սամփսոնի դեմ խմբագրված մեղադրականը, Սիսակի ձեռքը կեղծելու փաստերը, նրա կողմից շարադրված նամակը, Խուդոյի տանուտերության մանրամասնությունները, Սիսակին կործանելու ձգտումներն և այլն, և այլն։ Մի խոսքով այն ամեն ապացույցները, որոնցով քայքայվեցան Մելնիկովի ցանցերը, որոնցով պարզվեցան խաբեբա թափառաշրջիկների ձեռքով ստեղծած շահադիտական նշանավոր ձեռնարկությունները։ Բոլոր սնագրությունները, ի՛նչ և ո՛ւմ համար վանեցին գրել էր, բոլոր թղթերը, որտեղ ձեռքեր կեղծելու փորձեր ու վարձություններ էր արել, պահված էին։

Քննիչը փակեց և կնքեց ճարպիկ վանեցու հիշատակարանը և բոլոր իրական գրավոր փաստերը։ Ընթերցողի համար էլ փակվում են պատմության ամենահետաքրքիր և տխուր էջերը։

Մյուս օրը գավառական բանտն ուղարկվեցին երեք հոգի. նրանք էին՝ Մելնիկովի երաշխավորությամբ ազատ շրջող Ասատուր Դոնդարյանցի սպանության համար մեղադրված Հայրապետ Դվակոթյանցը, Բալասան աղայի քրոջ որդի Վասակը և տանուտեր Խուդոն։

Գլխավոր գործիչներից Օ. գյուղում մնացին ինքը՝ Վլադիմիր Նեստորիչ Մելնիկովը և ավագերեց տեր Սուքիասը։

Տերտերի համար բավական համարեց քննիչը գրել գործակալին, իսկ Բալասան աղայի համար ստիպվեցավ միայն հրավիրել գավառական բժշկին։

Ուրիշ անելիք անհնար էր, դեռ նոր էր քննիչը յուր որոշումը հայտնել վերոհիշյալներին բանտարկելու և Մելնիկովին դատախազի իրավանցը հանձնելու համար, որ Վլադիմիր Նեստորիչն ամենքի ուշքն յուր վրա դարձրեց։

Աթոռը չկարողացավ դիմանալ յուր վերա նստած երևելի Բալասան աղայի ծանրությանը, շրջվեց գետին, յուր հետ տարածելով հատակին վանեցու պաշտպանին։

Հարվածը խիստ էր. հանկարծական կաթվածը թուլացրեց Մելնիկովի աջ կեսը՝ գլխից սկսած մինչև վերջը։

Շատ անտանելի կացություն էր. երեք տարի թշվառ մարդը հիվանդ մնաց, ինչպես ասում են, գետնին գերի, անկողնին աքացի տալով, այն էլ՝ մի ոտքով։

Շատ բժիշկներ եկան, մեծ-մեծ այցավճարներ ստացան և դարձան, բայց ամենը միաձայն անբժշկելիության վճիռ կարդացին։

Երեք տարի էր՝ շարունակ կցկտուր և անհասկանալի բացականչություններով, ինչպես երևում է, ցանկանում էր Բալասան աղեն մի քանի խոսք ասել և չէր կարողանում. լեզվի ձախ կողմով սկսված հնչյունը անհասկանալի թոթովանքի կամ լփլփոցի էր փոխվում ձախ կիսումը, ձախակողմյան առողջ ուղեղի հոգեկան թելադրությունը խառնաշփոթ դանգված էր դառնում աջ կիսումը։

Երեք տարուց հետո իսպառ դադարեցան Վլադիմիր Նեստորիչ Մելնիկովի տառապանքները. Պարկյան քույրերը վերջապես խղճացին և նրա ցավալի կենաց թելը բավ համարեցին ետ տալ։ Մկրատը թեև բութ էր, բայց կտրեց։

Ով ոք ցանկանում է փարատել անախորժ դեպքերի անախորժ տպա-

զորությունները յուր սրտից, թող շնորհ բերե, քննությունը վերջացնելուց մոտ մի ամիս հետո Գալ-ափունենց հացատունը։

Պսակաճաշ է. տերտերը նոր վերջացրեց «Թագավոր գոլով»-ը, նորափեսա Սամփոնը կանգնեց տան վերի պատի տակին դրած բարձին, իսկ նորահարս Սոնային Գալ-ափունի կին Զարմանը պարելով, դափ ու զուռնի ուղեկցությամբ, տարավ հարսի համար պատրաստած սենյակը։

Հարսանքավորները լավ քեֆի մեջ են. խմվում է թագավոր (նորափեսի), թագուհու (նորահարսի), խաչեղբայր Մելիք-Բաղալի կենացը։

Կառավարիչ կամ թամադա է Օ. գյուղի սիրելի և միահավան քվեից առավելությամբ ընտրած, խարդախ ճանապարհներով հաստատվելուց զրկված, բայց արդարությունը պարզելուց հետո նորից հաստատված տանուտեր Արտեմ Սերգեյիչը։

— Ադա՛, ա՛ անշնորհք, տավարի հրեշտակ Գալ-ափո՛ւ,— ձեն տվեց խաչեղբայր Մելիք-Բաղալը,— չե՞ս ամաչում, մեր ավագ երեցին համեցեք չես արե՞լ։

— Էստեղ չի, չա՛րդ տանեմ, աղա խաչախպեր Մելիք ջա՛ն, տեր Սուքիաս հայրը Սևանումն ա, հիմի քեզ համար աղոթք ա անում, վեց ամսից հետո կգա ու քեզ կօրհնի։

— Խնդրում եմ՝ մեր ուրախության ժամանակ ավելորդ խոսակցությունները դադարին, «հին դարմանը քամուն չեն տալ».— մեջ խառնվեց Օ. գյուղի նոր վարժապետ և նոր գրագիր Սիսակը և յուր կողմից առաջարկեց Արտեմ Սերգեյիչի կենացը։

Երեկոյան զանգակները տալիս էին, Գալ-ափունի տան ուրախությունը դեռ շարունակվում էր։

ՎԵՐՋ

ԲՂԴԵ

Ա

ԲՈՇԻ ՏՂԱ

Կարբեցի է կոլոտ (կարճահասակ) Բղդեն։ Նա այժմ կամ ծերացած, ոտք ու ձեռքից ընկած, մի գյուղի կամ քաղաքի խուլ անկյունում կյանքի հետ կռիվս է տալիս, հոգեառի անունից օրն ի բուն սարսափի մեջ է, կամ թե սև հողի միջին որդ ու ժժմունքների կերակուր է եղել, յոթը պատան է մաշել, մարդկանց ու աստծո հիշողությունից խպառ մոռացվել՝ չիքերի կարգն է անցել։

Մեր պատմությունը սկիզբ է առնում Բղդեի պատանեկական թարմ ու գեղեցիկ տարիներից։

Այդ այն անցած, մտահան եղած ժամանակներն են, երբ հազար տեղից գուրշ ու փալասով կարկատած խուրջինն ուսը ձգած՝ ամեն մի հական մեջ հինգ չուրուկ շահու (յոթը կոպեկ) մանրավաճառի ապրանք դրած՝ գյուղական երեխայի ձեռքով կերտված խաղաշնդակի նման գլորվելով գյուղերն էր ընկնում ու շարժություն անում։

Շատ բազմատեսակ ու բարդ չէին Բղդեի ապրանքի քանակն ու տեսակները. մի երկու թոփ ասեղ, մի քանի քորոց, մատնոց, կոճակներ, կերակրեղենի համեմունք՝ զիրա, սև պղպեղ, մետաքսի թել, մի քանի գազ աժանագին ժապավեն ու երիզ՝ գեղջուկ պառավների տնարարության անհրաժեշտ պիտույքներ, ծամոն, ծծմբապատրույգ, աբեթ, հրահան, շանթաքար և այլ այսպիսի տնտեսության համար կարևոր իրեղեններն էին նորա հարստությունն և հույս ու ապավենը։

Երկու-երեք տարի Բղդեն ինքն էր միայնակ թե՛ ապրանք առնում, թե՛ ծախում, թե՛ գրաստի պաշտոն կատարում. վերջը բախտը խաղաց նորա հետ, կատաղ չարեց, սրտանց սիրեց ու մի համեստ, ծանրաբարո,

միամիտ, գլուխը միշտ կախ, սակավապետ ընկեր էլ շնորհեց, խուրջինը Բղդեի ուսից վերցրեց։ Բղդեի բեռը թեթևացրեց, Բղդեին օգնություն ուղարկեց։

Մի մարդի հետ որ բախտը հաշտվի, ամեն կողմից բարությունները սկզբումը անձրևից գոյացած սարալանջերով վազող քչքչան վտակների նման կտեղան, վերջը վտակները գոչգոչան գետերի կփոխվին ու մարդի տուն ու տեղը, քունջ ու պուճախը, ծոցն ու գրպանը կլցնեն։

Իհարկե, բախտավոր էր Բղդեն, որ մի երեկո, գյուղերից վերադառնալիս, կարբի գյուղի մոտերքը գնչուների (բոշա, ցիգան) քարավանը նրան հանդիպեց և մի շատ հաջող փոխարինություն առաջարկեց։

Բոշայի սև իշուկը հիվանդացել էր, ճանապարհի մեջտեղն երկար ու ձիգ չորս ոտքը շարդախ էր արել, տիրոջ սիրտն յուր դնչի պես սևացրել. ո՛չ ծեծ ու մահակի, ո՛չ քացու ու հոյհոյանքի էր ականջ դնում, ո՛չ բարկություն ու աղաչանք էր բանի տեղ հաշվում, և ո՛չ տեղիցը շարժվել էր ուզում։

Մոլորվել էին գնչուները. ամակտար, աշխատավոր իշուկ էր, սպանել, կաշին քերթել՝ ձեռքները չէր զոռում, թողալ, հեռանալ ափսոս էին գալիս։

Որտեղից որտեղ Արագածի իրիկնապահի գիժ քամին պտտեց, մեր Բղդեին գնչուների քարավանին դեմ բերեց։

— Ի՞նչ տամ, բոշա,— հանկարծ դուրս թռավ Բղդեի բերանից։

— Ի՞նչ կտաս, ջանիկս։

— Երկու սիլլա (ապտակ), մի քացի, խեղճ անասունը որտեղ որ է շունչը կփչի, գիշերս քաղցած գայլերի ու բուրդը թափած աղվեսների փորերը կկշտացնի, լավն էն չի խուրջինումս գտնված ծիրանի չիրը վերցնեք, կյանք ու արև ձեզ բաշխող, բազմաշարշար հայվանին ինձ թողնեք, շալակեմ տանեմ մեր գոմումը վեր գցեմ, կսատկի՝ կաշին ինձ համար տրեխ կանեմ, կհագնեմ, կօրհնեմ. կապրի՝ կժերը մեջքին կդնեմ, գյուղումը ջուր չեղած ժամանակը կերթամ ձորիցը ջուր կբերեմ, ինքս էլ կխմեմ, ուրիշի սիրտն էլ կհովացնեմ, ձեզ էլ վարձք կլինի, ինձ էլ։

Գողն ինչ կուզի՝ մութ գիշեր։ Չիրը խախալի մեջ դատարկվեց, գընչուների բոբիկ երեխաների սիրտն ուրախացավ։ Բղդեն էլ գրաստի տեր դարձավ։

Էշն էլ խելոք ու իմաստություն է ունեցել. հենց որ Բղդեի մոր գոգնոցը առջևը փռվեց, գարու հոտը քթովը դիպավ, դիրքը փոխեց, իրան ուղղեց, դարին կրտմրտալ սկսեց, քիչ-քիչ տեղիցը կանգնեց, գարին բոլոր մաքրազարդեց, Բղդեի հետ եղբայրանալն ավելի ձեռնտու համարեց, քան թե գնչուների չարաճճի մանուկների տված Հուգալի տանջանքը։

— Մեկ չլինինք, երկու լինին, իմ սիրելի բոշի տղա,— այս անունը տվեց իշուկին Բղդեն ու խուրջինը նորա պարտականությունը շինեց։

— Ջո՛շ, հա չո՛շ, չո՛ւ, հա չո՛ւ անելով, այնուհետև, սիրտն ուրախ, քեֆը քոք, դամաղը չաղ, դեմքը զվարթ՝ առաջ էր անում Բղդեն բոշի տղին ու ինքը նորա քամակից, գերեմաստի ծառից կտրած մահակը ձեռքին, լուսածեգին դուրս էր գալիս Կարբուց, մինչև իրիկուն թափառում էր Կարբու շրջակա գյուղերում, արևմտոցին մտմտալով, փնթփնթալով, Քյորօղլուի խաղերից իրան լսելի ձայնով դունդունալով, երգելով, դառնում էր Կարբի՝ աչքը ճամփին սպասող յուր պառավ Սալբի մորն ուրախացնում, նորա եփած ձավարի վռիկը (արգանակ) խփշտում, փորը կշտացնում, յուր մարմնին էլ հանգիստ տալի, բոշի տղի ոտներին էլ։

Կատաղի էին այն ժամանակվա շները, օտարական պանդուխտը մեծ դժվարությամբ էր կարողանում անց կենալ արևելյան ազգերին հատուկ գյուղական նեղ փողոցներով, փոքր էր մնում գազանները ծվիկ-ծվիկ անեին, ձիավորին ձիուց էին ներքև քաշում, եթե գյուղացիներից օգնություն ուշ էր հասնում, իսկ կոլոտ Բղդեի հետ բոլոր սարսափելի գամփռները հաշտ էին։

Հավատարիմ տնապահները, ճաշվա շոգին բակի դռան շեմքի առաջին մի կողքի ձգված, երբ Բղդեի խոպոտ հագագային ձայնն առնում էին, բրդոտ, կեռիկ պոչերն երեք անգամ գետնովն էին տալիս, ողջունելու նման մի շարժում էին անում ու նորից անձնատուր լինում բոպենելու նման մի շարժում էին անում ու նորից անձնատուր լինում բոպեական հանգստության։ Պառավուկ տատի օրորի նման անուշ էր հնչում կատաղի օտարատյացների ականջին կոլոտ Բղդեի սովորական հետևյալ մեղեդին.

— Խանում-բաջինե՛ր, թել առե՛ք, ասեղ առե՛ք, ձուք ու ծամոն առե՛ք, քիշմիշ ու նոխուտ առե՛ք, ձեր պատուվածները կարկատեցե՛ք, ձեր ակռաների (ատամ) ջաղացքը բանեցրե՛ք, ձեր կտուցը քաղցրացրե՛ք, ձեր ճժուկ-պժուկի (մանուկներ) պզզոցն ու վնգոցը կտրեցե՛ք։ Ազապ աղջիկնե՛ր, օտարի ապրանքնե՛ր, աչքի սուրմա (դեղ) առե՛ք, դեղադրիք առե՛ք, հիլ ու մեխակով բերաններդ անուշացրե՛ք, ջուր արե՛ք գլխներդ ու դոշներդ քսեցե՛ք, ջահել կտրիճների սիրտը գողացե՛ք, վիզը փաթաթվեցե՛ք, գլխներուն, թիկունքներուն բեռ դարձե՛ք։ Տո՛, սատանի ձագե՛ր, անդնջում ճժե՛ր, դուք իմ անբաժան պոչուկնե՛ր, ինձմե հեռացեք, ձեր մամերու (ատատ), ձեր աղեներու (մայր) գլուխը տարե՛ք, քաղցր քիշմիշիս տոպրակը պարպեցե՛ք (դատարկել), ծամոնիս լիքը պարկը դատարկեցե՛ք, տո՛, դևի լակոտնե՛ր, աներես սրթխնե՛ր, ի՞նչ եք չորս կողմ շարվել, ճամփաս արգելում, քելե՛ք (գնացեք), չիր, փշատ, բամբակ, ալյուր, բրինձ գողացե՛ք, բերե՛ք խուրջինս տկզեցեք, ծամոն ծամեցե՛ք։

— Դե՛ լավ, դու մեզ հայհոյում ես, հա՛, կոլոտ Բղդե՛, ուրեմն կերթանք, էլ քամակիցդ չենք ընկնիլ,— սպառնում էին մանուկներն ու հեռու քաշվում։

— Տո՛, ձեզ ղուրբա՛ն, ձեր մորը ղուրբա՛ն, լեզվիս ի՞նչ կաշեք. սրտիս աշեցե՛ք, աչքս հանեք՝ ձեն չեմ տալ, ըմեն ձեզ փեշքա՛շ, եկե՛ք, կերե՛ք, փչացրե՛ք՝ թաք ինձմե մի՛ հեռանաք,— իսկույն սիրտն առնում էր նա մանուկների և մի բուռը չամիչ հանում նրանց բաժանում։

Բղդեի ամենից արդյունատու հաճախորդները գյուղերի փոքրիկ չարքերն էին, քան թե խանում-բաջիները. բայց երեխաներից ավելի նա սիրում էր քունչ ու պուճախից իրան ձեռքով անող, մոտ կանչող գնորդներին։ Սիրուն նորահարսներն էին վերջիններս ու արբունքի մտած, իրանց ճանաչած աղջիկները, որոնց անունը լուսավորյալ աշխարհքումը «օրիորդ» բառով էր կնքված։

Բոշի տղի բնազդումն ավելի էր զարգացած, քան թե Բղդեի ուշքն ու միտքը. հենց որ տան մեծը, տան տղամարդը, սկեսուրը, սկեսրայրը, ամուսինը, տագրը, եղբայրը մի տանից հեռանում էին, բոշի տղան այդ տան առջևից անցնելուս, ոտքը ծանրացնում էր։ Բղդեի աչքն էլ յուր հարազատ եղբոր բոշի տղայի ոտքերին էր, ձեռաց նա էլ փայտն էր սուն տալիս, կանգ առնում փողոցումն ու մեղեդին զլում։

Ահա դուրս էր սողում հացատան անկյունից մարաղ մտած կատվի նման քողը մինչ կուրծքը ցած թողած, երեսը ծածկած նորահարսը, նա ձախ ձեռքով բարձրացնում էր կարմիր մետաքսյա քողը և աջով նշանացի ներս էր կանչում կոլոտ Բղդեին դեպի ամենամութ խորշը։

Մի անագյա ասեղաման, մի սև ոսկրյա դեղադրի (աչքերը դեղելու զարծիք), աչքերը թխացնող փոքր-ինչ փոշի՝ նորատի ամուսիններին գրավելու ճիշտ միջոց, մի քանի մեխակի հատիկներ, մի երկու շարք գույնզգույն դուրագին ուլունքներ—ահա սրանք էին սիրաբորբոք նորահարսի առևտրի առարկաները։ Մի մեծ ամանով ալյուր, մի երկու տասնյակ ձու, մի քանի բուռ բրինձ, ձավար, ձեթ, յուղ և տանը գտնված ամենատեսակ բարիք, ինչ կուզե թող լինի, քարից փափուկ լինի, ուրախությամբ ստանում էր Բղդեն յուր ծախածներին գին և սև իշուկի շալակը ծանրացնում։

Զգույշ էին սիրուն հարսները, նրանք շատ հեռատես են, հում գործ չեն բռնիլ, նրանք քաջ գիտեին, որ վայ կգար իրանց արևին, սկեսոր բռան մեջ կմնային իրանց ծամերից քաղած մազերը, եթե իրանց առևտուրը հայտնվեր կամ մեկը նրանց տեսներ Բղդեի հետ ձեռք ու ոտքով, իշարաթով (նշանացի) խոսելիս։ Հնարքն առաջուց մտածված էր, զգու-

շությունները ձեռք էին առնված. ահա բակի դուռը ծերպ արած (կիսաբաց) այնքան, որ աչքի մինը հազիվ տեղավորվեր, հսկում էր հարսի սրտակիցը՝ տան մեջ նորա հետ միակ խոսակից ընկերը՝ նորա քաղցրալեզու տալը՝ նորա ամուսնի մարդու տանելու քույրը՝ տանու օրիորդը։

Մի հազոց, մի թեթև ծափ աղջկա կողմից բավական էր գեղեցկուհի շողակն քնքուշիկին հակառ թոթափել յուր վարագույրի տակը հալածելու համար։

Միջանկյալ ասենք, որ վաղ ժամանակը ո՛ր տան անկյուններից մեկում տեսնեիր վարագույր կախված՝ իսկույն կհասկանայիր, որ այս տարի այնտեղ մի գեսակ է կատարվել, տան կեցողների թվումը մի չիսուկան անդամ է ավելացել, տան ջահել տղամարդի կողքը տաքացնող է եկել։ Մինչև տարին չբոլորվեր, ո՛չ վարագույրն անկյունից կվերացվեր, ո՛չ հարսի երեսից՝ քողը. մի օտար ոտնաձայն առնելու պես, յուղը կրակին էրելուս լիներ, հարսը պարտական էր ձեռքից թողնել, վարագույրի տակը խցկվել։

Կոլոտ Բղդեն վարժ էր յուր արհեստի մեջ. օրիորդի նշանները նրան էլ զգաստացնում էին, առաջ էր գալիս նա բակի մեջտեղն ու իր նշանավոր երգն շարունակում։

Շատ լավ գիտեր Բղդեն, որ ինքն ուրիշ շարչիների վերա մեծ առավելություն է ստացել յուր մատն եկած գյուղերումը. այդ մի գաղտնիք էր, թե ինչո՞ւ ամենքը վստահ են կոլոտի հավատարմության վերա, ոսկին որ սինով (ափսե) դրած լինի, Բղդեն վրեն խեթ աչք չի ծռել,— ահա՛ այս կարծիքն էին կազմել գյուղացիք Բղդեի մասին։

Բայց թե այդպե՞ս էր արդյոք, ոչինչ բանի ձեռնամուխ չէ՞ր լինում նա տան ադամորդի չեղած միջոցը, խուրջինի մեջ կամ գրպանը չէ՞ր մտնում տնային որևէ գործիք,— այդ Բղդեին ու սատանային էր միայն հայտնի,— ատված այդպիսի տեղերումը գործ ու հաշիվ չունի։

Այսքանը միայն պարզ է, որ ամիսը մի անգամ կոլոտ շարչի Բղդեն երկու լիքը մագե թեռեր (պարկ) միմյանց կարած, յուր սիրելի բոշի տղին բարձած, մի փայտյա խթան ձեռքին, բղելով, Աբարանու եղնաքարավանի հետ ճանապարհորդակից եղած՝ անցնում էր Աշտարակու կամուրջովը դեպի Երևան։

— Ջա՛ն, ջա՛ն,— նորա շուրջը ոստոստալով՝ ճամփու էին դնում Բղդեին գյուղական մանուկները մինչև կամուրջը,— Բղդեն յուր գողացած մանրուք տանում է Երևան ծախի, ապրանք բերի, երկու-երեք օրից հետո լիություն կընկնի, բերաններս կբաղցրանա։

Այս՝ շարչիության երրո՞րդ, թե՞ չորրորդ տարին էր։

Բ

ԿԱՐԲԻ ԱՎԱՆԸ

Պատմության մեջ շատ վաղ ժամանակներից է հայտնի Կարբի ավանը, նորա հոչակի համար, արդարև, մեծ հիշատակություններ չկան, բայց ի հնուց անտի Արագածոտն գավառի արևելա-հարավային կեսը Կարբու անունն է կրել, Կարբու գավառ է կոչվել։ Արագած մեծանիստ ու ծաղկավետ սարի հարազատ զավակ Քասախ գետը, թողած յուր հայ աշխարհքի համար պարծանք, քրիստոնեության օրորան էջմիածինը, ահեղազոր Տրդատի սիրելի մայրաքաղաք Վաղարշապատը, որի դաշտերը ոռոգելով, որի հողը լիղելով գնում, ողջունում է հայ աշխարհքի Մայր-Արաքսին և նորա ծոցումը հանգստանում, այդ Քասախն էլ, ասում ենք, շատ երկար ժամանակներ Կարբու գետ է կոչվել, Կարբու անունովն է ճանաչվել։ Այսքանը բավական չի, մինչև այսօր մի երգի վերջավորություն—թափշուրմա կա, որ Կարբուն վաճառաշահ քաղաքի փառքն է ընծայում։ Եթե երգը մոռացվել է, որից շատ պատմական մանրամասնություններ կարող էինք հետևցնել, բայց թափշուրմի տողը շատ բան է պարզաբանում։

Ահա թե ինչ է պատում իբրև առած ժողովրդի բերանում.

«Դուքան-բազարն է Կարբի»։

Իսկ դուքան-բազարներ միայն հին ժամանակը մեծամեծ քաղաքներում են տեղի ունեցել։

Քանի մի տարի առաջ մեր աչքով տեսած բանն է, քարակույտերի ու ողբալի ավերակների խառնիխուռն և անկանոն դիզվածքներ էին Կարբու մեծ մասը. տեղ-տեղ միայն տխուր տպավորություններ էին անում մարդու վերա ավերակների մեջ ցցված անշուք բնակարանները, որոնք կես գարից գեսը կարկատվել, վերաշինվել ու իրանց տան տեղ են տվել Հին Բայազետից գաղթած մեծաթիվ գաղթականության մի փոքրաթիվ հատվածին, և ինչ շենք ու շինություններ. հին փառավորության հետքը չի նշմարվում ո՛չ հիմա, ո՛չ մոտիկ անցյալումը, անճաշակ ու աղքատիկ միահարկ խրճիթներ են բուսել կամարակապ և քարակերտ պալատների տեղ։

Հին հոյակապ քաղաքից շեն և անվնաս էր մնացել միայն հինավուրց սակավաձև ճարտարապետությամբ կառուցած ամրապինդ սուրբ տաճարը, դրանք են Կարբու մայր եկեղեցին և յուր նշանավոր զանգակատունը՝ մի քանի կանգուն տեղ իրարից անջատված, նրանք մշտամռունչ

ականատես և կենդանի վկա են եղել այսօրվան փլատակների նախկին փառազարդություններին։

Դարեր եկել, սահել էին, կործանիչ բռնակալ ձեռքեր խարխաբել, հիմն ի վեր էին տապալել Կարբին, նորա ամեն մի քարը տասն անգամ շրջշրջել էին, թե ինչ է, իրանց ագահ ընչաքաղցությունով կարողանան մի պահեստի տեղ, մի ծածկած գանձ գտնել. բայց աներևույթ մատն ամենքի վերա սարսափ ու զարգանդ է ազդել և թույլ չի տվել անսուրբ ձեռքերին դիպչել, մոտ գալ յուր նվիրական տանը։

Հարկավ, մի սուգ անող, մի լալկան պետք էր այս լուռ դամբարանի վերա և հենց այդ ողբերգուն մնացել էր աստծո սուրբ տաճարը՝ Կարբու եկեղեցին։ Սև-սև քարերի ծերպերից բուսած կանաչներն են տառապյալ և վշտակոծ այրու գզգզած մազերը, պատերի և առաստաղի վերա մնացած խոնավության հետքեր են նորա չորացած արտասուքը, տեղ-տեղ բնության հարվածներից մաշված և դուրս թափված քարերի խոռոչներն են նորա վերքերը։

Լռել են Կարբու սաղմոսերգությունները, այլևս չի հնչել ժամ հրավիրող կոչնակի ձայնը և միայն գլխակեր բուն փոխարինել է կոչնակ զարկող ժամկոչին։

Այսօր էլ չեն քերվել Կարբու եկեղեցու Կիզի-մատուռ անունով զանգակատան գլխից գիշակեր թռչունների ապականությանց հետքերը։

Կարբու դիրքը ներկայումս խիստ մեծ չէ. բայց ինչպես երևում է, նա շատ լայնանիստ տեղ է բռնել. բուն Կարբուց մի ժամաչափ հեռու մի ավերակ կա, որ հին Կարբու անունն է կրում. այդքանով էլ որ չբավականանանք, շատ անգամ ամայի և խոպան տեղը վարելուս Կարբու շրջակայքում՝ գութանի խոփը բանդ է ընկնում մի-հին պատի, մի կիսաքանդ շենքի, որից երևում է, որ յուր ժամանակին նա մեծ տարածություն է ունեցել։

Բայց զարմանք բան է, թե այդ նշանավոր քաղաքն յուր բազմամարդությունով ինչպե՞ս է կառավարվել առանց ջրի։ Անուշահամ Քասախ գետը, որքան և Կարբու անունովն է կոչվել, բայց կարբեցուն միշտ սակավամատչելի է մնացել, անդնդախոս ձորը, իր միջով գժի նման գոռում-գոչում անելով վազում է Քասախը, յուր վիթխարի ժայռերով և դժվարագնաց մուտքով այսօր էլ անհյուրասեր է դեպի Կարբին։

Մի գետակ կա միայն, այդ Դալի-չայ անուն կրող Արագածի զավակներից մինն է, որ ոռոգում է Կարբին և յուր շրջապատող Արագածի լանջի վերա ընկած գյուղերը. իսկ այդ գետակը շատ անբավականացուցիչ է Կարբու և մի քանի ուրիշ գյուղերի համար։

Այսպես թե այնպես՝ Կարբին մի պանծալի դիրք է ունեցել և յուր

ցրված ու տարագրված ժողովուրդը վաճառականության ու ճարպկության մեծ ընդունակություն է ցույց տվել։

Միայն «դուքան-բազարն է Կարբի» խոսքերը չեն, որ կարբեցու առևտրականության հաջողության ապացույց են. տեղական բնիկները կարբեցուն կոչել են և կոչում են սատանախաբ կարբեցիք։ Այս խոսքերին իբրև հիմունք մի կարճ առակ ևս մնացած է, որով որոշվում է կարբեցու սեփական ձիրքը։

Ահա այն առակը։ Մի անգամ որպես թե մեծ վիճաբանություն է ծագել կարբեցու և սատանայի մեջ. արևի ծագումն է եղել նրանց հակառակության շարժառիթը. նրանցից ամեն մեկը պարծեցել է յուր հեռատեսությամբը. պայքար են մտել, դաշն են կապել, մեծ վճարք են դրել, թե ո՞վ իրանցից շուտ կտեսնի արևի ծագումը։

Արշալույսից էլի կանուխ՝ երկուսն էլ կանգնել են որոշյալ տեղում. դեպի արևելք է սևեռել յուր աչքերը սատանան և սրտատրոփ սպասել է երկրի լուսատուն տեսնելու և դաշը շահելու։ Դեպի ավագ Մասիսի երկնածայր և ալեզարդ կատարն է նայել ճարպիկ կարբեցին։

— Հաղթությո՛ւն,— ծափ զարկելով ձայն է տվել կարբեցին և ցուցամատով պինդ խթել է յուր հակառակորդի կողքը։

— Ի՞նչ է։

— Ջոռն ու ցավը պինդ է, կույր ես ու աստծու երեսից ընկած, ի՞նչ ես դունչդ արևելք ցցած մնացել՝ գարու հոտին քիթը վեր քաշած իշի պես, աչքդ արևմուտք դարձրու, ահա պսպղում են Մասիս պապի արծաթափայլ մազերը, չե՞ս տեսնում, ձյունի ոսկեշող հատիկներն անգին ալմաստի պես աչք են ծակում, հիմի աչքերիդ եղած լույսն էլ կկըտրեն։

— Իրավ որ, աչքով էլ, մտքով էլ կույր եմ եղել, որ աշխարհքի ստեղծագործությունից մինչև էսօր հարյուրավոր փորձանք եմ հասցրել՝ այս աշխարհքին ու ոչ մի օր չեմ նկատել, թե Մասիսն է յուր վիթխարի հասակով արևին առաջին բարև տվողը,— խոստովանում է անկոտրումը։

Ուղիղ էր սատանայի խոսքը. հայ աշխարհքի համայն լեռների կատարների վերա է մայր Մասիսի՝ սրբազան Արարատա հսկայական հովանի աչքը. Մասիսի գագաթի արևելահայաց կեսն է ծեգաբացին դիմավորում լուսավորների թագավորին, իսկ երեկոյան ժանգառքից առաջ, նրա արևմտյան երեսն է առնում աշխարհքիս արտաքին մակերևույթը խավարի մեջ թողնող հեռացողի վերջին հրաժեշտը։

Ահա՜ այդ ճարպիկ ժողովրդի, այդ առևտրականության ընդունակ մթնոլորտի զավակն էր կոլոտ չարչի Բղդեն։

Գ

ԲՈՒՆ Ո՞ՐՏԵՂԱՑԻ Է

Կարբեցի էր, ասում ենք, կոլոտ Բղդեն, Կարբու հող ու ջրի սնուցած, մեծացրած, չարչիության պատվին արժանացած այդ գունդ ու կծիկը, այդ փշատի ծառի ծռտիկ-մռտիկ բունը։

Եվ արդարև, մարդ մոլորվում է աստծու քնած ժամանակ ստեղծված այս մարդանման զանգվածքին մի ուրիշ առարկայի հետ համեմատություն անել կամենալիս, իսան ասես՝ իսան չէ, ադամորդի ասես՝ ադամորդի չէ. մարդ լիներ, մարդանման ուղղակի յուր ճանապարհը բռնած առաջ կերթար կամ ետ կգար, չորքոտանի՞ է, այն էլ՝ հազիվ թե, մենք տեսել ենք, որ չորքոտանիքը մի բնորոշ ման գալու ձև ունին. իսկ մեր տնաքանդը գոնե երկոտանու և չորքոտանու մեջտեղը մի ուրիշ շարժուն էակ ներկայացներ։

Ամենից հաջող համեմատությունը հնարել են կոլոտ Բղդեի ման եկած գյուղերի երեխայքը։

— Է՛յ, հրե կոլոտ Բղդեն յուր բոշի տղին առաջն արած՝ Մողնու Թառովը ներքև է գալիս, հենց իմանաս՝ արջի երկու տարեկան քոթոթ լինի։

— Արջի քոթոթն էն չէ՞ր, որ հերու Թարվիզի լոթիքը բերին մեր կալումը խաղացրին, նա խո դուզ ման գալ ուներ։

— Դե՛ ասա նաև ուղտ է, էլի, դոշը դուրս պրծած, ոտ փոխելուս էլ ընգլնգում, տմբտմբում է։

— Ընչի՞ եք ձեր հոգուն մեղք անում, ուղտը, ղորթ է, գնալիս տրմբտրմբում է, բայց ճամփեն ուղիղ է գնում։ Բղդեն էդ շնորհքն ունի՞, մի լավ մտիկ տվե՛ք,— մի ոտն աջ է գցում, մինը՝ ձախ, օձի պես կոլոլ-կոլոլ է անում, կուտապ-կուտապ է գալիս։

— Թե ըտենց է, օձ ասենք ու պրծնենք։

— Օձն ափսոս չի՞, բարա՛կ, շարմա՛ղ։

— Բաս ինչի՞ նմանեցնենք։

— Ես գտա,— ուրախությունով առաջ վազեց մինն այն կողմիցը,— ծառի փտած քոթուկը (կոնդ) որ ճղում ես, վախտ-վախտ միջից միահավասար կարճ ու հաստ որդեր են գլորվելով ներքև ընկնում, ո՛չ գլուխն է երևում, ո՛չ պոչը, շարժվելուս գլուխը աջ է գնում, պոչը ձախ, իստակ ծառի որդ է, որ կա։

— Ծառի ո՛րդ է, ծառի ո՛րդ է Բղդեն,— թուկոտացին, կայտառեցին միասին ծափ տալով մանուկները։

— Ծառի ո՛րդ կոլոտ Բղդեն, ծառի ո՛րդ կոլոտ Բղդեն,— պար բռնեցին ու շրջապատեցին նրան։

Այդ համեմատությունն ընդհանուր հավանություն գտավ. Բղդեի կոլոտ անունին մի ուրիշն էլ ավելացավ։

Ջար մանուկների խոսքին կշիռ չդնելով, մենք ճանաչենք նրան ընդմիշտ կոլոտ Բղդե և ասենք, որ կարբեցի էր։

Բայց ցավն այն է, որ մեր կտրական վճռովը խիստ մեղանչած կլինենք. հեշտ չէ որոշակի անուն տալ նորա հայրենի տեղին։

Ա՛յ թե ինչպես։

Ամենքիս հայտնի է, որ դարուս առաջին քառորդին մի մեծ գաղթականություն տեղի ունեցավ հայ աշխարհքումը։— Կարապետ սրբազանը պոկեց օսմանցուի բաժին Հայաստանից մի ահագին բազմություն և բնակեցրեց ռուսի ձեռքը նոր անցկացրած հայ երկրում։

Դրանցից դարսեցիք Գյումրի եկան, արզրումցիք՝ Ախլցխա և Ախալքալաք, բասենցիք՝ Ապարան. իսկ հին բայազետցիք երեք կտոր եղան։ Նրանցից մի մեծ հատված իրեն համար կենտրոն ընտրեց Սևանա լճի չորս կողմը։ Նրանք՝ իրանց հին հայրենիքի անունը իբրև մխիթարանք և սրտերին հովություն բերած՝ հիմնեցին համեղ, անմահական իշխանաձկների հայրենիքումն իրանց նոր քաղաքը և Նոր Բայազետ կնքեցին։ Մի քանի տուն էլ հարուստներից հարմար դասեցին Ղարսից Գյումրի փախած հաջի աղաների հետ հարևանություն անել, ուղղակի քշեցին եկան Գյումրի. իսկ մի փոքրիկ կտոր էլ ընդհատվեցին իրենց հայրենակիցներից և Կարբի հին քաղաքատեղումը բնակվեցին։

Եվ ահա այս Կարբի գյուղում, Բայազետից գաղթելու առաջին տարին, ամեն ծննդաբերներից շուտ, Կարբի տուն գալու ոտնամուտը շնորհավորեց Պողոս աղայենց հովվի կին այրի Սալբին և շնորհավորեց Կարբուն մի անդրանիկ արու զավակ՝ մեր պատմության հերոս կոլոտ Բղդեին։

Ո՞րտեղացի է ուրեմն մեր պատվական բարեկամը. կարբեցի ասելով՝ Բայազետին կվիրավորենք, բայազետցի կոչելով՝ Կարբուն սրտամնա կանենք։

Թող կոլոտ Բղդեի երկու հայրենակիցներն, ինչպես կամենան, իրար հետ հաշտվին, մենք աչքներս բաց ենք արել և ոչ միայն Բղդեին իրան, այլև Կարբու բոլոր ներկա բնակիչների համար կարբեցի անունն ենք լսել. այդ հայրենիքն էլ նրան կսեպհականենք։

Եվ մեղանչած էլ չենք լինի։

Երկու հայրենիքը՝ Կարբին և հին Բայազետը, իրավ է, երեք օրվան ճանապարհ միմյանցից հեռու են. մինը Մասիսի հարավային երեսումը՝ օսմանցուի ձեռքին է մնացած, մյուսը Արագածի թմբին ռուսի սեփա-

կանությունն է դարձած՝ բայց մի որակության մեջ, կարծես, միանում են. թե՛ Բայազետումը ծնած ու մեծացած և էսօր էլ այնտեղ մնացած հայը և թե՛ Կարբեցու էսօրվա պտուղները, կարծես մի խնձոր լինին՝ միջից կիսած, մի հոր ու մոր դատած ու բերած զավակներ։ 50, 60 տարի է անցկացել, գնալ, գալ, բարեկամություն, ազգականություն մոռացվել են, երկու-երեք սերունդ են մին մնի հաջորդել, բայց երկու ժողովրդի դեմքերի երկարավուն գծագրությունը, բարբառը (որ կարնեցու և ալաշկերտցու բարբառից կազմակերպված մի խառնուրդ է՝ ավելի դեպի Ալաշկերտցին հակված հնչումով), ներքին տնային սովորությունները (թող Նոր Բայազետը ճարակող վերջերումս նորամուտ կեղծ քաղաքակրթությունը և տնավեր շռայլությունը), և որ գլխավորն է, բնածին ընդունակությունները միևնույն հոր զավակն են համարում նրանց։ Թե՛ բայազետցին և թե՛ կարբեցին, երկուսն էլ ճարպիկ են, երկուսն էլ խելոք են, երկուսն էլ ամեն բանի մեջ կտրուկ են, ջրաղացի բուզը ձգես՝ դուրս կգան, քարիցը յուղ կհանեն։

Եվ ի՞նչ է այստեղ ապացուցվում։

Ա՛յ, ի՞նչ։ Մենք տեսանք, որ հին կարբեցիք «դուքան-բազար» են ունեցել, վաճառական ժողովուրդ են եղել, «սատանախաբ» անունն են տարել, ուրեմն խելքով օժտված են եղել. իսկ նոր կարբեցիք նույն ընդունակությունները և նույն բնավորությունն ունին. կճուճը գլորվել, խուփը գտել է. արժանավոր հորն արժանավոր որդիք են վիճակվել։

Շատ չէին Կարբու նոր բնակիչները. 50, 60 տուն ընդհատվեցին ամբողջից և Կարբու ավերակները շենացրին։

Վարչությունը չմիջամտեց նրանց տեղաբնակության բաժանման մեջ։

Իրանց միջի պատվելիները, որոնք աղայական իրավունք և նահապետական արտոնություն էին վայելում, այստեղ էլ նույն մենաշնորհությունն ունեցան, խելք-խելքի տվին, չափեցին, ձևեցին, ավերակները հետախուզեցին, լավ տեղերն իրանց վերապահեցին, մնացածը հասարակ ժողովրդի վերա բաժին-բաժին արին։

Սալբին երիտասարդ այրի էր, նորա ամուսինը, միաչքանի Գոպեն, Պողոս աղայենց հին տան ամալաներիցն էր, աչքը բացել և Պողոս աղայենց շնչավոր կենդանիների թվումն յուր գլուխն էլ տեսել էր։

Եվ որովհետև ամալան մի տեսակ սեփականության պես բան է յուր տիրոջ համար, թեև ոչինչ քաղաքական կամ մասնավոր պայմաններով կապված չէ, այլ նահապետական ավանդականության վերա է միայն հիմնված, այդ պատճառով աղայի պարտականությունն է յուր ստորին անդամի, յուր հացափոր ծառայի,— յուր ամալայի ամենատեսակ հոգսերը քաշելու։

— Տո տղա՛, Գոպե՛, էդ ի՞նչ ա։

— Գլխուդ դուրբան, դառն ա,— ասաց և թազիքյա կուլաբ կոչված հովվական վերարկուի տակից մի կայտառ, ձյունանման սպիտակ, ճակատը ծաղիկ, սիրուն գառնուկ հանեց Գոպեն, գլուխ տվեց յուր տիրոջը ու տան մեջ բաց թողեց։

Հունվարի վեցն էր այդ օրը. Պողոս աղան յուր ընտանիքի հետ ջրօրհնյաց հանդեսին եկեղեցումը ներկա լինելուց հետո՝ յուր գերդաստանի արական սեռի հետ նստած՝ ուրախ տրամադրությամբ ճաշ էր վայելում։

Երեխայքը ճաշը թողած՝ վեր թռան և գառանը փաթաթվեցին։

— Տո տղա՛, Գոպե՛, դու էդ գառը էս ձմեռվա կիսին հո՞ւստ ես բերում ես,— հարցրեց քաղցր դեմքով Պողոս աղան։

— Գոպեն քո ոտի տակի հողն է, քո սայից (ի շնորհն քո), աղա, բալաք (խայտաբղետ) մաքին (էգ ոշխար) աշնան դեմ ծաներեր էր, երկու ամիս կա, որ ծնավ, էս լե պահեցինք, աչք ունեցանք վրեն, ջոջացրինք ու բերինք քեզ փեշքեշ,— ասաց Գոպեն և կրկին գլուխը տաճկական ձևով ծռելով՝ աջ ձեռքը նախ գետնին տվեց, ապա բերանին մոտեցրեց ու գլխի վերա դրեց։ Այս նշանակում է՝ ես կռանում և իմ գլխի տիրոջ ոտքը համբուրում եմ։

— Տոդա, դու որ մեզի ուրախացրիր էս ազիզ օրը, ես էլ քեզի կուրախացնեմ. քո բեղեր, հա՛, հա՛, սևացեր են, ջոջցեր ես, օրերդ հասուկ են, էս բարեկենդանքին քեզ կկարգենք (պսակել), մեր մեհտար (ձիապան) Բդեի խորոտիկ Սալբի աղջկան կառնեմ քեզի։

Գոպեի քեֆը քոք եղավ. Պողոս աղան ասածը կատարեց և հետի բարեկենդանաներին մի շաբաթվա մեջ նշանեց ու պսակեց նրան։

Աղայի ավանդապահ ամուսինը՝ Ալմաստ խաթունը, շատ դիմադրեց, պնդեց պահպանել տեղական սովորությունը. նախ նշանել, մի երկու տարի նշանած պահել, վերջը պսակել. բայց Պողոս աղան յուր խոսքին տեր կացավ և նախնական սովորությունն առաջին անգամը քանդեց։

— Աշխարհքը քեզ կբամբասի,— քիթը ցցեց խաթունը։

— Ոչ ոք բան չի ասիլ,— ապացուցեց աղեն,— եթե մենք ուրիշ տեղից աղջիկ ուզեինք, բաշլուղ, սուդ հախի[1] տայինք, ամեն ոք իրավունք ուներ տրտնջալու կամ մեր վերա խոսելու. բայց մենք մեր մի

[1] Բաշլուղ և սուդ հախի. առաջինը նշանակում է գլխագին, երկրորդը՝ կաթի գին, սոքա ահագին վճարքներ էին, որ հին ժամանակը փեսացուն տալիս էր յուր աներոջը։ Սուդ հախին զորանչին հասուկ ընծա էր։ Այժմ էլ շատ նահապետական տեղերում դեռ չի վերացել այս սովորությունը։

ամալայի աղջիկը մյուս ամալայի տղին ենք ուզել, տղեն էլ մերն է, աղջիկն էլ, երկուսի ուտեցնող, հագցնողն էլ մենք ենք, երկուսն էլ մեր տան անդամներն են, մի օր պետք է այդ պսակը կատարեինք, և քանի շուտ՝ այնքան լավ։ Ուրիշ բան էր, եթե մեր ամալայի աղջիկը տայինք ուրիշ աղայենց ամալայի տղային կամ նրանցը մենք ուզեինք, այն ժամանակ նշանածներին երկար միջոց կպահեինք, բաշլուղ էլ կշինեինք, սուդ հախի էլ կտայինք։

Պողոս աղան իրավունք ուներ. երկուսն էլ իրանց ամալաներն էին։ Այդպիսի ամալաները խոր գյուղերում մելիքների, առաջավորների և ռեսների դռանը այսօր էլ կան և սրտի մտոք ու անտրտունջ ծառայում են։

Նրանց պահանջը շատ չէ. մի կտոր ցամաք հաց, մերկությունը կիսով չափ ծածկելու հնոտիներ աղայի կողմից, և ահա նրանք կյանք չեն խնայում տիրոջ ուղուրին։

Ամենից ժիր մշակը, ամենից հավատարիմ և սրտացավ անդամը աղայի տան համար՝ ամալն է։ Թող ուրիշը տասնապատիկ առավել փափկություններ և վարձատրություններ խոստանա, ընչով կուզե, թող հրապուրի, ամալան յուր աղայի տան ցամաք հացը բոլորից կգերադասի, նա յուր աղայի չոր հացին կույր չի մտիկ տալ։

Բայց եթե ամալան գրավվի բանսարկուների խոստումներից կամ ինքնաբերաբար մտածի թողնել իսպառ յուր տիրոջ շեմքը, ոչ ոք նրան գեմ չի կենալ, նա ազատ է յուր ընտրած ճանապարհը գնալու։

Ամալան իրավունք ունի մինչև անգամ առանձին տուն ու տեղ դառնալ, յուր սեփական վարուցանքսն, յուր տնտեսությունն ունենալ և միաժամանակ յուր աղայի տանից ոտքը չկտրել։

Եվ ահա Գսպեն, Պողոս աղայենց ամալա Գսպեն, սիրուն կնոջ մարդ եղավ, ընտանեկան քաղցրության ճաշակն առավ։

Անբախտ մարդ, ճակատագիրն այլապես էր տնօրինել. ռուս-թուրքական առաջին պատերազմը նորա կենաց թելը կտրեց, գաղթականությանը զոհ գնաց Գսպեն, Երասխի անցքումը քրդի կեռակտուց սրին մատաղ եղավ արթուն և անձնադիր հովիվը՝ երկու քուրդ սպանելուց հետո։

Պատմությունը կարճ է, քրդերը չէին թողնում հոտն այս կողմն անցկացնել, ոչխարի առաջը կտրեցին շորս ձիավորով. Գսպեն յուր կոմբալագլուխ դագանակով (հովվական ցպով) երկուսին մի-մի հարվածով ձիուցը գահավեժ կործանեց, երրորդի սրից ինքն արիաբար ընկավ։

— Մեղք է նաչար Ալբին,— ասաց մի օր Պողոս աղան Ալմաստ խաթունին,— հերիք է ինչքան որ խեղճը շարշարվեց մեր դռանը. մեր տան քամակի ալերակներից երկուսը ծածկենք, իրան տանք, մի աղջիկ խատաներ, տնարար այրի տղամարդ ճարենք, ամուսնացնենք, թող գնան իրանց արևի ձայնն ածեն. այս երեխան էլ կմեծանա, իրանք էլ նոր երեխայք կունենան, իրանց մի կտոր հացը կունենան։

— Ինձ կարծում, որ մարդու գործ։

— Ընչո՞ւ համար, Ալբին գրավիչ է, աչքերը սև, թշերը կարմիր, հասակը բարձր, անձն առողջ, մեջքը հաստ. ոտքը պինդ, գործի եկյերթս էլ՝ կարծես հում-հում է ուզում բանն ուտել, ընչի՞ պետք է մեր քանն տրը սև անի, կյանքը փչացնի։

— Ես միայն իմ մեռնելու օրը չեմ կարող իմանալ,— պատասխանեցավ նույն երեկոյին Ալմաստ խաթունը Պողոս աղայի մոտ,— յոթը ժամ գայլի ավետարան կարդացի Ալբու գլխին, իրան ապանում է, այսուհետև, առում է, իմ մարդն, իմ ուրախությունն, իմ մխիթարանքն էս մի մատը երեխեն է։ Եթե իմ աղեն յուր քաղցր աչքովն ինձ էդ լավությունը կամենա, երկու ծածկի տեր անի, մինչև մահս, քանի կամ, օրական մի հաց կուտամ, մինն իմ աղայի բարեբավության համար մատաղ կտամ։

— Թող յուր ասածը լինի։

Եվ Պողոս աղայի հրամանով կարճ միջոցից Ալբին յուր սեփական հարկի տակն էր տաժանելի աշխատանքներից հանգիստ առնում։

Դ

ԴԴՄՑԱ ՍՐՎԱԿԻ ՀԱՄԲՈՒՅՐԸ

Երկիրը փոխվեց, օդ ու ջուրը փոխվեց, մարդիկը նոր, սովորությունները նոր, աշխարհքի տեղագրական պայմանները նոր։ Ջանազան Պողոս ու Պետրոս աղաներն իրանց օրերը լցրին, հայր Աբրահամու նահապետական գոգումը հանգստացան, սեփական աշխատանքը, գոյության խնդիրը աստիճանաբար առաջ եկավ և շատերի թվումը Սարգու և յուր խմորակեր փոքրիկի համար պահանջ դարձավ։

Գնացին Կարբի գաղթած աղաների հարստությունները, փոքրիկ գյուղը, կարճ միջոցով, չէր կարող մրցել նահանգական քաղաքի հետ. երեվանը թողած՝ ո՞վ կգնար Կարբի առուտուր անելու. իրանք աղաներն էլ, որ սկզբում մեծ հոժարությամբ, առանց երկար ու խորը մտածելու, կենտրոնից բաժանվել և Կարբին էին ընտրել, փոքր առ փոքր այդ աղաները կամ աղքատացան և կամ երկրի պայմանների հետ լավ ծանոթացան ու քաշվեցին ոմն այստեղ և ոմն այնտեղ, մի քանիսը գաղթեցին Գյումրի, որ արդեն նոր միրտվել էր և հին թուրքական անունի տեղ Ալեքսանդ-

բապով շքեղապանծ անունին էր տիրացել, մի մասն էլ Երևան գնացին, խանութների ու կայանքի տիրացան։

Կարբումը մնացին չքավոր և բանվոր դասակարգը և միջակներից մի քանիսը։ Առաջիններին վիճակվեց երկրագործությունը, միջակները փորձ փորձեցին հին Կարբու շուկայատեղի մի կարգ ավերակներ շենացնել, խանութ նստել և առևտրով պարապել։

Ոչ մինը և ոչ մյուսը նպատակներին չհասան. հողը սակավ էր Կարբումը, վարուցանքսի տեղ չկա, տարեկան ուտելիքին չէր բավականանում ցանածները. ժողովուրդն ստիպվեցավ օրավարձ մշակությունով պարապել, մի քանիսն էլ խուրջինի մեջ շարշու խուրդավարթ (փերեզակի մանր ապրանք) դրած՝ գյուղերն ընկան, ոտքերի կաշին մաշելով թափառել սկսան. իսկ միջակ դասը խանութի դրամագլուխը խժռեցին, օրն եկած վաստակով ապրել չկարողացան, սրանք էլ ստորին գեղջուկի կարգն անցան։

Թե՛ կարբեցոց և թե՛ շրջակա գյուղականաց օրավարձ մշակության գլխավոր կենտրոնը այգեշատ Աշտարակ գյուղն է։

Ձմեռն անցկացավ, գարնան անուշաբույր հոտը փչեց թե չէ, Աշտարակի ճանապարհը կենդանություն կստանա. կարբեցի, Հովհաննու վանքից, ապարանցի, մոտակա պարսիկ գյուղացիք չոր հացը գոտիներում, մեջքներին կապած՝ լցվում են Աշտարակ՝ օրավարձ բանվորություն անելու, գլուխ և ընտանիք պահելու։

Տղամարդի, կինարմատի, մեծի, փոքրի, ամեն չափահասակի համար գործ կա իմ սիրելի Աշտարակումը, ծով է, հո գյուղ չի։ Եվ այդ ծովի մեջ արձակ լողում են ալիքների պես, նեղ փողոցներում ծփում են օրի բուն աշխատանքի և հացի կարոտ խուռն բազմությունը։ Ուռուց կոչված փոքրիկ հրապարակը (աստված հրապարակ համարի) գլխավոր ժողովատեղին է օրավարձ մշակների. իրարանցում, ճիչ, աղաղակ ականջ են ծակում՝ մարտը սկսելուց մինչև խորը աշունքը Ուռուցումը առավոտները շատ վաղ։ Չի տևում կես ժամ, արեգակի գլուխը փայլելուն պես՝ Ուռուցումը մի մշակ չես դտնում, բոլորը վարձվել են, բոլորը քաշվել են այգիները։

Հին ժամանակը հում նյութ էր մշակի վարձատրությունը, Աշտարակի մեղրածորան պտուղները, քաղցրահամ գինին և գրգռիչ օղին էին աշխատանքի գինը. այսօր այնպես չէ, այսօր ամեն ծառայություն փողով է վճարվում։

Միայն փոքրահասակ երեխայքն ու պառավ կանայքն են, որ տեղական բերքի հետ՝ են փոխարինում իրանց աշխատանքը։ Այսօր արքատ պետք է ժողովվի, վաղը ծիրան պետք է հավաքվի, տներումը՝ բուրդը, այ-

գիները՝ քար պետք է մաքրվի ու գզվի. այդ բաները պառավների ու մանուկների գործն է. կանեն, կաշխատեն, կուտեն և աստծու տված եկամտից շաբաթվա վերջը կամ ամեն երեկո, իրանց վարձը կառնեն լիուլի ու կերթան։

Միայն հեռավոր ապարանցին է, որ շաբաթով մնալու պայմանով է տեսնում յուր պատրաստությունը։ Վա՜յ այն պատրաստությանը. ինքն է՝ յուր քրքրված ջուբբեն ու անթարին, յուր քոլոգն ու յուր տրեխները ու մեկ էլ մի ձեռաց դագանակ. ո՛չ շալակին պաշար կա, ո՛չ գրպանումը կոպեկ, քաղցած փորով գալիս է, կուշտ վերադառնում. իսկ մերձակա գյուղացիք առավոտը գալիս են, երեկոյին վերադառնում։

Տարվան խստասիրտ եղանակը՝ դառնաշունչ ձմեռն յուր բոլոր անողոք սաստկությամբը նույնպես չի կարողանում հաղթել Աշտարակի սիրահար այցելուներին։ Ձյունը գազուկես. նստում է, բուք ու բորյաղը աջ ու ձախ վզզալով ճանապարհների հաղորդակցություններն ընդհատում են, Ապարանը անդրօվկիանյան անմատչելի աշխարհ է դառնում, իսկ Աշտարակի ճանապարհն երբեք չի կապվում։ Կենսատու հեղուկը—ոսկրներ տաքացնող գինի-արաղը մագնիսի պես իրանց են քաշում իրանց երկրպագուներին։

Ցեցը կքրքրի մի որոշյալ թիվ Հովհաննու-վանքցու, կարբեցու, մանավանդ մողնեցու մարմինը, եթե շաբթի գոնե երկու օրը մի գավ ձեռքին՝ Աշտարակ չիջնի։

Առանց հարգելի պատճառի չշեշտեցի մողնեցոնց վերա, որոնք Աշտարակի ամենամոտ դրացիներն են, և այդ հանգամանքը իրանց թշվառության գլխավոր պատճառներից մեկն է. ամառ և ձմեռ մողնեցին ծույլ, անգործ, անբան և աղքատ է, նորա հողերն ուրիշներն են վարում, որովհետև սուրբ Գևորգի ուխտատեղին տաք մատաղով է կշտացնում մողնեցու փորը, Աշտարակն յուր մարսեցուցիչ խմիչքներովն է լրացնում նրանց հաճույքը. գի՞ծ է ուրեմն մողնեցին՝ երկիր վարի, քրտնի, չարչարվի և տնտեսությամբ պարապի։ Անծանոթ աչքն էլ դժվարություն չի կրել զանազանելու բնիկ աշխատակիցներից գյուղի նեղ-նեղ փողոցներում մի տանից մյուս տուն մուտ ու ել անող օտարականին։

Սրանք, ահա՜, վերոհիշյալ Բաքոսի պաշտոնյաներն են, որ ձմեռվա հետ համբերությամբ կռիվ տալով, մի տեսակ գցել են իրանց Աշտարակ և ծանոթների տներն են այցելում։

Տալիս են նոքա սովորական բարևը հյուրասեր տանտիրոջը և քուրսու ներքին կողմումը առանց համեցեքի չոքում, ձեռքները կոխում գյուղացու այդ միակ տաքություն պահող փալասներով ծածկված թախտակը։

— Ֆ...

— Ի՞նչ կա, սանահեր Բարսե՛ղ։

— Խիստ ցուրտ է, դողմանի եմ դիպել։

Մեր հյուրն յուր խոսքը հաստատում է մարմինը սրթսրթացնելով և ատամներն իրար բախելով։

— Կմրսես, իհարկե, քարերն էլ սառույց են կտրվել, իսկ քո միսդ հարյուր տեղից բաց երևում է. հե՛ր օրհնած, վրայիդ արխալղահինը տասը տարի է, հետդ անբաժան եղբայր է. կնոջդ աչքերը հենց իմանաս ձյունը տարել է, աղբանոցումը լիքը փալաս-փուլուս է, թող հավաքեն, կարկատեն, մեջքները հո չի՞ կոտրիլ, բան ու գործների անո՞ւն ինչ է, քարդահի տակ են նստա՞ծ, թե՞ խնոցի են հարում։

— Է՜հ... կնքավոր Աղո, մինն ասում ես, մյուսը թողում. երեխայքս քաղցած ճաշին են քնում, տանը բրդուճ չկա, ո՞վ սիրտ ունի յուր գլխի ճարը քաշելու։ Տանը որ հացի կտոր լիներ, գլխիս ի՞նչ թաս էին կոխել էս ցուրտ ու բուք վախտը, էս պարզկա օրը տանից դուրս գալու. եկել եմ քեզանից մի քանի շահի խնդրեմ, ալյուր տամ, շաղախենք, երեխեքանց բերանը գցենք։

Շատ է լսել աշտարակեցին յուր սանահեր մողնեցի Բարսեղի խոսքերը. նա ընչացքի տակին ժպտում և հրամայում է կնոջը, հարսին, աղջկանը գինու դդմյա սրվակը կարասիցը լցնել ու սանահեր Բարսեղի մքրսած անձը տաքացնել։

Մոռացվեցին այնուհետև ընտանիք, կարիք, մերկություն. մեր սանահերը մի շարք մեծ պասից երկար օրհնությունով սրվակի կոթը բերանին մոտեցրեց, մինչև հատակը քամեց և մաքրատեր կտավի նման շրթունքները լպստելով, արխալղի քղանցքով էլ ընչացքը սրբեց։

— Անո՜ղ։

— Կյանքդ խո՛շ, աստված ոչ ախիդ շեն ու չեն պահի, հերդ դրախտի մեջ հայր Աբրահամի գոգումը ծլվլա. հիմի գնամ տեսնեմ՝ ի՞նչ եմ անում,— ասում է մեր Բարսեղը, տեղիցը վեր կենում, մնաս բարովը տալիս կնքավորի տանը։

— Մի կտոր կակուղ հաց ու սոխ բե՛ր, խանում բաջի՛,— խնդրում է Բարսեղը մի երկրորդ տան դդումը ցամաքացնելուց հետո,— այսօր բերանս նշխարք չի մտել, ինքս էլ շատ ուշացա, օրը մթնեց, ոտներիս ուժը մի քիչ տեղը բերեմ ու դպա տուն ձգվեմ։

— Այս գավն էլ լցրեցեք,— առաջարկում է Բարսեղը մի ուրիշ տան, նույնպես դդումի հետ համբուրվելուց հետո,— եղբայրս ատատիկ մրսել է, հիվանդ է, քիթը բռնես՝ հոգին կփչի, էսօր առաջին անգամն աչքը բացեց և գինի ուզեց. փոխարենը գարունը մի օր կգանք կբանենք, մի բանվոր ինձ վրա ունենաս։

Գավը լցվեց և տիրոջ հետ ճանապարհ ընկավ դեպի վեր։

Երևում է՝ ցրտի սաստիկ ուժն է բորբոքիչ հեղուկի զորությունը պակասեցրել, ապա թե ոչ, այսօր հինգ-վեց լիքը դդում Բարսեղի բերանին է կպել, դատարկ տրվել. գինի է, հո ջուր չէ։ Անծանոթը ոչինչ չի նշմարիլ Բարսեղների քայլերից. սովոր աչքը միայն քամակից կդիտե, կժպտա։

— Հիմդ հաստա՛տ մնա, Աշտարակ,— միմյանց ցույց տալով ասում են գնացողի հետևից,— տե՛ս, ինչպես մուկը Բարսեղին ասլան է կտրացրել, կաքավի ոտներով է Մողնու թումբը (բարձրավանդակությունը) սոսրոր տալով դեպի վեր քաշում։

Բարսեղներն իրենց պայմանին հաստատ են. նրանք փորի գերի են, վաղ գարնանից մինչև ուշ աշունք նրանք ձմեռվան դավերի վճարքն են ետ տալիս, մի կոպեկ նրանց գրպանը փող չի մտնում. շատ էլ արիությամբ գործում են, երբեք էլ իրանց ընտանիքի մասին մտածել չունին, երեխայքը տանը քաղցած ու տկլոր կոտորվեն, միայն թե գինու դդումը նրանց հետ հաճախ համբուրվի։

Ե

ՏԱՍԸ ԿՈՊԵԿ ԿԱՄ ԵՐԵՔ ԱՐԾԱԹ ԿՈՊԵԿԱՆՈՑ

Երեկո է. աշնան բարեխառն և մեղմ երեկոներից մեկն է։

Աշտարակից դեպի Ապարան տանող դարիդուսը լիքն է հարյուրավոր հետևակ կին ու մարդ, մեծ ու փոքր ճանապարհորդներով, բոլորի երեսը դեպի Մողնի և թիկունքը դեպի Աշտարակ է։

Հեռացողները շատ ուրախ են. զվարճախոսություն, կատակ, օրվան թարմ անցքեր բարձր-բարձր պատմվում, լավում, ընդհատվում և շարունակվում են։

Ուղևորների ամեն մեկի ձեռքին, ուսին, մեջքին մի ծանրություն կա, ոչ մինը դատարկ ձեռքով չի վերադառնում. մի քաղլակ, մի կապոց, մի տկճոր, մի գավ; մի դալար խաղողի մատը՝ քանի մի ողկույզ հակնթանման խոշոր ու դեղին խաղողներ վրեն շարժվելիս, վերջապես մի ծառի չորուկ մեկի կամ մյուսի բեռն է համարվում. իսկ ամենքի գոտուն ցցած՝ թիկնամիջին երևում է մի-մի կեռակտուց, լայնաբերան հոտոց-դանակ։

— Տո, շուտ-շուտ քելե՛ք, տղանե՛ր, արևն էլ գնաց յուր մոր ծոցը մտավ, անուշ քուն եղավ, մենք դեռ ճամփին ենք,— ասում է մինը։

— Տո՛, յաման, ձե՛զ, ղուրբան, մեջքս կնմանի կոտրած մանգաղ, էնքան եմ աշխատել. տիրամեռ խաղողի ճթեր, կասես, մարդու աչքից կփախնեն, թփերի տակ կպլլվին։

— Ջանը ելնի՝ տիրոջ, հորս մա՞լն է, ընչի՞ եմ ընձի չարչարմանք եմ տալում եմ, ես իմ ջանին զոռ չեմ բերում եմ, աշքիս առած քաղում եմ, սաբաթի մեջ եմ թալում եմ (ծգել), մնացող թո՛ մնա, էգուց մկլոր մեր ճժեր թո՛ էրթան պտուղ էնեն բերեն։

— Տո՛, ծուռ ճժե՛ր, դուք ի՞նչ կենեիք,— հարցնում է մի երրորդը երեխաներից մեկին, մյուսին։

— Հոգիս բերանս հասավ տիրամեռու խշմար (նեցուկ) ժողվրտելով. առած հախս էս փշուր խաղողն ա,— տրտնջում է մանուկը։

— Տղա՛, Բղդե, դու դո՞ր կբանիր,— դարձավ երեխաներից մինը գեպի մի երկու բոպե առաջ յուր հետ հավասար քայլող մանուկին։

— Յա՛ սանատա՞ էր, դև՞ էր, հալածակվեց, գետինն անցավ, զարմացմամբ սկսեց աչքը մանուկների մեջ ման ածել և որոնել խոսողը, երբ Բղդե կոչվածին ոչ մի տեղ չտեսավ։

— Տո, ի՞նչ եղավ, մկա (ճիմա) չէ՞ր բերան ծռուկ Բղդեն քարշ կգար խրտ մեզի, կնմաներ քյարվանից ետ մնացած ուղտու քյոշակ։

— Տո՛, ո՞ր մեկին կխարցուս, տո՛։

— Տո՛, Պողոս աղենց Սալբու տղա Բղդեն չէ՞ր հենց հիմի մեր քամակից կիգար ու չի երևար։

— Ահա Բղդեն,— ցույց տվեց մի ուրիշը բոլոր ճանապարհորդներից շատ առաջ։

Եվ արդարև, Սալբու տղա Բղդեն այժմ տասը, տասն և հինգ տարեկան մանուկ էր և կարողանում էր մորը պետք գալ։

Այսօր էլ Աշտարակու քաղվորների հետ էր և տուն էր վերադառնում։

Շատ անհանգիստ էր Բղդեն այս երեկո, նա Աշտարակից դուրս գալուս ամենքից առաջ էր գնում և բոլոր քաղվորներից հեռու էր ման գալիս, երբեմն-երբեմն կանգնում էր նա և հանկարծ որսորդի հրացանից ազատված նապաստակի նման մին աջ խլշկոտում, մին ձախ, հենց իմանաս, ինքն յուր ստվերից վախենում էր։

Մի մին էլ ոտը քարշ էր ձգում և բռունցք արած՝ ձախ ձեռքը արխալղի պատռված գրպանից դուրս հանում, բութ և ցուցամատները քիչ ետ բաց անում, բռնումը ամուր սեղմած առարկային խորաշնին աչքով մտիկ էր տալիս ու էլի ետ ձեռքն ավելի պինդ հուպ տալիս ու գրպանը կոխում։

Կարծես թե վախենում էր Բղդեն, թե բռի մեջ բանտարկված իր

թե կառնի, կթռչի, աղի պես կհալչի, կոչնչանա կամ ուրիշների հետաքրքրության առարկան կդառնա, կխլվի յուր ճանկից։

Նոր չէր, որ անհայտ ցեցը բնակալել էր Բղդեի բռան մեջ։

Վաղ առավոտից, երբ նա վարձվեց մի աշտարակեցու խաղողը պահող նեցուկները ժողովելու, նորա ձախ ձեռքը ետ չբացվեց։

Մի կողմից նեցուկներն էր ժողովում աջ ձեռքով, մյուս կողմից հաճախակի ձախ ձեռքից աչքը չէր հեռացնում։

Եվ ինչպե՛ս քաջացել, կտրիճացել էր այսօր մեր անտաշ մանուկը, ինչ եռանդով գործում էր։ Բացի յուր գործից՝ նա մնացած խաղողներն էր պտուղ անում և այգու տիրոջ քթոցը լցնում։

Այգետերը քանիցս նկատեց նրան, ասաց Բղդեին, որ յուր արած պտուղը յուր գտած ողկույզներն յուր կողովի մեջը դնե, իրան համար պահի, հասկացրեց, որ այդին քաղելուց հետո ամեն աղքատ իրավունք ունի մտնել, քաղվորի աչքից փախած, տերևների տակին մնացած ճիռերը քաղել, յուր համար տանել, բայց Բղդեն անխոս, գլուխը բացասաբար թափահարում էր և գտած, պտուղ արած խաղողները տիրոջ խաղողին էր խառնում։

— Դու հո քո վարձն ստացել ես,— ասաց երեկոյան այգետերը Բղդեին,— բայց որովհետև այսօր, երեխա տեղովդ, դու հինգ մշակի գործ ես կատարել, տո՛ւր քո կողովդ խաղող լցնեմ, ա՛ռ, գնա՛։

— Աստված քո մինը հազար անի՛, ես ոչինչ չեմ ուզում,— մերժեց Բղդեն և խորը գլուխ տալով կամենում էր հեռանալ։

Շատ խոսեց, շատ համոզեց այգետերը, բայց Բղդեն ևս առավել խենարհ երկրպագություններ էր անում։

Նա արդեն բավականին հեռացել էր։

— Բղդե՛, Բղդե՛,— ձայն տվեց հանկարծ այգետերը,— մի բոպե ետ արի՛, բան եմ ասում։

— Ահա՛ այս երկու շահանոցը՝ (եռեք կոպեկ) քեզ, իսկ իմ առավոտյան տված մի շահին ինձ տուր։ Աղճմտանքս ինձ հանգիստ չի տալ. ողջ օրը դու մի չուրուկ շահով (մեկ ու կես կոպեկ) բանել ես, օխտը մարդի աշխատանք ես արել, նրանց ամեն մինը իրենց վարձը լիուլի ստացան, իսկ դու մի ճուռ խաղող գոնե չվերցրիր և որքան նկատեցի, չի էլ կերար։

Ա՛յ հրաշք. մարդը հանեց իշի պայտից մեծ մի պղնձադրամ. տասը կոպեկ էր գրած նորա վերա, և այժմյան երեք կոպեկի արժեքն ուներ։

Բղդեն ամբողջ մարմնով սկսեց դողդողալ. նա վրա պրծավ, բարեբար ձեռքն երեք անգամ համբուրեց, ետ բաց արեց բոլոր օրվան սեղմված ձախ ձեռքը, ետ տվեց մեջը պահած կոպեկուկիսանոց պղնձյա դրա-

մը և փոխարեն կրկնակի մեծն ստանալով՝ առավել պինդ սեղմեց ու հազար շնորհակալություններով հեռացավ։

Ահա՛ հենց այս պղնձյա դրամն էր Բղդեի խաղաղությունը վրդովող անքուն սատանան, այդ ամենաթանկագին գանձն էր նա թանձրով փայ-փայում, նորա հզոր զորությունն էր յուր ոտքերի ուժը կրկնապատկողը և հոգեպատկողը։

Քաղվորները կես ճանապարհը չէին գնա կտրել, որ Բղդեն մտավ Կարբի։

Զ

ՔԻՍԱԴԻԹԻ[1]

Սալբու բազմադիմի պահանջներին խուլ գտնվեց սիրական զավակը. նա, քան սովորականին, ոչ վռիկի բերեղանին մոտեցավ, ո՛չ ամեն գիշերվա նման ուրախ ու զվարթ պատմություններ ասաց, ո՛չ յուր բերած խաղողի հութը քնքշաբար մոր բերանին մոտեցրեց, մոր բերանը շրակալացրեց։ Այս բանից և ոչ մինը չասաց Բղդեն. քնդհակառակն՝ թեթև գլխացավը պատճառ բերած, շորերով վայր քնկավ մոր շինած անկողնի վերա և աչքերը փակեց։

Մայրական գորովալից խանդաղատանքն այնուհետև ի՞նչ կհանգրստացներ Սալբուն. խեղճ կինը մոլորվեց, պաշարվեց, այս ու այն կողմը դիպավ, էլ տանը հին ու նոր չիոգեց, փալաս ու հացի մեզաբ չմնաց։ բերեց գլխին ծածկեց։

Զիթի ճրագի աղոտ լույսը վաղուց յուր պաշտոնը կատարել էր, ձեթը այրվել, վերջացել էր, պատրիգի դառը մխի հոտը տանովը մին էր եղել, մթությունը տիրել էր, բայց այդ ամենն արգելք չէին կարող լինել որդեսեր մորը՝ յուր զավակի կողքը կտրել, ձեռք ծնոտին դնել և հազարաբաբ բարի ու չար մտածմունքների մեջ ընկղմվիլ։

Անտեղի չէին Սալբու կասկածանքները. Բղդեն տաքության մեջ կրակ է կտրվել, բերանից արտաշնչված գոլորշին մոր երեսն է այրում, շնչառության հեկեկանքը նետի նման ներս է սլանում մոր այրվող սրտի խորքը։

[1] Քիսադիթի նշանակում է քսակի հատատ։ Ամեն ոք յուր փողի քսակի մեջ պահում է անպատճառ հին դրամ կամ մի աննշան պղնձադրամ, որի բարերարար զորությունը, իբր թե, փոքրած է։ Փոքրիկ փողը քսակի հիմնադրամն է. նա երբեք չի ծախսվիլ, նորա կորչիլը աղքատության ու անանկության աղետավոր նշան է։

— Ցոթն անվան տեր սուրբ Կարապետ, իմ ձեռքս եմ թալեր եմ քո փեշ, Մողնու զինավոր սուրբ Գևորգ, մուրատատու Յուշու սուրբ Սարգիս, իմ Բղդեիս կռանը կենաք։

Խեղճ կինը Կարբու շրջակայքի պաշտպան սրբերի հետ մտքումը ժողովեց իրանց երկրումը թողած բոլոր Թուխ-մանուկներին, ուրբաթ-գրերին, կարմիր ու սև ավետարաններին. մեկին խունկ ու մոմ, մյուսին սև հավի մատաղ, երրորդին կիրակմտոցի լույս էր ուխտում ու յուր Բղդեին առողջություն խնդրում։

Նա մի քանի անգամ դուռը բաց արեց, երկնքին նայեց, աստղերի նշանները դիտեց։

— Ի՞նչ անեմ, գնամ Նանի-Հարթենենց դուռը թակեմ, երկար պառավին զարթեցնեմ, ոտքերն ընկնեմ, աղաչեմ, բերեմ Բղդեիս աղոթել տամ,— մտածեց նա։

Հուսահատությունը ողորմելուն ետ է կասեցնում. ժամանակը շատ ուշ էր, Կարբու ոտքը խաղաղվել էր. ամենքը գործից ու աշխատանքից հոգնած՝ խոր քնի մեջ մրափում էին. ժիր մշակը ցերեկը մինչև իրիկուն անընդհատ վաստակելուց հետո հավերի հետ քուն է մտնում, հավերի հետ է զարթնում։

Մարդ, կին, մեծ ու փոքր անուշ խոմփացնում էին. տեղ-տեղ, գուցե այս ու այն տանը փոքրիկ անհանգիստ մանուկները օրորոցից մոր քունը կարում էին, ճիչ ու ծվոցով մայրերի ականջներն էին ծակում, զարթեցնում էին թավշի պես փափլիկ ստինքի քաղցր աղբյանը, ամուր փակցնում իրանց շարմաղիկ շրթունքները և մզմզալով ներս տանում անուշահամ կաթը. բայց դրանով երեխայքն իրանց նորատի մայրերին երբեք արգելք չէին լինում հենց օրորանի լծանը թեկնելու և մի հանգ քնելու. քնդհակառակն՝ սիրուն զավակի պռոշների միատեսակ շարժումը մի ախորժական գրգռմունք էր պատճառում. խանդակաթ մորը և զգուշության հետ մի զգաստ քուն էլ բերում էր, երջանիկ երազների նթերական սահմաններումն էր պտտեցնում նրանց երևակայությունը։

Գիշերը շատ խաղաղ էր, ձայն ու ձուն չկար, ավերակների միջից միայն պարբերաբար լսվում էր մելամաղձոտ բուի տխուր վույն ու վայը։

— Է՛հ, ես ի՞նչպես անհանգիստ անեմ Նանի-Հարթենենց պառավին,— փնթփնթաց յուր մեջ Սալբին,— լավն այն է՝ իմ գիտեցած չար աչքի, չար նիաթի աղոթքով բավականանամ, մինչև լուսո շառավիղն ամեն հայ քրիստոնեի հետ իմ տան երդկովն էլ ներս կմտնի։

Առավ Սալբին մի ասեղ, նստեց Բղդեի գլխավերևը, ասղի ծայրով շարունակ խթխթեց տղայի գլխին ծածկած բրդյա հաստ մեզարը և երեք անգամ մրմնջաց հետևյալ աղոթքը.

Աթանիա, Ազարիա,
Հրես եկավ Հռիփսիմեն
Օխտը դաթար (շարք) ջորով,
Օխտը պոչ քուռակով.
Ջար աչքը՝ չար փուշը,
Ջար փուշը՝ չար աչքը։

Աղոթում էր, հորանջում էր, հորանջում էր, աղոթում էր և հետն էլ ընդհատելով բարձր ձայնով կրկնում էր. պատրին ու թափվին իմ Բղդեիս աչք զարնողի ջուխտ աչքի պտուղները։

— Ադե՛,— կանչեց աղոթքից հետո հիվանդը։

— Ջանե՛, ադեն հեյրան արևուդ։

— Էդ ի՞նչ ես անում ես։

— Քեզ աղոթում եմ, հոգի ջան։

— Ո՞ւմից ես սովորել։

— Ժամկոչ Հովնեից։

— Ժամկո՞չն ումից է սովորել։

— Գրքեենց Շողո հարսից։

— Էդ ի՞նչպես բան է։

— Նիաթի (չար աչքի) աղոթքը տղամարդը պետք է կինարմատից սովորի, կինը՝ մարդից, թե չէ զորություն չի ունենալ։

— Սիրտս նեղանում է, բաց արա գլուխս,— ասաց վերջապես Բղդեն,— դուրս գնա, տես գիշերվա ի՞նչ ժամանակն է։

— Դեռ շատ գիշեր կա, դեռ կեսգիշերը նոր է անցել։

— Լուսաստղը դեռ չի՞ դուրս եկել։

— Դեռ Շամփուր-կշեռքը երկու չվանաչափ է հեռու Բազումքից, դեռ լուսաստղի ընկեր 12 հուրհուրատող աստղերը նոր են գլխները հանում, որ լուսաստղը դուրս գալուս՝ ամեն կողմից բարև տան նրան։

— Օ՜հ, ինչքա՜ն գիշեր կա դեռ, ե՞րբ պիտի լուսաստղը դուրս գա։

Բղդեին, ինչպես և ամեն մի գյուղական մանուկին, քաջ հայտնի էր համաստեղծության գաղտնիքը, ամեն մի երկնից լուսավոր իրան նշանակություն ունի ժողովրդի աչքում։

Գյուղացին դեռ թոթովախոս երեխայության մեջ է, յուր մորից, տատից, պապից. ամառ ժամանակ կալերումը և կտուրներումը, բաց երկնքի տակ, քնած ժամանակ դաս առնում աստեղագիտության ուսումը։

Հազար էլ որ պառավները սրտնեղեն, բարկանան, երեսները մյուս կողմը դարձնեն, խռռացնեն, խռմփացնեն, փնչացնեն, ֆնչացնեն, զուր է, չեն կարող ազատվել հետաքրքիր փոքրիկ սատանաների հարցասիրությունից։

— Դու քո հնարքը գործ դիր, մենք՝ մերը,— մտածում են քաղցրիկ թոռները և պապի կողքերը խստղեցնում, մորուքը համբուրում, կրծքին բարձրանում, պարանոցովը փարվում, խնդրում, աղաչում, գմբռիկ թշիկները ծերի պռոշների վրա դնում, պաչել տալիս, երկու պաչ էլ պատմելուց վերջը խոստում անում, պապի բարեհաճությունն առնում, պատմությունն սկսել տալիս և ուշիուշով ասածները լսում, մտքներումը տպավորում։

— Պապի ջան, էն ի՞նչ աստղ է, որ քեռոնց կալի գլխին կանգնած է ու բոլորից պսպղանն է,— հարցնում է պապի ծոցին քնող թոռը։

— Էն Քարվան-ղռանն է։

— Սաքի թե ի՞նչ։

— Էն՝ որ քարվանը դաշտումն է եղած լինում, ամպը պատած գիշեր է լինում, հանկարծ երկինքը պարզում է, քարվանբաշին (քարավանապետ) կարծում է, թե լուսաստղն է, քարվանն շտապեցնում է, վեր կացնում ու ճանապարհ ընկնում։

— Հետո՞։

— Հետո՝ շատ ահ ու զարհուրելի տեղով պետք է անցկենալին, գնում են, գնում, լույսը չի բացվում. մեկ էլ մի խոր ձորի մեջ գողերը դրանց առաջը կտրում են ու բոլորին բրդում, վեր ածում։ Աստղը սխալացրեց, քարվանը կոտորել տվեց, անունը մնաց Քարվան-ղռան։

— Իսկ էն ի՞նչ աստղ է, որի պոչը, հենց իմանաս, տատիս ջահրի (ճախարակ) իլիկը լինի։

— Էն Ղոյրուղն է։ Ամա՛ն, գառնուկս,— զգուշացնում է ուսուցիչ պապը,— էլ այսուհետև չլողանաս, Ղոյրուղն յուր պոչովը քեզ էնպես կշամփրի, որ պոչը մեջքիցդ կմտնի, փորիցդ դուրս կգա. նա գիժ աստղ է, լողացողի թշնամին է։

— Հապա մինչև հիմի ո՞ւր էր, չէր երևում։

— Ղոյրուղը խաղողի ժամանակն է դուրս գալիս, մինչև նա դուրս չգա, խաղողը չի հասնիլ։ Քեզ եմ ասում, հոգիս, էլ չլողանաս։

— Շատ լավ, շատ լավ։ Էնպես չի՞, ծակո, էլ չենք լողանալ. պապն ասում է՝ Ղոյրուղը որ դուրս եկավ, էլ չեն լողանալ։— Դառնում է պապի թոռներից մինը յուր հասակակից եղբորը կամ անբաժան մի հարկի տակ ապրող հորեղբոր որդուն և ականջումը փսփսում։

Վերջինս տատի ծոցիցն էր եկել դաս լսելու։

— Թող պապին արխեինը քցենք, պատմել տանք, հետո մենք մեր բանը գիտենք,— փսփսում է նա ընկերի ականջին։

— Դե որ պապն ասում է՝ մի՛ լողանար, մենք էլ չենք լողանալ,

մեռնիլ հո չե՞նք, եկող տարի ամառը՝ կգա, նոր կլողանանք, լավ չե՞մ ասում, պապի։

— Շատ լավ, շատ լավ. դե որ էդպես խելոք տղայք եք, եկեք մի պաչեմ։

— Դե որ էդպես է, ասա տեսնենք՝ էն ի՞նչ խորդուբորդ տեղ է եր-կընքումը, հենց իմանաս մեր վերի արտի քարքարուտ ճանապարհը լինի, մանր ու մեծ աստղեր անկարգ, անկանոն շաղ են անցած։

— Էն մեր ուլերն են կրծոտել։

— Ո՞րտեղից բարձրացան։

— Մի ձմեռ շատ ձյուն էր եկել, խոտ չկար, որ ոչխարն արածի, մեր ուլերը ձյունի վրայով բարձրացան, կրծոտեցին։

— Հապա դու երեկ ասում էիր՝ դարմանագողի ճանապարհն է,— մեջն ընկավ մյուսը։

— Որ գիտեք, էլ ընչի՞ եք հոգիս հանում, թողեք քնեմ,— ասաց պապը և ուզում էր երեսը մյուս կողմը շրջել, բայց ճարպիկ դևիկներից մեկը իսկույն լոք տվեց, անցավ պապի կրծքի վրայից, մյուս կողմին պառկեց և յուր շողոմարար հաճոյախոսությունները շարունակեց.

— Պապի ջան, պապի, հենց էս մեկը, կենտ էս մեկը պատմի, էլ գլուխդ չենք տանիլ (ցավացնել)։

— Հա, դարմանագողի ճամփեն է,— ճարահատյալ սկսեց պապը,— մի գիշեր բլբլան Բելը գնացել էր մեր Հայկ պապի մարագիցը մի թոռ լիքը դարման գողացել, շալակն առել ու փախչում։ Ջանս քեզ մատաղ, Հայկ պապի, շներին քսի էր տվել քամակիցը. ինքն էլ մի բարձր կոնգի գլխի կանգնել էր ու մտիկ տալիս։ Բելը դարմանը շաղ տալով փախչում էր։ Մեր խելոք պապը հենց որ տեսավ, թե շները չկարացին հասնել, գող Բելը դիմացի սարի քամակն է ուզում անցկենալ ու ազատվել, էն սհաթը գազու կիսանոց, կռանս պես հաստ նետը քցեց աղեղի լարին, աչքեց ու լարը ձգեց։ Նետը սըլ... լ... լ... գնաց, էդ գող ու ավազակին ծակեց ու վզզալով անցկացավ հինգ օրեն ճամփա, հեռու վեր ընկավ։

— Հետո ի՞նչ է անում Բելը։

— Ի՞նչ պիտի աներ, դարմանի թոռը մեջքիցը գլորվեց, պատռվեց, մնացողն էլ էնտեղ շաղանցավ, երկնքի երեսը բռնեց։

— Ինքը՞։

— Ինքն էլ գլխի վերա կունդիկ-կունգիկ անելով (թավալգոր) սարի ծերից գլորվեց ձորը։

— Հապա տատն ասում էր՝ իծանը որ կրծեցին, երկինքը պատռտորվեց, ջուր թափվեց, ոչխարի սուրուն խեզգվեց։

— Դե, նա էլ էր ուղիղ ասում։

— Բաս ի՞նչպես ջրի առաջն առան։

— Աստված կյանք տա փալան կարող (համեստագործ) Նոյ պապին։

— Ի՞նչ արեց։

— Փալանը դեն ձգեց, մախաթն առավ, Մասիսի գլուխը բարձրացավ ու երկնքի ճղվածքը պինդ կարեց. ա՛յ, տեսնո՞ւմ եք, էն մանր աստղերը մախաթի ծակած տեղերն են։

Ահա այս մանկական դպրոցի աշակերտ էր ուրիշների թվում և մեր հիվանդ Բղդեն. նա ցանկանում էր իմանալ գիշերվա ճիշտ ժամանակը. բնական է, որ աստղերի շարժումներից պետք է հարցներ։

— Աղե՛,— կանչեց մյուս անգամ Բղդեն։

— Ջանե, ի՞նչ կուզես։

— Ինչ ժամը գիշեր է։

— Մեռնիմ արևիդ, Բղդե ջան, ընչի՞ ես գիշ-գիշ բաներ ես մտքումտում ես։

— Չէ՞, դու մի օր ասում էիր, գիշերը որ ծանր լինի, գյուղում մեկն ու մեկը մեռած կլինի, ժամումը մեռել կլինի։

— Տո, քեզ մեռնիմ, Բղդե ջան, դու հիվանդ ես, դորա համար է գիշերը ծանր թվում քեզ,— որդուն հանգստացնում էր սրտատոչոր մայրը և աչքերը անթարթ քղանցքներովը սրբում։

Մի շաբաթ Բղդեն հիվանդ մնաց, աղոթող, գրքաց, ջինդար, ամենքն իրանց շնորհքն ցույց տվին. սրբերի դռները բոկոտն գնալն էլ չմոռացվեց. մի սառը քրտինք եկավ վերան, և նա իսպառ ողջացավ։

Սալբու սրտին ցավ և գյուղում ասելիք ու խորին դատողության առարկա դարձավ մի հանգամանք։

Ամեն այցելու պարզ տեսնում էր, որ Բղդեի ձախ ձեռքը պինդ փակվել է, մի բռունցք է գոյացել և չի բացվում. հենց որ մեկն ուզում էր հիվանդի ձախ ձեռքին դիպչել, նա այնպես ծվում էր, որ ամենքի ականջն էլ խլացնում էր։

Ամեն գլխից մի խորհուրդ դուրս եկավ. շատ խորհեցին, հնարք չգտան ձեռքը բանալու, չէին համարձակվում դիպչելու, ուզում էին, որ ձեռքը հրաշքով ինքն իրան բացվի։ Երբ ճար չեղավ, միաբերան վճռեցին, որ խաչից է, խաչը միայն կարող է փրկել։

— Սուրբ Հովհաննեսի աղբրիցն է,— վճռեց նետ դեղ, մաղ պրտեցնող կարճիկ Տուտուն։

Ցալբին ուխտեց, որ տղան լավանալուն պես նրան տանի, սուրբ Հովհաննեսի աղբրում լողացնի։

Սալբու աղոթքն ընդունելի եղավ։ Բղդեն բոլորովին առողջ է։ Նա մոտ կանչեց մորը։

— Մարի՜։

— Ջանե՜։

— Մենք խեղճ մարդիկ ենք, էնպես չէ՞։

— Իհարկե։

— Պողոս աղայենց ամալան ենք։

— Հա, բայց հիմա ոչ Պողոս աղա կա, ոչ Մարկոս, Կարբում մնացել են դառը քրտինքով հաց աշխատողներ։

— Ո՜չ, ես ուզում եմ ամալեք ունենալ։

— Ի՞նչ ես ասում, Բղդե ջան։

— Այո՜, մա՜յր,— լուրջ դեմքով ջեշտեց Բղդեն և ձախ ձեռքը ետ բացարեց ու ահագին տասը շուրուկ կոպեկանոցը մորը ցույց տվեց։

— Սա, սա կլինի իմ հարստության սկիզբը, սա կլինի իմ քիսադիբին, մինչև շունչս բերանումս է։

Բղդեն մի առ մի պատմեց մորը կյանքի մեջ առաջին անգամ փող աշխատելու հետաքրքիր պատմությունը։

— Բայց այդ երկու շահով դու ի՞նչ գործ պիտի սկսես,— տարակուսական հարց տվեց մայրը։

— Այդ իմ գիտենալու բանն է։

— Աստված սրտինդ կատարի։

— Ուրեմն՝ մի փալասի կտոր տուր։

Բղդեն խնամքով կապեց հին կարկատանի մեջ յուր թանկագին գանձը և դուրս գնաց։

Է

ՋՀՈՒՏ ԱՂԱՋԱՆԸ

Կարբու արևմտյան կողմը, եկեղեցուց դեպի հարավ, երկու կարգ հին ասիական ձևով շինվեցին Բայազետից գաղթածների խանութները։

Փոքրիկ դռներով նեղ և մութ խորշեր էին դոքա. ոչ մի լուսամուտ չէր ձգում դեպի ինքն պայծառ արեգակի ճառագայթները, լույսը ներս էր մտնում շարունակ բաց դռներիցը։

Մի քանի թոփ խամ չիթ, նույնչափ ալաչա կոչված կանաչ ու կարմիր շերտավոր կերպաս, տասնաչափ կտոր շիլա անուն կրող կարմիր ներկած կտավ, քսան-երեսուն գազ գույնզգույն մետաքսյա երիզ (դայրան) խանութների մեծագույն մասի առևտրականության պարագայքն էին։

Առավոտյան ժամից հետո, մինչև երեկոյան ավետարեր կոչնակի

հատվածական թիկթիկոցը, ծնկան վերա շոքած էին խստակրոն ճգնավորի անշուք խցիկների մեջ Կարբու նոր խոջաները։

Ուրիշ բանի նմանություն չենք կարող տալ խանութի պատվանունով վերաձայնված խոնավ և ցած հյուղերին։

Լայնարձակ ու լուսավոր շենքերի մեծ պահանջ էլ չկար. մի փոքրիկ եռակարգ կամ քառակարգ դաֆաղայ (դարակ) բավական էր կրել յուր վերա սակավաթիվ հաճախորդների մերկությունը ծածկող դյուրամատչելի կտավեղենները։

Խանութպանները Բայազետում հռչակավոր վաճառականի փայլը վայելող Կարբի գաղթած խոջաներն էին։

Արդեն համոզվել էին սրանք, որ Կարբու ներկա պայմանները չեն ներում իրանց նախկին վաճառաշահության փառքին բարձրացնելու իրանց նոր հայրենիքը, բայց ճար չունեին, ընկել էին՝ պիտի հաշտվեին նոր դրության հետ, իրանց կյանքի երկու երրորդ մասը վաճառականությամբ էին անցկացրել, այժմ, օր ծերության, ուրիշ գործ սկսել չէին կարող, պարապ մնալն էլ մահ էր իրանց։

Այդ պատճառով խոսքը մեկ արին, այդ ծակերը շինեցին՝ միայն ժամանակն սպանելու, մեկ մեկի երեսը տեսնելու և կորցրած փառավոր անցյալի քաղցր հիշողություններով շնչելու համար։

Բոլորովին տարբերվում էր թե՛ մեծությամբ, թե՛ նպատակով և թե՛ միջի ապրանքով խանութների վերջին ծայրումը գտնված մի հատիկ լայն ու բարձր կրպակը։

Մանրավաճառի շտեմարան էր այդ, քան թե, ինչպես ասում էին, խանութ։ Ընդարձակ սենյակի մի կողմը մեծ-մեծ պարկերի մեջ զետեղված էին մանրունք ծախողի բազմատեսակ ապրանքները, որոնք միայն առավոտադեմ անհանգիստ էին լինում. ուրիշ ժամանակներ ձեռք չէր դիպչում նրանց։

Խանութի առաջի կողմը, սակայն, մանր տոպրակների մեջ շարված էին գետնի վերա վերոհիշյալ ապրանքների տեսակները։

Մի միջին տարիներով մարդ, օրնիբուն շոքած ծնկան վերա, գոհացնում էր յուր փոքրաքանակ հաճախորդներին։

Ջհուտ Աղաջան էր նորա անունը։

Ինքը թեև ջերմեռանդ Հայ-քրիստոնյա էր, համեստ, առաքինի և աղոթասեր, բայց դեպքերի բերմունքը վերակնքել էր նրան Հակովբ Նահապետի հարազատների ամազանի մեջ։

Ջհուտ անունը սեփականություն էր ստացել Աղաջանն յուր նախկին պաշտոնից։

Նա մի ժամանակ բազազի ապրանքը մի կապոցի մեջ պինդ ամ-

բ-ցրած, ուսին ձգած, կիսագաղը ձեռքին, թափառում էր գյուղերումը և գյուղացոց հագուստն էր հայթայթում։ Այդ գործը շատ հին ժամանակներից Պարսկաստանից եկած հրեաների սեփականությունն էր։

Աղաջանը միակ հայն էր յուր պաշտոնով հրեաներին նմանող և երբեք չէր նեղանում, երբ ամենքն իրան ջհուտ էին ձայն տալիս։

— Ջհուտ Աղաջան, ջհուտ Աղաջան։

— Ջհուտ Աղաջան, լավ շիլա ունի՞ս։

— Ջհուտ Աղաջան, մի քանի գազ խամ չիթ տուր։

— Ջհուտ Աղաջան, մեր տանը քեզ կանչում են։

Աղաջանն ամենայն սիրով բոլորի կամքն էլ կատարում էր։

Աղաջանն յուր քաղցր բնավորությամբը բոլոր գյուղերի աչքն էր մտել. նա մի գեղեցկագեմ, բարակ երեսով, սև և բարձր ընչացքներով մարդ էր, զվարճախոս էր, քաղցրաբարո էր, բարեհամբույր էր և արդարամիտ էր։

Մանուկներն ամենքից ավելի սիրելի էին նրան։

— Ջհուտ Աղաջան, ջհուտ Աղաջան,— ձայն էին տալիս քամակից և վազում, նորա գիրկն ընկնում գյուղական երեխաքը։

— Ի՞նչ եք ասում եք, ի՞նչ եք ճվճվում եք, ջանե, ջան։

— Էգուց ո՞ր գեղը պիտի գնաս։

— Տո, չէ՞ գիտեք՝ էգուց ի՞նչ օր է։

— Գիտենք, բայց խնդրում ենք դու ասա։

Եվ նա քաղցր ժպիտը երեսին սկսում էր.

Երկուշաբթի, հինգշաբթի Աշտարակ,
Գինով կթրջեմ չոր բողազիս ծակ.
Չորեքշաբթի, ուրբաթ կերթամ Փարբի,
Իրիկուն քաղցած կդառնամ Կարբի։
Երեքշաբթի օրը քամբախ[1] Հանավանք՝
Զավարով վռիկ, չոր հացի փշրանք.
Շաբաթ օրն Եղվարդ զոռ կտամ ցորենին,
Մատաղագող մողնեցիք, ձերն է կիրակին։

— Մեղք չի՞, որ կիրակի օրն առևտուր ես անում,— խոսեցնում էին Աղաջանին մանուկները։

— Տո, ձեզի զուրբան, մողնեցին ի՞նչ ունի, որ ի՞նչ առևտուր անի, անբան մարդու տանը հաց, հագին շոր ե՞րբ եք տեսել. թե որ սուրբ Գևորգի վանքը Մողնումը չլինի, նրանք քաղցած կկոտորվեն. ամեն տուն տարենը մի երկու թափ խամ չիթ կառնի, կրնդեն, վիզները կգցեն, որ աշ-

[1] Ամբարակ։

նան Մողնու ուխտին տեղը մատաղի գողացած մոքթի տան. կիրակի օրն ես գնում եմ Մողնի նորա համար, որ ուխտավորն էդ օրը սուրբ Գևորգի դռնից անպակաս է, մողնեցու տանից մսի հոտ է գալիս, լի օրը գնամ չոռ ու ցա՞վ ուտեմ։

Բավական տարի էր անցել Կարբին շեն անելու օրից, և բոլոր ժամանակը Աղաջանն յուր սիրելի թափառական բազազությամբն էր պարապում։

Սկզբումն Խորայելի զավակները շատ խեթ աչքով էին նայում Աղաջանի վերա, բամբասում էին, նորա ազգանքը փոած ու անպետք էին քարոզում, բայց Աղաջանը կարծես խուլ էր դեպի այս տհաճությունները, գլուխը կախ՝ յուր ճանապարհն էր գնում։

Լսվում էր մինչև անգամ, որ հայր Աբրահամու թոռներն Աղաջանի դեմ դավ լարելու հնարքներ ևս մտածում էին։ Գտնվել է անգամ իրանց միջից մի հանդուգն, որ քաջասրտություն է ունեցել հայտնելու, որ ինքը սուրը կվերցնի, մի քարի տակ դարան կմտնի և երեկոյին Կարբի վերադառնալուս՝ Աղաջանի փորը կկոխի։

Խիստ ոգևորվել են երիտասարդ կտրիճի համազգայինքը, մոռացել են մի քանի բոպե իրանց բնական զգուշությունը և համայնական հանգանակությամբ կարգադրել են սուր գնել՝ ազատելով անձնազոհ քաջին հանգանակության վճարքից։

— Այդ ամենը շատ լավ,— ավելացրել է երիտասարդ վրեժխնդիրը,— բայց ձեզանից մի երկուսը թող գան ինձ հետ թաք կենան. լույսն ու մութը բաժանվելուց հետո ես վախենում եմ մեն-մենակ ամայի գաշտ դուրս գալու։

— Ես էլ եմ վախենում, ես էլ,— ձայներ է բարձրանում ամեն կողմից։

— Լռեցեք, սուս կացեք,— մեջ է հկել մի խոհականը, որ խորհրդականների հետ սկզբից անհամաձայն է եղել։— Էհ, սիրելիք,— ճառել է նա,— զուր եք բորբոքվում, ավելորդ եք տաքանում, ոչ դուք մի կոպեկ սրի փող կտաք և ոչ նա յուր երիտասարդության ցնորքները կարող է իրագործել. կռվելու, ծեծելու, սպանելու ընդունակությունը Տիրոջան վաղուց մեր բնավորությունից հանել է, Կուսի զավակի անեծքը մեզ պետք է ճնշի մինչև ճշմարիտ մեսիայի գալուստը, մինչև այն օրը մեր գլխին պետք է ծանրանա տեղից շուտ դարձնողի հասատ մուրճը, ինձ լսեցեք, մինչև այսօր մեր հայրերն ու պապերն ի՞նչ ճանապարհով գնացել են, դուք էլ նրանց հետքից մի՛ խոտորվեք, ձեր առևտուրը ճանաչեցեք, փող գանձելու հոգսումը կացեք։

— Հապա Աղաջանց մեր ջահերին վնասում է, մեր հաճախորդները խլել է։

— Երբեք չմտածեք, որ վաճառականության մեջ հայը հրեային հաղթե, դուք ձեր գործը ճանաչեցեք և խոհեմ եղեք. Աղաջանն ինքն իրան ետ կքաշվի ասպարեզից։

Անկարծիք, խելոք խորհրդատուն մարդարքի սերնդից է եղել. շատ չքաշեց, Աղաջանի ոտքը գյուղերից կտրվեց։

Մի օր էլ լսվեց, որ չհուտ Աղաջանն յուր չհուտությունին բարև մնաք է ասել, թողել է կտավավաճառությունը, ծածկել է Կարբու խանութների ամենավերջին մեծ ավերակը, գնել է բավականաչափ մանրավաճառի ապրանք և նստել է մեջը։

Ո՛վ ասես չզարմացավ, ո՛ւմ լեզուն նորա դեմ չբացվեց, Կարբու ո՞ր խոջան չգնաց չկանգնեց Աղաջանի նոր խանութի առաջին և գլուխը չշարժեց։ Ի՞նչ քամի է մտել այս մարդի քիթը, գժվե՞լ է, տարիներով չի կարող ծախել բերած ապրանքի կեսը, բոլորը կփտի, կփչանա, ցկորչի և այլն, և այլն. խոսք չմնաց, որ չասեին, հարցմունք չմնաց, որ Աղաջանի գլխին չթափեին։

— Ոտքերիս ուժը հատավ, հանգստանալ եմ ուզում,— պատասխանում էր ժպտալով ամենքին Աղաջանը։

Կարճ միջոցից՝ ամենքն իրանց սխալ ենթադրությունները ճանաչեցին, միաձայն վճռեցին, որ Աղաջանն յուր անելիքը լավ է հասկացել ու կշռել։

Աղաջանի շտեմարանի ապրանքը շուտ-շուտ վերջանում և նույն արագությամբ նորոգվում էր, ամիս չանցներ, որ Աղաջանի ոտքն Երևան չհանդիպեր. ամեն գնալուն բեռներով նոր ապրանք էր տուն ածում։

Իսկ ի՞նչ մարդիկ էին նորա հաճախորդները։

Կարբու միջնակարգ ժողովրդի որդիքն էին նոքա։

Այս այն դասակարգն էր, որ մսխել, վերջացրել էր Բայազետից բերած աննշան հարստությունը, որոնք Բայազետ եղած ժամանակ մանրավաճառի առևտրով են ապրուստ արել և այսօր ո՛չ այն կարողությունն ու հարմարությունը կա, որ իրանց նախկին սովոր գործը շարունակեն, ո՛չ Կարբու հանդն ու դաշտը օրինավոր ապրելու և կարգին երկրագործություն անելու միջոցն է նրանց ընձեռնում։

Հարկավոր էր կամ օրավարձ մշակության ընտելանալ, ինչպես որ շուտ սկսեցին Կարբու ստորին ժողովուրդը և կամ կյանքի ուրիշ եղանակ ընտրելու հոգսը քաշել։

Աղաջանը նախատեսեց և հաջողեց։

Նա նախ ապրանքը տուն բերեց. Կարբումը շտեմարանեց և ապա

կանչեց ձեռքից գործ եկող, պարապմունք որոնող երիտասարդներին, քարի խորհրդի հետ ապառիկ ապրանք հավատաց, մի-մի խուրջին յուրաքանչյուրի ուսիցը կախեց և շարքի անունը տալով՝ ցրեց ամենքին Կարբու շրջակա գյուղերը, ծայրը մինչև Ապարան հասցնելով։

— Տարե՛ք, ծախեցե՛ք, փոխարենը փող, բուրդ, ցորեն, յուղ, գարի, պանիր, չորացրած ծառապտուղ, մի խոսքով ինչ որ արժան կհամարեք, ստացեք, բերեք իմ հին պարտքը վճարեցեք, նոր ապրանք տարեք,— ասաց Աղաջանը,— կարող եք փողի փոխարեն ձեռք բերած ապրանքով ինձ վճարել,— համաձայնեց նա։

Այդպիսով, առաջին անգամն Աղաջանը ստեղծեց կարբեցի շարքիներին, որոնք մի ժամանակ մրջյունների նման ցրված էին Կարբու շրջակա գյուղերումը, իսկ այսօր հետզհետե չքանում են. նրանց տեղը գյուղերը խանութներով լցվում է։

Աղաջանը սխալված չէր. տանը հանգիստ նստած՝ ընդարձակեց յուր առևտուրի ճյուղերը։

Զգալի նեղությունը, որ կրում էր, այդ, ինչպես ասացինք, ամիսը մի անգամ բարձած բեռներով Երևան գնալ և կրկին բարձած բեռներով դառնալն էր. գնում էր շարքիների հավաքած բարիքով, գալիս էր շարքիներին մատակարարելիք մանրավաճառի ապրանքով։

Աղաջանի խանութն էր ամենքից առաջ բացվում Կարբումը. դեռ առավոտյան կոչնակը չէր ծեծված, որ մինը մաղթանքներ մրմնջալով՝ Կարբու նեղ շուկայովն անցնում էր. այդ Աղաջանն էր մութե-մութ բարի լույս տալիս յուր խանութի դռանն արդեն սպասող շարքիներին։

Հենց այդ հարգելի պատճառով տերտերն իրավունք էր տվել Աղաջանին կիրակի օրերը միայն ժամ գալ։

Քանի գնաց Աղաջանի նշանակությունը բարձրացավ Կարբու և մոտիկ գյուղերի մեջ։

Յուր բնատուր բնավորությամբ նա մտածեց անճարների ու կարոտյալների կարիքին ևս հասնել դժվար դրպեներումը. արքունի հարկը ժողովելուս, հացի սակավության դեպքերում, նա ինքն յուր կողմից էր առաջարկում կարևոր նպաստը։

Այս օգնությունն անում էր նրանց, որոնք կարող էին ընչով և իցե, երբևիցե վերադարձնել յուր տվածն աննշան տոկոսով։

Բնական էր, որ չհուտ Աղաջանի անունը ամենի բերանից օրհնությամբ էր լսվում. ժողովրդի մեջ սառն արհամարհանքով հնչվող «չհուտ» խոսքը Աղաջանի անվան վերա մի տեսակ քաղցր և համակրական ներդաշնակությունով էր արտասանվում։

Մի առավոտ շարքիներին ճանապարհ դնելուց հետո՝ մինչ ծունկը

գետնիցը կտրեց Աղաջանը, կամենում էր խանութը փակել, տուն գնալ, յուր ստամոքսի պահանջը լցնել, ինչպես ինքն ասում էր՝ մի քիչ նհար անել (նախաճաշել) և ետ դառնալ, խանութը ներս ընկավ հանկարծ մի բոկոտն ու անվստահ պատանի և ուղղակի չոքեց, Աղաջանի ոտքը համբուրեց։

— Յա, դու ծո՞ւռ ես, տղա, էդ ի՞նչ ես անում ես։

— Քո դուռն եմ ընկեր եմ, ամի (ճորեղբայր),— գլուխը կորցրած ալեխարշ դեմքով մրմնջաց պատանին։

— Տղա, ի՞նչ կուզես։

— Ինձ չրաղ արա, մի կտոր հացի տեր չինիր։

— Տղա, Բղդե, դու դեռ երեկվան ճիժն ես, ես քեզի հետ ի՞նչ անեմ,— ուսերը վեր քաշեց բարեսիրտ չհուտ Աղաջանը,— ընչի՞ այսօր չես գնացել Աշտարակ խաղողաքաղ, մի քանի ճութ խաղող կբերեիր, մորդ հետ կուտեիք, մե՞ղք կլիներ։

— Խաղողով փոր չի կշտանալ, ցամաք հացի գին է պետք, էդ մի կտոր հացը քո ձեռքովն ինձ տուր, իմ տերս և բարերարս դարձիր,— գլուխը վեր բարձրացրեց և հաստատապես ասաց Սալբու տղան։

— Տղա՛, Բղդե՛,— խորամուխ նայվածքով հարցրեց Աղաջանը,— դու քանի՞ տարեկան ես։

— Ադես (մայրս) ասում է, որ Կարբումն ինձանից առաջ ոչ մի բայազետցի երեխա չի աշխարհ եկել։

— Տեսա՞ր, 15 տարիդ նոր է լրացել, ես քեզ ի՞նչ կարող եմ անել։

— Ոչինչ և ամեն բան։

— Ի՞նչ։

— Աշխարհքը քո հացն է ուտում, գեղերը ման եկող բոլոր չարչիներին դու ես ապրանք հավատում, քո արդար վաստակովն են նրանք առևտուր անում. քո ի՞նչդ կպակասի, որ շատերից մինն էլ ես լինեմ։

— Տղա, բերանիցդ ծծած կաթիդ հոտը գալիս է, դու ի՞նչ չարչուություն անող ես։

— Ոտքդ պագնեմ, տարիներիս մի՛ նայիր, ահա այս թող քեզ մոտ գրավական մնա,— ասաց Բղդեն և դրեց Աղաջանի առաջը մի փոքրիկ ձեռնաչափ կապոց։

— Ի՞նչ է այդ,— հարցրեց Աղաջանը։

— Բա՛ց և տե՛ս։

Աղաջանը վեր առավ կապոցը, ձեռքի մեջ չուռեցուռ տվեց, շոշափեց, ուսերքը վեր քաշեց, գլխով, աչքով տարակուսանքով շարժումներ արեց և մեկնեց դեպի Բղդեն։

— Ինքդ բաց արա՛,— ասաց նա։

— Ո՛չ, քո օրհնված ձեռքը թող կպչի իմ արդար վաստակին,— բարեսրտական շարժում արեց Բղդեն։

Աղաջանը շրթունքներն ուռեցրեց և ստիպվեց կապը քակել։

Մի ուրիշ նույնպիսի փալաս գտավ նա կապած, ետ արեց և՛ երկրորդը, և՛ երրորդը և՛ չորրորդը։ Շարունակ միմյանց հետևում էին նոր կապեր։

— Տղա, էս մասո՞ւնք է, սրբի գերեզմանից առած օրհնության հո՞գ է, ի՞նչ է, որ հազար փալասում կապել ես։

— Ծառա եմ սրբերին,— պատասխանեց Բղդեն,— մասունքն և օրհնությունը սուրբ բաներ են, պատիվ ենք տալիս, մի քանի կապերի մեջ ենք պահում, բայց մարդիս հալալ քրտինքն էլ յուր համար գին ու արժեք ունի։

Վերջապես Աղաջանը քակեց վերջին կապը։

Նա շշկլեց, շփոթվեց և փաթեթների միջից դուրս եկած առարկան ձեռքից ցած գլորեց յուր նստած թաղիքի վերա։

— Յամա՛ն, Աղաջան ամի՛, գլխիդ մատաղ, խնայի՛ր, իմ դառը քրտինքն է, այդպես արհամարհանքով գետինը մի՛ ձգիր,— ասաց պաղատագին Բղդեն և հափշտակեց, քան թե վերցրեց գետնից նվիրականությունը և մեկնեց դեպի Աղաջանը։

— Տղա՛, էս ի՞նչ երկու շահանոց է։

— Քեզ ասում եմ, որ իմ առաջին աշխատանքն է՝ հալալ ապրանքն է, իմ հարստության մայեն (խմորն) է,— շափահաս և հասկացող մարդու ծանրությամբ պատասխանեց Բղդեն և մի առ մի պատմեց երկու շահանոցի ձեռք բերելու դեպքը։— Այս երկու չորուկ շահին ինձ երեխայությունից կատարյալ տղամարդ շինեց,— շարունակեց Բղդեն,— ինձ հիվանդացրեց, գերեզմանի դուռը տարավ, բայց էլի ետ բերեց. հիվանդ ժամանակս իմ ցավերը մոռացած, սրա վերա էի մտածում, սրա հույսովն էի ապրում. սրանով ես հասկացա, որ փողը քաղցր բան է և ահա բերել եմ քեզ մոտ, ավանդ եմ դնում մոտդ, պահիր այս իմ համար ամենաթանկագին իրը և փոխարենը ապառիկ ապրանք հավատա, տանեմ գյուղերումը ծախեմ, բերեմ քո փողը տամ, ավելցուկը սորա վերա դարսեմ։ Աղաչում եմ, երբ կամքդ կտա, Աղաջան ամի՛, ապրանք բա՛ց թող ինձ. մոտդ պահի՛ր իմ երկու շահանոցը, լա՛վ պահիր, քո ձեռքովը կապոտի՛ր կրկին յուր փալասների մեջ և թող քո փողերիդ կողքին ընկած մնա. մի՛ կորցնիր, ձեռքից մի՛ թողնիր, դա իմ քիսադիբին է լինելու։

Բղդեի խոսքերը շատ վստահ էին, մի հաստատակամություն, մի

գերբնական զորություն, մի անընկճելի կամք պարզ նկատվում էին նորա մեջ, նորա ներսումը, կարծես, բորբոքում էր մի հնոց, որի ծխնելույզը նորա կայծեր արտացոլող աչքերն էին։

— Դու հաց կուտես, զավակս, քեզանից մարդ դուրս կգա,— ասաց և գրկեց Աղաջանը Բղդեին,— ահա՛ դու, ահա՛ իմ խանութը, տա՛ր ինչքան կամենաս, ո՛ւր կամենաս, դուռս քեզ համար միշտ բաց է, քեզ արգելք չկա, իսկ այս քո երկու շահանոցը կրկին դի՛ր քսակիդ մեջ, թող քո քիսադիբին քո ծոցումը մնա։

— Ո՛չ,— գլուխը շարժեց Բղդեն,— մինչև որ իմ երկու շահանոցը ձագեր չհանի, ես քեզանից տանողը չեմ. սա մեղուների փեթակի մայրն է, սա խոզի մերուն է, տարին մի քանի անգամ ձագ պիտի տա, շատանա, ապա թե նոր ես քո արկղիցդ հանեմ, յուր համար առանձին փեթակ շինեմ։

— Ուրեմն թող այս դնենք առանձին քսակի մեջ, թող յուր առանձին բունն ունենա. ահա ա՛ռ այս քսակը, կապի՛ր քո ձեռքով սրա բերանը, որ կրկին ինքդ բաց անես։

Այդ օրից կարբեցի չարչիների թվում գյուղերը թափառող մի մանուկ չարչի էլ ավելացավ։

Դա Բղդեն էր, որ դասավորեց խուրջինի մեջ կարևոր ապրանքը, համբուրեց ջհուտ Աղաջանի ձեռքը և ճանապարհ ընկավ։

Ը

ՀԱՄԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԿՑԱՆՔ Է

Ո՛վ ասես, որ առաջին անգամը փորը բռնած չծիծաղեց, երբ լույս ընկավ գյուղերումը ճղճղոտված, պատառոտված, բոկոտն մանուկ չարչին, ո՛ր ծակ բերանը նորա վերա չխոսեց, ո՛ւմ ձեռքն ասես, որ խեղճ Բղդեի գլխին չբարձրացավ. նա ամենքի խոսակցության նյութը դարձավ։ Բարկություն, հայհոյանք, ծաղր ու կատականք, հեգնություններ, արհամարհանք մեծ ու պստիկից, արուից ու էգից նորա գլխին էին թափվում։

Տղամարդիկը ծիծաղում, անց էին կենում, պառավները հինգ մատը ետ բաց արած՝ չանչում էին, հարսներն ու աղջիկները քիթ էին բարձրացնում, իսկ երեխայքը օյին չէր մնում, որ գլխին չխաղային,— հող էին ածում գլխին, խուրջինն էին ձգձգում, շներին էին գրգռում ու ինչ տեսակ նեղություն ասես, տալիս էին։

Մի տեղ լալիս էր Բղդեն, մյուս տեղ գլուխը քաշ՝ լլսելու գնումանց կենում, իրանից փոքր երեխաներին ձեռքի փայտովը հալածում, մեծերին մի բուռը չամիչ տալիս, աղջիկներին ասեղ ու քորոցներ բաշխում, հարսներին ծածուկ դեղադիրք ու ասղամաններ ցույց տալիս, պառավներին մեծ ծամելու մաստակ առաջարկում և յուր գործն առաջ տանում։

Այնուհետև ոչ ոք Բղդեից չէր խրտնում, ոչ ոք նրան չէր վիրավորում, ընդհակառակն՝ շատերը հետաքրքրությամբ լսում էին նորանոր շարադրած գովասանական մեղեդին, երբ նա ձեռքով խուրջինը ցույց տալով՝ նորա միջի ամեն մի ապրանքի համար մի-մի հրապուրիչ խոսք էր շռայլում։

Բացվեց հետզհետե Բղդեի բախտի դուռը, նրանից ձեռնտու չարչի չէր լինիլ, քաղցրալեզու, էժան ծախող, ապառիկ հավատացող և անվնաս։

Սիրելի եղավ մանավանդ ազապ աղջիկներին ու չխոսկան նոր հարսներին, մի մատն երեխին ո՞վ մարդատեղ կդնի, ո՞ր մայր ու սկեսուրը կբարկանան, եթե հարգևոր հարսներին ու ամոթխած աղջիկներին տեսնեն օտարական մանուկի հետ քնթակալը ցած թողած, խոսալուս ու ծիծաղելուս. ամոթ կլիներ, եթե նրանք մեծ մարդկանց հետ այդ կերպ վարվելիս լինեին. ի՞նչ անենք, թե օտարական են, զարիբ են, տղամարդը տղամարդ է, տղամարդին պատիվ է հարկավոր, մուրացկան զզզված աղքատի հետ էլ հարս ու աղջկեքն էլ իրավունք չունեին խոսելու։

Դրանից ավելի նպաստավոր դե՞պք. ասել չի պետք, որ նորա առևտուրը կարճ միջոցում հաջող ընթացք ստացավ, նորա գնորդները հետզհետե ավելացան։ Շատ չքաշեց, Բղդեն գյուղերի համար սովորական դարձավ, ամեն բակի ազատ այցելուն համարվեց. շները մինչև անգամ հետը բարեկամացան, երբ որ նորա տված կակուղ բոքոն հացի ճաշակն առան։ Էլ ի՞նչ ասել կուզե, որ Բղդեի ապրանքը ուրիշ չարչիների ծախածներից գերազանց հռչակվեցավ։

Ամենքի ջուրը գտավ Բղդեն, ամեն պայմաններ հեշտացրեց, միայն մի կողմից շատ դժվար դրության մեջ էր և երկար միջոց պարտական էր դիմանալ։

Կարբու մյուս չարչիների աչքի փուշը լինելը շատ բնական էր. նրանց դեմ մի վտանգավոր ախոյան էր առաջ եկել և այդ շատ ցավ էր չարչիների համար, այդ նրանց մտածության գլխավոր հոգսերից մեկն եղավ։

Ահա՛ վերադառնում են նրանք ամենքը մի գյուղից, երեկոյան դեմ և սովորական ողջույնից հետո սրտի ցավերը միմյանց սրարզ հայտնում։

— Այսօր առևտուրդ ի՞նչպես էր։

— Կար, էլի՛. իսկ քո՞նը։

— Էլ մի՛ հարցնիլ, ամեն խեր ու բարաքաթը կտրվել է։

— Հանդիպե՞ց քեզ լամուկը։

— Ո՞ւր է, ձեռք ընկնո՞ւմ է, որ մարդ զարկի շան նման սատկացնի։

— Ինձանից էլ միշտ խափս տված է ման գալիս։

— Գյուղերումը մեկ-մեկ աչքի է ընկնում, բայց գյուղամիջին ի՞նչ կարող ես անել։ Մի օր Կարոն Աշտարակումը մի շամառ (ապտակ) էր հասցրել, գեղովի հավաքվել էին, խեղճ Կարոյին էնքան թակել էին, որ գնացած ճանապարհը մոռացել էր։

— Դա մեր հացը կկտրի։

— Զարչին էլ չարչի լինի, ում ցավ կթվի, գետնի երեսին չի երևում. Պողոս աղայենց դռան երեկվան շների լափի գուրը (գուբ) լպստողն է, էսօր մեր ոտքի տակ սառույց է դնում։

— Ո՛ր տունը մտնում ես, մի գլուխ լսում ես, թե կոլոտ Բղդեից առանք էժան, լավ ու նիսիա։

— Ջհուտ Աղաջանն է մեղավոր. ո՞ւմ ասես ապրանք է բաց թողնում։

— Գնանք խնդրենք, որ էլ չտա։

— Մարդ յուր հացին քացով կտա՞, նորա ապրանքը ծախվի՝ մրսխողն ով կուզե, թող լինի։

— Հետո Բղդեն փող տալի՞ս է։

— Հապա Աղաջանին հարցրու... դուք շաբաթ օրերն էլ չեք կարողանում ձեր շաբաթական հաշիվը վերջացնել,— ասում էր ինձ ջհուտ Աղաջանը,— Սալբու տղեն ամեն իրիկուն բոլոր աշխատած փողը բերում, ինձ է տալիս։

— Որ էդպես է, բոլոր շարչիներս խոսքը մեկ անենք, որս հասնենք, քիթ ու մռութը տրորենք։

— Դու ես ասում, թե գյուղերումը չի կարելի, ճանապարհին էլ ձեռք չի ընկնում, չոլերովն է գնում-գալիս։

— Օրական մեկը մեզանից թող հերթով բուսուն պահի (դարան մտնել), լույսը չբացված՝ ճանապարհը կտրի, հենց որ Կարբուց դուրս եկավ, բռնի մի լավ ծեծի և անցկենա յուր գործին գնա։

Վերջին հնարքն էլ չհուսահատեցրեց Բղդեին. շաբաթ չէր անցնում, որ մեկ ամիս մյուս շարչու ապտակների համը չտեսնի. գոռում էր, լալիս էր ու կրկին ուժեղ հակառակորդի հեռանալուց հետո՝ վեր կենում, աչքերը սրբում և ճանապարհ ընկնելով ասում.

— Դաղած եզը լավ կալ կանի, էնքան է՝ դուք ինձ կենդանի թողեք, օրական տասն անգամ ծեծեցեք, օր կգա, որ փոխարենը մեկ-մեկ կստանաք, կսպասենք կտեսնենք,— համբերությունը կյանք է։

Գ.

ՄԱՏԱՄԲՅ ԿՆՔԵՑԻ

Գյուղ չմնաց Կարբու շրջակայքումը, ուր Բղդեն պարտապաններ չունենար, տուն չմնաց, որ մի տեսակ նորա հետ չկապվի. նա այժմ մարքամեջ է մտել, մարդի կարգն է անցել և իրավունքները մեծացրել է։

Ո՞վ ասես՝ նրան բարև չի տալիս, նորա հետ հարց ու բարով չի անում, նրան չի ընդունում, ո՛ւմ անունը չկա նորա ծոցագրպանումն ու ձեռաց տոմարի մեջ։

Առաջինումը մասնավոր մուրհակներ էին մի-մի կտոր թղթերի վերա գրած, երկրորդումն առձեռն ապառիկների ցանկն էր՝ հիշողությունից չթռչելու համար։

Գիր ու գրիչ անծանոթ էին Բղդեին, և նա կարիք էլ չէր զգում։ Թեպետ գրաճանաչներ մատով էին հաշվարկվում այն ժամանակը, բայց այդ եղածներն ամենքը պատրաստ և պարտական էին նորա էրքով (վրա-տանարեն) առաջարկած խնդիրը կատարել։

— Ի՞նչ անենք, ախպեր, կարո՞ղ ենք չէ ասել, աշխարհքն էն օրին է հասել, որ մի կտոր գունդ ու կծիկ, անճոռնի, երկոտանի անասունին մեր գլխի տերն ենք շինել, մենք մեր ձեռովը ազատ ստրուկ ենք գրվել,— արդարանում էր ուրիշների և իր սեփական ես-ի առաջին գյուղական գրագետը, երբ ստիպված էր լինում կարևոր գործը թողուլ և ժամու ու տարաժամու Բղդեի խոսքը լսել, նորա ապառիկը գրել։

Ջուր էլ նեղանում էին, շատ ժամանակ կորցնելու ոչինչ չկար, մի անուն միայն պետք է նշանակեին և ապառիկի գումարը։ Ձեռաց ոտքի վերա գրում և իրանց գործին էին գնում։

Մեծ ցավ էլ չէր Բղդեի համար, եթե գյուղերումը գրչի տեր էլ չգտնվեր. ո՛ր տերտերը նորա սիրտը կկոտրի, ո՛վ չի հոտոտել Բղդեի մոր ձեռքով պատրաստված, ախորժ փոշտացնող, անուշաբույր քթախոտը։ Բացի եզան փամփուշտի մեջ ծախելու համար ունեցածը՝ Բղդեն միշտ գրպանումը պարկը լիքը պատրաստ ծխախոտ ուներ. ծեր իշխանների, պառավ մեծ նանիների և ամեն մի քթախոտի սիրահարի հանդիպելիս՝ առաջին գործը պարկի կապը ետ բաց անելն և քաղաքավարությամբ ու ժպտալով մոտ տանելն է լինում։ Անիծածը շատ ժամանակ չքաշողների ախորժակն էլ գրգռում էր. էնպես շնորհքով էր առաջ բերում, թավադա անում պարկը, որ չէ ածել չէիր կարողանում, մի պտղունց վերցնում էիր, մինչև քթիդ վերին ծայրը ներս քաշում ու երկու զույգ մի կենտ փռշտում։

— Առողջություն,— ձեռաց վերա էր բերում Բղդեն ու իր սիրելի

բոշի տղա եղբորը ձեռքով առաջ վարում։ Էսօր մեկ, էգուց երկու, և Բղդեն լավ գիտեր, որ երրորդ օրը գրպանումդ մի քթախոտի պարկ պետք է բուն դնի և ուրիշ պարտքերիդ վերա թութունի փող էլ ավելանա։

Քթախոտի պարտքը չէր նշանակվում Բղդեի ձեռաց տոմարի մեջ միայն տերտերների վերա։ Հենց այդ էր պատճառը, որ Բղդեն ոչ մի նավակատիկի, ոչ մի մեռելոցքի գերեզմանատուն չէր գնում. մի կոպեկ յուր հոր հոգուն հիշեքի կամ գերեզման օրհնեքի չէր տված և կարիք էլ չկար, որովհետև ամեն անգամ տերտերի քթախոտի պարկը լցնելուս՝ նա յուր ականջովը լսում էր տեր հոր օրհնությունը։

— Աստված ծնողիդ հոգին լուսավորեսցե։

— Մորս էլ օրհնի, տեր հայր,— ավելացնում էր Բղդեն,— մայրս յուր ձեռովն է պատրաստում Մշու թամբաքուից էս անուշահոտ բուռնությունը։

— Աստված մորդ կոների ուժը չպակասեցնի,— ասում էին տերտերները, բայց երբեմն էլ ավելացնում էին.

— Ուղիղն ասա, եղբայր Բաղդասար, էս անգամի բուռնութու երկու բաժինը, հենց իմանաս, ծեծած ածուխ լինի, թամբաքուի հոտը շատ քիչ է։

— Ողջ մեկ է, տերտեր, հոտը գա՝ բավական է, քսակներիս վնաս կլիներ Մշից թամբաքու բերել տալ. փառք աստծու, ձորը լիքն է ուռի ծառերով, անփող, անփարա, ինչքան սիրաղ կուզի, էրի, ածուխ շինիր, փոշի արա, մի երկու թութունի տերև էլ հետը տրորի, երկու հատիկ միակ, հիլ, կոլոլ տաքդեղ, և ահա բուռնությունն պատրաստ է, էնքան քաշեցեք՝ քթներդ մրմռան. ես քաշող չեմ, որ դարդ անեմ։

— Այ տղա, ասած է՝ «շիտակ խոսքը հանաքով կասեն», չլինի թե ուղիղ այդպես է։

— Կեսն է հանաք,— կատակի էր տալիս Բղդեն ու տերտերի պարկը լցնում ու յուր էշը քշում, գիտենալով անշուշտ, որ շատ չի տևիլ՝ մեկի հետ կրկին դեպի տերտերը կվերադառնա։

Բղդեի հաշիվն ուղիղ էր։ Օր չլիներ, որ մեկ կամ մյուս պարտապանի մուրհակը չնորոգել տար կամ նոր մուրհակ չավելացներ յուր ծոցաթղթերի մեջ։

Մի որոշ սահման էր նշանակել նա յուր ձեռաց ապառիկները մուրհակի փոխելու համար։

Խոսք չկա, սկզբում կոպեկներ էին լինում այդ պարտքերը, որոնք աստիճանաբար աբասու, հազար դեանի (30 կոպեկի) և ապա մանեթի ու թումանի էին փոխվում։ Մի հազար դեանը 5000 դեանի (1 ռ. 50 կոպ.) հասավ, նա կգնջվի ձեռնատոմարից՝ և մուրհակի կփոխվի. վեց ամիսը մի անգամ էլ մուրհակի տոկոսը գլուխ կդառնա։

Բղդեի առավելությունը մյուս չարչիների վերա այս էր, որ ուրիշների նման երբեք ինքը չէր ձանձրացնել պարտապաններին վճարելու կամ մուրհակը նորոգելու. ի՞նչ մի աներևույթ ուժ կար նորա մեջը, որ ամեն մարդու ստիպում էր դեպի պարտաճանաչություն։

Շատ են խոսեցել այդ մասին խելացի մարդիկը և այդ մեծ զորությունը գտել են Բղդեի աչքերի, նորա հայացքի մեջ։

Մի քանի տեսակ նայվածք ուներ Բղդեն. այլ էր նոր մուշտարու հայացքը. ուրիշ էր ջահել աղջիկներինը և նորահարսներինը. սրանց երկուսի միջի եղած զանազանությունը շատ չէր, մի տեսակ քնքշություն նկատելի էր աչքերի, դեմքի, շրթունքների և շարժմունքների մեջ, ձայնն էլ, կարծես, կորցնում էր յուր բնական խոպոտությունը և մի քաղցրանվագ առաձգականություն էր ստանում։ Պառավ կանանց հետ առևտուր անելու ժամանակ աչքերի բիբերը շուտ-շուտ էին պտույտներ անում, մի կիսահեգնական արտահայտություն էին զգալ տալիս խոսակիցներին, բայց ոչ այն չափով, որ սրտնեղելու իրավունք ունենան. գյուղերումը նշանակություն և իրավունք ունեցողների հետ խոսելու ժամանակ նորա աչքերն իրանք իրանց կորանում էին և խորին հպատակություն ու ակնածություն էին արտահայտում, պարտապաններին մուրհակ տալու կամ նորոգելու հիշողություն անելիս բիբերը մի քանի վայրկյան դադար էին առնում շարժողությունից և հենց իմանաս, թե դուրս էին թողնում իրանցից ասեղներից էլ բարակ սուր-սուր նետերի տրցակներ (կապեր) և շաղ էին տալիս պարտապանի սրտի խորշերումը։

Այդ ժամանակ, ինչքան որ խստասիրտ կամ յուր հաշիվների մեջ անճշտություն սիրող պարտապան լինում էր, ինքն էլ շտապում բարև տալ Բղդեին, կանգնեցնել և հիշեցնել նրան յուր պարտքը։

— Բղդե ջան, ի՞նչ անենք, որ երկու օրից փողիդ ժամանակն է ու ձեռքս պակաս է,— մոտ է գալիս ձեռքը բոշի տղի վզին դնում փողոցի մեջտեղը որևէ մի պարտապան, դիցուք, փարբեցի Մաղաքը։

— Քո ցավը տանի, Մաղաք ջան, ունեցած ժամանակդ տուր, ո՞վ է քեզանից էսօր փող ուզողը, տաս էլ՝ ի՞նչ պետք է անեմ, քեզանից լավ մարդի եմ տալո՞ւ։

Ի դեպ՝ մեր Բղդեն այժմ քաղաքակրթվել է, նա աշխատում է որքան կարելի է փախս տալ յուր մայրենի բայազետցու բարբառից, չգիտենք՝ ամոթ է համարո՞ւմ, թե՞ Արարատյան բարբառի ճաշակին է ընտելացել նորա լսողության գործարանը։

— Ուրեմն թուղթը նորենք, մինչև աշունքը կալ ու կուտը կժողովենք, բաղդամասիլը (այգեպտուղ) տուն կածենք, հոգիս կպզատեմ,— առաջարկում է ինքը Մաղաքը։

— Ինչպես քո բարի կամքդ կհաճի։

— Թե էդպես է, էգուց սանադը (մուրհակ) չմոռանաս, հետդ վերցնես։

— Մեկ էլ ընչի՞ եմ էգուց քեզ նեղություն տալիս, Մաղաք ախպեր, եթե կկամենաս, թուղթը մոտս է, մեկի հետ հաշիվ ունեի, կապոցը վերցրի, ծոցս դրի, թե չէ ո՞ւմ միտքն է գալիս, տարիներով տան քնջումը թոզերի միջին ընկած մնում է, երեսին էլ չեմ մտիկ տալիս. մի օր էլ մերս, չիմանալով, աղբի հետ սրբել էր ու տարել աղբանոցը քցել. մեկ էլ մերս ետ է մտիկ տալիս, տեսնում, որ շներն աղբը խառնշտորում են հացի փշրունք գտնելու համար ու մի շուն դնչով մի կապոցի պես բան է քանդքնդոտում. բարկանում է, բերնիցը խլում, տեսնում թղթեր, վերցնում է տուն բերում, էլ ետ քնջումը վեր քցում։

— Ախպեր, լավ մարդ ես, որ պարտքիդ թղթերն անտեր անտիրական շպրտում ես,— զարմանում է Մաղաքը,— իմը որ լիներ՝ օխտը փակի տակ կպահեի։

— Քո արևը, տարիներով միտքս էլ չեն գալիս, Մաղաք ջան, թեկուզ կորչին, էսքան էլ դարդ չեմ անիլ,— նա հոգածության չափը ցույց տվեց յուր եղունգի ավելորդ մասը,— ընչի՞ց եմ վախենում, ես հարամկեր մարդկանց հետ հաշիվ չունեմ, իմս ախպեր-տղերքանց հետ է, որ բոլորովին չտան էլ, իրանց մոր կաթի պես հալալ. ախպերությունովն եմ երդում ուտում, Մաղաք ջան, որ էսօր էլ չէի սանադները վերցնիլ, թե որ քեզ պես մի ազիզ բարեկամ երեկ ինքը զոռ արած չլիներ, թե մուրհակս բեր, հաշիվը վերջացնենք։

— Բաս էդ լավ էլավ, հենց էսօր գրենք, վերջանա կորչի։

— Քո քեֆն է։

— Ո՞ւմ գրիլ տանք։

— Հրե, այ, տերտերն իշխանների հետ պատի տակին նստած՝ զրից են տալիս։ Աստված իրան փառոց պահի, չի էլ թողալ բերան բանանք, դու էշը քշի դպա ժամի բակը, ես աչքով կանեմ տերտերին, մեզանից շուտ կգա։

— Լավ գրի, աջիդ մեռնիմ, սխալ չգաս, շահը ուղիղ հաշիվ արա, հոգու պարտք է՝ ուտի որդին, վճարի հոգին,— սրտի անկեղծ համոզմունքով աղաչում է Մաղաքը։

— Գլուխն ինչքա՞ն է,— մեջքը եկեղեցու պատին տված՝ նստում է քարի վրա տերտերը, մինչև կոլոտ Բղդեն չոշշ... անելով դեմ է ձգում սև իշուկի վզին մահակը, ձեռքը ծոցը տանում, հանում յուր գրպանից կապույտ կտավի քսակը, զգուշությամբ ետ է բաց անում երիզը և մի ուրիշ կապոց հանում միջից, արձակում հանգույցը և մի ծալք ծալծլոտած ու

աղտոտած թղթեր դուրս հանում ու մեկ-մեկ իշի համետի վերա եռ գարսում, մինչև որ վերջապես գտնում է Մաղաքի մուրհակը։

— Լավ իզան (հիշողություն) ունես, ախպեր Բղդե, որ անկարդալ տեղովդ կարողանում ես սանադներն իրարից ջոկել,— զարմանում է Մաղաքը։

— Դժվարն աչքդ մի անգամ վարժեցնելն է,— պատասխանեց Բղդեն,— մեկ էլ որ հենց այբ-բենը չպիտի իմանանք, որ գրի սևն ու սպիտակը զանազանենք, ես էլ իմ գրերն ունեմ, այ, մտիկ տուր, սրանք են իմ գրերը։

Արդարև, ամեն մի մուրհակի արտաքին ծալքի վերա չինական նշանագրերի նման որոշ խաղխզվածքներ կային գծված. նոցանից յուրաքանչյուրը մի պարտապանի անունն էր։ Բղդեի՝ յուր սեփական մտքի ծնունդն էին նոքա։

Ցուր բազմակողմանի ընդունակությանց հետ՝ մի սուր հիշողություն ևս չի զլացել Բղդեին բնությունը. նա գիտե ամեն մի մուրհակի բովանդակությունը, գումարի, տոկոսի, կրկնատոկոսի հաշիվը և ամսահամարը, նա ամսով առաջ հաշված և պատրաստված ունի առաջիկա ժամանակամիջոցի դրամագլխի որքանությունը և նա այդ անում է, հաստատ գիտենալով, որ յուր պարտապանն այժմ վճարելու չէ յուր պարտքը։

Ահա Բղդեն գտավ Մաղաքի մուրհակը— փալասից ետ տված լեղակի գույնով կապտացած մի փոքրիկ թղթի կտորը և տվեց տերտերին։

— Օրհնած Մաղաք, դե ասա, թե գլուխը որքան է, մեկ էլ աչք ցավացնենք, կարդանք, ծերացել եմ, աչքերս լավ չեն տեսնում։

— Գլխի մասին էլ մի հարցնիլ, աջիդ մատաղ,— սրտի ամենամութ անկյունից մի հառաչ է արձակում խեղճ Մաղաքը,— թե գլուխն ես ուզում իմանալ, մի պոպոք (ընկույզ) մեծացել՝ ձմերուկ է դառել. մեր տնեցիք ասեղ-մասեղ էին առել, էլ չէին մտածել, թե մի բուռն ալյուր, մի ամանով չիր ու փշատ տան, վերջացնեն. մնացել էր նիսիա (ապառիկ), իմ արխալղի համար էլ զայթան (երիզ) ու կոճակներ էին հարկավոր, էն էլ վրեն ավելացրինք, գարնան թագավորական խարջից (հարկ) մի մանեթ պակաս էր, օխտը դուռն ընկա՝ տվող չելավ, յասաուլն ու զազախը չէին թողնում, թե ոտս ուտի առաջ դնեմ, զամշի (մտրակ) էր, որ թիկունքսխառը, ուսագլխներիս հասնում էր. մնացել էի մոլորված, շնորհակալ եմ, սորա հերը լույս գառնա, էն կողմիցը դուրս եկավ, Գալս տեսավ յուր բարի աչքովը, առանց իմ բերան բանալու ինքը մոտ եկավ, քիսեն հանեց, մանեթն ռեխները գցեց, մեջքիս դաղդղորիկ գալը կորեց, երեխեքանցս տակի կարպետը ծախելուց ազատեց։ Հին պարտքն ու նորը հաշվեցինք, էլավ հինգ հազար դեան տասը շահի (1 մանեթ 65 կոպեկ)։

Շահը գլուխ արինք, դառավ վեց հազար դիան. ժամանակին ձեռքներս չհասավ, որ տայինք, յախեքս (օձիմ) ազատեինք, հիմի հինգ մանեթից ավելացել է. էնպես չի՞, ախպեր Բղդե։

— Միտքս չի գալիս, գիրը կխոսի, ինչ որ կա՝ կա, իմ ասելովը չի ավելանա, քո խոսքովը չի պակասիլ, եթե ուզում ես, քո գլխին մատաղ լինի, թուղթը ճղենք՝ կորչի։

— Վա՛, աստված էն օրը մահ տա, Բղդե ջան, մեր հոգու պարտքն է, քեզանից քաշեմ, կտրեմ, քո դառը, հալալ քրտինքին չար աչքով մտիկ տամ, ո՞ւմն ուտացնեմ։

— Ախար ընչի՞ հք ծոծռացնում, ձգձգում, ինձ նեղություն տալիս, ա՛յ որդիք, դուք երկուսդ էլ անպատճառ ձեր առնելացուկի ու տալացուկի հաշիվը լավ գիտեք, ասացեք ու վերջացրեք. մեկ էլ աչքերիս զոռ չանեմ,— արդար տրտունջ հայտնեց հազալով և կոկորդը մաքրելով տեր հայրը և ճարահատյալ սկսեց շուտ-շուտ կարդալ։

— Դե՛ որ էդպես է, ջրի նման սուար (ուրագ) կարող ես կարդալ, ա՛յ տերտեր, ի՞նչ ես մեզ խոսացնում, կարդա՛ ու պրծի՛,— իրավամբ կշտամբում էր տեր հոր ուշացնելը Մաղաքը։ Բայց Մաղաքի պահանջն արդարացի չէր. տեր հայրը ինչ արագությամբ որ սկսեց մուրհակի կարդալը, նույն ձևով չկարողացավ մինչև վերջը հասցնել, կիսումը հանկարծ կանգ առավ էը՞... ը՞... ը՞... ծորելով՝ մատների ծայրով սկսեց աչքերը տրորել։

Ավելորդ թող չլինի կրկնել տեր հոր կարդացածը. «Զորություն գրույս այս է, որ ես Փարբի գյուղի բուն բնակիչ Սեթոյի Մաղաքս վեր առի և պարտ եմ Կարբի գյուղի վերաբնակիչ Գոպեի Բղդեից, այսինքն՝ չարչի Բաղդասարից...»։

Հենց այստեղ կանգ առավ տերտերը, թուղթն աչքերին մոտ բերեց և ը՞... ը՞... ը՞... անելով, ամեն մի ը՞... հնչյունի հետ գլուխն էլ հաճախակի տմբտմբացնում էր։

— Դե՛, Բղդե ջա՛ն, վրա քցի՛, ասա՛, տերտերին նեղություն մի՛ տալ,— ընդհատեց Մաղաքը։

— Վալլա՛հ (հանուն աստծու), լավ միտքս չի գալիս, կարծեմ, գլուխը պետք է լինի երկու թուման, տասն ու հինգ շահի (6 մ. 15 կոպ.),— վրա բերեց Բղդեն։

— Վա՛յ գլխիս,— թափահարվեց ոտից գլուխ Մաղաքն և ատամներն անգիտակցաբար մին մնի կպան՝ ճիշտ պղնձագործի սալի վրա մի քանի հոգով միմյանց հետևից կռանահարողների հարվածների նման. նորա ուսերքի մինը բարձրանում, մյուսը ցածրանում էր, մարմնի ամբողջ ջղերը շամփուր-շամփուր ցնցվեցան, և լեզուն բերանումն ինչ-որ անհասկանալի հնչյուններ էր շաղփաղփում։

— Ի՞նչ պատահեց քեզ, օրհնյալ լինիս դու, Մաղա՛ք։

— Ոչի՛նչ, ոչի՛նչ, տերտեր ջան, գրի՛, ինչ որ ախպեր Բղդեն ասում է, դրան ավելի լավ է հայտնի, թուղթն ամեն օր կշտին է՝ կարդալ կտա, կիմանա. մեջտեղը վեց ամիս է անցկացել, ինձ պես հազար ցավ ու հոգսի տեր, մտքամոլոր մարդի մտքին բան կմնա՞։

— Ինձ չե՞ս հավատում,— զարմանք հայտնեց Բղդեն։

— Դե՛, քանի՞ գլխանի եմ, որ չհավատամ, երևում է՝ ես եմ սխալ, իմ կարճ խելքովը հինգ մանեթ ու մի քանի սև փող էր, հալբաթ ճուտեր է հանել։

— Փառք աստծո, տեր հոր ձեռքին է, քո էլ մուրհակն է, թո՛ղ տերտերն յուր օրհնած բերանովը կարդա. դու էլ գիտես, վերևն աստված էլ, ներքևը բանդեն (մարդ) էլ, որ ես ոչ գիր գիտեմ, ոչ դալամ։ Աչիդ մեռնիմ, աչքերիդ մի լավ զոռ տո՛ւր. ճմռի՛, թո՛ղ ջուրը թափվի, գրածները լավ ջոկի,— խնդրեց Բղդեն,— մարդ ենք, հողեղեն ենք, սխալական ենք, օրը հազար մարդի հետ հանդիպում եմ, կարելի է, մոռացել եմ, երեկվա կերածս միտքս չի, վեց ամսվան գործն ի՞նչ կմնա։

— Ը՞... ը՞... ը՞...— կրկնում է նորից տերտերը և աշխատում գիր կապելով մի բան գոյացնել,— հո՞... ինի՞... նո՞... չէ՛, չէ՛, հենց իմանաս իշի նման է... ե՛չ... ը՞...

— Սաքի էլ ընչի՞ ես գլխիդ ու աչքերիդ նեղություն տալիս, քո աչին մատաղ,— ընդհատեց Մաղաքը,— մեր Բղդե ախպերը մի քանի շահու համար յուր հոգին հո՛ սևացնելու չի. թե որ ասում է՝ երկու թուման տասն ու հինգ շահի է, հենց էդքան էլ կլինի. էգուց չէ էլոր, գարնան Մողնու ուխտի շաբաթ օրը, ժամանակը լրանում է. հաշիվ արա՛ էս օրվանից մինչև նավասարդի պաս երկուշաբթին, ինչքան շահ կբռնի՝ վրեն արի՛, տասին երկու շահով խզբզի, մատս հուպ տամ՝ վերջանա։ Ինչքա՞ն կբռնի, Բղդե ջան, դու ինքդ հաշվի, դու ավելի գլխի ես (ճմուտ ես)։

— Ես ի՞նչ գիտեմ, ախպեր, տերտերի ոտը մեր գլխիցը շատ գիտի։

— Օրհնած, օրը մինչև իրիկուն դու ես փողի հետ խաղում, էս հո՝ «հոգվոց» չի, «պահպանիչ» չի, որ աչքդ բաց ու խուփ չարած՝ հինգ անգամ ջրի պես ասեմ ու փեշս թափ տամ, ետ կանգնեմ, ասիլ տվողի ձեռին մտիկ տամ, թե ինչ պիտի հանի քիսիցն ու բուռս դնի։

— Շահը գլուխ արած՝ մինչև նավասարդը կբռնի ճիշտ, մի սև փող ոչ ավելի ոչ պակաս, երկու թուման ու կես ու մի շահի, թող շահին էլ մեր ախպեր Մաղաքի ցավը տանի,— հաշվեց և առատորեն նվիրեց կոյտը։

— Օ՜հ, միսս սրթսրթաց, էդ ի՞նչ ասացիր, Բղդե ջան, ասա հենց էս օրվանից երեխեքանցս կուռը բռնեմ, ջուրն ածեմ։

— Ընչի՞ ես նեղանում, Մաղաք ջա՜ն, բոլորը քեզ մատա՜ղ, ահա առ էս մի մատը թղթի կտորը, պատռի ու շպրտի, ես չեմ ուզիլ, որ իմ ձեռքից քո մի մազը թեքվի. մենք ախպերտղերք ենք, տես ու ծանոթ, աղ ու հացկեր ենք. ի՞նչ ես հրամանք անում, աչիդ մեռնեմ, տեր հայր, քո կարգն ինձ գունդ ու կծիկ ածի, թե խոսքումս սուտ գտնվի։

— Չէ՜, ախպեր, շատ շնորհակալ եմ, քո հատ սև փողն ինձ լեղի թող լինի, մորդ անուշ կաթի նման քեզ հալալ ու մարսական. թե որ երկնային թագավորն իր ողորմության դռները բաց կանի, իր քաղցր աչքովը մեզ մտիկ կտա, հողը գցած բերքերս անվնաս տուն կածենք, բաղերն էլ երես կտան, կարկտից, թրթռից, ցասումից, ցավ ու չոռից մասիլներս (եկամուտ) ազատ կպրծնի, մենք էլ քո մոտ սևերես չենք մնալ, թե չէ, տերը մի՜ արասցե, լեղվիցս թռչի, քամին տանի, մեր ծովացած մեղքերի համար աստված գլխներիս խռով կկենա, յուր բարկությունը մեր վրա կթափի, էն էլ իր սուրբ կամքն է, վերջին շապիկս կծախեմ, տաշտիս տխտմորը (խմոր, մայա, խաշ), երեխեքանցս բերնի պատառը կխլեմ ու հոգիս չեմ սևացնիլ ու հետո վիզս մի գութանի զնջիլ (շղթա) կքցեմ, անմեղ խմորակերների կուռը կբռնեմ, երկրե երկի՞ր քարշ կգամ, կմուրամ, ժողովարարություն կանեմ և ուրիշի դառը քրտինքին խեթ չեմ մտիկ տալ։ Գրի՜, տերտեր ջան, գրի՜, ինչ որ Բղդե ախպերն ասում է. աստված ողորմած է, թե որ մեռնիլ չենք՝ կվճարենք, դու ողջություն ասա, ամեն բան հեշտ է։

— Տերն ինքը կողորմի, որդյակ, մի՜ վախիլ, աստվածահայր մարգարեն Դավիթ յուր օրհնաբանյալ սուրբ բերանով ասել է, թե՝ «գութն զոր փորեաց և պեղեաց, ի նոյն անկցի և խորխորատ զոր և գործեաց». այսինքն՝ թե խոր հորի ու փոսի բերնին էլ որ կանգնած լինես, իմ անունը որ տաս, արագահաս սուրբ Սարգսի զորությունովը կողքիդ կանգնած եմ, կոնիցդ կբռնեմ, ետ կքաշեմ, չեմ թողալ, որ գլորվես, գբի մեջ ընկնես, քիթ ու պռունկդ ջարդես։

— Որ էդպես է, տեր հայր ջան, գրի՜, մեռնեմ սուրբ Գրիգորի զորությունին, ընդուր համար է եկել մեր բաղերի՜ միջին իրեն համար վանք շինել, որ մեր կռանը կենա, թե որ մեր սուրբը արար-աշխարհքի կատաղածներին փարատում, փրկում է, փարբեցուն կթողա՞, որ Բղդեի պես մարդի առաջին ամոթով մնանք, էնպես չի՞, ախպեր Բղդե՜։

— Ծառա՜ եմ սուրբ Գրիգորի զորությունին,— երեսին խաչ քաշեց Բղդեն։

— Դե, գվիթ-դալամդ (գրիչ-թանաքաման) հանի, Բղդե,— աչքերի հայացքով ցույց տվեց տերտերը Բղդեին յուր գոտին։

Բղդեն հանեց յուր գոտկածալից պղնձյա երկայնակոթ ասիական թանաքամանը, հանեց կոթի դատարկությունից սագի գրիչը և դրեց քարի վերա՝ տերտերի կողքին։

— Դե թուղթ էլ հանի, որդիս, շուտ արա, ես «տուն փարատումի» պետք է գնամ, Բաբլոչին տղա է ծնել, եկող շաբաթ մի լավ կնունք ունինք ուտելու, օրհնած Բաբլոն անքուն ցեցերի պես ոսկիքը հավաքել է ու մի հիշատակ չուներ, որ իրանից հետո շուն ու գիլի բաժին չդառնար, հիմա, փառք աստծո, արու զավակ ունեցավ, իր աշխատածն իր տանը կմնա։

— Այ մեռած Բղդե ախպեր,— ծաղրել սկսեց Մաղաքը,— ասում ես գիր ու դալամ չգիտես, բայց քյանդիրբաշի (ղարախալաց) տակի մասխարի պես հպարտ-հպարտ գվիթը գոտիկդ ես խրել, գլուխն էլ երևացնում, տեսնողներն էլ կասեն փիլիսոփա ես, երկնքիցն աստղեր ես վեր բերում։

— Դե, ի՞նչ անեմ, շուտ-շուտ պետք է գալիս, քանի՞ գեղում թանաքաման կճարես, Աշտարակը մի կողմը դիր, որ մի քանի հատ կա, մնացած գեղերը բոլորը կրակ տուր, մեկը չես գտնիլ։

— Կուզե՞ս մեկի տեղակ երկուսը գուս բերեմ մեր տանիցը, ո՞ւմ ես վեր քցում, գեռնովը տալիս, օրհնած Բղդե,— վշտացավ ամենայն իրավամբ տեր հայրը։

— Ես մեղա աստծու, տերտեր ջան, քո ոտի հողն ու մոխիրն եմ. իմ ասելիքս քո համար չէ, քո հատն էս Կարբու մհալումը (գավառ) ո՞ր գյուղումը կճարվի, դու մեկ ես, որ կաս։

— Էավ, լավ, պրծի, թուղթը հանի, հանաք եմ անում,— քաղցրացավ տեր հայրը։

Բղդեն ետ բաց արեց սև ֆլուկին դեմ ընկած խուրջինը, հանեց կես թերթ թուղթ, նրա կեսը կտրեց, ֆեռամքով ծալեց, պահեց, մյուս քառորդը ավեց քահանային։

Վուլթունը մի քանի տող տիրեց. լավում էր միայն գրչի ծանր ու անհաստատ ճռճռոցը. ճմռտտ գրագետը, առանց տեսնելու, հեռու տեղից կարող էր հաստատապես վկայել, որ գրողն անփորձի մեկն է, և ձեռքերը դողում են։

Վերջացրեց տերտերը մուքնակը և մի թեթև հաղով կոկորդի լարերը մաքրելով՝ գլուխը բարձր բռնած՝ սկսեց կարդալ. հասավ մինչև շարաբաստին «վեր առի և պարտ եմ»-ը, բայց առաջվա պես էլ կանգ չառավ թշվառական նախադասության վերա, ընդհակառակն՝ լավ հասկացնելու համար շեշտեց՝ վեր առի և պարտ եմ Դոպեի Բղդեից, «այսինքն՝ Դոպ-

պարի որդի Բաղդասարից երկու թուման ու կես փող, տասին երկու շահովն, այս գարնան Մողնու ուխտի ուրբաթ օրվանից, վաղեն, այսինքն՝ ժամանակն գնա հասնի մինչև նավասարդի պահոց երկու շաբթի օրն, այսինքն՝ վեց ամիս ժամանակով, տասին երկու շահովն վճարեմ անպատճառ. աստվածակույս կողմանե գիր չգիտենալով՝ մատամբս կնքեցի. Կարբու բուն բնակիչ Սեթոյի Մաղաքիս հոգու պարտքն է»։

— Այդպե՞ս է, որդիք, թե էլի բան մնաց,— ավելացրեց տերտերը։

— Քո ղալամդ (գրիչ) անսխալական է, աչիդ մեռնեմ, դու ուրիշ տերտերների պես հո չե՞ս, որ այբը հազար չանգալով են բռնում, մինչև նրանք գրիչը ձեռքի միջին պտիտ կտան, դու երկու երես կլցնես, էս գիր հո չի, էս շարած մարգարիտ է։ Էնպես չի՞, Մաղաք ջան, սուտ եմ ասում, մատդ տար, աչքս կոխի։

— Մեր տերտերին տերտեր չի հասնիլ։

— Տեր լուսավորեսցի գուռնաչի Փիլոյի չրաղ (որդեգիր) մեծ տեր Սիմոնի հոգին, ես նորա ձեռաչուրն եմ, նրա չրաղն եմ, լսի բաժին եղիցի. մի տուն սաղմոսի համար օրական հինգ անգամ ինձ ֆալախա էր դնում. էսօր ես դեռ առաջ նորա համար եմ «հոգվոց» ասում, հետո իմ մարմնավոր ծնողաց համար։ Եթե լուսահոգի տեր Սիմոնը չլիներ, ես էլ ուրիշ տերտերներից մեկը կլինեի, որ մինչև գրքին մատիկ չեն տալիս, մի կարճ մաղթանք չեն կարողանում ասել, ես Ատենին ու ձայնաքաղ Շարականը գլխե գլուխ ասում եմ ինչպես առատաբուխ քչքչան աղբյուր։

— Դե դու ժամի մեծ գիրքն ես եգին-եգին կարդում, ուրիշները քեզ ընչի՞ պետք է հասնեն, մեկ էլ թե մեր Բղդենց բոյը մի թիզ, միրուքն երեք թիզ տերտերը կարա քեզ հետ ոտ ձգել, այ,— պարծեցավ Մաղաքը։

— Խոստովանք ըլի, մի քիչ դժվարս գալիս է ճաշոցի ուշ-ուշ կարդացվող ավետարանները. ասենք դրանց ճարը հեշտ եմ գտնում, մեռել թաղելու ու մկրտությունի ավետարաններն անգիր գիտեմ, հենց որ նեղ տեղն եմ ընկնում, մեկն ու մեկը բերան ասում եմ, հասկացո՞ղն ով է. բայց ամենից ծանր լուծ են տերունական տոների համար գրած երկար ու ձիգ աղոթքները, ես առավել ջրօրհնեքի մեծ պասից երկար «Այսօրները» մեկելները բաց եմ թողնում, գլխահան եմ անում, բայց ջրօրհնեքի աղոթքի կեսն էլ պետք է, ոնց լինի, գզես, թեկուզ հազար էլ կուչ ու ձիգ անես։

— Հերու, տերտեր ջան,— ասաց Բղդեն,— ես գավառ (Նոր Բայազետ) էի գնացել՝ մեր քեռոնց տես. ետ դառնալուս՝ խաչը ջուրը գցելու օրը բքարդ (բfարգել) մնացի Ախտա գյուղումը. մի վարդապետի վանքիցը պատժել էին, Սևան էին ղրկում, ավելի անունը, կարծեմ, Լամո պետք է լիներ։ Նա էլ վանքի թվանքչու հետ ինձ պես բքարդ էր մնացել

Ախտումը։ Էդ երկար աղոթքը տերտերները համեցեք արին վարդապետին կարդալու։

— Հետո՞։

— Գզեց ու գզեց, հազաց ու հազաց, տնքաց ու տնքաց, աչքերը տրորեց, քիթը ճմռեց, բան առաջ չընկավ, խոսքերը բերանից դուրս չեն գալիս։ Վերջը որ չարևն կտրեց, ետ դառավ ժողովրդին ասաց. «Օրհնյալ ժողովուրդ, չասեք, թե վարդապետը կարդալ չգիտի, աչքերս ձյունով են ընկել, գրերն աչքիս տակիցը փախչում են, ուրեմն կարճ կտրենք. այսօր մեր տերը Հորդանան գետումն էս խաչի պես գզվել էր, տաղ էր արել, Հովհաննես Մկրտիչն էլ բռնով ջուրը գլխին էր ածում, լողացնում էր. օրհնյալ եք և օրհնյալ լինեք, ամեն»։

— Դե, Լամո վարդապետը խաչագող է. չե՞ս իմանում, որ խաչագողին ջաղացի բուգն (կոկորդ) էլ քցես, դուրս կպրծնի. մարդը մի տեսակ գլուխը խայտառակվելուց ազատել է, ախտեցիք էլ էշ մարդիկ էին՝ կհավատային։

— Լավ, տերտեր ջան, հետո մեղք չի՞, որ կիսատ եք թողում,— հարցրեց Մաղաքը։

— Էյ, այ որդի, մեղքի թողություն տվողը տերտեր-վարդապետները չե՞ն, մեղքը ձեր աշխարհականների համար է գրած, մենք՝ հոգևորականներս, էնքան աղոթք ու մաղթանք ենք կարդում, որ աստված կների ու կների։

— Ես մեղա աստծու։

— Էդ մեր բանն է, Մաղաք ջան, դու ճկույթդ մոտ բեր, հուպ տուր էս թղթի տակին։

Տեր հայրը գրիչը թանաքով լցրեց և մուրհակի վերջումը՝ ճիշտ ստորագրությանը կից՝ կաթեցրեց մի կաթիլ թանաք։

— Ա՛յ, էս թանաքի վերա ճկույթդ հուպ տուր և ինձ հետ կրկնիր՝ «գիր չգիտենալով՝ մատամբս կնքեցի. Կարբի գյուղի բուն բնակիչ Սեթոյի Մաղաքիս հոգու պարտքն է»։

Մաղաքը բառացի կրկնեց և ավելացրեց.

— Հոգու պարտք չի, բաս ի՞նչ դարդ ու բալա է, աշխարհքս առևտուր է, առ ու կուլ հո չի՞։

Նա երկյուղածությամբ առավ մուրհակը տերտերի ձեռքից և մեկնեց դեպի կոլոտ Բղդեն։

— Էս էլ քո հին թուղթը,— ասաց Բղդեն և ետ տվեց հին մուրհակը։

— Զհինն ի նորս փոխելով, զստվերն ի լույս ճշմարտելով. հենց դորա համար է ասել «Այսօր անճառը»,— հաստատեց տերտերը։

— Քո ժամոցն իմ արևից էրված ու խանձված շլնքին, աչիդ մեռ-

նեմ. աշնանը էջմիածնի պտղին հավաքելուս, թե ցորեն կհավաքեք, երկու կոտ ավել կլցնեմ քեզ բաժին, բայց եթե գինի կժողովեք, մի մեծ ուսաբղուղ գինի ավելի շուտ կտամ տկի մեջ, որ անուշ անես, ինձ համար աղոթք անես, Բղդեի պարտքիցը շուտ պրծնեմ։

— Օրհնյալ լինես, Մաղաք, կղրկես, բաս ի՞նչ կանես. դու միշտ տվել ես, էլի կտաս, դու որ կաս, մեր տան մերուն հավերից մինն ես, քո ձուն միշտ կերել ենք, էլի կուտենք. թոչկանն էս մեր Բղդեն է, որ քլիցը տարին հինգ մուրհակ գրել է տալիս էն օրից, որ խուրջինն յուր ուսից վերցրեց, յուր անբաժան ընկեր, մոխրաթավալ, հնաղանդ, բոշի տղա, սև իշի շալակը գցեց. ամեն գրելուս մի-մի բան խոստանում է ու անցուկ-մոռացուկ անում, ականջի քամակը գցում։ Սրան ներելի է, կարբեցի է, սատանախաբ կարբեցի է։

— Մատիսի գլխի արևն ես հրամանք անում, էլի, տե՛ր հայր,— շեշտեց կատակ անելով Մաղաքը։

— Միայն այդ չի, որդի, էլի կա, չգիտե՞ս։

— Ոչ, տերտեր, ես էդ մեկն եմ լսել, հրամանք արա տեսնենք։

— Եթե ամեն բան գիտենալիք, դուք էլ ինձ պես բաբունի կլինեիք,— ինքնաբավական պատասխանեց քահանան և պատմեց հետևյալը։

— Երբ որ շարն սատանեն, անիծվի ինքը, կործանվի, անշարժ քարի տակն եղիցի, իմացավ, որ կարբեցին արևն իրանից շուտ տեսավ, ինքը սևերես, ամոթով մնաց, միտք արեց՝ մի հնարքով երեսի կեղտը սրբել, խոսքի տակ չմնալ։

— Եթե դու այդքան գիտուն ես,— ասաց նա կարբեցուն,— կնշանակի մի պստիկ սատանա էլ դու ես. արի եղբայր դառնանք, աշխատանքի կպչենք, առևտուր անենք, թե կուզես՝ վարուցանք անենք, դառումը (օգուտը) հավասար բաժին անենք։

— Շատ լավ,— ասաց կարբեցին, ու մեջները համաձայնություն կայացավ։

— Ի՞նչ գործ բռնենք, որ օգուտը շատ լինի,— մտածեցին նրանք ու վերցրին գազար ցանեցին։

Տարին անձրևային էր, գազարի թուփը մի գազ բարձրացավ։

Սատանեն, զորթ է, սատանա է, ճարպիկ ու զալում է, բայց մարդիկ մոլորեցնելուց ու մեղքի մեջ գլորելուց ավելի ուրիշ շնորհքներն աստված նրանից կտրել է. նա յուր կյանքումը հողագործություն չէր արել։ Բայց ի՞նչ կանես, որ աչքածակ է. միտք արեց, թե ինչ հնարքներ գործ դնի, որ կարբեցուն խաբի, օգուտից զրկի։

— Արի,— ասաց,— կարբեցի եղբայր, էլ դու նեղություն մի՛ քաշիր գազարը հնձելու, ես ինքս կհնձեմ, երեսն ինձ՝ արմատը քեզ, ես

ինքս կերած չեմ, բայց լսել եմ, որ գազարի արմատը թփերիցը համեղ է։

Կարբեցին մտիկ տվեց սատանայի աչքերին, յուր սուր խելքովը նրան ոտից գլուխ չափեց, տեսավ, որ էդ անպոզի հենց անունն է սատանա, ինքը կատարյալ անասունների անասունն է, երևում է, որ գազարի հոտն էլ չի առել, ծիրանի ու դեղին գույնն էլ չի տեսել։

— Շատ լավ,— ասաց նա սատանին,— թող քո ասածը լինի, քեզ փեշքիաշ, գնա երեսը հնձի, վեր կալ, տակը թող ինձ մնա։

Ուրախ-ուրախ հնձեց սատանեն գազարի տերևները, գեղացու պատկերի մեջ մտավ, մի մեծ սել լցրեց ու տարավ Երևան ծախելու։

— Գազար եմ ծախում, գազար եմ ծախում,— քանի ուժ ուներ սկսեց գոռալ ու մուշտարիք տաքացնել սատանեն։

— Հիմար գեղացի,— լսողը պատասխանեց,— էշն ինքդ ես, որ ուզում ես մեզ իշացնել. ո՞վ չգիտի, որ գազարի թփերն էշն էլ չի ուտում։

Զորթ որ շփոթված ու մոլորված կանգնել էր սատանեն շաշի նման, բերանը բաց։

Մեկ էլ, ի՞նչ տեսնի, յուր հարակաշ (ընկեր) կարբեցին գազարի բեռն իշին բարձած՝ բերեց մեյդանումը վեր դրեց։ Բազմությունը պչխին հավաքեց, ձեռաց մարդի ապրանքը ծախվեց, փող դառավ։

Առնողը ետ էր դառնում, սատանին անպատվում, թե՝ անխելքի որդի անխելք, աչքերդ չորս բաց արա, գազարի թփերն իշի նման դու կեր ու արմատները բեր մեզ ծախիր. էս մարդիցն օրինակ վեր կալ, սա էլ քեզ նման մի գեղացի է։

Զարն սատանեն սրտի հերսիցը (բարկություն) սևացավ, կուպր դառավ, ինչպես յուր պիղծ հոգին սև է, ամոթիցը տեղն ու տեղը անդունդը հալածակվեց. բայց ատամները կրճտացրեց կարբեցու վերա, թե՝ սատանա չըլնեմ, եթե վրեժը չհանեմ։

— Առա՞վ վրեժը, տերտեր,— հարցրեց Մաղաքը։

— Հողը գլխին, ցեխն արևին առավ. մյուս գարունք էլ եկավ, կարբեցուն առաջարկեց ընկերանալ։ Նա էլ համաձայնեց։

Էդ տարին հացի թանկություն էր, վճռեցին ցորեն ցանել։

— Չէ՛, ախպեր,— ասաց նրան աշունքը սատանեն,— հերու գազարումն ես վնաս քաշեցի, խաբվեցի, երեսը ես վերցրեցի, տակը քեզ տվի, էս տարի մեռել ես, կորվել ես, արմատը ես պետք է վերցնեմ, երեսը քեզ տամ, հնձի՛, առ գնա, կուզես ինքդ կեր, կուզես տավարիդ ուտեցրու։

— Համ ինքս կուտեմ, համ տավարիս կուտեցնեմ,— պատասխան տվեց կարբեցին և մարանդուն (մեծ մանգաղ) դրեց, ցորնի արտը հողի բերնիցը հնձեց, վերկալավ, անպետք արմատը սատանին բաժին թողեց։

— Էս բաների համար է, որ կարբեցոնց «սատանախաբ» են ասում,— շարունակեց տերտերը և դարձավ դեպի Բղդեն։

— Դե, Բղդե, որդի, օրհնյալ լինիս, ետ բաց արա խուրջինիդ բերանը, տեսնենք քո հալալ սրտիցդ ի՞նչ է բխում տերտերիդ համար, ի՞նչ ես շնորհում։

— Երևան գնալիս քեզ համար մի քթի աղլուխ կբերեմ, պարտքս լինի։

— Չէ՛, որդի՝ ասած է՝ էգուցվան բանին ձյուն է եկել, էս օրվան սև փողն էգուցվա, սհպաբղռանից (30 կ.) լավ է. հանի, ինչ որ տալու ես, հիմի տուր։

— Դե հիմի գիտես, որ մորս շինած, անուշ հոտով բուռնուվուցն ավելի քեզ վայել բան չունեմ։

— Շանիցը մազ պոկելը խեր է,— ծիծաղելով ասաց տերտերը և հանեց յուր քթախոտի պարկը, լցնել տվեց։

— Երեխեքանց համար էլ մի քիչ ծամելու մաստակ տուր,— ավելացրեց տերտերը։

Շատ շողոքորթ հաճոյախոսություններ գործ դրեց ընչաքաղց կոլոտ Բղդեն, որպեսզի մի հնարքով քահանայի աննշան պահանջից ազատվի. բայց, տերտերի խրատական խոսքերի բոպեական տպավորության տակ՝ ստիպվեց մի կտոր-ծամոն պարգև ուղարկել նորա սիրելի զավակներին։

Ժ

ԿԱՐԲՈՒ ԿԱԼԱՏԵՂԸ

Քասախ գետի ձախակողմյան ափին, Կարբուն հանդիպակաց մի ընդարձակ դաշտավայր շատ անհիշելի տարիներից անջուր ընկած էր։

Մշակելու, վարուցանքս անելու համար չէր պետք գալիս ամայի հովիտը. չու գնացող չոբան-քեարաների և քրդերի անասունների փորն էր կշտացնում, Աշտարակի նախիրն էր ծնկնահար խինալի խոտը ուտում և փխփխալով կաթը տալիս։

Արայի մեծանիստ լեռան շրջապատի արևմտա-հյուսիսային ստորոտն է մեր ասած տեղը։

Արայի հնադարյան, պատմական, վեհապանծ սարը՝ ընդհատված յուր շրջակա Ծաղկոցաձորի և Փամբակու լեռնագոտիներից և հսկայականն Արագածի բարձրավանդակությունից՝ գոռոզաբար բազմել է այն լայնատարած տափարակի վերա։

Արևելքից, Արայի լեռան քղանցքը համբուրելով, սահում է դեպի Երևան կարկաչաձայն Հրազդան-Զանգուն. արևմուտքից՝ սարի ստինքից դուրս բխած աղբյուրների ծորակներն յուր մեջն առած՝ հորդանում է համեղաճաշակ և առողջարար Քասախը։

Այս երկու անվանի գետակների շնորհիվ արգավանդության հռչակ է ստացել Արարատյան բարեբեր դաշտը։ Ժողովրդի բերանում ավանդաբար այսօր էլ ասվում է. Զանգուն օրական մի լիտր ոսկի է տալիս, Քասախը՝ մի լիտր արծաթ։

Հիշյալ տափարակի վերա դարավոր ժամանակից, կողք-կողքի տված, ապրում են բավականին ավերակներ։ Շենքից շնորհքից՝ արտաքուստ գյուղատեղի նմանություն ունին ավերակները, հավանական է, որ հնումն այնտեղ բանել է մի աշխատասեր ժողովրդի գութանի սուր խոփը, խմելու համար օգտվելով Քասախի ջրից. բայց ի՞նչ կանես, որ առաջ էլ լսվել է, այսօր էլ լսվում է, որ ավերակները Կարբու կալատեղերն են եղել, դրանով հաստատվում է, որ մեր հին նախնիքը մեր նոր պապերից շատ խելացի են եղել. հները հասկացել են, թե ուր գազաչափ խոտը ամիսներով թարմ կմնա, այնտեղի ցորենն ու գարին առանց ջրի կբուսնին ու կաճին, իսկ նորերը կամ մեծ կարիք չեն զգացել, կամավ խոպան են թողել, կամ թե՝ Արայի սարի անհամար այրերում բնակված ավազակների խմբերի երկյուղից՝ քչով բավականացել են և այն արյունի հոտ եկած տեղերից հեռու են փախել։

Քսան-երեսուն տարի է, սակայն, որ մենք հին պապերին նմանեցինք, այդ առատաբեր, մեծատարած դաշտը մեկս մեկու ձեռքից խլեցինք, մոտակա գյուղերի վերա բաժին-բաժին արինք, պատվական գոված ցորենի տեր դառանք, չոբանքյարի անխիղճ ավերածությունից արոտներն ազատեցինք և մեր նախրի համար ընդարձակ արոտատեղեր պահեցինք։

Ամենայն իրավունքով, ուրեմն, ներկա կարբեցին էլ յուր բաժինը կստանար։ Կարբու կալատեղերը իրենց շրջակա հողերով նրանցն էր և նրանց մնաց։

Այնտեղ է կալսում այժմ կարբեցին Արայի դաշտից հնձած ցորենը, ավերակների մեջ է տեղավորում առժամանակ յուր դարմանը։

Տաժանելի աշխատություն է քաշում կարբեցին, մինչ տեղափոխում է յուր բերքը կալատեղերից. անհուն ձորը, որի միջով անցնում է մեծարդյուն Քասախը, յուր անմատչելի քարափներով կտրել է գետի երկու ափերի հաղորդակցությունը, բայց բնությունը սիրել է յուր բարիքներից օգտվող մարդին. նա տեղ-տեղ բաժանել է իրարից ժայռերի միավո-

ությունն շարունակությունները ու հնարավորություն է տվել մոտակա ժողովրդին անցուդարձ անել գետի այս ափից մյուսը։

Ահա՛ այսպիսի մի ձորախորշի մեջ եղած նեղ շավիղ կապում է Կարբին յուր դիմացը գտնվող կալատեղի ավերակների հետ։

Ուղիղ դեպի կալատեղն էր քարձրանում ձորից հեալով խուրջինն ուսը ձգած՝ մի կարճահասակ երիտասարդ։

Գարնան մի ցուրտ առավոտ էր այդ օրը։

Խոտն ու ծաղիկները թեպետ սփռվել էին ձոր ու դաշտերում, բայց խստաշունչ քամին քարից քար, խորշից քունջ դիպչելով կորցրել էր միանգամայն բնության սքանչելահրաշ պարգևների գեղեցկությունը և անուշ բուրմունքը. անկարգ, անկանոն, մեկ աջ էր ճկում բարակ ցողունները, մեկ ձախ, մեկ վեր, մեկ վար. քիչ էր մնում՝ քարերն էլ տեղահան անի, ուր կմնային բույս ու բուսականություն։

Ջնայած այս դաժան եղանակին և դժվարագնաց նեղ շավղին, երիտասարդը կռվում էր փոթորկալից հողմի դեմ և ձորախորշով վեր էր մագլցում, բռնելով քարերի փոսերը, որ վայր չգլորվի, քիթ ու մոութ չարդ ու փշուր չանի։ Նա շտապում էր։ Մի գերեմաստի մահակ բավականին թեթևացնում էր նորա ծնկների հոգնածությունը։

Երիտասարդը մի գյուղացի էր. նորա հագուստից ավելի չքավորի, քան թե կարողության տիրոջ հոտ էր գալիս։ Գույնն ու ձևը կորցրած մի հնամաշ արխալուղ, տակիցն երևացրած կապույտ օձիքով՝ կտավի շապկի հետ միասին՝ խեղճ հողագործի տեսք էին ընծայում մարդին. նույնը չէին հաստատում, սակայն, երիտասարդի գորշ, հնացած յամանի կոչված կոշիկներն և ուղտի քրդից կարած կոպիտ շալ շուխեն. վերջինս չէր համապատասխանում յուր ձևովն ու տարազովը տեղական արխալղին. այդպիսի շուխաներ սովորաբար հագնում են Պարսկաստանից իշաքարավանով ապրանք կրող պարսիկները։

Պարզ երևում էր, որ անծանոթն յուր հայրենի հագուստի մեջ չէ ու երկրագործ էլ չէ։ Բայց թե ի՞նչ է, ո՞վ է, ոչինչ չենք կարող վճռաբար ասել. առավել լավ է, մենք հետևենք նրան։

Քրտինքը ծլծլալով ցած էր իջնում այս մարդի երեսովը և երբ ժամանակ առ ժամանակ վերցնում էր հնոտի արխալղի քղանցքը ճակատի կաթիլները սրբելու, գոլորշին գալարվելով հափշտակվում էր սառը քամուց և անխաղաղ մթնոլորտի մեջ անհետանում։

— Էս անտեր քամին էլ ո՞րտեղից սար ու ձոր գլուխն առավ. տանից դուրս գալուս շատ գանդարտ էր, չլինի՞ թե խոփս քարին առնի, մտքումս դրածին չկարողանամ հասնել. էն ժամանակն իմ գլուխս էլ ընչի՞ է պետք, լավն էն չի՞ մեռնեմ ու վերջանամ։

Այս տրտունջն անում էր մարդը, երբ ոտքը քարին առավ, գայթեց, վայր ընկավ ու ճակատը դիպավ քարափին ու քերծվեց։

— Օհ, արյուն,— բացականչեց նա՝ ձեռքը ցաված տեղը քսելով։

— Վնաս չունի, տղամարդի կեսը կտրեն՝ ախ չպետք է անի. մինչև մարդ դժվարություններ չքաշի, հեշտ ու հանգիստ չի կարող ապրել։ Էս օր չի, որ ես քաշում եմ, պետք է սորա ճարը գտնել. հենց գիտե արածը շատ մեծ բան է. օրը մեկ է, գլխիս կարդացած գայլի ավետարանները՝ հազար ու մեկ. շատ նեղություն մի տալ, մուշտարու հետ սիրով կառավարվիր, շատ շահ մի վերցնիլ, առուտուրիդ մեջ հարամ մի մտցնիլ, քլով բավականացիր, որ աստված քեզ շատ տա։ Չէ՛, չէ՛, մինչև հիմի լռեցի, էլ չեմ կարող համբերել, մի օր գիժ կովի պես կպոզահարեմ, արած լավությունը ոտնատակ կտամ, կտրորեմ։ Երեկ վրես հարփ ու զորփ էր անում (սպառնալ), պարտքատերերիդ նեղացնում ես, ասում է, եթե մյուս անգամ լսել եմ, ապրանք չեմ բաց թողել։ Քիչ մնաց, որ ասեի, դու էլ, քո ապրանքն էլ. բայց էլի բերանիս հուպ տվի, միտք արի, որ եթե ջհուտ Աղաջանն ինձ ապառիկ ապրանք չտա, էնքան կարողություն չունիմ, որ Երևանից զուտ փողով առնեմ։

Երիտասարդը կրկին վայր ընկավ։

— Մեռնեմ էլ՝ պետք է բարձրանամ, էս է քիչ է մնացել ձորը դուրս գալուն։ Տուտու նանեն ասում էր, որ ինքը նետ դնելով չի կարող հասկանալ մարդու գլխի գալացուկը, բայց զարաչի Ցաթմին շատ էր գովում. նա ասում էր, գետնի տակի գանձ ու հարստությունների չափն էլ գիտի՝ բացի տեղը, յուր համար իրավունք չունի վերցնելու, բայց ում ձեռքն է ընկնելու՝ պարզ, աշկարա կասի։ Գնամ մի տեսնեմ, էդ փող ու կայանքից ինձ էլ բաժին կա՞, թե՞ մինչև մահս չարչի պետք է մնամ, մեծ ու պստիկի ծաղրուծանակ պետք է լինեմ՝ կոլոտ Բղդե, ծառի որդ, բոշի տղի ախպեր ու հազար ու մի թքանք ու մրանք անուններ պետք է լսեմ, ջհուտ Աղաջանի աչքին պետք է մտիկ տամ, նորա փթանոց թուք ու մուրը պետք է մարսեմ։

— Ախար, արի ու համբերի, մարդ ես՝ դիմացիր. Փարբու տերտերն էլ երկու տող մուրհակ խզմզելու համար ինձ ծաղր է անում, խուրջինն, ասում է, քո ուսից վեր առար՝ քո մոխրաթավալ ընկերի շալակը տվիր։

— Կաց, տերտեր ջան, շատ չի քաշիլ, քո բարի աչքովդ կտեսնես, որ մոխրաթավալ բոշի տղեն Արաքստանի հրեղեն ձիու է փոխվել, է-օրվա կոպիտ շարչի Բղդեն խոջա Բաղդասար է դառել։

— Դե, սուտ էլ չէր ասում տերտերը, շատ էլ առաջ չեմ գնացել, մի քանի շահի ունեմ գեղերումը սորա նորա վերա, էն էլ անունը կա՝ ամանումը չկա, ինձ տուր՝ քեզ տամ, ով գիտե, ձեռքս պետք է գա՞, թե՞ չէ։

էս մի բանը լավ է, որ աշխարհքը դեռ կույր է, մարդիկն իրանց օգուտն ու վնասը չեն ջոկում, շատ մասը տխմար փարբեցի Սեթոյի Մաղաքի օրումն են, փող չեն տեսել, որ պատիվն իմանան, երկու կոպեկ հաշվելու գլուխ չունին, ասածդ հալած եղի տեղ ընդունում են, ուզածդ գրում ես, ծոցդ դնում։ Երեկ մեկել օրն էր, որ Մաղաքի վերա հինգ մանեթի տեղ երկու թուման ու կես գրիլ տվի. մի քիչ հոգուցս որ ձեռք քաշեի, երեք թուման էլ կգրեի։ Բայց էս պստիկ կոպեկներով ի՞նչ գլուխ կգցենք, դրանցով մարդի մարմնից փուշ չի հանվիլ, պետք է հարստանալ, պետք է ջհուտ Աղաջանին հողի հետ հավասարեցնիլ, պետք է մատով ցույց տալու դառնալ. ինչ դար ու փոս էլ առաջ գալու լինի, պետք է լոք տալ անց կենալ։

— Դեռ շատ մի՛ փրթփրթալ, Բղդե,— գլուխը շարժեց մեր կոլոտը,— դեռ տեսնենք անատամ ղարաչու պառավ Ֆաթմեն յուր ծնոտներն ի՞նչ տեսակ է շարժում։

— Օհ, օրհնյալ է աստված, ձորը դուրս եկանք,— ազատ շունչ քաշեց նա տափարակի բերանին։

Բղդեի ուրախությունը կարճատև եղավ. ավերակների միջից, ինչպես գետնի տակից, հարձակվեցին նորա վերա 10, 15 որսկան բարակներ, որսի մեծ ու մանր շներ ու լակոտներ, և հաշոցի արձագանքը մինչև ձորի անդունդը թնդացրին։

— Օ՛շտ, օ՛շտ, ա՛յ շուն, թուլա, կուտու, կուտու, կուտու,— մի քանի սպառնական և համոզկեր բացականչություններ արեց Բղդեն, բայց աներես շները ոչնչով չնմանեցին Բղդեի քաջածանոթ գյուղական գայլ խեղդող գամփռներին, նրանք շարունակում են հաչալը։

Մի երկու ավելի կատաղիները, առ ոչինչ համարելով մինչև անգամ Բղդեի հաջող մահակաշարժությունը, անցկացան գավազանի հարվածից, մինը վարտիքը պատռեց, մյուսն արխալղի քղանցքը դուրս պոկեց և բերանն առած թափթփած էր տալիս։

Մինչև որ ղարաչիքը դանդաղաքայլ վրաններից դուրս կգային օգնություն հասնելու, Բղդեն հիշեց յուր մորից լսած՝ շների մի առանձնահատկությունը։

Զարշի դառնալու առաջին օրվան մոր խրատներից մեկն էլ այն էր, որ երբեք շների վերա փայտ չպետք է բարձրացնել նրանց. հարձակում գործած ժամանակը, ընդհակառակն, պետք է փայտը վայր ձգել։

Նույնն արեց այսօր Բղդեն և չսխալվեց։

Շատ չտևեց Բղդեի բանտարգելությունը. ղարաչիքը հասան, շներին հալածեցին և այս հոժարակամ կալանավորին ազատեցին։

ԺԱ

ԳՆՉՈՒՆԵՐ

Գնչուների ցեղերից երեքն են թափառում հայ աշխարհքի գյուղերումը— հայ բոշեք (գնչու), մթուրքներ և չինգյանեք կամ ղարաչիք։ Թե առաջինները հին ժամանակն ի՞նչ ծագում են ունեցել և ի՞նչ լեզու՝ իմ գործս չէ, բայց այժմ նրանք հայ են լեզվով և գավանությունով, հայ են հագուստով և բարեհամբույր ու խաղաղ բնավորությունով։

Ախալքալաքի Ծաղկայի գաղթական ժողովրդի լեզուն ու հագուստի տարազն ունին նրանք։

Բոշեքն են մատակարարում մեր աշխարհքին զատկության քաղցր խմորեղեններ և թղթի նման բարակ ու սպիտակ կծկծու լավաշներ շինելու համար շարմաղ ալյուր (նաշիհ) մաղելու շարմաղի մաղեր, սովորական հաց թխելու մաղեր, ցորենի միջից չծեծված հասկերը մաքրող շատարաններ, բրինձ և այլ հացահատիկներ ու ընդեղեններ հստակող խախալներ, ցորենի քարերը ջոկող քարմաղներ և տներ շինելու հողմաղներ։ Առաջին երկուսը շատ ճարտարվեստությամբ գործում են ձիու պոչի մազից, կամ որ նույնն է՝ ձարից, մնացածը հյուսում են կաշուց քաշած բարակ փոկից։

Բոշեքանց ձեռագործներն են նույնպես ուռի բարակ և ճկուն ու ճղնիկներից հյուսած մեր լավաշ թխելու հառափաթեքը, մեր հաց դարսելու, մրգեղեն չորացնելու և գինու կարասների բերանը ծածկող սալաները։

Բոշեքանց վաստակն արդար է, աշխատում են և վարձ են ստանում։

Նրանք չունին հաստատ բնակություն. վարում են թափառական կյանք և ամեն տեղ վայելում են ազգաբնակչության հարգանքն ու համակրանքը։

Թափառում են բոշեքը խմբովին՝ հինգ-հինգ, վեց-վեց գերդաստան միասին, և ամենայն գյուղ ուրախությամբ պատսպարում է նրանց իրանց դատարկ մարագներում։

Նրանց բարձրահասակ հաստ ու պինդ ընտիր իշանն են բառնում իրանց վերա բոլոր ծանրությունը։

Իշնում են բոշաները մի գյուղում, և գյուղը կենդանություն է ստանում։

Բոշի տղամարդը բինումը (իշևան) նստած՝ գործում է մինչև երեկո մաղ ու խախալ, սալա ու հառափաթա. իսկ նորա կինն ու հարսը, կամ

Հենց հասած աղջիկը, կոկիկ տրեխները հագին, մի-մի երկայն հոնի մահակ ձեռքներին, շրջում են դոնեդուռ և վաճառում են։

Արևն ու անձրևը, թափառականությունն ու բաց օդը ծեծում են բոշի կնոջը, ներգործում են նորա կաշու և գծագրության վերա, բայց անզոր են գտնվում խլել նրանից նուրբ և սիրուն հաճոյական կերպարանքը։

Գտնվում են տգեղներ բոշի կանանց մեջ, բայց մեծամասնությունը գեղեցիկ և գրավիչ է։ Նրանց գլուխն ու երեսը, ներքին ծնոտի հետ բոլորված մի ձվաձև շրջանակ են կազմում, որոնց միջին շարունակ խաղում են բոշի խաժակն աղջկա կրակոտ, փայլփլուն և կենդանի աչքերը՝ բարակ, շիկագույն, կամար հոնքերի տակից։ Ամբողջանում և լրանում է գեղեցկության կատարյալ տիպը, երբ խորամանկության հետ մի ամոթխած ժպիտ էլ խաղում է նորա բարակ և նոսր շրթունքների վերա։

Մտնում են ազատ համարձակ բոշի կանայք գյուղացու տունը և իրանց ապրանքը փոխում են սովորաբար տեղական բերքերի հետ։

Բոշի կնոջ համար ոչ մի փակ դուռը չկա, նա վստահաքայլ առաջ է գնում մինչև վերջին անկյունը՝ եթե տանտիրուհին բակումը չի իրան դիմավորում։

— Անաներ (մայրեր), բաջիներ (քույրեր), խաթուններ, մաղ առե՛ք, խախալ առե՛ք, սալա առե՛ք...

Ո՛չ միայն տանտերը չի վշտանում բոշի կնոջ ազատ ներս մտնելու վերա, այլ կատաղի շներն էլ անզոր են գտնվում արգելել նրանց մուտքը։ Բոշի աղջիկը այնպես հաջողակ է պատեցնում մահակը և շրջանաձև գիծ կազմում օդի մեջ յուր շորս կողմը, որ գլխից ձեռք քաշած շունն էլ ետ է ընկնում և ճանապարհ է տալիս։

Գնեցիր բոշի կնոջից ցանկացածդ ապրանքը կամ ոչ, միևնույն է, դու նրանից չես ազատվիլ՝ մինչև նորա կողքից կախված ոչխարների պարկի մեջ ժողոված հացերի վերա մի կտոր չավելացնես։

Ահա մի ատելի հատկություն, որով բոշան ընդհանրապես զանազանվում է յուր նստկան կյանք վարող հայ եղբորից։

— Բոշի երես ունիս,— ասում են մեզանում պնդերես մարդին։

Սխալ համեմատություն չէ այս, հայհոյիր, անարգիր, հրիր, կրունիցը բռնիր դուրս ձգիր, բոշի կինը քո տանից դուրս չի դնիլ ոտքը, մինչև մի բարիք դուրս չտանի. իսկ այդ բարիքներից առաջինը և բոշի կնոջ գլխավոր օգտվելու առարկան հացն է։

Հազար կրկնիր, երդվիր, հավատացրու, թե տանը թխած հաց չկա, թե վաղը հաց պետք է թխենք, վաղն արի տար՝ անհնար է, բոշի կինը երեսը դեմ կտա և թովիչ լեզու կթափի, մինչև մի բան դուրս խլի։

— Աստծուն ամանաթ եղնիս (ավանդ), մանչերուդ խերը տեսնիս,

լուսավորչու լուսեն բաժին առնես, արևուդ սաղաղեն (կյանքդ սիրես)։ բոշին բաժին տուր, մի՛ կտրիր։

— Մի մաղ տվիր, երկու մաղ ալյուր ստացար, տար հաց թխիր ու կեր,— ստիպվում ես ասել բոշի կնոջը։

— Բոշան հաց չի ներ, ջանի՛կս, բոշի ձեռքը խմորին չի կպչիր։

Նա սուտ չի ասում. հավանական է, որ շարունակ թափառականությունը խլել է բոշայից հաց թխելու սովորությունը և այս դարձել է նրանց համար ավանդական նվիրագործված սովորություն։

Մահու չափ հանցանք է բոշի կնոջ համար ձեռքը խմորին դիպցնելը. ամենածանր անեծքը, որ բոշի կինը տալիս է յուր դստերը, այդ խմոր անելու դատապարտելն է նրան։

— Քեզի տեսնեմ՝ սև առիքին (առաստաղ) տակը ծածկվես, ջուխտ ձեռքով խմոր էնես։

Հայտնի է, որ հացատունների առաստաղը թոնրի մխից մշտասև է, իսկ խմորը շաղախվում և թխվում է սև առիքի կամ առաստաղի տակ։

Ամենասիրելի գրաստը բոշայի համար, ինչպես ասացինք, հեզ էշն է, միակ չորքոտանին է, որ նորա հարստությունն է կազմում, նորա գգվանքի առարկան է, նորա երեխաների ուրախությունն է։

Կով, եզ, ոչխար, այծ հոտերով առաջարկիր բոշային, նա յոթն օրեն ճանապարհ հեռու կփախչի, դրանով դու նորա ընտանեկան պատիվը կաբատավորես, նրան կվիրավորես։ Նա ինքն յուր սրտի վիշտը դեպի իրան ցավացնող, ստահակ, անհնազանդ զավակը հետևյալ կծու անեծքով է դուրս վիժում յուր նեղացած սրտից։

— Քեզի տեսնեմ, օղուլ (որդի), հո-հո էնես, չու-չու չէնես, քուռոյի (իշի) ձեն չլսես, սև մաքու գառը գրկես, այնպես իմանաս, թե սև իշու ոտան է (իշի քուռակ)։

Հո-հո հնչումով սովորաբար քշում են կով ու եզանը, իսկ չու-չու ձայնով վարում են իշին։ Բոշեն անիծում է յուր որդուն, որ նա երբեք յուր կյանքի մեջ չարժանանա էշ քշելու, իշի զոռց լսելու և իշի ձագ գրկելու։ Այս անեծքով նա իշին առավել գերազանցություն է տալիս գառնից։

Այսչափը չեն, որով բոշեքը խոստովանում են իշանց առավելությունը ուրիշ գրաստներից. շատ ասացվածքներ ու ավանդություններ ծածկում են նրանք բոշայական շրջանից դուրս գտնված արտաքին աշխարհից։

Հետաքրքիր են նույնպես բոշեքանց հարսանիքների, մահենիքների, հասարակական ճաշերի և այլ ծեսերի նկարագիրները՝ երգերով ու գործով կատարված։ Ափսոս, որ իսպառ կորչելու է անհայտության մեջ։ Վաղ

խենալով չենթարկվել ծաղրի ու կատականքների այն ժողովրդականներից, որոնց մեջ իրանք կատարում են այդ ծեսերը, բոշանքը աշխատում են փախուստ տալ պապենի ավանդությունից, այժմ նրանք ոչ միայն դադար են առել կատարելուց, այլև մերժում են այդպիսի սովորությունների և երգերի գոյությունն իրանց մեջ։

Բոշանքը սովորություն են ունեցել պսակված երեկոյին նորափեսային նստեցնել սառը թոնրի մեջ, նստում էր փեսան և չէր դուրս գալիս թոնրից, մինչև որ նորահարսը մի երկար ու ձիգ երգով խոստումն չաներ տունետուն թափառել, վաստակել, մուրալ, անարգանքներ կրել, երեսը սևացնել, բերել և նրան պահել ու սնուցանել։

Բանաստեղծական բարձր հանճարի ծնունդ կարելի է համարել այդ երգվածը, եթե հնար լիներ ձեռք բերել։

Ոչինչ խոստումներ և բարիք իմ կողմից չհրապուրեցին բոշայի պառավին՝ նորից թելադրել ինձ յուր ուրախ տրամադրության վայրկենական ազդեցության ներքո երգածը գրի առնելու։

Բոշայի կինն յուր գլուխն սպանում էր. նա լեզու հանած աղաչում էր ինձ՝ իբրև ամենագաղտնի խոստովանություն պահել յուր հիմարական լեզվագարությունը։

Բոլորովին նման չեն հայ բոշիքանցը հայ աշխարհքի թափառաշրջիկ գնչուների մյուս երկու ցեղերը— չինգյանաները և մթռուբ կամ ղարաչիները։

Չինգյանաները մահմեդական շիա դավանությանը պատկանող մի ցեղ են, որոնց գործածական լեզուն և հագուստը վերցրած է Ադրբեջանի թաթարներից։ Աղտոտ են նրանք, աներես են, գող են, բայց մի որոշ չափով. նրանց պարապմունքը մաղ ու խախալ ծախելն է. սիրում են նույնպես և բարակ շներով որս անել։ Աղվեսներ, կուզներ և մասամբ գայլեր, էժան գնով ձմեռները կարելի է նրանցից առնել։ Շրջում են նոքա գլխավորապես թուրքերի գյուղերումը, հայերի մեջ մի տեսակ խորթությամբ են ներս սողում։

Չինգյանի կնոջ գլխավոր շահավետ եկամուտներից մինն է՝ բարեբախտ գուշակություններով հայ կանանցը խաբելը. նրանք գուշակում են առավելապես եղունգի վերա և գավաթի մեջ լցրած ջրին նայելով։

Չինգյանաները իրանց հետ տանում են սև այծի մազից գործած մի վրան, որի տակին նստելը միևնույնն է, թե բաց օդումը. ամեն կողմից փչում է, անձրևն էլ շոշռալով ներս է վազում։

Ամենից անպատիվ, աներես, անհասկացող թուրք և հայ ձանձրացնող, բոլորից արհամարհված ու անարգվածները ղարաչի կամ մթռուբ ասված ցեղն է։

Ի՞նչ կրոն են դավանում սրանք, ի՞նչ նախնական ծես ու ավանդություն ունին, իրանք էլ չգիտեն. ավելի հավանական է, թե սյուննի աղանդին հարված լինեն, բայց և ոչ երբեք չեն մտածում կրոնի վերա, խոսում են մի տեսակ քրդերեն և պարսկերեն լեզուների խառնուրդով։

Սրանք դառն աղքատ են, ծույլ են, գործել չեն սիրում և միայն մուրացկանությամբ են քարշ գալիս։

Զզվելի է ղարաչու տեսքը, գործքը, չափազանց աներեսությունը, անասելի աղտոտությունը, նիստ ու կացը և վարք ու բարքը։ Մարդկության խոզերն են իրենց կեղտոտությունով այս ատելի, մերկանդամ թափառաշրջիկները. ընտանիք, տուն, կահ-կարասիք, անոթեղեններ ի՞նչ է, չգիտեն. աղբանոցներից ժողոված հնոտիների կտորներ առանց գոնե սառը ջրի մեջ լվանալու, հաստ մախաթով միմյանց կպցրած՝ փակում է չափահասների մերկ փորոտիքը և մեջքը. կին է, մարդ է, աղջիկ է, նորահարս է, երիտասարդ է, թե ծեր է՝ հավասարապես կիսամերկ են, ձեռք ու կոներ, սրունք ու անդամներ, կուրծք ու գլուխ անպատկառաբար բաց են. մանուկները հո երկու սեռն էլ միանգամայն մերկ են։ Այս ամենը, իհարկե, մեզ համար է անպատկառություն, նրանք ամոթխածության վերա գաղափար անգամ չունին։

Մի աղտոտ փալասի մեջ պարանոցովը կապած, լանջի վերա՝ ճրնշելով քարշ է ածում յուր հետ ստնտու մայրն յուր երեխային։ Ցմքած, ցամաքած, ածխի նման սևացած ստինքը տալիս է մարդակերպ փոքրիկ լամուկի բերանն ու աչքը շլացած, մեջքը կզացրած, ոտքը կաղալով, ուժահատ, կիսամեռ հիվանդի դալկացած դեմքով, ձեռքի երկար մահակով շների հետ կռիվ տալով, ձախ ձեռքով մի ուրիշ մերկ երեխա ևս քարշ ածելով գյուղերի փողոցներում, ճանապարհներին հանդիպողին ձեռք է պարզում ղարաչու կինը։

Մարդ չկա, որ նրանց չանարգե, չհայհոյե, չհալածե. մարդասեր գեղջուկ հայ կանայքը, որոնց համար աղքատից երես թեքելը մահացու հանցանք է, որոնց ողորմածության պատվիրանն է՝ «Տո՛ւր ոսկի գոտին, մի՛ քննիլ», որոնց համար ամեն աղքատ ու տնանկ, ինչ ազգ ու լեզվից կուզե թող լինի, աստծու աղքատն է, այսպիսի խնամագութ կանայքն անգամ շատ հաճախ զզվանքով դուրս են անում ղարաչու կնոջը, ղարաչու մարդուն, ղարաչու մանուկին։

— Մայրիկ, աղքատ է եկել, ի՞նչ տամ,— հարցնում է կարեկցելով դուստրը։

— Ամա՜ն, ամա՜ն, դուրս արա, ներս մի՛ թողնիր, մթռուբ է, զգուշացիր, աչքի սուրմա կթոցնի, դրանց մեծ ու փոքրը բոլորը գող են։

Անուշադիր է մթռուբը տանտիրոջ արհամարհանքին. նա ճկվում է,

ոլոր-մոլոր է գալիս, հաշմ ու արատավոր դիրք է ստանում, երեսի կնճիռ-ները թշվառի է նմանեցնում ու ողորմություն է հայցում։

Քրիստոս, մեր Մայրամն են հայ գյուղերումը նորա մաղթանաք առարկաները, խաչակնքելն է գութ զարթացնող զենքը. իսկ պարսկին պատահելուս, մահմեդական գյուղերում՝ Փեյղամբարը, հազրաթի Ալին, Հասան Հյուսեյիններն են նրան օգնության հասնողը։

— Մայրիկ, ինչ անում եմ, չեմ անում՝ ղարաչու կնիկը չի գնում,— գանգատվում է գյուղացու աղջիկը։

— Աղջի, թող մնա, լավ միտքս ընկավ, գամ քեզ համար վիճակ բաց անել տամ,— ձայն է տալիս ներսից դստեր ապագա բախտով հետաքրքիր մայրը։

Այդքան բավ էր մթոուրի կնոջ համար. նա տեղն ու տեղը ծանր նստեց չոր գետնի վերա ու սկսեց գովել խորոտիկ աղջկա ղարաղաշ (թխահոն) աչքերը, բերանը, քիթը, քայլքը և ամեն ինչը։

Սիրուն օրիորդի քիմքը քաղցրացավ ղարաչու կնոջ հաճոյախոսությունից. մոր բազմապատիկ զգուշական խոսքերը նա մոռացավ, տուն մտավ, գոգը լիքը դուրս բերեց հաց, ալյուր և մթոուրի կնոջ պարկը լցրեց։

Այս գուշակության վճարքը չէ, այն փողով պետք է լինի, ապա թե ոչ՝ ֆալը չի խոսիլ (գուշակությունը չի իրագործվիլ)։

Ահա ստացավ մթոուրի կինը զավակասեր մորից մի երկու կոպեկ և սկսեց անխնա շռայլել սիրուն աղջկա առաջին ամենայն բարիք։

— «Սպիտակ նժույգի վերա, աստղերի տակ թոցնելով՝ նստած է ընչացքը նոր ծլած փեսացուն՝ ձեռքերը ոսկու և արծաթի մեջ. նա գալիս է յուր բախտի ոտքը. վաղուց նա օդը ճղելով թռած, հափշտակած կլիներ յուր գողտրիկ որսը, բայց մի մեծ, անհուն անդունդ նորա առաջին բացված է, մի երկնամբարձ սար ճանապարհ չի տալիս նրան. իսկ այդ վիհն ու լեռը ոչ ոք են, եթե ոչ քանի մի ուրիշ կտրիճներ, որոնք նախանձելով երիտասարդի բախտավորությանը, իրանք են ուզում անմահական խընձորի տիրանալ»։

— «Օ՜հ, ինչ երջանիկ ես, խորոտ-մորոտ աղջիկ, գլուխդ լվանալուս սանրի հետ իջած քո մի հատ մազը անհերևութաբար մոտդ կանգնած խատուտիկ աղավնու ոտքն է փաթաթվել. աղավնին բախտ բաժանող հուրիների հրամանատարն է. նա պարզ երկնքի վերայից թեթև հողմին է հանձնել քո մազը, հովն երկար ժամանակ յուր թևերի վերա տարուբերել է անուշ քնով քնած սիրաբորբոք երիտասարդների գլխավերևը. շատերի միջից միայն քո ճակատին գրվածն է դուր եկել յուր քաղցր ու սիրուն պատկերով հեզասյուգ հովիկին, և նա վայր է ձգել մազդ չահել տղամարդի աչքերի վերա, երբ նա անուշ երազներով հարբած՝ թրափած է եղել քնի մեջ։ Մազդ խստեցրել է երիտասարդի աչքերը. նա ձեռքը տարել և վերցրել է երկար ու փափուկ կանացի մազը։ Այդ մազը չէր, այլ Ջաֆար աղի ճոճուն տեգի սույր ծայրն էր, որ ցցվեց հուրիների սիրելի քաջ իգիթի սիրտը, չվիրավորեց, արյուն չդուրս բերեց, այլ կրակ դառավ, վառեց նրան։— Յոթը սարի ետևը լինիս, յոթը թերթ երկինքը բարձրացած լինիս, յոթը տակ գետինը մտած լինիս, ուր որ կաս, որտեղ գտնվում ես, դու իմն ես, իմ ձեռիցը չես պրծնիլ, ասաց սիրեկանդ ու թուրը մեջքը կապեց, նժույգի քամակն ընկավ։ Խեղճ տղա, ի՜նչ դժվար տեղն է. քամին ուրիշ սիրակեզ երիտասարդների քիթն էլ է մտել, նրանք բոլորը զարթնել են, հոտով իմացել են մազի տեղը, յարիդ (սիրահար) առաջը կտրել են և հուրիների պարգևին տիրանալ են ուզում։ Ա՜յ, ա՜յ, ա՜յ, ո՜ւֆֆ, արարիչ աստված, դու ազատես, էս ի՞նչ եմ տեսնում ջրի մեջ՝ տուր, կռիվ, արյուն, բրդոց, կոտորոց. բոլորն իրար են խառնվել, հարյուրը մեկի վերա են հարձակվել»։

— «Ո՜ւհ...— փակում է ղարաչին աչքերը և ցնցողական շարժումներ անում,— նայեցեք, լավ մտիկ տվեք, դավաթի ջուրն արյուն դառավ, չե՞ք տեսնում»։

Ղարաչին մոր ու աղջկա ուշադրությունը հրավիրում է դեպի դավաթի ջուրը։

— Ոչինչ չի երևում,— հայտնում է մայրը, իսկ փեղճ աղջիկը ցանկանա ես հնարավորություն չունի տեսնելու, նորա աչքերը արտասուքով լցված՝ մթնակալել են։ Եթե ամոթխածությունը արգելք չլիներ, վաղուց նա երեխայի նման լալիս կլիներ։

— «Մի՛ ցավացնիլ գեղեցիկ աչքերդ, աննման աղջիկ,— աչքի կոպով աղջկա այլայլմունքը տեսնելով՝ ասում է ղարաչին,— մտիկ տուր, հուրիները քեզ սիրել են. ահա ոտնատակ տվեց քո սիրահարդ բոլոր մյուս երկչոտ մկներին, նրանցից շատերին կոտորեց, գետնին փռեց, մնացողներին էլ փախցրեց և իջավ ձիուցը, պարզ աղբրի ական վերա կռացած՝ լվանում է արյունոտ սուրը. ահա նա կրկին թռավ հրեղեն ձիու արծաթապատ թամբի մեջ. պատրաստ կաց, նազելի աղջիկ, այսօր է՝ նա կգա, վաղն է՝ քեզ կճկի յուր ուժեղ կռնների մեջ»։

— «Ի՞նչ ես գուշն տալիս, գուշն առնում, սիրունիկ,— ժպտալով խրախուսում է ղարաչին,— չլինի՞ վախում ես նորա տղամարդի խոժոռ դեմքից. նորա առնական հսկա մարմնի մեջ թաք է կացած մի քնքուշ սիրտ, սերն յուր գահը դրել է կտրիճի սրտի մեջ. այդ սերը ապրում է, ջնջում է քեզ համար ու քեզանով։— Դու ինքդ ես այն սերը»։

Արշալույսին թերթիկները արձակող կիսաբաց կոկոն վարդի թարմ

Կաց ու զվարճացիր, եթե ճանապարհորդը խղճաց և մի կոպեկ շպրտեց ձանձրալի մուրացկաններին։

Ականջներդ փակիր, որ չլսես նրանց բերանից դուրս թափված, միմյանց ուղղած, անգրելի հայհոյանքները. կոպեկը ձեռքից ձեռք անցավ, ծեծ ու ջարդ, երես ծվատել, խոպոտ ու կերկերաձայն աղաղակներ, նկովք, անեծք իրար է խառնվել։

Վերջապես մի ավելի ճարպիկը փախցրեց փողը, յուր մորը տվեց, և խաղաղություն տիրեց։

Ահա հենց այս չինգյանների մեջ նշանավոր Ֆաթմա պառավի մոտ էր դնում մեր բախտախնդիր Բղդեն։

Նա մտավ վրանի տակը։

ԺԲ

ԱՄԵՆԱԴԵՏ ԵՂՈՒՆԳ

«Մի բուռն ավազին թիվ ու համար կա, դեղին շողշողուն իշամեղուները նրանցից շատ են, բզզոցը ականջին դուրեկան է, տվածը սրտի ուրախություն է. դառը քրտինքի բերած կոպեկը ուղտի պոչ է՝ չի երկարիլ։ իշամեղուն թող քեզ կծի, թաք ըլնի դու նորա արյունը ծծի. սև փող սև օրին բանացրու, դեղին ոսկով սարեր դարձրու. ի՞նչ ես հարցնում՝ ո՛վ է, տրորի՛ր վրովն անցկացի՛ր թեկուզ անտակ ծով է. իգիթ մարդի մի ձեռ եղումն է, մինը՝ մեղրումը։ Սև իշով գնացած ճանապարհը կարճ կլինի. Քյոռօղլու ամպերում թռչկոտող Ղռաթը կատարյալ արծիվ է որ կա. որտեղ հասար՝ ճանկերիդ մեջն առ, ծվիկ-ծվիկ արա, սիրտը քրքրի, փետուրն աշխարհքով մին արա. ուժը քոնն է, ոչ ով չի համարձակվիլ ասել, թե աչքիդ վերևն հոնք կա. իշամեղուն շատ զորեղ է, ինքը փոքր է, բայց խթանը ջուհարդար պողպատից սուր է»։

— «Սիրուն աղջիկն ուրիշի ապրանք է, բայց ուզեցար՝ քոնը կլինի. մեկ երկու պսպղան ոսկով գլխին տվիր՝ հասած ծիրան է, կկաթի, բուռդ կընկնի, ճաշակովդ չէ՝ ճխլիր ու շպրտիր, ուրիշ ծառերի վերա շատ կան»։

— «Կրակը լափեց շեներ ու տներ՝ կրակ տվողի սիրտն ընչի ցավի, ձիդ քշիր վրայովն անցկացիր, իշամեղուն բուռն արա գցիր, ո՛չ մտածիր, ո՛չ հոգս քաշիր...»։

— Փա՛հ, փա՛հ, փա՛հ, փա՛հ, հեղեղատի ջուրը վարարել է, սարեր է պատռում, քար ու թումբ է քանդում, ամեն բան կուլ է տալիս... է՛... է՛... է՛հ... ափսոս, ջուրը նստում է, սարերի ձյունները հալվեցին...»։

կարմրությունից ավելացավ պարկեշտ կուսի կարմրությունը։ Նա հոժարակամորեն ցած թողեց յուր նազիկ աչքերը, և նորա կուրծքը սկսավ մեղմ և պարզորակ լճակի երեսին խաղացող հեզասահ զեփյուռից պատճառած ծածանումի նման ելևէջ առնել։

Մթոուբի կինը հասավ յուր նպատակին։ Օրիորդից ոչ պակաս ցնծաց որդեսեր մայրը. նա հրամայեց աղջկանը մի հաց ևս վերադիր պարզև տալ բախտ գուշակողին։

— Նանա Մեյրամը (մայր աստվածածին) քեզ բաշխի այս թաղլան դուշը (բազե), բաջի,— օգուտ է քաղում հարմար դեպքից ղարաչին,— մի հին շապիկ կամ վարտիք տուր իմ այս երեխային, հիվանդ է, մրսում է. մի կտոր էլ պանիր, միս, ձու, ինչ որ քո քաղցր սրտից բխի՝ տուր, մի՛ խնայիր, որը է, հայր չունի, հինգ օր չկա՝ հորը թաղեցինք։

Ղարաչու կինը հաստատ հավատացած էր, որ մի երկու բան դուրս պետք է տանի այս տանից և չսխալվեց։

Մեղավոր չէր գյուղացի հայ մայրը. մթոուբի կինն այնպիսի վստահությամբ և վարժ է ապագան առաջիդ բաց անում, այնքան ճարտար և կենդանի է նկարագրում և այնպիսի կոկ ու ողորկ ոճով, որ ով ասես կհավատա. իսկ բոլոր գուշակությունը կատարվում է տեղական թուքքերեն լեզվով, ապա թե ոչ, մթոուբները հայերեն շատ քիչ են խոսում՝ այն էլ ալաշկերտցու աղճատյալ բարբառով։

Այդ մթոուբների կանայք են, որոնց դիմում է շատ անգամ գյուղացին՝ յուր կորուստը գտնելու համար։

Մի հուսալի երկդիմի պատասխան տալիս է միամիտ նախապաշարյալին ղարաչին և յուր հասույթն ստանում։

Մթոուբները, սովորաբար, իջնում են գյուղերից շատ հեռու, ճանապարհների վերա, ջրին մոտիկ։ Չինգյանի վրանների նման մի կիսամաշ ծածկոց էլ սրանք ունին։

Բավական է, եթե մի մաքուր հագնված ձիավոր կամ փոստով գնացող ճանապարհորդ տեսնեն մթոուբները։ Առանց ժամանակ կորցնելու՝ մոր մի ակնարկից հասկացան և դուրս թափվեցան վրաններից մթոուբի երեխայքը շների հետ միասին։ Վազում են նրանք ամենայն զորությամբ, նրանց աղաչական ձայները կորչում են վտիտ և ազազուն շների նվազ հաչոցի մեջ. հետզհետե շները հոգնում են, էլ չեն ընկնում ճանապարհորդի քամակից, դադարում են հաչելուց, իսկ մեր մանուկները մի քանի հարյուր քայլ հետևում են թռչող սայլակին կամ սրընթաց ձիավորին։

Նրանց շունչը կտրվում է, ձայները փորն է ընկնում և միայն մի խուլ մռմռոց լսվում է ձեռքերը պարզած ողորմություն հայցող մանուկների ոհմակից։

— Դե հերիք է, աշխարհքում ի՞նչն է հավիտենական,— ասաց և աչքը բուի մատի եղունգից հեռացրեց ղարաչի Ֆաթման։

Վերևի անկապ ու անհասկանալի երկդիմի խոսքերը սաղի ու քյամանչի ներդաշնակ նվագից առավել քաղցր հնչեցին կոլոտ շարչու համար։ Նա շատ լավ հասկանում էր ղարաչու կնոջ խոսքերը։

Ֆաթման ֆալ էր բաց անում, ղարաչու պառավը Բղդեի բախտն էր գուշակում, չինգյանին եղունգին նայող էր։

Բղդեն երկու կոպեկանոցով երեք անգամ խփել է ղարաչու պառավի եղունգին ու սև փողը բուռը դրել, դրամը ետ էր գցել եղունգի գաղտնիքը ծածկող հաստ վարագույրը, բացել էր պառավի աչքերը, և նա հայտնապես կարդացել էր Բղդեի երեսին յուր ապագա վիճակը։

— Բերանիդ մեռնեմ, բերանիդ,— սրտի ուրախ փղձկանքն արտահայտեց Բղդեն և ձեռքը գրպանը տարավ, մի երեք կոպեկանոց էլ պարգև տվեց ֆալչի կնոջը։

— Թե ասուած կտա, ասածներիդ կեսն անգամ կկատարվին՝ գլուխդ ոսկու մեջ կթաղեմ,— լիասիրտ խոստումն արավ նա և տեղիցը վեր կացավ։

ԺԳ

ԻՇԱՄԵՂՈՒՆԵՐԸ

Շատ ուշ գլխի ընկավ կոլոտ Բղդեն։ Նա կանգնել էր Կարբու Կիղիմատուրի զանգակատան մեջ, ապուշի նման բերանը բաց՝ ինքնամոռացությամբ աչքը չէր հեռացնում զանգակատան լուսամուտի քարի ճեղքից։

Նորա աչքի առաջին կատարվում էր մի նորանշան երևույթ և այնքան անսպասելի արագությամբ, որ նա ժամանակ չունեցավ արտասովոր դեպքը ծանր ու թեթև անելու։

Ասեմ, թե ինչ պատահեցավ։

Այս անցքից մի քանի օր առաջ Բղդեն գնացել էր Երևան՝ ապրանք գնելու։

Շատ ժամանակ չէր, որ նա յուր գործը կապել էր Երևանի հետ։

Ջհուտ Աղաջանից նա ձեռք քաշեց այն օրը, որ առաջին անգամ Աղաջանը սկսեց հայրաբար հանդիմանություն կարդալ նորա երեսին։

— Ամեն տեղից գանգատներ են հասնում ականջիս,— նախատեց Աղաջանը,— ասում են, որ դու ձեռը կարճ, աղքատ մարդի երեխեքանց բերանի հացն ես կտրում, նրանց տակի վերջին փալասն ես դուրս քաշում, մեկին երկու տոկոս ես առնում, մի շահու ապառիկն երեք անգամ ավելի ես նշանակում, քո ընկեր շարչիներին վնաս ես տալիս, քաղցր լեզվով մուշտարու աչքն ես մտնում, վերջը տակը ջուր կապում, իրա՞վ է այս բաները։

— Հապա ես ո՞ւմ հորն եմ պարտական, որ մինչև երեկո ոտքերս մաշեմ, տանջվիմ, շարչարվիմ ու աշխատանքս պատահողի փորը կոխեմ։

— Քչով բավականացիր։

— Աղբանոցներումն եմ գտե՞լ, թե՞ տված ապրանքիդ փողը չես ստանում,— հանդգնաբար պատասխանեց Բղդեն Աղաջանին։

— Բայց ես քեզ խեղդո՞ւմ եմ, անխիղճ կերպո՞վ եմ հետդ վարվում, կրկնապատիկ օգո՞ւտ եմ ստանում։

— Շահ չունենաս ընչի՞ կտաս, գանձ հո չե՞ս գտել, հողի տակիցը հո չե՞ս հանել. արդար վաստակով ո՞վ է հարստացել, որ դու մի կապոց հասարակ կտավով ջհուտություն անեիր, էնքան վաստակեիր, որ էս ծովի պես խանութը բաց անեիր ու շարչիք շինեիր, աշխարհքը տարածեիր. իհարկե, դու էլ նեղել ես, հարստահարել ես, մեկին հինգ գրել ես, տներ ես քանդել. էս օրին հասել, որ Կարբու մեջ բոլորը գլորվեցին, դու ոչինչ տեղից առաջ եկար. մտիկ տուր էսքան հին խոջաներին, որոնք Բայազետումն անքուն ցեցերի, անթիվ հարստության տեր են եղել, հետները բերած կայանքը թիով է քերվել ու էսօր վերջին շունչներն է կոկորդումը տրոփում, քթերը բռնես՝ քաղցածությունից հոգիները կտան, ամեն մեկի խանութումը քո մի օր ծախածի չափ ապրանք չկա, էս ինչպե՞ս եղավ, դու նրանցից շա՞տ խելոք ես։

— Տո՛, ապերախտ ու անաղուհաց քրդի շուն,— բարկացավ ջհուտ Աղաջանը,— իմ տնկած ծառերի մեկն էլ դու ես, ոչ բարով իմ չրաղն ես, քեզ մի օր նեղացրե՞լ եմ։

— Իմ աչքը ծակում է, ուր որ գնում եմ, քո լավության վերա են խոսում, քո լիքը խանութն են գովում, քեզ են երկինք բարձրացնում. լեղի է իմ կերածն ու խմածը, եթե քեզ գլխի վերա չկործանեմ, հողի հետ չհավասարեցնեմ ու մեն միայն Կարբու գավառումը մատով ցույց տալու չդառնամ։

— Օձի ձագ եմ տաքացրած եղել ծոցումս, որ ուրիշներին կծելուց հետո՝ ինձ էլ խայթի, դո՛ւս, անպիտա՛ն,— ճչաց ջհուտ Աղաջանը և հանեց յուր արկղի միջից Բղդեի հիմնադրամ նշանավոր տասը չորուկ կոպեկը և քսակով շպրտեց փողոց։

— Ես Սալբու տղա կոլոտ Բղդեն չեմ, եթե ասածս չկատարեմ,— ասաց դառն և կծու ժպիտով ու աներես անպատկառությամբ և շտապ քայլերով դուրս ընկավ, վերցրեց յուր քսակն ու աներևութացավ։

Այդ օրից էր ահա, որ Բղդեն կտրվել էր Աղաջանից և ամիսը մի անգամ Երևան էր գնում ապրանք բերելու. այդ օրից սկսած՝ Բղդեն ավելացրել էր յուր ագահությունը, կրկնապատկել և եռապատկել էր ընչաքաղցությունը. ամեն տեսակ միջոցներ՝ ներելի և աններելի, չէր խնայում հարստանալու և յուր բարերարին կործանելու. գոփում էր, գչլում էր, տեղն ընկած ժամանակը գողանում էր. բայց աչքը միշտ անկուշտ էր, ախ էր քաշում ու ծուխը քթիցը դուրս չէր գալիս, այս մանր ու աննշան հնարքները բավական չէին յուր նպատակներն իրագործելու համար։

Ի՞նչ աներ, ուրեմն. ի ցավ յուր սրտի՝ նորա հայտնի հակառակորդը, քանի գնում է, ընդլայնում է յուր առևտուրը, բավական չէին նորա ստեղծած շարչիքը, որոնք Բղդեի աչքի փուշն էին, մի օր էլ հանկարծ Կարբու նախկին հարուստ և այժմ ընկած տներից մեկին՝ Բստինենց Կարապետին, որը մշակության և երկրագործության անսովոր լինելով՝ դուռն երեսին ծածկած էր մնացել, մեր բարեսիրտ ջհուտ Աղաջանը հրավիրեց քաղցրությամբ յուր խանութը, խոստացավ դրամագլուխ և խորհուրդ տվեց Աշտարակումը մի խանութ բաց անել, կտավեղեն և մանրունք ծախել։

Այս էլ հերիք չէր. ջհուտ Աղաջանը առաջարկեց յուր մի հատիկ աղջիկը Կարապետի որդի Սահակին, որին, տեղական սովորության համաձայն, Սհո կրճատյալ անունով էին կոչում։

— Հիմի, որ հացիս կեսը պակասեց, Աշտարակն էր իմ գլխավոր առևտրի կենտրոնատեղին, եթե այնտեղ խանութ բացվեց, էլ ո՞վ ինձ պես մի չարչուց ապրանք կառնի,— մտածեց Բղդեն և քիչ մնաց իսպառ խելքը կորցնում էր։

Ահա այս հանգամանքներն էին, որ նրան Ֆալչի Ֆաթմայի դուռն ուխտ ուղարկեցին, այս ձեռնարկություններն էին, որ նորա ոտքը Աղաջանի խանութիցը կտրեցին և երեսն Երևան դարձրին։

Ահա գնել էր Բղդեն Երևանից կարևոր ապրանք և բոշի տղին բարձած՝ ետ էր դառնում, երբ Կարբուց Երևան փոխված յուր հայրենակից մի վաճառական նորան կանգնեցրեց և յուր հետ խոսող ուրիշ անծանոթին ասաց.

— Ամեն օր Կարբի գնացող էիր հարցնում, այս շարչին մեր Սալբու տղա Բղդեն է, սա է Կարբու անդրանիկ ծնունդը, հիմի տուն է գնում, ինչ ասելու ես՝ սրան ասա, սա կկատարի։

— Եթե այդպես է, մի լավություն արած կլինես, Բղդե եղբայր,— ասաց նրան անծանոթը,— եթե այս թուղթը տանես և դնես ձեր եկեղեցու Կիզի-մատուռ կոչված զանգակատան լուսամուտի վերա։

Անծանոթը հանեց գլխարկի տակից մի թուղթ՝ եռանկյունի ծալած և տվեց Բղդեին։

— Անցյալ տարի ես Սպահանումն էի,— պատմեց անծանոթը,— մի սպահանցի հայ, երբ իմացավ, թե ես երևանցի եմ, Կարբին մեկանից մոտ է, խնդրեց. աղաչեց, օձի լեզու թափեց, որ այս թուղթը իմ կամ մի ուրիշի ձեռքով հասցնեմ Կարբու զանգակատունը։ Սպահանցին ինքը մեր կողմերը չէր եղած, յուր ասելովը՝ նրանք բնիկ հին կարբեցի են եղել. իրանց պապերից մեկը կտակել է յուր զավակներին, թոռներին ու ծոռներին՝ երբևիցե, ինչպես որ լինի, էս թուղթը հասցնել Կարբու Կիզի-մատուռի զանգակատան պատուհանը. նզովքով ու անեծքով պատվիրել է յուր կտակը կատարել։

«Հիմա, ասում էր ինձ սպահանցին, կարծես մեր պապի անեծքը մեր տան գլխին ծանրացել է, մեր մեկն երկու չի դառնում, անբախտությունը տարեցտարի մեզ յուր ճանգերի մեջ է սեղմում»։— Աղաչում էր, որ էն ցասումն իրանց տանիցը վերացնեմ, որովհետև իրանք աչք չեն բաց անում, որ անձամբ կատարեն պապի հրամանը։

— Ահա տարին լրանում է,— ավելացրեց անծանոթ երևանցին,— որ թուղթը մոտս է, չգտա մի կարբեցի, որին հանձնեմ. շնորհակալ եմ իմ բարեկամից՝ խնդիրս կատարեց, քեզ ինձ հանդիպեցրեց։

Ամենայն ուրախությամբ հանձն առավ Բղդեն և թուղթը դրեց ծոցը։

Այս թուղթն էր այժմ, որ Բղդեի ուշադրությունը գրավել էր։

Դրեց չդրեց նա եռանկյունի թղթի փաթեթը Կիզի-մատուռի զանգակատան բաց պատուհանի վերա, որ նորա աչքերի բբերը ետ բացվեցան, խելացնորի կերպարանք ստացավ և աչքը տնկեց պատուհանի տակի շարաքարերից մեկի ճեղքին։

Ի՞նչ էր այն։

Դուրս թռան հանկարծ միմյանց ետևից, կարգապահ զինվորների նման, ոսկեփայլ և խոշոր իշամեղուները, որոնց ժողովուրդը բոռ անուն է տալիս, և որոնց խայթվածքը կարիճի կծածից ավելի կսկծեցուցիչ է։

Բոռերը հետևելով իրարու՝ պատուհանից դուրս էին թռչում։

Միջատների այս տեսակից ամեն ոք զգուշանում է, միայն մեր Բղդեն էր, որ անշարժ արձանի նման տեղումը մխվեց ու մնաց։ Նա շվարած էր։ Նորա գլուխը միայն ամառվա շոգին, թեժ արևի տակ դաշտումն արածող և ճանճերից ձանձրացած ձիու գլխի նման բարձր ու ցած էր անում. նա աչքով ուղեկցում էր յուրաքանչյուր իշամեղուին, մինչև որ օդի մեջ աներևութանում էին։

Սթափմունքը շատ ուշ եղավ, կերևի, Բղդեի մտքովը մի բան անցկացավ. մի ակնթարթում գլխարկով տվեց, ճեղքից դուրս եկող միջատներից երկուսին սպանեց։ Միջատը գետին ընկավ և թափված խճճի մեջ լ, ռավ։

Բզդեն կռացավ որոնելու յուր արած որսերը։

Օ՜հ, սարսափ, ոսկի էր առաջին անգամ աչքովն ընկած առարկան, մի մեծ, մեջը փոս, գոգավոր ոսկի։

Այնպիսի արագությամբ չի հարձակվում որսկան կատուն ծակից անզգուշաբար դուրս սողացած մկան վերա, որքան Բզդեն յուր անձը սարսուռ ձգող ագնիվ մետաղի վերա։ Չեմ կարծում, թե նա զգացած լիներ յուր մատի կոկիծը կամ տեսած լիներ արյունը, որ սուր քարերին դիպչելով ծորացել էր նորա եղունգի ծայրից։

Բզդեն չդադարեց որոնել. ինքն երկու հատ բոռ էր սպանել. այդ նա լավ տեսել էր, իսկ այժմ գտել է միայն մինը. անկարծիք, երկրորդն էլ պետք է լինի և կա, մի ինչ-որ դեղին փայլուն բան պսպղում է խճերի արանքում. ոսկի է անշուշտ։ Երկմտություն չի պետք, իսկապես ոսկի է։ Բզդեն շատ տանջվեց և չգտավ։

— Հիմա՜ ես, ինչ է,— բարձր ձայնով արտասանեց Բզդեն,— իմ բախտին իմ ձեռքով եմ հարվածում. ո՞ւր եմ թողնում սրանց հեռանալ։

Նա դյուցազական զորությունով օժտված թուղթը հափշտակեց լուսաձուտի վրայից, գրպանը կոխեց և ձեռքով պինդ փակեց քսրի ճեղքի բերանը։

Բզդեն կրակ է կտրել, սարսափելի միջատների խայթյունը նորա վերա լի կծածի չափ սկզբում չեն ազդում, ոսկու խանդը ցավի մոմենտի զբաղությունը չքացրել է։ Բայց այս միս ու արյուն է, քար ու երկաթ չէ, խայթի հարվածը մեկ չէ, երկու չէ՝ հարյուրավոր պաքներ են շեշտվում նորա հեռանամիջին, սրան տանիլ չի լինիլ։ Որքան և ատամները միմյանց սեղմեց, երակները ձգեց ամրացրեց, բայց և այնպես հաղթվեցավ, թուլացավ, ձեռքն ինքն անգիտակցաբար ետ գնաց խորշաբերանից։

Ո՜վ զարմանք. ունցքն ազատ է, բայց բոռերն այլևս չեն դուրս գալիս, իսկ բզզոցը զանգակի մեղմացող զողանջյունի նման դեռ լսվում է Բզդեի լսելիքում։

Ի՞նչ է այս։

Բզդեն չկարողացավ հասու լինել, արդյոք ի՞նքը ձեռքով ճմլել է խորշից գլուխը նոր դուրս հանած ժամանակը մի երրորդ իշամեղուի, որ ոսկի է դարձել և անցքի մեջ ամրացել մնացել, թե ինչպես պատահեց, որ խորշն ինքն իրան փակվեց։

Այսպես է, այնպես է, վեց հազարյակի զորությունն է,— յուր գիտնալիք գործը չէ, բայց երրորդ ոսկին փականքի պաշտոն է կատարում, կենդանի գանձերին ներսը բանտարկել է, այլևս դադարեց միջատների ուղևորությունը։

Ով կյանքի մեջ առիթ է ունեցել տեսնելու բարակ որսկան շանը, երբ

նա քանդում է աղվեսի գետնափոր որջի բերանը, նա կնմանեցնի այս վայրկենում մեր Բզդեին որսորդի բարակին։ Շտապ-շտապ ետ է տալիս որսկան շունը ճանկերի ծայրով փորված հողը և հոտոտելիքը դնչի հետ միասին թաղում ծակամուտքի մեջ հավաստելու՝ նե՞բսն է այժմ թանկագին մուշտակացու կենդանին։

Սույնօրինակ քանդում, քերում է Բզդեն արյունլվա եղունգներով պատուհանի քարացած, դարերով ամրացած կրի շաղախը, որպես թե, յուր խելքով, լայնացնելու ճեղքի բացվածքը և դուրս քաշելու ներսում ամրացած մետաղը, բայց երբ եղունգները չեն բռնում, երբ մատների ուժն ու հարմարությունը անբավական են լինում ծայրն երևցնող դրամը դուրս կորզելու, կոլոտը գլուխը կորցրած՝ ատամներն է գործ դնում, քիթն ու մռութն է քարերին շփում։

Իզուր էր խեղճի տանջանքը. կարելի է ասել, ամբողջ ժամ ունայն կորցրեց նա, երբեմն կռանում էր, շաղախները քանդում, երկրորդ սպանածը որոնում և դարձյալ ծակում մնացածի ետևից ձգտում. ոչ մինն է ձեռք գալիս և ոչ մյուսը։ Նա սկսեց մինչև անգամ ատամներով կրծոտել քարին կպած շաղախը, բայց զուր ջանք և անօգուտ վաստակ, քարը շաղախից և շաղախը քարից կարծրացել էին։

Հուսահատությունից սիրտը քիչ էր մնում պատռվի, և գուցե առաջին անգամ յուր երեխայությունից դուրս եկած օրից լաց եղավ՝ ճիշտ կամակոր երես տված մանկան նման, որի անտեղի պահանջներն անկատար են մնում քնքուշ մոր կողմից։

— Ի՞նչ ցավ ու կրակ է,— մրմնջաց նա,— հիմա ես ի՞նչ անեմ։

— Ոչինչ, շատ հեշտ գործ. շտապիր տուն, առ բրիչն ու մուրճը և վերադարձիր,— դրդեց նրան ներքին ձայնը։

Բայց օրով-ցերեկով ո՞նց աներ. Կիզի-մատուռը գյուղի կենտրոնումն է, դուռը շարունակ բաց, շարաճճի մանուկները սովորաբար խաղում են ավերակի մեջ, վայրի աղավնիների բներն են քանդում, մաշկաթև չղջիկներ են հանում պատերի արանքներից. բացի դրանից, քուչիցն անցկենողը կարող է նկատել նրան, և ահա Բզդեն յուր հացը կերավ։

Ի՞նչ անի ուրեմն, ի՞նչ քար գցի յուր գլխին։ Նա մնաց տարակուսած կանգնած, ոչինչ ելք չկա. ետ ու ետ գնաց անգիտակցաբար, նստեց թափված քարերից մեկի վրա ու աչքը տնկեց պսպղուն ոսկու երևեցող ափին։ Երբեմնապես էլ նորա գլուխը ետ է դառնում դեպի դուրս— այդ զգուշության թելադրություն էր։

— Ցորեկով... գիշերով... ցորեկով... գիշերով...— կրկնեց նա մի քանի անգամ այդ անկապ խոսքերն և վերջը տեղիցը կանգնեց։

— Եվ ցորեկով և գիշերով, թեկուզ տարիներով, մինչև որ ձեր բույ-

նը քանդեմ, իմ սիրուն շողշողուն բոռեր, գլուխս այստեղ վեր կդնեմ և ձեզ չեմ թողալ այստեղից հեռանաք։ Ի՞նչ ուրախ եմ, որ ձեր ընկերը ձեռքիս տակին ճխլվեց, պատի խորշումը մնաց, ձեր ճանապարհը փակեց, ձեզ բանտը ձգեց։ Ափսոս, սկզբից հիմար ոչխարի նման պելացել մտիկ էի տալիս, թե ինչպես են ձեր ընկերները մին-մին հեռանում, իմ տունը քանդում, սպահանցու տունը շինում. տես ի՞նչ աստված խելքս առել էր, Թլիսմի թուղթը շուտ չէի վերցնում։ Հը՞... հը՞... հը՞... տեսա՞ք ինչպես տազ արիք, հարյուրավոր տարիներ հանգիստ պառկած էիք, ոնց հիմի էլ լուռ կացաք ու կուչ եկաք քարի տակին, որ մի ժամից շղշղկաք իմ քսակի միջին։

— Դուք հո իմն եք ու իմը, բայց ի՞նչ եղավ ձեր երկրորդ ընկերը. ես իմ աչքովս տեսա, որ գտակով ձեզանից երկսին սպանեցի, ա՛, մեկն ահա իմ գրպանում, հապա մյուսն ո՞ւր է։

— Չէ՛, չէ՛, գլուխս մահի կտամ ու ձեզանից ձեռք չեմ քաշիլ,— հաստատապես շեշտեց Բղդեն և նորից սկսավ շուռեշուռ տալ գետնին թափած խճերը։

Արևի ուղղահայաց ճառագայթն այնպես զգալի կերպով չէր ծակծկոտիլ ու փակիլ Բղդեի աչքերը, ինչպես մի քարի մութը անկյունից հուրհրատող փոքրիկ մետաղը։ Երեք անգամ միմյանց վերա ցնցվեց նորա ամբողջ ջղային ցանցը, մինչև նա փայլակի արագությամբ հարձակում գործեց յուր որսի վերա ու հողախառն սեղմեց բռան մեջ։

Այս տեսիլք չէր, երևակայության վաղանցուկ խաղ չէր. այժմ Բղդեն բռնած ունի ձեռքի ափի մեջ երկու հատ ոսկի, փայլուն ոսկի. հողը, որի մեջ հարյուր տարիներով նրանք թաղված են եղել, կարծես ավելացրել է նրանց փայլը։

Բղդեն համբույրներն անդադար կրկնում է և չի կշտանում։ Տարփածուն, տարիներով ձգտած յուր սիրեկանի քամակից և հազար տաժանելի տանջանքներից հետո հասած սրտի փափագին, այնպիսի խանդակաթ ակնարկ և համբույրներ չի դրոշմիլ յուր սրտի առարկային, ինչպես կոլոտ չարչին թեթև և փոքրիկ ոսկիներին։

— Այս երկու,— բարձր ձայնով հաշվեց նա,— դեռ քանի երկուսը դարսված են քո տակիդ, ո՛վ անխոս քար, շատ չի քաշիլ, դրանք բոլորը իմը կլինեն, և սպասիր էն ժամանակը, ջհուտ Աղաջան, դու քո հացը կերար։

Բղդեն սկսեց խճերով ծածկել քարի բացվածքը, այնպես որ ոսկու ծայրն էլ չերևաց։

— Ջարն սատանեն հակառակ է, բաց դուռ է, մեկը ներս կմտնի, ոսկու փայլն աչքերին կընկնի։ Այն ժամանակն արի էշը ցեխիցը հանիր,

համ էն մարդի արյունը զուր կթափեմ, համ իմ գլուխս կկորչի,— փսփըսաց Բղդեն յուր մեջ և ետ նայելով, դուրս եկավ զանգակատնից։

Նորա բացակայությունն երկար չտևեց. մի բրիչ և կռան ձեռքին, գող շան նման, զգուշությամբ մի տեսակ անցկացավ Կարբու նեղ փողոցներով և իրան ներս ձգեց Կիզի-մատուռը։

Երկու ժամից ավելի նա անընդհատ աշխատում էր. քրտինքը գագաթի վերին կենտրոնից առվացել էր և չստերի պատովածքից դուրս հոսում։

Ավելորդ աշխատություն էր. մի քանի կռանի հարվածներ, և ահա փշուր-փշուր, կտոր-կտոր կթափեր փուխր և փափուկ քարը։ Այդ քարերից շատ կան Հայաստանի ամեն կողմերում. այդ քարերով են կառուցված մեր հռչակավոր անթիվ տաճարները։ Ճարտարարվեստ քարտաշն այդ քարիցն է տաշել և կերտել մեր սուրբ վանքերի վերա հայ փառավոր անցյալի դրոշմները։ Հայ ճարտարապետությանն հատուկ սքանչելահրաշ քանդակներն այդ փուխր քարերի վերա են ձեռագործվել և այսօր աշխարհքի մեջ հայկական ճարտարապետություն անունն են հատկացրել։ Հեշտ էր ուրեմն Բղդեին փշրել լուսամուտի քարը, եթե նա երկյուղ չկրեր հարվածների թնդոցով յուր գլխին ժողովել հետաքրքիր հարևաններին։

Բախտավոր էր Բղդեն, որ հունիսի վերջերն էր, ամեն ոք յուր կալ ու կուտի, յուր դաշտային աշխատանքի հետ էր, բացի պառավ կանանցից և մանրահասակ երեխաներից՝ գյուղումը ոչ ոք չկար. բայց և այնպես զգուշությունը ձեռքից թողնելու չէր, կռանի հարվածները կարող էին հետաքրքրություն զարթացնել։

— Է՛հ, ի՛նչ կլինի, թող լինի՝ էս ժամանակ ո՛վ կա գյուղումը, որ քարի թրխկոցը լսի. երկու-երեք հարված և ամեն բան վերջացավ, տանջվելով հոգեհան եղա,— մտածեց Բղդեն և մի զարկ իջեցրեց քարի անկյունին։

Նորա ձեռքերը թուլացան, նորա մազերը ոզնու սուր-սուր փշերի նման ցից-ցից կանգնեցան. այս դրությունն է ստանում կենդանին, երբ մի հեռավոր ոտնաձայն նրան զգալ է տալիս թշնամու մերձավորությունը. Բղդեի աչքերը մթագնեցին, երկաթի գործիքը ձեռքիցը թռավ, ծնկները ճկվեցին։ Անշուշտ, վայր կընկներ Բղդեն, եթե օգնության չհասներ նրան նույն լուսամուտի գոգը՝ նա խոնարհեց, գլուխը վայր դրեց լուսամուտի վերա և այնուհետև ինքն էլ չիմացավ, թե որքան ժամանակ աչքերը փակ մնաց նույն անզգա դրությամբ։

— Ի՞նչ պատճառով։

Մի ահարկու և զարզանդելի խուլ թնդյուն էր, որ բարձր երկնակամարից կամ հեռավոր անդնդից տարածվեց զանգակատան ներսը։ Բղդեին

թվեցավ, թե ամբողջ երկրագունդն իրար անցավ. մթնոլորտի խաղաղ դրությունը նորա փակ աչքերի առաջ երերում էր, սրբավայրը գլխովին տարուբերվեց։

Առաջին անգամ գուցե, սև փողի նշանակությունը ճանաչելու օրից, Բղդեի կրոնական զգացմունքը վիթխարի հսկայի ահավորությամբ կռանի զարկի թնդյունի հետ՝ մատուռի արձագանքի միջոցով յուր բոլոր վեհությունով նկարագրվեց ջերմեռանդության և կրոնասիրության մեջ սնված, բայց մոլորության մեջ ամենը կորցրած գյուղացի երիտասարդի աչքին։

Արձագանքն էր այն, որ ներս մտավ կամարակապ զանգակատան պատերի մեջ դրված հողյա բղիկների մեջ, ոլորապտույտներով անդրադարձ շրջաններ արեց և Բղդեի գործած մեծ հանցանքի ահավորությունը նորա մտապատկերի մեջ կենդանի նկարագրեց։

Բղդեի և ամեն մի հայ քրիստոնեի համար աստուծո սուրբ տաճարների ամեն մի քարը նվիրական է. նա լավ գիտե, որ մինչև անգամ անհավատ տաճիկը, վայրագ քուրդը, սատանապաշտ եզիդին մի մթին երկյուղածությամբ են վերաբերում դեպի այդ ավերակ սրբավայրը, շատերը ոտքով մատաղ են բերում, ճրագալույս են վառում և միայն խիղճը կորցրած շահամոլ սակավաթիվներն են եղել, որ չեն խնայել, պիղծ ձեռքերով քանդել, ավերել մեր վանքերը։

Կոլոտ Բղդեն գիտե այս ամենը և այժմ ինքը ձեռի կեղտ մետաղի համար անհավատից ավելի զզվելի ու անգոսնելի գործ է կատարում, յուր ձեռքով կործանիչ է հանդիսանում յուր նախնյաց արյան քրտինքով կառուցած սուրբ տաճարին։

Այդ արդարացի պատճառով, ինքը, ահավոր սրբությունը յոթն թերթյան երկնքից լսելի արեց յուր ահեղասաստ բարկությունը։

— Մեղա քեզ, տեր, սևերես մեղավոր եմ քո առաջին,— հազիվ երկչոտությամբ մի շշունջ արձակեց շրթունքներից կոլոտը և անվստահ հայացքով, կուչ ու ձիգ անելով՝ երեսը դարձրեց դեպի զանգակատան կաթուղիկեն։— Ես մեղա աստուծո, խնայիր ինձ, ո՛վ սուրբ Կիզի-մատուռ, մի՛ բլիր իմ գլխիս,— աղաչեց Բղդեն,— քեզ էլ քաջ հայտնի է, որ քեզ քանդելու մտքով չզարկեցի քո քարին։

Կարծես երկնային բարկությունն անցավ, ամենայն ինչ նախկին անշարժության մեջ մտավ, լռությունը թաքավորեց, արձագանքը դադարեց։

Մի քանի րոպե ևս մնաց Բղդեն և գլուխը բարձրացրեց։

— Հապա ի՞նչ անեմ, թողնե՞մ այս պսպղան ոսկիքը քարի տակին թաքնված կամ թե թլիսմը կրկին տեղը դնեմ, ճանապարհ տամ գնան, հեռանան, ով գիտե ում ճանկն ընկնեն, ու ես այստեղ աչքերս պլշած՝ ձեռնունայն դատարկ ե՞տ նստեմ և օրը մինչև երեկո ոտքիս կաշին ուտելով, լեզուս կես գազ կախած, որսորդի շան պես գյուղե գյուղ քարշ գամ, թե մի քանի սև փող պետք է աշխատեմ, որ նրանով կարողանամ փողի, անունի տեր դառնալ ու ջհուտ Աղաջանին՝ իմ ոխերիմ թշնամուն, հողի հետ հավասարեցնել, գլխի վերա կործանել։

— Ամա՜ն, ով սուրբ Կիզի-մատուռ, քո զորությունին մատաղ, տարեկան հինգ նավակատիկին մի-մի սպիտակ գառը քո դռանը կմորթեմ, հում-հում կբաժանեմ, միայն թե դու մեղք չհամարես, չբարկանաս, գլխիս խռով չկենաս, թողնես, որ ես էս քարը տեղահան անեմ, ոսկիքը իմը շինեմ, ջհուտ Աղաջանի աչքը հանեմ, ես խոսք եմ տալիս՝ նորից իմ ձեռքով քարն յուր տեղումն հարմարեցնել։

Բղդեն սիրտ առավ յուր խոստմունքից և երեք անգամ երեսին խաչակնքեց։

— Հիմի գիտեմ, Կիզի-մատուռն իմ կռանն է,— վստահորեն ասաց նա, երբ յուր աչքին երևաց քարի ներքին կողմը, քարքարուտների մոտ, մի լայն ճեղքվածք։

Անմիջապես բրիչի ծայրը խոռոչին դեմ տվեց Բղդեն և մի վերջին ուժով քարը տեղահան արեց։

— Բը՜ղ... վը՜ղ... պը՜ղ...— շշացին Բղդեի ականջին հազարավոր իշամեղուներ և իրար խառնվեցին։

Մի րոպեաչափ շշմեց Բղդեն, անզգայորեն շրթունքները ետ բացվեցին, աչքերի բբերն ու բունը լայնացան, մատները անգիտակցաբար չռվեցին, իրարից հեռացավ, և ո՛վ գիտե, դեռ կարելի է շատ մնար այդ անբնական դրության մեջ, եթե նույն ինքն անբան միջատները չսթափեցնեին նրան։

Բոռերը գտան իրանց հանգստությունը խանգարող թշնամուն, սրեցին իրանց առանց այն էլ սուր խայթոցները և չորս կողմից գրոհ տվին քաջ պատերազմողների հմտությամբ Բղդեիս վերա։

Սուր-սուր ալաքների հարվածից ավելի զգալի էին միվում իշամեղուների կնճիթիկները Բղդեի երեսին, պարանոցին, աչքերին, քթին, ձեռքերին, միով բանիվ մարմնի բոլոր բաց տեղերին։

Իզուր չէ՞ր նորա ճիչը. նա սկսեց աչքերը փակել և ձեռքերը օդի մեջ պտտեցնել, որպես թե յուր բազուկների զորությունով ցրվելու թշնամու բանակը։ Բայց շատ սխալ էր նորա հաշիվը, թշնամին խիստ հզոր է եղել. կատաղի միջատները այդպիսով ավելի գրգռվեցին և ավելի խստորեն հարձակում գործեցին։

Էլ չտարավ Բղդեն, նա հաղթվեց. կծած տեղն ուռչում է ընկուզաչափ և բարձրանում։

Բղդեն երեսի վերա վայր ընկավ խճերի մեջ։

Այժմ թշնամու բանակին օգնության հասան Բղդեի իրան ձեռքերը, ապտակներ է, որ իջեցնում է թշվառական մոլորվածն յուր գլխին, վզին, երեսին. այդպիսով, յուր խելքով բոռերի դեմ է պատերազմում, բայց իսկապես ինքն իրան է ծեծում։

Այդ հնարքն էլ չօգնեց։ Բոռերն ավելի զայրանում և չեն հեռանում. շատերն սկսեցին խայթոցները նորա հագուստի գործվածքով ներս խրցկել։

Այս անգամ անձնապաշտպանությունը հաղթեց ագահությանը. կրսկիծն ու մոմուռը քիչ է մնում Բղդեին ուշագնաց անի. նա աչքախուփ, խարխափելով դուրս ընկավ մատուռի միջից։

Նա փախչում է աննպատակ դեպի դուշտը։

Նորա բախտից ոչ ոք չհանդիպեց նորան, ապա թե ոչ, ամենքը կվախենային այս մարդակերպ, փչված, տկզած տկից։

Միջատների կծած տեղերը հավասար ուռել էին, աչքերի կոպերն ամբարտակի նման բարձրացել, ծածկել էին տեսանելիքը, մի-մի նեղ անցքից միայն աչքերը հազիվ գործում էին։

Ցավը չթողեց Բղդեին շատ առաջ վազելու։ Մի առվակ խոխոջելով վայր էր հոսում լեռնաթմբից, և Բղդեն նստեց ջրի ափին ու գլուխը դեմ տվեց փոքրիկ ջրվեժի տակին։

Մի դյութական հանգստություն, մի մեղմիչ զովություն ամոքեց ցավի կսկիծը։

Կոլոտը գտավ յուր դեղը. սառը ջուրը փրկարար ազդեցություն գործեց։ Ավելի մեղմացուցիչ էր լինում հեղուկ տարրը, եթե երբեմնապես մի բարակ քամի, թեև լիներ նա ոչ ցուրտ, հովահարում էր ջրի թրջած տեղերը։

— Ափսոս, ջուրը տաք է,— մտածեց Բղդեն,— ինչ լավ կլիներ, եթե սուրբ Հովհաննեսի սառն աղբյուրը հեռու չլիներ, բոպեի մեջ երեսիս ուռուցքները կնստացներ։

Երկար չեղավ նորա մտածմունքը. անձը քաղցր է, ցավի խստության դեմ տաք առվակն անբավական էր, նորա արած տպավորությունը վայրկենական էր, ուռույցը քանի գնում բարձրանում էր, հզոր միջոցների պետք էր դիմել, և այդ միջոցը՝ յուր բուժվելու ամենաճիշտ դարմանը, նա գտավ սուրբ Հովհաննեսի ցրտասառույց աղբրակը։

Կիզի-մատուռ, ոսկի, ամենը զոհվեցին անձի առողջությանը. բոլորը Բղդեն մոռացավ։ Ի՞նչ արեց, մոռացա՞վ, այն էլ Բղդե՞ն։

Հազար ախ ու վայ արեց, հարյուր անգամ ծնկները ծեծեց, քանիցս քայլերն իրանք իրանց էին մատուռի կողմն ուղղվում, բայց կրկին ետ էին կասվում. թշնամու բանակը քնած չէր. իշամեղուներից մի քանիսը

գաշտումն էլ նրան հանգիստ չէին տալիս, առ ոչինչ համարելով Բղդեի գործ դրած զենքերը՝ ձեռքերը, հագուստի քղանցքը, ձեռք չէին քաշում նրանից. մի հանդուգն մինչև անգամ իջել էր նորա թիկունքին և յուր բարակ սուր կնճիթը շորերի գործվածքների միջովն էր ցցել Բղդեի թիկնամեջը։ Ինչ դժվարությամբ ձեռք հասցրեց Բղդեն և բոռին հեռացրեց։

— Ո՞վ է յուր գլխիցը ձեռք քաշել, որ բոռերի ճանկն ընկնի, կամ ո՞վ կհասկանա, թե ամեն մի բոռն երկու-երեք թուման փող արժի, թլիսմի թուղթը գրպանումս է, էսօր չլինի, էգուց լինի, դեռ ցավի կսկիծը հովացնելու ճարը տեսնեմ,— ասաց վերջապես Բղդեն, դարձրեց երեսը դեպի հարավ և փութաց բռնել Քասախ գետի խոր անցքի ճանապարհը։

Սուրբ Հովհաննեսի աղբրակն էր շտապում նա։

ԺԴ

ՍՈՒՐԲ ՀՈՎՀԱՆՆԵՍՆ ԵՎ ՅՈՒՐ ԱՂԲՅՈՒՐԸ

Կարբուց դեպի արևելա-հարավ, Քասախ գետի ձորաժայռի վերա, մի գետնափոր խղճուկ գյուղի մոտ գտնվում է մի կիսակործան սքանչելակերտ ավերակ վանք։

Գյուղի կողքովն անց է կենում Աշտարակից Ապարան տանող ճանապարհը, որտեղից շատ հեռու չէ հսկայական շենքը։

Սովորական անցորդը կամ անհետաքրքիր գեղջուկը մի բարեպաշտական երկրպագություն մատուցանելով՝ կատարած կհամարի յուր պարտքը դեպի քրիստոնեական սրբարանը. իսկ հնախույզ գիտնականը հանցանք գործած կլինի, եթե ժամեր և օրեր չնվիրե ճարտարարվեստ և հրաշալի շենքի ուսումնասիրությանը։

Հովհաննու վանքն է այդ մեծափառ տաճարը, Արագածոտն գավառի բազմաթիվ հռչակավոր վանքերի առաջիններից մինը։

Կար ժամանակ, որ Հովհաննու վանքի պարսպում շեն էին հարյուրավոր վարդապետական խցեր իրանց տնտեսատնով, լիառատ մառաներով, թանգարաններով և ժառանգավորաց դպրոցով. մի օր Հովհաննու վանքը կենտրոնն էր Արարատյան աշխարհի աստվածաբան հեղինակ մատենագիրների. 700 տարի առաջ էր այդ, իսկ այսօր միայն քարակույտերի դիզվածքներ և պատերի բեկորներ են մնացել նախկին փառազարդությունների։

Հրաշասքանչ է Հովհաննու վանքի ճարտարապետությունը. ամբողջ շենքը կոփածո կարմիր և սև քարերից պնդապես ամրացած և շաղախված

են միմյանց հետ. մեծ դժվարությամբ հնարավոր է այսօր էլ որմնաքարերի կցվանքը որոշել։

Մի ահագին քանդակալից և դրոշմավոր հաղթանդամ շինություն պարսպի միջակետումը հպարտ կանգնած՝ զետեղում է յուր մեջ երկու լայնադիր տաճարներ։ Մինը գավիթն է և մյուսը բուն տաճարը։

Հյուսիսից, երևի վերջին դարերում, միացած է փառահեղ շինությանը մի նոր եկեղեցի սանդաձև կամարով։

Երկու կաթուղիկե հովանավորում են մեծանիստ տաճարին։

Մինը կանգնած է լայնատարած գավթի գլխին, ամրացած չորս բոլորակաձև հաստատուն սև ապառաժյա կոկոթոտ սյուների վերա, իսկ երկրորդը՝ բուն տաճարի գլխին։

Երկուսն էլ կիսաքանդ են։

Թե՛ տաճարի և գավիթի միջին կողմը և թե՛ արտաքին երեսը լիքն են զարմանալի նուրբ քանդակներով. սանձազան խաչեր և սրբոց պատկերներ են ներկայացնում այդ քանդակները։

Վանքի հարավային պատի վերա, դրսեից, վերից վար ձգված են երկու խաչաձև կարմիր քարյա շրջանակների մեջ հարավային պատուհանները. մի այդպիսի շրջանով ես մեջ է առել արևելյան կողմից սեղանի լուսամուտը։

Վանքը կանգնած է անդնդախոր ձորի ծայրին՝ քարափների վերա։

Մի ահագին այր ձորի կողմից մտնում է ուղիղ վանքի տակը։

Վանքի հարավային կողմը, Քասախի ափին, ձորի մեջ քարափների խոռոչների մեկից դուրս է ցայտում սուրբ Հովհաննեսի ամենապարզ և վճիտ աղբրակը։

Ոչինչ էջք, ոչինչ ճանապարհ դեպի աղբրակը վանքի պարսպից թույլ չեն տալիս ամեհի ժայռերը. սեպաձև քարափները դուրս են ցցել վանքի տակի քարայրի շարունակությամբ իրանց խորդուբորդ քիթն ու մռութը, հենց իմանաս՝ համբույր տալու ձորի մյուս ափերի ժայռերին, իսկ դրանց տակը կազմվել է անհուն անդունդ, կարծես վերևից նայել վստահացողին գահավեժ կործանելու։

Ուզում եմ ասել, թե աղբրակը երկու-երեք հարյուր քայլ հեռավորություն հազիվ թե ունենա վանքից, բայց իջնելու ճանապարհ միանգամայն չկա։

Հաշվի տակ չեն մտնում գյուղական մանուկները. նրանք գետի հորձանքը ճղելով կարող են միշտ խմել սուրբ Հովհաննեսի աղբրի քաղցրանուշ ջուրը. նրանք վայրի այծերից ավելի ճարպկությամբ ներքև կսողան մի քարանձավի խորշից։ Քասախի ձորամիջումն երեխաների համար անմատչելի տեղ չկա։

Կանոնավոր և միակ ճանապարհը, որտեղից կարելի է այցելել սուրբ Հովհաննեսի աղբրակին, այդ Կարբու ձորամուտքն է՝ վանքից կես ժամաչափ հեռի. նույնքան էլ կտևի ձորամուտքից մինչև աղբյուրը։ Նշանակում է՝ Հովհաննու վանքից աղբրակը գալու համար մի ամբողջ ժամ զոհելու է։

Շրջակա բնակիչների համար նվիրական սրբատեղի է սուրբ Հովհաննեսի աղբրակը։ Ձորի մեջ՝ աջ ու ձախ ափերից՝ շատ տեղեր բխում են մեծ ու մանր վճիտ աղբյուրներ, բայց նրանցից ոչ մեկն այն հարգն ու նշանակությունը չունի, ինչպես այս ընկույզի տրամագծի չափ հազիվ բխող աղբրակը։ Ամեն օր մի ներքին երկյուղածությամբ է արտասանում սուրբ Հովհաննեսի աղբրի անունը. հազարավոր հրաշագործություններ պատմվում են պառավներից սուրբ Հովհաննեսի աղբրի մասին. նորա ուխտավորն անպակաս է։

Հարցասիրական է լսել աշտարակցի երկու պառավի խոսակցությունը. դրանից մինը թող լինի հանգուցյալ Քարտաշենց պառավը, մյուսը՝ իրանց հարևան Գյուլբահարը։

— Հաստատ կենա սուրբ Հովհաննեսի աղբրի ակը, մեռնիմ նորա տիրոջ՝ սուրբ Կարապետի ոտի տակին,— ասում է Քարտաշենց պառավը,— աղջի, վեց ամիս էր Հոլիս (Հոիփսիմե բառի կրճատումն է) դող ու էրոցքի մեջ տանջվում ու մաշվում էր, էլ գրբաց ու ջինդար չմնաց, որ չիացրինք, խունկ ու մմին հո հաշիվ չկա, որ սրբերի դռներին վառեցինք. մեծ տեր-Առաքելի կապած դողը թրի պես կտրում է. խեղճ երեցն երեք չորեքշաբթի իրար վերա կապեց երեխիս դողը, ճար ու մունջյուն չելավ. լալագար ծաղկի նման կարմրաթուշիկ բալես մի բարակ դերձան էր դառել, ոսկրները մեկ-մեկ համարվում էին, քիթը բոնեիր՝ հոգին կտար. մնացել էինք մոլորված, ուշք ու մտքներս միանգամայն կորել էր. սուրբ Հովհաննեսի աղբյուրը, հենց բռնի, մոռացել էի։ Ասում է՝ ծովն ընկնողը ձեռները կածի։ Լույս դառնա տատմեր պառավի հերը, որ սուրբ Հովհաննեսի աղբրի անունը չտվեց, ես ինձ ու ինձ գետինը մտա. դու մի՛ ասիլ, հենց սուրբ Հովհաննեսի աղբյուրն է մեր վերա բարկացած եղել։ Զորանա Տրդատս, էն օրն ևեթ մի շիշակ, տարեկան, դմբռճիկ թոխլի-ոչխար է առել, ձիու վերա նստել, առջևը դրել, մենք էլ տուն ու տեղով հավաքվել ենք, տարել սուրբ Հովհաննեսի աղբրի մոտ մորթել, մատաղ արել։ Աղջի, կհավատա՞ս, Հոլուս աղբրի սառը ջրովը լողացնելս ու դողն ու էրոցքը դանակի պես կտրել կորչիլը մին էլավ։ Ագիզ քորփես (փսորիկս) մի շաբաթի մեջ առաջվանից ավելի լավ լցվեց, կարմրեց, վոշնեց, էս օր էլ հո՝ քո բարի աչքովդ տեսնում ես, գեղի ազապ աղջկերանց աչքն ու մարալն է, թևերն եկել են, էս օր էդուց կթռչնեն։

— Ընչի՞, քիրս (Քույր), դու սուրբ Հովհաննեսի աղբրի զորությունից խամ էլ՞ր,— մեղադրում է խոսակիցը,— դու չգիտե՞ս, որ ինքն է դող ու էրոցքի տերը. գարունքը ծեգում է, չորս բոլորքի գեղերից նրա ըխտավորը չի կտրվում, թուրք ու հայ, ով դողացնում է՝ դպա նրան է վազում, փրկվում ու ետ դառնում։ Ես ինքս էլ Մողնու ծեփի տարին[1] էնքան դողացրել էի, որ ուժից ընկել էի, երեսիս գույնը՝ դեղին զաֆռանը քեզ օրինակ. շատ-էլ տապտապում էի՝ օր առաջ ինձ քցել սուրբ Հովհաննեսի աղբյուրը ու ական առաջին շինած պստիկ գյուլիցը (լճակ) մի երկու փարչ ջուր վրես ածել, բայց քեզ հայտնի է էն տարվա ցասում բարկությունը, գնա ոչ ետ գա, խեր բանը (ժանտախտը) Մողնին վեր էր կալել, ոսի սալդատը չորս բոլորքը կապել նստել էր, երկնքի թևավորներին էլ չէին ուզում բաց թողալ, ո՞վ էր յուր գլխիցը ձեռք քաշել, որ գնա իր ոտովը կրակը մտնի, կես սհաթումն ուռուցվորի, սևանա, ածուխ կտրվի ու ճրագի պես հանգչի. քո միտը կլինի, կարծեմ, հասած կատարած աղջիկ էիր, էնպես չի՞, ես երկու տարվան քողը գլխիս հարսն էի։

— Քա ի՞նչ ես ասում, էս օր էլ աչքիս առաջին է,— ընդհատեց Քարտաշենց պառավը,— սալդատների մեծավորին կոնատ կապիտան էին ասում, մեր տանն էր կենում. դե, էն ժամանակն էսքան այվան օթախները (վերնահարկ) ո՞վ էր սեցրել, գեղի լավ տներիցը մինն էլ մեր էս օրվան խոտանոց դառած կտեր օթախն էր։ Հենց էն տարին ես նշանվեցի։ Էն գրողի տանելուն, ով գիտե մեռած է, թե կենդան, յուր գործքովն իրան ողորմի, մի օր թունդրի համար աթար (խակոր) ներքև ածելիս՝ մին էլ օթախիցը դուրս եկավ ջրի փարչը ձեռին ու ոտով գլխով ինձ հասկացրեց, թե գնա, ջուր բեր։ Դե, նորա աչքին ով էր երևում, շվաքը տեսնելուս՝ օխտը ոգուճախն էինք ներս պրծնում, մերս մահի կտար, հենց ահ էր տվել ինձ ու մեր լսի բաժին ջրատար Թելլուին՝ պստիկ ախպորս նշանածին (կին), խեղճն երկու տարեն հարսն էր. հենց որ լսում էինք, թե ոսները բակումը ման են գալիս, մենք տեղներս սասանում էինք։ Սատանական էր, էդ օրը մերս գնացել էր մեր խնամի Մայրանին գլուխ ապրանք (մխիթարանք)՝ յուր փարբեցի հարսի մոր աշխարհքիս ցավ ու դարդիցը ազատվելու համար. տղամարդկանցից էլ մեր տանը ոչ ով չկար. ես էլ գիտեի, որ կոնատ կապիտանը տանիցը հազարիցը մի անգամ չի դուրս գալիս, արխեին բարձրացա կտուրն ու աթարն ներքև թափեցի։ Էն էի ասում, աղջի, որ հանկարծ դուրը բաց չարեց ու շեմքի վերա կանգնած փարչն ինձ մեկնեց, միսս փշաքաղվեց։ Ճարն ինչ, գնացի, լցրի ու աղլուխս ընչանք պնչիս ծերը ցած քաշած՝ գլուխս կրծիս մեջ կոխած՝ վերև բերի։ Տեսա՝ դուռը ծածկել էր ու ներս մտել։ Սիրտ չարի, որ տուն մտնեմ, դուռը կամաց ծեծեցի։

— Պեր,— ձեն տվեց կոնատ կապիտանը ներսից։— Մեր ազգքն ասում էին, թե հայերեն կենտ երեք խոսք գիտե— բեր, հաց, ջուր։ Էն էլ սուտ ու սխալ էր ասում, բեր ասելու տեղակ ասում էր՝ պեր, հացին՝ խաց, ջրին էլ չուր։

Ի՞նչ անեմ, ահահար, դողահար դուռը կամանց ճռռացրի ու սիրտս լքլքալով տուն մտա։ Ի՞նչ ես ասում, այ մերս, մտիկ եմ տալիս, օթախումը մարդ չկա։

— Բան ո՞ւր կորավ, սատանա հո չէ՞ր, որ գետինը վեր խորտակվեր, իհարկե, մի տեղ կուչ եկած կլիներ,— խոսքը կտրեց խոսակիցը,— երևում է մաքումը չարը բնակալած է եղել։

— Սուտ չես ասում,— շարունակեց Քարտաշենց պառավը,— գրողը նորա բկիցը կպչի, նրան խեղդի, ջրի փարչը պատի տակին վեր գցեցի ու ետ դառա թե չէ, մին էլ էն տեսնեմ, էն սև սրտին դուռը ծածկել է ու մեջքով դռան դեմ ընկել. դու մի՛ ասիլ, փորումն օձեր է ունեցել. քա, ի՞նչ ես ասում, աչքերս սևացան, բերանս տաք ջուրը կոխեց, ոտներս բռնվեցին, տեղն ու տեղը մխվեցի, մնացի, երբ որ էն ծակծկոտվելուն ժանիքը ետ բաց արած՝ լիրբ աչքերով ինձ մտիկ տվեց։

— Հողեմ նորա գլուխը։

— Ոնց որ մի նետ օձ, մին էլ էն տեսա՝ ունեցած չունեցած ձախ ձեռքը շլինքովս է փաթաթել, ուզում է թուշս բերանն առնի։ Ընտուր են ասել՝ ստոված սարը կոտեսնի՝ ձյունը կդնի։ Աստծու ողորմությունն էր, որ աջ ձեռքն արմնկիցը կտրված էր։

— Է... հետո՞...— հետաքրքրությամբ բերանը կիսաբաց՝ հարց տվեց Գյուլբահարը։

— Հետո նորա խնդոցը, թե իրան կեր կելնեի, բերնի տաք գոլը որ երեսիս չդիպավ, ոնց որ տկի բերանից դուրս փչած արաղահոտ։ Դեռ առաջ ծնկներս մի բոպե ծալվեցին, քիչ մնաց՝ էն քոռանալուի պռոշներն երեսիս էր առնում։ Մին էլ, հենց իմանաս, թե զինավոր սուրբ Գևորգը կարմիր ձիու քամակին ինձ օգնության հասավ. մի էնպես ծվոց բարձրացրի, որ օձորքը թնդաց, գերանները դողացին ու երկու ձեռքով որ դռշին հուպ տվի, ձեռը շլինքիցս պոկ եկավ ու թիկունքի վերա թիկալով գետնին փռվեց. բարդու ծառը քեզ օրինակ, որ կտրում են ու շուռ տալիս։

— Ա՛յ թե աչքը հանել ես։

— Ընչանք կոնատ կապիտանն ուժը կհավաքեր, խելքը գլուխը կգար

[1] 1840 թվականն էր, կարծեմ, Մողնի գյուղը ժանտախտը ավերեց։ Կառավարությունը զորքով շրջապատեց, հաղորդակցությունը արգելեց։ Այդ արգելքը ժողովուրդը ծեփ կամ ծեփել բառով էր արտահայտում։

ու վեր կկենար, ես չունչս մեր հացատանն առա ու աղատվի ամեն հայ-քրիստոնյա խաթից ու փորձանքից, ինչպես որ ես ազատվեցի։ Էլ էդ բանից հետո՝ օձի մի՞ս էի կերել, որ ոտս կտուրը դնեի՝ քանի էն գրողի խեղդածը մեր տանն էր կենում։ Լավ, որ աստված աշխարհքի աղոթքը լսեց, խեղճ եկավ, խեր բանը (ժանտախտը) վերջացավ, ճամփեքը բացվեցին։

— Ախար խոսքդ մոռացար։

— Հա, էն էի ասում,— շարունակեց Քարտաշենց պառավը,— էդ օրվանից դողը ջանս մտավ, էլ դուս չգնաց. օրեցօր հալ ու մաշ էի ըլնում։ Էդ հերիք չէր, մի առավոտ էլ լուսադեմին կուժն ուսեցի, ծեգծեգլահան գնացի ջուրը։ Քուչեքումը ադամորդի չկար, առվի վերա՝ ջրլցքումը մի հարս, մի աղջիկ չէր երևում։ Ես իմ կարճ խելքովս կարծել եմ, թե որտեղ որ է լույսը կբացվի, աղոթարանը կկապտի, սիրտս հանգիստ մոտենում եմ ջրլցքին, կուժը լցնում, հանում, առվի ափին կանգնեցնում, ուզում եմ, սաքի թե, երեսս լվանամ, կուժն ուսեմ, ետ դառնամ։ Դեռ երեսիս մի անգամ էի շոփ տվել (ջուր սրսկել), մին էլ առվի մեկել երեսին աչքիս առաջին մի կատվի չափ մարդ է ցցված. ոչ ավել, ոչ պակաս՝ մեր պոչը ծաղիկ սև կատուն քեզ օրինակ։

— Հիսուս ու Քրիստոս,— երեսին խաչ հանեց Գյուլբահարը։

— Ա՛յ քեզ մատաղ, էս պստիկ մարդը քիչ-քիչ ձգվեց, ձգվեց, երկարեց, բարձրացավ, դառավ Ճանճապանենց մեծ բարդի ծառի չափ, հաստությունն էլ՝ Խեչանենց պոպոքի ծառիցն երկու անգամ ավելի։

— Աղջի, բա դու նստել մտիկ էիր տալիս, ախր ալք է էլիլ։

— Հողը գլխիս, ցեխն արևիս էի մտիկ տալիս, ղորթ է, աչքերս բաց էին, բայց միշին լույս մնացե՞լ էր կամ գլխումս զորություն կա՞ր բան հասկանալու, մին էլ տեսա, որ էդ ալքը թռավ ջրի մեջը ու լոք-լոք տալով՝ իմ կողմն է անցկենում։ Դե, Ֆիդոյի թոռը, ոտներդ իրար տուր։ Ծտի պես տեղիցս վեր թռա ու երեսս ետ շրջեցի։ Էլ չգիտեմ, ո՞տքս դիպավ, թե ալքը խփեց կժին ու փշրեց, շրխկոցի ձեն ականջս ընկավ, բայց ես էլ չկանգնեցի, մինչև տուն մի շնչի փախա ու տեղաշորիս վերա փռվեցի։ Էլ հո աչքս չփակվեց, ուրիշները դրանից հետո օխտը հանգ (անգամ) քնեցին, նոր լույսը բացվեց։

— Վա՜յ թե ձեռաց դողդ կտրվեց. դող ու էրոցքը մի փուչ (շնչին) բանից կտրվում է։

— Ինչ էլա՞վ, դու ոչ մեռնիս, դողացնելը դու ըտուց հետո տես, ատամներս որ իրար չեն կպչում, կասես, ջաղացի չախչախ, ձեռ ու ոտս՝ ոնց որ մի ուռու լեզվակ տերև՝ թունդ քամու առաջին։

— Բաս վերջը դողդ ո՞նց կտրվեց։

— Դրախտումը ծլվլաս, դու իմ ջրատար մեր, խեղճի հոգին դուրս եկավ. ոնց որ դու ես ասում, էլ բան չմնաց՝ արինք։ Շատերը խորհուրդ էին տալիս՝ Թաքիա գեղի թուրք օձ ման ածող Օջախ-օղլուն բերել, որ օձի գլուխը լեզվիս վերա դնի, աղոթի, բայց ո՞ւր էր ճանապարհ, անտեր կեր ցավը (ժանտախտ)՝ ոնց որ երկնքից վեր ընկած, մտավ Մողնի գեղը, անսուր, անդանակ բրդեց խեղճ մողնեցոնց ու ողջ գեղը ճրագի պես հանգցրեց. դրա պատճառով ամեն կողմից ճանապարհները կապվեց, գնալ գալը, ոտքը կտրվեց, էլ ի՞նչ Օջախ-օղլի, ի՞նչ օտարական, սալդատի ահիցն ո՞վ էր տանից դուրս գալիս։

— Աղջի՛, հիմի էդ ոսի արածն աստծուն ընդդեմ չէր գա՞լ, որ ճամփեքը կտրել էին, սաքի թե ցավն ուրիշ գեղ չանցկենա։

— Հո քո աչքովդ տեսար, որ ցավը Մողնուցն էն կողմը չանցկացավ. Աշտարակը Մողնուց շատ հեռու է՞, ձեն տաս՝ կլսվի, մի ուլի քիթ խոռվե՞ց. Կարբին, Փարբին, Պստի գեղը, Յուշին Մողնու չորս բոլորքի գեղերն են, հինգ օրեն ճանապարհ հեռու չեն, ընչի՞ մեի մի տեղը չցավեց ու մենակ Մողնին հոգեց-հոգի կորավ։

— Քա՛, խեղճ ես, հոգուդ մեղք մի՛ անիր, աստծուն էլ ընդդեմ չի լինի, դե, էն է աստծու բարկություն էր, իր հրամանն էր, որ կեր ցավը Մողնումը պոյանա, ընտեղ էլ վերջանա, թե չէ ցավը մա՞րդ է, որ թոփ ու թվանքով, գյուլլա-բարութով առաջը կտրես, տուն չթողաս. աստուծո տակիցը փախչել չի լինիլ, մերս, դու քո խոսքդ մի՛ մոռանալ. հետո ո՞նց արիր, որ դող ու էրոցքդ պրծավ։

— Մենք մի մեծ չալիկ-մալիկ աքլոր ունեինք, էնքան նախշուն ու սիրուն էր, որ արևի տակին ֆոֆռում էր, պոչի ջղեն (աֆաղաղի պոչի երկայն փետուրը) քրդի թրի պես կռացել էր. տեսնեմ՝ մի օր մերս բռնել է, գոգնոցի մեջ փաթաթել։

— Դե, մաշիկներդ ոտներդ անցկացրու, ասեց, ուր որ կերթամ՝ քամակիցս անխոս արի։ Ես էլ ի՞նչ իրավունք ունեի՝ պոռչս պոռչիս տամ կամ բան հարցնեմ, հորթի պես ետևիցը վազեցի։

— Մտել ենք ձորը, ուռի ծառերի փռնուտներովը (մացառուտ) անդադար վերև ենք բարձրանում. ընչանք Մողնու ձորն անցկացանք, մերը մեզ հասավ, ծառ չեղած տեղը կուզե-կուզ ենք գնում, որ չլինի՞ թե ձորի թմբից մի սալդատ տեսնի ու գլխներիս տա, ետ դարձնի։

— Էլ ի՞նչ ետ կդարձնեին, կտանեին գեղիցը դուրս շինած կարախտինումը (կարանտին) մի շաբաթ կպահեին, օրն երեք անգամ մուխ կտային։ Միտդ չի՞, դժվարն էն էր գեղիցը դուրս գայիր, բռնում էին մրակոլոլ անում։

— Դորա համար մենք էլ կուլ ու ձիգ անելով, շվաքներիցս վախե-

նալով, խլշկոտալով ոնց եղավ, մեզ քշեցինք սուրբ Հովհաննեսի աղբյուրը։ Կարբեցի երեխեքը գետումը ձուկ էին բռնում. մերս կանչեց, աքլորի գլուխը կտրել տվեց, կրակ արեց, աքլորը փետրահան արեց, սուրբ Հովհաննեսի իրան զլզլան, զուլալ ջրովը լվաց, լսի պես սպիտակացրեց. քեզ հայտնի է, փայտե շամփուր էնտեղ հարյուրներով կա, գնացողը շինում է, մատաղը խորովում ու քարափի տակին թողնում։ Մերս շամփուրն անցկացրեց, խորովեց ու էն տղեքանցն ուտեցրեց. խեղճը ոչ ինքը մի կտոր բերանը դրեց, ոչ ինձ մասնավորեց։ Հետո երեխեքանցը հեռացրեց, շորերս հանեց, աղբրի ջրիցն օխտը բուռ վրես ածեց, լեղացրեց։

— Մեռնիմ սուրբ Հովհաննեսի զորությունին, էն է՝ կփրկվեիր, էլի։

— Իմ երկու ջուխտ, մի կենտ ասլան տղերքանցս անունովն եմ երդվում, ամեն ցավ ու չուն էնտեղ թողի, 40, 50 տարիներ են գլորվել էն օրից, ինչքան լավ ու վատ ենք տեսել ու իմ ջանս դող ու էրոցքը չի իմացել՝ ի՞նչ բան է։

— Աղջի՛, դու լսե՞լ ես, ասում են էդտեղ առաջ աղբյուր չի եղել։

— Բաս ե՞րբ է դուրս եկել։

— Իմ տատս պատմում էր, թե սուրբ Հովհաննեսի ժամ շինող վարպետը դողացրել է. մարդը հալվում, ուժից ընկնում է. շինությունը կանգնում է։ Ժամ շինել տվող վարդապետը շատ դեղ ու դիր է անում, ամեն ժամարարի դողը կապել տալիս, միաբանքին տեր ողորմյա է շրջացնում, ճար չի լինում. նորա ձեռի գործը Հնդստան էլ չեն կարող դուրս բերել։ Ինչ անի վանահայրը, հո էնպես փառավոր տաճարի շենքը անփորձ մարդկանց ձեռքը չէ՞ր գցել, շենքն ու գեղեցկությունը կես փող չէ՞ր շինել. ճարը որ կտրում, ուխտ է անում, որ եթե սուրբ Հովհաննեսն էս դժվարությունին մի հեշտ ճանապարհ ցույց տա, ինքը մի շաբաթ անսվաղ կկենա, մի տարի էլ օրը մի ձեռնաչափ չոր հացով կապրի։ Սուրբ մարդի ձենն աստված կլսի. հենց էն գիշեր սուրբ Կարապետ դրան երազ է գալիս, թե վարպետիդ տար ձորը, գուշ արած (իգունո անկեալ) քարի տակին մի նոր աղբյուր եմ բխացրել, նորա ջրից օխտը գավաթ վրեն լցրու, լեղացրու, բեր, հանի վանքի գլուխը, թող աշխատի։

— Հենց էն օրից դեսն էն աղբյուրը դողի փրկություն է։

— Բաս չե՞ս ասում, թե ի՞նչ քաղցր ջուր է, խմելով չես կշտանում, մի թխլիկ գառը մենակ կեր, էն ջրից խմի, կմարսես։

Այս և սորա նման շատ հրաշքներ են պատմում սուրբ Հովհաննեսի արծաթափայլ աղբրի մասին Արագածոտն գավառի բնակիչները և, որ գլխավորն է, ջերմոցներից շատ սակավին չի հաջողել դիմել, լողանալ և շառողջանալ։

ԺԹ

ՇՈՂԻԿԸ

Վազում էր Բղդեն գնդակահար էրեի նման դեպի Հովհաննեսի աղբրակը, բայց մի քանի անգամ ոտքը ծանրացրեց։ Նա տատանում էր թողնելու Կիվի-մատուռը և իշամեղուներին. բրիչ ու կռան այնտեղ ընկած են, զանկագատան լուսամուտը քանդված է, բոռերն այնտեղից չեն հեռացել, մեկը ներս կմտնի, ամեն բան կպարզվի, և ինքը կդրկվի ոսկիներից։

— Է՛հ, թեկուզ մտնեն, ի՞նչ կարող են անել,— հաստատապես վճռեց Բղդեն,— ամենաշատը՝ լինդն ու գուրզը (բրիչ և կռան) պետք է տանեն, բոռերը հո թևավո՞ր են, թլիսմի թուղթը հո մոտս ունիմ, էլ ումնի՞ց եմ վախենում։

Նա ապահովեցավ և շտապեց տեղ հասնել, մինչ աչքերի ուռությունը չի փակել իր տեսողությունը, արևի կիզիչ սաստկությունն յուր զորությունը գործ էր դնում, աչքերը կարող էին բոլորովին ծածկվել և նա ամեհի քարաժայռի գլխից խոր անդունդը կգահավիժեր։

Ենթադրությունն իրողության փոխվեց. մոտ էր ձորի հունն իջնելու, որ Բղդեն էլ ոչինչ չտեսավ և ոչինչ չհասկացավ, մի «վա՜յ» միայն լսվեց, և ոտքերը գետնիցը կտրվեցին։

Անդունդը կուլ տվեց մեր հերոսին։

Էլ Բղդե չկա աշխարհքի երեսին, ձեռքներս լվանանք։

Ո՛չ, չհուսահատվինք, մենք այդպես շուտ չենք զրկվել մեր սիրելուց. նա կորավ, բայց կրկին լույս աշխարհ եկավ։

Ձորի հատակումը՝ ձորաթմբի ստորոտով վազում է գոշգոշալով Քասախի վտակը. դա մի արհեստական ճյուղք է գետակից հանած. Կարբու ջրաղացների հաստակոլոլ աղորիքը պտտեցնող ջուրն է դա, ջրաղացի առուն է։ Նա շատ խոր չէր, բայց սրընթաց էր և լայն։

Բղդեի գահավիժված ուղղությունից փոքր-ինչ ներքև՝ ջրաղացի առվի վերա՝ մի անհեթեթ օտարոտի մարմին վեր բարձրացավ ջրի տակից, աշխատեց ամրացնել յուր ոտքը և դիմադրել արագավազ ջրի հոսանքին, բայց կրկին ծնկներն ընկրկեցան, և նա սայթաքեց և երեսնիվայր փռվեց ջրի մակերևույթի վերա։

Մի քանի գլորումն ու կանգնումն, և խեղդվողին օգնության հասավ առվի թմբանը տնկած սաղարթաշատ ուռենու դեպի ջուրը հովանավորող ոստը։

Տարօրինակ մարդանման երկոտանին գրկեց ուռենու բունը և դուրս սողաց առվի միջից։

Դա Բղդեն էր, որ վերոհիշված քարափից վայր էր գլորվել ուղղակի առվի մեջ։

Նա այժմ կանգնած է առվի ափին և մեքենաբար գլուխը շարժում է։

Նա թրջված է ամբողջ մարմնով, ջուրը ծլծլալով հոսում է նորա վերայից, իսկ Բղդեն ամենևին ուշադրություն չդարձնելով իր անբնական դրության վերա՝ փառավորապես տեղն ու տեղը պառկեց թաց քարերի մեջ։

— Օխա՜յ, էս ի՞նչ լավ էր,— երկար ծորելով արտահայտեց նա յուր ինքնաբավականությունը,— բոռերի կծած տեղերն կսկիծն ու մրմունը կորավ, հովացա ու հանգստացա, ի՞նչ ցավ, թե թրջվեցի, արևն էնքան թեժ է, որ ձուն կխորովի, շատ չի քաշիլ, էլ ետ կչորանա։

Բղդեն իրավունք ուներ. ջուրն յուր փրկարար ուժը ի գործ էր դրել. իշամեղուների խայթյունի սաստկությունը մեղմացել էր։

Վայրկենական էր ցավի հանգստությունը, արևի տաքությունից կսկիծը նորից խստացավ։

Այս անգամ Բղդեն հաստատապես յուր դևը գտավ. պառկած տեղից ձեռքով ջուր սկսեց վերցնել առվից և գլխին ածել։

Նա զգում էր զովություն։

Հետզհետե Բղդեի աչքերի կոպերը ետ բացվեցին, հագուստի ջուրը քամվեց և սկսեց փաշաշել (փոfr-ինչ ցամաքել). նա վեր կացավ՝ շտապելու դեպի սառն աղբյուրը։

Հանկարծական կատաղությունը Բղդեին ընդգրկեց։ Նա ձեռքը գրպանը տարավ, երկու հատ ոսկիներն էին միայն. կաթարդական հռանկյունի փաթեթը չկար, թլիսմը գրպանից վայր էր ընկել, ջուրը տարել էր։

Ամեն ցավ ու կսկիծ մոռացության տրվեցին. Բղդեն այս անգամ ինքը մտավ առուն և ջրի ափերի խոտերը նշմարելով ու տնտղելով ներքև էր գնում։

Թուղթը չկա որ չկա, արագահոս ջուրը վաղուց ջրաղացի նավի շեշտակի հոսանքի մեջ քայքայել է թղթի շաղախը, թլիսմի թուղթն անշուշտ ոչնչացել է։

Բղդեն սակավ մնաց իրան կորցներ. նա մի տեսակ դուրս եկավ առվից և սրտակտոր վայր ընկավ կրկին առվի թմբանը։

Նա լալիս և հեկեկում էր։

Հուսահատությունը շատ կարճատև էր։ Հանկարծակի ոստյունով վեր ցատկեց Բղդեն պառկած տեղից և քիթը քամի մտած, ճակատը ծաղիկ, կոմբոլ (կովաբար) գոմշի հայացքով աչքերը լարեց դեպի յուր եղած

տեղից բավականին հեռու գետափին գտնված Կարբու ջրաղացի դուռը, ուր կանգնած էր մի դեռահաս երիտասարդ և ձորն ի վեր գեպի արևելք սպասողական դրության մեջ նայում էր։

— Ա՜յ, իմ աչքի փշերից մեկը,— մրթմրթաց ինքն իրան Բղդեն,— երկու տարի է՝ ջհուտ Աղաջանը բերանիս յուղոտ պատառը խլել, սրան է ուտեցնում, իմ շարչու ապրանքն բոլորից ավել Աշտարակումն էր փող դառնում, հիմի Աղաջանն այնտեղ խանութ է բաց արել ու սրան մեջը նստեցրել, ինչ է թե իրան փեսա պետք է շինի։ Տե՛ս, տե՛ս, ինչպես սիրտը հանգիստ կանգնած՝ մտիկ է տալիս երկնքին, երևում է՝ էս աշունքը պսակվելու է, յուր հարսանիքի ալյուրն է եկել աղալու. ինչի՞ չի աղա, ի՞նչ կասի, որ չի ուրախանալ, ինձ պես շարչություն անելով, բոշեքանց նման դեղերը չի քարշ գալիս, անքրտինք, անվաստակ հացի վերա է տուն գալու։

Բղդեն սպառնալից կատաղությամբ գլուխը թափահարեց դեպի յուր համագյուղացի Բստինենց Կարապետի որդի Սհոն՝ Աղաջանի սպագա փեսացուն։

— Ա՜խ, թե որ սատանեն կռանս կկենա, էս իրիկուն Կիզի-մատուռի բոռերը քսակս կմտնեն ու կուշ կգան, ես գիտեմ, թե ի՞նչ հացի կհասցնեմ ջհուտ Աղաջանին ու քեզ, Սհո ջան,— խրոխտաց Բղդեն երիտասարդի վերա, անուշադիր թողնելով այն կետը, թե Սահակը ոչ տեսել է իրան և ոչ մտածում է, թե աշխարհքի երեսին մի աներևույթ թշնամի է ստեղծվել յուր համար։

— Ի՞նչ եմ ասում,— նորից կսկծալի մորմոքով լաց եղավ Բղդեն,— մեղավորին ո՞վ է տվել արքայություն, ընչո՞վ եմ պարծենում, մոռացե՞լ եմ, որ թլիսմի թուղթը չկա։

Մի խոր հոգվոց վհատեցրեց Բղդեին. մի քանի ակնթարթ լուռ էր նա և անզգայորեն նայում էր դեպի Սահակը։

— Ի՞նչ եմ հիմարացել,— ական թոթափել ոգևորվեց նա,— շատ լավ եղավ, որ թլիսմը կորավ. ոսկիքը հիմի թևավորվել են, բոռ են դարձել, ուր որ գնան, իրիկունը ետ են դառնալու Կիզի-մատուռը. թե որ զանգակատան լուսամտումը թուղթը դրած մնար, բոլոր բոռերը կթռչեին, Սպահան կերթային, իրանց առաջվա տիրոջ սնդուկը կմընեին. հիմի նրանք իմս են ու իմս. ցորեկով մատուռին բոռերի ահից մարդ չի մոտենալ, էս գիշեր նրանք իմ ծոցումս բուն կդնեն։

— Սպասի՛ր, ուրեմն, ջհուտ Աղաջան,— բռունցք արեց Բղդեն և կուռը քաջ կռփամարտի նման օդումը ճոճեց,— մի քիչ ժամանակ էլ քաղաքը երազներ տես ու գիշերները թաքուն նշանածիդ հետ պատի քամակից քչփչա, Բստինի թոռը Սհո, շատ չի քաշիլ, դուք կճանաչեք Բղդեին։

Դեռ ամենից առաջ բոռերի կծածները լավացնեմ, երեսիս ուռուցքները նստացնեմ, էս իրիկուն էլ ոսկիքն իմը չինեմ, հետո ձեզ հետ կխոսեմ, ձեր աչքին կերևամ։

Անիվի նման մի ոտքի վերա պտույտ արեց Բղդեն, երեսը դեպի արևելք դարձրեց և շտապով ճանապարհ ընկավ դեպի սուրբ Հովհաննեսի աղբյուրը, երբեմնապես տեղ-տեղ կզվելով առվի վերա և գլուխը մեջը խորասուզելով։

Ահա մոտ է Բղդեն աղբրին. ահա առվի թմբան նեղ շավիղն արգելող մի քարափ, որի ստորոտով պետք է շրջան անի նա և տասը քայլից փափագին հասնի։ Եթե Քասախ գետի բարձրաձայն խոխոջյունը մի խուլ արձագանքով բռնած չլիներ ամբողջ ձորը, աղբրակի կարկաչյունն այս քարի ետևից լսելի կլիներ։

Առվի թմբանն անսահման ժամանակից ընկած այս մեծ ժայռը բնական սահման է դարձել սուրբ Հովհաննեսի աղբրի առաջը փռված փոքրիկ սիզավետ տափարակին, որի արևելյան կողմում կանգնած է մի հատիկ դժնիկի մեծ և ոստաշատ թուփ։

Ժողովրդի հասկացողությամբ, սուրբ Հովհաննեսն ինքն է տնկել և աճեցրել այս փշի ծառը, որպեսզի ջերմ ու տենդով հիվանդները երբ գան բժշկվելու յուր աղբրի ջրով, նրանք կարող լինեն ազատ համարձակ մերկանալ թփի մյուս կողմը և աղբրակի ջրով լվացվել, լցնելով իրանց վերա յոթը դավաթ ջուր. իսկ ցավը հետները ետ չտանելու համար՝ հիվանդները պարտական են կտրել իրանց քղանցքից մի կտոր և կապել փշոտ թփի ճղնիկներից մեկին։

Այս իսկ պատճառով է, որ փշի մեծ թուփն յուր վերա կապկպոտած հազարավոր գույնզգույն ծվենների շնորհիվ նմանում է մի մեծ ծաղկի փնջի։

Մի վերջին անգամ սահմանաքարի արևմտյան երեսին Բղդեն գլուխը թաղեց առվի մեջ և կամեցավ քարը բոլորել։

Երկու քայլ՝ և նա տափարակի վերա էր։ Բայց կոլոտ շարչին փոխանակ առաջ գնալու՝ գնդակի արագությամբ ետ ընկրկեց և տեղն ու տեղը քարի տակին կուչ եկավ ու շունչն իրան քաշեց։

Խռիվներն ու խոտերը նրան ծածկեցին։

Բղդեն մնաց բերանբաց, աչքերի բիբերը լայնացան, հոնքերը ճակատը թռան, ջղերի չափազանց ձգողականությունից երեսի ուռուցքն էլ տեղի տվեց։ Այս դրության մեջ նա ահռելի էր, կատարյալ սֆինքս էր դարձել. լավ, որ իրան չէր տեսնում, ապա թե ոչ, երկյուղիցը սրտաճաք կլիներ։

Ի՞նչն էր Բղդեին այլակերպողը, ի՞նչ երևցավ աչքին։

Ճիշտ աղբրակի ական մոտ ընկած էր մի պղնձյա գավաթ. փոքր-ինչ հեռու՝ գետնի վերա թափված էին մի երկու կանացի հագուստ, իսկ արևի տակին կանգնած էր մի չքնաղահրաշ նորատի գեղեցկուհի։ Մի ուրիշ, միջին տարիքով կին մայրական գգվանքով հագցնում էր գեղանի աղջկանը։ Կարմիր կերպասի շապիկն արդեն ծածկել էր դեռահաս պատանի աղջկա մարմինը։

— Ոսկի կոճակդ ինքդ կախիր, մինչև ես արխալուղդ բերեմ, Շողիկ ջան. մի քիչ առաջ գնա դեպի արևի տակը, քարափի շվաքը վրեդ ընկավ, կմրսես։

Խոսողը հասակավոր կին էր։

— Ջեմ մրսիլ, ադե (մայրիկ),— ասաց սիրունիկը և սկսեց ժողովել շապկի օձիքը, որ ետ էր բացված և տակից երևում էր լուսափայլ լանջը, որի վերա բարձրացել էր օրիորդական թարմ ստինքը։

Դեռ չէր ծածկել աղջիկն յուր փղոսկրյա, թզաչափ բարձր, հոլանի, սպիտակ կարապային պարանոցը։

Մենք չենք կարող գուշակել, թե ի՞նչ էր անցնում այն րոպեին անման գեղեցկուհու մտքից, բայց նա խոնարհեցրեց յուր գլուխը, բոլորակ, սևաթույր և խոշոր աչքերը մի րոպե սևեռեց յուր մարմարոնյա լանջին և մի հեզահամբույր կարճատև ժպիտ խաղաց նուրբ շրթունքների վերա. նա երկու ձեռքով ետ տարավ կրծկալը և կանացի հպարտությամբ նայում էր խանդաշատ աչքով բնության թանկագին պարգևներին։

Աննման էր աղջիկը. հունական ծովային փրփրազգեստ հավերժահարսն էր նա, որ ցնդեցնելով հույների գոռ պատերազմասեր աստվածներին, թևածել էր հայ աշխարհը՝ Արագած լեռան ստինքից բխած Քասախի անմահական կաթնով լվացվելու և հայ ամպամած լեռնածոցերի անհամար քարայր-պալատների մեջ պար առնող ողջամիտ եթերականներին յուր ոտքի տակ ծունկ չոքեցնելու համար։

Բայց հողեղեն գյուղացին յուր համանման մահկանացուի վերա միայն կախարդական ուժ ունի. մինը գտնվեցավ, որ ականատես եղավ այս տեսարանին և, ինչպես ասացինք, ոտքերը դողացին։

Մայր ու աղջիկ, անկարծիք, կլսեին նորա ոտնաձայնը, եթե նրանցից մինն իրանով զմայլված չլիներ, իսկ մյուսը դստերը հագցնելու հոգսով չլիներ զբաղված։

— Շուտ կուրծքդ կապիր, Շողիկս,— քաղցր հանդիմանություն կարդաց մայրը,— մեռնիմ կոկոմ վարդերիդ, շատ չի քաշիլ՝ կփթթին, կբացվին ու խելքամաղ կանեն նշանածիդ։ Աղջի, սատանեն հակառակ

է, հիմի որ էս խոտերի միջից կամ քարափի ետևից Սհոն քեզ մտիկ տար, հո կգժվեր։

Աղջկա երեսը շառագունեց. նա շտապեց փակել կուրծքը և հագնվել։

— Ախար դու չգիտես, առաջուց ես Սհոյին ասացի, որ քեզ բերելու եմ վրեդ ջուր ածելու. ինձ խնդրեց, որ իրավունք տամ հետներս գալ. ես նրան ասացի, որ կարող է հեռու-հեռու ման գալով մտնել ջրաղացն ու սպասել. ինչքան էլ լինի, ձոր է, լավ չի առանց տղամարդի երկու հոգով գյուղից էսպես հեռանալ. հիմի մենք ջրաղացի առաջովը կանց կենանք, խեղճը մարաղ մտած կատվի նման քամակներիցս պետք է քարշ գա։

Շողիկը ոչ մի խոսք չպատասխանեց։

— Հիմի ասում եմ, էդ քո սատանա Սհոյի սիրտը համբերած չլինի ջաղացումը, էս խոտերի միջին կամ քարափների տակին բուսուն (դարան) մտած լինի՝ ի՞նչ կանես. ախար, աղամարդիկը բոլորը ետ եկածներ են։

— Լավ չես արել, ադե, որ թողել ես նրան մեր ետևիցը գալ. լսողը ի՞նչ կասի, հայրս կիմանա, կբարկանա։

— Ոչով էլ չի լսիլ, հերդ էլ չի նեղանալ, գողնովի ի՞նչ ունիմ, իմ փեսացուն է, իմ տղեն է, երկու-երեք ամսից դու նրանն ես, նա քոնը, երկուսդ էլ մերը։ Մեռնիմ Սհոիս սև-սև բեղերին, ի՞նչ բախտավոր աստղի տակ է ծնվել, քեզ պես մարալն ու ջեյրանն իրան բաժին է ընկել, քո հատը Հինդ ու Հնդստանումը չկա։ Փառքիդ մատաղ, աստված, ո՞վ իմ պես խորոտիկ աղջիկ կունենա. էս երկու շաբաթվան դող ու էրոցքը քեզ մի քիչ հալեց ու մաշեց, սպասիր, սուրբ Հովհաննեսի զորությունով էլ ետ լցվես ու գիրանաս, տեսնեմ, թե քեզ ո՞վ կհասնի։

— Ես պատրաստ եմ, ադե, գնանք, քանի օր կա, կերեվի,— մոր խոսքերն ընդհատելու համար ասաց վերջապես Շողիկը։

— Որ էդպես է, հին անթարուցդ մի ծլանք կտրիր, տար քո ձեռքովը կապիր սև չալուի (դժնիկ) փշի ծառին. ասա՝ «էս էլ քեզ՝ իմ ցավ ու չոռն էլ»։

Դժնիկին կապած հազարավոր ծվեններն մոտ մինն ևս ավելացավ։

Մայր ու աղջիկ մի համբույր ևս տվին սուրբ Հովհաննեսի աղբրական քարին, մի-մի գավաթ էլ պարզորակ ջրիցը խմեցին և ճանապարհ ընկան դեպի տուն, չնկատելով խոտերի միջով դեպի գետափը սողացող շնչավորին՝ մեր քարաթոթոշ (մողեսի տեսակն է) Բղդեին։

ԺԶ

ՈՒԽՏ

Թե որքան նայեց, ինչքան ժամանակ տեղը մխված մնաց, ինչ մրտմքտուքի մեջ էր այս բոպեիս Բղդեն, ինքն էլ չգիտեր։ Նորա ուշքը տանող առարկայքը վաղուց ծառերի ետևն անհայտացել, հեռացել էին, իսկ նա դեռ ցցված մնացել էր. նա այդ բոպեին մի խելքից պակաս ապուշ էր, որ ժամերով անշարժ մի կետում մնում էր կանգնած ու աչքերը հեռու հորիզոնին անգիտակցաբար սևեռած։

Այս դրությունից խելացնորին սթափեցնողը լինում են միշտ գյուղական շար երեխայքը, իսկ մեր Բղդեի հուշարարն յուր հետ էր, իշամեղուների կծածների կսկիծը նորից ավելացավ։

Բղդեն հիշեց յուր գալստյան նպատակը, նա մեքենաբար ձեռքով աչքերը շփեց և խոտերի միջից առաջեց, հետն էլ հառաչեց ու մոտեցավ աղբրական քարին թիկնեց։

Նա սկսեց կծած տեղերը սառը ջրով լվանալ. գործողությունը խիստ դուրալի էր, և նա մի բանի անգամ կրկնեց։

Ցավը զգալի կերպով մեղմացավ։

Բղդեն դառձյալ կանգնեց տեղիցը և շարժվեց դեպի ճանապարհն արգելող մեծ քարը. նա եղունգներով ճանգռելով վեր մագլցեց քարի կատարը և շարունակ նայում էր ներքև։

— Գնացին, հեռացան,— փնթփնթաց նա ու ցած իջավ։

— Աստծու բաները մարդ չի հասկանալ, փառքիդ մեռնեմ, երկնային թագավոր, ես ի՞նչ եմ մտածում, ի՞նչ է գալիս գլխս, ընչի՞ համար եմ գալիս, ի՞նչ է պատահում. եթե աստվածանից չլինի, առաջին անգամն է՞, որ ես Շողիկին տեսնում եմ, ամեն առավոտ գեղիցը գնալիս մեր բակի դռանը կուժն ուսին հանդիպում է, ո՞ր օրն է մտքովս մի բան անցկացել. հենց էսօ՞ր նորա մերը մտածեր աղջկանն աղբրումը լողացնել, էսօ՞ր պետք է բոռերն ինձ այստեղ քշեին։ Աստվածանից էր, որ կար։

Բղդեն գնաց, կանգնեց Շողիկի կանգնած տեղը։

— Այ նորա ոտը դրած տեղը. էս խոտերը Շողիկի տրորածն են, ա՛յ, հենց էս սիրի-սիրի ծաղիկն էր նորա ոտի տակին։

— Հը՛, հը՛, հը՛...— ատամները բաց արած՝ հիմարական ժպիտով երկար ժամանակ հոհոում էր նա՝ աչքը տնկած գետնի վրա բուսած խոտին։

Կիսացնոր Բղդեն հանկարծ կռացավ ու սիրի-սիրի խոտի հետ մի

բուն ուրիշ խոտեր միանգամից պոկեց ու սկսեց քսել աչքերը, երեսը, մոտեցնել շրթունքներին, արբել բուն մեջ, նայել վրեն, էլ ետ համբուրել, էլ ետ ժպտալ, կրկին բարձրաձայնելիս ծիծաղել։

Մի խոսքով կատարյալ դիժ էր նա։

— Ես էլ զարմացա, թե Բստինենց Թիլիկ-միլիկ Սհոն ո՞վ, ալյուր աղալն ո՞վ, դու մի՛ ասիլ, կուրակի է եղել, խանութ չի ունեցել բաց անելու, հաջող ժամանակ է ճանկել. բայց մի հարցնես, թե այ ծոծապակաս (ուշապակաս), ի՞նչ ես ջրաղացի դռանը բիթդ ջամուն բռնել, մնացել, ընչի՞ ես թուփ ու մացառնեռումը վեր ընկած՝ հայել-մայել չես լինում, զոքանչիդ խոսքն ի՞նչ ես պարանի դնում (լսում). քո սպրանքն է, գողություն հո չե՞ս անում։ Է՛հ, դորա նմանների համար է ասած. «Աստված փլավն ո՛ւմ է տալիս, ախորժակն ո՛ւմ». Սհոյի բախտին ես պետք է տիրացած լինեի՝ տեսնիր։

Դարձյալ սկսեց ծիծաղել Բղդեն։

— Հրեշտա՞կ էր, թե՞ սատանա. աչքեր էի՞ն, թե՞ առավոտադեմին դուրս եկող պեծպծին տվող աստղեր. աղամորդու վիզ է՞ր, թե՞ Արայի սարի գլխի աբլորաքարի վրա մի մին ժամանակ կանգնող, հպարտ-հպարտ աչքերը չորս կողմը գցող ջեյրանի շլինք. մանավանդ կրծքին տմբտմբացող ջուխտակ նոները, որոնց վրա Շողիկն ինքն էր գժվածի պես հիացել։ Ա՛խ, ես կցնորվիմ, ես ինձ կսպանեմ, թե որ Շողիկը իմը չդառնա։

— Ի՞նչ եմ ասում,— գլուխը շարժելով վերադարձավ Բղդեն և նստեց աղբյուրի մոտ.— ո՞վ իմը դառնա, Շողի՞կը, իմ ոխերիմ թշնամու սերո՞ւնդը, ջհուտ Աղաջանի աղջի՞կը, ես գնամ Աղաջանին շլինք թեքե՞մ, կրկին նորա առաջին գլուխ ծռե՞մ, կծու-կծու հանդիմանությունները տանե՞մ, մտքումս դրածից ետ կանգնե՞մ, չհարստանա՞մ, կյանքս չարչարությունով անցկացնե՞մ։

— Ո՛չ, էդ գլուխ գալու բան չի, Բղդեն պսակվող տունն ու տեղ դնողը չի. աչքիս տակն ունեմ փող, հարստություն, բոլորի գլխին ընկույզ կոտրել, խոջա Բաղդասար դառնալ, ջհուտ Աղաջանին հացից գցել, մի կտոր ցամաք հացով նորա ինձ արած լավությունը վճարել, հետո Շողիկներն իրանք ոտիդ տակը գլուխ կդնեն. թե չէ էսօր Աղաջանն ինձ շեմքը չի թողել, քարհալած կանի։ Իրավունք էլ ունի, Պողոս-աղայենց ամալի տղային, յուր ողորմությունով առաջ եկած չարչուն նա ինչպե՞ս աղջիկ տա. Բստինենց Կառապետի տղեն մարդ է, մարդի որդի է, իսկ ես մի կոլոտ չարչի, հողի հետ հավասարված մի մարդ, ծառի որդը, աշխարհքի ծաղրատեղը, ինձ ոչ թե Աղաջանի պես երևելի խոջեն, աշխարհքին լավություն անողը՝ վերջին նախրչին էլ չի ուզիլ փեսա շինել։ Ախար ո՞նց

շինեն, ո՞վ է գժվել յուր աղջկա սիրտը խոռի (սրտաբեկ անել), ո՞ր աղջիկն ինձ կսիրի, և ընչի՞ս համար պետք է սիրեն՝ սիրուն աչքերի՞ս, նախշուն պատկերի՞ս, սուր-սուր բեղերի՞ս, շիշակ հասակի՞ս. երկրիս երեսին էլ խայտառակ անուն չի մնացել, որ ինձ չկանչեն՝ կոլոտ, ծառի որդ, արջի քոթոթ, նառ ուղտ։ Մարդիկ ուղիղ են ասում, մի մին ժամանակ իմ ծախած մանր հայելիքի մեջ որ թաքուն մտիկ եմ տալիս, զզվանքս գալիս է իմ երեսից, ուրիշներն ինչ մեղավոր են։

— Բայց ընչի՞ համար, ես ումի՞ց եմ պակաս, տղամարդի սիրունությունը քանի՞ կոպեկ կաժենա, ուրիշների պես մի տղամարդ էլ ես եմ, ա՛յ, հենց էս աղբրի լճակի մեջ մտիկ տամ, կերևամ։

Բղդեն քսվելով մոտեցավ լճակին և մեջը հետաքրքրությամբ նայեց, կամեցավ կյանքում առաջին անգամ համեմատություն անել յուր և ուրիշների գծագրության մեջ։

— Վա՛հ,— դուրս թռավ բերանից և նա մեջքի վերա փռվեց խոտերի մեջ։

Բղդեն անշարժ ընկած էր. նա այս րոպեին մի ծառի կոճղ էր, կարծես, մի գետաբերուկ էր։ Այս անունը տալիս են գետերի ափերին ընկած այն ծառի հաստ բնին, որ ով գիտե, քանի՞ հարյուր ասպարեզից, ո՞ր տարին, գարնանավայր հորդացած գետն ահագին քարափների հետ յուր հորձանքների և լեռնանման կոհակների վերա փոքրիկ փետուրի թեթևությամբ խաղացրել է յուր երեսին և երբ իջել, ջուրը նվազել և յուր բնական դիրքի մեջ է մտել, ափումը մի տեղում թողել է անշարժ ընկած։

Անհարմար համեմատություն չէ. Բղդեն երկար ժամանակ ձեռքերով երեսը ծածկած՝ մեռելի նման ընկած էր։ Նորան սարսափահար ետ զարկողն յուր այլանդակ և հրեշային կերպարանքն էր, որ երևեցավ պարզորակ լճակի խորության մեջ։

Արդարև, մի ևս առավել անճոռնի և դժնդակ դեմքի փոխարինել էր այսօր նրա բնական տգեղ տեսքին. իշամեղուները նորա երեսն այլակերպել էին. մի տեղ ուռուցքը ընկուզաչափ բարձրացել էր, մի այլ տեղ՝ խորշոմներ ու ակոսներ էր ձգել, շրթունքներից՝ վերինն ուռել, գալարվել ու քթին էր առել, իսկ ներքինը կղակին էր կպել, լնդերքը մատնաչափ հաստացել, սեպաձև ատամներն էին ծածկել. ամեն մի ոտի վերա չորս-հինգ բլրանման բարձրություններ միմյանց հանդեպը կտրած՝ մի-մի ձորահովիտներ էլ միջանցքներում էին առաջ բերել։ Ես միանգամայն անգիտանում եմ որևէ շնչավոր և անշունչ արարածի նմանեցնել Բղդեի երեսը. մի՞թե բնության արարիչը չէր խնայել յուր ձեռակերտին այսպիսի անճոռնի կերպարանք տալ։

Շատ կարելի է երկար ժամանակ ուշքի չգար Բղդեն, եթե արեգակի ջերմությունն յուր ներգործությունը չաներ։

Փոքրիկ միջատների նետերի թույնը շատ ազդու էր։

Սիրտը կոտրած, հուսահատ վեր կացավ չարաբաստիկ արարածը և յուր շորս կողմն աչքերը ման ածեց։

Զորամիջումն ամեն ինչ յուր տեղն էր. միայն օդի մեջ բզզացող թևավոր մժեղներն ու երբեմնապես մի քարից մի թփի վերա թևող թրոչնիկները՝ այն ջրի ծիտ կոչված սիրունիկ թևավորները, որոնք ջրային չեն, բայց ջրի սիրահար են, գետերի ափերից չեն հեռանում։

Զորի խաղաղությունը վրդովողը միայն գետակի հոսանքի խոխոջյունն է։

Մի քանի րոպե Բղդեն սիրտ չէր անում տեղիցը շարժվել, առավել լավը՝ չգիտեր ո՞ւր գնար և ինչպե՞ս գնար։

Վերջապես, հայտնի չէ, թե ի՞նչը Բղդեին ոգևորեց, նա կրկին մոտեցավ աղբրականը և աներկյուղ նստեց լճակի մոտ ու մեջը նայեց։

— Ա՛յ հիմար մարդ,— բացականչեց Բղդեն,— ես իմ շվաքից խրտնել եմ, ես կարծեցի, թե ջրի միջից ինձ նայում է մի յոթնգլխյան վիշապ. դու մի՛ ասիլ վիշապը ես ինքս եմ եղել, էս ի՞նչ օրն եմ ընկել։

Մի խոր թառաչանք դուրս ծորաց Բղդեի ներսից։

— Ի՞նչ կատեն ուրիշները, ի՞նչ պատասխան տամ ես հարցնողին։

Հուսահատ թշվառականի խոսքեր էին նոքա։

— Հասկանում եմ,— վհատած ասաց նա,— Կիզի-մատուռն ինձ պատժեց, գոթացրեց, որ ես իրա պատուհանի քարը տեղահան արի։

Բղդեն սկսեց լալ և հեծկլտալ։

— Անիծած վից հազարյակի զորություն, անպատճառ թլիսմը խիստ է եղել, կա չկա՝ գրբացն անեծք է դրել բոռերի վերա և բոռերին ձեռք տվողի վերա։ Ախար ընչի՞ հանձն առա թուղթն Երևանից բերել կամ թե բերի, դրի պատուհանի վերա, ընչի՞ էի կանգնում, ընչի՞ էի բոռերին սպառնում, որ ոսկի դառնան ու իմ սիրտս քաշեն իրանց։

— Է՛հ, էս էլ չուղեցի, թող կրկին թև առնեն, թռչեն, իրանց տիրոջն արժանանան,— ասաց Բղդեն և ձեռքը գրպանը տարավ, հանեց երկու հատ ոսկին ու շպրտեց։

— Հիմար, հիմար,— շարունակեց չարչին,— թլիսմն ի՞նչ է, որ մարդի այլակերպացնի. Կիզի-մատուռն է բարկացել ու ինձ էս օրը գցել։ Տեղն է ինձ, ես մեղավոր, անարժան, սևերես եմ, հայ քրիստոնյան յուր ձեռքով յուր եկեղեցին քանդի՞։

— Ո՛վ յոթն անվան տեր սուրբ Կարապետ, իմ ձեռքն է քո փեշը (ներեցեք եմ ապավինել),— չոքեց, տեղն ու տեղը աղոթեց Բղդեն,— քո դուռն եմ

եկել, քո աղբրի ջրովն աշխարհքն է ցավ ու չոռից փարատվում, դու բարեխոս կաց սուրբ Կիզի-մատուռի առաջին, խոսք եմ տալիս՝ իմ ձեռքովը քարը տեղը դնել, նորա դռանը մի որձ ոչխար մատաղ անել։ Ամեն, ով սուրբ Հովհաննես, էս օր ես քո աղբրի ջրովն եմ լվացվում. ուխտս ուխտ լինի, որ եթե իմ առաջին կերպարանքն ստանամ, մի օր քո Հորդանան ուխտ գամ, Հորդանանի ջրովն էլ լվացվեմ։

Այս ուխտն արեց Բղդեն և գլուխը թաղեց լճակի մեջ։

Այս գործողությունը կես ժամաչափ կրկնում էր նա։

ԺԷ

ԶՎԱԾԵՂԻ ԽԱԹՐԱՒ ԹԱՎԻ ՊՈՂԸ ԿՊԱՉԵՆ

— Սուրն երեսիս խաղացրու, չհուտ Աղաջան, ես քո դռնիցը հեռացողը չեմ, ես նույն Բղդեն եմ, որ էի, որին դու խղճացիր, հացի տեր ցիներիր, գալիս եմ կրկին ոտքերդ ընկնելու, գալիս եմ ասելու, որ Շողիկը Բստինի թոռից հանի, ինձ տուր, ինձ քո դռանը կապած շունը շինիր։

Այս խոսքերը դուրս թռան Բղդեի բերանից, երբ մի ժամաչափ անդադար լվացվում էր սուրբ Հովհաննեսի աղբրի մոտ և ջրի ափին, քարափի ստվերի տակ, պառկում։

Խեղճի քունը տարել է։

Մեկ էլ հանկարծ նա զարթնեց և, ով աստված, ջուրը հրաշագործություն էր արել, սուրբ Հովհաննեսը Սելոփմա ավազան էր դարձել իշամեղուների շնորհիվ բորոտացածի համար։

Բղդեն յուր բնական կերպարանքն էր ստացել։

— Բայց մի՞թե արածս հիմարություն չէր,— մտածելով և խոհական դեմք բռնելով ասաց և աչքերը դարձրեց դեպի մերձակա սիկամոր տեղը,— այս ինչ արի ես, ոսկիքն ընչի՞ կորցրի, հենց իմանանք իմ ոտնաթարձն էր. թլիսմի թուղթն Երևանից բերել եմ, տեղ եմ հասցրել, ի՞նչ մեղք էր, եթե փոխարենն երկուսն իմը լինեին, Շողիկի վզնոցի միջին շատ կհարմարեր։

Բղդեն տեղիցը կանգնեց և երկար ժամանակ խոտերը ետ քաշելով որոնում էր։ Փշերը ծակոտում էին նորա մատները, բայց գյուղականի կոշտացած կաշվին այդպիսի ասեղներն ախորժ խոտղանք են միայն առաջացնում և այլ ոչինչ։

Կարելի է շատ պետք է որոներ Բղդեն, եթե յուր ոտի տակից երկու նույնանման իշամեղուներ դուրս չթռչեին ինչպի գետը։

— Է՜հ, ասուվածանից որ կարված է, քաշքշելով ոչինչ չես շինիլ, արդար վատտակ էին. գնացին իրենց ախրոշ բտակը մոնելու։

Երկար ժամանակ սրտարկի այս խոսքերի հետ Բղդեն աչքերը պլշած մնացել էին դեպի բոռերի անհետացած կողմը։

— Անիծածներն ինչպե՜ս փայլուն էին,— ժպտաց նա,— ճիշտ այս Բփի տակին են եղել կուչ եկած, այստեղից թռան։

Բղդեն աչքը ձգեց վայրի կանգառի փշուկի թփին և երկար նայում էր։

Հանկարծ թափահարվեց նա և ետս ընդ կրունկն մի ոստյուն արեց։

— Եթե թռան գնացին,— ճչաց նա,— հապա էն ինչե՞ր են կանգառի արմատի մոտ։ Իմ ոսկիքս են, որ կան։

Նա հարձակվեց և հողախառն կորզեց գետնից յուր ձգած ոսկիքը։

— Երազում հո չե՞մ։

Բղդեն, արդարև, իրան կորցրել էր. նայում էր յուր շուրջը, աղբրին, դեպին, քարաժայռերին, ոսկիներին, շոշափում էր յուր անձը և գլուխը շարժում։

Նա սկսեց մի առ մի մտաբերել այս ավուր դեպքերը և թվել։

— Վեր կացա տեղիցս, թլիսմը տարա մատուռը, ոսկիքը բռռ դառան, թռան, երկուսն սպանեցի, քարն տեղահան արի, պատիժս առա, ուռուցվորեցի, եկա սուրբ Հովհաննես, Շողիկն այնտեղ էր կանգնած, էս էլ իմ շպրտած ոսկիքը, որ կրկին բռռմս են։

— Ի՞նչ երազ, ա՜յ ձեզ մատաղ, դե երկու հատ չէ՞ր։

— Բայց որ հիմա թռան ու գնացին՝ նրանք էլ երկու հատ չէի՞ն։

— Է՜հ, հիմար իմ գլուխ, աշխարհումս հազարավոր բոռեր կան, նրանք էլ հազարիցն երկուսը։

— Չէ՜, չէ՜, ես ձեզ զուր եմ շպրտել,— համբույրներ էր տալիս յուր երկու հատ ոսկիներին,— էլ ձեզանից ես չեմ բաժանվիլ, դուք դեռ ինձ շատ եք պետք. միայն դուք չեք, թլիսմի թուղթն էլ չկա, կիսից ավելի Կիպի-մատուռի մեջ դեռ դժվում եք, բոլորդ իմը կլինեք՝ ձեր զորությունով էլ ջհուտ Աղաջանի աղջիկը։

Արեգակն սկսեց արդեն յուր կարճ ստվերը կրկնապատիկ երկարացնել դեպի արևելք, ձյունանման ամպերի կույտերը հրափայլ շողշողյուն էին ստանում, երբ վերջին անգամ Բղդեն լվացվեց աղբրակի վերա. հմբուրեց աղբրի քարը և քայլերը փոխեց։

— Ահա գալիս եմ դեպի քեզ, ո՜վ սուրբ Կիպի-մատուռ։

Նա շտապ-շտապ առաջ էր գնում։

— Էսպես բան եք տեսե՞լ,— գլուխը շարժեց Բղդեն և ժպտաց,—

ո՞ւր էի գնում, ուր եկա. տան ճանապարհը դեպի աջ է, ես ձախ եմ ծռվել, եկել փշի թփի տակը։

— Կգամ էլ, հոգիս էլ դուրս կգա,— շարունակեց նա,— շատ ու շատ անգամ էլ դեռ մոտդ կգամ, ա՜յ սև չալվի փշի թուփ. դու ինքդ չալու ես. անպետք փշի թուփ ես, բայց ծաղկել ես, փթթել ես, հազար տեսակ ծաղիկներ ես տվել. բայց դրանց բոլորի հոտը կորցրեց քո վերա էսօր ավելացած կոկոմ վարդը. ա՜յ, հենց էս, որ ձեռիս եմ բռնել, հոտ եմ քաշում, համբուրում եմ ու չեմ կշտանում։

Բղդեն ձեռքում շփում էր Շողիկի կապած ծվենքը։

— Ասում ենք՝ քո վրա կապոտած փալասներին ոչով իրավունք չունի ձեռք տալու, թե չէ դող ու էրոցքը վիզը կփաթաթվի, բայց ես հո հետս չե՞մ տանում, ի՞նչ վնաս, եթե ես օրը մի անգամ գամ էս կարմիր փալասի կտորին ուխտ, մինչև մի օր իմ սրտիս փափագը գլուխ գա։

Այս խոսքերով մի անգամ ևս համբուրեց Բղդեն Շողիկի անթարու ծվենքը ու ճանապարհ ընկավ։ Զվածեղի խաթրու թավի կոթը կպաչեն։

ԺԸ

ՄԿՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Արևը մի ձողաչափ ճանապարհ հազիվ ուներ սարերի մյուս կողմն անցնելու, երբ Բղդեն թողեց սուրբ Հովհաննեսն ու շտապեց դեպի Կարբի։

— Այս քարքարուտներից լուսով դուրս գամ, հետո ես գիտեմ,— վճռեց նա և անհարթ ձորաթմբի դարավանդներով ոլոր-մոլոր վեր բարձրացավ։

Ամառն էր. երեկոյան զորավոր հողմիկը սփռել էր ամեն տեղ ճոխ բուսականության բուրմունքը. ամենահարմար ճանապարհ գնալու և զառիվեր բարձրություններ կտրելու չափած ու ձևած ժամանակն է. ճանապարհորդի ոտքերն ինքնաբերաբար թեթևանում են, խոտոր-մոտոր ելևէջներն անդգալի են լինում, ուղևորը մի դյուրալի թեթևություն է զգում։

Այս դյուրությունները չէին, որ Բղդեին շինել էին քարափների ուսերին սորորող, վազ առնող կարմրակտուց կաքավ. միայն այս օրվան բազմադեպ եղելությունները չէին նրան առաջ վարողը։

— Մինչև ես ձորը դուրս կգամ, մեր գյուղը սև պատանի մեջ կոլոլված մեռել կդառնա,— մտածեց նա,— բոլորը քնոտած կլինեն. գործի տեր մարդիկ են, հիմի կալվորը եզներն է թողել, թեղի կողքին պառկել

հանգստանում է, մշակը հանդիցն է եկել ոտներին ու ձեռներին դնջություն տալիս. էլ ո՞ւմից եմ քաշվելու, շտապեմ քանի ժամանակն է։

Մութը գետինն արդեն առել էր, երբ Բղդեն մտավ իրանց տունը, մորը քնած տեսավ, ավելորդ համարեց զարթնացնելը, շոշափելով գտավ հրահանի պարկը, հանեց չարչիական խուրջինից մի երկու զույգ մեղրամոմ և իրան ձգեց Կիղի-մատուռի մեջ ու ճրագը վառեց։

Ամեն ինչ յուր թողած դրության մեջ էր. բրիչ ու մուրճն ընկած էին, պատուհանի քարը շրջված մնացել էր, իսկ նորա մոտ, մի խորշում, մեղրի բջիջների վերա եռում էին հազարավոր իշամեղուներ։

Այս բջիջները մեղուների կաղմածը չէին, նույնանման բջիջներ կերտում են իշամեղուների երկու տեսակները, որոնցից մեկը մեզ ծանոթ բոռերն են, մյուսները նոցանից ավելի փոքրամարմին կրետները։ Վերջիններիս շենքը շատ աննշան է, իսկ բոռերինը կատարյալ մեղվաբջիջների նման են. այն զանազանությամբ միայն, որ բջիջների մեջ լեցուն մեղրը նույն քաղցրությունը չունի, ուտելու համար էլ միանգամայն անպետք է։

Իշամեղուներն այս անգամ առավոտյան հերոսությունը չգործ դրին, բզզոց վզզոցը շատ նվազ էր. իրանք էլ մեղրահացերի վրայից չթռան. ճրագի լույսը խաղտացրել էր միջատների աչքերը։

Բղդեն շվարել էր. նա մոտենալ չէր վստահանում, հեռվից միայն զարմացած նայում էր. որքան շատ են եղել երեկայալ ոսկիքը, այնքանը թռչելուց հետո՝ դեռ մնացածներին թիվ ու քանակ չկար։ Մի՞թե ցերեկվան թռչողները ոսկիք չէին, բայց ի՞նչ են յուր գրպանի երկու հատը։

Բղդեն հանեց և ձեռքին բռնեց։

Երևակայություն չէ, ազնիվ մետաղի փայլը ճրագի լույսովն էլ յուր զորությունը չի կորցնում։

— Բայց կարելի է սրանք հենց իսկական բոռեր են ու Թլիսմի տերը հարյուրավոր տարիներով առաջ յուր ոսկիքն էստեղ թաքցրել է և ուզեցել Թլիսմի ձևով տանել, սակայն չի հաջողվել։

— Տեսնենք,— ասաց Բղդեն և զգուշությամբ գլխարկով ճմլեց բջիջից հեռու կանգնած միակ իշամեղուին։

Ոչինչ կերպարանափոխություն— մի սատկած բոռ է ընկած գետնին։

Նա չհավատաց աչքերին, բրիչի ծայրով ետ քաշեց սպանած միջատն ու վերցրեց։

Իշամեղուի փափուկ մարմինն է և ուրիշ ոչինչ. նա տրորեց պողունցի մեջ, մի տեսակ մածուցիկ հյութ քսվեց յուր ձեռքին. բոռի սպիտակ արյունն էր։

— Ի՞նչ կնշանակե ուրեմն, մի՞թե սորա տերը միայն երկու հատ ոսկի էր պահել կամ ընչի՞ պետք է դուրսն ընկած լինեին։

Բղդեն սկսեց մանրախույզ հայացքներ ձգել յուր շուրջը և քարի տակը։

Առավոտն ամեն բան կպարզվեր, եթե նա շփոթված չլիներ։

Պատի տակին, քարերի մեջ, պատաշարի ճեղքվածքից դուրս է մղված երկու-երեք բռնաչափ կրախառն ավազ։ Ամեն գյուղական մանուկ կարող է ասել, թե գետնափոր մկների արարքն է այդ. այդպիսի հողակույտերը հարյուրներով կան դաշտերումը՝ մկան ծակերի մոտ։

Դեռ հողի կույտը չխառնած՝ Բղդեն դիտեց հետաքննին աչքով և վրճռեց, որ հողը թափված է տեղահան արած քարի հետ բացված ճեղքից։

Բղդեն սկսեց հողը խառնել։

Հրաշք...

Հողակույտի մեջ լիքն է Բղդեի մոտ եղած ոսկիներով։ Նա մոռացավ բոռերին։

Հողախառն բուռն արեց և գրպանը լցրեց։

— Ուրեմն գնացող բոռերը ոսկիք չէին,— վճռեց Բղդեն հողը քրքրելուց և վերջին ոսկին վերցնելուց հետո,— ահա՝ առավոտյան սպանած բոռերը։

Այդպես իսկ էր. նորա սպանած երկու միջատները, որոնց ոսկի դառնալու վերա աներկմիտ էր, այժմ ընկած էին քարերի մեջ փոշոտված։

Ինքնամոռացությունը հեռացավ Բղդեից։

Նա ապահովեց, որ միջատները կապ չունեն յուր գտած թանկագին մետաղի հետ։

Այժմ նա սկսեց գաղտնիքը քննել և գտավ։

Յուր տեղահան արած քարի անկյունում, մի արհեստական խորշում, գլխի վերա շրջված էր մի փոքրիկ կավե բդիկ։

Նրանից քիչ հեռու ընկած էր յուր կափարիչը։

Խուփը միջից երկու կես էր եղած։

Անշուշտ մկներին էր պարտական Բղդեն։

Մկներն են փորել բդիկի տակը, շուռ տվել և ոսկիքը հողի հետ դուրս թափել։

Առաջինը չէր այսպիսի դեպք պատահելը. շատ մոտիկ անցյալում մի հոգևորական նույն ձևով վայելեց կրծանների աշխատության արդյունքը. մենակյացն յուր հովանավորության հանձնված վանքի պատի տակին մկների դուրս թափած հողի կույտի մեջ գտավ ոսկիներ։

Որքանությունը սուրբ հորն է միայն հայտնի, նոցանից միայն երկուսն իբրև հնություն դրված են Մայր Աթոռի թանգարանումը։

— Հիմի, ջհուտ Աղաջան, թե ճակատ ունիս դիմացիր, երկու ղոչի գլուխ մի պղնձում չեն եփվիլ. այսուհետև կամ չարչի Բղդեն, կամ ջհուտ Աղաջանը. օրն էգուց մենք իրար կհանդիպենք, դեռ այս գիշեր գնամ հանգիստ քնեմ։

Այս խոսքերով բրիչն ու կռանն առած՝ առանց յուր խոստումը կատարելու, առանց քանդած քարը տեղը դնելու՝ դուրս եկավ շտապով Բղդեն Կիզի-մատուռից և դեպի իրանց տունն ուղղեց քայլերը։

Թե որքան գիշեր էր անցել, ինչպիսի երազներ նրան հուսալից կամ հուսալիք էին արել, հաշիվ չկարաց տալ իրան Բղդեն, բայց մեկ էլ յուր անունը լսեց, տեղից վեր թռավ, ցից կանգնեց, շփոթվեց, մթության մեջ նայում էր յուր առաջին կանգնող ստվերներին և յուր շորս կողմը։

Նա քնահարամի շարժումներ էր անում, աջ բազուկով աչքերն էր տրորում, ծործորակն էր քորում, հորանջում էր և իրան առաջարկած հարցմունքներին միայն անկապ և անհասկանալի հնչյուններով էր պատասխան տալիս։

— Ա՛յ տղա, Բղդե՞, ի՞նչ ես ղղմել, քեզ չե՞մ հարցնում, էս ժամանակ էստեղ ի՞նչ գործ ունիս,— կրկնեց ձիու սանձը ձեռքին բռնած մի մարդ։

— Աբա... Աբա... Աբարանիցն եմ գալիս,— քրթմնջաց վերջապես ուշքի գալով Բղդեն,— շատ հոգնած էի, նստեցի ձեր դռան առաջին, որ քիչ հանգստանամ, քունս տարել՝ մնացել եմ էստեղ, Աղաջան ամի։

— Իսկ էս լինգն ու գուրզն ի՞նչ բաներ են։

— Աբնագյուղի տերտերինն է, մի փոքր շինություն պետք է անենք, մի քանի օրով խնդրեցի. բայց դո՞ւ որտեղից էսպես ուշ, էս ի՞նչ ձիավորներ են։

— Տոդա, դեռ քնա՞ծ ես, չե՞ս տեսնում՝ ապրանք է, Երևանիցն եմ բերում. էս էն բանն է, որ քո բերանդ յուղոտեց, որ հիմի ինքդ ես բերում։ Վնաս չունի, ես շատ ուրախ եմ, աստված տա ավելի հարստանաս, ձեռքդ երկարի. բայց ասել եմ, կրկին ասում եմ, Բղդե, աշխարհքը քեզանից գանգատավոր է. թանկ ես տալիս՝ հերիք չէ, ապառիկդ էլ ավելի ես նշանակում, մեկին մեկ շահ ես առնում, քերթում ես, կողոպտում ես ձեռքը կարմ գեղացոնցը։ Էդ լավ չի, որդի, վերևից աստված մտիկ է տալիս։

Գիշերն արգելք եղավ ջհուտ Աղաջանին նկատել Բղդեի կերպարանքը, ապա թե ոչ՝ նա իրան կպաշտպաներ կամ ետ կփախչեր, երբ տեսներ, թե ինչ գազանային կատաղությամբ կռացավ և գետնիցը վերցրեց մուրճը։

— Դե վեր կալ լինգդ ու գուրզդ և գնա հանգստացիր. բարի գիշեր,— ասաց Աղաջանը և հրամայեց յուր հետի մարդկանց բեռները իջեցնել։

Աղաջանի քաղցր խոսքերն էին, որ մի ակնթարթում իջեցրին Բղդեի բարկությունը։ Նա ատամները կրճտեց, առավ յուր գործիքներն ու հեռացավ, յուր մեջ փնթփնթալով հետևյալը.

— Էս ի՞նչ է պատահել ինձ, չէ՞ որ ես մեր տունն էի գնում քնելու, ապա ջհուտ Աղաջանի դռանն ի՞նչ բան ունեի։

— Հա՛, հա՛, հիմի հիշեցի,— երկար ճամանակ մտածմունքների մեջ խորասուզվելուց հետո արտասանեց Բղդեն,— գնացի, որ կռանամ, համբուրեմ էն շեմքը, որտեղից օրն երկու անգամ՝ առավոտը շատ վաղ և իրիկունը շատ ուշ՝ կուժն ուսին անցուդարձ է անում էս օրվա հուրի փարին. հիմա եմ հիշում. չոքեցի, շեմքի փայտն երեք անգամ համբուրեցի, ինչպես երևում է, գլուխս դրել եմ շեմքին՝ անուշ երազների մեջ մտել։

— Բայց գնա, որ գնա, ջհուտ Աղաջան, լավ պրծար, դու անպատճառ էսօր մի լավություն արել էիր, որ քո առաջդ եկավ, քեզ մահից պրծացրեց կամ թե չէ քո մի կտոր հացը գուրզը ձեռքիցս խլեց, թե չէ դու հիմի արենշաղախ, անշունչ ընկած կլինեիր քո շեմքի առաջին։

— Ո՛չ էս, ո՛չ էն, դու էիր, Շողիկ ջան, որ քո լսաթաթախ ձեռներդ ուժեղ փահլևանի նման (բմբիշ) կռներս ծալեցիր, ձեռներս թուլացրիր ու հորդ արևը սև անող գործիքը խլեցիր. շատ էլ լավ արիր, դու հո չէիր կարող հորդ արյունով լվացած ձեռքը համբուրել։

— Ի՞նչ... ի՞նչ եմ ասում...— հանկարծ ցնցվեց ամբողջ մարմնով Բղդեն և վերմակը վրայից ետ բացվեցավ։

Արդեն Բղդեն տուն էր հասել, հանել էր յուր շորերը և մտել էր մոր պատրաստած անկողինը։ Առաջինը չէր, որ մայրն այդ նախապատրաստություններն անում էր որդու համար։ Պատահում էր, որ Բղդեն երբեմն շատ ուշ էր վերադառնում գյուղերից. մորն անհանգիստ չանելու համար նա կարգադրել էր, որ յուր անկողինը պատրաստեր և ընթրիքը մոտ դներ։

Գալիս էր Բղդեն, ուտում և տեղը մտնում։

Այս գիշեր նա յուր անկողին մտնելն էլ չէր հասկացել. նա դեռ իրան փողոցումն էր կարծում։

— Երբե՛ք և երբե՛ք,— ձեռքը շարժեց նա,— չարչի Բղդեն տղամարդ չի, որ մի աղջկա առաջին կուչ գա ու նրա հոր շպրտած արճճից ծանր խոսքերը մարսի... Հը...— դառն ժպիտով խնդաց նա...— ուրախ եմ, ասում է, աստված տա ավելի հարստանաս, բայց մուշտարիքանցդ հետ լավ վարվես... Չէ՛, ջհուտ Աղաջան, չէ՛, ձեռներդ լվա, Բղդեն էլ քո տհսած էրեխեն չէ. Պողոս աղայենց ամալեն քո իրավունքի տակից դուրս

պրծավ, խրատներդ նորա ականջի չեն մտնիլ, այսուհետև հո դու, հո մի բուռը փոշին,— քամուն տվիր՝ էլ չկա, սրանք ողջ կենան, սրանք։

Բղդեն վերցրեց մոտն ընկած արխալուղն և շարժեց, ոսկիքը գրպանումը ղողանջեցին։

— Բաս Շողի՞կը... Չէ՞ որ նա ջհուտ Աղաջանի աղջիկն է, չէ՞ որ իմ թշնամին Շողիկիս հերն է, չէ՞ որ Շողիկս իմ դուշմանի միս ու արյունն է, ո՞նց կտրես միսը, որ արյունը չթափվի, ինչպե՞ս թափես արյունը, որ միսը չկտրվի...

— Ա՜խ... ես կխելքեմ... Ադե՛, ադե՛, ադե՛, մերի՛կ,— ձայն արձակեց մի քանի անգամ Բղդեն, ճակատին զարկեց, անկողնի մեջ կործ եղավ, գլուխը կոխեց բարձի տակը ու հեկեկալով լաց եղավ բարձրաձայն։

ԺԹ

ՋԲԻ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

Լուսադեմ է. բնությունը խաղաղ է ու անուշաբույր. մի թեթևասյուք զեփյուռ մեղմորեն խաղում է ամառվան գիշերային մթնոլորտի մեջ. մթնաժեռ երկնքի երեսը զարդարող փայլուն գոհարները— բյուրավոր մեծ ու մանր աստղերը— միմյանց ետևից ծորելով, անհետանում են կամ տեղն ու տեղը չքանում են. անսահման տարածության թանձր սևաթույլ վարագույրը հետզհետե նոսրանում ու կապտագույն անխռով օվկիանոսի մակերևույթի է նմանում։ Արևելյան կողմից մի բարակ շառավիղ՝ թափանցիկ ոսկեգույն շղարշի նրբությամբ, ձգվում էր երկնից երեսին, սրփռելով և ցրիվ տալով յուր ասեղանման սուր-սուր ծայրերը դեպի հեռի արևմուտ, դեպի խոր հյուսիս։

Այդ նոսրացած գոհարների խմբերում դեռ հպարտությամբ խաղում են պայծառ փայլերով մեկ-մեկից բավականին հեռու ընկած առավոտն ավետող տասներկու խոշոր աստղերը։ Բայց և նրանց երջանկությունը կարճատև է. լույսը մոտ է, լուսո երկյուղը նրանց էլ սարսափեցրել է, նրանք էլ հետզհետե գունատվեցին և մեկ-մեկ գլուխ առան, կորան։ Մինը կա, սակայն, որ չի ուզում ընկճվիլ, դա Արուսյակն է՝ լուսադեմի աստղերի թագուհին, գիշերային լուսավորներից ամենագեղեցիկը՝ լուսնյակից հետո. նա երեսը դեմ է տվել, ուզում է հակառակել Արայի լեռան քամակից դեպի ինքը շեշտված լուսավորների թագավորի սլաքներին։ Բայց և նա, հաղթահարված ու դալկացած, գլուխն առավ, չքացավ։ Այդ բոլորից հետո արշալույսն ավետում է մի գեղեցիկ առավոտ և փութացնում է գեղջուկին գեպի յուր սիրելի պարապմունքը, յուր հանդը, յուր դաշտը, յուր այգին, յուր կալ ու կուտը։

Մի այդպիսի առավոտ բացվեց մյուս օրը Կարբում։

Ջարաբաստիկ Բղդեն՝ սովոր շուտ զարթնելու և յուր շարչությանը լուծելու, այդ գիշեր ոչ քուն էր մտել, ոչ զարթնել, հազարավոր խառն ու շփոթ մտածությունների ու դիտավորությունների ծրագիր կազմելով, ինչպես պառկել էր, այնպես էլ տեղիցը վեր թռավ։ Նա ոչ մորը զարթնեցրեց, ոչ շարչու պայուսակին մոտեցավ. մի աներևույթ մղումից, կարծես, ձգվեց դեպի այն նեղ փողոցը, որտեղից անցնելու էին կժերն ուսերին ջրի գնացող աղջիկները։

Այս գործողությունը սկսում էր սովորաբար լուսաբացից շատ առաջ, երբ այգն ու ցայգը չէին տվել միմյանց հրաժեշտի ողջույնը։

Պառավ կանանց երկճղի ձայներն էին լինում առհասարակ ջահելներին քնահարամ անողը։

— Աղջիկնե՛ր, հարսնե՛ր, ելեք,— ձայն էին տալիս մեկ էլ անուշ քնի մեջ մտած ժամանակն անքուն պառավները,— քանի մրափիք, կնքմանիք քրդի մեռել, աքաղաղն երեք անգամ բարի լույսն ավետել է, վերի կողմը (արևել) կապտացել է, ելե՛ք դուռն ու տուն սրբոտեցե՛ք, մինչև տավարի ոտքը չի պղտորել առուները, գնացեք պաղ ջուր բերեք, բան ու գործի ժամանակ է։

Պառավների այս պատվերը շարժում ու կենդանություն էր մտցնում գյուղական ողջ բնակչության մեջ։

Մեծ պատրաստություն պետք չէր գյուղի հարս ու աղջիկներին իրանց արդ ու զարդն ավարտելու, իրանց պաճուճանքը վերջացնելու։

Հանեց պստիկ հարսը գլխատակից պատառոտուն, կարմիր, խամ կտավի անթարին, հագավ յուր դեղին շապկի վերայից և ահա նա միանդամայն պատրաստ է գործի կանգնելու։

Ամուսնացած մատաղահաս կանանց գլխի ծածկոցները, որ նույնպես կոպիտ փաթաթաններից են ձևած՝ գիշեր-ցերեկ գլխներից չեն բաժանվիլ, այլ միայն տոն օրերին կբացվին։ Միակ ածանագին մետաքսյա փուշի կոչված թաշկինակն է, որ վերնազգեստի հետ, երեկոյան տեղը մտնելուս, կծալվի և բարձի տակը կմտնի, մութաքի տեղ պետք կլինի։

Հասած աղջկանց գլուխն ավելի սակավ պատրաստության կարիք ունի, սանրել, հայելու տակ կոկվել չկա, մի-մի չթյա ծաղկավոր թաշկինակ է, որ եռանկյունի ծալում են, ծնոտի տակովը պատ տալի և սուր նակ է, որ եռանկյունի ծալում են, ծնոտի տակովը պատ տալի և սուր ծայրը թիկունքին փռում, որպեսզի հարմարին նորա հետ ամբողջ մեջքը բռնող տասներկու երկայն ծամերը և խբրև ծոպեր ծառայեն գլխի ծածկոցին։

Ճակավապետ է գյուղական կանացի սեռը, հրապուրիչ պճնազարդություններ նրան չեն զբաղեցնում, նա միայն յուր տնային տնտեսությանն է անձնատուր եղած։

Խոսք չունիմ, նորահարսները խնամքով ծալած և պահած ունին իրանց բաժինքում բերած հարսնության հագուստները, բայց նրանք դեռ շատ տարիներ պետք է բոխչամիջում ծալած մնան. հարսները իբրև օժիտ բերած ունին նույնպես մի փոքրիկ անագյա հայելի ձեռնամիջի տրամագծի մեծության ափի վերա հարմարեցրած, ունին և մի ոսկրե դյուրագին սանր. բայց այդ ամենը սովորական օրերի համար չեն, նրանք պետք են գալիս զատկին, տոն օրերին, հերանց գնալուս, ուխտատեղերում և այլն։

Աստծո տվածից՝ ոտնաման հագնելու համար ևս կանացի սեռը ժամանակ չի կորցնում. գյուղացի կինն ու աղջիկը ի մանկությունե վարժ են փուշ ու տատասկ կոխոտելու. նրանց ոտքի տակի մորթը գոմշի կաշուց հաստացել է, փշերի ասեղանման սուր ծայրերը փշրվում, բթանում են նրանց ոտքերի տակ։

Երդում չեմ ուտիլ, կարելի է զարդարվելուս՝ ոտքերը լվացած օրը՝ այդ փշե ասեղների ծակոցը փոքր-ինչ զգալի լինի մեր քնքուշիկ սեռի ոտքերի համար, բայց այն էլ՝ ոտքի երեսից, ապա թե ոչ, ժամերով, թեկուզ չեչաքարը[1] մաշեցնեն ոտքերին քսելով, ներբանի խոռոչներում ամրացած և մարմնի հետ միավորված խճերը մաքրել չեն կարող։

Տանն երես ու ձեռք լվանալու կարևորություն նույնպես չունին գյուղի ջահել կանայքը, այդ նրանք անում են ջրլցքի վերա՝ առվի փրփրալից պղպջակները փշրելով։

Մինչև տան տղամարդն յուր ոտնամանների առասանները կամրացներ, նորա քնքուշիկ կեսը կամ հարսնացու քույրը, երկու կուժ ջուր է բերում։

Եվ արդարև, գյուղացի տղամարդը՝ շեն թե աղքատ՝ երբեք ոտաբոբիկ չի ման գալ, նոր թե կարկատած՝ մի զույգ յուր ձեռագործ կաշվե տրեխ պետք է ծածկեն նորա ոտքերը։

Ահա մի գավաթ սառը, նոր բերած ջուր ձեռքին առավ տանու աղջիկը, համեստորեն ձեռքի մեկը սրտին դրած՝ կանգնեց եղբոր կամ հոր առջևը, խոնարհությամբ սպասավորեց նրան, երեսը լվանալ տվեց և կրկին, կուժն ուսին, վազեց ջրի։

Երեսսրբիչի կարևորություն նմանապես չկա, բաճկոնի քղանցքը կամ լայն թևաբերանը փոխարինում են նրան։

[1] Մի փոքր բոլորակ չեչոտ քար է այդ՝ կանանց զարդերի անբաժան ընկերը. նրանով են իշխցնում լվանալուս ոտքերի աղտոտությունը։

Ինչ ասել կուզի, որ ջհուտ Աղաջանի աղջիկ Շողիկը բացառություն չէր, նա էլ զարթնել էր, նա էլ ջրի էր գնացել։

Բղդեն շատ առավոտ էր անցել դեպի առվակը տանող ճանապարհովը, միայնակ, խուրջինն ուսին կամ յուր սև իշուկի հետ գյուղերը գնալուս, բայց ոչ մի ջրաբեր կնոջ կամ աղջկա չէր հետաքրքրել, իսկ այսօր աղջիկներից շատերը միմյանց աչքով արին և իրար մեջ քչփչացին.

— Աղջի, հողս դրա կոլոտ գլխին, ի՞նչ է քուչեն չափում, մեր քամակիցը հոտհոտելով, վերև ներքև անում. չլինի՞ յուր միջումը սիրահարված է, էն ո՞ր անշնորհքը դրան կերթա,— հարցմունքներ էին տալիս ու ծիծաղում սիրունները, երբ Բղդեն իրանցից հեռանում էր։

Չգիտեմ, լսե՞ց Սալբու տղեն յուր դեմ արտահայտած Կարբու գեղեցկուհիների կշտամբանքը, թե՞ մի ուրիշ դրդիչ հանգամանք մղեց նրան դեպի գյուղի հարավ-արևմտյան կողմը։

Նա այս արեց մի հանկարծական հայացքից հետո։

Բղդեն ուղիղ ճանապարհով չգնաց. մի քանի ցածր պատերով պարտեզներ շատ ժամանակ չէր, որ տնկված էին այդ կողմերը. նա իրան ձգեց առաջին պարտեզը, այնտեղից էլ երկրորդը, երրորդը, մինչև որ վերջին պարտեզի պատի տակին կուչ եկավ։

Բղդեն նստած տեղը դողդողում էր, ժամանակ առ ժամանակ նա գլուխը բարձրացնում էր, աչքերը սևեռում էր դեպի պարտեզից դուրս գտնված հինավուրց ավերակը և նորից կռանում. նորա այլայլված դեմքից կարելի էր գուշակել, որ նա մի դեպքի ականատես է լինում կամ մի խոսակցության ականջ է դնում. երեսը մի տեսակ ծռվել էր, բերանը բաց էր մնացել, շուտ-շուտ էլ ականջն էր պատածակին դեմ անում։

Հանկարծ Բղդեն թափահարվեց և սարսափահար եկավ. նորա պատկերի վերա կատաղության նշաններ արտափայլվեցին, նա կորզեց մոտն ընկած քարը, ձեռքը բարձրացրեց, որ շպրտի դեպի ավերակը, բայց կրկին ցած դրեց ու վեր ելավ տեղիցը, պատի գլխովը թռավ և սլաքի նման իրան ձգեց ավերակի մեջ։

— Ա՜խ...

Այս մի ձայն էր, որ հետևեց Բղդեի ներկայությանը և դադարեց։

— Աղջի՛, էստեղ ի՞նչ ես շինում էսքան վաղ, Շողիկ,— հարցրեց ճիչ արձակողին քաղցրությամբ Բղդեն։

Ջհուտ Աղաջանի աղջիկը ոչինչ չպատասխանեց, նա սիրտը բաբախելով կռացավ ուսելու քարին դեմ տված լիքը կուժը։

— Աղջի՛, էստեղ ո՛ւր, ջրի ճանապարհն ո՛ւր. ընչի՞ համար ես եկել այստեղ, դեռ լույսն ու մութը նոր են բաժանվում,— կրկնեց Բղդեն յուր հարցը։

— Ոչինչ,— հազիվ լսելի եղավ մի մրմունջ։

— Կա՛ց, կուժդ ուսդ տամ,— ժպտալով մոտեցավ Բղդեն։

Շողիկն արդեն ուսել էր կուժը. նա քայլերն ուղղեց դեպի ավերակից դուրս տանող դռնակը։

— Մի քիչ համբերի՛, Շողի՛կ,— ձեռքը կժին ձգեց Բղդեն, աղչկա առաջը կտրեց և չթողաց դուրս գալ ավերակից։

— Թո՛ղ... Ի՞նչ ես ուզում ինձանից,— տրտնջաց շրթունքն ուռցնելով Շողիկը։

— Աստված վկա, սուրբ Գևորգի գերեզմանովն եմ երդում ուտում, ինձանից քեզ վնաս չի գալ. երկու խոսք ունիմ ասելու, կամ լսիր, կամ ես ինձ անմահ, անգրող կսպանեմ։

— Դու ո՛վ, ես ո՛վ։

— Հապա դու ո՛վ, էն Աշտարակի ճանապարհը բռնած ներքև գնացող բախտավորն ո՛վ, որ թշերիդ ծերերը կարմրացրեց։

Շողիկը միանգամայն կարմրատակեց, դարձավ բազուկի (ճակնդեղ) եփած տակ. նա շարգելեց Բղդեին կուժն ուսից վայր առնել. նա լռել ու գլուխը խոնարհեցրել էր։

— Ես համբույրի ձայն լսեցի։

Շողիկը պապանձված էր, աչքերը արնոտել էին։

— Քեզ եմ ասում, ես ձեզ տեսա համբուրվելիս։

— Ես թաքուն ոչինչ չունեմ, իմ նշանածն էր, քեզ պես օտար աղչկա առաջը կտրող հո չէր,— մրթմրթաց Շողիկը։

— Եթե հայրդ իմանա՞։

— Այսօր չէ՝ մի քանի շաբաթից հայրս ինքը պետք է կռնիցս բռնի, նրան տա։

— Էստեղ ընչի՞ էիք եկել։

— Ո՞ւմ ինչ բանն է։

— Եթե դու շիտակ խոսող ես, ասա՛ ի՞նչ գործ ունեիք գյուղիցդ դուրս, ճանապարհից ծռանց, էս ավերակի մեջ։

— Իմ նշանածն է, իմ գլխի տերն է, հրամայեց գալ, իրան ճանապարհ դնել, ես էլ եկա։

— Նա սիրո՞ւմ է քեզ։

— Մեղք է, որ չսիրի։

— Դու է՞լ սիրում ես։

Շողիկը չպատասխանեց, ձեռքը ձգեց կժի կանթին և ուզում էր վերցնել, բայց Բղդեն գրկեց կուժն ու չթողեց։

— Ի՞նչ ես ուզում ինձանից, հիմա կգոռամ, աշխարհքը գլխիդ կժողովեմ,— սպառնաց Շողիկը։

— Մի խոսք եմ ասում, լսիր ու գնա, ասուված քեզ հետ։

— Մի ժամ է, բռնել ես ու ոչինչ չես ասում, քեզ համար մեծ ամոթ է, լույսը բացվեց, երթևեկը հիմի կշատանա, ընչի՞ ես կամենում ինձ խայտառակել։

— Թո՛ղ ասուված ինձ պատժի, եթե քո մի մազին դիպչեմ, Շողիկ, միայն լսիր՝ ինչ որ ասում եմ և մի՛ բարկանար, աղաչում եմ։

— Ասա՛, լսում եմ։

— Չի կարելի՞, որ Բստինենց Սհոյին չառնես։

— Դու իմ հերն ե՞ս, իմ գլխի տերն ե՞ս, դու ո՞վ ես, որ ինձ էդպես հրամանք ես անում։

— Հրաման տալու իրավունք չունիմ, միայն խնդրում եմ։

— Է՛... է՛... է՛հ,— բարկացավ Շողիկը և կրկին ձեռքը ձգեց դեպի կուժը։

— Աղաչում եմ, Շողիկ, ոտքերդ եմ ընկնում, ես գժված եմ քո սիրով. կամ էս ոտքերիս ետ արա կողքիցս կախած դանակը, վիզս կտրիր, կամ ես Սհոյին մի՛ գնալ, իմ նշանածը դարձիր։

— Ես ո՞ւմ ես, ի՞նչ ես, երկու տարի է, ես Սհոյի նշանածն եմ։

— Իմ էլ իմը դարձիր։

— Վա՛յ, հո՛ղը գլխիս, ես անտե՞ր եմ, ո՞րդ եմ, ձեռս ծոցումս անճարի մնա՞կն եմ, որ գնամ կին դառնամ, էն էլ ո՞ւմ՝ չարչի Բղդեին։

— Հիմի ես այլևս չարչի չեմ, Շողիկ, ես հիմի փողատեր եմ, քո հորիցդ շատ հարուստ եմ, օրն էգուց Աշտարակումը մի մեծ խանութ եմ բաց անելու, դեռ տասն էլ ուրիշ գյուղերում պետք է բանամ, քո Սհոյի հացը պետք է կտրեմ։

— Մի մարդի հացը ասուված չկտրի, թե չէ ադամորդին ի՞նչ կարող է անել։

— Քո Սհոյի աչքը հորդ դռանը պետք է մտիկ տա միշտ, հերդ պետք է մի կտոր հաց շպրտի, որ նա էլ քեզ պահի, իրան էլ, Բստինի թոռը հինգ գազ խամ չիթ առնելու, վիզդ գցելու կարողություն չունի, բայց ես քեզ ոսկու մեջ կթաղեմ։

— Կերածը կորած է, քիչ մարդիկ կա՞ն, որ էս օր իմ հոր հացն են ուտում ու հիմա նրա ոտը կրծում են. հորս երախտիքը չիմացողի աչքերը թող բռնի։

— Շողիկ, ես չեմ ուրանում, որ քո հայրն ինձ բարություն է արել, բայց այսօր նա իմ դանակի չափ կարողություն չունի. երեկ նա էր, էսօր ես եմ. աշխարհքս սանդուղք է՝ մինը վեր է ելնում, մինը ցած է իջնում, էսօր ես քեզ ոտիցդ գլուխ ոսկով ու մարգարիտով կզարդարեմ։

Մի արհամարհական ծաղր արտահայտեց Շողիկը և ձեռքը կժին ձգեց։

— Սուտ չեմ ասում, Շողիկ, եթե չես հավատում՝ տե՛ս ինչ եմ փռում ոտքիդ տակին, էս բոլորը քո ցավը տանեն։

Բղդեն հանեց գրպանից մի կարմիր թաշկինակ, քակեց կապը և սրփռեց գետնի վերա։

Մեզ հայտնի ոսկիքն էին հուրհրատում և իրանց փայլի պակասորդը լրացնում առավոտյան արևի ցոլացրած ճառագայթներից։

— Տասը, քսան էդքան էլ տանն ունեմ, Շողիկ, բոլորը քեզ մատաղ,— ստախոսեց Բղդեն։

Ոչ մի ոսկի պակաս չէր, բոլորն այսքան էր, բայց այս էլ քիչ չէր, հինգ-վեց հարյուրից ավելի էին։

— Մենք մի կտոր հաց աստուծո տվածից ունինք, սոված չենք մեռնիլ, տար, ուրիշներին զարմացրու,— շեշտեց բարկացած Շողիկը և այս անգամ վճռաբար բռնեց կժի ունկը։

— Ջեմ թողնիլ՝ ոտքդ փոխես, մինչև չասես, որ էլ Սհոյին չես սիրում, ինձ ես առնելու։

— Ինչ եմ անելո՞ւ, իմ հոր մի խոսքը քո պարկերով ոսկիքանց ու ակն ու մարգարիտի հետ չեմ փոխիլ. Սհոյի կոխած սև հողը քո գլխից ինձ համար առավել է, կոլոտ Բղդե. գողնովի ոսկիքո՞վդ ես ուզում ուրիշի նշանածը ձեռքիցը խլել. ո՞ր աչքը կույր, ոտքը կաղ, հաց ու ջրի կարոտ աղջիկն արժանի կհամարի քեզ պես այլանդակ մարդագելի ճանկն ընկնիլ։

Շողիկն այս անգամ սաստիկ էր բարկացել. նորա վերա մի անբնական ուժ եկավ. աչքերն արյունակոխ եղան։ Վերջին բացականչական խոսքի հետ զույգ ձեռքով ետ զարկեց նա Բղդեին, կուժը թոցրեց ու շտապով դուրս եկավ ավերակից։

Ավերակի պատը հենարան եղավ Բղդեին, և նա ազատվեց մեծ փորձանքից, նա գլուխը կամ մեջքը կկոտրեր, անշուշտ, ավերակի մեջ թափված քարերին զարկելով, եթե պատը նրան չփրկեր։

— Շատ լավ, ջհուտ Աղաջանի աղջիկ, դու ինձ վայ տաս, սպասիր հորդ հողի հավասարեցնեմ, քեզ չոքեչոք դուռս բերեմ, ոտս համբուրել տամ. եթե խոսքս չկատարեցի, գնա ու պարծեցիր. բոլոր ոսկիքս դրա վերա կփչացնեմ,— սպառնալով մատը թափ տվեց Բղդեն արագ քայլերով կուժն ուսին հեռացող Շողիկի քամակից։

— Ոսկիքդ տար մածնի տուր, գլուխդ քսի,— կտրական պատասխանն եղավ Շողիկի։

Աղաջանի դուստրն էլ չէր երևում. նա ծռվել էր դեպի ձախ և մտել

ջրի տանող փողոցն ու խառնվել ջրբեր աղջիկներին, որոնցից և ոչ մեկը չէր նկատել Շողիկի բացակայությունն և վերադարձը։

Բավական ժամանակ էր անցել Շողիկի հեռանալու րոպեից, և Բղդեն ավերակի պատին հենված դեռ նայում էր ակնապիշ դեպի ջրի փողոցը։

Վերջապես նա նկատեց ճանապարհովն անցնող կարբեցի չարչիներից մեկին, որ խուրջինն ուսած գնում էր գյուղերը շրջագայելու և տեղն ու տեղը նստեց, մինչև որ չարչին հեռացավ։

— Կամ ես կամ ջհուտ Աղաջանը, երկուսիցս մեկը պետք է Կարբու գավառումը հիշվի, հիշատակվի, կամ ես, կամ Բստինենց Սհոն, երկուսիցս մեկը պետք է Շողիկին տիրանա, դեռ տեսնենք ինչ կասի ուսուա Սիմոնը։

Այս խոսքերով նա կապեց կրկին յուր թաշկինակը, գրպանը դրեց և շտապով բռնեց Աշտարակու ճանապարհը։

Բստինենց Սհոն

Երկու տարի էր՝ Բստինենց Սհոն խանութ էր բացել Աշտարակումը, նա առաջին խանութպանն էր այնտեղ։

Սհոն մի գեղեցկադեմ երիտասարդ էր, բարձր հասակով, թուխ և խոշոր աչքերով, կարմիր երեսով և նոսր նորաբույս ընչանցքով, միշտ ծիծաղադեմ, միշտ հաճոյախոս, հաճախորդների ամեն խոսքին ջանով պատասխանող, այն ջահելներից մեկը, որի համար ամեն տեսնող ասում է, ի՜նչ տղա է, ափսո՜ս, որ մայրը մեկն է ծնել. իսկ համեստ բնավորության և գրավիչ պատկերի համար բոլորեքյան նրան նմանեցնում էին մոր ազիզ պահած մեծացրած ազապ աղջկա։ Այդ համեմատությունը միանգամայն հարմարվում էր Սհոյի բնավորությանը. նա չուներ կարբեցու խորամանկ ճարպիկությունը. մի մազաչափ սխալմունք յուր կողմից կամ նառը խոսք օտարից՝ նրա երեսը շինում էր երեկոյան բոսորային երկինք, ականջները մեծանում էին, կարմրությունը սփռվում էր բոլորակ դեմքի վերա և քափ ու քրտինքը կոխում էր. այդ ժամանակ նորա ձայնն էլ նվազում էր, որ խոստովանած, առանց նորա էլ ամոթխած օրիորդի մելոդիական և քաջալոր ձայնից ավելի չէր։

Մի հատիկ հոր զավակ էր Սհոն, կարբեցի Բստինենց Կարապետի որդին էր։

Կարապետը, իբրև յուր նախկին կարողությունը կորցրած մարդ,

ձեռնահաս չէր լինի երբեք յուր որդուն խանութպան շինել, մինչև անգամ Կարբու մեջ, թող թե Աշտարակու նման տեղումը, եթե ուրիշը նրան չօգներ։ Ուստի և նա մեծ ուրախությամբ պատրաստակամություն ցույց տվեց, երբ մի օր ջհուտ Աղաջանն առաջարկեց նրան յուր խնամությունը, ավելացնելով, թե Սհոյին մշտական մի կտոր հաց տալու համար ինքը մտադիր է Աշտարակումը խանութ բանալ նորա համար։

Ասել, անել՝ շատ չտևեց։ Մի կյուրակե երեկո Կարբու իշխանների ներկայությամբ տեր-Հակոբը «Պահպանիչն» ասաց, տեր-Հովակը՝ «Սուրբ Խաչիվը», և նշանի մատանին օրհնվեցավ, Աղաջանի տանը մեծ հացկերույթ եղավ, Սհոն Աղաջանին փեսա հրատարակվեցավ։

Ամեն ինչ նախատեսված էր, խաչեղբայր պտռելու կարիք չկար, նախ՝ որովհետև տեղական սովորության համաձայն՝ մի երկու տարի նշանածներին պսակը պաս էր, և երկրորդ, որ Աղաջանի սրտե ի սիրտ բարեկամ Արամենց Հարությունը և՛ խաչեղբայրություն պիտի աներ, և՛ յուր փողոցի կողմի սենյակի դրսևի պատը պետք է ծակեր, դուռը կախեր, դարակները շիներ և յուր կողմից մի մասնավոր դրամագլուխ դնելով պիտի ընկերությամբ խանութ պահեր Սհոյի հետ։

Բարդ չէին այն ժամանակվա կենսական պահանջները. պարզությունն և նահապետականությունն էր թագավորում հայ աշխարհումը, և Սհոյի խանութը միանգամայն լրացնում էր Աշտարակու և մոտակա գյուղերի կարոտությունը։

Սհոն միաժամանակ ժողովրդի մերկությունը ծածկող կտավավաճառ էր և տնտեսական պիտույքը հայթայթող մանրավաճառ։

Առաջին պաշտոնով զգալի վնասը հասավ թափառաշրջիկ հրեա կտավավաճառներին, երկրորդ առևտուրը գրգռեց Բղդեի և մյուս շարշիների նախանձը, որ ասել է, թե Աղաջանը մեկ ձեռքով շինածը՝ մյուսով քանդում էր։

Այսպես չէր հասկանում ինքը ջհուտ Աղաջանը. նա յուր հաճախորդ շարշիներին խորհուրդ էր տալիս փոքր առ փոքր տեղի տալ մեծամեծ գյուղերից և իրանց գործունեության շրջանն ընդլայնել այնպիսի տեղերում, ուր դեռ շռայլության ոտքը տուն չի մտել։

Աղաջանի գուշակությունը սխալ չէր, տարեցտարի ժողովրդի տնավեր զգխության և ավիլորդասիրության հետ բուսնում էին գյուղերում խանութներն և ավելանում էին։

Բոլոր շարշիքը խոնարհվելով իրանց ճակատագրին, բարձրացան լեռնոտ և քաղաքներից հեռու ընկած գյուղերը. իսկ համառ Բղդեն էր, որ ոչ միայն հակառակեց Աղաջանին, այլև կույր բախտի հաջող բերմունքով այսօր նրանից շատ վեր էր նյութական ուժով, նրա ոխերիմ թշնամին ու խաղաղությունը վրդովողն է։

Բղդեի վերա չկարաց ազդել Աղաջանը, ընդհակառակն՝ նա մեծ ներշնչություն ունեցավ յուր փեսացուի բնավորության վերա։

Մեզ հայտնի է, որ Աղաջանը սակավապետ էր, տկարներին օգնող և անգործներին գործ տվող էր. նա ինքը հասնում էր միշտ՝ թագավորական անհետաձգելի հարկապահանջության ժամանակ՝ ձեռը պակաս գյուղականներին՝ ամենաօրինավոր տոկոս միայն ստանալու պայմանով, ինքն էր, որ ամեն տեսակ աղետների միջոցին սրբում էր թշվառի աչքի արտասուքը։

Այդ միևնույն սիրելի հատկությունները պատվաստեց նա յուր փեսայի մեջ. շատ չքաշեց, Սհոն մի բարի վաճառականի անուն և համբավ ժառանգեց Աշտարակումն ու մերձակայքումը։

Նորա հաճախորդներն ըստ առաջնույն մի քանի գազ կտավեղենի համար ստիպված չէին լինում Երևան գնալ կամ հրեաների տոմարի մեջ մշտապարտական գրվել։

Սհոն ինքն էր ամեն կարիք հայթայթողը և Երևանու վաճառականաց վստահությունն ու վարկը ձեռք բերողը։

Կրկնենք, որ Բստինենց Սհոն էր Աշտարակի առաջին խանութպանը. երկու տարի յուր դեմ մրցում չեղավ, բայց մի քանի օր է, որ գյուղի մյուս ծայրումը մի երկրորդ առավել լիքը խանութ էլ բացվել է։

Ո՞ւմն էր և ինչպե՞ս։

ԻԱ

ՁԱՐԳԱՐ ՍԻՄՈՆԸ

Բարի և հեզահամբույր մարդ էր Զարգար Սիմոնը. նորա ծննդավայրը մինչև այսօր էլ ամենքից անհայտ մնաց, բայց խեցբեկ բարբառը, լեզվի տակին ոլորվող բառերը, վարդակարմիր կիսաբոլորակ դեմքը, խնամքով պահպանված, ծիծեռնակի թևից ավելի թուխ, սրածայր ընչանցքը, կոնաձև, մի կողմը նեղս ծալած բուխարայի թանկագին մորթուց գլխարկը, մուգ կապտավուն թևավոր չուխան, այս ամենը նրան մատնում էին, որ Ղարաբաղի կողմից մի եկավոր էր։

Սկզբներումը Սիմոնը մի թափառաշրջիկ վարպետ էր՝ յուր համարվեստ շատերի նման. նա ձմեռները դաշտային գյուղերումն էր մի փոքրիկ սենյակի մեջ բաց անում յուր խուրջը, գետնի մեջ ամրացնում փոք-

րիկ սալը (զնդան), իսկ ամառները լեռնային հով ու զով գյուղերի հյուրն էր լինում։

Նա շինում էր պղնձյա կամ արծաթյա դյուրագին գյուղահարմար մատանիք և ապարանջաններ, փոխանակում էր ցորենի, յուղի և ուրիշ տեղական բերքերի հետ և գեղջկական նորատի հարս ու աղջիկներին զարդարում։

Ուստա Սիմոնը հմուտ էր յուր գործին, պատահում էր, որ նա ոսկի զարդեր ևս պատվեր էր ստանում նշանադրությունների և հարսանիքների համար. նորա ձեռացաջուրն ամենքից հավանություն էր գտնում։

Զգիտեմ ավչի (որսորդ) Փիլումի Սիրամարգ աղջկա գեղեցկությո՞ւնն էր, թե՞ թափառականությունից ձանձրույթ զգալը, բայց այդ երկուսից մեկը խլեց ուստա Սիմոնի ուսից պանդխտության խուրջը, կոխեց նրան Աշտարակու տներից մեկը, տանտեր շինեց և հաստատ գործի կանգնեցրեց։

Հավանական է, որ Սիրամարգի (առավել լավ է գյուղական կոչումով ասենք)՝ Սիմիզարի բարձր հասակը, կեռ-կեռ հոնքերը, գրավիչ աչքերը, քնքուշ և սպիտակ մորթը հափշտակեցին երիտասարդի ուշքն ու միտքը, երբ նա, Փիլումի երկայնափող, բազչասարայ, անսխալական հրացանն արծաթե օղերով զարդարելուց հետո՝ մի օր էլ պատվեր ստացավ չափել նորա հրեշտակագեղ դուստր Սիմիզարի հոլանի բիլակը (ձեռքի դաստակը), հնուց մնացած ջարդ ոսկիներից աղջկա համար մի ապարանջան շինելու։

Այդ արտակարգ դեպքին էր պարտական ուստա Սիմոնը, որ տեղը պնդացրեց, Աշտարակից դուրս քայլ չարեց. ապա թե ոչ, Ղարաբաղու զավակը գաղթականությունից ձանձրացողը չէ։

Այսօր իսկ, ո՛ր գյուղը կամենաս՝ գնա, ո՛ր քաղաքումը կցանկանաս՝ հարցրու, եղած օտարականների մեծամասնությունը ղարաբաղցիներից է կայացած. ղարաբաղցիք են, որ բնատուր խելքով և ճարտարությունով զանազան միջոցներով փող են աշխատում. վաճառական, արհեստավոր, աշուղ, կապալառու՝ գլխավորապես ամեն հողում, ամեն երկրում ղարաբաղցիք են։

Սկզբներում այս մարդիկն իրանք միայնակ էին շրջում, չընդհատվելով իսպառ իրանց սիրելի լեռ ու ձորերից, մի տարի, երկու տարի քարշ էին գալիս և մի օր էլ մտքները բերած հայրենիքումը թողած սիրասուն գերդաստանը, շտապում էին զրկել նրանց ու իրանց կարոտը լցուցանելուց հետո՝ կրկին պանդխտության գավազանը ձեռք առնել. իսկ վերջերումս՝ մի կորստաբեր սովորություն հայրենիքի խորթ և ապերախտ զավակի հատկանիշ է ընծայում նրանց։

Այժմ ղարաբաղցի թափառականն յուր ընտանիքն էլ հետն է քարշ ածում։

Գյուղ չկա այսօր, ուր չգտնես տեղական կանացի զարդ ու պաճուճանքներից որոշվող մի կնոջ-գլուխ՝ հարյուր գույնզգույն մետաքսյա թաշկինակներով փաթաթած, չգտնես մի կին՝ ոսկի կոճակով, կարմիր բեհեզյա շապկով և չաքավոր արխալղով։ Դա ղարաբաղցու կին է՝ Ղարաբաղի գյուղերից կամ Շուշվա-Ղալից այստեղ վերաբնակված։

Ուստա Սիմոնները բացառիկ երևույթներ են։ Ընդհանրապես Ղարաբաղի ժամանակավոր պանդխտության դիմողներից շատ սակավներն ամուսնանում են օտարացիների հետ։ Այլ բան է, եթե նոքա Սիմոնի նման բոլորովին գաղթել են իրանց ծննդավայրից։

Տարիներով բացակայում էր, ասացինք, առաջ, ղարաբաղցին ընտանիքից, բայց միշտ աչքը դեպի ետ էր՝ դեպի յուր սիրելի կինն ու զավակը, և գուցե այդ ընտանեսիրությունն է, որ դժվարացրած թափառակությունի արհեստը՝ ստիպել է շատերին գերդաստանը կատվի ձագի նման բերաններումը բռնել և պտտեցնել աշխարհե աշխարհ։

Աշտարակը չէր միայն, որ սիրում էր ուստա Սիմոնին յուր քաղցր բնավորության և ճշտասիրության համար. նա միշտ պատվերներ էր ստանում և շատ հեռավոր տեղերից։

Առանձին խանութ չուներ զարգար Սիմոնը, նրա փոքրիկ սենյակն էր յուր ընդունարանը, ննջարանը և խանութը։

Մի անկյունում, դռան մոտ, նա յուր ձեռնափուքսն էր վայր թողել, մյուս կողմը՝ յուր ամոթխած ջահել կինն էր պատի մեջ շինած փոքրիկ կրակարանի վերա կաթսան դրել, երկու հոգու համեստ ճաշը պատրաստում, մի կողմին էլ Ղարաբաղից հետը բերած փոքրիկ գեղեցիկ գորգի վերա յուր այցելուներին էր ընդունում։

Այս ձմեռն էր. ամառները նա գործում էր բակումը՝ չարդախի հովումը։

Ուստա Սիմոնի բնավորության հետ ընտելացել էր ողջ գավառը. ամենքը գիտեին, որ երեկոյան զանգակը տալուց հետո՝ մինչև մյուս առավոտյան ժամերգության վերջը՝ արհեստին վերաբերյալ գործով նորա մոտ գալ անհնարին է։ Այս լի օրերն էին։ Կյուրակի և տոն օրերին ինքնըստինքյան հասկանալի են։ Այդպիսի գործից ազատ ժամանակներն ուստա Սիմոնի այցելուները լինում էին յուր սրտակից բարեկամները, որոնց հետ նա սիրում էր ուտել, խմել, զվարճանալ և յուր բարձր ու քաղցր երգերով ու բայաթիներով ամբողջ բերդաթաղը թնդացնել։

Մի ամառային երեկո, բավականին ուշ, մինչև զարգար Սիմոնը դեռ

նոր վերջացրել էր յուր գիշերային «խաղաղականի» աղոթքը և պատրաստվում էր անկողին մտնել, նորա բակի դուռը բախեցին։

Այդ ժամանակ, տեղական սովորության համաձայն, ուստա Սիմոնը կտերն էր քնում։

— Ո՞վ եք,— ձայն տվեց զարմացած ոսկերիչը։

Բախողը չի պատասխանում. դռան հարվածները դադար առան։

Սիմոնն էլ յուր կողմից է սպասում պատասխանի։

Նորից բախումը շարունակվեց։

— Ո՞վ ես, եղբայր։

Լռություն է։

Ուստա Սիմոնի համբերությունը հատավ, նա կտրիցն իջավ բակը և դռան սողնակի ծակից կրկնեց յուր հարցմունքը։

— Բաց արա՛, ուստա Սիմոն, գործ ունեմ հետդ։

— Ո՞վ ես։

— Ընչի՞ դ է պետք, քեզ համար գործ եմ բերել։

— Ի՞նչ գործ։

— Զարգարի։

— Զարգարի հետ էգուց չէ էլօր կարող ես տեսնվել, էս ժամանակ զարգար Սիմոն չկա տանը. հիմի ավչի Փիլումի փեսա Սիմոնն է գնում յուր կոներին հանգիստ տալու, զարգար Սիմոնը տանը կլինի վաղը չէ մյուս օրը. չորեքշաբթի՝ առավոտյան ժամից հետո. կարող ես գալ, հետը տեսնվիլ։

— Ախար ինչո՞ւ համար։

— Թե դու հայ ես, կիմանաս, որ էգուց կյուրակի է։

— Սխալ ես, ուստա, երեքշաբթի է։

— Սխալը դու ես, էգուց հայի համար մեծ օր է, Սահակ, Մեսրոպի տոնն է. ասենք տոնացույցի մեջ կյուրակի չէ նշանակված, բայց ես մեր աշխարհքումը քանի շաբաթ ջահել ժամանակս կարդալու էի գնում մեր վարդապետի մոտ, նա ինձ հասկացրել է, թե Սահակ, Մեսրոպը ինչ մարդիկ են եղել, ի՞նչ լավություն են արել հայի համար. լուսահոգին հրամայեց, որ էդ օրը միշտ կյուրակի պահեմ, ես էլ կատարում եմ, ինձ ինչ, թե էս աշխարհքումը ոչով չի պահում։

— Տո՛, եղբա՛յր, հաց ասա՛, ոսկի ասա՛, կյուրակիս որն է, հալալ կյուրակիքն էլ որ պահես, քեզ հերիք է։

Սիմոնն ուշք անգամ չդրեց սողնակից լսվող փսփսոցին, որի մեջ «ոսկի» բառը մի քանի անգամ շեշտվեց. նա շտապով վեր բարձրացավ կտուրը և սկսեց շորահան լինել։

— Մեղա քեզ տեր,— բարկացավ կտրից ուստա Սիմոնը, երբ դռան բախումը նոր ի նորո շարունակվեց։

— Եղբայր, քեզ չե՞մ ասում՝ զարգարը տանը չի, ի՞նչ ես գլխացավանք տալիս, հենց հիմի ձայն կտամ, ողջ թաղը գլխիդ կհավաքեմ, քաշվի՛ր, հեռացի՛ր։

— Աստծո հյուրն եմ, պանդուխտ ճանապարհորդ եմ, գիշերս դուրս եմ մնացել, ուստա Սիմոն, մի՞թե դու հայ քրիստոնյա չես, որ էս կեսգիշերին օտարականի վերա դուռը երեսին փակում ես. ինձ համար շատ տեղ չի հարկավոր, մի անկյունում կուչ կգամ, առավոտը կերթամ իմ ճանապարհը. ես կատակ էի անում, քո հավատդ էի փորձում, թե չէ այս ինչ զարգարի մոտ գալու ժամանակ է։

Այս խոսքերը Սիմոնի առաջը դրեց անծանոթը՝ երկրորդ անգամ սպառնալիք տալուց հետո։

— Հիմի, ով էլ լինես, իմ գլխի, իմ աչքի վերա տեղ ունիս, համեցեք,— ասաց ուստա Սիմոնը դուռը բաց անելով և ինքը ետ դարձավ, կայծաքարը ձեռն առավ, ճրագը վառեց։

— Բարի երեկո։

— Օ՜հ, Բղդե՛, դո՞ւ ես, այս որտեղի՞ց էսքան ուշ։

— Կարբուց, ուստա Սիմոն, Կարբուց, ուզիղ քեզ մոտ, քո դուռն եմ ընկել. գլուխս կտրես՝ հակառակողը չեմ, պետք է ինձ խելք սովորեցնես, բացի քեզանից ոչ ոք ինձ օգնել չի կարող։

— Տո՛, սատանախաբ կարբեցի, դու խելքի համար ինձ մոտ կգա՞ս, օրական քանիսի՞ գլուխն ես անլվա կլեկում, հացը ձեռքիցն առնում, ճանապարհ գնում, ով գիտի, էլ ինչ հատիկ ունիս թակելու, մի փորացավանք կունենաս, ասա՛ տեսնենք։

— Չէ՛, դեռ առաջ քո օրհնած բերանով, ինչպես ասին ինքը ճշմարիտ է, խոսք տուր, որ խնդիրքս կկատարես։

— Ախար ի՞նչ գործ ունիս։

— Դեռ քո կտրական խոսքդ ինձ բաշխի՛ր։

— Իսկ եթե խնդիրդ իմ ուժերից վեր լինի։

— Խոսք եմ տալիս,— ստիպվեց ասել ուստա Սիմոնը։

Մի բռնաչափ ոսկի թաշկինակի մեջ փռվեց Սիմոնի առաջին։

Սիմոնը մի հատ վերցրեց, զննեց և ասաց.

— Դշխոյն Հեղինեի փոս ոսկի են, սրանք թանկագին բաներ են, ամեն մինը տասը մանեթից ավելի կկշռեն, իսկ հատկացողի համար մի հատը հարյուրներ կարժեն. սրանք հին սիքքեա են, ֆռանգներն ու ինգլիզները պղնձյա հին ժանդոտած սե փոդին մանեթներ են տալիս, էս հո

ոսկի է. նրանցից մի երկու հոգի Ապարանով անցկենալուս՝ մոտս եկան և ինձանից խնդրեցին. ամառ էր, ես կալումը նստած՝ գործում էի։

— Հիմի էդ մարդիկը ձեռք ընկնողը չեն, ֆռանգստանը հեռու է, դու ուրիշ խորհուրդ տուր։

— Ի՞նչ ես ուզում։

— Ընչի՞ չես հարցնում՝ որտեղի՞ց են։

— Իմ ի՞նչ ցավն է, քո ձեռքին է, քո ապրանքն է։

— Ախար գտել եմ։

— Բարով վայելես։

— Ուզիդ եմ ասում, եղբայր։

— Ես խոսքիդ իսկությանն համար կասկած չհայտնեցի։

— Բոլորն հիսուն հատ է։

— Թեկուզ հազար լինի, ինձ համար միևնույն է։

— Ի՞նչ անենք, որ կարողանանք մսխել։

— Տար դիվանի (գանձարանի) առաջը դի՛ր։

— Որ ձեռքիցս առնե՞ն։

— Ես լսել եմ, որ կեսը քեզ կտան։

— Եթե չտվի՞ն։

— Այդ էլ քո գործն է։

— Իսկ եթե հալենք, ոսկու տեղ ծախենք։

— Ո՞ւմ ձեռքը կզորի դրանք հնոցի մեջ դնել, հալել։

— Ուստա Սիմոնի։

— Ասենք էդ մեր գործն է, բայց ուստա Սիմոնը գլուխը քարովը կտա ու էդ սխալը չի անիլ. ես, իրավ է, իմ կյանքումս շատ փողեր եմ ջարդել, հալել, ոսկեղեն, արծաթեղեն շինել, բայց նրանք բոլորը նոր փողեր են եղել, որոնցից շատ կա, իսկ դշխոյն Հեղինեի փոս ոսկի, քանի խելքիս տիրացել եմ, մի հատ եմ տեսել, ես էդ բանը չեմ անիլ։

— Էս բոպեիս դշխոյն Հեղինեն մեզ հաց չի տալ, ուստա Սիմոն, սրանց մսխելու հնարքը գտի՛ր։

— Եթե հալալ մարդ ես, ինչպես ասացի, պետք է դիվանին հայտնես, կգնահատեն, կիսի արժեքով քեզ փող կտան, հիսունի կեսը մոտ 200, 250 մանեթ կբռնի, էլ ընչի՞ քո բաժին աստվածանից գոհ չես։

— Ամենից լավն այն է, մեկը քեզ վերցրու, ֆռանգների վերա թանկ գնով կծախես, մնացածը հալի՛ր, ինձ տո՛ւր, բայց այն պայմանով, որ հալելու ձևն ինձ սովորեցնես, ո՛վ գիտե, աշխարհք է, կարելի է, բախտս կտրում է, էլի եմ գտնում, ամեն անգամ քեզ ընչի՞ գլխացավանք տամ, քնահարամ անեմ։

— Հասկանում եմ, շատ ունիս ու ինձանից թաքցնում ես. աստված

քեզ հետ, ես քո ասած մարդը չեմ, ում որ խաբել ես, էլի նրան խաբիր, ես ոչ կհալեմ, ոչ կսովորեցնեմ։

— Ի՞նչ է, մի հատը քի՞չ ես կարծում. էս ոսկի է, ոսկի, մի դատարկ հալելու համար մեկը վերցնելը նա՞զ ես անում։

— Էդ քո մի հատ ոսկին տա՛ր մածնի տուր, գլուխդ քսիր։

Բղդեն խիստ այլայլվեց վերջին վիրավորական առածի վերա. նա այս խոսքն երկրորդ անգամն էր լսում։

— Ուստա Սիմո՛ն, ինչո՞ւ ես ինձ անպատիվ խոսք ասում, էս առուտուր է. չես ուզում հալել, քո կամքն է, ինչն է շատ՝ զարգարը, շանը խփում ես՝ զարգարների վերա է հաչում, դու չէ՝ քո հորեղբոր որդին կհալի. ծանոթ, բարեկամ մարդիկ էինք, քեզ մոտ բերի, որ օգուտը դու տեսնես. մեկը քիչ ես համարում աշխատանքիդ վարձ, երկուսը վեր կալ, միայն էլի ասում եմ, հալելը սովորեցրու...

— Ա՛հ, քաշվի՛, ասում եմ, քանի տանուտերին չեմ բերել, գլխիդ կանգնեցրել, էդ տոզացրած ջիբերդ դատարկել տվել։ Ես քո երեխե՞ն եմ, որ խաբում ես. չէ՞ որ գողացած աքլորիդ պոչը, վաղի մոլլի նման, փեշիդ տակիցն երևում է. դե գնա՛, ես ոչ թագավորական փող ուտող եմ, ոչ գող եմ, ոչ գողի ընկեր եմ. մեր ճակատի քրտինքով աստված մի կտոր հալալ հաց է տվել, թող էն ոչ կտրվի իմ գլխիցը. քո ասած մարդն ես չեմ, ես հայ քրիստոնյա եմ, հայը գողություն չի կարող անել, անի էլ՝ չի կարող պարտակիլ։

— Ես էլ քեզ պես հայ եմ, ուստա Սիմոն, քեզ ասացի, որ գողացել չեմ, գտել եմ. իմ բախտս էր՝ աստված ինձ տվել է, ընչի՞ պետք է տանեմ խազինեն (գանձարանը) տամ։

— Գնա՛, եղբա՛յր, գնա՛, ում որ կեղծավոր փարիսեցությունով մինչև օրս խաբել ես, էլի նրանց գլուխը կլեկիր, քո ուզածն ես չեմ, քեզ ընկեր կարող է լինել երևանցի զարգար մաշադի Ռաջաբը, որ երկար շուկայումը խանութ ունի. էս գավառի բոլոր ճանապարհ կտրող ավազակների կողոպտածը նրա փորն է մտնում, նրա ձեռքովն է պարտակվում, նա ինքն է հալում, հինգ անգամ դիվանի ճանկն է ընկել, բայց էլի գլուխը դուրս է պրծացրել, նորա համար, որ Երևանի ղուլլուղի մարդկանց կնանոց մատներն ու վիզը նորա ձեռքովն են զարդարված։

— Իմ ուզածն էլ հենց դա է, հալալ է նորա կերածը, մարդն էդպես պետք է լինի, քեզ պես յուր հացին քացի տվողը քեզ պես էլ ձեռը դատարկ կմնա. մնաս բարով, շատ լավ տեղ սովրցրիր։

Այս խոսքերով Բղդեն ոսկիքը կապեց ու դուրս եկավ Սիմոնի մոտից։

ԻԲ

ԷՍՕՐ ՓԱՇԱ, ԷԳՈՒՑ ԲՈՇԱ

1850 թվականների առաջին կիսումն ենք. Երևանում երկիրն ինքն իրան չի նմանում, աշխարհն արյունի մեջ ծփծփում է։

Շատ ժամանակ չէ այս տարապայման և տարադեպ փոփոխությունը, պատմությունից դեռ մի քանի օր առաջ գառն ու գայլը միասին էին արածում. մարդիկն իրանց սովորական աշխատանքի հետ էին, իսկ այսօր, ո՞ր կողմը դառնում ես՝ մտքերն հուզված են և ուշադրություններդ լարված։

«Ալեքսանդրապոլ, Կարս, Օսմանցի, Բեհբուդով, զորք, ասկյար»,— ահա՛ այն խոսքերը, որ ամեն անկյունում ականջներդ չորս շինած լսում ես ու զարմանում։

Ներկարարի լեղակի կարաս չի խանգարվել[1], լուրերը շինծու և ստեղծովի չեն. կատարված դեպքերը, գյուղերում մտած կենդանությունը հաստատում են իրողությունը։

Ի՞նչ է այս։

Ամեն տեղ խոսում ու պատմում են, թե իշխան Բեհբուդյանը թուրը հանած՝ ռուսի զորքի առաջն է ընկել, Ալեքսանդրապոլու բերդումն և շրջապատումը բանակներ տվել, Ախուրյան գետի այս կողմի ափերը զինվորներով լցրած՝ պատրաստվում է այսօր կամ վաղը, էս բոպեին կամ մյուս ժամին գնալ օսմանցուի դեմ պատերազմի. պատմում են նույնպես, ճշտորեն թե չափազանցրած, որ գետի մյուս երեսին տաճկի ասկյարի (զորի) կարմիր ֆասերի շատությունից հեռվից է՛լ ուրիշ բան չի երևում, կարծես դիտմամբ դաշտ ու պար լալազար ծաղիկ կամ կարմիր պուտ ցանած լինի կամ շիլա է փռած։

Պատմածներից ոչ մինն առասպել չէ, հաստատ փաստ է, որ 50 թվականների պատերազմն անսպասելի կերպով մեծ ուժգնությամբ հանկարծ առաջ մղվեց և մեր աշխարհքի ամեն անկյունը շարժման մեջ դրեց։

Թե քաղաքական շրջաններում քանի՞ ժամանակ էր այս հարիսան եփվում ու հարվում, այդ ժողովրդի խելքից ու մտածողությունից վեր էր և Կովկասյան համայն բազմատարր և բազմալեզու ազգաբնակությունների համար միանգամայն անմատչելի, սակայն այսօր այլևս գաղտնիք չէ, ողջ աշխարհքն եռում է, մարդակեր պատերազմը կամ սկսվել է, կամ սկսվելու վերա է. Ախուրյանի երկու ափերին ռուսի և տաճկի անթիվ-անհամար բանակներն նստել և կովարար խոյերի նման մեկ իրար են դիպչում, մեկ էլ ետ ու ետ գնում առանց երես թեքելու, որպեսզի նորից հարձակումն գործեն, նորից ճակատ ճակատի շրխկացնեն։

Աշխարհքը ժողովել է Ալեքսանդրապոլ, տեղից շուտ զարթնողը Ճիրակ է վազում. աշխատանքի ու շահի տարի է, փող վաստակելու ճանապարհը հարթվել, լայնացել է, ոսկին թիերով են քերում, չօգտվիլը խելքը կորցնել կնշանակի։

Այս ամենը շատ լավ, բայց մարդիկը բոլորն ատամնավոր են. արտաքին համագումար շարժականության նման մի ներքին կենսական մեքենա ևս յուրաքանչյուր անթև և անփետուր երկոտանու յուր մեջն է գործում, սրանք ամենքն էլ ուտել են պահանջում, քաղցած մնալ չի կարելի, այսքանի կարիքը որտեղի՞ց պետք է լցվի։ Դիցուք, որ Շիրակի ամբարները հազարավոր տարիներ առաջ շատակեր Շարաներ են կշտացրել, բայց Շարաներն այն ժամանակը բյուրավոր չեն եղել. այսինքն՝ մի՞թե Շիրակը կհագեցնի. սրանց մի ճար պետք է տեսած, թե չէ քաղցած կկոտորվեն։

Երկյուղ չունինք այդ կողմից, մեր երկրումը ոչ ոք քաղցած չի մեռնիլ, շեն ու հաստատ մնա բարելից ու արգավանդաբեր աշխարհքը՝ երեվանու հողն ու ջուրը։

Ահա հասել է օրը, որ աշխարհքի մյուս ծայրից մարդիկ հավաքվեն մեր հողումը, ականատես լինին մեր երկրի արգավանդությանը և ետ գնան, զարմանքով պատմեն իրանց հայրենիքումը։

Այդպես էլ եղավ. կռիվը բորբոքվեցավ Շիրակումը և մեր երկրի բերքերն այնտեղ տեղափոխվեցին։ Բոլորը խլվեց և կրվեց դեպի պատերազմի դաշտը։

Խլողներն եղան իրանք արդյունահանողները. նրանք թանկ գնով էին վաճառում իրանց արդյունաբերությունը. եղան դրամատերերը՝ սրանք առնում էին առաջին ձեռքից և կրկնապատիկն օգտվում. եղան նույնպես և տեղական վարչությունից կարգված հարկահանները։

Վերջիններս նպաստում էին պատերազմական պաշարեղեն հայթայթողներին։ Կապալառուները ձեռնհաս չեղան ճշտությամբ գլուխ տանել իրանց հանձն առած պարտականությունը. նրանք կապալը վերցնելու ժամանակ նախապես աչքի առաջ չեն ունեցել առաջիկա պատերազմը և այսօր ընկճվել են ծանրության տակ։

Նրանց զիջողություն եղավ, կարգադրվեց, որ տեղացի ժողովրդի կողմից նրանց օգնություն տրվի։

Որպեսզի ըստ կարելույն շտապեցվի ժողովրդի կողմից լինելիք գոր-

[1] Ըստ ավանդության՝ ներկարարի ներկի կարասը խանգարվելուս՝ մինչև արտասովոր սուտ չհոչակեն, չի ուղղվիլ, ներկ չի բռնիլ։

ծակցությունը, կապալառուները բազմադիմի ներելի և աններելի միջոցների ձգտեցին. նրանք անձնական ներկայությամբ կամ իրանց ճարպիկ գործակալների ձեռքով մտերմական հարաբերություններ հաստատեցին գյուղական, համայնական և գավառական վարչական մարմինների հետ, ճնշում գործ դրին միամիտ գյուղականի վերա, ռամկի հոժարակամ գործակցությանը պարտականության ձև և նշանակություն տվին և ծակամուտ բախտախնդիրների համար որսկանության աղատ ասպարեզ բաց արին։

Ցավալի և դաժանելի էր այն ժամանակ գեղջուկի վիճակը. յուր դառն աշխատանքը՝ աստուծո տված բարիքը, որոնցով առատ էր այդ տարին, ռամկի գլխին պատիժ դարձավ, նորա արդար վաստակն յուր քթերիցն եկավ։

Բավական էր, որ անխիղճ կապալառուի ստորաքարշ գործակատարն յուր ոսկով բարձած լրտեսների ձեռքով հոտ առներ, թե այսինչ գյուղում մի որևէ գյուղականի մոտ ամբարած կա, ինչ տեսակ և լինի, միևնույն է, հացահատիկ կամ աղացած ձմեռվան ալյուրի պաշար— ահա գավառապետի կամ յուր օգնականի գրագիրը, յասաուլը, շատ անգամ նույն պաշտոնատարներից մեկն ու մեկը հանկարծահաս հարձակում էին գործում, դատարկում էին շտեմարանը, բարձում էին հենց իրա պարտատիրոջ գրաստին և քշել էին տալիս այնտեղ, ուր արյունը ջրի հետ միացած էր, ուր հազարավոր մարդիկ բերվածը ուտում, մարսում, սպառում էին և մյուս օրը կրկին գտնում էին տեղը լի։

Այդ ապօրինի հափշտակվածի փոխարեն կապալառուն, իբրև ողորմություն, շպրտում էր երկրագործի երեսին նախկին էժանության ժամանակին գինը, մի վարձատրություն, որ այսօր ծաղրալի էր անվանելը։

Շատ անգամ երկուստեք համաձայնություն էր գալիս կապալառուի և գյուղական ստորին վարչությունների մեջ, տալիք աննշան գումարը վերցվում էր մի նորաստեղծ, երևակայական հարկի վճարք և հավասար կիսում մեքենաներ լարողների մեջ։

Ձենք իմանում ինչպե՞ս և ի՞նչ ճանապարհով, բայց մի օր էլ ամենքը տեսան մեր կոլոտ շարլուն փերեզակության ցնցոտիներն իսպառ մի կողմը ձգած։

Բղդեն զարդարվել էր սև լաստակի արխալուղով, մի կապտագույն մահուդ ոսկյա ժապավենով չերքեզի շուխա շատ հարմարվում էր յուր անտաշ թիկունքին, և որ ամենից աչքի ընկնողն է՝ ռուսական մի լայն ծածկոցով ֆուրաժկա (գլխարկ) ցցվել էր նորա հաստ գլխին և, իհարկե, այնպես էր սազում, ինչպես կովի վերա արծաթապատ թամբը։

Այսօրվանից բոշի տղա սև իշուկը չէր Բղդեի համեստ ընկերակիցը.

մի սպիտակ խրխնջան վաղվուն Ղարաբաղի նժույգ էր նորա անտաշ կազմվածքը պարսկական թանկագին թամբի մեջ գեղեցկացնողը։

Այս կերպարանափոխությունը կատարվեց Սալբու տղայի մեջ՝ զարգար Սիմոնի տանից հեռանալուց մի քանի օր հետո։

Բղդեի ցանկությունը կատարել էր մաշադի Ռաջաբը՝ թուրք ոսկերիչը, և հալել էր բոլոր ոսկիները և յուր համարվեստների մեջ ձեռնտու գնով վաճառել էր հալվածքը՝ զանազան զարդեր շինելու համար, փոխարեն համարել էր Բղդեի առաջ հազարի չափ նորաձույլ փոշեթաթախ պոլիմպերիալներ։

Այս դեպքը պատերազմը հրատարակելուց մի քանի օր առաջ եղավ։

Բղդեի առաջին գործն այնուհետև էն էր, որ իսկույն նա Աշտարակումը մի ընդարձակ խանութ բաց արեց։

— Հիմա թող մրցի ինձ հետ Բստինի թոռն յուր խանութով, թող օգնի ջհուտ Աղաջանն յուր փեսին, շատ չի քաշիլ, աչքդ բացուխուփ կանես և ահա մի հաճախորդ չի մնալ Բստինի թոռի կրպակումը,— ասաց Բղդեն և կտավեղենի ու մանրուքի բեռները թափեց Աշտարակու տանուտերի բակումը։

Բղդեն իրան ընկեր ընտրեց տանուտերի որդուն, նորա սենյակներից մեկը դարձրեց կրպակ։ Այս թե՛ ձեռնտու էր Սհոյի դեմ մրցումն գործ դնելու և թե՛ տեղի հարմարության պատճառով, չափած ու ձևած էր խանութի համար։

Տանուտերի տղեն էր կառավարիչը և խանութպանը։ Էլ ո՛ր գյուղացին կհամարձակվեր Սհոյից առևտուր անել. տանուտերն ամեն բանում այնպիսի հանդուգն մարդից վրեժ կհաներ։

Արդարև. կարճ միջոցից Սհոյի խանութից ոտքը կտրվեց, և Բղդեի հռչակը ողջ գավառը բռնեց։

Այս բանին առավելապես նպաստեց Բղդեի նոր պաշտոնը։

Ամեն աչք Բղդեի վերա սկսեց քաղցրանալ. նորա շարչիությունը մոռացության տրվեցավ. ընդհանուր կապալառուի կողմից Բղդեն կարգվեց գլխավոր գործակատար և Ապարանի գավառակիցը ցորենառու։

ԻԳ

ԷՆ ԻՆՉՆ Է, ՈՐ ՊՍՏԻԿ Է ՈՒ ՃՍՏԻԿ Է

— Բարո՛վ ես էկի։

Այս խոսքերով ողջունեց առաջին անգամ գավառապետը, երբ երեկվան շարչին իրավունք խնդրեց և տրորեց նորա բնակարանի շեմքը։

Բղդեն խիստ կոկիկ էր հագնված։ Նա եկել էր կապալառուի կողմից գրավոր հանձնարարությամբ։

Մեծավորը հետազնին աչքով նայեց կապալառուի տարօրինակ գործակատարին, քթի տակին ժպտաց և բարև տվեց։

Բղդեն խորին խոնարհությամբ մինչև գետին ծռվեց և երկրպագեց։

— Ի՞նչ գուզիս,— երկրորդ հարցը տվեց գավառապետն ուրախ դեմքով և Վրաստանին հատուկ հայ արտասանությամբ։

— Քո ողջությո՛ւնը, աղա՛,— կմկմաց Բղդեն և ձեռքը դրպանը տարավ ու սկսեց խառնել։

— Ի՞նչ ես պատռում,— զարմացած հարցրեց իշխանավորը։

— Քո ողջությունը, տե՛ր,— կրկնեց խորամանկ կարբեցին և մի ոտք առաջ գալով, մի նամակ և մի ծրար հանեց դրպանից ու վախվխելով դրեց սեղանի վերա։

— Այս ի՞նչ նամակ է։

— Կապալառուիցն է։

— Իսկ այս ի՞նչ ոսկիք են,— բացեց գավառապետը կոլորած թուղթը և հարց տվեց։

— Քո մեծության համար ընծա եմ բերել։

— Քո տիրոջի՞ցդ է, իհարկե։

— Ո՛չ, տիրոջս խոնարհ ծառայիցն է։

— Քեզ համար լսել եմ, որ դու մի հասարակ չարչի էիր ու հանկարծ մեծ խանութի տեր ես դարձել, գավառի հարուստներից մեկն ես հռչակվել ու կապալառուի հավատարմությունն ես ձեռք բերել, ո՞վ տվեց քեզ այսքան կարողություն։

— Քո հրամանքդ։

— Ինչպե՞ս։

— Երբ քո բարի աչքդ քաղցր է քո ժողովրդի վերա, աշխատանքն էլ շատանում է, սեր ու եղբայրությունն էլ ավելանում է։ Ընչի՞ չէի հարբստանալ, քո ահիցն երկրի գող ու ավազակությունը կտրվել է, ճակատի քրտինքը դատողի գրպանից ոչով չի խլում, գյուղացուն ոչով չի վստահանում ասել՝ աչքիդ վերևն հոնք կա. ամեն մարդ էլ էդպեսով հացի տեր է դառնում, ամեն բերան քեզ է օրհնում, քեզ արևշատություն խնդրում. հիմի էլ հո առաջ ժամանակներումը չենք, որ մինչև իրիկուն կշարշարվեին ու ձեռք բերածն ավազակի ու շուն ու գայլի բաժին կանեին։

— Սուտ չես ասո՞ւմ, ա՛յ տղա, կեղծավորություն չե՞ս անում։

— Սուտը սատանա է։

Գավառապետը շատ լավ գիտեր, որ Բղդեի խոսքերի ոչ մի բառը ճշմարտություն չէ, բայց բարվոք համարեց կարճ կտրել և ասաց.

— Շատ ուրախ եմ, որ քեզ պես կտրիճ մարդիկն իմ ժողովրդի մեջ ավելանում են, կարողանում են հարստանալ, խեղճին օգնել, աղքատի կարիքին հասնել. դու աչքումս խելոք տղա ես երևում, ես քեզ իմ հովանավորության ներքո կունենամ. նույնն է խնդրում քո տերդ՝ կապալառուն,— նամակն աչքի տակով անցնելով՝ շարունակեց գավառապետը,— գնա՛, պաշտոնդ կատարի՛ր ու երբ պետք կունենաս, համարձակ եկ մտիր, իմ դուռը քեզ համար այսուհետև միշտ բաց է։

— Խնդրեմ, ներող լինես այս մի քանի կոպեկը ծառայիցդ վերցնես, հույս ունիմ շատ անգամ ոտքդ գամ, գամ՝ լիքը ձեռքով. դատարկ ձեռքով սևերես մարդիկը միայն տուն կխցկվեն։

— Շնորհակա՛լ եմ, ընդունում եմ,— բուռն արեց գավառապետը ոսկիքը և շոռալով կրկին ցած թողեց թղթի մեջ, երևաց, որ համարում էր։

— Ես զգում եմ, գլխիդ մատաղ, ուզում ես հասկացնել, թե անքաղաքավարություն եմ արել. շատ ուղիղ ես հրամայում, տասը ոսկին քո մեծությանը վայել չէ. բայց եթե այդքանն ընդունելություն կգտնի, ուրիշ ժամանակ կրկնապատիկը կարող է լինել։

Բղդեի խոսքն ընդհատվեց յասաուլի ներս գալով։

— Փոքր կնյազն է,— խոնարհությամբ հայտարարեց յասաուլը։

— Թող գա,— հրամայեց գավառապետը և ոսկիքը փաթաթեց, սեղանի արկղումը թաքցրեց։

Ներս մտնողը մի գեղեցկադեմ, գեղեցկակազմ, դանդաղահեր, բարձրահասակ երիտասարդ էր, պաշտոնազգեստից կարելի էր ճանաչել, որ նա գավառական վարչության ծառայողներից է. իսկ Բղդեն անունից հասկացավ նորա ով լինելը և մտքումն ասաց. «Շատ հարմար ժամանակ էր, նշանակում է գործս հաջող է»։

— Ո՞վ էր ներս եկողը։

— Փոքր կնյազն էր։

— Բայց ո՞վ է փոքր և ո՞վ է մեծ կնյազը։

— Մեծը ինքը գավառապետն էր, փոքրն յուր օգնականը։

Այս անունով էին հայտնի այս երկու պաշտոնատարները գյուղացուն. բայց թե իսկապես ի՞նչ մարդիկ էին, ի՞նչ ազգից էին, ի՞նչ ազգանուն ունեին, գավառացու գիտենալու և դատելու սահմանից վեր էր. բավական էր, որ նորեկ պաշտոնեին մի անունով կնքեց ամբոխի միջից մի տանուտեր, մի գյուղական պատվելի, և ահա ամբողջ գավառն այդ կոչումով է ճանաչում յուր մեծավորին՝ առանց ուշադրության առնելու,

թե յուր կոչած անունը պակաս-պռատ է, սուտ ու սխալ է։ Այդ ռամկի սովորությունն է. նա երբեք ճիշտ անունը չի կարողանում տալ, մանավանդ յուր համար խորթ ազգանուններին։ Նա սովոր է ամեն անուն կըրճատել, համառոտել կամ խեղաթյուրել. նույնն անում է և՛ յուր իշխանավորների վերաբերությամբ. Նիկո, Մխո, Գասո,— ասում է գեղջուկը Նիկողայոսին, Մխիթարին, Գասպարին. Փուշկով, Սվարով, Փանվովսկի, Մաճարբերի՝ հեղհեղվում են օտարազգի անունները։ Պատահում է և այնպես, որ ժողովուրդը նոր անուններ է հնարում ամեն մեկ ծառայողի համար. մեկին մեծ աղա է ասում, մյուսին՝ Խաթաբալաբեգ, երրորդին՝ ծուռ Կակո և այլն։

Այս իսկ հիման վերա, Բղդեին հյուրասիրողը կոչվում էր մեծ կընյազ, իսկ օգնականը՝ փոքր կնյազ։

— Ի դեպ, մեր երեկվան խոսակցության առարկա երկոտանի որսն յուր ոտքովն է ընկել,— ասաց մեծ կնյազը փոքրին՝ Բղդեի համար անհասկանալի լեզվով,— էլ հարկավորություն չկա սրան անհանգիստ անելու, սա յուր գործը հասկացող է երևում, սրան պինդ պետք է բռնած։

— Ահա, պարոն Բաղդասար,— խոսքը հայերենի դարձրեց գավառապետը,— պստիկ կնյազն էլ լսել է քո անունը, ուրախ է, որ քեզ տեսնում է։

— Շա՛տ շնորհակալ եմ երկուսիցդ էլ, ձեր ոտքի հող ու մոխիրն եմ։

— Ես փոքր կնյազին խնդրեցի, որ քեզ վերա քաղցր աչք ունենա, դու այսօր գնա, սորա դուռն էլ ճանաչիր։

— Իմ աչքի, իմ գլխի վերա։

— Ես սրան ասացի, որ դու կապալառուի գործակալն ես, սա խոստացավ ամեն ժամանակ քեզ օգնել։

— Ես էլ իմ ձեռքիցն եկած ծառայությունը միշտ պարտք կհամարեմ կատարելու։

— Գնա՛ ուրեմն, դուրսն սպասիր, մենք ինչ հարկավոր է՝ կխոսենք, ինչ անելու ենք՝ սորա ձեռքով կանենք։

Բղդեն երկիցս և երիցս գլուխ իջեցնելով դուրս գնաց։

Նա այդ օրը ոչ միայն մեծ ու փոքր կնյազներին ներկայացավ, այլև ամենաստորին դռնապանին էլ այցելեց ու ծանոթացավ։ Փայլուն պոլիմպերիալներից բոլորեքյան մոռնավորվեցին իրանց կոչման և արժանավորությանց համեմատ։

Յասաուլներն ու ղազախներն էին սակայն, որ ոսկու փոխարեն արծաթյա փոշեթաթախ մանեթներն ստացան և իրանց կողմից խոստացան Բղդեի հավատարիմ շները դառնալ։

Ուրախ տրամադրության գագաթնակետին հասած՝ դուրս եկավ

Բղդեն գավառական վարչությունից երեկոյան դեմ և ձի հեծած՝ շտապեց ճրագվառոցին Կարբի մտնել։

— Այսուհետև, Շողիկ, փափկացրու քարի պես կարծր սիրտդ, ոսկիքը մածնի չտվի գլուխս քսելու, տեղին գործածեցի՝ քո սրտին տիրանալու. հիմի տեսնենք՝ քո աչքումն ո՞վ ավելի գին կունենա՝ Բստնի թո՞ռը, թե՞ մեծավորների հետ ոտը ոտին դրած բաղմող սլ. Բաղդասարը. սպասիր, Շողիկ ջան, դեռ հորդ բերանի գոլն իմանանք։ Վա՜յ ջհուտ Աղաջանին, թե որ «չէ» ասի, հոգեց հոգի կկորցնեմ, մեծ կնյազին աչքով կանեմ, պստիկ կնյազին կհրամայի՝ փոշին քամուն կտա։ Չէ՛, ջհուտ Աղաջանը խելքը հացի հետ չի կերել, օրն էգուց աշխարհքը լավ կլինի, որ մեծ ու փոքր կնյազների հետ մի մոր կաթը ծծած եղբայրների պես ենք։

Բղդեն ցուցամատով երեք անգամ ճակատին խփեց ու շարունակեց.

— Հը՛, գլուխ չի, գլուխ, խելքի բուն է, որ կա. մի քանի հատ պսպղուն ոսկիքն էսօր քանիսի՞ աչքերը շլացրին, ինչպես բոլորին իմ դռան շունը շինեցին. դրա համար է ասած՝ «պստիկ է ու ճստիկ է», ի՞նչ գործ կատարեցին կոպեկի մեծությամբ ոսկիները։

— Էլ կասկած չկա, որ ջհուտ Աղաջանի հոգին բռանս մեջն է,— երեք անգամ դրականապես շարժեց նա գլուխը,— երեք օրից տեր-Հաղորդը ջհուտ Աղաջանի խնամաքարին կնստի, Աղաջանի խոսքը կառնի, իրիկունը նշանը կօրհնի, մի երկու շաբաթից՝ Շողիկս իմ նոր շինվող տանը շորոր տալով՝ խանմություն կանի, Բստինենց Սհոյի վերա թքել էլ չի արժան տեսնի։

Այս և սույնանման վերացական մտածողություններով մութը գետինն առած՝ նախկին շարչին մտավ Կարբի։

ԻԴ

ՏԵՐ-ՀԱԿՈՎԲԸ

Հին Բայազետից գաղթած Կարբու նոր բնակիչների մեջ նշանավոր տներից մեկն էր ջոջ տերտերենց տունը։

Պատմությունը մանրամասն չէ հայտնում, թե ո՞ր օրից այդպիսի հռչակ է ստացել այս տունը և ի՞նչ աչքի ընկնող հատկության համար, բայց մի ավանդություն տան սերնդների ձեռքին հաջորդաբար քահանայական գավազանը ժառանգական սեփականություն է արել։

Մեռավ քահանան, տեղը ուրիշն է հարկավոր, օտարներին դիմելու

ստիպմունք չկար. անշուշտ ջոջ տերտերենց տան մի կամ մյուս անդամն ի մանկութենե պատրաստ է այդ կոչման համար։

Մեծ ուսումն և պաշար չէր պահանջվում նոր քահանացուից, պատրաստվելու հարմարություն և տեղ էլ չկար, դպրոց կոչված հիմնարկությունը վանքերի չորս պատի մեջ էր ամփոփված։ Սուրբ գրքի խորին աստվածաբանական հմտությունը վանականներին էր բաժին թողած, իսկ քահանացուներն ուսանում էին՝ որքան անհրաժեշտ էր կնունք անելու, պսակելու, թաղելու և ժողովրդի այլ և այլ հոգևոր, ծիսական պաշտամունքը կատարելու համար։

Բավական էր տերտերին՝ որդիներից կամ արյունակից ազգականներից մեկին յոթ տարեկան հասակում սպասավոր տալ մերձակա վանքի միաբան հայր սուրբերից մեկին, թողնել այնտեղ մինչև տասն և չորս տարեկան հասակը, և մանուկը կատարելապես տիրացուցած՝ վերադառնում էր հայրենի տնակը՝ տեղական եկեղեցում սպասահարկելու մինչև փիլոն ծածկելը։

Աղմկահույզ խռովությունների առիթ էր լինում ժողովրդին այն հանգամանքը, եթե քահանայությունը վիճակվում էր աշխարհական տների զավակներից մեկն ու մեկին։

Պատահում էր, որ միաժամանակ մի հարկի տակ բնակված երկու-երեք եղբայր միմյանց «օրհնյա տեր» էին տալիս։

Այդ դեպքերում ժողովուրդն առավել ուրախ էր լինում, հաստատ համոզված լինելով, որ երբ իրանց հոգևոր հովիվների մեջ սերն ու խաղաղությունը կլինի թագավորած՝ գյուղի խաղաղությունն անվրդով կմնա և քահանայական շարունակ անբավականություններն ու կռիվները գրժտությունների տեղիք չեն տալ։

Հաստատապես ասել անհնար էր այս. սակավ չի պատահել, որ ժողովուրդը ներկա է եղել երկու հարազատ քահանա եղբայրների միմյանց հետ տարիներով խռով պատարագելուն, ծեծ ու ջարդին, մազ ու մորուք փետելուն, բայց բացառիկ դեպքերը մեծ չարիք չեն. նույն ժողովուրդը հնումը թե նորումս ամեն տեղ և ամեն օր վհատվում է՝ ականատես լինելով յուր համայնքի հոգևոր հայրերի անգրելի անկարգություններին։

Հայր Աբրահամու օջախ կոչվելու տներ այսօր հազվագյուտ երևույթ են դարձել, իսկ 25, 30 տարի առաջ և ավելի խորը՝ դա մի զարմանալի բան չէր։ Հայր Աբրահամու օջախ էր կոչվում այն օրհնյալ տունը, որի ծերունի հայր-նահապետը, բոլորած յուր շուրջը բազմաթիվ եղբայրների, հորեղբոր զավակների ու թոռների, նրանց որդկերանց ու թոռան թոռներին՝ քաջափորձ զորականի անձնապաստան հմտություններով զեկա-

վարում էր շարժուն գործարանը, ընդհանուր հրամաններ էր արձակում և բոլոր անդամներից իրանց գործառնությանց հաշիվն ու համարն էր պահանջում։ Իհարկե, կկաղար գործը, անիվը կոտրված սայլի նման կկործանվեր, եթե հայր-նահապետին գործակից չլիներ տան ներքին կառավարության մեջ մայր-տանտիկինը— ընդհանուրի հարգանքը վայելող ու հրամայող մեծ նանը, որի ձեռքին էր տանտիկնության շերեփը, որի քաղցր խոսքը պատվեր էր տան իգական սեռի բոլոր անդամների համար։

Տասնյակ տարիներ, շատ անգամ և հարյուրամյակներ էին գլորվում հավիտենականության անդունդը, իսկ հանդարտական մեքենան անքակ կերպով միմյանց հետ ադխառնված անդամներով գործում ու տևում էր. որդին հորն էր փոխանակում, հարսն՝ սկեսորը. մեկը գլուխը վայր էր գնում, մյուսն արդեն յուր ծանրատար, բայց քաղցր պաշտոնի մեջն էր։

Այդպիսով սերն ու միաբանությունը նշանարանն էր լինում այն քաղաքային կամ գյուղական հասարակության, որի մեջ հայր Աբրահամու օջախներ մի քանիսն էին գտնվում։

Իսկ եթե աշխարհական տների բարոյական արդյունքն այսչափ մեծ էր համայնքի համար, ինքնըստինքյան հասկանալի է ժողովրդի ուրախությունն ու երջանկությունը, բարությունն ու անդորրությունը, եթե ժողովրդի տված առատ տուրքը մի գոնով էր ներս մտնում, միևնույն շտեմարանումն էր ամբարվում։

Ջոջ տերտերենց տունը թե՛ Բայազետումն և թե՛ Կարբի հայր Աբրահամու օջախ անունն է կրել. և իրավամբ. ոչ մի ծերունի չէր հիշում յուր կենաց շրջանում ջոջ տերտերենց տան մեջ բաժանություն կամ անհամաձայնություն. շարունակ երկու-երեք քահանա իրար հետ ժամ են գնացել և նրանց միջի ծերունին ավագության ու հրամանատարության արտոնությունն է վայելել։

Ջոջ տերտերենցից երկու հարազատ պատկառելի քահանա եղբայրներ, առավոտյան և երեկոյան ժամերգությունը կատարելով, գաղթականներին առաջնորդեցին Բայազետից մինչև Կարբի և այստեղ էլ մնացին։

Նոքա էին քաղցրախոս տեր-Սիմոնը և սրտաշահ տեր-Հակոբը։

Միայն իրանց հոտը չէր, որ սիրում էր յուր քաջածանոթ, առաքինի հայրերին. Կարբի գաղթելուց շատ չանցած՝ եղբայր տերտերները գրավեցին շրջակա գյուղերի հայ ու թուրք ազգաբնակությունների սերն ու համակրանքը։ Այդ նրանց վարք ու բարքի, նրանց աղքատասիրության ու առատասրտության արդյունքն էր. բերանի պատառը նրանք տնանկի ու կարոտի հետ բաժանում էին։

Սակայն Կարբուն չվիճակվեցավ մի կողմից Բայազետի երջանկությունը. շատ չտևեց, ջոջ տերտերենց տունն երկու ճյուղքի բաժանվեցավ։

Խռովությունն ու երկպառակությունը չէին, որ երկու եղբայրներին մի հարկի տակից բաժանեցին. մեծ խոլերի անողոքությունն էր այդ անողը։

Աշտարակու տերտերները զոհ գնացին խոլերի ճիրաններին, ահագին գյուղը մնաց առանց հոգևոր հովվի, իսկ հոգևոր ծայրագույն վարչությունը զիջավ աշտարակցոնց թախանձանքը՝ հրամայեց կարբեցի տեր-Սիմոնին Կարբին թողնել յուր եղբայր տեր-Հակովբին ու փութալ լցուցանել աշտարակցոնց հոգևոր պիտույքը։

Տեր-Սիմոնը վերաբնակվեց Աշտարակ, այնտեղ հովվեց, այնտեղ ապրեց և այնտեղ մեռավ, իսկ տեր-Հակովբը մինչև վերջին շունչը մնաց Կարբումը, սիրեց ու սիրվեց յուր ժողովրդից և մեռնելուս՝ յուր տեղը պարգևեց սիրելի հոտին յուր հարազատ Հայրապետին՝ տեր-Հայրապետ կոչումով և ինքը խաղաղ հոգվով աչքերն հավիտյան փակեց։

Ահա այս տեր-Հակովբի մոտ մի երեկո ներս մտավ խոջա՞ ասենք, աղա՞, թե՞ պարոն Բաղդասար՝ մեր նախածանոթ կոլոտ շարշի Բղդեն։

Վերոհիշյալ կոչումներից դեռ ոչ մեկը չէր սեփականացել Բղդեին. բայց գուշակելի էր, որ ոչ հեռու ապագայում մեկն ու մեկին տիրանալու էր. այժմ այսքանը հայտնի էր, որ Բղդե անունը իբրև թշնամանք նորա բացակայության ժամանակ շատ սակավները վստահանում էին ասել, երեսին ոչ ոք իրան թույլ չէր տալիս այդ աններելի սխալն անելու, այդ հիմարությունը քարե կարկուտ կդառնար վերջը և կթափվեր ասողի գլխին։

Տեր-Հակովբին խորթ թվեցավ Բղդեի այցելությունը։

— Աստված օրհնեսցե, որդի,— աջ տալով պատասխանեց տերտերը Բղդեի «օրհնյա տերին»,— բայց այս ո՞ր քամին է քեզ պտտել մեր դռնովը ներս խցկել։

— Մի՞թե, տեր հայր, ամոթ է ժողովրդին յուր հոգևոր հոր ոտքը գնալը,— ժպտալով ասաց Բղդեն։

— Ընդհակառակն, պարտականություն է, որդի, բայց դե՛, շարշի ժամանակդ ո՛չ միջոց ուներիր և ո՛չ կարիք, այսօր էլ որ հարուստ ես, Աշտարակումը ծովի նման լիքը կրպակ ունիս, կապալառու ես, երկուերեք ձիավորով ես ման գալիս, մեծ տներ ես շինել տալիս, աղաների ու միրզաների հետ ես նստում, վեր կենում, ինձ պես մի գյուղական խեղճ քահանային ի՞նչ մեթոդ կբերես, մինչև մի փոբացավունք չունենաս։

— Մի՞թե դու ուրախ չես, աջիդ մատաղ, քո ժողովրդի բախտավորության վերա, որ իմ հաջողությունն երեսովս ես տալիս։

— Զափազանց ուրախ եմ, եթե մի քանի բաներ, որ պատմում են, թշնամու խոսքեր լինեին։

Տերտերը չքաշվեց թվել Բղդեի անիրավությունները, որոնց մեջ համբավ էր հանել նա վերջերս, և որոնց մասին հիշատակությունը թող մնա հետո։

— Դու ինքդ ասացիր, տերտեր ջան, որ թշնամու խոսքեր են, իմ առաջադիմությունը շատերի աչքը ծակում է, դու դեռ իմ խնդիրս լսիր ու գլուխ բեր, հետո կտեսնես, թե քո ծուխդ ինչ անուն կհանի և ինչ ծառայություն կանի քեզ։

— Ասա, որ լսեմ։

— Խնդիրս շատ հասարակ բան է, քո մտածելիքն ես եմ քեզ հիշեցնում, հոգևոր զավակներիդ մեկը չափահաս է, Կարբումը ծնված նրան հասակակից ոչ ոք չկա, նրանից փոքրերը բոլորն երեխի ու կնոջ տեր են դառել, իսկ նա դեռ միայնակ չոր կանգառի փշի պես քամու ձեռքից տարուբերվում է, ամենքը նրան մտքից հանել են՝ դու էլ նրանց հետ։

— Ա՜... ա՜... ա՜... հասկացա, հասկացա, շատ լավ, շատ բարի, օրն էգուց ցանկությունդ կատարեմ, ուզում ես նոր շինվող տան համար մի նոր հարսը բերել, այնպես չէ՞, թափանդ յուղոտվել է, մեր տղա՜։

— Ամոթ հո չի՜, որ կարմրացնում ես ինձ, տերտե՜ր։

— Ասենք՝ դու կարմրող պտուղ չես, բայց վնաս չունի, եթե փոքրինչ երեսդ տաքանա, իսկ քո առաջարկությունդ, ճիշտ որ հարկավոր է և ժամանակահարմար։

— Ուրեմն մինչև ե՞րբ պետք է գործը ձգձգես, աշունքն երկու քայլ է մեզանից հեռու, հարսանիքների հոտը փչում է, մի քիչ ցուրտը որ ընկավ, ամեն տեղ զուռնի ձայնը կբարձրանա, մենք ումնի՞ց ենք պակաս։

— Ո՞ւմ աղջիկն ես ուզում, ասա տեսնեմ։

— Ում դու ինքդ կամ կտեսնես, ում որ եթե մինչև այսօր արժանի չէի, հիմի քո օրհնությունովը հավասար եմ կամ մի փոքր էլ անց եմ. այնպես չի՞, տերտեր, որ ես մի ժամանակվա Բղդեն չեմ հիմա, ուրիշ եթե ոչինչ չլինի, հագուստս հո բարձր է ձայն տալիս։

Բղդեն մատով մի-մի ցույց տվեց յուր շորերը։

— Առակն անխոտելի է, սրտիդ չանես, Բաղդասար ջան, ասած է. էշն էլ էն էշն է, փալանն է փոխել. փողն ու հարստությունը, շորն ու զարդարանքը չեն մարդիս մարդի կարգ գցողը. պատիվը մարդիս յուր մեջ պետք է լինի, բայց, իհարկե, ես չեմ ուզում սիրտդ կոտրել, ինձ

հայտնի է, որ դու խելոք տղա ես, մեր Աղաջանի ձեռքովը ոչինչ տեղից հացի տեր գարձար. այսօր էլ եթե չգնաս այդ ծուռը և մոլոր ճանապարհովը՝ մարդ դառնաս, ինչ որ մարդին պետք է ու վայել։

— Դե՛, հրամանք արա՛, օրհնած բերանովդ, տերտեր ջան, ո՞ւմ աղջիկն ես ինձ կամ տեսնում։

Տեր-Հակոբը քաջ ճանաչում էր Կարբու բոլոր հասած աղջիկներին, գիտեր ամենքի ծնողների դիրքն ու աստիճանը։ Նա սկսեց ծայրն ի ծայր, փողոց՝ փողոց անվանել Բղդեի համար յուր նախկին դասակարգի տան աղջիկներին։

— Ի՞նչ ես անում, տերտեր, այդքան էլ մարդի հոգի հետ չեն հավասարեցնիլ. քեզ ի՞նչ, թե երեկ աղքատ էի, քեզ ի՞նչ, թե ես երեկ բոշա էի. էսօր չէ՞ որ հարուստ եմ, էսօր փաշա եմ, դու ինձ էսօրվա գլուղով չափիր, քո հաշված աղջիկները մի քանի ամիս առաջ կարող էին ինձ համար նշանածներ լինել։

— Հապա էլ ո՞ւմ անունը տամ, որ սրտները չվիրավորեմ, Բաղդասար, հո չե՞մ կարող Ալմաստ խաթունենց, Նան Հարթենենց խոսքը մեջ բերել։

Տերտերն սկսեց այնուհետև առաջիններից մի աստիճան բարձրներին հիշել։

Բղդեն ևս առավել քիթը շիներեց դաբի կոմբալ կամ հալի փուչիկ. տերտերի խոսքերը նրան վիրավորական էին։

— Ինձ ի՞նչ, եթե ուզում ես մեր իշխաններից մեկն ու մեկի աղջիկը՝ իրավունք ունիս, դու անունը տուր, ես կերթամ կխոսեմ. կտան՝ իրենք գիտեն, չեն տալ՝ իրանց կամքն է, շատ կարելի է, տալիս են, աշխարհքը հիմի փլացել է, հիմի մարդը գլխով ու սրտով չի գնահատվում, այլ գրպանով ու քսակով, իսկ հարստությունով, ինչպես լավում է, քեզ արժան աղջիկ չի ճարվիլ Կարբու մեջ, պետք է գնաս Աշտարակիցն առնես։

— Չէ՞, տերտեր ջան, դուր ես ինձ փողոցն փողոց գցում, ես իմ Հայրենակիցներից հեռացողը չեմ, իմ կինն անպատճառ Բայազետցու աղջիկ պետք է լինի, և հենց դորա համար եմ քո ոտքն եկել։ Շատ ես հեռանում, տերտեր ջան,— ընդհատեց Բղդեն, երբ տեր-Հակոբը կամենում էր տերողորմի հատիկների վերա թվել Կարբու առաջնակարգ ընտանիքների աղջիկներին,— իմ կորուստը դրանց ոչ մեկի մեջը չկա։

— Մեծացի՛ ես, ա՛յ որդի, մեկ էլ իմ մեծ եղբայր տեր-Սիմոնը, ինքս ցնզ հայտնի է, որ աղջիկ չունիմ, եղբորս աղջիկն էլ Աշտարակ նշանած է։

— Ընչի՞, տերտեր, ջհուտ Աղաջանի հետն ո՞վ ունիս Կարբու մեջ։ Նա ու ես հավասար կգանք, երկուսս էլ նոր հարստացած ենք։

— Վա՛յ, դու յոթը սարի էն երեսի՞ցն ես, Բաղդասար,— զարմացավ տեր-Հակոբը,— չգիտե՞ս, որ երկու տարի է Աղաջանի աղջիկը նշանած է և այս ամեռ պետք է պսակենք։

— Կարելի է, ի պատիվ իմ, Աղաջանը նշանը կվերադարձնի։

— Ա՛յ տղա, Բաղդասա՛ր, աստվածանից վախեցի՛ր, մարդից ամաչի՛ր, ո՛չ դու Աղաջանի հավասար մարդ ես, և ո՛չ նա քեզ մարդատեղ կդնի։

— Բայց ես Բաղդասարն եմ, տերտեր, ես հարուստ եմ, պարկերով ոսկի կթափեմ Աղաջանի առաջին։

— Եթե ես Աղաջանի տեղը լինեի, քեզ կասեի՝ ոսկիդ մածնի տուր, գլուխդ քսիր։

— Քանի՛ մի քանի ես այդ անիծված խոսքերը լսեմ, էսքանը մածնի տալ կլինի՞,— բարկացած ձեռքը դրպանը տարավ Բղդեն և հանելով մի քսակ լի պոլիմպերիալ, շաղ տվեց քահանայի գորգի վերա։

— Էլ ընչի՞ ես նեղսրտում, որդի, երբ որ քեզ ամենքը վատ են ասում. քեզ շատ լավ հայտնի է, որ Աղաջանի աղջիկն անուն արած է, նշանած է, ուրեմն դու ցանկանում ես Բստինենց Կարապետի հին օջախի հիմքը շրջել, լսողը քեզ վրա էլ կթքի, իմ վրա էլ, թե որ ես քեզ լսեմ ու գնամ խնամախոս. չգիտե՞ս, որ ես աստծու քահանա եմ և անիրավ մարդկանց պետք է ուղիղ ճանապարհի բերեմ։

— Ի՞նչ անիրավություն եմ արել, տերտե՛ր։

— Ուրիշի նշանածն ուզում ես հափշտակել, այդ անիրավություն չի՞։

— Որ սիրում եմ, ի՞նչ անեմ, աչքդ մատաղ։

— Էլ աղջիկ չկա՞ր, որ նշանած աղջկա վերա մատը դրիր։

— Սրան հարցրու, կարդիդ մեռնիմ,— սիրտը ցույց տվեց Բղդեն,— սորա վերա նեղացիր, կպել է, չի պոկվում. ես ինքս էլ շատ ուրախ չեմ, Աղաջանն աչքիս գրողն է, ուզում եմ մի բուռը մոխրի պես քամուն տամ, բայց բանն այն տեղն է հասել, որ ինքս եմ գլուխս դնում թշնամուս ոտքի տակը, որ ինձ տրորտակ տա, օրական հարյուրավոր թքանքներ թափի երեսիս, միայն թե վերջ ի վերջո ինձ խղճա ու փափագիս հասցնի։

— Իսկ եթե՞ Աղաջանը չկամենա Բստինենց Սահակին տված խոսքը ետ առնել։

— Օ՜... օ՜... օ՜... էն ժամանակը շները կապեցեք, իմ շղթան կքստրեցեք, կատաղի գազանի նման ծվիկ-ծվիկ, պատառ-պատառ կանեմ

Բստինենց տղին, չհուտ Աղաջանին էլ, ողջ կարողությունս արենխում, մարդասպան գողերին կեր կանեմ, աշխարհքը սարսափի մեջ դնող ավազակ Եղիկին կեղբայրանամ ու Աղաջանի ցեղը բնաջինջ կանեմ։

Տերտերը զարհուրեց Բղդեի աչքերից դուրս ցայտած կայծերի փայլատակումից. բերանը փրփրակալել էր, ատամների կրճտոցի հետ մատներն ինքնաբերաբար բացվում և խփվում էին, ճիշտ քաղցած գայլի կամ գիշատիչ անգղի ճիրանների նման, երբ հարձակվելով թույլ նապաստակի կամ անշունչ լեշի վերա, ագահաբար մի կողմից սուր-սուր մագիլներն է ի գործ դնում, մյուս կողմից ժանիքով կամ կեռ կտուցով է քաշկոտում, մմսատում։

— Հանգստացիր, սիրելի Բաղդասար, բավական է, արածս կատակ էր, այս շաբաթ հարմար միջոց կընտրեմ, Աղաջանին կհամոզեմ, քո իղձը կատարել կտամ։ Վնաս չունի, Բստինենց Կարապետն էլ ինձ կլսի, Սահակի համար ուրիշ աղջիկ կուզենք, մինը չէ՝ մյուսը լինի, միայն թե աշխատելու է, որ Աղաջանը չզրկի Սհոյին խանութի ընկերությունից, խեղճն երկու տարի է հետը մաշվում է։

— Ե՞ս, ես ի՞նքս Սհոյին կբախտավորացնեմ, գլուխը ոսկու մեջ կթաղեմ, եթե նա Աղաջանի աղջկանից ձեռք քաշի։

— Որ այդպես է, գործը հաջողացնելը թող պարտքս լինի։

— Որ այդպես է, այսքանը թող առհավատչյա լինի քո աջահամբուրի համար, բուն աջահամբույրն էլ հետո։

— Ո՛չ, սիրելի Բաղդասար, ժողովիր փողերդ, քսակդ դիր, ջոջ տերտերենց յոթն անգամ յոթը պորտը քահանա է եղել։ Աստուծո կարող զորությունով մինչև Քրիստոսի աշխարհքը գալը մեր տան տերտերը շպիտի պակասի, բայց մինչև էսօր լսված չի, հույս ունիմ, որ այսուհետև էլ չի լսվիլ, թե մեր տունն էդպիսի կեղտոտ ճանապարհով է հաց աշխատել. աստված հաստատ պահի ջերմեռանդ ժողովուրդը, լիաբուռն շահել է յուր քահանային՝ յուր հարամը հալալողին, ու էլի կշահի, մեր աչքը դռանն է պահել, ապրել ենք՝ կրկին կապրենք, աշխարհքիս գանձն ու հարստությունը աշխարհքումս կմնա։ Վերցրու փողերդ. երբ բարովխերով հալավդ կօրհնենք, որքան սիրտդ կբխի, կտաս, ես էլ, առանց վրեն աչք թեքելու, ծոցս կդնեմ, նորափեսին ու նորահարսին բախտավորություն կցանկանամ։

— Ուրե՞մն։

— Ուրեմն դու գնա գիշերս հանգիստ քնիր, վաղը գործդ շարունակիր, աստուծո ճանապարհը մի՛ մոռանար, աղքատի ու տնանկի աշխատանքը մի՛ խլիր, մի կտոր հաց կեր և Աղաջանին օրհնիր, որ քեզ մարդի մեջ մտցրեց, հույսդ աստուծո նախախնամության վերա դիր, որ քեզ մի

կտոր ցամաք հացի տեր է արել. եթե աստված կամեցել է, ցանկությունդ ինքն իրան կկատարվի, իսկ եթե ոչ, հազար էլ տանջվիս ու մաշվիս, ինչ գրված է, այն կատարվելու է։

— Ամա՜ն, տերտեր ջան, էդ վերջին խոսքերը բերանիցդ մի հանիլ,— տեր-Հակոբի աջը կաթոգին համբուրելով, բարի գիշեր ասաց Բղդեն։

— Սպասի՛ր,— սպառնաց տերտերը նորա քամակից հրամայական ձևով,— նզովյալ լինես, եթե այս երեկոյան խոստովանությունը բերանիցդ հանես, կամ թե աշխատես ճակատիդ գրվածին դեմ կենալ, կամ բացի ինձանից՝ ուրիշների գլուխը ցավացնես, միջնորդ ձգես. այն ժամանակը թող Կայենի և Հուդայի անեծքը թափվի գլխիդ, փափագիդ՝ ո՛չ հասնիս, երեք անգամ մեծ շարշարանքով աշխարհ մտնես (ամուսնանալ)՝ երեքիցն էլ անպետք փշի պես անպտուղ մնաս. վերջումը մի ժառանգ լույս ընկնի քեզ համար, որ աչքերդ բաց՝ վատնի, շռայլի կարողությունդ, և դու տեսնիս ու էրվիս, էրվիս ու տնքաս, տնքաս ու ուժ չունենաս առաջն առնելու, կոպեկի կարոտ՝ շունչդ փչես, հոգիդ սադայելի ճանկը ձգես։

Բղդեն դողմանի եկավ, ոտքերը թուլացան, ծնկները ծալվեցին, բայց շատ չքաշեց, չգիտեմ ինչ ներքին դրդմամբ՝ ուժի եկավ, լուրջ դեմք առավ և ասաց.

— Շատ բարի, հոժար եմ, միայն թե դու աշխատես գործը գլուխ բերել, հնազանդիկ անեծքի կդիմանամ։

Նա էլ չկանգնեց, դուռը շտապով քահանայի երեսին ծածկեց ու հեռացավ։

Լե

ԳՈՂԸ ԳՈՂԻՑ ԳՈՂԱՑԱՎ, ԱՍՏՎԱԾ ՎԵՐՆԻՑ ՁԱՐՄԱՑԱՎ

Ժողովրդի նեղությունները հետզհետե ավելանում են. երկրագործ, այգեգործ, բոլորեքյան միատեսակ ճնշված են. կապալառու Բաղդասար աղայի քամու նման թռչող նժույգի սմբակներից՝ կրակի կայծերը փայլակից ավելի են պեծավորվում. անբան անասունն արդեն ճանաչում է գավառական տանուտերների դուռը, նա բնազդմամբ հասկանում է յուր գնալու գյուղը. գավառական վարչության գոմումն յուր տեղը որոշած ունի և մի տեսակ ներքին հաճությամբ և հպարտությամբ սիրում է կեր ուտել ռուսական ձևի մարքում։

Բղդեն այժմ միայն չի ման գալիս, չորս զինավառված կտրիճ թուրք թիկնապահ ձիավորներ նորա անբաժան ընկերներն են, իշխանության կողմից էլ մի յասաուլ շարունակ նրան առաջնորդում է։

Բղդեն հաճախակի է այցելում գավառական վարչության բնակատեղին. շատերի մոտ է ելումուտ անում, սիրով ընդունված է մեծ և փոքր կնյազների մոտ։

Մի այդպիսի այցելություն կատարվեց տեր-Հակոբի հետ տեսակցությունից մի քանի օր հետո։

Նոր էր վերադարձել նա Ապարանից Կարբի և պատրաստվում էր գնալ տեր-Հակոբից լուր իմանալու, որ մի ձիավոր իջավ նորա դռանը և մի փոքրիկ նամակ տվեց նրան։ Նամակը գրած էր Բղդեի ստորադրյալների մեկից. նա հայտնում էր, թե գյուղերից շատերը ոտքի են կանգնել և ցորեն չեն տալիս. եթե առաջը չառնվի, գրում էր գործակատարը, բոլորը կապստամբին։

Բղդեն ամեն բան մոռացավ, ձի հեծավ և երկու ժամից իջավ գավառական վարչության մոտ եղած գինետան առաջին։

Նա կանգնեց գինետան դռան շեմքին, գլուխը ներս խցկեց և մանրախույզ հետաքրքրությամբ խորքը դիտելուց հետո՝ ապահովեցավ, որ օտար ոչ ոք չկար ներսը, ուստի և ձայն տվեց.

— Սաքո...

— Հը, Բղդե, զո՞ւ ես, ներս մտիր, ընչո՞ւ ես հեռու կանգնել, աչքերը չալ (խաժակն) կովի նման մտիկ տալիս,— վստահ պատասխանեց գինու տակի բերանն ամրացնելով Սաքո կոչվածն և շարունակեց[1].

— Ծո՛, ա՛յ մեռած, էլի եկե՞լ ես, չէ՞ որ ես քեզ ասել եմ խաթեդ (փորձանք) մեզանից հեռու պահիր. գու մեր գլուխը մի փորձանքի մեջ բանդ կանես։

— Ի՞նչ փուչն ես, Սաքո՛, «չեմ ուզում՝ գրպանս դիր», որպես թե ուրախ չես իմ գալուն, իբր թե չգիտես, որ առանց քեզ էս երկրումը ծառի տերևն էլ իրավունք չունի շարժվելու։

— Հանաքը թող, ասա տեսնենք՝ ընչի՞ ես եկել, չէ՞ որ մի քանի օր առաջ գործդ կարգի դրինք, գնացիր։

— Ինչպես չգայի, ամեն տեղ ոտս քարին է առնում, Ապարանի ժողովուրդն էշ է, էնտեղ ատամս կտրում է, բայց դաշտի մեծ գյուղերից մի քանիսը, համարյա, երես են թեքել, ձեռքները պատն են քսում, խոսք չեն ուզում հասկանալ, տուն չեն կամենում թողնել։

— Ի՞նչ են ասում։

[1] Միկիտան Սաքոյի համար տես «Հայի խնդիրս ուշադրությունս։ Ս. Հ.։

— Ասում են մեր գավառի մեծ ու գլխավոր գյուղն Աշտարակն է, Աշտարակցիք են գինու-արաղի կեսը ջուր անում, Ալեքսանդրապոլում ոսկի ջինում, օգուտ տեսնում, Աշտարակը մի բուռը ցորեն չի տալիս, մենք ընչի՞ պետք է տանք։

— Եթե Աշտարակը ցորեն չի ցանում, որտեղի՞ց պետք է տա։

— Գնա ու հասկացրու. կոպիտ գյուղացի են, ո՞ր մեկի գլխումը խելք նստացնես։

— Ինձ ի՞նչ ես տալիս, որ օրն էգուց աչքս ձախ դարձնեմ, ամենքը քո ղուլը դառնան։

— Աշտարակն է՞լ։

— Աշտարակի անունը մի՛ տալ, նա թթու խնձոր է, մի՛ աշխատեք կծել, ո՛չ դու, ո՛չ քո կնյազները, բոլորիդ ատամներն էլ կառնի, էլ բան չեք կարող ծամել, քաղցած կմնաք։

— Հողն ու ջուրը լավ գիտի, Սաքո ջան, ինչպե՞ս ես պաշտպանում քո հայրենիքդ։

— Դու քո Կարբին չես պաշտպանի՞լ։

— Պարտքս է։

— Ուրեմն էլ չհամարձակվիս էդ ծուռն աչքդ Աշտարակի վերա թեքել, թե չէ էս գավառից մի բուռը հավի կուտ չես կարող դուս տանել։

— Մյուս գյուղերի համա՞ր ինչ ես ասում։

— Տեսնենք՝ որքան ես ցնծում։

— Այ եղբայր, տզրուկ ես դառել, ինձ արենքամ արել, տվածս հերիք չի՞։

— Լռի՛ր, լռի՛ր, թե չէ հինգ օր չի քաշիլ, պոչդ կխուզվի, դիմացինդ Միկիտան Սաքոն է, Սարչարաբադի մոլորվների միկիտանը, քո ցերեկվա ման եկած տեղերն ես գիշերն եմ ման եկել, ինձ լավ հայտնի է, թե ո՞ր գյուղումն ինչքան ավազ է բանում, թե ամեն մի խալվար ցորենին որքան ես վճարում, ինչքան հաշիվ տալիս։

— Սաքո ջան, չէ՞ որ էս բանի մեջ իմ վարժարանը դու ինքդ ես, հիմի էլ կանգնել ես, հակառակն ես ասո՞ւմ։

— Հանաք եմ անում, քանի ես ողջ եմ, դու քո էշը քշիր, միայն թե տեսնենք՝ քանի պոլիմպերիալ ես համարում առաջիս, որ բացի Աշտարակից՝ մնացած գյուղերը կամքի դան, ցորեն տան։

— Ինչքա՞ն ես կամենում։

— Շատ չեմ ուզիլ, ամեն մի ջվալին մի կոտ[1] ավազ էլ ինձ համար ավելացրու։

[1] Մի-կոտը 12 գրվանքա է պարունակում։

— Իմ աչքի վրա, ահա այս էլ թող բեյը լինի։

Բաղդեն մի բուռը ոսկի ցրիվ տվեց հանրահռչակ միկիտան Սաքոյի առջևը։

— Ուրեմն ձիդ նստիր գնա. երեք օր չքաշած՝ ամեն գյուղից գործակատարներդ քեզ աչքալուսեք կգան։

— Մնաս բարով,— ասաց Բաղդեն և ձիու քամակն անցած՝ իջավ գյուղերից մեկում՝ տանուտերի տանը։

Տանտիրոջ և հյուրի մեջ մի տեսակ լուռ մնջկատակություններ տեղի ունեցան։

Ներկա եղող օտարները բարվոք համարեցին արգելք չինել նրանց պարզ խոսելուն։

— Ի՞նչ արիր, տանուտե՛ր,— փակվելով տանուտերի հետ՝ հարցնում է Բաղդեն։

— Ի՞նչ պետք է անեի, պարոն Բաղդասա՛ր, հազարիցը մի անգամ գործդ ինձ է ընկել, այն է՞լ չկատարեմ։

— Կամ եկա՞ն (համաձայնիլ)։

— Վիզներն էլ յոթը գազ չերկարե՞ց. իրանց որ մնար, մի հատիկ ցորեն չէին ուզում տալ, բայց էնպիսի խաղ խաղացի, որ իրանք աղաչեցին ու տվին։

— Ի՞նչ արիր։

— Ի՞նչ պետք է անեի, հայտնեցի, որ հրաման է դուրս եկել, թե ինչ գյուղում ցորեն չեն տալիս, ամեն մի տանը մի կով թողան, մնացած չորքոտանին քաշեն, տանեն Ալեքսանդրապոլ, մորթուտեն, զորքին կշտացնեն։ Այս որ լսեցին, փորները կատու ընկավ, ամեն մեկի տանը տասը քսան կթան ու լծկան կան, հիմար հո չէին, որ մի քանի խալվար ցորենի համար իրանց ապրանքից ձեռք քաշեին։

— Հիմի մեր ամբարումը ցորեն կա՞։

— Երեկ երեսուն խալվար բրնձի նման աղունիլ տվի ու քո ամբարդար (շտեմարանապետ) Պապիկին պահ տվի. էս երկու օր է, Պապիկը տուն էլ չի գալիս հաց ուտելու, բեռները կապում է, գրում է ու չգիտեմ ի՞նչ է անում։

— Ե՞րբ պետք է, ուրեմն, ճանապարհ դնենք։

— Երբ որ Պապիկը կասի։

— Շնորհակալ եմ, տանուտեր, առ, ահա, էս քեզ մի չուխագին։

— Աստված կյանք տա, աղա Բաղդասար։

— Հիմի գյուղին որքա՞ն փող եմ պարտ։

— Քո կամքն է, պարոն Բաղդասար։

— Ընչո՞ւ, քեզ հայտնի չի՞, խազնիցը խալվարին տասն ու հինգ մանեթ է նշանակված, էն էլ դեռ փոդրաթչին մի կոպեկ չի ստացել, ինչքան էլ տալիս է, յուր քսակիցն է համարում։

— Շատ ուղիղ է քո խոսքը, Բաղդասար ջան, բայց ես ու իմ հոգին, ժողովուրդը մեղք է, քանդվեց ու քարատակվեց, աղիքդ փորումդ կտորկտոր կլիներ, եթե բարի աչքովդ տեսնեիր, թե ոնց մեր ու մանուկ գլխներին վայ տալով աչքերից կրակ էին դուրս թափում, երբ գզիրը կոտն առած՝ Պապիկի հետ հորերիցը դուրս էր բերում ցորենը և գլուխ-գլուխ շափելով ջվալներն էր լցնում. ես-երեսս ետ էի դարձնում, արտասուքս չէի կարողանում պահել. գլուխդ վկա, խոջա Բաղդասար, այնպիսի չքավոր տանից ենք ցորեն հանել, որ մյուս օրվա համար տաշտումն ուտելու հաց չեն ունեցել։ Շատ որ մղկտացին, ես խեղճ եկա ու իմ կողմից խոստացա, որ քո ոտքերն ընկնեմ, խալվարին 25 մանեթ խնդրեմ։ Հույսս դու ես, աղա Բաղդասար, ինձ կախ տուր, կտոր-կտոր արա ու դատարկ ձեռքով ժողովրդի երեսը մի՛ ղրկիլ։

— Ախար, էդպես անկարելի խոստումն ընչո՞ւ ես անում, տանուտեր, ես ինքս հո չեմ փոդրաթչին, ես էլ քեզ պես մի հրամանակատար մարդ եմ, շատ էլ կցանկանայի քո խոսքը գետին չգցել, 25 մանեթ տալ, կարող ե՞մ, իրավունք ունի՞մ, իմ ձեռքիցը կգա՞։

— Ինչ կանես արա, ինձ հասարակության լեղվի տակիցն աղատիր։

— Վնաս չունի, քո ազիզ խաթեր՝ քսան մանեթով հաշիվ կանեմ, չեմ թողալ քո երեսիդ մի սառը խոսք գա ու ինքս երեսս գոմշի կաշի կշինեմ, փոդրաթչու յախիցը (օձիքը) կախ կընկնեմ, խալվարին հինգ մանեթ ավելի կպոկեմ, եթե չտա էլ՝ քո ցավը տանի, իմ քսակիցը կտամ։

— Է՛յ, աղա Բաղդասա՛ր, ո՛ւմ հայտնի է, ո՛ւմ չէ, ինձնից հո թաքուն չի, հաստատ մնա մեր գետը, ավազին հաշիվ ու համար չկա, ինչքան քո սիրտը կուզի ավելացրու։

— Ա՛յ եղբայր, տանուտե՛ր, մեկն ասում ես, մյուսը՝ թողնում, չգիտե՞ս, թե ամեն մի հատիկի վերա քանի աչք կա, էդ մի փոքր խառնուրդն էլ որ չլինի, խեղճ փոդրաթչին ո՞ր մեկի ծակ աչքը պետք է կըշտացնի. դու հավատո՞ւմ ես, որ ձեռքիս մեկը քսակիցս դուրս չի գալիս, մեծ կնյազին հարկավոր է, փոքրին՝ նմանապես, գրագրին պետք է տաս, յասաուլի ռեխը կրծելու ոսկր պետք է գցես, ղազախն արաղի փող է ուզում, միկիտան Սաքոյի բերանը յոթ խուրձը խոտով չես կարող փակել. հիմի էս կողմն արի— տանուտեր կա, գզիրը նորա պոչիցը կպած է, գյուղի իշխանավորը մի կողմիցն է փեշդ քաշում, ծառան ձեռքն է

դեմ անում, ո՞ր մեկը համարեմ, լեզվով ասելը հեշտ է, սրանց փոխ կդիմանա՞, խոտի նման սարի թմբին հո չի՞ բուսնում։

— Վնաս չունի, խոջա Բաղդասար, փողրաթչին մի մարդ է, հասարակությունը հարյուր ու մի, դու ինձ լսիր, խալվարը 25 մանեթով հաշիվ արա։

— Մեջտեղն իմ օգուտն ի՞նչ է։

— Եթե կամենաս, երեսուն մանեթի ստացական տանք, հինգը դու վերցրու։

— Ո՛չ, երեսունը շատ է աչքի ընկնում, քսան և հնգի գիր տուր, քսան ասացիր, դրանից տասնութը՝ ժողովրդին, երկուսը՝ քեզ, հոգ չի, մեր տանուտերն ես, դու էլ օգուտ տես։

— Հետո քո բաժինը շատ չի լինո՞ւմ։

— Ա՛, պա՛, պա՛, պա... ինձ հարամ լինի, էն հինգն էլ պետք է մտնի վերն նշածս մարդկանց փորը։

Եվ Բղդեն 20 մանեթով համարեց տանուտերի առաջ 30 խալվարի գինը ու 25-ով ընկալագիր ստացավ։

Ապահովագրին, բացի տանուտերից, ստորագրել էին և երկու գյուղական առաջավոր անձինք։

— Էս երկսի կտուցն էլ մի քիչ մեղր քսիր,— մատնացույց արեց տանուտերը Բղդեին ձեռք քաշողների ստորագրությունը։

— Ի՞նչ ես ինձ ձեռն առել, տանուտե՛ր, երեսս կակուղ տեսար, ատամներս համարեցի՞ր. ես չգիտե՞մ, որ ցորենատիրոջ գրպանը կոպեկ չպետք է մտնի, բոլորը մարսելու եք դու և քո այդ ձեռք քաշող մարդիկը. մի գոգ փող եմ համարել առաջիդ, եթե դու ապերախտ մարդ չես, պետք է դորա մի մասն ինձ բաժին հանես, ա՛յ, թեկո՛ւզ այս երկու հատ թղթի կտորը։

Բղդեն ձեռքը ձգեց և ետ վերցրեց երկու հատ 25-նոց։

— Ը՛... ր՛... ը՛...— խոսքը ծամծմոտեց կուլ ու հուպ գալով տանուտերը և արտասանեց.

— Քո՛ցավը տանի։

— Ուրեմն հիմի գնամ, տեսնեմ, ի՞նչ գործի է մեր ամբարդար Պապիկը,— ասաց Բղդեն և տեղիցը վեր կացավ,— իսկ մինչև իմ դալը դու ճաշի պատրաստություն տես, շատ քաղցած եմ։

— Հը՛, Պապիկ, ի՞նչ գործի ես,— հանկարծ շտեմարանի դուռը բաց արեց Բղդեն, ներս մտավ և ողջունեց յուր շտեմարանապետին։

Շտեմարաններ գյուղերումը չկան, նրանց փոխարինում են դատարանները։

— Բարև՛, հազար բարի՛, աղա ջան, էն է, հա՛, էս գիշեր ջվանները

գանենք, բերանները կարելուց կարծենք, էգուց կարձեմ, ճանապարհ դնեմ։

— Ավազը խոշոր հո չի՞, սև հո չի՞։

— Ես բանական չե՞մ, հացակեր չե՞մ, տղա՛, խոշոր ու սև ավազը ինչպես լսի նման սպիտակ ցորենին, որ մեկ տվողի աչքին երևի՞։ Ա՛յ, գլխիդ մեռնիմ, թե չես հավատում, համեցեք քո բարի աչքովը տես՝ ավազն իմ աչքի առաջին եմ մագիլ տվել ու եթեք օր արևումը փռել, լարացրել. ա՛յ, էս մի շեղջ ցորենն էլ առանց ավազ խառնելու է, մեկելը խառնված պատրաստ է, տես, ինարոդանո՞ւմ ես երկու շեղջի ցորենները մեկ մեկից զանազանել։

— Ինչքա՞ն ես խառնուրդ անում։

— Ասենք՝ տասնին մեկ եմ խառնում, բայց այդ հաշիվ չի, մի բուռն ավազը տասը բուռը ցորենից ծանր է, մեզ էլ քաշն է հարկավոր. ախր չէ՞ կովատեղը մեզնից քար ու կշիռքով են ստանում։

— Ի սեր աստուծո, Պապիկ, ավելի չխառնես, կարող է աչքի ընկնել, հետո հոտը վեր կլինի, մեզ համար ամոթ է։

— Ես ինչպե՞ս քո հացին կույր մտիկ կտամ, աղա ջան, գլուխս ավազի միջին թաղվի լավ չէ, քան թե քո երեսին մի սառը խոսք դիպչի։

— Ապրիս, ապրիս, ա՛ռ քեզ համար մի արխալղացու։

Բղդեն մի հատ արծաթի նորաձույլ մանեթ երեք մատի մեջ բռնած՝ մատ կանչեց յուր ստորադրյալին ու լեզվով թաց արեց, փակցրեց նորա ճակատին։

— Էս քիչ է, դեռ քանի՞ էսպիսը պետք է ինձանից ստանաս, Պապիկ, եթե գործիդ արի ու հավատարիմ կենաս։

Այնուհետև մի քանի ուրիշ կարգադրություններ արեց նա և դուրս եկավ, գնաց դեպի տանուտերի տունը՝ յուր մեջ մտածելով։

— Շատ խելոք և վարպետորդի է մեր Պապիկը, կարծում էի, թե նեղացած կլինի ինձանից, որ անցյալ օրը փողրաթչու կողմից նշանակված ոռճիկի կեսը կտրեցի իմ օգտի համար, բայց ոչ, ինչպես երևում է՝ յուր գործը հասկանում է։ Հը՛,— ժպտաց յուր մեջ Բղդեն,— մեր խելոք Դալիբ-Պապիկն յուր խելքովն էլ կարծեց, թե կծու-կծու երդումներով ու քաղցրախոսություններով ինձ միանգամայն վստահացրեց յուր հավատարմության վերա, իբրև թե ես չգիտեմ, որ եթե շահ չունենար մեջտեղը, ամսական հինգ մանեթով ինձ գերի չէր դառնալ ու փոշի կուլ տալով չէր խեղդվիլ. թո՛ղ անի, ի՞նձ ինչ, իմ վաստակածը ու քրտնածը հո չի՞ ուտում. ասած է՝ ինչ որ պակասի, բազիցը կպակասի, բաղմանալու ի՞նչը կպակասի. մեղր ծախողը մատը կլպստի։

— Գնա՛, աստված քեզ հետ,— Բղդեին ճանապարհ դնելուց հետո

նորա քամակից գլուխը շարժում էր Պապիկը.— քո խելքովը լավ բան արիր, որ վարձիս կեսը կտրեցիր, ես էլ տեղը հանեցի. քո կարծյոքդ տասին մեկ եմ խառնում, էն էլ գետի ավազ. ինչպե՞ս չէ, խելքս հացի հետ էի կերել, որ հինգ մանեթի համար կոլոտ չարչի Բղդեի մշակը դառնայի. ընչի՞ չես ասում՝ տասին երկու եմ խառնում, ապա՛ռած լեռ քարի եմ ջարդել տալիս, փշրում ու խախալով մաղում, խառնում. մի ձեռնաչափ քարի մանրուքը տասն այնքան ավազից ծանր է. մի սոմար ցորենը քեզ համար դառնում է երկու սոմար, տակին էլ մի սոմար ինձ մնում. հիմի սորա վերա էլ ավելացրու էն ավելորդ կոտը, որ ամեն մի խալվարին ստանում ենք ցորնատիրոջից։ Ասենք էս վերջինի մեջ ինքը՝ տանուտերը, հետս մասն ունի, մի քանի բուռն էլ գզիրին է հասնում։ Էդպես է, պարոն Բղդե, «գողը գողից գողացավ, աստված վերնից զարմացավ»։

ԻԶ

ՏՈՒՏՈՒ

Կարբումը, Կիզի-մատուռի հյուսիսային կողմը, շատ ժամանակ չէ, մի ձեռք տուն է բուսել, մի երկու հարկյա փոքրիկ շենք։

Ինքնըստինքյան այդ շենքը մի երևելի և նշանավոր բան չէ, փոքրիշատե ճաշակը զարգացած մարդի համար աչքի ընկնող ոչինչ չունի։ բայց ներկա Կարբու նման մի գյուղի համար այդ տունը լավերից մինը կարելի է համարել։

Լավ ասածս պետք է հասկանալ վերնահարկի վերաբերությամբ, ապա թե ոչ, ներքին հարկի վերա ոչինչ ջանք չի գործ դրված, անկարգ, անձև պատերով շրջապատված մի քանի ծակեր են, որոնք ոչ գոմի՝ պետք կլինեն, ոչ խոհանոցի ու մառանի, ոչ դրաստ կապելու մսրքի տեղ է թողած, ոչ վառարանի ծխնելույզ, ոչ գյուղական թոնրի համար մուխ քաշելու երդիկ և ոչ լույս մտնելու մի ծակ։

Այս իսկ պատճառով՝ շինված օրից մինչև հիմի ներքնահարկումը շունչ կենդանի եթե որոնելու լինես, ցամաքային խոնավասեր գորտերից ու հողաբնակ ժժմունքներից ավելի ոչինչ չես գտնիլ։ Տան տիրոջ ուշքն ու միտքը, բոլոր հոգացողությունն ու ծախսած դրամը սպառվել է վերնահարկը զարդարելու և արևելյան ճաշակով կարմիր և կանաչ նկարներով լցնելու վերա։

Պարսիկ ծաղկարարը հարեմական, ախտաբորբոք սեղեխների կենդանագիրներ ծեփելով սենյակների պատերին, համակերպվել է, երևի, տանտիրոջ ժամանակակից հաճույքներին և դիպվածական տրամադրություններին։ Դիպվածական և պատահաբար, որովհետև տան ջահել տերը

շինությունն սկսելուց մի քանի օր առաջ միայն զգաց իսկապես, որ ինքն էլ նորահաս երիտասարդ է և բնական հակում ունի դեպի գեղեցիկ սեռ։

Նորաշեն պալատը, եթե լսողների ականջին ծանր չհնչե այս մեծանությունը և յուր տերը շատ շար ու բարի լեզուներ սրեցին իրանց դեմ և բամբասանքների ու ասեկոսեքի տեղիք տվին։

Խոսողներն իրավունք ունեին. տունը շինվել է, կահավորվել է, կահասիներով լցվել է, բայց ոչ տերը մի կտոր հաց է կերել մեջը և ոչ տեսու ծանոթներ մի կթղա օղիով շնորհավորական բարեմաղթություններ են արել։

Ցորեկները դռները բոլորովին փակ են եղել, փոկ գիշերները մի պառավ կին միայն ձիթի ճրագի աղոտ լույսով, ուրվականի նման, յուր երկար սովերն է տարածել անկյունից անկյուն, սենեկից սենյակ։

Երդվել չեմ կարող, վերջերումս գիշերներ են պատահել, երբ տան երիտասարդ տերը յուր հնամաշ անկողինը գետնին փռված թողնելով, ինքը ժամերով երթևեկել է փակված սենեկի մեջ և հուսահատ կամ հուսապարար գլորվել ու խռմփացել մինչև լույս։

Պարզելու համար ասենք, որ տանտերը, որ թույլ է տվել իրան այս շռայլությունը, մեր բարեկամ Բղդեն է, իսկ պառավը՝ յուր մայր Սալբին։

Բղդեն շինությունն սկսել տվեց Երևանից վերադառնալու օրը և, ի պատիվ նորա, պետք է խոստովանած, ոչինչ չխնայեց յուր շենքը փառազարդելու համար, որպեսզի, ինչպես ինքը շատ անգամ հեղհեղում էր յուր սրտի խորքում, ջհուտ Աղաջանի աչքերը շլացնի յուր հարստությունով, Շողիկին իրանը շինի, փափագին հասնի և հետո Աղաջանին լակ ձվի նման պատռվը զարկի, հողի հետ հավասարեցնի։

Բղդեն շինությունը կարգի դրեց ու ինքն յուր նոր գործին տիրացավ։

Այդ էր պատճառը, որ ցորենառուի թափառական պաշտոնը թույլ չէր տալիս նրան վայելել յուր պալատի հեշտությունները։

Սալբին էլ, իբրև հին կին, ավելի գերադաս էր համարում յուր մխոտ թոնրատանն օրն ի բուն փսփսալ, քան թե աղտոտ ոտքերով սենյակների փռվածքը տրորել։

Ուրիշ գործ ու զբաղմունք չուներ Սալբին. նա շարունակ պարապած էր յուր որդու գնած դյուրագին հախճապակյա պնակները լվանալով, որոնք Կարբու համար նոր շռայլություններ էին. ըստ որում գործածականը տեղական շենքի հասարակ կավե անոթներ էին։

Պառավը լվանում էր, ցամաքեցնում էր, դասավորում էր յուր թոնրատան դարակների վերա և կրկին մի ժամից վայր էր բերում և էլի լվանում։

Սալբու սովորական զրուցընկերը լինում էր Տուտու նանը, և Տուտուն էր, որ շարունակ հանդիպում էր Սալբուն պնակները լվանալու։

— Հերի՛ք է, հերի՛ք, Սալբի բաջի՛, ախար ընչո՞ւ են, որ այդքան լվանում ես, առած օրից դեսը դեռ չեն յուղոտվել, տղեդ տան երես չի տեսնում, դու էլ Բայազետից բերած ժանգոտ պղնձե ամանումն ես ջլբուր ուտում, իսկ թանով ապուրի համար՝ հողե քրեղանը կա ու կա։

— Ընչի՞ աղտոտ թողնեմ, փոշին կնստի, շնորհքը կերթա, Տուտու ջան, տես ինչպես ֆոֆոում են, Սալբին մեռնի՞ սրանց առնողի ջանին,— ոգևորվում էր Սալբին և ուրախության արտասուքը ծպծպան աչքերից ցողում։

— Աստված քեզ բաշխի միլիոնաբերդ, բարով մի խորոտիկ հարս բերես, նոր շինված քյոշկ ու սարայումը շորոր տալով ուղևոր պտույտ գա,— միշտ ցանկություն էր հայտնում Տուտուն և առաջարկում Սալբուն հանել ծոցից յուր քթախոտի տուփը։

— Չէ՞ որ երեկ բուռնութուդ պարկը լցրի, Տուտու, դու հենց դրա համար ես գալիս,— հանդիմանում էր շատ անգամ Սալբին Տուտուին, բայց միշտ էլ նորա պարկը լցնում էր։

Մի օր Տուտուն, ըստ սովորականին, ներս մտավ Սալբու մոտ և տառած մնաց։

Պառավի աչքերը խոր ընկած էին, չորացած արտասուքի հետքերը նշմարվում էին, գույնը դալկացել էր, թիկունքը կռացել, երկուտակվել էր։ Մի խոսքով, Սալբին այսօր կատարյալ զառամության հասած պառավի էր նման, որ այլևս գործելու ուժ չունենալով խնամատար հոգածուից միանգամայն զուրկ՝ մահ է խնդրում, և անողոք մահը փախ է տալիս նրանից։

Սալբին նստած էր այրտուլա խսիրի վերա, պնակները անկարգ ցրված էին առջևը, մի հատ էլ ձեռքին էր մնացած, երևում էր՝ ուզեցել է լվանալ և չի կարողացել։

— Ի՞նչ է, ի՞նչ է պատահել քեզ, Սալբի բաջի՛,— մոտ վազեց Տուտուն,— այդ ի՞նչ օրն ես ընկել։

— Ոչինչ,— խոր հոգոց հանեց Սալբին։

— Ինչպե՞ս ոչինչ, այստեղ կույր մարդ չկա, ամեն մի աչքիդ բույնը մի-մի ընկույզից ավելի են տոզել, մեծացել, գերեզմանից դուրս քաշած չորեքոտյա Ղազարոսի գույնն ես ստացել։

— Ի՞նչ անեմ, Տուտու, մոր օրորոցը կրակ պետք է ընկներ, որ ա՛լ մեծանար, ո՛չ որդու ցավեր տեսներ։

— Ի՞նչ է, քա, չլինի՝ Բղդեդ, հեռի իրենից, մի հանգիպսի է (պատահարի) հանդիպել։

— Հանդիպսի՞ հանդիպի իմ էրեխին հանդիսսի հանդիպեցնողը։

— Ախար ի՞նչ կա։

— Էն կա, որ երեխես խելքը գլխին չի։

Այս բացականչությունով Սալբին պատմեց, թե մի քանի գիշեր է միայն, որ յուր որդին տուն է գալիս, այնինչ նոր պաշտոնին տիրացած օրից մեծ մասը գյուղերումն էր մնում, թե յուր Բղդեն մտնում է սենյակներից մեկի մեջ և փակվում, ոչ հաց և ոչ ջուր է պահանջում և շարունակ բաց աչքով լուսացնում է՝ ինքն իրան խոսելով և հառաչանքներ ու սպառնական խոսքեր արտասանելով։ Պատմեց Սալբին, թե ինքը բազմիցս դուռը բախել է, աղաչել, թախանձել է՝ տուն թողնել իրան, հայտնել ցավերը, բայց որդին անողոք է մնացել մոր պաղատանքներին և երկու խոսքով ահ ավել, թե նա յուր գլուխը մահու կտա, դաշույնով սեփական փորոտիքը կթափի, եթե մյուս անգամ իրեն ձանձրույթ պատճառեն։

Վերջ բանին պատմեց Սալբին թե ինքը մի հնարք է մտածել, հենց որ որդին ձիուց իջել է՝ նա մի տեսակ հաջողացրել է հետը ներս մտնել նորա սենյակը, փարվել է Բղդեի ծնկներովը և մայրական ստինքն ու ծծած կաթը բարեխոս կացուցանելով, կարողացել է դուրս կորզել յուր հաբազատի սրտնեղության շարժառիթը։

— Սաքի թե ի՞նչ,— հետաքրքրվեց Տուտուն։

— Թե էն, որ իմ սիրելի զավակը սիրահարված է։

— Ուրեմն դու դորա համա՞ր ես գլուխդ մահու տալիս,— ծաղրեց անմխիթար մորը խելացի Տուտուն,— օրն էսօր կերթամ խնամախոս և լույսը չբացված՝ նշանը կտանենք։

— Հենց էդ է, որ տղիս ցավի դեղապետը, նորա դարդի դարմանը պտուղը քաղած ու տարած է, այլևս ձեռք չի ընկնիլ,— հոգոց հանեց Բղդեի մայրը և պարզ ասաց, որ յուր որդին ցնդած է ջհուտ Աղաջանի դուստր Շողիկի սիրով, իսկ, ինչպես հայտնի է, Շողիկն երկու տարի է, որ անուն արած է, տիրուն է և մի քանի օրից կպսակեն, կտանեն։

— Է՛հ, քա ճարը գա,— քամահրեց Տուտուն,— մեկը չլինի, մյուսը կլինի, աղջիկն աղջիկ է, Կարբուց մի՛ ուզիլ, ուրիշ գյուղից տար, Բղդեիդ հիմի ամենքը կուզեն փեսայացնել. դու իրանից հարցրու,— հարց տվեց Տուտուն,— որի վերա մատը դնի, ես մի օրումը գլուխ կբերեմ։

Որդեսեր մորը չկարողացան սփոփանք պատճառել կարեկից հարևանի միխիթարական խոսքերը, նա հայտնեց, թե յուր որդին կտրական վճռել է՝ Աղաջանի տունը քնաջինջ անել, Բատինենց Սհոյի ծուխը կտրել և վերջն իրա գլուխը սպանել, եթե գործն այդպիսի վախճանի հասնելու լինի։

Վերջապես Սալբու խոսքերից իմացվեց, որ տեր-Հակոբի պատգամավորությունն անհաջող է եղել, թե չհուտ Աղաջանը վճռողապես հայտնել է, որ եթե աշխարհքումն մնան միայն ինքն ու Բղդեն՝ նա այն ժամանակն էլ յուր աղջկանը կթթվացնի, կքացախացնի, կպառավացնի և Բղդեին չի տալ։

Տուտուն քթի տակին ժպտաց։

— Իսկ եթե ես գլուխ բերեմ, ինձ ի՞նչ կտաք,— հարցրեց նա։

— Ինչ քո սիրտը կցանկանա։

— Խոսքով փլավ չի եփվիլ, յուղ ու բրինձ է հարկավոր, բեր տեսնեմ, որքան ես ցնծում, որ ես ամեն դժվարություն հեշտացնեմ։

— Է՛հ, Տուտու ջան, շատ մեծ-մեծ ես բրդում, կուրանա ու խավարի Բղդեիս մերը, նորա առաջին բոլոր դռները փակ են. երեխես պատմեց, թե ինքն էն ծակծկոտվելու Շողիկի հետ երեսե երես խոսեցել է, և նա իմ տղիս մարդատեղ չի դրել։

— Էդ ոչի՛նչ, դու փո՛ղ ասա, որ աչքեր կապի, մենք էնպես կանենք, որ Շողիկը մոմի պես կհալվի ու կամքի կգա, մենք էն հնարը դիտենք, որ եթե դռները առաջին փակեք, երթկովը տուն կընկնի։

— Տուտու ջան, էդ ո՞ր օրվա համար ես պահել բարեկամությունդ։

— Ախար բան ասացի, սրբի դուռն էլ առանց խաչհամբուրի չեն գնում, դեռ մոմն ու խունկը, մատաղն ու գանձանակը չեմ ասում։

— Ա՛յ քեզ ղուրբան, ինձ փողն ո՞վ ա տվել, որ քեզ տամ, եթե բանը գլուխ բերես, Բղդես քաշովդ մին ոսկի կտա։

— Հապա դու էլ ընչի՞ ես անունդ Բաղդասար աղայի մեր դրել, որ մի քանի սև փող էլ չունես ծոցումդ՝ քեզ համար ժամի ու աղքատի տալու։

— Թե սև փողով բան գլուխ կգա, աչքիս վերա. հավ ու ճիվ եմ ծախում, ձու ու բազուկ եմ ծախում, մեկ-մեկ Բղդես սիրտն ուրախ ժամանակը սպիտակ փողեր է տալիս, թե՝ ադե՛, քեզ համար գանձանակի փող արա. էլ ի՞նչ երկարացնեմ, բաժինքումս բերած քսակիս մեջ տասը մանեթի չափ հոգեպահուստ ունիմ, թե որ Բղդեիս փափագը կատարելու համար էդքանը բավական է, վեր կա՛լ, վերջն էլ, երբ Շողիկը մեր դրոնով հարս մտավ,՝ կաց ու ոսկու մեջ լեղ տո՛ւր։

— Առաջին ծախսերի համար հերիք է, գնա բեր։

— Բայց չասացիր, թե մտքինդ ի՞նչ է, ի՞նչ հնարքներ ես գործ դնելու։

— Էդ բանից ձեռքերդ լվա՛, տասը մանեթ չէ, որ քաշովս մեկ ակն ու մարգարիտ տաք, իմ բերանիցս ոչ տաք դուրս կգա, ոչ հով։

Շատ խնդրեց Սալբին, բայց Տուտուն մնաց անհողդողդ, հետն էլ

սպառնաց, որ եթե իրան չեն հավատալ, մի շաբաթ չի քաշիլ, Բղդեն խսպառ խելքահան կլինի կամ արենտեր դառնալով՝ Սիբիր կերթա։

Այս խոսքերն էին, որ տասնյակ տարիներով դիզված Սալբու կոպեկներն ու սպիտակ փողերը լույս աշխարհ տեսան և Տուտուի ծոցագրպանումը զետեղվեցան։

Իէ

ՆՈՐ ԱՇԽԱՐՀ, ՆՈՐ ՄԱՐԴԻԿ

Փամբակաձորումն է Հ. անունով հայաբնակ գյուղը։ Նա արքունի ճանապարհից շատ ծռանց է և ընկել է Ապարանի ու Փամբակի բարձրաբերձ լեռներից կազմված մի խոր ձորի մեջ։

Այս գյուղի հետ հաղորդակցություն ունեցող անիվի միակ ճանապարհը գալիս է գյուղի արևելյան կողմից, իսկ արևմուտքից միմիայն մի նեղ կիրճ է առաջնորդում ձիավոր կամ հետևակ ճանապարհորդին դեպի ձորաբնակ կիսավայրենի, բայց հյուրասեր ժողովուրդը։

Այսօր չէ, բայց տասը տարի սրանից առաջ յուր գլխից ձեռք վերցրած մարդը միայն իրան թույլ կտար առանց շատերի ուղեկցության վստահորեն անցկենալու վայրի այծերի և մանրատոտիկ եղնիկների այս քարածերպերիցը և Հ. գյուղը մտնելու։

Ուրիշ ելք կամ մուտք ամեն կողմից բնական լեռնային սահմաններով ընդհատված են։

Զորամիջի է, ասացինք, Հ. գյուղը, բայց ինքը նստած է լեռան բարձրադիր լանջի վերա։

Այս դիրքը ընծայում է գյուղին մի բանաստեղծական տեսք՝ արևելյան լայն ճանապարհով գյուղն եկող սայլավորների, ձիավորների և հետևակների համար։ Փոխադարձաբար, գյուղացիք էլ միջոց ունին իրանց տների առաջից զվարճանալ իրանց մոտ շնորհ բերող ճանապարհորդներին տեսնելով։ Ուզում եմ ասել, թե որքան գյուղի արևմտյան կողմը սեղմված է սարերի մեջ, հետևաբար մինչև գյուղի ափը չհասնես, մի տուն չես տեսնիլ, այնքան ընդհակառակն, արևելքից մի լայնատարած, ծաղկալից, սիրուն հովիտ ընդարձակվում է և ծայրը մինչև մեծ ճանապարհը հասցնում։ Եթե աչքերդ սուր են, դռանդ նստիր և հինգ վերստից եկողին նայիր, հենց, կարծես, եկողը թեյի բաժակի նման, մատուցարանի վերա առաջդ է գալիս։

Աշնան վերջերն է. լեռների կատարները մեկ օր՝ տարիների հաշիվը կորցրած զառամյալ ալևորի գլուխ են դառնում, մյուս օրը՝ թխագան-

դուք երիտասարդի կերպարանք են ստանում արեգակի քմահաճության համաձայն. միմիայն հայի համար երկու նվիրական ալեզարդ ծերունի նահապետներն են, որոնց վեհության առաջ խոնարհվում են Այրարատ աշխարհի բոլոր մյուս բարձրալանդակությունքը, Մասիսն ու Արագածն են, որ սպիտակափառ գլխներով հարավից և հյուսիսից հովանավորում են իրանց փոքր եղբայրներին։

Ղարաշորանու լյառը, որ Փամբակի հարավային կողմի սարերից ամենաբարձրն է, և Հ. գյուղը տանող լեռնային ուղղաձիգ ճանապարհը ամառն էլ վտանգավոր է, թող թե աշնան վերջին կամ ձմեռը։ Վտանգն երկու կողմից է. եթե բախտ ունեցար ազատ պրծնել սարի գլխի անընդհատ գիժ քամիներից և բքերից, կարող ես անբախտ գտնվիլ և մի վայրկենի մեջ գլխիցդ զրկվել և ձորն ի վայր անգլուխ թավալգլոր մինչև անդունդը ճանապարհորդել ու այնտեղ արծիվների ու անգղների համեղ կերակուր լինել։

Ես ոչ ականատես և ոչ երաշխավոր եմ, միայն ասում եմ, որ Ղարաշորանի բարձրությանց վերա բնությունն ինքն է մարդակեր ավազակների համար հարմար որջեր ստեղծել։

Ահա այս ահռելի սարիցը, աշնան վերջին, անվնաս ցած իջան երկու հոգի և երեսներին խաչ քաշեցին, երբ Հ. գյուղի արևմտյան ափի մարագներից մեկի պատի տակին հանգիստ առան։

— Կինարմատի խելքով ընկանք, ադե՛ (մայրիկ),— ասաց երիտասարդ տղամարդը ձիու սանձը բռնելով,— ես օձի միս կուտեմ և մյուս անգամ կրկին այս տեղով չեմ վերադառնալ։

— Իմ հույսս հաստատ էր, որդի, որ Հ. գյուղի հրաշագործ տերտերի արժանավոր օրհնությունը մեզ կպահպանե. մինչև էսօր նորա դուռը գնացողներից ոչ մեկը փորձանքի չի հանդիպել։

— Է՛հ, ինչևիցե, աստծուն փառք տանք, որ էս անիծած սարիցն ազատվեցինք, և շտապենք, քանի մութը չի կոխել, էս անլեզու անասունի համար մի տաք գոմ ու կեր ճարել, մեզ համար էլ մի գլուխ դնելու տեղ գտնել։

— Սիրտդ հանդարտ պահիր, զավակս, մենք ուղղակի կիջնենք տերտերի տանը. լուսահոգի հորդ հետ նա սրտե ի սիրտ բարեկամ էր և Մուղնու ուխտին սուրբ Գևորգ գալուս մի երկու գիշեր Կարբու

ներին էլ հրամայիր, որ ջահելներին առանձին իրիկնահաց տան, իսկ մեզ համար, մեր երկու աղիզ հյուրերի հետ միասին մեր փոքր տանը սուփրա բաց արա, նստենք, չորս հոգով մի քիչ քաղցր զրուցներ անենք։

Տուտուն գլխով բացասական շարժումն արավ և հայտնեց, որ իրեն համար ամոթ է տանտիրոջ պես մի պատվելի ծերի հետ սեղան նստել կամ թե բերանի փակը արձակել ու խոսել։

— Չէ՛,— պատասխանեց ծերունին,— այսուհետև ոչ քեզ, ոչ իմ պառավին վայել չէ չխոսկան մնալ կամ տղամարդից քաշվել, մենք երեքս էլ օրերս անց ենք կացրել, ասաց, թող ջահել հարսները իրանց հարգեր պահեն։ Դուք, կարծեմ, շատ զարմացաք, երբ ես ձեզ ասացի, թե էսօր տերտերին չեք կարող տեսնել. ես կամենում եմ սեղանի վերա մեր իրիցի մասլահաթն անել։

Եվ հյուրասեր տանուտերն այսպես սկսեց յուր շատախոսությունը, նախապես ներողություն խնդրելով, որ ինքը շատախոս կաչաղակի նման պետք է ձանձրացնի յուր հյուրերին։

— Ինչպես երևում է, ձեզ հայտնի է մեր տերտերի գրի զորությունը, սրա նման գրքաց արար աշխարհքումն երկուսը չի լինիլ, սրա մոտ գտնված գրերը Սողոմոն իմաստունի յուր մատներով գրածներն են։

— Պարզ բան է, որ էնպես օջախ կա, որ հորից ու պապից ժառանգություն է ստանում բացի հողը, փողը, չորքոտանին, էլի մի էնպես բան, որ շատերի տանը չկա։ Էնպես տուն կա, որ բոլոր եղբայրներն իրանց պապերի գիտեցած արհեստն են բանեցնում. օրինակի համար՝ հենց մեկը մենք. ինձ Ջուլհակենց Դավիթ են ասում, Ջուլհակենց տունը ողջ Փամբակին հայտնի է, ես էլ, իմ չորս որդին էլ, իմ բաժան եղբայրներն էլ՝ բոլորս ջուլհակ ենք։ Հենց որ դաշտի գործը վերջանում է, մեկս ու մեկս ոտներս հորումը քարշ ենք անում ու մակույկը խաղաղցնում, ա՛յ, տես քո բարի աչքովը, էն քնջի փոսն է մեր ջուլհակի հորը, հենց էս սհաթիս էլ կտավը հինած՝ սանրի միջովն անց է կացրած։

Տուտուն գլուխը տմբտմբացրեց ի նշան համաձայնության։

— Մեր հարևաններ էլ ներկարարներ են կոչվում,— շարունակեց Ջուլհակենց Դավիթը,— հենց էս բոպեիս նրանց մեծ ու պստկի ձեռքերը կապուտ են, մեր գործած կտավը նրանք լեղակի կարասն են կոխում, կապտացնում ու տիրոջը տալիս։

— Տներ էլ կան, որ իրանց հին պապերից ժառանգել են մի մասունք, մի սուրբ ավետարան, մի խաչ և մինչև էսօր էլ նրանց քնջներից մեկում էդ սրբությունները բազմացրած են, ուխտ գնացողների փափագը կատարում են, նրանց տերերն էլ էդ սրբի խաչհամբուրովն են ապրում։

Տուտուն կրկին հավանական նշան արավ։

— Հենց էդպես էլ մեր քահանեն է,— կցեց Դավիթը,— էդ Սողոմոնիքն ու Վեցհազարյակն յուր պապերիցն են իրան մնացել, իմ ողորմածած հոգի պապս պատմում էր մեր տերտերի պապերի արած հրաշքները։ Ասում է՝ դրանց տան հոտաղները, մշակները, մինչև անգամ կովկթող կնանիքը բոլորը սատանեք են եղել. ախար լսած կա՞ք, որ կին սատանա լինի, բայց նրանք ունեցել են, էն օղորմածիկը գրի զորությունով սատանեքանցը դուրս է կանչել գետնի տակից, վրաներիցը մի-մի մազ պոկել է, աղաքարի տակն է դրել ու նրանց յուր տանն անվարձ, անհաց բանացրել է. ախար էդ անիծածները՝ ինչ տեղ ուզում ես պահիր իրանց մազը՝ կհանեն ու կկորչեն, բայց հենց որ աղաքարի տակը դրիր, դիպչել չեն կարող, դռանդ շունը կդառնան։

— Ասում է մեր գյուղացիք՝ մեծ ու պստիկ մտիկ էին տալիս սատանեքանց ոտներին ու վրաները ծիծաղում, գլխներին վեր հատում. ախար սատանեքանց ոտները մերի պես չեն, նրանց կրունկը առաջ է, մատները կրնկի տեղը։ Ուղիղ է, մեր տեր-Մանուկն էդպես բան չի անում, բայց սա էլ ուրիշ հրաշքներ է գործում։ Ես իմ աչքով տեսա, էս մեր պառավի (յուր կնոջ մասին է խոսքը) էլ միտքն է, թե մի ամառ ինչ օրին խաղաց տեր-Մանուկը...

Վերջապես ջուլհակ Դավիթը լռեց, և Տուտուն պատմեց կարճառոտ յուր գալու պատճառը. նրա ասելովը՝ օտարները խլել են յուր քրոջ որդու նշանածին, աղջկանը գիր են արել, սիրտը գողացել են, հիմի ինքն ուզում է տերտերի Վեցհազարյակի շնորհիվ իրանց հարսնացուին օտարի ճանկից ետ խլել։

— Չեմ կարծում, որ մեր տեր-Մանուկն աղջիկ-տղայի գործում խառնվի,— պատասխանեց ծեր Դավիթը,— էն վաղ էր, ինչ էշը կաղ էր, որ մեր տերտերը մի գրչի ծերով երկու ջահել սրտեր միլատուզի (մագնիս) պես քաշում, իրար էլ կպցնում ու թեկուզ յոթ լուծք գոմեշ լծեիր, չէիր կարող ջոկել, բաժանել։ Հիմի տերտերը քաշվում է տղա ու աղջիկ սիրահարցնելու գիրն ու թլիսմ անելուց...

— Ընչի՞ համար,— հարցրեց Տուտուն։

— Ը՛մ... մ... մ... էնպե՞ս... մնասցե... առաջնորդը ես եմ, բակլեն խաշած եմ ցանում, իշխանավորը ես չե՞մ, երեկ իրավունք էի տալիս, էսօր կոներդ էլ եմ կապում, լեզուդ էլ... է՛հ... թողցո՞ւք...— կմկմաց ջուլհակ Դավիթը և դարձավ դեպի յուր կինը։

— Ա՛յ պառավ, մեր զոնաղներին շատ գլխացավանք տվի, տեղերը պատրաստի, թող հանգստանան, էգուց բարի լուսը կբացվի, ինչ տեսակ ասված մեր տերտերին տուն կտա (ներշնչել), էնպես կանի։

Այս խոսքերով ծեր Դավիթը բարի գիշեր մաղթեց յուր հյուրերին։

— Բայց մի բան ինձ համար մութը մնաց, ամաչեցի հարցնել Դավիթ եղբորս,— ասաց Յուտուն Դավթի գնալուց հետո նորա կնոջը։

— Ի՞նչ։

— Էս ի՞նչ մարդիկ էին ձեր գոնաղները, էն ռուսն ու շոբանքյարեն ձեր գյուղերումն ի՞նչ գործ ունին։

— Ա՛յ քեզ մատաղ, ազիզ քույրս, հենց գիտես թե իմ գլխավորը շատ բան պատմե՞ց։ դրանք էլ քեզ պես տերտերի դուռն եկող ուխտավորներ են, երբեք օր է գերի են դառել, չեն կարողանում գնալ, միայն դրանք հո չեն, տուն չկա էսքան օրը մեր գյուղումը, որ մի երկու ղոնաղ չլինի, բոլորը տերտերի մոտ են եկել. գործակալն եկել է, տերտերը ոչ ժամանակ ունի դրանց գարդին դարման անելու, ոչ էլ ինամարձակվի մեկի համար մի մատը գիր գրելու, միրուքն ու փիլտանը վզիցն կթռչին։

— Աստ մենք էլ պետք է բանտ ընկնենք, էլի։

ԻԹ

ԱՆՁՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Աշունը շատ պտղալիտ էր, պատերազմը խիստ կատաղի. ռուսի զորքը Կարսը շրջապատել նստել էր. աշտարակցիք բոլորիքյան հարստացել էին, գինին և օղին մեծ գին ունեին և այդ առևտուրի մեջ աշտարակցիների հետ մրցումն անել ոչ մեկի գործը չէր, նրանց մի ուրբ կարս էր, մյուսն՝ Աբարատյան այգեգործ գյուղերում. բուն Աշտարակի գինին մի կաթիլը մի ոսկիով չէիր ճարիլ լավ կամ վատ, թունդ թե թույլ, թեկուզ մի երակն էլ թթված՝ հավաքում էին գյուղերից, լցնում տակերի մեջ և երեք-չորս օրից այս բոլորը իրրև Աշտարակու արտադրություն ծախում և վերադառնում, իրեն գյուղերն ընկնում։

Գնողներն էին սպաներն ու գինվորները։

Ո՛չ մի մարդ չէր վերադառնում պատերազմական դաշտից առանց նոր և թարմ լուրի, օրական մի քանի տեսակ համբավներ էին տարածվում. մեկ հուչակվում էր, թե օսմանցին ջարդուփշրել խորտակվել է, նորա մի թեն խայտառ ոչնչացել է, մյուս բաժինն յուր գնդերով գերի է բռնվել և քշվել խորին Ռուսաստան. մյուս ամսամ ազմանդն աշխարհքն վերցնում էր, թե Բեհրուզովը ետ է մղվել բաշիբազուկներից մինչև Ախուրյանի ափը։

Այս լուրերից մի քանիսը հաստատություն էին գտնում, շատերն էլ հերքվում էին, նորությունները փոխադարձաբար ուրախություն և տրխրություն էին պատճառում երկու դրացի այլակրոն ազգաբնակություններին. հայը հրճվում ու փառք էր տալիս Հիսուսին, որ հզոր է արել կրոնակից ռուսի քաջ բազուկը և խաչը անսասան զորությունով ընկճել, խորտակել է լուսնի սրածայր եղջյուրները, իսկ պարսիկն առ երես ուրախություն էր արտահայտում, բարձր քաղաքական վարչության գրավոր հրամանին համաձայն աղոթում էր յուր մեչիդներում՝ ռուսի զորքի սուրը կտրուկ անելու համար, բայց ի ներքուստ նա մահաբեր հարված և կարևոր խոց էր ստանում յուր սրտին։

Մեծ մարգարեի հավատարիմ ավանդապահ կանաչագլուխ մոլլաները, սպիտակագլուխ ախունդները, նույնպես և փեյղամբարի սերունդ, կապտագլուխ սեյիդները՝ թափառաշրջիկ դավրիշների գործակցությամբ ստիպված էին երկու հակասական դեր կատարել. նոցա բերանից միանվագ և՛ հով էր փչում, և՛ ջերմ, տաճարի ամբիոնից մոլլան ոգևորված ավետում էր ռուսի զորքի հաղթությունը, իսկ մաշնավորապես ամեն ուղղափառ իսլամի վերա պարտք էր դնում, որ նա օրական երեք անգամ կատարելիք նամազից մեկը բաժին հանի յուր հոգուն, որպեսզի յուր մահից հետո Մահմեդի դրախտի մեջ հուրի-փարիներով շրջապատված լինի, իսկ երկու նամազը նվիրե օսմանցու թրի հաջողությանը։

Վերոդրյալ խորությունը անջատել էր դարերով միասին ապրած հային ու պարսիկին. նրանք միշտ իրարից զգույշ էին և պատրաստ էին մնում. հայն յուր անձնապաշտպանության վերա էր մտածում, պարսիկը վրեժխնդրության և հայ գյուղերի բարիքին տիրանալու հոգումն էր։

Պարսիկն իրավունք ուներ, լինելով բնական ծույլ՝ յուր հողերը հային էր ծախում՝ շնչին գնով մշակելու և օգտվելու, իսկ ինքը պարապում էր միայն կեղեքելով և հափշտակելով։

Հենց այդ պատճառով, պարսիկները միանգամայն հողի հետ հավասարվեցան, պատերազմի առթիվ ծանրացած հարկերի ու հասերի ներքո ճկվեցին, ռամիկ ու շինական, բեկզադա ու խանզադա մի կտոր հացի կարոտ մնացին. ընդհակառակն, հայ գեղջուկը հարկահաններին էլ էր կշտացնում, յուր տունն էլ բարօրության մեջ էր պահում և նույնիսկ պարսիկին էլ էր օգնում, դեռ ավելորդը վաճառելով կարողություն էր դիզում։

Ի՞նչ անեն ուրեմն պարսիկները, որ չնախանձեն, դիպող բոպերին էին սպասում, որ վրեժ առնեն, կուտակվել էին մթին ու լեռնաշափ ամպերը, որոտմունք և փայլատակունք միայն պետք էր՝ կարկտելու և շանթահարելու համար։

Այդ վայրկյանը մոտ էր։

Կայծակի արագությամբ մի չարագուշակ գուժ արձագանք տվեց

Կարսից մինչև Մասսյաց ստորոտը, թե ռուսի զորքը մեծ հարված է ստացել օսմանյան բանակից։

Ռուսաց նորեկ քաջընտիր դրագունի (Վիշապազուն) գունդը, իրանց անհմուտ զորավարի առաջնորդությամբ, շրջափակվել է առաջի կողմից տաճկական զորքից, իսկ ետևից՝ ռուսական անհավատարիմ պարսիկ միլիցիայից (անկանոն զորք)։

Ոչ ոք չի կարողացել հսկել և իմանալ, որ միլիցիայի հրամանատար պարսիկ խանը գաղտնի բանակցություն է ունեցել տաճկի գլխավոր հրամանատարի հետ, իսկ այստեղ բոլոր պարսիկ գյուղերին է պատվեր տվել, որ նշանը տալուն պես նրանք հարձակում գործեն հայ գյուղերի վրա և սուրը քաշեն ու կողոպտեն բոլորին՝ մեծից մինչև փոքրը։

Միանվագ կազմակերպված է եղել օսմանցու խորամանկ փաշաների ձեռքով մի գունդ քուրդ հրոսակներ, որոնք այդ հաջող րոպեում տաճկական դրոշակով երեք թնդանոթի ուղեկցությամբ պետք է միանային Ախուրյանի կողմի ափերի պարսիկների հետ և ավերածություններ անելով հպատակության երդումն առնեին հայերից։

Կարգադրված է եղել, որ դեռ Ալեքսանդրապոլը չառած՝ պարսիկ բազմամարդության օգնությամբ Երևանին տիրեն։

Օսմանյան հրամանատարն իրագործեց յուր ռազմագիտական ծրագիրը. ասում են, մի երկու ժամի մեջ բնաջինջ արեց պարսիկ միլիցիայի շնորհիվ կտրիճ և գեղանի դրագունների, դոցանից երկու թե երեք հոգի միայն դիպվածով ազատվել են։

Հայտնի չէ, թե միլիցիայի դավադրությունն ինչպե՞ս հրապարակ եկավ, բայց անհերքելի ճշմարտություն է, որ դեռ ոչինչ չեղած, դեռ թշվառական դրագունների օրհասից մի շաբաթ առաջ, Արագածոտնյան և Արարատյան դաշտի բոլոր հայերը գիտեին իրենց դրացիների նենգավոր խորհուրդը և իրանք էլ իրանց կողմից պատրաստվեցան։

Հենց այս ճգնաժամերի մեջ մեր հերոս Բղդեն, արհամարհելով ամեն արհավիրք, մի կողմից յուր ցորենառությունն էր շարունակում, մյուս կողմից հանգիստ չէր տալիս ջհուտ Աղաջանին։

Աղաջանը բացասական պատասխան էր ուղարկել Բղդեին տեր-Հակոբի բերանով, անարգել էր յուր հոգատարությամբ հացի տեր եղած շարշու ապերախտությունը և շտապում էր, վերահաս փոթորիկներն անցնելուն պես, պսակել յուր աղջկանը։

Բայց Աղաջանի բարկությունը կրկնապատկվեց, երբ մի երեկո յուր փեսա Սահակը հանկարծ ներս բերավ քաշկոտելով մի պառավ կնոջ։

Սահակը պատմեց, որ այս կնոջը բռնել է Աղաջանի շեմքի տակը փորելուս։

Կինը Տուտուն էր. նա յուր բերած թլիսմներն էր գործ դնում։ Պառավն այլևս թույլ չտվեց իրան խուզարկելու, յուր ձեռքով հանեց երեք կախարդական փաթեթները և դրեց Աղաջանի առաջը։ Նա ոչ միայն խոստովանեց յուր մասնակցությունն այս գործի մեջ, ընդհակառակն, հավատացրեց, որ ինքը մեղադրել է Բղդեին և մորը իրանց անխիղճ վարմունքի դեմ, որ չվախենալով աստվածային արդար բարկությունից, ուզում են սատանայական հմայություններով երկու տարվան նշանը քանդել։

Տուտուն կծու երդումներով հավատացրեց, որ ինքը մտադիր է եղել անձամբ թլիսմի փաթեթները Աղաջանին ներկայացնել, բայց եթե այդ նա չի արել և միանգամից դուռը չի բացել ու ներս եկել, այդ այն հարգելի պատճառով է եղել, որ ինքը՝ Բղդեն դրացու պատի տակից հսկում էր ու վերահասու էր յուր գործողությանը։

Աղաջանը պատառոտելով թլիսմի գրերը՝ սպառնաց Բղդեին Տուտուի ձեռքով, որ եթե նա ձեռք չի քաշիլ յուր հիմարություններից, ինքը ստիպված կլինի դիմել ավելի զսպիչ միջոցների։

— Այնքան ծեծել կտամ քեզ,— ապսպրանք արեց Տուտուի ձեռքով Աղաջանը Բղդեին,— որ շաբաթե շաբաթ կգժվես։

Տուտուն վերադարձավ և տասնապատիկն ավելացրած՝ պատմեց Բղդեին, ասելով, թե յուր անձը կապուտ լեղակ է դարձել Աղաջանի և յուր փեսացուի մահակներից։

Լալով պատմեց Տուտուն, թե չոքել համբուրել է Աղաջանի ոտքը, համաձայնել է սիրով կրել ամեն տեսակ ծեծ ու պատիժ, միայն թե իրան դարձնեին յուր ծոցից հանած թլիսմը, իբր թե ինքը կամեցել է հավատացնել, թե այդ թղթերը ոչ թե սիրահարական հուռութքներ էին, այլ յուր որդու գլխացավի գրերը։

— Աղաչեցի, գլուխս ոտքի տակին մատաղ անել խոստացա,— շարունակեց Տուտուն,— բայց ի՜նչ օգուտ, ուշաթափվեցա, փոքր մնաց խելքս կորցնում էի, երբ հանկարծ երեք փաթեթների բոցը լուսավորեց մութ տունը, օջախի մեջ վառվող կրակը մի րոպեում լափեց իմ դառը քրտինքի արդյունքը։

— Շա՜տ լավ,— գլուխը թափահարեց Բղդեն,— տեսնենք, թե ո՞վ ումնի՞ց վրեժ կառնի։

Բայց ոչ Աղաջանն յուր սպառնալիքը գլուխ տանելու ժամանակ ունեցավ, և ոչ Բղդեն կամեցավ շուտով յուր մտքումն հղացած խորհուրդը իրագործել։

Ի՞նչ մանր և չնչին կրքեր հագեցնելու միջոց էր, երկերն արյունը վերցրել էր։

Դեռ նոր բերանից բերան թռչում էր դրագունի գնդի կոտորումի լուրը, ահա Արագած լեռան հյուսիսային հայ գյուղերը սասանեցան։

Արագածի արևմտա-հյուսիսային սահմանամոտ հայ գյուղերում քրդի հրոսակներն իրանց համայնքների գլխավորների առաջնորդությամբ օսմանյան դրոշակը տնկեցին և հպատակության խոստումն առան։

Քրդերից խրախուսված մեր պարսիկ դրացիները խմբավորվեցին և հարձակվելու պատրաստվեցան։ Ընչասիրության քաղցը այնքան ուժգին էր նոցա մեջ, որ էլ չսպասեցին օսմանյան դրոշակին և թնդանոթին, այլ խմբակներով հարձակում գործեցին այս և այն գյուղերի վրա։

Բայց որովհետև, ինչպես ասացինք, հայերն էլ իրանց կողմից պատրաստ էին, ամեն տեղ պարսիկներն անհաջողությունի հանդիպեցան և ետ ընկրկեցին։

— Կատաղի էին դարձել հայերը. տասն և վեց տարեկանից մինչև ամեն տղամարդ, բացի դաշույնից, մի քանի կրակ ուներ վրան։ Սիրելի էր տեսնել, թե ինչպես երեկվան խաղի գնդակով զվարճացող պատանին այսօր մի երկու ատրճանակ գոտկածալումն ամրացրած, մի ծանր հրացան էլ ուսին դրած, ցորեկ ու գիշեր հսկում է հերթով գյուղի շրջակայքում։

Հրացաններից շատերը սեփական էին, մի մասն էլ ստացել էին պետությունից։

Ունեցողներին տերությունը զենք, վառոդ և գնդակ էր ընձեռել։

Յուրաքանչյուր գյուղ յուր ամուր ու ապահով մասում ժողոված յուր ընտանիքը և երեխաներին, պաշտպանվում էր։

Ամեն գյուղ յուր գլխավոր հրամանատարը, յուր հիսնապետներն ու տասնապետներն ուներ. ամեն մեկի պաշտոնը որոշ էր և հայտնի։

Բացի մասնավոր անձնապաշտպանությունից, մերձավոր գյուղերը միմյանց փոխադարձ օգնություն հասնելու ուխտ էլ արել էին։

Կարբու հիսնապետներից մեկն էր ջհուտ Աղաջանը։ Նորան ստորադրյալ էր ուրիշների կարգում և յուր փեսա Սահակը, իսկ Կարբու ընդհանուր հրամանատարն էր ինքը՝ յուր սիրելի հոտի անձնադիր հովիվ, քաջասիրտ տեր-Հակոբը։

Միակ բացակա անդամը Կարբու բնակիչների մեջ էր Բղդեն, որ իբրև պաշտոնական անձն, իրավունք չուներ մասնակցելու համայնական պարտակատարություններին։

Մի քանի գիշեր Բղդեն էլ Կարբի չէր գալիս, ոչ ոք էլ հետաքրքիր չէր լինում իմանալ նորա գիշերելու տեղը։

Միայն Սալբին, իբրև մայր, հոգվոց էր քաշում յուր որդու տեսքը

կարոտած։ Նրան էլ մխիթարում էր յուր դրկից Տուտու նանը՝ օրական մի քանի անգամ գալով նորա մոտ քթախոտ քաշելու։

Մի երեկո վերջնալուսից հետո, մինչ գյուղապահ զինակիրները դեռ նոր դուրս էին եկել իրանց հսկողության պաշտոնը կատարելու, Կարբու արևմտա-հյուսիսային կողմից երեք ձիավոր կամեցան Կարբի մտնել։

Գիշերապահության հերթը ջհուտ Աղաջանի խմբինն էր։ Աղաջանը դեռ տանից չէր եկել, նորա տեղը կառավարիչ էր ժամանակավորապես յուր փեսացու Սահակը։

Վերջինս, տեսնելով հեռվից սավերները, կարգի հրավիրեց յուր խմբին և գոչեց.

— Ո՞վ եք, մի՛ մոտենաք, ապա թե ոչ գնդակահար գետնին կգլորվեք։

— Ես եմ, Սհո եղբայր, երկյուղ մի՛ կրիր,— ձայն եկավ դիմացից։

— Իսկ ուղեկիցներդ ո՞վ են,— կրկին հարցրեց Սհոն։

— Իմ ձիավորներն են։

— Իրավունք չկա գյուղը թուրքեր տուն թողնել. եթե ուզում ես գալ, պետք է գրանց ետ դարձնես։

Դեռ հանդիպից պատասխան չստացած, Սհոն մի մարդ վազեցրեց յուզբաշու ետևից։

Յուզբաշի կոչվում էր խմբապետը։

Այս խմբի յուզբաշին գիտենք որ Աղաջանն էր։

— Դու մի՞թե ինձ չճանաչեցիր, Սհո եղբայր,— կրկին ձայն եկավ հակառակ կողմից շատ ուշ։

Երևում է, որ եկվորների մեջ մի կարճ խորհրդակցություն էր կայացել։

— Առաջին անգամից ճանաչեցի, պ. Բաղդասար,— պատասխանեց Սհոն,— բայց եթե հետիոտ մարդիկը թուրք են, իրավունք չունեմ առանց յուզբաշու հրամանի ներս ընդունել։

Մինչ այս, մինչ այն՝ Աղաջանը ձին հեծած եկավ և, իմանալով գործի էությունը, առաջ կանչեց Բղդեին յուր ընկերներով։

Գիշերը պարզ էր. լուսինը 18 օրական լինելով շատ ժամանակ չէր, որ յուր աղոտ փայլը սփռել էր աշխարհքի երեսին, բայց լուսնի լույսը բավական էր հայտնի կացուցանելու Բղդեի ձիավորներին։

Նոքա էին Արագածի լանջի վերա գտնված Ք. գյուղի բեգզադեքանցից երկուսը, որոնք որքան և ազնվատոհմ, բայց մաքսապան ավազակների համարավ էին հանել ամբողջ գավառումը։

Բղդեն Աղաջանին բարև տվեց և մոտ եկավ։

— Որտեղի՞ց այս կեսգիշերին,— սառնությամբ հարցրեց Աղաջանը։

— Գյուղից մի քանի խալվար ցորեն էին պահանջել, Թալինի կողմովը ճանապարհ դրի և վերադարձա։

— Իսկ սրանց ընչո՞ւ ես քեզ հետ շրջեցնում։

— Թալինցի ձիավորների հետ եկա մինչև սրանց գյուղը, նրանց վերադարձրի և սրանց հետս վերցրի։

— Եվ երկյուղ չկրեցի՞ր։

— Ընչի՞ց և ումնի՞ց։

— Իբր թե դու աշխարհքից տեղեկություն չունիս, որ օսմանցին ռուսին ետ է քշել, քուրդը Թալինի գավառն է մտել, սարի վրայի պարսիկ գյուղերն էլ պատրաստվել են մեր վրա հարձակվել։

Բղդեն երդվեց, որ ինքը Թալինի կողմից ցորենը ճանապարհ է ձգել յուր հսկողությամբ, թե մի քանի օր է, ինքը թուրք ու հայ գյուղերում շրջում է և ոչինչ վտանգ կամ շփոթ չի նկատել։ Ապա դառնալով յուր ուղեկիցներին, ասաց.

— Տղե՛րք, տեսնում եք մեր հայերի պատրաստությունը, չլինի՞ թե հիմարանաք, մտքներովդ չարություններ անցկացնեք, եթե ուրիշներն էլ չլինեն, մեր Սհոն հերիք է ձեզանից տասին գնդակախորով անել. տեսնո՞ւմ եք, ինչպես գեղեցիկ զրահավորված է, լավ տնտղեցեք սորա դեմքին ու հասակին, ինքը նշանած տղա է, մուրազի վրա է, մի քանի օրից փափագին կհասնի. մեր յուզբաշի Աղաջանի փեսացուն է։

— Աստված տա, աստված տա,— կրկնեցին թուրքերը,— կորիճ տղամարդ է երևում, ջիվան է, ջահել է։

— Առանց շատախոսության վերադարձրու թուրքերիդ և ինքդ գնա քո տունը,— խստությամբ պատվեր արձակեց Աղաջանը։

— Տղե՛ք,— ձայն տվեց Բղդեն,— յուզբաշի Աղաջանը նեղանում է, որ դուք գովությամբ եք խոսում յուր փեսացուի վերա, բավական է, շնորհակալ եմ, կարող եք վերադառնալ ձեր գյուղը։

Թուրքերը գիշեր բարի մաղթելով ետ գնացին, իսկ Բղդեն մտավ Կարբի և իջավ յուր տունը։

— Դու քո հացը կերար, յուզբաշի Աղաջան, քո փեսա Սհոյի հետ միասին, Ալին ու Մահմադ-Վալին այսուհետև ականակիր խավարի մեջն էլ կարող են հարյուրավոր մարդկանց մեջ որոշել քեզ ու քո փեսին. եթե էս գիշեր չհաջողեցրին, էգուց կամ էլօր երկուսիդ արևն էլ մեր կմտցնեն, դեղին ոսկիքը ձեր ուղուրին են նրանց դրպանը մտել. էն ժամանակը, Շողիկ ջան, լոքելոք ոտս կգաս։

ՈՒՐ ՁԱՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՊԱՏԻԺ Է ՄՆՈՒՄ

— Մողնին տարա՞ն, սուրբ Գևորգը քանդեցի՞ն։

Ահա այն բոթատու լուրը, որ փոթորկալից քամու նման խոովեց առանց դորան էլ անհանգստության մեջ ծփացող և մոլորված Մողնին շրջապատող հայ գյուղերը։

Աշտարակ՝ հարավից, Կարբի՝ հյուսիսից և Փարպի՝ արևմուտքից, երեքից առաջին երկուսը զուտ հայաբնակ, վերջինը՝ հայ և թուրք խառն մի գյուղ։

Վերջինիցս օգնություն սպասելն ավելորդ էր. վաղի առակի պես՝ քաշալը դեղ իմանա, յուր գլխին կանի, ինքը աշնան տերևի նման դեղնել է սեփական անհավատարիմ դրացիներից, երկյուղից մի աննշան հողմիկի հարվածը բավական է նրան սարսափեցնել. իսկ առաջին երկուքը նույնպես փրանց գլխի ճարը տեսնելու հոգսերումն են. հետևաբար, ժամանակ չէին կարող ունենալ ուշադիր լինել գուժաբերների ձայնին։

Սխալ ենթադրություն է. հայը խաղաղ ժամանակ մոռացկոտության ենթարկված անտարբեր է դեպի ինքնաճանաչության վսեմ զգացմունքը, իսկ նեղության ժամանակ նա գիտե անձնազոհ գտնվել, արհամարհել ամենայն դժվարություններ, տանջանքներ, մահ, մանավանդ երբ վտանգը սպառնում է յուր դարավոր նվիրականություններին, յուր կրոնին, յուր ազգային սրբություններին, յուր եկեղեցվույն։

— Մողնին տարա՞ն, վանքը քանդեցին։

Հերիք էր այս երկու խոսքը գիշերվան թանձր մթության մեջ հաստներ մի աշտարակցու, կարբեցու, մի հեռու կամ մոտիկ հայի ականջին և սպասելու էր այն, ինչ որ կատարվեցավ։

Գուլժը տարածողը վանահոր կողմից ուղարկված մողնեցիք էին։

Մողնի գյուղում գտնված սուրբ Գևորգա վանքը թեպետ մեծ և հրաշակավոր ուխտատեղի է և նորա ուխտի ժամանակ, գլխավորապես աշունքը, տասնյակ հազար ժողովուրդ հինգ-վեց ավուր ճանապարհից խռնվում են լիզել հինավուրց մենաստանի քարերը, բայց նա չունի մեծ միաբանություն։

Հասարակ օրերի մշտակա վանականները մի վարդապետ է վանահայր անվամբ, մի պառավ տնտես կին է, որ հայր սուրբի համար պարզ և անպաճույճ կերակուրներ է եփում, նորա փոխարեն է լվանում և վանքին մատաղ բերած երկու-երեք կովերն է թթեմ մի Մշու երկրացի՝

հայրենիքից փախած վանքի չորս պատերի մեջ պատսպարված անվարժ մշակ է, որ ամառները գոմի դռանն է խորթում, հոգնած ու ջարդված դաշտիցը վերադառնալուց հետո և ձմեռը գոմի օդայումը մրափում, լվերի մեջ խմփացնում և մի պատանի մոնթ է՝ վարդապետի ազգականներից կամ ծանոթներից, որ հատուկ նրան աշակերտելու և ծառայելու համար եկած էր։

Ուրեմն ընդամենը չորս կամ առավելն վեց հոգի են, որոնց վճռված է վանքի լայնատարած բակի մեջ ապրել և վանքի պաշտպանությանն իրենց անձը նվիրել։

Սոքա միայն են և ուրիշ ոչ ոք, որ տարին բոլոր ընդունում են և պատվով ճանապարհ են դնում վանքն այցելող հայ և օտարազգի ուխտավորներին, սոքա են սուրբ Գևորգա թանգարանի, մասունքների և սրբազան անոթների ավանդապահները։

Ո՛չ պարսկական բռնակալ իշխանության օրերում և ո՛չ մեր ժամանակները լսված չէր, որ սակավաքանակ վանականները վտանգի ենթարկված լինեին։

Ճիշտ է, վանքը շրջապատված է քառակուսի հաստահիմն պարսպով, դեռ մի ուրիշ ամուր պատնեշ էլ բաժանել է բակն արտաքին և ներքին մասերի, բայց այդ ամրությունները ոչինչ նշանակություն չունեին հրոսակների հարձակումների դեմ, եթե մի երկու տասնյակ ձիավոր մտադրվեին խրամատել պարսպի մի պատը և ներս խուժել վանքի բակը, դժվար չէ նմանապես կրնկահան անել երկփեղկյա դռները։

Չէ, մտածելն անգամ հանցանք էր։

Սուրբ Գևորգա հրաշագործության հռչակը սարսափ էր ներշնչել դրացի անքրիստոնյա մահմեդականին և քրդին, որ սակավ անգամ պարսկի մոլլեն կենդանի մատաղով սուրբ Գևորգա դուռն է եկել, մոմ է վառել և գանձանակ է տվել, ընչի՞ց կամ ումնի՞ց, ապաքեն, պետք է երկյուղ կրեին վանքցիք կամ ինչո՞ւ կասկած կտանեին, թե մի օր ստահակ մարդիկ կարող են իրենց դարավոր սովորությունները ոտնատակ տալ, կարող են հանդգնել և պիղծ ձեռներով մոտենալ մեծահամբավ սրբավայրին։

Եթե այս հարգելի և ծանրակշիռ հանգամանքները չլինեին, ո՛չ վանքի հարավային պարսպին կից 15 տուն Մողնի գյուղն յուր մի քանի քաղցած ու տկլոր անհոգ գյուղականներով և ո՛չ նույն ինքը վանահայրը, այս երկյուղալի ժամանակին, այսքան ապահով ու անվրդով կլինեին։

— Հայր սուրբ, հայր սուրբ,— բախում է սպասավոր պատանին վարդապետի մենարանի փակած դուռը կնոջիշերին։

— Անիծյա՛լ, ի՛նչ ես անհանգիստ անում, դեռ կեսգիշեր չկա, ի՞նչ ժամի ժամանակ է, որ զարթնացնում ես, քեզ համար սովորություն ես արել, չես թողնում մի քիչ քնենք, ես այս առավոտ ժամ չեմ գալու, եթե քամենում ես, ձայն տուր բաշի գլխից տեր-Բարսեղին, թող գա ժամն ասա։

— Զարթի՛ր, հայր սուրբ, ժամի համար չեմ քեզ վերկացնում, դեռ կեսգիշեր էլ չի եղել։

— Ուրեմն ի՞նչ ես գլուխս ցավացնում։

— Չե՞ս լսում դրսի դռան բախումները, վանքը պատել են, թուրքերը դռները ջարդում են։

— Իրավ, այս ի՞նչ թխթխկոց ու շառաչյուն է,— վեր ցատկեց հայր սուրբը և անմիջապես մի խելացի կարգադրություն արեց։

— Եթե թշնամին հարձակումն չի գործել գյուղի վերա,— հրամայեց վանահայրն յուր փոքրավորին,— իջիր պատովը, զարթնացրու տերտերին և մի քանիսին, իսկույն ուղարկիր Աշտարակ, Կարբի ու Փարբի՝ օգնություն խնդրելու, վնաս չունի, դռներն ամուր են, մանավանդ միջի դուռը երկաթապատ է, մինչև տեղահան անելը, օգնությունը վերա կհասնի։

Պատանու ուղարկած մողնեցիք էին, որ մի շնչի վազելով շփոթ ձգեցին վերոհիշյալ գյուղերը։

— Շո՛ւտ, քաջ եղբայրնե՛ր,— կարգադրեցին հսկող յուզբաշիքը,— գյուղը հավար ձգեցե՛ք, թո՛ղ բոլորեքյան զենք վերցնեն, մի մասը գյուղը պաշտպանեն, մյուսը զինավորված՝ շտապեն Մողնին պաշտպանելու։

Հայր սուրբն ուղիղ դատեց. վանքը կողոպտող հրոսակները, թվով հիսունի չափ, դեռ նոր քանդել՝էին պարսպի արտաքին պատը և սկսում էին խոռել գոմի պատը, որ միակ հարմար տեղն էր ներսի բակը մտնելու համար, երբ Աշտարակու և Կարբու սպառազինված ձիավորները, կրակ կարած, միաժամանակ վրա հասան։ Քիչ միջոցից մի քանի փարբեցիք էլ հասան։

Շփոթն ընկավ թուրքերի մեջ։

Քանդած պատի մոտ պահապան կարգած ձիավորներն իմաց տվին իրանց ընկերներին օգնություն եկողների մասին, և ավերիչները ետ գարձան։

Հայերը մնացել էին մոլորված, դրսի դուռը փակ էր, Հարավային գոմի պարիսպը և Մողնի գյուղը նույնպես անվնաս, իսկ վարդապետն ու մողնեցիք խցերի կտերը աղաղակ ու գոռոցներ էին հանում։

— Հայր սուրբ,— ձայն տվեց աշտարակցի յուզբաշի ավչի Փիլումը,— ո՞ւր են թշնամիքը։

— Օրհնյալ լինիք, քաջ զավակնե՛ր, թշնամին ներս է լցվել արդ

վելյան կողմից պատը քանդելով, ի սեր աստուծո դուք զգույշ եղեք, չի-նի թե հանկարծ կովի բռնվիք, նորա ձեզանից կրկնապատիկ ավելին են, ես վերնահարկի լուսամուտից լավ դիտեցի։

Փիլումը փորձառու զորավարի նման յուր վերա առավ ընդհանուր հրամանատարությունը և յուր գունդը, եթե կարելի է այսպես ասել, երկու բաժանեց. կարբեցիներին և փարբեցիներին գյուղի տակովն ուղարկեց պարսպի արևմտյան կողմը փակելու, իսկ ինքն յուր խմբովն անցավ արևելք։

— Ես ինքս ներս կմտնեմ բակը,— կարգադրեց Փիլումը,— և մի երկու գնդակ կարձակեմ դեպի թուրքերը, շփոթ կբարձրացնեմ. եթե թշնամին հանդգի անուշադիր գտնվել և կամենա վանքի ներսի բակը մտնել, մենք ետևից ջարդ կտանք, իսկ եթե փախուստ տալու լինի, թույլ տվեք առանց արյուն թափելու հեռանան։

Փիլումի կարգադրությունը զուր անցավ։

Հանկարծ մեկմեկու ետևից դուրս թափվեցին թուրքերը և վախկոտ նապաստակի նման կորչում էին իրենց որսորդների ձեռքից։

— Ո՛չ մի գնդակ զուր տեղը չկորցնեք,— ուզում էր հրամայել Փիլումը, բայց խոսքը բերանին մնաց, փախչողների միջից մի հրացանի պայթյուն լսվեցավ. գիշեր էր, գնդակը կրակ կտրած շեշտվեց դեպի կարբեցոնց խումբը։

— Ես ընկա, տղե՛րք, վրե՛ժ առեք,— ձայն տվեց առաջապահ ձիավորը և գլխիվայր ձիուց գետին ընկավ։

— Ո՞վ էր ընկնողը,— գոչեց Փիլումը և, դեռ յուր պատասխանը չստացած, ինքն յուր հրացանն ուղղեց դեպի գնդակը դուրս թռած ուղղությունը։

— Աղաջանն էր, մեր յուզբաշին,— լսվեց կարբեցոնց կողմից։

— Վրե՛ժ,— առյուծի նման մռնչաց Փիլումը,— քամակիցս եկեք, սպանենք, բրդենք և ոչ մի թուրքի չթողնենք կենդանի ետ դառնա։

— Յալլա՛, սուրբ Գևորգը մեր կռանը կենա,— գոչեցին բոլորեքյան և Փիլումի հետ առաջ մղվեցան։

Գնդակների շաչյունը և փայլը գիշերվա խավարի մեջ նմանվում էր դարբնոցի սալի վրայից դուրս ցայտած կայծերի, երբ կռանահարները հաստակուռ մուրճերը կարգով զարկում են հրաշեկ երկաթին։

Վերջապես լռությունը տիրեց, էլ ձայն ու ձուն չի լսվում, էլ ձիանոց դոփյուն ու դրոփյուն չկա։

Տեղը մնացին երկու-երեք թուրքեր, որոնք Փիլումի և ուրիշների գնդակներից Մահմեդի արքայությանն էին վերափոխվել։

— Բավական է, տղա՛յք, վերադարձեք ամենքդ ձեր գյուղերը,—

կարգադրեց Փիլումը,— սպանվածներն էլ թող տեղն ու տեղը մնան, եթե իրանք չտանեն, էգուց մենք նաչալնիկին իմաց կտանք։

Մեր տղայքը Փիլումի տնօրինությամբ վերադարձան։

Ոչինչ բանով կարբեցիք չհամաձայնվեցին Աղաջանի մարմինը թողնելու Մողնումը. հայր սուրբը շատ հորդորական խոսքեր ասաց, բայց հնար չեղավ։

Կարբեցիք իրանց մեռյալը կապեցին ձիու վերա ու մեծ սգով ետ դարձան։

Հավատարիմ կենդանին յուր տիրոջ մարմնի մոտից չէր հեռացել։

Կարբու և Մողնու միջասահմանումը, Քասախի քարքարոտ ափի մոտ, ճանապարհից մի քայլ հեռու, գտնվում է Մողնու սուրբ Գևորգա նախկին վանահայրերի ու միաբանների գերեզմանոցը։

Նույն տեղումը, սրբակյացների շիրիմներից դեպի արևելք, այսօր գույգ կանգնած են իրար մոտ երկու բարձրադիր, մամռապատ «ձիաքար» կոչված տապանաքարեր։ Եթե հիշողությունս ինձ չի դավաճանում, դամբարաններից մեկի վերնագիրն է ուստա Մուրադինը։

Ավանդությունն այսօր էլ Մուրադին ընդունում է սուրբ Գևորգա հրաշակերտ վանքի կառուցանողը։ Մյուս տապանը վերագրվում է քաջահմուտ վարպետի ուշիմ աշակերտին։

Մի փոքրիկ «սև չալու» կամ «դժնիկ» կոչված փուշ, չեմ սխալվիլ, եթե ասեմ, դարերով անջյտել և կրկին շաղկապել է միմյանց հետ այդ երկու հիշատակարանները, որոնք առանձին խմն պատկառանքով գրաված են տեղացիների քաղցր համակրանքը։ Ամեն ոք սրբազան պարտավել են տեղացիների քաղցր համակրանքը։ Ամեն ոք սրբազան պարտականություն է համարում անձին, այնտեղից անցկենալուս, հիշել Մուրադին և յուր աշակերտին, և «աստված ողորմի սրանց հոգվույն» խոսքերի հետ պատմել յուր ուղեկցին վարպետի և աշակերտի նահատակության հետաքրքիր պատմությունը։

Անցքը շատ կարճ է. Մուրադը հոգվով և սրտով սիրելուս է եղել յուր աշակերտին՝ նորա մեծ ընդունակության և հմտության պատճառով, նորա ասությամբը, աշակերտն յուր աջ կուռն է եղել։

Վանքի մեծ կաթողիկեն կառուցանելիս, աշակերտի ոտքը սահում է, և նա վայր ընկնելով մեռնում է։

Զարաղետ դժբախտությունը Մուրադին բարոյապես ընկճում է. նա հուսահատվում է, ոգևորությունը կորցնում է և չի կամենում շենքը շարունակել։ Մուրադը, վանահոր և ուրիշների թախանձանքներին գիջանելով, վերջապես մի քանի օրից հետո ավարտում է գմբեթը և վերջին քարն ամրացնելուց հետո, ինքն իրեն գահավեժ ցած է գլորում այն բարձրությունից։

Վախճանը բոպեական է լինում։

Մուրադի վերջին խոսքն այս է լինում. «Ի՞նչ կարող է գործել, գործել ձախ ձեռքն առանց աջի»։

Հազիվ վանքին օգնության եկած գարբեցի ձիավորները հասել էին Մուրադի գերեզմանի հանդեպը, որ ամպերի պատռվածքներից լուսնի լույսով նշմարեցին նրանք վարպետի և աշակերտի տապանների արանքին փշի թփի ստվերումը շարժվող մի էակ։

Բստինենց Սահակը անհեռատեսությամբ ձին առաջ վարեց եղելությունը ստուգելու։

— Որսն յուր ոտքովն է գալիս, Ալի՛ բեգ, գործերս հաջող է գնում, Մողնումն Աղաջանի գլուխը խաշեցինք, փեսացուն էլ հիմի իմ գնդակին մատաղ կլինի, և մենք մեզ խոստացած ոսկիքը վաղ գրպաններս կլցնենք. խոջեն խոսքին տեր մարդ է։

Այս խոսքերի հետ միասին Մուրադի գերեզմանաքարի տակից գլուխը բարձրացրեց մեկը և հրացանն ուղղեց դեպի Սահակը։

Գնդակը փշրեց Սահակի ձախ ուսագլուխը։

— Դավադրություն, մեր տղերք,— գոչեց Սահակը և ուշքը չդարձրած յուր վերջին, ատրճանակով փոխադարձ մահացու հարված տվեց հակառակորդի ուղիղ կրծքի մեջտեղից։

Թուրքն անշունչ տարածվեց գետնին։

Նույն այդ միջոցին աշակերտի գերեզմանաքարի ետևից մի ուրիշ գնդակ արձակվեց դեպի Սահակը։

Հարվածն անհաջող տնցկացավ, գնդակը շաչյունով սլացավ Սահակի գլխավերևով։

Դարան մտած մարդը տեղից կանգնեց և կամենում էր թուրը պատյանից դուրս քաշել։

Սուրը մնաց կիսահանիլ։ Կարբեցիներից մի կտրիճ երիտասարդ հայհոյական խոսքերով առաջ մղվեց ու քրդական կեռակառուց սրով դպվածանին խոր խոցեց մինչև թոքերը։

Շոգենավի հատվածական փոնչոցի նման դուրս էր փչում արյունը, շնչառության հետ միասին, գլորվելով լայնաբերան վերքի ճեղքից։

Անրակի ոսկրի կեսը մնացել էր պարանոցին կպած, մյուս կտորը կուռն հետ ետ էր ընկել։

— Աղա Մողնի՞ն... մեր պատիժը... ավեց... Մահմադ-Վալի բեգ... նա կպատժի և մեզ գրգռելն... ախ... խաչա...

Խոխոջը մեռմացավ, երամնչյուն և կիսավարտ խոսքերը ասողի բերանում սառեցին։

Մինչ այս, մինչ այն, կարբեցիք գրկել իջեցրել էին ձիուց Սահակին և մեջքը գերեզմանաքարին դեմ տված՝ աշխատում էին դադարեցնել վերքից դուրս թորած տպաժույժ արյունը։

— Դավադրություն, տղերք,— ուշակորույս կրկնեց մի քանի անգամ Սահակը,— այս սպանվածներին ես ճանաչեցի... սրանք երեկ գիշեր մեր գյուղի կողքից ետ դարձան... մի վատ մարդի մատը խառն է այս անբախտության մեջ...

Սահակն այլևս չկարողացավ շարունակել. նրա ուշքը գնաց, նա հազիվ ծանր շնչում էր։

Անկարելի էր Սահակին ձիու վրա նստեցնել։

Երիտասարդներից մի ուժեղը առաջարկեց յուր ծառայությունը։ Վերջը խնամքով պատած, Սհոյին դրին այս տղայի շալակը և ամուր կապած, առան գնացին։

Թուրքերի մարմինը մնաց գերեզմանոցումն ընկած։

Գավառական վարչությունը մյուս օրն ամեն տեղ որոնել տվավ և չգտավ ոչ միայն այս երկու սպանվածներին, այլև փախչող բազմության միջից ընկնողներին։

Շատ շուտ լուր տարածվեց, թե վարչությունը հենց երկրորդ օրը բացել է սպանվածների հետքը։

Ազաջանի մարմինը հողին հանձնվեց առանց աղմուկ բարձրացնելու։

Նորա փեսացուն շարունակում էր կռիվս տալ կյանքի հետ։

Անկայուն գրությունը կարճատև եղավ. տոհմիկների հաշիվները ոչնչով դուրս եկան։

Բեհբուդովը մի անօրինակ քաջագործություն արեց, սակավաթիվ զորքով մի հանդուգն հարձակում գործեց նա թշնամու անթիվ բանակի վրա և ցրիվ տվեց։

Օսմանցին կրկին ետ փախավ, Կարսումը փակվեց։

Շատ չքաշեց, նա Կարսից էլ դրկվեց։

Բեհբուդովը Կարսն առավ, հանձնեց իրան հաջորդող նոր հրամանատարին և ինքը վերադարձավ հանգիստ առնելու...

Ցոամյա պատերազմից հետո նոր հրամանատարը կապեց հաշտության պայմանը և խաղաղությունը վերականգնեց։

Կարսը դարձյալ ետ տրվեց յուր նախկին տիրապետող օսմանցուն։

Հիսնական թվականների արևելյան պատերազմի վառ կրակը տրտնավ առժամանակ մոխրակույտի տակ անթեղվեց (ծածկվեց), թաղվեց։

Իմ դրախտի բաժին մայրիկս էլ նույն հնարքն էր գործ դնում. առաջին օրը թոռների խոտքումը մոխրի մեջ թաղում էր կրակի կտորները, որ-

պեսզի մյուս օրը բաց անի, չորացած խոտիվներ դարսի վրան, կրակն ավելի ուժգին բորբոքի ու մեզ համար անուշ-անուշ կերակուրներ պատրաստի։

ԼԱ

ԵՐԵԿ ԵՎ ԱՅՍՕՐ

Գոռ պատերազմն իրանից հետո բերեց մեզ խաղաղություն և անհավատալի արմատական հեղաշրջություն. ամեն բան, ամենն կարգ ու կանոն գլխիվայր շրջվեցան և հիմնական փոփոխության ենթարկվեցին. սովորական կյանքի և կենցաղավարության մեջ այնպիսի զարմանահրաշ նորոգություններ կատարվեցին, որ լսողի անձն է սարսափեցնում. ետ մնացին նշանավոր հարուստ տներ ու վաճառականներ և առաջ եկան անհայտ ու կորած մոլորածներ. ո՛չ միայն քաղաքները բարեզարդվեցին, գյուղերի մեջ ևս հին-հին գետնափոր որջերի փոխարեն մինը մյուսից հետո բուսան փառավոր շենքեր ու շինություններ, ռամկի միջից մեծ-մեծ ձեռնարկություններ սկսեցին աննշան տնձնավորություններ և անընդունակ համարված ու արհամարհված մարդիկ։

Ամենեքյան հավատացած էին, և բնական էր, որ խաղաղության հետ միասին կյանքի պայմանները կամ նույնն էին մնալու, կամ շատ չնչին զանազանության տակ պետք է ընկնեին, բայց, դու ո՛չ մեռնիս, այնպիսի խառնակություն և բաբելոնյան աշտարակաշինություն կատարվեց ամեն հանգամանքներում, որ հավատ ընծայելը միևնույն էր, թե հոգին սևացնել։

Կարճ միջոցում բուն ազգային ավանդական սովորությունները, ապրուստի եղանակը, լեզուն, նիստ ու կացը, նահապետական դարերով սրբագործված և արյունի մեջ մակարդված ծերերի պատվապահությունը, ծնողատիրությունը, պարզ սակավապետությունը, եղբայրական անբաժանությունը, մինչև անգամ հագնելիքի և ուտելիքի տարազն ու գները միանգամայն, կարծես, մի սատակիչ հրեշտակի սրի առաջ դուրս վռընդվեցին և նոցա տեղը պատվաստվեցին կյանքին, տեղական պայմաններին, երկրի դիրքին խորթ ու օտարոտի նորություններ։

Մինչև պատերազմը՝ ցորենի խալվարը (30 փութ) երեք մանեթից եթե չորսի էր բարձրանում, սով և վերնային պատիժ էր համարվում, պատերազմի ժամանակ քառասուն մանեթի հասավ, ամենքի բերանը բաց թողեց, ամենքին շվարացրեց, իսկ կռիվը վերջանալուց հետո քսան և հինգից ցած չիջավ և թանկ չէր թվում։ Պանիր, յուղ, բրինձ, միս, հավկիթ գին չունեին. պանրի լիտրը (12 գրվանկա), հիշում եմ, երկու շուրուկ աբասի էր (աբասին վեց կոպեկ հաշվեցեք). յուղի լիտրը՝ 2000 դեռն (60 կոպեկ), բրինձը նույնպես երկու շուրուկ աբասուց չէր բարձրացած, ձվի հարյուրը՝ երեք շահի կես, որ այսօրվա հինգ կոպեկն է։ Պատերազմը դադարեց՝ յուղի լիտրն երկու մանեթ դարձավ, բրինձ ու պանիրը 40 կոպեկ եղան, ձվի հարյուրը՝ 20—25 կոպեկ, և ոչ ոքի ապշություն չէր պատճառում։

Այն օրից ցայսօր, ահա, ամեն բարիք կրկնակի և եռակի սուղ են, և մեզ համար տանելի ու սովորական են թվում։

Չգիտեմ, կընտելանայի՞ն, մեզ պես, կարճ ժամանակում այս փոփոխությանը մեր այն պապերը, որոնք իրանց կրած նեղություններն և դժվար ապրուստը նկարագրել են իրանց գերեզմանաքարերի կամ եկեղեցիների պատերի վերա։ «Ես հարյուրը մի փող ձու առա, տուն պահեցի, թող պարծենա՝ ով այսուհետև կարողանա աշխարհքումն ապրել և ընտանիք կառավարել»։

Միամիտ և պարզ մարդիկ, իրանց հարյուր փողը՝ ո՞վ գիտե, մեր շահու կամ դահեկանի քանի հարյուրերորդական մասն է. եթե փողը հաշվենք ներկա տաճկական փարան, որ կոպեկի ութերորդ բաժինն է, այն ժամանակ մեր երջանիկ պապը մի կոպեկով ութ հարյուր ձու է վայելել և տրտնջացել ժամանակի սղության վերա։

Վերջապես բարեբախտ էին նոքա, որ մեր օրերը չտեսան, եթե ոչ, բոլշևիկական կաթվածի կհանդիպեին։

Եվ ահա այսպես, տասն և իններորդ դարի երկրորդ կիսաշրջանը մի ընդհանրական չտեսնված հեղափոխություն կատարեց ռուսահայոց կյանքի մեջ, մի վերափոխական տակնուվրայություն, որ դժվար թե աշխարհքի ստեղծագործությունից մինչև օրս որևէ դար սորա մի հարյուրերորդական մասն կատարած լինի։

Նույն արագությամբ դարիս վերջին կեսն յուր դրոշմը դրեց և մեր մտավոր շարժման վերա. հիսնական թվականների պատերազմից առաջ այլը քաղաքներում էլ ուռկանով էին որսում, թող թե գյուղերումը. իսկ այսօր ուսումը հաց ու ջրի չափ գոյության խնդիր է դարձել։

Մինչև ռուսի ոտքը Շիրակի դաշտավայրը դնելն ո՞վ էր երազած թեյ և նորա գործածությունը, հեշտաեռ, ապակյա բաժակներ, հախճապակյա պնակներ, փայլուն սևանկարով ջնարած կոշիկ և կրկնակոշիկներ, ռուսական ֆուրաժկա կոչված գլխարկ՝ ոչ ոքի մտքով չէր անցկացած. մեր գործածականներն էին մաքուր ջուրը, սերն ու մածունը, անխառն գինին, կավե գավաթը, քերեղանը կամ պղնձե մաքուր կլայեկած մարթաբեքը, ինքնաձեռագործ տրեխը կամ ամենաշռայլը՝ մաշիկ ամ-

ված ոտնամանը և այծի մորթու (սեկ) երեսով սրածայր դյուրագին լափ-չիները։

Ջեմ մոռանում երբեք մի ծաղրական դեպք, որի մեջ կյանքի բնավորությունն է որոշակի արտափայլում։

Հովհաննեսը Թիֆլիսում ուսանում էր. մի ամառ նա վերադարձել էր յուր ընտանիքի տեսությանը. նա հագին ուներ եվրոպական կիսակոշիկ՝ առանց երկայն պարանոցի. Հովհաննեսը մի աղքատ գյուղական որդի էր։

Մի քանի մարդիկ, տեսնելով նորեկի կոշիկները, ենթադրում են, թե մի հարուստի հնոտիներ են՝ երիտասարդին ընծայած։ Այնուամենայնիվ նրանք բարվոք են դատում հարցնել, թե որքան է վճարել Հովհաննեսն յուր հին կոշիկներին։

— Հին չեն, դուրս գալուցս երկու օր առաջ եմ գնել ութ մանեթի,— պարզությամբ պատասխանում է Հովհաննեսը։

Բոլոր լսողները զարմացմամբ աչքերը չռում են և նախատում խեղճ տղային յուր պոզավոր ստախոսության համար։

— Տո՛, քամի փչող, ութ մանեթը մի այգու գին է և ոչ մի զույգ ճտքերը (պաւրանոց) կտրած, մրով սևացրած, փողոցում գտած կոշիկ,— կշտամբում է Հովհաննեսին նորա ընկերներից մեկը,— Երևանի մեջ ամենից թանկավաճառ կոշկակարն է շայիբ Գյուրջի Նավին, որ մի մանեթից վեր կոշիկ չի ծախիլ. այն էլ՝ ամեն մարդ հո հիմար չէր, որ մանեթը շպրտեր. Գյուրջի Նավուն կարել տվողները գլխավորապես երգերի սիրահար տղաներն են, որոնք գիշերը մինչև առավոտ երգել են տալիս և փոխարենը մի մանեթ են տալիս, մի զույգ կոշիկ էլ վերադիր առնում։

Այս խոսքերն ասողն այն անձն էր, որ երկու-երեք ամիս հետո, պատերազմի բորբոք ժամանակը, հանկարծական հարստության տեր եղավ և մի օր էլ վերոգրյալ կոշիկների նմանին Ալեքսանդրապոլումն ութ մանեթ վճարեց և հագած գյուղ մտավ։

Երեկ տրեխ, այսօր կիսակոշիկ։

Ժամանակի հոսանքի ազդեցությունից ազատ չմնաց և մեր Բղդեն, կամ առավել լավը՝ խոջա Բաղդասարը։

Նա յուր կարմիր ալաջա օսմանյան արխալուղի վերա սև սեթթուկը հագավ, ռուսի ֆուրաժկան գլխին դրեց և թռավ Թիֆլիս՝ կապալառուի հետ յուր հաշիվը վերջացնելու։ Ասում են յուր խեղճ տիրոջ ոտքերը սառը ջրումը թողեց։ Թիֆլիսեցի փորձված կապալառուն՝ նա, որ յուր կյանքումը տասնավոր ինտենդանտների և հարյուրավոր նրանց ստորադրյալ աստիճանավորների հետ գործ է ունեցել, որ բազմաշատ կոմիսիոններ

ու գործակատարների զատկական ձվի նման ատամին է տվել, օգտել, օգտվել, Բղդեից օձիք պատռելով երդվել է խպառ դադար տալ շահավետ ձեռնարկությանը, միայն թե մյուս անգամ մի ուրիշ Բղդեի չհանդիպի։

Վերադարձավ Բղդեն, ժպտալով, յուր տնտեսության հաշիվը վերջացնելու տեղից և, ինչպես ասում են, լավ վերադարձավ, լավ եկավ. ծոց ու գրպանը տոված։

Բղդեն մոռացության տվեց յուր Կիզի-մատուռը, յուր խոստացած մատաղները— էլ չէր զարմանում յուր Դշխո Հեղինեի փոս ոսկիների վերա, այժմ նա եռապատիկն ուներ՝ այն էլ աշխատած սեփական խելքով։

Դեռ չհասած Երևան, փոստի սայլակի վերա նստած, նա կապեց յուր ապագա գործունեության ծրագիրը։

Նորա առաջին գործը պետք է լինի Շողիկին առնելն և ապա Երևան փոխադրվելը։

Բղդեին քաջ հայտնի էր ջհուտ Աղաջանի թշվառ վախճանը, նա ինքն ուրիշների հետ ներկա էր հանգուցյալ զոհի թաղմանը և թաշկինակն աչքերից և դեմքից չէր հեռացնում. արդյոք սրտանց կսկիծ ու մորմո՞ք էր զգում յուր բարերարին կորցնելու համար, թե՞ մի ներքին խղճահարություն երեսի վերա պատկերանալուցը վախենում էր։

Բղդեն Կարբուց հեռանալուց առաջ այցելել էր լեզուն կապված և ուշքը կորցրած Բստինենց Սահակին, ցավակցություն էր հայտնել նորա անբախտ հորը, և այսօր համոզված լինելով, որ Սահակը վաղուց արդեն հայր Աբրահամի գոգումը բազմած կլինի, նա հաստատ հույս ուներ, որ ինքը կգա և երկու օրից հետո անարգել տեր կլինի Շողիկին, կթողնի բոլորովին Կարբին, յուր մորը կհանձնի նորաշեն տունը. ու ինքը՝ պարսիկ բեկզադեի և խանզադեի նման՝ ձեռքի մեջ կառնի սիրուն թառլանիկի (բազե) ոտքերը կաշկանդող անբևեռ շղթան կամ թե կրոնի նախքուն կաքավի սփածանելիքով պատած վանդակը և կտանի, կրազմեցնի Երևանում մի ժամանակավոր վարձովի պալատում, մինչև ինքը մի կողմից ընդլայնե յուր վաճառականական գործառնությունը և մյուս կողմից մի շքեղ շենք կառուցանելով՝ տեղավորի նորա մեջ յուր նազելուն։

— Օ՛հ, հոգուդ մատաղ, սիրուն աղջիկ, սրանից ավելի բարերախտ վիճա՞կ, քսակդ լիքը, շահել և անմեռ հարսը կողքիդ, կեր, խմի, ուրախացիր ու գրկիդ մեջ պինդ սեղմիր։

Ինքնամոռացությունը Բղդեին վերացական աշխարհքը տարավ, նա թարթեց, թե յուր առջևը նստողն յուր սրտի առարկան է, և նա տարածեց քաղուկները ու թևերի մեջ ամուր խառնեց փոստի սայլորդին։

— Հավա՜ր... օգնեցե՜ք,— ձիանց սանձը թողեց և ճիչ ու գոռոց բարձրացրեց սայլորդը, կարծելով, անշուշտ, թե անծանոթ ճանապարհորդի միտքը դեպի ինքը չար է։

Լավ էր, որ Բղդեն շուտ սթափվեց և ձեռքը ձիանց երասանակին հասցրեց, ապա թե ոչ երկուսն էլ ջարդուփշուր պետք է խորտակվեին մոտակա ձորի մեջ։

Նա յուր արարքը վերագրեց աչքերի մթագնությանը և ուշագնացությանը, որով սայլորդն ապահովեցավ։

ԼԲ

ԱԼՄԱՍՏ ԽԱԹՈՒՆԸ

Ոսկրաբույժ խաթունը շատ հուսահատ է, քիթ ու մռութը քաշ է արել. հետը խոսել չի լինում, յոթը հարցմունքին մի կարճ պատասխան դրժվարությամբ է տալիս, օրական երկու պատառ կերակուր հազիվ է ուտում, կերածն էլ ջանովը չի անցնում։

Ո՞վ է ոսկրաբույժ Ալմաստ խաթունը և ի՞նչն է նրա տրտմության ջարժառիթը։

Այս պատվավոր անձնավորությունը Կարբու երևելի տներից մեկի տանտիկինն է. նա այրիացած է յուր հարսնության առաջին տարիներում, բայց պահպանել է ընդհանուրի աչքում յուր աղա ամուսնու ժամանակին ունեցած պատիվն ու հարգանքը։ Կարբու ողջ գավառը սիրում է Ալմաստ խաթունին և ճանաչում. համարյա ամեն գյուղում գտնըված է։

Ալմաստ խաթունը թեև այսօր միջին հասակի կին է, բայց չի կորցրել յուր պատանեկական թարմությունը և սքանչելի գեղեցկությունը, մի ժամանակ նա նշանավոր գեղեցկուհու հռչակ է վայելել, այսօր էլ վայելում է։ Նրա խոշոր և նշաձև աչքերը, թանձր և կամարակապ հոնքերը, երկայն և խիտ արտևանունքը, լայն ճակատը, բոլորակ այտերը, ափներումն սպիտակ և հետզհետե վարդի գույնի փոխվող, չափավոր և սակավ ինչ սուր քիթը, փոքրիկ բերանը, նուրբ և կարմրաշաղ շրթունքը, լուսնաձև կզակը, բարակ իրանն և բութ ու ձվաձև գլուխը միացնող լուսափայլ պարանոցը, այս ամենը համերաշխ են նրա առույգ և փարթամ կազմվածքին։

Ալմաստ խաթունն, անկասկած, շատ փոքրահասակությունից է ճաշակել Բայազետումն ամուսնական քաղցրությունը կամ թե օրիորդ ժամանակ խիստ զգույշ և ծածուկ է պահված եղել ծնողական հարկի ներքո, ապա թե ոչ վայրենի քուրդը կամ հենց կրակոտ հայ երիտասարդը չէին հանգստանա բարբարոս դարումը, մինչև չհափշտակեին չքնաղ աստվածուհուն։

Ալմաստ խաթունը մինչև հիմա էլ մերժում է յուր խնամաքարին նստող շատ երկրորդ ամուսինների առաջարկը։

Նրա մերժելու գլխավոր հիմնակետը տեսիլքի մեջ իրան ազդված հայտնությունն է եղել։ Յուր պատմածին համաձայն, նա շատ տխուր էր, որ զրկվելով թանկագին և հռչակավոր ամուսնուց, գեթ չի արժանացել զավակի հոգս քաշելու շնորքին, և թեպետ տհաճ կրկին աշխարհք մըտնելուն, բայց զավակ ունենալու բուռն իղձը ձգտել է նրան, այրիության տարելիցը կատարելուն պես, առաջին դիմողին ձեռքը տա, միայն թե արժանանար մայր լինելու փափագին։

Եվ ահա մի գիշեր, մինչ հանգստյան աղոթքն էր մրմնջում, Ալմաստ խաթունին թվեցավ, որպես թե ինքը Կարբու ձորումն աղցան էր քաղում. հանկարծ բարձր ժայռի կատարից մի քաջակազմ երիտասարդ գահավեժ փռվեց յուր առջևը և ջարդուփշուր եղավ։ Ալմաստը շփոթվեց, մոլորվեց և երկար ժամանակ չէր վստահանում մոտենալ անծանոթ թըշվառ տղամարդին, որն արնաթաթավ հազիվ շարժվում էր։

— Ի՞նչ ես ապշել ու սառած մնացել, չե՞ս տեսնում առաջիդ մորթված հավի նման թպրտացողին,— լսում է նա յուր հանգուցյալ մոր սպառնալից, հանդիմանական ձայնը, որ կանչում էր երկնքից։

— Ինչպե՞ս կարող եմ ես, մի ջահել կին, մոտենալ մի օտարական տղամարդի, ծակ բերանն ինձ կրակ կդնի, կայրի, բամբասաշոր կանի, երկրի երեսին թքանքատեղ կդառնամ,— դողահար, ահահար պատասխանում է Ալմաստը։

— Չէ՛, զավակս, չէ՛, մարդը վերջին շնչումն է, օգնության կարոտ է, դա կարող է անտերությունից զոհ գնալ քո կեղծ ամոթխածությանը, մի՛ քաշվիր, մոտ գնա, դանակդ հանիր, պատառոտիր հագուստը և դարման տար՝ ընչով կարող ես։

Ալմաստը ոգի է առնում, առաջ է վազում և կիսաշունչ մարդին դրախտահալած Ադամ պապին նմանեցնելուց հետո՝ գտնում է նրա բոլոր ոսկրները կոտրատված և մանրոտված, ինչ տեղ ձեռք է ձգում, իրան թվում է, թե տաշեղի փշրանք են յուր բռնումը։

— Ես սրան ի՞նչ կարող եմ անել, մայրիկ։ Լոխման բժիշկն ինքը պատանն ուսին գերեզմանից վեր կենա, չի կարող օգնել, սրա ոսկրոտիքների մեջ ողջ տեղ չի մնացել։

— Սրիր դանակդ քարի վերա, քերթիր փշրված տեղերի մորթը և

նկսիր մեկ-մեկ միացնել ոսկրներն ու կրկին կարել, կարկրել,— հրամայում է Ալմաստին յուր մայրը։

Մոր պատվերը բառացի կերպով կատարում է այրի դուստրը, երկար ժամանակ պարապում է կիսամեռ հիվանդին բուժելով, քանիցս փակում և նորից շարում է սխալմամբ դասավորած ոսկրները, մինչև որ բոլորովին տեղավորում ու կարգի է բերում փշրվածքը։

Այնուհետև մոր ազդելով Ալմաստը վերցնում է կտավը, շրելով, ձվով և խնկով սպեղանիք (յախու, պլաստիր) է պատրաստում, կոտրրվածները նրանով ծածկում և տախտակներով կապկպոտում։

Երեք գիշեր տեսիլքը կրկնվում է Ալմաստի աչքին։

Վերջին անգամն մայրն այս է հրամայում և— այսուհետև, իմ սիրելի դուստրս, աստվածանից դու ստացար սնխչության (ոսկրաբուժություն) շնորհք, փոխանակ մի երեխայի հոգս քաշելու, որը քո մտածության առարկան է դառել, քո վզին բարձվում է թշվառ խեղերի և անդամալույծների հոգածության ծանրությունը, մինչև որ շունչդ եղունգիդ ծայրին է (քանի կենդանի ես), սուրբ պարտքդ համարիր առաջին դիմողին օգնություն հասնելու, գնա, կոտրածը կապիր, առողջացրու և ո՛չ մի փող վարձատրություն մի՛ ստանար, գործիր, մի՛ ամաչիր, մի՛ քաշվիր, վերքը բաց արա, դարմանիր՝ ինչ սեռի և հասակի լիներ հիվանդդ։

Այն օրից այսօր է, որ Ալմաստ խաթունն առաջին սնխչին (ոսկրաբույժ) է մեր գավառումը, և հավասարապես օգնում է մեծին ու փոքրին, արվին և իգին, նա տղամարդ է՝ տղամարդկանց համար, կինարմատ է՝ կանանց օգնելուս։

Մոտ երկու ամիս է՝ օրն երեք անգամ շարունակ այցելում է Ալմաստ խաթունը Բստինենց Սահակին, քակում, արձակում է վերքը, դարմանում է, բայց մազաչափ օգնելն անկարանում է։

Պարսիկ բեկզադեի հրացանի գնդակն, ինչպես հայտնի է, փշրել էր Սահակի ձախ ուսագլուխը, վնասվածը մի գնդակատեղ էր, բայց ոսկրի կտորը չկար, կոտրվել, թռել էր գնդակի հետ միասին։ Ալմաստ խաթունն յուր կյանքում այսպիսի դեպքի չէր պատահել, ի՞նչ աներ խեղճը, հո չէ՞ր կարող ուրիշ ոսկրի կտորով մեջտեղի դատարկությունը կարկատել։ Իսկ եթե Ալմաստ խաթունի ձեռքից չէր գալիս Սահակին բժշկել, այդ արդեն հայտնի նշան էր, որ միակ հույսը աստուծո ամենազոր աչքն է մնացել։

Ողորմելի Բստինենց Կարապետ, ապաբախտ հայր, աչքի առաջին հայտնապես տեսնում էր յուր զավակի օրըստօրե մաշվել-հյուծվելը և չէր վստահանում, բերանը չէր զորանում մի խոսք հարցնել Ալմաստ խաթունից. միգուցե պատասխանը հուսահատական լիներ։

Եվ այդպես իսկ էր, Ալմաստ խաթունը Սահակին այցելելու օրից նրան խնամք էր տանում, բայց ո՛չ մի փոփոխություն հիվանդի դրության մեջ չէր նշմարվում, Սահակը միակերպ անզգա ընկած էր, իրան չէր իմանում, նորա կերակուրը մի քանի կաթիլ արգանակ էր, որ բերանն էին լցնում, ո՛չ տնքոց, ո՛չ վրնոց, ո՛չ ասել, ո՛չ խոսել, ո՛չ շարժվել չկար, միակ կենդանության նշանը քթերից դուրս փչած արտաշընչությունն էր և այլ ոչինչ։

Ով ասես չէր գալիս Սահակին տեսություն. ամեն մի այցելող դուրը դուրս գնացածին պես մի հուսահատ բացասական շարժում էր անում գլխով և հոգոց քաշելով ափսոսում։

Կար սակայն մինը, որ բոլորից առավել կարիք էր զգում Բստինի քոռանն այցելելու և այդ շնորհը նորան արգելված էր։

Քանիցս անգամ Շողիկն աղաչել, թախանձել է յուր մորը՝ նրան տես գնալուս իրան էլ հետը տանել, բայց սառն հանդիմանությունն է յուր պատասխանն եղել։

— Ինչպե՞ս, աղջիկն յուր երեսի ջուրը, ճակատի մեռոնն այնպես կորցնի, որ վստահանա պակ չգնացած՝ յուր սկեսրայրենց շեմքը տրորել, թե ես իմ նշանածին տե՞ս եմ գնում, ո՞չ ապաքեն դրանով նա յուր սկեսրայրի և սկեսուրի գլուխն է տրորում, յուր ծնողաց անունն է խայտառակում, յուր օրիորդությանն է արատ բերում, բոլոր հասարակությունն է արհամարհում։ Մյուս անգամ չհամարձակվիս պռունկդ պռունկիդ դիպցնելու, սև սրտի աղջիկ, թե չէ մազերդ հատ-հատ գլխիցդ կքաշեմ, գետինը մտնիս դու։

Այս կծու կշտամբանքներով Աղաջանի այրին դուռն յուր աղջկա երեսին շրխկացնում էր, նրան սյունի տակին արտասվակոլոլ էր անում և ինքը գնում էր փեսացուին տես։

— Ա՛յ դու ծակծկոտվելու, անպատկառ աղջիկ, դեռ մինչև հիմի երեսիդ վրա ընկա՞ծ ես,— մի երեկո աչքերը շատ լալուց կարմրատակած վերադարձավ Շողիկի մայրը և հրամայեց,— շո՛ւտ, վե՛ր կաց, տեղեր գցիր՝ վեր թափվինք, ես գիտեմ՝ կեսգիշեր չհասած մեր գուրը կծեծեն։ Աստված երկու ձեռքով գլխներիս քար գցեց. էստեղ՝ մեր դուռն երեսներիս փակ թողեց, էնտեղ՝ տե թագ ու պռակդ կապեց. մի երկու ժամից Բստինենց լույսը կխավարի, նշանածիդ ջահել արևը մեր կմտնի։

Աղաջանի այրին զզջաց յուր անզգուշության համար. նա շատ ուշ գլխի ընկավ և դուրը բաց թողած՝ հետապատառ վազում էր Կարբուն փողոցներից մեկովը յուր աղջկա քամակից՝ ինչպես վազում է որսկանի բարակը (շուն) աղվեսի ետևից։ Խե՛ղճ կին, յուր աշխատանքն անօգուտ անցավ. ամոթահար, երեսը ճանկռելով, ունայնաձեռ ետ եկավ նա և

չհամարձակվեց Բստինենց տունը մտնելու, ուր երկու-երեք քայլ իրանից առաջ ներս ընկավ Շողիկը և դուռը մոր երեսին ծածկեց։

Այս առաջինն էր Շողիկի կյանքումը մորը հակառակելը։ Նա իրան ձգեց հիվանդի սենյակը և տան մեջտեղը մնաց կանգնած՝ բերանաբաց և չոռած աչքերով։

Շողիկը տարածել էր անգիտակցաբար յուր երկու թևերը, մեկ նայում էր տան մի անկյունումը փռված անկողնուն և մեկ աչքերը դարձնում էր իրան չորս կողմը հավաքվածների վերա։ Կատարյալ բանտից փախած կալանավորի էր նմանում աղջիկը, որ ազատությունը գրկելու հույսով արել է վստահ և վճռական քայլ, բայց իրան շրջապատած է գտել հարյուրավոր զինվորներով։

— Արի՛, իմ սևաքող հարսնացո՜ւս, արի՛, գլուխ գլխի տվեք նշանածիդ հետ,— գոռալով առաջ վազեց Սահակի մայրը և ուզում էր գրկել Շողիկին, բայց մոտ եղողների խոսքերը նրան արգելք եղան։

— Էս ի՞նչ տեսանք, քա, խիզան[1], էսքան էլ անիրավությո՞ւն, ա՛յ քեզ անամոթություն,— աչքերը Շողիկի վերա տնկած՝ արտասվեցին ներկա եղող հարևան կանայք։

— Լռեցե՛ք և դուրս գնացե՛ք ամենքդ,— առաջ եկավ և կարգադրեց Ալմաստ խաթունը,— սրան աստված է այստեղ ուղարկել, թողեք վերջին շնչումն իրար կարոտն առնեն։

Ալմաստ խաթունը բռնեց աղջկա կուրը և առաջ տարավ դեպի հիվանդն ու թողնելով նրան հոգեվարքի անկողնու մոտ, ինքը դուրս գնաց ուրիշների հետ միասին։

Շողիկը, կարելի է ասել, ոչինչ չէր տեսնում, ոչինչ չէր հասկանում, նորա ծնկները ծալվեցին և ընկավ անշունչ դիակի վերա։ Անշունչ ենք ասում և չենք սխալվում, Սահակի թույլ շնչառությունը համարյա գադարել էր, և միայն մի ամենանվազ տրոփյուն զգալի էր լինում կոկորդի աջ ու ձախ կողմերում։

— Սհո՛ ջա՛ն, Սհո՛, իմ գլխի տեր Սհո՛, արևիդ մատաղ գնա՛ քո Շողիկը,— վերջապես ձայն հանեց աղջիկը,— չորանան էն մատները, որ չխնայեցին քո ջիվան արևիդ, ա՜խ, դու ընչի՞ մոտ գնացիր ուստա Մուրադի գերեզմանին, որ քո կյանքդ էլ փչացնես, իմ գլխիս էլ սև ու մութ բերես, աչքերդ բաց արա, անունիդ մեռնե՛մ, մի խոսք ասա՛, ինձ էլ քեզ հետ տար, Սհո ջա՛ն...

Աղեկտուր խոսքերը դուրս էին թռչում մանկատի օրիորդի շրթունքներից, նորա հորդ արտասուքը, առու եղած՝ հոսում էր մեռնողի երեսովը։

Ո՛վ հրաշք, անշունչը շնչավորվեց, անկենդանը կենդանացավ, երկու ամսվա պապանձված Զաքարիայի լեզվի կապերը քակվեցին, հիվանդի աջ ձեռքն ինքն իրան բարձրացավ և փարվեց Շողիկի պարանոցովը։

— Շո՜... ղի՜կ...— ահա՛ Սահակի շրթունքներից կցկտուր դուրս եկած միակ խոսքը։

— Սհո՜ ջա՛ն, Սհո՛, Շողիկը քեզ ղուրբան, էդ ի՜նչ օրն ես ընկել դու, ախար ընչի՞ մոտ գնացիր թուրքին, որ քեզ վրա հրացան արձակեց, ախար ես ի՞նչ մեղք էի գործել, որ աստված գլխիս տվեց, աչքս հանեց։

— Թուրքը... մեղավոր... չէր... Բղդեն... չարչի... Բղդեն...

— Ո՞ւր է Բղդե, Սհո ջան, էստեղ Բղդե չկա, մենք երկուսս ենք,— պատասխան տվեց Շողիկը Սահակի հատ ու կտոր խոսքերին։

— Բղդեն... մարդասպան Բղդեն... թուրքերը... Բղդեի մարդիկն էին...

— Ի՞նչ, Սհո ջան, ասում ես Բղդեն էր ղրկել թուրքերին, ուրեմն ուրիշների ասածներն ուղի՞ղ է։

— Մողնու վանքն էլ Բղդեն կոխել տվեց՝ հորդ ու ինձ սպանել տալու համար, ես թուրքի բերանից լսեցի, չգիտեմ ի՞նչ թշնամություն ուներ Բղդեն մեր դեմ,— դժվարությամբ և ընդհատ բառերով պատմեց Սահակը։

— Ա՜խ, ինձ է հայտնի կոլոտ Բղդեի թշնամության պատճառը, գեղինը մտնեմ ես, որ հորս ու նշանածիս արնետերը դարձա։ Բղդեն կամենում էր ինձ քո ձեռքիցդ խլել. շատ աշխատեց, շատ հնարք գործ դրեց, բայց ատամը չկտրեց. լուսահոգի հայրս խայտառակեց, հեռացրեց, ես էլ երեսին թքեցի, երեսս շուռ տվի։

— Ուրեմն Բղդեն հասավ յուր փափագին, տարավ կոլոտ չարչին, հորդ ու նշանածիդ գլուխը կերավ՝ քեզ ձեռք բերելու համար,— խոր հոգոց հանելով ասաց Սահակը։

— Ո՛չ, կոլոտ չարչին յուր փափագին չհասավ, Սհո ջա՛ն, նա չտարա՛վ, այլ տարվե՛ց,— կակիծը մոռացած՝ հաստատապես վճռեց Շողիկը,— քո արևովն և հորս գերեզմանովն եմ երդվում, որ Աղաջանի աղջիկը, Բստինենց հարսնացուն, երբեք կին չի դառնալ յուր հոր ու նշանածի արյուն թափողին, կամ ես ձեր վրեժը կառնեմ կոլոտ չարչուց, և կամ, եթե չկարողացա, գլուխս իմ երկու սիրեկաններիս սիրուն մահի կտամ։

— Աննման Շողիկս... ես այժմ մեռնում եմ հանգիստ սրտով։

[1] Խիզան նշանակում է ընտանիք, գլխավորապես իգական սեռի։

Մի բուռն զորություն ուժ տվեց հիվանդի թույլ բազկին, Սահակը մոտ քաշեց Շողիկի գլուխը և սեղմեց յուր կրծքին։

Վերջին ճիգն է եղել, որով լարվել են հոգեվարքի ջղերը. նորա կրունները թուլացան, մահն յուր սառը թևը տարածեց ըղձատոչոր երիտասարդի երեսին, նա փչեց յուր շունչը՝ գրկած յուր նշանածին։

— Ա՜խ...— ծվաց Շողիկը և լռեց ու պապանձվեց։

Ալմաստ խաթունը բոլորից առաջ ներս վազեց և գտավ նշանածներից մեկին անկենդան և մյուսին մեռելի գրկումն ուշագնաց։ Երկու սիրահարների շրթունքները միմյանց պինդ սեղմված էին։

ԼԳ

ԹՈՌՍ ԿԱՐՄՐԱԽԵՏ ԶՈՒԿՆ Է ԸՆՏԵԼ

— Բարի լո՛ւյս, քեզ, ա՜յ ջրատար Շուշա՜ն։

— Բարին հոգիդ, Տուտու նանի, համեցեք նստիր։

— Էյ, ո՜չ նստելս է գալիս, ո՜չ կանգնելս, երկու շաբաթ է օրն երեք անգամ ձեր քուչի գլուխն եմ հասնում, թե չէ՝ ծնկներս ծալվում են ու մնում, սիրտս փուլ էր գալիս, ճարս կտրվում է, էլ ետ քարշ գալով ետ եմ գնում։

— Ի՞նչ կա։

— Ի՜նչ պետք է լինի, աչքերս դուրս են թափվում, երբ ձեր դուռն երևում է. ես կարծում եմ, թե էս է՝ պետք է գամ ու իմ կորած հոգու ախպեր Աղաջանիս քաղցր զրույցները լսեմ, բայց որ միտքս է ընկնում, թե ներս պետք է մտնեմ ու երկու էրված խորովված, անտեր, անպլուխ անբախտների մոմոցը լսեմ, գլխիս բոց ու կրակ է վառվում։

— Ի՞նչ պետք է արած, երևի, իմ մեղքն էր, որ աստված երեսովս տվեց։

— Դու՝ հո դու, փորձված կին ես, ոնց որ լինի ինամբերես, աչքս դուրս գա իմ սևապսակ Շողիկի համար։

— Ասացիր ու պրծար, Տուտու նանի, էդ ճար կտրածի աղջիկը ո՜չ գիշերը քուն ունի, ո՜չ ցերեկը դադար, ո՜չ ուտում է, ո՜չ խմում, բերանը նշխարք չի մտնում, հարյուր խոսքին մի պատասխան չի տալիս, հալումաշ է եղել, էսպես որ գնա՝ վեց ամիս չի քաշիլ, սև ու մութը գլխիս կբերի, ինքն էլ էն կորածների ճանապարհովը կերթա։

— Բաս դու մայր չե՞ս, չե՞ս կարողանում առաջն առնել։

— Իմ ձեռքիցն ի՞նչ կգա, ինքս էլ քշված պես եմ։

— Ի՞նչ ես խոսում, քա՜, Շուշան, դու էլ հո երեխա չե՞ս, մեռածի ետևից ո՞վ է գնացել, որ մենք գնանք, ո՞րս ենք անմահ, բոլորիս ճանապարհն է, վաղ թե ուշ՝ գնալու ենք, բայց քանի էս կույր, փուչ աշխարհքումն ենք, պետք է ապրենք, օր քաշենք։ Աստծուն էլ դժվար կթվի, որ յուր ստեղծած մարմինը մենք տանջում ենք, ո՞վ է հակառակ. ծանր է, անտանելի է, ասեղ չես կորցրել, սարի պես տղամարդն է գլխիցդ շուռ եկել, թագավորավայել փեսացուն է երեխիցդ խլվել, մարդ որ հավի ճուտ է կորցնում՝ սիրտն էրում է, մահը մերն է՝ մենք մահինը. քանի կարող ենք, պետք է էնպես անենք, որ բամբասանքի տակ չընկնենք։

— Ի՞նչ բամբասանք, մարդ որ յուր մեռածի համար գարդ անի, էդ բամբասանք է՞։

— Բաս էս լա՞վ է, որ ծակ բերանը Շողիկիդ վրա խոսում է, թե քթի ու բերանը փաթաթել է ու ոբբևերի կնոջ նման սև սուգ նստել, էդ մի՞թե վայել է ազապ աղջկանը, էդ յուր ողորմած հոգի հոր անունին էլ անարգանք է, քեզ էլ անպատվություն է, իրան էլ թքանք է։

— Հոր ու նշանածի համար սուգ պահելն ամո՞թ է։

— Չէ՜, Շուշան ջան, էդպես չի, հոր համար՝ աղջիկն է, պետք է ցավի, բայց նշանածի համար՝ չի սազիլ. գիտե՜ս, մերս, հողն իմ գլխին, ինչ ձայներ են փողոցն փողոց քամու մեջ պտտվում, ծակծկոտվին սասղների լեզուները, Շողիկիս պես ամոթով աղջկա համար էդ տեսակ բամբասանքնե՞ր, չորանա հնաբոզի բերանը։

— Ի՞նչ են ասում, Տուտու նանի։

— Էս երկօրն ես տասը կնոջ բերան եմ պատռել ու ճանապարհ դրել, ասում են, որպես թե, լուսահոգի փեսացուդ գիշերը մինչև լույս ձեր տանիցը չէր դուրս գալիս, իբրև թե, իրանց կուրանալու աչքով տեսել են, որ երկու նշանածները էդ ու որձ աղունիկների նման ժամերով կտուց կտուցի են տված եղել։

— Հիմկվա մարդկանց մեջ, Տուտու նանի, խղճմտանքի կտոր չի մնացել, էն կորած Սհոն երկու տարի էր նշանված էր, դեռ երկու անգամ մեր ծածկի տակ չի եղել, էն էլ օրով ցերեկով, էն էլ, վա՜յ ինձ, վա՜յ իմ հոգուն, ես եմ փչացած հոգու եղբորիցդ թաքուն տուն բերել, մի երկու ձու յուղի մեջ ջարդել, առաջը դրել, էս տնաշենի աղջիկը էդպես ժամանակը գլուխ է առել կորել, մկան ծակերը մտել, ինչքան կանչել եմ, որ գա, կողքին նստի, սատանի ձիու վրա նստել է ու չի եկել. սաքի ոբ վերջն էս էր, շատ էլ լավ է արել, որ չի եկել։

— Ընչի՞ էդպես ես խոսում, Շուշան, Սհոն չէ՞ր, որ թլխամի թղթերը ձեռքիցս խլեց, լուսահոգի մարդիդ տվեց։

— Էն էլ մի բան էր, որ պատահել էր, թե չէ խեղճն իր աներացուի հետ դեռ երկու խոսք չէր խոսեցել. դրա համար պետք է բամբասեի՞ն։

— Ո՞ր մեկի բերանին ձեռք դնես, Շուշան ջան, ասում են՝ տեսնողներ եղել են, որ Սահակն ամեն առավոտ Աշտարակ, յուր խանութին գնալուս, գյուղի ներքևի ավերակի մեջ Շողիկի հետ քշփքշը է ունեցել, սաքի թե Շողիկը կուժն ուսին ջրի ճանապարհից միշտ ծռվել, մտել է ավերակը, իհարկե, գիտեր, որ նշանածն էնտեղ իրան սպասում է։

— Դու էլ հավատում ե՞ս։

— Ես ի՞նչ գիտեմ, ա՛յ դրանց օրը խավարի, մեկին չես հավատում, մյուս բանն են մեջ բերում, դեռ կեսը չեմ պատմել, ինչ որ խոսում են ու Շողիկի մեղքը քաղում. ի՞նչ էլ հարկավոր է պատմելը, ես քարասի՞րտ եմ, որ դաղված և խաշված մոր սիրտն ես առավել կրակեմ ու բորբոքեմ. ախար ես իմ հարգևոր ու պարկեշտ Շողիկիցն էդպես արարքը ո՞նց հավատամ, ինչ որ երեկի ժամի պատի տակին, արևկողումը նստոտած՝ գլխներիցը դուրս էին տալիս. էդ որ ճշմարիտ լիներ, մենք ավելի մոտիկ չե՞նք, մենք ավելի շուտ չէինք նշմարի՞լ. անմեղ հրեշտակի պես աղջկա շլնքովն էդպես կեղտ փաթաթելն իրանց հոգուն մեղք չի՞։

— Ախար ի՞նչ են ասում, Տուտու նանի։

— Սաքի ուղիղ էլ որ լիներ, ամոթ չէր. էրեխեքն ի՞նչ կարող էին կարծել, որ իրանցից մեկն ու մեկի օրերը համարած են, ջահելներ էին, կմտածեին, թե էսօր չէ՝ մի ամսից պետք է խաչ ու ավետարանի տակին միանանք, կկսեին ջահելություններ անել։

— Աստված իրանց աղջկերանցն էլ էն փորձանքին հանդիպեցնի, ինչ որ իմ երեխին պատահեց, ով իմ աղջկա անունը կուզենա տևացնել սուտ-սուտ զրպարտություններով։

— Դու շատ էլ մի տրտնջալ, Շուշան ջան, ախար ընչի՞ եք պատճառ տալիս, որ սա ու նա լավ վատ մտածեն, ախար դու ինձ ասա, էն ի՞նչ անելու էր, որ քո աղջիկդ արեց. նշանածի հոգի տալու իրիկունը դուրս պրծավ, գնաց նրա վրա ընկավ, նրա շլնքովը փաթաթվեց, էս օր էլ ինքդ քո բերանովդ ես խոստովանում, որ օտար տղայի համար գլուխը մահին է տալիս։

— Դե պակաս նշանած չի կորցրել, որ չտխրի, դու և ես էլ, որ նրա տեղը լինեինք, կանեինք, սիրում էր, հո՞ սուտ չէր։

— Ո՞վ է ասում, որ չսիրեր, յուր պարտքն էր, որ սիրեր էլ, խոնարհեր էլ, բայց քեզ լավ հայտնի է, որ պսակված, տարիներով իրար հետ ապրած մարդ ու կինն իրար մահից հետո նորից պսակվում են, ինչի՞ համար դու չես մտածում երեխայի սրտի խոցն առողջացնել, ընչի՞ չես աշխատում մի լավ տղա գտնել, ձեռաց նշանել, ձեռաց պսակել, որ մի-

նուճարիդ վրայից էլ ալամի (ճամայնի) լեզուն կտրվի, ինքն էլ օր տեսնի ու մխիթարվի։

— Ի՞նչ ես խոսում, Տուտու նանի, դեռ խեղճ որբիս հոր եքեք քառասունքը նոր է լրացել, դեռ Սհոյի գերեզմանի վրա դրած մուխը նոր է հանգստացել[1], դու կամենում ես, որ ես աղջիկ նշանելու և մարդի տալու հոգ քաշե՞մ, կորցրածներիս ամայի դաշտումն էի գտե՞լ։

— Ի՞նչ արած, քո երեխին դարդամահ չանելու համար, քո մի հատ զավակի վրայից աշխարհքի ասեկոսեն վերացնելու համար պետք է ատամներդ հուպ տաս, սիրտդ պնդացնես ու պապենական սովորությունի գլխովը թուչես։

— Առաջինը՝ որ ես էդ բանը չեմ անիլ, երկրորդը՝ որ էս բոպեիս ո՞ւր է էնպես տղա, որ արժանավորություն ունենա ու գլխապատառ վազի իմ դուռը կտրի, իմ աղջկանն առնի. ոչովի մեղադրել չեմ կարող, ո՞ւմ աղջկանը պետք է ուզեն. աշխարհքիս լավություն անող Աղաջանը թագավորի պես յուր ընտանիքի գլխին կանգնա՞ծ է, որ ամեն մարդ յուր համար փառք ու պատիվ համարի նրա հետ բարեկամանալ։ Տնաքանդի մարդն ունեցած չունեցածն անշահ, անհաշիվ սրա նրա վրա ցրել է, մի մատը թուղթ ո՛չ առել է, ո՛չ թողել է, որ գիտենանք, թե ում մոտ ինչ կա. քանի ասում էի՝ մի՛ անիլ, վրես վախտ ծիծաղում, վախտ բարկանում էր, հենց գիտեր, թե ինքը միշտ կենդանի կմնա, ամենքն իրանիցը կքաշվեն ու ժամանակին տարածը կբերեն, ետ կտան։

— Լուսահոգին, Շուշան ջա՞ն, վստահություն չի՞ արել, մի՞թե դու կարծում ես, որ ձեր փողերը կկորչեն կամ մարդ կլինի, որ քո դրախտական մարդի լավությունը կմոռանա։

— Ընչի՞, չմոռացա՞վ, Սալբու տղա կոլոտ չարչի Բղդեն, որ մեր փողերովը մարդ դառավ ու երբ կողքերն յուղակալեց, խեղճիս երեսին դուռը թրխկացրեց, հեռացավ՝ էդ հերիք չէր, էնքան յուր չափը կորցրեց, որ ուզեցավ աղջկանս յուր նշանածի ձեռքիցը խլել. գլխներս տարավ մարդ դրկելով, դու էլ հո ջուլհակի մքուքի պես գնում գալիս էիր. և երբ որ ծամոնը ցեխն ընկավ, էդ քո անհոգի, անհավատ, անաստված, անխղճմտանք կոլոտ Բղդեն թուրքերին կաշառեց, աներոջ ու փեսայի արյունի մեջ մատը թաթախեց։

— Հետո դու աչքովդ տեսա՞ր, որ խոջա Բաղդասարը մարդիդ ու փեսիդ արենպարտը դառավ, հոգուդ մեղք չի՞, որ ամեն քամու բերածի հավատում ես։

— Ես ի՞նչ գիտեմ, ասում են՝ մեր մահապարտն ինքը Բղդեն է, որ

[1] Մեռելը թաղած երեկոյին գերեզմանի վրա ծուխ են գցում։

կա. եթե ես վկաներ ունենայի, ես գիտեմ, թե ոնց շոքեշոք դիվանի դուռը կերթայի և իմ արյունը մտնողից վրեժս կլուծեի։

— Տեսնո՞ւմ ես, Շուշա՛ն, դու խոջա Բաղդասարի վրա բարկացած ես, բայց նա էնքան բարի է, որ ուզում է քո տան վրայից սևն ու սուգը վերցնել, քեզ էլ, ինձ էլ, աշխարհքին էլ հայտնի է, որ խոջա Բաղդասարն էսօր մեր երկրի առաջին մարդն է և եթե մտքումը դնի, գլխավոր չինովնիկի ու աղայի աղջիկը կառնի, շատերն իրանք են նորա ոտները լիզում, բայց նա ամենի խնդիրքն եքեսի վրա է թողել և ուզում է քո քանդված տունն ու տեղը նորից շենացնել, նա քո աղջիկն ուզում է, որ քո մի հատ սև փողը ուրիշի վրա չկորչի։

— Դեռ մինչև հիմի էլ քո կոլտա շաբլի Բղդեն մեզանից ձեռք չի քաշում։

— Ա՛յ Շուշան, ինչպես տեսնում եմ, աստված քո խելքդ բոլորովին առել է, թախան իր ոտքովը քո դուռն է եկել, դու քացով տալիս ես. դու ո՞նց չես խոջա Բաղդասարին հավանում։

— Ամոթ է, Տուտա՛ւ, դու ինքդ լավ գիտես, որ Պողոս աղենց ամալա Սալբու տղեն ուրիշների տները քանդելով խոջա դառավ, մեկ էլ՝ որ ես իմ տան գլխի ու փեսացուիս արյունի տակը մտնողին սև մահը կտամ, որ կոկորդին հուպ տա, խեղդի, վերջացնի և ոչ թե աղջիկ՝ որ լանջովն ընկնի։

— Էլի ասում եմ, Շուշա՛ն, խեզճ արի քո աղջկանը, մի՛ թողնիր, որ դարդոտվի և գլխին մի փոքձանք բերի կամ թե տանը մնա, անունը կես փող չինի, դու ինքդ էլ Բաղդասարից մեծ մարդի կին չես, ողորմած հոգի Աղաջանը չէ՞ր, որ խամ կտավի կապոցի արորելուցը, ուսի մորթին ամբուլի եզան վզի կաշուց հաստացել էր։

— Դո՛ւրս իմ տանից, ջադուբազ (վեռուկ) Տուտո՛ւ, մեկ էլ չհամարձակվիս իմ դռնովն անցկենալ, թե չէ ոյդ կկոտրեմ, բերանիդ չափը ճանաչի՛ր, իմ տղամարդը ո՛չ ուրացել է յուր թիկունքի կապոցը և ո՛չ ուրիշի հացին կույր է մտիկ տվել, նորա աշխատանքն իր ճակատի քրտինքն էր, նորա հացի մեջ ուրիշի արյունը չի խառն եղել, էդպիսի մարդը քո գովածն է, որի մի քանի սև փողն աչքերդ շլացրել են, հոգիդ սևել ես, ուզում ես իմ աղջկանն անբախտացնես, գնա, հեռացիր, ասում եմ, հետինն ու առաջինը լինի, մյուս անգամ իմ աղջկա անունը բերանը չբերես, թե չէ ինքդ որ լսի, սիրտը վիրավորված է, էնպես խոսքեր կասի քեզ, որ կմնաս գլխիդ վրա պտտվելով։

— Չէ՛, Շուշան, չէ՛, Շողիկը խելոք աղջիկ է, կանչիր, թող գա, եթե ես մի քանի խոսքով նրան կամքի չբերի, եթե նա օրն էսօր Սալբու տղային նշանը չվերկալավ, դու երեսիս թքիր։

պանչելու հարկավորություն չեղավ, Շողիկը ներսի սենյակումն, ինչպես երևցավ, լսել էր մոր և Տուտուի խոսակցությունը, նա դուռը բաց արեց և դուրս եկավ։

Մայրն աղջկանը տեսնելուն պես զարմանքով և սարսափով ետ-ետ գնաց՝ ձեռքերն օդում տարածելով։

— Հասկանում եմ, մայրի՛կ, դու իրավունք ունիս զայրանալու և աղջկանդ վերա բարկանալու,— ասաց Շողիկը ծանրախոհ դեմքով,— հորս ու նշանածիս կորցնելու օրից դու առաջին անգամն ես ինձ տեսնում սանրված գլխով, հյուսած ծամերով և զարդարված բաղդադի թաշկինակով։ Ես լսեցի քո և Տուտու նանի զրույցը, երկար ու բարակ մտածեցի, չափ ու ձև արի և գտա, որ Տուտու նանի ասածներն ուղիղ են, մեռնողի եռեից մեռնելն հիմարություն է, ինձ վայել չի շահել օրս սևավացնել, քո տխրությունի վերա ավելի տխրություն բերել, արի՛, մայրի՛կ, մոռանանք անցկացրած բաները, արյունն արնով չեն լվանալ, համաձայնիր Տուտու նանի խոսքին, վերցրու Սալբու տղի նշանը։

— Չալ օձը կծի լեզուդ, քրքրվելու պտուղ, էդ քո խոսքե՞րն են, դու չէի՞ր ասում, թե հաստատ գիտես, որ հորդ ու նշանածիդ սպանել տվողը Բղդեն է, ինքդ չէի՞ր, որ ասում էիր, թե մինչև Բղդեի մի բուռն արյունը չխմես, քո ծարավդ չի կոտրվիլ, հիմի ո՞ր սատանեն քեզ՝ իր թոռի մեջ խճճեց, ի՞նչ անցկացավ, որ հորդ ոսկրները դեռ գերեզմանումը չհանգըստացած՝ դուս ուզում ես նորա մահվան պատճառի վիզն ընկնել, գետինը պատռվի, քեզ դվեր (դեպի վայր) տանի։

— Էրված սիրտը շատ բան կասի, մայրիկ, աղաչում եմ, մի՛ բարկանալ ինձ վերա, լսիր մի անգամ քո աղջկանը և թող Սալբու տղեն նշան բերի։

— Ապրի՛ իմ խելոք աղջիկը. բեր էդ քո նախշուն աչքերդ պաչեմ, որ օրինավոր ես խոսում, ընդուր են ասում՝ հիմիկվա շահելներն իրենց մեծերից ավելի խելք ու հասկացողություն ունին,— Շողիկի գլուխն յուր կրծքի մեջ սեղմելով դարձավ Տուտուն դեպի Աղաջանի այրին։

— Լսի՛ր ինձ, Շուշա՛ն, գոգիդ քարերը թափիր (ճամոզվիր), երեխի խոսքն ավետարանի կողի գրվածին է, սրա սիրտը մի՛ կոտրիլ, սա անգին ջավահիր (գոհար) ու մարգարիտ է, սրա մեղքի տակը մի՛ մտնիլ, սրա սիրտը վկայում է, որ Բաղդասար աղայի նման արար աշխարհքումը փեսացու չես ճարիլ, աչքի լույսի նման կպահի քո աղջկանը։

— Տուտու նանի հոգին էլ վկայում է, որ Սալբու տղեն լավ փեսացու է, մայրի՛կ, թե չէ պառավ կին է, մի սար գերեզմանումն է, ընչի՞ պետք է իմ մեղքն ընկնի, էնպես չի՞, Տուտու նանի,— մեջ մտավ Շողիկը։

— Ը՜... ը՜... ը՜... այսինքն... այսինքն... հա՜... Բաղդասար աղեն... դե՛, մարդ ենք... ո՞վ գիտե, դե՛... բայց լավ տղա է... հոգիս վկա,— կմկմաց պառավը։

— Դե՛, տեսա՞ր, մայրի՛կ, որ Տուտու նանը յուր հոգովն երդում է ուտում. եթե էդպես է, խնդրում եմ, դու համաձայնես, ես էլ թեպետ մինչև օրս ատում էի Բղդեին... ո՛չ, ո՛չ... Բաղդասարին, բայց, հիմի Տուտու նանի խոսքովը սիրեցի... հը՛, մայրի՛կ, ի՞նչ ես լռել, աղաչում եմ, խոսք տուր։

Այս խոսքերով Շողիկը փարվեց մոր պարանոցովը։

Տուտուն չնկատեց, մոր ու աղջկա մեջ մի քչփչուն տեղի ունեցավ։

— Ի՞նչ արած, Տուտու նանի, կերևի, երեխես ճակատի գիրն էսպես էր, գնա Սալբուն ասա՝ թող նշան բերեն,— հայտնեց վերջապես Շուշանն յուր հաճությունը։

— Բայց մի պայմանով, Տուտու նանի՛,— ավելացրեց Շողիկը,— որ հարսանիքը շատ չուշացնի, նշանը ծածուկ լինի, իսկ հարսանիքը փառավոր, և մինչև պսակի օրը մեր դուռը չբանա։

— Աչքիս ու գլխիս վրա, ազիզ ջան, հենց էս իրիկուն, եթե կուզես նշանդ կբերենք, մի շաբաթից հետո էլ գլուխդ կկապենք, պսակ կտանենք։

— Կարմրախետ ձուկը թոռս ընկավ,— մտածում էր Տուտուն՝ շտապելով դեպի Բղդեի պալատը։

Այս գործողությունը կատարվեց Բղդեի Թիֆլիսից վերադարձի առաջին և ետ շաբաթը։

Բղդեի առաջին գործն եղել էր Տուտուլի ձեռքով այս վերջին փորձն ևս անել. եթե չհաջողվի, բռնությամբ դուրս կքաշեմ տանից,— վճռեց Բղդեն,— այժմ էլ Աղաջան չկա, որից քաշվիմ, Բստինենց Սհո չկա, որ ճանապարհիս քար ձգի (արգելք լինի)։

Ոչինչ միջոցներ պետք չեղավ. մի կերպասյա կարմիր գլխի ծածկոց և մի մատանի նույն երեկոյին Տուտուլի ձեռքով նշան ուղարկվեց Բղդեի կողմից Աղաջանի տունը։

ԼԴ

ԽԱՉԵՂԲԱՏՐ

— Շտապիր կշեռքի մի թաթը ոսկի լցրո՛ւ, մյուսում ինձ նստացրու, քաշի՛ր ու ինձ տուր, լավությունս ինչպե՞ս պետք է վճարես, ձեռաց խնամախոս գնալս ու հարսանիքիդ փլավի հոտը աշխարհքովս վեր անելը մին եղավ։

— Հա՞, վերի ոտումը պատրաստ է՞ր,— սառնությամբ պատասխանեց Բղդեն Տուտուին, երբ վերջինս հևալով ներս ընկավ, ավետիքը տվեց,— չէ՞, դու երբ Փամբակաձորից թլիսմի թղթերը բերիր ու ջհուտ Աղաջանի շեմքի տակ թաղելու ժամանակ Բստինենց Սհոյի ձեռքը ձգեցիր, հույսդ կտրեցիր, թե այսուհետև Շողիկն ինձ համար պաս դարձավ։

— Բաս ինձ ո՞նց գիտես, իմ լեզուս հարյուր թլիսմ արժի,— պարծեցավ պառավը։

— Ուրեմն նշանածի անունով թուլանալ, ետ գալը, որբեվերի կնոջ պես քիթ ու մռութը փաթաթելն աշքակապություն է՞ր. ես սպասում էի, որ քեզ քարհալած բորիկ կփախցնեն. խեղճ Սհո՛, նա էլ հավատացած է եղել, թե ջհուտ Աղաջանի զարմը՝ գժված ու ցնդած՝ իր համար գլուխը մահի պետք է տար. ուղիղ է ասած, թե կինարմատին հավատացող տղամարդն իր ձեռքով իր որոգայթը կպատրաստի, չէ՞, Շողի՛կ ջան, չէ՞, ինչքան էլ քեզ սիրեմ, ինձ քեզանից ավելի կհավատամ, ինձ արածացնել չես կարող, ես Բստինի թոռը չեմ, ինձ խոջա Բաղդասար կասեն։

— Վա՞յ, ա՛յ տղա՛, Բաղդասար ջան, ընդուր են ասում, թե քեզ էլ չպետք է հավատալ, դեռ խեղճ աղջիկը ձեռքդ չի ընկել, վրան իրավունք ես բանացնում. դու հենց կարծում ես, թե ձեռաց, խոսքը բերանիցս թռավ թե չէ, մեր ու աղջիկ ոտքերս փաթաթվեցի՞ն, չէ՞, սիրելիս, յոթը գայլի ավետարան եմ կարդացել մորն առանձին, աղջկանն առանձին. ջառախոս օձ ավսոնոդի (թովիչ) նման էնքան սուտ ու ուղիղ փչել եմ, բերանս փրփրակալել է. դեռ մայրը ողորմություն էր, աղջիկը մինչև ճանապարհի բերի, հոգիս բերանս եկավ։

— Ի՞նչ էր դուրս տալիս, ինձ չէ՞ր հավանում։

— Ա՛յ քեզ մատաղ, քեզ ո՞վ կարող է փուդ դնել (պակասություն դնել), քեզ աստված է հավանել, Շողիկն էն էր ասում, թե ինքն ուխտ է արել՝ աշխարհ չմտնել. սև պետք է հագնեմ, ասում էր, վարպետ (կույս) պետք է դառնամ, հորիցս մնացածը խունկ ու մոմի պետք է տամ ու մինչև մահս հորս ու նշանածիս գերեզմանների վերա ճրագույս վառեմ իրիկուն առավոտ։

— Եվ հետո էդպես ջո՞ւտ մոռացավ խոստումը։

— Ա՛յ տղա՛, ախար դու ո՞ւմ ջանը ուզենաս, որ սարսափ չձգես, ասացի, որ մեր խոջա Բաղդասարն էնպես կանի, որ մեր ու աղջիկ մի կտոր հացի կարոտ կմնաք. ասացի, որ դու, իբրև թե, երդում կրակ ես անում, թե էն հնարքը գործ կդնես, որ Աղաջանի պարտքատերերից և ոչ մեկը մի սև փող չի մխուր գալ (խոստովանիլ), հետո իրանք լոքնչոք

ստիպված կլինեն գալ, ոտքերդ փաթաթվել, բայց դու քացով կտաս, փողոց կշպրտես։

— Մարգարեացել ես, վերջն էդպես էլ կլինի։

— Էհ, ես որ իմ պարտքը կատարեցի, գործարարի (սարդ) նման երիտասարդ ոտներն էլ իմ փառիս (ստայն) մեջ խճճեցի, ապրանքը քոնը շինեցի, դու էլ շուտ արա, ձիու խամ քուռակի պես բերանը սանձ դիր, թամբը մեջքին կապիր, վրեն նստիր, հետո երբ որ խամահանուկ եղավ (վարժվեց), ինչպես քո սիրտը կցանկանա, էնպես էլ պահիր, ապրանքը քոնը չի՞։

— Ուրեմն վերջին խոսքն ի՞նչ էր։

— Երբ որ մորն իմ կողմը քաշեցի, աղջիկը շվարեց ,մնաց, մի քիչ փնթփնթաց, մրթմրթաց, բայց վերջը ուսերը վեր քաշեց, գլուխը կախեց ու ոահի եկավ (հպատակիվ). Տուզու նանի, ասեց, ֆոշտա-ֆալաքը[1] գար, ինձ չէր կարող թեքել, բայց քո լեզուն ավելի սուր ու խոսքդ ավելի կըտրուկ էր, գնա, ինչ որ քո կամքդ կհաճի, պատասխան տար, միայն խընդրիր, որ հարսանիքն շտապեցնի, ինձ աշխարհի լեզվի տակիցն ազատի։

— Ափսո՜ս իմ մեծ ու պստիկ կնյազներ։ Հիմի նրանք եթե գործի մեջ լինեին, մեծ կնյազը խաչեղբայրս կդառնար, փոքր կնյազը՝ փեսեղբայրս, էն ժամանակը աշխարհքը նախանձու կտրաքեր։

Այս ցավն էր որոճում բավական միջոց Բղդեն Տուտուին ճանապարհ դնելուց հետո։

— Ոչինչ, խասը չգտնողը խամով էլ կբավականանա, կնյազները չեղան, թող նրանց միրզեն (գրագիր) լինի խաչեղբայրս,— մխիթարեց ինքն իրեն Բղդեն և ձին հեծավ, քշեց դեպի Զեյվա գյուղը, ուր էր այն ժամանակ գավառապետի բնակարանը։

Գավառական գրագիրը սիրով հանձն առավ Բղդեի խաչեղբայրությունը։

Լե

ՀԱՐՍԱՆԻՔ

Ինդաց Կարբու գավառը, թե Բղդեն շուտով պսակվում է ջհուտ Աղաջանի աղջիկ վերա, լսողը զարմանքից սառած մնում էր ու իր ականջներին չէր հավատում. էլ հացակեր չմնաց, որ խեղճ Շողիկի վերա բերան չբանար, ոչ մեկը լավ չխոսեց. առաջինից մինչև հետինը դատեցին ու դատապարտեցին հոր ու նշանածի հիշատակը ոտնակոխ անող ապերախտ աղջկանը, բոլորեքյան եկան այն համոզմանը, թե աղջիկ կոչվածդ արդարև, վաղի առածի պես, անկտրիլ ձմերուկ է, մինչև հարյուր անգամ չփորձես, չես հասկանալ հատկությունը, ամենեքյան կարծեցին, թե իրանք սխալած են եղել Աղաջանի աղջկա մասին և թե մի այդպիսի դյուրահավան աղջիկ մի օր էլ յուր ամուսնուն կդավաճանի, ջատերը ուրախ եղան, որ կճուճը գլորվել է ու խուփը գտել, Բղդեի նման մարդին այդպիսի կին լավ հատուցումն է։ Նույն ինքն տեր-Հակովբը, որ Աղաջանի մահից հետո մի տեսակ խնամատարի բարոյական պարտավորություն էր հանձն առել յուր վերա՝ Աղաջանի այրուն ու որբին յուր հովանավորության ներքո ունենալու, նա ևս շատ խոժոռվեց Շողիկի անմիտ ընտրության մասին։ Այս ամենը լսում էր Աղաջանի այրին և արտաքուստ լռում, ոչինչ չէր պատասխանում, իսկ ներքուստ յուր տանը ուզում էր քրքրել, քանել յուր «աներես ու լպստված» աղջկանը, որ մի վհուկ Տուտուի խոսքով յուր տան անունը լակ ձու շինեց, պատովը տվեց։

Շողիկին դատափետում էին առավելապես յուր ընկերակից աղջիկները, թքում և հանդիմանում էին, թե նա ոչ նշանածի համար պետք է այնպես տխրեր և ոչ այսչափ շուտ նրան մոռանար և առաջին անգամն իրանց դուռը բախողի գիրկն ընկներ։

Ընկերներին Շողիկը ոչինչ չէր պատասխանում, իսկ մորը միշտ կրկնում էր. համբերիր, մայրիկ, չէ՞ որ ես Տուտուին խոսք տալուս նախապես քո ականջումը փսփսացի։

— Ինձ էլ քեզ հետ հիմարացրիր, ես էլ մի անխելք կին՝ հավատացի, թե քո ձեռքիցդ կգա կոլոտ Բղդեից հորդ արյունը պահանջել. տակից դուրս եկավ, որ դու մարդու գնալու համար պուխ ես եղել պատռելիս։

— Ուրբաթ, շաբաթ, կյուրակի, մայրիկ, դու քո բարի աչքովդ կտեսնես, թե ես ինչպես կծխեցնեմ դառը մուխը շարչի Բղդեի քթումը։

Եվ Շողիկը մորը շատ չվիրավորելու համար գլուխ էր առնում, հեռանում։

Վերջապես, ուրբաթ, շաբաթ, կյուրակին հեռու չէր, շուտ վրա հասավ։

Բղդեի նորաշեն պալատն առաջին անգամ է ծառայում յուր նշանակությանը, ասեղ ձգես՝ գետինը չի ընկնիլ. հրավիրվածները միայն Կարբու հասարակությունը չէ, Քասախ գետի երկայնությամբն եղած բոլոր գյուղերի նշանավոր քեթխուդեքն ու տանուտերներն այնտեղ են։

Առավոտյան ութ կամ ինն ժամն է, հարսանիքավորները, շրջապա-

[1] Ֆոշտա-ֆալաք — նույնն է, ինչ Մեգիսոտֆելը։

տած հարսն ու փեսային, պսակ են գնում։ Եկեղեցին լիքն է հանդիսականներով, կարելի է ասել, որ Կարբուց եկեղեցին յուր կրկին շեն արած օրը կարդալուց ցայսօր այնքան ժամավորներ չի տեսել. տեր-Հակոբը շուրջառավորված է և սեղանի առջևը կատարում է պսակի խորհուրդը. նորափեսայի դեմքին հաղթող զորապետի ինքնասիրություն է նկատվում, նա ուրախ է, բայց խոր հոգեբանն այդ պայծառ դեմքի ներքո մի վրիժառության տրամադրություն կարող էր նկատել։

Ահա հասավ բուն պսակի ահավոր խորհուրդի ժամը. տեր-Հակոբն հրամայեց հարսն ու փեսայի երեսները միմյանց դարձնել. նա ուրիշ քահանաների նման չբավականացավ Մաշտոցի բառացի ծիսակատարությունով, նա փակեց գիրքը և մի քանի պարզ խոսքերով հասկացրեց նորընծաներին իրանց փոխադարձ պարտականությունները. ապա խոսքն ուղղելով դեպի նորափեսան, հարցրեց Մաշտոցի խոսքերով.— որդյակ իմ, մինչև ի մահ տե՞ր ես։

— Տեր եմ,— բարձրաձայն խրոխտանոք շեշտեց Բղդեն։

— Իսկ դու, որդյակ իմ, մինչև ի մահ հնազա՞նդ ես,— երկրորդ հարցը տվեց տերտերը նորահարսին։

— Ո՛չ մի ժամանակ,— երեսի թանձր քողը ետ ձգելով, գոչեց Շողիկը։

Ամբողջ հանդիսականները պարզ լսեցին ականջ ծակող, սարսափելի, արտասովոր և տարօրինակ խոսքը։

— Ի՞նչ,— աչքերն ոլորելով բարկությամբ հարցրեց քահանան,— ի՞նչ ասացիր։

— Ասացի ու էլի ասում եմ, տեր հայր, դուք էլ պատվելի հարսանիքավորներ, ինձ ներեցեք, որ ամենքիդ նեղություն տվի և էստեղ հավաքելու պատճառ եղա, ձեր բոլորի առաջին ես՝ մի որդ ու անտեր աղջիկ, համարձակվում եմ թքել իմ հոր ու նշանածի արնետիրոջ երեսին, ես կատարում եմ իմ նշանածին ու հորս գերեզմանին տված խոսքս, հայտնում եմ ի լուր աշխարհքի, որ հաստատ գիտեմ և հավատացած եմ, որ իմ հոր արդար հացին կույր աչքով նայող երախտամոռը, երբ որ տեսավ, թե քանի հայրս ու նշանածս կենդանի են, ինքը չպետք է կարողանա ինձ յուր ճանկը ձգել, մտքումը դրեց դիվական հնարքներով յուր ցանկությունը գլուխ բերել. իմացած կացեք ամենքդ, որ Մողնու սուրբ Գևորգի վանքը կոխել, կողոպտել տվողը չարչի Բղդեն էր. սա ինքը առաջուց վարձած է ունեցել Ք. գյուղացի բեկզադեքանցը, նրանց ձեռքովն է համոզել թուրքերին և վանքի վրա բերել. սա շատ լավ գիտեր, որ թեկուզ աշխարհքի նեղ ժամանակն էր, թեկուզ ամեն մարդ յուր գլուխն ու ընտանիքը պահելու հոգսումն էր, թեկուզ ամեն գյուղ ինքն իրան դրժ-

վար էր պաշտպանում, բայց եթե մեկը համարձակվեր մեր վանքերին ու եկեղեցիներին դիպչել, ամեն հայ կմոռանար տուն, տեղ, որդի, ընտանիք, կթողներ ունեցած չունեցածը թշնամու ձեռքին ու ինքը կվազեր յուր աստուծո տունը պաշտպանելու, գիտեր էս անխղճմտանքը, որ եթե մի փոքրիկ երեխա էլ գար վանահոր կողմից և հայտներ, թե վանքը կորեցին, բոլոր գյուղերը գլխապատառ կվազեին հայր սուրբի հրամանը կատարելու. շատ լավ հայտնի էր էս դաժան հոգուն, որ Կարբուց օգնություն գնացողների մեջ հայրս ու նշանածս էլ անպատճառ կլինեին, և եթե կովիցն էլ ազատ պրծնեին, յուր վարձած թուրքերը մի տեղ հնարք կգտնեին սրա օձ խորհուրդը կատարելու։

Ո՛չ ոք չընդհատեց կրակ կտրած օրիորդին, խորին և մռայլ լռությունը թագավորել էր եկեղեցումը, ճանճի բզզոցը լսվում էր. ինքը Բղդեն սևացել, ածուխ էր կտրվել, շրթունքները շարունակ կրծոտում էր, նկատելի էր, որ աշխատում է որևէ պատասխան տալ, բայց կոկորդը ցամաքել, լեզուն բերանումը չորացել էր, չէր շարժվում։

— Ես դեռ չեմ վերջացրել,— սառնությամբ աստիճանաբար բարձրացրեց յուր ձայնն աղջիկը,— դու, կոլոտ Բղդե՛, փափագիդ մի մասին հասար, ճանապարհդ լայնացավ, մեջդ ճխացիր, ուրախացար, թե այս է, որ տիրեցիր անտեր աղջկանը, հիմի որ կխեղդես ու քո կինը կշինես։ Բայց չէ, սխալված ես, քո փորած հորի մեջ ինքդ երկու ոտքով ես ընկել, Աղաջանի աղջիկը հալալ կաթնակեր է, նա յուր հոր հարազատ զավակն է, ես ոչ մի ժամանակ քո պես խեղճերի արյունը ծծողին կին չեմ դառնալ, ես կույս եմ և՛ կույս Հոռոմսիմի (Հռիփսիմե) նման քեզ պես խոզին քարշ պետք է տամ գետնի երեսին, որ հորս ու նշանածիս գլուխը կերար, գլխակեր, արնեխում։

— Ը՞ն... չո՞վ... կը՞... հա՞ս... տա՞... տե՞ս,— կակազեց Բղդեն, բայց Շողիկը ժամանակ չտվեց շարունակելու։— Մոտ երկու ամիս է, որ իմ նշանածը սառը գերեզմանումն է,— գոչում էր նա,— բայց նրա հոգին դեռ չի հանգստացել, դեռ գերեզմանի վրա անտես, աներևույթ պտտվում է, ես նրան խոսք եմ տվել մինչև իմ խոսքս չկատարեմ, Բրստինենց Սահակի հոգին երկինք գնացողը չի. նրա աչքը ճանապարհի է, որ ես քեզանից նրա արյունի վրեժը պետք է առնեմ և կառնեմ, երկու ամիս է, հնարք չի մնացել, որ չմտածեմ, ուզում եմ էնպես վրեժ հանել, որ դեռ ոչով լսած ու տեսած չլինի, կամեցա խանչալը առաջ քո սիրտը ցցել, հետո իմ, բայց մտածեցի, որ քո կեղտոտ արյունն արժանի չէ խառնվել իմ մաքուր արյունին, ես ավելի լավ համարեցի այնպես բան անել, որ դու կենդանի մնաս, բայց ուրախ օր չտեսնես, խղճմտանքիդ առաջին սևերես մնաս, խղճմտանքդ ճանկերով սատանա դառնա ու

սիրտդ ճանգատորի. ես գտա այդ բանի հնարքը. շատ չի քաշիլ՝ կուրանալու աչքովդ կտեսնես...

— Բավական է, աղջիկս,— ուզում էր միջամտել տեր-Հակովբը, բայց Շողիկը ժամանակ չտվեց։

— Ահա, կոլոտ Բղդե, ես իմ ասելիքներս ասացի, առ, աչքդ կոխիր քո ուղարկած հարսնությունի քողը, որ Թոռ շինեցիր, ձկան նման ինձ մեջը փաթաթեցիր, բայց ես էն ձկներից եմ, որ Թոռդ գլխիդ պատռում ու միջիցը դուրս եմ փախչում։

Շողիկը կորզեց յուր գլխի զարդերը, յուր բերանը փակող շղարշը և Բղդեին շպրտեց. հետն էլ թքեց երեք անգամ նրա երեսին, երկու ամուր ապտակ իջեցնելով և հաստատ քայլերով դուրս գնաց եկեղեցուց։

— Բռնել տվեք, ո՞ւր-եք թողնում փախչի,— դարձավ լացակրկնած Բղդեն դեպի յուր խաչեղբայր գավառական դրագիրը,— այդպե՞ս պետք է պաշտպանես բարեկամիդ ու քո խաչեղբայրության պատիվը։

— Բռնեցեք, տանուտեր, հանդուգն աղջկանը, դրա արած անպատվությունն ինձ է վերաբերում, ես եմ այսօր այս հարսանիքի գլուխը,— հրամայեց գրագիր աղեն սրտամնա, վիրավորված և անզուսպ բարկությամբ,— համբերեցեք, տեսեք, թե ես դրան ի՞նչ տեղն եմ ձգում, ոտները քոթուկի[1] մեջ փթացնում, որ խելքը գլուխը հավաքի, ինքը գա յուր նշանածի ոտքերն ընկնի։

Տանուտերին կարգադրություն անելու կարիք չեղավ. ժամավորները միանգամից դուրս վազեցին և ձայնի տված՝ գոչում էին.—բռնեցե՛ե՛ք, բռնեցե՛ե՛ք։

Նորափեսա Բղդեն, երևի, ոգևորված յուր պաշտպան խաչեղբոր խոսքերից, գազան էր կտրել, բազմությունը ճեղքելով ամենից առաջ վազեց նա և հասվեհաս էր Շողիկի հագուստի քղանցքը ձեռքը ձգելու՝ ճիշտ Կիզի-մատուռ զանգակատան դռան առաջին, ուր ուղղվել էր նորահարսը։

— Հա՜, հա՜, հա՜...— երեսը դարձրեց աղջիկը գեպի յուր փեսացուն և գլուխը թիկունքի կողմը թեքած՝ քրքջում էր երկար ծորելով յուր անվերջ ծիծաղը։ Հա՜, հա՜, հա՜, չարչի Բղդեն ուզում է ազատ թռչունին թռած ժամանակն յուր թոռի (ցանցի) մեջ խճճել. ա՜յ, սա է իմ պաշտպանս, սա, էս սուրբ Կիզի-մատուռը, ո՞նց կհամարձակվես սրա մեջը մտնել։

Այս խոսքերից հետո Շողիկը ներս մտավ զանգակատունը։

— Դրանից էլ լավ թոռ չէր լինիլ, հիմի էլ չես կարող ձեռքիցս ազատվիլ,— գոչեց Բղդեն և աղջկա քամակից ներս ընկավ մատուռի մեջ։

[1] Քոթուկ— ծառի հաստ կոճղ է, որի մեջ փակում էին ֆալանավորների ոտքերը։

Օ՜ սարսափ, Բղդեն քարացավ և մնաց սառած մատուռի միջնավայրումը, նրա աչքերը սևացան, ականջները խշխշացին, գլուխը պտույտ առավ։

Ի՞նչ էր այս։

Շողիկը, վայրի կատվի արագությամբ մագլցելով, վեր է բարձրանում մատուռի կոփվածո պատի մակերևույթի վրայով դեպի զանգակատան կաթողիկեն, շուտ-շուտ վերևից կատաղի հայացքներ արձակելով յուր թշնամու խրտնած եզան նման շռած ու պշուցած աչքերին, կատարյալ ծառկուտուտ կամ ալաչակչակ (փայտփորիկ) թռչուն էր Աղաջանի դուստրը, որ ծառերի բնի վրայով ազատ սորորում էր։

Ահա կանգնած է նա ուղիղ կաթողիկեի պատվանդանի առաջ եկած քարերի վրա. մի ոտնաչափ տարածություն հազիվ թե լիներ պատվանդանի լայնությունը. կաթողիկեն շինած օրից վայրի աղավնիներն ու ճնճղուկներն են միայն հանգիստ առել Շողիկի ապաստանած տեղումը։

— Նայիր ինձ, կոլոտ Բղդե՛,— զիլ և սուր ձայնով գոչեց աղջիկը, զիլ, որքան մի մանկամարդ օրիորդի կոկորդը կզորեր։

Բղդեին թվեցավ որպես թե ոսկիները գտնելու օրվան ահարկու և զարզանդելի թնդյունն էր, որ այսօր առավել հուժկու արձագանք տվեց զանգակատան ներսը, միևնույն այն օրվան տպավորությունը տիրեց չարաբախտ չարչու նյարդերի վերա, նրա աչքին երևաց, իբր թե սրբավայրը տեղահան եղած տատանում էր և մոտ էր փլչելու, Բղդեին լսելի եղավ մինչև անգամ այն կռանի հարվածը, որ ինքը երկու տարի առաջ իջեցրեց Կիզի-մատուռի պատուհանի քարին, որի տակից նա հանեց ոսկիքը։

Բղդեի միտքն եկավ առաջին անգամը ոսկիքը գտած օրն արած խոստումը. նա ինքն այս իսկ տեղում ուխտել էր տարեկան հինգ նավակատյացը մի-մի սպիտակ գառը զոհել Կիզի-մատուռի սիրույն, բայց մինչև էսօր և ոչ մի հավի ձագ չէր մորթել։ Ահա, այսօր, յուր բախտավորության օրն ուխտն յուր գլխին խռով է կենում, յուր նշանածին աստուծո սեղանի առաջից յուր ձեռքիցը խլում է։

— Ա՜յ մարդիկ, աղա խաչեղբայր,— հեծկլտում էր տհաս մանուկի պես Բղդեն, դառնալով իրան շրջապատողներին և գավառական դրագրին,— դուք սիրտ չունի՞ք, դուք ադամորդի չե՞ք, ընչի՞ եք թողնում, որ ջհուտ Աղաջանի աղջիկն ինձ վրա ծիծաղի, բարձրացեք, բռնեցեք, բռնությամբ քարշ տվեք, ժամը կոխեցեք և իմ վերա պսակեցեք։

— Դա աղջիկ չի, դա սատանա է, դա ալք է,— պատասխանեցին ամեն կողմից, մարդը մարդի որդին կարո՞ղ է էս հայելու պես կոկ պատը բարձրանալ, սատանի եղունգները միայն կբռնեն քարերի տաշվածքների խոռուփոթները։

— Ի՞նչ, գյադա (տմարդի, ցած) կոլոտ Բղդե, ի՞նչ, դու զոռո՞վ ես ուզում ինձ քո կինդ՝ շինել. լսիր,— ճիչ արձակեց Շողիկը վերևից,— լսիր վերջին խոսքս. դու քո չար ցանկությունին չհասար, հորս ու նշանածիս արյունն էսօր վրեժ են պահանջում, և ես առնում եմ նրանց վրեժը քեզանից։ Հեռո՛ւ, մարդիկ, ե՛տ քաշվեցեք, տեղ տվեք, ես պետք է Բղդեի գլխին մի էնպես խաղ խաղամ, որ քանի կենդանի է, ուրախ օր չտեսնի. քանի էսօրը միտքը բերի, Կայենի նման սար ու ձոր ոտնատակ տա ու ո՛չ մի տեղ հանգստություն չգտնի, չէ՛, Բղդե, չէ՛, Բստինենց հարսնացուն գազանի ճանկը չընկավ, ես գնում եմ հորս հրամանով իմ Սհոյի հետ էնտեղ միանալու, էնտեղ, տես, ահա էնտեղ, երկնքումը՝ հրեշտակների կողքին։

— Ո՛վ սուրբ, Կիզի-մատուռ, դու մեղք չհամարես,— կանչեց Շողիկը բազկատարած և գլխիվայր ցած ձգեց իրան ահագին բարձրությունից։

Լավ է, որ խուժանը սարսափած աղջկա խոսքերից, ոմանք դուրս փախան և ոմանք պատերի տակ քաշվեցին, ապա թե ոչ, մի քանիսը կխորտակվեին, անշուշտ, նրա դիակի ծանրության ներքո։

Շողիկի գանգը ճեղքվեց, ուղեղը ցրիվ եկավ մատուռում թափված քարերի մեջ։

Կիզի-մատուռի հատակը հարթ չէր. երկրաշարժներն ու Քրիստոսի խաչին թշնամի անհավատներն ամայության դատապարտված սրբավայրերից շատ սակավները թողել էին անխախտ. երկարատև ժամանակն յուր ավերչության դատակնիքը, ուրիշների թվում, դրել է Կարբու զանգակատան վերա, պատերի խախտվածքներից և կաթողիկեից ցած գլորված քարերն ու կրային ավազախառն շորացած և քարից առավել ամրապնդված շաղախներն ու խճերը ցրված էին գետնին։

Այս քարերից մեկի սուր անկյունը ցցվեց Բղդեի զոհի ուղեղի մեջ, վերջ դրեց նրա կյանքին։

Սույն այս րոպեիս մի մարդ, արբած զինվորի նման, յուր կանգնած տեղը սկսեց տարուբերվիլ, նորա աչքերի կոպերը ծածկվեցին ճակատի ոսկրի ներքո, քթածակերը լայնացան, բերանի կապը առաձգական ռետինի պես ինքնին ետ էր բացվում և կրկին կուչ գալիս, լեզուն հաստ շրթունքների վրայով մի թիզ կախ էր ընկել. մի զարհուրելի ճիվաղի կերպարանք էր ստացել ուշակորույս մոլորվածի, առանց այն էլ՝ դաժան կերպարանքը։ Անհաստատ դրությունը կարճատև էր, մի երկու վայրկյան, և կիսացնորի ոտքերն անզոր գտնվեցին հավասարակշռություն պահպանելու։ Ինչպես մի հաստաբուն ծառ, որ փայտահատի սուր կացնի հարվածներից դողդողալով կամենում է, կարծես, մի քանի րոպե դիմադրել յուր թշնամուն, բայց վերջը ստիպված է լինում թեքվել մի կողմի վերա և ահագին թնդյունով գետնին դիպչել, այդ ձևով տարուբերվեց թշվառականը, մի ճիչ միայն արձակեց և զրխկալով մի կողքի թերվեց թշվառականը, մի ճիչ միայն արձակեց և զրխկալով մի կողքի թերվեց թշվառականը։ Եթե կտրած ծառի օրինակը բավական չպարզեց վայր ընկնողի դրությունը, մենք կարող ենք ամեն օր սպանդանոցում ներկա գտնվել մորթվելիք անասունին. ճիշտ համանման կերպով գետնին է ընկնում մսագործի պարանով ոտքերը պրկած մսացու թանձրամարմին եզը կամ գոմեշը։

Բավական ժամանակ գետինը ճանկռոտում, ձեռքերն ածում և կոկորդից խոնչյուններ էր արձակում անբախտ արարածը, ճանկերը բացուխուփ էր անում, աշխատում էր բռնել մի ինչևիցե առարկա, սակայն բացի քար ու խճից ոչինչ չկար։

Հանկարծ այս մարդու ձեռքը դիպավ իրանից ոչ հեռու ընկած Շողիկի ջախջախված գլխին, նրա մատները թաթախվեցին նահատակի արյան ճապաղների մեջ, և նա մանկական խաղալու գնդակի նման մի ցատկում գործեց և ընկավ մատուռի լուսամուտի առաջը, ուր գլորված էր պատուհանի վրայից երկու տարի առաջ դուրս կորզած մի քար։

Ողորմելի էակը, կարծես, ծովասույզ խեղդվողի նման գտավ խորտակված նավից կտրված, ալիքների վերա ծփացող փրկության գերանը, նա երկու ձեռքով ամուր գրկեց այս քարը և դադար առավ յուր չարչարանքից։

Այս չարաբաստիկը մեր բարեբաստիկ նորափեսա խոջա Բաղդասարն էր, նա հենվել էր, ապաստանել էր այն քարին, որ յուր ձեռքով էր տեղահան արել լուսամուտի պատից, որի տակին նա գտել էր ոսկու բղիկը և խոստացել էր ոսկիները ձեռք բերելուց հետո կրկին տեղումն ամրացնել, բայց խոստումը անկատար էր թողել։

Բայց ի՞նչ էին անում այսքան միջոց ականատես հանդիսականները։ Ամենքը շվարած մնացել էին, բոլորի վրա տիրել էր մի տեսակ ապշություն, ոչ մեկը չէր վստահանում կանգնած տեղից մի քայլ ետ ու առաջ շարժվիլ, ո՛չ մի ձայն չէր խանգարում մեռյալ լռությունը, բացի Բղդեի կաղկանձյունից, որ քարը գրկելուն պես, այն ևս դադարեցավ։

Վերջապես գավառական գրագիր աղա խաչեղբայրը ամենքից շուտ սթափվեց և, իբրև վարչության գլխավոր ներկայացուցիչ, արավ արժանի կարգադրությունը։ Նրա պատվիրանով մեռածին թողին յուր տեղն ընկած, իսկ քանի մի անձինք մոտ գնացին վերցնելու ուշակորույս Բղդեին։

Ա՛յ զարմանք, ամենայն ուժ գործ դնելով հանդերձ, չկարողացան

նրանք հեռացնել Բղդեին յուր գրկած քարից, կարծես, նրա եղունգները սրածայր մեխի պես ցցվել էին քարի մեջ և չէին պոկ գալիս։

— Թողե՞ք... հեռացե՞ք... մի՛ մոտենաք ինձ,— ի վերջո աչքերը ծանր-ծանր ետ բացեց և թույլ ձայնով արտասանեց Բղդեն։ Հետո էլ հաճախակի քարն էր համբուրում։

Արդարև, նա տեղիցը կանգնեց, միայնակ գրկեց երկու մարդով հազիվ շարժելի ծանր քարը և հարմարեցրեց յուր նախկին տեղում. ապա ետ դարձավ և երկու ոտքերի վերա բևեռված երկար միջոց ակնապիշ նայում էր յուր զոհին, որը թևատարած արյունաշաղախ փռված էր մատրան միջակետումը։

Թե ի՞նչ էր մտմտում Բղդեն այդ վայրկյանին, ոչ ոք չէր կարող գուշակել, բայց պարզ նկատելի էր, որ նորա ներսումը մի հոգեկան կռիվ էր կատարվում։

Չենք կարող ասել, թե որչափ ժամանակ կմնար այս մտածողության մեջ, եթե հանկարծակի նրա աչքովը չընկնեին յուր արյունաթաթավ մատները։

— Ջո՞ւր, ջո՞ւր, ջուր բերեք, ձեռքերս լվանամ,— դուրս ընկավ մատուռից Բղդեն և ջուր գոռալով վազում էր դեպի Քասախ գետը։

Շատ ուշ գլխի ընկան մարդիկը և հետապնդեցին Բղդեին, սակայն անագան էր, ոչ ոք չկարողացավ հասկանալ, թե դեպի ձորի ո՞ր քարափը գնաց նա։ Նրա հետքը կորցրին։

Երկու ժամից, մինչ գավառական գրագիրն յուր պաշտոնական արձանագրությունները վերջացրած կամենում էր ձի հեծնել, մինչ հարսանիքավորները պատրաստվում էին ցրվելու, Բղդեն մաքուր լվացված, հանգիստ ու խաղաղ ներս մտավ յուր տունը և բարև տվեց։

Նա գալիս էր սուրբ Հովհաննեսի աղբյուրից։

Ահա այնտեղ էր վազում Բղդեն դուրս փախած մատուռից։

Նստեց Բղդեն աղբրականը և այսպես խոսեցավ.

— Անիծվեր էն ժամը, երբ առաջին անգամը հանդիպեցի ջհուտ Աղաջանի աղջկանը. այս աղբրի մոտ ես հիմարացա, այստեղ էլ պետք է զղջամ իմ սխալանքներիս համար, այս ջուրը հանգստացրեց իշամեղուների խայթվածքը, այս ջրի ափում ծագեցավ իմ մեջ Շողիկին սիրելու ցանկությունը, այս ջուրն էլ թող մաքրի իմ ձեռքերից նորա արյունը և մեռցնի նորա սերն ու հիշատակը։

Ձեռքերն աղբյուրում լվանալուց հետո Բղդեն մոտեցավ մեզ ծանր գժնիկ փշի թփին, քակեց թփի ճղքից Շողիկի անթարու (նազուտա է) ծվենքը, որը մոր հրամանով կապել էր և որին համբուրելիս տարով չէր հագեցել սիրահար չարչին, ճմլեց մատների մեջ և ատամներով ծվիկ-ծվիկ պատառոտեց ու գետնին ցրիվ տվեց։

— Թո՛ղ չմնա և ոչ մի չնչին առարկա, որ երբեքից կարող լինի հիշեցնել ինձ ջհուտ Աղաջանի աղջկանը։

Այս խոսքերից հետո Բղդեն կրկին մոտեցավ աղբյուրին, այժմ նա կռացավ և կուշտ խմեց սառը ջուրը։

— Օխա՛յ, սիրտս հովացավ, ինձ համար այսուհետև ոչ թե միայն զգալի չէ ջհուտ Աղաջանի աղջկա արժանի վախճանը, այլ եթե բոլոր կանայք էլ ջնջվին, չեմ ցավիլ, կին ասած արարածդ սրանից հետո չի կարող ինձ հիմարացնել, և եթե երբեքից ես կին առնելու կարիք զգամ, այն իմ հարստությունս վայելող մի հատիկ ժառանգի համար կլինի, որի ծնվելուց հետո շատ չի քաշի, որ գլուխը աղը կդնենք. էնպես կանեմ, որ երկու շաբաթումը դարդամահ կլինի։

— Դեհ, հիմի գնանք մեր հյուրերին ճանապարհ դնենք, հիմի թող ջհուտ Աղաջանն էն կյանքում պսակի յուր աղջկան յուր սիրած Բստինենց Սհոյի վրա ու հարսանիքին յուր կնոջ հետ ձեռնբռնուկ պար գա. իսկ ես այստեղ պար կգամ, որ իմ թշնամիներից վրեժս առա։ Ճիշտ որ Բղդեն ձեռքերը բարձրացրեց և պարելով ճանապարհ ընկավ դեպի տուն։

Քննությունը ոչինչ մեղադրանք չկարողացավ բարուրել Բղդեի պարանոցին, ցնորված ինքնասպան աղջկա խոսքերը ոչ մի իրական փաստի վրա չէին հաստատված։

Շողիկին մայրը թաղել տվեց ո՛չ իրանց, այլ Բստինենց գերեզմանոցումը, Սահակի կողքին։

Շատ չքաշեց, ինքն էլ վշտահար մեռավ և թաղվեց Աղաջանի մոտ։

Աղաջանի պարտապանները բոլորեքյան վերադարձրին իրենց վճարքը, Շուշանն այս փողերը հանձնեց տեր-Հակոբին՝ մարդի վրա մի քար քաշելու և մինչև մահն ամեն հինգ նավակատիկի նորա գերեզմանն օրհնելու։

— Ադե՛,— ասաց մի օր Բղդեն յուր մորը,— այսուհետև Կարբումն բնակվելն ինձ համար մեծ անխելքություն է, այդ մեր տները, ինչ կամիս արա, ապրիր մեջը, ծախիր, ընծայիր, քո գործդ է. ինքդ էլ ինչպես մինչև ցայսօր առանց ինձ կառավարվել ես, այսուհետև էլ նույնպես եղիր. ես իմ բնակությունս հաստատում եմ Ապարանու գյուղերից մեկումը, Ապարանն առայժմ իմ հարստությունս կրկնապատկելու համար ամենահարմար կեդրոնն է։ Բայց եթե վհուկ Տուտուլի ոտքը մի օր լսեմ, որ այս գռեհիկը ներս է մտել, այնուհետև ոչ ես քո որդին, ոչ դու իմ մայրը։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Գերճ Պռոշյան Կարլեն Դանիելյան 8
Հացի խնդիր 23
Ցեցեր 333
Բզդեկ 514

Գերճ Պռոշյան

ԵՐԿԵՐ

Перч Прошян

СОЧИНЕНИЯ

(На армянском языке)

Издательство «Советакан грох»

Ереван, 1984

Խմբագիր՝ Ռ. Մ. Մուրադյան
Նկարիչ՝ Մ. Ռ. Սասոյան
Գեղ. խմբագիր՝ Գ. Խ. Գյուլամիրյան
Տեխ. խմբագիր՝ Վ. Գ. Ավագյան
Վերստուգող սրբագրիչ՝ Զ. Ս. Կարապետյան

ИБ 3921

Հանձնված է շարվածքի 29. 09. 83։ Ստորագրված է տպագրության 22. 02. 84։
Ֆորմատ 60×84 1/16։ Թուղթ տպագր. № 3։ Տառատեսակ՝ գրքի սովորական։
Տպագրություն՝ բարձր, 40,92 պայմ. տպ. մամ., 41,43 պայմ. ներկ. թերթ, 38,8
հրատ. մամ.։ Տպաքանակ 51.000։ Պատվեր 1595։ Գինը՝ 3 ռ. 50 կոպ.։
«Սովետական գրող» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91։

Издательство «Советакан грох», Ереван-9, ул. Теряна 91.

ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի № 1 տպարան, Երևան, Ալավերդյան փող. № 65։

Типография № 1 Госкомитета по делам издательств, полиграфии и книжной торговли Арм. ССР. Ереван, ул. Алавердяна, 65.